321
5.

2004 651-ԱՀ

# ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

Յօրինեալ

ՅԷՄՄԱՆՈՒԷԼԷ ԹԷՍԱՒՐՈՍԷ

'Ի մեծանուն կոմսէ և 'ի պատուական Ասպետէ տէրութեն Սաբաւդիոյ։

Թարգմանեալ 'ի Հ. Վրթանէս վարդապետէ Ասքերեանց, յաշակերտէ Մխիթարայ Հօր Աբբայի։

ФУНДАМЕНТАЛЬНАЯ БИБЛІОТЕКА ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

9566-57



№ 321.

'Ի ՎԷՆԷՏԻԿ

'Ի վանս սրբոյն Ղազարու

1825

2004

+17

ՀԱՄԼ-

# ԱՌ ԻՄԱՍՏԱՍԷՐ ՎԵՐԾԱՆՈՂՍ։

Գանձ ցանկալի քաղցր իմաստութիւն, և գան-ձարան գովելի արժանընկալ սիրոյ իմաստ-նոյն է իմաստութիւն իմն ինձ նախ զվերինն և զածային, որ 'ի բարեկամութիւն արարչին գլխովին 'ի վեր տանի զստացիչս իւր՝ թէ իմաստնոյն պատ-գամաց. և երկրորդ՝ իբրև սպասաւորեալ նմին զբնաւոր լուսոյ ածային փայլչութեան, իբր նշոյլ երկրորդ յառաջին լուսոյ, կամ ճրագ մտաց՝ առ ար-փիափայլ ճառագայթիւք ածիմաստ գիտութեան։ Առ որով յիրաւի երկգս այս ոչ այնչափ իմաս-տութիւն, որչափ թէ իմաստասիրութիւն է ձայնելի. զի թէ պիւթագորաս 'ի կարգի մեկեղէն իմաս-տութեան չիշխեաց զանձն σοφὸς անուանել ըստ առաջնոց, այլ միայն՝ φιλόσοφος, յորմէ և փիլիսո-փայ անուն սկիզբն կալաւ, քանիօն առաւել զնոյն է առելի առ ածային իմաստութիւն։

Արդ՝ թէպէտև բազմապատիկ է անուն φιλοσο-φίας, այն է թէ յունականին φιλοσοφίας կամ φιλοσοφία առձայնեալ, և 'ի բազմադէմ մասունս տարատրոհի, այլ մանաւանդ առաջնակոյ առաջի առ-նէ զգլխաւորագոյնն 'ի մասանց անաի նր, զառա-ւել կարևորն առեմ բանաւորացս, այս է՝ զբանաւո-րական վարպետութիւն. որոյ է օրինագիր լինել բարուց՝ և կանոնագիր վարուց, առ խոտորելոյ 'ի չարէ և առնելոյ զբարի, առ գիտելոյ երջանկանալ՝ և օրինօք առաքինանալ, ըստ ստորոտն լուսոյ բա-նի՝ որ ընծայէ փաստս բանականս։ [illegible] այսինքն է՝ զի մարդն իբրև մարդ քաղա-քավարեսցի, և ոչ մի ինչ յանձին բերցէ անվայել բանաւորի։

Գործ այսպիսի 'ի լոյս ընծայեցին՝ 'ի հրաշանդա-թե

թն մզկեղէն բարուց յոլովք 'ի նախնի իմաստասիրաց, և զնոյն աւանդեն Ճշգադոյնս արդի ուսուցիչք փիլիսոփայութեն համօրէն։ Այլ որպէս առաջնոյն բանք բազմօրինակ մթութբ թողում ասել թէ և վրիպականութբ խաթարեալ, սակաւս քան թէ բազումս օգտեցին լսելեաց, նոյնպէս և դասական ոճ վերջնոցս՝ յաւէտ 'ի գիտել քան 'ի գործել ուղղեալ, մնաց Ճարակ քան կամաց ցուցաւ. զի սակաւս գտցես՝ որք զոր ուսանինն կմ ուսուցանեն 'ի բարոյական փիլիսոփայութեան, զնոյն և առնել փութասցին. և զոր գանձեն 'ի յիշողութեան՝ գանձեսցեն անձանց։

Եւ ահա զմիջինն այսոցիկ կալաւ Ճանապարհ՝ իբրև նոր գանձագիւտ՝ Գանձ անուն հեղինակս. զի Թէսաւրոս՝ գանձ է ըստ հայոց։ Առաջի արար զցանկալի ցանկալի օգտաշահ վաՃառս կենցաղօգուտ գիտութե, և սփռեաց զգանձս բարոյական իմաստասիրութե, ոչ 'ի տեսանել եեթ, այլև 'ի ստանալ. այսինքն է՝ ոչ ուսանիլ միայն, այլև առնել. ոչ լոկ 'ի գիտել, այլ և 'ի գործել։ Քանզի այնպիսի կալաւ ոՃ վարդապետութեան, յորում տեսանի միանգամայն գիտնաւոր կարգ ուսումնական՝ և ազդոյ խրատ վարժողական։ Իբրև խորագինին փիլիսոփայ Ճշգիւ խուզարկէ՝ զոր ինչ աւանդէ, և իբրև հոգեհրահանգ դաստիարակ մարզէ 'ի նոյն՝ զոր աւէ։ ԶՃշմարտութիւն բանից հաստահիմն փաստիւք խարսխէ, և զգործադրութիւն գործոց ձեռամբացի ցուցանէ։ Ճարտար առացուածովք և վՃռական իմաստիւք զմիտս վառէ, և հարկեցուցիչ հետևանօք զսէր կամաց առ նոյն բորբոքէ։ Ո՛չ այնչափ բանիւ յորդորանաց համոզէ զբարին, որչափ բանականութբ բռնադատէ զմիտս և ձգէ զկամս յընտրութե բարւոյն. մինչև ինքնայօժար բերիլ լսելեաց՝ լինել անդէն մի յաւնելեաց։ Այլ զայս ամենայն այլոց թողումք իմաստասիրել՝ որ իմաստասէր մոք 'ի վերծանութիւն գրոցս մատչիցեն. մեք և զայլ ինչ կարևոր տեղեկութեն աստէն առաջի դիցուք։

ՅՕՐԻՆՈՂԷ ԳԻՏԵԼԻՔ:

Ա. Այս գործ ընտիր յօրինեալ է յիտալական բարբառ 'ի մեծիմաստ և յիշխանաշուք առն, որոյ անուն կոչի Էմմանուէլ Թեսաւրոս, պատրիկ՝ կոմս և ասպետ անուանի, ըստ իտալ՝ ՊԱՏՐԻՉԻՕ, ԳՕՆՏԷ և ԳԱՎԱԼԻԷՐ. նուիրեալ իւր 'ի պէտս հրահանգութեան վիկտորի ամեդէոսի թագաւորին անդրանիկ որդւոյ երկրորդ կարոլոսի էմմանուէլի դքսին սաբաւդիոյ որ է ՍԱՎՕՅԻԱ, որ և իշխան տաւրինոյ ասի, այն է ՏՕՐԻՆՕ. և նորին իսկ հրամանաւ 'ի լոյս ընծայեալ զառաջինն 'ի տաւրին յամի տն 1671: Ուր և հարևանցի ծանիր, զի նա՝ որում ընծայեցաւ այս գիրք, այն է վիկտոր ամեդէոս երկրորդ կոչեցեալն յաջորդեալ յետոյ հօր իւրում յիշխանութեան՝ անուանի դուքս յոյժ, և եղև առաջին թագաւոր սարդենիայ կղզւոյն. և յայնմ հետէ մինչև ցարդ դուքսն սաբաւդիոյ է միանգամայն արքայ սարդենիոյ: Արդ որպէս նշանակէ հեղինակս 'ի կատարածի գրոցս, զայս գործ շարադրեաց յալիս ծերութեան՝ յութսուն ամաց հասակի. և յիրաւի հասունացեալ և զգօնաւոր մտաց է ծնունդ. որոյ կանխաւ դեգերեալ էր յամենայն ուսմունս իմաստասիրականս, և լցեալ ազգի ազգի գիտութեամբ. որպէս և այլ գործք իւր վկայեն: Քանզի է սորա շարագրեալ և զայլ գիրս ոչ սակաւ՝ իտալերէն և լատիներէն՝ ուսումնական և բանաստեղծական. յորս բազմապատիկ գովութիւնս ընծային հեղինակիս. և 'ի մանաւորի հռչակի յամենեցուն քաջ հմտութիւն նորա 'ի բարոյական գիտութիւնս. և է՝ որ կոչէ զնա հանդիսարան հանճարոյ և ճեմարան զգօնութեան:

Բ. Ոճ հեղինակիս 'ի բնագրի անդ է ճարտարարուեստ և ախորժալուր բառիւք հիւսեալ, և առաւելապէս նմանաձայն եզերօք յեղևեջս բանից հանդիսացեալ. վայ և ոչ դոյզն դժուարութիւն կրէ՝ որ կամի յեղուլ զայն յայլ բարբառ. և այս իսկ է գլխաւոր պատճառն, յոյր սակս մ թին երևին ուրեք ուրեք տատանմունք ն՞ր: Մեք [illegible] կարի զգուշաւոր

ւոր Թարգմանութեան ուշ եդեալ՝ յամի հաւատարմութե պահել ջանացաք զանմիջական նշանակութիւն բառիցն. այլ ուր ուրեք պահանջէր բանն յաւէտ յիմաստն հայել քան 'ի բառն, ըստ հայկական ոճոյ բացատրեցաք. քանզի և օրէնք այս են ամ Թարգմանչի, ոչ զիմաստ հեղինակին այլայլել, և ոչ զբնիկ բարբառ իւր աղաւաղել: Թող զի երբեմն յամակայս հարկեցաք որոշել ինչ բառ համեմատ սկզբնագրին, թէպէտև գիտէաք ոչ այնչափ յաճախել առ մեզ: ապաքէն շնորհեալ է իմաստասիրական ոճոյ 'ի կիր առնուլ երբեմն և զանսովոր ինչ ձայն՝ առ բացատրելոյ զառաջեդեալ նիւթն:

Գ. Սեղիդ համառօտել գիտէ հեղինակս՝ զոր ինչ և գիտէ ասել. չսիրէ զընդլայնմունս բանից կամ զերկարապատում ասացուածս. վճիռս և առածս բարբառի յամի՝ հանրականս և մասնաւորս՝ առանց ը-վայր ճոխաբանելոյ: Եւ թէպէտ սովին իսկ խրթնանալ թուի բանին, այլ ուշադիր մտաց յաւէտ դիւրընտել ընծայի. քանզի ամ ընտիր ասացուած այնչափ խորագոյնս ընդ միտս ընդմանէ՝ և դիւրագոյնս յաման մտաց ամփոփի, որչափ 'ի համառօտ եղերս բովանդակի: Ամէն իրի և իմաստուն անձինք առ հասարակ զայնպիսի ախորժեն ձև բանից, որպէս նաշիհ անթեփ՝ կամ ջուր յստակ և անապղտոր: Այլա եթէ յանդըրադիմաց ոք այլազդ ինչ խորհի, դիտասցէ այնպիսին, զի իմաստնոյ է բանս՝ և առ իմաստունս. զիմաստասիրութի ուսուցանէ, վոյ և զիմաստասէր անձինս խնդրէ: Բայց քանզի իմաստասէրն լինել 'ի ընտրական կարգի՝ ամէն է անկ, ո՛ ոք և իցէ՝ որ միանգամ փոքր 'ի շատէ իմանայ զգրեալսն, որչափ և սակաւս իմասցի՝ գտանէ անձին բաւական նիւթ իմաստնանալոյ, և զբարոյապէս բարին ընտրելոյ, ըստ առ ուղղելոյ զվարս, կամ առ խորշելոյ 'ի մոլութեանց և զարդանալոյ յառաքինութիւնս. որում ամ մարդ է պարտական՝ և բանական, միայն թէ կամիցի:

Դ. Երբեմն փիլիսոփայ խօսի, և ոչ երբեմն ածաբան. ըստ է՝ զպատճառս իրացն յառաջ բերէ 'ի բնական սկզբանց իմաստասիրութե, որք լուսով բանին ճանաչին, և

ոչ

ոչ յաստուածային պատգամաց ձեռնարկէ՝ որ գեր 'ի վեր զամենայն . զառաւել փիլիսոփայից 'ի մէջ առնու , և ոչ զգրութիւնս աստուածաբանից : 'Ի խօսելն զառաքինութեանց՝ ոչ քննէ զնոսա 'ի կարգի աստուածային և գերբնական իրից , այլ 'ի կարգի մարդկային և բնական կատարելութեանց՝ որք իբր պատկեր կամ օրինակ են նոցին , և կացուցանեն զմեզ երջանիկս բնաւորապէս. կամ առնեն զմեզ բարեկեցիկս ըստ առնելոյ վիճակի աստեացս , անդորրացեալ հոգւով և անվրդով յանբանական շարժութեանց ախտից : Այլն իբր խօսի նաև զայնպիսի իրաց, որք ըստ ինքեան ոչ այնչափ առաքինութիւն են՝ որչափ միջավարութիւն , քաղցր կենակցութիւն , կամ հաճոյական քաղաքավարութիւն : Եւ թէ ուրեք խօսեսցի նաև զքրիստոնէական առաքինութեանց , առաջի առնէ և զնոսա յաւէտ ըստ բնական կատարելութեան՝ և ոչ ըստ գերբնականին , և կամ հարևանցի իմն ակնարկէ 'ի վեր լինել քան զանսուն փիլիսոփայից : Քանզի և գործն զլխավորին է բնական իմաստասիրութիւն , և ոչ գերբնական իմաստութիւն . և վասն գործոյն է առ ճանաչել ամէն , թէ նաև բանն բնաւորաց կամ լոյսն բնածին՝ որ և ամ պարգև է, միշտ թելադրէ մեզ զուղիղն . զոր օրինակ՝ թէ բարին է առնելի , չարն՝ խորշելի. այս ինչ է բարի , և այն ինչ՝ յոռի . այս ինչ զմեզ երջանկացուցանէ , և այն թշուառացուցանէ. և ըստ նմին կանոնս ընտիրս աւանդէ՝ բարոյական իմաստասիրութեան : Վասն որոյ չունի ոք առել , թէ զի է՝ զի չբերէ հեղինակս վկայութիւնս պէսպէս առ 'ի սրբ գրոց և 'ի սրբ վարդապետաց , այլ միայն արտաքնոցն առացուածովք շատանայ . Ըէր է՝ զի չածէ յօրինակ զվարս սրբոց ամ , այլ զքաղաքավարութիւնս արտաքին փիլիսոփայից . ևն : Քանզի դիտաւորութիւն նր այս է , զի ցուցցէ՝ թէ նաև հեթանոսք բնական օրինօք դիտացին առաքինանալ . և յամօթ առնել զմեզ գործք նոցա , եթէ մեք յետնեալ գտանիցիմք քան զնոսա . 'ի դէպ եկեալ բանից սրբ առաքելոյն . Այլ յորժամ հեթանոսք՝ որ զօրէնս ոչ ունին , բնութեամբ զօրինացն գործիցեն , նոքա որ զօրէնսն ոչ ունին՝ անձանց ինքեանց իսկ են օրէնք . որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց վկայութեամբ

նոցա

Յաղագս Խորենացւոյ, և յաւելուածոյ ընթերցուածոց 'ի Խորենացւոյ Խորենացւոյ. և որ 'ի կարգին:

Է. 'Ի նոյն միտս իմն ինձ և զյառաջ բերելն հեղինակիս սակաւ սակաւ զառասպելս հեթանոսաց 'ի վ̅ր քաջազանց կամ մոլի անձանց, և զդիւցազանութիւնս ն̅ց 'ի վ̅ր անգոյ կուոց իւրեանց և անուանի պաշտամանց՝ համդերձ ազգի ազգի առեղծուածաբանութեամբ բանաստեղծից, որ առ հելլենացիս՝ և որ առ նախնի հռովմայեցիս: Վ̅ս զի և 'ի ձեռն այսոցիկ արուեստաշնար նմանութեանց և առասպելաց բազդրութեանց քաջայայտ ցուցանի, թէ զիարդ նորքին իսկ հեթանոսք բնական լուսով զմոլութիւնս ցուցին ատելի, և զառաքինութիւնս՝ գովելի, կամ զիարդ նկարագրեցին զբարին գրկելի, և զչարն՝ հերքելի. և գործովք յայտ արարին՝ զոր ինչ մտօք ճանաչէին: Թող զայն՝ զի որովհետև հեղինակս սկզբամբք փիլիսոփայից խօսի, զառ 'ի նոցանէ 'ի կեր արկեալ օրինակս երկրորդէ: Եւ այն իսկ է ախորժալուր առ այնոսիկ՝ որք հետամուտքն են հնախօսութեանց, և ցանկան գիտել՝ թէ յինչ միտս խօսեցան զայսպիսիս նախնի իմաստասէրք և բանաստեղծք: Եւ թէ քաջ խորհիմք, ոչ փոքր իմաստ քաղեն իմաստունք յայսպիսի օրինակաց, հայելով ոչ յառասպելն, այլ՝ յիմաստ առասպելացն. ոչ 'ի անուն կեղծիս, այլ՝ 'ի նշանակեալն նոքօք: Վ̅ս և տեսանեմք զի̅ք 'ի սրբոց վ̅դպաց բ̅լ անգամ այսպիսեօք վարեցեալ օրինակօք, և մինչ զմեծն գրիգոր ածաբանն. և այս այնչափ՝ մինչև կայ և գիրք առանձին յօրինեալ՝ ա̅ք ասի, 'ի Նոննոսէ հին մատենագրէ յունաց, և թարգմանեալ 'ի նախնեաց անտի մերոց. ուր առաջին գնի մեկնութիւնք առասպելացն յիշատակելոց յածաբանէն յընթացս ճառից ինչ իւրոց: Զնոյն գտանես ուրեք ուրեք և 'ի գիրս հարց մերոց, որք զգործս արտաքին իմաստասիրաց կամ զառակաբանութիւնս բանաստեղծից 'ի մէջ առնուն. որպէս է տեսանել 'ի գիրս Մովսէսի Խորենացւոյն, մեծին Խորրդոյ, Ներսէսի Շնորհալւոյ, և ն: Իսկ իմաստալից թուղթք Գրիգորի Մագիստրոսի առն իմաստա-

տասի-

տառիցն՝ գլխովին այսպիսիք են զօդել. մինչև ոչ ինչ տարակոյս թուի ըստ գիտնաւոր հնախօսութեան և ըստ հանճարաւոր ճարտարմտութեան՝ որպէս և ԺԲ իշխանագուն չքոյ զթեսաւրս երկդ մագիստրոս ձայնել, և զմագիստրոս՝ առաջին թեսաւրոս։ Զայսուիկ ասացաք՝ զի մի ոք 'ի տխմարաց այլազգ ինչ խորհեսցի, այլ՝ ուղիղ իմասցի զմիտս թեսաւրոսի, հայելով 'ի վախճանն՝ որ վն յորջորջէ հեղինակս զօրինակս արտաքնոց։

Զ. Այլ քանզի բազումք յառասպելաց անուն կամ 'ի հին պատմութեանց՝ համառօտ ոճով յիշատակեալք 'ի հեղինակս, անծանօթ գտանին բազմաց, կարևոր համարեցաք յաւելուլ 'ի վախճան գործոյն կարճ 'ի կարճոյ բացատրութիւնս կամ հանրական ծանօթութիւնս. զի որ չունի բնաւ տեղեկութիւն զայսպիսեաց, դժուարանայ իմանալ զմիտս հեղինակիս։ Ասացի՝ կարճ 'ի կարճոյ և հանրական. զի այնչափ որչափ ինչ պէտք եղեն առ իմացուած օրինակին. զի չէին մեզ կամք յանհեթեթ առասպելս դեգերիլ, և կամ մեկնութիւնս ճարձակս ճառել, այլ զյիշատակեալսն բացայայտել։ Նովին մտօք եդաք և ինչ ինչ ծանօթութիւնս 'ի բացատրութիւն այլոց բանից հեղինակիս, ուր ուրեք արժանի ինչ տեղեկութեան գտաւ եղև. զանց արարեալ զայլովք՝ որք ոչինչ օգտէին 'ի գիտել կամ յոչ գիտել. կամ որք ընդ տեսութբ մտաց անկանէին, և ուշադիր անձանց պայծառ երևէին։ Իսկ առ դիւրագիւտ լինելոյ այսց ծանօթութեանց, զի թէ որ բան յոր տեղի հայիցի, նշանակեցաք յընթացս բանին փակագծիւ թուանշանս ըստ կարգի, և նովին կարգաւ զնոյն թուանշանս եդաք առընթեր միոյ միոյ 'ի ծանօթութեանց. իբր զի որ ոք յընթեռնուլ զբանս գրոյս՝ տեսանէ թուանշան ինչ փակեալ 'ի մէջ 'եղնգնաձև գծից, ծանիցէ թէ կայ ծանօթութեն մատնաւոր 'ի վր առաջիկայ բանից 'ի վախճան մատենիս ընդ նովին թուագրով։

Է. Եւ արդ՝ 'ի կնքել զբանս, յորդոր ընծայեմք բարեպաշտ ընթերցասիրաց և ճշմարտիւ իմաստասէր անձանց՝ քաղել զօգուտ ոգւոց յօգտակար գրոց.

գրոց, և առնուլ խրատ յուղղութիւն վարուց 'ի բարոյականս իմաստասիրութե՟. զի և միակ վախճան բարոյական վճարումն է ուղղել զվարս, կմ՟ կանոնաւորել զբարս մարդկան. իմաստնացուցանել զիմաստասէրս, և առաքինացուցանել զառաքինասէրս: Ո՛չ կոչեցաք զսա յունական ձայնիւ ԷԹԻՔՈՅՈՒԹԻ, այլ՝ զստուգաբանութիւնն ընտրեցաք, որ է ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻ. զի մի ոք կարծեսցէ զսա իբր լոկ ուսումնական գրութիւն, որպէս կարծի բարոյականն՝ մին 'ի չորից մասանց փիլիսոփայութե՟, այլ՝ ծանիցէ լինել ախրապէս հոգեխրատ վճարումն՝ իմաստասիրական ոճով կարգեալ 'ի պէտս ախրաղաց ճշմարիտ իմաստութե՟, որ այն ինքն է ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ըստ յորայ ձայնին. ԻԷ. 28:

Զայս եթէ տառացին բարեաւք ընթերցողք, և կամ նպաստ 'ի նոյն առցեն զայս մատեան իմաստասիրական, յայնժամ ոչ միայն հեղինակ սոր գովելի արգիւնաւոր գտանի, այլև իմս գուղնաքեայ աշխատասիրութիւն 'ի թարգմանութե՟ ոչ անպտուղ եղանէ: Այսմ եւեթ փափաքէ անձն իմ, և զայս եւեթ խնդրեմ. զի մի անգործ մնասցէ աշխատութիւն երկոցունց վաստակաբեկ ծերունեաց. հեղինակին՝ որ յութնամեայ հասակի յայսպիսի գործ եղև ձեռնամուխ, և թարգմանչիս՝ որ վեցիւք եւեթ ամօք կրտսեր քան զնա՝ անվեհեր արկի զանձն իմ 'ի նորին դժուարաքերան գործակցութիւն, ըստ մանաւոր ակնարկութեան գերյարգոյ բարունապետիս մերոյ, 'ի փառս և 'ի պատիւ ամենատին, և յօգուտ հայկազեանս տոհմի:

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

# ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

## ՎԱԽՃԱՆ ԵՒ ԷՈՒԹԻՒՆ

Բարոյական առաքինութեան:

### ԳԼՈՒԽ. Ա.

Յաղագս վախճանի բարոյական իմաստասիրութե՛,

էր

Յաղագս մարդկային երջանկութեան, և գերագոյն բարւոյ:

ՈՎ ԵՐՋԱՆԻԿ ԱՐՈՒԵՍՏԻՍ որ ուսուցանէ լինել երջանիկ. այլ ով յետին թշուառութե՛ մարդկան, որք ոչինչ իմիք այնպէս ըղձանան, որպէս երջանկութեան, և յոչինչ իրաց այնպէս խորշին, որպէս 'ի նմանէ:

Բայց զինչ զարմանք են, եթէ մեծամեծ փիլիսոփայք եւս 'ի յուզել զնէ՛ն ընդ մեծամեծս զաւաշմանէ նորա, կորուսանեն զերջանկութիւն անդէն եւս 'ի խնդրելն զնա:

Երեք

Երեք կերպարանք բարեաց ակնյանդիման երեւին որոց երջանիկն լինել կամին. արտաքին բարիք, մարմնաւոր բարիք, եւ հոգւոյ բարիք։

Բարիքն անարգք՝ են պատրաստականք, եւ ընտիրքն՝ առաժամանականք. մարմնոյքն՝ վաղանցուկք, եւ հոգւոյքն՝ բացականք։ Իսկ արդ՝ ո՞ւր գտցուք զճշմարիտն երջանկութիւն յայսչափ սոսց միջի։

Արտաքուստն կարի իմն ուժգին զխանդակաթ միտս արտաքին բարիք, այսինքն են Մեծութիւն եւ Պատիւ. բարիք՝ այս ազնուագոյնք քան զմարմնականս. իբր զի արտաքինքն հաստատեալ են ՚ի կարծիս՝ որ անպէտական է մարդոյ, եւ մարմնականքն ՚ի զգայութեան՝ որ հասարակ է կենդանեաց։

Բայց զիա՞րդ լինիցի մարդոյ բարի այն, որ չէ ՚ի մարդ. եւ զիա՞րդ լինիցին ՚ի մարդ այս բարիք, որովհետեւ պատիւն է ՚ի պատուօղն, եւ ոչ ՚ի պատուեալն. եւ Մեծութիւնքն յարկղն մեծատան, եւ ոչ ՚ի մեծատունն։

Իրաւամբք՝ Մեծութիւնք եւ պատիւ՝ բարիք կոչին բախտի. որոյ ոչ կարացեալ պարգեւել բազում ինչ, եւ պարգեւեալ բազմաց, պատրանօք եւ վաղանցուկ թէ՝ է զի պարգեւէ, եւ է՝ զի բառնայ. յանհաստատութեան միայն կացեալ հաստատուն։

Բայց զո՞ր բարիս հնար իցէ բախտի պարգեւել, որք յաչս աչալրջաց չիցեն առաւել անուանի ՚ի յարգի, եւ յոլովակի վնասակար՝ քան պիտանի։

Զինչ են ոսկի եւ ակունք պատուականք, բայց պղպղուն գիրուք հողոյ. որք ՚ի գանձատունս եւ յարկեղս բանտարգել առնեն զսիրտ բանտարկողի իրեանց, եւ սատակեցուցանեն զստացիչ իւրեանց։ Զինչ են գովեստից հաչակք, բայց ծխային շունչք բերանոց ռամկաց՝ յօդաւորեալք յատամնամէջս շրթանց. իբր զի կից է ընդ համբոյր գովեստի՝ խածատողութիւն նախանձու։ Զինչ են գահոյք իշխանականք՝ եւ աթոռք թագաւորականք, բայց շարժ դահաւանդք. ուր բազումք՝ որք երջանիկ զանձինս կարծէին, չափեալ գելս ընդ եզ իւրեանց՝ գահին անհնարին արհաւիրս ՚ի գերակայ պատուս։

Անմարթ է երջանիկ կոչել զայն, որոյ կախեալ

Դյողդ.

գլուգլուղ բախման՝ յերկրի կայ հանապազ ը̄ մէջ գլրգանաց և վշտաց վտանգի, ը̄ մէջ յուսոյ և երկիւղի ։

Վայ այնմ՝ որ երկնչի, և ևս վայ այնմ՝ որ ոչն երկնչի. զի նա երկուցեալ միշտ 'ի պատահարացն՝ որ 'ի վ̄ր գան յոլովակի, յանձին զգայ զարկածն՝ մինչև իցեն եկեալ. և սա ոչ երկուցեալ յայնմանէ՝ որում հնար է դիպել, արժանի է՝ թէ 'ի վերայ եկեսցէ՝ որում ոչն խնթայր ։

Իսկ արդ՝ եթէ յարտաքին բարիս անմարթ է լինել ճշմարիտ երջանկութն, տեսցուք՝ թէ հնար իցէ նմա լինել 'ի մարմնաւոր բարիս. որպիսի են առողջութիւն, զօրութիւն, և հաճոյք մարմնոյ ։

Այս բարիք անտարակոյս այնչափ մեծ են քան զարտաքինսն, որչափ առաւել ներքին են՝ և իրական, և հարկաւոր առ կեանս. վասն այսորիկ արտաքինքն կոչին օգտակար բարիք. զի ծառայեն մարմնական բարեաց. և սոքա կոչին պէտքական բարիք, զի պահպանեն զէութիւն մարդկեղէն մարմնոյ ։ Զնդքօք յածի երևակայութն, և զայքօք զգայութի ։

Բայց և այնպէս՝ զիա՞րդ հնար իցէ երջանկութն, որ սեպհական է մարդոյ, լինել 'ի բարիս՝ որ չեն սեպհական մարդոյ. զի չէ սեպհական այն՝ որ ընդ այլոց է հասարակ ։

Հասարակաց են կեանք ընդ կաղնիս, որք ը̄ մեզ ծնեալ, բայց զօրագոյն ես՝ և կարովագոյն քան զմեզ լեալ՝ դեռ առոյգ են, մինչ մեք յեռումք յալիս ծերութեան ։

Հասարակաց են զգայական հեշտութիւնք ը̄ անասունս. որք երջանկագոյն լինէին արդեօք, որչափ առաւելուն նոքօք, և որչափ նուազ խմանան զկեալ լինել իւրեանց 'ի նշէ ։ Նա զինչ բարիք այնք իցեն, ը̄ որս այնչափ չարիք են անբաւ լծորդք ։ Խորհրդով հռովմայեցիք միահաղոյն պաշտօն մատուցանէին վոլուպտեայ դից հեշտութե, և անգերոնեայ դից դառնութե (1) ։ Երկաքանչիւրոցն կանգնեցին ուրոյն մեհեան. բայց 'ի միոյն մեհենի՝ միասին զոհէին ։ Իբր զի այնպէս լծորդ են ընդ միմեանս հեշտութիւն և դառնութի, մինչև յօդնել ն՞ր՝

իւ-

խնթալի է 'ի սմանէ, և 'ի ձևանալ սորա՝ յուսալի է 'ի նա. զի 'ի մի վայրկեան 'ի միմեանս յեղափոխին: Ծանծի նաւելոյ 'ի վերայ մեղու՝ մեղրն լինի սուող, և հեշտութիւն փոխի 'ի դառնութի:
Ասէ զինչ է հեշտութիւն, բայց այլայլութիւն անտեկան: Զինչ է առողջութիւն, բայց չորից հիւթոց զուգախառնութիւն՝ 'ի չորից տարերաց մշտաբաղխ: Զինչ են կեանք, բայց հոսումն յաջորդական վայրկենից. որոց միայն ծնունդ՝ է միաւոյն մահ: Յայնժամ սկսանի մարդ մեռանիլ, յորժամ սկիզբն առնէ կեալ: Եւ զինչ է մարմին, բայց տատանողական հիւանդանոց. յորում չեն այնչափ անդամք, որչափ են ախտք՝ նոցին պատկանաւորք:
Արդ՝ եթէ սեպհական երջանկութիւն մարդոյ ոչ գտանի՝ ոչ յարտաքին և յօգտակար բարիս, և ոչ 'ի մարմնական և 'ի բերկրական բարիս, ապա է 'ի հոգեւոր բարիս. զի է՝ յառաջադիմութիւն հոգւոյ. որք են բարիք սեպհականք մարդոյ, գերագոյն կատարելութիւն բնութեան բանականի, և սքանչելի հազորդութիւն ածայնոյն:
Այսպիսիքն ճշմարիտ բարիք, զորս հնար է մարդոյ ստանալ անձամբ, և պարգևել անձին, և վայելել յանձին, աննախանձ և աներկիւղ. գիտելով, թէ երկնի ոչ են կամք բառնալ զնա յիւրոց, և Ը երկնաւոյ չէ ումեք հնար բառնալ զնա, զի զօղեալ կան յոգի:
(2). 'Ի կշիռ կրիտողայոսի սոփեստի՝ առաւել ծանրակշիռ է փոքրիկ ինչ առաքինութիւն՝ քան զամենայն ոսկի աշխարհի. զի չիք ինչ համեմատութիւն 'ի մէջ ածայնոց և անցաւորաց:
Սոյգ իմն է՝ թէ կարողութիւնն ոչ հանգչի յունակութիւ, այլ՝ 'ի ներգործութիւ առաքինութեց:
Որպէս գոյն է կարգեալ 'ի գործել, նոյնպէս ունակութիւն առաքինութե է կարգեալ առ գործ առաքինական. և կարգելոյն առ վախճան ինչ՝ անհնար է լինել վերջին վախճան: Եւ թէ երջանկութիւն է սակս ամ փիլիսոփայից՝ է վերջին վախճան մդոյ, լրումն ցանկութեց՝ և բովանդակութ բարեաց, յայտ է թէ երջանկութիւն ոչ է յունակութե առաքինութե,
այլ

այլ՝ 'ի ներգործութեան ։

Զի երջանկութիւնն առանց զուարճութեան, որպէս ունիս լսել. և զուարճութիւն առաքինութեան չիք առանց զճաշակ, բայց եթէ առաքինօրէն գործելով ։

Արուեստաւորն 'ի ննջել իւրում ունի զունակութիւն արուեստին. առաքինին 'ի ննջել իւրում ունի զունակութիւն առաքինութեան. բայց ոչ արուեստաւորն 'ի ննջել իւրում զգայ զբերկրութիւն արուեստին, և ոչ առաքինին 'ի ննջել իւրում զգայ զբերկրութիւն առաքինութեան ։

Վասն այսորիկ երջանիկն ըստ կիսոյ կենացն չէ ինչ ընդհատ յաներջանկէն. զի չէ աներջանիկ՝ որ ոչ զգայ զիւր թշուառութիւն. և ոչ երջանիկ՝ որ ոչ զգայ զիւր երջանկութիւն. և չէ հնար զգալ. յորժամ զգայութիւնք կամ մաշուածք բարձեալ են, և կամ յեղբօրէ մահու կապեալ, (ժէ 'ի ժող) ։

Ուր խնդայ պատկերահանն, յորժամ կանոնքն 'ի միտս՝ և գոյնք 'ի վերայ պնակատ՝ կան անգործ. այլ՝ յորժամ ըստ այնոց կանոնաց, 'ի սերմանց անտի գունոց ծնուցանէ 'ի մեռեալ գաստառակի կենդանագրութիւն ինչ պատկերի. որոյ չունելով զգայութիւն՝ խաբէ զզգայարանս՝ որոց հային 'ի նա. և արուեստաւորն խնդայ ընդ ճարտարահնար իւր խաբէութիւն ։

Վասն այսորիկ՝ որպէս արուեստագէտն յիւրմէ արուեստէ. նոյնպէս առաքինին յիւրմէ առաքինութենէ բուռն բերմամբ անդադար վարի և մղի 'ի գործ. և թէ յարտաքին բռնութենէ գործածութիւն ունակութեան խափանի, խափանի և երջանկութիւնն. զի ոչ կեայ առ յունակութեան, այլ 'ի ներգործութեան ։

Ապա ամենայն առաքինութիւն նպաստամատոյց է երջանկութեան ըստ իւրում մասին. զի որպէս առաքինութիւնն է սեռ ինչ՝ որ փակէ ընդ իւրև զբազում առաքինութիւնս մի քան զմի մեծագոյնս, նոյնպէս երջանկութիւնն է բարի ինչ, որ փակէ ընդ իւրև բազում բարիս մի քան զմի առաւելեալս ։ Այս երջանկութիւն հաստատեալ է 'ի գործ առաքինութեանց, բայց առաւելապէս վեհագունիցն և գերակայից. որպէս ցուցցի յիւրում պահու ։

Գ. Լ.

## ԳԼ. Բ.

### Յաղագս թէ ունի՞ն դերս ինչ առ երջանկութիւն. և յաղագս ծուլական առաձգանի նորա ։

Տարապայման իմաստասիրեցին ստոյիկեանք.
„ թէ բարիք հոգւոյ միայն՝ են բարիք. իսկ ար-
„ տաքինքն և բերկրականք՝ են չարք, և ոչ բա-
„ րիք. ոչ միայն անպիտանք, այլև վնասակարք
„ առաքինութեան, վասն որոյ և իսկապէս մա-
„ հարկեր մարդկային երջանկութեան ։

Պնդէին սոքա, թէ ճոխութիւն, դիւրութիւն,
„ առողջութիւն, իշխանութիւն, և զուարճք, չեն
„ բարիք. զի անմարթ է՝ (ասէին), թէ այն ինչ ա-
„ ռաքինւոյն իցէ բարի, յոր կարէ վայելել և մա-
„ լին. և վասն զի երջանկութիւնն է անփոփոխ
„ և մնայուն բարի, ամենայն՝ որ ինչ դիմադարձի
„ անդորրութեան, դիմադարձի և երջանկութեան ։

Զսորին հակառակն՝ պնդէին, թէ չքաւորութիւն,
„ չարակրութիւն, կուրութիւն, թշնամանք, խօթու-
„ թիւնք և ցաւք՝ ոչ կարեն երջանկին լինել չար.
„ զի 'ի պահել նորա յոգի իւր զառաքինութիւն պահէ ողջ
„ անարատ զերջանկութիւն ։ Սասանեսցի այնպիսին
„ 'ի ձիւնաբերս լերանց կովկասու, ճենճերեսցի 'ի
„ հրացեալ ցուլ փալարիսի (3). չատ է միայն ա-
„ ռաքինութիւն առնել զնա երանելի 'ի տանջանս ։

Չէ այս իմաստասիրութիւն մարդոյ քաղաքայնոյ, այլ իմաստակութի առն վայրենաբարոյի. զի անմարդացուցանէ զմիտս, և անբնացուցանէ զբնութիւն, և գինաւոր սառուցէ ազատանէ զզգայարան։ Ոչ որոշէին սոքա զչարն 'ի բարւոյ, ոչ զբարին 'ի լաւէ, ոչ զչափազանցն 'ի չափաւորէ, և ոչ զբովանդակեալ երջանկութիւնն յանբովանդակէ։ (4). Արիստոտէլ մարդկօրէն տրամաբանելով՝ և ոչ անասնօրէն, որպէս բարի կոչէ զայն ամենայն՝ զոր կարգեալ է բնութիւնն առ բարի վախճան, նոյնպէս բաժանէ զբարին յերիս դասս. 'ի ՓՈՔՈՒՆՍ, 'ի ՄԻՋԱԿԱՅԻՆՍ, և 'ի ՄԵԾԱՄԵԾՍ ։

Փոքունս կոչէ զարտաքին բարիս. միջակայինս՝ զմարմնականս. մեծամեծս՝ զառաքինութիւնս։ Բայց

դէմ ը̄ միմեամբք դասաւորեալ. զի արտաքինքն են 'ի պէտս մարմնոյ. մարմինն 'ի պէտս հոգւոյ. և հոգին 'ի պէտս առաքինական գործոց, այսինքն

երջանկութեան :

Ստոյգ է թէ առ առաքինութիւք արտաքին բարիք են թեթևք և պատիրք. և մարմնականքն՝ սնոտիք և անցաւորք, ոպ̄ ասացաք. բայց չեն պատիրք և ոչ սնոտիք, ցորչափ իրք լծորդեալք ընդ առաքինութեան՝ արբանեկեն վերջին և գերերջանիկ վախճանի : Նա՝ չէր արժան ուրեք ստանալ զփոքր բարիս, բայց միայն այնմ՝ որ ստացեալ ունի զմեծամեծ բարիս : Նա՝ է արժանաւոր զինուց, որ գիտէ արիագոյն 'ի գործ ածել զայնս . և նա է արժանի բարեաց մարմնոյ և բախտի, որ գիտէ զնոսա առաքինագոյն 'ի կիր արկանել:

Ճոխութիւնք 'ի ձեռս առաքինւոյն են օգտակար բարիք. այլ 'ի ձեռս մոլեկանին են վնասակար բարիք: Վն̄ որոյ վերնախնամ տեսչութիւն, որ առաւել սիրող է խորոց նմանեաց՝ քան հակառակողաց, ոչ վս̄ մոլեաց, այլ՝ վս̄ առաքինեաց արար զաշխարհ:

Արդ երջանկութիւն տիրապէս հաստատեալ է 'ի բարիս հոգւոյ, և հետևաբար յայլ բարիս. զի է նա հաւաքումն ամ̄ բարեաց, մեծաց՝ միջակայնոց և փոքունց: Եւ թէպէտ գունդնաքեայ գոլով ոչ՝ չառնեն զերջանկութիւն կարի իմն մեծ, սակայն պակասութիւն նոցա մեծապէս զնա նուազէ :

Բառնայ զճարակ 'ի բոցոյ, որ բառնայ զայսպիսի եկամուտ բարիս յառաքինութենէ:

Ոչ կարէ 'ի գործ արկանել զառատաձեռնութիւն, որ ոչն ունի ինչս. և ոչ զարիութիւն, որոյ չիք զօրութ. և ոչ զգերագոյն խոհեմութիւն, որ չունի ինչ գահերիցութիւն կամ իշխանութիւն: Որչափ ինչ բառնի յառաքինութենէ, այնչափ ինչ բառնի յերջանկութենէ:

Արդ՝ եթէ միայն պակասութիւն այսոց բարեաց՝ այսչափ վնասակար է գերագոյն բարւոյ, քանի առաւել յառաջացուցանեն զնա չարիք դէմ ը̄ դէմ հակառակք. չքաւորութիւն, ցաւք, վէրք, գեղարանք և քերանք :

(5). Շաղփաղփեցին որչափ և կամին՝ կինիկոս յիւր-

մէ կարասէ. և մտադրութիւն յիւրմէ քարանձաւէ՝ զմտացածինն զայն և զանլուր անշարժութիւն 'ի ցուլ փաղարեան. ոչ ոք յողջամտաց հաւատայ երբեք, թէ լինիցին բնաւորապէս միանգամայն 'ի միում ժամանակի 'ի մի մարմին մարդկային երկու շարժմունք ներհակականք. սաստիկ տանջումն, և կատարեալ երանութիւն: Հասարակաց զգայութիւն ստէ զնոցա անզգայութիւն:

Մարմինն է գործարան հոգւոյ. ոչ բաւեալ կարողանայ գործել հոգի, եթէ աւեր է գործարանն. և 'ի խափանել գործողութեան՝ երջանկութիւն նորա խափանի:

Ապա չէ կատարեալ երջանկութիւն միայն 'ի բարիս հոգւոյ. բայց ոչ կատարեալ՝ և ոչ անկատար հնար է նմա լինել՝ առանց երկուց յատկութեանց 'ի նա յարելոց, և 'ի միմեանց ծնելոց, այն են հանգստութիւն և զուարճութիւն:

Զէ երջանկութիւն, եթէ չէ համեստ. զի ծնանի սա յառաքինական ունակութեանց, որք են համեստ բարեք: Այլ համեստ լինել չէ հնար, թէ չիցէ զուարճալի. զի յատուկ է ունակութեան առնել զգործն բերկրական:

Ապա եթէ երջանկութիւն է լրումն ցանկութեանց, հարկ է՝ թէ իցէ և լրումն բերկրանաց. բայց բերկրանաց՝ որ պատուոյ են արժանի, և ոչ նշաւակ նախանձու. զոլով բարձրութեան առաքինութեան առանց ամբարտաւանութեան, զուարճարար ստացողին՝ և ոչ ումեք վնասարար:

Ընդ այսր երկուց ձրից ներքնոց լծորդին երկու այլ ձիրք, որք չեն էականք, բայց յոյժ պիտանիք. յաջողութիւն և ապահովութիւն:

Զի առ երջանկութիւն չէ զուգակիր ընդ ցաւոց, նոյնպէս չէ զուգակիր ընդ երկիւղի. զի ոչ այնչափ ուրախ առնէ բարին՝ յոր ոք վայելէ, որչափ տրտմեցուցանէ չարն՝ յորմէ կասկածէ:

Գերագոյն երջանկութիւն թուէր՝ երջանկութիւն բռնաւորին սիրականաց, ամենայնիւ յղփութ բազմախորտիկ սեղանոյ, անչափ գրգանաց, և մեծաշուք պատուոյ. սակայն և այնու էր նա ամենաթշուառ.

զի

զի միշտ խորհէր 'ի մի գլխոյ իւրոյ սուսեր սուր կախեալ զդիւրախզելի ասղանւոյ: Զայնչափ ճըշմարիտ քաղցրութիւն գառնացուցանէր նմա երևակայութիւն վտանգի. և մի անուշակ օշարակ թուէր նմա թոյն. (6):

Այլ թէպէտ և այնչափ լինէր հաւատարմութիւն բախտի կամ վտանգի մտաց, մինչև փարատել զմի երկիւղ. բայց քանի՜ ձախորդութիւնք դիպին, զորոց չէր ուրեք կասկած:

Զառժամայն երջանկութիւն այժմ մարթ է կոչել ուրախութիւն, բայց ոչ երջանկութիւն. զի ուրախութիւն է կայտառութիւն ինչ սրտի, այլ երջանկութիւն է յարաձգեալ իմն յաջողուած: Նա չափի այժմեան առարկայիւք, սա ձնայուն ունակութեամբ. նա սկըզբամբ, սա վախճանաւ:

Չէ ախորժակ նաւարկութիւն, որ պարզէ զառագաստս ախորժակ հողմոց, եթէ ոչ հասուցանէ 'ի դէմ եզեր նաւահանգիստ: Նա՛ չէք նաւարկութեան աւաղելի քան զայն. որ պատահէ յետ ախորժակ նաւորդութեան. և ոչ թշուառութիւն եղերական՝ քան զայն, որ 'ի վերայ հասանէ կենաց բարեկըութեան:

Վերջին գիծն է՝ որ երկրաչափական ձևոց դնէ անուն: Վերջին ռանփոխն է՝ որ զընթացս ոլիմպիական ասպարիզին առնէ բարեբախտ կամ դժբախտ: Վերջին օրն է՝ որ յայտ առնէ, արդեօք կրասոս և կրեսոս երջանիկ իցեն, թէ թշուառ: Կա՛ց հա՛յեաց 'ի վախճանն՝ ասէր սողոն կրեսոսի. զի գործ վախճանն, և զօրն երեկոյն առնէ գովելի. (7):

Յառաջելոց աստի հնար է քեզ դիւրաւ հասանել զբովանդակեալ և զկատարեալ սահման երջանկութեան՝ ըստ մտաց արիստոտէլի, և ոչ ստոյիկեանց. Երջանկութիւն է գործ առաքինութեան հոգւոյ՝ համեմատ աննախատելի, ու ստանալ արդեամբ և ճարտարար բարեաց իւր ընտանեաց. ընկերական համբաւոյ և պատրաստութեան իւր ըմբռնոց. և յարաժամեան առողջութեան և յաջողութեան:

Այս է հաւաքումն այն մի բարեաց, զոր արժան է կոչել գերագոյն բարի, բովանդակեալ երջանկութիւն, և երանութիւն բնական. զի խօսիլ զերկնայնոյն ոչ է փիլիսոփայի, այլ՝ բարձրագոյն եւս խոհականի. (8):

## ԳԼ. Գ:

### ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԱՌ ԱՅՍ ԱՌԱՋԻՆՆ. ԵՒ ՆՈՑԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ:

» Ոչ խորդ հնար է առնել, թէ այդչափ այլ և այլ
» բարիք ը այսչափ դժուարին պարագայս ընծրդք՝
» բնաւորապէս ժողովեսցին 'ի մի մարդ: Կարի սա-
» կաւուց է՝ մատչիլ միանգամայն 'ի մէջ երջանկու-
» թե և կենաց. և 'ի տաճարի բախտի 'ի նոյն բախ-
» տէ թագուհին ընունել: Եթէ մեծաց առաքինու-
» թեց պիտին մեծ ճոխուն, մեծ զօրուն, մեծ ա-
» ւագուն. և եթէ աւագուն՝ զօրուն և ճոխուն
» են բարիք ժամ 'ի ժամէ փոփոխականք, զխորդ
» հնար իցէ 'ի վր անկայուն աւազոյս հիմնել ըղ-
» բարձր զայս աշտարակ: Բախտն և բնութին պար-
» գևատու են մեծամեծ իրաց. այլ չեն երաշխաւոր
» իւրեանց պարգևաց:

» Ոչ ոք 'ի մգկանէ երբէք առաւելաւ նմ բարեօք
» ոպ զՕգոստոս կայսր յորբունս հասանել: Ունէր
» մեծ առաքինութի ը մեծի իմաստութե, մեծ վայելս
» փափկութե՝ ը մեծի չափաւորութե, մեծամեծ ա-
» րարս՝ ը մեծի կորովութե, մեծամեծ գանձս՝ ընդ
» մեծի ապահովութե, մեծ ինքնակալութի՝ ը մեծի
» խաղաղութե, մեծ համակամութի կնոջ, բարեմտութի
» բարեկամաց, եւր ժողովրդոց: Նա որ ոչ արդեօք
» պատահեաց այլոց, իւր դերադոյն բարեբաստու-
» թեք՝ ոչ բախտի էին ձիրք, այլ՝ իւրոյ առաքինութե:
» Սակայն և այնքան յայնչափ մեծամեծ բարիս սպրդե-
» ցին մտին անհնարին վիշտք՝ վն յառաջածանօթ չա-
» րութե ժառանգաւորին, վն խորամանկեալ մահու-
» որդւոյն, և վն խառն անկողնոյ դստերաց:

» (9). Ճշմարիտ երջանկութի թուի երջանկութե ազ-
» զայոսի, զոր կոչեաց պատգամախօսն՝ երջանիկ
» քան զմմ մգ. զի անձին միայնոյ էր ծանուցել.
» վն և չէր կարօղ կրել կմ առնել ինչ վնաս. սա-
» կաւ ինչ ունէր, և ոչ իմիք այլ ըղձանայր. և
» մշակեալ զիւր փոքրիկ անդ՝ բաւական 'ի սնունդ
» իւրոյ մշակողին, անդէն ծնաւ՝ սնաւ և մեռաւ.
» և ոչ երբէք ել անտի:

Այս

» Այսպս չափ էր սահմանել զերջանկութիւն՝ կենաց իւր
» անձին նորա, իբրև զկեանս ոսկեղէն դարուն. (10):
» Իսկ զորին հեղինակն՝ թուի թէ երջանկութեա սահ-
» մանեալ յարիստոտելէ՝ իցէ մատուցածին ինչ. և ոչ
» իրական. կամ թէ իմաստասիրութիւն բարոյական օգ-
» տակար իմն իցէ, այլ ոչ հարկաւոր. որովհետև
» վախճանի նորա՝ առ որ պիտոյին այսչափ բարիք,
» հնար է ցանկալ, այլ ոչ ակն ունել:

Բայց՝ կամ է ինձ զիջանել առ կարծիսդ, թէ երջանկութիւն նկարագրեալ 'ի փիլիսոփայէն՝ է ցանցառագիւտ և վսեմական ինչ գաղափար. բայց և այնպէս յայս գաղափար գէտակն ունի իմաստասիրութիւն բարոյական. զի որ ոչն կարողանայ հասանել յայն, գէթ մօտ մատչիցի:

Նաւուղիղն՝ որ ոչ կարէ ընթանալ լիուլի հողմով, ընթանայ կիսոյ կիսով. և թէ առագաստն ոչ դարձուցանէ զնմ զգոգ իւր ուղղագիծ հողմոյ, պարզի փոքր մի կողմնակի. և նմ հնար հնարի, միայն թէ նաւն յառաջ վարեսցի:

Այնօրինակ զիմաստութիւն, զառաքինութի, զբանաստեղծութի, և զպատկերահանութի ուսուցանեն յայս միտ, զի որ տկարանայ 'ի գլուխ ելանել, գէթ ելցէ՝ ուր կարող իցէ: Իսկ թէ չէ ապեղէս 'ի նկարել զգիւցազունս, լիցի զուգիւն 'ի նկարել զեղնաւորս. (11):

Իմաստասիրութիւն բարոյական տեսեալ՝ թէ մարդն է կենդանի ընկերական, և ոչ վայրենի, զկեանս իւր կարգէ տիրապէս առ կեանս քաղաքական. որում անկ են մեծամեծ բարիք վ̃ մեծամեծ առաքինուե՛ց, որք հային 'ի հ̃րկաց օգուտ. այլ են առատաձեռնութի, մեծագործութի, վեհանձնութի, քաղաքական և զինուորական առաջնորդութի:

Սակաւ բարիք պիտոյին ազգայնոյ մենակեցի. զի չափ են նմա փոքր առաքինութիք: Երջանկութի ոսկեղէն դարուն չափ էր աշխարհի նորածնելոյ, յորժամ միապէս երջանիկ էին հովիւք և խաշինք, և չէին մի քան զմի վերադաս: Բայց յառաւելուլ աշխարհի՝ հարկ եղև առաւելուլ և ուսմանց, արուեստից և գիտութեանց. և ակիզբն առին ընդ մեծաց մոլութեանց մե-

ծա-

ծամեծ առաքինութիւնք:

Յայտ է թէ իմաստասիրութիւն խակ ուսուցանէ զկանոնս միայնաւոր կենաց՝ վնր, որ ծնաւ միայն վն իւր. զի թէ չէ յանկաւոր լինելի երջանկութ մեծին օգոստոսի, գէթ վայելեսցէ առանձինն 'ի հանգարտութ աղքատին ագղայոսի.

Որ չէ ձեռնհաս տանել զայն՝ որում ցանկայ, այնմ ցանկասցի՝ զոր կարող իցէ տանել: Եթէ բարիք բախտին նուազ են քան զկիտոյն, շատասցի բարեօք բնութ՝ որ սակաւուք շատանայ. և թէ սոքա փոքր են քան զցանկութն, վայելեսցէ յիւր առաքինութիւնս, որք են աներկեան. և թէ չէ կարող գործել զմեծամեծ առաքինութիւնս. արկցէ 'ի գործ զփոքունս: Բայց եթէ ոչ միայն բախտն, և բնութիւն սորջասցին 'ի պարգեւս իւրեանց, այլ և թշնամին, բռնաւորն, և վերին հրամանն խակ միաբան զինեսցին ընդդէմ առաքինւոյն, ոչ միայն մերկել զնա յամ բարեաց, այլ և ծանրաբեռնել ամ չարեօք, չքաւորութբ, հիւանդութբ, դժնդակ ցաւովք՝ և անողորմ տանջանօք, չասեմ զստոյիկեանցն՝ թէ չարիքն իցեն բարիք, այլ թէ 'ի չարիս անդ հնար է վայելել 'ի մեծամեծ բարիս: Չասեմ թէ առաքինին այնպէս երանելի իցէ 'ի ցուլ փաղարեան, որպ 'ի բայեան բաղանիս (12). այնպէս խրախամիտ 'ի սուսերս և յանիւս, որպ 'ի փափուկ անկողնի և 'ի վարդմնի. և կմ թէ նախանձելի իցէ, և ոչ ախտակցութ արժանի: Այս լինէր յեղափոխել զբառս՝ 'ի հաւատացուցանել զանհաւատալիս: Այլ ասեմ, թէ յայնժամ տանջեալ առաքինին լինի այն թշուառ, բայց ոչ այնչափ՝ որչափ տանջանաւոր մոլին:

Երկու ինչ ուսուցանէ իմաստասիրութիւն բարոյական. յանձին բերել զցաւս, և համբերել չարեաց. վայելել չափաւորապէս 'ի յաջողութ, և տանիլ արիաբար ձախորդութց: Անհնար է երջանկութ լինել առանց առաքինութ. բայց հնար է առաքինութ լինել առանց երջանկութ: Աղաղակ բարձցէ, յոգւոց հանիցէ 'ի տանջանսն, զի մարդ է. բայց զի առաքինի է՝ զդեցցի քաջալերութ ինչ, յորմէ վրէպ է մոլին: Մխիթարեսցի անմեղութբ իւրով և առա-

քի-

քինութբ, գիտելով թէ զատ միայն յոչ կամաց բախտի և բնութե և բանաւորին և մահու՝ ընդ փոյթ տարցի ընդ իւր յանցանելն ընդ գերեզման, թողեալ յերկրի գերապանծ պարծանս :

Զայս ուսուցանէ իմաստասիրութիւն բարոյական՝ յուսուցանելն զառաքինութիւս : Ոչ փոքր գիտուն է գիտել, թէ է թշուառ :

## Գլ. Դ :

### Յաղագս թէ ո՞ւր իցէ ճշմարիտն երջանկութիւն :

Մարդն այն առեղծեալ գոյացութիւն ունի ինչ սեպհական գործողութիւն. և նմ կարողութիւն գործողական՝ ընդհանուր անուամբ կոչի ոգի. որ է կարողութիւն և ոյժ գործելոյ : 'Ի զօրութեանց առաւել ոմանք են շարժողք և հարկաւորք, և ոմանք՝ կամաւորք և ստացականք : Չէք ինչ քար, կամ տունկ, կամ ձի, որոյ չիցէ բնաւորապէս գաղտնի ինչ զօրութիւն յայտնի և զարմանաւոր գործոց արտադրիչ, կամ առ իւր պահպանութիւն, և կամ 'ի նպաստաւորութիւն այլոց մարդկան, յոյր սակս աշխարհ նմ է 'ի վաստակս :

Ընթոր խոտ՝ ունի զօրութիւն թափելոյ զթոյն նապէլ խոտոյ : Վիմաչերձ բոյս՝ անմուրձ հերձու զքարինս : Մագնիս անձեռն գողանայ զերկաթ : Թմրաձուկն անչուան կապէ զձկնորսս : Եւ ձուկն նաւակալ՝ անհեղոյս բևեռէ ընդ ալիս զընթացս նաւու : Մարդկան իսկ ետ բնութիւն զզօրութիւն զատորոշ ընդ խաւանելոյ, զանձկութիւն ընդ անկոց, զգայական ընդ անասնոց, և զիմացական ընդ հրեշտակաց, բովանդակեալ 'ի նմա միայնում զբնական զօրութիս բովանդակ աշխարհի :

(13). Այլ բաց յայսց՝ հերակլեայ ետ ուժգին զօրութիւն, հեղինեայ զանձնման գեղեցկութիւն, և այլոց՝ զօրութիս զարմանաւորս առանձինն. զի յաղեքսանդրէ բուրէր անոյշ հոտ. տիբերիոս տեսանէր 'ի գիշերի. պիւռոս բժշկէր զախտս հպելով. աթենագորաս խաղայր ընդ իժից անվնաս. և այլոց տուան պէսպէս զօրութիւք, որք որչափ առաւելուն զզարմանս ազգաց՝ այնչափ նուազեն զստուգութիւն հաւատոյ :

Սո

Սոքա են զօրութիւնք այս գործողականք. բայց բնականք. ուստի և հարկաւորք՝ և ոչ ստացականք. 'ի բղխել բնաւորապէս զօրութէն յէութէ, և գործողութեան 'ի զօրութէ: Բայց թողեալ զայսոսիկ բնաւոր զօրութիս, կամաւոր և ստացական զօրութիւնք՝ (որք արամբ կոչին ՀԱԲԻՏՈՒՍ), են այնք՝ զորս ընծայէ մըանձին, տպաւորեալ յինքեան յերկարաւոր մարզութեամբ զօրականութեան ինչ գործադրէ ձևական գործոց՝
որ սեպհական են մարդոյ:

(14). Այս զօրութիւնք կամ առաքինութիւնք են, որք խոկագոյն և պանծագոյն ևս անուամբ կոչին առաքինական ունակութիւնք, կամ ունականական առաքինութիւնք. իբր զի են գեղեցիկ պատմուճանք և մեծագին զարդք հոգւոյ, պատուականք քան զբնական զօրութիս. զի բնականքն են ձիրք բնութե, իսկ սոքա ստացեալք ջանիւ: Յայսց ստացական առաքինութեանց ոմանք
են իմացականք, և ոմանք բարոյականք:

Իմացականք՝ այնք են, որք կատարեն զհայեցողական կամ զգործնական միտս 'ի կարգի առ գիտութիս և առ արուեստս: Բարոյականք են այնք, որք կատարեն զզգայական և զբանական բաղձանս. որ է զկիրս և զկամս՝ 'ի կարգի առ բարի բարս. որպէս
անուանն իսկ յայտ առնէ:

Զի իմացականքն ստացեալ լինին կանոնօք. բայց բարոյականքն ստացեալ լինին առաւելապէս դաստիարակութ. և սովորութ: Նոքա առաւելուն առբանմամբ՝ յարելով կանոն առ կանոն. իսկ սոքա առաւելուն սաստկութ՝ յարելով ներգործութիւն 'ի ներգործութիւն. որպ ցուցցի յիւրում կարգի:

Թէ արդարև հայիմք յենթական ունակութ, իմացականքն են պատուական քան զբարոյականս. զի միտքն է պատուական քան զբաղձանս: Այլ թէ հայիմք 'ի վախճանն, բարոյականքն են պատուականագոյն քան զիմացականս. զի իմացականքն առնեն բարի զգործն, իսկ բարոյականքն առնեն բարի զգործօղն:

Արուեստն պատկերահանութե առնէ գեղեցիկ զպատկերն. այլ ոչ առնէ բարի զպատկերահանն. զի իմացական բարութին չափի 'ի կանոնաց արուեստին.

տին. բայց բարոյական բարութիւնն չափի 'ի համեստութէ գիտաւորուն ։

Ոչ ոք եղև գիտուն քան զուրացողն յուլիանոս. բայց ոչ ոք ամբարիշտ քան զնա ։ Գիտէր բարւոք խօսել, այլ ոչ կամէր բարւոք գործել ։ Նա՝ զգիտուն իւր վարէր միայն 'ի գործել զչար ։ Էր երկկերպարան կենտաւրոս, կէս մարդ և կէս գազան. զի զմիտս ունէր ողջ, և զկամս՝ անառողջ. (15) ։

Թէպէտ մոլեկան ունակուն չէ հնար լինել առաքինական, և ոչ առաքինական ունակուն՝ լինել մոլեկան. բայց գործ ինչ յանկարծակի այլափոխել, հնար է թէ փոխեսցի յառաքինականէ 'ի մոլեկան, կմ՛ 'ի մոլեկանէ յառաքինական, 'ի փոխիլն վախճանի և գիտաւորութն ։

(16). Դրօշէ պրաքսիտելես զգնիդեանն ափրոդիտէ, դրօշէ փիդիաս զաթենականն աթենաս. երկոքին իսկ սոսկալես առ'ի գործ դնել զիւրեանց ճարտարուն ։ Այս գործք են իմացականք, այլ ոչ բարոյականք, գեղակատարք ըստ արուեստին, այլ անտարբերք ըստ բարուց ։ Բայց թէ պրաքսիտելես դրօշէ զափրոդիտէ 'ի գրգիռ ցանկուն, և փիդիաս դրօշէ զաթենաս 'ի յորդոր համեստուն, այն գործք իմացականք և անտարբերք՝ լինին գործք բարոյականք. և յարուեստաւորացն՝ մին լինի վաւաշ, և միւսն համեստ ։

Այս բարութիւնն իմացական հատուածի յընթացակցութիւն պարագայից, որք զգործն առնեն ֆիզիքապէս կատարեալ ըստ արուեստին ։ Իսկ բարութիւնն բարոյական հատուածի յընթացակցութիւն պարագայից, որք զգործն առնեն բարոյապէս կատարեալ՝ ըստ վարուց և ըստ համեստութն, որ յորժամ առարկայն է բարոյապէս բարի, գիտաւորութիւնն բարի, և միջոցքն բարի ։

Կանգնել զտաճար ինչ չաստուծոյ՝ է գործ մոլեկան ըստ առարկային ։ Կանգնել զտաճար ինչ Այ ճշմարտի՝ բայց 'ի սնոտի ցոյցս բարեպաշտուն, է գործ բարի ըստ առարկային, այլ մոլեկան ըստ գիտաւորուն ։ Կանգնել զտաճար ինչ Այ ճշմարտի, զի պաշտեսցի, բայց 'ի յափշտակեալ դրամոց, է գործ բարի

ըստ

է̄ առարկային. բարի ըստ գիտաւորութեն, այլ մո_լեկան է̄ միջոցին, որ զմեծաշէն գործն փոխէ 'ի չարաշէն: Վ̄ս այսորիկ՝ ոչ̄ զի գործ ինչ լիցի բա_րոյակ̄ բարի, պարտ է նմ համեստ պարագայից ընթացակցիլ ը̄ այն. այլ 'ի լինել մոլեկան՝ շատ է միոյ միայնոյ 'ի սոցանէ պակասութիւն:

Տես արդ՝ զի թէպէտ և ենթակայ բարոյական ի_մաստասիրուե է առաքինութիւնն, սակայն ոչ նմ առաքինութիւն է̄ դրօշակաւ նր̄ զինուորի:

Չէ ճշմարիտ առաքինութիւն, բայց այն՝ որում թշնամի է մոլութիւն. և ոչ ճշմարիտ մոլութիւն, բայց այն՝ որում ընդդէմ է ողջութիւն:

Աղա 'ի բաց անկանին 'ի բարոյական գիտութէ բնաւոր առաքինութիւնք. զի որովհետև ոչ առա_ցանին սեպհական զօրութ̄, այլ են պատուաստ 'ի բնէ, 'ի զուր է ուսուցանել զայն, որ ը̄աբոյս է 'ի մարդ՝ առանց ուսանելոյ:

Եւ անմիրթ է զսոսա համանունակի կոչել առա_քինութիւնս. զի որպէս բնաւոր պակասութիւնք չեն մոլեկանք, նոյնպէս բնաւոր կատարելութիւնք չեն առաքինականք:

Համճարաւոր է մեղու, յառաջատես է մրջիւն, գթած է արագիլ, մեծասիրտ է առիւծ. բայց և ոչ մի 'ի ձրիցս է 'ի նս̄ առաքինութիւն բարոյա_կան, զի չէ կամաւոր:

'Ի բաց անկանին և իմացական առաքինութիւնք մե_քենականք. ոչ̄ արուեստք՝ որք չեն ազատական. նկարչութիւն, քանդակագործութիւն, և դարբ_նութիւն. զի թէպէտ ո̄դիկ կամաւ ստանան զնս, բայց ոչ̄ առացաւ՝ հային նոքա 'ի լաւութիւն գոր_ծոց արտաքնոց, և ոչ 'ի ներքին բարութի անձին:

'Ի սխալել արուեստաւորին յարուեստի՝ ոչ վասն այնր սխալէ 'ի բարի վարս. լինի այս արուեստա_ւոր յոռի, այլ ոչ մարդ չար: Մանաւանդ թէ՝ որ սխալէ կամաւ յարուեստին, չէ արուեստաւոր յոռի, բայց որ կամաւ սխալէ 'ի բարի վարս, առաւելութբ̄ մոլի է և զեղծ:

Արժան է յեղաշրջել կամաւ զկանոնս նկարչուե 'ի նկարել զհրէշ ինչ. այլ չէ արժան յեղաշրջել զկա_

նոնս

Նոյն բանին 'ի գործել ինչ գործ անհամեստ:

Առաքինութիւնք արուեստից գտանին 'ի կարգս օգտակար և բերկրական բարեաց. զի ծառայեն դիւրութեան կամ բերկրութեան մարմնոյ կենաց. այլ բարոյական առաքինութիւնք են համեստ և ազնուական բարիք. վս զի են ըստ ինքեանց ցանկալի: Սմին իրի գին այնց գործոց դրամոք չափի, բայց բովանդակ ոսկի աշխարհի՝ ըստ ասից Կրիտողայոսի՝ չէ համեմատակշիռ փոքու իմն առաքինութեան բարոյականի:

Յաւելում ասել, թէ՝ և ոչ ազատական արուեստք, և ոչ այլ գիտութիւնք՝ 'ի բարոյական առաքինութեանց են աւելի, զի թէպէտ ազնուականք են և արգոյք, բայց առնեն զմարդն գիտուն, և ոչ բարեմոյն: Երկամասունք են բանականութեան 'ի մարդ. ըմբռնողական՝ որ ճանաչէ զճշմարիտն, և բաղձողական՝ որ զհետ երթայ բարւոյն: Գիտութիւնք՝ թէպէտ և վսեմականք կատարեն միայն զառաջինն. այլ բարոյական առաքինութիւնք կատարեն միանգամայն զերկոսին. զմին՝ խոհեմութբ, և զմիւսն՝ այլովք առաքինութբ:

Մեծ իմաստութիւն է գիտել՝ լինել բարի:

Եւ եա՛ թէպէտ իմացական առաքինութիւնք են կամաւորք 'ի սոսանալն, բայց ոչ վասն այնր կոչին ընտրողականք՝ ըստ ներքին պայմանի բարոյական առաքինութեանց. զի չէ յաղագս մարդոյ՝ առնել, զի գիտութիւնն իցէ ճշմարիտ կամ սուտ. բայց է յաղագս նոր՝ առնել, զի գործն իցէ բարոյապէս բարի կամ չար:

Թո՛ղ զի՝ զունակութիւնս գիտութեանց հնար է մարդոյ վարել 'ի չարն կամ 'ի բարին. ո՛պ՝ զձոխութիւն, զոյժ, զզէնս, և զերկվարս. բայց զունակութիւնս բարոյական առաքինութեանց անհնար է մարդոյ վարել՝ բայց եթէ 'ի բարին. զի ունակութ. չէ հնար լինել բարի, եթէ վախճանն է չար: Այպս չէ ամ՛ բարի այն՝ զոր հնար է վարել և 'ի չարն:

Ոչ ամօթ հողագործի և եզնավարի լինել ագէտ. բայց ամօթ է նմա լինել մոլի. զի ամ մարդիկ չեն պարտական լինել գիտուն. այլ լինել բարի ամենքին են պարտական:

Նոյն ինքն ածուծն՝ գլխովին իմաստուն և բարուն՝ 'ի

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССРА им. А. Мясникяна

'ի կամս հայեցեալ. և ոչ 'ի զգօնութիւն, անօրինակ զիւրոց փառաց զհատուցումն, ոչ ըստ չափու անուանական գիտութեանց, այլ ըստ չափու բարոյական առաքինութեանց։ Եւ ոչ փոխատրէ վարձս այնմ՝ որ գիտէ, այլ այնմ, որ առնէ։

Այս ոմն որ առասական յորջորջմամբ կոչէ Մոլութիւնք, նշանակէ զբարոյական մոլութիւն. նոյնպէս որ առասական յորջորջմամբ կոչէ Առաքինութիւնք, նշանակէ զբարոյական առաքինութիւն։ Զի ներհակն ներհակաւ ճանաչի։

Յայսմ տեղի՝ որ առաջաւ, մարթիս հաւաքել զբովանդակեալ սահման բարոյական առաքինութեան ըստ մտաց արիստոտէլի այսպէս։ Բարոյական առաքինութիւնն է ունակութիւն ինչ ընտրողական՝ 'ի բաղդատական չափաւորութեան. որ տրամադրէ զմարդ 'ի գործել զհաճոյս՝ ըստ Բնաւորական Խոհեմութեան։

ԳԼ. Ե.

Յաղագս յատկութեան բարոյական առաքինութեան։

Իսկական յատկութիւն բարոյական առաքինութեան է լինել միջակութիւն. որպէս և մոլութեան՝ լինել ծայրագոյնք։
Պատիւն ըստ փիլիսոփայից՝ է արտաքին ինչ նշան յարգի՝ ըստ մեծի համարման, զոր ներքուստ ունիմք առ գերազանցութիւն ուրուք։ Իսկ անարգանքն է նշան ինչ անգոսնութեան, զոր ներքուստ ունիմք առ անարգութիւն ուրուք։

Գերազանցութիւն է արժանաւոր յարգի. և յարգն է վարձ արժանաւորութեան։ Բայց քանզի յարգն է աներեւոյթ, լինէր աներեւակ արժանաւորին, եթէ պատիւն չլինէր վկայ երեւելի՝ աներեւոյթ յարգին։ Այս գերազանցութիւն պատճառէ զզարմանս. զարմանքն զակնածութիւն. և ակնածութիւն զերկիւղ ինչ պատկառանաց՝ իբր ստորագունի ուրուք առ վերագոյն ոք. և այս բովանդակ կոչի յարգանք։ 'Ի յարգութեան առաւ ծնանին արտաքին նշանքս. գովեստ, խոնարհեալ ողջունել, ծունր, երկրպագութիւն, և այն է պատիւ։ Բայց այս ինչ ըստ մեզ է պատուոյ և գովութեան. զի պատիւն հայի 'ի ներքինն անձին. իսկ գո-

գովութիւնն հայլի յարտաքին գործս: Պատիւն յարգէ զբարոյական գերազանցութիւնս. իսկ գովութիւնն մեծ համարի և զբնական կատարելութիւնս: Մինչև բզմ ինչ իրք արժանի են գովութ., այլ ոչ պատուոյ. որ̄ առասցի զկնի: Ապա գերազանցութիւնն է 'ի պատուելայն, և ոչ 'ի պատուօղն. և պատիւն է 'ի պատուօղն, և ոչ 'ի պատուելայն: Բայց թէպէտ պատիւն՝ արտաքին բարի իմն է առաքինւոյն, սակայն և այնպէս՝ լինելն պատուելի՝ է ներքին բարի առաքինութե̄ն:

Այս ամ է ամիւ Ճշմարիտ. բայց արժան է քեզ ածանել 'ի միտ, զի գերազանցութիւնն է անուն ինչ հոմ, որ հնչէ 'ի պէսպէս միտս: Վնկ՝ այնմ, որ մատամբ ցուցեալ զյարգելի ոք ծերունի՝ ասաց. ա՛ս է գեղեցկանց ճոխոխոյ. պինի եա ամ ծաղրածու (ցուցանելով զայլ ոք). և ա՛ս է գեղեցկանց ու խոհամէր: Իւրաքանչիւր ոք մեծ համարի զայն՝ որ ը̄ ըղձի: Եւ վս̄ զի բիղք 'ի մ̄դկանէ են մոլորագատ, գերազանց համարեալ ո՛չ զառաւելեալն յառաքինութե. այլ՝ զօգտամատոյցն և զբերկրականն, յիմարաբար պատուեն զարհամարհն. և արհամարհեն զպատուականն:

Բայց թէ ուղիղ դատեմք՝ ասէ Արիստոտէլ, միայն առաքինութիւնն է արժանի պատուոյ, որ̄ և միայն մոլութիւնն է արժանի անարգութ:

Համեստութիւն և պատիւ ձեռն 'ի ձեռն ասն, և զոյգ գնան. և զի միայն առաքինութիւնն է համեստ բարի. (որ̄ ցուցաւ,) միայն առաքինութիւնն է բարի պատուոյ արժանի:

Ցայտ է թէ որ̄ ծիծաղելին յատուկ է մարդոյ, այլ փոխադրութ̄ ասի զզուարճալի դաշտաց և զնորհաշուք ծաղկանց, և զպայծառ օդոց. սոյնո̄ պատիւն է յատկութիւն բարոյական առաքինութ միայն, բայց նմանութ̄ ընծայի և բնաւոր զօրութեց տնկոց և անասնոց:

(17). Կղոդիանոս գովեաց զաղնի՝ որ̄ զքաջ զօրական ինքնազէն: Սիմոնիդէս յորինեաց գովեստ 'ի վ̄ր Քուրայն յաղթականի յընթացս ողիմպիական խաղուց՝ նախանձ արկեալ վերգիլեան գովասանութ̄ 'ի

վ̄ր

վր արագոտն կամիլլայի: Թեժմստն գովեաց զՇղախոտն: Ակեղեպխագես՝ զարաեմխիա: Փանխոա զեղինքն: Նաև ոմանք զանցեալ զկոպարաւ գովուն՝ ձիոց և շանց քաջաց կանգնեցին արձանս, բրդունս և շիրիմս:

Բանաստեղծական համեմարն, որ մատուցածին զքանչելեօք շնչաւորէ զանշունչս, և անշնչացուցանէ ըզշնչաւորս, փոխաբերեալ զսեպհականն գերազանցութիւն առ նմանական ձևացուցանէ, թէ որ ինչ է յօգուտ՝ է առաքինութիւն շահեկան. և որ ինչ 'ի վնաս, ժանտութիւն մոլեկան:

Այլ դոյն իսկ փոխաբերուն ցուցանէ, թէ Ճշմարիտ պատիւն է սեպհական բարոյական առաքինութե միայնոյ. իբր զի ըստ այնմ պատուին այն տունկք և անասունք, ըստ որում համարին՝ թէ բնաւոր որակք նց պատկեր են բարոյական առաքինութեց:

Օնոյն սակս և զմարդկանէ ըստ բնաւոր ձրից, որ չեն՝ ստացեալ 'ի նցէ. ոչ են գովեցկուն և ոյժ: Մարթ է բնաւոր ձրիցս լինել առարկայ գովութե, այլ ոչ պատուոյ. քանզի ոչ զի լեցի ինչ գովելի, շատ է նմ բնաւոր կատարելուն լինել և իցէ սեռի. այլ առ 'ի լինել պատուելի՝ պիտի բարոյական բարուն անձին: Այն զի՝ գովուին հիմնեալ 'ի բնական առաքինուե՝ և ոչ 'ի բարոյականն, չէ գովուն Ճշմարիտ, և ոչ գովուն սեպհական մդոյ: (18). Որ գովեացն զանվանեալ զօրուն աղկիդեայ, և զգեղ յափշտակելոյն հեղինեայ, ոչ գովեաց զնա, այլ զինուին 'ի նա. որ նոյնպէս գովելի է 'ի ցուլ և 'ի սիրամարգ: 'Ի Ճահ առաց բանաստեղծն (ովիդիոս). ԱՅՆ՝ ՈՐ ՉԷ ԱՐԱՐԵԱԼ 'Ի ՄԷՆՋ, ՄԻԹԷ ԱՍԻՑԵՍ ՄԵՐ: Բայց եթէ որ բնաւորապէս ունի զայսուսիկ ձիրս, առաքինորէն 'ի կիր արկցէ, յայնժամ ոչ միայն արժանաւորի Ճշմարիտ գովուե, այլև Ճշմարիտ պատուոյ. զի թէպէտ և որակութիւնն է բարոյս և բնական, բայց գործածութիւնն է կամաւոր և բարոյական:

Մեքենական արուեստք, ոչ դարբնութե, նկարչութ, և քանդակագործութ, են արժանաւորք մեծի գովուե քան զբնաւոր զօրութս. զի են փոքրիկ

առ-

առուակ ինչ իմացական առաքինութեանց, և առաջա_
կանք։ Եւ 'ի մէջ այնոց՝ այնք առաւել են գովելի,
որոց գործք առաւել են կատարեալ. և գործքն են
առաւել կատարեալ, յորժամ առաւել հաղորդին
ազատական արուեստից։

Այսպիսի է նկարչութիւն, որ ընդհայեցողութե
սկզբամբք երևեցուցանէ զհեռաւորն մօտաւոր, և
զսուտն ճշմարիտ. և անուաւոր ժամացոյցն, յոր
զօղեալ մաթեմաթիկական ինչ հանճար՝ հոլովէ զերկ_
նային պարունակս 'ի փոքրիկ տփի։ Եւ ձեռակերտն
արքիտասայ, որ ընթացուցանէր ը̃ երկիր զարձանս,
և թռուցանէր ը̃ օդս զփայտակերտ թռչունս։

Այլ թէպէտ այս արուեստք են զարմանալիք և
գովելի արժանիք, բայց չեն արժանաւորք ճշմա_
րիտ պատուոյ, զի գերազանցութիւն նոցա առնէ
բնաւորապէս բարի զգործն արտաքին, այլ ոչ
առնէ բարոյապէս բարի զարուեստագէտն։

Վս̃ այսորիկ ձեռագործացն ոչ հատանի գին պատ_
ուով, այլ՝ փողով, զի են պիտանի, այլ ոչ պատ_
ուելի. արդ առնեն զրախտ, այլ ոչ զանձն։
Զէ ճշմարիտ պատուելի բարի, բայց այն միայն՝
որ պարագրէ յինքեան զամ̃ պիտանութի և զբերկ_
րութե, և մեծ համարի միայն զն̃ իւրոյ սեպհական
բարութե։ Ճշմարիտ առաքինութին չէ վարձկան։

(19). Գերազանցութե արիստիդեայ 'ի նկարչութե
հնար է թէ չափեսցի գնովք գործոց իւրոց. զի զմի
ևեթ յայնոց գնեաց արքայն ատտալոս հարիւր տա_
ղանդոյ արծաթոյ. և չգնեաց զայն թանգագնոյ։
Մարթ էր արիստիդեայ այնուիկ արծաթով գնել
արձան մի ոսկեղէն. բայց եթէ արքայ պատուեալ
էր զարիստիդէս ոսկի արձանաւ, մարթ էր երկ_
ուանալ՝ ո՞ր արդեօք առաւելուցու հանճար. ար_
քային, թէ արձանին։ Եւ իւ հնար էր այնուհետև
պատուել զարիութին տխմարէնի ազատչի հայրե_
նեացն. (20)։ Բայց թէպէտ և 'ի պատիւ արիստի_
դեայ՝ ոչ տխմարէնի, կանգնեալ էր արձան ոսկի,
ոսկի արձանին արիստիդեայ առ ոսկւով արձանին
տխմարէնի՝ լինէր ոսկեպղինձ. կերպարանն նուաս_
տացուցանէր զնիւթն։

Բայ

Բաղում ինչ է մէջ է պատուոյ և պատուոյ, որպէս գերազանցումն և գերազանցութիւն : Գործնի պակաւ պատուին բանաստեղծք և յաղթանակօղք · բայց բանաստեղծից գործնի առ գործնեաւ յաղթանակողաց է չնչին իմն · զի նա պսակ է ճարտարութեան մտաց, և սա արիական հոգւոյ :

Դորին այլև հարկ է ասել, թէ թէպէտ միայն է կարողութն աղնուագոյն քան զբաղձանս, սակայն և այնպէս առաքինութիւնքն՝ որք կանոնաւորեն զբաղձանս՝ բարի վարուք, են առաւել պատուելի քան զառաքինութիւնս, որք լուսաւորեն զմիտս՝ վսեմական հայեցողութբք : Քաղեսցեն միայն՝ որչափ վնասութս սերմանեալ իցեն պղատոն ի զուարթարար բուրաստանս ակադեմիոյ, և արիստոտել ի փոշոտ ճեմարանս լիւկէոնի · (21): Տարրացին յայն գլուխ ամ գիտուէք՝ որպէս յականն պիւռոնի · (22): Զինչ պարծանք իցեն գիտել զամ զարտաքինս և զեթերականս, և չճանաչել զանձն · զինչ պատիւ իցէ լի լինել գիտութբք, և թափուր յառաքինութէ · զինչ է մոլի գիտունն, բայց եթէ գրաստ գրաբարձ :

Այս մեծապէս գովելի են հայեցողական գիտութիւնք, այլ չեն նախուէ պատուելիք · բայց եթէ ըստ որում արդանեկեն բարոյական առաքինութեց, կամ ընդ նոսա լծորդին :

Սերտ դաշնաւոր են միմեանց բաղձողականն և իմացականն · որպէս լուծեալ յառաջակայդ : Զի հնար լեալ լուսաւորիլ մտաց, ցորչափ սիրտն է վարակեալ կրիւք · և ոչ փարատել հնար է զամպս կրից, թէ ոչ պայծառ շողշողեն շառաւիղք մտաց :

Վա այսորիկ թէպէտ յիմացական առաքինութին՝ խոհեմութին ստոր է յաղնուութե քան զհայեցողական գիտութին ի սակս ենթակային · զի իմաստութին դադարէ ի հայեցողական և յընհանուր միտս · իսկ խոհեմութին՝ ի գործնականն և ի մասնաւորն · սակայն և այնպէս խոհեմութին է առաւել պատուելի · զի չափու ուղիղ բանին կանոնաւորեալ զկամս և զկիրս՝ ինքն միայն է առաքինութի բարոյական յիմացականս, և իմացական ի բարոյականս · որպէս ասցես յերբում տեղւոջ :

Այս

Այս խոհեմութիւնն է Թագաւորի գիտութեանց. և գիտութիւն Թագաւորաց. զօրացեալ իշխանութբ, և չքեղացեալ ծիրանեօք, ոչ պատուեալ միայն 'ի ժողովրդոց, այլև երկրպագեալ: Վասն զի յանգործ նախ հայեցողական գիտութեանց՝ 'ի նկատել զերկինս, առ օգտակար օրինօք հաստատէ զտէրութիւնս, և ուղղէ զաշխարհ: Վն այսորիկ տեսանեմք զիմաստունս պատառատուն ձորձով մուրանալ առ դրունս խոհեմաց:

(23). Վսեմամիտ փիլիսոփայ էր 'ի տեսականս մեծն փաղերեաս, յոյր պատիւ կանգնեալ էին արձանք ըստ տարւոյ աւուրց. բայց չընկալաւ զայն պատիւ ոչ փիլիսոփայ, այլ՝ ոչ խոհեմ. զի զամս տասն հաստատուն կալաւ իմաստութբ իւրով զհասարակապետութիւն աթենացւոց, որ մերձ էր 'ի կործանումն: Մեծ գիտուն էր սողոն. բայց հասանել նր 'ի գերակայ պատիւ չեղև գիտութբ, այլ՝ խոհեմութբ, զի գաղափարեալ յիւրոց բարուց օրէնս քաղաքականս՝ ընջեաց զանմարգի և զբռնական օրէնս վայրենամիտ դրակոնի. (24):

Թող զի ամ գիտութիւնք՝ Թէպէտև ազնիւք և ազատք, գաղտնի հանդուցիւք չղթայօրէն աղխաղխեալ են ը միմեանս. բայց առաջին օղ չղթայիս է 'ի ձեռին բարոյական առաքինութեան:

Ամենայն գիտութիւնք գործնականք առաջնորդեն առ տեսականս. և ամ տեսական գիտութիւնք բնականք՝ բնաւորապէս առաջնորդեն առ ճանաչումն արարչին բնութեան 'ի պաշտել զնա. և այս գերապանծ առաքինութիւն բարոյական՝ է վերջին վախճան իմացական առաքինութեանց, որք յայսմ վախճանէ ընդունին զիւրեանց պատիւ:

Այս յայտնելոյ առաւ իմն, թէ որպէս մարմնոյ միայնոյ անձն է ճշմարիտ զարդումն, նոյնպէս ճշմարիտ պատիւ և գերագոյն գովութիւն անձն է միայնոյ բարոյական առաքինութիւն, որ պատկեր է ածայնոյն. ամէն իրի և յաչս ամ մեծարգի է՝ և վարձուց արժանի:

Այս իմաստութբ սահմանեցին բարեկարգ հասարակապետութիւնք մեծամեծ պատիւս և հանդի-

ատկան գովեստ սրանց քաջաց և առաքինեաց, և 'ի ձայն փողոյ քարոզէին 'ի հրապարակս զարիական գործս քաղաքացւոց: Այնք պատիւք էին հարկք առաքինութե, և պարգևանք մոլութեան: Հնչիւն այնց փողոց զարթուցանէր զնախանձաւորութիւն, և հեղձուցանէր զմախանս:

Բայց և այն ճշմարիտ է թէ առաքինութիւնն ոչ աճի գովութե, և ոչ փքանայ պատուով: Արժանի է նա ամի, այլ ոչինչ խնդրէ. և ընդէր խնդրեսցէ, զոր թէ գտանէ, արհամարհէ: Գովութեն է ստուեր առաքինութե. և հանգոյն ստուերի փախչի 'ի հետամտէն, և հետամուտ լինի փախուցելոյն:

Այս որպէս յատկութիւն մարդոյ չէ երբէք ծիծաղելն, այլ՝ ծիծաղական լինելն. սոյնպէս յատկութիւն առաքինութե ոչ է գովել, այլ՝ գովելի լինել. ոչ է պատուել, այլ՝ պատուելի լինել: Արժանաւորութիւնն է առաքինւոյն. գործն է բախտի կոյր բաշխողի. որ յոլովակի տայն ոչ արժանեաց մեծամ, փառս արժանեաց:

Պատիւն է արտաքին բարի, և նպատակ նախանձու. պատուելին է ներքին բարի՝ և արտաքոյ նախանձու. զի է նոյն իսկ առաքինութին. զոր ոչ ոք կարէ քեզ պարգեւել, և ոչ ոք կարէ 'ի քէն հանել: Մեծն այն փաղերքէս պատուեալն յաթենացւոց բազմապատիկ արձանօք՝ երբեւ լուաւ, թէ այն ամ արձանք յապերախտ և 'ի կատաղի ժողովրդենէն էին յերկիր կործանեալք, ժպտելով ետ պատանի. Կարողացան կործանել զիմ պատկերս, այլ ոչ զիմ առաքինութիւն:

Բայց բաց յարժանաւորութե գովութե և պատուոյ՝ են և այլ երեք ազնուական յատկութիւնք բարոյական առաքինութե. այսինքն է՝ զի զառաքինական գործս առնէ դիւրին, զուարթ, և մշտնջենաւոր. այլ ոչքս կախեալ կան յորոց զինի:

# Բարոյական իմաստասիրութ̃ն

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

## Յաղագս բարոյական ներգործութեանց և ունակութեանց առ հասարակ ։

## ԳԼ. Ա։

### Յաղագս բնական խորհրդոց, յորս ծնանին բարոյական առաքինութիւնք ։

Որպէս բնաբանական գիտութիւնն է առողջացուցիչ մարմնոյ, նոյնպէս բարոյական գիտութիւնն է բուժիչ հոգւոյ ։ Վ̃ք այսօրիկ պղատոն յերթալ իւրում ուղղել զթիւր վարս արքային դիոնեսիոսի, ճշմարտութ̃ ասաց. [illegible]

Առաքանդի ո̃մ արուեստ հայի յիւր ենթակայ, վ̃ն այսորիկ բնաբանութիւնն հայի 'ի կազմութիւն մարմնոյ՝ արարեալ զն̃ր զգուշաւոր անդամադննութիւն. և բարոյականն առանց մանաւոր իմն անդամազննութեան ոգւոյ ոչ կարողանայ ճանաչել զնեպհական գործողութիւնս ։

Երեք են մասունք մարդկային ոգւոյ. առաջինն՝ ամենևին անբանական, երկրորդն՝ ը̃ մասին բանական, և ը̃ մասին ոչ. երրորդն՝ բոլորովին բանական ։ Առաջինն է անկականն, հասարակ անկոց ։ Երկրորդն է զգայութիւնն՝ ը̃ մասին հասարակ անասնոց. և ը̃ մասին ոչ ։ Երրորդն է միայն կամ բանն՝ բոլորովին սեպհական մարդոյ ։

Արդ՝ թողցուք զառաջինն իբր անպիտան առ բարոյական գիտութիւն. զի չհնազանդի բանին. նա՛ ո̃ք լուար, զկէս ժամանակին ծախէ 'ի քուն, և գործէ անզգայ ։

Մասնն զգայական և մասնն բանական՝ ունին իւ-
բա-

րաքանչիւր երկուս կարողութիւնս . մին՝ ըմբռնողական, և միւսն բաղձողական . զի ամ՟ շնչաւոր բաղձայ իւրում բարւոյ . այլ ոչ ոք բաղձայ այնմ, զոր ոչ ըմբռնէ :

Այս չորք են կարողութիւնք բնականք, որք յառաջ բերեն զբարոյական ներգործութիւնս . երկուքն՝ զգայական և մարմնաւոր, և երկուքն՝ հոգևոր և բանաւոր,

Ըմբռնողական զօրութիւն, զոր և կոչեմք պատկերակերպուն՟ կամ երևակայուն՟, է կարողուն՟ ինչ՝ ստորին և զգայական մասին հոգւոյ . որ 'ի ձեռն հասարակ զգայութեն՟ հաւաքէ և ճանաչէ զամ՟ զպատկերս ախորժ կամ անախորժ առարկայից, որք յառաջ՝ յականջաց և յայլ արտաքին զգայութեանց հեռազօտ և հաւատարիմ լրաբերաց՝ առաքին առ նա . նկարեալ յինքեան առաւել ևս վառ և մնայուն զունովք զայն պատկեր երևոյթս, որք և 'ի քուն երևութանան՝ որոց չէ տեսեալ զնոսա :

Բաղձողական զօրութիւն՝ կամ զգայական բաղձանքն՝ է նոյնպէս կարողուն՟ ինչ նոյն ստորին մասին հոգւոյ . որ ցանկայ ախորժական առարկայից, և փախչի յանախորժից՝ առմատուցելոց նմա 'ի դաշնաւոր պատկերակերպուն՟ : Այս է հրէշ ինչ երկկերպաբան, գլխովին սառն՝ և գլխովին հուր . զի յերկուց ներհական շարժմանց յուզի՝ 'ի բարկուն՟ և 'ի ցանկուն՟ . 'ի բարկութե՟ զի խոյս տացէ 'ի դժուարէն, և 'ի ցանկութենէ՝ զի զհետ լիցի բերկրականին :

Եւ այս շարժութիւնք կոչին խղճք և կիրք :

Ըմբռնողական բանական է միտքն, կարողութիւն հոգևոր և վսեմ . որ յայնց նիւթական պատկերաց 'ի պատկերակերպուն՟ առմատուցելոց՝ որք են յողդողդ, կերպարանէ յինքեան նոր պատկերս հոգևորս և անջինջս՝ գանձեալ զնս յաւանդարան յիշողուն՟ . զի 'ի կիր արկցէ յիւր խօսս :

Իսկ բաղձողական բանական է կամքն, գլխոյ կարողուն՟ց . որ միայն ազատ գոլով ազատօրէն ընտրէ կամ մերժէ զառարկայս, որք 'ի մտաց իմանալի պատկերօքն առաջի եդան նմա . և ապա հրամայէ զգայութեանց սպասաւորաց և արբանեկաց իւրոց՝ հետամուտ

մաւտ լինել նց, կամ փախչել 'ի նոցանէ ։

Յայսցանէ ուսնիս իմանալ, թէ պատկերակերպութիւնն է իբրու միտք ինչ նիւթական, և միտքն է իբր պատկերակերպութիւն ինչ հոգևոր ։ Բաղձանքն զգայական է կամք ինչ նիւթական, և կամքն է բաղձանք ինչ հոգևոր ։

Առանց երևակայութեան միտքն լինէր կոյր․ զի ոչ մտանէ ինչ 'ի տաճար մտաց, որ ոչ անցանէ ընդ դրունս զգայութեանց․ բայց առանց մտաց երևակայութիւնն լինէր յիմար․ զի շփոթէր զճշմարիտն ը երևակայականին ։ Մինչ զի փոփոխ ձեռնտուութ երևակայութիւնն առաջնորդէ մտաց, և միտքն ուղղէ զախալանս իւրոյ առաջնորդին ։

Բաղձանքն զգայական և բաղձանքն բանական՝ թէպէտ են ամոլք դաշնաւորք և լծակիցք, սակայն՝ վն զի մին է երկրաւոր, և միւսն երկնաւոր, նա մահկանացու՝ և սա մշտնջենաւոր, է՛ զի ատեն զմիմեանս, և է՛ զի սիրեն ։ Միշտ են կենակից, և միշտ 'ի կռուի ։

Մի զմի հնարին յինքեանս ձգել․ այլ դիւրագոյն է ստորագունին յինքն ձգել զվերագոյնն․ զի զգալի առարկայք առաւել շարժեն քան զիմանալիս․ և դիւրագոյն է վայրաբերել քան զվերբերել ։

Բաղձանքն զգայական թէ ոչ հաղորդէր ազդեցութեան բանին, լինէր բոլորովին անբան․ և հարկիւ ձգիւր յինչ ևիցէ առարկայ բերկրական՝ առաջի արարեալ նմա յերևակայուէ իբրև զանխել անասունս ։ Վնկ բուռն թափք բարկուէ և ցանկուէ երբ յառաջեն քան զբան, ոչ մոլեկան են՝ և ոչ առաքինական, այլ՝ բնական և անասնական ։

Այս բաղձանքն զգայական է կարողութիւն ինչ ը մասին անբան, և հարկակիր․ և ը մասին բանաւոր և ազատ ։ Է հպատակ կամաց, այլ հպատակ քաղաքային, և ոչ ստրկական․ սպասաւոր քաղաքական, և ոչ գերի շղթայակապ ։ Սմին իրի բազում անգամ ապստամբի 'ի տիկնոջէ իւրմէ 'ի կամաց, արհամարհէ զօրէնս նր, և յափշտակէ զիշխանութիւն նորա ։

Ստամբակի երբեմն և կամքն առ միտսն՝ 'ի հաճել զպա-

զպատիր հեշտութիւնս։

Առարկայ մտաց է ճշմարիտն. և առարկայ կամաց՝ բարին։ Այլ միոյ բզմ անգամ զառերևոյթն համարին ճշմարտութիւն. ոպ շունք հաչէին առ շունն նկարեալ ՚ի պղպջախաղեայ։ Իբր կամք բաղում անգամ զհետ երթան առերևոյթ բարւոյն իբր ճըշմարտի. ոպ առի յառակս, թէ շունն եթող զմին վն ստուերի նր։ Իբր բաղում անգամ ևս ուղիղ առաջնորդութե մտաց՝ ճանաչէ զբարին, բայց խորովի յարի ՚ի չարն։ Արդ՝ ՚ի միտ առ, որչափ դժուարին իցէ մարդոյ չգործել զչար, դիւրագայթ գոլով յընտրութեն բարւոյ և չարի։

## ԳԼ. Բ.

### ՅԱՂԱԳՍ ԹԷ ԱՅՍ ԲՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ ԻՑԵ՞Ն ԱՐԴԵՕՔ ԿԱՊԱԿՑԵԼԱԳՈՅՆՔ ՅԱՅՍ ՈՔ՝ ՔԱՆ ՅԱՅՆ ՈՔ։

Փորձիւ տեսանեմք, զի ոմանք ՚ի մարդկանէ այնպէս են թմբեալք, մինչև թուիլ նց մարմին անհոգի. և ոմանք այնպէս սթափք, մինչև թուիլ նոցա հոգի անմարմին։ Այս պէսպիսութիւն ՚ի կարծիս էարկ զբաղումս, թէ հոգիք մարդկան են պէսպիսակք ըստ կատարելութեց։

Բնապէս մտացի եղև ասէն պղատոն, և բնապէս անմիտ մարդիկս (25)։ Այսպ եթէ հոգին պղատոնի մտեալ էր ՚ի մարմին մարդիոխ, և հոգին մարդիոխ ՚ի մարմին պղատոնի, մարդիկս լինէր գլուխ մտացեաց, և պղատոն գլուխ անմտաց։

Այսպէս իմաստասիրեցին մեծարու ոմք համալսարանաց հեթանոսաց և քրիստոնէից։ Այլ զգօնամիտն արիստոտէլ ուսուցանէ, թէ մեծագոյն կատարելութիւն հոգւոց յառաջ գայ յառաւելութենէ կատարելութե մարմնոց։

(26). Ոչ յետ փայլէ դրօշէին զարձան հերմեսի, և ոչ յամենայն մարմնոց կերպանան ուշիմ և զօրաւոր մարդիկ։

Մարմինն է գործարան գործողութեց հոգւոյ. և այնպիսի են բնական գործողութիւնք հոգւոյ, ոպի է գործարանն։ Բանք մեր են զբնական գործոց, և

ոչ

ոչ զանձնիշխանականաց :

Յայտնի ցոյց ընծայեն այսմ գործողութիւնք պա-տահականք : Եթէ մարմինն է առողջ, գործողութիւնք հոգւոյ եւ են զօրաւորք. եթէ հիւանդ, անզօրք : Եթէ մաղձային, փոյթք. եթէ մաղասային, դան-դաղք : Եթէ աղայ է, կամ խափանք. ոչ թէ հոգ-ւոյ բանականի չիցէ բնակեալ յայն անդամս :

Այլ մի ոք մեղադիր լիցի արարչին հոգւոյ, թէ չարար զամենեսին միօրինակ կատարեալ. այլ բնու-թեն, որ ոչ կարէ առնել զնոյն մարմինս միապէս կա-տարեալ :

Աճանց հանգամանք ծնողաց, շարժումն լուսաւո-րաց, արեգակնակն տեղեաց, կազմումն անդամոց՝ պէսպիսութեանն զխառնուած մարմնոց : Պէս-պիսութեն խառնուածոց առնէ այս մի քան զմի սրա-տես, պատկերակերպութիւն մի ք զմի զօրաւոր, բաղ-ձանս մի քան զմի սաստկագոյն, միտս մի քան զմի սթափս, և կամս ընտրողապէս մի քան զմի բարեյօ-ժարս. և վս այնորիկ հոգին թուի առաւել կատա-րեալ, զի մարմինն է առաւել կատարեալ :

Սայդ իսկ է՝ թէ որպէս յառաջասես բնութիւնն հայի յօգուտ տիեզերաց, նոյնպէս կարեւոր համա-րեալ նր մարդկայնում ընկերութեն զպէսպէս ար-ուեստս և զպէսպէս կարգ անձանց, կարեւոր վար-կաւ և զպէսպիսութիւն բնական կատարելութեց մարդկան. զի անկատարք ծնցին 'ի ծառայել կա-տարելոց. և որ չէ ընդունակ ազատական արուես-տից, կարգեսցի առ մեքենականս :

Յասացելոց աստի դիւրին է քեզ լուծանել զայն դժուարին խնդիր, թէ արդեօք 'ի ձեռս իցէ իւ-րաքանչիւրոց հասանել 'ի գագաթն բարոյական ա-ռաքինութեց : Ոչ խօսի զդերբնականաց և զհեղա-կանաց արտաքնել, զի չէր անծարան. և վս իւրոյ դժբախտութեն չեհաս 'ի ծանօթութեն շնորհաց : Այլ իմաստասիրելին առաջիկեանք այսպէս : Եթէ ապա կամքն է՝ որ առնէ զներգործութիւն մոլեկան կմ ա-ռաքինական, ապա լինել առաքինի կմ մոլի՝ է յիշխա-նութեն կամաց. ուրեմն 'ի կամիլ մարդոյ լինել կա-րի իմն մոլի, լինի. և 'ի կամիլ նր լինել կարի իմն առա-

առաքինի, լինի՝ որչափ և կամի. զի կամիլն չունի
այլ ինչ ներհակ, բայց եթէ զչկամիլն:

Այլ լո՛ւր՝ թէ որպէս արիստոտէլ ասացելովքս
լուծանէ զնմ տարակոյս:

Մարդն է բաղկացեալ իմն 'ի նիւթականէ և 'ի հոգևորէ, 'ի զգայունէ և 'ի բանականունէ: Սոյդ է՝ թէ մասնն բանական կարէ ձգիլ ըղձմամբ առ այդպիսի բարձրագոյն նպատակ. այլ զգայական մասն՝ որ զօրագոյն է յոյս ոք քան յայն ոք, լինի հակակշիռ ձգման կամացն յոյս ոք քան յայն ոք: Ամենայն ոք կարէ լինել արի և խոհեմ. բայց դժուարին է՝ թէ բնաւոր զօրութ՟ ամենեքին կարողասցին լինել զօրաւոր իբրև զաքիլլէս, և խոհեմ իբրև զոդիսևս (27). 'ի զօրանալ յամանս կրից երկիւղի, կամ 'ի պակասիլ ուշոյ մտաց: Վս այսորիկ չկարացեալ կամացն կատարումն տալ այնպիսի բարձրագոյն ձգմանն,
մնայ թարմատար:

Բայց և այնպէս՝ յընթացս առաքինուէ պարտ է իւրաքանչիւրոց փոյթ ունել, զի թէ տկարանայ առնուլ զառաջին յաղթանակն, գէթ առցէ զերկրորդն. և ուր տկարանայ հասանել բուռն զօրութեամբ, հասցէ ըղձմամբ: Զի միայն 'ի ստացմունս առաքինութե օրէն է ըղձանալ այնմ. որում ոչ կարես
լինել հասու, վս լինելոյ նր անչափ ըղձալի:

Այս երջանիկ են նք, որոց 'ի բնէ վիճակին ձիրք բնական կարողութեց՝ քաջադէպք առ մեծամեծ առաքինութիւնս բարոյականս: Բայց որպիսի և իցէ երկիրն, յիրաւի է պատարերել զայն ը կարի՝ 'ի
ձեռն մշակութե:

Որ խաղայ քուէիւք, անձկայ նպաստաւորագոյն նշանի. բայց որն և դիպեսցի, ջանայ նովին բարե-
վիճակ առնել զխաղ իւր. (28):

Ոչ ոք 'ի մարդկանէ եղև բարեկեցիկ իբրև զսոկրատէս. որոյ մուծեալ 'ի դպրոցս զիմաստասիրութի բարոյական՝ գլխովին եցոյց զայն 'ի վարս իւր: Իսկ թէ կորնչէին գիրք նորա, մարթ էր զնմ ընթեռ-
նուլ 'ի վարս նր:

Մեծ ոմն աստեղագէտ, որ ոչ ճանաչէր զնա, տեսեալ զգծագրութ դիմաց նորա և զբնաւոր կերպա-
րանս,

բանս, սովորեցաւ՝ և ասէ ։ Դա՛ է մեծագոյնն 'ի բա-
րագործս ծնղին ։ Լուեալ աշակերտացն՝ փոքր միւս
ևս և ձգէին զձեռս 'ի սուսեր 'ի վրէժխնդրութիւն
վարդապետին, եթէ չէր արգելեալ սոկրատայ, ա-
սելով. ուրեմն անհրաժեշտութիւն է դորա. այսպիսի էր իմ
բնութիւն, այլ իմաստասիրութբ̅ յաղթեցի ։

## ԳԼ. Գ ։

### Յաղագս նախկին օրինաց, որք արտադրեն բարոյական ունակութիւնս ։

Զորք ինչ ընթացակցին 'ի բուսականս. երկիր. սերմն, տունկ, և պտուղ ։ Եւ զորք ինչ ընթացակցին 'ի բարոյական առաքինութիւնս ։ Բնական կարողութիւնք, այն է երկիր ։ Առաջին ներգործութիւնք. այն է ունակութեան սերմանք ։ Ունակութիւն յառաջ եկեալ 'ի ներգործութեանց. այն է տունկն ։ Եւ ներգործութիւնք անդրէն բղխեալք յունակութէ. այն են պտուղք առաքինութեանց ։ Ապաքէն խօսեցաք զբնական կարողութեանց. արդ խօսեսցուք զառաջին ներգործութեանց, որք են սերմանք առաքինական ունակութեան ։

Վէճ մեծ եղև առ փիլիսոփայս. միթէ առաքինութիւնք և մոլութիւնք անմիջաբար բղխիցեն 'ի բնական կարողութեանց հոգւոյն, մինչև մարթ իցէ ճշմարտութբ̅ կոչել զնս̅ ̅բարոյս, տուեալ զգով կմ̅ զգօրով մ̅դկայնում բնութե̅, և ոչ մարդոյ ։

Ըստ իրաց ինչ, վս̅ զի առաջին է 'ի մդ̅՝ կեալ անասնօրէն քան մդ̅կօրէն, 'ի վարել նր̅ նախ զզգայութե̅ քան զբանականութե̅, չեն ինչ զարմանք՝ թէ բնաւորապէս միտէ առաւել 'ի մոլութի̅ քան յառաքինութի̅. և չատ է նմ̅ ծնանիլ՝ առ 'ի չար գործել ։ Ըստ այլ իրաց. վս̅ զի բնական օրէնք են ուղղակի համաձայն բանի, ճանաչողագոյն է մդ̅ոյ բանաւորի բնաւորապէս միտել յառաքինութիւն՝ քան 'ի ներհակ նորա. և չատ է նմա ծնանիլ մարդ՝ առ 'ի զբարիս գործել ։

Յաւել յառաջինն, զի ոմանք իրք վիճակին բնութ̅ այնմ̅ ստամբակելոյ առ իւրեանց բարին, մինչև

զչափ

զչափ տանել զմեծի հակառակութեան առ առաքինութիւն քան զորթոյն առ կաղամբ:

Յաւել յերկրորդն, զի ոմանք ևս են վիճակեալ այնպիսւոյ քաղցր բնութեան, մինչև փոքր վիշտ է նց բիւրոց համբերել մեռանելոց` քան գործել ինչ գործ անարժան:

Արդ` սկիզբն արարեալ բանից, յայտ է թէ յառաջնոց սերմանց առաքինութեց` ոմանք են բնածինք 'ի սեպհական երկրի, և ոմանք ստացեալք արտաքուստ:

Գտանին երբեմն յոմանս բնական կարողութիւնք այնպէս բարեկարգք, մինչև առանց յայլմէ ուսանելոյ և անբռնադատ ինքնին յառաջ բերել նոցա ներգործութիւնս բարոյականս:

Այս ինքնաբերական արգասաւորութիւն երևի ևս յիմացական ունակութիւնս. զի բզմք առանց օգնականութեան արուեստի` գտին նոր արուեստս:

(29). Կադմոս անգէտ գրոց` հնարեաց զգիրս, ըղ նորաստեղծ ամանջանս մտաց. զի բզմք լսելին յուսանիլ զայն, և այլք լսելին վասն ուսանելոյ զայն:

(30). Անաքսիմանդր հնարեաց զժամացոյցն արեգական. Է որ և արեգակն իսկ զարմացաւ, տեսեալ զինքն ըմբռնեալ 'ի սակաւագիծ ուռկան:

(31). Գիոպենոս եգիտ զարուեստ անգրիագործութեան. զի արարածոյ ինչ երկաթով ոչ պղնձա իւրով վաճառաւ` փոխեաց զմգիկ 'ի քարինս:

Նոյն արգասաւորութիւն երևի և 'ի բաղձողական կարողութիւնս շուրջ զբարութ, ոչ յիմացական կարողութիւնս շուրջ զգիտութիւնս. զի ոմանք բարեբաստիկ աշակերտք անձանց` արիացան առ մեծամեծ գործս բարոյականս:

(32). Օրինորդն կամիլլէ զկաթն գիեղով զանասնոց յանտառի` իւրովի ձգեցաւ 'ի սէր պարկեշտութեան. և պահեաց զայն անյաղթ յարձակմունս վոլսկեանց, առանց զաւակի, այլ ոչ առանց պարծանաց:

Աքիլլէս սնեալ 'ի փափկասուն աղջկանց միջի, զի ինդացեալ 'ի գրգանս մի մարդկեցի 'ի մարտ. մերժեաց զծիրանիս և զմանեակս, և ընտրեաց զզէնն` զոր չէր երբէք տեսեալ, առ 'ի հանդիսանալ 'ի

գործս

գործս քաջութ :

Կիւրոս առաջի արկեալ գազանաց՝ զի մի թ՟րեսցէ, և 'ի գազանաց սնուցեալ, սկիզբն արար թագաւորութ 'ի մէջ մանուկ հովուաց . այնպէս ահեղաստատ 'ի վ՟ր կաղնի աթոռոյ, որչափ զկնի յոսկեղէն գահոյս թ՟րութ պարսից :

Եւ մարկոս կատոնն դեռ մանուկ գոլով խօսէր ոպ՟ հիւպատոս, հասուն 'ի խակ հասակի : Զօրմէ և ասացաւ, թէ յեօթնամեայ հասակի չէր մանուկ, և յեօթանասնամեայ հասակի չէր ծեր :

Բնութն ոչ պարգևէ զառաքինութիս, այլ՝ փոյթ առաքինութեանց պարգևէ տղայոց անկերպարան ինչ ստուերագրութիս, որք երբեմն ինքնին առնուն կերպարան : Այսպիսեաց առաքինութիք ստուերագրեցան 'ի խառնուածս . բայց զկնի առին կերպարան սեպհական ջանիւ :

Ամենեքին ա՟ք եղեն բնածին սերմանք 'ի բնական կարողութիս, որք բողբոջեցին ունակութիս բարոյականս : Իսկ այլ սերմանք են փոխադրեալք արտաքուստ 'ի ներքս՝ այլում նմանողութ՟ կամ բուռն առնելով անձին :

Սոյգ ժմկ սերմանելոյ զայսոսիկ սերմանս՝ է մանկութին . զի է սա առաւել դիւրամէտ առ նմանողութի . վ՟ն և առաւել ընդունակ :

Յարմատս նորատունկ որթոց եդեալ ինչ ինչ հոտաւէտ՝ անուշահոտ առնէ յաշնան զհասեալ խաղողս . և պատկերք առաքինութեց պատուաստեալք 'ի գալար տիս նմանողութ՟՝ ազնուականս յարդարեն զգործսն՝ 'ի հասանել յարբունս :

Կաթնկեր շանց ուսուցանեն որսորդք հաչել առ մորթ եղին կմ՟ վարազու յորջոյ իւրեանց . զի համարձակեալ մի երկիցեն 'ի գազանաց անտի յանտառի : Փորձ կեղծեալ պատերազմի՝ բառնայ զերկիւղ ճշմարտին :

Աթենացիք մարզէին զմանկունս իւրեանց յուսումն մարտի, երաժշտութն և գիտութեց, այլ ոչ 'ի տեսութե օրինակաց բարի վարուց . սմին իրի լինէին նոքա քաջ մարտիկք, պարուորք՝ և իմաստակք . բայց այնչափ ախտաւորք, մինչև տանիկէ անուան

վատ֊

վատանուն առնել բովանդակ զյունաստան · (33)։

Ձեք որ քաջ վարժապետ առաքինութեանց քան զծնօղն · զի ոչինչ գաղափար բնաւորապէս դիւրագոյն է ձգել 'ի նմանութիւն ։

(34) · Առաքինի արքայն ագասիկղէս ոչ զոք կամեցաւ 'ի մանկութե ունել իւր ուսուցիչ · այլ · Ի նմանէ ուսայց, յորմէ և ծնայ ։ Յառաջ քան զուսանիլ իւր գիտաց, թէ ոչ որ կարող էր աւանդել նմ զուսումն վարուց լաւ քան զայն՝ որ ետ նմա զկեանս ։

'Ի խոր տպաւորի պատկեր առաքինութե, յորժամ ջերմ կնիք է սէրն հայրական, և մոմ կակուղ՝ հնազանդութին որդիական ։ Բայց 'ի հայրական դպրոցի առաւել ուսուցանեն բարի օրինակք՝ քան բարի խրատք · զի հաւատարիմ եւս են առարկայք աչաց՝ քան ունկան · և դիւրին եւս է բարւոք հրամայել · քան բարւոք 'ի գործ դնել ։

Խաչափառն յանդիմանէր զմանուկ իւր խատորադնայց · ասէ , Որդեակ՝ լքնաս աղէկ · և նա ասէ · հայր, գնամ որդէս զօս գնալք փէստնէմ ։

Ծնողին պարտ է լինել առաքինի, եթէ կամի՝ զի ծնցին նմ առաքինի որդիք · զի որովհետև որդին է պատկեր ինչ հօրն, հրէշ իմն լինի բնութ՝ եթէ որդին նմանեսցի հօր ըստ կերպարանացն , և ոչ ըստ բարուց ։

Ապա պարտ է ուսուցանել զառաքինութիւնս քաղցրութբ և սիրով առ 'ի չառնել առելի զմի միայն սիրելին յաշխարհի ։ Ապա եթէ ոչ օգնեսցէ սէրն, նպատամատոյց լիցի երկիւղն ։ Ճանապարհ առաքինութե գտանի յազնուականաց նշողիւք փառաց · այլ 'ի գեղջկաց փայլատակմբք գանից ։

Եղինք նեղեալք 'ի շանց՝ դիմեն 'ի գիրկս մօրն , յորմէ փախչէին · և ախտաւորն առ զերծանելոյ 'ի կշտամբանաց՝ յորմէ երկնչի, դիմէ յառաքինութիւնն՝ յորմէ խորշէր ։

Միայն մոլորակք ունին շարժումն ներհակ այլոց աստեղաց՝ յարևմտից յարևելս · այլ վերին կամարն բուռն զօրութ յափշտակելով ձգէ զնս իբրև զայլ աստեղս՝ յարևելից յարևմուտս ։ Սմին 'ի տղայոց՝ իւրեանց թիւր յօժարութ գնան ընդդէմ բանակա-

նու-

նուէ. այլ յառաջին շարժումն է խիստ խրատուի դառնալ ունին 'ի բանաւորութիւն։

(35). Բեղերափոխս սպան նիզակաւ զեղջերուաքաղն առասպելեալ, որ իւր այլանդակ գլխովք զարհուրեցուցանէր զլիկիացիս՝ զի մի ելցեն արտաքս 'ի գործ իւրեանց։ Եւ իմաստուն վէպն գանիւք բառնայ 'ի այլայոց զցնորս, որք յետս ընկրկեն զնս յառաջինի գործոց։

Տեսեր արդ երիս տարբեր բնաւորութիս 'ի մասս Ճանապարհի առաքինութեան. մի՝ ինքնաշարժ. երկրորդ՝ նմանողութբ. և երրորդ՝ բանութբ։

Մի միայն գար զերեցունցս եսես զաղնուական օրինակ յերիս անուանս արս, որք ըստ սենեքայի այլեայլ առթիւք հասին փառօք 'ի վերջին կատար բարոյական առաքինութե. գ̃ են՝ եպիկուրոս, մետրոդորոս, և հերմակոս։

Հերմակոս եմուտ 'ի Ճ̃նպրհ առաքինութե՛ վարեալ յայն 'ի բանադատութե՛ մետրոդորոսի։ Մետրոդորոս հեշտաբար եմուտ յայն՝ զհետ երթեալ զհետոյն եպիկուրոսի։ Բայց եպիկուրոս առանց խրատուց և խրատուի ուրոյն անձին զնոյն Ճանապարհ առաքինի գործովք 'ի մանկուէ։

Երեքին իսկ յարգաւոր սերմանց բուսուցին բարձր արմատենիս վսեմական ունակութեց։ Առաջինն բանադատ գործովք։ Երկրորդն՝ ուսեալ գործովք։ Եւ երրորդն՝ իւրական գործովք, ոչ ումեք լեալ երախտապարտ, բայց անձին՝ և բնուէ։ Զարմանալի է երրորդն. գովելի՝ երկրորդն. այլ անդարով և առաջինն. զի լաւ ևս է լինել առաքինի բանութբ՝ քան մոլի բնութբ։

Արդ առեն անդէն ռամիկք, և գիտնաւորք ևս, որք համարին զեպիկուրոս զեղծ օրինակ փափկասուն և հեշտասէր կենաց։ Ոչ գիտեն աք, որ հեշտութիւն իցէ այն, յոր հաստատեաց եպիկուրոս զմարդկային երջանկութիւն։ Կարի իսկ 'ի բացէ էին 'ի նորա հեշտուէն հեշտասէր կեանք։

Բաց 'ի մոլորուէն՝ որ հասարակաց էր ա̃մ սոփսկեանց՝ թ̃ այն Ժամս, թէ է մարմնոյ շիջանի և հոգի՝ զոր համարէին նք մարմնաւոր, յայտ է թէ

ոչ

ոչ որք յանապատաւորաց վարուց խստամբեր կենաց քան զեպիկուրոս :

Հեշտութեան կոչէր նա զայն անխռով պարզութիւն մտաց և զանչարչար հանդարտութիւն կրից, զատուցեալն՝ ոչ դատարկանկեաց գրգանօք և մեծածախ խրախճանօք, այլ՝ բարւոք մարմնոյ առ իմ ցաւս, և հոգւոյ առ իմ արկած բախտի. մինչև զգայականութեն կորուսանել զզգայութեն. մինչ զի և 'ի ցուլ փաղարեան լինել մարդոյ երջանիկ : Զայդպիսի երջանկութեն ոչ արգեօք ընտրէին անձանց՝ նորուն զրպարտիչք. (36):

## ԳԼ. Դ.:

### Յաղագս բարոյական առաքինութե:

Մանոյն սերմն՝ թէպէտ և փոքրիկ՝ 'ի բերրի արտորայս բուսուցանէ տունկս համարուն. և իմ ներգործութի մտկային՝ թէպէտև դիւրանց՝ տպաւորէ 'ի հոգի համատեսակ ինչ որակութիւն մնայուն։ Եթէ ներգործութիւնքն են իմացականք, ունակութիւն լինի իմացական. որպ գիտութիւնք : Եթէ են բարոյականք, ունակութիւն լինի բարոյական. և մարդն լինի գովելի կամ պարսաւելի, պատուելի կամ անարգելի :

Արդ առաքինութիւն բարոյական ոչ այլ ինչ է, բայց որակութիւն ինչ տպաւորեալ 'ի հոգի, որ տրամադրէ զմդ 'ի գործել զվայելչականս :

Այս որակութիւն յորժամ անկատար տպաւորի սակաւ կամ թեթև ներգործութեք, կոչի լոկ տրամադրութիւն, և ոչ ունակութիւն :

Ամ տունկ մեծ յիւրում սկզբան է դիւրաբեկ բարունակ ինչ, որ դիւրաւ չորանայ կամ խլի. այլ աճեցեալ 'ի ժմկի՝ դիմակալէ ժմկի. և 'ի փոքուէ հսկայացեալ՝ ծառը տանէ զսաստիկ ձմեռն և զտապախտն օդ. մաքառի ընդ հիւսիս և ընդ հարաւ. լնու զերկինս ոստովք, և զերկիր արմատովք :

Սոյնպ տրամադրութիւնն այն 'ի սկզբան է տկար և անհաստատ. այլ կազդուրեալ յաճախ ներգործութեք և սովորութեք՝ լինի այնչափ զօրաւոր, մինչև ոչ ար-

արտաքին բռնուն, ոչ մարմնական տկարութն, և ոչ մանգաղ ժմկի և մահու կարէ զնա. զի երկարու- թբ ժմկի ունակունն լինի իբր բնուն:

Այս ճշմարիտ է՝ զոր աւէ արիստոտէլ, թէ մի ծիծառն ոչ առնէ գարուն. և ոչ մի միայն ներգոր- ծութիւն գործէ ունակութիւն:

Ոչ որ բնաւորապէս լինի յանկարծակի մոլի կամ ա- ռաքինի: Զարմանք եղեն, զի ըստ առասպելաց ա- րեսկուսա 'ի միում աւուր փոխեցաւ 'ի կնոջէ յայր (37). այլ մեծ ևս սքանչելիք են, թէ ունակացեալն 'ի մոլութիւն՝ միով ևեթ ներգործութբ փոխեսցի յառաքինի:

Բայց և այնպէս՝ երեւին այս սքանչելիք, յորժամ ներգործութիւնն այն այնքան սաստիկ իցէ, մինչև տպաւորել զօրակութիւն համաչափ բազմաց ներ- գործութեց. զոր օրինակ 'ի շարժել զբեռն ինչ՝ ա- ռաւել ազդէ մի միայն ուժգին բուռնհարութիւն՝ քան զհարիւր մեղմ:

Եւ այս 'ի հեթանոսս իսկ: Կայիոսն վաղերիոսն՝ խնեշ մանաւանդ թէ անուղղայ էին վարք. պոպ- լիոս լիկինիոս կամեցեալ ածել զնա յուղղութիւն՝ արար զնա քրմապետ ոլիմպիականն դիոսի: Ո՞ եր- բեք լուաւ այսպիսի օտար դեղ 'ի բուժել զչարա- չար վարս. յանձն առնել զգիւղական պաշտամանց պատիւ սեղանականպատին, և տալ նմ՝ վարձս փոխ պատուոյ: Սակայն այնքան տպաւորեցաւ յեղեանա- ւոր միտս նր գիւղական պաշտամանցն պատիւ, և այնքան արիական եղև առաջադրութն նր չարատել զեղծ գործով զփայլուն նուիրական խուրին, մինչև չեղև որ նման նմա յառաքինութն՝ յետ լինելոյ քրմա- պետ. ոչ չէր որ նման նմա 'ի մոլութիւնս յա- ռաջ քան զքրմապետութիւն. (38):

Այս անհնար է ցրել զնախնի ունակունն, բայց այնմ որ զայն արար. եղեալ ներգործութիւնս հկնք ներգործութեց, ունակուն հկնք ունակուն, և իբր բնութիւն հակառակ բնուն:

## ԳԼ. Ե։

### Յաղագս յատկութեանց բարոյական ունակութեան։

Յառաջին գիրսն խօսեցեալ մեր ինչ ինչ վ՟ գլխաւոր յատկութե՟ բարոյական առաքինութե՟, թ՟ է՛ վ՟ լինելոյ ն՟ պատուելի և գովելի, թողլք խօսիլ զկնի զերից այլոց յատկութեց, որք պատշաճին նմա՛ ըստ որում ունակութիւն. իբր զի հաստատուն են ամ՟ ունակութեց, եւ և ազատական և մեքենական արուեստից։

Այս յատկութիւնք են՝ որոշմագրել զմարդ 'ի գործել դիւրաւ, բերկրութեամբ, և փութով։

Ամ՟ ունակութիւն առաքինական 'ի սկզբան անդ է դժուարին. զի որ՟ լուար՝ առաքինութին է ը՟ զառ. 'ի վեր. իսկ մոլութիւնն ը՟ զառ. 'ի վայր. զի առաջնոյն գիմամարտի զգայութին, այլ ոչ երկրորդին։ Այլ ունակութիւնն յաղթեալ առ սակաւ սակաւ դժուարութեց՝ յառաջ բերէ դիւրաւ զներգործութիւնսն, որք յառաջն երեւէին դժուարինք։

Որ՟ արշաւս դժուարին իցէ քան զլարախաղացի, որ ձեռն յօդս ը՟ երկայնուն ինչ անձուկ, մինչ ունելով առաւ և ատամ և մահ առաջի. սակայն և այնպէս յերկարատեւ ունակութ՟ յայն վտանգաւոր հասանէ, մինչև ոչ երեւակայուն ն՟ ամբոխիլ, ոչ աչացն մթագնիլ, և ոչ ոտին բարախել. է՛ զի 'ի կախ կայ, և է՛ զի ուղիղ յոտին. է՛ զի կորանայ, և է՛ զի 'ի վեր ոստչի. որք և 'ի հարթ յատակի լինէին արգելք մահարերք. մինչև ամբոխն երկնչին յանկանելոյ նորա, և նա միայն չերկնչի։

Այս յայս սահման հասանէ երկար և սովորեալ ունակութիւն 'ի բարոյականս, վարժեցուցեալ զմիտս ընթանալ ընդ ուղիղ ճանապարհ առաքինութե՟ առանց յայսկոյս յայնկոյս կործանելոյ։

Բազում ինչ իրք են դժուարինք յառաքինութեն, ոչ զի են այնպիսի. այլ զի կարծին այնպիսի։ Սասուերախիրս ձիոց 'ի գնացս անսովոր ճանապարհի քարն երեւի լեառն, և կարօն ծառոյ՝ օձ. և սուկարծեացն պատճառեալ ճշմարիտ զարհուրան-

դա-

գահավէժ առնէ զերիվարն և զհեծեալ նր։

Այսպիսի են ընդէ 'ի մուտս ճանապարհի առաքինութե. պատրեալք 'ի սնոտի երկիւղէ՝ շրջմունն, և 'ի չնչին իրաց յաղթին։ Այլ զոր օրինակ գեղ բառուերախիլոս ձիոց ոչ է բաւան յառաջ վարել զնոսա խթանաւ, այլ՝ տալ զանգի առնուլ, և հատանել. և ճանաչել՝ ուսոսի երկնչելին. այնմ ունակութին քաջալերէ զվատասիրտս, զի անձամբ ծանիցեն ըզպատրանս, և ծիծաղեսցին զերկիւղիւ իւրեանց։

Ոչ միայն դիւրացուցանէ ունակութիւնն զդժուարին ներգործութիւնս, այլև ախորժելի առնէ զանախորժս։ Ոչինչ ծառոյ արմատք այնպէս դառն են՝ որպէս զուսառայն. բայց ոչինչ ծառ բերէ պտուղ քաղցր քան զնա։ Յարմարս ունի զելզին, և զանոյշն յատս. որ քաղցրութիւն յապաղեցոյց զնաւս ոգխսեայ, գեղերեցուցեալ զնաւորդան 'ի ծովեզրն տիւանուայ. (39)։

Զեր ինչ դառնագոյն զգայական բաղձանաց՝ քան զառաջին ներգործութեան, որք ծնանին զունակութիւն, կամ բարեխառնութ. բայց ներգործութեք անդրէն ծնեալք յունակութ՝ են քաղցր։

Յայն սահման հասա ունակական արիութիւն մատիսի սկեվողայ, մինչև առաւել ցաւ եղև նմա այն՝ զի չանջողեաց աջոյ նորա 'ի գլուխ տանել զգործն արիական ընդդէմ Թշնամւոյ հայրենեաց, քան զաջոյ իւրոյ բոցակիզութն. առաւել սոսկացաւ Թշնամին 'ի տեսանել զտանջանս սկեվողայ, քան սկեվող 'ի տանել այնմ. (40)։

Ոչինչ գործողուն բնական է անախորժ. զի բնութն համեմեաց զնա պէսպէս ախորժակօք։ Ունակութին հանապազորդեալ՝ է երկրորդ բնութն, առէ արիստոտէլ. ապա հարկ է նմ լինել ախորժական։

Ունակութին մոլեկան յոյժ համանէ 'ի յետին սահման, յորժամ ուրախութ գործէ որք զչար. և ունակութին առաքինական յոյժ համանէ 'ի կատարելութ, յորժամ զգայ ոք բերկրութ 'ի գործել զբարին։ Ցորչափ տախտ է պտուղն, է խակ. և խակ է ունակութին, ցորչափ ունի յինքեան ըզտտպութ։ Տրամադրութ է այն, և ոչ ունակութի-

ամէն իրի և դիւրաւ իմլի ։

Եպիկուրոս 'ի մեռանիլ իւրում 'ի դառն ցաւոց փառէն աղեաց՝ անխռովութ, իբրև հարցաւ 'ի բա֊րեկամաց՝ թէ զիա՞րդ կաս, ետ պատասխանի, [illegible] . և ցյետին շունչ չեցոյց ինչ հեծութիւն ։ Այս կատարեալ ուրախութիւն 'ի յետին ցաւս՝ եցոյց, թէ հին աւուրց էր ունակութիւնն, և ոչ համբակ ։

Ասացի հուսկ ուրեմն, թէ ունակութիւնն առա֊քինական յառաջ բերէ մօրինոյ ներգործութիւ ։

Այնպէս են գործք, որպէս է սկիզբն՝ յորմէ շարժին. եթէ սկիզբն է ունակութիւն ինչ առաքինա֊կան, նա՛ գործք 'ի նմանէ յառաջ եկեալք՝ լինին առաքինականք, վսեմ և մօրինակք ։ Գործք նմանին իւրեանց պատճառի. այս գործք մի և նոյն պատ֊ճառի հարկիւ նմանին միմեանց ։

Որ գործէ ըստ ունակութեան, գործէ միշտ միօ֊րինակ. զի սկիզբն է սա ներքին և միայն. և անհնար է նմա լինել ունակութիւն, եթէ չէ միայն և ներքին ։

Լուսինն միշտ փոփոխի. արեգակն միշտ կայ միայ նոյն. զի լուսինն ընդունի զլոյս արտաքուստ. և արեգակն ունի զսկիզբն փայլածոյ իւրոյ 'ի ներ֊քուստ՝ և յաւէտ ։

Որ գործէ ըստ դիպուածոյ, դիպուած է՝ թէ գործն լիցէ բարի. զի դիպուածն է սկիզբն ինչ փոփոխական և արտաքին ։

Ուստի դիպուածն պատկերահանի ումեմն (ըրնէ֊ակեսի) նկարել սպունգաւ զփրփուր սանձի ձիոյ, 'ի ջնջելն սպունգաւ զոչ բարւոք նկարեալն յիւրմէ. բայց այս թէ միանգամ պատահեաց, յերկրոր֊դումն ոչ պատահեսցէ ։

Որ գործէ 'ի կրից, յետ սակաւ միոյ գործեսցէ զհակառակն. զի թէպէտ կիրքն է սկիզբն ինչ ներքին, բայց առժամեայ. զի փոփոխի ըստ ա֊ռարկայից, որպէս ծովն ըստ հողմոց ։

Որ գործէ ըստ նմանողութեան, ոչ գործէ միօրի֊նակ. զի այնպէս լինին գաղափարեալքն, որպէ֊սի են գաղափարքն ։

Որ

Որ գործէ ըստ բնութ., միշտ գործէ միօրինակ։ Իսկ որ գործէ ըստ ունակութ., գործէ իբր ըստ բնութեան. զի ունակութիւնն հանապազորդեալ՝ որպէս ասացաւ՝ փոխի իբր ՚ի բնութիւն։

Արձանք ձուլածոյք բովանդակ են միօրինակ, զի ձուլին բովանդակ ՚ի միոջէ գաղափարէ. և սմ ներգործութիւնք յառաջ եկեալք ՚ի միոյ առաքինական ունակութ. են առաքինականք. զի առաքինական ունակութիւնն է գաղափար ինչ կերպարանեալ յուղիղ բանէ, որ է անայլայլակ և յաւերժական։

Զնոյն մարթ է ասել զմոլեկան ունակութեանց ՚ի հակառակ միտս։ Թէ գործէ ոք ունակութեամբ շռայլութեան, ներգործութիւնքն լինին միշտ շռայլ։ Թէ գործէ ունակութեամբ ագահութ., ներգործութիւնքն լինին միշտ ագահ։ Բայց թէ գործէ ոք ունակութեամբ առատաձեռնութ., ներգործութիւնքն լինին միշտ առատաձեռն. զի որպիսի է ունակութիւնն, այնպիսի է և ներգործութիւնն։ Իսկ թէ ոք միապէս վրէպ է յունակութեց առատաձեռնութ. և շռայլութ. և ագահութ., ոչ՝ ազգք և յիմարք, այնպիսին թէպէտև պարգևեսցէ կմ չպարգևեսցէ. ոչ առատաձեռն է, և ոչ շռայլ. և ոչ ագահ. զի ներգործութիքն ոչ գան յառաջ յունակութէ առատաձեռնութ., և ոչ ՚ի մոլութեանց ՚ի ծայրս խոտորելոց, որոց չէ ընդունակ, այլ ՚ի բաղդովի և յանանական բերմանց. վսյ և միշտ են անհամանք միմեանց։

## Գլ. Զ։

### Յաղագս կամաւոր և ակամաւոր ներգործութեանց։

Ոչ կարէ իմանալ, զինչ իցէ ներգործութի բարոյական, որ ոչն իմանայ՝ թէ որ խորհ իցէ ՚ի մէջ մտախորհ և անմտախորհ գործոց. ՚ի մէջ կամաւորին և անկամաւորին՝ և խառնելոյն։

Կամաւոր գործն է, զոր ունի մարդ յիւրում իշխանութեան, և առնէ զայն ազատօրէն, ճանաչելով զպարագայս այնր՝ զոր առնէ։

Ինչպէս յաղթական գունդ ՚ի մենամարտութ., սպանանէ զոսոխն, թէպէտ և խոնարհեալ աղաչէ զնա.

զնա. զի տուանոսի սպանեալ էր անգթութբ զիւրն պայլա. (41): Այս եղև գործ կամաւոր և մտադխորհ, նա՝ վաղու եւս խորհրդածեալ. իբր զի յայն հայէր, թէ չէ արժանի գթութե անգութն:

ԱՆԿԱՄԱՒՈՐ գործ այն է, որ լինի անգիտութբ, կամ բռնութբ:

ԲՌՆՈՒԹԵԱՄԲ լինի, յորժամ գործն չէ 'ի ձեռս գործողին զայն, այլ՝ այնորիկ, որ տայ գործել. որպէս ոդիսեւս ոչ գնաց զհետ ընկերաց իւրոց, թէպէտեւ խոստացեալ էր. զի 'ի կիկղոպայ արգելեալ պահեցաւ յայրին. (42):

ԱՆԳԻՏՈՒԹԵԱՄԲ լինի, յորժամ գործն է 'ի ձեռս գործողին, բայց անգիտանայ նա ինչ ինչ 'ի պարագայից գործոյն՝ զոր առնէ: Ըստ այսմ՝ փախստեայն ովրեստէս յորսանետաձիգ լեալ յեղջերու մի, ոչ գիտելով թէ նուիրեալ էր այն արտեմեայ, պարտաւորեցաւ, թէպէտ և էր անմեղ. (43):

Գործն ԽԱՌՆԵԱԼ 'ի կամաւորէ և յանկամաւորէ՝ լինի, յորժամ որ առնէն զայն, ոչ կամէր առնել. բայց և այնպէս կամի առնել վասն զերծանելոյ 'ի մեծ ինչ չարէ, կամ յանձն ձգելոյ զմեծ ինչ բարի. որպ ագամեմնոն 'ի սպանդ մատոյց զդուստրն առ երկիւղի, զի մի ինքն 'ի սպանդ վարեսցի 'ի յունաց. (44):

Երբ 'ի գործն կամաւոր հաճեալ է մարդ. 'ի բռնականն՝ անհաճ. յանգիտականն ո՛չ հաճ է, և ո՛չ անհաճ. իսկ 'ի խառնեալն միանգամայն հաճ է և անհաճ:

'Ի գործ կամաւոր՝ բարութիւն կամ չարութիւն չափի 'ի բարութէ կամ 'ի չարութէ առարկային, վախճանին, կամ միջոցաց. որպ հանդերձեալ եմք ասել:

'Ի գործ անգիտական՝ եթէ զանգիտացեալ պարագայն պարտ էր ճանաչել ամենեցուն բնական լուսով, որ է խիղճն մտաց, անգիտութիւն է չար: Այսպիսի եղև անգիտութի ստամմատոսի ուրումն. որոյ գողացեալ զգանձս հասարակապետութե ս՛րբն մարկոսի (որ 'ի վենետիկ քաղաքի), 'ի չքմեղս եղև՝ ասելով. ԵՍ ՉԳԻՏԷԻ ԹԷ ԻՐՔ ՀԱՍԱՐԱԿԱՑՆ՛ ՆՈՑԱ ԼԻՆԻՆ, ՈՐՔ ԱՌՆՈՒՆ ԶՆՈՍԱ:

Գործն

Գործն բռնադատ՝ եթէ յիւրմէ է չար, և կամքն հաւանի այնմ, է գործ մոլեկան ։ Բայց եթէ կամքն ընդդէմ կայ այնմ ըստ զօրութ., գործն ոչ միայն չէ մոլեկան, այլև գովելի և առաքինական. որպէս պատահեաց ողջախոհին հռոմայեցւոց (Լուկրետիայ) ։ Ընութեն եղև 'ի բռնաւորն, և ոչ 'ի նմա. զի ոչ 'ի նմա, այլ 'ի բռնաւորն եղև կամաւոր. (45) ։

'Ի գործն խառնեալ՝ եթէ երկիւղն կամ ցաւն յաղթէ արիութե քաջի ուրուք, գործն թէպէտև չար՝ ախտակցութե է արժանի. զի որչափ նուազի կամաւորն, այնչափ նուազի յանցաւորութիւն։ Եւ այսպիսի իրք առաւել լինին նիւթ եղերերգութեց (46), յորժամ յերևելեաց ոք ոչ ամենևին պարտաւոր, և ոչ ամենևին անպարտ, արժանի հանդիսանայ պատժոյ և ցաւակցութե ։

Բայց եթէ՝ գործն է ամենևին զեղծ, որպէս՝ հայրասպանութ. հայրենեաց մատնութ., և կռապաշտութ., առնէ զմարդ ամիւ զեղծ. և սարսափն չիջուցանէ զցաւակցութիւն. անարժան գոլով կենաց, որ այնպիսի գործով կեանս գնեաց ։

Նոյն զինչ ասելի իցէ զգործոց եղելոց 'ի բռնութ յարձակմանէ կրից ։ Կանոն է հանրական, զի թէ կիրքն յառաջէ քան զբան, գործն ոչ մոլեկան է, և ոչ առաքինական, այլ՝ անտարբեր. զի չէ կամաւոր, այլ բնական ։ Բայց եթէ կամքն յառաջէ քան զնա՝ կա՛մ ընկերէ նմա, լինի մոլեկան կա՛մ առաքինական՝ ըստ առարկային բարութե կա՛մ չարութե ։ Այսպէս լուար՝ թէ զգայական բաղձանք մարդոյ մասամբ իմն է բանական, և մասամբ իմն անբան ։ Անբան է և անասնային ըստ ինքեան. զի ներքուստ չէ ազատ, այլ՝ որոշեալ յառարկայէն իբրև զբաղձանս անասնոց ։

Մինչ զի ըստ առաջադրեալ կարի ինչ ախորժական առարկայի ինչ ցանկութե՝ կա՛մ վրէժխնդրութե, բաղձանքն հարկիւ բերի յայն, որպէս զամլեալ գրաստ առ գարման, կամ որպէս զքար 'ի կեդրոն ։

Բայց ըստ այլ մասին կոչի նա բանական, ըստ որում կամքն յերկարաւոր ունակութ., կա՛մ հրամայական ներգործութ. մեղմէ զնա, և ուղղէ սանձիւ բանա-

կա-

կանոնէ: Այսպէս առաջին և յանկարծ յարձակմունք կրից, յորժամ ոչ միտք և ոչ կամք ընթացակցին այնմ, վասն զի չեն կամաւորք և ազատք, այլ բնականք և հարկաւորք՝ որպէս զանասնոցն, ոչ առաքինականք են և ոչ մոլեկանք, այլ՝ անտարբերք:

Նոյն է ասելի զարբելոց և զցայրագնելոց. որոց անասնային գործք՝ մինչդեռ խափանեալ է սթափութիւն նոցա 'ի գինւոյ կամ 'ի սրամտութէ, վասն զի չեն ազատք, յառակայէս ոչ մոլեկանք են, և ոչ առաքինականք:

Բայց յայտ է՝ թէ են բազում գործք, որ թէպէտ չեն կամաւորք 'ի լինելումն, սակայն են կամաւորք 'ի պատճառն. վսյ և մոլեկանք:

Կրկին օրինակաւ մարթ է պատճառին կոչել կամաւոր: Մի՝ մերձաւոր, յորժամ ոք գիտէ՝ թէ դիւրաւ գինեհարի, և արբեցութին կարի իմն զնա կատաղեցուցանէ, սակայն և այնպէս գինւոյ արկանէ զանձն 'ի վտանգ. յորմէ պարտն էր նմա խուսէլ: Զի որ կամի զպատճառն, կամի և զգործն յառաջ եկեալ 'ի նմանէ: Վէհ պիտտակոս իմաստուն օրէնսգիրն սահմանեաց մն կառագի արբելոց կրկին պատիժ. մի՝ վասն գործոյն. և միւս՝ վասն պատճառին. (47):

Երկրորդն փոքր մի ընդհանրագոյն և հեռաւոր՝ այն է, յորժամ ոք առաքինական ունակութիւնս չէ այնպէս տիրեալ բուռն կրից, մինչև դիմակալել ունակութեն յանկարծ բորբոքմանց բարկուն, կմ՝ ցանկութե: Նա՝ որք առաջնոց յարձակմանց կրից ներքեւին, և կորուսանեն զուշ իւրեանց, յայտնի ցուցանեն՝ թէ ապիրատ և անասնային սովորութիւնք նմին խանգարեալ են զոգիս:

Հայեաց 'ի մեծ օրինակ մեծի ինքնակալին, աղեքսանդրի ասեմ մեծի. յորժամ յուրախութիւնս կոչնոց յիմաստուն և 'ի սիրելի բարձակցէ (ր̄ 'ի կղիտոսէ) հեզիկ ազդմամբ ընկալեալ, եհար զնա գեղարդեամբ և սպան. (48):

Կարէր անբասիր առնել զաղեքսանդր յանկարծական բորբոք բարկուն՝ որ բառնայ 'ի գործոյ զկամաւորութին. և ես փառումն գինւոյն, որ բառնայ զսթա.

զսթափումն․ այն զի՝ առ նմա կայր և նիզակ իւրոյ սրամտութեան պատրաստական արբանեակ․ մինչև յառաջել խոցմանն քան զընտրողուն, և յաղթողին աշխարհի՝ յաղթել 'ի կռիւ։ Այլ այս պատճառանք՝ որոց մարթ էր անբաւիր առնել զգործն, առաւել ևս գատախազեն։

Քաջ ճանաչէր նա յառաջնմէ իսկ բազմապատիկ փորձովք զխառնուած իւր ցասմանս։ Գիտէր ևս, թէ զինէհարութին 'ի նմա գրգռէր զայրոյթ․ վ̃կ չէր պարտ նմա արբենալ, և ոչ զէնս առ իւր ունել։ Արբեցութին չառնէ զգործս՝ մոլեկան, այլ՝ զարթուցանէ զմոլեկան ունակութիս, որք կան 'ի հոգի ոպ̃ զկապեալ գողանս, և սպանդարամեան լուծանէ զշղթայս։ Մինչ զի գործն իւրմէ անտարբեր՝ եղև անողորմ 'ի պատճառն իւր։ Թող զի եթէ էր 'ի նմա զգայուն 'ի ճանաչել զխայթ ազդարարութեն, զխարգ չեղև և սթափումն 'ի ճանաչել զիւրոյ գործոց չարութե։ Այն զի՝ երախտապարտ ևս էր իւրում հաւատարիմ բարեկամի, և իմաստուն վ̃դպի, զի և առ ինքն Կղիտոս եղև նր̃ փիլիսոփա․ որ 'ի գրգռել բազմաւ մարդահաճոյից զախտ նր̃, առ միայն աղգու ինչ բանիւ ջանայր բժշկել զնա․ զի մի ասելով՝ թէ որդի է արամազդայ, զմայր իւր ցուցցէ շնացեալ, զհայր իւր խայտառակ, և զանձն իւր աղջկորդի և ծանակ։

Այս՝ նոյն ինքն աղեքսանդր վաղվաղակի 'ի միտ եկեալ, եղև գատախազ և գատաւոր իւրոյ յանցանաց։ Կամէր դահճ ևս լինել անձին, եթէ էր թողացուցեալ։ Չափու վիրաց բարեկամին զիւրն չափեաց վէրս․ և որչափ արիւն եհեղ յանձնէ օտարի, այնչափ արտասուս եհեղ յիւրոյ աչաց։

## ԳԼ. Է։

### Թէ որք էջէն խոյս առաքինութե։

Սպաքէն լուար, թէ առաքինութին ոչ է բնական, բայց և ոչ հակառակ բնութե, որ հասարակօրէն ոչ պարգևէ զառաքինութիս, և ոչ մերժէ զնոսա։ Բայց զօրօրինակ ասացաք, թէ ամանք ծնանին բնական

կան կարողութիւնք պատրաստականք առ առաքինու-
թիւն քան զայլս. նոյնպէս մարթ է ասել՝ եթէ ոմանց
միտք են անուսք, և բաղձանք ըմբռնողք առ առա-
քինական գործս, թէ ոչ յաղթեսցի անպտղութիւն
երկրին քաջ մշակութեամբ։

(49). Թեմիստոկղէս առաքինասէր իշխան կարող
եղև ուսուցանել որդւոյ իւրում գեղեցկանտոսի հնա-
զանդել զամենի երիվարս. այլ ոչ կարողացաւ ու-
սուցանել նմա տիրել անձին։ Կարողացաւ առնել
զնա գիտնաւոր քան զգիտունս, այլ չեղև կարող
առաքինութեամբ որոշել զնա 'ի մոլեաց։

Բնութիւն մայր գոլով այլոց՝ սմա եղև մօրու, երախ-
տաւորեալ նմա ոչ 'ի բարիս. զի պատրաստեաց զնա
ընդունարան լինել ամենայն բարեաց, այլ ոչ Ճշմարիտ
բարւոյն։ Պատանի արժանի ախտակցութեան, այլ ոչ
ներողութեան. զի կարող եղև բնութիւն յօժարել զբազ-
մանս նորա, այլ ոչ բանադատել զկամս, որ կարօղն
էր անխոնջ աշխատութեամբ բանանալ 'ի վերայ յամառ
բնութեան։ Մինչ զի կրկին և խրատացի գանգատանօք
հնար էր պատանւոյն մեղադիր լինել բնութեան, և
բնութեան մեղադիր լինել պատանւոյն. նմա պարտա-
ւորիլ, և սմա պատժապարտիլ։

Ապա առաջին խոչն ծննանի 'ի մտաց՝ որ առաջ-
նորդն է բանին։ Զի Թէպէտ առարկայ մտաց է
առ հասարակ Ճշմարիտն, սակայն յոմանս աւելի
քան յայլս՝ մանաւոր միտք, կամ 'ի սուտ երևակայ-
ութենէ, և կամ 'ի սեպհական տկարութենէ նսեմացեալ՝
իմանան զառերևոյթն որպէս Ճշմարիտ. և կամքն
հետևորդ՝ ըմբռնէ որպէս բարի զիւր վնասակարն։
Յերևիլ երկուց արեգականց միանգամայն յերկինս
ադէտք զտպաւոր նմանութիւն համարին Ճշմարիտ ա-
րեգական, և զՃշմարիտ արեգակն տպաւոր նմանու-
թիւն։ Այսպէս յիմարք և յետսամիտք՝ յորոշել զյա-
տուկ և զանյատուկ պարագայս՝ ադխտաբար սխա-
լեն։

Բայց և առէպ պատահէ, զի Թէպէտև միտքն է
բարեկարգ. բայց կամքն կարի խիտ յամառ կամ հեղգ՝
մերժէ զխորհուրդս նորա յափշտակեալ 'ի կրից։
Քաջ է՝ որ գիտէ։ Բարի է՝ որ ոչ գիտէ, բայց
անձ-

անձկայ գիտել: Առաւել չար է, որ ոչ գիտէ, և ոչ գիտել կամի: Սոյնպէս քաջ է, որ զհետ երթայ առաքինութեան: Բարի է, որ անձկայ զհետ երթալ. Առաւել չար է, որ ոչ զհետ երթայ, և ոչ զհետ երթալ կամի:

Առաքինութիւնն յիւրմէ այնչափ է գեղեցիկ, որ թէ երևէր աչաց, յափշտակէր զամենեցուն սիրտս: Բայց զի հաճեալ ընդ տարժամնաւորս՝ բնակէ յապառաժուտ և յանկոխ տեղիս 'ի սկզբան անդ, և բացական է 'ի զգայութեանց, կամքն կարծամիտ առնել զարհուրելի 'ի դժուարութեան ճանապարհին, քան ամոքել 'ի գեղեցկութեան ելից ճանապարհին, ոպ̄ ասացաւ: Սմին իբր խորշեցեալ 'ի ճանապարհէն, խորշի և յուսուցչէ նր̄. և ոպ̄ իժ խլու զականջս, զի մի լուիցէ զփրկաւէտ թովչութիւն բարի խորհրդոյ:

Իսկ խաբուսիկ հեշտութիւնն նստեալ 'ի ծաղկազարդ ստոր զգալի փափկութեանց, հրապուրէ զանգործ կամս. որ թէպէտև դշխոյ է 'ի ծնէ, ոչ հրամայէ, այլ՝ հնազանդի. և այնպէս զլխարկեալ տառամի իւրոյ աղախնոյ՝ խարդաւանի 'ի վիհ:

Երդուաւ յանուանսն չհաշտիլ ը̄ տրովադացիս, ցորչափ բնակէր 'ի տրովադա՝ այն, որ իմաստակար գեղով յափշտակեալն էր զյափշտակիչ իւր. (50):

Մի անկանցին երբեք մարդիկ հաշտ լինել ը̄ առաքինութեն, թէ ոչ արտաքսեն յանձանց զգիրգն զայն՝ բայց զմոլեգին՝ զհեշտախառնութեն հեղինէ:

Սա է վհուկն կիրկէ, անուշակ հրաւիրակ և գեղատու գաւազան իւրոց իջաւորաց. որոց ը̄ քաղցր օշարակի արբեալ զթոյն կերպարանափոխ, մոռանէին մարդ, և լինէին անասուն. (51):

Ընդ ճ̄մա բնութե լծորդի բազում անգամ և վատթարութիւն անոգեան:

Տիմոթէոս ուսուցիչ քնարերգութե կրկին վարձս խնդրէր յաշակերտաց անտի, որք կանխաւ աշակերտեալ էին անգէտ քնարահարի. զի դիւրագոյն է ուսուցանել զչուսեալ բարին. քան մոռացուցանել զուսեալ յոռին:

Ամուլ են խրատք, որք դատանեն զսիրտ 'ի վատթար

Թար սննդենէ խոպանացեալ չար սովորութիւնք . զի կրկին աշխատութ պէտք են , խլելոյ զչար արմատս , և սերմանելոյ զբարեբեր սերմանս ։

Բայց այնչափ առաւելու դժուարութիւնն , որչափ խորարմատ է չար սովորութիւնն ։ Դիւրածին մոլութիւն գլխովին ընդ ձեռամբ է ծնողին . բայց եթէ և աճէ , ըմբռստանայ առ ծնօղն . և ծերացեալ ը̄ մարդոյ՝ այնչափ զօրանայ , որչափ մարդ ակարանայ ։

Ոչ հաւսկն ատացից . չարագոյն ժանտախտ առաքինութեանց է կենակցութիւնն ը̄ մոլիս ։

Հպաւորութ ծնանի ժանտախտ . և այնպէս դիւրամէտ է բնութիւնն 'ի վատթարն , որ յառողջէն չըժշկի ախտացեալն , բայց յախտացելոյն ախտաւորի առողջն . և դիւրին է մեզ մոլելոյ ախտաւորել զբազում բարեկեցիկս , քան բազում բարեկեցաց շրջել 'ի բարի զմի որ մոլի ։

Յիրաւի ըղձանայր իսոկրատէս , թէ մոլէք 'ի ճակատս կրէին ինչ նշան , զոր օրինակ խեթկող եզանց կապեն խոտ յեղջիւրս , զի զգուշասցին 'ի նոցանէ մարդիկ ։ Բայց բնութիւնն չարար զայս՝ վասն երկուց ։ Մի՝ զի մոլէք կարի իսկ քաջ յայտնեն զանձինս գործովք և բանիւք ։ Եւ երկրորդ՝ զի առաքինիք յերևել իւրեանց սակաւ , մի յօժարեսցին խառնել 'ի թիւ բազմաց ։ Իմաստունն պղատոն յերկուս դասակարգութիս սակաւաւորաց և բազմաւորաց , զմոլիսն դասեաց 'ի թիւ բազմաւորաց , և զառաքինիսն 'ի թիւ սակաւաւորաց ։

## Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Յաղագս մասնաւոր առաքինութեանց, թէ որ իցէ նց մէջ. և որք մոլութիւնք՝ որք 'ի ծայրս:

## ԳԼ. Ա.

Յաղագս չորից գլխաւոր առաքինութեանց. և թէ յոր մասն հոգւոյ զետեղանան:

Ապաքէն լուար. թէ չորք են կարողութիւնք հոգւոյ՝ ընդունակք առաքինութեան. զի է, ցասմնական և ցանկական 'ի զգայական մասին, միտք և կամք 'ի բանական մասին:

Յիւրաքանչիւրում 'ի կարողութեանց աստի նստի առաքինութիւն ինչ կանոնադիր և ուսուցիչ բարի վարուց. ոպ͞ 'ի վ͞ր արմուղ ձիոյ նստի ձիավարժ. որ կրթէ զնա:

Մի յառաքինութեանց աստի կանոնաւորէ զցասմնականն, յառաջ վարելով և ընկրկելով զնա ըստ բանականութեան 'ի դժուարին իրողութիւնս. այն է արիութիւն: Երկրորդն կանոնաւորէ զցանկականն 'ի բերկրական իրողութիւնս ըստ թելադրելոյ բանականութեան. և սա է բարեխառնութիւն:

Երրորդն կանոնաւորէ զկամս, յօժարեցուցեալ զնա յիրաւացի իրս, որք հային յօգուտ այլոց, և սա է արդարութիւն:

Իսկ չորրորդն լուսաւորէ զմիտս զանազանելոք. չափ սահմանէ օրինաց. և ամ͞ առաքինութեանց տայ օրէնս. և սա է խոհեմութիւն:

Ապա սոքա են չորք ծխնիք բարոյական իմաստասիրութեան. զի բարձեալ ունին զբովանդակ շրջանս մարդկային կենաց. որ յայտնի ճանաչի 'ի սոցին ներհակաց այսպէս:

Ոմանք

Ոմանք գործեն չարիս, զի ոչ ճանաչեն զբանաւորն։ Այլք ճանաչեն, բայց կամաւոր չարութք ոչ կամին երթալ զհետ։ Իսկ այլք կամին երթալ զհետ, բայց կիրք երկիւղի կամ ցանկութ խոտորեցուցանեն զկամս և զմիտս 'ի պարտաւորութէ իւրեանց։ Այսպ առ 'ի գործել բարոյապէս, պիտի Խոհեմութիւն, զի լուսաւորեսցէ զմիտս. Արդարութիւն, զի կանոնաւորեսցէ զկամս. Արիութիւն, զի ջերմացուսցէ զցրտութիւն երկիւղի. և Բարեխառնութիւն, որ մեղմեսցէ զբորբոք ցանկութ։

Յայտմանէ մարթիս իմանալ, թէ զո՛ր կարգ վերագասութ պահել ունիցին 'ի մէջ իւրեանց այս չորեքին առաքինութիւնք, հայեցեալ 'ի ձիրս չորեցունց բնաւոր կարողութեցն՝ յորոց առնուն զազնուութիւն իւրեանց։

Յայտ է, թէ Արիութիւնն՝ որ ձեռնարկէ 'ի դժուարինս, ազնուականագոյն է քան զԲարեխառնութիւնն՝ որ յածի զերկրաւորօք։ Իսկ Արդարութիւնն՝ որ զտեղի ունի 'ի բանական մասին, առաւելու ազնուութ քան զցանկականն և զցասմնականն, որք են 'ի զգայական բաղձանս։ Այլ Խոհեմութիւնն՝ որ զտեղի ունի 'ի բարձրագոյն աթոռ բանականութեն, ազնուագոյն է յոյժ քան զկամս. զի է լոյս՝ լուսատու մարդկեղէն երկնից։ Մինչև մարթ է քեզ իմաստասիրել զչորեցունց առաքինութեցս, չափեալ զազնուութիւն նց ըստ ծագման, եթէ՝ յառենի խորհրդոց նախին առաքինութիւնք այսպիսի կարգաւ. Խոհեմութիւն, Արդարութիւն, Արիութիւն, և Բարեխառնութիւն։

Իսկ արդ՝ զինչ լինէր հոգի առանց առաքինութեց, բայց եթէ մարմին առանց հոգւոյ. աշխարհ առանց բնակչաց. երկինք առանց աստեղաց. և լուսեղէն խորան առանց երանելեաց

Բայց աստանօր թուի ինձ՝ թէ յուշ լինի ուշիմ մտաց քոց մեծ ինչ տարակոյս, որ պատահեաց զկարծիս մեծամեծ փիլիսոփայից։

Վն զի եթէ անհնար է ներգործութէ իմիք լինել առաքինական՝ եթէ չէ ազատ և կամաւոր, զիարդ հնար իցէ արիութէ և բարեխառնութէ լինել 'ի զգայական բաղձանս, որ յիւրմէ չէ կարողութիւն ազատ,

այլ

այլ՝ բնական, որպիսի անասնոցն է։

Իսկ եթէ զբաղձանս ասիցէ ոք ազատ, զի որում ներքոյ անկանի իշխանութե կամաց. այլ 'ի կամս և ոչ 'ի զգայական բաղձանս բնակէ բարեխառնութիւն, և արիութիւն. կամ թէ՝ ոչ մին, և ոչ միւսն է ճշմարիտ առաքինութիւն։ Արդ եթէ այս երկու առաքինական ունակութիւնք էին յանցաւոր բաղձանս, և ոչ յանմահ կամս, այլ 'ի բառնալ մահու 'ի մարդկանէ զմարմնական և զգայական կողմն, մնայր հոգին մերկ յերկուց գեղեցիկ և ցանկալի զարդուց, առնուլ ընդ իւր միայն զխոհեմութիւն և զարդարութիւն, այլ ոչ զբարեխառնութիւն և զարիութիւն։

Յայլմէ կողմանէ և այս ևս յայտ է, թէ հարկ է առաքինութիւն լինել յայնմ կարողութիւն, որ մասնակցուցանէ զմարդ 'ի ներհակել մոլութիւն. այլ 'ի զգայական բաղձանս հարկ է լինել արիութիւն, և բարեխառնութիւն. զի զգայութիւնն է՝ որ մասնակցուցանէ յանբարեխառնութիւն, և յերկիւղ։

Փիղն անախորժ կերթ էր աներկիւղ մարտնչելոյ. և առիւծն զամենախանդաւ սովոր էր ժուժկալել յորսոյ, զորով խաղայր 'ի քիմս։ Զառաջինն մարթ էր կոչել արիութիւն, և զերկիրն բարեխառնութիւն զգայական և անասնական։ Երկարանչքերն յառաջ եկին յերկար սովորութիւն ապաւորմամբ պատկերաց յերևակայութե այնց գաղանաց։

Գործողութիւնք զգայական հոգւոյ 'ի մարդ և յանասունս, մեկնաւ 'ի գործոյ բանականութիւն, ոչ արդ լոկայր՝ են հասարակաց. այլ հարկ է, զի և 'ի մարդկային զգայութիւն ապաւորեսցի երկար սովորութիւն զգալի ինչ որակութիւն առ ընտելացուցանելոյ զնա բուռն հարկանել զզժուարին իւրոյ, և ժուժկալել 'ի բերկրականաց։

Այս պատճառք յերկոցունց կողմանց աղգաւք՝ ասխալեցին զամանս 'ի գիտնաւոր վէճապետաց՝ ոչ միայն փիլիսոփայական, այլ և աստուածաբանական դպրոցաց՝ իմաստասիրել, եթէ հարկ է լինել 'ի մարդ երկուց ունակութեանց զբարեխառնութիւն, ոչ և զարիութիւն մին 'ի կամս, և միւս ևս՝ 'ի զգայութիւն։

Քանզի եթէ բաղձանքն զգայական՝ ոչ ըմբոստ հը-

պա.

պատակ բաղում անգամ ապստամբի 'ի կամաց, և բաղում անգամ կամքն հեղգացեալ յաղթի, և ձգի զհետ զգայական բաղձմանց, ապա պիտին երկու ունակութիւնք. մի՝ 'ի կամս առ բարւոք հրամայելոյ. և միւս 'ի բաղձանս՝ առ բարւոք հնազանդելոյ: Եւ ոչ աւելորդ համարին զայս կրկնութիւն. ք̄զի զոր օրինակ յմբռնողական գործողութիւնս՝ բաց 'ի նիւթական տեսակաց երևակայութեան գնին և հոգեղէն տեսակք իմացողութեան. այնպէս 'ի բաղձողական գործողութիւնս չէ ինչ դժպատեհ, թէ բաց յունակութեան գնիցի և ունակութիւն կամաց զնովին առարկայիւք ցանկութեան կամ երկիւղի:

Այս ճշմարիտ է, թէ ը̄ մէջ երկաքանչիւր ունակութեան գտանեն մեծ խտիր, այն որ կամացն է՝ ասեն, է ճշմարիտ և տիրա̄պ առաքինութիւն բարեխառնութեան և արիութեան. զի կամքն է կարողութիւն ազատ և բանական. բայց ունակութիւն զգայութեան, որ ը̄ ինքեան է կարողութիւն հարկաւոր և իբր անասնային, այս տրամադրէ զզգայութիւնն առ առաքինութիւն, բայց չէ արժանի անուան առաքինութեան: Եւ մեք դիւրաւ լուծանեմք զայն տարակոյս. թէ արիութիւն և բարեխառնութիւն արդեօք անեղծ առաքինութիւնք իցեն՝ թէ եղծականք: Քանզի ունակութիւն զգայական բաղձմանց որպ̄ մարմնական՝ մեռանի ընդ մարմնոյն. այլ ունակութիւնն կամաց որպ̄ հոգևոր՝ անեղծ մնայ 'ի հոգւոջ. թէպէտ և լուծեալ 'ի մարմնոյ:

Այս կարծիք է այնց իմաստնոց. և թուի թէ չէ հեռի 'ի վարդապետութենէ ճեմականաց:

Ցուցեալ էր Արիստոտէլի, թէ բաղձանքն զգայական 'ի մարդ՝ է մասամբ իմն անբանական, և մասամբ իմն բանական: Անբանական՝ ը̄ որում զգայական, և հասարակ անասնոց. և բանական՝ ը̄ որում ներքոյ անկանի ազատ կամաց: Ապա 'ի դնել Նորա զարիութիւնն և զբարեխառնութիւն 'ի զգայական բաղձանս՝ ը̄ որում բանական, գ̄ հաղորդ հաւաման կամաց, յայտ է թէ երկուց այնց առաքինութեանց անհնար է լինել բովանդակապէս ոչ առակ 'ի կամս, և ոչ լոկ 'ի բաղձանս:

Բայց

Բայց և այնու կոչին առաքինութիւնք բաղձանաց, և ոչ կամաց, հայեցեալ 'ի կարողութիւն՝ որ յառաքինուէ ընդունի զկանոնաւորութիւն և զկատարելութիւն։ Մինչդի պարտ է մեզ տալ, եթէ խոհեմութիւնն է ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ՄԻՏԱՑ. զի միտքն է, որ ընդունի զկանոն և զկատարելութիւն 'ի սկզբանց առնելեաց. Թէպէտ ինքն է՝ որ կանոնաւորէ զայլ ամ առաքինութիւնս։ Իսկ արդարութիւնն է ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԿԱՄԱՑ. զի կամքն է՝ որ ընդունի զուղղութիւն և զկատարելութիւն 'ի գործել զիրաւացի գործս։

Այսպ ըստ այսմ՝ արիութիւն է ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ՑԱՍՄՆԱԿԱՆԻՆ. զի ցասմնականն է, որ չափաւորի և տրամադրի զգժուարին իրօք։ Իսկ բարեխառնութիւնն է ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ՑԱՆԿԱԿԱՆԻՆ. զի ցանկութիւն 'ի նմանէ կատարելագործի, և ընդունի զկանոն զբերկրականօք։

## ԳԼ. Բ.

### ԹԷ ՈՐՈՎ ԶԱՆԱԶԱՆԻՆ ԱՅՍ ԵՐԵՔԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ ՅԱՅԼՈՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ։

Բայց 'ի գլխաւոր առաքինութեանց աստի է միւս ևս գեղապանծ և բարգաւաճ գերազանցն այլոց առաքինութեանց, զորս վաղվաղակի իսկ առաջի արտացուք անուամբք իւրեանց և նշանակօք։ Բայց մեծապէս սխալեցան մեծամեծ փիլիսոփայք 'ի վերայ չորից այսց առաքինութեանց, կարծեալ թէ այլք ամ ծնանին 'ի մարդ աստի, ոմն ընդմիմեամբ տեսակք 'ի սեռից։ Այս է չփոխել զառաքինութիւն՝ 'ի տրոհել անդ զնն. և աղաւաղել զարուեստ՝ յուսուցանելն զնոյն։ Այս է խառնակել զսահմանս, զկանոնս, և զվարդապետութիւնս, 'ի կարի իմն կարճատել կամ յերկարաձգել զայս գիտութիւն։

Յիւրաքանչիւր առնիս հարկիւ ընթացակցին չորեքին տարերք, բայց և ոչ մի 'ի նոցունց անուանի տեսակ միոյ 'ի մասնաւոր տարերաց։ Յիւրաքանչիւր ներգործութիւնս աստուածեղէնս այն չորք առաքինութիւնք են պիտանիք. բայց աստուածեղէնութիւնն չէ տեսակ ինչ միոյ 'ի չորեցունց առաքինութեանց անտի։

Ապա

Այս գիտել արժան է, թէ կրկնակի հնար է բա-րոյական առաքինութեանց որոշիլ 'ի միմեանց։ Մի՛ ը ընդհանուր գործադրութեանց. և երկրորդ՝ ը մասնաւորապէս։ Առաջինն որոշէ ըհանրապէս զգործս առաքինա-կանս 'ի մոլեկանաց։ Երկրորդն որոշէ զմասնաւոր ինչ առաքինութիւն յայլմէ մասնաւորէ։

Սոյնպէս է՝ թէ այն չորք առաքինութիւնք ը առաջնոյն մասնաւորեալք, են հանրական տարերք ամ առաքի-նութեանց. զի առ ամ են պիտանիք. Խոհեմութիւն հանրա-կան՝ յուղղութիւն մտաց. Արդարութիւն հանրական՝ յուղ-ղութիւն կամաց. Արիութիւն և Ժուժկալութիւն հանրական, զի կիրք մի՛ նսեմացուցեն զբանն։

Այլ Խոհեմութիւն մասնաւոր, զորմէ է աստանօր խնդիր, ոչ ձգի առ ամ ուղղութիւն մտաց. և ոչ Արդարութիւնն մասնաւոր՝ առ ամ ուղղութիւն կամաց. և ոչ Արիութիւն մասնաւոր՝ առ ամ երկիւղ. և ոչ Ժուժկալութիւն մասնաւոր՝ առ ամ բերկրականս. այլ՝ իւրաքանչիւրն ամփոփի 'ի սահմանս իւրոյ առարկայի, և չմնի յայլոց իրաւունս։

Յայտնանէ մարթ է իմաստասիրել, թէ այնք չորք առաքինութիւնք, Խոհեմութիւն, Արդարութիւն, Արիութիւն, և Ժուժկալութիւն, ը այնմ որ մասնին յայսմ վարդապե-տութեանս՝ չեն նոյն բարոյական առաքինութեանց, այլ՝ քոյրք։ Բայց զի առարկայք նոցա են ազնուագոյնք, և ա-ռաւել ներքինք մարդոյ և դժուարինք, վասն չո-րեքին նք արժանապէս կոչին առաքինութիւնք Գլխա-ւորք, այլ ոչ հանրականք։ Այլք անուանին Երկ-րորդականք, այլ ոչ ը միմեանք։ Ամենեքին քոյրք են միմեանց, այլ նոքա երիցագոյնք. ուստի և 'ի խնջոյս բարոյական առաքինութեանց են նախապա-տիւք։

Այս ոչ յայնց հանրական սկզբանց, այլ 'ի հայե-ցուածոյ բնական կարողութեանց առ սեպհական առար-կայս՝ կամեցաւ առնել զբաժանումն ամ բարոյական առաքինութեանց արիստոտէլ. որոյ երկեակ աչք լաւ-ես տեսին՝ քան զբովանդակ ազս այլ ամ փիլիսո-փայից. ոպ լուիցես յառաջիկայդ.

## ԳԼ. Գ.

### Յաղագս բաժանման բովանդակ բարոյական առաքինեանց ըստ ներհական առարկայից։

Ի բանական կարողութն որ յառաքինութեանց ուղղէ զմիտս զբարուոք խորհրդածութբ եւ կշռութբ. եւ սա է խոհեմութեան մասնաւոր։ Որ ուղղէ զկամս զբաշխմամբ եւ զփոխարինութբ. եւ սա է արդարութեան մասնաւոր։

Ի կիրս՝ որ չափաւորէ զերկիւղն զառարկայիւք, որ եղծիչ են կենաց. եւ սա է արիութեան մասնաւոր։ Որ չափաւորէ զցանկութիւնն զառարկայիւք՝ որ պահպանիչ են կենաց. եւ սա է բարեխառնութեան մասնաւոր։

Յարտաքին բարիս եւ 'ի չարիս՝ որ չափաւորէ զախորժակն զմիջական օգտակար բարեաց. եւ սա է առատաձեռնութեան։ Որ չափաւորէ զնոյն ախորժակ զմեծամեծ օգտակար բարեաց. եւ սա է մեծագործութեան։

Որ չափաւորէ զախորժակն զմիջական պատուաւոր բարեաց. եւ սա է պարկեշտութեան։ Որ չափաւորէ զնոյն զմեծամեծ պատուաւոր բարեաց. եւ սա է մեծանձնութեան։ Որ չափաւորէ զկիրս զարտաքին չարեաց, որք դրդեն զբարկութիւն. եւ սա է հեզութեան։

Ի քաղաքական կենցաղավարութն որ յառաքինութեանց միաբանէ զխօսս ընդ իւր միտս. եւ սա է ճշմարտախօսութեան։ Որ միաբանէ զխօսս ընդ այլոց հաճոյս՝ յիրս որ ընդ խաղ. եւ սա է զուարճախօսութեան։ Իսկ որ միաբանէ զխօսս եւ զգործս ընդ հաճոյս այլոց՝ յիրս որ ոչ ընդ խաղ. եւ սա է հաճոյականութեան։

Այս են ճշմարիտ առաքինութիւնք։ Բայց 'ի կիրս են եւ այլ երկու միջասահմանք. որք թէ առաքինութիւնք խորդք, եւ ոչ ճշմարիտք. զի չառաւելին յապականեալ արմատոյ։ Այլ զի են գեղեցիկք, առանձնաշնորհութբ 'ի համար մասնեն ազգակցութ առաքինութեանց։

Մին է երկիւղ պարսաւանաց 'ի սակս իւրոց անարգ

գործոց . և սա է ամօթխածութիւն ։ Միւսն է ցաւ վն̃ բարեաց օտարի , որոց չէր նա արժանի . և սա է որդմտութիւն ։

Արդ 'ի վ̃ր այսր բաժանման կարեւոր համարիմ զառաջինն յուշ առնել, զի թէ իմաստակի ուրուք միտ կամիցի զսա նրբել առաւելուր խարտոցաւ մեթափիզիգական բաժանմանց, եղիցի յանդուգն։ Արիստոտէլ 'ի վ̃ր բարւորի իւրոյ բարոյական դպրատան հաստատեաց տախտակ այսպիսի գրութբ̃. 'ի գիտութիւնս՝ որոց սկզբունք են հաստատունք և համաշխարհք, խնդրել զապացուցութիւնս՝ է յանդգնութիւն և յիմարութիւն ։

Սա կամեցաւ այսուիկ տրոհմամբ առարկայից ուսուցանել զգիտութիւն ինչ սահմանափակ և բարեկարգ , որ այլազգ տրոհմամբ լինէր անսահման և շփոթ ։

Եւ արդարև ոչինչ այլ առաքինութիւն բարոյական գայ 'ի միտս ուրուք , որ ոչ հայիցի առ այսոսիկ առարկայս . որ̃ տեսցես յառաջիկայդ ։

Իշխեմ ասել . զոր ինչ 'ի գիտութիւնս չետես Արիստոտէլ , մի ակնկալցի տեսանել այլ ոք 'ի մահկանացուաց ։

'Ի վախճան ամի մարթ է քեզ առնուլ 'ի միտ , թէ երկու միայն առաքինութիւնք բնակին 'ի դարպաս բանին . այսինքն է խոհեմութիւն , և արդարութիւն ։ Այլք ամենայն իջավանին յարուարձանս կրից . այսինքն է 'ի զգայական բաղձանս , ը̃ օրինակին՝ որ̃ և ասացաւ ։

Մի լիցի վասն այսր մեղադիր լինել բնութե̃ , թէ ընդէր փակեաց 'ի մարդ զկիրս՝ զթշնամի խաղաղութեան հոգւոյ ։ Վն̃ զի առանց նց̃ հոգին անմասն լինէր յայսպիսի և յոյսչափ գեղեցիկ առաքինութե̃ց ։ Բարկու̃ն է յեռանդ արիուէ̃ . ցանկութիւնն է ածիչ բարեկամուէ̃ . երկիւղն է խորհրդական խոհեմուէ̃ . փառասիրու̃ն է խթան մեծագործուէ̃ն . ցաւն է ուսուցիչ բարեխառնութե̃ ։ 'Ի հողոյ բուսանին շուշանք . և 'ի զգայուէ̃ ծնանին առաքինութիւնք ։ Մարդ ոչ է սոսկ մարմին , և ոչ միտ աննիւթական , այլ՝ խառնել ինչ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ ։ Արարչին

չեն բնաւ՝ որ 'ի կատարելութե և 'ի զարդ աշխարհի չեն թող ինչ թերի, արարեալ զազգ ինչ էից գլխովին զգայնոց՝ որպէս զանբանս, և զազգ ինչ գլխովին հոգի՛ք զհրեշտակս, անկ էր նմա առնել և միջակային ինչ բաղադրել 'ի զգայուն և 'ի հոգւոյ. և այն է մարդ։

'Ի թուանուոր ՃՃիս յառաջատես բնութին լծորդեալ է թոյն զգեղթափ։ Զի ինչ բացական 'ի կրից բանականութիւնն, որ ուղղէ զնա. և մոլութեց՝ որ 'ի ծայրս՝ մօտ են առաքինութեանց. ոչ և առեցես։

## Գլ. Դ.

Ծիւղագրութիւն բարոյական առաքինութեանց, և նոցին մոլութեանց՝ որ 'ի ծագս։

### ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Մասն՝ ըստ բանականութեան։

Անխոհեմութիւն։ — ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ։ — Խորամանկութիւն։

Կամաց՝ ընդ զայրացմամբ և ընդ ախորժականին։

Անիրաւութիւն յառաւելն. — ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ։ — Անիրաւութիւն 'ի նուազն։

Կրից՝ ընդ մարմնաւոր չարեօք։

Վեհերոտութիւն։ — ԱՐԻՈՒԹԻՒՆ։ — Յանդգնութիւն։

Կրից՝ ընդ մարմնաւոր բարեօք։

Թմրութիւն։ — ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ։ — Անբարեխառնութիւն։

Յարգանօք բարեաց՝ ընկերական օգտակարօք։

Ագահութիւն։ — ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ։ — Շռայլութիւն։

Զգեստուց օգտակար բարեօք։

Փոքրոգութիւն։ — ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ։ — Զափազանց վայելչութիւն։

Զմտական պատուաւոր բարեօք։

Անհոգութիւն։ — ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ։ — Փառամոլութիւն։

Զէ

Զմիջամիջ պատուաւոր խորհեօք :

Փոքրոգութիւն : **ՄԵԾԱՆՁՆՈՒԹԻՒՆ :** Փքացութիւն :

Զարդարեալն լաւութեօք՝ որ գործեն շնորհեալ է :

Անզգայութիւն : **ՀԵԶՈՒԹԻՒՆ :** Բարկացողութիւն :

'Ի կենցաղավարութեան՝ յարձակման շարժմանէ են զերծ :

Կեղծիք : **ՃՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ :** Ճառատանք :

Զհամայնականօք ասացեալ յէր՝ որ ըստ խաղ :

Գռեհկութիւն : **ՁՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻ՛Ւ՛Ն՛ :** Խեղկատակութիւն :

Զհամայնականօք ասացեալ յէր՝ որ ոչ ըստ խաղ :

Մարդահաճութիւն : **ՀԱՃՈՅԱԿԱՆՈՒԹԻ՛Ւ՛Ն՛ :** Հակառակաբանութիւն :

Զերկիւղիւ անպատուութեան ամօթն ,

Երկչոտութիւն : **ԱՄՕԹԽԱԾՈՒԹԻՒՆ :** Լրբութիւն :

'Ի գործոց ըստ խորհուրդ ասաց՝ որում լինի արժանի :

Նախանձաբեկութիւն : **ՍՐՏՄՏՈՒԹԻՒՆ :** Չարախնդութիւն :

## ԳԼ. Ե :

### Յաղագս՝ թէ որ իցէ միջ առաքինութեան :

Այս ազնուական ճիւղագրութեան առաքինութեանց, և խոտոր մոլութեանց՝ յայտնի ցուցանէ քեզ, թէ ոչ այլ ինչ է առաքինութիւն, բայց միջասահման ինչ 'ի մէջ մոլեկան ծայրից. որով և զգայուցանէ քեզ, քանի հպատակ իցէ չարն բարւոյ, և սուտն ճշմարտի: Զի՞նչ կայ լաւ քան զառաքինութի, և զի՞նչ վատթար քան զմոլութի. սակայն և այնու իւրաքանչիւր առաքինութի երկու մոլութիւնք կան առընթեր. մի ըստ աւելորդի, և մի՝ ըստ նուազութի :

Շատ էր ձեռնարկութիւ առ ապացուցանել, թէ յաշխարհի մոլիք կրկնապատիկ առաւելուն քան զառաքինիս, որովհետև առաքինութիք են [illegible], և մոլութիք [illegible] : Բայց չարագոյն այն է, զի առաքինութին է մի. և մոլութիքն անթիւք.

Իբր

Իբր զի՝ մի միայն է եղանակ հասանելոյ 'ի նպատակ, այլ խոտորութիւնքն անբաւք։

Այս զիա՞րդ հնար իցէ գիտել յառաքինութիւն, եթէ այնչափ անձուկ է ճանապարհն, մինչև գնալ միշտ ընդ այն զօրէն լարախաղացի՝ վիհ աստի ունելով, և անտի։

Հայեցեալ ական 'ի լուսինն ընդ արեգակամբ՝ խառնէ զմոլորակ ընդ մոլորակի. և թուի նմա տեսանել կէս լուսին ինչ խաւարակ, կէս արեգական ինչ սևաւորակ։ Եւ մարդկային միտք՝ զայն որ 'ի ծայրն առաքինուէն կարծեալ, չգիտէ զո՞րն գովեսցէ, կէս յորմէ խորշեսցի։

Անմտութե կղոգիասի՝ անմտաց թուեցաւ խոհեմութե. և ոչ ծանուցաւ, բայց 'ի շողիւն ծիրանեաց. (52)։ Յանդգնութե աղեքսանդրի՝ վն զի էր բարեբաստիկ, յանդուգն եղելոց թուեցաւ արիութիւն. և նախանձաւորք եղեն այնմ՝ որում պարտն էր ախտակցել։ Անդթութիւն սիղղայի՝ քաղաքայնոց թուեցաւ արդարութիւն. որոց և յիրաւի եղև այնպիսի ունել դատաւոր (53)։

Բայց ո՞ր իցէ այս մէջ, ուր ամփոփ գոհակալէ առաքինուին։ Զարմանամ ես, զի այնպէս զարմանալի թուեցաւ վճիռն, զոր ոմանք ընծայեն բիասայ, ոմանք սողոնի, ոմանք պիւթագորայ, և ոմանք պատգամախօսի, որ զմէջն առաքինութե երկրաւոր սահմանեաց, մէ ինչ առնելոյն։

Անմիտ դատաւ՝ որ ասաց, զի սահմանեաց զառաքինութիւնն ըստ կիսոյ։ Պարտ է յայն յարել՝ Ն մէ ինչ նաստ։

Փոքր մի լրագոյն և յայտնագոյն եղեն սահմանքս. Կէս առնել քան ձեռնարկ։ Ու յայտնեայ, և ոչ յայտնեայ։ Ամենայնն լռէով։ Բայց այս չափք՝ առաւել փիզիգականք քան բարոյականք, ոչ այնչափ պատշաճին գործոց առաքինութե. որչափ գործուածոյ ճարտարապետի, հիւսան, և մաշկեկարի։ Խակագոյն ևս են սահմանքս. Ու ինչ վայել է։ Ու ինչ որձան է։ Զի այս բանք են բարոյական չափու, և ոչ փիզիգականի։ Բայց զնմ 'ի մի բան բովանդակեա, թէ ասես. Բանաւոր. զի ոչ այլ ինչ է առաքի-

առաքինութիւն . բայց միջասահման ինչ որոշեալ 'ի
բանէ , որ 'ի ներքս փակէ զնմ առաքինութիւն ,
և արտաքսահմանէ զնմ զծայրս :

Բայց այս մէջ՝ յոր զկայ առնու բանն , ոչ է Թը-
ուաբանական , իբրև զմէջ Թուական , որ միշտ է նոյն .
Թեպէտև 'ի պէսպէս ենթակայս . և միշտ միապէս
է տարակաց յիւրոց ծայրից :

Իբերիացիք ( ը̄ նախնի ասպանիացիք ) պարտաւո-
րէին զնմ չափահաս ածել ընդ մէջ նոյնչափ
գօտի . և որոյ ը̄արձակագոյն էր փոր , պատժէին
զնա ով̄ պորտաբոյծ : Առաւել ևս պատժապարտ
էին օրէնսդիրք նց̄ . որք թէ ջրգողէին , զօրինօք
անցանէին՝ խզեալ զգօտին :

Այլ չափ բանին՝ է երկրաչափական , ը̄ համեմատա-
կան . զի որ միումն է սակաւ , այլում է աւելի .
և որ միումն է միջասահման , այլում է աւելա-
ւանց : Վ̄ս հայի նա յանձինս , և ոչ 'ի ծայրս :
Ոչ վայելէ թզուկի կօշիկ ազկիդեայ հսկայի (54) .
և ոչ փոքր արժանաւորուն ունողի՝ չափազանց
վարձատրութիւն :

Արդարն ոչ չափէ զնմ գողուխս նովին չուանու :
Արին ոչ հեղու վս̄ չնչին պատճառի զպատուա-
կան զիւր արիւն՝ պահեալ զնա հայրենեաց : Ա-
ռատաձեռնն ոչ միապէս պերճ է առ գռեհիկ ոք ,
որպէս առ ազնուական :

Երկաթի քանոն պողիկղետոսի գխողանայր միայն
ուղղորդ և մակարդակ քարի . բայց կապարեայ քա-
նոնն լեսբացւոց՝ այն ուղիղ , բայց ճապուկ և դիւ-
րակոր՝ գխողանայր քարի մակարդակի , կորոյ և
գոգաւորի , և նմ ձևոյ՝ միշտ ճապկութբ̄ և միշտ
ուղղութեամբ (55) :

Քանոն երկաթի էր գօտի իբերիացւոց . բայց կա-
նոն բանին չչափէ միայն զհանրական և զանփոփոխ
ենթակայս , այլ՝ հայի 'ի մասնաւոր պարագայս . ը̄
անձին , 'ի գործն , 'ի տեղին , 'ի ժամանակին , 'ի ձեւոյն ,
յեղանակ և 'ի պատճառն . որպէս ասացի յիւրում
վայրի . և ըստ փոփոխութեան պարագայիցս՝ փո-
փոխի և մէջ բանին :

Առ ներդաշնակութ̄ նուագերգութ̄ պահանջի
միա-

միօրինակութիւն ամ լարից, բայց 'ի խանգարել
զայն՝ բաւական է մի միայն լար արտուղի:
Միայն արեգակն գիտէ գնալ անանջրպետ ընդ
ծիր խաւարման. ոչ 'ի հիւսիսասահմանս վերձե-
մեալ, և ոչ 'ի հարաւասահմանս ստորիջել: Այլ
ամ մոլորակք ող անմիտ փայլեթոնք (56), է՛ զի
վերձեմեն 'ի բարձր բևեռ, և է՛ զի վայրաբերին
'ի ստորին բևեռ. ոչ գիտեն զկայ առնուլ 'ի միջի՝
և ոչ վայր մի. յորմէ իսկ կոչեցան մոլորակք:
Արդ զիարդ հնար իցէ մդկային մտաց չմոլորիլ:

## ԳԼ. Զ:

## ԹԷ ՈՐՊԷՍ ԳՏԱՆԻՑԻ ՄԵԶ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՅԵՐԿՈՒՑ ԾԱՅՐԻՑ ՄԻՋԻՆ:

Բնութիւն՝ ող յառաջ լուար, ո՛չ պարգևէ զառա-
քինութիւնս, այլ՝ պարգևէ լոյս ինչ պայծառ առ
'ի կարող լինելոյ ճանաչել զայն:

Անասնոց ետ ազդեցութիւն առ գիտելոյ որոշել
զխոտս առողջարարս 'ի վնասակարաց. մարդկան
ետ ՈՒՂԻՂ ՄՏԱՑ՝ առ գիտելոյ որոշել զբարին 'ի
չարէն:

Եւ զի այս օրէնսդիր հաստեաց օրէնս արդարս,
կարի իմն անիրաւէր, թէ ոչ հրատարակէր և տպա-
ւորէր 'ի միտս այնց՝ որոց պարտն էր պահել զնս:
Մոլութ հնար է լինել անդատաւոր. բայց չէ եր-
բէք անդատախազ և անպատիժ. զի դատախազ
նր է ՈՒՂԻՂ ՄՏԱՑ, և պատժող՝ ԽՂՃ ՆՐ: Բայց թէ
զինչ իցէ այս խիղճ մտաց, խոստացուք լիով յե-
րում տեղւոջ: Այլ սա չէ մոլի տղայն կմ խելագարին,
որք ոչ ճանաչեն զմոլութի. և ոչ մեղանչէ այն՝ որ
ոչ գիտէ մեղանչել: Բայց որ ճանաչէ զմոլութի,
ճանաչէ և զառաքինութի. զի որ ճանաչէ զծայրսն,
ճանաչէ և զմէջն:

Չիք գիտութի պայծառ քան զխիղճ մտաց, թէ չէ
'Ի ՆԵՐՔՍ ՆԱԽԵՄԱՑԵԱԼ: Շոգխախառն ծուխք օդոյ չթո-
ղուն տեսանել զիսկական չափ և զճշգրիտ գոյն ա-
րևու 'ի ծագել իւրում. և վնկ երևակայութիւն ը
տեսութե աչաց՝ կարծէ զնա շառագոյն եւ, և մե-
ծա-

ծագոյն. նոյնպէս ծխամածութ. կրից այլայլէ զճշ-
մարիտ դատաստան և զչափ բանին :

Բայց առաւել ևս, եթէ դատաստանն է զեղծ 'ի թիւր ունակութեանց, որք և առանց կրից գործեն չարաչար՝ մղեալ զխրատն 'ի ծայրս :

Բազուկ բեկ չմնայ երբեք 'ի միջի յիւրում տեղ-ւոջ. թէ ուղղի մի մասն՝ անկանի միւսն : Իբր այր թիւր՝ թէ 'ի բացէ լինի 'ի միջէ 'ի ծայրից, ընդ-հարկանի 'ի միւսն. ոչ երբեք զտեղի առնու 'ի բա-նաւորն. կամ լինի շռայլ. և կամ կծծի. կամ յանդուգն վատի, և կամ վաճառեալ գողայ. անցանէ անըմէջ 'ի մարդահաճութէ 'ի տմարդութի :

Ապա այս է նախնական և դիւրագոյն ճանապարհ ճանաչելոյ զմէջ առաքինութեանց : 'Ի բաց արա 'ի սրտէ զկիրս և զչար սովորութիս, զի ճառագայթես-ցէ լոյս խղճի մտաց. վա զի նոյն իսկ խօսք, զորոց ասացաք՝ թէ խափանեն զստացումն առաքինու-թեանց, խափանեն և զճանաչումն միջոյ :

Բայց միւս ևս եղանակ՝ յայտնագոյն որոշելոյ ըզ-մէջն յիւրոց ծայրից, է ՆԱՀԱՆՋԱԲԱՆՆ. որ 'ի բնաւոր խիղճ մտաց յաւելու ուսուցմունս և մանաւոր փորձս : Այս է լուսաւորագոյն, բայց դժուա-րագոյն և դանդաղագոյն. զի ոչ պարգևի 'ի բնու-թէ, այլ՝ ստացանի երկար սովորութ. :

(57). Միայն 'ի տաճար չքնծուհւոյն նեմեսեայ պաշխիւր արքունի չափ կանգնոյ. և միայն 'ի տա-ճար խոհեմութ. եդեալ կայ չափ բանաւորի :

Կողմնական մոլութիք միշտ կագեն ը̃ առաքինութ. 'ի վր̃ սահմանաց: Բայց ոա̃ անդաստանական դա-տաւորի էր որոշել զսահմանս արտորէից՝ որ ը̃ վէճիւ. նոյնպէս միայն խոհեմին է սահմանել զկո-պար բանին ը̃ յաւէտ և ը̃ նուազ :

(58). Դեդաղոս 'ի փախչիլ իւրում մոմապատ թևոց թռուցիւք յանդգնական կղզւոյ յերկիր խա-ղաղական, զայս լինչ յուշ արար որդւոյ իւրում Իկարոսի. ՈՐԴԵԱ՛Կ ԻՄ, ՄԻ ԹՌՉԻՐ ԱՌԱՒԵԼ ԲԱՐՁՐ, ՄԻՆՉԵՒ ՀՐՈՅ ՃԱՌԱԳԻ ԱՅՐԵԼ ԶՄՈՄ ԹԵՒՈՑ. ԵՒ ՄԻ ԱՌԱՒԵԼ ՑԱԾ, ՄԻՆՉԵՒ ՓՐՓՐԵԱԼ ՋՐՈՅ ԾՈՐԵԼ ԶՄՈՄ. ԸՆԴ ՄԻՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԹՌԻՐ ԱՊԱՀՈՎ :

Եւ արդարև դեդաղոս ոմն ծերունի խոհեմ՝ գի-
տաց ունիլ զմիջին ճանապարհ, և ողջամբ եհաս
'ի ցամաք. այլ համբակն անզգոյշ՝ մանկական յանձն-
ապաստանութբ կարի իմն վերաթեւեալ 'ի բարձունս՝
թօթափեաց զթեւս 'ի հուր, և մեռաւ 'ի ջուր,
անցեալ ծագէ 'ի ծագ. փոխանակ զի ոչ գիտաց
զմէջն ունել ։

Ամ՛ արուեստ է դժուարին յիւրում սկզբան ։
Հրեշտակաց միայն յաջողեաց հասանել 'ի բնէ խո-
հեմ. 'ի նմ͞ հեղան պատկերք ամ՛ զոր արժան էր
առնել ։ Մարդկան անկ է ստանալ զնոսա ջանիւ
խոհեմութեան ։

Ուսանի նաւալեան զնաւարկութիւն տաղտկանօք,
երկուցեալ 'ի սկզբան անդ 'ի կոհակաց կոհակաց
իբր 'ի մահահրաւէր շիրմաց. բայց ապա սովորու-
թբ՝ 'ի վր մրրկածուփ ալեաց խաղաղական ան-
ձամբ ճեմ առեալ շրջի ը՛ աշխարհ ։

Ձէ այնչափ դժուարին գիտութիւն առաքինութեց,
որչափ գիտութիւն եւս և ստորին ազատական ար-
ուեստից ։ Դիւրագոյն և յայտնագոյն են կանոնք
բարոյական առաքինութե՛ քան զկանոնս քերթածաց
բանաստեղծութե, որ կապէ զարձակ բանն բազմա-
պատիկ շղթայիւք. և անհամար կանոնք կարակ-
նաչափ բաժանէ զտողս ոտիւք, և զոտս վանկօք,
և զիւրաքանչիւր վանկի չափէ զքանակ. կշռորդէ
զշեշտ, տրոհէ զհնչիւն, և կշռէ զհագագ ։
Դժուարագոյն է առնել ինչ ճարտար քերթած՝
քան զառաքինի ինչ գործ. դիւրագոյն ճանաչի
պարագայ բանաւորութե՛ քջ զզօրութի փաղառուե ։
Իսկ արդ՝ եթէ սովորութբ դիւրանայ այսպիսի
ինչ տարժանաւոր հմտութիւն, որոյ սկզբունք չեն
հաստատեալ ոչ 'ի բնութե և ոչ 'ի բանն, այլ 'ի
հաճոյս մտացածին նրբութեց, զոր սահմանեցին
կանոնագիրք. որչափ եւս դիւրուսանելի իցէ ճա-
նաչել զբանաւորն՝ լուսով բնութե, ազնուական
անդգեամբ, սիրով գովութե, երկիւղիւ պատժոյ,
ձայնաւոր պատուիրանօք, գրաւոր մատենիւք,
հրապարակական օրինօք, այլոց օրինակօք, և ան-
ձին իսկ փորձիւ, որ քան զամ է զօրաւոր ։

Գ.Լ.

## ԳԼ. Ն:

### ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՑ ԾԱՅՐԻՑ ԱՌ ՄԻՄԵԱՆՍ:

Թէպէտ և երկաքանչիւր մոլեկան ծայրք են այլանդակք և ագեղք, բայց և այնպէս միոյ քան զմիւսոյն նուազ է ագեղութիւն. զի մին նմանագոյն է առաքինութեանն՝ որ կայ ՚ի մէջն:

Նմանագոյն է խոհեմութեան խորամանկութիւնն քան զանխոհեմութիւն: Նմանագոյն է արիութեան յանդգնութիւն քան զվեհերոտութիւն: Նմանագոյն է առատաձեռնութեան շռայլութիւն քան զագահութիւն: Զի աւելորդութիւն ոչ կարէ առաւելուլ քան զմէջն, թէ ոչ այնմ հաւասարի: Բայց պակասութիւն վասն զի ոչ կարողանայ հասանել ՚ի մէջն առաքինութեան, նուազ նման է առաքինութեան քան զաւելորդութիւնն:

Որպէս գիշերային լուցեալ գոլորշիք՝ յանմիտ գիտողաց համարին աստղ, նոյնպէս ծայրն նմանագոյն առաքինութեան՝ բազում անգամ ՚ի համար գրի առաքինութեան:

Մոլութիւնն նմանագոյն առաքինութեան՝ է նուազ ամօթալի քան զմիւսն. զի է առաւել դժուարին, և նուազ ծառայական. թէպէտ և վնասակարագոյն է և գժնդակագոյն:

Ծանրագոյն պատժի պատերազմօղն ընդդէմ հրամանի՝ քան զփախուցեալն ՚ի պատերազմէ. բայց առաւել ամօթալի է փախչիլն ՚ի պատերազմէ՝ քան զպատերազմիլն ընդդէմ հրամանի. զի այն է ցածութիւն մոլութեան ռամկային, և սա է յանդգնութեան մոլութեան աչխոյժ, վասն և նմանագոյն արիութեան:

(59). Մանլիոս պատանին դժբախտ՝ ընդդէմ հրամանին հրատարակելոյ ՚ի հօրէ իւրմէ իշխանապետէ ՚ի ձայն փողոյ, քաջութեամբ կռուեալ՝ և յաղթեալ թշնամւոյն, վասն այսպիսի պանծալի յանցանաց եթող ընդ տապարաւ զգլուխ իւր պսակազարդ. և յամենեցունց ախտակցաբար գովեստ ընկալեալ՝ յիւրում թաղման յաղթանակեաց:

Դիւրագոյն վերածի յառաքինութիւն մոլութիւնն, որ նմանագոյն է նմա: Փոքր աշխատութեամբ արի հան-

գի-

գիտանայ յանդուգնն քան զվեհերոսն. զի դիւրագոյն է յաղթել զաւելազանցութիւն, քան ընդու զթերին. և դժուարագոյն է հաստատել 'ի միջասահման զայն՝ որ չյաւելու ինչ, քան զայն՝ որ տաւելու:

Սքանչելիք եղեն ընտւն, զի Տորկուատոս այնպէս պիտանի եղև հասարակապետութեան իւրովք յաղթութք. այն՝ որ այնպէս անպիտան էր և անարգ, մինչև հօր իւրոյ առաքել զնա արածել զարջառս՝ որոց էր նման (60): Եւ մեծ ևս սքանչելիք եղեն, զի զօրավարն ափրիկանոս հայելին մանկանց 'ի զեղծ և յանառակ վարս, եղև ապա հայելի պատերազմողաց՝ 'ի ժուժկալ և 'ի պարկեշտ վարս (61): Թուի թէ բնութեն 'ի նկարել զկենդանագիր երկոցուն քաջազանցս, զի առաւել ևս բացափայլեսցի լոյս մեծամեծ առաքինութեանց՝ արկ զնոքօք զմթին ստուերս առաջնոյ վարուց:

Բայց և այն է ճշմարիտ, զի թէպէտ և երբեմն մոլութիւնք ը̅ առաքինութեան են անկեալ, բայց ը̅ միմեանս միշտ են 'ի կռուի: Այս բարութի միայն է 'ի կարիճս, զի սատակեն զմիմեանս: Զայս հոգացաւ բնութեն, զի մի բազմածնութենդ սերունդ ժանտախտս 'ի չեք դարձուսցէ զազգ մարդկան: Եւ այս բարութ եւեթ է 'ի մոլութիս, զի բազմածնութենդ գոլով քան զառաքինութիւնս, միմեանց լինին դահիճք և եղծիչք:

Շռայլութեն ապանանէ զագահութ. ագահութեն ըզփառասիրութի. փառասիրութեն զվեհերոսութի. և վեհերոսութեն զյանդգնութ. Ըստ օրինակի շահատակաց կադմոսի, որք միահաղոյն ծնեալք և դատապարտեալք, փոփոխ վիրաւորութեբ զմիմեանս սատակեալ՝ դառնային անդրէն 'ի հող՝ ուստի ելին (62):

Ն՝ա ամ յետին մոլութի յիւր վ̅ր դաղանանայ, և իւրովի սատակի: Զիք ինչ առաւել հակառակ շռայլութե քան շռայլութի, և յանդգնութե՛ քան զյանդըգնութի, և բարկութե՛ քան զբարկութի, և հեշտախտութե քան զնոյն ինքն հեշտախտութի: Ամ որ հասանէ 'ի ծայր, կամ զկայ առնու, կմ յիւր վերայ ընկլ.

ընկերկի . և լինի առեղի իւրում գործողի: Վիճակի հայեցեալ ը հայելի՝ իւրովք թուովք այսպ-թի . և մեծ ինչ չարագործ հայեցեալ ը առաքի-նիս՝ յիւրոց չարեաց նողկայ։ Գործ մոլեկան՝ է ադեղ . և նմ ծնունդ ադեղ և այլանդակ՝ զարհու-րեցուցանէ զիւր ծնօղսն : Եւ այնպէս ընդ ան-գամ առողջութիւն և սարսափ մոլութե գար-ծուցանէ զմոլին յառաքինութիւն :

Զարին հակառակն՝ առաքինուեք զաւակք ծնա-պարդեք՝ պահեն առ միմեանս միաբանութի և խա-ղաղութի . զի առ հասարակ են համաձայն բանի : Ձլինի առաքինութին առեղի . զի է յոյժ սիրելի: Ձլինի իւր ինքեան անհաճոյ . զի է յոյժ գեղեցիկ: Ձիք նր անձման սահման . զի ոչ պակասի նր ձա-րակ : Ո՛չ ուսանք երկնչի , զի է աներկիւղ . ոչ փախչի ՚ի լուսոյ , զի է շքեղ . ոչ սորջանայ , զի ոչ գործէ զչար . ոչ տաղտկանայ , զի միշտ գիւ-յերջանիկուն , որք մոլութին ՚ի թշուառութի :

Ուստի արդ՝ եկեսցուք ՚ի լուծումն տարակուսա-նաց ինչ , որում հնար է յուշ լինել քեզ , որպէս յուշ եղև մեծամեծ փիլիսոփայից , ՚ի վր սա-ցելոյն ըմբռնս առաքինութեան , և զտարբերութե-նէ իւրոց ծայրից :

## ԳԼ . Ը :

### Առարկութի ընդ մոլութե ինչն հասարակ :

„ Բառ իրաց ինչ , եթէ միջն առաքինութե է գիծ ինչ
„ անբաժանելի ՚ի մէջ երկուց ծայրից , որք ծիր
„ գիծերահաւասարի ՚ի մէջ երկուց բևեռաց , ապա
„ խոտորումն ՚ի գծէ սահի մի ՚ի կմ ՚ի միւս ծայր՝
„ հաստատեալ է յանբաժանելի իմն : Իսկ եթէ
„ միոյ անբաժանելւոյ անհնար է լինել մեծ քան
„ զմիւսն , ապա միոյ ծայրի մոլութի անհնար է լի-
„ նել մեծ քան զմիւսն :

„ Ապա ուրեմն չէ մեծ մոլութի խորամանկութե-
„ նութեն քան զընդդէմ ծուլութեն . և ոչ կատաղի
„ յանդգնութեն՝ քան զերկչոտ վատութեն . և ոչ լիրբ
„ կոշտութե՝ քան զչուրա թմրութե . զի յերկոցունց
„ ծայ-

» ծայրից մէջն չկայ ինչ մէջ. բայց կէտ անբաժա-
» նելի, և սոսկ բացասութիւն։

» Զայն՝ որ ասի զերկոցունց ծայրից, մարթ է ա-
» սել և զերկոցունց նոյնատեսակ մոլութեանց։ Անհը-
» նար է լինել միոյ գոյութեան մեծ քան զմիւսն. և
» մեծագունի արժանանալ պատուհասի. զի մէջ
» արգարութն է լուծանել զօրութիւնն ընդդէմ նոյ խմացն։
» Իւ այս ևս է անբաժանելի իմն։

» Ապա այնչափ անիրաւութիւն է գողանալ զգանձ
» ինչ, որչափ գողանալ զհարիւր տաղանդս. և
» այնչափ անիրաւ իմն է և հաւատարմութիւն՝
» չհատուցանել զաւանդ գանձի միոջ, որչափ չհա-
» տուցանել զաւանդ հարիւր տաղանդոց։

» Վրիպակ նետաձգին չէ հաստատեալ 'ի մեծ կէտ
» 'ի փոքր բացաձգութն 'ի նպատակէն, այլ յայն՝
» զի չէհար զմէջ նպատակին։ Ապա՝ թէ փոքր իցէ
» քանակ գողուն, և թէ մեծ, խոտորումն 'ի մէ-
» ջոյ անտի է անբաժանելի։ Ապա գողութիւնք
» ամ՟ են հաւասարք։

» Որ ինչ ասի զնոյնատեսակ մոլութեանց, զնոյն մարթ
» է ասել և զտարասեռ մոլութեանց։ Մ՛էջ ուղիղ բա-
» նին, ո՞չ ասացաք՝ է ոչ ինչ օրէնք է։ 'ի մէջ օրինա-
» ւորին և չօրինաւորին չկայ ինչ մէջ. զի լինելն
» օրինաւոր՝ է կէտ անբաժան։ Ապա չէ մեծա-
» գոյն յանցաւորութն՝ ստորոգելոյն քան ենթակային. զի չէ
» ինչ օրինաւորագոյն գողունն քան զսպանութիւն։
» Զի թէ էր գողունն օրինաւորագոյն քան զսպա-
» նութն, գտանիւր ինչ մէջ 'ի հակառակաց մէջի, 'ի
» գտանիլն 'ի մէջ օրէնսդրի և անօրէնսդրի։

» Ապա չէ հնար միոյ պատճառն լինել արգարագոյն
» քան զայլ, և ոչ ներգործն լինել անիրաւագոյն
» քան զայլ. ոչ ազդողն լինել ուղղագոյն քան զայլ,
» և ոչ ձգողն լինել մոլեգոյն քան զայլ մոլութիւն։
» Ուստի և ամ՟ մոլութիւնք են յիւրեանս հաւասարք։

Այսպէս խօսէր մեծ ուսուցիչն աղանդի (սոկ-
րատ) յիւրում խիստ դատաստանն։ Իբր ոչ էթէ
'ի փոքրել զմեծամեծ մոլութիւնս՝ հաւասարել զնա
փոքունց, այլ՝ 'ի մեծացուցանել զփոքր մոլութիւնս՝
հաւասարել զնա մեծաց. զի մի զարթուցեսցեն
մար-

մարդիկ յուղղուէ, առեալ թէ նա՛ մանր վրիպակք են մեծ ինչ յանցաւորութիւն. վասն որոյ և ար-ժանի մեծաց պատժոց:

Բայց ոչինչ հայեցեալ յայսպիսի ներքունս առկրա-տեանց, որք ըստ ասից արիստոտէլի՝ բաղում ինչ ուսուցանէին, զոր ոչ 'ի գործ դնէին, քաջայայտ է՝ թէ են մոլութիւնք, որք մի քան զմի են մեծք և ծանրանք և թեթևք. ուստի և խստագոյն պատ-ժոյ արժանիք:

Այնչափ խոհր է 'ի մոլութիւնս, որչափ յա-ռաքինութիւնս՝ որոց հակակայքն, և առաքինու-թիւնք մի քան զմի են մեծք՝ ըստ առարկայից, ըստ վախճանին, և ըստ պարագայից. որպէս և լուար: Անմարթ է ուրանալ, թէ չեն առարկայք մի քան զմի մեծ: Պատուաւոր բարիք են մեծք քան զմարմնա-կանս. և մարմնականք քան զարտաքին բարիս: Ուստի և արդարութիւն է մեծ առաքինութիւն քան զարիութիւն. և արիութիւն քան զպարկեշտութիւն: Զի առաջինն է զպատուաւոր բարեօք. երկրորդն զմարմնականօք. և երրորդն զճոխութեմբք:

Ապա նոյն կարգաւ՝ վատահամբաւելն ևս է մեծ մո-լութիւն քան զսպանութէ. և սպանութիւն քան զգողութէ: Զի գողութիւնն 'ի վերայ յարձակի բարեաց արտա-քնոց. սպանութիւնն՝ մարմնաւոր բարեաց. և վատա-համբաւութիւնն՝ պատուաւոր բարեաց: Վասն այ-սորիկ ճշմարիտ բարեաց կշռադատք փոքր չար համարեցան տանել մահու քան անպատուութէ:

Ապա արժան է յիշեցուցանել քեզ՝ չթակարթել 'ի պատիր բանս, անցեալ 'ի զինչուէ յորակութե. կամ 'ի վերացելոյ 'ի թանձրացեալն, կամ յէութէ 'ի պարագայ: Սկայն մեծագոյն չէ ինչ աւելի մարդ՝ քան զմանիոն գաճաճ. բայց մեծագոյն է անձնեայ քան զմանիոն: Էութիւնն որոշէ զմարդ յայնմա-նէ՝ որ չէ մարդ. իսկ առընթեր պարագայք որո-շեն զմարդ 'ի մարդոյ: Տեսակարար տարբերութիւն որոշէ զգոյութիւնն յայնմանէ՝ որ չէ գոյութիւն. բայց պարագայք որոշեն զգոյութիւն 'ի գոյութէ: Ապա ըստ հանրական սահմանի՝ մի մոլութիւն չէ աւելի մոլութիւն քան զմիւսն. զի առ 'ի լինել մո-

լու.

լութիւն՝ չափ է լինել հոյաւոյ ուղիղ բանին . բայց պարագայք ծանրացուցիչք առնեն զմոլութիւնն մի քան զմի մեծ :

Ի վախճան ամի կամ է ինձ և զայն եւս յիշեցուցանել, թէ ոչ միայն եկամուտ պարագայիւք, այլև ներքին աճմամբ հնար է՝ թէ մոլեկան ինչ ունակութիւն լիցի քան զնոյն ինքն մոլեգոյն :

Ի մարդկային մարմնի զուգախառնութիւն և անզուգախառնութիւն հիւթոց չէ հաստատեալ յանբաժան ինչ, այլ՝ 'ի ֆիզիկական իմն ընդարձակութիւն, որով առողջութիւնն լինի յաւէտ կմ նուազ կատարեալ. և այլայլումն հնար է 'ի լոկոյ աննդէ փոխիլ 'ի անդ. մահաբեր ,

Այսպ ըստ այսմ 'ի հոգւոջ հնար է առաքինութեան աճել ցայն վայր կատարելութ՝ ընդ ուղղութ մտաց կամ բաղձանաց, մինչև 'ի լոկոյ առաքինութէ լինել նմա առաքինութիւն դիւցազնական, և իբր ածական, և երևիլ մարդոյ ածազգեաց ոմն :

Եւ ըստ նմին օրինակի հնար է ունակութ մոլեկանի աճել ցայն սաստկան թիւրութ, մինչև 'ի լոկոյ մոլութ փոխիլ նմա 'ի գազանութիւն. և երևիլ մարդոյ փոխակերպեալ 'ի սատանայ: Այլ զայսմ կերպարանափոխութէ ճոխագոյն եւս խօսեսցուք յիւրում տեղւոջ :

Եւ արդ՝ զի ցուցաւ, թէ մարդկային գործք տարբերին 'ի միմեանց՝ ոչ ըստ առարկային միայն, այլև ըստ պարագայից, զորոց առաւելապէս կախեալ կայ չարութ և բարութ բարոյական, մնայ քեզ մտանել, զինչ իցեն այնք՝ որք աստանօր կոչին պարագայք :

## ԳԼ. Թ :

### Յաղագս Թէ ո՞րպիսի և քանի՞ իցեն պարագայք բարոյական գործոյ :

Զեք մարմնեղէն ինչ գոյացութիւն, որում ոչ ընկերեն պէսպէս պատահմունք. յորոց ընդունի նա զկատարելութիւն կմ զաղտ, և որովք առբաւորոշի յայլոց համատեսակ գոյացութեց :

Ծառան է բաղադրեալ ինչ 'ի մարմնոյ, և 'ի անկա-

կան

կան ոգւոյ. այս է զինչութն և գոյացութն ծառոյ։ Այլ լինել կանաչ կամ դեղին, մեծ կամ փոքր, պտղաբեր կամ անպտուղ, այս ամ պատահմունք են, որք ընկերեն գոյացութն, և տարբերեն զծառ 'ի ծառոյ, և կոչին սոքա ՊԱՐԱԳԱՅՔ ՓԻԶԻՔԱԿԱՆՔ։ Ըստ այնմ օրինակի ԳՈՐԾՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ, թէպէտ իւր որում գործ՝ 'ի տրամաբանից 'ի համար դասի պատահմանց. իբր զի՝ հնար է մարդոյ գործել կամ չգործել. սակայն և այնպէս մտածի որպէս գոյացութն ինչ կամ զինչութն, հայելով 'ի պատահմունսն՝ որք ընկերեն նմա, և տարբերեն յայլմէ գործոյ, տարբեր զայն առաւել առաքինական կամ մոլեկան. և սոքին են ՊԱՐԱԳԱՅՔ ԲԱՐՈՅԱԿԱՆՔ. որպէս արդ լուար։

Արդ՝ այս բարոյական պարագայք հաւաքօրէն ամփոփին յեօթն. որք բովանդակին յայս տաղանաւոր։

ՈՎ ՈՔ. և ԶԻՆՉ. ՈՒՐ. և ՈՐՈՎՔ.
ՀԻՄ. ՈՐՊԻՍԵԱՒ. և ԵՐԲ ԱՐԴԵՕՔ։

որոց այս է մեկնութիւն։

Ով ոքն՝ նշանակէ եթէ զանձն՝ որ առնէ, և եթէ զանձն որ կրէ. զի երկաքանչիւրն տարբերեն ըզգործն՝ առաւելլով կամ նուազելով։

Զինչն՝ ոչ նշանակէ զզինչութիւն գործոյն. զի էութիւնն չէ պարագայ. այլ՝ զպտուղ ինչ, որ 'ի գործոյն գայ յառաջ։

Ուրն՝ նշանակէ զտեղին, յորում եղև գործն. անսուրբ իցէ, թէ սրբազան. հրապարակական իցէ, թէ առանձինն։

Որովքն՝ նշանակէ, թէ որպիսի միջոցօք կամ նպաստիւք կամ գործեօք եղև այն գործ։

Հիմն՝ նշանակէ զպատճառն և զվախճանն և զդիտումն. զի ըստ ամ անգամ պատճառն այլափոխէ ըզտեսակ գործոյն։

Որպիսեաւն՝ նշանակէ զեղանակ գործելոյ, մտաբերութեամբ եղև, թէ յանկարծ. ննջութեամբ, թէ բարեմտութեամբ։

Երբն՝ նշանակէ զժամն, յորում եղև գործն. յարգելեալ, թէ 'ի թողացուցիչ ժամանակի. 'ի տուէ, թէ 'ի գիշերի. յեւրում ժամանակի, թէ արտաքոյ ժամանակի։

Եւ

Իւ. աշխարհեղ այսմ օրինակ յայտնի ։ Օգտակար խորհր-
դոց երեւելագոյնսն, և մեծ քաղաքականսն յիշելոց համառօտեց-
ւոց. մինչ էին 'ի գաւառի, կարծ եւս լաւ. Եւ զունկն
կինն աշխատական իւր յետնաւորն, սիրեցեալ 'ի նմանէ
եւ սրտի և գան զանձնեւոյն երախտաւորեալ 'ի սպարեաց
մարմնոյ անփափոյ՝ երդուեալ ազատանել զնա 'ի մահուէ,
'ի զանէր նորա ըստ ծերութեան առաւելութեան իւրոյ. առնէ
ւոյ իւր յետնորդ և մեծագոյն զօրավարն դրանն արքու-
նի. որ ծածկեալ ամենայն իշխանութեան զառաւ իւր յերանս ։
Արդ եղեւ թէ, գործոյն է այս. Զնա կինն էր
'ի մէջ ազատանել զօրավարն ։ Ապանութիւն արդէն եղեւ
'ի սրտի յառաջ քան զմնել ձեռին, բայց յոյժ
ծանրացաւ 'ի հետեւակ պարագայից ։

ՈՂ թ. Կինն սիրեցեալ էր յօգտասութ, և երախ-
տաւորեալ 'ի նմանէ ։ Օգտատու երախտաւոր էր
կնոջն, և իշխան նորա ։ Յորոց մանաւանդ պա-
րագայից մին յաւելու 'ի զազանութիւնն շնացութ-
եան, և միւսն փոխէ զմարդասպանութիւնն 'ի
հայրասպանութիւն ։

ՁՃԻ. Այս պարագայս առաւել եւս ծանրացուցա-
նէ զայն. զի յոյժ ապանութիւն ծագէ անտերունչ
մնալ ինքնակալութեան. և վերստին բորբոքի պատե-
րազմն քաղաքական՝ նորոգ չիջեալ ։

ՈՒր. Սա յաւելու 'ի մէ յանցանացն նոր չարու-
թիւն, 'ի գործել զայն 'ի մեհենի, առաջի աչաց
դիցն մեհեից՝ ըստ հեթանոսական կարծեաց. յոր-
մէ նախատինք լինէին մարդկայնում մեծափառու-
թեան և դիւցականի ։

ՈՒՃԹ. Եւ եւս առաւելու յանցուածն միջոցք՝
զորս հնարեցաւ կինն 'ի կատարել զայն, կոչեալ
իւր 'ի թիկունս և 'ի գործակցութիւն իւրոյ ապի-
րատութեան և զայլ եւս աղխնանակս. և ծածկեալ
զատրն յերանս՝ զլէնն մատնութեան և անարգու-
թեան, որով երբեմն 'ի վերայ յարեան յաւլնասի
կայսեր ։

ՀԻՆ. Սա քան զամենայն առաւելու զյանցանս, զի
չարժեցաւ ոչ 'ի քաջասիրտ գժգմնութե ընդ նա-
խատինս ինչ հասուցեալս նմա, այլ յանարգ, և 'ի
խծական դրդմանէ մատնելոյ զանէր իւր, 'ի հաճել

 զմտա

զմիտս անտոնիոսի հասարակաց Թշնամւոյ՝ և ընդունիլ 'ի նմանէ զվարձս ինչ:

Ո՛ՐԴԵԱԿ. Ով այնչափ անարգական լինէր յանցուածն, եթէ ճակատ յարդարեալ էր նորա՝ զինիլ ընդդէմ օգոստոսի յայտնապէս, որք արարեալ էին այլ ապստամբք. բայց հաւատարմութիւն և սէր կեղծաւորիլ առ դաւաճանեալն, 'ի սեղանոյ նորա կերակրիլ՝ և մտանութ̃ դաւադիր լինել կենաց այնմ՝ որ վստահն էր 'ի նա, այս է անհնարին դրժողութիւն:

Ե՛ՐԲ. Այս պարագայ 'ի ներքս փակէ զայլոց ամ̃ զսոսկումն. և առաւելու ևս: 'ի ժամանակի, յորժամ բարեացապարտ իշխանն զոհս մատուցանէ վս̃ հասարակաց բարօրութե̃, կինմս կամի 'ի սպանդվարել զնոյն ինքն զիշխանն վս̃ հն̃րկաց աւերման: 'ի նոյն սեղան օգոստոս քրմաբար զարիւն հեղու զապանդից 'ի հաճել զդիս հայրենեաց. և կինմս հեղու զարիւն քրմին, առ երկրպագելի առնելոյ զմարկոս անտոնիոս զԹշնամի հայրենեաց, Թողեալ զհռովմայեցիս 'ի տարակուսի՝ Թէ ո՛ր մեծ իցէ, բարեպաշտութիւն դաւաճանելոյն, Թէ ամպարշտութիւն դաւաճանողին. որ 'ի հայրասպանութե̃ յաւելու և զսեղանակապտութե̃ (63):

Յայսոսիկ եօթանեսին պարագայս յաւելուն ոմանք և ՈՒԹՆ. այսինքն Թէ քանիցս լեալ իցէ այն գործ: Բայց կոչի սա բազմաւորութի̃ գործոյ, և ոչ Թէ պարագայ միոյ գործոյ:

ԱՅԼՔ յաւելուն յայնս և զայլ մանաւորութիւ ինն ստորոգութեց պատահականաց՝ որ առ արամարանս: Բայց բովանդակ վերածին սոքա յայս եօթն պարագայս: Եւ յայս հաստատեալ է առաւելութե̃ նրբահայեցութե̃ խոհեմ մտաց, 'ի քաջ խորհրդածել և քննել զմարդկային գործս:

'Ի շառաւիղել ճառագայթից արեւու ընդ մԹին տեղի՝ երեւին մանրամաղ շամանդաղք ը̃ օդս Թռուցեալք, որք արտաքոյ չերեւին աչաց. և լուսաւորագոյն միտք տեսանէ զմանր մանր ՊԱՐԱԳԱՅՍ, զոր նուազ խոհեմք չտեսանեն, և լաւ ևս որոշէ զառաքինի գործս 'ի մոլեկանաց:

Բա-

## Բարոյական իմաստասիրութիւն

# ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ:

### Յաղագս արիութեան, և ծայրից նորա:

### ԳԼ. Ա:

Ներածութիւն յաղթութեան ձայնու:

Աւասիկ քեզ նախ առաջին 'ի հանդէս մատչի այն ազնիւ առաքինութիւն արութեան, որ քաջագործութեամբ ազնուացուցանէ ըզտոհմս, պայծառ յարդարէ զանձինս. փողփողեցուցանէ զվահանակս ազնուազգի նշանօք. լի ասպարս և վիրօք, զարդարէ յաղթական պսակօք, միանգամայն և անդաստանական փոշւով. ով քաջութիւն նոյնպէս պատուով քան զնա առաքինութիւն այնու լինել գահերէց:

Անուն յառաջ մատչին երկու խաղաղական՝ բայց իմաստուն քոյրք, Արդարութիւն և Խոհեմութիւն. և ըստ երկեալ զհեղինակութեան օրինաց՝ զօրութեան զինուց, զառաջնինակս՝ դրօշուց, զիշխանականն պատմուճան՝ զինուորական քղամդաց, զուսուցչականն գարնի՝ յաղթական ախոյանաց, բողոքեն, թէ առաքինութիւն իւր գդայական ոգւոյ՝ որ հասարակ է անասնոց, զիարդ իշխեսցէ յառաջագաս լինել երկուց առաքինութեանց ոգւոյ բանաւորի, որ սեպհական է մարդոյ:

Իսկ ահա անդրէն նորոգի վաղնջուց վէճն ազնըւութեան 'ի մէջ Հռոմայ և Փառնից. գրաւորութեամբ և զինուք ընդերկար հոսհոսեալ 'ի մէջ զօրականաց և պատմուճանաւորաց. սոցա գրելով գիտնաւոր սևակաւ, և նոցա կենդանի արեամբ վիրաց՝ իւրաքանչիւր զիւր փաստս:

Իսկ թէպէտ ամ փիլիսոփայական դպրոցք ուղիղ

որոշ-

որոշմամբ զկողմն խրատացուցանեն զպատմուճա_
նագգեաց առաքինուեց [illegible] և [illegible], վա
առաջնուն նոյ յազգահամարի՝ որ ցուցաւ 'ի նախ_
ընթաց գիրս, բայց և այնպէս ճշմարիտ է՝ թէ
զկողմն [illegible] առաւել խրատացուցանեն, և մեծա_
մեծ վարձատրութք պատուեն իշխանք մեծամեծք
և հզօրք․ որք մեծ համարին զմի քաջ զօրավար քան
զհարիւր ուսուցիչս ։

Զայսր միտողուն զննեալ արիստոտէլի յիւր գիրս
խնդրոց զքաղաքական պատճառ, այսպէս իմաստա_
սիրէ․ Մ[illegible]
[illegible]
[illegible]
Յորմէ 'ի վր բերէ, թէ վա զի իշխանք մեծամեծք
հանապազ կմ նեղեն զսահմանակիցս, կամ նեղին
'ի սահմանակցաց, միշտ պտրզմունս մքենայեն,
և յայնց երկնչին, և այնպէս 'ի պաշտպանել ան_
ձանց և 'ի վանել զայլս՝ առաւել պիտոյս ունին
զինուց՝ քան օրինաց, պալլատոյ պտրզմողի՝ քան
աթենասայ գիտնաւորի (64)։ Եւ վսկ մեծապէս
պատուեալ զարիւն քան զուսումն, զգիտնաւո_
րաց չէ նչ փոյթ՝ բայց յորժմ պիտոյ լինին․ իսկ ըզ_
քաջաց յամ ժամ։ Այնպա՝ զի գասա արդարուն է
արդարագոյն․ այլ գասա արիունն է զօրագոյն։

Այլ մի մեծամտեսցի ատանոր արիւնն, տեսեալ՝
թէ արիստոտէլ վերագասէ զնա ('ի կարգի վար_
դապետութ) քան զայլ առաքինութս․ ոչ թէ սահ_
մանական վճռաւ նորին՝ իւր իցէ առաջին տեղին․
Յայտ է թէ ը՟ բնաւոր կարգի յուսուցանել նր
զայս գիտութիւն, պարտ էր նմա սկիզբն առնել
յերկուց անտի գլխաւոր առաքինութեց։ Բայց
քանզի կարգ վճպուն պահանջէ 'ի դիւրագունից
յառաջանալ 'ի դժուարագոյնս, կամ եղև նմա ըս_
կիզբն առնել [illegible] և 'ի [illegible], և յայլոց
առաքինուեց՝ որք կարգաւորեն զկիրս․ իբր զի են
դիւրիմացք՝ վա լինելոյ իւրեանց առաւել զգալի․
'ի վերջէ դասեալ [illegible] և [illegible], որոց
հոգևորագոյն գոլով և բարձրագոյն, մեծ ջան պի_
տի և խոր զննութի։

Մեր

Մեք ոչ կամեցեալ դատաւոր լինել վճռիս, որոյ
են այսպիսի մեծ դատախազք, և այսպիսի հզօր
կուսակիցք, չհեա երթիցուք կարգի՝ զոր կալու-
արխառակել։

## ԳԼ. Բ.

### ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻ՞ՆՉ ԻՑԷ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՐԻՈՒԹԵ. և Ո՞Ր ԻՑԷ ԱՐԻՆ։

Ժուժկալութիւնն է առաքինութիւն, որ բարեկարգէ
զցանկական կիրս զերկիւղիւ չարեաց ապականչաց
մարմնաւոր կենաց. դժուարին իմն՝ բայց շքեղ
վախճանաւ։

Այլ որդն փայլուն հաւիկն միկրոփինիկ ոչ երեւի,
բայց եթէ 'ի գիշերի. նոյնպէս այսմ պճնաւական
առաքինութի ոչ է հնար լինել հասու, բայց եթէ
'ի ստուերս ծայրական մոլութեանց ՑԱՆԿՈՒԹԵԱՆ
և ՅԱՆԴԳՆՈՒԹԵԱՆ։

Վեհերոտն յաւէտ երկնչի. յանդուգն յաւէտ է վստահ։
Արին չերկնչի՝ ուր պարտ է վստահել, և չվստահի՝
ուր պարտն է երկնչել։ Առաջի դիցի ինչ վտան-
գաւոր և դժուարին. վեհերոտն զամ խորհի. յան-
դուգն ոչինչ խորհի. արին այնչափ ինչ խորհի՝
որչափ պիտոյ իցէ առ շքեղ լինելուն գործոյն։

Ընդունին չարար զամ մարդիկ միապէս պատրաս-
տական առ արիուն. զի չեա ամենեցուն մարմին
միօրինակ։ Առ մարդկային կենակցութի պիտոյին
պէսպէս արուեստք՝ տեսականք կամ գործնականք,
ազատականք կամ ծառայականք, խաղաղականք կամ
պատերազմականք։

Պէսպէս արուեստք պահանջեն պէսպէս բնաւո-
րութիւն, և պէսպիսութի բնաւորութեանց ծնանի 'ի
պէսպիսուէ խառնուածոց. բայց և այնպէս պարտ
է կանոնաւորել զնա, և ուղղել առաքինուէ. զի
միտումն է բնական. այլ մոլութին՝ անձնական։

Այլք կարի իմն ցուրտք՝ բնութ են երկչոտք. կարի
իմն ջերմք՝ բնաւորապէս են յանդգունք. արին ունի
խառնուած խառն 'ի մաղձային և 'ի մաղասային։
Խառն հաստատակաց զրոյն, որ կարծէ արխադոյն
զայն

ղայն՝ որոյ սերմն իցէ մեծագոյն։ Չի՛ք ինչ գաղան արիագոյն քան զառիւծ. և ոչ ուրուք սերմ փոքր է քան զնորայն՝ ը̄ համեմատութե̄. զի սերմ փոքր պաշտել զկենսական ոգիս առաւել ամփոփ և ջերմագին, լաւ ևս ջեռուցանէ զկուրծս։

Յանդգնութին յառաջ գայ յառաւելեալ ջերմութ̄ թոքոց, իբրև զորտամտուն ցասուցելոց և արբելոց, որ ոչ թողացուցանէ հայել 'ի վտանգն։

Ջարրին հկ̄կն՝ վեհերոտութին ծնանի յառաւելեալ պաղութէ կրծոց, ոպ̄ 'ի յանկարծ զարհուրանս. որոյ ստորասուզել զջերմութ̄ 'ի ստորին մասունս՝ լքեալ թողու զսիրտ կենսական և կենդանական. Վ̄նկ յանդուգն ընդ քիրտն հարկանի. վեհերոտն դողայ. բայց արին չունելով աւելադանց ջերմութ̄ կամ ցրտութիւն, գործէ քաջութ̄ և խելօք։

Եւս և յարտաքին կերպարանս (արին) երևեցուցանէ ցոյցս. զի մարմինն է գործի հոգւոյ։ Ա̄կն ընդ խոժոռահայեաց և ընդ քաղցրահայեաց, գոյն ը̄ թխատեսակ և ը̄ շառագոյն, դէմք ը̄ զուարթ և ը̄ տխուր, ալք ը̄ մանկական և ը̄ ծերունեան, տախտակ կրծոց լայն, և մարմին մկանուտ, այս կաղմութն էր հերակլեսի՝ քաջաց գաղափարի։

Բայց ըղձմս օգտէ և ժառանգական քաջարութ̄ նախնեաց։ Արիք ծնանին յարեաց։ Պախուղացիք ըռունէին զորդիս որպ̄ իւրեանց, եթէ յարկանել առաջի նոցա զիժ, նոքա ձեռն մխէին 'ի նա աներկիւղ և անխիտս (65)։ Եւ պատերազմողաց տոհմք այնու ճանաչէին զիւրեանց որդիս, յորժամ ը̄դէմ եդեալ զնոսա վտանգի, տեսանէին թէ կան աներկիւղ և աննսասան։

'Ի ծնանիլ հերակլեայ և իփիկլեայ 'ի չնացել մօրէ, հերակլես համարեցաւ որդի դիոսի, և իփիկլես՝ ամփիտրիոնի (66). զի 'ի յարձակիլ օձի 'ի վերայ երկոցուն սոցա յանկարծակի, իփիկլես փախեաւ, և հերակլես հեղձոյց զնա։ Վեհերոտն և արին ցուցանեն՝ թէ այլևայլ տոհմի են ծնունդ, յորժամ յերևիլ թշնամւոյն՝ ոմն զթիկունս դարձուցանէ, և ոմն ընդդէմ ճակատի։

Բայց առանց քաջալուն սննդեան խամրանայ

որդ-

որդւոց յորդիս առաքինութեն քաջազանց։

'Ի ցնկնիլ ամէհի շանն լեկուրգոսի՝ մի 'ի կորեանց անեալ յանտառի՝ գազանացաւ առ գազանս. և միւսն անէր 'ի խոհակերոցի, եղև որկորեայ և անարի։ Եւ 'ի փորձել զերկոսին զնոսա յեւրուսէ որսահի՝ առաջի արարեր նոցա գազան և կերակուր, մին զհետ պնդեցաւ գազանին, և միւսն վազեաց 'ի լակ։ Յուշ առնեն բնախօսք, թէ չորք ծնունդ արեայ լինի կաթողի. յոյր վն լինին նուրբ և վիճաբանական փաստից յոյժ. Իսկ թուի թէ չիք փառս ստուգագոյն քան զայս, թէ ը որում արք քաջք պատաղին առնել յարտաքին գործս քան 'ի տընտեսականս, յորդիսն լինին կամք՝ այլ ոչ ուսմունք՝ առնելոյ գործս քաջութե. և վնկ երևին կաթողիք. վն զի են յանդգունք. իբր զի ոչ այլ ինչ է յանդգնութի, բայց անմիտ համարձակութի։

Այլև հայրենիք առնեն զմարդ արի՝ զոր օրինակ հարք։ Սպարտիա եւեթ էր դաստառ արիականաց. զի արեգդիմութե տեղւոյն առնէր զնոսա կորովիս. և չդոյութի կերակրոյ տոխալէր զնս պարտաքարամբ որսալ խուրեանց հաց։ Յայնմ ապառաժէ ծնանէին մանկունք քան զապառաժ վիմարգեանք, որ ցաւ անգամ չիմանային. 'ի պատառոտել մարմնոյ գունդագունդ հոսեր արիւն, և չերևէր շիթ մի արտասուաց. ոգիք նց քաղէին, և հեծութի և ոչ մի։

Բայց 'ի վախճան ամի՝ ունակութին է, որ հաստատէ և կազդուրէ զայս առաքինութի։

Ահաւորագոյն է հարկուրեակ մի հին աւուրց զօրականաց, քան զեգէոնախումբ կաճառ նորամտից. զի սոքա առ ամ շողիւն սուսերի կարծեն վարիլ 'ի մահ. այլ նոքա խաղան ը մահու՝ որպէս ընդ խուրեանց ընտել։

Արին թէպէտև տխօք և վիրօք ուժաթափ լիցի, ունի սիրտ աշխոյժ, և քաջութե իմն արտայայտ զունակութի։

(67). Զառամեալն պրիամոս՝ քանդելոյ հայրենեացն յեմոնորդ՝ տեսեալ զիւրև զանզերծ սուսեր դառզին պիւռոսի, որ խչխեացն զօհել զնա դաւադիր

յա-

յաղթուէ 'ի զոհարանի, թէպէտ և պարտեցաւ՝ բայց դեռ երևեալ անպարտելի, թուլացեալ ձեռամբ՝ բայց արիական սրտիւ՝ ընկէց 'ի բարբարոս անդր զտէգն անզօր. որոյ շառաչմամբն չկահեալ ը անթափանց վահանն՝ անկաւ 'ի գետին անգործ, այլ ոչ անշուք: Շատ եղև այն քաջութեն 'ի պատուել զանբաղդութեն պարտելոց, և յամօթ առնել զպարծանս յաղթականաց:

## ԳԼ. Գ.

### Յաղագս առաքինութեան արիութեան. այսինքն թէ յորոց երկնչիցի արին, և յորոց ոչ:

Պղատոնի կեղոացիք՝ ը արիասուէլն՝ չերկնչելն 'ի վտանգէ ինչ. (68): Կիկերովայք արհամարհելն զշանթս արամազդայ, և մեծարանելին եւ՝ քաջամբեր լինել շանթիւք 'ի շանթառուքն, և որոտալ սպառնալեօք յորոտողն. (69):

Ոչ ամ վտանգ՝ է առարկայ արիութեան: Արին երկնչի 'ի սաստէ երկնից, այլ ոչ 'ի սաստէ արոյ: Երկնչի 'ի հասարակաց ժանտախտէ, այլ ոչ յիւրոց վիրաց: Երկնչի 'ի նաւաբեկութենէ ծովու, այլ ոչ 'ի հոսելոյ արեան իւրոյ: Զի յանդուգն է՝ որ չերկնչի 'ի վտանգից. որք առաւելուն քան զկար մարդոյ. որպէս վեհերոտ է՝ որ երկնչի 'ի վտանգից, որ չառաւելուն ինչ քան զկար իւր:

Երկնչի արին 'ի սպառնալեաց իշխանաց, և 'ի ցասմանէ բազմուէ. զի իշխանքն են ածք երկրաւորք. և բազմութին է գազան բիւրգլխի. և երեք միայն գլուխք՝ բաւական են 'ի բաղկացուցանել զահեղ Ճիւաղ: Ալկիդէս գաղափարն արիութե՝ որպէս ասացաւ, 'ի մենամարտիլ իւրում ընդ երկուս ախոյեանս յողիմպիական խաղս՝ պարտեցաւ: Նա մնկ ոչ իշխեալ մենամարտիլ ընդ Լեռնայինն հիդրայ, և ը ծովային խեցգետին, կոչեաց զյոլաւս յիւր օգնութի (70). յորմէ եւ առածն պղատոնեան. Նա ոչ Հերակլէս ընդդէմ երկուց:

Չեն պարծանք քաջազօրի 'ի վր յարձակիլ խրոխտանօք. և ոչ ամօթ՝ նկուն եղելոյն պարտութի:

Այս

Այս որին ոչ ընդ տաշ եղանէ վտանգից՝ որ 'ի վեր են քան զկար իւր․ բայց ոչ զանգիտէ 'ի գո-րուէ՝ որ փոքր է քան զիւրն։

Ամօթ համօրի տակաւին զհետ այնսիլ չնչին երեւոց, եւ արձակել զիւր քաջութե նետս՝ զհետ այծեմանց փախստէից․ այլ բղձանայ, զի 'ի բարձրաբերձ լերանց իջցէ առիւծ ամեհի, կամ թաւամազ հրէշ ինչ անտառի (71)։ Եւ որին ոչ գործուցանէ զզէնս ճգնեմ անարգ հակառակորդի․ ուր յաղթելն չէ ինչ պարծանք, եւ յաղթիլն է ամօթ։

Երկնչի որին եւ 'ի ձախող պատահարաց բախտի, 'ի շղթայից յուզորթայ, 'ի բանտէ սխփակայ, յար համարձանաց կրասսի․ 'ի բոցոյ կրեասի (72)․ բայց յոյժ առաւել 'ի ձախող պատահարաց՝ որ յիւրոց գործոց։

Որ տանի ամօթալի չարեաց՝ քան համեստից, աներես է, եւ ոչ թէ որի։ Ոչինչ չարիք են նախատագոյն՝ քան զկրաւացին․ եւ ոչինչ անցաւակցելի քան զարժանահատն։

Երկու մեծամեծ դշխոյք՝ նովին յանդգնութ զգրգռել զզօրագոյն ոք, արժանացան նոյն պատուհասի, կղէոպատրա, եւ զենոբիա։ Բայց որ'ի սմնէ եղեւ արիագոյն։ Մին եցոյց՝ թէ լքի 'ի յանձն առնուլ զամօթ յաղթանակին։ Միւսն քերեաց յանձնէ զշառագունեն ամօթոյ՝ դեղնութ մահու։ Միւսն՝ բռնաւորն յաղթանակեաց, միւսն յաղթեաց բռնաւորին․ որոյ կարծեալ զհետ ձգել զիւրոյ կառաց զկղէոպատրա, զհետ ձգեաց արձան մի։ Եւ այնպէս՝ զենոբիա զիւրոյ յանդգնութեն անարգաբար ընկալաւ զպատուհաս․ եւ կղէոպատրա անուամբ արուն՝ քերեաց յանձնէ զկեղտ անուն յանդգնութեան (73)։

Սէկ 'ի վր բերէ արիատանէլ, թէ Ճշմարիտ եւ անմնհական եւ գերագոյն առարկայ արիութե, է մահ զնաշարժութե վասն իրաւացի պատճառաց․ եւ այնպիսի համեմատ զօրութ, որ առաքինօրէն հնար իցէ արիաբար զայն վանել, կամ քաջութ յանձն առնուլ։

Յայնժամ մահն է յաղթական, յորժամ հորդինմ-

ձա

Ճանապարհ ծիրանեօք, և մտանէ ընդ կամարս վիրաց (74). և յայնժամ արիութիւնն առնէ զիւր ծայրագոյն ճիգն, յորժամ պարտէ զծայրագոյնն ահաւորաց:

Մահու անհնար է առնել ինչ յոռեգոյն քան զբարձումն կենաց. և արիականին անհնար է առնել ինչ լաւ՝ քան զարհամարհութիւն նորա:

Որ տայ զինչս՝ պահէ առ իւր զպատիւ. որ մերկանայ զպատիւ, պահէ զազատութիւն. որ կորուսանէ զազատութիւն, պահէ զկեանս. բայց որ տայ զկեանս, տայ զամ՝ բաց յառաքինութէ, զոր ՚ի իւր տանի. և բաց ՚ի համբաւոյ՝ զոր թողու յերկրի:

## ԳԼ. Դ.

### ԹԷ ԶԻ՞ ՈՐՈ՞Յ ՊԱՏՃԱՌԱՒ ԳՈՐԾԻՑԷ ԱՐԻՆ:

Արին ոչ զգրգռէ զվտանգս, բայց և ոչ փախչի ՚ի նոցանէ՝ յորժամ յարժանաւոր պատճառաւէ յայն հրաւիրի:

Այնպէս պատուական է արիւն առն արիականի, որ անմարթ է հեղուլ զայն, բայց եթէ վս մեծահարկի իրաց: Բնութիւն եարկ զայն յերակս՝ ոչ անգին կարկեհանս յարկեղ զգուշութե. զի երևեցուսցէ չքնաղ հանդէս ՚ի հանդիսի աւիթս:

Շռայլութիւն է անտանելի, թէ զանձ այդպիսի վատնեսցի վս փանաք ընչից, վս թեթև նախատանաց, վս առանձնաւոր ատելութեց, վս կամակոր մենամարտութեց. որք առաւել արժանաւոր են պատժի պատուհասի՝ քան յաղթանակի:

Չիք ինչ անարգ քան զարիւն մարդոյ՝ հեղեալ վս չնչին պատճառի. չիք ինչ պատուական քան զնոյն՝ ձօնեալ վս գեղեցիկ պատճառի:

Գեղեցիկ պատճառ արիութե համարեալ են փառք: Գեղեցիկ գաշն է, սուղ ինչ մահուամբ՝ գնել զյաւիտենական համբաւ: Գեղեցիկ փոխանակութի է՝ յաւելուլ յանմահութիւն զայն ինչ, որ բառնի ՚ի կենաց:

(75). Թանկագին եղև մանղիսոյ՝ [illegible] անուն. կուրխոսի՝ [illegible] անուն, կասսոսի՝ [illegible]

ՀԱՅԵՑԻ ՈՍԿԵՂԵՆԻՔ անուան։ Սակայն և այնպէս կենդանածնելոք յիւրեանց վերատառութեան, վայելեցին միանգամայն և 'ի փառս և 'ի պանծալի կեանս։ Բայց պանծագոյն ևս է՝ փոխել յական թօթափել զերբեալ լոյսն կենաց ընդ պայծառ լուսոյ յաւիտենական անուան. և արժանի ևս է վերագրել զայն 'ի շիրմի՝ քան 'ի յաղթական կամարս։

Ճշմարիտ է՝ թէ վաղ մեռանի համբաւ, եթէ ոչ հատանէ զնա 'ի կեանս շուրջ գովչաց. և սակաւ թռչի. թէ չունի թևս գրչաց անուանի մատենագրաց։ ԿԲՈՂ ՄԷՐ ՈՐԴԻԴ ԳՈՀԱՆԱՅՆ ՈՂԲՈՒԵԱՅ՝ ասաց պալլաս առ տեղեմաքոս, ՉԻՆ ՏՈՒՈՒ ԳՈՅՆՍ ԳՈՀԵՐ ՀԱՆԳԱՅՆ ՀՕՐ ՔՈՅ (76)։ Այս բարեբաստութի միայն՝ եարկ նախանձուկս աղէքսանդրի առ աքիլլէս, և կեսարու՝ առ աղէքսանդր, ունել գովասան զոմն հոմերոս։

Ոչինչ բոմբիւն թօթափէ զքուն քնեած որդւոց, որպէս նուագ ներբողից քաջաց նախնեաց։

Զօրականաց միայն էր առանձինն օրէն՝ գրել զիւրեանց զինուորական կտակ արեամբ վիրաց 'ի պատեանս սուսերաց։ Աւելի արժէր կտակն՝ քան զթողեալ ժառանգութիւնն։ Ոչինչ հայրենի ժառանգութիւն Ճոխ՝ կարող էին թողուլ որդւոց, որպէս զօրինակ արիութեան իւրեանց։

Բայց սակաւ յորդորիչ է առն քաջի՝ յետ մահուն համբաւ։ Հատուցումն՝ չէ բաւական վճար աշխատութեանն։

Ընդունայն լինէին քաջագործութիք անհամար շահատակաց, որք ոչ գրեցան, բայց 'ի ջուր մոռացութե. և ոչ նուագեցան, բայց հողմահայն հարևանցեալ. և ոչ երևեցան, բայց ուրուականաց միայն. համբաւն՝ կենդանի է առ կենդանիս, և մեռեալ առ մեռեալս։ Նա՝ առ կենդանիս խակ կիրք չուայլօրէն պարգևեն զայն չարժանւոյն. և նախանձն խորամանկութե բառնայ յարժանաւորէն։ Մինչզի աւելի արժէ օր մի մարմնաւոր կենացս՝ քան դար մի երևակայական կենաց. և չարժէ առ շրջելոյ 'ի պատկերի՝ եղծանել զնախատիպն։

Այլ Ճշմարիտ պարծանք առն արիականի՝ որպէս

և

և լուսոյ, է գործն պանծալի ։ Ճշմարիտ համբաւն է վկայութիւն խղճի մտաց ։ Ճշմարիտ գով է այն՝ զոր ստանայ նա անձին, 'ի համարել ստուգութբ՝ թէ բարւոք գործեաց ։ Առաւել արժէ համեստ ինչ գործ առժամեայ՝ քան զհազար դարս կենաց ։

(77)։ Եպամինոնդ խոցեալ 'ի պատերազմի՝ որում զօրավարէր, մինչև էր հանեալ սլաքն 'ի վիրաց, եհարց՝ թէ ապաքր իւր զե՞րծ իցէ, և թէ՝ պարտեցաւ թշնամին. և լուեալ զերկոցուն զայսն, խնդամիտ ասէ. Այժմ Եպամինոնդ ծնանի, ոչ դադարեալ մեռանի ։ Եւ յայնժամ թողացոյց հանել 'ի փարատեաց զսլաքն. որով և եհան զոգի. և յաղթանակեաց 'ի պանծալի մահիւն դադարեաց ։ Ոչինչ այլ գործս կարող էր գտանել՝ լաւ ևս գովիչ. և ոչինչ գովիչ՝ լաւ ևս քան զիւր գործ ։

Ապա ճշմարիտ պարծանք գործոց քաջութե հաստատեալ է 'ի պատճառն՝ որ տախէ առնել զնն ։ Եւ ճշմարիտ պատճառ՝ չէ գովն իւրական, այլ երախտաւորութիւն առ այլս. և որչափ մեծ է երախտաւորութիւնն, այնչափ մեծ են և ճշմարիտ պարծանք արիութ ։ Ախտալի է գնելն զկեանս վասն հօր, վասն հայրենեաց, և վն իշխանի։ Անարժան է կենաց՝ որ ոչ գնէ զնս վն տուողի նր ։ Երախտաւորութիւն ընդունելութե կենաց չէք հաւատարել այլում երախտաւորութե, բայց եթէ նուիրելով զայն իւրում տուողի ։

(78)։ 'Ի վերայ գլխոյ ծնաւ պալլաս՝ զինեալ, 'ի խնդրել զվրէժ նորուն ։ Եւ բնութիւն զսէր պաշտի առ ծնողս. զի 'ի գլխել առթի՝ կայցեն նոցա պաշտպանողք՝ ոչ ծառայաբար հարկեալք ։

'Ի զերծուցանել զհայր 'ի հայրապանաց՝ բնութիւն արձակեաց զհամր լեզու զիւրոյ որդւոյ (79) ։ 'Ի կապարճս որդոյական շրթանց պատրաստեալ էր զնետ այնր լեզուի՝ վասն այսպէս գեղեցիկ հարկանելոյ ։ Փոքրիկ ինչ լեզու բթացոյց զամենայն ասեր գումարելոցն 'ի վերայ ։

Բազում պարտիք են որդւոյ առ ծնողս, յորոց ծնանի. բայց առաւել ևս առ հայրենիս՝ վոյ ծնանի։ Զիք ինչ քաղցր՝ քան զսէր հայրենեաց. չէք ինչ անձկալի՝

մի ջ զկեալն ՚ի հայրենիս. և չիք ինչ պատուաւոր՝
քան զմեռանիլ վ՟ն հայրենեաց: Շատ եկեաց, որ
վ՟ն հայրենեաց մեռաւ. կարի շատ՝ որ և յետ հայ-
րենեաց եկեաց: Սակաւ եկեաց, որ մեռաւ՝ մինչ և
փոխատրել էր հայրենեաց մեծ ինչ երախտիս:
(80). Գեղարդն հռոմուլեան անկեալ ՚ի գետնի,
եղև ծառ վարսաւոր. և ընդ հովանեաւ ն՟ր հովա-
նայլեն քաղաքացիք: Ոչինչ հովանի այնպէս հաճոյ
է հայրենեաց, ո՟ր զհովանի զինուց քաջաց. և ոչ
պտուղ քաղցր՝ քան զպտուղ արմաւենեաց համաշ-
խարհիկ յաղթականաց:
Հայրենեօք խմա և զիշխանն՝ որ տէրն է նորա:
Որ ամենեցուն է պաշտպան, պարտ և պատշաճ
է՝ թէ յամենեցունց պաշտպանութիւն ընկալցի:
Յորժամ յառնէ թշնամի ՚ի վ՟ր օձի, ամ՟ պարոյրք
գալարածոյ անդամոց՝ զգլխով պատին, ուր են
կեանք բովանդակ մարմնոյն: Յորչափ իշխանն է
կենդանի, հասարակութիւն է կենդանի:
Նոյն ամ՟ է բարիք և համեստ պատճառ քաջի,
՚ի գործ դնելոյ զիւրն քաջութե՟ն: Բայց կայ միա
ևս կարի իմն ազնուագոյն և պանծագոյն:
Այլ ինչ է մեռանիլ վ՟ն համեստ պատճառաց,
և այլ ինչ է մեռանիլ վ՟ն համեստութե՟. ո՟ր յուշ-
անէ մեզ արիստոտէլ: Համեստ իրք են փոփոխա-
կան, համեստութիւն է անփոփոխ. ն՟ք են բաղէական,
և սա յաւէժական. նոքա են երևելի, և սա անե-
րևոյթ. նոքա են գաղափարեալ, և սա գաղափար.
որ կայ ՚ի միտս ա՟ծական, և փայլէ ընդ իւրև
զա՟ծականս. և ամփոփէ զա՟մ առաքինութիս ՚ի մի
միայն. որ է վերացեալ և զտեալ յայլմէ ամ՟:
Ապա սա է բարձրագոյն առարկայն՝ յոր հայի ա-
րին, յորժամ դիմադրաւէ զկեանս. այն է հա-
ձոփն և բանաւորն:
Մեծանունութիւն, համբաւ, անդրիք, հոյա-
կապ շիրիմք, գրուածք, պատմական յիշատա-
կագրութիւնք. և ամենայն աշխարհային պատիւք
չարժեն գանկ մի համեստութեան:
Այրեցուցանել զիւրան, հասանել զհայրենիս,
պաշտպանել իշխանի, և այլ ամ՟ պատճառք, այն-
չափ

չափ են պատուաւորք՝ որչափ յաւէտ կ՚նուազ հաղորդին գաղափարիս ։

Այս արին մեծ Նախատինս հասուցանէ անձին՝ և իւրոյ արեան, եթէ 'ի հեղուլ զայն չունի զայս առարկայ ակն յանդիման, քան զհամբաւ և զշուք յաղթական ։

## ԳԼ. Ը։

### ՑՈՅՑ՝ ԹԷ ՈՐՉԱՓ ՕՐԻՆԱՒՈՐ ԳՈՐԾԻՑԷ ԱՐԻՆ ։

'Ի գործս արիականին՝ բազում ինչ ընդ մէջ է. եթէ պատերազմեսցի նա այլոյ հրամանաւ՝ կ՚ իւրականաւ ։ Եթէ վտանգն յառաջադէտ իցէ՝ կ՚ անակնկալ. եթէ իւր պատերազմակից կայցէ՝ կամ մենազինեալ իցէ. եթէ վտանգն վերագոյն իցէ քան զկար մարդոյ՝ կամ հաւասար իւրում ։ Այսմ ամենայնի յառաջ քան զամենայն՝ մտա_ խորհ լինի արին ։

Եթէ է նա հրամանատար, լինի առաւել զգու_ շաւոր. եթէ է հրամանակատար, լինի առաւել կամակար. զի յառաջնումն՝ իղձ իւր է ապրեցու_ ցանել զհայրենիս. իսկ յերկրորդումն՝ մեռանիլ վասն հայրենեաց ։ 'Ի յառաջադէտ վտանգս մեծագոյն լինի նորա վստահութիւն. 'ի յանկարծադէպս մե_ ծագոյն արիութիւն ։ Մեծագոյն արիութիւն է՝ դիմագրաւել անկարծ արկածից, քան ընդ առաջ լինել ն͞ց ընտրուե͞. զի կամքն քաղցրացուցանէ զդա_ ռինս, և հարկն դառնացուցանէ զքաղցունս ։

Ոչ լքեալ թողու նա զմարտակիցս 'ի վտանգի. և ոչ մարտակցաց արժան է զնա լքանել. բայց թէ լքցի, ոչ լքանէ նա զանձն ։ Ասասցէ զասացեալն զօրագլխին՝ զոր լքեալ թողին երկչոտ աթենա_ ցիք. ԵՐԹԱՅՔ 'Ի ԲԱՑ. ԵՍ ԼԻՑԻ ԲԱՒԱԿԱՆ ԻՆՁ. ԸՆԿԵՐԱՑԵԱՆ ԻՆՁ ԻՄ ԶԱՒԱՐԱԿԻՑ, և ԴԷՔ ՄԱՐՏԱԿԻՑՔ։

Արին ոչ սիրէ զվտանգս՝ որ 'ի վեր են քան ըզ_ կար մարդկան, ո՛չ ասացաւ. բայց թէ բախտն կ՚ հարկն յայն ստիպեսցէ, երեւի այն մարդ՝ 'ի զգալ զայն, այլ 'ի վեր ք͞ զմարդ 'ի տոկալ այնմ ։ (81). Եթէ կարեվէր խոցի, ոչ անձկայ մահու՝ ը͞ նեա.

նեսոսի. և ոչ 'ի խնդիր լինի նր̄ ը̄ հերակլեսի, այլ՝ տանի կենաց՝ որ̄ չարաբաստ ընկերի. և երբ մեռանի, փոխի յաշխարհէ՝ և ոչ թէ փախչի:

'Ի յայտնի նաւակոծութեան խաղ՝ թեպէտ և հասարակաց է վտանգն, գործք առն արիականի երևին այլազգ: Արտասուաւ զանձն և զընկերս, և'ի մրրկի անդ սիրտ նորա է անվրդով: Ցաւ է նմա, զի ոչ զօրէ ցուցանել զիւր զօրութիւն. բայց հաստատուն ցուցանել զիւր արիութիւն: Տեսանէ զմահ անահ. զի միշտ յառաջատես էր նորա. և յընկղմիլ անդ՝ չգիտեմ ալիք զնա ընկլուզանեն, թէ ինքն զալիս:

Բայց 'ի լինել վտանգին հանդիտակշիռ՝ հաւասար զօրութ̄, երբ զպատանւոյն մանլիոսի ընդդէմ գաղղիացւոյն, և երբ զկուինտոսի կոսսոսին ը̄-դէմ սպանիացւոյն, յառաջ քան զմարտն հայի արին՝ ոչ 'ի ցաւ մահուն, այլ 'ի վայելչականութին. զի պատիժ է յոյժ թանկագին՝ կորուսանել զարիւն, և ստանալ մեծագրութիւն:

Արին ճիշդ է'ի սպառնալիս: Նախատագրութ̄ է թշնամւոյն՝ արհամարհել զանձն. նախատագրութ̄ է անձին՝ արհամարհել զթշնամին: Զի թէ անարգ է թշնամին՝ արժան է մերժել. և թէ զօրաւոր՝ չէ արժան անգոսնել: Զանձն դնէ յաղթականն՝ 'ի դնել զպարտեալն: Ուր առաւելու քաջութիւն, սպառնալիք են աւելորդք. ուր նուաղ է քաջութ̄, սպառնալիք են ծանակելիք. ուր հաւասար է քաջութիւն, յիրաւի է ակնածել մարտի և բախտի. զի միոյ է առօրեայ, և միւսն դաւաճան:

Յանդուգն արհամարհէ զպատուականութիւն. արին զինի. զի յանդուգն վստահ է 'ի փախուստ, և արին 'ի մարտ:

Յորժամ աղէքսանդր զէն առնոյր զանձամբ, դողայր գլխովին. այլ յետ զգենլոյ՝ դողացուցանէր զամենեսին: Արծարծանի սիրտ ընդ զրահիւք. և վահանն պաշտպանէ իւրում պաշտպանողի:

Ասասցէ արին զասացեալն յումեմնէ առ քսերքսես: Կարողացաւ թագաւոր անցանել հետի ընդ ծով. և խորտակել զնաւս նորա. բայց ոչ կարէ ... -ութ-եան.

ՈՒՍԱՐԷՆ, ՔԱՆ ԱՌ ՅԻՇԱՏԱԿ ՔԵՐԹՈՂԱՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ ԸՆԹԵՐՑԻ։
( Յանձնարարեցեն 'ի կարգիս օրինակք ապարատայ-
ւոց· զի յօրինակս շատ է հայել 'ի գաղափարն ։ )
'Ի ձայն եղջեր փողոյ՝ շունք որսականք հաչեն.
այլ շունք՝ որ առ տնին, կաղկանձեն ։ Նոյնպէս
'ի հնչել մարտագրգիռ փողոյ, արին խայտայ, և
վատասիրտն սասանի. նորա դէմք՝ զուարթ են և
աշխոյժ. սորայս՝ դժգոյն և կիսակենդան ։ Մի-
ումն թուի օր հարսանեաց. միւսումն՝ հանդէս
յուղարկաւորութեան ։

Որպէս յամր է արին 'ի խորհրդածել, նոյնպէս
երագ է 'ի կատարել. զի չիք անմտութիւն մեծ՝ քան
զգնել 'ի վտանգի կենաց առանց նախագէտ պատ-
ճառի. և չիք վտանգ մեծ քան զգիմագրաւել
ջերմ առթի՝ սանձատարոյց սրտիւ ։

Մտանէ արին յասպարէզ, և թողու արտաքոյ
զա՟մ երկիւղ ։ Եւ ո՞ խնայեսցէ յայնպիսւոյն մ՟ր.
որոյ նուիրեալ զիւր կեանս իւրոց հայրենեաց՝
մատուցանէ յայն հանդէս որպէս 'ի զոհարան զոհ
ինչ, որ ոչ ևս է իւր. բայց կամի թէ թանգագնոյ
լիցի այնմ՝ որ իշխեսցէ զոհել զայն ։

Ախորժէ արին՝ թէ տեսօղք կայցեն 'ի զննին,
ոչ ո՟մ գովասանօղք առաքինուն, այլ՝ ո՟մ վկայք
ճշմարտութեն ։ Ոչինչ ցաւեաց երից հարիւրոց
սպարտացւոց այն՝ զի հանդերձեալ էին պատե-
րազմիլ ընդ երեսուն բիւրուց պարսից, այլ այն
միայն՝ զի չունէին 'ի զննին տեսօղս անաչառս. վ՟յ
և ասէին. ԱՅՆՈՒԱՔ ԷՐՆ ԽԱՌՆԵԱՅ՝ ՈՐՈՒՔ ՊԱՏՄԵՍՑԻՆ ԱՆՑՍ ։
Երկուանալի է գովեսան՝ որ կախեալ կայ զբե-
րանոյ ոխերիմ գովչաց ։ Բայց յորժամ չունիցի
արին տեսօղս զիւրև, նա ինքն է իւր տեսօղ՝ և
ատեան. զի նա ինքն է հանդիսադիր և գովիչ
իւրոց քաջութեանց ։

'Ի մ՟ր յարձակի արին մեծաւ բորբոքմամբ. բայց
խաղաղական մտօք ։ Հուր սրտին ջեռուցանէ ըղ-
կուրծս, այլ ոչ ծխանէ զմիտս ։ Որ յաղթական է
իւրոց կրից, կարգադիր է իւրոց գործոց. զոր
օրինակ անվեհեր է 'ի փորձ մարտի, նոյնո՟մ 'ի բուն
պա՟տզմի ոչինչ աւելի խռովի՝ քան 'ի փորձ մարտի ։
Եթէ

Եթէ բախտն զհետ վարի իւրոյ զօրուն, նա ինքն եւս զհետ վարի իւրոյ բախտի: Ոչ կորուսանէ զգիտողութիւն, եւ ոչ խնայէ 'ի հարուածս: 'Ի ճիգն մտանէ միանգամայն սրով եւ փաշանաւ, 'ի պաշտպանութիւն եւ 'ի մխառաղութիւն: Եթէ յաղթէ նա թշնամւոյ իւրում՝ զօրութբ, յաղթէ եւ անձին՝ գթասիրութբ: Ոչ յոխորտանայ առ այն՝ որ պարտութիւն խոստովանի. անձին սեպհականէ զյաղթութն, եւ նմ շնորհէ զկեանս: Թշնամին ոչ եւս է իւր թշնամի, այլ կոթող կենդանի՝ իւրոյ յաղթանակի: Բայց եթէ բախտն՝ որ յոլովակի արխուն է թշնամի՝ մտանէ զնա թշնամւոյ, նա ոչ տայ տեղի եւ ոչ դադարէ:

(82). Նիսոս ցորչափ ծիրանի ունէր 'ի հերս, ոչ պարտիւր. եւ որին՝ ցորչափ ծիրանի է յերակս նր, չառնէ ինչ գործ նկուն եւ անարգ: Չդողայ, չկորանայ, չփախչի: Առաւել ընտրէ քայլ մի յառաջ մահու պատահել, քան քայլ մի ետ կրունկն՝ ողջութե ողջունել: 'Ի խորտակիլ զինուց, յանկանիլ սուսերի, չանկանի նորա սիրտ. ամ մարմնով զինի ընդդէմ:

'Ի պատերազմին որ ընդ դարեհի՝ յորժամ փախստեայ գնային պարսիկք յերեսաց աթենացւոց մինչեւ 'ի նաւս իսկ իւրեանց. կինեգիրի (աթենացւոյ քաջ զօրականի) զհետ մտեալ նոցա՝ կասեցոյց զմի 'ի նաւուց փախստէից՝ զօրութբ աջոյ իւրոյ, իբրեւ հատին զաջն, կասեցոյց ձախոյ ձեռամբ. իբրեւ հատին զձախն՝ կասեցոյց ատամամբք, եւ չեթող շարժիլ: Որ ոչ հաւատայ 'ի բուռն զօրութի նաւակալ ձկան՝ յարգելուլ զնաւս, հայեսցի 'ի կինեգիր: Բուռն է արիականին զօրութի քան զնաւակալ ձկան:

Հաւակ ուրեմն 'ի սպառել արեան՝ յորժամ մեռանիցի վայելչական իրաց ազգաւ՝ եւ մծ հայրենեաց, որում եւեթ ընձեռայր, ոչ մորմոքի, ոչ յոգւոց հանէ, այլ խնդայ եւ ուրախ լինի յանձին. մխիթարէ զմխիթարիչս. հայի անարատ՝ յարտասուս բարեկամաց, եւ յանդիմանէ զարտօսր նց: Յայնժամ արդոյ համարի զիւր կեանս, յորժամ կորուսանէ.

նէ. և ընդ Եպամինոնդայ ասէ. այսոր վերոյին ծնո_
նիմ. ընդ այսպէս Քրիստոնէիմ:

Յայս սահման եհաս արիութի հեթանոսաց բարոյական իմաստասիրութիւ, որք ոչն հաւատային՝ թէ յետ թշուառ կենացս՝ կան լաւագոյն կեանք: Իսկ զիա՞րդ լինիցի արիութի քաջազուն քրիստոնէի. որոյ հայեցեալ 'ի կեանսն յաւիտենից աչօք հաւատոյ՝ մեռանի վասն հաւատոյ: Արաջի արա նմա զնմ զտանջանս՝ զորս բանաւորական բարբարոսաւն մեքենայել ջանացաւ մարմնոյ՝ 'ի խորտակել զսիրտս: Աւ 'ի չիմանալ զտանջանս՝ ձծապարգև հնար է նորա յոյսն: Դա՝ սաստկագոյն տանջանք լինէին նմա, թէ սակաւ տանջիւր:

Զչարչարութիւնսն զնա ոչ ցաւագին խոցուածք Կատոնի, և ոչ քաղցր թոյն Սոկրատայ. (83). զի չէ նմ փոյթ. թէ մոլախնդաւ մոյց մահ, կմ ը. արեան եյցէն կեանք. միայն թէ հոգին աստ 'ի ասրինս մի մնացէ: Ոչ ահ արկանէ 'ի նա երկար աքնուն հաւեդուղանի յածելիս, քան զոյլ ինչ քուն Սենեկայ 'ի բաղանիս (84). զի անխուիր է յաչս նր՝ թէ փակեալ կմ բաց իցեն պատուհանք մարմնեղէն օթեւանին. միայն թէ 'ի լաւ եւս օթեւանս փոխեսցի հոգի:

Ապառնացիր նմ մահ երադահաս. քաղցր ապանալիք է նմ՝ վաղահաս երջանկութի: Հաշեցն ասակաւ սակաւ զնր կեանս. ոչ լինի հասանել երբեք անագան 'ի բարի ինչ անանց: Ցոյց նմ զահաւոր կոհակս՝ մրրկալից ծովու. նաւահանգստին՝ որում անձկայ, նաւակոծութիւն է առաջնորդ: Ցոյց նմ զզառիթափ ժայռս, և զկործանական վիհս. առ եղանել՝ ուր գեմ եդեալ է, վիհքն են նմ վերելք: Երևեցո նմ զաղէկալ ժանիս գազանաց, լաւ համարեսցի զայն չնչաւոր շիրիմ՝ քքչ զհոյակապ դամբարանս: Արկ զնա 'ի լափլիզող բոց բաբելոնեան հնոցի, եւցէ անմահ փիւնիկ 'ի նորահրաշ կեանս: Ջհուսկն տացից. այնչափ գերագոյն է արիուն քրիստոնէական քան զբարոյական, որչափ ձծայինք՝ քան զմարդկայինս: Եւ զնոյն աւեմ զայլ ձմ առաքինութեն (85):

## ԳԼ. Ձ։

### Յաղագս յանդգնութեան, և վեհերոտութեան։

Յանդգնութիւն, և վեհերոտութիւն են ծայրական մոլութիւնք ցասմնականին. նա՛ տարապայման բերմամբ 'ի վտանգս, և սա՛ տարապայման փախստեամբ 'ի վտանգից։

Երկաքանչիւրոցն՝ այնպէս խանգարեալ է իմաստ 'ի թիւր ունակութեն, մինչև չհայիլ նոցա, թէ յոր վտանգս. և վա՟ որոց պատճառաց, և որով օրինակաւ՝ մին ը՟ առաջ լինիցի, և միւսն փախչիցի։

Ոչ ինչ անասուն նմանագոյն մարդոյ՝ քան զկապիկն, բայց և չէք քան զնա տգեղագոյն։ Ոչ ինչ նման արիութ՟ քան զյանդգնութի. բայց որչափ բանաւոր է նա, այնչափ անբանական է սա։ Յանդուգնն՝ ը՟ առից արհամարհելի 'ի գիրս ընդզննութեանց, նմա նման է արիականին 'ի կերպարանս. այլ սիրտ նորա է ամենևին աննման։ Պատահէ նոցին վշտաց վտանգի. բայց արին չափէ զնա ընդ իւր զօրութիւն, և յանդուգնն ընդ իւր բորբոք.

Հռովմէական դատաւորք պատժէին զզօրականս կարի իմն յոխորտս՝ երակահատութ՟ աջոյ բազկի. և կարի յիրաւունս։ Զի որ՟ յանդգնութին յառաջ գայ բնաւորապ՟ 'ի կարի իմն եռանդնէ արեան 'ի թոքս, նոյնպէս պատիժն այն՝ էր ըն՟ դեղ նախատական՝ միանգամայն և առողջարար։

Նոյն բուռն բերումն մղէ զնա ընդ առաջ լինել մեծ ևս վտանգից՝ քան որոց ընդ առաջ ելանէ արին. և երբեմն այնպէս գահավէժ յաջողելով դիպուածոյն, մինչև թշնամիք քան զնա զօրագոյնք՝ ոչ որոշելով զճշմարիտն յառերևութէն, գնան փախստեայք, և խուժամուժ ամբոխն չորոշելով զյաջողեալ յանդգնութիւն՝ յառաքինական արիութէ, գովեն զնա մեծաձայն։

(86). Ծերունին Շիպիոն՝ մինչև էր ծերացեալ. երիտասարդական յանդգնութ՟ համարձակեցաւ վըտահանալ երկու միայն նաւօք՝ յերկուանալի բաղխումն

խուռն բազմամբոխ զօրուն սխփակայ. Թողէ՛ զհասարակաց փրկութեն կա՛մ զկործանումն 'ի վարանս երկուանալի դիպուածոյ, թէ կամ սխփակ 'ի շիպինէ կալանաւորեսցի, կամ շխպիոն 'ի սխփակայ սպանցի: Ելքն անակնկալ՝ արծարծեծոյց զմեւէ՛ ակնկալութեն: Գործն գովեցաւ յանմտոց. այլ անգոսնեցաւ յիմաստնոց: Եւ որ արարն՝ ուսաւ

յայնմ հետէ չառնել ինչ այնպիսի:

Բայց առած է հասարակաց, թէ յանդգուգն գործոց ելք՝ են 'ի ձեռս հասարակութե, և 'ի նախախնա այնմ որ արար: Զի որովհետև այնպիսին յառաջ ձեռն 'ի գործ առնէ՝ և ապա խորհի, 'ի գտանելն զանխորհ դժուարութի՝ չամաչէ ասել զայն ամօթալի բան, թէ ոչ խորհէի:

փոխան բիւր օրինակի՝ շատ լիցին կեպիոն ընդէմ կիմբրացւոց, և մինուխս ընդդէմ պենացւոց (87). որոց երկարանչիւրն անգոսնեալ զգանդաղանս իւրեանց խոհական խորհրդականաց, ընդ փոյթ առեին զկոտորած զօրու իւրեանց, և զվատանունութիւն

անձանց:

Զշարժին յանդգունք 'ի դժուարին ձեռնարկս վս համեստու, որ է հաստատուն և անփոփոխ վախճան արիութ՝ իբր փոքր արքն նաւորդաց. այլ՝ ոմն վս անսանոյին անմտածու, ոմն վս անափառութե, ոմն վս ատելութ առ թշնամին, ոմն վս ագահելոյ յաւարն, և ոմն վս վստահանալոյ յօգնութիւ: Արդ վս զի այս վախճանք են ներքունականք և այլայլականք, 'ի փոխել վախճանի փոխի և սիրտն: Շարժեալն յանմտածու, հայեցեալ ապա յանակնկալ դէմս մահու՝ զարհուրի: Շարժեալն 'ի սնափառու, իբրև տեղի տայ ընունայնամտութեն՝ խակութե վտանգին, սրտաբեկի: Շարժեալն յատելութէ, 'ի զօրանալ սիրոյ կենաց քան զատելութե թշնամւոյն՝ անարգաբար զայն խնդրէ: Շարժեալն յագահութ, 'ի նուաղանալ յուսոյ աւարին յերկիւղէ որոյն՝ զկենաց խորհի: Իսկ շարժեալն յապաւինութ, 'ի պակասիլ օգնութեց՝ լքանի սիրտն:

'ի մարտին հանդիսի՝ վարէ եղանակ անեղանակ:
(88). Խոյանայ ոմն զկոդրոս արքայ՝ անզէն 'ի վտ

պա-

սպառնալեաց. կմ՛ ատէ զկեանս արբոյ՝ զենու մա-ռի 'ի պղձնութի, և ոչ 'ի պաշտպանութի. բայց թէ դիպուածոյ դիպի ծանու, այլ ոչ պիտի նմ սաղա-ւարտ, բայց եթէ 'ի պարտակել զիւր դեղնուի. և ոչ փետուրք փողփողեալք, բայց եթէ առ երա-
դել զվախուան:

Օձուսկն ասացից. յամի է յեղափոխ և ինքն ինքեան անհաման. վայր մի՛ գլխավլին սրտեայ, և վայր մի՛ ան-սիրտ. վայր մի՛ քան զայր արուոր, և վայր մի՛ քան զկին կնատ. վայր մի՛ աՀեղասաստ, և վայր մի՛ յո-ղոք խոնարհեալ. ահարկու 'ի յարձակման, և երկ-չոտ 'ի փախստի. խրոխտ 'ի յաղթութի, լուծեալ լքեալ 'ի պարտութի: 'Ի յոխորտ խիզախմանց՝ անդէն անցանէ 'ի գործս անարժան. և 'ի յետին յանդգնութէ՝
'ի յետին երկչոտութի. զորմէ խօսիլ կայ մեզ առաջի:

Յանդգնութին է մոլութի առաւել վտանգաւոր. բայց վեհերոտութին կմ՛ երկչոտութին է մոլութի առա-ւել ամօթալի. զի նա դիմագրաւի աւելի քան
զարժանն, և սա խնայէ յոր չէր արժան:

Յամ մոլութիս յետնութին է առաւել ամօթալի՝ քան զաւելազանցութին, և դիւրագոյն է լինել երկչոտ՝ ուր պարտն էր վտանգիլ, քան վտանգա-
նալ՝ ուր պարտն էր երկնչել:

Վեհերոտն՝ 'ի վտանգի ոչ հայի 'ի պատուաւոր պարագայս, այլ միայն 'ի ցաւագինս. և միայն թէ զերծցի 'ի վտանգէ. թողու այլոց զպատիւն՝ և յինքն արկանէ զապահովութին: Որ ոչն կամի ըն-ծայել փառաց զաւանդն կենաց, հատուցէ բնութե զգլուխն՝ ամենեւեք բաղում ձասուց, այսօր զմի յատամանց. վաղիւ զմի յաչաց. յետ սակաւ միոյ զունչն. և 'ի վախճանի զկեանս իսկ. լեալ ամենեւին անարգ. և առ խորշելոյ 'ի միոյ մահուանէ՝ բիւրս
կրէ մահունս:

Բայց առաւել ևս ամօթալի է այս մոլութի այնմ,
որոյ յանձն առեալ է զզինուորական պատիւ:

Արք դրօշակաւորք են երկչոտք. զի փոխանակ արու-թե զդիտուն յանձին կալեալ, զգուշագոյն հային 'ի վտանգ կենաց. բայց զինուորի՝ որ փողոյ սակ-արկեաց զվտանգ մահու, փախուստն է ամօթ նա-
խա-

խաստանաց։ Ոչ ոք 'ի զինուորաց այնպէս արժանի է կենաց, որ͞պ որ արհամարհէ զկեանս. և ոչ ոք այնպէս անարժան է կենաց, որպէս որ երկնչի 'ի մահուանէ։

Օրէնք էին մակեդոնացւոց. զի զինուոր՝ որոյ չէր սպանեալ զոք 'ի թշնամեաց, փոխան զինուորական կամարի՝ կրէր չուան կախաղանի։ Միապէս մարդասպան համարէր՝ որ բառնայր զկեանս միոյ 'ի քաղաքացւոց խեռութ͞բ, և որ շնորհէր զկեանս հասարակաց թշնամւոյ՝ վեհերոտութ͞բ։

Անանուն էր առ յոյնս զօրական, որոյ էր վահան աննշան՝ և ունէր անշաղախ յարենէ թշնամւոյ։ բայց ամենեւին վատանուն, որ կորուսանէր զսուրն և զվահան։

Սպարտացիք աքսորեցին զարքիլոքոս զեւրեանց քաղաքացի, զի 'ի բանաստեղծութեան նորա գտաւ գրեալ այս տուն բանի. լաւ է ընկենուլ զվահան՝ քան մեռանել։ Լինել նորա բանաստեղծ՝ ապրեցոյց զնա 'ի մահուանէ. այլ ոչ յաքսորանաց։ Անարժան վարկան զբանաստեղծն՝ սպարտիոյ, վ͞ս բանիցն՝ որ չէին արժանի սպարտացւոյ։ Չէին նմ͞ յանցանք 'ի գործ դնել զեւր ասացեալն. բայց յանցանք եղեն գրել նր͞ զայն։

'Ի մարտին պահու՝ արին ը͞ն մօտելոյ վտանգին՝ արագէ, և վեհերոտն ը͞ն մօտելոյ վտանգին յամր գնայ՝ զի նորայն է շարժումն բնական, և սորայս շարժումն բռնական. այն է կամայական, և այս ակամայ կամօք։

Վեհերոտն գովէ հրապարակաւ զարիս, սրտապնդէ զընկերս. զի երևեսցի քաջասիրտ։ Տայ սիրտ՝ զոր ինքն ոչ ունի։ Ըստ սակաւ անձրև կոչէ, և ինքն կայ անթացիկ։

Արխադոտոն այր անձնեայ՝ բայց փոքրոգի, միշտ շողշողուն զինուք զարդարեալ, որոյ և զոյգք էին հանապազ զպատերազմաց և զկռուարածից, էր համարեալ մի 'ի քաջամարտիկ աթենացւոց. բայց 'ի լսել զբարբառ փողոյ, եկն եւ 'ի յայս՝ անսուսեր, յեցեալ 'ի ցուպ, զմի 'ի սրունից պատատեալ. և գնայր կաղ 'ի կաղ. զոր փոկինի ծաղր արարեալ՝ եթող

եթող առակ վատասրտաց. տե՛ս. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹ. ԳՆՈՅ 'Ի ԽՈՂ:

Յանդուգնն յայնժամ սկսանի մեծ համարել ըզկեանս, յորժամ մօտ է 'ի կորուսանել զայն. զի 'ի նմ̃ ընդ կենացն շիջանին ամ̃ իւր բարիք: Բայց արին՝ յորոյ 'ի սիրտն կան մեծ ևս և անանց բարիք, ոչ ցաւի ը̃ կորուստ իւրացն՝ որոց հնար է թէ բարձցին 'ի նմանէ. զի ոչ իւր համարի զն̃ն:

Բայց և այնպէս՝ վեհերոտն ջանայ բաժանորդ լինել փառաց. նա՝ զօտարի ձգանց պարծանս անձին սեպհականէ:

Եղև այս մոլութի ոչ միայն զինուորաց սովորականաց, այլև կայսերաց յետնելոց 'ի հնոց նր̃՝ զորոյ առին զանուն (89): Դատէին 'ի պաղպաջուն, և առաքէին 'ի բանակն զիւրեանց պատուիրակս. Զօրագլուխք յաղթէին յասիա, և նոքա յաղթական հանդիսանային 'ի հռոմ:

Կեսարս կայսր՝ յետ յաղթական հանդիսի սերմանեաց զհատս զիւրոյ դափնեայ պսակի. զի 'ի դեղարոյս դափնեաց այնր անտառի՝ պսակեսցին իւր յաջորդք. ուսեալք 'ի նմանէ յաղթել յառաջ քան զյաղթանակել. և յաղթանակել՝ վասն զի յաղթեցին: Բայց 'ի սակաւ ամս չորացան համայն ազատահմի այն դափնիք. և 'ի վատանունութի ամ̃ն՝ հուսկ յետինն եղև ներոն՝ պարագլուխն վեհերոտաց:

Միայն օգոստոս ցուցաւ արժանի որդեգրական անուանն կեսարու. բայց և սա 'ի յաղթութե̃ն մեծի ընդդէմ պոմպէի առ մեղեաւ, էառ դափնեայ պսակ անթացիկ յիւրոց քրտանց: Կշտամբեցաւ թէ այն ինչ անկունն ագրիպպաս արիաբար յաղթէր, օգոստոս ը̃ գինի մահճ̃ ննջէր և խորդայր. և 'ի բանալ զկկոցն̃ աչս հայիլ յագրիպպաս, անդէն աւետիս առաւ նմա յաղթութ̃ն:

Զհուսկն ասացից. մեծ ևս երախտիս արարեալ էր կեսարուն առ իւր հայրենիս, եթէ թողեալ էր ուսումնարան՝ գլխոց արժանաւորաց դափնեայ պսակի, քան զսերմնարան դափնեայ պսակաց՝ որոց պիտէին գլուխք (90):

Բա-

Բարոյական իմաստասիրութիւն

# ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## Յաղագս բարեխառնութեան, և ծայրից նր:

### ԳԼ. Ա.

### Թէ զի՞նչ իցէ բարեխառնութիւն:

Բարեխառնութիւն է առաքինութիւն ցանկականին. որ չափաւորէ զկարի իմն բնութեան, և զկարի իմն ցանկութեան մարմնական հաճոյից: Մարդ ոչ է քար՝ և ոչ անասուն. ոչ է բոլորովին անզգայ, և ոչ գլխովին զգայուն:

Կամք են բնութեան պահել մարդոյ զմարմին. զի և մարմինն ծառայեսցէ հոգւոյ: Մարմինն ախորժէ զհաճոյս. հոգին սիրէ զզգաստութիւն: Անբարեխառն նեղէ զհոգի աւելորդ կերակրովք: Թմբրեալն՝ լքեալ թողու զմարմինն աւելորդ զգաստութեամբ: Բարեխառն դատ առնէ 'ի մէջ մարմնոյ և հոգւոյ, գտեալ մէջ՝ որ ոչ մարմնոյ պակասին կենսական զօրութիւնք, և ոչ հոգին պակասի 'ի բանաւոր գործողութեանց:

Բայց քանզի բարեխառնութիւն երկոցունց ձեռաց աջողակ՝ պատերազմել ունի միանգամայն ընդ երկուս հրէշս՝ որ սաստի և անտի, իբր Հերակլեան ընդ խեցգետնի և ընդ հիդրայի. որոց առաջինն է բոլորովին ցուրտ և դանդաղ. և երկրորդն բոլորովին որկորեալ և բոցային, հարկիւ մեծ է նորա ճիգն 'ի յաղթել հիդրայի՝ քան խեցգետնի. ցանկութեան՝ քան բնութեան (91):

Այս գլխաւոր գործ բարեխառնութեան է՝ չափաւորել զբաղձանս հաճոյական առարկայից. զի մի եկաւորութիւն նոցա ծնցի աւելազանց հաճութիւն, և ոչ հեռաւորութիւն նոցա՝ կարի իմն ցաւ:

'Ի նորա ձեռս է կշիռ արտասուաց և ծաղու. հե-

ծու-

ծուն և հրճուանաց, հաճուն և ցաւոց։ Իսկ ոմ՟ արխուէն առնէ զվստահութիւն երկեղուտ՝ և զերկիւղն վստահական, նոյնպէս բարեխառնութիւն արդար հաւասարակշռութ՟ առնէ զտրտմութիւն հաճոյական, և զհաճոյն՝ տրտմական, 'ի հաւասարեցանել զերկաքանչիւրն 'ի հաւասարուն համեստական։

Բայց արդարև առաւել դժուարին է չափաւորել զբերկրութիւն մերձակայ առարկայի՝ քան զցաւ հեռաւոր առարկայի։ Վ՟ զի բնութիւն սիրող գոլով հաճոյից՝ և ատեցող ցաւոց, ընդ ցաւոց հեռաւոր առարկայի պատերազմին առաքինութիւն և բնութիւն, բայց ընդ հաճոյս մերձակայ առարկայի պատերազմի միայն առաքինութիւնն. և դժուարագոյն ձեռնարկ է յաղթել երկուց թշնամեաց, քան միոյ միայնոյ։

Թող՝ զի յառարկայն հեռաւոր՝ միայն երևակայութ՟ լինի վայելել, բայց 'ի մերձակայն զգայութ՟։ Իսկ զի երևակայութիւնն է կարողութիւն առաւել հոգեղէն և նուազ, և զգայութիւնն՝ առաւել մարմնեղէն և սաստիկ, վ՟ նուազ շարժէ առարկայն երևակայելի՝ քան զզգալի։ Ուստի և իմաստաբար ասացաւ յառակս. ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ՝ ԱՉԱՑ [illegible] ԶՍԷՐ ԲԺՇԿԷ։ Յաւէտ ճշմարիտ լինէր առակս, եթէ ամ՟ մարդկան խառնուած էր միօրինակ։

Ուր սևամաղձն տիրէ, երևակայութիւն զօրագոյն է քան զզգայութ՟, այնչափ առաւելութ՟՝ մինչև այնպիսիք յոլովակի ը՟ անձանց խօսին՝ քան ընդ այլոց. և մօտ գոլով մեզ անձամբ՝ դեգերին մօտք 'ի հեռաստան, խորս զվերնոտս և զվայրախօսս։

Յայսպիսի բնաւորութեան՝ վ՟ լինելոյ երևակայութեան առաւել սուր և [illegible], մեծագոյն ցաւ ազդէ առարկայն հեռաւոր՝ քան մօտաւորն զվայելս. վ՟զի երևակայութիւնն ձևացուցանէ զայն, որպէս և ըղձանայ. և զգայութիւնն չգտանէ զնա, որպէս երևակայէր։

Յանցաւոր իրս՝ ամ՟ կատարել՟ ունի զիւր պակասուն, բայց յառարկայն հեռաւոր՝ երևակայութիւն հայի 'ի կատարելութիւն ուրոյն 'ի պակասութեանց, և առաւել ըղձանայ այնմ. իսկ յառարկայն մերձակայ՝

կայ՝ զգայութիւնն աւելի գտանէ պակասութիւնս քան կատարելութիւնս, և անդէն խորշի. և 'ի փոխել զկարծիս՝ փոխէ և զցանկութիւնն:

Գայլ սովեալ՝ թէպէտև որս 'ի ձեռին ունիցի, եթէ դէպ լիցի նմա դարձուցանել զաչս յայլ որս հեռաւոր, թողու զոր ունի՝ և զհետ պնդի այնմ զոր չունի. վասն զի երևակայութիւն նորա է սուր, և զգայութիւնն բութ:

Այսպիսի էր Թեսէոս. որ միշտ զակատեալ 'ի գեղ օտարոտի, յառաջ քան զամուսնանալ՝ ելու-զակարար ստանայր աներս ապանութեամբ՝ և կանայս յափշտակութբ. առ վրնջելոյ 'ի տիկնայս՝ խռովէր զայլոց թագաւորութիւնս. և խակնխակ յափրացեալ՝ վանէր զնոսա յիւրմէ թփրութէ: 'Ի բաց արձակեաց զանսքսան՝ 'ի յափշտակել զպերիբէա. մերժեաց զպերիբէա՝ վն յոպպեայ. և զսա՝ վն անտիոպեայ. զանտիոպէ՝ վն արիանեայ. զարիանէ՝ վն եգղեայ. և զեգղէ վասն փեդրեայ. զայն զկապարձս զատարկեաց ցանկութեն, զի որսացի նմ միշտ նոր որս (92). Ոչինչ հանդոյց հեմեննեան կարօղ եղև այնպէս պրկել զնր սևամաղձային սէր, որ ոչ թուչիցի: Աչք խակ և խակ յագենային, այլ երևակայութիւնն ոչ երբէք:

Այո՝ ոչ բարուք խոստեցաւ քրիսիպպոս, թէ մարդկային կիրք ոչ այլ ինչ են, բայց կարծիք. որպէս տեսցի յիւրում տեղւոջ: Բայց և այնպէս ճշմարիտ է՝ թէ սաստիկ ըմբռնմունք զարթուցանեն զսաստիկ կիրս. և կարծիք սևամաղձոտաց՝ են սաստիկ ըմբռնմունք:

Այս բարեխառնութեն յուղղել անդ զարտուղուն կարծեաց՝ և 'ի չափաւորել զանյագուն զգայուն, վերածէ իւր արդար կշռով զհաճոյս տացուն և զանհաճոն պակասուն 'ի միջասահմանութեն բանի:

## ԳԼ. Բ.

### Թէ որպիսի իցէ բարեխառնն.

Բարեխառնութիւնն է արեգակն ինչ 'ի կշռի ընդ մէջ ամառնային արևադարձի և խոր ձմերան:

Գոտի ինչ բարեխառն՝ ընդ մէջ սառնամանեաց և տապոյ ։ Առաքինութի ինչ միջասահման՝ ը մէջ ցոփ թմրութե, և հպարտ անբարեխառնութե ։

Այս խառնուած բարեխառնին է ընդ ցուրտ և ը ջերմ, ը մաղասային և ը արիւնային. հասակ ինչ՝ ը եռանդն մանկական և ը սառոյց ծերութե ։

Բարք նր են միշտ բարեկարգ. սիրան միշտ զուգական. երեսքն միշտ միօրինակ, յոր ոչ թխալէ բարկութիւն, և ոչ փայլատակէ ծաղր. այլ երբե 'ի գագաթ ոլիմպիական լերին՝ քաղցրութեամբ փողփողէ անխռով պարզութիւն ։

Անմիտ եղև խմաստ առոյինկեանց, թէ կիրք չմտանեն 'ի սիրտ իմաստնոց ։ Վերադասէին այսուիկ զիմաստունս իւրեանց քան զդիս իւրեանց ։ Հարկ լինէր իմաստնոյ՝ առ ապստրել յիւրոց կրծոց զկիրս, ապստրել զսիրտ իւր՝ որ է նր կայան, ո՞ղ լուծցես ։ Չէ իմաստութիւն չունել զկիրս, այլ գիտել քաջ վարել զնոսա՝ որպէս զձիս, զզէնս և զինչս ։ Չէն առաքինութիւն. բայց հնար է շրջել զնոսա յառաքինութիւն, 'ի տիրել նոցա, և 'ի չթողացուցանել թէ տիրեսցեն նոքա ։

Զանկրաւոյ առէն՝ թէ չեցոյց այլայլուն գիմաց յաւուր հարսանեաց՝ և յաւուր յորում մեռաւ ։ Եւ չէն ինչ զարմանք. զի բարեխառն գոլով, չէր խէին նմա՝ ոչ հաճոյք կենաց, և ոչ ցաւ մահու. վասն այնորիկ առ հարսնն և առ մահ՝ նոյն եղեն նր գէմք, որպէս էին առ իւր բարեկամս ։

ՈՉ և ԿԼԻՄԱՅՔ ԳԱՒԱՌԱՑ և գիրք երկնային կամա_րի՝ տրամագրեն զէնթակայն առ այս առաքինութի ։ Ցակուծս գանդէսի ծնանին ժողովուրդք այնպէս ժուժկալք, մինչև ոընդունք՝ են նոցա փոխանակ բերանոյ, և կերակուր՝ հատ ծաղկանց ։ Եւ ընդ այրեցածաւ ծնանին ժողովուրդք այնպէս շատակերք, որ խածոզեն զորովայն մարմնովք մարդկան ։ Նոքա չեն մարդիկ, այլ գետնաուծք. և սոքա գայլք կատաղեք, և ոչ մարդիկ ։

Են և ժողովուրդք յամերիկա՝ այնպէս թմբեալք, որ առ ամուսնացուցանել զնն՝ հրաւէր են հարուածք գանից ։ Եւ այլք՝ այնպէս անասնարա_

րոյք, որ 'ի շրջիլ 'ի դաշտի՝ որպէս անդեայք մա֊ տակախաղք կին ունին զմարս, և որդի՝ զեղբարս. մինչև առաջնոցն երևիլ ծնունդ քարանց, և յետ֊ նոցն՝ գազանաց ։

Ապա մեծ երախայք են երկնից՝ ծնանիլ ընդ քաղցր երկնիւք (93) ։ Բարեխառն գաւառք յօ֊ դեն բարեխառն մարմինս. զի մարմինք զհետ եր֊ թան խառնուածոյ լուսաւորաց. և օդիք՝ յոլո֊ վակի խառնուածոյ մարմնոց.

Կարի իմն բարկայօղք՝ են և կարի անբարեխառն, ասէր Պիւթագորաս. ոչ զի անբարեխառնութեն է ծնունդ բարկուէ, այլ զի ոչ բարուք նուաճէ զարտաքին զգայութիւնս, որ ոչն նուաճեաց զնե֊ րքինս ։ Վասն որք առաւել գազանաբարոյք՝ են և առաւել խղաակրք. զի 'ի նոյն սկզբնէ ծնանին՝ յետին գազանութիւնն առ այլս, և յետին մեղ֊ կութիւնն առ իւրական անձն ։

Բայց առաւել բարեխառն են այնք, որ 'ի [illegible] արարին ունակութիւն, առ Արիստոտէլ ։ Ունակութիւնն չար՝ որպէս լուար, հանդերձ է. զոր յամ ոք կարող է զգենուլ՝ երբ կամի. բայց իբրև զգենու, ոչ ևս է կարող՝ երբ կամի՝ դիւրաւ մերկա֊ նալ զայն 'ի բաց. և 'ի վ՟ր յամի զունակութիւն անբարե֊ խառնութ., որք զյամ ունակուի ընդակից է մարմնոյ։ Այլ մանուկն սկիզբն առնէ լինել բարեխառն՝ յորժամ սկսանի ամաչել, յորմէ արժան է ամա֊ չել ։ Շառագունութիւն արշալուսի յուսացու֊ ցանէ, թէ օրն պարզ լինիցի. և ամօթխածութի մաքուր մանկութեան յուսացուցանէ՝ թէ հաւասար լիցին նորա վարք. զի որ ամաչէ առաջի այլոց, ամաչեսցէ յանձնէ իւր՝ յորժամ միայն իցէ. և ամօթն պահեսցէ զնա յամօթալի գործոց ։

(94)· Քիրոնն չէր քաջազն, և էր ուսուցիչ քաջա֊ զանց. ամօթխածութիւն չէ Ճշմարիտ առաքինութի, և է ուսուցիչ առաքինութեանց ։ Ճշմարիտ է՝ թէ ա֊ մօթխածութիւն է երկիւղ ինչ, և յամ երկիւղ՝ թուի թէ նկուն առնէ զսիրտ պատերազմողաց ։ Բայց արժան է նմանող լինել Քիրոնի, որ միանգամայն ուսու֊ ցանէր քաջազանց չերկնչել 'ի յարձակմանէ առիւ֊ ծուց ։

ծուց, և երկնչել յամօթոյ անարգ գործոց. զի որ կորուսանէ զամօթ, այլ ոչ ևս ունի պատիւ:

## ԳԼ. Գ:

### ԹԷ ՈՅՔ ԻՑԵՆ ԱՌԱՐԿԱՅՔ ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԵԱՆ:

Արիութիւնն չէ զա՟մ ցաւագին առարկայիւք. և բարեխառնութիւնն չէ զա՟մ բերկրական առարկայիւք, որպէս և լուար: Մարդն է եռագլխեան կենդանի երեքորկորեայ. բանիւ, կարծեօք, և արտաքին զգայութ՟բ: Եւ իւրաքանչիւրում 'ի սմէ ես տեսչութիւնն զիւր համեմատ կերակուրս, համեմատեալ՝ (որպէս առողջութիւն է նորա յա՟մ տեսչութիւնս իւր) զարմանաւոր հաճոյիւք ԻՄԱՆԱԼԵՕՔ, ԿԱՄ ԶԳԱԼԵՕՔ, և ԿԱՄ ՄԻՋԱԿԱՅՆՈՎՔ:

ՄԻՏՔ որպէս բանաւոր՝ անյագ են առ գիտութ՟ն. ԿԱՐԾԻՔ՝ անյագ են առ գանձս և առ պատիւ. արտաքին ԶԳԱՅՈՒԹԻՒՆՔ՝ անյագ են առ մարմնական հաճոյս: Հաճոյք մտաց՝ հաւասարորդ են ը՟ հրեշտակաց. վ՟յ և հրեշտակայինք: Հաճոյք կարծեաց՝ սեպհական են մարդոյ. վ՟յ և մարդկայինք: Հաճոյք արտաքին զգայութեանց՝ հաւորորդ են ը՟ անասնոց. վ՟յ և անասնայինք. և որչափ առաւել ազնուանիք, այնչափ առաւել անարգք:

Այս բարեխառնութիւնն ոչ չափաւորէ զհաճոյս մտաց. որոյ աւելազանցութիւնն՝ կոչի ընդվայրաքննութիւն, զոր չափաւորէ խոհեմութիւնն: Ոչ չափաւորէ և զհաճոյս կարծեաց. զի չափաւորին սոքա առատաձեռնութ՟բ, և հանդարտութ՟բ:

Այլ չափաւորէ նա զՀԱՃՈՅՍ ԱՐՏԱՔԻՆ ԶԳԱՅՈՒԹԵԱՆ, որ առաւելն է քան զա՟մ կարողութիւն մարդկային. որոյ աւելազանցութիւն է անբարեխառնութիւն. և ընդդէմ այսց հաճոյից մարտ է նր՟ հանապազ:

Նա՝ վ՟ն զի յարտաքին զգայութեանց ՏԵՍԻՆ, ԼՍԻՆ, և ՀՈՏՈՏԵԼԻՔ՝ են փոքր մի հոգեղինագոյնք, վասն որոյ և ազնուագոյնք, արբանեկելով բանաւոր գործողութեանց, ակնն աստեղաբաշխութ՟ն, ականջն՝ երաժշտութ՟ն, և հոտոտելիք՝ բնազննութ՟ն 'ի ճանաչումն բժշկական խոտոց, բարեխառնութ՟ն չափաւորէ մի-

միայն զհաճոյս երկուց այնց ստորին զգայու՟ց , որ արբանեկեն անարգագոյն և գլխովին անասնային գործողութ՟ց , ճաշակելեաց և հոտոտելեաց :

Տեսչութիւնն չէ այնպէս անյառաջատես , որ 'ի պահել զտեսակս իւրոց արարածոց՝ կորուսանել կամիցի զանհատս , կամ 'ի պահել զանհատս՝ կորուսանել կամիցի զտեսակս :

Ապա 'ի տալ իւրում մարդկան միայնոյ զբան՝ վասն դերապանծ գործողու՟ց , ետ առ հասարակ մարդկան և անասնոց զայն երկու անարգագոյն զգայութիս ճաշակելեաց և հոտոտելեաց . զառաջինն՝ 'ի պահել զկեանս անհատի՝ կերակրովք , և զերկ՟ն՝ զի անհատն պահեսցէ զտեսակ իւր զաւակօք :

Արդ՝ վ՟ զի անասունք չունին այլ վախճան՝ բայց զկեանս և զզաւակ , տեսչութիւնն առատաձեռնեաց 'ի նս՟ զհեշտական հաճոյս երկոցունց զգայութեցս , բայց չետ զբերկրութիւն այլոց երից զգայութեց ազնուագունից . բայց եթէ ը՟ պատահման . ը՟ որում երկոցուն նց՟ արբանեկեն լրտեսութ՟ք :

Ոչ բերկրին անասունք համեմատութ՟ գունոց , և ոչ ներդաշնակութ՟ ձայնից . և ոչ անուշութ՟ հոտոց : Նա՝ ոմանք մեռանին 'ի հոտոյ վարդից . և բազումք կաղկանձեն առ հնչիւն երաժշտական նուագաց . և չէ ոք 'ի նց՟է հաճ՟ ը՟ նկար՝ ը՟ որում նկար : Վ՟ զի այս հաճութի ենթադրէ զպատրանս երևակայութ՟, թէ կեղծն իցէ ճշմարիտ . և զիրագէտ լինելն հետազօտ մտաց , թէ չէ ճշմարիտ , այլ՝ կեղծ . յոր իրագիտութիւն է հաստատեալ հաճութին ը՟ նկար . որում անասունք են անծանօթք . (95) . Ապա եթէ անասունք ոմանք դիմեցին 'ի պատիր խաղող զևքսեայ , և 'ի դրասան նկարեալ 'ի պրաքսիտեղեայ , այս՝ խաբեցաւ նց՟ երևակայութի , այլ ոչ իրագէտ եղեն խաբէութե՟ իւրեանց :

Այնք գոյնք ոչ հաճոյացան նց՟ . բայց եթէ ըստ որում առաջի անէին առարկայս համեմատս ըղգայութեան իւրեանց : Չեղև այն հաճութիւն ը՟ նկարն , այլ ընդ առարկայն . և ոչ առարկայն հանց ըստ կոպար երկուց զգայութեցն անասնոյնոց՝ ճաշակելեաց և հոտոտելեաց :

Ապա

Այս բարեխառնութիւն՝ ոչ ուղղէ տիրաբար զե-
րեսին զայն ազնուական զգայութիւ՝ ըստ այնմ որ
արբանեկին իմացական գործողութեց. որոց աւե-
լադանցութ չէ անբարեխառնութ խակական, այլ
այլաբանական, մանաւանդ թէ ը՟ վայրաքննութ,
որ ներքոյ անկանի ուղղագրութ խոհեմութ։

Բայց և այն ճշմարիտ է, թէ ով բարեխառնու-
թիւն ուղղակի հայի յերկուս յեանորդ և անարգ
զգայութիւ՝ և չափաւորէ զհաճոյս նց զհասարա-
կորդս անասնոց, նոյնպէս ըստ պատահման և ան-
ուղղակի չափաւորէ և զաչս և զլսելիս և զհոտո-
տելիս, յորժամ ը՟ մէջ մտէ արբանեկին երկուց
յեանորդ զգայութեց՝ ը՟դէմ համեստութե, աչքն
ըկտի հայեցիւք, ականջք լսելնի նուագօք, հո-
տոտելիքն խնկենեաց փափկութիւք։

Մանաւանդ թէ մծ գործն վախճանի՝ բարեխառ-
նութեն նախանձախնդիր համեստութե՝ սատէ ևս
հարևերգութեց և զխտութեց, յորժամ չարաչար
վարեն զարութիւն մտաց՝ 'ի սրել զերկաթին զայ-
սասնիկ անասնային և անմիտ զգայութիւնս։

(96). Բռնաքմանեայք 'ի զեղխ խրախճանութիւ խե-
րեանց՝ ուշի ուշով մի գնէին համագամ համոց,
և նորանոր կերակրոց։ Աստ՜ղ մտաց նոցա. զի
զոր սահմանեցին երկինք մծ գերապանծ գործոյ,
առ նոսա եղև քաջ խորակերփեաց։

Բայց յաւետոյն ևս եղև ժահահոտն այն նախաղ-
տիբերեան, որ 'ի զղուական գալրոցի այծեաց ա-
ռաջի արար վարձս այնմ՝ զոր յառաջադէմ գտա-
նէր յաղծապիղծ լկնութիւնս։

Բռնաքմանեայք ոչ ուտէին առ իմաստասիրել, այլ
իմաստասիրէին առ ուտել. սա վարձս փոխատրէր
գինեաց ուսուցչաց, զի լինէին ոչ 'ի գաղանաց
մարդիկ, այլ 'ի մարդկանէ գաղանք։ Նա՝ չար ևս
քան զգաղանս. զի նց բնութիւն եդ կապար հե-
տուն՝ ով բանն մարդկան. այլ տիբերիոս վէր 'ի
վայր շրջեաց զամ զկարգ բնութ և բանի։

Յաստեղաց աստի հնար է քեզ առնուլ 'ի միտ՝
թէ բարեխառնութին յեանորդ է յաղնուութ քան
զամ առաքինութիւ. բայց անբարեխառնութին ամօ-
թա-

Թուի է առաւել քան զամ մոլութիւնս : Գիտել զքերթողութիւն՝ չէ ինչ մեծ գովութիւն . բայց չգիտել զայն՝ է ամօթ մեծ զի առարկայք քերթողութեան՝ են ստորինք քան զամ գիտութեանց . և առարկայք բարեխառնութեան՝ են ստորինք քան զամ առաքինութեանց :

Այլ Թէպէտ և ճշմարիտ է այս, հայեցել յանարգութիւն համոյից՝ զորս չափաւորէ նա . բայց և այնպէս՝ Թէ հայիմք 'ի դժուարութիւն չափաւորելոյ զնս մր գիմամարտուն բնուն, կոչի սա պանծագոյն յառաքինութիւնս քաջազանց . զի առնէ զմարդ նման դիւցազանց . որք լուիցեն յիւրում անդուոջ :

ԳԼ. Դ :

Թէ ո՞ր աղօթք ընդդիմին հակառակ բարեխառան :

Մի միայն վախճան բարեխառնութեան է համեստութիւնն . և որ է բարեխառն այլոյ իրի աղագաւ, չէ բարեխառն :

Աէոտիքիդէս սպարտացի իբրև հարցաւ՝ Թէ ընդէր սպարտացիք չըմպեն գինի, ետ պատասխանի . զի մի այլք խորհուրդ խորհեսցին զմեզ : Եւ յիրաւի . զի գինի աղաւաղէ զճշմարիտն, և յայտնէ զծածուկս : Այս խոհեմութիւն է, և ոչ բարեխառնութիւն :

Սոփիկեան իմաստասէրք առ բարւոք իմաստասիրելոյ՝ էին բարեխառն կմ ժուժկալ : Եւ յիրաւի . զի ձէթ սնունդ է լապտերի . և ձէթ զեղեալ շիջուցանէ զնա . կերակուր լուսաւորէ զմիտս . և կերակուր յորդեալ խաւարէ զնա : Այս իմաստութիւն է, և ոչ բարեխառնութիւն :

Ոմք յասպարիզի ընթանային, էին ամենևին բարեխառն կամ ժուժկալ : Եւ յիրաւի . զի չափաւոր բեռն՝ հաստատուն գնացուցանէ զնաւս . այլ անչափ բեռն՝ ընկղմէ : Այս արուեստ է մրցախնդրաց, և ոչ բարեխառնութիւն :

Փարիսեցիք էին ամենևին բարեխառն կմ ժուժկալ 'ի ցոյց . զի անչաղախն 'ի մարմնական հեշտութեանց՝ երևի հոգի երկնաւոր, և ոչ մարմին երկրաւոր : Այս է կեղծաւորութիւն, և ոչ բարեխառնութիւն :

Եւ

էին և այլև բարեխառնք՝ կամ 'ի բնէ, և կամ 'ի չքաւորութէ: Չեն սոքա բարեխառնք կամ ժուժկալք · այլ ոմն ԲԺՇԿԱՒ, և ոմն ԱՂՔԱՏ:

Սոցա ամենեցուն՝ թէ հարցանէ ոք, զի՞արդ սիրեցեն զբարեխառնութի, նշանակեն պատճառ ինչ արտաքին և բացական յառաքինութէ աստի: Բայց թէ հարցանես զբարեխառն, ԶԻ՞ԱՐԴ ՍԻՐԵՍ ԴՈՒ ԶԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ, տացէ պատասխանի · ՎԱՍՆ ԶԻ Է ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ:

Այնք բովանդակ են գործք խառն 'ի կամաւորէ և յակամայէ՝ իբր զագամեմնոնին (97)· զի նուիրեն զսիրելի հեշտութին ակամայ՝ երթալ, ուր առաջնորդեն նոյն կամք: Բայց ճշմարիտ բարեխառնն՝ չունելով այլ վախճան բաց 'ի համեստութէ, ոչ սիրէ՝ և ոչ ատէ զհեշտութին, բայց եթէ ըստ պահանջել համեստութեն. և վնկ գործքն է կամաւոր: Բարեխառնն գործէ ԱՆԱԽՈՒՔ. և ունակութին՝ տանէ զգործս կամակարս և դիւրինս և միօրինակս: Բայց ուր չիք ունակութի, սիրան մնայ տարտամ ընդ մէջ հեշտութե և համեստութե. և գործն լինի խառն 'ի կամաւորէ և յակամայէ:

Հերակլեսի հասեալ յերկճիղ փողոց · եգիտ երկուս ճանապարհս. մին զառ 'ի վայր՝ զարդարեալ սոսեօք և փթթեալ ծաղկամբք, և միւսն զառ 'ի վեր՝ առապար և փշալից: Նստէին անդ երկու օրիորդք. մին գլխովին զուարթագին և կայտառ, և միւսն հանդարտ և ծանրաբարոյ: Օրիորդն ուրախ՝ յորդորէր զնա հրապուրանօք գալ զկնի ընդ ճանապարհ ծաղկաւէտ: Բայց միւսն խոստանայր նմ՟ լաւ ևս վիճակ, եթէ գայցէ զկնի իւր այն զառ 'ի վեր և տարժանաւոր ճանապարհ:

(98)· Այս ըստ պռոտիկոսի փիլիսոփայի է ԵՐԿՃԻՂ ՓՈՂՈՑ ՀԵՐԱԿԼԵԱՅԻՆ ԿԵՆԱՑ. երկու ճանապարհք են՝ զգայութե և բանին. երկու օրիորդք՝ են հեշտութին և համեստութին: Հերակլես յերկճիղ փողոցի անդ՝ է սիրան. որոյ չունելով դեռ ունակութիւն՝ ոչ բարեխառնութե և ոչ անբարեխառնութե, մնայ տարտամ. բայց բնաւորապէս առաւել միտեալ 'ի զգայութի քան 'ի բանն:

Յայս փողոց ժամանէ և պատանին չխլին, այլ ունին խաղալոյ. և լուծել զերկաքանչիւր հրաւիրակացն յորդորանս, քանզի ուսու յառաքինութէ լուծանել զառապաւոր ձեռնարկութիւնս հեշտուէ, հաստատեաց 'ի միտս գնալ ընդ առապար շաւիղ. որով եհաս պանծալի յաղթանակաց, և նորոգեաց Աշխարհի զառասպել օրինակ հերակլեսի:

Դիւրութիւն՝ այլ աշխատանել, գործնական հաւաքարանութիւն իմն՝ մտաւորաւ քան ձայնաւորաւ, ընաւորականաւ քան արամաբանականաւ, պատրէ զանգգոյշս այսպիսի իմն ձեւով. [illegible]

Բայց առաքինութիւն 'ի պատասխանատուութէ յայտնէ զպատրանս ննդաւոր ձեռնարկութն. մն զի ընկալեալ զմեծն առաջարկութեց՝ թէ է Աշխարհիս, իբրև զի հիմնեալ է 'ի սահման բարւոյ, զփոքրն այսպէս զանազանէ. [illegible]

Այլ այս խաբր է 'ի մէջ բարեխառնի՝ և անբարեխառնի, և թմբեալս: Անբարեխառնն ընդունի անդէն վաղվաղակի և ընդհանրապէս զայն փոքրն: Թմբեալն ընդհանրապէս ուրանայ: Բարեխառնն զանազանէ՝ զբանաւոր հեշտութին միայն համարեալ բարի:

Թէոդորոս կինն անուանի վասն իւրոց վատանունութեց, ծաղր արարեալ զսոկրատէս՝ զմեծ ուսուցիչն բարոյական իմաստասիրուէ, ասէ ցնա. [illegible]: Սոկրատէս ետ պատասխանի. [illegible]

## Գլ. Ե.

### Թէ ո՞ր եղանակ կարի է բարեխառնն:

Յամ տարեկայս զգայութեանց՝ տեսչութիւն եգ զերկրութ 'ի միջասահման իւր բարեխառնել յերկուց ծայրից միջի: 'Ի խառնուածոյ ձայնից՝ ծնանի երկրութիւն [illegible]. 'ի խառնուածոյ գունոց՝ երկրութիւն [illegible]. և 'ի խառնուածոյ համոց երկրութիւն [illegible]: Ապա և երկրութիւն այլոց զգայութեանց ծնանի յեղանակաւորութիւն

որ է յաւէտ և ընդ նուագ:

Այս միջասահմանութ հաստատեալ է՝ ոչ փողու եւ լուար, 'ի պարագայս. 'ի վարել մարդոյ զայն տարեկայս՝ [illegible] էն, [illegible] էն, և [illegible] էն: Այսպէս տանէ բարեխառնն:

Բնաւոր բաղձանք՝ են սակաւք. արուեստականք՝ են բազումք. անկարգք՝ են անհամարք:

'Ի պատսպարութեան սեպհական կենաց՝ ծարաւն է բաղձանք առ ցուրտն և խոնաւ. քաղցն՝ բաղձանք առ ջերմն և չոր: 'Ի զիջուցանել զծարաւ՝ բնութիւն հոգացաւ աղբիւրս զովացուցիչս. 'ի զիջուցանել զքաղց՝ հոգացաւ համս զօրացուցիչս. և որպէս երկրորդ սեղան՝ պտուղս քաղցունս, հոտաւէտս, և գունագեղս. որք միանգամայն զուարթացուցանեն զերիս զգայութիւնս:

Վն ամէն պատրաստեաց զերկիր խոտաւէտ յանկողինս. և զգալար ոստս 'ի յարկս և 'ի հովանոց. և 'ի քնարերութիւն յաւել և զթռչնոց քաղցրաձայնութիւն:

Այսպիսի ընկալք պատրաստութեանց՝ պարզամիտ ազինք առաջնոյ դարուն, որ անուանի՝ եղև դար ոսկեղէն, կեցին կորովագոյն եւ՝ և խրախագոյն և անմեղագոյն. ոչ կեցին մահուամբ այլոց. և ոչ բաց 'ի ձորձոյ՝ կեղեքեցին և զնոցա միս. և ոչ կերան ընդ հնձոց և զհերկագործօղս: Չեղև երբէք բարեխառնութիւն քան զոցայս բարեխառն:

Յայս դար, որ չեղև ինչ կեղծ և մոլացածին՝ այլ ճշմարիտ և իրք, գիւղացինն պիւթագորաս հրա-
ւէ-

ւիրեաց զիւր անխօսիկ աշակերտս։ Ուստի նոցա ներհուն բանիւք, շատանալ՝ պահանջելով յանմեղ գառանց զփափկիկ ասր 'ի ծածկոյթ, և զքաղցր կաթն 'ի կերակուր. և 'ի բարեբեր անկոց պտուղս բարեհամս. որ են հարկք շահեկանք տեարց և արգասաւորք հարկատուաց. և չխածողել զօրավայն շաղղաք, լեալ գիշախանձ գայլ իւրական հօտի։

Եթէ 'ի մէջ այսց բնաւոր հանդերձանաց՝ յաւելան զկնի յազնուագոյն դարս ազնուագոյն կերակուրք և ըմպելիք և այլ համադամք 'ի սակս արժանապատիւ արանց և փարազնից. յայսոսիկ առաւելութիւնս են 'ի գործ արկանել բարեխառնութիւնն բարոյական ինչ միջասահմանութեն չափաբերական կանոնաւ համեմատութ, որ 'ի ձեռս է խոհեմութեն։

Կարի իմն աննինջ է, որ ոչ տանի քուն՝ բայց 'ի փետրալից անկողնի։ Կարի իմն քմակորոյս է, որ ոչ առնու ճաշակ կերակրոյ, թէ ոչ գայ այն յայնմ կողմանէ ծովու. և որում ոչ քաղցրանայ մշկաթ կրեալ, թէ չէ 'ի գոհարի. 'ի ծծել նր առաւել զըմպանակն աչօք, քան զհեղուկն շրթամբք։

'Ի բարեխառն խրախճանս չափաւոր է յաճախութի, և չափաւոր՝ խոհարարուէ կերակրոց։

Սեղան բանաւոր վս բազմօրեայ խրախճանութ առժողովուրդն ամ՝ ամայացոյց զանտառս ամ. աւելադրեալ օրըստօրէ կերակուրս 'ի յագուրդ՝ և ըմպելիս յարբեցութիւն ախերեխ գետոյ, առ 'ի չգոյէ ուրուք՝ որ յայնս վայելեսցէ։ Այնչափ անողորմ լեալ 'ի կոտորած անասնոց առ ուրախութն, որչափ 'ի կոտորած քաղաքացւոց առ անգթութեան։

Անգութն ներոն արար խրախութն լեզուօք սիրամարգաց՝ համադամ համեմելովք։ Չեւ երբեք այնպիսի քաղցր կերակուր լեզուաց ժողովրդեան հռովմայեցւոց, որ մեղադրէր նմ՝ միայն, զի չէր անդ և լեզու կոչնատեառն։

Համ ոչ ծնանի 'ի ճարտար խոհարարուէ հանդերձանաց, այլ 'ի տրամադրուէ բնաւոր կարողութն։ Պարեհ յետ պատերազմին պաշտել 'ի ծա-

ծարաւոյ, 'ի պատահել աղմուտ և նախ ջրշղջի, և 'ի լնուլ անոյի զաղաւարան, երդուաւ թէ չէարբ երբեք ջուր քան զայն քաղցր:

Այնպիսի լինելոց են ընթրիք բարեխառնի, որ որկորն մի ծնանիցի նախանձ. և այնպիսի հանդերձանք, որ փաղփիւնն մի շրջեսցի 'ի զեղխուն:

Թռչունք յըմպել իւրեանց՝ համբառնան առեալ զաչս յերկինս. և բարեխառնն ես 'ի սեղանի՝ յածէ Է մտս խորհուրդս վեհս. և առաւել պարարէ զհոգի հանճարաւոր իմաստիւք՝ քան զմարմինն համադամ կերակրովք:

Կարի իմն գրգութիւն հանդերձանաց՝ է տխրական իմն աւելորդութիւն: Կարի իմն յաճախութիւն կերակրոց՝ է ծառայական իմն գեղջկութիւն: Կարի իմն յաճախութիւն գինւոյ՝ է մարդկային իմն անասնութիւն:

Բայց ոչինչ հեշտութիւն է այնպէս ամօթալի, և այնպէս բուռն 'ի խոտորեցուցանել զմիտ 'ի պատուաւոր գործոց, իբրև զաւելազանցութիւն վաւաշ ցանկութե:

(99). Դիդէ դշխոյն անայր՝ գեր 'ի վերոյ գտաւ քան զդիւցազնեայ աւագուհիս: Կայր գլխովին պատաղեալ 'ի հաստատել զնորոգ ինքնակալութի մեծին կարքեդոնի. զարհուրեցուցեալ զափրիկէ զինուք, և զայերս աշտարակօք: Բայց իբրև պարանեցաւ յատարատի սէր այնորիկ, որ եբեր ընդ իւր 'ի լիբիայ զհրայրեացն տրովադայ, անդէն ձեռնթափ եղև 'ի քաջագործ իրողութեց, 'ի խնամոց թագաւորութե, և 'ի մեծագործ կենաց շինութեանց.

Կային կիսէն՝ գործք իւր կիսատ,
Եւ աա ամբոխք՝ ապածամն.
Եւ ամբարտակք՝ ամբարձեալք,
Հլ երկնաբերձ հերամբարձեան:

Եւ քանի՞ անուանի զօրավարուիք 'ի բարեբաստիկ գործս քաջութե, ամբոխեալք 'ի հեշտախառնութե խորհրդոց՝ յատաղ ցանկութեան մածուցին զթեւս թռուցիկ յաղթութե:

Ապա

Ապա բարեխառնն ոչ արտասահմանէ զհամեստութիւն՝ 'ի ժողովել զհեշտութիւն. զի սա է վայրկենական, և այն անանցական. և ունի զհաճոյսն 'ի հոգի, և ոչ թէ զհոգին 'ի հաճոյս:

Առ. ապօրինաւոր առարկայս ոչ ախտակրի. և յօրինաւորսն չափաւորէ զիւր կիրս: Թէ առարկայք են հեռաւորք, ոչ ամբոխի ունել զնոսա: Թէ մօտաւորք, ոչ ելանէ ը̅ չափ. զի չամբոխեցաւ. և թէ փախստեայք, ոչ կոծի. զի չէանց ը̅ չափ: Զհուսկն առացից. կարող է կեալ առանց հաճոյից. ոչ կամի կեալ առանց առաքինութե՟. զի յառաքինութիս են հաճոյք նորա: Մինչ՝ որ բնաւորեցան հայիլ յերկինս, չառնուն յանձն շաղախիլ ընդ երկիր:

Բայց տեսչութիւն չէ այնպէս թշնամի առաքինութե՟, մինչև կամք իցեն նմա զրկել զառաքինին 'ի համեստ ըղձանաց՝ թողուլ ժառանգս իւրոյ տոհմի, և յաջորդս իւրոց առաքինութե՟ց: Վա՟ն առաջի արար բերկրական իմն և օգնուական տարկոյ՝ 'ի պահպանութիւն զաւակի և համեստութե՟ զուէրն ամուսնական. որ միով ևեթ որբազան ջահիւ չիջուցանէ զհազար խառնակ ջահս:

Զայսպիսի հոգաբարձուն չեցոյց առ անասունս. զի որոշեալ զնո՟ 'ի լուծ հերկագործութե՟՝ եթող ազատս 'ի լծոյ ամուսնութե՟: Եւ չեղև նմ՟ փոյթ, թէ ուստի ծնանիցին, կամ որպէս կեցցեն. բայց միայն՝ զի մնասցեն 'ի սնունդ մարդկան, կամ կեցցեն 'ի սփոփանս նց՟:

Կամ եղև նմա, մարդոյ միայնոյ 'ի սեղան հաւատարմութե՟ անշէջ պահել զայս յաւերժական հուր. ուղեկցելով և լուսաւորաց յաւերժական լուսով իւրեանց յառագաստ հարսանեաց. չթողացուցեալ՝ թէ լինիցին բարեբաստ հարսանիք յերկրի, որ ոչ իցեն նշանակեալ յերկինս:

Թէ ցո՟ր վայր ձգիցի բարեբաստութի՟ ամուսնական սիրոյ, յայտնի օրինակ ետուն մեզ երկու բարեբաստիկ և սիրապատար լծակցութիւնք ԴԵՒԿԱԼԻՈՆԻ և ՊԻՒՌՌԱՅԻ 'ի յունաստան. ՓԻԼԵՄՈՆԻ և ԲԱՒԿԻԴԵԱՅ յիտալիա (100):

Ան.

Անհնար է զչափ առնուլ զբարեխառնութեան այնց ամուսնութեանց, բայց եթէ 'ի սիրոյ. անհնար է չափել զաերն, բայց եթէ 'ի միաբանութենէ. անհնար է հաստատ լինել միաբանութեան կենաց, բայց եթէ 'ի միաբանութենէ մահու. յորմէ առքա ևեթ կոչեցան

Ճշմարիտ ամուսինք։

'Ի մեռանել նախ կապանեալն՝ եւագնէ ընկեց զինքն 'ի խարոյկ նորա. և 'ի մեռանել նախ որեատիղղայ՝ պղոտինա ընկեց զինքն 'ի խարոյկ նորա։ Այրեցաւ եւագնէ 'ի բոց առնն. այրեցաւ պղոտինա 'ի բոց կնոջն։ Որպէս թէ 'ի սիրտ միմեանց ունէին զոգի, միանգամայն անշնչացան. և նոյն ջահ՝ որ առաջնորդեցան յառագաստ, հուր բորբոքեցոյց 'ի փայտակոյտն։

Հնար եղև մահու բաժանել զմարմին նոցա. բայց սէրն անբաժան՝ անդրէն զուգաւորեաց։ Անցին այրեալքն յեկ̃ հարսանիս ընդ խուրեանց ննջեցեալսն։ Եկ̃ առագաստ եղև գագաղն, և եկ̃ փեսաւէր՝ մահն։ Նոյն մահ եղիս զնա միաբանս. նոյն բոց ժողովեաց զնա գրկախառնեալս, և նոյն տապան պահեաց զնա չիջեալս. թէ չիջանիցեն մախիրք այսպէս պանծալիք։

Յանդգնութն է հաստատել, թէ հնար էր երբէք այգղխաւ սիրոյ հովանալ վայր մի՝ մինչդեռ էին կենդանի որովհետև և 'ի շիջման այսչափ վառեցան։ Այս մարթ է երկուանալ, թէ որ սէր առաւել էր վառեալ. արանցն, եթէ կանանցն. զի բոցն որոշիչ նմ գժուարութեանց՝ եթող զայս անորոշ։

## ԳԼ. Զ։

### Յաղագս Ըմպութեան, և անբարեխառնութեան։

Նուասիկ քեզ հրեշտակն երկոքին, որոց ընդդէմ մարմնոյն բարեխառնութիւնն, ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, և ՀԵՇՏԱ։ Սա այնպէս է վառեալ, որ և 'ի սառնամանիս արձակէ բոց. և նա այնպէս սառնատառոյց, որ և 'ի մէջ բոցոյ չվառի։ Սա այնպէս է ծանօցեալ, մինչև բիւրս ունել անուանս։ Նա այնպէս գժուարագիւտ յաշխարհի, մինչև արևելեայց և արև-

արեւմտեայց չծանուցեալ նորա սեպհական անուն, այլաբանօրէն կոչեցաւ ԹՄԲՈՒԿ կամ ԴՈՂՈՒԿ:

'Ի նախասացելոց մարթիս իմանալ, թէ որպէս սահմանաւ տարբերին 'ի միմեանց, և երկաքանչիւրն 'ի բարեխառնութէ: Ձի շատ է ասել, թէ մին է [illegible], և միւսն [illegible]:

Թմբեալն մաղասամակարդ՝ երբեք արձան ինչ 'ի միենոյ: Անբարեխառնն գլխովին արիւնըրաուշա՛ հրաշէայ, թէ խառնուրդ ունիցի սևամաղձի, ցուցանէ յերեսս զրոց և զծուխ եռանդ լերին:

Երկուս ազգս մագնիսի արտադրէ բնութիւնն, նմանս առ երեսս՝ բայց հակառակս 'ի յատկութիւս. զի մին ունելով առ երկաթ կարի իմն համակրութիւն, և միւսն կարի իմն հակակրութիւն, նա անձկանօք յինքն ձգէ զայն, և սա արհամարհանօք վանէ: Այսպիսի մագնիսք են անբարեխառնն և թմբեալն: Նորա կամք են՝ զի հաճոյական առարկայք միշտ իցեն ընթերակայ: Սորա կամք են, չի միշտ իցեն բացակայ: Եւ սակայն երկաքանչիւրն են մարդիկ:

Թմբեալն է պակասաւոր քան զանասունս զի հոգի ունի զգայուն, բայց երբեք իբրև զտունկս անզգայ: Անբարեխառնն է յոռեգոյն քան զամ անասուն. զի հոգի ունի բանաւոր, բայց 'ի կիր արկանէ միայն զզգայականն: Սա ոչ սիրէ զհաճոյս վն կենաց, այլ՝ զկեանս վն հաճոյից: Նա ոչ մտանէ 'ի մարդկային հաճոյս. որպէս թէ չունէր մարմին մարդկային:

Անբարեխառնն առ բերկրականս՝ է իբրև զոր-կորամէտ փիլոքսենոս. որ բղձանայր ունել զպարանոց կռնկան, առաւել սիրելով զհամ քան զսը-նունդ (101): Թմբեալն է ոչ զանախորժակ հիւանդ՝ որ ցանկայ առողջութ, և ատոյ զկերակուր՝ որ պահպանիչ է նորա:

Երկաքանչիւրն տրտունջեն զարարչէն բնութ. մին՝ զի ետ մարդկան սակաւ հաճոյս. և միւսն՝ զի ետ առաւելորդս: Եւ վնկ մին ցանկայ անհնարաւորաց, և միւսոյն կամք են՝ թէ և կարեւորքն լիցին անհնարաւորք. և զի հնար լիցի կեալ առանց կերակրոյ:

'Ի

՚ի սմա թմբրելոյն՝ սէրն ոչինչ աւելի ազդէ քան
զնետն ՚ի փիղ. Ը որոյ ոչ անցանէ և ոչ Ը առա-
ջին մորթ: ՚Ի սմա անբարեխառնի այնքան ազդէ՝
որպէս ՚ի պղծասէր կենդանի (դ ՚ի խոզ). որ
կարէ իմն զգայուն գոլով առ փոքր խոցուած
անհնարին խանչէ:
(102). Սէր նորա նման է յունական հրոյ. որ ՚ի
ջուրս առաւել եւս արծարծանի, և փչմամբ սաստ-
կագոյնս բորբոքի: Սէր որ նման է շրջմոլիկ հրոյ,
որ ՚ի վր գերեզմանաց լինի. հուր երեւի, բայց ոչ
վառի. զի է թռուցիկ գոլորշի անմարմին:
Անբարեխառնն՝ է ամ քար արտաքոյ կեդրոնի. զի
առ հեշտալի առարկայս՝ ամ առ կեդրոն իւր գա-
հավէժ բերի: Թմբրեալն՝ է որպէս քար յիւրում
կեդրոնի. զի ունելով յինքեան հանգիստ ինչ
թմբրական, յոչ ինչ ախորժակէ շարժի: Իսկ մինչ
անբարեխառնն ՚ի սէր և յատելութիւն սաստիկ
բերի, թմբրեալն անծանօթ է երախտեաց. և ան-
խոժոռ առ վշտաց. քանզի ոչ զգայ զնոսա:
Հրաժեշտն այն ՚ի հեշտութէ, որ ՚ի բարեխառնն
է առաքինական, ՚ի թմբրեալն չէ առաքինութիւն.
զի է պակասութիւն բնութէ, և ոչ գործ ընտրու-
թե: Իսկ բուռն բերումն այն՝ որ յանասունս չէ
մոլութիւն, յանբարեխառնն է մոլեկան. զի ան-
կար է լինել մոլութիւն, յորս չիք բանաւորու-
թիւն. բայց սա ունի զբանաւորութիւն, միայն
թէ յունակութենէ խանգարեալ:
Յայսմ եւեթ միաբանին թմբրեալն և անբարե-
խառնն. զի չհային ՚ի պարագայս ինչ, ոչ ՚ի պատ-
ճառն, ոչ ՚ի քանակն, և ոչ ՚ի ժամանակն. նա
՚ի ժուժկալել իւրում, և սա ՚ի չժուժկալել իւ-
րում ՚ի հեշտալի առարկայից:
Երկաքանչիւր մոլութիւնքս՝ են առաւել ամօթալի քան
զամ մոլութիս. զի առարկայքն են առաւել անարգք:
Այլոյն թմբրութիւնն՝ թէպէտ և է փոքր մոլու-
թի, վն նմանելոյ իւրոյ բարեխառնութե, բայց և
այնպէս է դժուարաբոյժ քան զանբարեխառնու-
թին: Զի առ վերածել զերկաքանչիւրն ՚ի միջա-
սահման, այնչափ դժուարագոյն է խթել զթմբրեալն՝
քան

քան նահանջել զանբարեխառնն, որչափ դժուարագոյն է կենդանացուցանել զմեռեալն՝ քան մեռուցանել զկենդանին:

'Ի վր̄ այսր ածի 'ի միտ առ. նախ, չշփոթել զանբարեխառնութիւնն ը̄ անժուժկալութե̄. զի անբարեխառնն գործէ ունակութ̄բ և բնութ̄բ, աղճատեալ զսկիզբն բանականութե̄. և վն̄ այնր հաւատայ՝ թէ ոչինչ հեշտութի արգելեալ է նմ̄: Բայց անժուժկալն ճանաչէ՝ թէ չար գործէ. բայց և այնպէս թողացուցանէ յափշտակել 'ի ցանկութե̄ 'ի գործել զչար. մինչ զի մեղանչէ նա առաւել բուռն բերմամբ՝ քան ունակութ̄բ. որպ̄ լուիցես յիւրում տեղւոջ:

'Ի միտ առ. եկ̄ց, թէ արիստոտէլ ոչ խօսեցաւ աստ զայնց, որք կամաւորապէս հրաժարին յերկրաւոր հեշտութեց վն̄ ժառանգելոյ զերկնաւորս: Այս ոչ է թմրութիւն, այլ՝ պանծալի առաքինութիւն, դիւցազնագոյն և ածային քան զբարոյական բարեխառնութիւն: Զի սա չափաւորէ զհաճոյս, այլ նա նուիրէ: 'Ի բաց կայ յայնմանէ՝ որ հաճոյն է, զի արժանասցի այնմ՝ որում ակնունի. փոխանակէ զվայրկենականն ը̄ յաւիտենականին. 'ի մահկանացու մարմնի կեանս վարէ հրեշտակային: Եւ սա առաքինութիւն այնչափ բարձրագոյն, յոր աչք արտաքնոց փիլիսոփայից ոչ երբեք ժամանեցին (103):

Բա_

Բարոյական իմաստասիրութ

# ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

## Յղ· առատաձեռնութեան, և ծայրից նորա։

### ԳԼ· Ա։

### Թէ զի՞նչ իցէ առատաձեռնութիւնն։

Տեսչութիւնն՝ որ կառավարէ զաշխարհս, ոչ զամենեսին արար մեծատունս, և ոչ զամենեսին աղքատս. որպէս զի որ ընչաւէտն է՝ յօգնութիւն հասանել այնմ՝ որ պէտոյս ունիցի, հանապազորդեսցի սէր և առ՝ մարդոյ ընդ մարդոյ, Թագաւորութեան ընդ Թագաւորութեան, և միոյ մասին աշխարհի ընդ այլում։ Այսպ պիտոյ եղեն ինչք 'ի չափել զգինս պիտոյից կենաց մարդկան։

Եւ յայս սակս կոչեցան նոքա՝ ինչք կամ բարիք կարծեաց. զի այնչափ արժեն, որչափ հասարակաց կարծիք տան արժողութի։ Ինչք կամ բարիք բախտի. զի բախտն կայր ձեռամբ ումեմն զայնս պարգևէ, և յումեմնէ բառնայ։ Ինչք կամ բարիք պիտանիք. զի ըստ օրինակին վերտումնի փոխակերպելին յայն ամ՝ որում ըղձանայ ստացող նոցա (104)։

Ոսկին՝ յազնիւ հրաշալեաց միջի ազնուագոյն, փայլողագոյն, սերտագոյն, դժուարագիւտ, վէմ և թանկագոյն, եղև չափ ամ գնոց. բայց և չափ ամ չարեաց, յորժամ չարաչար վարիցեն։

Քանի՜ հարուածոց տանի այս հրաշալեալ, որ յիւրմէ է անմեղ։ Է՝ որ տափէ զնա կռանաւ. և դժնէանայ առ նա երկաթ ազգային նորա։ Է՝ որ պատառոտէ զնա 'ի թիթղունս։ Է՝ որ ծակէ շամփով։ Է՝ որ այրէ քիմիական բոցով. կարծեալ գտանել զնա՝ անդէն իսկ կորուսանէ. և կամե-

ցեալ

ցեալ յաճախել զնա՝ նուազէ ։

Բայց յոչինչ տանջանս այնպէս է ամօթահար, որ 'ի ձեռս շռայլի, և ագահի ։ Ագահն յանչափ սիրոյն թաղէ զնա, և զթաղեալն պաշտէ ։ Շռայլն յանչափ արհամարհութենէ վատնէ զնա և ցրուէ յայնպիսի անարժան պէտս, որ ողորմելին մադիւրագոյն արգեօք տանէր բանտարկութեան ագահի ։

Այլ հարկ էր թէ լինիցի յաշխարհի առատաձեռնութիւն. որոյ չափաւորեալ զկարի իմն ախորժակ, և զկարի իմն արհամարհութիւն առ այս պատուական պարգև բախտի, 'ի տալ և յընդունել զայն չափով, համեստօրէն վայելեսցէ յայնմ և տացէ վայելել այլոց ։

**Այլ առատաձեռնութիւնն է առաքինութիւն ընկերական մարդկային արարածոց՝ 'ի տալ և յընդունել ինչս միայն 'ի ոսկւոյ համաչափութեան ։**

Երկու ինչ ներհական կայ յառատաձեռնն. տալ և ընդունել ։ Իսկ այն՝ զի ը̄ունի, չէ ամօթ առատաձեռնութեան, եթէ զմտաւ ածցի վախճան նորա. զի չընդունի 'ի պահել, այլ զի կարող լիցի տալ ։ Այս առատաւոր ունի նիւթ առատաւորի. որոյ 'ի պակասիլն՝ պակասի առատս ։ Ոսկին է նիւթ առատաձեռնութե̄, որպէս երկաթն դարբնութե̄ ։ Որ միշտ տայ և չընդունի երբէք, վաղվաղակի իսկ՝ այլ չունիցի ինչ 'ի տալ ։

(105). Ծովն է աղբիւր ամենայն գետոց. բայց վաղվաղակի ցամաքէին գետք, եթէ ծով 'ի տալ միշտ զիւրն՝ չընդունէր ինչ այլուստ. այլ 'ի տալ նը̄ և յընդունել, լինի այն շրջան հանապազորդ շարժման՝ որ պահէ զծով, և զովացուցանէ զերկիր ամենայն ։ Այլ իրաւունք և գլխաւոր վախճան առատաձեռնին է տալ պարգևս յերախտաւորուն իւրոց հայրենեաց. իսկ ընդունելն է վախճան հետևորդ ։ Վասն ը̄ունել և պարգևել՝ չեն գործք անլծորդք ը̄ առատաձեռնութե̄. մանաւանդ թէ այնչափ գործ է առատաձեռնութե̄ ը̄ունել զպարգևս, որչափ տալ պարգևս ։ Վ̄ն առատաձեռնն փոխանակ զի ոչ պարգևէ առ 'ի ը̄ունել, այլ ը̄ունի 'ի պարգևել, ան-

անդէն իսկ յընդունել իւրում՝ պարգևէ . ընկա-
լեալ յումեմնէ ձեռամբ, և պարգևեալ այլում
գիտմամբ :

Աստիճանս նախ առաջին տարատրոհէ զառատա-
ձեռնութիւնն՝ յերկուց իւրոց մոլեկան ծայրից :
Շռայլն կարի իմն անարգէ զոսկի . ագահն կարի
իմն յարգէ . առատաձեռնն՝ ոչ կարի իմն յարգէ,
և ոչ կարի իմն անարգէ : Վասն զի ոչ է մարթ նմա
կարի իմն յարգել՝ զոր պարգևէ . և ոչ կարի իմն
անարգել՝ զոր ընդունի :

Շռայլն վատնէ զոսկի վայրապար . և յափշտակէ
յանիրաւի : Ագահն 'ի խնդիր է նորա անյագ . և
պահէ զայն խնամով : Առատաձեռնն պարգևէ
զնա և չյափշտակէ . ոչ խնդրէ զնա՝ և ոչ 'ի բաց
մերժէ . ջանի միայն 'ի պարգևել զայն : Վասն զի
շռայլն շարժի յանյառաջատես անբանութէ . ա-
գահն 'ի պիղծ գոշաքաղութէ . առատաձեռնն յա-
ռաքինական համեստութէ :

Յայսմանէ՝ ոսկին ըստ ստացողին փոխէ զբնութին .
'ի ձեռս շռայլի է նախատ ինչ . 'ի ձեռս ագահի՝
է անպիտան ինչ . 'ի ձեռս առատաձեռնի է պի-
տանի ինչ և զուարթարար և արգոյ : Զի շռայլն
զայն շարաշար վարէ . ագահն ոչ վարէ . առատա-
ձեռնն վարէ՝ որպէս արժանն է :

Մինչ զի՝ ոսկի առատաձեռնին է գետ հանդար-
տաշաւ , որ զամենեսին զովացուցանէ , և միշտ է
յորդ : Ոսկի շռայլի է ուղխաջուր կարկաչահոս ,
որ երբեմն հեղեղէ , և երբեմն ցամաքի : Իսկ ոս-
կի ագահի՝ է աղմուտ ճախին, որ անդնդոց անպէտ
նեխի , և զեւր գոյն զերեսօք արկանէ ագահի :
Յայսմանէ մարթիս իմանալ , թէ պարգևատուու-
թին 'ի շռայլն է ոչ թէ ակամայ , իբրև զորբե-
լոց և զմոլեգնելոց : Յագահն է խառն 'ի կամա-
ւորէ և յակամայէ , զի պարգևէ անյօժար : Բայց
յառատաձեռնն է գործ գլխովին կամաւոր . զի 'ի
պարգևել իւրում՝ մեծապէս բերկրի . և թէ չէ
ձեռնհաս՝ տխրի :

'Ի նոյն առաջմանէ ունիս իմանալ և զխտիրն՝ որ
է մէջ առատաձեռնութեան և մեծագործութեան : Զի թէպէտ
այս

այս երկու առաքինութիւնք՝ երեւին միայն տարբերք ըստ յաւէտ և նուազ. որ ոչ փոխէ զտեսակ իւրոյ, ոչ՝ սկայն և գաճաճն, սակայն բազում ինչ ընդմէջ է վախճանի և առարկայի առաքինութեանցս երկոցունց:

Մին՝ նպաստ մատուցանէ մասնաւորաց՝ պարգեւական դրամոք, սահմանաւոր կարգաւ՝ ըստ պիտոյից նոցա: Միւսն երեւեցուցանէ արքունի վեհանձնութիւն 'ի հրապարակական գործս յիշատակաց արժանիս: Նա չափի երկրաչափական համեմատութբ ըստ սրտի և ըստ անձանց: Սա՝ ֆիզիկական չափմամբ քանակի և մեծութեան գործոյն, որպէս անունն իսկ հնչէ:

Յոր և իցէ անձուկ հիւղ՝ հնար է մուտ ունել մեծի առատաձեռնութե. բայց մեծագործութիւն մտանէ միայն 'ի մեծամեծ և յարքունի ապարանս: Զի առաւել առատաձեռն է աղքատիկն՝ 'ի պարգեւել զզոյգն լումայս անգորր սրտիւ, քան զմեծատուն ոք՝ որ պարգեւեսցէ մեծ ինչ գումար նեղսրտութբ: Բայց 'ի մեծագործութե՝ սիրտն ոչ առնէ զգործն մեծ, թէ չէ այն յիւրմէ մեծ՝ և արարեալ 'ի վեհ անձնէ. վն լինելոյ սորա ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔՆՈՅ. և նր ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱՒՈՐԻ:

Այս ոչ ամենայն առատաձեռն լինի մեծագործ. բայց ամ մեծագործի հնար է լինել առատաձեռն: Վն այսորիկ յորժամ մեծ ոք իշխան առնէ պարգեւ միջական՝ արժան է կոչել զնա առատաձեռն, այլ ոչ մեծագործ. և յորժամ առնէ գործ ինչ մեծ և բազմածախ, արժան է կոչել մեծագործ, այլ ոչ առատաձեռն:

Իբր այսուիկ զանազանութեամբ իմաստասիրեցին իմաստունք, թէ՝ և թագաւորն անմահ, 'ի պատրաստել թռչնոց և մրջմանց կերակուր 'ի բուսոց, եցոյց զիւր առատաձեռնութիւն. այլ 'ի կանգնել զլուսաճաճանչ խորանս երկնից յազամանդեայ ճեմարան հրեշտակաց, և 'ի վերնակամար յարկ մարդկան, եցոյց զիւր արքունի մեծագործութիւն:

## ԳԼ· Բ·

### Թէ ո՞ր իցէ առաքինութիւնն :

Առատաձեռնութիւնն պահանջէ զազատութիւն ՚ի կրից : Զի զոր օրինակ կիրքն ոչ քող մթագնէ զմիտս , նոյնպէս չթողու տեսանել զկարեւոր պարագայս ՚ի պարգեւել և յընծայել՝ ոչ արժանն է : Բայց առաւելապէս յոյսն և երկիւղն . զի նա է մայր շռայլութե , և սա հայր ագահութե : Իբրև զի շռայլն միշտ յուսայ , թէ նմա ինչ ոչ պակասեսցի . և ագահն միշտ երկնչի , թէ ուր ինչ նմ պակասեսցի :

Յայսմանէ՝ բուն հաստատ առատաձեռն լինելոյ՝ է միջահաւանն ընդ մէջ մանկութե և ծերութե . զի ՚ի մանուկն՝ որ չէ ինչ փորձ . առաւելու յոյս . իսկ ՚ի ծերսն՝ վն զի են բազմափորձ, ծնանի կարի իմն երկիւղ: Հասակն միջակային ոչ կարի փորձ գոլով և ոչ կարի անփորձ , բարեխառնէ զյոյսն և զերկիւղ . և այս խառնուած է ներպհական առատաձեռնին :

Աղեքսանդր մինչդեռ էր պատանեակ , և չև էր անուն առեալ մեծ աղեքսանդր , վառեալ պատրաստեալ յիւր առաջին ձեռնարկ մարտի՝ պարգեւեաց զամ զիւր հայրենի կալուածս և զժառանգութիւն՝ իւրոց զօրավարաց : Պերդիկկաս իմաստուն զօրավար չէառ յանձն զձոխ ինչ վիճակ . ասէ . ի՞նչ քեզ զինչ պահեցէր : Ասէ աղեքսանդր . Ինձ պահեալ է ինձ յոյսս : Եթէ բախտն անմիտ քան զնա՝ չէր յաջողեալ շռայլ անմտութե նորա , յոյսն՝ որ չքաւորեաց զնա ՚ի չուէ , առնէր զնա ծաղածանակ ՚ի գործի :

Ոչ ոք այնպէս է առատաձեռն , ոչ որ յաջորդէ հօր ագահի . ոչ և ոք այնպէս ագահ , ոչ որ յաջորդէ հօր առատաձեռնի : Զի նա ոչ կարէ քերել յանձնէ զկեղտ անուն հայրենի կծծութեան բայց եթէ ը հակառակն՝ պարծանօք զուարթառատ առատաձեռնութե . և սա ոչ կարէ հանել զփոխարէնն տուժի հայրենի առատաձեռնութե , բայց եթէ ը հակառակն ճշգութե :

Չեք որք այնպէս շռայլ, այլ որ եղիտ մթերեալ համբարս ծախուն՝ տանց ինչ իւրոյ մշակուն. չեք որք այնպէս ագահ, այլ որ սերմանեսցն զնո իւրովք քրտնաջան վաստակօք։ Զի սա հայեցեալ 'ի նն իբրև յիւր երկս՝ կաթոգին սիրէ. և նա հայեցեալ 'ի նն անտարփ՝ իբրև յերկս որ ոչ իւր իցեն, անգոսնէ. և ոչ գիտելով՝ թէ ի՛ւ եկլին, ոչինչ փոյթ է նր՝ թէ իւ գնան։ Այր բնաւոր պատճառի պզտառ՝ առաւել յօժարամիտ է յառատաձեռնութիւն որ ժառանգեսցն զձոխութիւն, քան որ մթերեսց։

Առաւել առատաձեռն լինի անզաւակն, քան զայն՝ որ ունի զզաւակ։ Զի թէպէտ և առատաձեռնն հայր է հայրենեաց, և բարի առնէ քաղաքացւոց այլ իւրոց որդւոց, բայց և այնպէս իբրն առաքինական ոչ բառնայ զկարգ բնական։ Վն բառնալ յիւրոց՝ 'ի պարգևել օտարաց, ոչ է առատաձեռնութիւն, այլ անիրաւութիւն. և չտալ օտարաց՝ 'ի պարգևել իւրոց, ոչ է գործ առատաձեռնութեան, այլ պարտք արդարութեն. մինչև որչափ ինչ պարգևի արդարութեն. այնչափ պակասեցուցանելի է յառատաձեռնութէ։

Քան զնմ որք նա է առատաձեռն, որ տարրացեալ ունի 'ի միտս՝ զսկզբունս պատուաստուս՝ որք չարժեն զառատաձեռնութն նր։ Իւ զորին հկտկն՝ սկզբունք ծառայականք և գծուծ ճշգականք խափանեն զնա։ Զի ձեռնն ոչ 'ի գործ արկանէ, բայց զոր միտք հրամայեն. և միտք ոչ կարեն հրամայել զգործս պայծառս և զուարթառատս, թէ տարրացեալ են 'ի նմա ստամբային սկզբունք կծծութեան։

Երկու թագաւորք արենակիցք և անուանակիցք՝ տարրացեալ ունէին 'ի միտս զսկզբունս անմնելին տարօրինակս. պտղոմէոս որքայ եգիպտացւոց, և պտղոմէոս որքայ կիպրացւոց։ Նա սովոր էր ասել համապատ. ԼԱՒ Է ՃՈԽԱՑՈՒՑԱՆԵԼ, ՔԱՆ ՃՈԽԱՆԱԼ։ Սա զնորին հակառակն սովոր էր ասել. ԼԱՒ Է ՎԱՅԵԼԵԼ, ՔԱՆ ԱՅԼՈՑ ՊԱՐԳԵՒԵԼ։ Իւ փոկ նա առատաձեռնօրէն պարգևեալ զիւր ձոխութիւն կոչեցաւ ՊՏՂՈՄԷ-
առ

առատաձեռնութեան : Սա գծծօրէն 'ի խնդիր լեալ նշ՝ կոչեցաւ պտղունք հերի ործանոյ.

'Ի վախճան ամենայնի, առատաձեռնն պերճ է 'ի կահս. յարգարուն 'ի զգեստս, շուարթ 'ի դէմս. քաղցրաբարոյ 'ի գնացս. շնորհալի 'ի գործս. ազատ և համարձակ 'ի բանս' որպէս 'ի տուրս. ոչ կարելով ծածկել զգաղտնիս սրտի, որ բոլորովին է սիրտ: Ջհամառօտն ասացից. փորձաքարն ցուցանէ զյարգ ոսկւոյ. և ոսկին ցուցանէ զյարգ անձին:

## ԳԼ. Գ.

## Առաքինւոյ առատաձեռնութեան:

Ամ՛ առաքինի առատաձեռնութիւն է երախտագործութիւն: բայց ոչ ամենայն երախտագործութիւն է առաքինի առատաձեռնութիւն:

Տալ խորհրդով ընդունողաց տարակուսելոց, չէ առատաձեռնութիւն, այլ մարդասիրութիւն: Տալ հզօրաց օգնութեան պատերազմի, չէ առատաձեռնութիւն, այլ սպասահարկութիւն: Տալ թշնամեաց նեղելոց՝ չէ առատաձեռնութիւն, այլ գթութիւն: Տալ զարիւն 'ի հայրենեաց, չէ առատաձեռնութիւն, այլ արիութիւն:

Առարկայք առատաձեռնութեան՝ են ինչք, կամ բարիք բախտի, որք չափին ոսկւով. զի զօրոք գործ է առատաձեռնութեան բարեկարգել զմարդկային ախորժակ:

Յաջորդն ինքնակալութեան և ատելութեան Դարեհի մշտատալեայ, ոչ շատացեալ վերագոյն լինել քան զմարդկային զօրութիւն թէ ոչ մեղքեր և Ճ ամե- ղէն ամենակալ զօրութեան, յարկանել իւրում 'ի ծով երկուս ոտնակապս ոսկիս՝ կարծեաց կալանաւորել զմշտափախուստն զայն պրոտէոս, և փակել յերկուս անուրս զհամածաւալ զայն մարմին. (106):

Առատաձեռնն միայն՝ զայս հրաշագործէ: Ունի ծով է այնպէս հրեշտակաց և ազնիւ՝ ինքն պտղաբերաց. առէ Ճարտարախօսն համեմայեցի, զորոյ էառ անձամբ զփորձ: Բայց ձեռնն առատաձեռնի 'ի պար-

դնել քաղաքացւոց՝ ումեմն մատանի, ումեմն գա- հեկան, և ումեմն շղթայ ոսկի 'ի պէտոյս ՆՁ, զո- մանս ընդելով պարտաւանդէ. և զժողովուրդն ամ կապելով կաշկանդէ. զի առատաձեռնութիւն իւր չէ ամփոփ առ մասնաւորս, այլ՝ սփռելով ծաւալի առ ամ որք 'ի ժողովրդենէ՝ որ դիմէ առ նա: Այս է արկանել զծով յոռնակապս, և գերել զնա:

Տուչութիւն առատաձեռնի՝ չէ միայն փոխարերել զոհերութն ակամն պատուականի, կամ գումարի ինչ ոսկւոյ յայն՝ որ ընդունի, այլ՝ ծախս առնել լիա- ձեռն՝ 'ի վշտագնեալ աղքատս, 'ի դատապարտեալ կալանաւորս, 'ի նեղեալ պարտապանս, յորբեւորս և յայրիս, և 'ի նկարս պանդխտականս և յանկեալ գաղթս. ոչ առ իւր, այլ՝ առ ժողովրդեան զբօսանս, զաներութին անձին պահելով. զի 'ի պատուղան փայլելոյն աչք ամ̃ցն: Զի որովհետև ագահն բիւրուք շղթայիւք փակել զիւր ոսկիս և զարկեղս, մինչ և արևու չմատնել 'ի նոսա, ըստ անքուն օձին հեսպերեան դարաստա- նին՝ այսինքն երեկորեան պարտիզին (107), ոչ ինքն վայելէ և ոչ այլոց թողու առ վայելել, ա- ռատաձեռնն զորին հակառակն՝ յայնժամ վայե- լէ, յորժամ այլք յայն վայելեն. մինչև յիրաւի է նմ̃ ժողովրդեանն ուրախութիւն՝ կոչել իւր ուրախութիւն: Կիմոն աթենացի՝ որ եղև անուանի, ոչ այնչափ վասն իւրոյ մսխափութն 'ի մանկութե, որչափ վս իւրոյ քաջութե յարբունս հասակի, լեալ գաղափար պատերազմական արիութե՝ և ժողովրդական առա- տաձեռնութե, հարթայատակ արար զգանկ զիւրոյ կալուածոյ, զի լիցի հասարակաց զբօսարան, ոչինչ այլ պտուղ քաղելով անտի, բայց զհասարակաց հաճոյս (108): Արժան էր պոմոնայ և փլորայ՝ (գից պարտիզաց և ծաղկոցաց) ելևել առնել զմի- մեամբք յայնմ կալուածի, զի մի երևեսցի յետ- նեալ առատաձեռնութիւն իւրեանց առ տէր կալ- ուածոյն, քան զառատաձեռնութիւն տն կալուա- ծոյն առ իւր քաղաքակիցս:

Բայց արդարև՝ կամ դարձ եղև կիմոնի յիւր ա- ռաջին մսխափութն, կամ էին նր այլ պահեստի կալուածք. զի պարտ է առատաձեռնի՝ որպէս ուսու-

ուսուցանէ արհամարհել , ունել զծիծղ հաշիւ զիւ-
րոց վիճակաց , և զիւրոց եկամտից . այլազգ ու-
նելով վախճան քան զագահին :

Զի եթէ առատաձեռնն՝ խնդամիտ է տալ 'ի պարգևելն քան յընդունելն , և առեալն չհաւասարի այնմ՝ զոր պարգևէ , հիմն իւրոյ առատաձեռնութեն լինելոյ է իւրն կալուած . և որ անփոյթ է այսմ՝ շռայլ է և ոչ առատաձեռն :

Խմբնակալն աղքատանդրոս սեերոս օրըստօրէ 'ի գանձէ իւրմէ բաշխէր պարգևս . և օրըստօրէ 'ի գանձապետաց առնոյր համարս : Էր աղքատանդր ( [illegible] ) յառատաձեռնելն , և սերրոս՝ ( [illegible] ) յառնուլն զծիծղ համարս : Կշռէր զպարգևեալն ը հասին , զի մի չափ կարողացն պարգևել :

Սա որոյ և ճշմարիտ է , թէ վասն զի տուածն է սաստիկ 'ի պահանջելն 'ի պարտապանաց , և ժլատ 'ի վճարել պարտատեարց , ամենեւին զարին հակառակն է բնաւորութե առատաձեռնի : Զի առ պարտատեարս՝ ազահութե համարի զանփոյթ լինելն 'ի վճար . իսկ առ պարտապանս առատաձեռնութիւն համարի զիջանել , և առ ժամանակ մի ուղէս թէ խափել , անխառ զոլով իւր :

Ոչ բարուք արար զիւր հաշիւս շռայլն այն , որոյ վաճառեալ զհայրենի ինչս և ծախեալ զապարանս , վա զի այլ ոչ մնայ'նի ինչ՝ որով զեղխեսցի , և ոչ տեղի՝ ուր բնակութն կայցի , խեղդիւ եջ 'ի տարտարոս : Չէր արդեօք արարեալ զայսպիսի ամօթալի ելս , եթէ բարուք քններ զիւր եկամուտս : Այլ թէպէտ և քաջ անտես է առատաձեռնն իւրոց հասից , բայց և այնպէս ոչ ձգէ հաշիւ յանարգիրաց : Այս ախտ է , որ աղաւաղեաց զփառս՝ եւս և առատաձեռն իշխանաց :

Հիպպիաս երևելի բանաւոր աթենայ՝ չափ մի զարեալ հարկ 'ի վր եդ իւրաքանչիւր մեռելս : Ոչ այլում , բայց պղուատի սանդարապետի աթենացւոց հնար էր 'ի վր դնել կապել այդպիսի , արտ իւրոյ երկփարաց արարեալ զգերեզմանատունս (109): Այս հարկ մեռելոց սարսափեցոյց զկեն-

զկենդանիս։ Հալածեցաւ 'ի Թիւրութենէն, զի կեցցէ ընդ իւր հարկատուս։

Եւ դու տես, զի վեսպասիանոս իսկ՝ որ պսակեացն զՀռովմ ամփիթէատրոնիւ, գարշացոյց զիւր հրէշ մեծագործութն՝ գարշելի հարկաւ լուալեաց։ Յանդիմանեալ յորդւոյ իւրմէ ('ի Տիտոսէ) վն այնպիսի ղազրութն, հոտոտեցոյց նմ դահեկան մի ոսկի. ասէ, 'Ի ՈՍԿԵՆՈՑ Է ԱՅԴ. ԵՒ ՉԷ ԻՆՉ ԾԱՀԱՀՈՓ։ Չէր ժահահոտ յընդունս վեսպասիանոսի, բայց ժահահոտ էր յընդունս որդւոյ նր. զի որդին՝ որդի էր ինքնակալի. և վեսպասիանոս՝ որդի ուրումն սոսկականի։

Աւաղէն յայտ է՝ թէ հարևալքն զագահուք թէպէտ և ձեռնարկեն երբեմն 'ի գործ ինչ առատաձեռնութն կամ մեծագործութն, մինչ 'ի վր արկանեն կեղտ ինչ ագահութն։

ԳԼ. Դ։

ԹԷ ՉԷ ՈՐՈՇ ԻՐԱՑ ԳՈՐԾԻՉԷ ԱՌԱՒԱՅԵԼՈՒՆ։

Ոսկի և ականք և այլ ամ պարգևք՝ չունին ինչ յարգ, բայց եթէ 'ի գինմանէ՝ որով պարգևեն։ Զի ող ԴՐԱՄՆ՝ ոչ այլ ինչ է, բայց երևելի նշան աներևոյթ սրտի, սոյնպէս ոչ ոսկին՝ որ պարգևի, այլ սիրան՝ որով պարգևի, է երախտաւորութիւն։

Պտուղք 'ի կաղնւոյ, 'ի դարնոյ, և 'ի սիզոյ՝ էին չնչին ինչ. բայց և այնպէս՝ գին էին կենդանի արեան պսակաւորին. զի էին գուղնաքեայ նշանք մեծի ինչ պատուոյ։

(110). Յորժամ աղքատն փաբրիկիոս՝ եսես առաջի աչաց զձոխ պարգևս սամնիտացւոց, եհարց՝ թէ տային արդեօք սամնիտացիք նոյնչափ և այլ ամ քաղաքացւոց հռովմայեցւոց. և 'ի պատասխանել հրեշտակաց՝ թէ այդ ՆՇԱՆ ԻՆՉ Է ՀԱՆԱՊԱԶ ՅՈՐԳԻ. ԱՌ ԸՆԹԱՑԻՆ ԱՌԱՆՁՆԱՑԻՔ ՔԱՂԱՔ ԱՆՁԻՆ, փաբրիկիոս՝ թէպէտ և աղքատ ամն էր, հրաժարեաց 'ի պարգևացն. և ամբաստան եղև զպարգևատուաց, թէ նենգ է 'ի նոսա։

Հայե.

Հայեցաւ փարրհկիոս նախ 'ի գիտումն սահմա-
նացելոյ` քան 'ի պարգևս նոցա, առ. իմանալ` ար-
դեօք պարգևք էին այնք, թէ որոգայթք : Զի նոյն
արծաթ` որ 'ի պարգևիլ ամենեցուն, լինէր պարգև
ինչ առատաձեռն 'ի պատիւ հնրկպետուէ, պար-
գևեալ ինքեան միայնոյ, թուեցաւ թէ չէր գին
արժանի 'ի գնել զիւրն հաւատարմութի :

Այս սիրտ պարգևողին է ոգի պարգևին. նա է`
որ առնէ զոսկին մեծագին կմ̃ անարգ, պատուա-
ւոր կամ նախատ, առատաձեռն կամ ժլատ.

Շռայլն` յիւր պարգևատուութիս ունի վախճան
զունայնութի. ագահն` յընչինսն, ունի վախճան
զարծաթսիրութի. առատաձեռնն` որպէս յառաջին
լուսոյ, 'ի պարգևեսն և յընչինսն` ունի վախճան
միայն ԶՀԱՄԵՓՈՒԹԻ ԳՈՐԾՈՅՆ.

Եւ այս վախճան որոշէ զառատաձեռնութին յայլ
բզմ̃ համանման առաքինութեց` համաբնակելոց յոգի
առատաձեռնի, որ ընդունարան է բզմ̃ առաքինու-
թեց. որպէս ոգի ագահի ընդունարան է ամենայն
մոլութեց :

Նոյն ոսկի` թէ պարգևի պարտատեան, լինի ԱՐԴԱ-
ՐՈՒԹԻ. թէ պարգևի բարերարի, լինի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻ.
թէ ողորմելոյ, լինի ՈՂՈՐՄՈՒԹԻ. թէ բարեկամի,
լինի ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻ. թէ իշխանի, լինի ԿԱՄԱԿԱՐ ԾԱ-
ՌԱՅՈՒԹԻ. թէ այ̃, լինի ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԻ : Սոսկ առա-
տաձեռնութին չհայի յայլ ինչ յորդոր, թէպէտ և
առաքինաւէր, բայց եթէ 'ի համեստութի արը-
չութեան. ԶԻ որում չափաւորէ զկարի իմն իղձ կմ̃
զկարի իմն արհամարհութի այսց երկրաւոր բա-
րեաց :

Մանաւանդ թէ ՀԱՑՆ` որ տածիչն է արիուէ, մե-
ծագործուէ, և բազմաց այլոց առաքինուեց, թոյն
է առատաձեռնուէ : Չիք առաքինուի ք զսա գո-
վելի, և չէք իբրև զսա` որ առեայ զգովութի : Ոչինչ
վաճառ պատուական քան զփառս, յորժամ առա-
ցանի արեամբ առն քաջի. և ոչինչ անարգ քան
զփառս, յորժամ գնի ոսկւով յառատաձեռնէ :

Մի 'ի մտերիմ սիրելեաց Նախայիշխանակէն կայ-
սերն սևերոսի, որ վաճառէր զձիրս և զշնորհս ար-
քայի.

քայլ, նորին հրամանաւ 'ի ծուխ հեղձուցաւ. յաւել նր, [illegible]: Որ անմխիթարութեամբ պարգեւէ զոսկի, մարթ է 'ի նա շրջել զբանս՝ առելով. [illegible], որ ըն[illegible]:

Շնորհս առատաձեռնն 'ի պարգեւել խրատ, հայեցեալ միայն 'ի համեստութեան պարգեւատուութեան, միայն թէ պարգեւն իցէ յօգուտ, ոչինչ փոյթ է նր, զի ծանիցի՝ թէ ուստի գայ:

(111). Ապելլեան քիացւոյ անկեալ հիւանդագին 'ի յետին չքաւորութեան, որ յետին աղանջականն է ատրբինեաց, եմուտ 'ի խուղ նորա արկեսիղայոս դրամոց 'ի ձեռին, և ասէ. [illegible]. և 'ի խոնարհիլն գիրկս արկանել նմա, գաղտ սպրդեցոյց ը̄ մնաս նորա քսակ ըն ոսկւով: Եգիտ զայն անկարծ աղախինն. և 'ի զարմանալ նր՝ ասէ ապեղէս. Մէ [illegible] խաղ է այդ Արկեսիղայոսի.

Այսպէս զծածուկ գայ առատաձեռն 'ի բարերարել խրատ. պարգեւէ ոսկի, և ծածկէ զձեռն. առնէ երախտիս, և խուսէ 'ի ծնոյ: Որ պարգեւէ վ̄ն փառաց, ոչ պարգեւէ այլում, այլ անձին. վաճառէ զերախտիս, գնէ ստացանս, և կորուսանէ զգրամս:

Գլ. Ը:

Թէ որով օրինակաւ գործէին առաքինութիւնքն:

Ոամենայն մարդկային բարիս հնար է մարդոյ վարել բարւոք կամ չարաչար: Նա միայն գիտէ վարել բարւոք, որ գիտէ զարուեստն: Որ ոք գիտէ վարել զգէնս, պաշտպանէ անձին, և վնասէ հակառակորդին: Որ ոք չարաչար վարէ, անձին միայնոյ վնասէ:

Նեռ հերակլեան 'ի ձեռս հերակլեսի՝ շանթ էր մահարար տռովադացւոց. 'ի ձեռս փիլոկտետեայ՝ եղև շանթ վրէպ. որ յանփորձ ձեռանէ յաւս անկեալ նր՝ խոցեաց կարեվէր ցնուազում (112):

Ոսկին՝ իբրև զերկաթ է պիտանի ինչ գործի. բայց անպիտան 'ի ձեռս ագահի, վասնզի որ 'ի ձեռս շռայլի. միայն առատաձեռնն գիտէ զարուեստ քաջ 'ի վար արկանելոյ:

Այս արուեստ մեծ՝ հաստատեալ է 'ի քաջ ճանաչել զպարագայս, որ աստայն. որչափ, և ում, և վասն էր, և որով օրինակաւ պարտ իցէ պարգևել և ընդունել:

Առաջին և մեծ կանոն է. Համեմատել զպարգևն՝ աստիճանին պարգևողին և ընդունողին: Երկաքին սոքա են առնչակիցք՝ անքակք յառաքինական միջասահմանութէ:

Փիլիսոփայ ոմն 'ի կիւնիկեան ցն 'ի շնական աղանդոյ, որ սովալլուկն էր և կատաղի քան զամենայն աղանդս, զեղծիչ՝ և ոչ թէ սիրող իմաստութէ, ժպրհեցաւ խնդրել յանտիգոնոսէ յաջորդէ աղեքսանդրի տաղանդ մի. որ է իբր վեցհարիւր դահեկան. Պատասխանի ետ անտիգոնոս. Յոյժ շատ է այդ կինիկոսի: Այլ անգամ խնդրեաց երկուս դենարս: Ասէ անտիգոնոս. Յոյժ սակաւ է այդ թագաւորի. և զանց արար զնմանէ:

Զարմին հակառակն, մեծն աղեքսանդր ումեմն թարմատար զօրականի՝ որ խնդրեաց 'ի նմանէ գոյզն վարձս, պարգևեաց քաղաք մեծ: Զարմացեալ պարգևառուին, ասէ. շատ է այդ ինձ զօրականի ուրուք: Պատասխանի ետ պարգևատուն. սակաւ է այդ վասն աղեքսանդրի:

Երկաքանչիւր թագաւորք սուտ տրամաբանութէիւն աղաւաղեցին զառատաձեռնութի. ցուցել զանձինս միան ագահ, և միւսն շռայլ: Անտիգոնոս խորհեցաւ 'ի մէջ կինիկոսի և թագի. զի մի պարգևեսցէ ինչ: Աղեքսանդր խորհեցաւ 'ի մէջ թագի և զօրականի, զի պարգևեսցէ բազում:

Պարտ էր անտիգոնոսի գտանել միջական ինչ պարգև 'ի մէջ երկաքանչիւր խնդրուածոյ, չժխտել երկաքանչիւրոյն երկոքումբք հրաժարմամբք, որ չէին արժան թագի: Պարտ էր աղեքսանդրի առնել միջակային ինչ պարգև 'ի մէջ թագի և զինուորի, և մի եղանել ըստ սահման բանաւորի:

Չէին

Չէին կամք արդարուն, թէ քաղաք մի ստացեալ արեամբ բազմաց՝ լիցի վարձք միոյ միայնոյ: Եթէ աղեքսանդրի կամք էին չափել զմեծ զիւր պարգեւս անձամբ լոկով պարգեւատուին, առ օրին սպառեալ էր զմեծ զիւր աւար: Առաւել ես առատաձեռնէր՝ թէ աւարէր սակաւ, քան թէ 'ի պարգեւել զքաղաքս՝ աւարէր զթագաւորութիւնս,

Այս առատաձեռնն 'ի պարգեւել ըստ աստիճանի անձանց՝ աւագաց, միջակայնոց և ստորնոց, չափէ զունկն կանոնաւ՝ զոր Թուաբանք կոչեն ՉԱՓԱ-ԱԿԻՔ. Դ է կանոն համեմատական. համեմատեալ զպարգեւս աստիճանաց անձանց, և իւրում կարողութեն:

Յայսմ կանոնէ հարկաւ մակաբերի միւս ևս կանոն, թէ ԱՌԱՏԱՁԵՌՆՆ ՈՒ ՊԱՐԳԵՒԷ ԶՄԵԾ ՄԻՈՅ ՄԻԱՅՆՈՅ: Վա՛ն զի հայր հայրենեաց գոլով նր, բաշխել ունի զպարգեւս քաղաքացւոց՝ որպ իւրոց որդւոց, ըստ իւրաքանչիւր արժանեաց, և առանց նախանձ արկանելոյ նոցա 'ի միմեանս:

Նախայիշատակեալն քսերքսէս՝ (յաջորդ դարեհի) այնչափ սէր կալաւ առ մի 'ի բիւրաւոր սօսեաց առ ջրղեօք նր պատելոց, մինչև զարդարել նմ՛ զբուն սօսոյն մեծագին մանեկօք, օղարկել յոսկս նր, թագ 'ի գլուխ կապել նր, և արբուցանել նմա անուշահոտ և պատուական օշարակս: Եթէ սօսոյն կայր միտ, խնդրէր արդեօք յարքայէ՝ չարկանել իւրև նախանձուկս յայլ տունկս, և չտալ զանձնէ կարծիս՝ անմիտ լինել իբրև զմի 'ի անկոց: Այլ որ իշխեացն ոսկի ոտնակապեք կալանաւորել զծով (որպ վերագոյնդ ասացաւ), իշխէր արդեօք ոսկի պսակաւ դշխոյացուցանել և զմի 'ի անկոց:

Բայց կանոն է ևս էական, ՉԲԱՇԽԷՆ ԱՌԱՏԱՁԵՌՆՔ ԶՊԱՐԳԵՒՍ ԻՒՐ 'Ի ՄՈՒՂՍ Ւ 'Ի ՔԱՂԱՔԱՑԻՍ: Զի որպ ոսկի խառնեալ Է այլ հրահալելի անարգի և կորուսանէ զիւր շողիւն, նոյնպէս յոռւանոյ և յանձանց՝ որք վարենն զնա:

Վա՛ն առատաձեռնն ոչ ընդունի զպարգեւս 'ի մոլեաց, զի մի կեղտ անուն ձգեսցէ յիւր գանձ.

և

և ոչ պարգևէ մոլեաց, զի մի կեղտ անուն ձգես-ցէ յիւր պարգևս :

Թող զի որպէս ունկին պարգևել առաքինեաց՝ տա-ծիչ է առաքինութեն, նոյնպէս պարգևել մոլեաց՝ տածիչ է մոլութեանց . և որ պարգևի չարաց, բառնի 'ի բարեաց :

Այլ և մոլելոյ՝ որ 'ի թշուառութեան իցէ, չէ պարտ ժխտել զօգնութի . բայց այն լինի ոչ առաքինու-թեան առատաձեռնի, այլ ոչ առաքինութեան ա-ռատաձեռնութեն :

Արիստոտէլ այսմ օրէնսգիր՝ ուսոյց մեզ զկատա-րումն խորով օրինակաւ : Քանզի 'ի հարցանել միոյ յաշակերտաց նորա, թէ էր աղագաւ պար-գևեաց փող ումեմն աղքատի՝ որ յայտնապէս էր վատանուն և մոլի, ետ պատասխանի . ՈՉ ԵՐԱԽՏԱ-ՒՈՐԵՑԻ ՆՄԱ ՈՐ ԽՈՐԱՄՈՅ, ԱՅԼ ՈՐ ՄԱՐԴՈՅ : Որ թէ ասէր՝ զոր առացաքն, թէ պարգևել այնմ՝ որ վատանուն իցէ՝ երբ ողորմելի է, չէ առատաձեռնութի, այլ մարդասիրութի, և պարտք բնական :

Ոչ յատուկ առատաձեռնի տանել պարգևս և մեծամեծս և յղփացելոց ընչիւք : Զի ունկի առա-տաձեռնի՝ յանձն է տրամաբաշխական առաքինու-թեն, առ օգնել՝ և ոչ թէ առ ընկենուլ 'ի բաց . և յառատաձեռնութե մասին որինչ ոչ օգնէ, է ընկեցիկ :

Զեղծ առատաձեռնութեն այն՝ զոր արար ոմն յիմաս-տասիրաց . որ առ իմաստասիրել՝ ընկէց 'ի ծով զամ զիւր գանձ (113) : Սկիզբն արար սա խորոյ իմաստութե 'ի մեծ յիմարութե . որ յառեգոյն ես էր քան զքսերքսեսին : Քսերքսես կամեցաւ ոսկ-ւով ծառայեցուցանել զծով : Սա կամեցաւ ոսկ-ւով փարթամացուցանել զծով, որ փարթամն էր քան զնա : Յուցաւ սա ոչ իմաստասէր, այլ ա-ռաքինատեաց, կամեցեալ հեղձուցանել զոսկի 'ի մէջ ձկանց, քան կեցուցանել զնա 'ի մէջ առա-քինեաց :

Առատաձեռնն ընկենու զոսկի 'ի ծով, յորժամ պարգևէ զայն այնպիսւոյ՝ որում ինչ ոչ օգնէ, կարող գոլով օգնել այլոց : Այս լինի բարեմար-գուն

դուն, բարեկամութիւն, և քաղաքավարութիւն պարգևել մեծատանց, այլ ոչ առատաձեռնութիւն. որպէս և ասացաւ :

Յաւելու արիստոտէլ՝ թէ առատաձեռնն առանձին իմն օրինակաւ պատաղեցուցանէ զառատաձեռնութիւն իւր յօգնել աղքատական արուեստից, և գործածուաց նոցա. զի ամօթ է առաքինութեան, թէ [illegible] (այսինքն [illegible]) [illegible] :

'Ի ծնանիլ աթենասայ՝ (որպէս առասպելեն) դիոս տեղաց յերկնից տարափ ոսկի (114): Դիոս է առատաձեռնն, զի օգնէ (ըստ անուանն թարգմանութեան). աթենաս է Ճարտարմտութիւն. տարափն ոսկի՝ է ոսկի առատաձեռնի, տածիչ կենաց Ճարտարամտաց և Ճարտարարուեստից: Բազում քաջ Ճարտարամիտք յայտնեցան առ օգոստոսիւ. զի կենդանի էր մեկենաս, որ լիաձեռն անձրևէր տարափ ոսկի (115): Նա եղև կատարեալ գաղափար առատաձեռնից, և մինչ 'ի վերստին ծնանիլ այսպիսեաց՝ վերստին ծնանին Ճարտարամիտք, ասէ նուագերգուն (ովրատիոս:)

Զորք ցեղք անձանց բաղկացուցանեն զՃարտարակապետութիւն, իշխանաւորք, ուսումնականք, զօրականք, և արուեստաւորք:

Արուեստաւորք ապրին վաստակովք իւրեանց. զօրականք թոշակաւ իւրեանց. իշխանաւորք կառավարութեամբ իւրեանց, բանաստեղծ և այլ ազատ Ճարտարարուեստք՝ գովութեամբ. և որ կերակրի գովութեամբ, կերակրի օդով: Որք պարծանքն են քաղաքաց, անկեալ դնին 'ի մթան. որք գրչաբարձրացուցանեն զքաջազունս, անկեալ դնին 'ի գետնի. որք կեանս տան մեռելոց, մեռանին 'ի սովէ, եթէ առատաձեռնք ոչ անձրևեն տարափ ոսկի:

Յետին կանոն և քան զամ գովելի՝ է այն, զի [illegible]: Պարգևն առանց երկոցունց ոչ՝ է կերակուր անհամեմ: Զի բարեբարութիւն հաստատեալ է 'ի կամս. և երկոքին սոքա են Ճշմարիտ նշանք գործադրիչ կամաց:

Պար-

Պարգևատուութիւն յագահն՝ է շարժումն բռնա-
կան. յառատաձեռնն՝ է շարժումն բնական. և
վնկ նա է դանդաղ և դժկամակ, սա է արագ և
կամակ։

Թէ չկարէ՝ վաղ հրաժարէ. և թէ կարէ՝ վաղվաղ
շնորհէ. երկաքանչիւրն են երախտիք. զի նա ըզ-
յոյսն չխաբէ, սա զհայցուածն աշխատ չառնէ։

Զէ պարգև այն՝ որ գնոց գնի։ Ազնուական սիրտ
ոչինչ այնպէս թանգագնոյ գնէ, որպէս յորժամ
արիւնըռուշտ շառագունութ աղաչէ. և վնկ լաւ
համարի գնոց գնել, քան ժանել. չարչարանս չար-
չարիլ. քան շառագունիլ։

Որ արագ պարգևէ՝ կրկին պարգևէ. զի որպէս
կախ մահ՝ է կրկին մահ, նոյնպէս երագ երախ-
տիք՝ են կրկին երախտիք։

Տիբերիոս՝ յերկաքանչիւրսն եղև միշտ տիբերիոս
(116). զի 'ի դատապարտելն, տայր դահճին.
[illegible] Իբր 'ի բարերարելն առէին
զնմանէ, թէ [illegible]։

Բայց որ պատկէ զգործ առատաձեռնի, է այն՝ զի
[illegible]. և [illegible]
[illegible]. զի
զայլոցն երախտիս գրէ յարձանի, և զիւրսն յա-
ւազի։

Ապա է սա առաքինութի քան զնա՝ զուարթարար
և շքեղ։ Զուարթարար յինքեան. զի պահէ ըզ-
միրան 'ի համապատաղորդ մարդս՝ կրկնակի բերկրա-
կանս. իբր զի տանէ շնորհս, և ընդունի շնորհա-
կալութիւնս։

Ոսկին, որ այլոց է սկիզբն վարանման՝ վն դժուա-
րութեն 'ի ստանալ, վասն հոգոյ 'ի պահել, և վն
տրտմութեն 'ի կորուսանել, ոչ կարէ 'ի վարանս
արկանել զսիրտ առատաձեռնի. զի ոչ պարգևէ,
բայց զոր ստացեալ ունի. և ոչ ստանայ, բայց զի
պարգևեսցէ. և որ պարգևի՝ մնայ անկորուստ.
մանաւանդ թէ 'ի վարձու տուեալ լինի բազում
տոկոսօք. կալով յապահովի երախտեացն յայնմ՝
որ ընդունի, և անմահական արդեանց յայնմ՝ որ
տանէ։

Իբրև

Իբրև հարցին կիւրոսի օտար դեսպանք, թէ ո՞ւր պահես զքո գանձս, եցոյց նց̃ զիւր սպասաւորս՝ ասելով. ԱՀԱ ԻՄ ԳԱՆՁԱՊԱՀՔ. ասեն՝ զի համարէր այնչափ ինչ ունել, որչափ ինչ պարգևեալն էր :

Բայց մեծ ևս տոկոսի է՝ ԴԱՏԻՒՆ և ԳՈՀՈՒԹԻՒՆ. զոր յայնմանէ ընդունի : Զի որովհետև յաչս ժողովդեան ոչ այլ ինչ է պատիւ, բայց վարկ երախտամատոյց կարողութեան, ոմ̃ ուսոյց արխատատել. ոչինչ առաքինութիւն այնպէս հաճոյ է ժողովրդեան և գովելի, որպէս առատաձեռնութին. և ոչ ոք 'ի մարդկանէ այնպէս շքեղ է և մեծարգի, որպէս առատաձեռնն. կենդանի աղբիւր գոլով երախտեաց :

Բարեացապարտ է նա առ ամեն, և երկրպագել յամենայն՝ ոմ̃ երկնաւոր ոմն 'ի յերկրի : Շտեմարանապետ կոչի աղքատաց, խնամակալու մեծատանց, վարձահատոյց առաքինեաց, և հայր հայրենեաց : 'Ի նա հայեցեալ ծերքն՝ և զարմանան. մանկունք՝ և ուսանին. չափահասք՝ և նմանօղ լինին. շռայլք՝ և ուղղին. անուղղայ ագահք՝ և զամօթի հարկանին: Ոչ ոք քան զնա պատուեալ է և զերծ 'ի նախանձուց. 'ի չարանխութեց, և 'ի թշնամեաց : Զի ոչ ոք նախանձի այնմ՝ որ ոչինչ ստանայ, բայց եթէ 'ի պարգևել. ոչ ոք ատեայ զայն՝ որ զամենեսին սիրէ. ոչ ոք թշնամանայ առատաձեռնի, թէ չէ թշնամի հասարակաց օգտի և հայրենեաց և իւր իսկ անձին : Վճ̃կ 'ի մահու նր̃ հասարակաց լալիւն լսի 'ի մարդկանանց, և սուգ զգենուն դէմք ամ̃ : Լան ժողովուրդք. լան առաքինիք. լան և Ճարտարարուեստք որբացեալք և խաթարեալք : Դուռն կոչեն զմանգաղ մահու, զի երարձ 'ի կենաց զամենայն կենսատու. և անարգար զրնուին՝ որ ոգւոյ երկնաւորի էր մարմին հողեղէն :

## ԳԼ. Զ.

### ՅԱՂԱԳՍ ՇՌԱՅԼՈՒԹԵԱՆ և ԱԳԱՀՈՒԹԵԱՆ :

Սուտ է այն կանոն հանրական, թէ երկու ինչ միում երրորդի ներհական՝ են ընդ միմեանս միաբան :

բան․ Շռայլութիւն և ագահութիւն են երկու մահուչափ թշնամիք առատաձեռնութեան, բայց առաւել ևս թշնամիք միմեանց :

Շռայլն կարի իմն արհամարհէ զինչս, վ՟նյ և վատնէ․ ագահն կարի իմն սիրէ զնա, վ՟նյ և պահէ: Որ առնէ աւելազանց ծախս վ՟ն հեշտախտութե, է հեշտասէր՝ և ոչ շռայլ: Որ վ՟ն փառասիրութե, է փառամոլ՝ և ոչ շռայլ: Որ պահէ զինչս վ՟ն առևտրոյ, է վաճառական՝ և ոչ ագահ: Որ վ՟ն խաղի, է խաղամոլ՝ և ոչ ագահ: Այլ շռայլն միայն պարգևէ՝ ըղձիւ լոկով պարգևելոյ, և ագահն պահէ՝ ըղձիւ լոկով պահելոյ․ և երկոքին իսկ արտաքոյ քան զարժանն :

Ամ՟ մոլութի ունի իւր գովիչս: Շռայլութեան գովեցողք անուանեն առատաձեռնութի, և ագահութեան՝ անուանեն խնայութի, վ՟նկ զնա գովեն երիտասարդք, և զսա ծերք․ զի շռայլութի է մոլութի երիտասարդաց, և ագահութի՝ ծերոց: Բայց որ՟պ փորձաքարն յայտ առնէ՝ զինչ ը՟դ մէջ է ճշմարիտ ոսկւոյ և սուտ ոսկւոյ, նոյնպէս առատաձեռնութի այդ ճանաչել՝ զինչ ը՟դ մէջ է ոսկւոյ շռայլի և ոսկւոյ ագահի:

Շռայլն յափշտակէ զօտարին, յորժամ չկայ ինչ իւր 'ի վատնել: Ագահն ոչ վայելէ յիւրն, միայն թէ մի վայելեսցեն այլք: Նա նման է գետոյն լիւդիայ, որ գողանայ զոսկի լերինն միդայ, զի ամասցէ 'ի ծով (117): Սա նման է մրջիմնաբուծուց լերանցն արիմասպեայ, որք պահեն զպահպանութիւն հանքաց ոսկւոյ․ ոչ զի պիտոյին ն՟ց, այլ զի մի պիտանասցին այլոց:

Շռայլն ոչ է մոլի յիւրմէ, այլ ը՟դ պատահման․ զի ոսկի ցանել ոչ ը՟դ առաքինութե՝ սերմն է ամ՟ մոլութեց: Եւ ագահն յիւրմէ է ը՟նդունարան ամ՟ մոլութեանց․ բայց ըստ պատահման երբեմն առաքինի: Զգաստ է 'ի կերակուրս՝ զի մի արասցէ ծախս․ չէ խաղամոլ՝ զի մի կորուսցէ․ չէ փառամոլ՝ զի մի ճոխ երևեսցի․ ոչ յանցաւորի՝ առ երկիւղի, զի մի տուժեսցի․ բայց մի միայն մոլութի ընու զաւեղի ամենայնի:

Դիւրագոյն գայ 'ի միջասահման առաքինութե

շռայլն

շռայլն քան զագահն ։ Զի շռայլին ոչ պակասի գործն, այլ գիտումն. բայց ագահին պակասի երկաքանչիւրն ։ Նա սխալէ կարի իմն վատահունի. առ կարի իմն երկիւղիւ ։ Եւ վ͞ն նա ցորչափ կեայ՝ տառապելու 'ի խոնջականութե, և նուազէ 'ի շռայլութե. և առ որչափ տառապել ծերանայ, այնչափ տառապել երկչոտի, վ͞յ և տառապել ագահէ ։

Շռայլն պարգևէ՝ զոր ոչն պարտի. և չպարգևէ՝ զոր պարտի ։ Ագահն պարգևէ՝ զոր պարտի. և չպարգևէ, զոր կարող էր պարգևել ։ Վ͞ն զի շռայլն 'ի պարգևելն վասն հաճոյից իւրոց, և ոչ վասն համեստութե, տառապել հաճեալ է պարգևել ըստ ընտրութե, քան վճարել զ͞ը պարտեաց ։ Եւ ագահն՝ վասն զի չէ հաճեալ պարգևել ը͞ս ընտրութե, վճարէ միայն զոր պարտի, զի մի բարձցի 'ի նմանէ՝ զոր ոչն պարտի ։

Ի վախճան սմի՝ այնչափ անմիտ է շռայլն, որչափ ագահն ։ Զի նորա չչափեալ զոր պարգևէ, սպառէ զինչս յառաջ քան զպարտիլ կենաց ։ Եւ սորա երկուցեալ՝ թէ պակասեսցին ինչք, սպառէ ըզկեանս, մինչև է վարեալ զնոսա 'ի պէտս ։ Մին՝ կարի իմն 'ի վար արկեալ զիւր ձոխութի. մեռանի աղքատ. միւսն՝ կեայ աղքատօրէն, զի մեռցի ձոխ ։ Նա թողու ժառանգաց զգանձս եպամինոնդի, ըն բարեկամօք՝ թափուր 'ի դրամոց ։ Սա թողու զգանձս պաւսանեայ, ըն դրամօք՝ թափուր 'ի բարեկամաց (118) ։

Բա-

Բարոյական իմաստասիրութ̃

# ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ:

## Յաղագս Մեծագործութեան, և ծայրից նորա:

### Գլ. Ա.

### Թէ զինչ իցէ Մեծագործութիւն:

Մեծագործութիւն է առաքինութ̃ [illegible]՝ զմի-ջասահմանութ̃ մեծամեծ ծախուց՝ 'ի [illegible] համեմատ պատճառի:

Թերևս 'ի սկզբան անդ անտեղի իմն թուիցի ումեք այս սահման արխատատելի: Զի թէ փոքրն և մեծ՝ են երկու ծայրք միջասահմանին, զիա՞րդ հնար իցէ միջասահմանին լինել մեծ ինչ միջասահման. և եթէ առաքինութին հաստատեալ է 'ի միջասահմանութ̃, զիա՞րդ հնար է՝ թէ լինիցի առաքինութի̃, այն՝ որ զանցանէ զմիջասահմանութ̃:

Բայց և այնպէս ծանիր, զի և 'ի մեծութ̃ գտանի միջասահմանութի, և 'ի միջասահմանութ̃ մեծութի̃ համեմատական:

Մեծ եղև գրոշուած [illegible], և գործ մեծագործ յինքեան. բայց եղև միջասահման ինչ [illegible], որ փոքր էր քան զնա. և [illegible]՝ որ մեծ էր քան զնա: Նա՝ առնապատկերն հռոդոսի, առ որով̃ նմ̃ անապատկերք աշխարհի էին թուեալք, համեմատել_ իւրում վախճանին՝ էր միջասահման ինչ. որպէս և այլք համեմատեալք իւրեանց վախճանին.

Իբր զի արձանն պոմպէոսի՝ 'ի պատիւ ուրումն առանձնաւորի, և կապիտոլեանն դիւա՝ վն̃ մեհենին մեծի, և առնապատկերն հռոդոսի՝ 'ի մասս նաւահանգստի, չէին ինչ փոքր կամ մեծ քան զպատշաճն. և յայն պատշաճողութի հաստատեալ է մէջ-

ան

ՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ: Զօրէն հակառակն՝ թէ նուիրես դու պատմելոյ զառնապատկերն հա_գոյի, և 'ի վր̄ նուաճնդային հողոյ կանգ_նես զկապիտալեանն գիսոյ, յայտ է թէ փոփոխմամբ վախճանաց և համեմատութեց՝ բառնաս դու զմիջա_սահմանութիւնն. զի մին լիցի մեծ, և միւսն լիցի փոքր քան զպատշաճն. և այն գործք մեծագործք՝ լիցին ծաղու արժանի:

Այս մեծագործութիւն հայի միանգամայն յերիս եղերս անդչականս. որ է 'ի ՄԵԾՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՅՆ, 'ի ՄԵԾՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՂԻՆ, և 'ի ՄԵԾՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԻՆ՝ յոյր սակս գործի: Մեծութի գործոյն չափի 'ի քանակէն. մեծութե գործողին յաւագութէ իւրմէ. մեծութե վախ_ճանին 'ի հասարակաց օգտէ: Եւ այս երեքին չափք միահաղոյն միով անուամբ կոչին ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ:

Այս իմաստուն̄ արիստոտել զայս մեծ առաքի_նութի անուանեաց երկեակ մեծամեծ անուամբք՝ որ նման են, այլ ոչ նոյնանշան. որ է՝ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ և ՄԵԾԱՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ: Մեծագործութե սոսկապէս մի̄ նիւթական մեծութե գործոյն: Մեծավայելչութի մի̄ բաղդատական մեծութե՝ համեմատելոյ վայել_չութե քանակին, և անձին, և վախճանին նր̄:

Յասացելոց աստի նախ առաջին մարթ է քեզ առ_նուլ 'ի միտ, թէ միջասահմանութե մեծագործութե՝ մեծ է յոյժ քան զմիջասահմանութե առատաձեռնու_թե: Զի որպէս փոքրիկ փիղն մեծագոյն է քան զմեծ գառնն, սոյնպէս փոքր գործ մեծագործութե՝ ա_ռաւելու քան զմեծ գործ առատաձեռնութե:

Փաբիոս Մաքսիմոս՝ մեծն քաջութ̄ և նիզակն ընչիւք՝ վաճառեաց զիւր մի միայն փոքրիկ կալուած, զի այնուիկ ոսկւով լուծցէ յերկաթի կապանաց ան_նիբաղայ զկալանաւորս քաղաքին կաննայ. զի փոքր ամօթ համարեցաւ հասարակապետութե զաղքա_տուն իւրոյ զօրագլխի, քան զգերուն իւրոց զօ_րականաց:

Ժողովուրդն հռովմէական առեալ զԹագաւորու_թի փոքուն ասիոյ, պարգեւեաց զայն արքային ատ_տաղոսի. զի առաւել արժան համարեցաւ հռովմէա_կան վեհափառուն՝ դնել մեծ ոմն թագաւոր, քան

ժա_

ժառանգել զմեծ ինչ թագաւորութի՛ն :

Թէ բաղդատին երկոքին այս գործք՝ ըստ ըղձի և ըստ կարի պարգևողին, յայժ առաւել պարգևեաց փարխոս 'ի պարգևել խուռամ վիճակ մի գեանի, քան ժղղգն հռովմէական 'ի պարգևել զթագաւորութի մի : Զի որ պարգևէ՝ որչափ ինչ ունի յաշխարհի, պարգևէ բովանդակ զաշխարհ :

Զորին հակառակն՝ ժղղգն հռովմէական պարգևեաց գուղնաքեայ ինձ՝ առ այնու, զոր կարող էր պարգևել : Բայց և այնպէս պարգև փարխոսի եղև առատաձեռն, և ոչ մեծագործ. իսկ պարգև ժողովրդեան եղև մեծագործ, և ոչ առատաձեռն : Զի որպէս լուար, գործ մեծագործ ոչ չափի ըստ կարի և ըստ ըղձի, այլ ըստ մեծութեան և ըստ պտղոյ գործոյն :

Տես դու և զայն. զի որպէս մեծագործութին է առաքինութիւն տարբեր յառատաձեռնութե, նոյնպէս և [illegible] մեծագործութե են տարբեր 'ի [illegible] առատաձեռնութե : Սորին կոչեցան [illegible] և [illegible]. բայց նորին յառաջ քան զարխտատել չունէին անուն : Այնպէս գժուարագիտ եղև առ նախնիս մեծագործութի, որ ոչ անուամբ և ոչ իսկութ ծանուցաւ. կամ թէ այնպէս աղքատ էին նոքա 'ի մտաւորութե, որ խառղելն աչաց ոչ 'ի փայլածոյ որպիսի և իցէ մեծագործ գործոյ՝ ոչ որոշէին զմեջ յիւրոց ծայրից : Եւ զինչ կարող իցէ իմաստասիրել՝ որ ոչն գիտէ սահմանել. կամ զինչ կարող իցէ սահմանել, որ զանունն իսկ ոչ գիտէ : Այլա արխտատել ոչ հաստ եղև՝ թէ միջասահմանութի առաքինութեա մեծի հաստատեալ է 'ի վայելչականն, նոյնպէս նոր՝ բայց իսկական անուամբ կոչեաց զառաքինութին՝ [illegible]. զմոլեկան նուազութին՝ [illegible]. և զմոլեկան առելազանցութիւնն՝ [illegible] [illegible] :

Մեծավայելչութին է՝ պատշաճաւոր մեծութե չափ. փոքրավայելչութին ոչ հասանէ 'ի չափ. չափազանց վայելչութիւնն առաւելու ըստ չափ :

Յայտնանէ ունիս իմանալ հուսկ ուրեմն՝ քանի գըժուարին իցէ գիտուխս, և քանի կարևոր՝ ում կամք

իցէն առնել գործս մեծագործս: Վս̄ զի ոմն ոչինչ է այնպէս գժուարին, ոմն Ճանաչել զհամեմատութն վայելչութն. վս̄ անհամար պարագայից՝ զորոց կախեալ կայ, նոյնպ̄ կարի դիւրին է վրիպել յիմիք պարագայի. և կարի ծանր է նմ̄ վրիպակ. զի 'ի պակասել կամ յառաւելուլ քան զվայելչականն՝ վատանին գանձք 'ի ստանալ մեղադրանս:

## ԳԼ. Բ:

### ԹԷ ԶԻՆՉ Է ՈՐ ՄԵԾԱԳՈՐԾ:

Գործն մեծագործ, ոմն անուանն իսկ իւր հնչէ, լինելոց է մեծ: Այս պարտ և պատշաճ է, թէ և որ գործէն զայն՝ իցէ մեծ. զի համեմատական վայելչութիւն իցէ 'ի մէջ արարողին և արարուածոյն: Սխալէս այլանդակ իմն է, թէ ոչխարն զառիւծ ծնցի, և անարգ ոք՝ զգործ մեծագործ: Ոչ կարէ մեծագործ լինել, որ 'ի վր̄ գործոյ մեծի ոչ կարէ գրել մեծ նս անուն. զի անուանն մեծացուցանէ զգործն՝ քան թէ գործն զանուանն:

Նախատինք մեծ են մերում դարու, զի մեծագործ անուն այնպ̄ սորանկ է յիւրմէ մեծութէ, մինչև հազիւ կարուակք և պանդոկապետք զեջանին յանձն առնուլ. այն՝ որ երբեմն պահեստ էր միայն մեծամեծ թագաւորաց և քաջազօր ինքնակալաց: Եւ զիարդ կարող իցէ լինել մեծագործ, որ ոչն է ձեռնհաս առնել գործս մեծագործս. կամ զիարդ մեծագործ իցէ գործն, եթէ արարող գործոյն 'ի ժողովրդականաց ոք իցէ, թէպէտ և մեծատուն:

Առասպելեալ գորտն՝ մինչև հասանել էր ուռուցիկ ցհաւասարութ̄ եզին՝ պայթեցաւ. և այսպէս մեծատուն՝ մինչև է արժանացեալ կոչիլ մեծագործ, հիւծեալ հաշեսցի. զի ցածուն անձին ցածուցանէ զգործն՝ թէպէտ և մեծ:

Բակարակ և սաւրս մեծահարուստ Ճարտարապետք՝ անձնամատոյց եղեն շինել զթէատրոն հոկտաւեայ՝ իւրեանց ծախիւք, միայն թէ շնորհեսցի նց̄ քանդակել զանուն իւրեանց 'ի նմա: Գործակալք

կալք շինուածոյն չաւին յանձն, համարեալ՝ թէ մեծագործուն գործոյն անարգեսցի ոսկւով ռամկայնոց՝ և ցածուն անուամբ ճարտարաց, որք էին ցածազգի, թէպէտ և յարուեստի իւրեանց անուանի :

Բայց անգոսնելի մեծագործութիւն եղև այն՝ զոր արար Հռոդոպէ գերի աղջիկ մեծանուն. որոյ գեղ՝ բազմաց յաղթեաց իշխանաց և թագաւորաց. որ յամօթապարտ շահուց՝ կանգնեալ բարձր ամբարտակ, եցոյց երկնից զիւր և զայլոց ամօթ նախատանաց. (119) :

Նախանձ եարկ համեստուն այն լրբենի յաղթանակ. և հրապարակեալ խայտառակութիւն՝ եղև հրապարակական զարդ : Եբարձ այն ամբարտակ ըզզարմանագործուն այլոց ամբարտակաց եգիպտոսի. և այլ ոչ զարմացաւ աշխարհ. թէ առ ամբարտակ արքային կղեոպայ աշխատ եղեն այնչափ գերեք. որովհետև առ ամբարտակ գերի աղջկան ուրուք հանդանակեցին այնչափ թագաւորք :

Այս որոց մեծ է հարստութիւն և փոքր վիճակ, ճահողագոյն է նոցա բաշխել զգանձս իւրեանց 'ի գործս առատաձեռնութեան, քան կորուսանել զայն 'ի մեծածախ շինուածս. զի հնար է նոցա արդիւնս ատանել զպարգևատուի, այլ ոչ մեծագործ անուան լինել արժանի :

Գանձ վաճառականաց նուարկէ թռուցիկ առագաստիւ բախտի : Գանձ մեծամեծ կալուածոյ՝ կախեալ կայ զամպոց : Գանձ մեծամեծ իշխանաց է իբրև զանդաստան պիերիայ գաւառի՝ ուր խորարմատ տարրացեալ էր ոսկի. իբր զի ոչ պակասին նոցա հարկք՝ թէ ոչ պակասին ժողովուրդք : Այս իշխանաց միայն հնար է փառաւոր առնել զգործ ինչ մեծ, անուամբ մեծաւ : Ցնանի ընդ իշխանի գերունակ իմն բարձրուն՝ անուանել վեհափառութիւն. որ փայլէ 'ի նմ̃. և զեղեալ յիւր գործս՝ առնէ զնա արգոյս և մեծս :

Այս յանժամ գործ ինչ է գեր 'ի վերոյ մեծագործ, յորժամ անցանէ զանցանէ մեծութ̃՝ զայլովք. և արարող նորա առաւելու քան զայլս վեհութ̃ :

Յայտ

Յայտ է թէ զոր օրինակ մարդ ոչ միշտ գործէ ոպ̄ բանաւոր, այլ երբեմն ոպ̄ զգայուն՝ և երբեմն ոպ̄ աճեցուն, նոյնպէս իշխան ոք՝ ոչ միշտ գործէ ոպ̄ մեծագործ, և ոչ՝ ոպ̄ իշխան:

Արեգակն ոչ այլ ինչ է էապէս, բայց վառարան լուսեղէն և կենդանատու, զետեղեալ յաշխարհի յերախտաւորութե̄ն ամ̄ մարմնեղէն գոյից, որ շուրջ կան զնովաւ՝ ոպ̄ սանդխոց մանկունք՝ դիել զլոյս և ընդունել զկեանս: Իշխանն է արեգակն իւրոց ժողովրդոց. և արեգակն է իշխան ամ̄ լուսաւորաց: Էական յատկութիւն արեւու՝ է ճառագայթել. և էական յատկութիւն իշխանի՝ է օգնել: Թէ արեւն չէր լուսատու, չէր արեւ. և թէ իշխանն ոչ օգնէ, չէ իշխան: Թէ արեւն անցուցանէր օր մի անլոյս, այն օր ոչ լինէր տիւ, այլ՝ մթին գիշեր. և թէ իշխանն անցուցանէ օր մի՝ յորում չօգնէ այլոց, այն օր՝ ոպ̄ ասէր Տիտոս, կորուսեալ է վն̄ նր̄. զի ոչ գործեաց ինչ ոպ̄ իշխան. (120):

Այլ ուրեմն եթէ արեգակն լուսաւորէ զմարմին ինչ մասնաւոր, ոչ կապարաւ փակէ զիւրն զօրութիւն. բայց եթէ լուսաւորէ զամ̄ աշխարհ, համասփիւռ ծաւալէ յառարկայն զիւր բարերար կարողութի̄: Իսկ իշխանն՝ ոպ̄ այլուր ասացաք, յորժամ բազմամնեայ երախտեօք օգնէ մասնաւորաց, գործէ ոպ̄ առատաձեռն. այլ յորժամ առնէ գործս մեծամեծս առ հրապարակական օգուտ և 'ի զարդ, յայնժամ 'ի վեր արկեալ զգեր 'ի վերոյն իւրոյ վեհութե̄ն՝ գործէ որպէս մեծագործ:

## ԳԼ. Գ:

### ԹԷ ՈՐՔ ԻՑԵՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ:

Ոպ̄ զառատաձեռնութե̄ ասացաք, թէ բազումք գիտեն վաստակել՝ այլ սակաւք գիտեն պարգեւել, նոյնպէս 'ի մեծագործութե̄ դիւրագոյն է մեծ ծախս առնել՝ քան առնել ինչ մեծագործ:

Են թռչունք՝ որ յղանան 'ի շնչել զեփիւռոյ. բայց ձուքն եղանեն հողմալիցք. որք յայն սակս կոչին զեփիւռականք: Ըստ սմին օրինակի երբեմն անձինք

ձինք մեծամեծք փքացուցոյ փառամոլութ՟ երկնեն երկս բազմածախս, բայց 'ի խոնհականութենէ և 'ի վայելչութ՟ թափուրս :

Գաղափարք մեծագործ գործոց եղեն այնք՝ զորս աշխարհ կոչեաց իւր եօթն սքանչելիս (121)· իբր զի արդարև սքանչելի ին՟ եղև, զի աշխարհ գեռ-արմուղ գոլով երկնեաց սիրոս լայնատարրս 'ի յե-ղանակ զնն, և միոս հանճարաւորս յերկնել զնն :

Մեծագործ եղև ՏԱՃԱՐՆ ԱՐՏԵՄԵԱՅ կառուցեալ յԵ-փեսոս 'ի բովանդակ ասիոյ՝ յերկերիւր ամս 'ի վ՟ր հարիւրոց սեանց կանգնելոց 'ի հարիւր թագա-ւորաց. համակ ընդարձակատարր և հոյակապ և մշտնջենաւոր. թէ չէր յանկ հանեալ զմշտնջենա-ւորութիւն նորա ջահի միոջ 'ի միում գիշերի. կամ զի պայծառացուցանել անուն հրդեհարկութին, կամ զի լեցի հրացանութն ուրախութն մեծի ծնն-դեան աղեքսանդրի, յոյր մանկաբարձութն զբաղեալ էր արտեմիս զայն գիշեր :

ՊԱՐՍՊՆ ԲԱԲԵԼՈՆԻ. որոյ բարձրութն ամհման էր թռուցաց թռչնոց. և թանձրութն՝ յօրինէր լայն ասպարէզ 'ի կառարշաւս : Սքանչելիք զարմանա-գոյն. զի ոչ 'ի հարիւրոց թ՟րոց յերկերիւր ամս, այլ 'ի միոջէ միայնոյ թագուհւոյ (ֆ՟ 'ի շամիրամայ), 'ի գոյզն հնգերեակս ամաց սկսաւ և կատարեցաւ : Որով և ցուցաւ, թէ ոչ երկարութն ժամանակի, այլ մեծութն սրտի առնէ գործս մեծամեծս. ամ-փոփեալ զախրտ այնչափ թ՟րոց 'ի մի կին :

ԲՈՒՐԳՔ ԵԳԻՊՏԱՑՒՈՑ. ոչ բուրգք, այլ լերինք պատ-ուական քարանց՝ փոխադրեալք յարաբիոյ յե-գիպտոս՝ 'ի թաղել զթագաւորս, բայց յառաջա-գոյն զնն դամբս :

Յաղթեաց մեծագործութես գշխոյն կարիոյ՝ (այն է արտեմիսիա թագուհի՝ կին մաւսողեայ արքային կարիացւոց) ԳԵՐԵԶՄԱՆՆ ՄԱՒՍՈՂԵԱՆ, զոր արար 'ի պահել զոսկերս առն իւրոյ. յետ պահելոյ զմո-խիր նր յիւր որովայն. մինչև թողուլ զաշխարհ 'ի տարակուսի, թէ ո՞ր չիրիմ էր չքնաղագոյն, կըշ-եայն՝ թէ կենդանին :

Նախայիշատակել ԱՆԴՐԻԱՆԴԻՍՆ ՈՂԻՄՊԵԱՆ՝ որ գուռն էր

էր այնմի՝ նաւահանգստին հռոդոսի. այնչափ բարձր՝ և այնպէս ճարտարարուեստ, մինչև նախանձ առեալ արևու, թէ առ իւրև երևեսցի այլ ոք թիւր քան զինքն զարմանաւոր, սասանեցուցեալ զերկիր՝ տապալ կործանեաց զնա. զի մի կորուսցէ զփառս լինելոյ մի միայն. (122):

ԱՇՏԱՐԱԿՆ ՓԱՐՈՍԻ. (որ 'ի փարոս կղզւոջ նեղուցին շինեն յաղեքսանդրէ մեծէ) որ 'ի մթան գիշերի ցուցէր նաւորդաց զնաւահանգիստն՝ իւրով բոցաճաճանչ լուսով, այնպէս անուանի եղև ը̄ աշխարհ ամ, մինչև նաւել բազմաց առաւել 'ի տեսանել զաշտարակն՝ քան զարքունիս աղեքսանդրի, յոր պէտս էր:

Ջհուսկն տասցից. ՄԵԾ ԱՐՁԱՆՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԴԻՈՍԻ համակ 'ի փղոսկրէ, գործ քերուբ քանդակագործին փիդիայ. որ 'ի վարան արկանէր զդիցամոլ երկրպագուսն՝ թէ ո՞ր իցէ առաւել երկրպագելի. դիո՞ս, թէ քանդակիչ նր:

Յայսց գաղափարաց մարթ է քեզ առնուլ 'ի միտ, թէ գործք մեծագործք՝ լինել ունին ՃԾԱԾԱԻ, ՃԾ. ՆՈՐՄԱՆԱՑ Ի ՈՐԴՈՅ: Զի 'ի մեծամտութէ ծնանի մեծութիւն. 'ի մեծութէ զարմանութիւն. և 'ի զարմանութէ յարգ և պատիւ:

Բայց անկատար լինին այս չորք ձիրք, թէ այլք երկուք ոչ կատարելագործեն զգործն: Մին՝ է ՇՓՈՓՆ. զի մի այնչափ սակի յամուլ քարանց վերայ վայրապար ցանեսցի: Երկրորդն է ՀԱՆՃԱՐԵՂՈՒԹԻՒՆ. զի որկորեայ ծերունւոյն՝ որ ուտէ զիւր ծնունդս, յայսպիսի հասարակաց ծնունդս զուր խորտակեսցին ժանիք. (123):

Որոք նովին գնով կարող է առնել ինչ գործ մշանջենաւոր, և առնէ զայն վայրկենաւոր, չարիս կամի իւրոց յետնորդաց. և իւր յետնորդք լիցին նր չարակամ. առեալ զիւր ինչս. և տարջասցի զի ատեաց. յորժամ խապառ կորուսցէ:

Ծախք՝ որ լինին 'ի մարգարիտս, 'ի կարկեհանս, և յանգամանդս մեծագինս, անկ են այն՝ առն մեծագործի, բայց չեն գործք մեծագործք: Զիք 'ի նս մեծութ ՏԱՆՋԻ. զի գանձ մեծ փակի 'ի փեճեկ

մի

մի ընկուզոյ ։ Չէք ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ · զի գանձ իմն է շարժուն, և ոչ կայուն։ Չէք ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ· զի գանձ իմն է՝ որում կան 'ի գարանի · և վտանգ է՝ գուցէ 'ի ճանկ անկանիցի ծառայի ։ Չէք ՕԳՈՒՏ · զի գանձ է թաղեալ յարկեղ ։ Չէք ՃՇՄԱՐԻՏ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ · զի գանձ է՝ որոյ գինք կախեալ կան զկարծեաց ամբոխին ։

Եւ արդարև փիւնիկն անուանեալ անգամանդից՝ անգամանդն կարոլոսի բուրգունդիացւոյ՝ եղև ան֊գին · զի առաւելոյր քան զմիմ չափ · և գանձ մեծ էր յամփոփ քանակի անդ ։ Բայց և այնպէս՝ գեր֊մանացին, որոյ գտեալ էր զայն ՟Է՟ ամյլև յաւուրս իշխանին մեծի՝ անպարտելւոյն 'ի պատերազմողաց, և պարտեցելոյն 'ի հովուէ, վաճառեաց զայն սա֊փորոյ միոյ գնւոյ ։

Եւ թերևս լաւ ևս գին եհատ սա քան զակնավա֊ճառս · զի և աքաղաղն եսովպոսեան՝ գտեալ ան֊գամանդ յաղբևս, ասաց · ԱՌԱՒԵԼ ԽՈՀԷԻ ԳՏԱՆԵԼ ՀԱՏ ՄԻ ԳԱՐՒՈՅ՝ ՔԱՆ ԳՈՀԱՐ ՄԻ ։

Այդ կարի իմն առատաձեռնութէ, այլ ոչ մեծա֊գործունէ են ցոյցք՝ այսպիսի ծախք · բայց և չեն ինչ անպատշաճականք մեծագործ իշխանի · զի որ ստացեալ ունի զառաքինունէց զմեծն, առաւել ունի և զփոքրն ։ Բայց մեծ նախատինս գնէ իւրոց գան֊ձուց, վատնեալ զգինն 'ի գործ՝ որ չարժէ այն֊չափ ։

Լիաձեռն պարգևատուութիւնք, այլ ոչ ճշմարիտ մեծագործունէք եղեն ՅԱՂԹԱԿԱՆ ԴԱՐՁԻՆ կայսերաց, սփռեալք ժողովրդեան 'ի միջէ առատաձեռն ձե֊ռանէ, և յափշտակեալք 'ի բիւրուց ագահ ձեռաց՝ այնչափ աղմկաւ, մինչև վարձուց յաղթուէ թշնա֊մեաց՝ երևիլ ակնկիզրն քաղաքական մարտի ։ Թող զի 'ի չքաւորիլ գանձատուն 'ի սակաւ ժամս, դուզ֊նաքեայ իմն 'ի ձեռս հասանէր իւրաքանչիւր սա֊կականի, և արքունեացն և ոչ մի ։

Զնոյն ասեմ ՇՆՈՐՀԱՏՐԱԿԱՆ ԸՆԾԱՅԻՑ կեսարուսի և օխզ֊ղայի՝ առ որսալոյ խայծիւ զսէր ժողովրդեան · որ 'ի միում աւուր միայն կլանէր զգինս մեծ և անանց գործոց ։ Այն զի յոլովակի ինքնայքն սկսեալք մեա֊

րա֊

բանութ և խնդութ յանկելին 'ի խնջոյս հարսանեաց լապխթաց և կենաւորաց. (124). և կատաղութիւնն 'ի ներքս հոլովէր 'ի միրգս անդ խնձոր գժտութեան:

Բայց թէ հիմնարկէ 'ոք երևելի [illegible] մնայուն եկամաք 'ի ժողովել զհիւրս, թէպէտ և հիւրընկալութիւն է լոկ առատաձեռն ինն, բայց մշտնջենաւորութիւն է մեծագործ ինչ. զի կրկին երախտաւորութ միշտ երախտապարտ կացուցանէ զօտարս. և միշտ պատուէ զհայրենիս. և յետ մահու իսկ յայնմ վիճակէ քաղէ իւր գովեստ:

Վասն թէպէտ խաղք [illegible], [illegible], [illegible], [illegible], գործ էին առատաձեռնութեան. բայց և այնպէս թատրոնք, և ամփիթէատրոնք, կրկէսք, և նաւակացուրդք, գործ էին մեծագործութեան. զի խաղքն էին առժամայնք, և շինուածքն յաւերժականք. այնց 'ի խնդիր էին քաղաքացիք, իսկ զարդարէին զքաղաքն. նոքա էին տեսարան, և սոքա սքանչարան:

Նոյնպէս գործք մեծագործք եղեն [illegible]: [illegible] նշանագրականք յաղթութեանց տրայիանոսի, կամ ցուցակք յաղթանակաց օգոստոսի: [illegible]: [illegible] նմանք մարմարաշէն քաղաքի: [illegible] [illegible]. որ առուեր էարկ զեօթամբք սքանչելեաց աշխարհի, ընդ թիւ մտեալ ում ութերորդ՝ մեծ ևս քան զնս:

Բայց եթէ այնք գործք են առաւել մեծագործք, որք 'ի սքանչելարուեստ ճարտարութեան, և 'ի մեծածախութեան հոյակապ գործոյն յաւելուն հասարակաց ինչ և նշանաւոր և յաւերժական երախտաւորութեան. զինչ էին կամարքն յաղթականք, բայց դրունք անպիտանք՝ փեռեկարացք, միայն 'ի առ մուտս համակ հռովմէական ամբարտաւանութեան: Զինչ սիւնք տրայիանոսի և օգոստոսի. բայց յիշատակագրութք բարբարոսաց, առ քերելոյ յանձանց զիւրեանց անիրաւութիս անջինջ քանդակելոյ: Զինչ ամբարտակն ադրիանոսի. բայց լեառն վիմարգեան՝ առ ամբառնալ յօդս զդի ինչ անկենդան: Զինչ ջերմուկք. բայց ջուրք մեծապայծառ առաքինութեան և

առ-

առնացի քարոյից: Եւ զինչ ասեղն այն ամփիթէատ-
րոն. բայց մեծ ինչ սպանդանոց մարդկեղէն մարմ-
նոց. ուր՝ կամ գազանք մարդկան, և կամ մարդ-
մարդոյ էին գիշատողք:

Այլ դու տես ինձ աստանօր, զի գործ քան զսոսա մեծագործ եղև՝ աղտեղագոյնն 'ի գործս Հռովմայ. այն են ԿԼՈԱԿՔ: Գործ այնպէս աղտեղի՝ որ յինքն հաւաքէր զամ զաղտեղութիս Հռովմայ, անտես առնէր յաչաց. մանաւանդ թէ՝ զի մի ծանր լիցի լսելեաց իւր անուն, փոխառեալ անուամբ պատկառաւորա-կոչիւր ՆԻՄՖԱՐԱՆ. ա՛րդ թէ նիմփայք իցեն խողք՝ որ փափկանայցեն 'ի ժահր: (125):

Բայց յայլմէ կողմանէ՝ էր այն գործ այնչափ մեծա-ծախ՝ վասն յօրինուածոց անբաւ կամարակապ քա-րանց, մինչև չէր ինչ սուտ ասել, թէ գեղեցիկ էին ներքոյք Հռովմայ՝ քան զվերին երեսս: Այնչափ առողջարար, մինչև 'ի նմանէ եւեթ խոստովանէր Հռովմ ունել զառողջութի. և զիւրոյ մարմնոյ ար-տաքնոյարդար վայելչութի: Այնչափ պիտանի, որ ապահովէր զՀռովմ ստորերկրեայ շնչահանօք 'ի սասանութեց՝ որ ստէպ լինէին յայնմ վայրի: Այն-չափ օգտակար 'ի տուրևառին վաճառս, որ փա-կեալ 'ի գոգ իւր գետս նաւագնացիկս, առնէր ընդ երկրաւ տարուբեր վաճառաց և համբարաց: Եւ այնչափ մեծագործ, մինչև համարիլ այլնիոսի, թէ մեծ եղև քան զամ գործս Հռովմայ. և արժա-նացաւ հեղինակ ունել զլաւն քան զամ թագաւորս: Բայց խոստովանելի է, թէ աղտեղութն նմանացոյց իրօք ինչ զշողիւն մեծագործ գործոյն, և օգուտն զամօթի հարաւ յանարգութն:

Այս առաւել ևս մեծագործ եղև գործ ապպիո-սի կղօգիոսի. որոյ բրեալ զերկիր՝ յարկեաց բրա-ծովն ԺԲ ՃԱՆԱՊԱՐՀ ԱՌՈՒԱՆՆ, խաղացուցանել 'ի վ̅ի̅ հովտաց և Ժ̅Բ̅ լերամբք զհռովմէական լեգէոնս՝ 'ի միջերկրեայ ծովէն մինչև 'ի ծովն ադրիական. որով ճանապարհն տաժանաւոր՝ եղև զուարճալի ճե-մարան:

Սա եղև ճշմարիտ մեծագործութի. որ զմեծածա-խութին արար օգտակար, և զօգուտն մեծածախ.

և

և ճանապարհն ողջունի արժանացաւ անուն տանուլ յիւրմէ արարողէ։ 'Ի կոխան լինել ճանապարհին՝ անուն Նր բարձրանայր. և ամ քայլ տպաւորեր նշոյլ ինչ 'ի փառաց Նորա։

Զի ինչ յետնորդ քան զաս գործ ինքնակալին կղոդեայ՝ ՆԵՐՈՆԻ։ Այն ինչ Հռոմ 'ի ջուրս իւրոյ տղմուտ տիբերիս գետոյ տապէր 'ի ծարաւոյ, սա 'ի մարմարիոնեայ քամակ բարձրաբերձ կամարաց՝ խաղացոյց իբրև յաղթանակաւ ընդ օդս գետս առողջարարս. որոց սողեալ 'ի հրապարակական և յառանձնաւոր աղբիւրս, շնորհեցին ժողովրդեանն մեծի առողջութիւն և գրգանս։

Բայց այն եղեն մեծ զարմանք, զի գլուխ մի փոքրիմաց կարողացաւ խորհել այդպիսի ինչ մեծագործ։ Խորհուրդ՝ որ բաւական եղև տալ նմ զօգոստապատիւ անուն ոչ է խաղ. սակայն եթէ իւր էր այն խորհուրդ. զի առաւել սիրէր նա ըղտակառս քան զջրմուղս։

Բայց քան զամ գործ մեծագործ է ըստ իմաստասիրելոյ արիստոտէլի, կանգնել ԿՈԼԻՍԷՈՆ ԵՒ ՓԱՆԹԷՈՆ՝ այնչափ մեծածախս և զարմանագործս, մինչև գործոյն լինել հրաւիրակ հասարակաց յածպաշտութիւն, և ածպաշտութեանն լինել հրաւիրակ անմահ բնութեանն 'ի մահկանացուաց բնակութիւն։

Այս է գերամեծ գերակատար առարկայ մեծագործութե. զի ոչինչ մեծ՝ է այնպէս առաւել քունարան գեղոյ արուեստի. ոչինչ վախճան է առաւել գերակայ, և ոչինչ գործ է երախտաւորագոյն հասարակայեաւն՝ քան զհանդիսի կրօն։

'Ի տաճարէ սկսանէին Հռոմայեցիք զպատերազմական շահատակութս. և 'ի տաճար բերէին զկապուտ կողոպուտ աւարին։ 'Ի տաճարէ հարցանէին խնդ զմեծամեծ իրողութեց, և 'ի տաճար դարձուցանէին զշնորհակալութիս բարեբաստ ելից։ Վասնզի թէպ և 'ի կոյր մոլորութիս հեթանոսութն խարխափէին նք միայ, սակայն և այնպէս համարեցան միշտ, թէ ոչինչ գործոյ արժան էր լինել քան զայն մեծավայելուչ և մեծաշուք։

Նոյն

'Նոյն Թիւր՝ որ հանճարեաց զլուալիս, զի արտացէ զհռովմ առողջ, խորհեցաւ կառուցանել և զմեծ տաճար կապիտոլեանն զիոսի. զի արտացէ զհռ-
ովմ նր (Թէպէտեւ անուր կրօնիւք):

Եւ Թէպէտ նոյն գիտս շանթառաք՝ բզիմ անդամ շանթս արձակեաց յայն իւր ամբարտակ, բայց և այնպէս միշտ եւ յիւրմէ այրեցածէ առաւել եւս գեղեցիկ և պատուական. մինչ զի 'ի ժամանակս կայսերաց, յորում ոսկիմ հռովմայ փոխեցաւ 'ի կիճ, կիճք տաճարիս փոխեցան յոսկի. (126):

## ԳԼ. Դ.

## ԹԷ ԶԻՆՉ ՀԱՐԿԱՆ ԳՈՐԾԻՑԷ ՃԱՐՏԱՐՆ:

Ըստ ասացելոցս զառատաձեռնութենէ՝ մարթիս խորհել և զմեծագործութենէ. զի հանրական վախճան երկոցուն այդ է նոյն. այս է ՀԱՃՈՅՆ. այլ միջնաւոր խմասք են տարբերք:

Զգործ մեծագործ մարթ է մատնել ՆԻՒԹՈՎՆ և ՁԵՒՈՎՆ: Նիւթ է ամբարտակն՝ որ այլք երեւի. որպէս Թատրոն ինչ, կամ կամար, կամ շիրիմ, կամ տաճար: Տեսակն է աներեւոյթ, և ծածկեալ 'ի գիտման գործողին. որ կեանս տայ առարկինի կամ մալի գործոց, որպէս հոգին մարմնոյ:

Գիտութիւն գործողին մեծագործութեանն՝ է համեստութիւն նորին գործոյ, որպէս ասացաւ: Եւ առանց այսր վախճանի՝ որչափ և մեծ իցէ գործ ինչ և արքենի, կամ լինի մոլեկան, կամ այլ ինչ առաքինութիւն տարբեր 'ի մեծագործութենէ:

Խստ ինչ առն ունել այնչափ զօրութեն յեղափոխելոյ զերեւակայութեն կերողին, մինչեւ ոչ այլ ինչ առնել նմ, բայց շրջել և շրջշրջել զքարինս: Այսպիսի է արտամադրութեն ոմանց. որ ոչ 'ի ասկս մեծագործ համեստութե, այլ 'ի ՔԱՆԱԿ ԻՐ ՔԵՐԹՈՂԻ ձեռնարկեն 'ի քանդել և 'ի շինել մերթ հօյակապ ապարանս, մերթ բարձրաբերձ ամբարտակս. որ չեն ինչ պիտանի. ոչ վայելչական, և ոչ զովանի:

Այսպիսի եղև բնաւոր բերութեն զոմեսիանոսի. խուռն խճողել զհռովմ քարամբք, և զքարինս ոսկւով.

ւով. այնպէս անշուք զնա ընկեցեալ, ոպ̃ և քաղեալ: Ոսկեզարդեաց այնպէս զսեամս դրանց, ոպ̃ զգահոյս. այնպէս զաստապատանս, ոպ̃ զգահլիճս. այնպէս զտաճար դիոսի, ոպ̃ զգմբէթեայ յարկս հարճից: Պլուտարքոս համարեցաւ զնա անմիտ. և իմաստնապ̃ կոչեաց զմեծագործութի նր՝ [illegible]: Ըղձանայր սա՝ թէ յորինչ ձեռն հասուցանէ, լիցի ոսկի. յորմէ սովորեալ, կոչեաւ սովաման (127):

ԱՅԼՔ յորդորին առնել գործս մեծագործս, զի այլոց մեծագործութե լիցին նմանօղ. զորէն կապկաց՝ որ չեն մարդիկ, բայց ջանան առնել զոմ̃ զոր տեսանեն առնել մարդկան:

Ոչ է սա մեծագործութի, այլ՝ կապիկ մեծագործութե. զի չունելով յինքեան զոխս մեծագործութե, առնու զայն 'ի փոխ:

ԱՅԼ թէպէտև նմանօղք յերգիծաբանից կոչին [illegible], բայց և այնպէս իմաստունն զենոն յորդորէր զձոխ քաղաքացիս նմանօղ լինել մեծագործութեանց պերիկլեայ. զի մեծ փառք են լինել նմանօղ 'ի մեծամեծ իրողութիւնս, քան հեղինակ 'ի փոքունս. և չէ քաջ հեղինակ՝ որ չեղև քաջ նմանօղ:

Փոքր միւս ես արժանաւոր յորդոր մեծագործ գործոց, է [illegible] ( [illegible] ) [illegible]: Յոմ̃ մարդիկ բնաւորեալ է մեծ ինչ տենչ անմահութե. բայց քանզի բնութին որոշեալ ունի իւրաքանչիւրում անհատի զսահման կենաց, նոյն ինքն բնութին հաստեաց 'ի նա ձիգն յերկարաձգելոյ զկեանս 'ի զաւակս. և որում ոչ գոյ զաւակ, փոխանակեաց զազնուական ինչ խորհուրդ գործելոյ գործս մեծամեծս. զի 'ի նոսա կեցցէ իւր յիշատակ. և եթէ անմարթ է ասել, թէ [illegible]. գէթ ասասցի, [illegible]:

ԱՅԼ թէպէտ և այս գիտութի արժան է ամ̃ մգոյ, որոյ ծնունդ իւր ոչ բերէ նմ̃ ապաշաւ, բայց և այնպէս մօտ է սա մոլութեն, որ աղաւաղէ զմեծագործութի. այն է՝ [illegible]:

Վաղու ես ծնաւ այս մոլութի գրեթէ ընդ աշխարհի

յայն

յայն անասնաբարոյ արս յաղթամարմինս, այլ ծանծաղամիտս, որ խրախուսեցին շինել աշտարակ, որում արժան էր անուն կոչել՝ աշտարակ հսկայից և հսկայ աշտարակաց․ որոյ հասեալ գագաթ յերկինս՝ տարցի զմակագրութիւն անուան նր՟ 'ի վերոյ քան զաստեղս :

Չեղև երբեք ինչ գործ քան զայն մեծագործ․ բայց և ոչ քան զայն յիմարական : Թէ կեցեալ էին հարիւր հազար ամս, և զնոյն զգուստ հողոյ առեալ էին յաղիւսարկուն, մինչև ելեալ գործոյն 'ի գլուխ, սպառեալ էր արդեօք հողն : Բայց 'ի գործս մեծագործս, որչափ գլուխ ամբառնայ փառամոլութին, այնչափ 'ի բացուստ 'ի վեր երևի անմտութիւնն :

Փառամոլք ոչ դրոշմեն զմակագրութ՟ վս՟ առնելոյ իւրեանց զգործն, այլ առնեն զգործն՝ վս՟ դրոշմելոյ զմակագրութիւն․ զի վախճան նոցա չէ առնել գործ մեծ, բայց եթէ 'ի մեծացուցանել զանձինս :

Նա՝ որք անմիտ նկարիչք առ նմ՟ ջնջին նկար ստորագրեն զիւրեանց անուն, նոյնպէս փառամոլք՝ 'ի վր՟ գերեզմանի, 'ի վերոյ սեղանոյ, և յամ՟ գլուխ կամրջի քանդակեն զանուն և զդրոշմ, ըստ բաղեզան՝ որ յամ՟ որմ կառուի :

Մեծագործն ոչ պատուասէր իմն համարի առնել ինչ պատուական՝ 'ի մուրանալ զպատիւ․ այլ վս՟ զի համեստութ՟ գործոյն այնպէս պահանջէ :

Շատ է նմա, զի շատացոյց զանձն :

Ղուկուղոս մեծապարգև մեծարեաց մեծագործ շքով զզեստանս պարտիզոյ․ որոց զարմացեալ և զամօթի հարեալ, ջանային իւրեանց համառօտ ոճիւ շնորհակալութիւն մատուցանել, փնկ զի 'ի շնորհս նոցա արար մեծամեծս : Որոց Ղուկուղոս ետ պխնի․ Ինչ ինչ արարի 'ի շնորհս ձեր․ բայց զառաւելն արարի 'ի շնորհս Ղուկուղոսի :

Չէր կարօղ տալ պտսխնի քան զայն արժանավայելուչ հռովմէական մեծագործութե : Եթէ յայնմ մեծածախ շինելութ՟ ակն եդեալ էր նր՟ երախտապարտ կացուցանել հասարակապետութ՟ զօ-

րացն

տարան , լինէր խոհեմութիւն քաղաքական : Եթէ յայտ առնել զուէր իւր , լինէր բարեկամութիւն : Եթէ 'ի ցոյց ընծայել զիւրն ճոխութիւն , լինէր ունայնութիւն :

Բայց գլխաւոր մեծագործին դիտակն ունի առնել զգործն արժանի իւրում անձին : Թուեալ է և նիւթական վախճան գործոյն լիցէ հիւրասիրուն , տեսական վախճան գործոյն է համեստուն : Զի մարթ է ումեք առնել հիւրասիրութիւն առանց մեծագործուն , կամ գործ մեծագործ առանց հիւրասիրութն :

Վնչ մեծագործն ոչ պարծի , և ոչ հպարտանայ ընդ գործս իւր . զի ոչ գործէ վն պատուոյ , այլ վասն համեստուն . և սիրտ նորա մեծ է միշտ քան զգործն :

Զէ ինչ նմա փոյթ՝ թէ գովեսցեն զգործն ժողովուրդք . ինքն է միայն նորա գովիչ . զի ինքն է միայն՝ որ գիտէ զյարգ նր : Զէ ինչ նմա փոյթ՝ դնել 'ի վր զանուն իւր կմ զմակագրուն , զի ոչինչ փոյթ է նմ՝ թէ գիտասցեն այլք . ոյր արարեալ լիցէ զայն , և եր աղագաւ : Զի թէ գործն է փոքր , չհամարի զայն արժանի իւրում անուան . և թէ մեծ , ոչ անուն իւր 'ի խնդիր լինի տեսաղաց . այլ տեսօղք 'ի խնդիր լինին անուանն . որ 'ի համբաւոյ կամ 'ի յիշատակագրաց հետաղհետէ գրի 'ի յիշատակարանս :

Ապա եթէ ուրեք երբեք հեղինակն մակագրէ գործոյն զիւր անուն , չառնէ զայն ոչ լաւար , առ առաւել եւս պայծառացուցանելոյ զանուն իւր չքեղութբ գործոյն , այլ առ առաւել պայծառացուցանելոյ զգործն չքեղութբ իւրոյ անուան :

Որ միանգամ տեսանէր զհրաշակառոյցն զայն պանթէոն (128) զանձքախոյ նրց տաճարաց , կառուցեալ պորփիւր սեամբք , պղնձի հեծանօք և ոսկի ձեղուամբ , ընդարձակատարր՝ և արժանաւոր շքեղ-լութն ոչ ճշմարտի սմ սրբք , և ոչ թէ արէսի համայն չածովք , համարէր ընդ միտս , թէ անկար է լինել գործ քան զայն մեծ և սքանչելի : Բայց ապա ընթերցեալ զայն երեք բառ , ՄԱՐԿՈՍ ԱԳՐԻՊ-ՊԱՍ

դաւ առար, թուէր նոցա գործն՝ կրկին քան որչափ էրն՝ մեծ և սքանչելի: Կարծէին կերպարանափոխութի ինչ լեալ ագրիպպասայ 'ի գործն, և գործոյն յագրիպպաս, մի զմիով ելեալս արարեալ 'ի պատուի:

Այսոյգ իմն է, թէ մեծանձն ըղձանայ պատուոյ մեծի՝ համեմատելոյ մեծուն իւրոց գործոց. վասն յիրաւի էր ագրիպպասայ ըղձանալ փառաց և գովեստից վս գործոյս մեծի: Այլ այն խղճ լինէր սեպհական մեծանձնութեն ագրիպպասայ՝ և ոչ թէ մեծագործութե նորա. զի մեծանձնութեն կամակ՝ է պատիւն վս գործոյ մեծի. այլ մեծագործութեն կամակ՝ է մեծուն գործոյն:

ԳԼ. Ե.

ԹԷ ՈՐՊԷՍ ՕՐԻՆԱԿԱՒ ԳՈՐԾԻՑԷ ՄԵԾԱԳՈՐԾՆ:

Մեծագործութիւն՝ որպս ցուցաք, է մեծ ինչ գիտուն. զի պահանջէ զկատարեալ ճանաչումն ինչ անհամար պարագայից, յորս հաստատեալ է վայելչութի գործոյն:

ԶԵՂԽԱՆՈՅՆ 'Ի ՑՈՅՑԵԼՈՒԹԵՆ չհայի ինչ 'ի պատշաճաւորութին, միայն թէ գործն իցէ մեծ:

ՓՈՔՐԱՀՈՅԵԼՈՒՆ՝ առաւել հայի 'ի նուազութի ծախուց, քան 'ի վայելչութի գործոյն:

ՄԵԾԱԳՈՐԾՆ՝ առաջի առնէ գործ ինչ մեծ. բայց պատշաճող ծախսանին՝ անձին, զօրուն, և այլոց պարագայից. զնմ փոյթ 'ի մէջ առեալ, զի մի ինչ պակաս իցէ 'ի կատարելութե և 'ի վայելչութե: Որ ոչ զմտաւ ածէ՝ զոր առնէ, ոչ կարողանայ առնել զայն՝ որում ըղձանայ:

Առաջին և մեծ կանոն է, զի ԾԱԽՍԱՆՆ իցէ պատշաճող գործոյն, և ԳՈՐԾՆ ծախսանին, ասէ արիստոտէլ:

Այսպս ծաղրական եղև մեծագործութի իւրումն աղեքսանդրի. որոյ խորհրդեալ յայսմ իմաստէ, 'ի մեռանիլ երիվարի իւրոյ ցլոգլխի՝ նուիրեաց քաղաք մի յանուն նր. և անդ կանգնեաց նմ արքայավայել գամբարան՝ արժանաւ նր և մակագրութբ:

Եթէ

Եթէ կարծէր նա, թէ ոգի հօր իւրոյ Թագաւո-
րի փոխադրեալ էր յայն երիվար, ապա ցուցաւ՝
թէ է յիմար. զի ուսուցիչ իւր դաստիարակաց
զպիւթագորեան ոգեփոխութիւն: Թէ ոչ հաւատայր,
ապա ցուցաւ՝ թէ է ապերախտ. զի չարար այն-
չափ պատիւ հօրն, որչափ երիվարին: Այլ ոչ
մնայր ինչ, բայց նուիրագործել նմա տաճար, և
պաշտել զնա. զի այլ մի ոք երկուսացի, ով առա-
ւել անմիտ իցէ, երիվարն, թէ որ աշտանակէրն
'ի նա:

Չեցոյց ինչ մատուցումն քան զաս կիմոն աթենա-
ցի՝ անուանեալն [illegible]. որ ջորւոյն յաղթակա-
նաց 'ի ձիընթացս ոլիմպիական խաղուց՝ կանգ-
նեաց մեծագործ շիրիմս մօտ իւրումն: Կարող էր
պատուել զնո իւրով իսկ գերեզմանաւ, հանգերձ
հասարակաց իմն մակագրութբ. [illegible]
[illegible]:

Չէ արժան համապատուել զանասունս ընդ մարդ-
կան, և ևս առաւել զմիկին ընդ մոյ, առէ արխառ-
ակել. զի առաւելու անպատշաճութիւն՝ քն առաւել-
ըոյ անզուգականութեն:

Բայց և այնպէս յայս տարապայման առհման ձգե-
ցաւ մարդահաճոյն ծերակուտին. որ առաջի ա-
բար ախրեբիոսի փոխանակ յաղթական կամարի
կանգնել մեծակառոյց ինչ տաճար, զի անդ երկր-
պագութիւն ընկալցի անուն իւր և չնծուն: Տիբե-
րիոս թէպէտ և էր փառախնդիր, չառեալ յանձն
զայն պատիւ, բայց 'ի բաց մերժեաց ասելով.
[illegible]
[illegible]:

Թուէր նմա առասնել, թէ յետ մահուն իւրոյ
այն տաճար 'ի հիմանց քանդեսցի. անուն իւր զա-
տապարտեսցի. չնծուն իւր ծաղածանակ լիցի. և
պատկերք իւր գետնաքարշ գետընկէց լիցին, ով
աղաղակեաց ժողովուրդն յերեսս իսկ նորա. Տի-
[illegible].

Բայց չեղեն այնչափ առ երեսս զգուշաւորք իւր
յաջորդքն. զի փոքր փոքր ընտելացեալ նշ այնմ
կերպարանափոխութեն մեկան 'ի [illegible] (129),

համարէին զանձինս լինել այն՝ զոր ինչ այլք առնէին: Ոչ անդադար դաւադրութիւնք, և ոչ արեան 'ի վերայ բղխմունք, և ոչ հեղգհեալ խայտառակ մահք, բաւէին յայտնել նց, թէ չածութինք էին ծաղրականք. որովհետև որք ածացուցանէինն զնոսա, նոյնք և ցրէին:

Նայի մեծագործն 'ի պատշաճողութ գործոյն ևս ըստ բնաւորութեան տեղւոյն և ծովեզերեայն՝ որում առնէ: 'Ի Թեբէ գործք առաւել պատշաճօղք և հաճոյականք՝ էին տաճարք. և 'ի սպարտիա՝ պատերազմական մրցանակք. զի այն էր բնաւորութն նց. վնյ և աստացաւ, Թէբէ դանդաղ նախիրանօք, և [illegible]: Յաթէնս՝ դպրոցք և իմաստասիրաց համալսարանք, և 'ի կրետէ ջերմուկք և Թատրոնք. զի նոքա էին գիտնականք, և սոքա փափկակեացք. վասն որոյ և աստացաւ յառակս, Կրետացիք չարագազանք և դատարկորովայնք (130):

Սմին իրի 'ի հռովմ ամ ազգք մեծագործ գործոց եղեն ճահողականք. զի առ նոսա զօրացեալ էին միապէս ամ առաքինութիք և ամ մոլութիք:

Եւ ոչ միայն ըստ որպիսութն տեղւոյն, այլ և ըստ ընդունելութեան ժամանակին չափէ մեծագործն զիւր գործս:

Սերվիոս Տուղղոս Թգր՝ յաւարէ յաղթութն լատինաց կառոյց զարձան կապիտոլեանն դիանի. զի ձօնեսցին նմա կողոպուտք: Ապպիոս Կղօդիոս, որում որպէս քննչի մեծի՝ անկ էր զինուորական բարեկարգուն, համարեցաւ թէ չկայր նմա գործ ճահողագոյն, քան զհորդել ճանապարհ զօրականին. յորոյ աւերակն մինչև ցայսօր երևի ողջիկ իւր անուն:

Իբրև ցածոյց օգոստոս արեամբ դաւադրաց զըստուեր հայրենի, մարկոս ագրիպպաս փեսայ նորա կանգնեաց զտաճար արէսի վրէժխնդրի: Եւ վեսպասիանոսի տեսեալ, թէ յինքնակալել իւրում լռեաց քաղաքական պտրգմն վիտեղեանց և օթոնեանց, և փախստեայ խաղաղութին եմուտ անդրէն 'ի հռովմ որպէս նոր ինչ չածուն, կանգնեաց զտաճար խաղաղութն, և զամփիթէատրոն. զայն 'ի շնոր֊

հակալումն իւրոյ չածունց. զայս ՚ի խնդումն իւրոյ կիսամեռ ժողովրդեան: Գործք՝ որ մեծութ և գեղեցկութբ առաւելեալ քան զամ մեծագործ ամբարտակ, ՚ի վէգ կային միայն ընդ միմեանս:

Զարրին հակառակն՝ ապաժամ և տարադէպ մեծագործութն եղև այն գործ օգոստոսի, որ յանձկութն պահու, յորժամ յամ Թաղս Թօթափէին քաղաքացիք ոպ ոսկերաց ՚ի սովէ, արար մեծապատրաստ և չքեղահանդէս խրախճան՝ որ չէր երբէք երևեալ. ժբ տիկնայս և ժբ արս, զդիցն ապաղիննեայ արկեալ զիւրեաւ զհանդերձ, ոպ և այլք զպէսպէս դից:

Երկպառակեցաւ չքաւորուն հասարակաց՝ զեղխութ սակաւուց: Այնուհետև ժբ ամ հռովմ ոչ լինէր լսել, և ոչ երևէր ինչ, բայց կատաղի յոգւոցհանութք, և քրթմնջմանց գրութք այսպիսի երգիծանօք. Ոչ ինչ են զարմանք՝ թէ հռովմայեցիք մեռանին ՚ի սովէ, զի կերան դիք զամ ցորեանս. Անողորմ զեղծագործութն, և ոչ թէ մեծագործութն եղև այն՝ այնպիսւոյ իմաստնոյ ինքնակալի. բայց թերևս նուազեցէ զզարմանս՝ տէրուն այնչափ լցեալ ափրոդիտաց ՚ի վերայ միոյ ապողոնի (131). որոյ մին միայն բաւական է խելագարել զժ ապողոնս:

Ապա առաջի արարեալ վախճան ինչ պատշաճօղ, այն՝ որ ձեռնարկէ ՚ի գործ ինչ իբրապէս մեծագործ, այնուհետև ջանայ գտանել տրոնեփափէտ անուանիս և հմուտս ՚ի նկարագրել զձևն: Զի գեղեցիկ վախճանն կախեալ կայ զգեղեցիկ սկզբնաւորութ. և այնպէս կերտուածոց՝ որպ և նկարուց՝ յանուանէ արուեստագիտին կրկնապատկի յարգ:

Յեօթանց սքանչելեաց աշխարհի, առնապատկերին հռոդոսի երկպառակեցաւ անուն՝ յանուանէ կարէսայ աշակերտին լիւսիպպոսի: Ողիմպիականն դիոս եղև մեծանուն յանուանէ փիդիայ: Մեծակառոյց դամբարանն արտեմիսեայ՝ ՚ի Ճարտարութն չորից գերազանց Ճարտարապետացն՝ սկոպպայ, բրիակսայ, տիմոթեայ և լէովկարայ. որք եղեն միմեանց գործակից և փառակից: Եւ տաճարն արտեմեայ նկարա-

բազձեալ 'ի կորերայ , յառաջ տարեալ 'ի մեոգենայ , տարածեցաւ 'ի Թեմոկլեայ : Որոց բնաւք եղեն անմահք քան զիւրեանց ամբարտակս . զի ամբարտակք Թաղեցան , և իւրեանց անուն դեռ կայ : Նոր ոչ վայրապար արուեստագէտք կոչեցան ճարտարք կին հանճարաւորք . զի այնպէս ճարտարութ և հանճարով փոյթ ունէին վայելչութն և համեմատութն գործոց իւրեանց , մինչև մեքենական արուեստին փոխել յարուեստ ազատական :

Ով 'ի հանդերձանս զոհից գիտնաւոր օրինականք , նոյնպէս 'ի զարդ տաճարաց ներհուն ճարտարապետք իմաստասիրեցին : Դից անտառայնոց կառուցանէին տաճարս , որոց ճարտարապետել յօրինուած էր գեղջուկ , ցածուն , խոշորագեղ , և համառօտ . անուանեալ՝ կարգ տոսկեան : Դից միջակայնոց էր կարգն դորիկեան , փոքր մի եւս բարձր և սեթևեթեալ : Դից մեծաց՝ կարգն յոնիական , առաւել եւս մեծավայելուչ և ճոխազարդ :

Բայց ափրոդիտեայ և հերայի և արտեմեայ յարիւրէին՝ կարգ կորնթեան , ծաղկայօրինուածսակ վայելչութք խարսխաց , խոյակաց և ծնօտից : Իսկ յաւերժահարսանց՝ որք դերակայից և գլխովին մատուցոց՝ կարգն բաղադրեալ , որ պանծագոյնն էր և նուրբ և գիրգ քան զամ կարգ :

Նզա 'ի գնել առաջի գեղեցիկ ինչ և իմաստուն դաղափար, հայի ուշիւուշով իշխանն մեծագործ՝ Թէ Փիդիասն արժանաւո՞ր իցէ Աթենայց . կամ Թէ Աթենայք արժանաւո՞ր իցեն Փիդիասին . զի մի ծախուց կամ գործոյն զկնի եկեսցէ ապաշաւ :

Ադրիանոս կայսր 'ի հանդիսի որդեգրուն կեսոնիոսի՝ 'ի տօնախմբութն մեծագործութեանս , 'ի շինուածս , 'ի խաղս , 'ի խրախճանս , 'ի պարգևս հրապարակականս և առանձնաւորս , 'ի դերապանծ հանդերձանս՝ ծախեաց տասն միլիոն ոսկի : Յաւարտ տօնախմբութեն սկիզբն եղև կոծոյ : Կեսոնիոս հիւանդացաւ 'ի մահ : Ադրիանոս խելայեղեալ գոչէր , Վա՜յ է ինձ , զանձս իմ 'ի ջուր կորուսի : Առաւել ցաւ էր նմա կորուստ դրամոյն քան որդւոյն . զի դիւրագոյն էր նմ որդեգրել այլ տասն կեսոնս ,

քան

քան հաւաքել այլ տասն միլիոնս։ Եւ նովին գնովք արարեալ էր արդեօք գործ՝ ոչ հրձուալական, բայց հնարական կարի պիտանան։ Վն ճանապարհին ապալեալ չեղեն այնչափ ծախք։

Այլ առաւել ևս յիրաւի էր պարծանալ գեմարի ումեմն, որ ծախեաց զերկերիւր հազար նոմոս ոսկւոյ 'ի ծախս պտանկականս. և մեսսաղայ, որ ծախեաց երկուս մեծագանձ հայրենի ժառանգութիս 'ի կատակերգակս, որ և եղև յետոյ առակ կատակերգուաց. ոպ և մեսսաղինս առակ եղերերգուաց։

Բայց կարևոր ևս մտածութի է՝ կշռել զգործն Ը իւրում ՊԵՐԻԿԼԷ։ Առանց այսր կշռուն անհնար է զերծանել 'ի միջէ յերկուց սաստի անպատշաճութեց։ Զի կամ գործն մնայ անկատար, և որ արարին ընկնի տեսակ նշաւակի, և կամ որ արարին այնուհետև զօշաքաղէ արծաթ՝ ուստի չէր արժան։ Զի որպ գրէ պղուտարքոս. 'ի ՊԱՏՄԻՒ ԳԱՆՁՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵ, ԱՆՏՐԷՆ ՄԲԵՐԻ ԱՆԻՐԱՒԱԲԷ։

Ա. եկեղ այս անպատշաճութի՝ շատ է 'ի բիւրուց օրինակաց մի միայն օրինակն մեծի բրգան կղեոպպէի արքային եգիպտացւոց, որ առաւելան 'ի բարձրութ քան զհաստատութի մնաց, և յիրաւի 'ի համար դասեցաւ եօթանց սքանչելեաց աշխարհի։ 'Ի սակս որ ապաւէն կղեոպայէի զնմ զիւր գանձս. և տեսեալ թէ ոչ է ձեռնհաս հասուցանել 'ի կտր, եգիտ նոր ինչ ոսկեհանք յիւրում իսկ տան, վաճառեալ զիւրոյ դստերն զպատիւ։

Իւր ո՞ւր է զոր սոյն արխատել, թէ վախճան մեծագործութն է հայիլ 'ի համեստութիւն. զի կղեոպէ առանց ընկեցիկ առնելոյ զհամեստութն 'ի տանէ 'ի դուրս՝ չկարողացաւ 'ի կատար հասուցանել զիւր բուրգն։

Մեծ անպատշաճութի է չչափել զիւր ինչս, բայց ոչ փոքր է և այն՝ չչափել զիւր ԿԵԱՆՍ։

Այժմ օրինակ եղեն առ իշխանս՝ այլ երկու սքանչելիք. գամբարանն արտեմիսեայ, և տաճարն եփեսոսի. գործք՝ որոց անհնար էր կատարումն առնուլ 'ի վերայ երկրի, թէ ոչ արարօղք նց լինէին Է երկրաւ։ Որ սկսաւն զնն, ոչ ուրախ եղև տես-

լեամբ

լեալք կատարմանն․ և որ կատարեացն՝ ոչ կալաւ
յանձին պարծանս սկիզբն առնելոյ նորա։

Թող զի մեծ սքանչելիք պիտին, թէ յաջորդն կատարեաց զգործ նախորդին։ Իբր զի իւրաքանչիւր ոք սիրէ զիւր մտաց ծնունդ. և այժմ մեծ համարի և անշքութիւն՝ վատնել զիւր ինչս առ 'ի կատար հասուցանել զայլոյ խնդս, իբր տխմար հաւու՝ որ 'ի թուխս նստի 'ի վերայ ձուոց որ ոչ իւր իցեն։ Ստոյգ իմն է այս, որպէս յիւրում տեղւոջ ասացի. թէ մեծանձին է թողուլ զգործն անկատար. ցուցեալ՝ թէ 'ի կուրծս նորա տաղաւարի սիրտ մեծ ևս քան զկար. և թէ՝ դիւրին է ժամանակի 'ի նմէ պակասիլ, քան նմա 'ի ժամանակէ։ Բայց մեծանձնութիւնն չէ մեծագործութիւն. նա չափէ զսիրտն, և սա զգործն։

Օ հուսկն ասացից. մեծագործն յամ 'ի գործս իւր՝ է ժրաջան և զգուշաւոր և վեհ. զի մի ինչ պակաս իցէ 'ի կատարելութենէ և 'ի վայելչութենէ։

Պանծալի հանդիսացաւ յայսմ Պօղոս Եմիլիոս. որ զինչ և առնէր, եթէ շինուածս, եթէ խաղս, և եթէ խրախճանս, յօրինէր զայն մեծագործութեամբ և կարի իմն զգուշաւորութեամբ։ Զարմանային յոյնք, թէ զիարդ միտ նորա զբաղեալ 'ի մեծամեծս, այդքան ժրաջան էր 'ի մանունս։ Աւ. որս առնէր ալխնի. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Միայն Պարրասիոս 'ի պատկերահանս արժանացաւ մականուանել [illegible], այս է [illegible]. զի հասուցանէր զնկարս իւր յայնպիսի վերջին կատարումն, մինչև այն ինչ 'ի հանդէս հանէին այլ ոմ պատկերահանք զգործս իւրեանց չև ևս աւարտեալ, զի անկատարութեամբ ծածկեսցի թերութիւն նոցին. և Ապեղէս իսկ ստորագրէր (անկատար բայիւ) թէ [illegible]. սա միայն կարողացաւ ստորագրել, թէ [illegible]։ Այնպէս 'ի մէջ այլ մեծագործ գործոց՝ միայն Պանթէոն արժանացաւ այնմ մակագրութեան. [illegible]։

## ԳԼ. Ձ:

### ՅԱՂԱԳՍ ՓՈՔՐԱՎԱՅԵԼՉՈՒԹԵԱՆ, ԵՒ ՉԱՓԱԶԱՆՑ ՎԱՅԵԼՉՈՒԹԵԱՆ:

Չափազանցն 'ի վայելչութեն, և փոքրավայելչութն՝ ոչ 'ի վեր արկանեն 'ի գործս իւրեանց զայլ ոք ճարտար, բայց զիւրեանց բնաւոր բերումն: Զի թէպէտ և հրաշատիպ իցէ օրինակն, երկաքանչիւրն զայն խանգարեն: Նա 'ի վեր յաւելեալ անպէտ մեծութեն, սա խնայեալ յաշխատութեն և 'ի ծախս. ոչ գիտելով ո՛չ սորա և ո՛չ նորա, ո՞ր իցէ համեմատութեն և վայելչութեն:

Չափազանցն 'ի վայելչութե գործէ կամակար, բայց անմտաբար: Փոքրավայելչին գործ՝ խառն է 'ի կամաւորէ և յակամայէ. զի մղէ զնա փառամոլութեն, և յետս ընկրկէ ագահութեն:

Վնկ մին աղաւաղէ զգործն կարի իմն շուայտութբ. և միւսն խանգարէ կարի իմն գանգաղանօք: Նա նման է ընձառիւծու, որ թէ ոչ փոյթընտառ զրուամբ ածէ զորսն, լքեալ թողու: Սա նման է լերին՝ որոյ երկնեալ մեծ ինչ երկն, յետ բազում դղրդմանց՝ ծնաւ զչնչին մուկն:

'Ի գործս չափազանցին 'ի վայելչութեն տեսցես դու արարս մեծամեծս արխական արտի. բայց միշտ ունելով ինչ նիշ անմտութեն: Իսկ 'ի գործս փոքրավայելչին տեսցես դու ճիգն մեծագործութեան, բայց միշտ ունելով ինչ արատ կծծութեն:

Ով ծնունդք խառնածինք՝ ծնեալք յերկոտեսակ անասնոց, միշտ զնմանութեն բերեն յոռեգոյն տեսակի. նոյնպէս գործք սոցա՝ քանզի ծնանին 'ի մոլութեն խառն առաքինութե, միշտ զնմանութեն բերեն զմոլութե քան զառաքինութեն:

Անմիտ եղև չափազանց վայելչութե ներոնի, որ հրձիգ արար զհռոմ, զի տացէ վերականգնել կս գեղեցիկ, և անուանել զայն յիւր անուն՝ ՆԵՐՈՆԻԱ: Բայց անողորմագոյն եղև յիմարութե Ներոնի. զի զծաղու եկեալ 'ի հասարակաց հեծութեն, և զհոմերոսի զգեցեալ հանդերձ, ջութակ 'ի ձեռին, 'ի հրայրեացն հռոմայ՝ երգէր ողբս հրկի-

զու-

զուէն արտակարգայ ։ Այլ տրակարգս (ըստ հռովմ)
քննախնդրեր եղև նր. և հոմերոս (ըստ ներոն) յետ
երգոյն եկն 'ի լոյս ։

Ծաղու արժանի եղև փոքրավայելչութ Նախարդի
նր կարևորագոյ. որոյ փքացեալ է նշանաւոր յաղ-
թութեն, զորոյ լուաւ զաւետիս, գրեաց առ ծե-
րակոյտն զյիշատակաց արժանի զայս բան. [illegible]
[illegible] ։
Ուր տեսանես 'ի սիրտ նր տարրացեալ զգեր 'ի վե-
րոյ մեծագործութեն է յետին գծծութեն ։ Այս
էր հրեշ ինչ խառնածին ։

'Ի վերոյգրելոց աստի ուսնիս առնուլ 'ի միտ' ա-
ռաւելապէս, թէ քանի սակաւք եղեն յաշխարհի
գործք անթերի մեծագործք. որովհետև յութն
դքանչելիս իսկ աշխարհի է տեսանել թերութիս
էապէս հակառակօղս Ճշմարիտ մեծագործութե ։

Թէ [illegible] [illegible] ասես, թէպէտ և ազնուա-
գոյն առարկայ մեծագործութե է առՃարին վն գեր-
կայութե վիՃնին. սակայն խոչ է նմ չնծութին. զոր
առեղծարանէին Ճառատօղ բանաստեղծք, այլ յի-
մաստնոց ոք ոչ հաՃոյր ։ Մինչև չիմանալ քեզ, ո՛ր
անմտութ գրգռեաց զայնչափ թշիր' հիմնել զայն-
պիսի քաղաքն և բազմածախ ամբարտակ 'ի վերոյ
բանաստեղծական ինչ ունայնութե ։ Յորմէ մարթ
է հաւատալ, թէ որ այրեացն զայն' առաւել ևս
իմաստուն եղև քան զամենեսին զնս, որք շինեցին ։
Իւ թերևս 'ի նախանձախնդիր փիլիսոփայից ոք
էր երաստարատոն այն (որ հրդեհեաց զայն տա-
Ճար), արժանացեալ' զի իւր անուն պայծառացի
նորուն լուսով, և շինողացն անուն կացցէ մնա-
ցէ 'ի մթան ։

Թո՛ղ զայն, զի թէ և գործն լինէր իսկապէս մե-
ծագործ, ո՞ւմ արդեօք արժան էր տալ զմեծա-
գործի անուն ։ Ո՛չ հիմնարկուին' զի ոչ կատա-
րեաց. և ո՛չ կատարողին' զի ոչ հիմնարկեաց, ո՞րպ
ասացաւ ։ Ուստի զայն տաՃար մարտախաղէս կո-
չեաց [illegible]. և կրատինոս' [illegible]. և Ճար-
տարապետի նորա կորերայ' մականուն կոչեցաւ
[illegible] ։

Այս

Այս մեծագործ եղև ԱՄԲԱՐՏԱՒՆ ԱՐՏԷՄԻՍԵԱՅ, ըստ նիւթոյն, ըստ արուեստին, և ը բարձրութեան, որ ընդ զարհուրանս օդոյ, որպէս երգէ մարտիաղէս: Բայց թէ հայիմք 'ի վախճանն փոխադրելոյ ըզլեալն ինչ որբատաշ քարանց կճեայց՝ 'ի ծածկոյթ ոսկերաց մոխրեալ ինչ շաղղի՝ առանց ինչ հասարակաց օգտի, յայտ է թէ չեղև ինչ ճշմարիտ մեծագործութեան, այլ՝ անմիտ չափազանց վայելչութիւն. որ և եա օրինակ և անուն այլոց նմանակ անմտութեանց:

Զնոյն մարթ է ասել ՇԻՆՈՒԱԾՈՑՆ ԲՐԳԱՆՑ ԵԳԻՊՏԱՑՒՈՑ, որք 'ի սակս այսպիսի անպիտան վախճանի յաղքատութեան խոնարհէին զթագաւորութիւն. և ևս առաւել բուրգն այն արքային կղէովպէի՝ քան զամենայնն ապականելութեամբ և ամօթալի:

ՈՎՄՊԻԱԿԱՆԻՆ ԴԻՈՍԻ թէ հայիմք յանձն, էր անճր ինչ: Թէ 'ի նիւթն, յանկագոյն եւս էր գինու արժան ինչ յոսկւոյ՝ քան 'ի փղոսկրէ. զոր անդանէ մարտիաղէս: Թէ 'ի մեծութիւն, չէր ինչ սքանչելի. զի չէր մարմին միաձոյլ, այլ՝ ագուցիկ 'ի կտորոց: Թէ 'ի ճարտարութեան արուեստագիտին, մարթ էր նմ առնել ինչ գործ մեծագին. այլ ոչ ըվայլածախ, որով և անմեծագործ:

ԿՈՂՈՍՈՍ անուանեալ ԱՆԴՐԻԱՆԴԻՆ ՀԵԼԻՈՍԻ՝ թէպ և յոյժ էր սքանչելի վս մեծութեանն, մինչև Հռոդացւոց յանուանէ նորա կոչիլ կողոսեան, բայց նկարագրիւ յանձն նր բանաստեղծական ինչ այլաբանութի, և ոնոտի առասպել, և այնպ անհնին էր յարմարականն՝ ոտք և 'ի գիւտն: Ո՛չ 'ի միտ առին հաւատացէք, թէ այնպիսւոյ յաղթ մարմնոյ, որ 'ի կշիռ կայր յերկուց ոտից վր, անհնար էր ը երկար կալ յակատամանի՝ 'ի կղզւոջ, ուր սակս լինէին սասանութք: Եւ արդարև եղև այն հրէշ յխանմեայ միայն, և ոչ աւելի. զի գետնաշարժն ամաց 'ի ծով զայն անպիտան բեռն. և արեգականն հաւոգոսի եղև յանկարծակի իմն մնուտ, որ այլ ոչ ծագեաց:

ԱՇՏԱՐԱԿՆ ՓԱՐՈՍԻ քան զամ նախայիշատակեալ գործս եղև յօգուտ հնրկց՝ և պիտանի, 'ի ցոյց

նա-

նաւահանգստի, 'ի լնուլ բոցաճաճանչ լուսոյ զարեգականն տեղի: Յայս ասկս հաստատչիմութիւն նորա և բարձրութիւն էին վայելչականք. բայց զորգքն ընդվայրածախք էին աւելորդք: Եւ զի մի այսր ևեթ էր զարմանալի, զի առաւելոյ զարմանութեանն առաւելաւ և նորա չափաղանց վայելչութիւն: Եւ որ չար ևս է, լուսաւորութիւն իւր ուսոյց բարբարոսաց զնաւահանգիստն. որք և առին զայն:

Միայն գործն Շամիրամայ ամի եղև մեծագործ. զի մեծուն, զի մեծածախուն, և զի վախճանին, հայեցեալ 'ի կերպ քաղաքաւորութեանց այնց ժամուց. յորս ոչինչ բարձրուն և ոչինչ խորուն պարսպաց էր աւելորդ: Բայց 'ի պաշտպանութն այնց՝ պիտէր և բազմամբոխ ժողովուրդ, որպիսի բաբելոնացւոցն էր. և սիրտ մեծ՝ որպիսի Շամիրամայն էր:

Իսկ Ամփիթէատրոնն Վեսպասիանոսի, որ զի գրելոյ հատիկիսան սկսեալ էր Տիտ Վեսպասիանոսի, մասամբ միայն յինքեան և յիւրում վախճանի, չեղև ինչ գործ մեծապէս մեծագործ. զի էր 'ի պէտս դատարկ անձանց հաճոյից, և ոչ կրօնաւորաց կմ պարզմտաց նր: Բայց թէ ընդդէմ դնէ ոք զսա ընդ միւս գործ տաճարին խաղաղութն, 'ի կողմն անդ հեթանոսական մոլորուն խոստովանելի է, թէ այս կայսր բարձրագլուխ պարծի 'ի մեծագործուն քան զամ հեթանոսս:

Յայսմ տեղւ ունիս իմանալ, թէ քանի տարժանաւոր է առաքինուն մեծագործուն. փոխանակ զի այնչափ դժուարին է առնել գործս մեծագործս, և այնչափ դիւրին ընդգիմա նոցա:

Բա

Բարոյական իմաստասիրութիւն

# ԳԻՐՔ ՈՒԹՆԵՐՈՐԴ.

## Յաղագս Մեծանձնութեան, և իւրոց ծայրից:

## ԳԼ. Ա.

### Թէ զինչ իցէ Մեծանձնութիւն:

Այսր առաքինութեան այնչափ են գեղեցիկ և գերապանծ յատկութիւնք, մինչև ոմանց իմաստասիրաց չփոթել զսա ընդ Արիութէ, զի նմանի ծանուցց: Կեսոց՝ ընդ Մեծագործութեան, զի գործէ զմեծամեծս: Կեսոց՝ ընդ Արդարութեան, զի ոչ զարտուղի յուղղութէ: Կեսոց՝ ընդ Խոհեմութեան, զի գիտէ ընտրել իւրաքանչիւր բախտի:

Այս է չփոթել զնիւթն ընդ տեսակի, կամ զյատկութիւնս ընդ էութէ. ունելով առաքինութեանց այնչափ սիրելութիւն ընդ միմեանս, որ չկարիցեն ծառայել միմեանց:

Բայց Արիստոտել, որ զանազանէ զառաքինութիւնս ըստ առարկայից նոցա, սահմանէ զսա այսպէս: Մեծանձնութիւնն է Առաքինութիւն ոգւոյ՝ համարձակել 'ի մեծագործութիւնս զմեծամեծ պատուոյ, միայն 'ի սոյն համեմատութէ:

Արդ՝ այս սահմաննախ առաջին տարատրոհէ զմեծանձնութին յայլ ամ առաքինութէց. որք չհային 'ի պատիւ՝ ոչ յիւրեանց առարկայ: Յետ այսորիկ որոշէ զնա 'ի պարծենկոտէ. զի տարկեչութին հայի 'ի փոքրագոյն պատիւս, և մեծանձնութին 'ի մեծամեծ պատիւս: Ոչ մեծագործութին տարբերի յառատաձեռնութէ. զի սա յածի զմիջակային ծախուք, և նա զմեծամեծ ծախուք: Իսկ զի մեծութին եա-

կան

կան իմն է առարկայից նոցա, որպէս և անուան նոցին:

Հուսկ ուրեմն որոշէ զմեծանձնութիւն յերկուց իւրոց մոլեկան ծայրից. զի է 'ի ՆՈՒԱԶՈՒԹԵՆԷ, և 'ի ՅԱՒԵԼՄԱՆԷ: Վն զի փոքրոգութիւն՝ թէպէտ ունիցի մեծամեծ առաքինութիւնս, չհամարի արժանի պատուոյ մեծի: Փքացումն անձկայ պատուոյ մեծի, թէպէտ չունի առաքինութիւնս մեծս:

Այս մեծանձնութիւն է այն, որոյ ծանուցեալ յինքեան առաքինութիւնս մեծս՝ համարի արժանի մեծի պատուոյ:

Եւ այս են առաքինութիւն, որպէս ասացաք զմեծագործութիւն, ունի զիւր միջասահմանութիւն 'ի մեծութեն: Մանաւանդ թէ՝ այս իւր միջասահմանութիւն փակէ ընդ իւրև բազում և մեծամեծ միջասահմանութիւնս:

Ծանուցեալ յինքեան մեծ ինչ արդիւնս, և անձկալ մեծի պատուոյ, է ԱՐԴԱՐ իմն միջասահմանութիւն. զի արդարութեն տրամաբաշխական՝ մեծագոյն արժեաց նշանակէ մեծագոյն վարձս:

Եթէ պատիւ անձին ընծայի. ոչ կարէ իմն ուրախանալ, և եթէ չընծայի՝ ոչ կարէ իմն տրտմիլ, այս է ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ իմն միջասահմանութիւն: Վայելել 'ի մեծ պատիւս՝ որպէս արժան է, և խորշիլ ընդ անպատուութիւնս՝ միայն որչափ արժան է, այս է ԱՐԻԱԿԱՆ իմն միջասահմանութիւն: Ըղձանալ պատուոյ մեծի, և արհամարհել զայն, այս է ՉԱՓԱՒՈՐԱԿԱՆ իմն միջասահմանութիւն. որպէս յիւրում տեղւոջ լուիցես:

## ԳԼ. Բ.

## ԹԷ ՈՎ ԻՑԷ ՉԱՓԱՒՈՐՆ:

Թէպէտ և ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ տեսականապէս չէ ԱՐԻՈՒԹԻՒՆ, և ոչ ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ, և ոչ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, և ոչ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, որպէս ասացաւ. բայց և այնպէս մեծանձնն լինի ԱՐԻ, ՉԱՓԱՒՈՐ, ԱՐԴԱՐ, և ԻՄԱՍՏՈՒՆ. և լինին 'ի նմա ամ առաքինութիւնք բարեկարգիչք կրից, կամաց, և մտաց: Որով հետև 'ի խանգա-

րել

ըեւղծայրագոյն կատարելութիւն սրտի՝ չնա է մի միայն անկատարութիւն, որպէս 'ի խանգարել զծայրագոյն գեղեցկութիւն մարմնոյ՝ չնա է մի միայն պակասութիւն:

Լինի սիրտ նորա սեղան համեստութե. անխորժակ նր՝ զերծ յամ ցածուն անխորժանաց. բան նր՝ չափ բանաւորութե. խոհեմութի նր՝ ջահ ճշմարտութե, և մանգաղ երկբայութե. միտ նր՝ սանդուղք առաքինութեց, և դպրոց գիտութեց (132). բայց գիտութեց օգտակարաց քան հետաքննականաց, մեծաց քան նրբից. մտադիւր իմաստասիրել նորա յանձին գիտնաւոր լուսոյ պիւթագորայ, քան ճառատող իմաստակութե պղատոնական և ակադեմեայ:

Մինչև կարօղ լինել մեզ՝ ասել, թէ Քրիստոնէութիւնն է լուսաւորիչ պաշտօնեայ Քրիստոսի, հիմնեալ 'ի Քրիստոնէութեան ամ աստուածայնութեանց համաձայնութեանց: Կամ թէ մեծութիւն ամենայն առաքինութեց իցէ նիւթ մեծանձնութե. և չափաւոր ջան պատուոյ մեծի իցէ տեսակ նորուն: Ուստի արհամարհել զմեծանձնութիւնն կոչեաց պաշտօն ամ աստուածայնութեանց:

Յայտ մեծէ վերտառուէ մեծանձին՝ յառաջ եկին այն ամ Աշխարհակալք պաշտօնեայք. զորս ականծութե ժողովրդեան արժանապէս սեպհականեաց մեծաց իշխանաց. վստահացեալ թէ ըստ մեծութեան իշխանութե է և մեծութիւն ոգւոյ և առաքինութեան, ոչ միայն յընտրութե կարգեալ իշխանաւորս՝ վասն ընտրողացն խոհեմութե, որ ընտրէ զլաւն 'ի բարեաց. այլև 'ի պայազատութեամբ իջեալ իշխանաւորս, զօրութե բարեաց ծննդեան՝ որ առնէ զիշխանորդիս արժանաւորս ընտրութե: (133). Աղա իշխանաց մեծանձանց ընծայեցաւ Քաղաքացւոց անուն. զի մեծանձնութիւն պայծառացուցանէ զամ առաքինութիս, որպ լոյսն երևելի առնէ զամ զգոյնս մթին մարմնոց:

Վերջ անուն՝ ըստ ասից արիստոտէլի՝ սեպհական է մեծանձին. զի վեհութիւն է եզր ինչ անչափական, որ Ը իւրև փակէ զնուազն, և 'ի վր բերէ իմն աւելի. և մեծանձնութիւն 'ի հատարակ առաքինութե վր յաւելու առաւելութի ինչ կերպելութ:

Ըստ

Ըստ այսմ և Բարձրագ. անուն · զի մեծանձնն առ այ- լովք առաքինեօք՝ է որպէս զվեհուլ լեառն ( լիգու- րիոյ ) առ մօտակայ լերամբք, որոց գագաթն սառ- րոտ է նորա ։

Ուստի և Հեզնգ. անուն ։ Զի միտք մեծանձին իբրև գագաթն ոլիմպեայ լերին՝ անցեալ զանցեալ զամ- պովք և զմրրկօք՝ վայելէ 'ի յաւերժական և յան- խռով պարզութեան ։

Այս յայս սակս Գծգ. անուն յիրաւի ընծայի պոմ- պէոսի, այլ ոչ նոյնպէս աղեքսանդրի · վ̃ զի ոչ- ինչ բարի աստ 'ի սորինս է Ճշմարտապէս մեծ՝ բաց յառաքինութէ. և սիրտ մեծանձին է ընդու- նակ ամ̃ առաքինութեց ։

Վ̃նկ մեծանձինք կոչեցան դիւցազունք, որպ թէ դից ծնունդք · ուստի զաքիլլէս բանաստեղծք կո- չեցին վեհանձն եւակիդէ, ահեղ ծնունդ որոտա- ձայն դիոսի ։ Զի թէ միայն առաքինութին է՝ որ առ- նէ զմարդիկ աստուածանման, ոչ ինչ են զարմանք թէ առաքինութ ինչ գեր 'ի վերոյ քան զմարդկային առա- քինութիս, ը̅ թիւ մոցէ աստուածականաց, և ստացիչ նորա համարեսցի աստուած երկրաւոր ։

Երբեմն մեծութե անձին՝ ընաւորապէս համեմատ լինի և արտաքին առուգութե մարմնոյ · գոլով ընու- թե ներհուն Ճարտարապետ բարեձևութե ։

Այս Գծանյնն ըստ համեմատութե լինի և մեծա- մարմին, մեծագլուխ, մեծակնեայ, ծանրաքայլ, բարձրաձայն, և գոյն նր անփոփոխ ։

Հոգին՝ առէ ներբողարանն, կամ գտանէ մարմին ինչ իւր արժանի, և կմ̃ առնէ ։ Որպ թագաւորն մե- ղուաց 'ի խառն գնդի նց թռուցելոյ՝ 'ի մեծութե և 'ի վեհանձնութե Ճանաչի, նոյնպէս մեծանձնն տեսլեամբ Ճանաչի 'ի մէջ առաքինեաց ։ Որ ոք զնա տեսանէ, ընդ միտ առէ · [illegible] ։

Այլևս նկարագրութիւնս առաջի առնէ մեզ հոմերոս յիւրում ագամեմնոնի 'ի յօրինակ մե- ծանձին · [illegible] ։

Ըստ սրտի և մարմնոյն լինի յաղթ ։

Զօրին հաստատակն, [illegible] նկարագրէ արխա- տա

առնել 'ի գիրս բնազննութեան՝ փոքրագիծ, մանրակ-նեայ, նուազաձայն, կարճահասակ. զոր թէ ու-սանէ ոք, 'ի միտ առնու, թէ յոյն անձուկ օթա-րան ոչ բնականայ ոգի մեծ։ Նա օրինակ փոքր-ոգւոյ առաջի առնէ մեզ զԼէկլազիոս կորնթացի,
որոյ էր մեծ զօրութիւն, այլ սիրտ տկար։

Կապիկ մեծանձին է 'ի դէմս՝ ԽՈՐԱՇԷԱՅՆ. նա՝ մեծ եւս, եւ ուռուցիկ, եւ լայնալանջ. բայց յոյն կեր-պարան երեւի խառնուրդ նանրութ եւ գաղանութ, յոր կերպարան նկարագրէ բանաստեղծն իտալա-կան ( այն է Լուգովիկոս Արիոստոս ) զամբար-
տաւանն Ռոլանդոս. ասէ։

Որդի է նա՝ Հըպարտութեան՝ ամբարտաւանութեան,
'Ի ապառնալիս՝ 'ի Թշնամանս՝ բանայ բերան.
Այլ արիական՝ զօրհանդիպաց՝ խուսափական,
Եւ բարեկամաց՝ յաղթահարիչին՝ կայ 'ի մտան։

ԳԼ. Գ.

Առաքինի մեծանձնութիւն։

Պուարկոյ մեծանձնութեան է հարցն պատշաճող մե-ծանձին վասն իւրոց մեծամեծ առաքինութեանց, ոպ̃ արմաւենին յաղթողին։ Բայց որ իցէ այս
մեծ վարձ։

Գուցէ ընթերցեալ իցէ քո կամ լուեալ զայն ան-ուանի դրութիւն փիլիսոփայից ումանց, թէ միայն ա-ռաքինութիւնն է իւր ինքեան վարձ։ Բայց այս դրութիւն կամ խոպան սուտ է, եւ կամ խրթնիմաց։ Վասն զի արժանաւորութիւն վարձուն ոչ կարէ լինել վարձ արժանաւորութեան. իբր զի արժանաւորութիւնն է որակութիւն ներքին, եւ նախընթաց. եւ վարձն՝ գործ արտաքին եւ հետեւորդ։ Այն զի, եթէ առաքինու-թիւն հնար էր արժանանալ նոյն առաքինութեան, լի-նէր նա գործ եւ պատճառ իւր ինքեան. եւ եթէ լինէր գործ այլոյ առաքինութեան, լինէր յանբաւս
յառաջանալ 'ի պատճառս։

Եւս առաւել չէ ճշմարիտ՝ թէ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԳԵՂԵՑ-ԿՈՒԹԻՒՆ, ԵՒ ԱՅԼ ՊԱՐԳԵՒՔ ԲՆՈՒԹԵԱՆ, վարձք իցեն մեծանձնութեան։

Զի ոչ լինի արժանաւորել այնմ, որ փաղու ևս է 'ի սաստութեն յառաջ քան զարժանաւորելն. և պարգևք բնութե յառաջեն քան զսաստութե առա-քինութեց, և՛ս առաւել մեծամեծութե. որ յառաջ ենթադրէ զսաստութիւն այլ ևս առաքինութեց.

և պակ է նոցա :

Իսկ արդ՝ եթէ առաքինութեն է արժանաւորութե ներքին, և վարձն է բարի ինչ արտաքին, նա է ստացեալ յառաքինւոյն, և սա պարգևեալ 'ի սի-րողէ առաքինութեն, պարտ և պատշաճ է ասել՝ թէ լաւագունին քան զնոյն բարիս հոգւոյ. որպէ-սի է մեծամեծութիւնն, վայել է 'ի վարձ մեծա-գոյնն և լաւագոյնն քան զնոյն արտաքին բարիս.

և այն է պատիւ :

Զօրօրինակ առաքինութեն ոչ այլ ինչ է, բայց հա-մեստութիւն. նոյնպէս եւկան յատկութիւն ա-ռաքինութե է լինել պատուաւոր : Եւ զօրօրինակ, առաքինութիւնն է որակութիւն ինչ ածային, որ առնէ զմարդ ածանման, որպ ասացաւ. նոյնպէս անհնար է արժանագոյն վարձ փոխատրել նմա քան զպատիւ. զի աստուծոյ իսկ ոչ ինչ լաւ-

քան զայն կարող եմք ընծայել :

'ի կորուստ մամոնին ինչք 'ի պահել զկեանս. կորն-չին կեանք 'ի պահել զպատիւ. զի այնչափ յետ-նորդ են մարմնաւոր բարիք քան զպատուաւոր բարիս, որչափ օգտակար բարիք քան զմարմնաւոր

բարիս :

Այս սխալէ յուղւոյ, որ կամի ելանել 'ի տա-ճար պատուոյ՝ առանց անցանելոյ ընդ առաքինու-

թեանն շաւիղ. զի սա դուռն է նորա :

Այգոնէս արքայ մողոսացւոց կամէր ամուսնա-ցուցանել զքնաղ զիւր դուստր և զժառանգ, այսպիսի եդեալ պայման, զի որ անձկայ առնուլ զնա կնութե, և յաջորդ լինել թագաւորութեն, յաղ-թեսցէ այլանդակ շանն՝ որում անուն կոչիւր Կէր-

Բէր (134) :

Գեղեցիկ հարան է ֆառէ. բայց ոչ կարողանայ առնուլ զնա կնութե, որ ոչ յերկիր կործանէ զկեր-

բերն բազմագլխեան զմոլութե :

Որ ոք զհետ այնափ լինել 'ի պատուի մի առաքինութեանց իւրոց նախնեաց, զօտար փոխատուի զփոխ պահանջէ. և իւր մոլութիւք զփոխատուաց անուն աղճատէ:

Որ այլոց երախտեօք և ոչ իւր արժանաւորութեամբ բարձրացեալ յիշխանութիւն՝ պահանջէ պատիւ, նման է գրաստուն, որ իւր երկրպագուս կարծէր զերկրպագուս պատկերին խնդեալ, որ կայր 'ի քամակ նորա (135):

Իսկ արդ՝ եթէ մեծանձնութիւն է մեծագոյն և գերագոյն, և պանծագոյն, և դիւցազնագոյն 'ի մարդկային առաքինութիւնս, հարկիւ նմա վայելէ մեծն և գերագոյնն 'ի պատիւս՝ որ ընծային մարդկան:

Այս սուտ է առացեալն սենեքայ, ԴԺՈՒԱՐԻՆ Է ԺՈՒԺՈՒ ՉԱՓԱՒՈՐ ԶԳԱՍՏԱՆԱԼ: Մոլութի է այդ փոքրոգւոյն. որոյ անգիտացեալ զիւր առաքինութիւն, ոչ չափէ զիւրն արժանաւորութիւն: 'Ի մեհեան հերակլեայ ոչ մտանէին ճանճք. և 'ի սիրտ մեծանձին ոչ մտանեն հեստամտութիւնք չնչին պատուոյ, որ 'ի չնչին ժողովրդենէ:

Առիւծք՝ զորս ծաղկապսակ վարէին 'ի թատերական հանդէսս, բարկութեամբ պատառոտէին զծաղկեայ պսակն՝ 'ի տեսանել զստուեր նոցա: Իսկ զենլիք անզօրք՝ գնային իբր խայտալով 'ի զոհ՝ ծաղկազարդ պարանոցօք, և ոսկեզարդ եղջերօք:

Այսպիսի խտիր է ընդ մէջ փոքրոգւոյն և մեծանձին. նա խայտայ ընդ գոյզն փաղաքշանս, սա մերժէ զայն և արհամարհէ:

Այս պատիւն է ճշմարիտ առարկայ մեծանձնութեան. զի այն է ճշմարիտ վարձ առաքինութեան: Բայց քանզի արժանաւորն աւելւոյն՝ արժանի է և նուազին, յայտ է թէ արժանաւորն գերագոյն և իբր դիւցազնական պատուոյ 'ի մէջ մարդկան, արժանի է և ճոխութեան և բազում ստացուածոց, լանջագեղ կամարաց և պսակաց. զի փոքր բարիք են յաւելուածք մեծաց, առ որս և կարգին 'ի բնէ:

Մինչև լինել մեծանձին կամ մեծահարուստ, կամ արժանի մեծի հարստութեան. կամ իշխան, կամ ար-

արժանի իշխանութե: Զի որ իշխէ բախտի, գիտէ վարել 'ի պէտս զբարիս բախտի. և որ գիտէ հրամայել անձին, գիտէ հրամայել և այլոց: Թուի, զի առանց իշխանութեն՝ անգործ մնայ իւր մեծ խոհեմութի. և առանց Ճոխութեն անգործ մնայ իւր մեծ մեծագործութի. և այն սիրտ մեծ՝ ոչ կարողանայ առնել ինչ գործ մեծ:

Մենայնի այսորիկ Ճշմարիտ եղելոյ. և այն ևս է նմին Ճշմարիտ, թէ յաչս մեծանձին ոչ ինչ է մեծ՝ բայց միայն առաքինութին: Զի որովհետև մեծաշուք պատիւ, և գերագահ իշխանութիք, և բազմահարուստ գանձք՝ են արտաքին բարիք. և ամ արտաքին իրք այնչափ ստորագոյնք են քան զներքին առաքինութիւնս, որչափ մարդկային և անցաւոր իրք քան զանանցս և զնծայինս. մեծանձնն առաւել համարի զիւր առաքինութի՝ քան զամ պատիւ և քան զամ ինչս աշխարհի:

Խելամուտ է նա, և գիտէ, թէ պատիւն՝ [illegible], զոր չէ մարթ գիտել: Գիտէ, թէ բարիք բախտի չեն ինչ հաստատուն քան զանիւ բախտի: Գիտէ, թէ ուսգութեց որչափ բարձր է գագաթն, այնչափ խոր է կործանումն: Գիտէ, թէ բարիք մարմնոյ չեն ինչ լաւ քան զմարմինն, որ աղքատին ձորձ է հոգւոյ. և յիւրմէ Ճկոյթ փախի, թէ ոչ պատուով ամփոփի:

Վնկ մեծանձնն այո՞ արժանաւոր է այսց բարեաց. բայց արհամարհէ զնս: Գիտէ՝ թէ վարձք են, բայց վարձք յոյժ ստորագոյնք քան զիւր արժանաւորութի: Իրաւունս համարի ունել, զի արժանի է այնց. բայց քամահէ զնս, զի անարժան են նմա: Անվայել համարի զշքոյն նոցա. բայց և ոչ մեծ ինչ գրէ զատացութիւն նոցին: Զհուսկն առացից. այնչափ է նորա արժանաւորութիւն, մինչև չբաւել բնութեան վարձահատոյց լինել նմա. զի ոչինչ բարի է զուգահաւասար առաքինութեան:

Այս յայս միտ իմանալ պարտ է զայն իմաստ, թէ [illegible]: Ո՛չ զի մեծ պատիւք չեն Ճշմարիտ վարձք առաքինու-

թէ մեծանձին, այլ զի անհնար է պատուիլ նմա՝ որչափ է պատուելի, խռովի շատանայ :

## ԳԼ. Դ :

### ԹԷ Ո՞Ր ԻՑԷ ՀԱԽՃԱՆ ՊԾԱՆՅԻՆ :

Մեծանձնն ոչ ըղձանայ պատուոյ մեծի՝ վն փառամոլութե. և ոչ մերժէ զայն՝ վասն փոքրոգութե. Զէ փառամոլ. զի ոչ ըղձանայ՝ աւելի քան զոր վայել է նմա : Եւ փոքրոգի լինել չէ նմա հնար, զի ունի սիրտ մեծ. և ճանաչէ զայն՝ որ վայել է նմա : Այլ ուրեմն թէ ընկալցի զպատիւ, և թէ մերժեսցէ, չունի այլ յորդոր, բայց զհամեստն և ըղ. պատշաճօղն :

Կանոն մեծ է և անյեղլի, թէ համեստն ոչ վասն այլ ինչ իրաց սիրի, բայց միայն՝ զի է համեստ : Որ սիրէ զայն յայս սակս, զի է օգտակար. կամ բերկրական, կամ փառաւոր, ոչ սիրէ զհամեստն, այլ՝ զանձն իւր :

Մեծագործն առնէ գործս մեծամեծս՝ որք ըստ ինքեանց են գովելի. և չառնէ զնս 'ի լինել գովելի, այլ զի իւրում առաքինութե այն է անկ. զոր թէ չառնէր, չար առնէր : Սոյնպէս մեծանձնն ըղձանայ պատուոյ մեծի, ոչ զի պատուեսցի, այլ զի առաքինութի իւր այդպէս պահանջէ. և ըստգիւտ լինէր նմա չըղձանալ այնմ :

Մանաւանդ թէ արհամարհէ նա զպատիւ, ոմ տայցեն. և վնկ թէ ըղձանայ այնմ, խղճ իւր է չափաւոր և անտարբեր : Ոչ կայ է̄ այլս՝ առ 'ի գրաւմէ ածել զայն. ոչ կողոպտէ զատացիչն, զի ինքն տացի. ոչ անձկայ հասանել, ցոր վայր է բերումն ըղձի :

Թէ մերժէ զաւագութիս, ոչ մերժէ զնս առ երկիւղի, ոմ փոքրոգին, այլ զի յանկաւոր է մերժել զնս : Թէ է̄ունի, ոչ զհետ պնդի 'ի խնդիր նց, ոմ փքացեալն. այլ՝ նք հետամուտ լինին 'ի խնդիր իւր. զորս և ժողովէ ոմ աղնուական իջաւորս առաւել 'ի պատուել զնոսա քան առ ընդունել 'ի նոցանէ պատիւ :

'ի վիճակիլ վահանին աքիլլէսի՝ դաւաճանութե դատաւորաց՝ նենգաւորին ոդիսեայ, և ոչ վեհանձին այասայ, վահանն ինքնին 'ի լող անկեալ 'ի մէջ կոհակաց ծովու՝ եհաս առ այաս, թէպէտ և էր նա թաղեալ (136)։ Վահանն անզգայ՝ դատաւ լաւևս զգայուն քան զդատաւորս. զի 'ի խնդրել զնա անարժանին՝ ինքնին 'ի խնդիր չոգաւ արժանաւորին։

(137). Այն ինչ Սերրանոս և Կենկիննատոս մեկուսի յարքունեաց և 'ի հոգոց, որք հրաժեշտք 'ի պատուոյ, մին սերմանէր և միւսն հերկէր՝ իւրաքանչիւր յիւրում վիճակի, հիւպատոսութիւն մատեաւ յողոք սերմանողի, և իշխանապետութիւն յողոք Կենկիննատոսի։ Նա յակօսս փոխան հնձոց՝ քաղեաց գաւազան իշխանական. սա զփոշոտ մարմնով արկաւ քղամիդ. Թողեալ զմաճ, ը մէջ էած զսուսեր. Թողեալ զսուսեր՝ դարձաւ անդրէն 'ի մաճ. Թուէր ձեռել զյաղթութե, զի 'ի գլուխ տարցի զիւր արօրագրութե.

## ԳԼ. Ե։

### Թէ որով օրինակաւ գործիցէ Քրիստոնեայն։

Սա է գերապանծ 'ի բարոյական առաքինութեա. բայց և կարի խիստ առելի, որոյ ոչ ճանաչեն զնա։

Վս զի որք նստելոյն 'ի բարձր աշտարակ՝ զամ մարդիկ, որք կան 'ի ստորև, երևին մրջիւնք. նոյնպէս մեծանձնն արհամարհէ և չնչին ոք համարի զամ մարդ առանձնաւոր. Թէպէտ և մեծատուն իցէ և ազնուական և հզօր. համարել զանձն այնչափ վերագոյն քան զնա յաստիճանի, որչափ նք ստոր են քան զինքն յառաքինութե։

Զբաղեալ է նա 'ի ներքս յինքեան. և այնպէս գոհ ընդ իւր գերազանցեալ վիճակ, որ չէ նմա փոյթ իմանալ զինչ այլք գործիցեն. և ոչ փոյթ է նմա, թէ գիտասցեն այլք՝ զինչ գործ է նորա։

Ոչինչ է յաչս նորա մեծ, բայց միայն առաքինութիւնք մեծամեծք, զորս անխաբ ճանաչէ նա յանձին.

ձին. վն և չզարմանայ ինչ ընդ այն՝ ընդ որ այլք զարմանան:

Սմին իրի ոչ գովէ նա զոք, և ոչ պարսաւէ. զի 'ի պարսաւելն թուի զինչ լինել գործոց օտարի. և 'ի գովելն՝ թուի թէ համարիցի զնա ինչ: Եւ եւս առաւել՝ ոչ գնայ մարդահաճոյութբ. առաւել ընտրէ յանդիմանել զոք ճշմարտութբ, քան հաճոյանալ նմա ստութբ:

Դմին իրի և չէ նմա փոյթ, թէ գովեսցի 'ի նոցանէ, կամ պարսաւեսցի: Զի ոչ համարի ինչ զգովեստ այնց՝ զորս ինքն արհամարհէ. և չեն բաւական մեծարգել զնա, որք ոչն կարողանան պատուել: Մինչ զի ներանձնացեալ յինքեան, այլ չիմանայ զշիթել լեզուաց այլոց. որպէս և ոչ կրիայ զշիթել ճանճից:

Ապա յատուկ է մեծանձին՝ լինել արհամարհօղ: Եւ վն այսորիկ թիւրագոյք զփոքրոգին համարին պարկեշտ, և զմեծանձնն գոռոզ. զնա առաւել սիրեն, և 'ի սմանէ ակնածեն:

Բայց թէպէտ և մեծանձնն արհամարհէ զանձնիւր անհատս, բայց չարհամարհէ [illegible]. ածեալ զմտաւ, զի թէպէտ և առաքինութի անձնիւր մասնաւորի կարի իմն սակաւ իցէ քան զիւրն, սակայն բնաւեցունց միահաղոյն հնար է ունել զառաքինութի հաւասար՝ և մեծ եւս: Վնկ 'ի բազմուէ ըստ արիստոտէլի՝ պարտ է պատկառել և երկնչել:

Զիք ինչ յաշխարհի այնպ ակար և չնչին, ոպ չիթ մի անձրեւի, բայց չիք ինչ այնպէս բռնաւոր, ոպ տամ չիթք միահաղոյն: Իւրաքանչիւրն իւրովի է արհամարհ. բնաւքն միահաղոյն զթումբս պատառեն, զերբինս քակեն, զքաղաքս ընկլուզանեն: Վնկ իմաստնապէս ասէ արար պերիանդր (մին յեօթն իմաստասիրաց). [illegible]:

Այս խտիր է ը մէջ փոքրոգւոյն, փքացելոյն, և մեծանձին: Փոքրոգին մեծ համարի զմասնաւորս: Փքացեալն արհամարհէ զբազմութի: Մեծանձնն արհամարհէ զմասնաւորս. և մեծ համարի զբազմութի: Ապա սիրէ նա զժողովուրդն, պատուէ զա-

ւե-

ատենակալս՝ զկանոնագիրս ժողովրդեան. վերա֊
պատուէ զիշխանն, յոր ամփոփի զօրուն ժողովր֊
դեան՝ և իմաստուն ատենակալաց:

Յարգէ և [illegible] իւր նմանս. միայն թէ կայ֊
ցեն 'ի կատար զուգականութեան: Զի ոչ նմանութիւն
ծնանի զսէր, նոյնպէս զուգականութիւն ծնանի զնա֊
խանձաւորութիւն. որոյ լծորդեալ ընդ չնաս ինչ
արկանէ նախանձուկս, և սա բերէ ատելութիւն
մահուչափ:

Մինչդեռ եղև գաղափար մեծանձանց՝ շքեղ ա֊
ռատաձեռնութեան, մեծագործութեան և մեծանձնու֊
թեան յազգս արևելեայց, Նովին ձրիւք էր պճնեալ
նաթան, և սա ևս հզօր և մեծագանձ թագաւոր:
երկոքին լծորդ ամոլք արևափայլք, սիրելիք և
փրկարարք ամ աշխոյ:

Բայց քանզի առարկայ մեծանձանց է նոյն, այն
է՝ մեծ պատիւ, կարծեալ նաթանայ, թէ իւր
պատիւ չէ մեծ՝ ցորչափ կայ ոք իւր հաւասար,
խորհեցաւ խժդժաբար բառնալ յաշխարհէ զիւր
նմանն, զի իցէ մի միայն: Տես, յոր փոքրոգութիւն
վիճ խարդաւանէ երբեմն մեծանձնութիւն:

Եւ 'ի գլուխ ելանէր արդեօք խորհուրդն, եթէ
նոյն ինքն մինչդեռ, որոյ գործ էր միշտ զամենե֊
ցուն հաճել զկամս, չէր քաղցրութ առաջի արա֊
րեալ զիւր գլուխ, զոր ապառումն այն էր 'ի
խնդիր. զի և զթշնամւոյն հաճեսցէ զմիտս:

Այս գործ գեր 'ի վերոյ քան զամ մարդկային
մեծանձնութիւն՝ այնպէս ապշեցոյց զնաթան, մինչև
անկեալ յոտս նորա՝ հլու լինել նմա այնուհետև
իւրում ախոյեանին:

Յարգէ և [illegible] մեծանձնն, և պատուէ զնա՝
միայն վն զի սիրէ. բայց ոչ լինին սակաւք, զի ա֊
ռաւել է սիրելի, որ սակաւագիւտն է. և զի 'ի
սակաւս հաւաքին հանգամանք, զորս խնդրէ նա
յիւր բարեկամս. այսինքն, [illegible] և 'ի
վր ամի. [illegible]

[illegible] : Զի առ երկրագործս չլինի ընտանութի. առ հաւասարս ծնանի նախանձաւորութի. և թէև բարեկամք իցեն ստորագոյնք, սէրն հաւասարէ զնոսա անկասկած:

Այսպիսի էին երկու բարեկամք օգոստոսի վեհանձինն. մարկոս ագրիպպաս, և մեկենաս: Միայն ընդ երկոսին սոսա գնայր ընտանութե. երկոցուն սոցա բանայր զիւր սիրտ. երկոցուն սց հարցանէր խորհուրդ. և 'ի նոցանէ առնույր խրատ. որպէս ունիմք յիշել և զկնի:

Զօրին հակառակն, ոխերիմ և անտանելի թշնամի մեծանձին՝ է [illegible]. վա լինելոյ սորա սուտ մեծանձն:

Աքաղաղի տեսեալ զիւր սուտ պատկեր 'ի հայելւոյ՝ զգրգռի և 'ի բարկութե բրդի, և կացուէ և թեւք ոգորի ընդ իւրում թարմատար պատկերի: Ըստ սմին օրինակի, վա զի փքութին է սուտ ինչ պատկեր մեծանձնութե, մեծանձնն խորշի 'ի փքացելոյն, և չարաչար հալածէ զնա խաղաւ:

Ոչ վայրապար ինչ էր զրոյց յառասպելս, թէ առ գիոսի կայր միշտ ադրաստէ չածուհին բարկութե, 'ի գլխաւոր լինել ամբարտաւանին, որ 'ի բարձր բերի քան զարժանն:

Այս միայն եղև պատճառ անհաշտ ատելութե կատոնի առ կեսարոս: փքացեալ էր կեսարոս, այլ ոչ մեծանձն. զի յափշտակէր զգերակայ պատիւ, ուր չէր արժանի: Ճշմարիտ մեծանձն էր կատոնն, զի քան զնորայն ոչ մեծ առաքինութի և ոչ մեծ սիրտ երևեցան յիւր հայրենիս:

Ոչ այնպէս կամակար 'ի դիմի հարաւ հերակլես հիդրայի, որպ կատոնն կեսարոսի: Ո՛չ զի 'ի բուռն արկցէ զինքնակալութին, որում էր արժանի. այլ զի մի անարժանութ փքացելոյն 'ի բուռն անկցի: Սա միայն սրտապնդեցաւ պինդ ունել զհասարակաց ազատութիւնն՝ որ կայր 'ի դայթի: Եւ եթէ ազատութեն կամք եղեն տապալ կործանիլ, գէթ սա մեռաւ ազատ. զի ոչ ազատութեն քան զկատոնն, և ոչ կատոնին քան զազատութեն յերկարաձգեցան աւուրք:

Յա.

Յառաջելոց առաւ մարթ է իմաստասիրել, թէ գլխաւոր առաջնորդեալն մեծամեծին՝ է կէ-ւ -ւ-: Դիւրին է ըմբռնել երկուց ներհականացդ՝ բոցոյ և սառին, քան երկոցուն սոցա, մեծամեծնութեն և ծառայութեն: Զի չէ մեծամեծն՝ որ ծառայական կապանօք պրկի. և ոչ արժանի է պատուոյ մեծի, որ 'ի ներքոյ է այլոց հրամանի: Վայ վերագոյն ասացաք, թէ մեծամեծն կամ իշխան է, և կամ

արժանի լինելոյ իշխան:

Բնութեն արար ազատս. բերումն բախտի արար ծառայս. բռնութեն արար գերիս: Մեծամեծն ոչ կորուսանէ երբէք զբնաւոր ազատութեն. զի չառնէ ինչ բռնութեամբ, և ոչ ընկճի երբէք ընդ

բախտիւ:

Իսկ զինչ իցէ ազատութեն, բայց եթէ կարօղ լինել գործել ըստ կամս իւր. և ո՞ բաց գործիցէ ըստ կամս իւր, բայց որ միաբանէ զկամս իւր ընդ բանին: Այլ անհնար է աստուածային կամ բնական օրինաց՝ բառնալ 'ի մեծամեծնէ զազատութին: Զի որովհետև երկոքանչիւրն հիմնեալ են յուղիղ բան, և զի մեծամեծն ոչ այլ ինչ կամի՝ բայց զկամեցեալն ուղիղ բանին, ոչ գործէ նա բռնադատեալ յօրինաց, այլ՝ յազգմանէ իւրոյ կամաց. որ իւր ինքեան է օրէն

և օրէնսդիր:

Զնոյն ասեմ զքաղաքական և զմարդկային օրինաց: Զի թէ օրէնն է արդար և համաձայն բանի, ո՞չ պարտ իսկ է, ոչ կարէ բռնաբարել զկամս մեծամեծին, որ ոչինչ այլ կամի, բայց զկամեցեալն

բանին:

Այլ եթէ օրէնն իցէ անիրաւ, և անարժան առաքինույն, ոչ ումեք առաքինւոյ արժան է կամել զայն. Եւ առաւել մեծամեծին, որ առաքինագոյնն է քան զամենեսին: Եւ վասն այսորիկ ոչինչ սպառնալիք կամ ողոքանք, ոչինչ աքսոր կամ արգելանք, ոչինչ ցաւագին կամ մահաբեր տանջանք բռնադատեն

երբէք զկամս մեծամեծին 'ի կատարել զայն:

Մանուկ մի սպարտացի՝ կալանաւորեալ 'ի նաւորդակաց՝ վաճառեցաւ 'ի սարկանաց: Հրամայեցաւ նմա 'ի տեառնէ իւրմէ առնել ինչ գործ ծառա-

աւայական՝ անարժան իւրում աղնուութեն։ Ըմբոստա-
ցեալ չէառ համբակն յանձն լսել նմա։ Իւ յասել
տռն․ տանէլով տրասցէ, ւի գնէցի ւէտ գէրի, եա պա-
տախանի․ ոյծն իոյ փէոցէս, ու՛ գնէցէր ։էտ գէրի։ Եւ
ընկեց զինքն ընդ պատուհանն արտաքս․ առաւել
ընտրեաց խորտակել զպարանոց իւր, քան խոնար-
հել։ Ոչինչ շղթայ կարող է կապել զմիտ՝ որոյ կա-
մակար ընտրեալ իցէ մեռանիլ քան հնազանդիլ։
Այս հնար է բախտի զարս մեծամեծս և բարե-
բաստս 'ի ձեռս արկանել բռնաւորաց թշնամւոյ,
ոչ զհռեգուղոս զյաղթականն, և զվաղերիանոս
զինքնակալն, և զպերսէոս զարքայ մակեդոնիոյ,
և զսիփակ արքայ նումիդացւոց․ բայց մեծանձնն
յօժի յայսմ վերագոյն երևի քան զբախտ․ և 'ի
յաղթեալ և 'ի շղթայակապ մարմնի մնայ միտ
նորա անյաղթ և ազատ։

Հռեգուղոս յետ ափրիկեան յաղթանակի՝ կալա-
նաւորեալ յափրիկեցւոց մանուք, և առաքեալ
'ի նոցանէ 'ի հռոմ՝ 'ի հաստատել զհաշտութի,
խրատ ետ հռովմայեցւոց հանապազորդել զպա-
տերազմ։ Եւ գիտելով թէ վն խրատուս մնայր
նմա՝ մահ դառնամահ, դարձաւ 'ի բանտ իւր, ակն-
կալեալ այնմ։ Զոր և կրեաց յերկաթափուշ տա-
պանի, անքթթական աչօք մինչ յիւր մահ հայե-
ցեալ, և իւրոց թշնամեաց պատերազմ սպառնա-
ցեալ։ Ոչինչ միտ եղև երբէք այնպէս ազատ,
ոչ հռեգուղոսին, որ փակեալ կայր 'ի տապանի
անդ։

Զաւրին հակառակն՝ պերսէոս անկեալ 'ի ձեռս
էմիլիոսի, յոտս անկաւ նր, գիրկս էարկ զծնգօք,
լալով աղաչաբար, և խնդրելով ողորմութի 'ի յաղ-
թականէն․ որ և երդուաւ, թէ ամաչեմ զի յաղ-
թեցի այսպիսւոյ փցնոյ։ Եղև նր միտ փոքրոգի,
արժանաւոր շղթայի․ յոր և մեռաւ։

Այս ոչ կամի մեծանձնն ծառայել։ Ցուցելում 'ի
վր, թէ վն նորին պատճառի ոչ միրէ և հրամայել․
զի ըս առելոյ ուրումն իմաստնոյ (ըս սենեքայի),
Դծ ԻւՒխանօոԻ է Դծ Ինւ ԾառայօոԻ․ և այնպէս տաղտ-
կալի է հրամայել անբանից, ոչ ծառայել նց։

Բժշ-

Բժշկութիւն՝ ցորչափ հայի յընդհանուր սկզբունս, է խոր իմաստասիրութիւն. այլ յիջանել իւրում 'ի մասնաւոր գործս, փոխի յարուեստ: Նոյնպէս քաղաքականութիւն թէ զկայ առնու 'ի հանրական ծանօթութիւնս, գշխոյ է գիտութեանց. բայց մասնաւոր գործք քաղաքական կառավարութեան ոչ այլ ինչ են, բայց բազմազբաղ ծառայութիւն:

Բառնալ զբեռն խորհրդեանց և հոգոց. չհանգչիլ՝ զի հանգիցեն այլք. լի ունել զականջս՝ հասարակաց քրթմնջանօք, և զաչս՝ առանձնաւոր նամակօք. ձեռնարկել երբեմն 'ի չտեսութեան կեղծիս, երբեմն յահարկութիւն, և երբեմն 'ի բռնութիւն ընդդէմ իւրոց կամաց. նկուն առնել զթշնամիս, զուսալ ունել զիւրս, գլխահար լինել չարագործաց, հեղուլ զարիւն զիւրոց որդեակս սիրելեաց, յորժամ զթուլութիւն քան զխստութիւն վնասակար իցէ. այս ամ է այնպիսի տաժանաւոր ծառայութիւն, մինչև ինքնակալին, որ կարի իմն անձուկ ունէր ինքնակալութիւն, անիծանել զօրն՝ յոր ձեռն էարկ ինքնակալել:

Այս մեծամեծն ոչ սիրէ ոչ հնազանդիլ, և ոչ հրամայել, բայց միայն անձին. զի այսու օրինակաւ հրամայէ նա այնմ՝ որ մտադիւր հնազանդի, և հնազանդի այնմ՝ որ արժանի է հրամայելոյ նմա, մնալով ազատութեան անկորուստ:

Վէհ վայելէ 'ի զուարթագին առանձնութեան, ոչ իբրև զտիբերիոս, զի համարձակագոյն թարթափեսցի ընդ եղեռնաւորս. այլ իբրև զկիւրոս, զի համարձակագոյն միտ դիցէ անձին, հայեցեալ ընդ սքանչելի հանդէս երկնից՝ և մեծի մօր հասարակաց (այսինքն երկրի). առարկայ մեծ, և արժանաւոր մեծի մտաւորի:

Այս չխափանէ Արիստոտել յասել իւրում, թէ Մե-նաւորն կամ ած է, և կամ անբան ոք, այսինքն կամ բոլորովին է անիմաստ, որ յանձնէ երկնչի. կամ բոլորովին մեծամեծ, որ զանձն արհամարհէ: Եւ ոչ խռովեն զառանձնութիւն նր սիրելի բարեկամք. զի նոյն են ընդ նմա:

Այսպէս այս է գլխաւոր իղձ մեծամեծին, պահել զիւր ազատութիւն. յորմէ յառաջ գան իւր մեծամեծնեայ բարք:

Ու

Ոչ ծ՟այէ նա ՃՈԽՈՒԹԵԱՆ. ոչ մեծ ինչ գրէ զլայնատարր կալուածս, և ոչ զընդարձակ դաշտավայրս. ոչ զհոյակապ պալատս, և ոչ զպատուական կահս. ոչ զընտիր ընտիր նկարս, և ոչ զմեծանուն քանդակս. զի ա՟մ որոյ կորուստ բերէ ցաւ, հոգովք ստացանի. և ա՟մ զոյզն հոգ է ծառայութի ինչ։ Այսպս ստացեալ ունի մեծանձնն զայս ա՟մ բարի. բայց ինքն 'ի նոցանէ ոչ ստացանի. զի կարևորքն այլոց՝ աւելորդ են նմա։ Կորուստ նոցա յաչս նր՟ չէ ինչ ընդհատ յունելութէ. զի ոչ կորնչին այնմ որ ունի, այլ այնմ որ 'ի նոսա վայելէ։

Ոչ ծառայէ նա իւրում ՄԱՐՄՆՈՅ. զի համարի զնա օտարուկ հոգւոյ։ Վ՟ն այսորիկ պերճ է առ այլս 'ի պարգևս և 'ի կոչունս. այլ առ անձն յարգար, և ոչ պճնասէր, խոչոր և ոչ փափկասէր։ Գնայ ընդ մարմնին իւր անտեսութ՟բ, որ՟պ վայելէ ը՟ ստրկի. զի մի՛ ակարասցի առ 'ի չգոյէ բաւականին, և մի՛ լրբեսցի 'ի յափրութէ։

Ոչ ծառայէ նա իւրոց ԿԵՆԱՑ. զի ոչ կեայ 'ի պահել զայն, այլ՝ առ հատուցանել յելս պատուով մեծաւ. ոչ հայեցեալ թէ իցէ երկար, այլ զի իցէ մեծ։ Եւ զի մեծն այն անձն լի է մեծամեծ առաքինութ՟բ, վ՟ն այսորիկ ոչ գնէ զկեանս զինչ և իցէ գնոյ, և ոչ ծախէ զնա վասն զինչ և իցէ իրաց։

Խտիր է ը՟ մէջ արիականին և մեծանձին, որ՟պ ընդմէջ երկուց անդամանդից՝ փոքու և մեծի։ Երկաքանչիւրն են պատուական գոհարք՝ անբեկք. այլ անմիտ շռայլութի լինէր այնպէս առատաձեռն լինել 'ի մեծամեծ անդամանդս, որ՟պ 'ի մանունս. զի բազում առաւելութի է նոցա քան զսոցա ըստ արժողութե և ը՟ր սակաւագիւտն լինելոյ։

Բազմաց հնար է լինել արի. բայց սակաւուց՝ մեծանձն. զի արիութին է մի միայն առաքինութի. բայց մեծանձնութին 'ի ներքս փակէ զա՟մ գեղազանցօրէն։

Ոչ ծառայէ նա ՀԱՄԲԱՒՈՅ. զի ոչ ծառայէ կարծեաց օտարի։ Առաւել արժէ մի միայն ստուգութի ճշմարտութե քան զանբաւ կարծիս. և ոչ ոք կարէ ստուգութի ունել բարութե գործոյն, բայց որ առնէ զայն.

ղայն. զի նա միայն ճանաչէ, թէ որով հոգւով առ_ նէ: Եւ վա այնորիկ մեծանձնն առաւել համարի զիւր սեպհական գիտակցուն քան զամ մարդկան կարծիս:

Հերակլէս կարգեաց զոչխ՛ առ ոչինչ դրելով ըզ_ ամբոխս պարսաւագրաց. յայս աւարեալ՝ թէ մե_ ծանձանց պարտ է գործել զբարին, ոչ ինչ փոյթ ունելով, թէ այլք բարիս խօսիցին:

Վնկ ոչ գառն և ղոյլոյ ոլոռ. զի ոչ համարի զնա արժանաւոր իւրում դատաստանի. և չերկնչի յայլոց դատողութէ, զի ոչ ուրուք դատաստանի ծառայէ:

Մոմոս որդի քնոյ և գիշերի՝ վտարհանեալ դատա_ պարտեալ լինիլ դից. ըստգտանէր զնոցին արարս, թէ ընդէր ցուլն կրէ զեղջիւրս 'ի գլուխն և ոչ 'ի թի_ կունս. զիարդ մարդ չունի պատուհան 'ի լանջս. առ 'ի մէ՞ ապարանք աթենասայ ոչ գնան 'ի վերայ անուոյ:

Այլ զորօրինակ զեպերանս մոմոսի իբրև զծաղր միմոսի խաղ առնէին դիք վերնականք (ըստ առաս_ պելաց), և ոչ ինչ գժգմնէին. նոյնպէս մեծանձնն, որ միայն է դատաւոր իւրոց գործոց, ծաղր առնէ զայպանի դատաւորս, իբրև զբուս և զչղջիկանս՝ որդիս քնոյ և գիշերի:

Ոչ ծառայէ նա իւրոց կրից. զի առաջնորդու՞ բա_ նի, որ միշտ է նոյն, ինքն ևս հանապազ է նոյն: 'Ի յաջողուածս է պարկեշտ, 'ի ձախողակս՝ արի. յանտարբերս՝ միօրինակ: Կեայ աներկիւղ, զի զօրաւոր է 'ի նմա բանն: Այլ եթէ կամք իցեն բանին, թէ պատուհասեսցէ զոք, պատուհասէ անցաւութն, յանդիմանելով զյանցանսն, և ախ_ տակցելով յանցաւորին: Որպէս երկինք երբեմն փայ_ լատակեն 'ի պարզի, նոյնպէս և նա սուսեր շողա_ ցուցանէ խաղաղական արտիւ:

Ոչ ծառայէ նա և բախտի. որ ոչ գիտէ թէ յոր կողմն ձգեսցէ զնա: Քանզի գիտելով մեծանձին, թէ չէ կարող բախտն ոչ տալ և ոչ բառնալ զիւր առաքի_ նութի, որ զինչ և բարի տայցէ նմա, կամ բարձցէ 'ի նմանէ, ոչինչ այլափոխի: 'Ի բարեբաստութիւ չէ

չէ ինչ վտանգ. 'ի ձախողուէից ոչ ինչ խուռլի: Նա՝ յառաջ քան զեկաւորել յանկարծադէպ պատահարաց, կանխեալ սրատեսանի և քաջալանջ ելանէ ընդ առաջ. մինչև չունելով նր ինչ անակնկալ, ոչ ինչ անկարծ 'ի վր գայ նր:

Սոկրատայ սկիզբն արարեալ խորոց զխանաւոր խօսից ընդ միում յիւրոց համբակաց, եհաս նմա յանկարծակի գուժկան, թէ սոփրոնիսկոս որդի քո մեռաւ: Յայտ է ամ մտաւորի, թէ բարբառ նր և գոյն և արիւն՝ վաղեցին 'ի սիրտ. և կսկծագին ցաւք թէ ոչ զկենաց՝ գէթ զխօսից նորա կարեցին զթել: Բայց և այնր սոկրատ՝ անխռով զսկսեալ խօսն տարաւ 'ի գլուխ, և ապա ասէ. Ո՜ն երթի-ցուք տալ սոփրոնիսկոսին զյուղարկաւորութեան պատիւ:

Յայսմ մեծէ առաջադրութէ մեծանձին մարթիս իմանալ, քանի ճշմարիտ իցէ այն առած, թէ իմաստունն միայն է ազատ. և այլք ամենեքեան ծառայ: Նու-յայսմ սկզբնէ յոչ գան 'ի մեծանձնն յառակունք ինչ, որք յաչս գռեհկաց երևին յառաջ գալ 'ի մոլութէ, և են հիմնեալ յառաքինութե:

Նախ առաջին՝ երևի նա յամառ 'ի կարծիս. վեհ և անխռով. ոմ յանդիման ցուցանէ զայս պլուտարքոս 'ի կատոնէ: Զի զորօրինակ 'ի սրտի է նա յամի միօրինակ, նոյնպէս 'ի միտս է նա միշտ 'ի նոյն կարծիս: Վեհ և սափ, թէ մեղք իմաստնոց են մեղք հրեշտակաց: Զի զորօրինակ կեանք մարդոյ են յաջորդական, և կեանք հրեշտակաց անհատական. նոյնպէս մարդիկ այսօր մեղանչեն, վաղիւ զղջանան. բայց հրեշտակք յոր կամս եղեն միանգամ, 'ի նոյն մնան յաւիտեան:

Սակայն ստուգութը 'ի ճշմարիտ մեծանձն չէք այս մոլութի: Փոփոխեալն յորդորմամբ այլոց յեղանի է յառաջադրութեան. զի ամենեցուն հաւատայ: Փքացեալն ոչ ումեք հաւատայ. վնզ 'ի սկսանել զգործ ինչ անիրաւ, հաստատուն մտաց համարի հանապազորդել 'ի նոյն: Բայց մեծանձնն՝ վս զի գործէ բանիւ, անյողդողդ մնայ 'ի գործն, թէ ոչ այլ զօրագոյն բան յաղթեսցէ նմա:

Ճշմարիտ է՝ թէ ոմ իմաստուն է նա քան զայլս, նոյն-

նոյնպէս դժուարին է նմա՝ ղայլոց քան վերագասել ,քան զիւրն ։

Թող զի եթէ է ինչ 'ի նմա վրիպակ գործոյ ,՝(որովհետև զգործովք՝ հրեշտակաց իսկ, թող թէ մարդկան, հնար է սխալել ,) ոչ ոք իշխէ ազդ առնել նմա, բայց որ մտերիմ բարեկամ իցէ. որոյ խրատուց մատգիւր անսայ մեծամեծն. զի բարեկամին է միւս ինքն. և ոչ պարտուն խոստովանի սիրոյ նր. նոյնպէս պարտուն խոստովանի և կարծեաց նորա։

Օգոստոսի կայսեր հրապարակել զօրէնս յաւելեալման ընդդէմ չնացելոց, խրատէր եղև՝ թէ յուլիա դուստր իւր էր չնացեալ: Օրինացն՝ որ 'ի յուլիան առեալ էր զանուն, հնար էր առնուլ զայն 'ի յուլեայ։ Օգոստոս արտասահմանեաց զնա, և հրապարակեաց ամ աշխարհի զխայտառակութիւն նր, որ յանկեան ուրեք իւրոյ պալատի կայր ծածկեալ. Մեղապարտն աքսորեալ 'ի հօրէ՝ աքսորեաց յիւրմէ զամօթ. և սկսաւ առնել համարձակ, զոր գող 'ի գող գործէր առ երկիւղի. և 'ի ծածուկ չնացեալն՝ եղև յայտնի պոռնիկ։

Յայնժամ ծանեաւ Օգոստոս, բայց կարի իմն անագան, թէ յորժամ չէ հնար պատուհասել զյանցանան՝ առաւել խայտառակութեան պատուհասողին, լաւ է ծածկել զայն, քան յայտնել: Վն այսորիկ՝ բարկութն նորա զկնի եկեալ ապաշաւ, առաւել զայրագին էր 'ի վր իւրոց սխալանաց՝ քան դստերն։ Գոչէր 'ի ձայն բարձր. Այս ամենայն ոչ էր պատահեալ ինձ եթէ 'ի կենդանութեան իցէին Ագրիպպաս և Մեկենաս (138)։ Եւ արդարև եթէ կենդանի լինէին նոքա, չէր առնա գործեալ զայն վրիպակ։

Սխալ են մոլութիւնք մեծամեծին երևելի լինել ծանրագոյնք, որ մայրն է մենակեցութեան, և ողորմածութեան ոչ միայն գործոց այլոց, զորս ոչ գովել արժան համարի՝ և ոչ ուղղել, այլ և պատուոյ և մեծարանաց, որք ընծային նմա։ Վնկ է՝ զի թէպէտ մեծամեծն առնէ այլոց երախտիս, բայց ոչ ընդունի զայն յայլոց. զի երախտիք են կապանք հակառակօղք ազատութեան. որք ոչ կարեն պարտաւորել, եթէ չպարտանանդեն իբրև պարտանօք։

Եւ

Եւ թէ ուրեք երբեք ընդունիցի պարգև ինչ, վաղվաղակի փոխատրէ մեծ ևս պարգև. զի այսու օրինակաւ ոչ միայն լուծանի 'ի կապանաց, այլ և զկապիչ իւր կապէ:

Նա երբեմն փոխադարձուցանէ պարգևի պարգև Է խաղ, 'ի զգացուցանել պարգևողին, թէ չհամարի ինչ զպարգևսն:

Մեծանձնեայ արքայն (Թրակացւոց) Կոտիս, տարատւոյ ումեմն՝ որ պարգևեալ էր նմա վագր, պարգևեաց առիւծ: Եւ ֆշնյապետն զեան տասներդ, ումեմն քիմիագիտի, յորմէ ընկալեալ էր 'ի պարգև գեղեցկահիւս ինչ մատեան արուեստի ոսկեգործութեան, պարգևեաց փոխարէն քսակ դատարկ: Եւ բանաստեղծի ումեմն, որոյ ընծայեալ էր նմա մեծ ինչ ճառս ներբողական, փոխարեկաց սուղ ինչ վաշ վաշ: Չեղև այն ագահութի, այլ խոհական մեծանձնութի. օգ ընդ օգոյ պարգևեալ:

Բայց երևելին քան զնա իւր յատկութիւնս, որ առաւել առելին է մեծամեծաց, է այն. զի թէպէտ ինքն ըստ քաջ ըմբշամարտից ոչ արժան համարի մրցիլ ընդ ակարաց, և Ը մեծանձին առիւծու ոչ 'ի վար արկանէ զիւր զօրութի ընդդէմ մանունց գազանաց, սակայն ընդ հպրտս հոխորտաւոր խրոխտ մաքառի:

Աղեքսանդր իբրև հարցաւ 'ի հօրէ իւրմէ ('ի Փիլիպպոսէ), եթէ ընթանայցես յարշաւահանդէս ոլիմպիական խաղուց, ետ պատասխանի. ընթացայց, եթէ ընդ թագաւորս՝ ընթացողս լինիցին ինձ:

Մեծանձին է ցուցանել մեծ սիրտ առ մեծամեծս, յորժամ զգրգռի 'ի նոցանէ. և չէք տեսարան արժանագոյն աշխարհախումբ ժողովս, և ահեղագոյն, քան յորժամ առաքինութի ինչ մեծ 'ի դրգիռ մտանէ:

Կամ ոչ դիմակալէ մեծանձնն, կամ դիմակալէ յամ սրտէ: Ոչ կորուսանէ զիւր դադար. և ոչ տայ թշնամւոյ իւրում դադար: Զմարկեղոսէ ասէր Աննիբաղ. Գործ է ինձ ընդ այն, որ թէ յաղթէ և թէ յաղթի, ոչ առնէ դադար:

Աւ-

Արմաւենի է նա, որ թէ ցածնու ծանրոցաւ բռնադոյն եւս ամբառնայ 'ի վեր: Սունկ է նա, որ բռնադոյն սուզեալ բռնադոյն 'ի վեր ելանէ: Կարկին է՝ ըստ ասից մեծամեծին Կարողոսի Էմմանուէլի, որ որչափ ձնշի, այնչափ տարածանի:

Զօրութի համառօտի ատուելաւ՝ կործանմամբ զօրաւորաց, որք դրդուեցին զնա: Հակառակուն ամրողիւի արքային ալբայեցւոց՝ եղև նո՛ առաջին պարծանք. և պարխաւք ալբայ շինեցին զհամեմ: Փիդենացիք, կամերացիք, և հուսկ ուրեմն ժէվացիք զդրդուեալք զյառաջումն նորա, ոչ այլ ինչ գործեցին, բայց ընդարձակել զինքնակալութիւն Հռովմայ: Մեծ թշնամի ունի նա, զոր մեծամեծն համարի արժանի իւրում ցասման:

Օ հաւակն ասացից. ԿԵՍԱՐՆ ԿԱՄ ԻՇԽԱՆ Է, ԿԱՄ ԱՆԸՆԿԷՑ ԻՇԽԱՆ: Զի սիրէ զժողովուրդն. և իւր մեծամեծ առաքինութիւնք առնեն զնա սիրելի ժողովրդեան: Բայց 'ի ժողովրդական կառավարութեան պատգամատու է նա խորհրդականաց, և զինուորաց զօրաւորաց. զարդ հայրենեաց, և սիրելի օտարաց. որոց չիք ցուցանել մեծ ինչ քան զնա: Որպ̄ նաւէին 'ի գնիդոս՝ տեսանել զարձանն Ափրոդիտեայ, և 'ի սեգեստէ՝ զարձանն Արտեմեայ. նոյնպ̄ նաւէին 'ի կորնթոս՝ տեսանել զմեծամեծն տիմոլէոն. թէպէտ և կուրացեալ էր նա 'ի ծերութէ, և նստէր յիւրում տանի որպ̄ մնացուած ինչ յիշատակի իւրոց քաջութեանց, կամ յիշատակ իւր ինքեան:

Անտի 'ի մեծամեծ խրոխտութիւն՝ 'ի վ̄ր ուսոց ժողովրդեան բարձեալ բերէին զնա 'ի մեծն թատրոն՝ հարցանել 'ի նմանէ խորհուրդ. ուր 'ի գովաբանել զնա ամ̄ քաղաքացեաց յիշատակութեամբ իւրոց քաջութեանց՝ որ 'ի սիկիլիա և յափրիկէ, զանեղի առնոյր վայր մի՝ լռել զիւր գովեստս, և տանել ոգի. և ապա տայր պատասխանի, ցուցեալ յիւրում խորհրդատուութեան, թէ յառակագոյն տեսանէին երկու աչք ուրումն կուրի, քան զամ̄ աչս իւրոց քաղաքացեաց:

## ԳԼ. Զ:

### ՅԱՂԱԳՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԷ, և ԺՈՂՈՎՄԱՆ:

Փոփոխումն պատուոյ և հրապարակական իշխանութեանց երկուս ազգէ ներհական գործս յայլ եւայլ անձինս: Քանզի ոմանք երբև զթիթեռունս ՚ի լոյս անդր ամբարձեալք, այնչափ մերձին յայն՝ մինչև այրիլ թեւոց նոցա. և սոքա են փքացեալքն և հպարտք: Այլք երբև զչղջիկ՝ շլացեալք ՚ի կարի իմն փայլմանէ անտի, փախչին թաքչին ՚ի ստուերս. և սոքա են փոքրոգիք:

Փառասէրն չունի մեծամեծ առաքինութիւնս. բայց համարի զանձն արժանի պատուոյ մեծի: Փոքրոգին ունի առաքինութիւն մեծ. բայց ոչ համարի զանձն ընդունակ պատուոյ մեծի: Նա կոչի փառասէր. զի ունի սիրտ թափուր յառաքինութէ, և լի հողմով ունայնութէ: Սա կոչի փոքրոգի. զի թէպէտ և ունի սիրտ լի առաքինութեամբ, բայց չորտաղնի երևեցուցանել զայնս ՚ի պայծառ պիտառութիւնս հասարակաց:

Բայց ասիցես. ընդէ՞ր ոչ իցէ մեծամեծ առաքինութեայն՝ որ ունի վարժութիւն ՚ի գործ դնել զնա. իսկ ընդէ՞ր իցէ թափուր յառաքինութեանց մեծաց այն՝ որոյ սիրտ մեծ է քան զժողովրդեայն:

Պատասխանեմ. մոլութի փոքրոգութե ծնանի առաւել ՚ի բնաւոր իմն պակասութէ, քան ՚ի բարոյականէ: Զի ունելով նր մարմնաւոր ինչ խառնուած այլազգ քան զմեծանձինն, որչափ մեծանձինն ջերմ է սիրտ, այնչափ փոքրոգւոյն ցուրտ է սիրտ: Եւ զի ոգին զհետ երթայ մարմնոյ, այն բնաւոր ցրտութին անպարտելի երևեցուցանէ նմա զբազում դժուարութիւնս ՚ի վեհ իշխանութիւնս. վա որոյ ՚ի բաց հրաժարէ յայնց, և շատանայ փոքու պատուով:

Զորին հակառակն՝ փքացեալն թէպէտ չունի բազում առաքինութ յանձին, և ոչ ըմբ իմաստ ՚ի միտս, բայց ունի ՚ի սրտի բազում ջերմութի, և առելի ևս քան զմեծանձինն. և վա այնր խրոխտ վառա_

վառաչօքի՞ հետամուտ լինի փառաց և վեհ իշխա-
նութեց, որոց չէ ընդունակ իւրև զմեծամեծն:
Այլ կրկնեսցես անդրէն։ [illegible]

Առ այս պատասխանեմ, թէ [illegible] և [illegible] են առար-
կայք ամենեքին այլևայլ. զի մին է մարմնական
բարի, և միւսն՝ կարծեաց բարի։ Արդ յայտ է
թէ որպէս առիւծ առաւել երկնչի 'ի տկար աքա-
ղաղէ քան 'ի գժնեայ ընձուէ, նոյնպէս սիրտ մար-
դոյ առաւել երկնչի 'ի միոյ առարկայէ քան
յայլմէ։
փոքրոգին չերկնչի 'ի վտանգից կենաց, բայց եր-
կնչի 'ի վտանգից պատուոյ. զի 'ի գնել զկեանս՝
ա̃մ քաջ զօրական է պատրաստական. բայց ըմբռ-
նել զհրապարակական իշխանութեն այնպ է տար-
ժանուոր, մինչ՝ եւ և քաջասրտոյ և գերզգօնից
մտադիւր 'ի վար արկանել զառաքինութիւնս ի-
րեանց ը̃ հաւանեալ մենակեցիկ երկասիրութեց,
քան 'ի բացերևակ լոյս քաղաքական իրողութեց.
զհետ երթեալ իմաստուն այն տեից. [illegible]

Զօրին հակառակն՝ փքացեալն սրտատուչոր անձ-
կանօք հանդիսի գովուեց, և մեծապայծառ իշխա-
նութեց, յանդուգն այնց զհետ պնդի. զի չուանելով
հանճար՝ ոչ իմանայ զկործանմանն վտանգ:
Յառաջելոց ասաի նախ առաջին 'ի մեր առջիր,
թէ փքացումն նմանագոյն է մեծանձնուե ըստ ե-
րևութին, այլ աննմանագոյն ը̃ էուե. և փոքրոգու-
թին նմանագոյն է ը̃ էուե, այլ աննմանագոյն ը̃
երևութին: Զի փքացելոյն աւելի է համարձակու-
թին քան զարժանաւորուե, և փոքրոգւոյն աւե-
լի է արժանաւորուեն քան զհամարձակուե:
Վ̃նկ ո̃պ չուայլն է կայլիկ առատաձեռին, և յան-
դուգնն կայլիկ արիականին, նոյնպէս փքացեալն
է կայլիկ մեծանձին: Զի մնապարծուք ախորժէ
երևիլ մեծանձն, ո̃պ զի արժանաւոր համարեսցի
մեծի պատուոյ:

Մինչ զի յաչս ռամկաց՝ որք ը͞ս աչս դատեն, փքա֊
ցեալն համարի մեծանձն, և պատուի, թէպէտ
և է մոլի. իսկ փոքրոգին թէպէտ և մեծամեծ
առաքինութեամբ զարդարեալ՝ ոչ այդպէս համարի. զի
ոչ ճանաչի:

Փքացեալն կարի իմն արհամարհէ զմեծամեծս.
փոքրոգին կարի իմն մեծ համարի զփոքունս: Նա
առ հասանել խուռն դիմեալ՝ սպառնայ և բարկա֊
ցուցանէ. սա առ ընդունել զայն՝ խոնարհի և ա֊
ղաչէ: Նա առ դոյզն ինչս ձեռնարկէ 'ի դառն
վրէժխնդրութի. սա 'ի ներքս յինքեան տառապի
և հեծէ: Նա ստգտանէ զգործս այլոց՝ եւս և զգե֊
րապանծս. սա գովէ՝ եւս և զմանունս: Նա տե֊
սեալ զգործս վեհանձնեայս՝ պանծայ լաւ եւս առ֊
նել. սա ոչ վստահանայ զհաւասարն առնել: Նա
ըղձանայ այնմ, յորմէ պարտ էր խորշել. սա խոր֊
շի յայնմանէ, որում պարտ էր ըղձանալ:

Ի մի առ և զայս, թէ յերկուց աստի մոլու֊
թեանց փոքրոգութե և փքացման, դիւրագոյն հնար է
հրճել յառաքինութի մեծանձնութե զփոքրոգին քան
զփքացեալն. թէպէտ և փոքրոգութիւն երևի ա֊
ռաւել նախատական և ծիծաղական. և փքացումն
առաւել պատուաւոր և տիրական:

Որոյ այս է պատճառ. զի փքացելոյն պակասի էու֊
թիւն մեծանձնութե՝ ո͞պ ասացաւ, այսինքն հան֊
ճար մտաց և առաքինութի սրտի: Իսկ փոքրոգ֊
ւոյն պակասի միայն ջերմութի և քաջալերութի:
Մինչև մարթիմք ասել, թէ փոքրոգին է առաքի֊
նի ոմն երկչոտ. և փքացեալն՝ մոլի ոմն խրոխտ:
Այլ եթէ ցրտութիւն փոքրոգւոյն ջերմասցի 'ի
բուռն ինչ կրից, կամ գրգեսցի 'ի յորդորմանց
բարեկամաց, կամ շարժեսցի յաղաչանաց հայրե֊
նեաց, կամ հարկեսցի 'ի ստիպող ինչ առթէ. և եւս
առաւել թէ օգնեսցի յիմաստուն խորհրդականաց
և 'ի ներհուն պաշտօնէից, այն ինչ սկիզբն առ֊
նէ ճանաչել զիւր զօրութի՝ և զչափ առնուլ զան֊
ձին, դիւրանան նմա դժուարինք, և ինքն վստա֊
հացեալ և բարեյոյս լեալ՝ 'ի փոքրոգութե լինի մե֊
ծանձն:

Ո՛

Ո՞ եղև երկչոտ 'ի պատուոյ քան զզաղնասս որդի արիստիպպոսի ազնուականի կիպրացւոյ. որոյ խորշեցեալ 'ի լուսոյ ոչ միայն հրապարակական ժողովեանց, այլ և քաղաքային կենցաղավարութեանց, փոխանակեաց զքաղաքական և զազնուական կեանս 'ի ծառայական երկրագործութեան կեանս՝ ընդ իւր շինականս:

Բայց ո՛ եղև յետ այնր քան զնա քաջակորով 'ի սըրտի, և երևելի 'ի գործս, 'ի ժամանակի յորժամ սէր չքնաղին և ազնուականին իփիւգենեայ յանտառի ուրեք նմա պատահելոյ՝ ձգեաց զնա անդրէն յանտառէ անտի 'ի քաղաք. և նախանձաւորութեան հաւոգխանոսի պատմոնգայ եբաց ճանապարհ քաջութեան նորա, և երևելի երևելի առաքինութեանց որք ծածկեալ կային յանձն նորա:

Բայց թէ փքացեալն՝ ճշմարտապէս լինի մեծանձն, մեծի սքանչելեաց պէտք են: Լսեմք թէ վեսպասիանոս ուղղեաց զոտն խեղացելոյ ուրումն հռովմայեցւոյ, այլ ուղղել զխեղացեալ խելս՝ անհնար թուի. թէ ոչ փոխեսցի և խելապատակն:

'Ի վախճան առ իմա, թէ փոքրոգին ապահովագոյն է քան զփքացեալն. զի չելեալ նորա կարի իմն 'ի բարձր, ոչ կործանի կարի իմն 'ի խոր. և առաքինութիւն նորա է իւր հաստատարան, զի մի անկցի: Բայց փքացեալն ամբարձեալ 'ի մեծ պատիւ, առանց հաստարանի հանճարոյ և առաքինութեան, որչափ 'ի վեր ամբառնայ՝ այնչափ գահավէժ կործանի. և իւրով կործանմամբ կործանէ և զհասարակութիւն:

Այսպիսի օրինակաւ փայեթոն անմիտ համբակ՝ տեսեալ զձիոյթարձակ նարօտս և զոսկեղէն կառս լուսոյ, և զականակուռ գանգանաւանդս թեւաւոր երիվարաց (արևու), կաթոգին ըղձանայր հեծնուլ յայն, զի կառավար երևեսցի տունջեան, և լուսատու աշխարհի. չածեալ զմտաւ թէ 'ի մեծէ լուսոյ անտի քանի խաւար պաշարել ունէր զինքն և զաշխարհ:

Բա-

## Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

Յաղագս պարկեշտութեան, և մոլութեանց նր՝ որ ի ծայրս:

### ԳԼ. Ա.

Թէ ո՞ւր իցէ պարկեշտութիւնն:

Ապաքէն լուար, թէ որպէս չափաւորութիւն 'ի մեծամեծ ծախս՝ է մեծագործութիւն, և 'ի միջակային ծախս՝ է առատաձեռնութիւն. նոյնպէս չափաւորութիւն 'ի մեծամեծ պատիւս՝ է մեծանձնութիւն. և 'ի միջակային պատիւս՝ Պարկեշտութիւն.

Թէ իցէ սա ճշմարիտ առաքինութիւն բարոյական, յայտնի երևի. զի ուր գտանին ծայրք, գտանի և միջասահմանութիւն: Ապա եթէ զմիջակային պատիւս հնար է սիրել յաւէտ կամ նուազ, որք են մոլեկան ծայրք, սիրել զնոյն ըստ պատշաճի՝ լինի միջասահմանութիւն առաքինական:

Ապա՝ որ ոք ունելով զմիջակային առաքինութիւն, համարի զանձն արժանի միջակային պատուոյ, է պարկեշտ: Որ ոք ունի փոքր առաքինութիւն, և համարի զանձն արժանի միջակային պատուոյ, է փառամոլ: Որոք ունի միջակային առաքինութիւն, և չհամարի զանձն արժանի միջակային պատուոյ, է անհոգ: Մինչև պարկեշտութեան համեմատել մեծանձնութեան, փառամոլութեան՝ փքացման, և անհոգութեան՝ փոքրոգութեան: Եւ որչափ պանծագոյն առաքինութիւն է մեծանձնութիւն քան զպարկեշտութիւն, այնչափ նուազ է անօթ ծայրից պարկեշտութեան քան զմեծանձնութեան. զի ապականութիւն լաւագունին է յոռեգոյն:

Եւ մեծանձին հնար է լինել պարկեշտ. այլ ոչ

ամ

ամ պարկեշտի հնար է լինել մեծանձն։ Որպէս և ամ մեծագործի հնար է լինել առատաձեռն, բայց ոչ ամ առատաձեռնի հնար է լինել մեծագործ։ Զի որ ձեռնհաս է առատելին՝ ձեռնհաս է և նուազին. բայց ոչ հետևի՝ թէ որ ձեռնհաս է նուազին, ձեռնհաս իցէ և առատելին։

Ապաուրեմն եթէ մեծանձնն համարեալ զանձն արժանի մեծի պատուոյ, ոչ մերժէ վարել զմիջակային իշխանութիւն առ օգնելոյ հայրենեաց, ոչ է այն մեծանձնութիւն, այլ՝ պարկեշտութիւն։

Բայց որ արժանաւոր գոլով մեծի պատուոյ՝ միջակայնով շատանայ, զի ոչ ճանաչէ զիւր արժանաւորութիւն. ոչ պարկեշտ է, և ոչ մեծանձն, այլ՝ փոքրոգի. թէպէտ և 'ի տգէտ ռամկաց համարի պարկեշտ. զի բազում մոլութիք՝ ներքոյ են տգեղ, և արտաքոյ գեղեցիկ. և ժողովուրդն դատէ, որպէս և տեսանէ։

## Գլ. Բ։

### Որոշ օրինակաց և առանձինն հանդէսք գործոյ պարկեշտութեան։

Պարկեշտն ամփոփ պարունի յիւրում կոպարի, և ոչ տարածէ զթևս արտաքոյ քան զիւր բոյն։

Ոչ ամենեքին բնաւորեալ են առ մեծ պատիւ, և ոչ 'ի կամս է իւրաքանչիւրոյ արժանաւորիլ այնմ։ Նա՝ բազմաց դժուարագոյն է արժանաւորիլն՝ քան զհասանելն։

'Ի սերմանց ոմանք սփրեն զըլուրս, և ոմանք զդաշտավայրս, յորս բուսանին. և որ փոխէ զտեղի սերմանց, կորուսանէ զպտուղն և զմշակութիւն։

Բազումք են մտաւորք 'ի միջակային իշխանութիւնս. ամբարձեալք 'ի գերամբարձս՝ լինին այպն կատականաց։

'Ի հարկանել կայծական զգլուխ մեծի պատկերին աթենասայ յաթէնս, յանձն եղև նախանձաւորութեան երկուց անուանի քանդակագործաց փիդեայ և ալկամենեայ՝ ձեռնարկ նորոգութեան նորա։ Երկաքանչիւր մի քան զմի ճգամբ՝ արկին ձեռն 'ի գործ. երկաքանչիւրն հանին 'ի հրապարակ զիւրեանց երկս։

Գլուխն

Գլուխն արարեալ 'ի փիդեայ էր այնպէս անհե-թեթ, մինչև երևիլ գունտ ինչ խորտաբորտ. իսկ զոր արարն Աղկամենէս էր այնպէս արուեստա-կեալ, մինչ ոչ գոյր տեսանել քերուբ ինչ քան զայն: Այսպս զօրայս գրուատեալ դատաւորաց բազում գովուք, այպանէին առհ̅ն̅րկ զփիդեայնն. որոյ այպանեալ զայպանիչս իւր, ասէ. Մի դատէք դատաւորք ըստ դիմաց և ըստ դիմացոյ. մինչ զետեղեսցին երկաթանութիւն 'ի տեղւ վերին:

Իբրև եդին 'ի վ̅ր̅ իրանաց բարձու դրօշուածոյն զգլուխն, զոր Աղկամենեայ էր արուեստակեալ, Թուեցաւ գունտ ինչ անկերպարան. այլ իբրև ե-դին զմիւսն՝ որ երևէր ուրուական իմն, այնպէս գտաւ համեմատ, որ ոչինչ քան զայն կատարեալ՝ եղև երբեք հանճարել արուեստի: Եւ չեն ինչ զարմանք, զի մին գործեցաւ գալ 'ի տեսութիւն 'ի բարձուէ, և միւսն 'ի ստորէ:

Զմտաւ էած իմաստուն քանդակագործն (փի-դիաս). թէ բարձրուԹն փոխէ զհամեմատութիս և զերևոյթս. և վասն այսորիկ յիւրումն՝ աչք, ականջք, ռունգունք, և ծնօտք, որք Թուէին այ-տուցք և փորոցք դիպուածոյք, 'ի բարձրագիտա-կի անդ գալին յանվրէպ չափակցուԴ: իսկ 'ի միւսն մանրուն ձևոց 'ի կարի իմն հեռաւորութե խառ-նեալ չփոթեցաւ:

Այն՝ որք բնաւորեալ են առ միջակային աւագունս իշխանականս կամ զինուորականս. և այսպիսեաց ոչինչ այնպէս է վտանգաւոր, որպէս ամբառնալ 'ի գերաբարձր աւագութիս: Այս ոք լինի քաջ խորհրդական, այլ ոչ գլուխ խորհրդականաց. և այն ոք լինի քաջ հ̃րապետ, այլ ոչ քաջ ինքնակալ:

Գլուխն չէ համեմատ այդչափ բարձրութե:

Գաղբա 'ի մասնաւոր հրամանատարութիս համարե-ցաւ գերիմաստ. յինքնակալուԴ ամենեւին անմտա-ցաւ: Զսորին հկ̃կն՝ Տակիտոս 'ի ցածութե՝ մեծա-կար յայտնեցաւ հնրկապետուէ. ամբարձեալ 'ի գե-րագահ իշխանուԴ Թուեցաւ տարբեալ յերկնից: Նա Թուէր արժանի Թգաւորելոյ, եթէ չէր Թգաւո-րեալ: Սա ոչ համարեցաւ արժանի Թագաւորու-Թե,

թն, բայց յորժամ թագաւորեաց։ Զի նա զօրու-
ունելով չափաւոր, ոչ կարողանայր տեւել ծանր բե-
ռին. և սա սիրտ ունելով վեհական, ոչ հանդուր-
ժէր անձուկ բախտի։

Վնկ նա հնրկաց տօնախմբութ ամբարձաւ յինքնա-
կալուն, և հնրկաց խնդութ սպանաւ։ Սա հասա-
րակաց երկխուղիւ յինքն էառ զինքնակալութն, և
հնրկաց ցաւովք եթող զայն։

Երկաքանչիւրն թագաւորեցին սակաւ։ Նա առ-
գթութ երկնից, որում ոչ եղեն կամք՝ թէ հնրկց
չարեաց յերկարեսցին։ Սա ՚ի նախախնամութէ օրհասին,
որ ոչ հանդուրժէ սաստ ՚ի սաորինս յերկարաձգել
մեծի երջանկութն։

Բայց ուրեմն եթէ դժուարին է ումեք լինել մե-
ծանձն, այնպիսւոյն մեծ քաջալերութի լինի առ-
միջակային ինչ առաքինութի պարկեշտութե. ոմ̄
մեծ փառս սատնայ նա, որ ոչ բաւեալ լինել մեծա-
գործ՝ լինի առատաձեռն։

Նա՝ ոմ̄ յաչս ժողովրդեան առաւել հաճոյ է առա-
տաձեռնն քան զմեծագործն. զի մեծագործութին
ծնանի զզարմացումն, և առատաձեռնութին զսէր,
նոյնպէս պարկեշտութին առաւել է հաճոյական
քան զմեծանձնութին. զի մեծանձնն արհամարհէ
զամենեսին բաց յանձնէ. պարկեշտն տանի հաւա-
սարութ բազմաց, և առ ամենեսին է քաղցր։ Վ̄յ
մեծանձնն է առաւել զարմանալի. պարկեշտն ա-
ռաւել սիրելի։

Այլա գոհ է պարկեշտն ը̄ միջակային պատիւ. ոչ
առ երկխուղի անկման՝ ոմ̄ փոքրոգին. այլ վասն զի
համեստ խմն է և վայելչական, թէ պատիւն հա-
մաչափ իցէ իւրում արժանաւորութն, և արժա-
նաւորութին առաքինութն։

՚Ի գնել առաջին նր̄ գաւառին իշխանութ և խոյր,
ատէ համարձակ. [illegible]
[illegible]
[illegible] Ոչ ինչ դիւցազնական ա-
ռաքինութ արժանացաւ այնչափ գովեստի, որչափ
այս հրաժեշտ։

Զոր աստացաքս զպարկեշտութէ, շատ լիցի։ Զի
զմ

զա՟մ զայլ հանգամանս՝ տ՟մ մտաւորի դիւրին է յան-
կել յիւր վ՟ր յա՟մէ՝ զոր ասացաք ընծայնիւոց և ըն-
ծայեցո ն՟ր, պահել զհամեմատական կանոնս ընդ
յաւէտ և ը՟ նուազ:

## ԳԼ. Գ.

## ՅԱՂԱԳՍ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ:

Սա է ԱՌԱՔԻՆՈՒԹԻ՟ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ. որում հնար է կալ ը՟ բարոյական պարկեշտուե՟ և մեծանձնուե՟. զի թէ մեծ առաքինութի՟ ունիցի ոք, և թէ միջակային, հնար է նմ՟ լինել խոնարհ ը՟ համեմատուե՟: Սոյդ իմ՟ է, թէ ընդ մեծանձնութե՟ առաւել ևս փայլէ պայծառ. զի որչափ մեծ է արժանաւորութին, այնչափ առաւել գժուարին լինի ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆՆ: Բայց նմանագոյն է նա պարկեշտուե՟, զի
փախչի 'ի մեծամեծ պատուոյ:

Նա՝ առ արտաքին իմաստասէրս, առաւել նման էր նա մոլեկան անհոգութե՟, քան առաքինական պարկեշտուե՟. զի ունելով արժանաւորուի՟ ոչ ինչ փոյթ է նմ՟ զպատուոյ, իբրև զանհոգ ոմն, կամ փոքրոգի: Բայց բազում ինչ ընդ մէջ է ԽՈՆԱՐՀԻ
ԵՒ ՓՈՔՐՈԳՒՈՅ:

Փոքրոգին փախչի 'ի պատուոյ. զի ոչ ճանաչէ զիւր առաքինուի՟: Խոնարհն ճանաչէ զիւր առաքինութի. բայց և այնպէս փախչի 'ի պատուոյ, զի ճանաչէ յանձին՝ որ ինչ է իւր, և որ ինչ ոչն է իւր: Չէ նա ո՟մ զխլուրդս, որք ոչ ունին աչս՝ ճանաչել զանձինս. այլ՝ է իբրև զերկնային թռչունս եզեկիելի. որք հանգոյն արգոսի ունէին հարիւր աչս, ծածկեալս ը՟ փետրօք, առ հասարակ զարմացեալս 'ի հայել 'ի ներքս յինքեանս (139):

Ապա ճանաչէ խոնարհն զիւր կատարելութիս.
բայց ճանաչէ և զիւր անկատարութիս:

Գիտէ՝ թէ որչափ ինչ կատարելուի՟ է յինքեան, տ՟մ է յա՟յ. և վս՟ այնորիկ ոչ պարծի: Եւ որչափ ինչ անկատարուի՟, տ՟մ է յիւրմէ. և վս՟ այնր խոնարհի և ամաչէ:

Գիտէ, թէ ՈՐՉԷՆ ա՟յ եղև ուսուցիչ առաքինութե՟.

վասն

վ̃ զի քաջածանօթ լեալ նր՝ զինչ ա̃ծային էր 'ի նմա և զինչ մարդկային 'ի միում անձին, վ̃ մարդ-կայնոյն խոնարհէր զանձն հօր, ում ը̃ ա̃ծայնոյն էր հաւասար:

Գիտէ, թէ այսուիկ օրինակաւ նոյն ինքն որդին ա̃յ ուսոյց մարդկան, եւ և գերակայից՝ խոնար-հիլ ստորադունից. թող թէ հաւասարից. հայե-ցեալ խոնարհանչութեամն՝ զինչ պակասուէք են յին-քեան. և բաղդատել ա̃ծ՝ զոր ճանաչէ յայլս լի-նել յա̃յ:

Եւ գիտէ, թէ ո̃ր որդին ա̃յ՝ որչափ խոնարհեցոյց զանձն ա̃յ, այնչափ բարձրացոյց զնա ա̃ծ. նոյնպէս խոստացաւ խոնարհի՝ այնչափ բարձրացուցանել զնա յերկինս, որչափ խոնարհի նա յերկրի:

Յասացելոց աստի ունիս քաղել. թէ խոնարհու-թիւն է յոյժ առաւել մեծանձնեայ քան զբարոյական մեծանձնութն. զի սա վերադոյն առնէ զմարդ քան զայլ մարդիկ. այլ նա առնէ զնա նման ք̃ի:

Թող, զի մեծանձնն արհամարհէ զփոքր պատիւ. զի անձկայ մեծ եւ պատուոյ առ մարդիկ. բայց խո-նարհն արհամարհէ զա̃մ պատիւ երկրաւոր՝ զի անձ-կայ երկնայնոյն. և սա է մեծանձնեայ խոնարհութն

Իսկ եթէ սախոյի խոնարհն ը̃ունել զուարճութիւն՝ որոց է արժանի և յորոց խորշի, առնու զայն յանձն արխարար և չքով: Եւ թէպէտ ոչ մեծ ինչ համա-րի զանձն, բայց և այնպէս կամի, զի վերադունեն իւր մեծ համարեսցի. և առաւել նախանձախնդիր է արժանապարտ պատուոյ՝ քան զա̃մ մեծանձն:

Զօրօրինակ պատկեր ա̃յ երկրպագի, ոչ ո̃ր պաս-տառ ինչ նկարեալ, այլ ո̃ր կենդանագիր երևեցու-ցիչ ա̃յ. նոյնպէս առաջնորդ ոք ամենևին խոնարհ՝ կամի զի աւագութիւն իւր 'ի ստորադունից պատ-ուեսցի, ոչ ո̃ր զարդ իւրոյ անձին, այլ ո̃ր պատկեր ա̃ծային հեղինակութեան, որ բացափայլէ 'ի նմա:

Զհուսկն ասացից: Եթէ արիստոտէլի ծանուցեալ էր քրիստոնէական խոնարհութիւն, տայր արդեօք անտարակոյս, թէ ՄԵԾ Է ՄԵԾԱՆՁՆՈՒԹԻՒՆ ՔԱՆ ԶԱ̃Մ ԲԱ-ՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ. ԲԱՅՑ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ՄԵԾ Է ՔԱՆ ԶՆՈՅՆ ԻՆՔՆ ԶՄԵԾԱՆՁՆՈՒԹԻՒՆ:

# Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ:

### Յաղագս հեզութեան, և երկուց մոլութեանց՝ որ ի ծայրս:

## ԳԼ. Ա.:

### Թէ ինչ իցէ հեզութիւն:

Հեզութիւն է սա առաքինութիւն յաղագս բարկութեան գործունեայ յանկերպ իմն չափաւորեալ 'ի վրէժխնդրութեան:

Մինչ զի չորք էական պարագայք ընթացակցին 'ի հեզութեան. ընդհանուր անիրաւութեան. յառաջ գրգռելոյ, բաղձանք վրէժխնդրութեան, և յաճախ ցասման և վրէժխնդրութեան:

Այլ չէ հեզ, որ ոչ փայտեղէն ինչ արձան չզգայ զանիրաւութիւն, և չզայրանայ. և ոչ այն՝ որ իբրև զգազան՝ անդէն իսկ 'ի զգալ զանիրաւութիւն, յափշտակի 'ի բարկութեան առաւել քան զարժանն:

Երկոքանչիւրն են մոլեկան ծայրք. մին կոչի անզգայութիւն. և միւսն բարկութիւն: Նա անցանէ զչափ 'ի նուազն, սա յառաւելն. նա է ջուր, և սա հուր:

Այլ հեզն է ոչ զղեգաղոս (1/0), որ յանցանէն է ջուր և է հուր անոյշ և անկեզ. զգայ զանիրաւութիւն որչափ արժան է, և զայրանայ՝ որչափ վայել է:

Թուեսցի քեզ թերևս, թէ հեզութեան անուն զկէսն միայն յայտ առնէ զառաքինութենս, զմիւս կէսն լռելեայն ծածկեալ: Զի երկեակ գոլով նր գործ, մի՝ չզայրանալ առաւել քան զբանի, և նկգ՝ զայրանալ է պահանջել բանի. որ սակէն՝ հեզութիւն, թուի թէ յայտ առնէ միայն զչզայրանալն. և լռեալ առկանէ այնմ՝ որ զայրանայ է բանի:

Բայց և այնպէս բաւական թուեցաւ մեծամեծ իմաստա-

տա-

տանելոյ առնուլ զանուն յայնմ մասնէ, որ է դըժ-ուարագոյն, որով և պանծագոյն, զի է 'ի չզայրա-նալոյ:

Ոչ և արիութիւն թէպէտ և նշանակէ միջասահման ինչ ընդ մէջ երկնչելոյ 'ի վտանգից և չերկնչելոյ, բայց էառ զանուն 'ի դժուարագոյն մասնէ, զի 'ի չերկնչելոյ՝ քան յերկնչելոյ:

Բայց չէ ինչ փոյթ զհնչմանէ անուան. միայն թէ սահմանն իցէ ծանուցեալ: Զի սահմանք հիմնեալ են յանայլայլակ էութիւն իրաց. և անուանք յայլ և այլ հաճոյս անուանադրաց:

Արդ՝ առ ուսուցանելոյ բացերևակի զայս առաքի-նութիւն, կալցուք ոճ այլազգ քան զնախագրեալսդ: Զի յայլս քննեցաք զառաքինութիւն յառաջ քան զմո-լութիւնս, որ 'ի ծայրս. այլ արդ քննեսցուք զմոլու-թիւնս որ 'ի ծայրս՝ յառաջ քան զառաքինութիւն. զի այնք են առաւել զգալիք և ակներևք. սա առաւել վերացեալ և ծածկեալ:

## ԳԼ. Բ:

## Յաղագս բարկութեան:

Օ բարկութիւն մարթ է մտածել երկակի. բարոյ-ապէս, և փիլիսոփայէս: Ըստ բարոյական գոլոյ, է նա ցանկութիւն տրտմութեամբ 'ի [illegible] յայտնի վրէժխն-դրութեան վասն ընկալելոյ անիրաւութեան:

Իսկ ծանիր, զի բուն ցասումն է բնաւոր կիրք, և բարկութիւն է մոլեկան ուժգնութիւն այնորիկ, որոյ դիւրավառ լեալ 'ի ցասումն՝ կոչի բարկացող: Բայց յոլովակի ցասումն կոչի ոչ միայն կիրքն, այլև նոյն իսկ զայրացումն:

Վն զի ամ մարդ բնաւորապէս սիրէ զինքն և զիւրսն, նոյնպէս այն ամ՝ որ վնասէ մարմնոյ, ոպ հարուածք և խոցուածք, և այն ամ՝ որ վնասէ հասուցանէ համբաւոյ, ոպ անէծք և արհամար-հանք, և այն ամ՝ որ վնասէ առնէ ընչից, ոպ գողութք և յափշտակութք, և այն ամ՝ որ խոչ է հաճոյական կամաց, որպէս խլել զաղբիւր պապակելոյն, առ-նուլ զքուեայս խաղացողին, առհասարակ են առար-կայք՝

կայք՝ ուր առաջարկեալք յերևակայութէ որպէս անխրաւք, զարթուցանեն զցասումն 'ի վրէժխնդ-
րութի։

Բայց ը̄ փիզիգական գոլոյ, ցասումն է բոց ինչ ջեռուցեալ առաւելեալ յանկարծակի իմն վառեալ զօրութե. որ եռացուցանէ զարիւն, և զգալի ցնցմամբ ձգէ զսիրան ընդդէմ վնասակարին՝ շարժէ զօրաւքին
կարողութիւ 'ի վրէժխնդրութի։

Երևի այս բնաւոր գործ՝ որպէս տեսանեմք 'ի Ճառս կերից, յա̄մ կատարեալ կենդանիս, որոց իւրաքանչիւր ը̄ զգայուն զինու՝ վառի բոցով. հրանման նր̄ աչք. ցցուին հերք, խիզախէ բարբառ, և մերկէ 'ի պատենից զբնաւոր զէնս՝ բուռն 'ի վր̄ յար-
ձակի վնասակարին։

Եւ զի 'ի բնաւոր յարձակմունս մարդ չէ ինչ ը̄հատ յանասնոց, եւս և 'ի սիրտ մարդոյ զայրացելոյ վառի այս հուր։ Ուստի սաստիկ բարկութին յիրաւի կոչեցաւ բորբոքումն իբրև զչանթի երկաթոյ։ Նա՝ վս̄ զի գիմամարտութ̄ ջերմութին ամփոփ ժողովեալ ցրտացուցանէ՝ զորս շուրջն կան, վնկ տեսանես 'ի ցասուցելոյն մրցումն ինչ որակութց, և
շարժմունս ներհականս, հակառակ [illegible]։

Վառի սիրտն 'ի ներքին բոցոյ. և գիղանան հերք 'ի պաղելոյ մորթոյն։ Գունք՝ է զի շառագունին, և է զի դալկանան. խառնին ձայնարերք կոկասու-ը̄ բոց եռնոյն։ Մորեն աչք ջուր և հուր. փայլատակեալ 'ի կատաղանաց, և արտասուեալ 'ի ցաւոց։ Ծուխս արձակեն ռնգունք, և դողդոջեն շրթունք. և բոցավառին կուրծք. և սասանան զօղյցք. յանձին զգայ մանդամոյն ցաւագին ինչ ուրախութի, և ուրախալէտ ցաւ, մաքառելով
քինու վնասուն ը̄ յուսոյ վրէժխնդրութե։

Եւ այնպէս լինի մարդ ճիւաղ ինչ խառնեալ յա̄մ գազանաց։ Բառանչէ որպ̄ ցուլ, մռնչէ որպ̄ առիւծ, չչէ որպ̄ վիշապ, խածանէ որպ̄ շուն, ճիրան արձակէ որպէս արջ. զոտս զգեանի հարկանէ, երկնի տապանոյ. յառաջ քան զթշնամին գանել՝ զանձն չարաթոյ կոչկոճէ։ Յորժէ մարթիս իմանալ՝ քանի լցէ ավեղուն այնպիսւոյ ոգւոյ, որ այսպէս

չա-

չափաչափ զմարմինն այլանդակէ:

Վնէ պղտոր խրատէ զմարդ բարկացեալ՝ հայիլ ընդ հայելի: Զի զորօրինակ (ըստ առասպելաբանուաց) աթենաս 'ի հարկանել զփլինդ առ ապերս, տեսեալ 'ի ջուրս անդ զծնօտս իւր այտուցեալ՝ և զդէմս այլանդակեալ, զահի հարաւ յիւրմէ, և ընկէց զփլինդն 'ի բաց. նոյնպէս բարկացեալն հայեցեալ յիւր պատկեր, գարշեսցի 'ի ցասմանէ իւրմէ, և սասանեսցի յիւրմէ:

Երգ՝ այս բոց դիւրագոյն վառի 'ի ջերմագոյն խառնուածս՝ իբրև 'ի նիւթ պատրաստագոյն առ բռնկելուն և անուանդ նր: Ա. յարուցանելոյ մեծ ինչ հրդեհ՝ չէ ինչ փոյթ, որչափ ինչ իցէ լուցկին, այլ թէ ուր անկանի: Վտանգաւորագոյն է կայծ մի անկեալ 'ի վր վչոյ, քան բոց ինչ մեծ 'ի վր երկանաքարի:

Բայց թէ այլ հայեցուածոյ՝ առաւել սուր է բարկութիւն, ուր նուաղ է զօրութն. զի 'ի պակասիլ ուժոյ՝ յորդէ յօժարութն:

Որ առաւել անկատար և անզօր կենդանեաց՝ ի-ժից, կարճաց, սարդից, և պիծակաց՝ բնութն են առաւել պատրաստական և թունաւոր ըզնա 'ի վրէժխնդրութն. նոյնպէս բարկութն 'ի տկարս է առաւել կորովի, 'ի ծերս աժխոյժ, 'ի կանայս առ նացի. վասն որոյ և ասացաւ, թէ ամ ՓՈՓՈԽԷ ՃԱՆՃ ԱՆՈՅ ԻՒՂՈՅ ՃԱՇԱԿ:

Այս է ճշգրիտ բարկութն, զորմէ ցայսվայր եղեն բանք, ուժգնոյագոյն և յայտնի, վնյ է նուաղ մոլեկան. զի կարի խիստ եռայ, բաղումս սպառնայ, և անգէն չիջանի: Յորմէ իմաստնապէս կոչեցաւ ԱՆՄՏԱՑ ԱՆԱՂ, ՈՐԴՒՈՑ ՀԱՐՍԱՆՑԵԱՆ, ԱՐՔԵՅՈՒԹԻ ՈՉԽՈՅ, ԲԱՆԱԿԻ ԱՌԱՔԵԼՈՅ, վնյ և կարճառե. զի որպէս է բանական, չէ տեւական:

Բայց միւս ևս առաւելագոյն ցասման ևս մոլեկն՝ դաղանակն և անգթակն՝ առաջի առնէ մեզ արիստոտէլ, կոչեալ զայն ՑԱՍՄԱՆ ԴԺՆԴԱԳՈՅՆ և ԽՆՁՈՒԹԵԱՆ: Զի առաջինն է հաստատեալ յարեան, որ վաղ եռայ, և վաղ եղկանայ. բայց սա բնակէ 'ի սևամաղձն, որ հիւթ գոլով ցրտագին և մածուցիկ, դժուարու

բու

րաւ մարսի կամ լուծանի. և որչափ չերևի, այնչափ առաւել վնասէ:

Ամէն իրի զօրօրինակ երկաքանչիւրոցն այլ և այլ են պատճառք, նոյնպէս այլևայլ են հանգամանք և ախտոր գործք: Նա հուր ծաւալէ յերեսս, և սա ծուխ: Նա արիւն է եռանդուն, և սա խանձող ծածկեալ 'ի գաղտնի. վէկ ուռնակոյցեալն 'ի բարկութենէ է արիւնըռուշտ. և դժուարաշարժն՝ ոխամաղձային, և գոյնն ցուցանէ զնոցին բարս:

Յայս սակս նա խուճապի 'ի խորհուրդս, և բուռն բերմամբ յառաջ գործէ, և ապա խորհի. սա հանդարտ սրտիւ անխուճապ խորհի ընդ միտս, և հնարս ընտրէ խժդժականս, և 'ի կամս չարատողութեան յաւելու արուեստս:

Նա բանիւք և գործովք յայտնէ զխիրան. և որոտայ զպատառնոլիս, մինչև է արձակեալ զչանթ սուսերի. և յուղղակի լուծանի 'ի սնոտի փայլակն, բայց սա նենգաւոր անմարթութեամբ մրրիկ պատրաստեալ, լռելեայն կեղծեօք պարապ յարդարէ, և յանկարծ գարանաւ 'ի վերայ հասանէ չգգուշացելոյն:

Նա իբրև զպատուլեանն սարդ (141), առաջ հնչմամբ բարեյորդոր բարեկամաց՝ մեղմէ զխուր թոյն. սա ընդ իժ խուլ՝ յոչինչ երգոյ փրկաւէտ աղդարարութեանց թովի:

Նա իբրև զոխեռն յետ գործոյն սարջանայ, և անդամն լալեօք զվէրսն լուանայ. սա իբրև զկատաղի վագր՝ զկենդանին գիշատէ, և 'ի շաղիղ անդր թափէ զցասումն:

Նա ընդ մանաւոր ինչ ախտ՝ հարկանէ զմի միայն անհատ, և 'ի բարկացուցչէ իւրմէ խնդրէ առնուլ վրէժ. սա հալածէ զամենայն զզարմ, և զամենայն զազգն. և 'ի բարկացուցանել զնա միոյ ուրուք՝ թշնամանայ ամենայն ազգի մարդկան:

Երկաքանչիւրն խափանեն զքուն, և խռովեն զհանգիստ. բայց նա յապաժոյժ ըղձէ վրէժխնդրութեան, և սա 'ի խոր մտածութենէ մեքենայից վրէժ խնդրելոյ:

Բայց յուղղակի փոխարկեալ միոյն 'ի միւս՝ լինի

չար

չար ևս քան զոր էրն. զի հնացեալ բարկութիւն փոխի 'ի յամառ ատելութիւն. և ատելութիւն բորբոքեալ՝ փոխի 'ի կատաղութիւն:

## ԳԼ. Գ:

### ԹԷ ՈՐՊԷՍ ՕՐԻՆԱԿԱՒ ԳՈՐԾԻՑԷ ԲԱՐԿՈՒԹԻՒՆ:

Ապաքէն լուար թէ որ իցեն խառնուածք, առարկայք, և տարբերութիւնք բարկութեան. մնայ մեզ խօսիլ, թէ որով օրինակաւ անցանիցէ նա զչափ, և թափիցէ զիւր թոյն:

Զափազանցութիւն բարկութեան հաստատեալ է 'ի բարկանալ մտ ԴԱՐՁՈՒԱԾՈՑ, որոց մտ չպիտի. և ԸՆԴԴԷՄ այնմ, որում չպիտի, և առաւել քան զոր պիտի:

Ճշմարիտ և բուն պատճառ բարկութեան է ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ: Խօսիմ զբարկութենէ մարդկան, և ոչ զբուռն բերմանէ անասնոց: Զգայ իմն մարդ, թէպէտև ցածուն, կարի իմն իւր գերազանցութիւն յիւրում կայարի. որում ուղղակի ընդդէմ դնի անարգութիւն. և սա է ճշմարիտ նախատինքն, որ վառէ զբարկութիւն.

Այլ մեծ պատճառէ զցաւ, բայց ոչ իմ ցաւ պատճառէ զբարկութիւն, եթէ ընդունօղ մեծութիւն ոչ ըմբռնէ զչար սիրտ իւրոյ մեծատակարին. առանց որոյ մեծան, այն՝ է մեծասօղ, այլ ոչ նախատագիր: Բայց 'ի չար սիրան ազդողագոյն ըմբռնելի ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԵԱՆՆ քան ՑԱՒՆ:

(142). Տեսեալ աքիլլեսի զխոյանալ ազգային ագամեմնոնի առ իւր բրիսէյա, բորբոքեցաւ անշէջ բարկութեամբ. զի չհայէր նա յայն՝ զի զրկեցաւ յիւրմէ սիրելւոյ. այլ յայն, զի անարգեցաւ յարքայէ: ասէ. ՀԱՄԱՐԵՑԱՒ ԶԻՍ ԻԲՐԵՒ ԶՆԵՆԻՆ ՈՔ 'Ի ՄԱՐԴԿԱՆԷ. ԵՂԵՒ ՅԵՆԵՆ՝ ՈՐՊԷՍ ԻՄ ԷՐ, ԻԲՐԵՒ ՅԱՒԱՐԻ ՓԵՂԱՄԱՆԷ, 'Ի ՅՈՓԱՓՈՅ Ւ 'Ի ՓԵՐԻՈՅ:

Իսկ գազանք՝ որք ընդունակ են ցաւոց, և ոչ պատուոյ, վասն զի զգան զինան, այլ ոչ ճանաչեն զնախատինսն, բորբոքին ցասմամբ, այլ ոչ ճշմարիտ բարկութեամբ:

Վտանկ յաղգի մարդկան, առ որս տանիլ ցաւոց՝ է ա_

րէ

ըխութի, այլ համբերել արհամարհանաց՝ է անար-
գութի, ամ մեծի նախատանաց գեղ է խոնարհա-
կան սորանկութ այնմիկ՝ որ արարին. զի Թուի
գալ 'ի զուգակշռութ, եթէ փոխարկի բարկացե-
լոյն այնչափ յորդ և մեծարանք, որչափ բարձին
'ի նմանէ արհամարհանք ։

Այդ հնար է ումեք ընդունել վնաս, այլ ոչ նա-
խատինս. կամ ըմբռնել նախատինս, այլ ոչ երևե-
լի։ Դէպք ինչ լինին, այլ ոչ մոռացութ. մոռա-
ցութ լինի, այլ ոչ չարութ. ընդ խաղ ինչ լինի,
այլ ոչ արհամարհութի ։

Երևակայութին զհետ երթայ կրից, և կիրք գոր-
ծեն ըս կործնթարգ ակնոցի. որոյ ընդարձակեալ
զտեսութիւն մանր տարրկայից՝ զլուն երևեցու-
ցանէ փիղ ։

Այնպէս բարկացողն՝ սաստիկ ունելով երևա-
կայութիւն, մեծացուցանէ զվիրաւորն. զի երևա-
կայէ ։ Ամ փոքր վնաս երևի նմա մեծ նախատինք.
կռուոյ արժան համարի զարժանին ծաղու ։

Նոյնպէս մեծ փիլիսոփայ, բայց և մեծ բարկա-
ցող, յերթալն ատողպգինակ գործեաւ գինեալ
զատեղս՝ ընկաւ 'ի խորխորատ ։ Աղախինն զը-
նարթարարոյ և ծաղրասէր ժպտեալ առ փոքր մի,
յոգնելն նմա առ ելանել 'ի խորխորատէ՝ ասէ. Կա-
ՄԻՄ ՏԵՍԱՆԵԼ ԶՈՐՍ 'Ի ՃԱՐՃԱՏԱՆ. Ե ՈՉ ՏԵՍԱՆԵԼ ԶՈՐՍ ԱՆ ԱՍԴ
ՅԱՆ ։ Կարող էր տալ պատասխանի. ԿԱՐԷ ԻՆՁ ՏԵՍ-
ՆԵԼ ԶԵՒ ԶՈՐՍ 'Ի ԳԼՈՒԽ, Ե ՈՉ ՅՈՏՍ ։ Բայց զի էր բար-
կացող, այն եղև նր պատճառ, զի ընդ ելանելն 'ի
խորխորատէ՝ բանցի և ապացի և կործանեաւ ուսուց
ողորմելի արարեալ զողորմելին, կխամեա ընկէց
'ի խորխորատ անդր, ուր ինքեան արժան էր
մնալ ։

Ես զինչ զարմանք են, թէ Արիստիպոս՝ որ չէր փի-
լիսոփայ, այլ բանաւոր, հարցեալ ցմեծ հաւատորն
զենոն, թէ յինչ բարբառ լինի իւր յունական ինչ
ձայն. և 'ի պատասխանել զենոնի միամտութ սըր-
տի, թէ իմ ուսեալ է վարել զհռոդացւոց բարբառ,
անդէն վաղվաղակի սպան զնա. ոպ և այլուր ա-
սացաք (143) ։ Վասն զի ոպ բանաւոր սրամիտ

և

և սրտավար 'ի բարկութիւն, մեկնեալ զնորա միամիտ պատասխանի յերկդիմի միտս՝ կարծեաց, թէ կամք էին նմա 'ի դէմս ածել զաքսորանս իւր 'ի հռոդոս. և եգիտ առիթ վրէժխնդրութեան յանմեղութեան անդ։

Զինչ զարմանք են, թէ աղեքսանդր եւս, որ ուսումն թանգագին եղև յոյժ իւրոց ուսուցչաց, թիւր մեկնութբ նախատագիր չարուն կարծեալ զիմաստասիրական համարձակութն, և թշնամանագիր արհամարհանս՝ զլուսակամուն ազդարարութիւնս, մատնեաց զկալիսթենէս կապանաց, զլիւսիմաքոս առիւծուց, և զկղիտոս իւրում ցասմանն՝ որ գժնդակ եւս էր քան զառիւծուց. զի առիւծք ծանեան զառաքինութիւն լիւսիմաքոսի, և ինչ ոչ մեղան անմեղին. այլ աղեքսանդր ոչ ծանեաւ զարժանաւորութիւն կալիսթենէսի, և յանպարտ արիւն հաղախեաց զձեռն։

Ո՛րիս չափազանցուն բարկացողին է 'ի կեր արկանել զայն անզուսպ կիրս ԸՆԴԴԷՄ ՈՐՈՅ ԼԻՆԻՑԻ։

Բարկանալ 'ի վր մեծաւորաց՝ է յանդգնութն. զի պարտ է առաւել խոնարհութբ ցածուցանել՝ քան յանդգնութբ գրգռել զայն, որոյ ձեռնհաս լեալ առնել ինչ նախատինս՝ կարող է առնել միւս եւս մեծագոյն։

Բարկանալ 'ի վր ստորնոց՝ է անմտութիւն. զի որովհետև բարկութիւն տուաւ 'ի զօրացուցանել զակար զօրութիւն ընդդէմ հաւասարից, աւելորդ է այն՝ ուր զօրութիւնք են վերագոյնք։

Բարկանալ 'ի վր բարեկամաց՝ է ապերախտութն, կամեցեալ զչար այնմ որ կամեցողն է բարւոյ. և եթէ բարեկամն է նոյն ընդ իւր, ապա անմտութիւն է գժնէանալ յիւր վերայ։

Բարկանալ 'ի վր անմեղաց՝ է անիրաւութն. զի չէ արժանի բարկութն, որ չէ արժանի պատժոց. և չէ արժանի պատժոց, որոյ ոչ գոն յանցանք։

Բայց բարկացողն ունելով զաչս մտաց կուրացեալ 'ի կրից՝ ոչ որոշէ զվերնագոյնն 'ի ստորագունէ, և զստորինն 'ի հաւասարէ. զբարեկամն 'ի թշնամւոյ, և զանպարտն 'ի պարտաւորէ. Ը յունական

հրոյ այնպէս վառի 'ի ջուր, որպէս 'ի խծուծ: Նա՛
երեւակայութիւն նորա այնպէս զեղծ է 'ի կրից,
մինչ՝ և յանրան անաստուծս կարծեալ լինել չա-
րութիւն բանի, զայրանայ 'ի վերայ նոցա:

(144). Տեսխփոնտ արժանացեալն քաջայաղթ ան-
ուան, վասն լինելոյ նորա յաղթական 'ի հնգեակ
խաղս ոլիմպիականս, աքացի հարեալ 'ի ջորւոյ՝
դարձոյց կատաղանօք գաւակ 'ի գաւակ, անդրէն
կիցս արձակել 'ի ջորին:

Եւս ամ ոլիմպիա նորանշան ինն օրինակ մրցա-
ղաց, մարդոյ ընդ անասնոյ. ոչ գիտելով ո՞ր իցէ
անբանագոյն. զի 'ի կարծել մարդոյ զջորին բա-
նաւոր, ինքն ցուցաւ անբան: Բայց զամենայն զպսակս
և զպարգեւսն, զորս ստացեալ էր տեսխփոնտայ 'ի
հինգ խաղս, ստացաւ ջորին միանգամայն. զի որ
յաղթեալն էր հնգից գիմամրցանակաց, յայսմ և-
եթ գիմամրցանակէ տապալ յերկիր կործանեցաւ:
Յայլմէ կողմանէ՝ չէք ոք ունակ այնպէս սաստիկ
երեւակայութեան, որպէս բարկացողն: Զի այնպէս կեն-
դանագրի 'ի նմա պատկեր ճնաստակարին, մինչև
յոր կողմն և դարձցի, թուի նմա տեսանել զնա
ակնյանդիման. և յորս և հայի, զամենեսին կար-
ծէ լինել մեղսակից, կամ նոյն ինքն մեղապարտ.
վասն այսորիկ խեթահարի. և թափէ զցասումն
յանցգայս իսկ, իբրև զշուն 'ի քար:

Ներոն յընթրել իւրում իբրև լուաւ զապստամ-
բել գաղղիոյ, կործանեաց զսեղանն, և խորտա-
կեաց զսպասս սառնատեսակս, որ գրգագոյն էին
'ի դրդանս նորա: Վեր 'ի վայր լինել թագաւո-
րութեանն վեր 'ի վայր շրջեաց զմիտս նորա. թուե-
ցաւ նմա՝ թէ սեղանն գաղղիա իցէ. ընդ միոյ միոյ 'ի
սպասուց զարկուցելոց զգետնի՝ կարծէր զգետնել
զիւրոյ տէրութեան սպասաւորս:

Քանի՞ առաւել խոհական գտաւ կոտիւս արքայն
(թրակացւոց) 'ի գործ նմանակ. որոյ ընծայեալ 'ի
պարգեւ զսպաս ինչ սառնատեսակս՝ հրաշագեղս,
արար հատուցումն փոխարինի արքայավայել մե-
ծագործութեան. բայց անդէն վաղվաղակի զամենայն սպասսն
եա խորտակել, զի մի բարկասցի, եթէ ոք վրիպա-
կաւ

կաւ խորամանկեսցէ զնոսա ։

Մինչ զի՝ Ներոն մն զի բարկացեալ էր 'ի վերայ ատենաւորաց, բարկացաւ 'ի վերայ սպասուց. և կամիւս կորոյս յիւրմէ զսպասս, զի մի բարկասցի 'ի վր ընտանեաց ։ Նորայն եղև խժդժութն, սորայս գթութիւն. նորայն մոլեգնութիւն, սորայս իմաստութիւն ։

Իսկ զինչ յիմարուն կայցէ՝ մեծ քան զբարկանալն յիւր վր ։ Արք խոցեալ՝ չհանդուրժեալ ցաւոց՝ մաի 'ի մացառախիւս, 'ի փուշս և 'ի բեւեռս, և յամենայն ուր և պատահէ. գեղ՝ որ չար ևս է քան զվէրան. զի փոխանակ բժշկելոյ՝ առնէ զնա անբուժելի ։

Այդպիսի արք կատաղի եղև եղեւնոս (145). որոյ բազում վէրս ընկալեալ, բայց զգուշութ գործանեալ և պատեալ, իբրև լուաւ զխորամանկութն իւրոյ զօրուն, ոչ կարացեալ բարկանալ 'ի վերայ յաղթականին՝ բարկացաւ յիւր վր. և կրճտեալ գազանաբար՝ ատամամբք և եղնգամբք պատառեաց զպատանն և զվէրսն, կարծեալ հանել զվրէժ քինու կորստեան պատուոյ՝ կորստեամբ կենաց ։

Ցասմն չափազանցուն բարկացողին է՝ չէղանաւն ։

Մարթ է գիտել՝ թէ ով բարկասցի, 'ի վր որոյ պխոր, և վասն պատճառի՝ յաղագս որոյ պխոր. բայց սակաւագոյն՝ քան զոր պխոր ։

Այժ բնական արարող գործէ միայն, որչափ կարող է. բայց անձնիշխան արարողն, որ մարդ, կամի երբեմն գործել աւելի քան զկարն ։ Զի բնաւոր ազդեցութիւնն է սահմանաւոր, ցանկութիւնն՝ անսահման. և վնկ սա հասանէ յոլովակի 'ի սահմանս թշուառութեան ։

Զայս ազնիւ օրինակ ունիմք 'ի զուկիոս սիղլա, որ վայրենաբարոյ ամն եղև 'ի հասարակապետութն հռովմայ ։ Խոստացեալ էր նմա գրանիոս՝ հասուցանել յիւրմէ զաւառէ 'ի պայմանեալ ժամանակի մեծ ինչ գումար դրամոյ 'ի նորոգումն կապիտոլիոնի. բայց էանց ժամանակն, և դրամն չեհաս 'ի ձեռս ։

Ցիրա_

Յիրաւի էր Սիղլայի բարկանալ. զի թէպէտ ոչ թէ Գրանիոս չէր Սիղլայի, այլ դաւաճան չէր Գրանիոսի. բայց և այնպէս բանադրանեից կամ չէ պարտ խոստանալ, կմ՝ պարտ է կատարմանն միտ դնել։ Եւ մանաւանդ Սիղլայի. որոյ կարի իմն բարերատուէ ոչ թողացուցանէր միջոց Ժմկի ի մէջ կամելոյ և 'ի ձեռին ունելոյ։ Այսպէս կոչեալ առ ինքն զԳրանիոս, այնպէս մեծասաստ 'ի բարկութեան բորբոքեցաւ 'ի վր նր, մինչև 'ի բուռն առնել աղեղագոչ բարբառոյ սաստանալեացն մաղձու, կարեցաւ նորա երակ սրտի, և ի սպառնալիսն ժայթքեաց արիւն։

Անհնար էր այնմ բանաւորի ճաշողագոյն քան զայն պատուհաս 'ի վր ածել իւրում բարկութեն։ Զի թէ բարկութին է եռանդն իմն արեան, ոչ պիտէր այլ հիւթ 'ի շիջուցանել զայն։ Բայց դուզնաքեայ իմն փոփոխութիւն եղև այն իւր սակաւ արիւն, առ վտակօք արեան այլոց՝ զոր եհեղ։ Իսկ արդ՝ եթէ այսչափ դժնդակ և ահաւոր է իւրաքանչիւր մասն բարկութն ուրոյն, քանի՞ դժընդակ իցէ նա ինքն, եթէ տեսցես դու զնա յօրինուկի ուրեք՝ իւր ամ մասամբք և ահաւորութեմք։ Եւ արդ՝ հնար է քեզ տեսանել զնա այսօք, և դիտել մօօք, եթէ առաջի կացցես պատկերի յուլիոսի կեսառոսի. Ճշգրիտ և ահաւոր օրինակի՝ եթէ սուր բարկուն, և եթէ կատաղույ. եթէ արիւնայնոյ, և եթէ սևամաղձայնոյ. եթէ խստամբակի, և եթէ մեղմոյ. եթէ գթասիրի, և եթէ անգթականի։ Եթէ կամք իցեն քեզ փոխել զանուն բարկութն, մարթիս անուն կոչել նմա կեսառոս, և նկարել զնա՝ սուր 'ի ձեռին. (146)։ Անուն իւր եղև նմա դուշակ. որ ոչ կարաց ծնանիլ, բայց եթէ վիրօք մօրն. ոչ կարաց թագաւորել, բայց եթէ վիրօք հայրենեաց. և ոչ մեռանիլ, բայց եթէ վիրօք իւրովք։

Սիղլա, որ բարկասիրտն էր քան զամենեսին 'ի հռովմ, ծանեաւ՝ թէ մանուկն այն լինիցի չար ևս քան զինքն։ 'Ի ցոփ և 'ի լոյծ հանդերձից 'ի միտ էառ զվարուց նր ցոփուն։ Զի ոչ արգելօք հան-

դուր-

գուրժէր օրինաց ինչ, որ ոչն հանդուրժէր կալ գոտէպինգ :

'Ի գործակալուն շինուածոց՝ հանդիսադիր լեալ թատերական խաղուց, քանզի շառաչիւն ամպոց ժխորէր զձայն մրմնջաձայն միմոսաց, աչեղ գոռմամբ սաստեաց որոտմանց, զի լռեսցեն :

Յորժամ հիւպատոսն էր հեռամուտ, առաքեաց զմի 'ի զօրավարաց 'ի ծերակոյտ անդր՝ սպառնալեօքս. ասէ. թէ ոչ տայք ինձ զիշխանութիւն, առնուլ ունի սուր իմ: Նոր ուր, արիւնազգեցութեան արկանելոյ ղանձամբ զպայծառափայլ պատիւ :

Լեալ հիւպատոս՝ այնչափ բարկացաւ իւրում իշխանակցի վ̃ն ագարակային օրինաց, մինչեւ բռնի արտաքսեաց զնա յատենէ. եւ այնպէս զարհուրեցոյց. մինչեւ նստիլ նմա միշտ առ տնին՝ թաքուցեալ որպէս զձագար : Վասն որոյ եւ յերկուց հիւպատոսաց կեսառոս միայն էր 'ի համարի :

Բարկութիւն կեսառոսի նախ առաջին եմուծ զնոր օրինակ արձակ գանից խրձանց հիւպատոսականաց, 'ի վերայ ուսոց եթէ սինկղիտոսաց եւ եթէ ռամկաց. մինչեւ մարթ եղեւ ասել. այս անուանէր ԱՆՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ՝ 'Ի ՀԱՄԱՅՆ ԵՂԵՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ :

Այսպէս ապաժոյժ եղեւ բարկութիւն սորա, որ չապաստեալ լուանալոյ աւուրն՝ տայր գլխատել զերեւելի սինկղիտոսս, եւ զազնուական բամբիշս լուսով ձրագաց՝ յիւրում պարտիզի. թէպէտեւ առ բոցակնութեամբ նորա չէին պէտք այլոյ ձրագի :

Վաստակաբեկ լեալ յայնչափ բարկութենէ 'ի վերայ այնչափ հռովմայեցւոց, բղձայր՝ զի ամ̃ հռովմէական ժողովրդեան իցէ մի միայն գլուխ, 'ի կառափնատել զնա միանգամայն :

Եւ որ եւսն է, եւ ոչ յերկնաւորաց ակն ածէր բարկութեան նր̃ : Կոչունս արարեալ ուրախութեան իւրոց բարեկամաց, որ որչափ նման էին նմա՝ նոյնչափ եւ սիրելի. վ̃ն զի ցոլմունք փայլատականց զարհուրեցուցանէին զկոչնականս՝ յառն յառնէ սա, եւ ձգեալ զսուսէր՝ զգրգռէ զդիոս գալ 'ի մենամարտութիւն :

Եցոյց թէ արդարեւ բարկութիւն է անմտութիւն. կարծեալ թէ վերին զօրութիւն ոչ կարէր սաստա-

կել

կել զնա, և ինքն կարող էր յաղթել վերին զօրու-
թեան:

Ո՛չ և իցէ, այս յետին բարկութն գրգռեցոյց զմա-
բանեալսն 'ի դաւադրութն. որ այլ ոչ կարացին հան-
դուրժել այնմ, որ ոչ հանդուրժէր դից: Եւ այն-
պէս սրով եմուտ յաշխարհ, և սրովք բարձաւ յաշ-
խարհէ. կեսար ծնաւ, և կեսար մեռաւ (այս է՝
կտրմամբ ծնաւ, և կտրատմամբ մեռաւ):

## ԳԼ. Դ.

### Յաղագս Աւգոստոսի.

Եա մոլութեան ցանկականին. և է պակասութեան
բարկութեան վրէժխնդրութեան:

Ծնանի այս մոլութն 'ի բնաւոր թմրութէ, և 'ի
ծառայական անզգայողութէ անխրատութեց, մինչև
ոչինչ կա՛մ նուազ 'ըմբռնողութ նց, ոչինչ կա՛մ նուազ
բարկանայ. վն և ոչինչ վրէժխնդիր լինի, ոչ ազ-
դարքն է, և ոչ շործան դարքն է, և ոչ որոան դարքն է:
Երևի մոլութիւնս ազգակից անփառասիրութե.
և իրօք ինչ բաժանորդ է նմա ըստ պատահման.
բայց ըստ էութե է տարորոշ: Անփառասէրն ոչ
անձկայ պատուոյ, որում էր արժանի. անզգայն
տանի անարգանաց. նա է թերատ 'ի ցանկութե,
և սա թերատ 'ի բարկութե:

Անլեղի անտասանք թէպէտ և զէնս ունիցին,
չանձկան վրէժխնդրութե. և անզգայն՝ վն զի չզգայ
զխթան բարկութե, թէպէտ և ունիցի ոյժ, ոչ-
ինչ փոյթ է նմա 'ի գործ դնել զայն:

Դէմք նորա են միշտ միօրինակ. ոչ 'ի բարկութէ
բորբոքեալ, և ոչ յերկիւղէ դալկացեալ. զի եր-
կոքին խոկ չազդեն ինչ 'ի նա տպաւորութի: Մինչ
զի զօրէն առն ընդարմացելոյ՝ մինչև 'ի մի ա-
ռեալ՝ մռաանայ զանխրատութեան. մինչև զգացեալ
զերկիւղ՝ զգայ զխնամն. և մինչև զառաջնոյ ամար-
դութն խնդրեալ զվրէժ, ընդունի զերկրորդն:
Դրդեալ 'ի վրէժխնդրութե, առեալ զզրդօղն. նա
ինքն նուաղէ զխնամն, և 'ի չքմեղս լինի այնմ որ
արարին: Նա ինքն նախ առաջին 'ի խնդիր լինի հաշ-
տութե.

տուն. և 'ի հատուցումն փոխարինի յանձն առնու-
ամօթապարտ պայման:

Պատրուակէ զիւրն նկունութիւն իմաստասիրական առակօք: Մեծ յաղթութիւն է՝ ասէ, յաղթել բարկութեան, քան յաղթել թշնամւոյ. և թէ՝ մեծ [illegible] թեան նախապատուաց է արհամարհել զնախատինս. և թէ՝ [illegible] անցանել [illegible]. և թէ՝ [illegible] 'ի [illegible], 'ի [illegible]: Կամի զապիկարութիւնն 'ի համար դասել հեզութեան:

Բայց և այն ճշմարիտ է, թէ զորօրինակ երկչոտն 'ի դէպս ինչ արիանայ, և փոքրոգին զգաստացեալ լինի մեծանձն, որպէս ասացաք յիւրեանց տեղիս, նոյնպէս անզգայն նախատանաց՝ յանկընկալ պատճառաց սթափեալ և զգօնացեալ՝ փոխէ զբնութիւնն:

Նմա օրինակ երևելի: Իբրև առաւ երկիրն սբ քաղաքաւ գոտեփրետոսի բուղիոնի, առաջին թագաւորն կիպրոսի եղև այր՝ իշխան բարի և անմեղ, բայց այնպէս մեղկ և թուլամիտ և թմրեալ, մինչև ը առաքինութեն չգնելոյ նախատինս՝ լծորդել նմա զանզգայութեն մոլութիւն:

Որ ոք 'ի հպատակաց ը թագաւորին ունէր ինչ դժգոհութիւն, խոժոռեցուցեալ զնա իւիք՝ կմ ամաչեցուցեալ, կարօղ էր զիջուցանել զնա. և նա որպէս համակամ ցածնոյր՝ առանց բարկանալոյ և վրէժ խնդրելոյ:

Դէպ եղև՝ զի ազնուական ոմն բամբիշ վասկոնացի 'ի դառնալ իւրում 'ի սբ տեղեաց ուխտաւորի աքեմաւ, անօրէնք ոմանք 'ի կիպրոս յարեան 'ի վր. և գեղջկօրէն թշնամանեցին զնա:

Կինն ազնուական անմխիթար սրտացաւութեամբ չոքաւ խնդրել իրաւունս յարքայէ. այլ՝ ոմն ասէ ցնա. 'ի դիմել քեզ առ արքայ՝ յայտնեսցես այդ զնախատինս, այլ ոչ գտցես իրաւունս. զի ոչ խստագոյնս ինչ խնդրեսցէ նա զվրէժ զօտարի նախատանաց քան զիւրոց:

Այս լուացէլ զայց՝ ոչ եբարձ 'ի ցաւագնելոյն զորտապնդութեն, այլ յաւելեալ ևս 'ի վր: Խորհուրդ-
հար-

հարցել իւրոց ցաւոց՝ եկն եկաց առաջի արքային.
որոյ յառաջնածանօթ լեալ իրայն եղելոց ՚ի կան-
խիկ լրոյ, զծաղու եկեալ էր՝ ը̄ քիմս ժպտելով.
Այս մատուցեալ բամբիշին բազում արտասուօք,
ասէ ՚ի ձայն բարձր: Տէ՛ր արքայ, ոչ գամ առ քեզ՝
խնդրելով առ ՚ի քէն վրէժխնդրութեան ընդ արհամար-
հանացն՝ զոր ընկալայ ՚ի քում թագաւորութեան. այլ զի ուսայց
՚ի քէն, թէ ո՞րպէս համբերես դու քոյոց, զորս օրըստօ-
րէ, ո՛չ լսեմ, համբերեսցես քեզ: ՚Ի քէն ուսեալ թեր-
ևս համբերողութեամբ տանել իմոց նախատանաց.
զորս թէ հնար էր, յօժարութեամբ քեզ ընծայէի, որովհետև
այսպէս քաջ ժուժկալես քոյոց :

Յայն բարբառ, Թագաւորն՝ որ ցայնվայր կայր անըզ-
գայ և ննջուն, զարթեաւ իբրև ՚ի խոր քնոյ: Յա-
[illegible] և քինեալ՝ ջեռնուլ սկսա-
ւ սրտիւ, և խթեաց ՚ի վրէժխնդրութիւն:
Այս սկիզբն արարեալ թագաւորին ՚ի նախատա-
նացն հասուցելոց յիւրոց հպատակաց առ այնկին
խստիւ եղև նր̄ վրէժխնդիր: Յայնմ օրէ և առ յա-
պայ ոչ ոք ՚ի թագաւորաց այնպէս խստիւ պա-
տուհասեաց զօրինազանցս և զարքունի իշխանու-
թեանն անարգողս, որպէս սա :

## Գլ. Ե :

### Յաղագս միջասահմանութեան ՚ի մէջ ծայրից և անչափութեան :

Արդ հնար է քեզ հեշտաւ առնուլ ՚ի միտ, թէ ո՛ր իցէ հեզութիւն: Զի թէ կարի իմն բարկանալ է մոլութիւն. և կարի իմն նուազ բարկանալ՝ է մոլութիւն, ապա բարկանալն միջասահման՝ լինի առաքինութիւն. և այն է հեզութիւն :

Այսպէս. ոչ բարուոք է ձեռնարկութիւնդ: Զի թէ գողանալ բազում, է մոլեկան. և գողանալ սակաւ՝ է մոլեկան. ապա գողանալն միջասահման՝ է առաքինութիւն :

Պնդեմ. ոչ հանդէտ է հետևութիւնդ: Զի գողանալն ը̄ ինքեան է միշտ մոլեկան, զի միշտ է հակառակ արդարութեան: Բայց բարկութիւն ըստ ինքեան չէ ինչ

ինչ չար, այլ՝ կիրք պարգևեալ 'ի բնութէ, որք յեռան արիւն, և խթան երկիւղի, և հրահանգ հանճարոյ, գործի յոյժ կարևոր՝ դժուարին խրոխտութեանց: Ճարտարախօսն բարկացեալ՝ կորովագոյն ատենաբանէ. բանաստեղծն բարկացեալ՝ մտաւորագոյն տաղէ. եղերերգուն բարկացեալ՝ ազդողագոյն շարժէ. մարտիկն բարկացեալ՝ արիագոյն շահատակէ: Բայց յայս ամ բարկութեան՝ չափաւորութեան պէտք են, զի մի հակառակ ինչ գործեսցեն:

Ասիցես. եթէ իմաստասէրն ունի զօրութիւն, աւելորդ է բարկութիւն. եթէ չունի զօրութիւն, յիմարութիւն է բարկութիւն: Զի նմա հնար է վրէժ խնդրել անխռով. և առ փոխանակ վրէժ խնդրելոյ միոյ իմաստուն՝ գրգռէ միւս ևս իմաստ:

Պնդեմ, թէ բարկութիւն զօրացուցանէ զհաւատար զօրութիւն. առաւելու զփորձն, և սթափեցուցանէ զմիտն:

Փիղն՝ թէպէտ և գլեակ իմն է շնչաւոր, կնճիթ նր 'ի տեղի տիգի, և մորթն անթափանց 'ի տեղի զրահի. բայց և այնպէս ցուրտ է և թմրեալ, որպէս լեառն ձիւնաթաղ՝ 'ի պատերազմի. եթէ ոչ կապերտ ինչ շառագոյն՝ համակրութեամբ գունոյն ջեռուսցէ զարիւնն, և վառեսցէ զբարկութիւն:

Ո՞ էր հուժկու 'ի խնդրել զվրէժ նախատանաց՝ զիւրոց և զօտարի, իբրև զնախայիշեալն արքային կիպրոսի. բայց եկաց նա անփոյթ և անզգայ, մինչև 'ի քաջասիրտ յանդիմանութենէ անձի վառեալ բորբոքեցաւ բարկութեամբ 'ի պաղեալ սրտի անդ:

Զիւրև ունիցի խրձունս գանից հիւպատոսն կմ թագաւորն. իցեն առ նովաւ արբանեակք և սպասաւորք ատենի. պէտք ինչ իցեն վրէժ խնդրելոյ ոչ անձին ինչ նախատանաց, այլ յանցաւորութեն օրինաց. ոչ զինեալ ոք իցէ յանցաւորն կամ փախստական, այլ անզէն և կալանաւոր. բայց և այնպէս պիտի գրգիռ ինչ ցասմնականին, կամ 'ի ջեռուցանել զկարի իմն ցրտութիւն. և կամ 'ի յաղթել բնաւոր ախտակցութեն:

Ոչինչ այնպէս է իմաստակար, որպէս խնայել յարիւն չարա

շարագործաց. և ոչինչ այնպէս խժդժական, որք հեզութ զայն արհամբ ցրտագին։

Այն գրգիռ ոգւոյ՝ եթէ յիւրն հայի միտս, կոչի բարկութիւն. և եթէ 'ի միտս օրինաց, կոչի նախանձախնդրութիւն։ Բայց եթէ նախանձախնդրութիւն և եթէ բարկութիւն թէ չէ չափաւորեալ բանիւ, լինի անխոհական։

Ամա հեզութիւն չէ ջերմութիւն ինչ սաստիկ, կամ թմրութիւն ինչ սառնասառոյց, այլ ըմբռնողութիւն ինչ ցուցականին, որ է ընկալեալ նախադասաց ու ընդդիմանաց և ուշադրանաց. բայց ենէ է պատճառն, յայտ առնէ պարտ է, և ընդդէմ որոյն պարտ է, և որով օրինակաւ պարտ է։ Զայս չափ մարթ է ունել ամ մարդոյ, որ ընտանակ է բանի. զի խիղճն մտաց աղաղակէ յոգի. և ուսուցանէ քաջի ունկնդրի զերը սահմանաց՝ որ Է յաւէտ և Ը նուազ։

Ոչ մեղանչէ, որ ոք ոչ ձանձրէ՝ թէ մեղանչէ և չար առնէ. և որ ոք ձանձրէ զչարն, ձանձրէ և զբարին։

Հեզն ոչ բարկանայ և ոչ ցածնու, բայց եթէ վն համեստ պատճառի. այսինքն վասն բանաւոր պատշաճողութեան։

Պատշաճօղ իմն է մարդկային կենակցութիւն, զի որ ոք հաստուցանէ միտս կմ անպատուութի, տուժեսցի զմիտսն և զանպատուութիւն. զի պահեսցի 'ի հասարակութե հաւասարութի. ևս առաւել՝ եթէ նախատինքն իցեն ծանր. և չար օրինակ. և մեծ ևս չարիք զհետ գոյցեն այնմ. և յորժամ լինիցին կամօք նախատինս գնելոյ։ Զի որոմնհետև որ միտսէն միում միայնոյ, կարօղ է ամենեցուն միտսել, առանձնաւոր ինչ նախատինք՝ լինին այնուհետև գատ հասարակաց։

Ամա հեզն՝ թէպէտև չէ անզգայ իւրում միտսու իբրև ընտրելին, և ոչ ցանկայ փոխադարձի, բայց շարժի՝ ոչ 'ի թափոյ բարկութե, և ոչ 'ի խնդութե Է այլոց միտս, որք բարկացոցն. այլ՝ զի միտսաւորին վայել է պատիժ։

Ամա եթէ ցածնու, ոչ ցածնու 'ի տկարութե սրտի, այլ. զի ոչ վայել է մարդոյ լինել տմարդի. և ոչ

մահ

մաքկանացու սրտի վառիլ անմեռ բարկութբ։ Վն այսորիկ վտանգաւոր իմն է նախատինս գնել հոգւոր անձանց։ Ջի եթէ առ անգամ մի հատանա-նեն 'ի միտս, թէ ծաղրական իմն է և ծածկա-ծոյ՝ պատուհասել զայն որ արար, այնուհետև ոչ զոք յաշխարհայնոց գտցես երբեք այնպէս ան-հաշտ։ Առնէ առանց բարկութե՝ զայն, զոր հաղի-ւ առնէր բարկացող ոք։

Չեղն հայի և յանչն՝ որում բարկանայ, կամ զինչա-նի։ Շունն 'ի լսել զբաղխումն դրան, զայրանայ և հաջէ. բայց ապա տեսեալ՝ թէ ով իցէ, անդէն վաղվաղակի շնթէ և քծնի։

Այնպէս այր հեզ յանդգնել զնախատինս, զգայ զայն. և իբրև այն՝ զի 'ի հարկաց զանգուածոյ է զանգեալ, խառնի ընդդէմ նախատողքն, թէպէտ և անծանօթ ոք իցէ։

Բայց իբրև ծանուցէ, թէ է նա ով իցէ կամ սիրե-լի բարեկամ ոք, կամ անմեղ ոք, կամ անմիտ ոմն, կամ դաեհիկ ոք, ընդ ով իցէ ոչ խնթահարի, բայց խմացուցանէ զիւր իրաւունս. ընդ բարեկամին զան-գատի, բայց անզգէն հաշտի. անմեղին չլինի վրէժ-խնդիր. անմտին ախտակցի. անարգին գիւրա-ներէ, զի կարի իմն գիւրին է առնուլ 'ի նմանէ վրէժ։

Իսկ ընդ ԵՂԱՆԱԿԻՆ, հեզն ոչ թողացուցանէ իւրում բարկութե անցանել քան զպարսն։ Նա յերկուց կապարաց միջի՝ որ ընդ ՅԱՒԵԼ և ընդ ՆՈՒԱԶ, առաւել մտանէ 'ի նուազն քան 'ի յաւելսն։ Կարի իմն գիւ-րին է բարկացելոյն մտանել 'ի չափաղանցն. վնք ա-ռաւել փոյթ է հեզուն առնել զբարկութին, քան գրգռել զայն։

Եւ այս առաւել պատշաճոզ է մարդկութե և բա-նաւորութե. զի որ գործէ նուազ բարկութեամբ, գործէ առաւել խոհականութբ։

Գիտոս քաջ վարժապետ մանկավարժութե զայս առէպ յիշեցուցանէր շահատակաց և ըմբշամար-տից, ԱՆՁԻՆ ՉԲԱՐԿԱՆԱԼ. զի սիրտ խռովեալ առա-ւել ուշ եղեալ 'ի վնասել այլում՝ քան 'ի պաշտ-պանել անձին, գիւրաւ ընկծի։

Ոչ գիտելով հեղահոգւոյն, թէ բարկութիւն է անհաւատարիմ խորհրդական, ոչ վաղվաղէ, այլ մեղմով բերէ 'ի վրէժխնդրութիւն, զի տացէ ժամանակ հովանալոյ բարկութեան։

Մեծ փիլիսոփայն աթենոդորոս բնակեալ առ ժամանակ մի առ օգոստոսի, իբրև արձակեցաւ գնալ 'ի յունաստան՝ ետ նմա զայս վերջին խրատ. 'Ի բարկանալ քում կայսր, մի՛ արասցես և մի՛ ասասցես ինչ, բայց յետ կարդալոյ քո բովանդակ զայբուբենն։

Չգիտեմ. քաղեա՞ց արդեօք օգոստոս զայբուբենն 'ի վաղվաղել զպատուհաս դստեր իւրոյ։ Բայց գիտեմ, թէ զայս խրատ յանձին կալաւ արքիտաս տարենտացի. որոյ խոժոռեալ ընդ ստահակութեան իւրոց շինականաց՝ ասէ. պատուհասէի արդեօք զքեզ. եթէ չէի բարկացեալ։

Ապա յամր շարժի հեզն, և դիւրաւ ցածնու բանաւոր փոխարինօք ընդ դատելոյ բարեկամայ, քան ընդ դատելոյ իւրոյ. զի ոչ ոք է յանկաւոր դատաւոր 'ի դատ իւր։

Շատանայ և սակաւուք քան զարժան համարեալն. և անրասիր առնէ զմիտ իւրոյ վնասապարտին. զի ոչ ասացաւ՝ հեզութեան առաւել մխէ 'ի նուաղն քան յառաւելն։

Նա՝ ոչ կիրն ջրով վառի, և իւղով շիջանի. նոյնպէս բարկութիւն հեզոյն դիմադարձութեամբ վառի. և խոնարհութեամբ և ողոք բանիւք վնասապարտին շիջանի։ Հեզութիւն է մեծանձնեայ. ըմբռստացելոյն ընդդէմ դառնայ, այլ խոստովանողին զյանցանան ներէ. Որպէս որոտումն գարնայնին է անշանթ, նոյնպէս սպառնալիք հեզոյն յոլովակի են առանց վրէժխնդրութեան. և ընդ լռել բարկութեան՝ լռէ և յիշատակ վնասուն։

## ԳԼ. Զ։

Թէ ո՞ր ինչ ընդ մէջ է հեզութեան, և իւրոց համանմանից։

Ասացաք 'ի սկզբան անդ, թէ հեզութիւն ընթադրէ չորս պարագայս. Զըմբռնումն նախապատւոյ, ընդ բարկութեան գրգռեալ ըմբռնմանն, վճռական վրէժխնդրութեան.

ԹԷ, ԵՒ ՉԱՓԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹԵԱՆ։

Ապա նախ առաջին որոշի հեզութիւն յերկուց ծայրից. 'ի բարկութենէ եւ յանզգայութենէ։

Տրոհումն, որ 'ի սկզբան անդ երեւի յոյժ դժուարին. իբր զի մէջն այնպէս չփոյթ է ընդ ծայրից, մինչ զի թէ զայրանայ հեզն, երեւի բարկացօղ. եւ թէ չզայրանայ, երեւի անզգայ։ Իսկ զարտին հակառակն՝ թէ բարկացօղն խնդրէ զվրէժ, երեւի նախանձախնդիր. եւ թէ անզգայն ոչ խնդրէ զվրէժ, երեւի հեզ։

Այնպէս անգէտ են մարդիկ առ որոշել զմոլութիւն յառաքինութենէ, ոչ անփորձ ակնավաճառք՝ զկեղծ գոհարս 'ի ճշմարիտ գոհարաց։

Ապա թուի թէ պիտէր մեզ պատուհան Սոկրատայ (147), յառել զաչս 'ի խիղճ մտաց այլոց, 'ի կշռել զխորհուրդս եւ զմիտս. զի մի յանդուգն դատեսցուք դատաստան։

Բայց յոյժ դիւրին լիցի այս դատաստան կշռադատութեան, թէ հայեսցուք յայն երիս պարագայս, որք առաջան, յորդորութենէ նախատանաց, 'ի վիճակէ անձին, եւ 'ի համեմատութենէ վրէժխնդրութեան։

## ԳԼ. Է.

## ԹԷ ԶԻՆՉ ԸՆԴ ՄԷՋ ԻՑԷ ՀԵԶՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԹՈՒԹԵԱՆ։

Հեզութիւնն ենթադրէ զմեղմանումն ամենայն մտաց, որ բնաւորապէս վառէ զբարկութեան առանձնաւոր վրէժխնդրութիւն։ Գթութիւնն ենթադրէ զմեղմանումն մտաց օրինաց, եւ հնարկ արդարութեան, որ շարժէ զնախանձախնդրութիւն առ պատուհաս։ Բարկութիւն է շարժումն ինչ կրից, որ բաղձումն անգամ հրամայէ բանին։ Նախանձախնդրութիւն է շարժումն ինչ բանին, որ եւ սա յոլովակի շարժէ զկիրս փոխադարձ համախոհութեամբ։ Մինչ զի հնար է բարկութեան լինել ակամայ. բայց նախանձախնդրութիւն է կամաւոր. զի է շարժումն կամաց լուսաւորելոյ 'ի մտաց, եւ յայս սակս բաղձումն անգամ վրիպակաւ մտաց՝ նախանձախնդրութիւն լինի անընտրողական։

Ապա

Այս որպէս հեղութին է միջասահման իմն 'ի մէջ բարկութե և անզգայութե. նոյնպէս ԳԹՈՒԹԻՒՆ Է ՄԻՋ-ԱՍԱՀՄԱՆ ԻՄՆ 'Ի ՄԷՋ ԽԱՐԻ ԱՌԱՔԻՆԱԳԱՀԱՆՋՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՐԻ ՆԵ-ՂՈՒԹԵԱՆ: Իւ վն այսորիկ գթութին՝ սեպհական է գերագահ առանձնականաց և իշխանաց. հեղութին՝ սեպհական է մանաւանդ անձանց:

Թէպէտ Ճշմարիտ է, զի եթէ ը հասարակաց վնասուն լծորդի և անձնական վնաս իշխանին, յայնժամ հնար է ընթացակցիլ հեղութեն ը գթութե:

(148). Տիգրան յայտնեցաւ հասարակաց թշնամի ժողովրդեանն հռովմայ՝ պաշտպանութե միհրդատայ, և առանձինն թշնամի պոմպէոսի՝ արհամարհութե անձին նր:

Իբրև պարտեցաւ քաջագիտութե պոմպէոսի, կամ ձախողութե իւրոյ բաղդի, զգէնսն և զպսակ յառաջ ընկեց յաղթականին. որ կարող գոլով պատուհաս 'ի վերայ ածել հասարակաց վնասուն, և հանել զվրէժ քինու զիւրոյ վնասուն, միանգամայն ներեաց՝ միաւոն գթութ, և միասումն հեղութ: Վն զի թագ 'ի գլուխ եդեալ նորա, և զպարտեալն փարեալ, հաստատեաց զնա անդրէն 'ի թագաւորութեն. և ընկալաւ յիւր առաջին բարեկամութիւն: Բայց զգթութե գործեցին բանք յիւրում տեղւոջ 'ի ճառս արդարութեն:

## ԳԼ. Ը.

### ԹԷ ԶԻՆՉ ԸՆԴ ՄԷՋ ԻՑԷ ՀԵՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ (149).

Զմին հեղութե է ողորմութին՝ առ ռամիկս, այլ ոչ առ իմաստասէրս՝ որք ոչ 'ի համար դասեն զնա առաքինութեց, այլ զհեղութին. վն զի հեղութին չափաւորէ զկիրս բանիւ. բայց ողորմութին է ակարութե ինչ կրից. որ բնաւոր համակրութե ըմբռնեալ զայլս թշուառութեն իբրև զիւր, առ կարեկից լինել չարչարելոյն, և շարժէ յարտասուս եւ և առանց պատճառի:

Վնկ սեպհական է սա երկչոտաց, և տկարաց, կանանց և ռամկաց. որք 'ի կարի իմն գորովանաց սրտի՝ լան ը լալիսն, և հեծեն ընդ հեծո-

ծաւն չարագործաց, յորժամ 'ի վե̃ր գայ նց̃ արժա_նահաս պատուհաս:

Եւ ոչ միայն շարժէին ոք ը̃ Ճշգրիտ ողորմելութիւն, այլ և ը̃ կեղծս, կա̃մ ը̃ նկարածս. որպէս 'ի պատ_կերս երևեցուցիչս տանջանաց պրոմեթէոսի. և 'ի սարեղծարանութիւն արտասուաց գեղեայ. և յե_ղերերգութիւն տառապանաց իգիմենի. թէպէտ և որ լայ զնս̃, գիտէ թէ են կեղծիք (150):

Վս̃ այսորիկ 'ի հնրկապետութիւն հասարակեցան 'ի քաղաքային եղերերգութիւնս և խաղս մենամար_տից, առ փարատելոյ 'ի բաց՝ յաճախութ̃ ողորմ տեսարանաց, որ կեղծեօք՝ որ իրօք, զհամակրա_կանն զայն տկարութի, զկնաս թշնամի արիութեան և արդարութեան: Վս̃ այնորիկ 'ի ծերակոյտն աթենայ արգելեալ էր ատենախօսից շարժել զդատաւորս գործովանօք յողորմութիւն և յախտակցութիւն:

Բայց և այնպէս թէ կամք իցեն վերածել զսա 'ի մոլութիւն կամ յառաքինութիւն, մարթ է ասել. զի թէ ողորմութիւն ընդդէմ բանի շարժէ զսիրտս կանա_ցեաց և անարեաց 'ի դատաստանի՝ ախտակցիլ այնմ, ում ախտակցիլ չէ արժան ոչ իրօք և ոչ կեղծեօք, վերածի 'ի մոլութիւն անզգայութեան: Իսկ զսո_րին հակառակն՝ թէ ախտակցի ոք Ճշմարիտ թըշ_ուառութեան, որում յիրաւի է ախտակցիլ, վերածի յառաքինութիւն հեզութեան:

## ԳԼ. Թ.

## ԹԷ ԶԻՆՉ ԸՆԴ ՄԷՋ ԻՑԷ ՀԵԼԼԷՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԻ:

ՀԵԼԼԷՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ենթադրէ զվիճակ բնութեան, որ թողացուցանէ զհասարակ զբանաւոր վրէժխնդրու_թիւն ևս և իւրով ձեռամբ. ըստ այնմ կանոնի փո_խարէն հատուցման, թէ ԶՈՐ ԻՆՉ ԱՌՆԷ ՈՔ, ԶՆՈՅՆ ԵՒ ԿՐԵՍՑԷ:

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ենթադրէ զվիճակ շնորհաց. յորում բանն յաւիտենական հայեցեալ թէ իւր հաւատացեալքն իցեն ինքեան նմանօղ, արգել նց̃ զվրէժխնդրութիւն, պահեալ զայն ա̃ծային տեսչութեան.

բաց

Ը այնմ երկնաւոր կանոնի՝ թէ ԻՆ է ՀՐԵՇԻՆՏԻՐՈՒ-ԹԻ, Ի ԵՒ ԽԱՓՈՒՍԻ:

Մինչև հեզութիւն փիլիսոփայականի չափաւորել զբարկուն բարոյական առթիւ. և աւետրնականին չափաւորել զբարկուն գերբնական առթիւ: Նորայն վախճան է երանութիւն ժմկաւոր, և սորայս վախճան է երանութիւն յաւիտենական:

Բայց այդ ոչ գիտէ աւետրնն նպաստամատոյց լինել անխրատուն անդատապարտութե վնասուց, նոյնպէս ոչ արգելու արդարութե պատուհասել զնոսա և յերկրի աստ. միայն թէ պատուհասն մի յառաջ գայցէ 'ի բորբոքմանէ բարկութե, այլ՝ 'ի նախանձուէ արդարութե. ոչ վասն սիրոյ վրէժխնդրութե, այլ՝ վասն ուղղութե յանցաւորին. և ոչ 'ի վնաս վնասարարին, այլ՝ առ հասարակաց օգուտ: Նոյնպէս ոչ գիտէ աւետարանն, թէ ընդունօղն վնասու և անպատուութե չիցէ կարող դիմել առ դատաւորն առ անդրէն նորոգումն: Զի թէ դատաւորն ունի զտեղի այ, վնասաւորն՝ այ թողու զիւր վնասն, յորժամ թողու զայն 'ի ձեռս դատաւորի. որում պարտ է լինել արդար, վասն զի Տծ է արդար:

Բայց և յայս ևս դիպուած հեզութիւն աւետրնական և բարոյական պահանջէ, զի վնասաւորն մի շարժեսցի 'ի ծարաւոյ վրէժխնդրութե, այլ 'ի պատշաճողութե արդարութե:

Այս յորժամ վնասն է ծանր, և բարկութիւն շարժեալ. դժուարին իմն է որոշել զերկոսին զայսոսիկ վախճանս, և յաղթել յարձակման բնութե բարոյական հեզութե. բայց չէ այդ դժուարին աւետարանական հեզութե գերբնական շնորհօք, որ ոչ երբէք զլացեալ լինի այնմ՝ որ խնդրէ:

Բա-

Բարոյական իմաստասիրութ՛

# ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴ

## Յաղագս քաղաքականութեան. կամ հասարակականութեան. և ծագման նորա :

### ԳԼ. Ա:

### Յաղագս քաղաքական կենդանականութեան ընդհանրապէս :

Ի կենդանեաց ոմանք են անընկերականք և մենակեացք, որպէս թռչունք յափշտակողք. և ոմանք ընկերականք և ընտանեկանք, որպէս մեղուք: Զի նոքա հոգացեալ միայն վն իւրեանց անձանց, սիրեն միայն զինքեանս. որք կեցեալ 'ի հասարակութեան, սիրեն զիւրեանց տեսակ: Մարդիկ առաւել են ընկերականք քան զայլ ամ շնչաւորս: Զի որովհետև ոչ ծնանին բնաւք վն ամենայնի, այլ՝ ուսանին 'ի միմեանց, և պէտս ունին իրերաց, հարկ է նոցա սիրել զկեանս ընկերական. և կենցաղակցութի՛ նոցա է փոխփոխ պաշտպանողութի. (151):

Վնկ տեսչութեն ետ նմ բարբառ և արուեստ գրոց, բարբառել 'ի մօտոյ և 'ի հեռաստանէ, և կենցաղակցիլ ընդ ամ աշխարհի, հասուցեալ զխօսս՝ ուր ոչ հասանէ ձայն:

Այս որ ոչ սիրէ քաղաքական կենդանականութի՛, ոչ կարէ լինել անդամ քաղաքական մարմնոյ, մեկուսեալ՝ի հաղորդութենէ, որ է յօդ հասարակութե: Վնկ Արիստոտէլ 'ի վերայ բերէ, թէ մարդ մենակեաց կամ ած է, և կամ գազան. զի աստուած վայելէ յինքեան միայն, և գազանք յափշտակողք ոչ սիրեն զընկերութի:

Արդ՝ երեք ինչ զքաղաքական կենցաղավարութիւն առնեն բերկրական. երկուսն 'ի ՏՈՒՐՍ կամ յԸՆ-ԿԱԼՍ, և մին՝ յորում ընդ խաղ:

'ի ՏՈՒՐՍ՝ բերկրութիւն ինչ պարգևի, 'ի տալ զհաճոյա-կանութիւն և զգովեստ ասից և իմաստից այլոց. և բերկրութիւն ինչ ընկալեալ լինի, 'ի հաղորդել այլոց զիւր իմաստս: Իսկ յորում ընդ խաղ, պարգևի և ընկալեալ լինի բերկրութիւն 'ի փոխադարձ հաճոյս ծիծաղական ասից և ծաղուց: Զի հանապազորդ անծաղը ստուգութիւն՝ 'ի տաղտկալեաց է համարի. և միտք իբրև զաղեղն՝ կորովանայ, եթէ երբեմն թողանայ:

Ըստ այսց երից պարագայից, երիս ազնուական առաքինութիւնս որոշէ արիստոտէլ 'ի քաղաքական կենցաղավարութեան: Առաջին՝ 'ի գովել զայլոց իմաստս. և սա կոչի ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, կամ ՀԱՃՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ, կամ ՍԻՐՈՂՈՒԹԻՒՆ: Երկրորդ՝ 'ի հաղորդել այլոց զիւր իմաստս. և սա է ՃՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ: Երրորդ՝ 'ի զրօսանել փոփոխակի զուարթարար ասիւք, որ է խաղս. որ և յայս սակս կոչի ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆ:

Զայս երից առաքինութեանց խօսեսցուք ուրոյն ուրոյն յերիս յաջորդ գլուխս. սկիզբն արարեալ յառաջնոյն:

## ԳԼ. Բ.

### Յաղագս ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ, կամ ՀԱՃՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ:

Սա՝ որպէս ասացաւ, է ՄԻՋԱՍԱՀՄԱՆ ԻՆՉ ԸՆԴ ՄԷՋ ՀԱՃՈՅԱՆԱԼՈՅ և ՀԱԿԱՌԱԿԵԼՈՅ ԱՅԼՈՑ՝ ՈՐՊԷՍ ՎԱՅԵԼ Է, 'Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ:

Որ անցանէ ը չափ 'ի հաճոյանալն, է ՄԱՐԴԱՀԱՃՈՅ. որ անցանէ ը չափ 'ի հակառակիլն, է ՀԱԿԱՌԱԿԱՍԷՐ. որ միջասահման հաճոյանալոյ կամ հակառակի, է ՔԱՂՑՐԱԽՕՍ:

Բայց այս առաքինութիւն իբրև զհեզութիւն ոչ բարւոք ճանաչի յիւրմէ անուանէ: Զի գոլով նր երկուս այլևայլ պաշտօն, մին հաճոյանալոյ՝ և միւսն հակառակելոյ. ՀԱՃՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԴ անուն՝ չէ համաչափ, վն նշանակելոյ իւրոյ զմի մասն միայն իւրոյ սահմանի: Նա՝

այն_

այնպէս չփոթ է սա ընդ երկոցունց ծայրից, որ թէ հաճոյանայ, երևի մարդահաճել. թէ հակառակի, երևի կագել : Եւ զորին հակառակն, մարդահաճոյն երևի հաճոյական. և հակառակաւորն երևի՛ խրատամիտ հակառակօղ : Մինչ զի 'ի սահմանեն իսկ անմարթ է ճանաչել, թէ այս առաքինութիւն հաճոյական իցէ, թէ անհաճոյական. խայթիցէ, թէ փայփայիցէ. խածանիցէ, թէ համբուրեսցէ :

Այս և յայսմ վայրի հարկ է ճանաչել նախ [illegible], իբրև առաւել զգալիս և բացերևս. և ապա զմիջասահմանն, որ է առաւել խրթին և չփոթ :

## ԳԼ. Գ.

## Յաղագս մարդահաճութեան.

Այս է [illegible] համաձայնութեան և [illegible] [illegible], [illegible] և [illegible] 'ի [illegible].

Բայց ոչ ախմանթէս չափմամբ բութոյ՝ չափեաց բոլորակ զմարմին զառնապատկերին մեծի (152), նոյնպէս յայսմ ընտանի մարդահաճութէ մարթ է ձեզ ունիք ճանաչել համեմատութ մարդահաճութեան [illegible] և [illegible]. իբր զի մեծ են սորա հետևութիւք. այլ բնութեն նոյն :

Այս երեք ինչ մասնին յայսմ մոլութե : Ո՛վ և ով իցեն [illegible], որք մարդահաճութե ըմբռնին : Յինչ [illegible] հայեցի այն՝ որ մարդահաճէ : Եւ որով [illegible] վարեցի 'ի մարդահաճել իւրում :

Յաղագս առաջնոյն, հասարակ է ամ մարդոյ իղձ գովութ ըմբռնելոյ : Այս իղձ թէ ինքեան չէ մոլեկան. այլ մանաւանդ՝ է գովելի ինչ յատկութ մեծանձնութե, եթէ գովեստքն են մեծամեծք. կամ համեստութե, եթէ են միջակայինք :

Բնութեն ես [illegible] 'ի խթան առաքինութե. և [illegible] 'ի սանձ մոլութե : Որ չամօթի 'ի գովեստ, չերկնչի 'ի պարսաւանաց. և որ չերկնչի 'ի պարսաւանաց, չզգայ զամօթ. և որ չզգայ զամօթ չարի, դիւրամէտ է առ ամ չարիս :

Թե

Թեմիստոկղէս գտեալ 'ի ժողովս ուրեք երաժշտաց բազմաց՝ որք զխմամբրգանակաւ երգէին, խրրն հարցաւ, թէ ո՞ր ձայն առաւել հաճոյ եղև քեզ, եւ պատասխանի. այն, որ ներբեւոյ զիս գովեսցէ: Եւ յիրաւի էր նմ զայս ասել. զի գովութիւնք լեալ ձայնակից էին իրացն խակութեան: Թեմիստոկղէս արժանի էր գովութեան ընդունելոյ. ուստի և էր ճշգրիտ և բուն առարկայ գովասանութեան: Բայց բազումք առանց արժանաւորութեան սիրեն զգովութիւն. և նք

են բուն առարկայ մարդահաճութեան:

Դրախտահաւն անուն Թռչուն՝ օդով կերակրի. օդով կերակրի և գետնաբուծ. բայց նա թռուցեալ 'ի բարձունս՝ կերակրի յստակ և անխառն օդով. իսկ գետնաբուծն սողեալ ընդ երկիր՝ կերակրի անմաքուր և խառնակ օդով: Առաքինոյն և փառամոլին ախորժ է գովեստ. բայց նա ախորժէ զգովեստ ճշմարիտ զառաքինեացն, և սա զգովեստ

սուտ՝ զպատականեացն մարդահաճութեան:

Չիք որ այնպէս թափուր յարժանաւորութենէ, որ ոչ ունիցի բարի կարծիս զանձնէ. և որ փառաճն է յիմք՝ դիւրաւ հաւատայ այնմ. մանաւանդ՝ եթէ յորում սեռի գովի, ունիցի ինչ զայնր ուրուա-

կան:

(153). Ամ կին ագեղ խրրև զգորգոնս՝ լուեալ թէ գեղեցիկ կոչի, խնդայ, կարծեալ թէ գէթ 'ի միջակայնոց իցէ: Կին՝ որոյ գեղ միջասահման իցէ, լուեալ թէ չքնաղ կոչի, խնդայ, կարծել ընդ միասայլոց լինել այնպիսի: Իսկ կին չքնաղ՝ լուեալ թէ հրեշտակ կոչի կմ ածուհի, խնդայ. կարծեալ թէ

այնպէս համարիցին, ոմ և սուտն:

Աստիճանք արժանաւորութեան այնպէս են հպաւորք, որ ստորինն շփոթի ընդ միջակայնոյն, և միջակայինն ընդ վերնոյն. և վնկ բարիոք կարծիք զանձնէ՝ դոյզն աջակցութբ արտաքնոց՝ ելևելս առնէ դիւ-

րաւ յաստիճանէ յաստիճան:

Համեմատական կոյսերք 'ի մարդահաճոյ ծերակոյտէն ածական անուն ընկալեալք, զառաջինն ամաչէին, ապա երկուանային, հուսկ ապա հաւատային. զի փառամոլութիւնն փոքր փոքր հաւատա-

տա,

տացուցանէ , թէ զոր բազումք պնդեն՝ հնար է թէ լինիցի ճշմարիտ : Ո՛չ անամօթաբար տեղի տա_ լ բազմաց , զոր անամօթաբար կանգնէր նոցա ծերակոյտն , հաւատային ունել ածական ինչ զօ_ րութեն 'ի կուրծս . և ճառագայթ յերեսս :

Յայտ է թէ մարդահաճութիւն ինչ այսպէս յայտնի սուտ և չնչին , գերապանծ արժանաւորութե՛ բար_ կութեն բերէ . զի երբեմն անարգ մարդահաճութիւն նուաղէ զյարգ ճշմարիտ գովեստից :

Արիստոբուղոսի շարագրեալ ներբող ինչ քաջու_ թեանց աղեքսանդրի , ապրգեցոյց յայն սուտ ինչ 'ի շնորհուկս , թէ նետաւոր սատակեաց նա զփիղ 'ի պատերազմի : Աղեքսանդր ընկէց զայն ներ_ բող 'ի հիւդասպ գետ . փոքր մնաց եւ՝ և զներբո_ ղաբանն ընկեցեալ էր յայն : Գովեստ էր այս ան_ հաւատալի , զի 'ի մորթ փղի ոչ գծէ նետ , ո՛չ և ոչ խայթ ճանճի 'ի պղպատ :

Իսկ զխորգ ոչ ընկէց 'ի լերինէ գետ զամմոնիոս քուրմ , որ կոչեաց զնա որդի արամազդայ . որ մեծ եւս մարդահաճութիւն էր քան զայն . որչափ դիւրա_ գոյն է նետաւոր սպանանել զփիղ , քան ծնունդ լինել արամազդայ : Ապա ոչ ատեայր աղեքսանդր զմարդահաճութիւն , այլ ատեայր զփոքր մարդահա_ ճութիւն , որում հնար էր 'ի սուտ հանել զմե_ ծամեծս :

Մեծաց մարդկանց մեծ ճառակք պիտին . և մե_ ծամեծ անձանց մեծամեծ մարդահաճութիւնք : Զի մեծ են յոյժ կարծիք նց զանձանց . և խնդան , թէ տեսանեն զանձինս՝ 'ի կարծիս այլոց մեծ եւս քան զոր են . ո՞չ եւ ոք խնդայ և ծիծաղի՝ տեսեալ 'ի մեծացոյց հայելւոջ զերեսս իւր մեծաքանակ :

Ո՛չ գովեալք՝ թէպէտ և սուտ իցեն , և գովեստ_ ընկալն իսկ գիտիցէ թէ են սուտք , բայց և այն_ պէս միշտ են հաճոյականք : Զի զօրօրինակ ճշմար_ տութեն հակառակորանին ծնանի զատելութն , նոյն_ պէս սուտն գովասանին ծնանի զսէր . ո՛չ ասաց մեծն այն . Գիտեմ , զի մարդահաճես , բայց և այնպէս հաճոյ ես ինձ : Ապա դժուարին է որոշել զմարդա_ հաճոյն 'ի գովասանէն , բայց եւ դժուարին է որո_ շել .

չէր, ո՛ ատեցող լիցէ մարդահաճութեան, և ո՛ տարփացող։ Զի են որք պնդեն թէ չեն հաւան ընդ մարդահաճութիւն. և բարկանան, եթէ ոչ մարդահաճութիւն ընդունին։

Աքայաբ մարդահաճեալ յիւրոց բղձապատմից, որք յորդորէին զնա ելանել 'ի պատերազմ, ասաց ցմարգարէն Միքիա. Երդմնեցուցանեմ զքեզ յԱծ ճշմարիտ, զի ասասցես ինձ ճշմարիտ առանց մարդահաճութեան։ Միքիաս՝ քաջ եւս բղձապատում քն այլոց՝ զի վասն անձին, յայտ յանդիման ասաց. Ելէք 'ի պատերազմ, յաջողեսցի։ Բարկացեալ թագաւորին՝ անգէն վաղվաղակի հարկ զնա 'ի կալանս. բայց և այնպէս մարգարէութիւն ճշգրտեցաւ. չոգաւ նա 'ի պատերազմ, և սպանաւ։ Ո՛վ խորութիւն և անհասութիւն կամաց զօրաւորաց. բայց անհասանելի են եղեն վճիռք ածպետական զօրութեն։ Թագաւորն երդմնեցուցանէ զմարգարէն՝ չմարդահաճել. և 'ի չմարդահաճել նր՝ սպանանէ զնա։ Մարգարէն վն հնազանդելոյ արքայի՝ ասէ զճշմարիտն. և վն զի ասաց զճշմարիտն, պատուհաս պատահէ։ Յառաջատես ածպետութեն յառաջագէտ գոլով գործողութեան արքային, էր նախակարգեալ, զի մարգարէն վկայական մահուամբ մեռցի՝ վն ասելոյ իւրոյ զճշմարիտն. իսկ թագաւորն սպանցի՝ վն չհաւատալոյ նմա։

Իսկ արդ՝ ո՞վ լիցէ որ սիրիցէ զմարդահաճութիւն։ Որ ունի բարիոք կարծիս զանձնէ. որ կամի լինել 'ի բարիոք կարծիս առ այլս. և որ դիւրահաւատոյ այնմ՝ որում մեծապէս բղձանոյ։

## ԳԼ. Դ։

### Յաղագս ճանաչման մարդահաճոյին։

Ո՛վ, ո՞րչ նման են մարդահաճոյն և գովասանն (154). թեպէտ և մին է մոլի, և միւսն՝ առաքինի։ Բայց որչափ նման են միմեանց, այնչափ տարբեր են վախճանք նց։ Գովասանն գիտէ պատուել. մարդահաճոյն գիտէ օգտիլ. մին հայի յայլոյ օգուտ, և միւսն յիւր օգուտ։

Յայսմ

այսմ անարգ և ծառայական վախճանէ մարդա-
հաճոյք ստացան անուանս նախատականս ։

Կոստանդիանոս կայսր կոչեաց զնա [illegible] ։ Աննաբոխիզայոս , [illegible] , Գիխադինէս , [illegible] ։ Ալյք , [illegible] , նմանաբերեալ զգեղեցիկ առակ փոխեցացեալ ծառային . (155) .

Տեսեալ աղուեսուն զագռաւն՝ յոստ մի 'ի կայտառի , պատառ մսոյ 'ի կացի ունելով , համոզանկեաց նմա՝ թէ քաջ ես յերաժշտուէ քան զսոխակ (այն է [illegible]) . և յորդորեաց զնա փորձ փորձել զեւրոյ քաղցր ձայնի ։ Հաւատաց նմա ագռաւն . և այն ինչ կամէր երգել , անկաւ որսն 'ի վայր . և խորամանկ աղուէսն եկեր զայն ։

Ագռաւ սևափետուր էր միանձնական որեմն , այլ ապիտակափառ մօրուօք , պերճոս մօրովք , որ առյս կոչեցաւ կեղեստինոս . (156) ։ Հին աղուէս էր բենեդիկտոս կայսեան . որ յայս սակս 'ի յիշատակագրութիւնս սրբազանս [illegible] կոչեցաւ [illegible] ։ Տեսեալ ըր զկեղեստինոս , զի ամբարձեալ յաթոռ գերագահ վայելէր խաղաղութ 'ի քահանայապետութեն՝ որում էր արժանի , ցանկացաւ յինքն կորզել զայն անոյշ պատառ ։

Սկսաւ շողոմելով այնչափ գովասանել զառաքինութ նր , և զերջանկութ առաջնոց վարուց նորա՝ յորժամ երգէր ընդ հրեշտակս յերբում գաւի , մինչև հովուն բարի 'ի ժողովն նեապոլսոյ նուագեալ զանլուր զայն երգ , [illegible] , և որ զկնի , հրաժարեաց 'ի քահանայապետութէ . [illegible] աղուէսն անյագ՝ աջակցութ աքքային կարողաւ՝ եբեկ զայն յիւր բերան ։

Գրեն բազումք , թէ այն քահանայապետ ոչ ևս քահանայապետ՝ իբրև յելից իւրոյն ծանեաւ զնենգութիւն , գուշակեաց զբենեդիկտոսէ զայս գուշակուն ։ [illegible] , [illegible] , [illegible] . ամն ճշմարտեցաւ ։ Եւ 'ի վճ այսպիսի անցից անցելոց , որ 'ի ձեռս շողոմելոյն , և յօգուտ շողոմողին , հաստատեցաւ առակն վաղեմի . [illegible]

Իսկ երգեաց ագռաւն, այլ ոչ աղուէսն:

Բայց այսոքիկ են մարդահաճութիւնք գէթ ուղղեալք առ բարձր վախճան: Անարգին, թէ 'ի գերև ելանեն. բայց պատուին 'ի ռամկաց, թէ 'ի դէպ յաջողեն. զի առ նոսա՝ որք ԺԸ եկից իւրոյն գասեն, մեծ պատիւն ընդէ զմեծ ամօթ, և թէ միջոյն մեղադրի՝ վախճանն գովի:

Բայց վատանուն մարդահաճոյք են նք. որք ընդ անարգ ձայնիւ անարգաբար գովեն և սուեն: Զի դժպատեհ իմն է, թէ գովեսցն, քան զոր չէք մեծագոյն նուէր՝ 'ի նուէրս իսկ ոչ, վարձուր զոհ ընծայեցի պիղծ մարդահաճութեն:

Մոլուն է դատարկանձանց և յուլացելոց, որոց փախուցեալ յաշխատութէ և 'ի պատուաւոր գործոց, ձեռնարկեն յամ արուեստս և հնարս սուտխօս լեզուի. զի զօտարին կերիցեն: 'Ի ծունր իջանեն, զպարանոցս խոնարհեն որպէս կարթ, զի ընթրիս ինչ որսասցին: Չիք գծծութիւն՝ յոր ոչ մխին, և ոչ նախատինք՝ զոր ոչ յանձն առնուն. միայն թէ աչալուրջ իցեն առ իւրեանց շահ:

(157). Մեծն այն շահատակ կատարուկիս կատարական՝ որ գովելի ընծայեր զանձն իւրովք քաջութք, տեսեալ թէ մի 'ի մրջմանցս ընծայեր գովեստս, զի կորզեսցէ զրամս, եթուք յերեսս աներեսին:

Նա անամաչ դիմօք, առանց զերեսս սրբելոյ, ասէ. Զինարան յանցն առնեմ գլխոյն Թագաւորին 'ի ջուր ծովուն, զի որսասցի ձուկն. Ես ոչ Թագաւորացուցանիցեմ Թագնալ վէրէսս, զի որսայցեմ փառս: Բայց ոչ ձկան և ոչ այլոց լեալ արժանի, Թացերեւ և ձեռնունայն՝ եւ յերեսաց նր 'ի բաց:

## ԳԼ. Ե.

### Թէ որպէս օրինակաւ վարիցի մարդահաճոյն 'ի մարդահաճել իւրում:

Անպատկառ և տխմար մարդահաճոյն չէ արժանի այլում հատուցման, բայց որում արժանացաւ նախատացեալ ձկնորսն կատարականեան:

Զէ

Զէ՛ նման մարդահաճոյ, որ չունի հաստատութիւն. և քաղցրութիւն ընդ նա, յորժամ վարժապետէ նմա քաղցր: Բայց գլխաւոր ուսումն մասավարժ մարդահաճոյին է գիտել ճանաչել զբնաւորութիւն այլոց. և գիտել յերիւրել ը̃ այնմ, բանիւք, գործովք, և կամակատար ծառայութեամբք:

Եւ զի մարդահաճութիւն է կապիկ բարեկամութեան, վասն ոչ ինչ նշան սիրոյ այնպէս բնաւոր է նմա, ոպ̃ կերպարանակցութիւն ը̃ բարեկամին. մինչև երևիլ թէ յերկուս մարմինս իցէ մի միայն հոգի:

Սակայն մարդահաճոյն է ոպ̃ ստուեր. որ ոչ ունէ զգեղ, բայց և այնպէս քո զկնի գայ, և առնէ զամ՛ զոր և առնես: Արիստոն էր թոթով. և իւր համբակք թոթովէին: Պղատոն էր կոր, և իւր աշակերտք 'ի կոր գնային, իբրև զկորաքամակ առնապատկերս, զոր կանգնեն ճարտարապետք 'ի մոյթ շինուածոց: Աղեքսանդրի կոր էր պարանոց. և իւր պալատականք աղեղնաձև կորանային. զի 'ի դէպ յաջողեսցէ նց̃: Զգիտեմ, պատրիկզիդես՝ որ մարդահաճէր հօրն Աղեքսանդրի, բրեկո՞յ արգելք զիւր մի ակն, զի նմանող լիցի իւրում տ̃ն:

Կերպարանակցի մարդահաճոյն քում այժմեան վիճակի. թէ ստորանես՝ ստորանէ. թէ բացանես՝ բացանէ. թէ գովես՝ գովէ. թէ անարգես՝ անարգէ. թէ ծիծաղիս՝ ծիծաղի. թէ լաս՝ լայ. և ոչ խնդրէ մխիթարել զքեզ. զի մի հակառակեսցի. այլ կեղծաւորի անմխիթար լինել 'ի քո ցաւս: Նման է պողիպոդայ ([illegible]), որ ը̃ ժամանակին աճէ կամ նուազի, և ը̃ տեղւոյն փոխէ զգոյն. մինչև մանրիկ ձկունք և թիթռունք չորոշեալ զնա 'ի ժայռէն, վստահութը̃ մատչին 'ի նա, և ըմբռնին 'ի խիղք նորա:

Այլ այսորիկ են կապկային հնարք՝ մակերևականք, նմանակցութը̃ իրացն, զորոց առանց ճգանց մատուրուէ՛ բայց օգտիւ՝ հնար է բերել զնմանութիւն:

Այլ մեծ են արուեստաւորութը̃ ընդմանել 'ի բարս և 'ի յօժարութիւն սրտի, ուստի կատարեալ զավութը̃ զմոլութիւն առնեն առաքինութիւն. և զորէն բանաստեղծից զճշմարիտն քողարկեն ճշմարտի կերպա.

պարանաւ:

Թէ յանդուգն ես, կոչէ զքեզ առի. Թէ երկչոտ, կոչէ զքեզ խահայան. Թէ փառասէր, բարձրացուցանէ զքեզ ող̅ մեծանալեաց, տանել ՚ի վե̅ր բերել.

Թէ շնորհալի է՝ տալով վերնագոյնի:

Բայց մտաւորագոյն և մխտակորագոյն են են այնք, որք արծարծանեն զմարդահաճութն ուշեղ որամութ̅, որ առնէ զգուշեան շնորհաբան, Թէ պէտ և ի̅ք քնոց:

Մտացի մարդահաճոյ եղև եւգեմոնիկ. որոյ լըսեալ զորոտումն՝ դարձաւ առ աղեքսանդր և ասէ. տես կոչեա, որ որոտեաց, Թէ որդին արամազդայ: Եւնիկեսեայ տեսեալ յերեսս նը̅ ճանճ մի. ասէ. ով ճանճ քաղցրաբերել տես զծա̅ն ճանճս, որ արծաթագոյր ճաշակեալ ծիածանին: Հաճոյ եղեն այս փաղաքշանք արքային, և փոխատրեաց այնց մեծագանձ պարգևս. զի մտաւորութ և աննախանձ հաճելին զկամս յիմարութն նը̅:

Բայց ոչ այդպէս ՚ի գէպ յաջողեաց փիլիսոփային, որ իբրև եւես զնա մերաւորեալ, զի հեղզոյր զարիւն, ասաց առ նա զհամերական զայն առղ. արիւն որ եղև ի դիս անմահից: Գեղեցիկ եղև ասացուածն. այլ գեղեցիկ ևս էր չասել զայն. զի առաւել կծեաց այն զաղեքսանդր քան զնոյն ինքն զվէրս. զի գիտաց, Թէ այն գովեստ ՚ի բերան այլոց եղև մարդահաճութի, այլ ՚ի սորայս հեգնութի:

Մեծի զգուշաւորութե պէտք են ՚ի մարդահաճել անդ. զի ը̅ուՆողն մարդահաճութե մի ամաչեսցէ յընդունել խրատ. և զի կեղծ ակըն երևեսցի անկեղծութի:

Տարրակոնացի մարդահաճոյք՝ (՚ի տարրակոնայ քղ̅քէ սպանիոյ) կամեցեալ զուշակել օգոստոսի մտացի իմն զուշակութի յաղթութե և յաղթանակի, ասացին նմա, Թէ ՚ի վե̅ր սեղանոյ յանուն քո ՚ի մէնջ նուիրելոյ՝ բուսեալ արմաւենի: Թագաւորն՝ որ մտացի ևս էր, խոժոռահայեաց ետ պատասխանի (հեգնելով). նշան է, Թէ ոգէք զոհէք ՚ի վե̅ր իմոյ սեղանոյ: Պատասխանին հռովմայեցւոյն մտաւորագոյն ևս եղև ք̅ զպարտեացն առաջարկութե. և մարդահաճութեն յայտնեցաւ

ցաւ խորովի. իբր զի եթէ առեալ զոչեալ էր նշ կրակավառութ 'ի վր սեղանոյ, չէր արդեօք բու_ սեալ արմատենին :

Բայց ճարտար եւս է այն ազգ մարդահաճութեան, որ երեւի [illegible], և մարդահաճէ. զի գովեստ անակնկալ հիացուած արկանէ 'ի կարծիս, և առա_ ւել բերկրեցուցանէ :

Աղախինն փիլոփմատեայ՝ ըստ բանաստեղծութեան պլուտոսի, առ առաւել բարձրացուցանելոյ զգեղ տիկնոջ իւրոյ, զլանայր նմա զգործիսն՝ զոր խնդրէր նա 'ի գեղազարդել զանձն: Վն այսորիկ 'ի խնդրել նր սպիտակագեղ 'ի սպիտակացուցանել զերեսս, տայր պատասխանի. [illegible] Եւ 'ի խնդրել նր ջուր 'ի լուանալ զձեռս, ասէր. [illegible]

Պատանդագոյն յոյժ ազգի, և չարաչուք յոյժ եղե մարդահաճութն արդոյ ուրուամ անձին 'ի դասէ սինկղիտոսաց: Յան եկաց առ յաւուր միում յա_ տենի ծերակուտին, խօսել սկսաւ ընդ տիբերիոսի յայլատագոյնս իմն, և 'ի ձայն բարձր ասէ. [illegible] Ապշեցաւ ինքնակալն, և ծերակոյտն իսկ՝ ոչինչ պակաս քան զնա:

Յաւել ասել. [illegible] Սոսկացաւ ծերակոյտն առ այն բարբառ, և առաւել եւս քան զծերակոյտն՝ տիբե_ րիոս, կարծիս 'ի մտի եդեալ, թէ գաղտնի ինչ իբր դաւադրութն 'ի վեր երեւեցին :

Այս ասէ. [illegible]

Կասսիոս սեւերոս՝ զգօնաւոր յառաջատես՝ լուեալ զայն

զայն բան, մինչդեռ վաղվաղակի տեսց ցիւր ընթե-րակայս. Երրորդ՝ 'ի տիոս, այս Մարդահամարին՝ Խոր-ծանանք է Տիբերիոսի. որ եղև իսկ: Տիբերիոս եւ զանձն փափկութե կենաց, և անգթութե, 'ի գեղս քարանձաւս կղզւոյն Կապրեայ. չունելով համմայ այլ նշան, թէ կենդանի է Տիբերիոս, բայց զկո-տորած իւրոց քաղաքացւոց: Բայց յայնմ վայրի մարդահաճոյն եհաս իւրում օգտի: Տիբերիոս հրա-մայեր համմայ, և նա տէչերիաս:

## ԳԼ. Զ:

## Յաղագս Հաւասարութեան, կամ Անհաւասարութեան:

Մարդահաճութիւն է աւելացանցութե, իսկ հեռկա-սիրութիւն պակասութի. զի 'ի քաղաքական կեն-ցաղավարութե որչափ համութե բերէ նա՝ զավելով, այնչափ բառնայ սա՝ հակառակելով:

Ամ որ սիրէ զինքն, և զոր ինչ իւր է, և ես տա-ւել զնուր կարծիս՝ որպէս զազնուագոյն մասունս ազնուականագոյն մասին հոգւոյ: Վա այսորիկ մտ մարդկան ընդ լսելն 'ի հակառակասիրէ, զի երգե-ծանութե կրկնէ զնուր կարծիս, այնպէս զառնա-նայ, ոչ զառնանայր ուէս. յորժամ ժանան կո-նոս կլանէր զնը սիրելի ծնունդս. (158):

Հակառակասէրն բուն Ընդոբին է ընդ հակառակս մարդահաճոյին: Զի մարդահաճոյն է զուարթա-գին, քաղցրաբան, շնորհաշուք, բարեմարդ. զկա-մին շողմոք և քծնող: Իսկ կռուասէրն՝ տխուր, սեւամաղձոտ, ստոր, թունի, գխախուխ, անպա-ճոյճ. զկամելին յանդուգն և արհամարհօտ: Վասն զի որ մարդահաճէ, ջանայ հաճոյանալ. և որ հա-կառակի, անհաճոյ լինել:

Այլևայլ են երկոցուն արարք և նշանք խոյնք. ոչ այլևայլ են արարք և ձայնարձակութե շան քծնողի և շան խածատողի, զի նա շարժի 'ի ցանկականէն, և սա 'ի ցասմնականէն. որք են կիրք միմեանց հա-կառակք:

Այլևայլ են և 'ի ձեւն խօսից: Ո՛չ այնչափ մա-ւորութե պիտի՝ առ ասել զայն բարի, որչափ՝ ա-սել

սանել զբարին չար: Այս մարդահաճել չար է թէ գիտիցէ որ տալ հաւանութիւն ակնարկութք կամ ձայնիւ. բայց առ հակառակն՝ պիղծ է, թէ գիտիցէ որ զիմախոսել նոցա փառատիք, իբրև զկինիկեանս և զիմաստակս: Վնկ մարդահաճոյին մեղք է 'ի լեզուի. այլ հակառակասիրին՝ լեզի է յատամունս: Նա՝ թէ խոցէ ևս, քաղցրութբ խոցէ. այլ սա զառանապէս խածանէ, պատառէ և գիշատէ:

Վնկ ծանրատաղտուկ մականուամբք նկարագրեցաւ կենդանագիր հակառակասիրին. որոց կէս զանելութին ածէ 'ի ցուցակուն. և կէս զգործն: Յանելութեն կոչեցաւ, [illegible], [illegible]. [illegible]. [illegible] (159): Եւ 'ի գործոցն [illegible]. [illegible]. [illegible]: Վս զի անձնեցուն է ատելի և խորշելի, որպ անգղն՝ թռչնոց. իբր զի մի 'ի նոցանէ բաւական է 'ի տխրեցուցանել բովանդակ զժողով ուրախուն. որպ մի միայն ձայն անհամաձայն բաւական է 'ի ժխորել զնմ քաղցրանուագ եղանակ:

Զհուակն առացից: 'Ի հարցանել ցգիտզինեա, որ զաղան չարագոյնս խածանիցէ, իմաստնապէս ետ պատասխանի: Յ[illegible]՝ [illegible]. 'ի [illegible]՝ [illegible]:

## ԳԼ. Է:

## Յ[illegible] [illegible]:

Մարդկային խօսակցուն կազմակերպի [illegible] և [illegible]: Որոց ոմանք են տեսական, և ոմանք գործնական. ոմանք ընդհանուր, և ոմանք մասնաւոր. Տեսական. որպ, [illegible]: Գործնական. որպ, [illegible]: Ընդհանուր. որպ, [illegible]: Մասնաւոր. որպ, [illegible]:

Այս [illegible] եթէ ճշմարիտք և եթէ սուտք, մարթին տեղի ունել 'ի քաղաքական կենցաղավարութ. և որ ինչ տեղի ունի 'ի քաղաքական կենցաղա-

զավարուն, մարթի լինել առարկայ հնարկանիրի. զի նա ամի հակառակի:

Թէպէտև գիտիցեն լինել Ճշմարիտ, կամ գիտիցեն լինել սուտ, զոր դուք ասես, մարդահաճոյն ստորասէ՝ եթէ ստորասես. և բացասէ, եթէ բացասես: Այլ հնարկողն բացասէ, եթէ ստորասես. և ստորասէ, եթէ բացասես: Թէ դու գովես, նա պարսաւէ. թէ դու պարսաւես, նա գովէ. թէ դու խրատես առնել, նա խրատէ չառնել. թէ դու խրատես չառնել, նա յորդորէ: Ասա. լաւ է մեռանիլ վասն հայրենեաց: Անդէն ասիցէ. լաւ ևս է կեալ վասն հայրենեաց: Ասա. այն որ է մեծապատուն: Ասիցէ. իւր է նա՝ որ կեցուցանէ: Ասա. այն որ է աղքատ: Ասիցէ. ոչ այնպէս. զի փառաւոր որոյ յորդորեալն զամ գիտէ ծառայութեան հայրենի: Գովեա զգեղ ուրուք: Ցուցէ պատասխանի. զգայութիւն բնաբանին տեսանելի է նա. Ասա. այն որ է փխեղ: Ցուցէ պատասխանի. նա՝ կեղեքիչ է յայտ որ մարմնոյ՝ հայեցեալ՚ի հոգին.

Ոչ բանից միայն, այլև գործոց գիմախօսէ հնարկաւ ներն: Յանդիմանէ զքո արարս. ձայնից ձայն նմանակէ. ծիծաղի զշարժմամբք. անգոսնէ զքարոզ. այլն առնէ զազանելիսդ: Թէ զհնարկաց զգենուս տարազ, կոչէ զքեզ հնարաւոր. թէ նորաձևս, ծաղր առնէ զքեզ որպէս խաղի նմանօրէն: Թէ առատաձեռն ես, կոչէ զքեզ անառակ որդի. թէ խնայօրէն գնաս, կոչէ զքեզ ժլատ ագահաբար: Ամ ինչ ժահահոտ է նմա՝ և զզուելի. ամ ինչ նեխեալ է նր արուեստի, և գործոց իւրոց երկաթոց:

Ջհաւակն առաջից. թէ կամք իցեն քեզ նկարագրել զհակառակասէրն, նկարեսջիր զայն, զորօրինակ նկարեաց անախիղտս զանընտրող բարս, և պարբառիւ զընդունութի աթենայ (կամ աթենացւոց) գլխովին ը հակառակս և անհեթեթ: Որպէս մանգամայն և փիւնր. յամբ՝ համայն և արագ. երկայր և յանդուգն. յամայն և ագահ: Վ ա զի որ մարդահաճոյն ամի նմանակի, նոյնպէս հակառակասէրն ամենայնի հակառակի:

## Գլ. Ը։

### Թէ զի՞նչ իցէ ոգին հակառակասիրութեան։

Ոչ շարժի հակառակասէրն 'ի հակառակելն՝ վս սիրոյ վարձուց հատուցման, որպէս փաստաբանն. և ոչ վս յայտնութե ճշմարտութե, որպէս իմաստասէրն. և ոչ վս ըղձի համբաւոյ, որպ հպարտն, այլ՝ վս ընդարձակ չար կատաղութե 'ի հակառակելն. որում սեպհական անուն կոչի ոգի հակառակասիրութե։ Թէ սատանայական ազդումն ինչ իցէ այս ոգի, որպէս կոչեն ոմք ոգի ամբարտաւանութե կամ չար յամառութեան, և թէ բնաւոր յօժարութիւն ինչ. անանձնապէս 'ի սրտէ, որ չարաչար փորձիչն է իւր ինքեան քան զնոյն ինքն զդև։ Այսպիսի եղև ոգի կի՞ այս չար Սաւուղայ. որ առանց գիտելոյ զվն էրն, գեղարդն արձակէր 'ի վր պատանւոյն Դաւթի, ընդ հարկանել նորա զքնար 'ի բժշկութե նորուն։

Այո՛ այս ոգի հակառակասիրութե անանձնապէս զուգորդ է միշտ ը ոգւոյ ամբարտաւանութե, կամեցեալ թէ իւր կարծիք յաղթ իցեն քան զայլոց կարծիս. զի և րևեսցի՝ թէ իւր ուշիմութի վերագոյն իցէ քան զայլոցն. որ է ինքնարուն ամբարտաւանութի։

Բայց 'ի հակառակասէրն, որ յայսմ վայրի գիմագրի հաճոյականին, ոգին ամբարտաւանութե ծառայէ ոգւոյ հկ̃կութե որպ հրամայողի. զի Ճշմարտ հակառակասէրին ոչ է հակառակել 'ի ցուցանել զուշիմութի, այլ՝ ցուցանել զուշիմութի 'ի հակառակել։

Բայց առ նրբաբանել զայսմ նիւթոյ, գիտել արժան է. թէ այս ոգի հակառակութե ծնունդ է գժնդակ և ս ոգւոյ, այսինքն է՝ [illegible] ատելութե առ ամ ազգ մարդկան։ Վս զի չէ նմա փոյթ մաքառել ընդդէմ սուտ՝ քան ճշմարտութե. միայն թէ գիտիցէ բարկացուցանել և գժգմնեցուցանել զայն՝ որ խօսի։

(160). Զոյիլէ անուանի օրինակն հակառակասէրաց, զոր յայս սակս գիտնաւորք կոչէին Զոյլի.

պաղէ, իբրև հարցաւ յումեմնէ յընտանեաց, (որովհետև հասարակաց թշնամին չունէր զոք իւր բարեկամ,) թէ զիա՞րդ իշխեցեր պարսաւել զգիրս Համերոսի, և պղատոնի, զորս առհասարակ իմաստունք և պատգամախօսք գործս համարէին չնաշխարհիկս, յանդուգն եմ պատասխանի. ոչ իւրեմ զգերասածոյս, զի չեմ կարող ուր հասանել նոցա գերադոյ։ Կատարելուն ունէր զայս շուն՝ խածանել և մանրել զոսկերս իսկ մեռելոց, փոխանակ զի եղեն մարդիկ. և զի չէր ձեռնհաս այսմ, թափէր զիւր ատելութիւն 'ի վ̄ր գրոց, յորս մարդիկ յերկարաձգեն զկեանս։ Արժան էր այսմ ատեցողի ազգի մարդկան՝ և զանձն եւս իւր ատել, եթէ չէր նա իբրև զմարդագայլն լիկայոն կատաղանօք փոխակերպեալ 'ի մարդոյ 'ի գազան. (161)։

## Գլ. Թ.։

### Թէ որով օրինակաւ գործիցէ հոգեբանականն։

Ամ̄ նախադասութիւնս զգործնականս կամ զտեսականս, զընդհանուրս կամ զմասնաւորս, զորս նշանակեցաք, հնար է ստորասել կամ բացասել, կամ ճշմարիտ, և կամ վերբերութեամբ պատճառօք, ը̄ երկաքանչիւր կողման։

'Ի քաղաքական կենցաղավարութեան զինչ առաջնորդութեան և եղանէ 'ի քո բերանոյ, անդէն խափանէ հակառակաքն. և թէպէտև պայծառ իցէ քան զարև, աղօտացուցանել հնարի զայն ստապատիր հնարիւքք. և միան, որոյ առարկայ է ճշմարիտն, կուսակից լինի սուտ։ Ոչ ձեռնածուք շութափուք ձեռաց պարեն զաչս, նոյնպէս իմաստակք ստապատիր պատճառանօք գիտեն յեղափոխել զանգգոյշ միտս։

Սկեպտացի ակադեմեանք ջանային ճշգրտել ընդհակառակն նախադասութիւնս, երևեցուցեալ թէ ճշմարիտն է սուտ, և սուտն ճշմարիտ։

Պնդէր անաքսագորաս, թէ ձիւնն է սևա. և զենոն՝ թէ ոչինչ շարժի. և կամ թէ չարժի, որպէս երբեմն ընթանայ մրջիւնն, ևս աքաղաղն սաւառնանդակին։

Զինչ

Զինչ թշուառագոյն կայցէ մարմնոյ՝ քան զանձն, և հոգւոյ՝ ք̃ զխելացնորութիւն: Բայց և այնպ̃ սաստապատիր տրամաբանութե̃՝ փառօրինեա զանձն, և Երասմոս զխելացնորութիւն՝ գովեցին ոմ̃ բարի ինչ. երկպառանչեալքն արժանացեալք 'ի հատուցման փոխարինի իւրեանց ներբողենի՝ յանձինս ընդունիլ զիւրեանց գովածն:

Յայտ աղանդոյ է հակառակասէրն. Կամի ասել, թէ լոյսն է խաւար, յասել քո՝ թէ է լուսաւոր: Եւ չէ ինչ նմա փոյթ, թէ նախատակած լիցի ոմ̃ սաստոյց, միայն թէ խրախ լիցի 'ի զայրացուցանել զքեզ՝ հակառակութե̃ քոյ ասից:

Եւ ոչ միայն խրախ լինի՝ յընդդէմ դառնալ ճշմարտուէ քոյ նախադասութեանց ոմ̃ զիմաստակ, այլև թողեալ զէութն իւրն, ձեռնարկէ 'ի քերթողական մանրակրկտութի բառից, յորակ փաղառնութեանց, 'ի շեշտմունս և 'ի կետադրութիւնս. զի առաւել ևս երգիծուցէ զքեզ:

Այսպէս ոմանք քննիչք մանրաքննինք 'ի կարդալ զպատմութիւն Լեւխոսի (պատուեցւոյ). ոչինչ փոյթ կալեալ իմանալ զերևելի անցս հռովմայեցւոց, զանեղի կալան 'ի կշռադատել զբառս ինչ պատուեցւոյ: Անինիոս զկիկերոն, և կարբիղ զվիրգիլիոս՝ իշխեցին դանել քերթողական խարազանաւ, որում ինքեանք էին արժանի. անմտաբար ըստգիւտ արկեալ յոմն ինչ՝ առանց հայելոյ յանձնս Վիրգիլիոս յընթեռնուլ զշարագրութիս Էննիոսի (բանաստեղծի), քաղել ոսկի 'ի աղբոյ. գոյա յընթեռնուլ զվիրգիլիոս՝ քաղէին աւազ յոսկւոյ: Ըստ օրինակի իշամեղուաց՝ թռուցեալ շուրջ զմեղու, թեւակոխէին յանդէան, թողեալ զպխտանին:

Եւ որ չար ևս է, յայտաիմեաց խեշերանաց կշռադատութիւ՝ այնպէս ջերանի հակառակասէրն, մինչև յաղխաղելն խօսից. և դարձադարձ պատասխանատուութեանց՝ յօժարակի լինի յառաջատուէ 'ի բանից 'ի գործ, և 'ի բանակռուէ 'ի սրաշարժուէ: Այսպէս՝ կշռադատուէ կատակերգողի 'ի վ̃ր ոսկի շուշանաց աննիրաղայ կարասի՝ զգրգռեաց զամ̃ զմեղուանաց գիտնաւոր համալսարանի: Կարի

իմն

ինն սուր գրիչք վաղվաղ և պղնձայ հեղին թանաք ըզմ, բայց տաւել ևս արիւն։ Իսկ գոյղն ուղղագրուն վերտառուն արձանին անաքանորայ եարկ հրդեհ պղնձի 'ի մէջ մագնեսիոյ, և շրջակայ քաղաքաց. (162)։

Բայց է և այլ եղանակ՝ թուանշանագոյն ևս քան զհակառակիլն [illegible], այն է հակառակիլ [illegible]։ Գովէ այն որ երբեմն, բայց յարէ յայն [illegible] որ աղաղակէ զգովեստն. Օր. օրինակի մեղուի, որ բարձեալ ունի զմեղր 'ի բերան, և զթոյն 'ի տուտն։ Թէ համբաւի իմաստուն քաջի ուրումն ասենակալի, ասէ. [illegible] կամելով ասել. իմաստուն է նա, բայց անիրաւ։ Եթէ ասի զախինոջէ ումեմնէ լինել գեղեցիկ, 'ի վր բերէ. [illegible]։

Ի՛ զի գովէ՝ գեղեցկաշխուս տաստղութն, բայց հեգնօրէն. կմ ըստ պատեախոսի [illegible]։ Մինչ զի ոչ որ իմանայ՝ գովիցէ արդեօք, թէ պարսաւիցէ, բայց միայն որ ճանաչէ զխորհուրդս մարդկան։

Դարձեալ երբեմն, թէ գովես դու զոք յայժմեանց, նա տաւել ևս գովէ զնախնիս, ոչ զի գովեսցէ զնն, այլ զի ընդվայր հարցէ զասս։ Կամ՝ թէ գովես դու զմի ոք, նա գովէ զմի ոք. զի գովեսցէ և ոչ զոք։ Վն զի. Օր. ասից մարտախաղիսի առ զոյիլոս, [illegible]։

Զհուակն տասցից. թէ գովես դու զոք, նա ինչ ոչ հակառակի, այլ ունչս առնէ, կամ ընդ քիմս ժպտի. և տաւել չարախօսէ լաւել նր քան զխօսել։ Ծաղր նորա և աչք՝ վատանունութեան են նամակք։

Օգեղջկութին, զոր ցուցանէ հակառակաւէրն յիւր խօսս, ցուցանէ և 'ի գործս, [illegible]. զի ոմն բանք, նոյնպէս և գործք նր յառաջ գան 'ի նոյն խակ շարայ անէլութէ առ այլ մարդկան։ Խնդրեա ինչ 'ի նմանէ ծառայուն. Կամ գեղջկօրէն հրաժեշտ տայ, կմ գեղջկօրէն կատարէ. ուր լաւ-

էր

էր հրաժեշտ ինչ շնորհօք, քան շնորհ ինչ գեղջկութիւ: Բայց յատուկ է չարախօսի՝ լինել չարաբար. և անմարթ է բարեբար կոչել զայն՝ որ յոչ կամաց առնէ զբարի:

'Ի տխրութիւն այլոց զուարթանալ՝ յուրախութենն տրամի: Թէ գտանի 'ի կոչունս, հոլովեցուցանէ 'ի սեղան խնձոր գժտութեան, 'ի խռովել զսեղանակցաց միաբանութիւն: Յառաւելուլ ուրախութեան անսյեա միայն յանցանօք 'ի խորտիկս անդ յառնել պատերազմի լապիթաց և կենտաւրոսաց (163). և ըմպանակաց և պնակաց որ 'ի պէտս սեղանոյ, լինել զէն ապառութեան. և գինւոյն ընդ կոկորդս մտելոյ՝ 'ի գուբս հասել Ը վիրաբերանս:

## ԳԼ. Ժ.

## ՅԱՂԱԳՍ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԵԱՆ 'Ի ՄԷՋ ԵՐԿՈՒՑ ԾԱՅՐԻՑ:

Արդ՝ ագեղուն երկուց մոլեկան ծայրեցս յայտնի ծանուցէ քեզ զգեղեցկուն ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ, որ է առաքինութիւն միջասահման 'ի մէջ աւելազանցութեան և պակասութեան:

Որպէս 'ի խառնել մարմինս կան պարզ տարերք, բայց յորակ իւրեանց այնպէս մեղմեալք, որ հուրն ոչ վառէ, և ջուրն ոչ թանայ, նոյնպէս 'ի քաղցրախօսութեան մտանեն երկու գործողութիւնք հակակայք, ՀԱՃՈՅԱՑԱՆՈՒԹԻՒՆ, և ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ. բայց այնպէս բարեխառնեալք՝ որ հաճոյականութիւն ոչ մարգահաճէ, և հակառակութիւն ոչ դառնացուցանէ, և վասն այնր ոչ քակեն զբարեկամութիւն, և ոչ զքաղաքական կենցաղավարութիւն, այլ առաւել հաստատեն և պահեն:

Ոմանք յիմաստասիրաց՝ ուսեալք 'ի հերակլիտոսէ, պնդեցին՝ թէ բարեկամութիւն հիմնի առաւել 'ի ներհակութեան, քան 'ի նմանութեան, յառաջ բերելով զայն առղ բանաստեղծական. ԵՐԻՍ ՔԱՂԱՔԷԱՆ՝ ՊԷՐԷ ՆՈՒԻ ՔԱՐԱՔ: Արիստոտել մերժէ զայս մոլորութիւն նորա իւր զանազանութեամբ: Երբ ներթակայն առէ, է յանպատշաճ տրամագրութեան, սիրէ զիւր ներհականն: Բայց երբ է 'ի պատշաճ տրամագրու-

բութեան, սիրէ զնիւր նմանն։ Վ՟ն 'ի տապանալ մարդոյ 'ի տենդէ, սիրէ զջուր ցուրտ և առատ, բայց թէ է առողջ, սիրէ զջերմխառն ըմպելի։ Եթէ ա՟մ մարդիկ էին 'ի պատշաճ տրամադրութե առ ճշմարիտն և արդարն, ոչ ինչ պաշտօն էր քաղցրախօսին, բայց հաճոյ լինել, և գովել։ Բայց քանզի մեծ մարդկան յոլովակի 'ի բանս կամ 'ի գործս՝ խոտորի 'ի բանաւորէն, պիտի միւս ևս պաշտօն՝ 'ի հակառակիլ նմա, և 'ի յանդիմանել զ՟ պիտելոյ։

Այս՝ ո՟ք տառացս 'ի սկզբան անդ, քաղցրախօսութիւն կամ սիրողութիւն հայի նախ առաջին 'ի ՀԱՃՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ, և ո՟ք թէ զ՟ պատահման 'ի ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ։ Զի այս առաքինութի ենթադրէ, թէ կենցաղավարութիւն է ը՟ մարդկան, որք են 'ի պատշաճ տրամադրութե առ ճշմարիտն և արդարն՝ 'ի գործս իւրեանց, և 'ի բանս. և առ սոսա ուղղակի կարգէ զնիւր խօսս. բայց թէ լսէ կամ տեսանէ ինչ ներհակն, 'ի վեր արկանէ զմիւս պաշտօն։ Բայց յերկաքանչիւրն պահէ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ և ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ, զանեղի առնել 'ի կողմ բանաւորութե, ոչինչ զարտուղեալ՝ ոչ 'ի գծծութիւն մարդահաճոյին, և ոչ յապարասանութիւն հկ՟կասիրին. որք առացան. և այս է մէջն առաքինութե։

Ապա քաղցրախօսն չունի գրգիռ զնիւր օգուտն՝ իբրև զմարդահաճոյն, և ոչ զայլոց խոժոռումն՝ իբրև զհակառակասէրն, այլ՝ զհամեստն և զպատշաճականն։ Վ՟ զի քաղցրախօսութիւն է կարողական մասն արդարութե, որ ուսուցանէ հաճոյ լինել ամենեցուն, որչափ հնար է։ Որ ոք չունի զայդ վախճան, չունի զայս առաքինութիւն։

Այս ամենեցուն է հաճոյական, բայց ոչ ամենեցուն նոյն օրինակաւ։ Ընդ բարեկամս է մտերիմ. ընդ ստորադրեալս քաղցր. ընդ վերնադրեալս հլու, ընդ ծերս ծանրակաց, ընդ երիտասարդս զուարթ. ընդ տղայս և դդուող։

Ադեսիղայոս արքայ ոչ ամօթ համարէր խայտալ ը՟ իւր մանկունս, յաշտանակել ը՟ նո՟ յեղեգունս, և 'ի հարկանել տաւիղս։ Եւ 'ի զարմանալ ուրումն

'ի վե՟

'ի վ͞ր թեթեւութեցս յանձն մեծի արքայի, եւ պ͞տուխնի։ ԶԳԻՏԵՍ ՈՒՐԵՔ, ՇԻՆՉ ԻՇԷ ԼԻՆԵԼ ՀՈՅՐ։

Իսկ եւ առ թշնամիս լինի հաճոյական եւ քաղցրախօս. եւ ոչ փոքր յաղթութիս կատարէ՝ 'ի շահիլ զսիրտ նց հաճուք, քան 'ի յաղթել բանուն նց քաջութ։ Շիպիոն իւրով ընտիր քաղցրախօսութբ հաշտեցոյց զհռովմայեցիս զվիրադն սփակ, զորոյ ոչինչ բանուք կամ աշխարհութեամբ կարող էր զերծուլ զընդարոյս ատելութիւն եւ զխռժդժութիւն։

Ահայ արդ տեսանել, թէ որով օրինակաւ բերիցի քաղցրախօսն առ մարդահաճոյն, եւ առ հակառակասէրն, որք են իւր մեծ թշնամիք, թշնամիք գոլով իւրում առաքինութեն։

Քաղաքական կենցաղավարուն է փոխադարձ հաղորդուն ինչ խորհրդոց. որպէս բարեկամուն է փոխադարձ հաղորդուն ինչ ախորժակաց։

Վնզ քաղցրախօսն սիրէ հաճիլ, եւ հաճոյ լինել, ով որ սիրէն՝ կամի զի փոխարէն սիրեսցի։ Նոյնպէս սիրէ հակառակիլ, եւ հակառակութիւն ընդունիլ. զի վիճելն սրէ զմիտս, վէճ եւ բերկրեցուցանէ։

Կեղեոս անուանի ատենաբանն՝ հանդերձեալ ջատագովել զոմն՝ որ ապատան էր 'ի նա, առաջի ատենի նմա զիւր փաստս. որոյ՝ ապատանն ոչինչ ընդդէմ դարձեալ, ասմի տայր հաւանութիւն։ Վէյ բարկացեալ կեղեոսի. ասէ. ՄՈՄ ԻՆՉ ԻՆՉ ԸՆՏ ՏԷՄ. ՉԻ ԳԷԾ ՅՈՅԺՆԷՈՑԻ, ՌԷ ԷՄ+ ԷՐԷՈՈ. (164)։

Բայց՝ եթէ 'ի գովելն, եւ եթէ 'ի հակառակիլն, պահէ զօրէնս վայելչականութն, որպս ասացաւ։ Ո՛չ մարդահաճէ նա. զի ոչ գովէ առ իւր օգուտ. եւ թէ այլ գովուն փոքու իմն առաւելեալ քան զճշմարիտն, չէ այն մարդահաճուն, այլ՝ է խաղ. զի վերաթողութբ իմն՝ յայտնէ զիսկն։

Սիրէ նա զգովուն, այլ ոչ զմարդահաճուն. զի ոչ համարի գովուն զայն, որ գայ 'ի վարձուոր գովչէ. եւ ոչ զայն՝ որ առ հաճելոյ զունկն՝ դիմախօսէ ճշմարտուն։ Բայց իբրեւ իմանայ նա՝ թէ մարդահաճուն ընդունի, ոչ թքանէ յերեսս մարդա֊

դահամոյին իբրև զկատարուկիտս, զի աւելադան-ցուն մարդավարուն չէ արժան փոխարինել գեղջ-կուն. այլ քաղցրիկ ինչ կծանօք մերժէ զմարդա-հաճուին՝ տանից թշնամանելոյ զմարդահաճոյն, ցուցեալ զանձն քաղցրախօս և առ նա իսկ։

Սարատոնիկ մեծանուն քնարահար, մարդահաճոյի ումեմն՝ որ վերադասէր զնա քան զորփէոս և քան զլ̃ծն տաղողն, թեկն ածեալ՝ ետ պատասխանի. Բարեկամ, ես քան զքեզ առաւել եմ։ Գեղեցիկ օրինակ մերժելոյ զմարդահաճուն է չտալ նմա ինչ։ Նուա-գածուն նանրայոյց զձայն գովչին, զի չհնչեցոյց նմա ձայն արծաթոյ։

Բայց զուարթառատ իշխանաւորի չէ քաղցրախօ-սուն այդ պատասխանի։ Մերոց իշխանաց կնիք է ձեռն ոսկի. ո՛ն պեղոպայ քամակ փղոսկրեայ.(165): Գուքսն էմմանուէլ փիլիբերտ, առատաձեռն՝ և զուարճախօս, բանաստեղծի ումեմն օտարականի, որ առմառոյց նմա շողոմաքան ինչ քերթուած անուն, հրամայեաց տալ յիսուն դահեկան. ասէ. Քաջ բա-նաստեղծ է դա. զի խրատեաց զինեն, թէ որ ինչ եմ, այն որդիոյ պարտ է ինձ լինել։ Եդիտ իշխանն հնար հան-ճարաւոր վարձատրելոյ զքերթուածն նր̃, բայց 'ի սուտ եհան զմարդահաճոյն։ Քանզի այս ինչ է̃-մէջ է բանաստեղծին և պատմաբանին. զի պատ-մաբանն գրէ, որ ինչ է. իսկ բանաստեղծն, որ ինչ լինել մարթ էր կամ պարտ էր։

Քաղցրախօս երևի և առ հեշտկասէրն. թէպէտ և այս մոլութի արժանի է կշտամբուե՛ քան քաղցր խօսից. իբրաւացի ինձ գովել, թէ որ ասէ՝ զոր կամի, լուիցէ՝ զոր ոչն կամի։ Բայց քաղցրախօսն գտանէ եղանակ հեղիկ փոխադարձի կծանաց չա-րախօսի։

Արիստիպպոս էր մեծ փիլիսոփայ, միանգամայն և մեծ պալատական. ուստի և առելի ոմ փիլի-սոփայից. զի մարդահաճութի̃ն առ դիոնեսիոս բռնաւոր՝ արար զիմաստասիրութին պատառաքաղ բաղմախորտիկ սեղանոյ։ Յանդանել ո̃ր ընդ եր-կայնաձիգ վտակ, ուր աղքատն դիոգինէս լուա-նայր զխոտ ընդեղէնս, ասէ ցնա. Թէ դու նա ես մար-

դա

[illegible]։ Որում անգէն վաղվաղակի գիտգինես եւ պատասխանի. [illegible]։

Բայց առաջնորդագոյն կանոն համարեալ է՝ չգրգռել կծանօք զխայթ չարախօսաց. զի մի՛, որպէս ասէր պիւթագորաս, յարծարծանել զհրոյն ուննելեօք՝ կայծակունք յաչաց արձակեսցին։ Վասն այսորիկ լաւ է զխօսսն խափանել, կամ յայլ զրոյց շրջել։ Զենոնի հանդիպեալ 'ի խնջոյս ուրեք, ուր էր մի 'ի [illegible]՝ զոր ճանաչէր, իբրեւ հարցաւ 'ի նմանէ, թէ առաքինութիւն իցէ բարի, խոժոռադէմ ետ պատասխանի. ոչ. եւ չոքաւ 'ի բաց։ Ծանեաւ զենոն, թէ այն հակառակասէր ոգի կամէր մտանել ը նմա 'ի վէճ։

Բայց եւս քաղցրախօս գտաւ այլ ոմն. որ 'ի հարցանել այլոյ ուրումն հակառակասիրի. [illegible]. ժպտելով ետ պատասխանի. [illegible]. եւ չոքաւ 'ի բաց։ Այլ քան զամ քաջ է խրատն, զոր տայ մեզ արիստոտէլ, փախչել յայսպիսեաց ատենի. զի մի՛ վիճեսցուք ը նոսա, կամ նմանօղ լիցուք նց։

## Գ. Լ. ԺԱ.

### Թ.է [illegible]։

Ծանօթագոյն է անուամբ եւ գործածութը, քան սեպհական սահմանաւ, այն ազնուական առաքինութի՝ որ առ ազնուազգիս եւ պալատականս կոչի [illegible]։

Նաեւ եւ այլովք յորդական անուամբք. որ ծաւալ եւ որ ամփոփ, նկարագրեցաւ մեզ այս գեղեցիկ առաքինութի։ Վս զի զօրօրինակ բարոյական առաքինութեանց հնրկ օրինօք ստացանին դաստիարակութբ, եւ առա գործածութբ կմ սովորութբ, այնպէս սա հանրական անուամբ կոչեցաւ [illegible], [illegible], ոմ այլ ամ առաքինական ունակութեանց։

Բայց

Բայց քանզի է սա մասնաւորապէս սովորութիւն ինչ ազնուական, զոր չէք ուսանիլ կամ 'ի գործ ածել 'ի գեօղս ի ռամկաբարբառս և ընդ գեղջուկս, այլ յազնուական քաղաքս և 'ի քաղաքական կենցաղավարութիս, վասն կոչեցաւ և քաղաքավարութիւն, կամ քաղաքայնութիւն. որ են նոյն։

Նա՛ վս զի առանձինն իմն միտ գնի այսմ յապարանս մեծամեծաց 'ի մէջ ազնուական արանց և կանանց, յառակագոյն եւս անուամբ կոչի պալատականութիւն և ազնուաբարոյութիւն, այլև բարեկրթութիւն։ Եւ բարեձև կոչին բարեբարոյք, որպէս թէ պահօղք քաղաքականութեան օրինաց. զորս նմ ազնուազգի պատանիք առ հաճոյանալոյ 'ի դրունս մեծամեծաց՝ պարտին գիտել։

Զսորին հակառակն՝ վերջացեալքն յայսմ առաքինութէ, թէպէտ և իցեն ազնուատոհմ, նախատական անուամբք լինին յառակս, թէ այն ոք է մար-տի. անքաղաքավար, ռամիկ, և ռամկաբարոյ։

Բայց թէպէտ և այժմուս նմ ոք իշխէ սովորանիլ զայլս՝ որպէս վարժապետ մարդավարութեան, ասելով. Այս ինչ է մարդութիւն. այս ինչ՝ անքաղաքավարութիւն։ Այն ինչ ընտանի է. և ոչ ազնուական։ Այն ոք խօսէ 'ի գեղջ լինել, և ոչ յապարանս։ Սակայն և այնպէս՝ ուսուցանել զքաջ մարդավարութիւն, կամ սովորանել զամարդութիւն, է յոյժ դիւրին. քան փակել ընդ որոշ սահմանաւ, թէ զինչ իցէ քաջ մարդավարութիւն։

Զգուշանի 'կ վն այսր յայտնի ինչ լոյս առ նախնի իմաստասէրս։ Զի որովհետև իմաստասիրական կեանք սիրեին յոմն զազատութի՝ ուսոմ և զվայելչութի և զառանձնութի, չեղև ինչ նոցա փոյթ՝ կեանս վարել զօրէն այլոց, կամ նմանակել զբարս իւրեանց պալատական օրինաց, այլ միայն իւրեանց խղճի մտաց, որ քաջ օրէնսդիրն էր նց. որպէս և լուար։ Վասն առ անբասիր առնել զոք 'ի ամարդութէ և յանքաղաքավարութէ, սովորութի է ասել, թէ իմաստասէր է նա։ Թէպէտ յիրաւի է խարել 'ի մէջ փիլիսոփայի և փիլիսոփայի. 'ի մէջ արիստիպպոսի յապարանս բնակելոյ, և 'ի մէջ կինիկոսի բնակե,

կելոյ 'ի կարսան:

Բայց զգօնամիտն այն հռովմայեցի (որ է Ովիդիոս բանաստեղծն), որ գրեաց զարուեստ սիրելի լինելոյ, զոր ինքն չեած 'ի գործ առ Օգոստոս տէր իւր, յապահովագոյն և յազդողագոյն զաղտնիս այնր սիրողական թովչութեն որոյ՝ ուսոյց զայս, թէ սիրողն լիցի քաջ մարդավար, զզուելով յամ գեղջուկ և յանքաղաքավար գործոց. որպիսի են, սանրել զհեր, յարդարել զպարանոցն, և հատանել զեղնգունս ատաքին յարգելուլ անդամոց: Վ՛ն զի ասէ, բաղում ինչ հաճոյ է թէ կանխաւ լեալ իցէ, այլ ոչ յորժամ լինի:

Ստգտանէ և զինծաղելի բարբառոյն, ապաժաբոց և ընդերձագոյ, իբրև զրահանաց զանիրոզ: Այդ տանէ, թէ փարազանցին 'ի գնացս մի իցէ անհեթեթ և խոժոռ, այլ ծանր և բարեյև: Եւ զերաձևոյն առնել ծայրիւ հա_ զին, և լռաթանել զգաձն բոլ անձի անսանոց: Եւ լե_ րեիլ առաւել այլոց հրապարել. և խոհատապէմ, ցոյցել յե_ րեալ նիւ առեղութե և ու ոխրոյ:

Այլև զուարթագին այն ոգի՝ մաերիմ այեստացուց, (այն է Լուդովիկոս Արիոստոս բանաստեղծ իտալացի) 'ի քաղել յիւրում հարսներգութե զզէնս, և զսէր ազնուազգեաց՝ առ ժամանակք Կարոլոսի մեծի, խառնեաց զգործս քաջազանց, որք հայլին յուրիւթեն զինուորական, ընդ զուարթախնութեան և ազնուաբարոյութեան, որք հայլին 'ի քաղաքականութեն ապարանից: Զի արիութեն սեպհական է երկնցուցանել, և քաղաքականութեն՝ սիրելի լինել:

Եւ զայս յամ ժամանակի այս առաքինութի համարեցաւ բնական՝ և ոչ թէ եկամուտ ինչ յատկութի ազնուազգեաց, և պալատականաց: Բայց յանցելում դարի՝ վասն խժդժական անցից, որք լուծին ցրեցին զամ մարդկային ընկերութի, իբրև վտարեցաւ յԻտալիոյ ամ բարեբարոյութ, ծնաւ վերստին յաշխարհս կատուիլ նորոգիչ բարուց, յանձն իմաստնոյն Յովհաննու Գաղայեանց: Ծնեալ նր և սնեալ 'ի Փլովրենտիա քաղաքի, որ սառուցարանութբ անուանն, և գերապանծութբ թաղից, և ազնըւականութբ քաղաքացւոց, յիրաւի կոչեցաւ ծաղիկ

քա_

քաղաքաց Իտալիոյ. և մանր կրկնեալ նորա զա͞մ զընդդիմակս քաջի մարդավարութե, 'ի լոյս ընծայեալ գրքոյկ ինչ՝ իբրև փոքրիկ հայելի քաջի մարդավարութե, և մեծ խարազան ամարդութե. որում և անուն կոչեալ Խուդէան։

Այնչափ զօրութ͞ ընդունելի եղև ա͞մ Իտալիոյ այն աղնուական երկասիրութի, մինչ ոչ միայն տանուտեարց և ուսուցչաց, այլև վարչաց համալսարանաց, և մանկավարժից իշխանաղնից վարել զայն 'ի պէտս՝ իբրև զկանոն պողիկղետոսի, յուղղել զբարս և զմարդավարութի իւրեանց համբակաց. որոց չառ էր ասել. այդ գործ ընդդէմ է Խուդէանի։

Այլ թէպէտ և 'ի վ͞ր նիւթոյս բ͞զմ ինչ խօսեցաւ նա՝ գեղեցիկ և ընտրական, սակայն չեք գտանել 'ի ճառս ն͞ր զգիտնական սահման այսր առաքինութե. և ո՛չ թէ իւ զանազանիցի յայլոց տեսակաւ, և ո՛չ թէ յո՞ր վայր գտանիցի նա 'ի դասակարգի բարոյական առաքինութեց, և ո՛չ թէ ո՞ր իցեն որոշակի իւր ծայրք։ Ուր արժան էր և զայս եւս առաքինութիւն յեռուլ յայնս. և իմաստասիրաբար քննել սկզբամբք բարոյական գիտութե։

Վ͞ս զի թէպէտ և յաչս ռամկաց՝ ո՛չ այսր առաքինութե պիտանութի, և ո՛չ հակակայի ն͞ր մոլութե՛ իմա՝ երևին մեծ ինչ առ կեանս մարդկան, բայց և այնպէս ստոյգ իմն է, թէ մեծ ինչ են առ կեանս քաղաքական։ Զի զօրինակ 'ի փոքր նշանաց գիմաց՝ հմուտ բնագիտնիք ճանաչեն զխառնուած մարմնոց, նոյնպէս 'ի քաջ մարդավարութէ և 'ի ամարդութե՝ խոհեմք ճանաչեն զբարս հոգւոյ։ Եւ անտարակոյս այս եղև իմաստ իմաստնագունին 'ի մարդկանէ, յայն բան ն͞ր գրոց. Զգեստ հանդերձոյ, և ծաղր ատամանց. և գնացք մարդոյ պատմեն զնմանէ. (Սիրաք. ԺԹ. 27։)

Ըստ վ͞ս այսց պատճառաց՝ պատշաճ վարկուցեալ իմ. 'ի վ͞ր այսորիկ եւս խորհուրդ հարցանել մերում պատգամախօսի (ՌԹ արխատակելի), որ զմ͞ն խօսի. 'ի մեր առ ի՞ թէ քաջ մարդավարութիւն կ͞մ քաղաքականութե փակի յերիս նախայիշատակեալ առաքինութիւ, որք համեմեն զքաղաքական կեն-

կենցաղավարութիւն, այն է ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԵԱՄԲ, ՃՇՄԱՐՏԱ_
ԽՕՍՈՒԹԵԱՄԲ և ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՄԲ: Բայց յերեցունց միջի՛
փակի նա յառակապէս յառաջնումն. որ առարկայ
ունելով զհաճոյանալն յիրս ստուգութե այնոցիկ՛
ընդ որս կենցաղիմք, կոչեցաւ ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ,
[illegible] և ՀԱՃՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ:

ԱՅԼ յայսմ վայրի յիրաւի է յուշ առնել քեզ, թէ
արիստոտել 'ի քաղցրախօսութեան հայեցաւ առաւել
ը̄ հաճոյականութիւն 'ի ԳՈՎԵԼ և 'ի ՀԱՒԱՆԵԼ խմաստից
այլոց. ոչ գեղջկօրէն հեռակելով, և ոչ անարգաբար
մարդահաճելով: Բայց թէպէտ և այս է գլխա_
ւոր գործ քաղցրախօսութեան, սակայն և այնչ անուն
իւր ոչ պարագրէ զնա զծիր իւրոյ պարունակի.
այլ և անուանք արխուն և առատաձեռնութեան ար_
տայայտեն զէականագոյն մասն այնց առաքինու_
թեանց, թողեալ գիտնական սահմանին բացատրել
զմնացուածն:

Արդ ըստ այսմ եթէ հայիմք 'ի ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԵԱՆԴ
անուն, որ արտայայտէ ըստ հնչման ձայնին զեղա_
նակ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ, թուի թէ ամփոփէ նա զքաջ
մարդավարութիւն՝ միայն 'ի ՀԱՃՈՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ խօսից:
Բայց բաց 'ի խօսից՝ քաղցրախօսութիւն տարածի և
'ի ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑ ԳՐՈՒԵՑ, հաճոյանալով այլոց և յող_
ջունագիրս առաքելս ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՐԳԱՆՕՔ, և ՍԷՐԵՂ
ՍԻՐՏԱՌԱՏԱՆՕՔ 'ի մակագրութիւնս, և ՊԱՏԿԱՌԱՆՕՔ և ԽՈ_
ՆԱՐՀԱԿԱՆ ՆՇԱՆՕՔ 'ի ստորագրութիւնս. սակայն պա_
հելով այնպիսի ինչ վայելչականութիւն, զի կարի ինչ
հաճոյականութիւն մի փոխեսցի 'ի քաղցրութեն աղի:
Նա՛ նոյն իսկ քաղցրախօսութիւն տարածէ զհաճոյա_
կանութիւն և առ ամ ԱՐՏԱՔԻՆ և ԱՆՏԱՐԲԵՐ ԳՈՐԾՍ քաղա_
քական կենցաղավարութեն: Զի զորօրինակ հնար
է մարդահաճել, և հակառակն խօսիւք, նշանօք,
և գործովք, որպէս ցուցաւ, նոյնպէս հնար է խօ_
սիւք, նշանօք, և գործովք վարել զքաղցրախօ_
սութի, որ է միջասահման 'ի մէջ մարդահաճութեն
և հակառակին:

Ասացի — ԱՆՏԱՐԲԵՐ ԳՈՐԾՍ: Վն զի տատանօք ոչ
են մեր բանք զգործոյ՝ որ 'ի բնէ են չարք, այլ
զգործոց, զորս առանց յանցաւորութեն մարթ է
գոր-

գործել գեղջկօրէն և յոչ հաճոյս, կամ ազնուօ-
րէն և 'ի հաճոյս:

Նոյնպէս քաղաքականութիւն մարդավարուն չէ օրէն քաղաքական, որ կանոնաւորէ զգաշինս արդարութ. այլ՝ օրէն ինչ [illegible], որ կանոնաւորէ զեղանակ գործողութեանց հաճոյականութ: Այն կոչի ընկերու-
թիւն. և սա կենցաղավարութիւն:

Ապա փոյթ յանձին կալցի քաղցրախօսն, զի մի միայն իւր խօսք, գործառնութիւնք, և [illegible], այլ և շարժմունք իւր և ծիծաղ, և յառնել և նստել և գնալ, և [illegible] և յօրինել, և [illegible] և խաղալ, և [illegible], և այլ ամ անտարբեր գործք, որք լինին 'ի կենցաղավարութ քաղաքայնոց, լիցին այնպիսի քաղաքավարութ. որ ոչ միայն ոչ զզուեցեն, այլև
հաճոյ լիցին տեսողաց:

Արդ՝ այս ամ է [illegible] քաղցրախօսութե, ամե է հաճոյականութե ասպինական. ամե է [illegible] և [illegible], որ 'ի պատուաւոր կենցաղավարութես շնորհէ հաճոյս, և ըստ սեր իւր զօրին հակառակն՝ որ ամարդի է յայամ ամ խորշելի և զզուելի է ազնուական անձանց՝ որպէս
անքաղաքավար:

Ապա ձեռնարկել 'ի յայանի ինչ սահման, ասեմք. [illegible] է նոյն ինչ [illegible], ընդ այնմ որ 'ի քաղաքական կենցաղավարութե [illegible] այլոց՝ [illegible], և հրահանգ 'ի բանս և 'ի
գործս՝ ընդ [illegible]:

Յայսմ սահմանէ մարթ է քեզ նախ ճանաչել, թէ լինել ամարդի՝ ոչ նշանակէ լինել [illegible], գող կամ [illegible]. և զօրին հակառակն, լինել մարդա-
վար՝ ոչ նշանակէ լինել [illegible], կամ [illegible]: Վա զի այս մոլութիւնք. և այս առաքինութիւնք ունին այլ առարկայս, և սեպհական անուանս, և յատուկ սահմանս: Իսկ մարդավարութին չունի զայլ անուն, բայց զքաղցրախօս հաճոյականութե. և ոչ զայլ օրէն, բայց զազնուաբարոյութի: Իւ-
րականին յայնմանէ չէ յանցանք. վա զի ոչ ծնա-
նի 'ի չարութէ, այլ՝ 'ի տգիտութէ, և վասն այնր չէ արժանի այլում պատուհասի, բայց զզուանաց և

քա-

քամահանաց:

Մարթիս ճանաչել և ես, թէ քաջ մարդավարութիւն ոչ վերաբերի տիրապէս, ո՛չ 'ի ճշմարտախօսութենէ, և ոչ 'ի զուարճախօսութենէ, այլ 'ի քաղցրախօսութենէ: Ո՛չ 'ի ճշմարտախօսութենէ, զի լինել ճշմարտախօս և ոչ ստախօս, է օրէնք բնական, եդեալ 'ի վերայ ամ մարդոյ, եթէ ազնուականի, և եթէ շինականի: Բայց լինել քաղցրախօս և քաջ մարդավար, է օրէնք քաղաքական և պալատական պատշաճողուն. որ ոչ պատշաճի շինականի, որպէս և ոչ քղամիդ՝ կապկի:

Ոչ վերաբերի և 'ի զուարճախօսութենէ տիրաբար. զի թէպէտ զուարճախօսութիւն 'ի կենցաղավարութեա է հաճոյական, բայց հաճոյ է յայնժամ որ ընդ խաղ հիւսեալ 'ի տգեղութենէ ինչ ընդդէմ վայելչականութենէ, որ տացի յիւրում տեղւոջ. բայց քաղցրախօսութիւն հաճոյ է յանկատակին և 'ի վայելչականն. և այն է քաջ մարդավարութն:

Նա ոչ վայրապար յաւելաւ 'ի սահմանի անդ վայելչականութեան. որ հայի 'ի տեղին, 'ի ժամանակն, և յանձինս: Զի այլ մարդավարութիւնք 'ի գործ ածին 'ի մէջ շինականաց և շինականաց. և այլ 'ի մէջ ազնուականաց և ազնուականաց: Ուստի է ինչ գործ յընտանեաց միջի սովորուն, որ յազնուականաց միջի է գեղջկութն: Նա՛ յազնուականաց միջի իսկ՝ ինչ ինչ 'ի գեօղս, և յորս ընդ խաղ՝ չէ հրաժարական, որ յանկատակս և յապարանս է ստգտանելի: Նա ինչ ինչ 'ի սերտ բարեկամաց միջի է համարձակուն, որ առաջի օտարականաց է անքաղաքավարութիւն: Զի բարեկամն է միւս ինքն. և իւր ինքեան ոչ որ դնէ նախատինս:

Թո՛ղ զայն, զի ինչ ինչ յերկրի ուրեք է անքաղաքավարութն, որ յայլում երկրի է քաջ քաղաքավարութն: 'Ի քաղաքս ինչ իտալիոյ, վ͞ս զի են սըղմուա, պատուաւոր տեղի գնայցես՝ է առ որմով. իսկ յայլ քաղաքս ողորկս և ցամաքս՝ պատուաւոր տեղի է աջակողմն: Յարեւմուտս մեծարանք են այլում՝ բանալ զգլուխ. և բանալ զգլուխ յարեւելս է անքաղաքավարութն: Հանել զհողաթափս

*թափս առաջի հարկաւոր անձին, է գեղջկութիւն. և յերկիրս ինչ հնդկաց է այն պատուաւոր ողջունատուութիւն:*

*Այս չափ քաղաքավարութ է* հայնէլլեանն. *և չիք ուսանել զվայելչականն, բայց եթէ մատուորութ, կամ ընթերցմամբ, և կամ կենակցութ ընդ քաղաքավար անձինս:*

*Բայց առաւելապէս 'ի բուն իսկ սահմանէն մարթ է քեզ 'ի միտ առնուլ, թէ* որով օրինակաւ գործիցէ քաջ մարդավարն: *Զի որովհետև ասացաւ, թէ քաջ մարդավարութիւն հաստատեալ է 'ի բանս և 'ի գործս հրահանգս և հաճոյականս, կրկնակի յառաջանայ քաջ մարդավարն: Մի՛ զգուշացեալ չերևեցուցանել 'ի գործս և 'ի բանս* արարեալ ինչ, *որ պատուաւոր անձանց կենցաղակցաց բերիցէ նողկանս և տհաճութիւն: Այլ և եկի՛ ջանացեալ, զի իւր բանք և գործք երևեսցին նոցա իրք հաճոյականք և ազնուականք՝ վայելչականութ:*

*Այս 'ի* նողկալեաց անտի և յանքաղաքականաց *ոմանք անհաճոյ են* աչաց, *և այլոց* արտաքին զգայութեանց. *ոմանք անհաճոյ են* ներքին զգայութեանց, *իբր երևակայութե և կրից. և ոմանք անհաճոյ են* բանի, *իբր մտաց և կամաց:*

*Թէ ակն յանդիման առնես դու անձանց քաղաքայնոց* արարեալ ինչ աղտեղի և զզուելի, *այդ է մեծ գեղջկութե: Վա՛յ զի աչքն է ճոխագոյն 'ի զգայարանս, և զբաղում ինչ՝ ըստ ասից արիստոտելի, լաւ է չտեսանել քան տեսանել:*

*'Նոյնպէս, վա՛յ զի սխրծագոյն առարկայ ականջ՝ է* հաճոյութեան իրաց. *մեծապէս անհաճոյ է առբաղ զգեստուց փերևեթեալ և օտարոտի, կամ տարբաղ անձին անշնորհ և անվայելուչ յանկելիս, 'ի նիստս, և 'ի շարժմունս. որպէս որք 'ի գնալն ատամնդեն զբաղուկս, ոմն թէ սերմանիցեն յանդի. և այլք 'ի խօսելն շարժելեն զգլուխ, ոմն թէ խօսիցին 'ի նաւակէ՝ որ կայ յերերի:*

*Այն և առարկայք ինչ անհաճոյ* ըմպելեաց. *ոմն՝ փող հարկանել 'ի փռնչելն, կամ սուլել և չչել՝ իբրև զանդեորգս յանդի. կամ ծիծաղել կարկաչաձայն,*

*կամ*

կամ կրճտել զատամունս իբրև զկինն կատաղի · կամ առնել զընդգիւն , մինչ այլք խօսին՝ կամ ՚ի քուն են :

Այն և առարկայք ինչ անհաճոյ հոտոտելեաց · որպէս հոտոտեցուցանել նեխեալ ինչ · կամ շիջուցանել զճրագ փչմամբ · կամ ՚ի խօսելն մօտել զերեսս յայլոյ երեսս , շունչ ՚ի փորոտեաց ՚ի վեր բերելով , ոպ̄ և յետ ուտելոյ և ըմպելոյ զորահատս : Եւ ոչինչ օգտէ յանձին կրել մուշկ և բուրեան · զի ըղ̄ ասից մարտիալիսի առ ոմն ՚ի ռեկնոսաց , ոչ միշտ անոյշ հոտ առնու , որ միշտ է յանուշահոտութեան :

Զնոյն ասելի է և զայլոց երկու զգայարանաց : Մարթ է թէ անհաճոյ լիցի ճաշակի ազնուական անձանց՝ համեմել զկերակուրս իւիք , որ բերէ կծուութիւն կամ զզուանս · կմ̄ ատիպել գեղջուկ քաղաքականութ̄ յարբումն ընդդէմ կամաց · կմ̄ մխել զձեռն ՚ի սկաւառակս յառաջ քան զերիցագոյնս · կամ առնուլ ձեռամբ զկերակուրն ՚ի մատուցանել սեղանակցաց , զի այդպիսի գործք տաղտկալի են փափկանկաց :

Իսկ ՚ի շօշափելեաց մասին , աստ ոչ են բանք ըղչխոցելոյ կամ զչհարկանելոյ զայլս · զի ոպ̄ աստցաւ , ամօրդութին չէ չարուն : Բայց հնար է թէ ՚ի մէջ անկանիցի ինչ ինչ գեղջուկ , ՚ի խթել կմ̄ յընդհարկանել ը̄ այլս անզգաստուբ̄ , կմ̄ ՚ի հասացանել զձեռն յերեսս պատուաւոր անձանց ՚ի սրբել զբիծ ինչ · կմ̄ գգուելով զայլս անշնորհաբար , իբրև զէշն եզովպոսի , որոյ վերաւել զտէր՝ գիրկս արկանել ըն̄ իւրում նստելոյ , զաթոռն և զտ̄ր իւր յերկիր կործանեաց :

Արդ եկեսցուք յառարկայս , որք անհաճոյ են երևակայութեան կմ̄ յիշին : Մեծ գեղջկութի է անուանել զամօթալիս կմ̄ զնողկալիս , ՚ի պատուաւոր կենցաղավարութեն : Զի զնոյն իսկ զզուումն՝ զոր զգան աչք ՚ի տեսանել զայնպիսի առարկայս , զգայ և երևակայութիւնն ՚ի լսել զայնց անուանս · զի անուանքն են պատկերք իրաց , որք տպաւորին ՚ի հասարակ զգայութիւնն :

Նոյնպէս անհաճոյ է երևակայութեան յիշողութեան

ան

անցից ինչ, որ եղեն 'ի ստորանս և յամօթ ուրուք որ երբեմն լինի Լուսաւորէ առ. երգիծուցանել զայն, որոյ կսկիծ է 'ի սիրտ. և երբեմն Անմտածութե։ Այն է Նախատինք, և այս Անարգանաձաւորութիւն, որ և կատակածոտաց մեծապէս է անհաճոյ, և զժգմնին ընդ այն։ Այսպէս տիեզերիս 'ի լսել զանուն կղզւոյն Հռոդոսի, անդէն վաղվաղակի կարծէր՝ թէ 'ի դէմս անէին նմա զաքսորանս, որում դառնութի̃ տարաւ։ Եւ եւտրոպիոս հիւպատոս, որ էր ներքինի, և 'ի շղթայակապ գերուէ ամբարձեալ յաւագամեծար իշխանութի, 'ի լսել զանուն սաներաց և շղթայից, կարծէր թէ 'ի դէմս անէին նմա զգործիս իւրոյ անարգութե. որոյ մասնաւորութեց քաջ մարգարէին միտ դնէ. այլ անքաղաքավարն ոչ մտադրէ։

'Ի Զգայական Երից մասին, ամարդի է այն՝ որ տխրեցուցանէ Զուարթութիւն ուրուք. որպէս գեղջուկն այն, որ 'ի զօրացուցանել հերակլեայ զսիրտ իւր 'ի մեծապատրաստ ընթրիս յետ տունջենային աշխատութեց ը̃ դէմ գիմնգեայ, անմտաբար եա նմա զգոյժ մահուն աղկեստեայ. զոր ազնուի մարգավար հիւրընկալն ծածկեալ էր 'ի նմանէ (166)։ Եւ զորին հակառակն, թէ ոք մեծապէս է վշտացեալ վն̃ ցաւագին ինչ պատահարի, մինչ դեռ եւս է հարուածն, ամարդութիւն է խօսիլ ը̃ նմա զուարթերես առանց ինչ ցաւակցութեն նշանի. կամ այնպիսի առնել ցաւակցութիւն, որ փոխանակ նուազելոյ զցաւն՝ և եւս յաւելուցու։ Կամ ցաւակցիլ այնչափ անագան, մինչև ցածուցեալ ցաւոյն վէրատին նորոգիլ։ Իբր թերէացիք. որոց տիեզերիս եա պատասխանի. և ես ցաւակից եմ ձեզ վասն մահուն հերակլեայ (հազարաւոր ամբ յառաջ մեռելոյ)։

Մնան արդ առարկայք, որք անհաճոյ են Մտաց և Կամաց։ Շուրջ զառաջնովն ասպարէն լայնար, թէ մոլութիւն առնել գեղջուկ՝ և թշնամի քաղցրախօսութեան, է Հակառակել Կարծեաց այլոց։ Վասն զի իւրաքանչիւր ոք սիրէ զիւր կարծիս որպէս զիւր ծնունդս։

Նա ոչ փոքր անքաղաքավարութիւն լինի խափանել զճառս խօսողին, կամ 'ի քուն լինել՝ և կամ յօրանջել 'ի խօսիլ նորա ։ Զի այսուիկ ցուցանես, թէ չես հաճեալ, նա՛ արհամարհես և յոչինչ համարիս զխօսս նորա ։

Իսկ շուրջ զհամօք՝ յետին անքաղաքավարութիւն է հառաչել այսպէս խօսոց ոչ վն իւրոյ ինչ օգտի, այլ՝ վասն բնաւոր իմն գեղջկութեն ։ Այլ չիմանամք լինիցի՝ զետեղեալ իւրովք մասամբ մանկամբք առ. նն եկաւորելոյ, և պարզելոյ 'ի ծառայս, չթողացուցանելին ըմպել զջուր լմին, վն և (լն ասից առաջելարկութ) արժանաւոր փոխեցան 'ի գործս, զի միշտ արբցեն՝ զոր այլոց զլանային (167) ։

Նա վն զի ամ մարդ պատուաւոր՝ բնաւորապէս ըղձանայ պահել զիւր պատիւ և զաստիճան, գեղջկուն է ամենեին, և հակառակ վայելչուն, ըմբռնել զարժանաւորս, կամ առնուլ զերիցագունից զառաջաւոր տեղի 'ի գնացս, կմ 'ի սեղանս, կմ 'ի համախմբութիս, ոչ յառաւելուն յանդգնութ, այլ 'ի պակասուն քաղաքավարութ. որ չէ արժանի ցասման, այլ քամահանաց և ծաղու, որ բու 'ի կարապս զմիջին ունելով տեղի ։

Մինչ մեզ արդ հաստատել, թէ որ իցեն երկու հակառակ ծայրք քաղաքավարութեան ։ Արդ՝ դիւրաձանաչելին որքա 'ի ծայրից քաղցրախօսութ. զի որ քաղցրախօսութիւն է միջասահման ինչ 'ի մէջ գեղջուկ հակառակութե, և աւելորդին մարդահաճութ, սորա յառաւելն սայթաքելով, և նորա 'ի նուազն, նոյնպէս քաղաքավարութին՝ որ լուար, է միջասահման ինչ 'ի մէջ գեղջուկ անքաղաքավարութեան, և 'ի մէջ առաւելագոյն քաղաքավարութեան ։

Արդ 'ի նուազն սխալէ գեղջկութիւն, որ է դժպատեհ քաղաքավարութիւն, և հակառակութիւն, այնպէս վարելով 'ի գործս և 'ի բանս, որ անհաճոյ են գրգռութեն արտաքին զգայարանաց, կմ ներքին զգայութեան, կամ իմացական հոգւոյ. որ լուար ։ Իսկ զի զանցանէ ասացալով, չիք այլ յաւելուլ 'ի վերայ ։

Բայց յառաւելն սխալէ միւս մոլութի, որ է նուազ անհաճոյ ըստ երևութին, և որ թէ ծաղրական

իմն, բայց յոլովակի տաղտկագոյն եւս: Իւ այս է աւելազանցութեն քաղաքավարութեն: Որ երբեմն ծագի 'ի [illegible]. կամելով նորա 'ի վեր արկանել բառս հաճոյականս եւ քաղաքավարականս ընտրելագոյնս. բայց չունելով յինքեան զարդար չափ հաճոյականութե՛ անմտաբար անցանէ ընդ կոպար վայելչականութե՛, եւ լինի ծաղրական: Այսպիսի եղեւ պատանին այն լոմբարդացի, որոյ երթեալ 'ի վենետիկ, եւ չգիտելով որով օրինակաւ լինին անդ յարգանք, բայց եւ այնպէս կամեցեալ լոմբարդօրէն խոր խոնարհել ազնուականին ումեմն 'ի ռիալթեան կամրջի (168), այնչափ ցածեաւ, մինչեւ ընդ հարել գլխոյ նորա 'ի սրունս ազնուականին՝ ընկէց զնա 'ի ջրանցս անդր:

Լինի երբեմն աւելազանցութի եւ 'ի [illegible]. յորժամ տառւեալ ոք 'ի յարգարուած զգեստուց, 'ի պատահարկութեն անձին, 'ի կանացի ծեքծեքուն գնացից. զի երեւեսցի յանկաւոր եւ հաճոյական յընկերութիւն. եւ սոքա դիւրաւ տառւելուն 'ի մարդահաճութն, զի տառւել եւս հաճոյասցին:

Բայց երբեմն այս աւելազանցութի քաղաքավարութե լինի 'ի խոր իմն [illegible]. վասն զի ոմանք կարի իմն անձկանօք մեծարանս ընդունելոյ՝ տառւելուն 'ի մեծարել զայլս, եւ 'ի շքեղ երեւել 'ի քաղաքավարական խօսս. բայց թէ դու ոչ փոխարինես ընդ նոյնչափ շքեղ զրոյցս, անդէն 'ի վեր երեւի տրտունջ: Մինչ զի լաւ է կենցաղավարել ընդ գեղջուկս, քան ընդ այսպիսի իմաստակս եւ պատուասիրօղս:

## ԳԼ. ԺԲ.

### Յաղագս վնասուց, որ [illegible] 'ի Ծխախոտէ (169):

Խնդիր մեծ յուզեցաւ առ քաղաքականս, արդեօք վնա՞ս թէ օգուտ եղեւ հնոյ աշխարհի՝ յայտնութեն նորոյ աշխարհի: Զանց զայլովք արարեալ, ոչ գոյն օրինակ գտանեցաւ այն, զի եկն յարեւմտեան Հնդկաց գեղջուկ իմն թշնամի քաջի մարդավարութե, անուանեալ Ծխախոտ. յորմէ երեւի գլխովին ապաւաղել յարգական հեղինակութե, եւ ցրեալ՝ օրէնք [illegible]-

տէ-

դեանն (Վերոյն քաղաքավարութեան յաճախմանց գաղափարաց), *ձայնակիցք բարոյական իմաստասիրութեան։*

Արդ իմն է թէ ստգտանել զաղէտս այսր խոռոջ՝ լինէր սադիւտ արկանել 'ի խնամս արարչին, որ յում մանրատանիս թէպէտ և չնչինս և անարգս՝ հաստատեաց ազդուութիւն ինչ առողջարար մարդկային կենաց. եթէ էր 'ի մէնջ ծանուցեալ։ Բայց առ յայլ ևս տնկոց միջի առաւելաւ այնպիսի և այնչափ հրաշալի ազդեցութե՛, մինչև կարծել իմն, գուցէ առ իցէ դիւցականն այն պէոնիա համբաւոյ, մի միայն դեղ բժշկութե՛ ամենայն ախտից (170)։

Գտաւ առ 'ի մի 'ի գաւառացն հիւսիսային ամերիկոյ, որում անուն կոչի փլորիդա, որ թարգմանի ծաղկաւէտ կմ՛ բարեբեր, թէպէտ երկիրն է անբեր. մեծահարուստ հանքօք, այլ չքաւոր փողովք. 'ի մէջ գրաստամիտ և չարակեղծ ժողովրդոց արևմտեայց. որոց խոյզ լինի միայն վս՛ ոսկւոյ՝ որ արհամարհ է յաչս նց՛, և վս՛ բուսոյս՝ որ միշտ առ նս՛ եղև մեծարգի։ Վս՛ զի համակ այս բոյս՝ եթէ գալար և եթէ չոր, եթէ այրեցեալ և եթէ թրմեալ, տերևովք, ծաղկամբ, սերմամբք և հիւթովք, 'ի փոշի դարձուցեալ կմ՛ ծխեալ, մածուցեալ կմ՛ մզեալ, տենդի և ցաւոց և վիրաց անբժշկականաց իբրև սքանչելեօք իմն մատուցանէր բժշկութի՛։

Եւ՝ եթէ Ճշմարիտ իցեն պատմեալքն, առ միայն շոգեօք լեկովք ձգեցելովք ընդ ռնգունս, զնստուցանէ զքաղց և զծարաւ. յորմէ թերևս իշխեցին ասել պատմիչք, թէ ժողովուրդք ինչ հնդկաց կեան 'ի հոտոյ։ Եւ յայտնի իսկ՝ զօրաց սպանիացւոց առատ բաշխի այս ծխախոտ. զի 'ի պակասել պիտոյից զօրականին, Ճարակ մատուցանէ առ սովու, և բժշկութե՛ վիրաց։

Այս յիրաւի յեւրոպացւոց անուն պատուեցաւ առ արքենի անուամբ, կոչեցեալ խոտ դշխոյական։ Զի թէպէտ իսկութեամբ էառ առ զմակդիր անունս 'ի կատարինեայ թագուհւոյն գաղղիոյ. որում 'ի դեսպանէն լուսիտանիոյ ընծայեցաւ՝ որպ հրէշ իմն նորոյ աշխարհի. բայց և այնպէս նոյն

իսկ

խակ անկոյն՝ վն իւրոց նշանաւոր. առաւելութեանց մարթ էր վերաքարոզել, թէ [illegible] է [illegible]։

Այլ թէպէտ և այս ամ ճշմարիտ իցէ, բայց և այնպէս բազում լինչ ը մէջ է գործածութեան անկոյս 'ի կարգի առ առողջութեն մարմնոյ, և չարաչար գործածութեն նր 'ի կարգի առ բարոյական կենցաղավարութե։ Զի թէպէտ 'ի ձեռս է իւրաքանչիւր ուրուք առնուլ 'ի պէտս իւր զօրպէսն և իցէ ազգ գեղոց՝ թէպէտև զզուականաց, միայն թէ իցէ յօգուտ. բայց չէ լինչ պատշաճօղ քաղաքականութե՝ առնուլ զայն յամ ժամանակի, յամ տեղիս, և առաջի ամ անձանց. զի բազում լինչ է օգուտ ընդունողին, այլ նողկալի տեսողին։

Ապա տատանօր ոչ են մեր բանք զգործածութե ծխախոտոյ առանձինն վն հարկի, այլ՝ զչարաչար գործածութե նր յայտնապէս՝ մոլեկան սովորութ, յամ պահու, յամ ժողովս, և առաջի ամ անձանց, երբեմն ընդ ռնգունս ձգել զնր կեղտոտ փոշի, երբեմն ծամքել զնորա փուտ տերևս, երբեմն ընկլել զծանրահոտ նորա ծուխ, երբեմն յայլմէ զայն ընկալել, և երբեմն այլում կարկառել, առանց հայելոյ յայնս՝ որք զզուելին 'ի նմանէ, և 'ի լռկոյ հոտոյ նր թմլանան։

Արդ եթէ բարոյական առաքինութե քաղցրախօսութե՝ և քաջ մարդավարութե (որպ ասացաւ) հաստատել է յայն, զի [illegible]. և եթէ այս է ճշմարիտ սահման մարդավարութե, և նպատակ կալագէտնի, ով չասիցէ, թէ զեղծ սովորութե ծխախոտոյ արտաքսմանեաց յաշխարհէ զկալագէտն հանդերձ իւրովք բարոյական օրինօք։

Քաջ գիտեմ, զի յիշատակութեք ևեթ այնց աղտեղութեց բերեն զզուանս. զի ասացաւ իսկ, թէ առարկայք՝ որոց տեսութի անհաճոյ է աչաց, նոցին և լսելութի անհաճոյ է երևակայութե։ Բայց քանզի հարկ է յառաջ բերել և ցոյց լինչ, առաջի աչարից զօրինագրեալն 'ի կալագէտնէ 'ի գլխաւոր կանոնս իւր, թէ քաջ մարդավարն յաղնուական

լինչ

ինչ կենցաղավարութեան՝ իբրև յանձին զգայ, թէ սխալի ընկնել կամ մաքրել զանչս, դարձուցէ զերեսս, և մի անձին իսկ երևեցուսցէ, թող թէ այլում․ զոր ընկեացն կամ 'ի վարշամակի ծրարեսց․ զի քան զամ գարշութիւն աշխարհի, ոչ ինչ այնպէս ժխորէ զստամոքս, որպէս յաւելուածք մարդկային մարմնոյ :

Իսկ արդ՝ զի՞նչ գարշունի կայցէ առաւել հակառակ այսմ բնաւոր օրինաց՝ քան մխել յայտնապէս յունչս մատամբք զկորկ այնր փուշւոյ․ կամ ցամաքեցուցանել զաղտեղամած ունգունս 'ի քամոծոյ նր, ժողովել զայն և 'ի ցոյց ընծայել 'ի լայն պատառս, որ առաւել ևս աղտեղի են և ժահահոտ քան զամ ջնջոց պատառն և կճճոյ : Զի՞նչ առաւել ժխորեցէ զորովայն, քան 'ի խօսիլ ընդ այլում որոճել տատամամբք զայն գարշելի և զաղտոտի նիւթ․ արտաշնչել՝ 'ի համեմել զխօսս, ցրոնս ժահահոտ շնչոյ :

Եթէ փռնչիւնն է ցնցումն ինչ ուղղոյ՝ այնպէս բուռն և ահաւոր, մինչև որք լսենն, զերկինս յօգնութեան կարդան (171)․ և յայս սակս հրամայէ կալագեան, զի 'ի գտանիլ քաջի մարդավարի յընկերութեան, ջանասցի զուսայ ունել զինքն ըստ կարի․ և կամ հեղձուցիկ առնել զփռնչիւնն ազխառակ թաշկինակաւ, զի մի կարի խիստ շռնչեսցէ, առ 'ի չատաղակացուցանելոյ զընթերակայս, զի՞նչ լինիցի զրգռել կամաւ ժամ 'ի ժամէ՝ առանց ինչ հարկի զայն ոգեղ և շառաչաձայն ցնցումն, շիթելով զաճառս հատանելեաց ծծմբային հոտով այնց փոշեաց․ և ապա մնալ, զի որք լսենն, իբրև 'ի մեծ ինչ վտանգի՝ զամ յօգնութի նր կարդասցեն :

Բայց զինչ առաւել քամահելի տեսիլ, քան մխել յիւր բերան զբերան գալարածոյ եղջեր խճողելոյ մրճատեալ և մրկեալ աղտեղութ, քարշել անտի զատարատաթափան գոլորշի ընդ քիմս 'ի վեր, և ը ունգունս 'ի դուրս հանել, ըստ ձևոյ դիւմիգեայ և ըստ ցլուց յասմխի․ որք ընդ անգղիացւոց ծովեզերեայն ծառի և խոտակաւոյն (172)։ Մարթ էր 'ի համար բերել և այլս ևս ծանրատաղտուկ պատկերս

կերս այսր չարաչար կիրառութե, որք թէ նողկացուցանէն զքաղաքավար ոք 'ի լսել, ևս առաւել 'ի տեսանել:

Բայց յայսմ վայրի տայցէ թերևս ոք պատասխանի: [illegible]

Այլ այդ պատասխանէ բարոյական իմաստասիրութիւն, թէ ոչ մարդահաճութիւն ևս՝ է աւելադանցութիւն հաճոյականութե, բայց և այնպէս չէ առաքինութի, այլ մոլեկան ինչ ծայր քաղցրախօսութե. զի հաճոյականութիւն այն ոչ միայ 'ի կոպար բնական պատճառի. Նոյնպէս հաճոյականութի չարաչար կիրառութե ծխախոտոյ չէ հաճոյականութի առաքինական, այլ մոլեկան և անբնական: Վզի՝ ծայրի առաքինութեան անհնար է լինել առաքինութիւն, զի աւելադանցութեան անհնար է լինել մէջ:

Արդ որպէս եթէ ամ մարդիկ լինէին մարդահաճոյք, և ամենեքին հաճ էին ընդ մարդահաճութի, ոչ վս այդր լինէր երբէք մարդահաճութիւն առաքինութի. սոյնպէս թէպէտ և ամ մարդ հաճ իցէ ը չարաչար կիրառութե ծխախոտոյ՝ ըստ ասացելումդ, 'ի քաղաքական կենցաղավարութիւն, ոչ վս այդր երբէք այդպիսի չարաչար կիրառութի լինի առաքինութի: Այնպէս՝ զի կանոն քաղաքականութե ոչ առեալ լինի 'ի սովորութէ անքաղաքավար գործողին, այլ՝ յայնմանէ որ դատէ ը բնաւոր և բարոյական պատճառի իբրև զկալադեան:

Եթէ ամ իմաստունք այնչափ մեղադրեցին զաննիբալ վս աւելադանցութե նր յանուշահոտ դրդանս

կապ-

կապուայեցի օծանելեաց (173). Թէպէտ և անուշահոտութիւն այն զուարթութիւն էր սրտի՝ որոց շուրջն կային. զի՞նչ արդեօք գրելին զայնց, որք առաւելուն 'ի ժահահոտ գրգանս հնդկային ծխախոտոյ, որ բնաւորապէս է անախորժ:

Թող զի այն աւելազանցութիւն ոչ միայն քաղաքականութեան, այլև մարմնաւոր առողջութեան է վնասակար. զի բազմաց 'ի ծխախոտս մոլելոյ գտան ախտագանք խաչրեալք, և ուղեղ ծխոտեալ կամ խարակեալ: Յայտ իսկ է, թէ ուղեղն հանապազորդ գրգռեալ՝ իբրև ծախէ զհիւթն զաւելորդ, ծախէ և զբնաւորականն: Այսպէս ամ աւելազանցութիւն է վնասակար, և չարաչար կիրառութք ամ դեղ բժշկական կամ կորուսանէ զազդուութիւն, և կամ փոխարկի 'ի թոյն:

Նա՝ մարթ է ասել ստուգութք, թէ չէք պատուաւոր ոք յաճախել յայս սովորութիւն, որ ոչ խոստովանիցի, թէ մոլութիւն ինչ է այն և ոչ պէտք. և ոչ դատապարտեսցէ զյաճախել իւր յայն:

Այս կնքեսցուք զբանս յայն՝ զոր յառաջն ասացաք, թէ չէ պարտ մեղադիր լինել գործածութեան օգտակարագոյն բուսոյս, և ոչ այլոց ազնեղի բժշկական դեղոց, զոր առնուն առանձինն յօգուտ. իբր զի ամ ոք պահապան է իւրոյ առողջութեան, և տր 'ի տան իւրում և յիւրոց ընտանեաց միջի: Բայց 'ի քաղաքականկենցաղավարութեան մասին, թէպէտև չեն ներքոյ անկեալ դատման կալագէանի արք խոտանք և գռեհիկք, բայց անձինք քաղաքականք՝ և բարոյական իմաստից ընդունակք, զորոց են մեր բանք, ոչ պարտին խոտորիլ 'ի կանոնաց առաքինութեան և վայելչութեան, նմին իրի ամն հաստատեալ է յեղանակն և 'ի չափն:

Բա-

## Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

### Յաղագս ճշմարտախօսութեան, և ծայրից նորա:

## ԳԼ. Ա.

### Յաղագս թէ զինչ առաքինութիւն իցէ ճշմարտախօսութիւն:

*Ի քաղաքական կենցաղավարութեան նախընթաց առաքինութիւն հայէր առաւելագոյն 'ի խորհուրդս, զոր այլք հաղորդեն մեզ: Սա հայի 'ի խորհուրդս՝ զոր մեք հաղորդեմք այլոց: Վասն որոյ նա պահանջէ զհաճոյականութիւն, և սա զճշմարտախօսութիւն: Զի որպէս մեք հաւանիմք ասից այլոց, համարելով թէ են ճշմարիտք, նոյնպէս այլք չհաւանին ասից մերոց, 'ի համարել՝ թէ են սուտք. և կենցաղավարութիւնն ոչ փոխատրէ զփոխադարձ հաճոյս, յոր սակս խնդրի:*

*Բայց 'ի դէպ է յիշեցուցանել, թէ խօսիմք աստ զճշմարտախօսութենէ կենցաղավարութեան, և ոչ զճշմարտախօսութենէ, որ 'ի դաշնադրութիւնս: Այն է համաձայնութիւն գործոյ ընդ խոստմունս. սա է համաձայնութիւն մերոց ասից ընդ մեր գործառնութիւն, զորս կամաւ հաղորդեմք խօսակցաց: Այն է էական ինչ մասն արդարութեան, որ տայ զիւրն իւրաքանչիւրում. սա է կարողական ինչ մասնիկ բարեխառնութեան յընդունելն և 'ի տալ բերկրութի 'ի խօսակցութիւնս:*

*Սակայն ճշմարիտ է, թէ որ ունի զունակութիւն ճշմարտախօսութեան 'ի խօսակցութեան, առաւել պատրաստական է առ ճշմարտախօսութիւն 'ի դաշնադրութիւնս. զի որ ճշմարտախօս է ընտրութեամբ, առաւել ևս լինի այնպիսի՝ պարտաւորութեամբ:*

*Այս ճշմարտախօսութիւն, զորմէ խօսիմք, է առա-*

քինու-

քննական ունակութեան ինչ հոգւոյ, որ հաստատեալ է 'ի միջասահմանութէ ճշմարտութէ այնց՝ ըստ հաղորդելոյ այլոց 'ի քաղաքական կենցաղավարութեան, եւ աստանել այնց՝ որ բերէն 'ի գործս մեր։ Վն զի յարաբերայայտել զայնս՝ որք մոլութի է ասել աւելի քան զոր են, նոյնպէս մոլութի է ասել նուազ քան զոր են, յորժամ խնդրի ճշմարիտն. ըն այսմ, ասել՝ որպէս է, եւ երբ պատշաճ է ասել, է միջասահմանութի ինչ առաքինական։ Աւելազանցութի սորա է ճոռոմաբանք, եւ պակասութին՝ կեղծաւորութիւն. իսկ միջասահմանութին կոչի ճշմարտութիւն։ Արդ՝ այս առաքինութիւն յայտնագոյն ճանաչի իւրեւ, քան իւրովք ծայրիւք. զի ճշմարտութի է որոշ իմն եւ եզական. իսկ ստութիւնն է անորոշ իմն եւ անբաւ։

## ԳԼ. Բ.

## Յաղագս առարկայից ճշմարտութեան։

Ամ մարդ ընկերական բնաւորապէս ախորժէ հաղորդել ընկերին զիւր խորհուրդս, եւ մանաւանդ զյարգականս խոստողին, եւ զհաճոյականս ունկնդրին։ Որպէս զաղտնի վիշտս, նոյնպէս զաղտնի մխիթարութիւնս հեղձամղձուկ առնէն զսիրտ, թէ ոչ արտայայտին խոստովանութեամբ. զի վիշտք նուազին, եւ մխիթարութիւնք առաւելուն, 'ի հաղորդել զնոսա բարեկամաց։

Արդ ամ ումեք քաղցր է խօսել զիւրոց առաքինութեանց, զիւրմէ գիտութէ, զիւրոց քաջագործութեանց, զիւրոց արժանաւոր եւ բարեբաստիկ պատահարաց, զընչից, զազգատոհմէ, զընտանութէ իւրոց զաւակաց, զմեծահարկի բարեկամութեանց, եւ զշնորհաց ընկալելոց 'ի մեծամեծաց։

Զայս ամ, զորս հաճոյ է խօսել, հաճոյ է եւ լսել. զի երկոքանչիւր այս յօժարութիւնք միապէս են բնաւորականք. իմացուցանել զիւրան, եւ իմանալ զօտարինն։ Ամ մարդ ունի անյագ հետաքննութի գիտելոյ զամ. եւ առ 'ի գիտել զամ՝ առաքէ միտս շուրջանակի չորս աչալուրջ լրտեսս, երկուս աչս եւ երկուս ականջս։ Եւ թէպէտ իւրաքանչիւրումն

րութիւն փոյթ է տաուել ծանուցել զինքն. բայց և այնպէս գտանի, որում տաուել քաղցր է իմանալ զայլոց արարս քան զիւրսն:

Եւ ոչ միայն հետաքննին է մարդ 'ի գիտել զիրողութիս ամենեցուն, որք կենդանիքն են, այլև զամենեցուն նց՝ որք մեռան բազում դարուք յառաջ քան զծնունդ իւր. խոյզ և խնդիր արարեալ ծանօթութեց 'ի պատմութեց, 'ի մակագրութեց, յարձանագրութեց գերեզմանաց, և 'ի վաղեմի գրոց: Բայց փափաք իւր ոչ գայ 'ի լրումն, եթէ զայսց իրաց ոչ ծանուցէ զճշմարտութի. զի գիտել զսուտս ոչ է գիտել, և ճշմարիտն է ճշմարիտ առարկայ մտաց: (174) Դիդիմոս քերթող կորովամիտ շարագրեաց չորս հազար գիրս ըվայրաքննին հնութեց, 'ի խնդիր լեալ ճշմարտութե յառասպելս. թէ ո՞ր իցէ լեալ ճշմարիտ մայր Ենէասայ, և ճշգրիտ հայրենի գաւառ Հոմերոսի. թէ արդարև գիտս էառ 'ի կնութ զիւր քոյր. և թէ Սափփէ քերթողուհի ողջախոհ ամե եղև, թէ պոռնիկ: Որ իրք, և այլ սոցին նման անբաւք, թէպէտ և չնչինք և անպէտք, զորս գիտողին խոկ՝ պարտ էր 'ի մոռացօնս արկանել, այսու ամի հաճոյ են. զի ճշմարտութին ինքնին է հաճոյական. և զի անաշխատ ուսեալ լինի, զոր ինչ անհնարին աշխատութբ հետազօտեաց նա 'ի գիրս: Արդ՝ թէ այսչափ բերկրութիւն բերէ ծանուցել զգուզնաքեայ ինչ նշոյլ ճշմարտութե այնց, որք ի աշխարհի ծնեալ՝ 'ի մերմէ աշխարհէս գտան բացական, քանի՞ բերկրութիւն բերէ ծանուցել, թէ ով և ով իցեն ճշմարտութեամբ այնք, որք ընդ մեզ կենցաղին:

Այլ չէ բաւական հաճոյականութե 'ի պատմել այլոց զմեր իրս. թէ ոչ ընկերէ նմա ճշմարտախօսութի. զի որպէս պատմութիք գլխաւոր նիւթ են կենցաղակցութե, նոյնպէս ճշմարտութի հոգի է պատմութեց:

Յասացի նիւթ գեղեցկութեան: Զի որովհետև մարթ է խօսել՝ ոչ բարբառով միայն, այլև գրովք, ակնարկութիք, արարողութեամբք, հանդերձիւք, և լռութբ իսկ, ոմ լռեար, այս ամ լեզուք հնար է

է զճշմարիտն ասել, կամ ստել. զմիւ լինի հաւանեցուցանել կամ պատրել. ամն է նիւթ ճշմարտախօսի և ստախօսի։ Ճախատ և այն և դէմք ատէղատէն, այլ յաճախագոյն են ընդուա, սոսա՝ որ ստոյն ։ Հարցեալ որսորդաց ցաղուէսն, թէ ը̅ ո՞ր էանց նապաստակն, ետ պատասխանի. չգիտեմ. զի մի՛ մատնեսցէ զընկերն. բայց գնացիւք եցոյց նշ̅ զճանապարհն ։ Եւ աղուխակն այն փիլոկտետէս երդուեալ հերակլէսի՝ որ մերձ էր 'ի մահ, չյայտնել ումեք զնշ̅ գերեզման, ապա իբրև հարցաւ 'ի յունաց, թէ ո՞ւր թաղեցաւ, աղաղակեաց 'ի ձայն բարձր, չգիտեմ. բայց ոտն հարեալ 'ի գետինն՝ յայտնեաց զտեղին (175) ։ Երկաքանչիւրն խօսեցան միանգամայն լեզուաւ և ոտիւք. ոտն ասաց զճշմարիտն, բայց լեզուն ստեաց. երկաքանչիւրն միանգամայն ստեցին, և զճշմարիտն ասացին. այլ չեղեն ճշմարտախօս. զի ճշմարտախօսութիւնն ոչ լծորդի ը̅ մատնութե̅. որպէս և լուիցես ։

## ԳԼ. Գ.

### Թէ ո՞ր իցէ յորդոր ճշմարտախօսին ։

Որ յորդորի ասել զճշմարիտն վն̅ փառասիրութեան՝ ոչ է ճշմարտախօս, այլ՝ փառամոլ ։ Որ վն̅ զօշաքաղութե̅, ոչ է ճշմարտախօս, այլ՝ ագահ. Որ վասն երկիւղի պատժոց, ոչ է ճշմարտախօս, այլ՝ երկչոտ ։ Որ վասն պարտաւորութե̅ խոստմանց, ոչ է ճշմարտախօս, այլ՝ արդար ։

Յորդոր ճշմարտախօսին ոչ այլ ինչ է, բայց նոյն ինքն ճշմարտախօսութիւնն. այսինքն նոյն ինքն ունակութիւն առաքինութեանս, որ յօժարեցուցանէ զմիտս համաձայնել զբանս ընդ սրտի, և զսիրտն ընդ ճշմարտի. մանաւանդ յիւր իրողութիւնս. վասն զի զայդ պահանջէն համեստութիւն և բանն. և հակառակն է տգեղ ինչ և գեղջկական ։ Որ յայլ յորդորանաց ասէ զճշմարիտն, ցայնվայր է ճշմարտախօս, ցորվայր տևէ յորդորն ։ Որ զունակութիւն ունի զճշմարտախօսութե̅, միշտ է ճշմարտախօս ։ Զի ունակութիւն է հաստ-

ար-

արմատ 'ի հոգին. և հոգին մտադիւր և խնդամիտ առնէ զունակութիւնն 'ի գործ' 'ի լինել պատշաճողութեան:

Ճշմարիտ է, թէ այս ունակուն դիւրացուցանէ զգործս այլոց մեծամեծ առաքինութեանց՝ արտաքոյ քաղաքական կենցաղավարութեն. Վ̃ զի սերտ դաշնաւոր գոլով առաքինութեանց ընդ միմեանս ընդդէմ մոլութեանց, ոչ է հնար թէ ունակուն ինչ առաքինական արգանեկեսցէ գործոյ ինչ մոլեկանի. բայց արգանեկէ գործոց առաքինութեանց, ընդ որս է դաշնաւոր:

Ճշմարտախօսն՝ որպէս և ասացաւ, հաւատարմագոյն լինի 'ի կատարել զգործս իւր խոստմանցն՝ որ 'ի դժուարինս իւր, արարեալ զհարկաւորն կամաւոր: Անաչառագոյն լինի յընտրութիս քաղաքական կամ ծերակուտական խորհրդոյ, վերադասեալ զճշմարտութիւն քան զաւագուն: Համարձակագոյն լինի 'ի խիստ պատասխանատուութիւնս առ հզօր թշնամիս վ̃ իւրոց հայրենեաց. որպէս դեմադէս կալանաւոր առ փիլիպպոս, որ վերայն վասն կորոնեան յաղթութեն (176): Հաւատարմագոյն լինի 'ի հանդիսի վկայութիս դատաստանական իրողութեց: Վ̃ք մեծագոյն հաւատ ընծայիւր քսենոկրատայ առանց ինչ երդման, քան այլոց յունաց երդմամբ. մինչ զի չառ էր առնել, թէ Քսենոկրատեայ ասաց: Վ̃ զի յաւ բանս իւր եղև ճշմարտախօս (177): Իսկ չարախօսին՝ որ ընդդէմ հաւարերիսն, այնչափ չհաւատային, որչափ յաճախէր երդնուլ (178): Զհօսակն ասացին: Որ ոչ գիտէ առել 'ի խօսելն զիւրոց իրողութեց՝ եթէ յիւր կողմն և եթէ իւր հակառակ, ոչ գիտէ առել և 'ի խօսելն զիրողութեանց այլոց:

## ԳԼ. Դ.

Թէ որով օգնականաւ գործիցէ ճշմարտախօսն:

Միջասահմանուն առաքինութեն հաստատեալ է յասել զճշմարիտն 'ի կենցաղավարութիս, յորժամ, և որպ, ուր, և որչափ արժան իցէ, ունելով

միջա

միշտ ընտրողութ 'ի չափ խօսելոյ և լռելոյ։ Թէպէտև չէ արժան երբեք ասել զսուտն, բայց և ոչ միշտ արժան է ասել զճշմարտութիւն։ Ամենայնի՝ որ ասի, պարտ է լինել ճշմարիտ. այլ ոչ զամ որ է ճշմարիտ՝ պարտ է ասել։ Քանզի զբազում ինչ լաւ ևս է չգիտել քան գիտել. և լաւ ևս է լռել զայնց, քան յայտնել։

Ըստ առասպելաբանութեանց՝ կորաքս, (որ թարգմանի ագռաւ) էր գեղեցիկ և սպիտակ պատանի. բայց քանզի յայտնեաց զմեղս ինչ զիւրոյ տիկնոջ՝ թէպէտ և ճշմարիտ, փոխեցաւ 'ի սևափետուր ագռաւ, և վարեցաւ յանտառս։ Վասն զի որ յայտնէ զճշմարտութիւն վնասակար համբաւոյ այլոց, արժան է զայնպիսին որպէս գեղջուկ ոք արտասահմանել 'ի կենցաղավարութէ քաղաքայնոց։

Եւ ոչ ինչ ճշմարտախօսն 'ի կենցաղավարութեան խօսի զամօթական ինչ զանձնէ. թէպէտ և ճշմարիտք իցեն. զի ոչ է օրէն ասել ինչ, զոր թէ այլք ասէին, պարտական լինէին կանգնել զանուն նր։ Բարի համբաւն 'ի մէնջ ստացանի. բայց իբրև ստացեալ եղև, ոչ ևս է մեր։ Հայրենեացն է այն, և որդւոց, և ազգականաց, և բարեկամաց. և ոչ կարեմք ընկեցիկ առնել զմերն՝ առանց անարգութէ, և ոչ զայլոցն՝ առանց անիրաւութէ։

Ոչ զամ ճշմարտութիւն՝ զոր յիրաւի էր հաղորդել բարեկամի, պարտ է հաղորդել ընկերաց 'ի կենցաղավարութեան։ Այն սատ է սիրողութին, այլ ոչ բարեկամութին. ազնուաբարոյութին, այլ ոչ վստահութին. քաղաքականութին, այլ ոչ գործակական մտերմութին։ Վասն այն ինչ ընդ մէջ է սիրոյ ընկերաց և բարեկամաց, որ ինչ ընդ մէջ է սիրոյ ծանօթին, և սիրոյ անհատին. զի յընկերս են բազում սիրոյք, բայց 'ի բարեկամութէ է մի միայն սէր։ Մինչ զի՝ որ խօսի 'ի կենցաղավարութեան, խօսի առ այլս. այլ որ խօսի ընդ բարեկամի, խօսի ընդ ինքեան. վասն որոյ և ապահովագոյն ընդ բարեկամի՝ քան 'ի կենցաղավարութեան կարօղ է մարդ յայտնել զիւր մոլութիւն և զառաքինութիւնս։

Այս սերեմն եթէ պահանջէ առաքինութիւն՝ զի յայտ-

յայտնեսցէ ճշմարտախօսն զինքն անկեղծութեամբ զիւր գովեստս, և զիւր պակասութիւնս. իբր զի անկեղծութիւն ծնանի զսէր, և մին առանց միւսոյ չերևի անկեղծ. այսու ամենայնիւ արժան է յերկաքանչիւրն 'ի գործ արկանել բազում չափաւորութիւն: Վասն զի որովհետև 'ի կենցաղավարութեան միշտ գտանի որք, յոր զօրանայ նախանձուն՝ քան զպարզմտութիւն, ուրեմն չարակնութիւն քան զջինջ հաճութիւն, 'ի չարադրդածս անդ գովեստք՝ կասկած 'ի միտս արկանեն փառամոլութեան. և պակասութիւնք կարծին աւելի քան զոր ենն. և ճշմարտախօսն փոխանակ օրինաց յինքն առարկանէ զստգտանս, իբրև թէ խոստովանութեամբ իւրոյ բերանոյ:

Բայց լինելոց է ճշմարտախօսն անկեղծ ընդ անկեղծս, կեղծ ընդ կեղծս, միջակային ընդ միջակայինս. և ոչ վասն այդր դադարէ 'ի լինելոյ ճշմարտախօս: Վասն զի առաքինութիւն ճշմարտախօսութեան չէ առաքինութիւն արդարութեան, որպէս ասացաւ: Ոչ դատաստանական խոստովանութիւն եղելութեան, այլ կամաւորական հաղորդութիւն մերոց մտաց. զորոց ոչ է հարկ ասել զամենայն, թէպէտ և պատշաճական իմն իցէ և ճշմարիտ՝ այն որ ասի: Եւ այս է միջասահմանութիւնն առաքինութեան:

Վասն այսորիկ թէ հրաւիրեն զնա զրոյցք՝ խօսել զիւրոց գործոց, զիւրմէ ազնուութենէ և զպատուոյ, զիւրոց որդւոց, և զիւրոց զարմանաւոր անցից, ոչ միայն խօսի զնոցանէ անպարծ և անխրոխտ, այլև յապաւէ ինչ 'ի ճշմարտէն, զի մի նախանձուկս արկանիցէ, և աւելի քան զոր էն՝ կարծիցի: Եւ թէպէտ մէջ ճշմարտութեան հաստատեալ է 'ի չասել աւելի կամ նուազ քան զոր էն, բայց և այնպէս մէջ ճշմարտախօսութեան 'ի խօսել զիւրոց գովեստից՝ հաստատեալ է յասել նուազ քան զոր էն, առ ասելոյ զպատշաճն. զի պատշաճաւոր իմն է հայիլ 'ի հանդարտութիւն խօսողին, և 'ի նախանձ լսողին: Այնպէս 'ի պարծանս, թէ արդարև մեծ իցեն և ամօթական, ճշմարտախօսութեանն ոչ են կամք ասել զճշմարիտն, զի մի վատանուն լիցի որ ասէն, և դայթակղեսցի՝ որ լսէն:

Ամին

Միայն իրի մէջ ճշմարտութիւն է անբաժանելի, և թուաբանական. բայց մէջ ճշմարտախօսութեան է համեմատական և երկրաչափական. զի չէ հաստատեալ յասել զայն ամ որ է, այլ՝ զայն ամ որ պատշաճ է. հայեցեալ 'ի տեղին, 'ի ժամանակն, և յանձինս։

Ճշմարիտ է, թէ ճշմարտախօսն չասէ ինչ բնաւ, զի գովեսցէ զանձն. և ոչ՝ զի գովեսցեն այլք. այլ ասէ զայն ինչ, որ արժանաւոր է գովութեան. և թէ չեն այդպիսի, նա ինքն է իւր դատաւոր. զի առաւել համարի զճշմարտութիւնն քան զգովեստ։

Նա՝ ոչ միայն ճշմարտախօս է նա 'ի բանս, այլ և յամ գործս, և զլխովին յանձն իսկ իւր. զոր՝ ը̅ւնողք պղատոնական գաղափարաց կարող էին ցուցանել զայն կենդանի գաղափարաւ ճշմարտախօսութեան։

Ճշմարտախօս են նորա ԴԷՄՔ. ոչ այլ ընդ այլոյ երևեալ մտախորհնենգաւորութ̅, և ոչ բարձրայօն՝ արհամարհոտ աչօք. այլ՝ զուարթ, հեզահամբոյր և անկեղծ. մինչև 'ի վճիտ ճակատ նորա երևութանան խորհուրդք, և ը̅ պատուհանս աչաց երևի նորա սիրտ։

Ճշմարտախօս է ն̅ր [illegible]. թէ գեղեցիկ է նա, ոչ պաշտէ զհայելի իբրև զնարկիսոս. և ոչ ցանէ զերեսս իբրև զապօրինէ (179)։ Եթէ է գալկաւոր, ոչ շպարէ զգունատութիւն պատուաստ գունովք։ Թէ ալևոր է, ոչ սափրէ ըղխարտեաշ գիսակս մեռելոց, ոսկեզօծել զարծաթափայլ զիւր ալիս։ Եթէ է տգեղ, ոչ թագչի 'ի լուսոյ, այլ՝ գեղերեսէ հանճարաւոր իմաստութբ̅ զիւր տգեղութիւն իբր զսոկրատէս. ջանացեալ զտգեղութիւնն ծածկել զերեսաց՝ գեղով ուշոյ իմաստից (180)։

Ճշմարտախօս է [illegible], և 'ի քաջութն մարմնոյ. 'ի խաղս, կամ 'ի պարանցիկս, կմ̅ 'ի անգրնկեցութիս, կամ 'ի թատերական մրցմունս առնէ զոր կարողանայ, և մտադիւր խոստովանի՝ ուր տկարանայ։ Թէ յաղթէ, ոչ պարծի. թէ յաղթի, չա-

մա-

մաշէ. անայլայլակ դիմօք զլրութիւնն ընդունի և տայ. գովեստ ընդունի, և յաղթականին գովեստ ընծայէ:

Ճշմարտախօս է 'ի ԾԱԳՄԱՆ ՏՈՀՄԻ: Թէ է ազնուազգի, զարգարէ զառաջս երևելի նկարագրութիւնս նախնեաց, զի նոքօք պատուեսցի: Իսկ թէ է ցածազգի, ոչինչ ամօթ համարի զյայտնուն նշանս աղքատին նախնեաց, 'ի պատուել զնոսա. որպէս արքայն Ագաթոկղէս, որ 'ի պատիւ հօր իւրոյ բրուտի, խեցեղինօք զարդարէր զիւր արքայական սեղան (181).

Ճշմարտախօս է յԻՒՐ ԱՌՈՒԾԱԽՍ: Եթէ սիրէ նա կամ առնէյ, այնպէս մեկին է տեսլուն նր, որպ սէրն: Եթէ ըղձանայ ինչք, կամ մերժէ, ոչ գնայ ընդ գողուղի, ուր դէմ եդեալ է. մերժումն չերևի ըղձումն, և ըղձումն չերևի մերժումն: Զհետ պնդի աղատագէմ պատուոյ, եթէ է արժանի. հրաժարէ յայնմանէ, եթէ է անարժան (182): Տերենտիոս Վարրոն յետ իւրոյ ձախող պատերազմի՝ որ 'ի կողմանս Կաննեայ, չէառ յանձն զգաւազան իշխանապետութեան. և Կիկերոն չէառ յանձն զպրետորութիւն, արժանաւորագոյն համարեալ այնմ զորդի մեծին Սկիպիոնի:

Զհուսկն ասացից. Ճշմարտախօսն 'ի քաղաքական կենաս ստանայ ինչ սակաւագիւտ. այն է ԳՈՐԾՈՑ ԱՆՆԱԽԱՆՁԻՑ. զի իւր արգիւնք են անփառաւորք: Նա՛ այնպէս գովի 'ի յայտնել զիւր պակասութիւնս, որպէս 'ի յայտնել զառաքինութիւնս, ծնունդ գոլով երկաքանչիւրոցն՝ Ճշմարտախօսութեան, որ գովելին է՝ միանգամայն և սիրելի:

## ԳԼ. Ե:

### ՅԱՂԱԳՍ ՃՈՌՈՄԱԲԱՆԱՑ, և ԿԵՂԾԵԱՑ:

Սոքա են երկու թշնամիք Ճշմարտախօսութեան, բայց առաւել ևս թշնամիք միմեանց. մին սկայաձև, և միւսն կարճիկ. զի նա վերամբառնայ քան զՃշմարիտն, և սա ցածնու քան զնոյն: Երկաքանչիւրն են ստախօս. բայց մեծն է առաւել յիմար, և փոքրն

փոքրն՝ առաւել անքաղաքավար։

Ճառատօղն է իբրև զընտանի սիրամարգ․ որոյ թռուցեալ 'ի բարձրակատար գագաթ, ուռուցեալ լանջօք և ընդվզեալ գլխով՝ նստի 'ի լուսափիւռ բոլորածիր պարունակ իւրոց փետրոց, և բիւրուք յինքն յառեալ աչօք, և զամենեցուն աչս յիւր առ-առելի հրաւիրեալ, 'ի ձայն բարձր աղաղակէ, որ̃ թէ ասելով, չէ՞ք հայեցիք։

Իսկ Կեղծիքն է իբրև զբու վայրենի, որոյ խորշե-ցեալ 'ի պայծառ լուսոյ, գլխովին կծկեալ և ծած-կեալ յիւր փետուրս, ծակամուտ լինի 'ի խորխո-րին խոռոչս․ անձին իսկ լեալ ատելի․ և հեկե-կաձայն 'ի մթան՝ թուի ասել․ մի՛ ոք զիս հայեսցի։

Եթէ բանքն են պճնազարդք, Ճառատօղն թէպէտ և ոչ ինչ գիտիցէ, պարծի գիտել զամ․ իսկ կեղծն թէպէտ և գիտիցէ բազում, կեղծաւորի գիտել սակաւ։ Եթէ պճոխաւորք, Ճառատօղն՝ իբրև զախմա-գենեա, չքաւոր գոլով զարդարի սուտ գոհարօք։ Իսկ կեղծն՝ իբրև զապարախացիս, հարուստ գո-լով զգենու հանդերձս վայրավատինս։ Եթէ պար-զունք, Ճառատօղն իբրև զպլատանեան զօրավար (այն է նկարագրեալն 'ի պղաւտոսէ բանաստեղծէ) փչէ 'ի լեգէոնախումբ կաճառս իբրև 'ի թռու-ցիկ տերևս․ կեղծն թէպէտ յուժի իցէ, ոչ կա-մի զայն ցուցանել․ և թէ առնէ ինչ քաջութի, այ-լում թողու զպատիւն։

Այս քաղաքական կենցաղավարութի երկաքանչիւրն են անըմբռն․ զի Ճառատօղն տարապայման վերա-գրութք աղաւաղէ զճշմարտութի․ և կեղծն ցածուն թերութք առնէ զնա հեղձամղձուկ։ Երկաքան-չիւրքն վրիպեցուցանեն զընկերս 'ի հաճոյից․ զո-րոյ առնուլ ունէին զճաշակ 'ի ճանաչել զճշմար-տութի արարից այլոց․ զի նմա՝ որ առէ աւելա-զանցութք, չհաւատան ինչ, և սմա՝ որ չասէ ինչ, չգիտեն թէ զինչ հաւատասցեն։

Այլ 'ի բաղդատել զսոսա ընդ միմեանս, Ճառա-տօղն յանկարգոյն է 'ի կենակցութի քան զկեղծն․ զի նա է բացերև, և սա խորախոհ․ նա է ճոխա-բան, և սա լռալուռ․ և իբրև ճանաչին, նա է

ծիծաղելի, և սա կասկածելի։ Մինչ զի Թէպէտ աննախապատուասար զրոյց ճառատօղին տաղտկալի է ճշմարտասիրին, բայց զուարձալի այնմ որ կամի զծաղու գալ։ Բայց կեղծն՝ ճշմարտասիրաց է խիթալի, և զուարթասիրաց ատելի. զի ոչ հաւորդէ զիւր խորհուրդս։ Եւ մանկ ճառատօղն սիրէ զկենցաղակցուն, զի 'ի գլուխ տարցի զիւր վաճառ, և կեղծն չգիտելով ընդ ում կենցաղել, միայն ընդ միայն կենցաղի։

Կարծեն ոմանք, Թէ այս երկու մոլութիւք ծագին յերկուց առաքինութեց. ճառատօնք 'ի ԶՈՒԱՐԹՈՒԹԵՆԷ, և կեղծիք 'ի ՀԱՆԴԱՐՏՈՒԹԵՆԷ։ Բայց այդ է սուտ. զի յառաքինական ունակութեց անհնար է ծագել մոլեկան գործոց։ Այս ծագին յերկուց բնաւոր և ներհական անկիրթութեց։ Ճառատօնքն 'ի կարի հին ջերմութէ, որ վատահացուցանէ. և կեղծիքն 'ի կարի հին ցրտութէ, որ երկեցուցանէ։ Եւ մանկ ճառատօղն ըմբռնէ զիրս իւր աւելի քան զոր ենն. և քարոզէ աւելի քան զըմբռնեալն։ Իսկ կեղծն երկնչի 'ի դատաստանաց այլոց. և չէ վստահ յանձն և յիրս իւր։

Բայց յերկաքանչիւրսն ընԹացակցի տկարութի ինչ մտաց։ Զի ապականեալ կարծիք՝ եԹէ 'ի յաւէտ և եԹէ 'ի նուազ. (Թէ կամք իցեն ասել) է երակ ինչ յիմարութե. որ Թէպէտ 'ի սկզբան անդ է ԹեԹև, բայց յանցանել ժամանակաց՝ 'ի յաճախել գործոց՝ ծնանի զունակութիւն ինչ այնպէս զիղծ, որ 'ի բարոյական մոլութէ փոխի իրք 'ի յիմարութի։ Եւս առաւել՝ եԹէ 'ի մարդահաճոյից առ շնորհակս, և 'ի չարայուզից ը̃ խաղ, այններքին կարծիք արտաքուստ գայցեն զօգնութի։

(183). Եմպեդոկղէս բժիշկ այնպէս սովոր էր բարձրացուցանել զիւր յայնմ արուեստի ճարտարութի. մինչև կարծիս 'ի մահ դնել, Թէ իւր բժշկութիք չէին գործք մարդկայինք, այլ՝ գերմարդկային սքանչելիք. յորմէ ախտէ ջանացան այլ բժիշկք բժշկել զբժշկապետն՝ չարադոյն ևս ախտիւ։ Մուծին 'ի խելապատակ նորա, Թէ չէ նա մարդ, այլ Թէ 'ի մարմնին նր̃ բնակէ հոգի աստուծոյն ասկղեպիոսի. (184)։

Որում

Որում 'ի հաւատալ եմպեդոկղի թէ այնպէս իցէ, 'ի վ՟ր բերին. մեծ ամօթ է ա՟յ անմահին՝ տուայտանօք կեանս վարել 'ի մահկանացուաց մէջ: Եւ յայս ևս եմպեդոկղի հաստատեալ զմիտս, առելանելոյ 'ի հրեղէն երկինս՝ ընկեց զինքն 'ի հրաբորբոք վիհ ետնայի:

Նոյն զօրութի է և յունականն կեղծեաց. ո՟մ երբեմն 'ի վիրխոս գաղղոս, որոյ ախորժեալ յիմար կեղծաւորիլ ը՟ խաղ, իրք յիմարեցաւ: Բայց առաւել ևս երբեմն 'ի նախայիշատակեալ աղանդ սկեպտիկեան փիլիսոփայից (որք են պիւռոնեանք՝ մտածուք անուանեալք), որք յայլոց փիլիսոփայից մեջի սկսան ազխատուն խոստովանել: Զի 'ի սկզբան անդ՝ հարցափորձ փաստիւք յերկբայս լեալ և ըղբաղձանօթ իրաց, հուսկ ուրեմն կարծեցին զայս միայն գիտել, թէ չէր հնար գիտել ինչ. և թէ չկայ ինչ ստոյգ. բայց այն գիտէ, թէ չէր ինչ յայտնապէս ստոյգ: Եւ թէև խաղալիք դու զայս ն՟շ ճառագայթիւք արեգական, ն՟շ ուրանայցես, թէ արեգակն իցէ լուսաւոր:

Այս իսկական յորդոր այսց երկուց մոլութեանց ոչ է զօկել զոք, կա՟մ ախորժել զպատիւ, կա՟մ զօշաքաղել զշահ: Այսոքիկ են վախճան այլոց մոլութեանց, որ է, անիրաւութիւն, յափշտակութիւն, և ագահութիւն, որք հակառակն են արդարութեն, մեծանձնութեն, և առատաձեռնութեն: Այլ բուն յորդոր այսց երկուց մոլութեանց հակակայից ճշմարտախօսութեն, առնու սկսանել 'ի նոյն իսկ ունակութեց մոլեկանաց՝ 'ի կարգի առ իւրեանց վախճան:

Ճառատողն յորդորի յիւր բնաւոր կամ յունականն թիւր յօժարութեն՝ մեծացուցանել քան զճշմարիտն, ոչ միայն զիւրն գովեստ, այլ և զնմ զոր պատմէ: Եւ հակակայ իմն յօժարութ՟ այն, զոր առանոր կեղծ կոչեմք, փոքրկացուցանէ զնոսա: Երկաքանչիւրն ը՟ այս մոլեկան գործ՝ են հաճ և հաւան. զի ոչ է բանի, այլ կամաւոր:

'Ի նախատացելոցս մարթ է իմաստասիրել, թէ այս երկու ունակութիք, թէպէտ և են ճշմարտապէս մոլեկանք, ը՟ այնմ որ խոտորին յառաքինական

կան միջասահմանութե. բայց և այնպէս չեն ըստ ինքեանց չարարարք. զի չունին վախճան չար։ Եւ թէ 'ի քաղաքական կենցաղավարութե չեն հաճոյականք, բայց չեն և վնասակարք։

Նա՝ չափազանցութիւնք ճառատողին, ով ասացաւ, զրօսանս մտաւցանեն ընթերցողին. ով սպառնալիք վասկոնացւոյն, որ կոչեցաւ թմբուկ զօրավարաց. և պէսպէս պարծանք ապպիոնի, որ կոչեցաւ ծնծղայ աշխարհի։

Նոյնպէս եթէ կեղծն նուաղեցուցանէ կամ ծածկէ զիւր գովեստ, առաւել անձին վնասէ. քան այլում. Նա՝ երևի սովոր հանդարտ. զի յայտնի առաքինութե թուի զիւր առաքինութիւնս քօղարկել, ըստ խրատուն. որպէս 'ի Բռուտոսի լինէր։ Բայց արտախօս է հանդարտութիւն, որ ծածկէ զճշմարտութի. զի թէ հանդարտութիւն բառնայ յիւրմէ զգովեստ, ստութիւն բառնայ յաշխարհէ զմարդկային կենակցութի։

Բայց այսպիսի փոքր վնաս են ճառատանաց և կեղծեաց 'ի քաղաքական կենցաղավարութե։ Յոռեգոյն են անկարգութիւնք 'ի վեր երևին յիրողութիւս ծանունս։ Զի զորօրինակ ունակութի ճշմարտախօսութե ընդդէմ ընդ այլ ունակութիւս առաքինագոյնս՝ յառաջ բերէ առաքինագոյն գործս, նոյնպէս այս երկու ունակութիւնք մոլեկանք ընդդէմ ընդ այլ ունակութիւս մոլեգոյնս՝ յառաջ բերեն գործս կարի իմն վնասակարս հասարակաց, և նոցին իսկ գործադրաց։

Որպիսի անկարգութիւս նիւթեցին ճառատանք՝ ընդդէմ ընդ սէր Ռոբերտոսի Ուալփոլայ։ Իմաստնապէս առասպելեաց Լուկիանոս, թէ ինչ անարգի անձկացեալ թշուառ լինել գաղանաց, և 'ի գիպել յաջողակի առիւծու մեռելոյ՝ զգիմակ նորա զերեսօք արկեալ և զմորթն զթիկամբք, առ ժամանակ մի պատուեցաւ 'ի գազանաց, և աշարկու եղե հովուաց, որոց չէր երբեք տեսեալ զառիւծ։ Բայց հուսկ ուրեմն իբրև հայկազնի ումեմն քաջավարժի յորս առիւծուց՝ յայտնեցան նորին պատրանք, զատարինն և զիւրն կորոյս զմորթ։

Յամ գործ գտան այսպիսի գրուտք, որք զուրուականն առիւծու զհերակմբք արկեալ՝ առ ընտանալոյ զարքայական պատիւ, խռովեցին զհասարակապետութիւն, և թշուառացուցին զանձինս: 'Ի սպանանել Տիբերիոսի զպատանին Ագրիպպաս զեղբօրորդի Օգոստոսի, ում հասանէր ինքնակալութիւն յաջորդութե, ծառայն Ագրիպպասայ՝ ըստ իւրում նմանութեան՝ կեղծաւորեցաւ թէ ինքն է Ագրիպպաս ազատեալ 'ի մահուանէ. և խնդրեալ իւր թիկունս, խռովեցոյց գլխովին զինքնակալութիւն. և զՏիբերիոս վտանգեաց յոյժ: Բայց իբրև յայտնեաց զնենգն մի ոմն յանհաւատարիմ ընկերաց, շղթայակապ տարան զնա առաջի Տիբերիոսի: Որոյ հարցեալ, թէ զիա՞րդ եղեր դու Ագրիպպաս. յանդուգն ետ պատասխանի, և դու զիա՞րդ եղեր կայսր. բայց այն եղև իւր յետին բարբառ:

Այլ մեծ ևս խռովութիւն յարոյց աստղատանեակն (ծը աէյլուն) այն, որոյ կերպարանեալ թէ իցէ կայսեր Գրակկոս տրիբուն ժողովրդեան, զոր ընդեմ կամաց խուժանին՝ սպանեալ էր ծերակոյտն, սեփհականեաց զտրիբունական իշխանութիւն իբրև իւր. և թէպէտ և մեռեալ համարեալ, որ գիտէր զնա զազգատոհմ Գրակկոսի, յայտ արար զնենգն, բայց և այնպէս առ ժմկ մի եղեալ առնելով կողմանց, երբեմն բանադրեալ 'ի ծերակուտէն, և երբեմն 'ի բանտէ հանեալ 'ի ձեռն ժողովրդեան, 'ի սմանէ ստացաւ պատիւ, և 'ի նմանէ նախատինս. ուր և բազում եղեն արեան ճապաղեք:

Իսկ զինչ կայցէ թշնամի մարդկային ընկերութե, քան զկեղծիս լծորդեալս ընդ ծածկութեամբ բարեկամաց: Մարկոս Ատտիղիոս պանծացաւ 'ի ծերակուտին, թէ յանկարծակի իմն՝ խոստմամբ խաղաղութե և հաշտութե յաղթեցի արքային յունաց: Գովեցին դեռահասակ սենկղիտոսք, թէ խորամանկութիւն յունաց յաղթ եղև 'ի խորամանկութենէ հռոմմայեցւոց: Բայց ծեր սենկղիտոսք նախատանօք անարգեցին զնա, ասէ Լիւիոս (պատմաբանն). յա-

յառաջ բերել. թէ Հռովմայեցւոց սովորութիւն այս եղև հանապազ, յաղթել քաջութեամբ և ոչ նենգութեամբ. և ոչ յարուցանել պատերազմ, թէ ոչ նախ ազդ արասցեն:

(185). Ամենայն քաջագործութիւնք մեծի զօրավարին Գոնսաղվոսի՝ եղեն վատանուն երկոքումբք այնոքիւք, որ ը̄ ամ գործս հնչեն: Մի՝ զի ընդ առնուլ զտարենտ քաղաք, երդուեալ 'ի մր նուէրսն՝ թողուլ ազատ զիշխանն կաղաբրիոյ, կալեալ կապեալ առաքեաց զնա առ թագաւորն սպանիոյ: Երկրորդ՝ զի պաշտպանութիւն խոստացեալ և մեծ պատիւ ցուցեալ վաղենտինոսի դքսի, որ ապաստանեալն էր 'ի նա, հաւատադրժութեամբ կալանաւորեալ՝ առաքեաց 'ի սպանիա: Այլն, որ առացաւ զայնպիսի գով սուսերաւ, կորոյս զայն գըրչաւ: Եւ այնուհետև ոչ գիտաց ոք, աջ եղև՝ թէ ձախ. և իւր հաւատք սպանիական եղեն, թէ յունական:

Բայց ոչ երբէք այնպէս վտանգաւոր և վատանուն են կեղծիք, ո՛պ̄ յորժամ ընծորդին ընդ սէր կեղծաւորութեան, որ 'ի կեղծեաց անուն առնու զանուն: Զի կեղծաւորն ըստ խեղկատակի՝ շրջեալ զդէմս, այլ ոմն է, և այլ ոմն երևի. այլ ինչ խօսի՝ և այլ ինչ խորհի. հպարտ խոնարհութեամբ, կամաւոր այլագունութեամբ, արտասուաց ճնշմամբ խաբէ զամենեցուն աչս, որ չեն սրատեսս, երևութիւ կրօնի զկրօն տապալէ. և որպէս գառնազգեստ գայլ յափշտակող, զհօտն Քրի ցրուէ և գիշատէ:

Բայց յայսմ վայրի զգուշանալ արժան է, չչփոթել զկեղծիս զհակառակն ճշմարտախօսութեան՝ ը̄ խորամանկութիւն, որ հակառակն է խոհեմութեան: Եւ ոչ ը̄ հեզնութիւն որ ը̄ խաղ, որ հայի 'ի զուարճախօսութիւն: Եւ ոչ ը̄ առաքինական այլափոխութիւն. որպիսի էր դաւթին, որ առ զերծանելոյ 'ի ձեռաց թշնամեաց՝ երևեցոյց զինքն մոլեթափ: Զի զորցանէ խօսել ունիմք յիւրաքանչիւր տեղիս:

Բա-

## Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ՃԳ ԵՐՐՈՐԴ.

### Յաղագս ճարտարախօսութեան, և ծագման նորա։

### ԳԼ. Ա.

### Օգուտ ճարտարախօսութեան։

Դեմետրէ չածուհի (186) ընդերկար վաստակեալ 'ի խնդիր պերճախօսութեան՝ յան- դնդախոր վայրս զօղելոյ. այն ինչ 'ի վր քարի, որում [illegible] անուն կոչէին. յանապատս եղեալ եայ՝ մէջ մասախորչ զիւրմէ պերճախօսութեան՝ հիւծեալ հաշէր զլխոյն 'ի արամութեն, յամէն զուարճախօս պատառ խերմք զուարթաբար զբօսցիւք զնա ժպտեցոյց։ Վ[illegible]կ 'ի խորհրդաւոր դաշնամուն դեմետրեայ՝ ընդ լռջուն յարգական ծխոց՝ խառնէին ճարտարախօսի շրթանց [illegible] խաղ, ուստի և եղև յառակս. թէ [illegible] հանդոյ էն ճարտարմարար շրթանց։

Կամ եղև այնց վսեմախոհ մտաց՝ բանատեղծական իմաստասիրութ յիշեցուցանել. թէ 'ի լուրջ հետազօտութեն ճշմարտութեն զօղելոյ 'ի խորս գիտութեանց՝ միտ մարդկային տխրագին և ներանձնացեալ, բաղում ինչ ծախէ 'ի մարմնական զօրութե. և չկարողանայր տևել ընդերկար, թէ ոչ երբեմն ծաղիւ և ճարտարմարար շրթամբք առնոյր քաղաքական ինչ սփոփանս։

Տրտմութեանն հետևորդ լռջութեն սեղմեալ զսիրտ, կալեկոծ ունի զիլենական ոգիս. և հովացուցեալ զհուրծս, ընձուէ զերկառ. և փակէ զդրահան ձայնի. վ[illegible] բաղմահոգք են սակաւախօսք։

Զարին հակառակն ծիծաղ հետևորդ ճարտարախօ-

Խնդութիւն՝ ընդարձակեալ զսիրտ՝ հանէ յազատութիւն զանձնեալ ոգիս, և չեռուցեալ զկուրծս՝ պարզէ զաչկունս, և վարէ յորդ շունչ 'ի հագագ ձայնի. որպէս յիւրում տեղւոջ լուիցես:

Որպ դատարկութիւնն է հանգիստ մարմնոյ, նոյնպէս զուարճախօսութիւնք է հանգիստ սրտի. այլ ոչ հանգիստ պարապորդ և անխորհ. զի միտք են կարողութիւն հոգեղէն. և հոգի՝ թէ չէ կապեալ քնով՝ այնչափ գործէ, ցորչափ կեայ. զի կեանք իւր է գործել: Նա՝ թէ 'ի զրոյցս լուրջս առաւելու հանդարտութիւն, 'ի զրոյցս զուարճախօսս առաւելու սրութիւն. 'ի նոսին առաւելու խոհականութիւն, և 'ի սոսին սրամտութիւն. վասն զի նք ծնանին 'ի ճշմարտուէ իրաց, և սոքա ծնունդ են բեղնաւոր մտաց. որոյ գիտակ գոլով այնց ը իւրաքանչիւր մտաց, մեծապէս խնդայ. և 'ի գործողութեան անդ գտանէ զհանգիստ:

Այս օգտակար են զուարճախօսութիւնք՝ պահպանումն անհատի. բայց առաւել ես կենցաղավարութե ը այլոց: Զի ով բնութիւն կապեաց զմիտս ը միմեանս գաղանի կապանօք համակրութեան, և արամութիւն միայն ցայտէ յերեսս միասյն, նոյնպ զուարթագին երեսք ուրախ առնեն զսիրտ ընկերին: և վնկ զուարճախօսն շահի զսիրտ խօսակցին: Այս զուարճախօսութիւնք են քաղցրիկ համեմունք քաղաքական կենցաղավարութե՝ 'ի ճեմս, 'ի խնջոյս, յարթնութիւն, 'ի խաղս, և 'ի կոչունս: Ցաւել միայն՝ մեան լսէ: Նա անուշիկ նետաձգէ, սա սիրողապէս ընդունի, և անդրէն դարձուցանէ. ը կորեանց շանց, որ ընդ միմեանս ծամածուեն անվնաս ատամամբք. կռուին ը միմեանս՝ և հաշտ են. խածանեն զմիմեանս՝ և գրկախառնին:

Վնկ զզուարճախօսութիւնս յիրաւի կոչեաց արիստոտել քաղաքավարութիւն. զի որպէս առացաւ զքաջ մարդավարութէ, ոչ ծնանին յանգործ երկիր վայրենի և 'ի խելս գեղջկայինս, այլ 'ի միտս քաղաքայինս, որք կամ սովորութբ և կամ արուեստիւ հանճարաւորք հանդիսացան:

Սորոյգ իմն է, (թէպէտ և ոմանց այլազգ թուիցի)

ցի ) թէ՝ և զուարճախօսութեանց կայ ուսումն և արուեստ ճշմարիտ, որպէս ցուցաք յառաջադրեալն ՏԵ-ՂՒՈՅՆ (187). յորոյ իմաստից արժան է աստանօր յիշեցուցանել ինչ ինչ. վասն զի անդանօր բա-զումս զննեցաք զայս պրակ արիստոտէլի:

## ԳԼ. Բ.

### ԹԷ ՈՐՔԱՆ ԻՆՉ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ (188) ԿԱՄ ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՆ:

Խնդիր է սա արդարև հետաքննին՝ և կարևոր մերումս աշխատութեան, առ. իմանալ՝ թէ իւ զա-նազանիցին ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ ՏԵՍԱԿԱՒՔ ՚ի ԲԱՌԻՑԱ-ԿԱՆԱՑ. և ՄԱՆՈՒՆՔ ՚ի ՄԻՄԱՍՆԱԿԱՆԱՑ. և թէ ո՞յք անկ իցեն ԻՄԱՍՏԻ. ո՞յք ԲԱՌԱԲԱՆԻՑ. և ո՞յք ՄԱՍԱՅԻ:

Այլ ընդհանրապէս խօսելով, զուարճախօսութիւն կամ քաղաքավարութիւն է գործ միայն, որ ԲԱՂԿԱՑԵԱԼ Է ԻՆՉ ՀԱՆՃԱՐԵՂ ՕՐԻՆԱԿԱՒ.

Հանճարեղ օրինակ այն է, որ նշանակէ զիրս ոչ սեպհական և հասարակ եղերօք, այլ նմանակա-նօք՝ հնարելովք ՚ի հանճարոյ, որ և են նոր և ան-ակնկալ. Որպէս բանաստեղծական գիւտք. որք չեն ճշմարիտք, բայց նմանօղ են ճշմարտի: Զոր-օրինակ՝ եթէ կամելով քոյ ասել՝ ՀԵՐ, ասիցես ՀԱՒՐ: Զի ոչ նշանակեցեր զայն կիրք իւրով սեպ-հական բառիւ, այլ նմանականաւ, որ հանճարե-ցաւ ՚ի քոյ մտաց. բայց է քաջ յայտարար, վասն որոյ և բերկրարար:

Արդ՝ այս ՀԱՆՃԱՐԵՂՈՒԹԻՒՆ ամփոփի երբեմն ՚ի մի միայն ԲԱՌ հանճարաւոր, որպէս ՚ի վերագրեալդ օ-րինակի, որ է լոկ փոխաբերութիւն ինչ բառի: Եր-բեմն տարածանի ՚ի ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ ինչ. որպիսի են առածք և իմաստք հանճարաւորք: Երբեմն կազմակերպի ՅԵՂԱՆԱԿՈՒԹԻՒՆ ինչ ստորոգական հանճարով. ուստի զզուարճախօսն կոչէ արիստո-տէլ ԵՐԵՒԱՆՈՂ ԱՍԵՐՈՂ:

՚ի ժողովս ուրեք զրոյցք ՚ի մէջ լինէին զպատմա-կոյ ումեմն սեկելեացւոյ (որանաիգզոս անուն), որ էր տափոտ, այլ ոչ իշխէր յայտնել զտափանս իւր:

խուր։ Մի 'ի խօսակցաց արկ 'ի մէջ զայս զրոյց. Ֆրանկիսկոսն է Գիտնոցին հայր։ Այս է բառ փոխաբերական և հանճարաւոր։ Այլ ոմն ասէ. Եթէ Ֆրանկիսկոսի կայր հայր 'ի փառն, յայն արժանէր արդեօք։ Այս է նախադասութեն հանճարաւոր։ Այլ ոմն 'ի վեր բերէ. Գիտիչէ՞ք. Լինէ՞ր ու յայն արժանէ հայրն. Զի՞ ոչ է հայր մօլի։ Այս է ձեռնարկութեն հանճարաւոր. զի հուր մոլի. որ 'ի գեղեցմանատանս վառի, ոչ այրէ. և այսուիկ տայ համարել զնա աղաւաղ ոք։ Այլ ոմն կծողագոյն եւս՝ ասէ. Նա՝ հայր Գծոխոյին է այն. որ փառքն ... , և ընդունի յայն արժանէր. և այսուիկ տայ համարել զպատանին եղեռնաւոր ոք։ Բայց այլ ոմն առաւել եւս հանճարաւոր և քաղաքային, յայս կերպ գրանն. Ո՞չ Գիտէք. ոչ որդեգրեալ է նա. հայր է այն Իշխանց Եւրոպիոյ, որ և ու ... որ ... հանէր ... . և այսուիկ տայ համարել զնա ցուրտ սիրող։ Այս են պատրանք հանճարաւորք, և զուարճալիք։

Արդ երկու ինչ բաղկացուցանեն զզուարճախօսութիւն. Նիւթ, և Կերպ. զորոց՝ վն վախճանին որ առացաւ, յիրաւի է խօսել, սկիզբն առնելով 'ի գլխաւորէն։

## Գ. Լ. Գ.

### Թէ որ իցէ Նիւթ զուարճախօսութեան, և քանի՞ իցեն Տարբերութիւնք նորա։

Տեսակ զուարճալեաց զրուցաց կայանայ 'ի համառօտութեան. անդ՝ զոր ասացաք. այսինքն 'ի նշանակելն զինչ ոչ սեպհական և առօրական եղերօք, այլ՝ փոխաբերական և նմանական եղերօք. զի այս է գործ լուսոյ հանճարոյ։ Արդ՝ այս հանճարաւորութեն բաժանի յայնչափ տեսակս սեռական, որչափ են տարբերութիւնք փոխաբերական ձևոց. զոր ցուցաք 'ի Վերոյ Գլխոյն։

Առաջինն է Համեմատութեն. որ նշանակէ զինչ այլով նմանական, առնել զմին փոխանակ միւսոյ. իբր այն՝ զոր ասաց անախթենեա. Կենդանագիր Ծառայ իմ Խոնարհ է, որ ու Տուրքէ Վճար, Բէ ու Տուր Ծնեալ. կա-

մե-

մեջեալ նշանակել, թէ ծեծ պիտի նմա 'ի ձգել 'ի ծառայութիւն:

Երկրորդն է [illegible]. որ նշանակէ զիմն այլում որ կցորդ է նմա. որպէս զպատերազմ փողով, և զընհաշտութիւն պսակաւորաւ: Ըստ այսմ զաղղիացիք պատերազմ սպառնացան փլովրենտացւոց, թէ ոչ կամիցին յետս դարձուցանել 'ի նո զքաղաքան ամուրս. ասելով. [illegible]: Եւ փլովրենտացիք ետուն պատասխանի. [illegible]: Զի 'ի ձայն հատաբակաց զանգակի, ժողովուրդն խուռն 'ի զէն ընթանային: Եւ այս զուարճախօսութիւն զնոսա զարհուրեցոյց:

Երրորդն է [illegible], հենդնելով զանունն: Որպէս մետեղոսի առն ծանծաղամտի, որ պարծէր թէ աշակերտեալ իցէ [illegible] մեծի հռետորի, կիկերոն ընդ կատակս ետ պատասխանի. [illegible]:

Չորրորդն է [illegible]. որ առաջի աչաց դնէ զիրն ազգաւ և հատու ինչ փոխաբերութ.: Որպէս գիոգինէս վս անառակին, որ արկ 'ի խաղ զպապեալ իւր, ասաց. [illegible]:

Հինգերորդն է [illegible], որպէս լիւսիմաքոսին առ պարսիդէս դեսպան բիւզանդացւոց. [illegible]: Եւ պարսիդէս դարձուցեալ 'ի նա զթիկունս, ասէ ցիւրսն. [illegible]:

Վեցերորդն է [illegible], որ նշանակէ աւելի քան զոր ասէն. ը. հակառակս չափաւորութեան, որ ասէ աւելի, քան զոր նշանակէն: Այսպէս սպարտացիք՝ խրոխտ սպառնալեաց հրովարտակի արքային մակեդոնացւոց (փիլիպպոսի), ոչ այլ ինչ ետուն պատասխանի, բայց զերկու զայս բառ. 'ի մեծ ինչ թերթ թղթոյ. [illegible]: Կամեցեալ ասել. [illegible]

[illegible]

'Ի ՅԱՂԹԵԼՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ ԱՊՐԵԱՑԻ. ԶՆՈՅՆ ԱՐԱՐԱՑԵՍ ԸՆԴ ՔԵԶ, ԹԷ ԽԻՂՃ ԽԱՅԹԷ ՔԵԶ:

Եօթներորդ է ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ. որ ունի ինչ զօրութ՟ հաւանեցուցանելոյ. զի քաջ արտայայտէ զներհակն ներհականաւ: Որպ՟ ոմն խրատէր զոմն պատանի չամուսնանալ. ասէ. ԹԷ ՏԳԵՂԵՑԻԿ ԱԾԵՍ, ՔԵԶ ՈՉ ՀԱՃՈՅԱՑԻ. ԹԷ ԳԵՂԵՑԻԿՆ ԱԾԵՍ, ԱՅԼՈՑ ՀԱՃՈՅԱՑԻ: Եւ պատանին ետ պատասխանի. ՈՉ. ԹԷ ԳԵՂԵՑԻԿՆ ԱԾԵՄ, ԻՆՁ ՀԱՃՈՅԱՑԻ. ԹԷ ՏԳԵՂԵՑԻԿՆ ԱԾԵՄ, ԱՅԼՈՑ ՉՀԱՃՈՅԱՑԻ:

Ութերորդն է ՊԱՏՐՈՂՈՒԹԻՒՆ. որ յաւելպէս կոչի ՆՈՐԱՅՍ ԱՆԱԿՆԿԱԼ. յորժամ ելք բանին է այլազգ, քան որում ակն ունէր ունկնդիրն. իբր այն՝ զոր ասաց Մարտիալէս առ Զոյիլոս. 'Ի ԽՕՍԻԼ ԱՌԱՒԱՔ ԸՆԴ ՔԵԶ ԵՂԵՌՆԱՒՈՐ, ԴՈՒ ՉԵՍ ԵՂԵՌՆԱՒՈՐ, ԱՅԼ ՆՈՅՆ ԻՆՔՆ ԵՂԵՌՆՈՒԹԻՒՆ:

Այլ զօրօրինակ 'ի պատուաստել զտունկս՝ մի միայն տունկ բերէ ազգի ազգի պտուղս. նոյնպ՟ 'ի մի զրոյց զուարճախօս հնար է մուծանել բազում հանճարաւոր ձևոց պատուաստ փոխաբերութք. և այն է տաւել գովանի:

Յայս վայր խօսեցաք զտեսակէ. արդ խօսեսցուք զնիւթոյ:

## ԳԼ. Դ:

### ՅԱՂԱԳՍ ՆԻՒԹՈՅ Ւ ԵՆԹԱԿԱՅԻ ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՆ:

'Ի զուարճախօսութեան՝ է որ ծանր, և է որ ծիծաղաշարժ: Խաբին որք կարծեն, թէ Արիստոտել զուարճախօսութիւն կոչէ միայն զզրոյցս ծիծաղաշարժս: Զեկոյց նա զերկաքանչիւրն յայսմ իսկ գլխի, 'ի յիշեցուցանել իւրում, թէ զուարճախօսն ընդ խրախամիտս առնէ զրոյցս զուարթաբարս. այլ ընդ ծանունս առնէ զրոյցս ծանունս: Որպ՟ արուեստն սոփեստական արբանեկէ միապէս եթէ ծիծաղաշարժ պատրողուեց և եթէ լրջոց, նոյնպէս այս առաքինական ունակուն զուարճախօսուն միապէս արբանեկէ՝ եթէ ծիծաղաշարժ զուարճախօսութեց՝ և եթէ ծանուեց:

Բայց

Բայց առիցես թերևս. եթէ զուարճախօսութիւն է հակակայ լրջութե. իբր զի սա պատճառէ ըզ-տխրութիւն, և նա զզուարթութիւն. զիա՞րդ հնար է թէ լինիցի զուարճախօսութիւն ինչ լուրջ, կամ լրջութիւն ինչ զուարճախօս. զուարթութի ինչ տխուր, կամ տխրութիւն ինչ զուարթ:

Առ որ զայս տամ պատասխանի. չիք ինչ ենթակայ այնպէս ծանր, այնպէս տխուր, և այնպէս վայրենի. որում չիցէ հնար փոխել 'ի զուարճ ը նութոյ և ըստ տեսակի:

Զի՞նչ ենթակայ կայցէ ծանրագոյն և լրջագոյն քան զաստեղս երկնից. և զի՞նչ նախադասութի կայցէ լրջագոյն և գիտնականագոյն՝ քան զասութե այսպիսի. Աստեղք են՝ [illegible] և [illegible] մարմինք եթերային [illegible]. որք 'ի [illegible] ճառագայթից արևու՝ լինին լուսաւորք: Այս է նախադասութի գիտնական, այլ ոչ զուարճախօս:

Այս թէ առիցես. Աստեղք են եթերային հայելիք. որք [illegible] են [illegible], բայց թէ [illegible] 'ի նո՟ [illegible], լինին գիշերային արեգակունք: Այս է նոյն իսկ իմաստ, բայց առ փոքր մի զուարճախօս, զի եզերքն 'ի նիւթ և 'ի տեսակ են փոքր մի փոխաբերականք. և որչափ առաւել բացական լինին 'ի բուն եզերաց, նախադասութիւնն լինի առաւել զուարճախօս, մինչ՝ և ծիծաղաշարժ իսկ:

Ծանր զուարճախօսիկ լինի նախադասութիս. թէ ասես. Աստեղք են [illegible] կանթեղք՝ եթերային տաճարի [illegible]:

Գեղեցիկ, թէ ասես. Աստեղք են [illegible] [illegible] գործուածոյք [illegible] աշխարհի:

Սիրուն, թէ ասես. Աստեղք են [illegible] [illegible] [illegible] [illegible]:

Գիտնաւոր, թէ ասես. Աստեղք են [illegible] երկնային [illegible], որք [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]:

Վայրենի, թէ ասես. Աստեղք են երկնային [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible]:

Տխուր, թէ ասես. Աստեղք են [illegible] [illegible]՝ [illegible] [illegible]՝ 'ի [illegible] [illegible]:

Զառ

Զօրին հակառակն, ծիծաղաշարժ, թէ ասես. [illegible]

Նոյն ծիծաղաշարժ, թէ ասես. [illegible]

[illegible] ծիծաղաշարժ, թէ ասես. [illegible]

Այս թէ զերկինս խառնակ նմանեցուցես, մարթ է քեզ ըստ առխլխանն (189), ըստ [illegible] կոչել զատակս, [illegible] Յօրինակաց ասեն ունին առնուլ 'ի մէտ, թէ այս ամ նախադասութիւնք են զուարճախօսք, և ըսկզբ հանճարաւոր անձանց, զի ըստ [illegible], որ առնու զնմանն փոխանակ նմանւոյ. բայց ամն պէսպէսակ ըստ նիւթոյ. որ յաման է [illegible], և յաման [illegible]. 'ի նմ [illegible], և 'ի սուտ [illegible]:

Այս և արխտանելինութ ծիծաղաշարժ [illegible] կամ [illegible]: Ըստ և նիւթ [illegible]:

Նաև 'ի վր ծիծաղաշարժից՝ խմանալ պարտ է երկակի ազդեցութիւնս. մի՝ Փիլիսոփայական, և երկր՝ բարոյական. յորոց բաղկանայ երգ իմն՝ խառն 'ի փիլիսոփայականէ և 'ի բարոյականէ:

Փիլիսոփայական ազդեցութիւն է անհամեմատութիւն իմն՝ որպիսի և իցէ բնաւոր կմ արուեստագործ իրի, որ առաւելացու կամ նուազիցի քան զպատշաճական չափ. ոմ խեղաթիւր երես, մեծ իմն ունչ 'ի փոքր դէմս, շինուած իմն անհամեմատ, երաժշտութ իմն խառնաձայն, և ամ զազրութիւն՝ որ ժխորէ զատամունս:

Բարոյական ազդեցութիւնն է անպատշաճութիւն վարուց, որ առաւելու կամ նուազի քան զմէջ բանի. որպէս անմտութիւն, կամ խորամանկութիւն. վեհերոտութիւն, կամ յանդգնութիւն, և ամ որպիսութիւն անչափական և ամօթալի. Խառն ազդեցութիւնն է ազդումն մարդկան, որ երեւեցուցանէ պակասութեն իմն անասնական. ոմ

զաղ-

զայրատի իմն կնճիռ ցուցանել արտաքս երկայնաժամանի իբրև զխաղի։ Իսկ ագեղութիւն անասնական, որ երևեցուցանէ յոռութիւն ինչ մարդկային .. իբր կապիկն, որ երևի մարդ ագեղ և նենգաւոր, որ ոչ խօսի՝ զի մի աշխատ լիցի։
Արդ՝ ագեղութիւնն եթէ ֆիզիքական և եթէ բարոյական, է երկեակ. մին առաւել ամօթական, քան ատելական. միւսն առաւել ատելական, քան ամօթական։

Յանդգնութիւնն է առաւել ատելական քան զվեհերոտութիւն, և անխրաւութիւնն քան զանժուժկալութիւն. բայց անժուժկալութիւնն է առաւել ամօթական քան զանխրաւութիւն, և վեհերոտութիւնն քան զյանդգնութիւն։

'Ի վախճան ասեմ և զայն ևս պարտ է յուշ առնել, թէ նոյն իսկ ագեղութին է առաւել ամօթական յայս ոք՝ քան յայն ոք։ Որպէս ագիտութին յայնմ. որ 'ի գիտնոց է համարի. և վեհերոտութին յայնմ՝ որ 'ի քաջաց է համարի. և աղտեղութին յայնմ՝ որ է գեղաւոր և պանծալի։

Ապա ասեմ, թէ այս ամ ագեղութիւնք են նիւթ զուարճախօսութեան. այլ ոչ ամն է նիւթ ծիծաղաշարժ զուարճախօսութեան։ Զի թէպէտ երևս ինչ ծամածռու ծիծաղեցուցանէ, բայց թէ իցէ ծամածռութիւնն 'ի հերձմանէ ծնօտից կոկորդին ցաւոք, ոչ ևս շարժէ 'ի ծիծաղ, այլ՝ յախտակցութիւն և 'ի զարհուրանս։ Վասնորոյ 'ի վր բերէ արիստոտէլ, թէ նիւթ ծաղու է տգեղութիւն անցաւ. որպէս երևս ծամածռու, որ ոչ ցաւի։

Յորոց բանից մարթ է մեզ քաղել երկուս կարևոր հետևութիւնս. մի՝ թէ մոլութիւնք որք են ատելականք քան ամօթականք, ոչ են նիւթ ծիծաղաշարժ զուարճախօսութեանց, այլ թշնամանականաց և կծանողականաց. զորս պարտ է վտարել 'ի քաղաքական կենցաղավարութենէ։ Ուստի և ծիծաղաշարժք են այնք, որք զծաղու գան 'ի վր մոլութեանց առաւել ամօթականաց, քան ատելականաց. ոյք են վեհերոտութին, ագիտութին, անհամեստութին և արբեցութիւն, որք են մոլութիւնք առաւել անարգք

Նորգք և ծառայականք :

Երկ՟ հետևութին է, թէ՝ և 'ի վ՟ր այդպիսի ամօթա-
կան և անարգ նիւթոց՝ զուարճախօսութիք չեն ծի-
ծաղաշարժք, յորժամ կամ կարի իմն կծողագոյն
խայթեն զայլս, կամ կարի իմն յայանի զրոյցք լի-
նին զաղտեղեաց և զանպարկեշտից : Զի այնք ցա-
ւագին լեալ նախատելոյն, և այսորիկ զզուեցու-
ցեալ զունկնդիրս, ոչ կոչին ՓԴԷՂՈՒԹԻՒՆՔ ԱՆՉԱՓՔ :
Վ՟ն այսորիկ 'ի սոցանէ և 'ի քաղաքական կենցա-
ղավարութ՟ պարտ է խորշիլ : Եւ յիրաւի՝ գտանին
արք այնպէս անագորունք, որոց նիւթ ծաղու է
անգթութիւն . և այլք այնչ՟ աղտեղիք, որք ա-
խորժեն զաղտեղի զրոյցս՝ որպէս խոզք զտիղմ :
Պիւռոս 'ի սպանանել զծերունին պրիամոս 'ի զո-
հանոցի, խաղ արար զնա զուարճախօս զրուցիւք :
Եւ աղեքսանդր սևերոս, զծաղու եկեալ 'ի սան-
ջանս միոյ ուրուք յիւրոց սիրելեաց, որ վաճառէր
զուագուլիս արքունի, հեղձոյց զնա 'ի ծուխ, ա-
սելով. ԾԽՈՎ ԿՈՐԻՑԷ, Ո ՂԾԽՈՅ ՎԱՃԱՌԷ : Զուարճա-
խօսութիւն արժանի սևերոսի, (որ է գժնէի : )
Իսկ եղիոգաբաղայ առաւել միտեալ 'ի շամբշու-
թիւն քան յանգթութիւն, վարձս խոստանայր ո-
րոց հնարէին զրոյցս խենէշս . (190) : Բայց այ-
սոքիկ չեն համեմունք քաղաքական կենցաղավա-
րութեան, զորոց է աստանօր խնդիր :

Այս երկնակի զրոյց ինչ լինի միանգամայն ԾԻԾԱ-
ՂԱՇԱՐԺ և ՓԱՂԱՔԱՎԱՐԻ : Մի, եթէ ազեղուին այնպէս
թեթև իցէ, որ զրոյցն խաղեսցէ այս՝, այլ ոչ
ցաւեցուսցէ : Զի ոչ է հնար ունել զառաքինու-
թիւն զուարճախօսութ՟ այնմ, որ գիտէ զայլս մար-
մաջեցուցանել, և զիւր մարմաջել ոչ կամի : Թո՛ղ
զի ոչ միշտ զուարճախօսութիւնք անկանին 'ի վ՟ր
մօտակայից, այլ 'ի վ՟ր բացականաց . և ամ՟ որք
հեշտալուր է ամ՟, որ զայլս խոցէ :

Երկրորդ՝ յորժամ ազեղուին թէպէտ և աղտեղի
իցէ կի՟ կծանող, թէպէտ և ամօթալի իցէ կամ
մնասակար, այնպէս 'ի վայելուչ փոխակերպի հան-
ճարեալ ձևով, մինչև տեսակին գեղեցկանալ ըղ-
նիւթն, և կծողուին երևիլ գովեստ, և անհամես-
տին՝

ոյին՝ համառ, երբ զի թէ ոչ գոլի էութեն զըուցացն, գոլի հանճարին:

Երրեի և յառաջարկուես փիլիսոփական իրաց՝ գործ օյոր վայելչուե: Զասայ մարտաղես բան եղերք. [illegible]. այլ առէ. [illegible]: Զասայ, թէ [illegible]. այլ թէ [illegible]: Զասայ, թէ [illegible]. այլ թէ, [illegible]: Զասայ ովրատիոս, թէ [illegible]. այլ թէ, [illegible] (191): Եւ զայլմէ ումեմնէ, որոյ աջոյ ակն էր կոյր, և ձախոյ ակն ծնչէր արտօսր, ասացաւ, [illegible]:

Այսու օրինակաւ 'ի զուարճախօսութեն փոխին ասկղուեք բարոյականք, թէպէտ և կծանօղք կի՛ ամօթականք: Զոր օրինակ զգողաբարոյ ծնչէ ասացաւ, [illegible]: Եւ զայնմանէ որ բարձել տանէր կեղծ ինչ գլխարկանոց, և համարել էր ստախօս. [illegible]: Եւ զանգետ բժշկէ ումեմնէ. [illegible]: Եւ զպատկերէ բամբշի ուրուն, որ 'ի մնգոյր շպարիւր. [illegible]: Եւ զխուլ պատանւոյ ումեմնէ ազնուականազգէ, որոյ էր կեղակարծ անուն. [illegible]: Եւ զդատաւորի ուրուն շեղատանգա կնոջէ. [illegible]: Եւ զայնմանէ որ ունէր կին փոքրիկ, բայց ադեղ. [illegible]:

## Գլ. Ե:

### Յ[illegible]:

Մերազոյն յիշատակեցաք, թէ որոմչեան նիւթ ծիծաղաշարժից է զաղբութեան կիս ադեղութե,

եթէ ֆիզիքական և եթէ բարոյական, հարկի-պատշաճի՝ զի նիւթ ածականաց և ծաւալոյ իցէ գե-ղեցկութ կամ խորտակելութէ իւրաց, եթէ բարոյակա-նաց, և եթէ բնականաց, և արուեստականաց, որք արժանի իցեն գովութե և զարմացման:

Բայց աստանօր արժան է և զայն եւս յուշ ածել, զի թէպէտ և ամ առաջարկութիւք գովանիք՝ են ծանունք. բայց ոչ վս այդր բնաւքն են զուար-ճախօսիկք, եթէ նիւթն ծանր՝ չէ զգեցեալ զուե-ստ հանճարաւոր:

Թէ ասիցես դու, Հարդն է գեղեցկագոյն քան զմ ծաղկունս, զոր ասաց ընտրութն. լինի այս առաջար-կութի ազնուական և ծանր. այլ ոչ զուարճախօ-սիկ. վս զի է նշանակեալ ճշգրիտ և բուն եղերօք՝ իւր պատմաբանօրէն: Այլ զուարճախօսիկ և ծանր արար զայն սափիոս, յասել խրուամ. Թէ արարեալ էր դիւրի ըստ առաւել ծաղկանց, արարեալ էր ար-դեօք զհարդն: Եւ թէ հաճոյ էր քեզ այլաբանել և եւս, մարթ էր 'ի վր բերել, թէ փուշք են նր արբանեակք և զօրականք:

Ջհուակն ասացից. գործք ֆիզիքականք և յան-կարծագէպք, հանճարաւոր մտախոհութբ լինին ծանր զուարճախօսութե նիւթք. զորօրինակ զծա-ղու եկն մարախաղես 'ի վր երեղ, որոյ խոցեալ յօրսորդաց՝ 'ի նոյն և երկնեաց. ասէ. արգելի փ-ախչնոյն 'ի կիր եւաւ զհրատամակար զիւր գործ. զարա-զի և ապաշխարի. (ծզի արտեմիս չածուհին համա-րիւր որսորդ. միանգամայն և մանկաբարձ գիւ-ցազանց):

Այս եթէ 'ի մէջ երեւեսցի տիկին ոք, և աղայ մի նորա. երկաքանչիւրն գեղեցիկ. բայց երկոքին խակ միականի. մարթ էր 'ի քաղաքական ինչ կեն-ցաղավարութե ծանու զուարճախօսութբ ասել. Եթէ դղայս դարձեալ զիւր մի այն մօր իւրում. լինել զա խոյր Մէր (192). և մայրն գեղեցիկ ածրատիպ: Եւ այսպիսի են գովեստ գեղեցիկ արձանաց և դրօշ-ուածոց, և այլ ամ ձեռակերտ գործոց:

Ոլորիկ են զուարճախօսութիւնք հիմնեալք 'ի նիւթ քնականին. իսկ զբօսանական գեղով, եթէ մար-

մարախաղխի ասացեալ էր զներուսայ, [illegible] [illegible], լինէր այս առաջարկութի գովասանական և ծանր, բայց պատմական, և ոչ զուարճախօս:

Բայց 'ի ծանր զուարճախօսութի չրջեաց զայն, յաւել խորամ. [illegible]: Վա զի կատոն այնչափ խորշէր 'ի միապետութէ, մինչև չոքաւ զիւրովի, զի մի տեսցէ զմիապետել յուլիոսի կայսեր (193): Մինչ զի նոյն առաջարկութի, այնուիկ ձևաւոր և լսկնական յառաջբերութ, ըղձեցաւ զուարճախօսութի, անկորուստ պահեալ զծանրութի:

Այսպիսի ձևով գովեաց անգղիացոց պոլիտիկանոս՝ զպերճախօսն կիկկա (կլին) անուանի. ասէ. [illegible] զուամենէ գեղեցիկ և պարկեշտ օրինօքն ասէ. [illegible] Այս զուամենէ իմաստուն՝ փարթամ, և գեղեցիկ ակնոջէ, ասէ. [illegible] (194): Զի աթենաս էր չափաւորին իմաստութե. հերա՝ փարթամութե, և ափրոդիտէ՝ գեղեցկութե. և սա յինքն միայն միաբանեալ ունէր զերեսին զայն ձիրս:

Բայց դու տես, զի ձև հակադրութե առնէ զառաջարկութիւն և՛ս զուարճախօսս և ծանունս քան զայլ ամ ձևս: Որպ եթէ ասէիր. [illegible] Որպ և այս, որ անարգ է ըստ նիւթոյն, այլ գեղեցիկ ըստ ոճակին. [illegible]

Յօրինակաց աստի ունիս ճանաչել, թէ 'ի զուարճախօսութիւն ծանունս, ծանրութին ոչ բառնայ զհաճոյականութին, և զքաղաքական ինչ զուարթութե.

թն. որ թէպէտ չէ ծիծաղաշարժ, բայց և այն֊պէս շարժէ զանուշակ ինչ ժպիտ, ոչ ձայնարձակ և անկարգ՝ իբրև զզուարճախօսութիւնս խեղկա֊տակս, այլ՝ խաղաղական և հանդարտ. որպէս յոր֊ժամ տեսանեմք զսիրելին ոք բարեկամ, կամ երեսս կայտառս. կամ ճարտարարուեստ ինչ նկար, կամ հոյակապ ինչ ճակատ, կամ սքանչելի իմն և ան֊ակնկալ փոփոխութիւն թատերաց. զի նորութիւն և զարմանք մեծապէս բերկրեցուցանեն: Իսկ այսա֊քիկ են 'ի գիտնոց կենցաղավարութիւնս ընտրելա֊գոյն զուարճախօսութիւնք:

## ԳԼ. Զ:

### ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ 'Ի ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ:

Երկակի են զուարճախօսութիւնք, որ է՝ ԱՍԻՑ, և ԱՐԱՐԻՑ: Զուարճախօսութիւն ասից յատկապէս կոչի ԶԱՒԵՇՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ: Զուարճախօսութիւն արարից մասնա֊ւորապէս կոչի ԽԱՂՔ: Իսկ յերկուց սոյն բաղ֊կանայ զուարճախօսութիւն ԽԱՌՆ յասից և յարարից: Եւ երեքին իսկ յանկաւոր են քաղաքական կեն֊ցաղավարութեան:

Սակայն կամեցեալ խօսիլ նախ զզուարճախօսութեանց ա֊սից. Առաջին կիրառութիւն նր է 'ի ԴԱՏԱՍԽԱՆՍ. ո֊րոց հնարկօրէն պարտ է լինել համեմատ ՊԱՏՃԱՌ֊ԱՆԱՑ. դարձուցանելով զխայթ՝ զրուցաց խայթա֊կանաց, կամ զգով զրուցաց գովականաց:

Առաջի Կղեմայ ութերորդի ընտանի զրոյցք 'ի միջի լինէին, թէ որով օրինակաւ հնար իցէ քա֊ղել արծաթ, առանց տրտմեցուցանելոյ զժողո֊վուրդն: Իսկ անդ Արմէլլինոս ոմն անուն, որ թարգմանի ԽՈՒՂ (որ ՍԱՄՈՅՐ), զորմէ էին կարծիք՝ գանիչ լինել այսպիսի կարգալոց: Զամանէ մի 'ի պալատականաց զծաղու եկեալ՝ ասէ. ԱՐՔԱՅԻ ՅԵՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ 'Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԵՐՁԵԼ ԶԱՆՑ ԲԱՐՁՐ, ԹԷ ԶՈՐԵՆ ՅԱԾԿԵՆԱՑԷ ԶՄՈՐԹ ԱՅԼՈՑԻՆ ԽՈՒՂԻ: Որում Արմէլ֊լինոս ետ պատասխանի. ԻՍԿ ԳԷԹ 'Ի ՅԱՒԵՏ ԸՆԴԻՑԻ ԻԿԸ ԳԻՏԱՅԻ. ԱՅԼ ԳԻՏ ԱՆԱՍՆՈՅ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ, ՈՐ ՈՒՏ 'Ի

ԽԵՆ

[illegible] 'ի [illegible]:
Նոյնպէս յընտանի գիներբուս ուրեք, 'ի մատու_
ցանել միոյ ուրուք զբաժակն 'ի շրթունս, ասէ
ցնա ՟Է՟ խաղ ընկեր իւր. [illegible] 'ի
[illegible]: Եւ նա եւ ընդ խաղ եա պատասխանի,
[illegible] 'ի [illegible]. և էարբ:
Այսպիսի զարմազարմ զրոյցք առաւել եւս են
զուարճալիք, յորժամ մատնէ յայնս ձև. հակակայ:
'ի կենցաղավարութէ ուրեք եկն եհաս 'ի վ[՟] պա_
տանի ամն ուշեղ, բայց այնմ[՟] լռար և վախա, մինչ
հազիւ անկանիլ նմա ընդ ակամբ: Մի յընկերաց
ողջոյն եա նմա այսպիսի. [illegible]
[illegible]: Եւ նա ասէ, [illegible]:
Բայց 'ի գովական պատասխանիս ՟Է՟ զուարճախօ_
սութէ խառնի ծանրութի, եւեթ առնելով յաղթը_
ւարարյութին և 'ի համձար:
Հեստամաս էին սրբութէ կուրախոս և լե_
լիսս՝ ներա բարեկամք միմեանց: Պրեստրութին
'ի կոյսերէն տուաւ լեզխոսի: Կուրախոս քաղա_
քավարութ[՟] խնդակցեալ բարեկամին, ասէ. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]:
Պատասխանի եա լեզխոս. [illegible],
[illegible]
[illegible]: Կրկնեաց ան_
դրէն կուրախոս. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]: Պատասխանի եա լեզխոս. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]: 'ի յաւելուլ կուրախոսի և այլ եւս քաղա_
քավարութիւ, լեզխոս յայս կիքեաց զբանն. [illegible]
[illegible],
[illegible]:
Են և պատասխանիք, որք ոչ խայթական են, և
ոչ գովական. բայց են զուարճախօսիկ՝ վ[՟] երա_
գահաս մատուրութէ:

'ի

'ի կենցաղավարութեան ուրեք բանք 'ի մէջի եղեն. մեք այնք իցեն, որք չմիաբանին ընդ միմեանս ։ Ա՞ին ասէ. [illegible] ։ Եւ միւսն. [illegible] ։ Եւ 'ի լինել խնդրոյ միասանգամ, մեք այնք իցեն, որք առաւել միաբանին ը միմեանս. ասէ ոմն. [illegible] ։

[illegible] ։

Եւ առաւել ևս զուարճախօսիկ լինին պատասխանիք՝ թէ մտանէ յայնս ձև [illegible] ։ Ոպ իբրև հարցաւ սորատանեկոս, [illegible]. ես պատասխանի. [illegible] ։

Ի՝ և այլ կերպառութեան իբրև համձարաւոր ինչ [illegible] 'ի մի նոր ինչ լոյս, որ պատմիցի ։ Պատմիցաւ, թէ գործիսս ծնաւ 'ի գագաղի. մինչ առնէին զմայր նր 'ի գերեզման ։ Յոյր մի վաղերիոս արար այսպիսի ինչ մասծութեն ։ Ո՜ [illegible] ։

Ի՝ զի [illegible] լինի օրինակաւ սորաաուէ կամ բացասութեան ։ Որպէս իբրև լու եղև, թէ լարրակ ախմար ծաղրածուն անկեալ էր 'ի ծով, ոմն ասէ. [illegible] ։ Եւ այլ ոմն ասէ. [illegible] ։

Ի՝ և այլ կերպառուէ օրինակաւ [illegible] 'ի նիւթ ծիծաղական. իբր սեներայինն, որ ղծաղու եկեալ զիւրով զուկիլլոսիւ 'ի խոստավանեցուցանել զնա՝ թէ ունի եղջիւրս, ասէ. [illegible] ։

Բայց բազում անգամ ձեռնարկուին ոչ տարածանի 'ի ձև հաւաքարանուէ, այլ ամփոփի յեզրակացուէ. կամ [illegible] ։ Ոպ յորժամ լագիոլաւոս արքայ նէապօլայ տայր զնմ աւագութիս կայեատցւոց, թէպէտ և չէին ըուռնակ, իբր զի կայեատցիք ատմնջական լեալ էին նորա յիւր տառապանս, ոմն 'ի չինականաց ասաց ցեղիւր, [illegible]

[illegible]

[illegible]

Ի՛ մեզ եւս կիրառումն օրինակաւ առաջարկութեան առեղծուածոց և առասպելաց առ միմեանս ։ Զոր օրինակ եղև առասպելն այն սփինգեան. Ո՞ր [illegible] զոր առեղծեալ Իդիպոսի, թէ և [illegible], ստացաւ զԹէբութիւն (195) ։

Կամ օրինակաւ [illegible], ուսուցեալ իմաստ ինչ բարոյական, կեղծ զրուցիւք ընչաւորաց կամ անշնչից ։ Յորոց առակարկութեանց ոմանք են ծածկագրականք. իբր այն, թէ [illegible] առ ուսուցանել, թէ բազումք կարծելով փախչել 'ի չարէ, չարագունի պատահեն ։

Այլ այս է անկատակ. 'ի [illegible] 'ի նշանակել. թէ իւրաքանչիւր որ յարգէ, զոր ըստ իւրում յօժարութեան գտանէ ։

Նման է այսմ կիրառումն [illegible]. զի առ ռամիկս ազգաւ են ռամկային ձեռնարկութիւնք. որք 'ի խոր տպաւորին ։ Իսկ 'ի սոցանէ ոմանք են անարգք. իբր այն՝ թէ [illegible] ։ Իսկ ոմանք ազնուականք. իբր այն՝ թէ [illegible]. այսինքն է, մեծանձնն ոչ ընդունի զփոքր պատիւ ։

Նոյն տրոհումն է և 'ի [illegible]. Ծանր զուարճախօսութիւն է այն. [illegible]. և ծիծաղաշարժ այն, [illegible] ։

Մի՛ւս եւս քաղցրախորժ կիրառումն է [illegible], յարմարեալ ծանր ինչ կամ ծիծաղաշարժ իմաստ. զորս արհամարհել կոչէ պատկերս, զի յայտնի երևեցուցանեն զմեր միտս ։ Ծիծաղաշարժ եղև իմաստ սեստայ շատակերի, որ՝ առ որս զարմանայինն՝ թէ զիա՞րդ ուտէր այնչափ, տայր պա–

պատասխանի. որոշեալն է նման ծով գրոյ։ Բայց ծանր եղև իմաստ գեղեցկութեանն, որ սուղ ինչ բանիւ նկարեաց անկանդիման աթենացւոց զընդւորութիւն ռամկի. նման է նա, ասէ, ղեկի նաւավարի. որ ամրակազմ է, բայց խուլ։

Հուսկ յետին կիրառութիւն է՝ 'ի պատմութեան, յորժամ 'ի պատմել զծանր ինչ՝ կամ զծիծաղական, 'ի գործ ածին բառք ինչ կամ զրոյցք ձևաւորք և զուարճախօսք՝ ծանունք կամ ծիծաղականք, որք արծարծ և շնորհաշուք յայտնեն զպատմեալն։ Որովհետև յոյժ մասունս բանի չէք ինչ՝ որ այնպէս յօրանջեցուցանէ զունկնդիրն, ոչ յերկար և անծաղր վէպ. յայս սակս սմա առաւել քան զամ զրոյցս պարտ է լինել պաճուճազարդ և զուարթարար՝ հիւսիւք հանճարաւոր ձևոց։

## ԳԼ. Է.

### Զուարճախօսութեանց արարից։

Սոքա ևս են յանկաւորք քաղաքական կենցաղավարուէ, յորժամ չլինին կարի իմն մտմտականք։ 'Ի սոցա համարի են նախ Նշանաւոր արարք, որք են պատկերք իմացուածոյ իբրև զխօսս. վասն որոյ մարթ է կոչել զնոսա խօսս համրս, կամ բարբառս անձայնս։

Հորտենսիոս յատենաբանել նորում, զինչ և անէր. այնպէս արծարծ արտայայտէր ձեռօք, որպէս խօսիւք. վասն կիկերոն նախանձաւոր նորա՝ կոչէր զարարս նր ճարտարութեան նմանոյ. և բազումք ընթանային առաւել 'ի տեսանել զնա, քան լսել 'ի նմանէ։

Արդ որպէս խօսից՝ նոյնպէս նշանացի արարից ոմանք են զուարճախօսք, և ոմանք ոչ։ Չեն զուարճախօսք, որք ընտրաբարպէս նշանակեն զիմացմունս. ոչ ծափ զծափի հարկանել, կամ կայթել յուրախութէ. բաղխել զկուրծս, կամ փետել զհերս առ ցաւոց. ձգել զբազուկն 'ի սպառնալ. ամբառնալ զյօնս 'ի զարմանս. տատանել զմատունս 'ի խնդրել զօգնութիւն։

Զուար-

Զուարճախօսք այնք են, որք նշանակեն զիմացմունս իւրովի զուարճականս ։ Սերեւեան ժողովուրդք յայնկոյս հնդկաց խօսէին միայն նշանացի. բայց և այնպէս 'ի մէջ իւրեանց խաղ առնէին, և զծաղու գային. զի որպէս խօսք, նոյնպէս և նշանացի արարք են պատկերք մտաւորութեան. և մտաւորութիւնն է աղբիւր զուարճախօսութեանց ։

(196). Մնջկատակք շարժմամբ ձեռաց և բովանդակ մարմնոյ նմանաբերէին զամ արարս ծիծաղաշարժս և անարգս, կամ անողորմս և անգթականս ։ Անողորմ նշանացի կատակ եղև այն, զոր մի 'ի մնջկատակաց ընդ խաղալն երևելոյ առաջի Ներոնի 'ի թատրոնի ։ Լուղելով իւրով նշանակեաց զնաւաբեկումն զոր նիւթեաց Ներոն մօր իւրում. և ըմպելով իւրով նշանակեաց զթոյնն, զոր արբուցեալ էր նորա՝ հօր իւրում ։

Բայց և՛ս կատակականք են [illegible] . իբր այն զոր առնէր կինն անզգամ, որ երկճիւղ մատամբք եղջիւրս 'ի գէմս ածէր առն իւրում ողջ չնացողի. և վասն այնր յընկենուլ զնա առնն 'ի գետ, այն ինչ ջրահեղձոյց կորնչէր. գև. երկճիւղ մատանցն քան զջուր 'ի վեր ամբարձմամբ՝ յանդիմանէր զնա լինել չնացող ։

Փոխաբերական եղեն և նշանացի արարք այլոյ ուրումն. որ 'ի հատանել ընկերի իւրոյ զեղընգունս, էառ զմի 'ի կտորոց, և մերձեցոյց յատն իւր. կամելով ասել ը խաղ. [illegible]. որոյ եղունգն բժշկումն է ախտից ։ Նոյն այլումն 'ի լսել զձայն երգեցիկ ուրումն, որ էր գորտաձայն, արկաւ զիւրեաւ վերարկու, ոչ թէ ասելով. [illegible] ։ Ընդ կատակս արարից հաշուին և խաղք ինչ և ձեռնածութիւնք, որք այլ ընդ այլոյ երևեցուցանեն. և այլք՝ որք յանկարծակի զգեստնեն զընկերն անմիտս, զի 'ի [illegible] ձեռաց են ասկի ։ Այլ թէ յանկանելին վնասեցի, ոչ ևս է կատակ. զի ոչ է [illegible] ։

## ԳԼ. Ը.

ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ, ՈՐՔ ԽԱՌՆ ԵՆ ՅԱՐԱՐԻՑ ԵՒ ՅԱՍԻՑ։

Այսպիսի եղեն այն երկու կատակք մնջկատակի առաջի Ներոնի։ Զի ընդ երգել նորա տող մի ողբերգական. ԱՌՈՂՋ ՀՕՐ Ե ԱՌՈՂՋ ՄՕՐ ԻՄՈՅ, յասելն՝ առողջ հօր, արար արարս ըմպելոյ. և յասելն, առողջ մօր իմոյ, արար արարս լուղելոյ. և տողիւս՝ որ չէր իւր՝ արար երգիծումն։

Նոյնին և զուարճախօսութիւնք կին կատակք արարից և ասից. յորժամ երևեցուցանին բարք ուրուք 'ի պատկեր ինչ նկարեալ կամ քանդակեալ, յոր մի դրեալ կայցէ զրոյց ինչ զուարճախօս։ Օգոստոս արար մեծածախ կոչունս բամբշաց յաւուրս տօնի մեծի. ուր բամբիշք երևեցուցանէին 'ի զգեստս զպեսպէս չնծուհիս. և ինքն զգեցեալ էր զապողոնին։ Դրանացեալ ժողովրդեանն ընդ այն, եդին զանունն օգոստոսի 'ի մի պատկերի միոյ ապողոնի, որ քերթէր զմորթ մարսիասայ, կոչեալ այսուհետև զօգոստոս՝ ԱՊՈՂՈՆ ՄՈՐԹԱՀԵՐՁ։

Կամ յորժամ գրոշմին ապաւորութիւնք ինչ կին նշանք՝ հանճարաւոր զրուցիւք, 'ի նախատինս ուրուք, կամ 'ի գով։ Որպէս կամելով երևեցուցանել զագահ ոք՝ նկարեցաւ խոզ պարարեալ, այսպիսի զրուցիւ. ՄԻԱՅՆ 'Ի ՄԵՌԵԼՈՅ. զի միայն 'ի մահու է պիտանի։ Իսկ 'ի գով ախինոջ ուրումն գինեսէրի, որում անուն կոչիւր լաւրա, (այն է դափնի.) նկարեցաւ պսակ 'ի դափնոյ այսպիսի ինն գրութբ. ԱՌԱՆՑ ԳԻՆՒՈՅ ԲԵՐԷ. դափնոյն վայելէ պսակ 'ի դափնոյ (197)։

Երբեմն այն ինչ, զոր հնար էր նշանակել խօսիւք, բացատրի կատակաւոր ինն արարմամբ, և այս արտայայտի։ Մատոյց ոմն հրաւիրեալ ի 'ի ճաշ՝ յումեմնէ խորամէ բարեկամէ, անկեալ առաջի իւր կտոր մի գաճ մսոյ, անդէն վաղվաղակի յարեաւ 'ի սեղանոյ, և եկաց վայր մի արտաքոյ դահլճին. ընդ որ զարմացան կոչնականք։ Յետ սակաւ միոյ դարձաւ. և իբրև հարցաւ,

ցաւ, զի է՝ զի եւեր արտաքս, ետ պատասխանի :
Տէրտէրաւ ղայս կա, թոռնէյա ինչ, թէ ինչէ ... ինձայ ջուր-
այ. ինայց գոհութեան Ձայ. ղի գրի ուջուրի ինձ քինտանի:
Մարթ էր ասել նմա բոցերեակի. այս կա դահ է
ինքն ուկա ջրուայ. այլ արարմամբն արծարծեցոյց
զատացեալն :

Ու ծիծաղեցաւ յայսպիսի իմն կատակէ մի 'ի ծաղ-
րածուաց. որոյ տեսեալ զանձն 'ի գերեզման զոմն
մեռեալ, ակն յանդիման տիբերիոսի, կասեցոյց
զգագաղն, և կեղծաւորեցաւ խօսիլ յականջս
մեռելոյն: 'Ի հարցանել տիբերիոսի, թէ զինչ
խօսեցար, ասէ. ասացի, թէ յէրթաւ քաջ 'ի վա-
ղիւարն, պատմեա օգոստոսի, թէ յօժարդ են ու ճնարե
ղաս 'ի տէր կտակագրեալս: Իսկ տիբերիոսի ծաղր ը
ծաղու փոխանակեալ զաղանաբար՝ ասէ. ղաս նա
ւինի, թէ տաս ինքնին պարտիս օգոստոսի ղայտ ասար. և
ետ զնա սպանանել:

Է՛ միւս ես հանճարաւոր ( այլ վտանգաւոր ) օ-
րինակ, խառնել 'ի խաղ՝ զբոյցս զուարճախօսս,
որք երեւին վերաբերիլ առ խաղն, և վերաբերին
առ ծածուկ խորհուրդս փառազինն և ոխնոյն,
որք խաղան 'ի միասին, գաղտամբ սպառնե-
լով, և ճարտար պտտինելով այլաբանութեամբն.
այնչափ առաւել խորագիտութբ, որչափ առա-
ւել երեւին պարզախօսք :

## Գ․Լ․ Թ․

Յաղագս տարբերական տեսակաց զուարձախօսութեանց.

Յառաջագոյն եդեալ զնախընթաց ծանօթու-
թիւնքս, չատ է արդ ասել, թէ զուարճախօսու-
թիւնն է ունակութի հոգւոյ՝ յասել և 'ի լսել
ինչ ինչ զուարճախօս և ը խաղ. միջասահմանու-
թբ վայելչականաւ կենցաղավարուե քաղաքայնոց
և պատուաւորաց :

Ունակութե պակասեալ յայսմ առաքինական մի-
ջասահմանութբ կոչի Գեղջկաբար կամ Գռեհկաբար :
Ունակութիւն աւելազանց՝ կոչի Խեղկատակաբար
կամ Ծաղրածաբար :

Զեր ծաղիկ գեղեցիկ, որ 'ի վիճակ ինչ գտանի ոչ ինքնին բուսանիցի: Այնպէս 'ի բարերաստ միտս ինչ բնաւորապէս ծաղկին մտացի և զուարճախօս զրոյցք: Ցայլս մշակին վարժիւք կմ՛ երկասիրութբ. և 'ի սակս գործածութե գոյաւորի ունակութիւն:

'Ի վ՟ր բերել արխատաւել, թէ մտացի և զուարճախօս զրոյց յառաջ գայ 'ի հանճարոյ, կմ՛ 'ի վարժից: Բայց լինելն զուարճախօսութե՟ց վայելչական և տաղբինական, զի է՛ զի 'ի քաղաքական կենցաղավարութ՟ն զկայ առցեն 'ի կապար միջասահմանութ՟ն, այս է գործ բարոյական իմաստասիրութեան:

Բայց կամեցեալ խօսել զբնաւորական ունակութե՛ անտի, թէ առ զուարճախօսութիւն բնաւորապէս վայելչականս նա է պատրաստական, որ ունի խառնուած բարեխառնեալ յարիւնոյնոյ և 'ի սևամաղձոյնոյ, զէմս խառնուածոյս 'ի ծանուէ և 'ի զուարթարարէ. այս ուրախաքան տխուր. այլ ոչ ծիծաղոտ: Զի արիւնոյինն օգնէ զուարթութե. այլ սևամաղձոյինն օգնէ սրամտութե. և են չափաւորիչ միմեանց: Այսպիսի էր կրատոս ատենաբան հռովմայեցի, ծանր հաճոյական. որ առանց յեղափոխելոյ հոլովէր երբեմն զրոյցս. որ խնդացուցանէր զայլս ծաղու. և ինքն երբէք չծիծաղէր:

Բայց յաղագս բարոյական ունակութե՛ մեծ արդ գնել, թէ էր աղագաւ, և որով օրինակաւ գործիցէ այր զուարճախօս. որովհետև զնիւթոյ նր և զտեսակէ ապաքէն եղեն զրոյցք:

## ԳԼ. Ժ.

### ԹԷ Ո՞Ր ԻՑԷ ՎԱԽՃԱՆ ԶՈՒԱՐՃԱԽՕՍԻՆ:

Բուն վախճան զուարճախօսին ոչ այլ ինչ է, բայց 'ի կիր արկանել զառաքինական ունակութիւնն 'ի սակս հանգստ ուրախութե, որ զուարճացուցանէ զմիտ վաստակեալ 'ի լուրջ զբաղմանց: Բայց չէ գլխովին ունակութիւն ունակ, որ յօժա-

րա-

բամբիծ է զայլս այպանել, և ինքն ոչ կամի այպն լինել:

Զուարճախօսութիւն է բարեկամական ինչ անաղ. և 'ի մէջ բարեկամաց նմին է հասարակաց: Որ պարգևէ՝ և չընդունի պարգևս, առաւել շռայլ է՝ քան առատաձեռն: Որ առնէ զբոյցս ը խաղ, և չընդունի զբոյցս ը խաղ, առաւել դեղձուկ է՝ քան զուարճախօս: Գիտակի է այն և կարծի, խայթել զայլս, և ոչ տանիլ՝ թէ ոք ընդհարցի ընդ նա:

Առաւել ևս դեղձուկ է զուարճախօսութիւն, որ 'ի բերկրեցուցանել զոք՝ բարկացուցանէ զայլ ոք: Վնկ կոչեցաւ երգիծական կմ ծիւաղական, յանուանէ վայրենի մ·դոց թշնամեաց մ·դկան. որք նկարին ող մ·դակերպ գազան. կամ ող մարդ պատուաստ 'ի գազան. զի կատակք կծանօղք առաւել են գազանայինք քան մարդկայինք:

Բայց ևս անարգ է զուարճախօսութիւն, որ վաճառէ զծաղր գնոց, և ուրախ առնէ զունկնդիրն՝ զի բաւեսցէ զծաղրածուն: Էր այս իմաստնոյ կոչեցաւ պարասիտոսի, որ արուեստ պորտաբուծից և կատակերգաց, պատառաքաղ անուանելոյ՝ յանուանէ սովեալ թռչնոց, որք գազանային միս 'ի սեղանոյ. կմ ոխզծ հարպայից, որք թռուցեալ զսեղանով սլանային 'ի վր կերակրոց (198):

Այս զուարճախօսութիւն ոչ արդանեկէ իմիք մոլութեան: Բայց հնար է թէ արդանեկեսցէ այլում առաքինութեան, փոխել զվախճանն, այլ ոչ զանձն: Զոր առնու յիւր պէտս տեղնորանն առամաչեցուցանելոյ զմեղապարտն. զի ող սուրբ օծեալ իւղով խորագոյն ըմտանէ, նոյնպէս նախատինք քաղցրացեալք զուարճախօսութեամբ խորագոյն աղդեն:

Գիտենայ և 'ի բերել զասուր այլս, և 'ի վայր կործանել զձեռնարկութիւն հակառակորդին. զի ծիծաղաշարժ ինչ պատասխանի զինէ ակարացուցանել զհզօր ձեռնարկութիւն, իբր կակուղ բուրդ զշանթս և զռումբս: Ող կիկերոն 'ի խորտիս խիղախմանց մարկոսի անտոնիոսի՝ խուտափէր զը-

ւարճ

ւարճ խօսիւք, և կարեւէր խոցեր զհակառակորդս իւրով ծիծաղաշարժ սրամտութ՝ քան հաստատուն փաստիւք. որպիսի եղև այն հանճարաւոր երկայրի զրոյց իւր ընդդէմ անիրաւ օրինաց վերբերի. Նէ-ուրտ Ընենդէն (սուէ) Իօրէ՝ Իրաւաւանց Վերբերի (199):

Առաւել եւ պիտանեայ զուարճախօսութիւն 'ի յայտնել զթերութիւնս մեր, և 'ի յանկուցանել զախտս այլոց: Վ՛նկ զհեռմնաէ չածոյ ճառամախօսութե առատապէլէին՝ առ իւրև ունել զշնորհս. և շնորհ իսկ կոչին զուարճախօսութիւնք. զի շնորհք խնդրեալք շնորհիւ դիւրաւ տուայանին. և առ շահելն զսէր՝ այնչափ օգտու է գեղեցիկ ինչ ասուն, որչափ գեղեցիկ ինչ գեմք:

Զի՛ եւ յաւելից, առաջնորդք իսկ պտ̄րզմ 'ի կիր արկին զուարճախօսութե, 'ի քաջալերել զզօրս իւրեանց պտ̄րզմիլ արիաբար. ահ՛ Լէոնիդէս, յորժամ իւրքն զարհուրեալք 'ի բազմութէ Թշնամեաց՝ ասէին նմա, (որպէս էր իսկ ճշմարիտ,) այնչափ բազում են նետք նոցա, մինչև խաւարեցուցանել զարեւ, ծիծաղելով ետ պատասխանի. ընդ հովանեաւ ուրեմն պատերազմեսցուք. և այսուիկ զուարճախօսութ՝ ամաչեցուցեալ զնն՝ փարատեաց 'ի նոցանէ զերկիւղ:

## ԳԼ. ԺԱ.

### Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ զուարճախօսն:

Յայտնի իսկ է, թէ այս առաքինութիւն հաստատեալ կայ 'ի միջասահմանութե. բայց ոչ նոյնպէս յայտ է, թէ յինչ հաստատեալ կայցէ միջասահմանութիւնն:

Օրէնսդիրք ոմանք արգելին զզուարճախօսութիւնս կծանօղս, և անհամեստս. զի նոքա դառնացուցանեն, և նոքա գարշեցուցանեն զսիրտս: Բայց որ բառնայ իսպառ զայսպիսի նիւթս, բառնալ ունի յաշխարհէ զծիծաղաշարժս. և որ տեղի տայ ծիծաղաշարժից, ոչ երբէք կարողանայ նշանակել կապար 'ի մէջ օրինաւորի և չօրինաւորի: Թող զի, ո՞ր օրէնսդիր կարող իցէ դնել օրէնս մտաւորութե խոժոռելոյն կամ ցանկասիրին:

Այս

Այսպէս չէք այլ օրէն առաքինութեան զուարճախօսութեան, բայց ՚ի դատաստանէ առաջօղին զայն։ Ոչ են առատանօր զդէյք ը խածատող և ը ալիղծ կենդանիս, ոչ ը ճիւաղս և ը պատառաբերյծս, այլ ը քաղաքայինս և ընդ առաքինիս. և առաքինին է իւր ինքեան օրէնսդիր։

Այս գեղեցիկ և յաւերժական օրէն է՝ պահել զօրէնս վայելչութեան քաղաքական կենցաղավարութեան, զմտաւ ածելով։ Զինչ զուարճախօսութիւնքն իցեն որ ասին. զինչ է որ ասեն. և զինչ ասին։ Ասաքիկ են երեք ընդհանուր կանոնք, յորս մտացուոյն պարտ է հայիլ յամ ատինս, և ՚ի մանաւոր ժողովս։

Բատ առաջնոյ կանոնի՝ վայելչական լինի զուարճախօսութիւնն, որ՝ ոչ առայսու, ՚ի մէջ բերէ ողերութիւն ինչ անցաւ, կամ պատշաճողութիւն ինչ հանճարաւոր և մտացի։ Զի ծիծաղաշարժք, որք ցաւ բերեն, չեն ծիծաղաշարժք. և իմաստք առանց սրութեան մտաց՝ չեն զուարճախօսք։

Այսու օրինակաւ զուարճախօսութիւն ոչ լինի կծանող, և ոչ խնդնէջ, ոչ ճիւաղական, և ոչ խեղկատակ. լինի պարկեշտօրէն հաճոյական, և հաճոյօրէն պարկեշտ. իբր զի վախճան քաղաքական կենցաղավարութեան է հանգիստ ինչ զբօսանաց։

Լինի և վայելչական, եթէ ժամանակի և ձևին իցէ պատշաճող։ Այլ զուարճախօսութիւնք ճահողանան ՚ի խնջոյս ուրախութեան, և այլք ՚ի լուրջ գումարման։ Կատոն թէպէտ և էր խիստ դատաւոր. ախորժէր զզրոյցս որ ընդ խաղ. յորոց և շարադրեաց գիրս։ Եւ բազումք ասէին զնմանէ, թէ ելանէին այն բանք ՚ի նորա գեղջուկ իբրև կայծակունք յամպոց։ Բայց յորժամ մտ գնէր իւրում պաշտաման, ոչ կամէր յայնց առնել ինչ կամ լսել. շաքարն թուէր նմա թոյն։ Դատաւոր երբեմն յաթոռ դատողական՝ ՚ի քննել զպորտին Նասիկ զառաջեան շնորհաբան, իբրև եհաս ցայն տակորական հարցումն, Է՞ ՔՈ ԿԻՆ. ՚Ի ՀԱՃԷԼ ՍՐՏԻ. Նասիկ անդէն վաղվաղակի ետ պատ. Է ԻՄ ԿԻՆ, ԲԱՅՑ ՚Ի ՀԱՃԷԼ ՍՐՏԻ։ Զայս անկարծ՝ ուսաւ և զուարճախօսա-

պա-

պատասխանի՝ եթէ կատուծի լուեալ էր 'ի գիւղի, ոչ միայն ծիծաղէր, այլ գրէր արդեօք և յիւրում յիշատակարի։ Բայց հայեցեալ 'ի տեղին՝ ուր աստացու, այնչափ բարկացու, որ 'ի բաց էառ 'ի նմանէ զկամար գօտի և գծի. և զապակեան արար հետի։

Այլ զուարճախօսութիք պատշաճին ուրախ ժամանակաց, և այլ՝ տխուր ժամկաց։ 'Ի նստ լուրջ զրոյց լինին ցուրտք. 'ի սոսա ցուրտք լինին ծիծաղաշարժք։ Որ լայ, տակայ զայն որ ծիծաղի. և որ ծիծաղի՝ տակայ զայն որ լայ։ Յամենան դեկանմբերի գաղք սինկղիտոսաց 'ի բաց եդեալ զպճղնաւորն, բաճկոմին է ծառայս կոչաւէին, և է խաղ՝ զրոյցս 'ի միմեանս արկանէին. զոր թէ յայլ ժամանակս անէին, արտաքսեալ լինէին արդեօք յաւրբունի գրանէն որպ խելագարք. և խելագարագոյն համարիւր՝ որ մասուրագոյնն համգիստնայր։ Այն էին նոցա աւուրք բարեկենդանութեան։

Այլև 'ի հարստնիս յօրինէին և երգէին ցուցս խինէշս և աղաեղիս, բայց մասցիս և համձարաւորս (որ հեթանոսական կարգի)։ Եւ ոչ միայն մանաւորք յօրինէին 'ի վր ինքնակալաց, որպէս կզոգիանոս 'ի վերայ ծնորիսաի, այլև ինքնակալք 'ի վր մանաւորաց, որպ օգոստոս 'ի վր պողղիոնի։ Եւ այն զրոյցք յայնմ ժամանակի էին շողամականք, որ յայլ ժամանակս էին սրբապիղծք։ Ոչինչ այնպէս է անալի, որպ զուարճախօսութի աղաժամ։ Թովմաս մոռոս, այր՝ քաջ իմաստուն, բայց անձնաթշուառ. գլուխ խարհրդականաց մեծին բրիտանիոյ, այնպէս զմկատեալ էր զհետ զուարճախօսութե, մինչև յելանել իւրում է սանգուղս 'ի գահաւանդ գլխատու՝ տայ է խաղ միում 'ի պաշտօնէից գատաստանի։ Օտնեմ էնց [illegible] 'ի [illegible], որ [illegible] ու [illegible] յումէրէ [illegible]։ Ամենեքին լային զնա. և նա գեռ զծաղու գայր։

Երկրորդ կանոնն է, զի զուարճախօսութին իցէ յանկաւոր այնմ որ առէ։ Ձի զօրօրինակ այլ զրոյցք պատ_

պատշաճին եղերերգութեան սենեկեայ. և այլ՝ խաղարկութեան արիստոփանեսի. և 'ի խաղարկութեան իսկ այլ են զրոյցք ծերոյն եւկլիոնի, այլ պատանւոյն լեւկոնիդեայ, այլ ծառային ստրոբիլոսի, և այլ օրիորդին փեդրեայ. սոյնպէս ըստ հասակի, ըստ աստիճանի և ըստ վիճակի՝ այլ և այլ պիտին լինել զուարճախօսութիւնք 'ի քաղաքական կենցաղավարութեան:

Այսպէս կարօլոս հնգերորդ մեծապէս զուարճանայր ընդ ծիծաղաշարժ զրոյցս գաճաճի ուրումն պորտուգալացւոյ, ազգիանոսի սենեկապետի, և պեդրինկեայ սանտերբատայ իւրոյ ծառայածուի: Բայց թէ յապաւեաց որք ասէր ինչ այնպիսի ընդ կատակս, խոժոռութեամբ սաստեցուցանէր զնա. և այլ ոչ հանէր զնա յաւագութիւս. որպէս գրեն 'ի վարս նորա:

Իշխոյն եռամպոսի ասեսէր, թէ սկուտղ նորա ստոաէր առ սոա՝ քծնելով զանբաւմբ իւրով, և պարգևս ընդունէր 'ի սեղանոյ նորա, առ ընդ միաս. եթէ և ես նոյնօրինակ կոյթեցից առ սերամբս, նոյն բարեմասնութեան վիճակ և ինձ գիպեսցի: Այսպէս յաւն յարուցեալ քծնել զնովաւ, զանէրն և զաթոռ նորա յերկիր կործանեաց. և փոխանակ պարգևի արժանացաւ մահակի:

Լուգովիկոս մետասաներորդ (արքայ գաղղիացւոց) մինչև էր՝ թագաւորեալ՝ պքսորեցաւ 'ի բուրգունդիա, և որպէս աղաչաւ գնայր սաէպ 'ի հիւղ աղքատ շինականի ուրումն զուարճախօսի, և ընդ նմա ընտանեբար ուտէր 'ի շողգամոց նորա զմեծամեծս: Իբրև եհաս նմա թագաւորել. շորաւ շինականն 'ի խնդակցութիւն, և իւր զուարճախօսութեամբ առաջի արար նմա շողգամ մի մեծ յոյժ: Թագաւորն ընկալաւ զայն խնդամիտ, և ետ պահել յիւրում մառանի, առատաձեռնեալ ընծայաբերին հազար դահեկան ոսկի: Յետ աւուրց ինչ մի ոմն յաւագպետաց լուեալ զհռչակ առատաձեռնութեան, ընծայեաց արքային երիվար մի, զուարճախօս զրուցիւք ինչ: Թագաւորն փոխարէն առաքեաց նմա զայն շողգամ՝ պատատեալ 'ի թուղթ սպիտակ:

Տեսեալ ապաւէնին զիւր կրկնակի այպանութիւն, հասոյց յականջս արքայի զմեծ զիւր գանգատ, որ և էառ պատասխանի. [illegible]

Նոյն կանոնն կարի յոյժ դժուարին՝ է այն, զի յերիւրեսցին զուարճախօսութիւնք ըստ անձանց՝ [illegible]: Ըստ պէսպէս գիմաց մարդկան՝ պէսպէս են և նոցա բնաւորութիւնք. ոմանք են ուրախ, և ոմանք տրտում. ոմանք գիտունք, և ոմանք ապէտք. ոմանք հեզք, և ոմանք բարկացողք. է՛ որ ախորժէ զայս ինչ նիւթ, և է՛ որ ախորժէ զայլ. է՛ որ խոժոռի ընդ այս ինչ, և է՛ որ խոժոռի ընդ այլ: Արդ մեծի զգօնութեան պէտք են՝ վարիլ ընդ իւրաքանչիւրում բնաւորութեան 'ի զուարճախօսութիւնս, զի ամենեքին իցեն հաճ. և մի ոք խոժոռեսցի: Վնկ զզուարճախօսն կոչէ արիստոտէլ 'ի յունական բարբառ [illegible]. որպէս թէ [illegible] և աջողակ. որ ընդ իւրաքանչիւր յօժարութեան յերիւրի, որպէս հայելին ըստ իւրաքանչիւր գիմաց:

Ընդ գիտնաւորի՝ գիտնաւորս վարէ զրոյցս. ընդ սրամտի՝ սուրս. ընդ պարզամտի՝ դիւրիմացս. ընդ ախկնայի՝ պարկեշտս, բայց առաւել ևս ընդ տեառն և ընդ իշխանի՝ պատկառաւորս. զի չէ ինչ աներկիւղ՝ խաղալ ընդ առիւծուն, թէպէտ և ընտանիս: Օգոստոս շարագրեաց կծանող ինչ կատակս ընդդէմ պողլիոնի, զգրգռել զնա սրամիտ հանճար: Բայց պողլիոն ոչ կամեցաւ տալ պատասխանի. աւէ. Ո՛չ [illegible], որ [illegible]:

Զամիրաս արքայ սպանիոյ այնչափ էր պարզամիտ, որ պարզամտաց խակ թուէր պակասամիտ. վասն այսորիկ բազում ազնուականք զմեծութիւն փառաց նո՛ր արհամարհէին, և ծիծաղաշարժ զրուցիւք առնուին զնա յառակս: Բայց և այնպէս՝ է ոչ նո՛ր այնչափ հանճար, որ գիտաց արտասանել զայս զրոյց. [illegible]: Եւ այն եղև հնչիւնն, զի 'ի վաղիւ անդր երևեցաւ 'ի հրապա-

րա.

բակի մեծ ինչ զանգակ 'ի վ̃ր գահաւանդի, և առեղերբ զանգակին շուրջանակի բաղում գլուխք աւագանւոյն, որոց ծայրք արարեալ էր զնա. և 'ի վ̃ր զանգակին թուղթ գրեալ զայս օրինակ. Ուժեղէ աղաւնւոյն, ընդ ո̃ւմ խաղայ։ Այս եղև զանգակն, որ համբացոյց զամենեսին, զոմանս մահուամբ, և զոմանս ահարկութ̃, և այս զուարճախօսութեն զզուարճախօսութիւնս լսեցոյց։

## ԳԼ. ԺԲ։

## Յաղագս Գեղեցկութեան, և Խելամտութեան։

Ուսաք արդ, թէ Գեղեցկութիւն է պակասութի̃, և Խելամտութիւն է աւելադանցութի̃ զուարճախօսութե̃ն։ Եւ առ առնելոյ ստանոր զերկաքանչիւրոցն տարբերութիւն, ասեմք։

Գեղեցկութիւն յառաջ գայ յերկուց այլ և այլ պատճառաց, որք մի քան զմի են մօլեկան։ Վ̃ն զի ոմանք 'ի զուարճախօսութիւնս գեղջուկ են՝ այն Ն̃ Կոչէ Նախադասութեան։ Զանելով խորախորհուրդ միտս 'ի խօսել ձեռվ, հայիս գիտեն խօսել բան եղերւք, թող թէ ճանաչել զնրբութի̃ զրուցայ, ցուցեալ այնուիկ, թէ կոշտ է նց բնաւորութի̃, և գեղջկական։

Վ̃ն այսորիկ ո̃ղ ճճիք ծնեալք 'ի նեխոյ՝ ոչ երբեք ընտանանան, նոյնպէս այսպիսի արուեստ և անուսագ մտաւորութե̃ք սիրեն առաւել զգեղջկական առանձնութիւնս քան զքաղաքայնոց հաղորդութի̃. նա՛ 'ի գեղջկաց իսկ միջի լինին յառաւել, և չարժեն 'ի ծայր անմտութե̃ իբրև զկխման, զորմէ այլուր խօսեցաք։ Բայց զայսպիսեաց չէ արժան աստանօր խօսել. զի պակասութի̃ սոցա չէ մօլեկան, անհնար գոլով անմաի լինել զուարճախօս։

Է՛ միւս ևս գեղջկութի̃ մօլեկան, զի է կամաւոր, յառաջ եկեալ ոչ 'ի պակասութե̃ մտաւորութե̃, այլ 'ի Կարծս Իմն Ըղձմանէ։ Վ̃ն զի ո̃ղ երբեմն ազնուական տղայք սնուցեալք 'ի գաղանաց 'ի վայրի՝ եղեն վայրենիք և գաղանաբարոյք, այնպէս ազնուական մտաւորութիւնք ինչ այնպէս խոյանան յուսումն

և 'ի լուրջ զբաղմունս. մինչ այլ ոչ քաղցրանան նմ իրք՝ որ ընդ խաղ. և 'ի ներգործանալ 'ի նոյն ունակութեան հակառակի զուարճախօսութեան, իբրև զանհամբոյր և զվայրենի մարդիկ՝ ոչ առնուն և ոչ տան ճաշակ քաղցրութեան յուրախական կենցաղավարութիս ։

(200). Այսպիսի էր Քսենոկրատէս, ԱԳԵԼԱՍՏՈՍ ասացեալ, այս է ԱՆԾԻԾԱՂ, փիլիսոփայ այնպէս ծանր, որ պատկեր նորա կամ մարմարեան կերպարանաց ևեթ՝ կարծ յարդարէր զերեսս և ըզսերտս կարի իմն զուարթս ։ Վեհ Փիլիպպոս Մակեդոնացի 'ի հրաւիրելն յուրախութիւն կոչնոց զնա զգեստաւոր աթենացւոց՝ զպաշտօնակիցս նորա, զնա միայն չհրաւիրեաց. զի մի ծանրութ̄ խռով տրտմեցուսցէ զուրախութիւնն ։

Բայց է միւս ևս գեղջկուն և ևս մոլեկան, հիմնեալ 'ի ԲԻՒՐՈՒՍՆԻ ինչ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ՝ խորշելոյ յընկերական կենաց, իբր զախմնն մարդատեաց՝ զոր յիշատակեցաք 'ի խօսիլն զանդողուէ կամ զհաճոյականուէ ։ Որ և եղև մեծ հրէշ բնութե, 'ի տալ օձի զկերպարան մարդկան (201) ։

Արդ՝ այսպիսիք թէպէտև ունիցին մասունս 'ի խօսիլ զբոյցս ը̄ խաղ, բայց և այնպէս՝ թէ լսեն ինչ այնպիսի, առեան. զի առեան զայն՝ որ առէ. և թէ ինքեանք առեն ինչ այնպիսի, ցամամբ առեն և դառնութ̄, զի ոչ կարէ թքանել ինչ քաղցր, որ ունի 'ի բերանն լեղի դառնուէ ։ Թէ լսեն, չար խորհին. թէ այլ ոք լսէ. զլսել նը̄ կասկածաւոր համարին ։ Թէ խօսին, վիրաւորեն. թէ այլ ոք խօսի, վէրս ընդունին. զի չարախորհն կասկածաւոր գոլով, որովհետև չզրուցէ ինչ՝ բայց խէթիւ, կարծէ թէ և այլք խէթիւ զբոյցս առնիցեն ։ Մինչ զի թշնամի գոլով սոցա մարդկային կենակցուէ, արժան է թէ կենակցեսցին միայն ը̄ գազանս. զի է ը̄ ինքեանս ։

Իսկ խեղկատակուէ նոյնպէս երկու են տեսակք, երկաքանչիւրն աւելազանցք 'ի զուարճախօսուէ. բայց մին 'ի բնաւոր ՇՈՓԻՍՄՈՒՆ, և միւսն 'ի ցանկուէ ՇՈՓՆԵԼՈՒՆ ('ի սեղանս մեծամեծաց) ։ Այն յա-

տուկ

տուկ է արանց Ճոռոմախօսից, բայց ազատաց. և այս ծաղրածուաց և ցածուն վատասրտից. և վնկ 'ի զուարճախօսութեան մասին նա առաւելու յանխառն քանակն (աւելորդաբանութիւն), և սա 'ի լրբենի որակն (ցոփաբանութիւն):

Զոր օրինակ ստամոքս, որոյ պակասին թիւրաթեկ մանրերակք, ոչ կարէ պահել զկերակուրն. նոյնպէս մասուոքք, որոց պակասին խելք, ոչ կարեն զուսալ ունել զխմացմունս. և սոքա են [illegible]: Այլք, որոց փոյթ է ծիծաղեցուցանելով զայլս՝ ձգել օգուտ, չհային 'ի պարկեշտուն և 'ի համեստութին զրուցաց կամ արարից, զի վաճառելոյ իւրեանց զպատիւ ընդ յուսոյ. և սոքա են [illegible]:

Բայց երկաքանչիւրոցն շաղակրատանք բերեն նաղկանս վն երկուց պտճառաց: Մի՝ զի անհնար գոլով խօսիլ միշտ մասնաւորութ և խօսիլ բզմս, պատահէ նց, որ ինչ պատահեաց հռովմայեցւոյ ումեմն հրապարակախօսի, յիշատակելոյ 'ի ծերոյն սենեկայ. որոյ ոչ կամեցեալ խօսիլ ինչ անհուրբ, կամ զնոյն նրբութիւ յեղյեղեր. կամ փոխանակ նրբութեց աղաւաղս կցկցեր: Այդ եթէ բերկրութի նուրբ զրուցաց ծնանի 'ի սրութենէ և 'ի նորութէ, ոչ ինչ այնպէս նողկացուցանէ զհաճոյաւոր միտս, որպէս նրբութի աղճատ և անալի: Երկրդ պատճառն է, զի որովհետև գոյղն հեռաւորութ է 'ի մէջ ծիծաղականի, և 'ի մէջ անհամեստի կմ կծանողի, և զի անհնար է զրուցին լինել սուր, որ ոչ խայթիցէ, վնկ 'ի համարձակ լեզուաց ամ ոք երկնչի, և յորմէ ամենեքեան երկնչին, ամենեցուն է ատելի:

Բայց 'ի տարատրոհել զայսոսիկ երկուս ծայրս զուարճախօսութ, ասեմք, թէ 'ի Գեղջկին առաւելու սնամաղձն, որ առնէ զնա կարի խիստ մեղակեաց և տխուր: Իսկ 'ի Խեղկատակին առաւելու արիւն մաղձային, որ առնէ զնա մեծապէս կենակցելի և զուարթ: 'Ի նր դէմս են հետք գեղջկական արամութե, Ճակատ կնճռեալ, աչք տխուրք. գոյն սևորակ, ձայն թանձրադանդաղ: 'Ի սորա

յաչս

յաչս և 'ի բերան կերպարանուն ծիծաղոտ, երես աներես, գոյն շառագոյն, ձայն սրաձայն. զի երկաքանչիւրոցն որ ունակութին է գործելոյ, այն տրամադրուն է ունակական։ Նա 'ի զգեստս է անփոյթ, 'ի մորուսն անգարման. սա զգուշաւոր և յարդար. զի մին փախչի 'ի քաղաքական կենցաղավարութէ. և միւսն 'ի խնդիր է նր։ Գեղջուկն ճիշդ է 'ի խօսս, և յաւէտ կծանող քան անհամեստ. խեղկատակն ճոխ է 'ի խօսս, և յաւէտ անհամեստ քան կծանող. զի նա է առաւել խորամանկ և ծանր. սա է առաւել պարզամիտ և ծիծաղաշարժ. և զազրութիւնն է բուն նիւթ ծաղու։

Ջհուսկն ասացից. գեղջուկն ընդ չքնաղ խօսս կցկցէ և չքնաղ արարս, վասն լինելոյ իւրոյ առաւել յարեալ 'ի տեսականն քան 'ի գործնական. բայց խեղկատակն այնչ ճոխ է յակնարկութս և յարարս, ոչ 'ի խօսս ծիծաղաշարժս. վսկ նմանաբերեալ զձայն մարդոյ աղճատախօսի և անասնոյ զազրաւոյ՝ և զարարողութս միմոսականս, և զարարս անարգս և աղեղս, մեա դնէ ծիծաղականի քան վայելչականի։

Բայց թէ կամք իցեն քոյ տեսանել յերկուս փիլիսոփայս՝ երկուս պատկերս հակակայս զգեղջկի և զխեղկատակի, դիր առաջի աչաց զերկուս այլեայլ բնաւորութիս՝ զերակլիտոսի և զդեմոկրիտոսի ( 202 ). որոց առաջինն զամ խաղարկութի փոխէր յեղերերգուն. և երկրորդն զամ եղերերգուն փոխէր 'ի խաղարկութն. զի յամէ զոր տեսանէին, նա կարի իմն լրջութբ ձգէր նողկանս և դառնութիւն. և սա ձգէր զուարճախօսութիս և խաղս։ Տխուրն լայր ը ծիծաղ զուարթացելոյն, և զուարթն ծիծաղէր ը լալեան տխրելոյն։ Մինչև չգիտել իմաստնոց, թէ որ իցէ առաւել անմիտ. բայց միայն, զի մին միշտ ծիծաղելով կեայր ուրախ. և միւսն միշտ լալով հալէր և մաշէր։

Բա-

Բարոյական իմաստասիրութիւն

# ԳԻՐՔ ՃԴ ԵՐՐՈՐԴ.

## Յաղագս ամօթխածութեան, և ծայրից նր :

### ԳԼ. Ա.

### Թէ զի՞նչ իցէ ամօթխածութիւն :

Երկուս սաստիկ կիրս եդ բնութիւն 'ի զգայական բաղձանս. զմի՛ առ 'ի փախչել 'ի ցաւագին տարրկայից թէպէտ և պատուաւորաց, և զմիւս՛ առ 'ի փախչել յամօթական գործոց թէպէտ և բերկրականաց. և սոքա են համբերութիւն և ամօթխածութիւն : Երկաքանչիւրն են վրդովմունք ցասմնականին զերկիւղի : Բայց նա է երկիւղ անարգ և ծառայական. և սա երկեւղ ազնուական և ազատական : Զի որչափ պարսաւելի է՛ որ երկնչի 'ի պատուաւոր վտանգից, այնչափ գովելի է՛ որ խորշի 'ի վատանուն գործոց : Երկաքանչիւր երկիւղ՛ ընդամփոփեն զմիտս, փոխեն զերեսս, բայց նա 'ի մոխիր, և սա 'ի հուր. նա գեղնեցուցանէ, և սա շառագունէ : Յախտակրել մարդոյ՛ բնութիւն առաքէ զարիւնն յօգնութիւն յախտակրութեան տեղի : Եւ զի յերկիւղի մահու ախտակրի սիրտն՛ որ աղբիւրն է կենաց, և յերկիւղի ամօթոյ ախտակրին երեսք՛ որ տեսարան են պատուոյ, վս այսորիկ յերկիւղի մահու արիւնն թողեալ զերեսս՛ վազէ 'ի սիրտ, և յերկիւղի ամօթոյ թողեալ զսիրտ՛ վազէ յերեսս : Կեանքն է ներքին ինչ բարի, և վս այսորիկ 'ի պաշտպանութ նր՛ արիւնն հաւաքի 'ի մակերևութէ 'ի կեդրոն : Պատիւն է արտաքին ինչ բարի. և վս այսորիկ առ ընդառաջ ելանելոյ

նմա՛

նմա՝ արիւնն ձգի 'ի կեդրոնէ 'ի մակերեւոյթն ։
Ջհուսկն տայցէ. յամօթխածութեն արիւնն վազէ յայս. վն զի պաշտպան գոլով սրտ, դէմ են պատուողի եւ անարգողի ։ Ապա առ սոսա առաւելոյ առաքէ բնութին զօգնութի, 'ի ծածկել զնս ծիրանագոյն ինչ քօղով. եւ ձեռք ընթանան 'ի թաքուցանել զնոսա, զի մի տեսցեն, եւ մի տեսցին. զի թէ հային, յանցաւորութե խոստովանին. եւ թէ այլք 'ի նս հային, գտան է նց ։ Վնկ արիստոտել եւ պղատոն յեւրիպիդեայ բանաստեղծէ առին զայն առած, թէ յաչս բնակէ ամօթ. զի ոչ կրէ ամօթ, որ աչս ոչ ունի ։ Նմին իրի թէ սիրոն իրագեա է յանցանաց, այնպիսւոյն աչք յերկիր 'ի խոնարհ նային, ոպ թէ կամելով ծածկել ը երկբաւ, զի մի տեսցի. զի ազնուական եւ պատուաւոր սրտի դիւրին է զմահ յանձն առնուլ, քան զվատանունութի ։

Կիրք չեն առաքինութիք, այլ բերմունք բնաւորականք. զի ոչ ստացանին անձնիշխան ներգործութեք, այլ յառաջեն քան զմարդկային արամարանութի. ոչ կատարելագործեն զհոգի, այլ խռովեն զսիրտ, եւ այլայլեն զերեսս ։ Ապա ըստ այսմ զամօթխածութի վասն այսց պատճառաց անմարթ է կոչել առաքինութի. եւ առաւել, զի թէպէտ պտուղն է բարի, այլ պատճառն չար, որպէս ունելով 'ի գործ ինչ անարժան. եւ ոչինչ պտուղ չար պատճառի բացարձակ կոչի բարի ։

Այլ թէպէտ եւ ամօթխածութին չէ ինչ ունակութի, բայց եւ այնպէս է բնական բարենշան, թէպէտ եւ չէ կատարելութի, բայց է անկատարութե ըղձալի. եւ թէ չէ առաքինութի, է առաջաւ ինչ 'ի մոլութէ, եւ վնկ է գովելի. եւ նմ գովելի՝ կամ արգեամբք, եւ կամ առանձնաշնորհութք 'ի չար մանանէ բարոյական առաքինութեց ։

Ճշմարիտ է, թէ այս կիրք բաժանի յերկուս տեսակս, այն է յամօթխածութն եւ յամօթ. մին ծագէ 'ի միւսմէ, եւ մին անկատարագոյն է քան զմիւսն ։ Ամօթխածութին յառաջէ քան զամօթական գործ. ամօթն զհետ գայ. նա է որպէս դաստիարակ, որ

քեցէ

քեցէ զմարդ յանարժան գործոյ. սա է ձաղկիչ, որ գանէ զհոգի՝ յետ գործելոյ նր զայն։

Զամօթխածութիւն Արիստոտել յատկապէս սահմանէ յայսմ վայրի. Երկիւղ խայտառակութեան. զի յառաջէ քան զնա։ Նոյն՝ ամօթն 'ի Հռետորուէ սահմանէ ցաւ խայտառակութեան. զի հետեւորդ է նր։ Մինչ զի խառն է 'ի մէջ երկոցունց այոց կրից, որ 'ի մէջ երկիւղի սխալանաց և երկիւղի պատժոց։ Եւ այս խառն յայտնի երևի 'ի պէսպիսակ կարմրութեն, զոր երկաքանչիւրն ծաւալէ յերեսս։

Երկուս տեսակս ծիրանւոյ նշանակեն բնախօսք՝ պէսպիսակս արժողութ̅ և գունով. մին է ծովուծիրանին, որ երևի արիւն ինչ պայծառ՝ որպէս տղայական հասակի. վճ և է մեծարգի. միւսն է ծիրանի այլոյ խեցեմորթի խառն ընդ լրթագոյն կապուտակի, որ արիւն ինչ սպականեալ և մածուցեալ. վճ և անարգ։ Արդ՝ ամօթխածութիւն նկարէ զծնօտս հանդերձ օրիորդաց պարկեշտ իմն կարմրութբ նման ծովու ծիրանւոյ. իսկ ամօթն ներկանէ համակ զերեսս զղջականաց լրթագոյն շառագունութբ իմն նման կարմրութեն միւսոյ խեցեմորթի։

Ուր գտին երբեք ճարտար նկարագործք այնպէս բնաւոր ծիրանիս անուշունս 'ի նկարել զերեսս, իբրև զազնուականն զայն գոյն՝ ըծորդ պարկեշտաւէ, պահապան համեստութեն, արտաքին կնիք ներքին առաքինութեն։ Բազում զգօնութբ՝ Պիւթիաս արժանաւոր դուստր Արիստոտելի՝ իբրև հարցաւ, թէ ո՞ր գոյն թուիցի նմա աւելի անուշակ, ետ պատասխանի. գոյն ամօթխածութե։

Բայց շառագունութի ամօթոյ առ կարմրութբ ամօթխածութեն այնչափ է անարգ և աղեղ, որ ծիրանին միւսոյ խեցեմորթի առ ծիրանեաւ ծովուծիրանւոյ. զի սա է լոկ և անմեղ երկիւղ յանցանաց. բայց նա խրատէ գոլով յանցաւորուէ, խառնէ զգոյն պատկառանաց ընդ լրթագոյն ցաւոց վատանունութե, որում արժանացաւ։

Այլ թէպէտ և շառագունութի ամօթոյ անարգ է յոյժ քան զկարմրութի ամօթխածութե, բայց և

այն-

այնպէս ը̅ իրաց ինչ է գովելի. զի առաջին գո-վեստն է՝ հրաժարել կալ 'ի գործելոյ զչար. այլ երկրորդն է՝ ապաշաւել 'ի չարէ, որ գործեցաւ: Տեսեալ զԴիոգինէսի զպատանի ոմն շառագու-նեալ՝ յետ գործելոյ նր̅ չար ինչ, ուրախ եղև ը̅ նմա. ասէ. Քաջալերեաց որդեակ. գոյն առաքինութեան երևեցաւ յերեսս քո:

Եթէ յետ մրրկեալ գիշերի սկսանին մթագին ամպք շառագունիլ, նշան է թէ օրն պարզ լինիցի. և թէ յետ վատթար գործոց երեսք շառագունին, աւետաւոր նշան է ուղղութեան: Ցորչափ է բաղ-խիւն չնչերակի 'ի մարմնի ախտացելոյ՝ կայ յոյս կենաց. և ցորչափ՝ որ զչարն գործեաց՝ ամաչէ, առաքինութիւն չէ անյուսալի: Զարին հակառակն՝ յետ ամօթական գործոց չամաչել՝ յայտնի նշան է անյոյս թիւրութեան վարուց:

Պտուղք՝ որք աճեն 'ի ծմակի, երբեք չժամանեն 'ի կարմրութիւն և 'ի հասունութիւն, այլ միայն խակ 'ի համ և 'ի գոյն, մինչև փտին. և որ չզգայ զա-մօթ և զշառագունութի, ցուցանէ նշան՝ թէ գեղջ-կասուն է և խակաբարոյ, և դիւրամէտ յամ 'ի պիղծ և յանհամեստ գործս:

Իսկ կարի իմն ամօթահարութիւն՝ որով սնոտի կար-ծեօք խռովի սիրտ և շփոթի, կամ երկնչի յան-պատուութեան ուր ոչ է, և կամ 'ի կարի իմն եր-կիւղէ յամօթ լինելոյ՝ փախչի 'ի հրապարակական և 'ի շքեղ գործոց, և թաքչի՝ ուր պարտն էր հանդիսանալ. և այս է տգեղ մոլութիւն: Զի այն-պէս է մեղադրելի՝ որ ոչ գործէ զոր պարտ է, ոպ̅ այն՝ որ գործէ զոր ոչ է պարտ:

'Ի նախատացելոց սաստի մարթիս ճանաչել, թէ զինչ իցէ ամօթխածութիւն, և զինչ ծայրք նր̅: Վս̅ զի որ չերկնչի յամօթոյ. է անամօթ և լիրբ. որ կա-րի իմն երկնչի, է երկչոտ և վատասիրտ: Երկա-քանչիւրն է մեղադրելի. զի նա է պակասութիւն, և սա աւելաղանցութիւն բանաւորի: Բայց որ երկնչի 'ի վատանունութենէ՝ ըստ պատշաճի, է ամօթխած: Մինչև լինել ամօթխածութեան միջասահման ինչ ընդ լրբու-թեան և երկչոտութեան, որք են ծայրագոյնք: Յորմէ և մար-

մարթիս ճանաչել. զի թէ չէ նա առաքինութիւն, սակայն նման է առաքինութեան. զի ուր գտանին երկու մոլեկան ծայրք, միջասահմանն լինի առաքինական:

## ԳԼ. Բ.

## Յաղագս աստիճանաց ամօթխածութեան:

Ամենայն մոլութիւնք են ամօթականք, զի խոտորին 'ի համեստէ: Զոր օրինակ ամ առաքինութիւնք են նիւթք գովեստից՝ գրուատանաց և ներբողից, նոյնպէս ամ մոլութիւնք են նիւթք պարսաւանաց՝ լուտանաց և կշտամբանաց: Ամենայն երկնէ զպատուանունութիւն, զի ամն հակառակի բարի անուան:

Բայց յերկուց գլխոց մոլութիւն ինչ լինի առաւել ամօթական քան զայլս, յանպարկեշտութենէ, և յանհամեստութենէ: Անագորոյնք են հայրասպանութիւն, և չարագործութիւն. անհամեստք՝ արբեցութիւն և հեշտացանկութիւն: Իսկ թէպէտ հայրասպանութիւնն է առաւել քստմնելի քան զանհամեստութիւն, բայց և այնպէս՝ անհամեստութիւնն է առաւել ամօթական քան զչարախօսութիւն: Զի 'ի սմա զազրութիւնն է խառն ընդ գազանութեան, որ առնէ զգործն դժուարին. և 'ի նմա անարգութիւն գործոյն պատճառէ զմեծագոյն շառագունումն:

Եւ յայս սակս՝ յամ այլ մոլութիս, ծայրքն անարգագոյնք՝ են առաւել ամօթականք քան զայնս՝ յորս երևի ինչ դժուարին. թէպէտ և առաւել վնասակարք իցեն և գազանագոյնք, ըստ այլուր ցուցաւ: Առաւել ամօթալի եղև անձամբ կորզելն քան զխորամանկութիւն աննիրաւաց. կողոպտչութեան ախտանիլն քան զբանսարկութեան ամօղիլն. կծծութեան մեղկապատիլն քան զշռայլութեան ապիկելն. վրիժառութեան արբենալն քան զյանդգնութեան մաղիլն. դաւաճանութեան պեղմաղ՝ բան զանգթութեան մինչդատել (203):

Այլ քանզի անժուժկալութիւնն արբանեկէ զգայարանաց անարգագունից, որ է ճաշակելեաց և շօշափելեաց, յայս սակս համարեալ է այն մոլութիւն առա-

տուաւել ամօթական, մանաւանդ կանացի բնուն, որում զգաստուն և պարկեշտուն են սեպհական և գլխաւոր զարդ։

Վնկ իմաստասէրք ոմանք կոչեն զամօթխածութիւն ամբողջական մասն ժուժկալութեան. զի թէպէտ կիրք ամօթխածութն՝ երկիւղ ինչ գոլով, վերաբերի առ ցասմնականն, սակայն և այնպէս արքանեկէ ժուժկալութն, որ է 'ի ցանկականն. բայց իրք ծնանի նա յնմ մոլութէ։ Որ և յայտնապէս երևի. զի նմ գործ անարգ՝ յառաջ եկեալ 'ի մոլութէ ինչ՝ է ամօթական։

Ամօթ է ամենեւին՝ ժխտել զաւանդն. զի է գործ հակառակ ուղղափառութեան։ Զէնընկէց լինել 'ի պատրզմի, զի է հկռկ արիութեան։ Հարկս պահանջել 'ի չնչին իրաց. զի է հակառակ առատաձեռնութեան մեծի իշխանի. և թէպէտ յունչս վեսպասիանոսի չէր ինչ ժահահոտ արծաթն կուտեալ 'ի լուալեաց, բայց յունչս ժողովրդեան ժահահոտ էր յոյժ ընչաքաղցութիւն նորա։

Եւ ոչ միայն գործք, այլ և նշանք [illegible] ամօթալի գործոց՝ են ամօթականք։ Կղոդիանոս յամօթ առնէր զեւտրոպիոս հիւպատոս, 'ի դէմս ածեալ նմա զկապուտակ սպիս շղթայից, և ծառայական կօշկաց. և կիկերոն անտոնիոսի՝ զնիշս համբուրի իւրոց սիրուհեաց. և անտոնիոս օգոստոսի՝ զկեղտ մատանց հաւու նր յաւկեայ լամայափոխութն, ըն յանարգ արուեստէ վաշխառուն։

Եւ նոյն դէպք, որք ումեմն էին 'ի պատիւ, այլում լինին ամօթական. ըտ պանծալի և ըստ ամօթական պատճառաց։ Որպէս ցուլն վէրք ընկալեալք 'ի պատերազմի, կմ 'ի փախստի. բայց այնորիկ են նախանձելի, և այսորիկ քամահանաց արժանի։ Որպէս ապեղ էր կուրսուն իղոսի և գեմոկրիտոսի, մինչև քամահել անարգող զայն ջրցիր խոռոչս երկաթանշիւր դիմաց, ոչ մատանս անդռոշարս, և ծակոտս անպատուհանս։ Բայց նոյն ապեղուն 'ի գեմոկրիտոս եղև պանծալի, և յիղոս ամօթալի. զի առ կուրացաւ 'ի սեղանակապուտ յափշտակութն պալլադիոնին (204). և նա կու_

կուրացեալ՝ առ միտ գնելոյ փիլիսոփայական իմաստից, փակելով զաչս մարմնոյ 'ի բանալ զաչս հոգւոյ ։ Վասն յիրաւի էր ասել եւրիպիդեայ ( բանաստեղծի ), թէ յաչս խղճի բնակէ ամպարշտութիւն և ամօթ, բայց յաչս դեմոկրիտոսի՝ իմաստասիրութիւն և պարծանք ։

## ԳԼ. Գ ։

## Յաղագս պատճառի առաքինութեան ։

Բաւ խորի է ի մէջ պատճառի ճշմարիտ առաքինութեանց, և ընդ մէջ պատճառի ամօթխածութեան. զի նոցայն պատճառն է համեստն, և սորայս զազիրն. իբր զի ծնանի ամօթխածութիւն 'ի ժգեղ ինչ գործոյ եղելոյ՝ կամ լինելոյ որպէս ասացաւ ։ Մեծ առանձնաշնորհեալ արար յառաջասէս ընութիւն՝ մարդկան միայն կարող լինել ամաչել. զի մարդ միայն զգայութիւն ունի պատուոյ ։ Անասունք, որք գործեն զհեշտութիւն և ոչ զպատուոյ, զգան զերկիւղ, այլ ոչ զամօթ ։ Այս երկու ազգք են մարդկան, որք ոչ զգան զամբոխութեան ամօթոյ. մեծապէս առաքինին, և մեծապէս մոլին. զի մեծապէս առաքինին չունի պատճառ ամաչելոյ. և մեծապէս մոլեալն կորուսեալ է ամօթ ։ Նա չերկնչի կորուսանել զպատիւ, զի ոչ մեղանչէ. սա մեղանչէ անամօթ, զի յոչինչ համարել ըզպատիւ՝ չերկնչի կորուսանել զայն՝ զոր ոչն ունի ։ Վասն յատուկ է ամօթխածութիւն բարւոք որոց, այլ ոչ կատարելոց ։ Զի որովհետև պատիւն է բարի ինչ կարծեաց, միջակային ի մէջ բարեաց զգայութեան և բանի, ամօթխածութիւն է միջակային ի մէջ անբանութեան և առաքինութեան. և չարժի բառ չափու ըմբռնման անպատուութեան ։ 'Ի դէմս կոչտացեալս վատաննունութեան՝ չազգէ ինչ ամօթխածութիւն. և ուր մեռեալ է ամօթխածութիւն, ծնանի լրբութիւն ։

Սեպհական գեռահասակաց է ամօթխածութիւն, և ոչ ծերոց. զի 'ի գեռահասակս փափկութիւն մարմնոյ, և նրբութիւն ծիրանափայլ արեան՝ առ կարմրուն

մրուն վաղ անձապարել 'ի ծնօսս. որք թէ ցուրտ են և խորշոմեալ, ոչ գիտեն շառագունիլ: Թող զայն, զի դեռահասակք չև են ունակացեալ 'ի մոլութիւս. և ծերոց պարտ է ունակ լինել առաքինութեանց: Վնկ ամօթխածութիւն գովի 'ի դեռահասակս, և ոչ 'ի ծերս. զի 'ի նոսա է ծաղկեալ ինչ յոյս ծերական առաքինութեան. և 'ի սոսա է լսելեայն ինչ կասկած մոլութեանց եւս և մանկականաց: Երեք ինչ ըղձանայր Սոկրատէս՝ թէ իցէ 'ի դեռահասակս. ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ 'ի սրտի, ԼՌՈՒԹԻՒՆ 'ի բերանն, ԱՄՕԹԽԱԾՈՒԹԻՒՆ յերեսս. և երեք ինչ 'ի ծերս. ԾԱՆՐՈՒԹԻՒՆ յերեսս, ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ 'ի խօսս. ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ 'ի սրտի:

Օտարոտի իմն այլափոխումն եղև յեղափոխութեան բազում ժամանակաց և որդւոյ անձանց, եւ առաւել երկուց կատոնից (205). որք յառաջ հասակի հայելի լեալ առաքինութեանց՝ և օրինակ փառաց, 'ի ծերութեան ետուն զանձինս՝ մին հանապազորդ արբեցութեան, և միւսն գիշերային ալփանաց: Գայթակղէին մանկահասակք 'ի կատոնէ խաւսախրատեալք. ամաչէին որդիք 'ի կատոնէ սրբութեան սնեալք. զարմանային հռովմայեցիք՝ 'ի կատոնի օրինակէ նորոգեալք:

Պղուտարքոս մեծ փիլիսոփայն բարոյական 'ի վարս նոցա զզարմանս լուծանէ. ասէ. Հասակին վաստակաբեկ և նեղեալ 'ի լուրջ զբաղանաց մտաց՝ խնդրէր զօրանալ հեշտութեամբ զգայութեան: Վնկ ոչ ամօթ համարէին զայն ինչ, որ 'ի դեռահասակս էր ամօթալի. վա՜ զի վաղու եւ մթերեալ նոցա պատիւ գործովք հասարակաց օգտի, չէրկնչէին զայն կորուսանել, բայց եթէ գործովք հնօրկաց վնասու:

Բայց Արիստոտէլ 'ի խօսելն զվարուց դեռահասակաց և ծերոց, յերկիջ գիրս հռետորութեան, յայս կնքէ զբանն, թէ ամօթխածութիւնն յատուկ է մանկանց, և ոչ ծերոց. զի մանկութիւնն փառամոլ՝ նախանձոտ ընտրէ զպատիւ քան զօգտութիւն. իսկ ծերն երախտաւոր՝ նախանձոտ ընտրէ զօգտութիւն քան զպատիւ:

Պօրս

Պարտ է հայել և յայն, թէ ո՛չ ամ՟ շառագունեալ է ամօթխած : Են՝ յորոց առաւել պարտ է երկնչել՝ յորժամ շառագունեն, քան յորժամ գեղնին: Այսպիսի էր սիղղա, ասէ սենեկա : Այսպիսի էր և ապերախտ աշակերտն սենեկայի. (206). որոյ դէմք ըստ անուանն և հոգւոյն, իբրև գազանանայր, թուէր սիրել թաթաւել յարեան: Ոչ էր այն շառագունութի ամօթխածութե, այլ՝ ցոյց անգթութե: Ծիրանագոյն դրօշ պարզէր յապարանս՝ նշան էր մարտի. և կարմրութիւն երևեալ ՚ի դէմս սիղղայի և ներոնի՝ գուշակ էր կոտորածի: Զի յայնժամ թխրեալ բնութիւն ՚ի դուրս տայր զշառագունութի, ՚ի տալ տեղի գազանութե: Արիւն՝ արեան էր գուշակ. (Տե՛ս արիւնռուշտ դէմք յայտ առնէին զարիւնահեղ բարս):

## ԳԼ. Դ:

### Թէ որով եղանակաւ գործէ ամօթխածն :

Եղանակն հաստատեալ է յամաչել յանձանց՝ յորոց պարտ է, և յիրաց՝ վասն որոց պարտ է, և որպէս պարտ է:

Ոչ ոք ամաչէ մի առաջի լինելոյ անասնոց՝ կամ քարանց՝ կամ պատկերաց, յորժամ չար գործէ. բայց եթէ գուցէ երկչոտ խիղճն մտաց համարիցի, թէ յայն անասունս իցէ բան մարդկային, և յայն արձանս՝ հոգի և կեանք:

Բազում անգամ նկարեալ պատկերք՝ երկչոտ երևակայութե թուին կենդանի սկզբնատիպք. այս դիպէր կասանդրոսի ՚ի տեսանել զպատկեր աղեքսանդրի՝ վաղու եւ մեռելոյ : Ամպարշտին թէոդորիկոսի, յետ հատանելոյ նորա զպատուական գլուխ սիմաքոսի, գլուխ ձկան մեծի՝ զոր առաջի արարին նմա ՚ի սեղանի՝ թուեցաւ գլուխ սիմաքոսի. յորմէ և մեռաւ նա առ երկիւղի. Նոյն իսկ զօրութիւն երևակայական, որ երևեցուցանէր նմա զյանցանան յանմեղութե սիմաքոսի, երևեցոյց նմա և զիւր մահ ՚ի խորանին անդ. այլ դէպք ինչ եղեն այնքս երևակայութե:

Այս

Բայց ամ ոք ամաչէ յայնց, յորոց երկնչի · որպիսի են ԾՆՈՂՔ, ԴԱՍՏԻԱՐԱԿՔ, Ե ԻՇԽԱՆԱՒՈՐՔ: Եւ յայնց՝ զորս արգոյ համարի, և յաչս որոց արգոյ լինել բաղձանայ · որպիսի են ԱՌԱՔԻՆԻՔ, ԻՄԱՍՏՈՒՆՔ, ԾԵՐՈՒՆՔ, Ե ՕՏԱՐՔ: Եւ յայնց՝ որք կարող են վատահամբաւել զնա 'ի վեր հանելով զբանն · ո՛րպէս ՆԱԽԱՆՁՈՂՔ, ԲԱՄԲԱՍԱՆՈՂՔ, Ե ԾԱՂՐԱԾՈՒՔ:

Այսպէս գեղեցիկ իմն հնար անձնապահ լինելոյ յամօթական գործոց՝ ուսուցին իմաստունք, թէ իւրաքանչիւր ոք համարեսցի ընթերակաց ունել գործոց իւրոց զմեծարոյ ոք և զարգոյ դէմ: Զի ոչ է հնար զթիւր ինչ գիծ առնել յուղղութիւն, առանց առաջի ունելոյ զուղիղն:

Այն ինչ կամէր ծերակոյտն աթենացւոց գրել վճիռ մեծ զրաշխից կալուածոց սամիացւոց, Կիդիադէս մեծանուն ատենաբան աղաչեաց զատեան ծերակուտին՝ համարել, թէ ամ յունաստան առաջակայ իցէ վճռին: Յայսմ ազդարարութէ 'ի միտ եկեալ այն զգօն ոգիք, և համարեալ թէ անդ յատենի կան եօթն թագաւորութիք, և զայնմ առմէ կախեալ կայ յորդ կամ վատանունութի ծերակուտին, նախամեծար ընտրեցին զիրաւունս, քան զիւրեանց կիրս, թէպէտ և սաստիկս:

Սենեկա խրատ եւ իւրում ղուկիլիոսի՝ առաջի նկարել զկենսորինոս կամ զլելիոս, զորս համարէր նա երկնաւոր գաղափարս ուղղութեան (207):

Այլ ո՞ր զօրուի իցէ տալ ազդական · ցնորական ներկայութեանն մարդկանցուի, թէ ճշմարիտ և անհրաժեշտ ներկայութիւն այ անմահի · որ ոչ միայն զարտաքին գործս, այլև զներքին գիտմունս, եա և 'ի խաւարի՝ յայտնի տեսանէ, և ը դիր անցուցանէ:

Հեթանոսք իսկ ունէին երկիւղ և շատագոյն յԵլեւերոսէ չծոյ, զորմէ առասպելէին, թէ տեսանէ զամ գործս անարժանս, և գրէ զամ 'ի տամարի, զի պատուհաս 'ի վերայ ածիցէ յիւրում ժամանակի:

Բայց թէպէտև յերկնիս և յերկրի չէր ոք դիտող մարդկային ապիրատութեանց, սակայն և այնպէս

պարտ

պարտ է մարդոյ՝ ըռ խոստումն պիւթագորոյ՝ ամաչել յանձնէ, որում 'ի գործեւն չզար՝ մեծամ նախատինս գնէ, և թշնամանս : Վն այսորիկ աթենացիք տաճար կանգնեցին պատկառանաց . զի թէ պակասեսցի յաշխարհէ ամ ամօթխած երկիւղածութիւն, գէթ նոյն ինքն ամօթխածութն ուղիղ խղճի մտաց կալցի զտեղի ամօթխած երկիւղածութե : Ցամբարակ վայրի, 'ի Անակեցիկ անապատի, 'ի խաւար գիշերի՝ մտացին տեսանէ զինքն, և ատեայ զիւր չար գործս : Որ ամաչէ յայլոց՝ և ոչ յանձնէ, ունի զերկիւղ՝ այլ ոչ զամօթ . զի հայի 'ի պատիժն, այլ ոչ 'ի յանցուածն :

Մեծ մոլութիւն է, որպէս ասացաւ, ամաչել յիրաց, որ չեն ամօթալի, և չամաչել յամօթալեաց : Կատակս ուսանեցի, որ չէր ինչ ընդհատ 'ի նախահաւոյ խորմէ ('ի մեծէն կատուկէ), յորժամ հաւմոյեցին 'ի ատնախմրութեն շքեղ հանդիսանային ասկեհանդերձ և ծիրանազգեացք, նա եղանէր սեպազգեաց և բոկոտն իբրև զմի 'ի գռեհկաց . զի՝ բստ աւելոյ պլուտարքոսի՝ ուսցի չամաչել, բայց եթէ 'ի գործոց, որք սուտգիւ անչքականք իցեն : Նա զայս խմաստ պապաւորէր յիւր զօրականս, կամեցեալ երկչոտ լինել նոցա առ անհամեստ իրողութիւնս, և քաջասիրտ առ համեստս, ոչինչ ակն ածեալ կարծեաց օտարաց :

Ահաւասիկ որոշի յանամօթէն ամօթխածն, զի 'ի յանկարծ դէպս՝ ցուցանէ զնորուն նշան : Ոլիմպիա մայր աղեքսանդրի՝ կարեվէր խոցեալ 'ի սրոյ դառողին կասանդրոսի, այն ինչ 'ի վիրաց անտի քաղէին ոգիք, ոչ այլ իմիք այնպէս զգուշացաւ, որպէս անկանիլ համեստօրէն, պատատեալ զիւրև զհանդերձս երկոքումբք ձեռօք : Երկիւղ ամօթոյ յաղթեաց երկիւղին մահու : Օրինակ յիշատակաց արժանի յանձն բամբշի . այլ զարմանագոյն ևս յանձն պատերազմողի : Յուլիոս կայսր քան և երիս մահարէր վէրս յանկարծակի յանձն ընկալեալ 'ի հայրախոշոշ ապանողաց, այն ինչ փչէր զոգի, զայն միայն յիշեաց, փաթութիլ պճղնաւորաւ, զի պարկեշտօրէն անկցի . որպէս գրէ իւրն

պատմիչ .

'ի նոյն արարս բամբիշն եղոյց արիուն այրական, և զօրավարն եղոյց համեստութիւն բամբշական : Երկոքին իսկ վկայեցան՝ թէ էին ամօթխած 'ի կեանս իւրեանց . զի յետին ձիգն նոցա եղև՝ առաւել խնամ ունել պատուոյ, քան կենաց : Պատաղեցուցին զձեռս՝ ոչ յաղերսարկուն, ոչ 'ի պաշտպանութիւն անձանց, և ոչ 'ի մխտառողութիւն այլոց, այլ 'ի պարտակել զանձինս, առաւել երկուցեալք յամչայ՝ քան 'ի սրոյ հայրապետանաց : Այս պարկեշտութիւն առաւել շքեղացոյց զգատ սպանելոց, և առաւել նողկացոյց զանգթութիւն սպանողաց :

Օտարին հակառակն՝ ամաչել է այն ինչ՝ վասն որոյ չէ արժան, ոչ է արիութիւն ամօթխածական, այլ՝ անարգութիւն ամօթական քան զայն՝ վասն որոյ է արժան . և բաց 'ի վրիժուց արժանի է և քամահանաց :

Այր իմաստուն 'ի վերայ յանցուածոց ոչ իւրոց՝ այո վշտագնի, այլ ոչ ամաչէ . զի միշտն ծնունդ գոլով բնաւոր ախտակցուն, զայլոց ցաւ որպէս զիւր զգայ . բայց ամօթն՝ վս զի բաղդիւտ է կամաւոր չարի, ոչ իրաւամբք սորգանէ զայն՝ որ ոչն յանցեաւ : Նախայիշատակելքն ուխկեցի՝ արդար կշռադատող ճշմարիտ համբաւոյ, ոչ թթուեցոյց զերեսս, և ոչ ցածոյց զյօնս՝ վս ըկնելոյ իւրոց երկուց դստերաց և երկուց կանանց : Եւ իմաստունն սիմոնիդես յանդիմանուն լուեալ, թէ զուստր քո անառակ գնացիւք յամօթ ածէ զքեզ, ետ պատասխանի : [illegible]

[illegible] :

Բայց անմտուն մեծ է մոլար կարծեօք ամօթալի համարել զգործ ինչ առաքինական : Ո՞ր մարտիկ եղև արի և պանծալի քան զօթրիադէս սպարտացի . որ 'ի կռուին մեծի երից հարիւրոց սպարտացւոց և երից հարիւրոց յունաց՝ 'ի հատանել սրով 'ի վր փոքու դաշտի զվէճ թիւրեննեան դաշտաց, նա միայն մնացեալ տր դաշտին, յաղթօղ մինին, և յաղթական մահու, այնչափ ամօթ համա-

մա-

մարեցաւ, զի ոչ մեռաւ Է այլ մարտակիցս, մինչև չոքաւ զիւրովի. (208)։ Չեղև սա հաւան ընդ դատաստան երկնից, որ զնա միայն արժանի վարկաւ կենաց. շառագունեցան յամօթոյ աչք, որոց պարան էր նշողել յուրախութէ. ստացաւ յաղթութն հայրենեաց, և սպան զյաղթականն. և արեամբ իւրով թանկագնով անմահաբար մրճոտեաց զիւր յաղթանակ։

Ո՞ր բամբիշ եղև պարկեշտ քան զկին բրուտոսի, (այն է լուկրետիա.) որոյ արիաբար հերքեալ զհրապոյրս, և մերժեալ զպարգևս բարբարոսին, պարտեալ 'ի մարմնի՝ առ. չզօրելոյ ընդէմ բռնութեն, բայց անպարտելի լեալ 'ի հոգի, ուր գըլխակն է պարկեշտութե, իբրև առաւել երկեաւ 'ի սուտ կարծեաց այլոց՝ քան յիւրմէ խղճէ, զշնութն բռնաւորին՝ ընդէմ արդարութե պատուհասեաց յիւրում ողջախոհ անձին. և ոչ կարծեալ զերծ լինել 'ի ցնորական ամօթոյ, թէ ոչ զերծցի յաշխարհէ, զճշգրիտ պատկեր համեստութե կարծեաց յաշխարհէ։ Առաւել արժանի էին այնմ խոյուածոյ ողգականք՝ որք թողացուցին, քան զայն՝ որ արարին։ Յաչս ողջամտաց ոչ ստացան այնչափ գովեստ 'ի խնդրել զվրէժ այնր մահու, որչափ պարսաւանս՝ 'ի թողացուցանել զայն. զի 'ի թողացուցանելն՝ ցուցին զլուկրետիա պարտաւոր՝ ընդէմ ճշմարտութե, և 'ի վրէժ խնդրելն ցուցին զլուկրետիա անպարտ, և զանձինս պարտականս մահու նր̃։

Այլև ամօթալի ակարութիւն է շառագունութն ամօթոյ, որ 'ի հրապարակական և 'ի պատուաւոր գործս վառէ զերեսս, և թալկացուցանէ զմիտս։ Տկարութե որ ծագէ յանմիտ ընդունմանէ տեսոյ բազմութե։ Սնոտի պատրանք են երկնչել 'ի դատաստանէ բազմաց 'ի մի վայր եկելոց, որոց իւրաքանչիւրն ուրոյն ուրոյն է արհամարհ։ Բազում փոքր զօրութիք միակցեալք առնեն մեծ ինչ զօրութի. բայց բազում տխմարք 'ի մի վայր եկեալք՝ չկացուցանեն իմաստութն մի։ Այնպիսին չերկնչի 'ի զօրաց զինելոց յընդարձակ դաշտի. և

երկնչի

երկնչի ՚ի տեսոյ ակար ամբոխի յատենի կամ ՚ի թատրոնի: Գանգատէ նմա յիշողութիւն, չփոթէ զիմաստս, կակազէ ՚ի բանս. և յանկարծակի զանգի հարկաւ՝ գողգոջէ ողջ մարմին:

Մեծն այն պոմպէոս, որ գողացուցանէր զնա թագաւորս, իբրև կամէր հրապարակախօսել՝ մէջ շառագունիւր, և երկնչէր ՚ի տեսոյ ռամկաց՝ ըստ վկայելոյ սենեկայի: Եւ կիկերոն, ընդ որում ծնաւ ճարտարախօսութիւն, խոստովան լինի, թէ քանիցս անգամ հանդիմանայր խօսել յատենի, զառաջինն գլխովին ցնցիւր երկիւղագին դողմամբ. մինչև եռանդն խօսից վառէր զնա ՚ի համարձակութիւն. և սկսեալ նապաստակօրէն՝ հետ զհետէ առիւծանայր:

Վասն որոյ վատասիրտք ոմանք ոչ բաւեալ յաղթել ընակայութեանն, խուսփին. և որպէս որոյ պատայաքի գլուխ յելանելն ՚ի բարձրաւանդակ՝ առ երկիւղի անկման կործանի, նոյնպէս ՚ի գտանիլ այնպիսոյն ՚ի բեմբի, առ երկիւղի յամօթ լինելոյ՝ ամաչէ:

## ԳԼ. Ե.

### Յաղագս անամօթի, և երկչոտի:

Ապաքէն լուար, թէ ամօթխածութիւն է միջասահման ՚ի մէջ երկուց ծայրից, անամօթութեան և երկչոտութեան: Բայց դիւրագոյն է ճանաչել զմի քան զմիւս ծայր, սեպհական անուամբ: Վասն զի գոլով անամօթութիւն պակասութիւն ամօթխածութեան, դիւրին իմն է ճանաչել զներհակն առ ներհակաւ: Բայց երկիւղ վատանունութեան չփոթեալ անուամբ ընդ երկիւղի ցաւոց, դժուարին է այնմ նշանակել մասնաւոր անուն: Բայց և այնպէս շատ է մեզ իմանալ, թէ անամօթութիւնն է պակասութիւն, և երկչոտութին առաւելութիւն ամօթխածութեան:

Անարգեալք երկպառանչիւք մոլութեան են նոյն, որ փորձ պարկեշտութեան կամ ամօթխածութեան, բայց ներհական հայեցիւք: Երկչոտն ըմբռնէ կարի իմն, և անամօթն՝ նիազ. և վասն այնորիկ անամօթն չամաչէ ՚ի մոլու-

մոլութեանց, և երկչոտն երկնչի յառաքինութեանց։ Երկչոտն նման է փոքրոգւոյ. և անամօթն վատահացելոյ։ Փոքրոգին փախչի 'ի պատուոյ, որում էր արժանի, սուտ կարծեօք՝ թէ չէ այնմ արժանի. և երկչոտն փախչի 'ի պատուաւոր գործոց, սուտ երկիւղիւ, թէ չէ կարող պատուով 'ի գլուխ ածել։ Վստահն անգոսնեալ զվտանգս՝ դիմագրաւի ամենայն վշտաց վտանգի, և անամօթն անգոսնեալ զվատանուանութիւն՝ ձեռներէց է յամենայն գործ ապիրատ։

Վասն անամօթն միապէս բերի 'ի ծայրական մոլութիւն, թշնամանագիր է՝ և մարդահաճոյ. չար և ագահ, յանդուգն և վեհերոտ, զի չունի ամօթ, որ սանձն է ամենայն մոլութեանց։ Երկչոտն փախչի անխտիր յամենայն գովելի գործոց. յընթացակցութենէ զինուց և գրոց, յազատական և 'ի մեծագործ գործոց, 'ի հանդիսի ատենաբանութեանց, և 'ի կարևոր խորհրդոց. զի երկուցեալ 'ի հնարկաց դատողութենէ, որչափ առաւել պանծալի են գործք, այնչափ առաւել երկնչի զամօթի հարկանել։

Մինչև անամօթութիւն լինել մոլութիւն տխրական՝ միանգամայն և անասնական. զի ոչինչ ակն ածել կարծեաց այլոց՝ գործ է ագահի, և չամաչելն բնաւ՝ գործ է անասնոյ անմտի։ Իսկ երկչոտութիւն լինել մոլութիւն ամբարտաւանական, միանգամայն և անարգական. զի մեծապէս սիրէ զյարգ անձին, և չունի սիրտ ստանալոյ զայն. կորուսանէ զպարծանս՝ առ երկիւղի՝ թէ կորուսցէ զայն։ Օհասկն առացից. մին ունի խեւ ապստամբ զառանձնութիւն, և միւսն զաներեւութիւն։ Վասնորոյ և պատժոյ նորա պարտ է լինել առաւել ամօթական քան ցաւագին. և պատժոյ սորա առաւել ցաւագին քան ամօթական։

Յորմէ մարթիս 'ի վեր բերել, թէ չկարելն մեղանչել՝ է երկչոտութեան նշան։ Քաշկալելն 'ի մեղանչելոյ առ ամօթոյ՝ է ողջախոհութեան նշան։ Ամաչել յետ մեղանչելոյ՝ է ողջմտութեան գործ։ Չամաչել յամօթական գործոց՝ է անամօթութեան նշանակն. և պարծիլ ընդ այն՝ է յանդգնութեան նշան։

ական:

Բայց տեսցես. Եթէ ամօթխածութիւնն չէ առաքինու-թեան, այլ՝ ամբոխումն ինչ ախտամայ, զոր չէ հնար ըստ կամս ունել կամ չունել, ապա և իւր ծայրք չեն մոլութիւնք, այլ ախտամայ և բնաւոր յարձակմունք: Արդ զինչ դէպ է մտանել զնոյնս յայս դպրոց բարոյական. եթէ չէ 'ի կամս մեր ամաչել կամ չամաչել, որպէս և ոչ անձրև ածել, կամ ցրտոյ դադարել:

Պատասխանեմ. Թէպէտ ամօթխածութիւն է բնաւոր ինչ յարձակումն, բայց և այնպէս ծագէ յըմբռնմանէ ամօթական և կամաւոր ինչ գործոյ: Եւ զի կամայական գործք կախեալ կան 'ի մերոց կամաց, վ̄զի 'ի կամս մեր են 'ի բացէ առնել յերեսաց մերոց զամօթ, բառնալով զնորին պատճառ: Որ չար ոչ գործէ, ոչ ամաչէ: Այլ չէ 'ի կամս այնորիկ որ չար գործէ, չամաչել. բայց է 'ի կամս իւրաքանչիւրոց չգործել զչար: Նա՛ ո̄ղ ասացաւ, որ 'ի գործելն զչար՝ չամաչէ, ոչ է մարդ, այլ անասուն՝ չար ևս քան զանասունս. զի նոքա ոչ ճանաչեն զպատիւ, և մ̄ղ̄յ պարտ է ճանաչել: Այն զի՝ զայս բնաւոր յարձակումն իբրև զայլ ամ̄ յարձակմունս, եթէ 'ի յանկարծ ամբոխման անհնար իցէ բառնալ, հնար է ժամաւ 'ի չափ ածել, չափաւորեալ զիւր ծայրս: Արդ՝ այսմ քաջ հնար է լինել իմաստասիրական յորդորմամբ: Վ̄ն զի ո̄ղ ամօթխածութիւն բնաւորապէս շարժի յըմբռնմանէ ամօթական առարկայից, նոյնպէս յորդորանօք հնար է ստանալ, զի որ փոքր ըմբռնէ զվատանունութիւնն, առաւելուցու. և որ կարի խ̄ն մեծ, նուազեսցէ:

Քանի՛ պատկառ օրիորդք յերևիլ ամբոխին ծածկեին զերեսս համեստ շառագունութ̄: Բայց ապա իբրև 'ի հրամանէ կամ 'ի կարեաց՝ ուսան երևիլ կիսամերկ՝ ծնծղայիւք կամ քնարօք 'ի հանդէս խաղալկաց, բռնադատեցեալ զճակատ, և խաթարեալ զշառագունութիւն, եղեն լիրբ կաքաւիչք, և ապա յայտնի պոռնիկք:

Մինչ զի, թէպէտ և ամօթխածութիւնն է յարձակումն ինչ բնաւոր. բայց և այնպէս ցուցաւ այլուր,

այլուր, թէ յարձակմունք և կիրք բնաւորք՝ եթէ 'ի մարդիկ և եթէ 'ի գազանս՝ յաղթին սովորութ. զի սովորութիւն է երկրորդ բնութիւն։ Արդ ամի, որում կարողանայ երկար ինչ սովորութիւն, անտառ-րակայս կարողանայ և սաստիկ իմն համոզումն, որ զօրութ ձեռնարկութեց և օրինակաց փոխէ զխմա-ցումն յըմբռնողականն. և 'ի փոխիլ ներքին խմաց-

մանց, փոխին և գործք արտաքինք։

(209). Զչափ էառ զսրա թշուառականն միտս. որ հայրական գեղոյ կարի իմն հարեալ 'ի սէր, գողոյլ և տապանոյլ յամօթոյ իւրոց խորհրդոց. պատրաստեալ չիջուցանել զայն բոլորք իւրով արեամբ։ Զորոյ՝ լեզուագարութիւն լիրբ գայեկին պանծարամիտ պատճառանօք, և չեղաամեղս օրի-նակօք այնպէս ցրեաց զամօթխածութիւն, մինչև 'ի բաց եգեալ նր զամօթ և պձոյձ՝ իշխեաց ելա-նել յագգապիղծ անկողինս հօր իւրոյ պատրելոյ,

և ծնօղ լինել եղբօր իւրոյ։

Զսորին համառակն, որ պատանի անամօթ եր-բէք յայտնեցաւ 'ի պատմութեա քան զնախայիշա-տակեալդ պղեմն աթենացի. որոյ արձակերա-սն հանապազորդեալ զցայգ և զցերեկ 'ի պղծու-թեա, ոչ թէ երկնչէր 'ի վատանուանէ, այլ պար-ծանս եւս գրէր զայն անձին. բայց և այնպէս, գրաստն այն՝ բարեխրատ յորդորանօք փոխեալ զմիտս՝ փոխեաց զբնութ։ Եղեալ մի 'ի զեղխութե սեղանոյ ծաղկապսակ գլխով, ոտ զոհ արբեցոց, և խնճոյոյ մնալ 'ի զգաստ գպրոց քսենոկրա-տայ՝ խաղ առնել զուսուցիչն, և զառածանել զա-շակերտս, 'ի լսել զբանս մեծի իմաստասիրին 'ի վր ժուժկալութե և ամօթխածութե, այնպէս փո-խեաց զպատկեր մտաց, մինչև ամաչեցեալ յանձ-նէ՝ ընկէց զծաղկեայ պսակն. և 'ի բաց եդեալ զիւր մոլութիւ, յայնմ պարապափակ վայրի՝ յոր եմուտ ոտ անասուն, եղև մարդ. և վատանուն անառակն՝ եղև մեծ իմաստասէր. մինչև հաւա-սարիլ նմա 'ի պարկեշտութե, և առաւելուլ յի-

մաստութե քան զիւր վարժապետ։

Բարոյական իմաստասիրութիւն

# ԳԻՐՔ ԺԸ . ԵՐՐՈՐԴ .

Յաղագս առաքինութեան, և իւրոց ծայրից։

## ԳԼ. Ա.

### Թէ զինչ իցէ առաքինութիւն։

Այս այն է, զոր Հեսիոդոս Նեմեսիս անուանէ, և Համերոս Ադրաստիա դուստր արդարութեան. զոր նախնի փիլիսոփայք 'ի բանաստեղծութիւնս իւրեանց դասեցին առ երի ատենին գիտոյ' երկրաչափական չափու 'ի ձեռին. ոսկերիմ թշնամի այնոցիկ, որք չչափեալ զարժանաւորութիւն իւրեանց, բարձրանան 'ի վեր քան զարժանն. (210)։

Սա եւս է կերպ ինչ բնաւոր, քան թէ առաքինութիւն կամաւոր, բայց և այնպէս' ըստ օրինակի ամօթխածութեան վասն իւրոյ գեղեցկութեան արժանացուցանել ըստ բարոյական առաքինութիւնս։ Վասն որոյ յիրաւի է կոչել զսա քաջազնական և պատուաւոր ինչ ամբոխութիւն։

Գեղեցկութեան այսր կիսամանեայ առաքինութեան ճանաչի 'ի ազնուութէ իւրոց ծայրից. որք են չարակամութիւն և նախանձաբեկութիւն։ Նախանձաբեկութիւն է անկարգ կիրք, որ խոժոռի ընդ բարիս այլոց, թէպէտ և են այնմ արժանաւորք։ Չարակամութիւնն է անկարգ կիրք, որ խնդայ ընդ չար այլոց, թէպէտ և չեն այնմ արժանի։ Այս սրտմտութիւն է կարգաւորեալ ինչ կիրք, որ խնդայ ընդ բարիս բարեաց, և ընդ չար չարաց. աստի և խոժոռի ընդ բարիս չարաց, և ընդ չար բարեաց' ըստ ուղիղ բանի։

Յայսմանէ ունիս 'ի միտ առնուլ, թէ առաքինութիւ-

անուն

անուն արտաքոյ միայն զկեան այսր առաքինու-թեան, որ է զխոժոռումն ընդ բարին այնց' որք չեն այնմ արժանի: Բայց պարտ է մտաւորին ընդու-նել զմիւս կեան, որ է զխնդումն ընդ բարին այնց' որք արժանի են այնմ:

Բայց զգո՞յշ լեր չշփոթել քեզ ըստ այսմ ամփոփ զարմանութիւն' ըստ ցասման բարկութեան: Բարկութիւն է մոլեկան ինչ ծայր հեզութեան. որոյ վառեալ 'ի ցասմնականն' մղէ 'ի վրէժխնդրութիւն: Իսկ սրտ-մտութիւն է առինքնական ինչ կիրք ցանկականին, որ ըղ-ձանայ զհամայն և զըստ համայն' յերս այլոց, առանց իւ-րայ օգտակարութեան,

Վն այսորիկ թէ որք զժգմնի ընդ բարին չարաց, վն ընդունելոյ իւրոյ 'ի նոցանէ զնախատինս, լի-նի բարկացեալ: Եթէ առ երկիւղի անպատուութեան, լինի ամօթ: Եթէ առ ախտի մտաւու ինչ իւրոյ, լի-նի նախանձ, այլ ոչ սրտմտութիւն:

Այլ այս ինչ հարկ է առաքինութեան, նախանձու, չա-րախնդութեան. զի խնդութիւն նոցա կամ խոժոռումն յերս այլոց' ոչ հայլին յիւրեանց դիպուածն: Բայց տարբերին յայնմ, զի նախանձն և չարակամութիւն չարժին անհամեմատ ըստ գեղմ բանի. բայց սրտմտութիւն ինդայ կամ խոժոռի' ըստ բանի և ըստ պատշաճի:

## Գլ. Բ.

### Թէ որք իցեն տարբերք առաքինութեանց:

Սրտմտութիւն, նախանձու, և չարակամութիւն ա-ռարկայք են նոյն. որ բարիքն կամ չարիքն, որք պատահեն օրըստօրէ մարդկան: Բայց սրտմտու-թիւնն հայի, եթէ բարիքն կամ չարիքն իցե՞ն պատշաճօղք այնց' որոց պատահեն:

Այլ անպէտական և առաջին առարկայ սրտմտու-թեան են ճոխութիւնք, ազգութիւնք, ընտանեաց կարողք, թշնամեաց ծառայութիւնք, և փառք գեղոյ, եթէ չեն պատշաճականք այնմ' որ ստացեալ ունի: Կամ յաղթութիւն, նախապատուութիւն, անարգ կարգք, ծխա-մած հիւանդք, և փառաւորութիւնք, որք անարժանից 'ի վր գան արանց քաջաց և առաքինեաց, յայլոց չա-րաց.

բութենէ, կամ 'ի բախտին ձախողութենէ :

Ո՞ւմ հնար էր անցուցանել 'ի դերին կղզեայ կայսեր, յանուանեալն Նարկիսոս. որ փախեցան ոտանակապք 'ի մանեակս, և ձեռակապք 'ի չինգղս ասպետականս. և որ այնչափ եղեն մթերք ո[illegible]ոյ, մինչև ՆԱՐԿԻՍԵԱՆ ԳԱՆՁՈՒՑ անցանել յառաւելս իբրև զմիդայն ( 211 ): Եւ զորին հակառակն՝ տեսանել զբեղիսարիոս՝ որ իւր յաղթական ձեռամբն, որով բազում ընծայեալ էր յաղթութեան արմաւենիս յուստինիանոսի ինքնակալի, մուրողապէս դանկ մի խնդրէր յանցաւորաց. թէպէտ և (առ կուրութեան) անկարանայր տեսանել, թէ ո՛ է՝ որ տայ. (212):

Մեծ յանցանք եղև այն բախտի, թէպէտև թուէր անմեղադրելի՝ վասն լինելոյ իւրոյ կոյր: Բայց մեծ ևս եղև յանցումն նոցին իսկ կայսերաց, որոց մին կողոպտեաց զգանձս արքունի 'ի ճոխացուցանել զանուանարկ ոք, և միւսն կեղեքեաց զմեծանուն շահատակն, 'ի հաճել զմիտս կնոջ ուրուք:

Բայց առաւել ևս շարժեն 'ի ցասումն անհամեմատութիւնք պատուոյ: ՊԵՐՃԱՑԵԱԼՔ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ 'ի տգէտս, և ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳԼԽԱՒՈՐՔ 'ի վեհերոտս՝ ձախողակի բաշխեալք: Եւ զորին հակառակն՝ գիտնաւորն անարգեալ, և քաջ պատերազմողն թողեալ յանկեան ուրեք անգործ: Զիա՞րդ հնար էր առանց պժգանաց տեսանել զեւտրոպիոս ներքինի՝ զպահապան կանանոցն՝ և զհովանաւորած կանանց, բարձրեալ լեալ հռովմէական ծերակուտի, բազմեալ յիշխանաւորաց միջի, որք գողացուցանէինն զաշխարհ, և 'ի տակս սորա եղեն այլն կատականաց. զի էր որպէս վայրենիերես կապիկ, արկեալ զիւրեաւ զհիւպատոսականն օթոց. որոյ շառագունութիւն էր առաւել յամօթոյ՝ քան 'ի ծիրանւոյ (213):

Այսոքիկ են գլխաւոր առարկայք սրտմտութեան, յանմիտ բախտէ ոչ 'ի դէպ բաշխեալք. թէպէտ և ոչ առանց հետամտութեան ամբարձելոց՝ և անմտութեան ամբարձողաց: Բայց երբեմն և ԲԱՐԻՔ ԲՆՈՒԹԵԱՆ,

թեան, որպէս գեղեցկութեան, առողջութեան և ազնուութեան են առարկայք սրտմտութեան, յորժամ հանդամանաց անձին չերևին դիպան։

Մեծ վրիպակ բնութեան թուեցաւ այն՝ զի ակիւղասայ, որ խեղաբարոյն էր և այլրատ քան զըրվանդակ հաւուր, վիճակեցաւ նորին բարեձև, որ չէր երբէք երևեալ. և սոկրատայ, որ իմաստունն էր և առաքինի քան զամ յունաստան, նորին այլանդակ, խեղաթիւր իբրև զօձի, անհեթեթ ըստ կազմի, ճաղատ իբրև զկուռն, և թաւամազ իբրև զճիւաղ. մինչև երևիլ, թէ գողացեալ նորա հերք գլխոյ՝ արկեալ էին զմարմնով. 'ի լինել ծաղածանակ։ Նա ինքն իսկ սոսկայր յիւրմէ. վասն որոյ երկուց կանանց՝ սանտիպպեայ և միրրեայ, որք նախանձաւորութեամբ նր կագէին ընդ միմեանս, ասէ. Զի՞ վիճէք վասն իմ, քան զոր տգեղ ինչ ոչ արար երբէք բնութիւնն։

Մինչ զի զբնութ կրկնակի մարթ էր գանգատել իմաստնոց, փոխանակ զի ետ ակիւղասայ մարմին՝ որ անկ էր սոկրատայ, և սոկրատայ մարմին՝ որ անկ էր ակիւղասայ, բնակեցուցեալ զերկաքանչիւրոց ոգիս՝ արտաքոյ իւրոյին մարմնոյ իբրև 'ի վարձու։

Յաւել և զայն, զի թէպէտ բարիք հոգւոյ, որպէս գիտութիւն, ոյժ, և արուեստք ազատականք և մեքենականք՝ չեն ճշմարիտ առարկայք սրտմտութեան, զի առաքինութիւն ընդէմ այլում առաքինութեան ոչ ցասնու, այլ սիրէ զնա և պատուէ. բայց և այնպէս այս բարիք եա երբեմն շարժեն 'ի սրտմտութիւն, յորժամ են յինթակայս մոլեկանս և չարս, կամ 'ի հպարտս և յամբարտաւանս, մինչև առաքինութեան երևիլ ձեռնտու մոլութեան։

Ոչինչ այնպէս է դժպատեհ, որպէս գտանել յայր խեղաբարոյ։ Չար է սա քան զամ գազանս. զի գազանք կարող են վնասել, այլ սա կարող է, և գիտէ վնասել. իբր զի ընդ խեղաբարոյ բնութեան լծորդէ և զարուեստն։ Ոչ այնչափ վնասակար լինէր քրիստոնէական կրօնի յուլիանոս, եթէ չէր այնչափ ուսեալ։ Չիք ինչ ժանտ իբրև զգիտութիւն.

Թիւն, յորժամ զեղծմամբ փոխարկի 'ի թոյն:

## ԳԼ. Գ.

### ԹԷ ՈՐ ԻՑԷ ԱՌԻԹ ՈՐԴԵՄԴՈՒԹԵԱՆ:

Ստեղծեցին բանաստեղծք, թէ բարիք և չարիք կուտեալք յերկուս ամանս, 'ի սկզբանէ աշխարհի, ըստ բերման վիճակի թափեալք խառնի խուռն յերկիր՝ առնէին երջանիկ կամ թշուառ զմարդիկ, որոց դիպեսցին (214):

Բայց այր մտացի և բարեկիր, ոչ ընտրողակս խեղամուտ է՝ թէ պարտ է աշխարհի կառավարել 'ի տեսչութէ, նոյնպէս եւ ընդարոյս լուսաւորութեան իւրոյ համարի՝ թէ բարիք 'ի սաօրինս լինելոց են վարձ առաքինեաց, և չարիք՝ պատիժ չարագործաց: Վնկ ոչինչ այնպէս շարժէ զբարեկիր ոգի, ոչ տեսանել վեր 'ի վայր շրջեալ զայս կարգ՝ երջանկութբ խեղաթարոյից, և չարակրութբ առաքինեաց:

Երբեմն այս կերպ և յանշունչ նկարս, յառաջել քերթածս, և յեղերերգութէ տեսարանս՝ երևեցուցիչս անհարազատին եգիսթոսի, որում խաղաղական սաստութեան ժառանգութէ հարազատ որոց յաջողեաց. և ողջախոհին հիպպողիտոսի, որ ամենեին անպարտ գոլով զրպարտեցաւ, զօտարի չարեաց զվրէժս լուծանել: Որ անպատշաճուեք եթէ երեւին, կամ ընթերցեալ լինին, թէպէտ և մտացածին իմն են, բնաւոր շարժմամբ վառեն զճշմարիտ ցասումն բարեկիր սրտի (215):

Այսպէս իմն է, թէ առ նախնի իմաստասէրս՝ այս գեղեցիկ կերպ առնէր խառնակութ բաղում մոլորութեանց, և բնաւոր բերման զհետ երթայր մտաւոր տրամաբանութեն: Ոմանց ('ի հեթանոսաց) տեսեալ 'ի սաօրինս զանդէպ բաշխ բարեաց և չարեաց, դայթակղեալք ընդ դժպատեհ անտեսութիւն իւրեանց, հաստատութբ հաւատային, թէ չէր ինչ վերնախնամ տեսչութի, այլ՝ բախտ բախտով շրջէր զամփոփ մարդկային վիճակի: Այսպէս նուագեաց քերթողն կղոդիանոս, տեսեալ

զպա-

զգաստացեալն արհեստական կատարելութեան 'ի ձեռս ուրումն ամբարշտի : Ասէ :

Տեսեալ 'ի տարբերս խառնակ ղամբոյն ,
զկնձակ մարդկային յաւերժ 'ի մըթան .
ըզկնտոյ կայտառէն և զըլոյոյ կոկոն ,
կըրծնէ 'ի ողբէս անկանէն կործան :
Եւ չէր գոյ խորհուրդ՝ թէ ախտարհ համայն ,
Վրիգակաց վարէ՝ անհանձարական .
և թէ չէր խորհամ զծագէտական ,
կամ թէ ըստեր քայլ՝ նա աա մեր խորհամ :

Այլք իմաստասիրեցին , թէ գիք ճշմարտութիւ և ուղիղ վարեն զմարդիկ , բայց 'ի վերայ գից կայ ( առեն ) գաղտնի օրէնք , անուանեալ Ճակատագիր , հեղուսեալ յաւիտենից ադամանդեայ բևեռաւ անփոփոխ հարկի . որում 'ի գլխաւորս ինչ գիք իսկ ոչ զօրեն ըդդէմ դառնալ . ով երգէ այլ քերթողարան , ( այն է սենեքա ) . ասէ .

Ու 'ի յետ է տիօ՝ էղծանէլ ղայն ինչ ,
ըոր էտ ճակատգիր՝ օրինօք անքինչ :

Իսկ այլք սահմանեցին , թէ ոչինչ առաքինութիւն է անվարձ , ոչինչ ամբարշտութիւն անպատիժ , բայց վարձն և պատիժ գան անագան , և անագանութեան ծանրութեան փոխարէն , ըստ աւելց կըղդլանօք .

Ամբարշտաց ախոյան ամբարտաւան քարշդրագահ .
ըի անկցին ըտըտըտ գահավէժ 'ի խոնարհ :

Բայց քանզի բազում անօրէնութիւնք երևին յոլովակի անպատուհաս , և սիրողս յետ այնչափ յափշտակութեանց , և անողորմ բռնաւորութեանց հասուցանէ ողջինդ զիւրին բարօրութիւն մինչ 'ի գերեզման , խոհականագոյնքն յիմաստասէրս՝ զերծուցին զիւրեանց գիս 'ի հասարակաց նախանձուէ և յանիրաւ քրթմնջանաց , վարդապետութեամբ որ չէ ինչ օտարաձայն 'ի քրիստոնէականէն : Ուսուցին , զի թէ առ կենդանեօք բազում յանցանք յաւախս մնան անպատուհաս , ոչ վասն այդր մնան անվրէժ , զի արդարութիւն ածային 'ի խաւարչտին թագաւորու-

թեան

թէ սանդարամետից՝ ունի իւր սատակապահանջ և անհաշտ սատան, 'ի քննել զնոսա անաչառ, և 'ի պատժել անողորմ. ըստ Նուագելոյ Վիրգիլեայ.

Զինչ ասաց ու արար՝ յանդգնեա կրէացէ.
Նիարաց յանցանաց՝ կրէճրա առածցէ։

Այս ոչ 'ի մի այսօրինակ պէսպէս կարծիք եղեն մարդկան, նոյնպէս պէսպէս զգածմունս ազդեցին 'ի սիրտ նոցա։

Դեմոկրիտոս՝ վասն զի հաստատութիւն եդեալ էր 'ի մտի, թէ դիպուածով կառավարի աշխարհ, հայեցեալ յայն իբրև 'ի խաղալիկ ինչ ծաղրական, ընդ ամենայն մարդկային պատահարս՝ եթէ ընդ բարիս և եթէ ընդ չարս, ոչ գէթ անգործ՝ հանապազ ծիծաղէր։ Զորին հակառակն, Երակլիտոս, որ զամենայն ընծայէր անխորշելի հարկի ճակատագրական ինչ օրինի, ողբալով զթշուառ և զանհնարգելի վիճակ մարդկան, և ախտակցեալ նոցին իսկ դից, ընդ ամենայն պատահար անմխիթար լայր. իբր զի չէր ձեռնհաս օրէնս դնել յաւիտենական օրինի։

Բայց Արիստոտէլ և ամենեքին՝ որք բնաւորապէս ունէին բանաւոր և ճշմարիտ իմաստ աստուածային տեսչութեան, զգային յանձինս բանաւորագոյն ևս զգածմունս։ Վասնզի նմանակեալ զիմաստ իւրեանց ընդ իմաստ նեմեսեայ դիցն արդարութեան, և չհանդուրժեալ, թէ մոլիք՝ որպէս անիրաւ յափշտակիչք. վայելեսցեն 'ի բարիսն՝ որ առաքինեացն էին անկ, վառէին արդար ցասմամբ։ Իսկ զորին հակառակն՝ 'ի տեսանել զչարաց չարակրութիւն, և զբարեաց յաջողութիւն, սրտի դիւր էր նոցա յոյժ, իբրև խնդակցութեամբ իմն ընդ տեսչութեան դից իւրեանց։

Վասն այնորիկ ոչ Պղատոն կոչէր զնեմեսիս Դշխոյ արդարութեան, առաքեալ 'ի դիցն առ իշխանս և առանձնականս, նոյնպէս առաքինիք և իմաստունք՝ արդար ցասմամբ խրախնդիրք լինէին աստուածային արդարութեան։

Արդ՝ այն էր իսկապէս սրտմտութիւն ինչ ընտրական՝ և գլխովին առաքինական, զի յառաջ գայր
'ի

'ի խոհական իմն և 'ի կատարեալ հաւանութենէ կարգելոյ առ արդարութի. զի խւրաքանչիւր ոք կալցի՝ որ ինչ անկ է նմա: Բայց այս սրտմտուն կիսամասնեայ առաքինական. զորմէ են բանքս. վասն զի սովորաբար հաստատեալ է 'ի բնութե իւր. կամ յաճախութե. բայց ոգւոյ, որ բնաւորապէս յան կաւոր է բանաւորի, չհասանէ 'ի գերակայութի միւսոյն, և ոչ գտանի ընդ կատարեալ առաքինութիւ. բայց գիտութ քաջ իսկ հնար է նմա այնմ հասանել:

Ոչ ամօթխածութին չէ համեստութի, բայց չունելն զայն՝ նշան է սրտի յանդնելոյ 'ի համեստութէ. նոյնպէս սրտմտութիւն չէ արդարութի, բայց չունելն զայն՝ նշան է սրտի յանդնելոյ յարդարութէ:

## Գ.Լ. Դ.

## Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ առաքինութիւն.

Սրտաքէն լուար, թէ չորս մեծամեծ գործս գործէ այս առաքինութի 'ի սիրտ առացողին զայն. Խոժոռիլ ընդ բարին չարժանոյն. Խնդալ ընդ չար՝ արժանոյն: Խնդալ ընդ բարին արժանոյն. և խոժոռիլ ընդ չար չարժանոյն: Արդ յիւրաքանչիւրում 'ի գործոցս՝ այր առաքինի նմանակէ զիւր զգածմունս՝ բանին. և ըստ պէսպէս առթից՝ առաւելու կամ նուազէ բնաւորապէս զուրախութին կամ զխոժոռութիւն ընդ բարիս կամ ընդ չարիս այլոց:

Խուժանն վստահ է 'ի դատել: Տեսեալ զայպակի 'ի մարմին աղնուականի՝ համարի թէ իցէ անդամոնդ. և զանդամոնդն 'ի մարմին գռեհկի՝ կարծէ լինել այպակի: Ըստ այսմ առ բազումս՝ մոլութի վեհանձանց պատուի ոճ առաքինութի. և առաքինութի ցածունց քամահի ոճ մոլութի: Բայց որ ունի զարամտութին առաքինութի, որոշէ զ՞ մէջ աշխարհին և առերեւութին. և ըստ չափու արժանեացն խոժոռի կամ խնդայ, որչափ վայել է: Այնչափ մեծ է ցասումն ընդ բարին չարագործաց, որչափ առաւել մեծ է չարութին, և պատուաւոր է բարին. զի փաղփիւն պատուոյ մեծաւ

ոչէս

ողէս երեւեցուցանէ զբիծս սրտի, եւ մեծապէս անարգէ զանձն։ Նոյնպէս այնչափ առաւելու ցաւումն է չարն առաքինեաց, որչափ առաքինութին է ծանօթագոյն, եւ չարն ծանրագոյն. զի թուի կրկին անիրաւութե եւ անտեսչութի, ոչ միայն չըվարձատրել զառաքինութի, այլ պատժել։

Բայց առաւել եւս առաւելու սրտմտութի, յորժամ յաջողուած չարաց լինի 'ի վնաս բարեաց. զի առ ժամանակ մի առ ումեմս մոլութին սանայ մեծ յորդ, եւ առաքինութին խապառ զայն կորուսանէ։

Մեծ է եւ ցասումն, յորժամ անարժանն խնդրէ ինչ պատիւ ը արժանաւորին, անարգն ընդ ազնուականին, մոլին ընդ առաքինւոյն։ Վնկ ըստ ասելոյ Հոմերոսի, մեծապէս բարկացաւ դիոս, յորժամ ոդիսեւս ժպրհեցաւ հետապնդել ը այասայ՝ վն աքիլլեան զինուց, եւ էառ, թողեալ անըստրայք, թէ ո՛ առաւել ցուցաւ անխեղ, դատաւորք 'ի պարգեւելն, թէ ոդիսեւս 'ի հետապնդելն. որովհետեւ զէնք վայելէին քաջաց, եւ ոչ թէ խորամանկաց։

Այսպիսի սրտմտութբ վառեցաւ բորբոքեցաւ ծերակոյտն հռովմէական, յորժամ վատինիոս դիմամբջանակաւ ը պորկիոսի կատոնի հետամտու եղեւ պրետորութե, անարժանն ը արժանաւորի. եւ վատանունն ընդ մեծանուն հռովմայեցւոյ. եւ քուարկութբ ժողովրդեան դիւրաւ եհաս այնմ։ Դատաստան նման դատաստանին ամեղոսի. 'ի կագել մարտեալ ընդ ապողոնի. որում արժան էր առաւել մարթեզերծ առնել զգաստուորն քան զիւր դիմամրցանակն (216). զի 'ի չարաչար հետամուտ լինելն՝ առանձնաւորն վնասէ արդարութե. այլ 'ի չարաչար դատելն՝ արդարութին վնասէ հասարակութե։

Բայց առաւել քան զառաւել՝ առաւելու սրտմըտութին, յորժամ վատթարք հրամայեն բարեաց. եւ ծառայք ազատաց. զի 'ի վարել մարդկային իրաց շրջուն, շրջեալ երեւի եւ վերնախնամ տեսչութին։ Վնկ պղատոն 'ի խորշեցուցանել յայսմ մե-

ծէ գայթակղութիւն զնոր հնարկապետութեան՝ օրինա_
դրէ , զի առաքինեաց հարկ 'ի վ̄ր դիցի կառավա_
րել զհնարկութիւնն . որպէս զի մի կառավարեսցի
յանարժան արանց :

Կրեացէք ոչ թողացուցանել ծառայից կար_
գալ , զի մի ուսցին . և ոչ զէն տանել , զի մի կա_
րող լիցին հրամայել : Վ̄ն զի եթէ ո̄րութն ծա_
ռայից է անտանելի , և ՚նկունութն բարեաց եւ
անտանելի , ապա երկոցուն անիրաւութեանցս 'ի մի
վայր եկաւորուն լինի ամենեին անտանելի :

Այս խնդայ արտմտեալն ը̄ յաջողուած առաքի_
նեաց . զի և ինքն առաքինի գոլով , ակնունի թէ
և նմա յաջողեսցի 'ի վերուստ , տեսեալ զբաշխ
բարեաց ը̄դ չափու արժանաւորութ̄ն լեալ , և ոչ
ը̄դ կամաց բախտի :

Խնդայ և ը̄ տանջանս չարաց , և եւ առաւել ե_
թէ տանջանքն համեմատ իցեն յանցանաց : Որպէս
սաղմոնէոս կամեցեալ կայծակնանման ինչ հնա_
րել , զի համարեսցի աստուածական խնն ունել զօրութ̄ն ,
կայծակնահար կորեաւ (217) : Եւ պերիղղոս ա_
ռաջին գտիչ անօգորմ պղնձի ցլուն , նախ առա_
ջին ինքն ուսոյց խորուել ցլու ցաւագինս բառան_
չել : Եւ սիրելին յաչս կայսեր սեւերոսի , որ ըղ_
ձուխ նպաստից վաճառէր , 'ի ծուխ հեղձաւ : Եւ
իրաւամբք օրէնք զփախստէից զոտս հատանէին ,
և զաւազակաց զձեռս : Ընդ այսպիսի տեսարանս
մեծապէս խնդայ արտմտեալն . զի տեսանէ ըղ_
կարգ արդարութ̄ն պահեալ , ըստ արդար օրինի
փոխարէն հատուցման , թէ զոր ինչ ոք առնէ , զն_
նոյն և կրէ :

Եւ ոչ միայն արտմտի 'ի վ̄ր անարժանութ̄ն ամբար_
ձելոց , այլ առաւել եւս 'ի վ̄ր այնց , որք բարձրա_
ցուցանենն զնա . զի փոքր ըստգիւտ է ամբարտա_
ւանին , քան այնմ՝ որ ամբարտաւանեցուցանէն
զնա . որ 'ի սիրելն զմի ոք 'ի չարաց՝ յանձն առնէ
զատելութն ամ բարեաց : Եւ առաւել եւս արտ_
մտի 'ի վ̄ր այնց , որք բարեմարդիկն լինին , և գո_
վեն որպէս արժանաւոր զանարժանութ̄ն ամբար_
ձելոյն . զի նպաստամատոյցքն՝ երեւին սկզբնա_

պատճառք (218)։

Մեծանունն այն կառոյն երթեալ 'ի յունաստան իշխանութիւն բազմաւ, եւ եւս՝ զի է առաջ գային դասք դասք սպիտակազգեստ աթենացւոց ոստովք ձիթենեաց 'ի ձեռին․ որ էր մեծաշուք ընդունելութեան հանդէս։ Այն ինչ կառոյն մերձաւորապէս ժողովէր զնա, նշ յառեալ հայեցեալ ընդ երեսս՝ զանեղի առին, եւ հարցին, թէ [illegible]։ Այս դեմաւր էր ազատագրեալ ոմն ծառայ՝ սիրելի յոյժ յաչս պոմպէոսի։ Զամօթի հաբաւ կառոյն, միանգամայն եւ զզուեցաւ, զի զայնպիսի մեծաշուք ընդունելութիւն առնէին վասն աբումն ծառայի՝ եւ ոչ վասն իւր։ Մեծարգի էր յաչս նոցա ազատագրեալ ոք ծառայ պոմպէոսի, քան զապարապետ ոք զօրու։ Յաչս նոցա չնչին իմն էր անուն կառոյին՝ առ անուամբ գեմաւրի, զի յաչս պոմպէոսի զօրագոյն էր ընտածին ոք՝ քան զապատագրի։

Ծառայք․ է որոց ձեռս անդամնեն շնորհք իշխանի․ սովոր են լինել առաւել երկրպագելի՝ քան զնոյն ինքն իշխանն․ զի անդ՝ միջ պատճառք առաւել են ծանուցեալք քան զընդմիջականս։ Իւ մեկ սիրելիքն յաչս իշխանաց, թէ են խոհականք՝ զերծուցանեն զիշխանս 'ի նախանձու, եւ զանձինս 'ի կործանմանէ՝ ցածութբ։

## ԳԼ. Ը։

### ԳՈՐԾՔ ՈՐՍՈՐԴՈՒԹԵԱՆ։

Բայց զինչ օգուտ իցէ առաքինւոյն կրծել ներքուստ զիւր սիրտ, եւ լռելեայն սրտմտութեամբ հաշիլ 'ի ցաւոց, հանելով յանձնէ զվրէժ քինու յիմարութեանց բախտի։ Ոչ ապաքէն դառն ես լինէր այդ, եւ միգկային կրից օգուտ եւ ոչ մի։ Հարկ էր լինել աչաց մերոց կրկնապատիկ հանապազահոս աղբիւր իբրեւ զհերակլիտոսին․ զի ըստ ասելոյն սենեկայ, յոր կողմն եւ դարձցի մարդ, տեսանէ հանապազ նորանոր եւ մեծամեծ տարակոյս սրտմըտութե․ մինչ զի եթէ է նմ իրս զզուանաց պարտ

էր

էր խառնիլ առաքինւոյն, ոչ սրտմտէր միայն, այլ և կատաղուն զնա ունէր առանց ինչ օգտի:

Այժմ կերպ բնութե առնել է մարդոյ վն գործոց ինչ: Այժմ կխամմանեայ առաքինութի՝ արբանեկել ունի առաքինուն ինչ: Այլ և սրտմտութն բանաւոր գոլով, ոչ զկայ առնու 'ի ներքին հաճոյս կամ յուշհաճոյս. այլ երբեմն բրդի 'ի բարկութի, և գեղու 'ի գործս արտաքինս: Զօրօրինակ ամեթխածութին արբանեկէ ժուժկալութե, նոյնպէս սրտմտութին արբանեկէ արդարութե: Խաժառի ընդ դժպատեհ իրս. և ջանաջնար լինի արժանաւոր գարմանոյ, ձեռն տալով մարդկային արդարութե, և ածախնամ անուշութե. մինչև լոկոյ կրից փոխիլ յընտրութի:

Առաջին գործ սրտմտութե 'ի քաջաղանց ժամանակէ հեռանէ՝ եղև Բորբոսեէլ ՂՄԻՐՔ ՆԱՅՍ ԸՆԴԴԷՍ ԳԱՂՈՅ. ուստի առաւ ՆԷՄԷՍԻՈՍ անուն, որպէս թէ աԲՈՐԳՈՍԱՆՏԵԱՅ. և ԱԴՐԱՍՏԻԱՅԳ անուն, որպէս թէ ՎՐԷԺԽՆԴԻՐ ՀՊԱՐՏԱՑ (219):

Այսպիսի էր անպարտելին Ալկիդէս, որ որպէս պատգամաւոր գիտի, ուր և յառնէր անուանի որ ասպարահար, կամ անօրէն յափշտակող այլոց Թագաւորունեց, կամ բուռն բռնաւոր իւրոց ժողովրդոց, իբր կակուղն էր և բռնաւորիս, և անակոս և զերծին, ոչ յըղձանաց ասպարատուն՝ այլ յայտ գիւցազնական առաքինութէ վառեալ բորբոքեալ 'ի վն յորձակեր խորտակել զնա, և մաքրել զաշխարհ յամ այսպիսի այլանդակաց. (220): Բայց թողեալ զայն անձինս, որք առաւել տաղտապելին վն հեռաւոր իրողութեց քան ծնտաւորաց, այս այն առաքինութի է, որ կոչի ԶԳՈՒՇԱՒՈՐ Ն ԶԳՈՒՇԱՆԱԼՈՒ՝ խնդրել զվրէժ նեղելոց, և նեղել զնեղիչս. զի կարի իմն ցուրտ է վրէժխնդրութին, որ զօրէն անլեզի անասնոց՝ սպանանէ անբարկացիրս: Իսկ են առաւել յանկաւոր է այս իշխանաց և Թագաւորաց՝ յերախտաւորուն ամ ժողովրդեանն, խորտառուգել, և ոչ թէ ցածուցանել միայն զժպիրհս. և բարձրացուցանել զառաքինիս. բաշխել ըստ իւրաքանչիւրումն արժանեաց

զշնորհս

զշնորհս և զպատուհաս :

Բայց թէ խօսիմք զանձանց՝ որոյ ոչ է իշխանութ̃ և զօրութ̃, 'ի սոսա եւս սրամտութին անէ ինչ գործ արհեստին, բայց վտանգաւոր. այն է Համարձակութիւն ճառի : Թէ տեսանէ առաւել հասել բարեաց և չքոյ յանձինս անարժանս, և առաքինեացն առաքինութիւն իւրեանց կալ յանձրգուղ, ոչ ժամու լսել: Երբեք հեղձամղձուկ լինել սրտմտութն 'ի սրտի, թէ ոչ 'ի դուրս չնչէ ը̃ շրթունս՝ 'ի պատիւ արդարութե, և առ հասարակաց օգուտ: Բայց բազում խորհուրդք են քաջք. մինչդեռ կան փակք. այլ յորժամ 'ի դուրս չնչեն, վնասակար են այնմ, որ ոչ 'ի փակ պահէ :

'Ի ժամանակս հիւպատոսաց. յորժամ ազատ էր հռոմ, ազատ էին և գործք և բանք: Այլ օգոստոսի սկսան պատուհասակոծ լինել գործք. այլ ոչ բանք: Այլ տիբերիոսի բանք և խորհուրդք համարեցան անզգամականութիւնք. և յայնժամ առաքինութին և ազատութ̃ն հալածական եղեն 'ի հռոմայ, զի ը̃ տակիտոսի, անհնար է ազատութիւն կալ ընդ ինքնակալութեան: Այպա գեղեցիկ առաքինութիւն է սրտմտութիւն, բայց վտանգաւոր յոյժ, յորժամ է առանց ընտրողութե :

## Գլ. Զ.

### Յաղագս չարակամութեան և նախանձու :

Չարակամութին է ախտ բնաւորական, որ խնդայ ընդ չար այլոց: Նախանձն է ախտ բնաւոր, որ տխրի ընդ բարին այլոց. որպէս և լսար :

Չարակամութին է կերպ ինչ անասնական: Ոչ են սա բանք զմանաւոր ինչ չարակամուէ՝ վն ընդունելոյն ինչ վնաս. այլ՝ զընդդարձակ ինն թիւրութէ, որ տարածի առ ամ ազգ մարդկան. զի չատ է լինել մարդ, 'ի լինել առարկայ չար կամաց սորա: Եւ թէպէտ մահուամբ զերծանի ամ ոք 'ի լինելոյ մդ, այլ ոչ վն այդր զերծանի 'ի լինելոյ ատելի. զի չարակամն ատեայ զամենեսին որք էին, և որք եղեն, կարծելով թէ ամենեքին են չարք, և ամ չա-

րեաց

ըեաց արժանիք։

Բայց նախանձն է կիրք ինչ առաւել կարճատես․ հայեցեալ միայն 'ի մօտակայս և 'ի հաւասարս ըստ հասակի, ըստ ընչից, ըստ գեղոյ, ըստ ուժոյ, ըստ գիտութե՛ն, կամ ըստ արուեստի․ զի կամի լինել մեծ քան զնա։ Մինչ զի նախանձոտն ոչ հանդուրժէ՝ թէ ոք իցէ իւր հաւասար․ իսկ չարակամն ոչ հանդուրժէ, թէ ոք իցէ յաշխարհի։ Սա ատեայ զանձինն, և նա զառաւելութիւնս անձանց։

Երկաքանչիւրն զայս ունին բարի, զի ոչ ումեք առնեն չար, բայց միայն անձանց․ զի չար ախտն ներքին, որպէս անդղն, տանջէ միայն զունակն։ Չարակամքն երեւք են ծիծաղոտ, բայց դժնեայ և ժանտ, զի խնդալ ըստ չար այլոց՝ է թշուառութի։ Նախանձոտք աչք են արիւնրաուշար․ երեսք գունաթափք և հիւծեալք․ զի վշտագնիլ ըստ բարին այլոց՝ է կրծել զիւր սիրտ։ Պօպլիոս սիրոս (221) տեսեալ տխուր և վշտագին զմտաւոր զայլ նախանձայլուկ․ ասէր․ Եթէ կամ չար ինչ պատահեաց ձեզ, կամ այլոց բարի ինչ։

Չարակամութիւն երբեմն է կիրք առնացի․ բայց նախանձ միշտ է կիրք անարգ․ զի չարակամութեն ատեայ զայլոց պակասութի․ և նախանձն ատեայ զայլոց կատարելութի․ և փոք լաւ է լինել նախանձելի, քան առարկայ չարակամի։ Բայց որ ատեայ զամենեսին, արժանի է ատելի լինել ամենեցուն, որպէս ամարդի ոք․ և որ նախանձի ումեք, արժանի է չլինել ումեք նախանձելի, որպէս փոքրոգի ոք։

Նոյնպէս չարակամութի և նախանձ են լոկ ներքին կիրք, բայց և այնպէս սոքին են յերկարութե ջեռեալք՝ արտադրեն չարաչար գործս արտաքինս։ Առաջին գործ չարակամին է լինել չարախօս։ Ծանիք որք չունին զօրութի, ունին զխայթոց․ որպէս պիծակք․ և չարակամն, որ չէ ձեռնհաս մտաւ հատուցանել գործովք, մտանէ լեզուաւ․ վասն 'ի նշանակ Արքիլոքայ՝ քանդակեցան պիծակք 'ի վերայ իւրոյ գերեզմանի (222)։

Այս է և առաջին ձիգն նախանձու, որպէս առաւել ես փոքրոգւոյ․ զի չկարացեալ առաւելուլ

քան

քան զայլս արդեամբք՝ ջանայ ցածուցանել զնա։ Դրանկէս նախանձեալ ընդ քաջութեն տուրնոսի, խօսէր զնմանէ չարիս։ Կոգրոս նախանձեալ ընդ խլիական քերթած հոմերոսի, գիրս գրեաց ընդդէմ, անուն անուանեալ, ՓՈԽՆ ՀՈՄԵՐՈՍԻ։ Մեվիոս նախանձեալ ընդ գիւցազնական ենէիտ վիրգիլիոսի, գրեաց ընդդէմ զգոյն ԵՆԷԻԴԱՅ։ Պորկիոս լատրոն նախանձեալ ընդ աննման ճարտարխօսութեն կիկերոնի, գրեաց ընդդէմ զգոյն ԿԻԿԵՐՈՆԻ։ Գտանիցէք արժանիք գանից։

Ո՛ հաւատայր, թէ՝ և 'ի քաջազանց ոք ըմբռնեսցի յայս անարգ մոլութեն։ Կեսարոս նախանձեալ ը̄ հռմրաւ կատոնին, վ̄ն բարձրացուցանելոյ զնա կիկերոնի, գրեաց նմա զԸՆԴԴԷՄ ԿԱՏՈՆԻ։ Բայց ամենեքին ապաքէն աաւելեալ զպատիւ այնց՝ առ որս ունէին նախանձ, անչքացուցին զանձինս։ Կայ ինչ կենդանի, որում ամանք բռնասու անուն կոչեն. որոյ ոչ կարացեալ գալարածոյ եղջերբք խեթկել զորսորդս, արկանէ 'ի վ̄ր ն̄ջ կորկ ինչ սեաւ իբրև զթանաք. վառ իբրև զկրակ, և ժահահոտ իբրև զջուր սուխգեան լճի (225)։ Զնոյն առնեն չարախօսք, այսուինքն աաւելութբ. զի աղտեղի թանաքաւ իւրեանց աղծեն միայն զանձինս իւրեանց։

Դժուարին է, թէ ոչ նախանձ և ոչ ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ զաեղի առնուն 'ի խօսս կամ 'ի գիրս. զի ամ̄ մոլութն ունի ինչ շարժութն ոչ դադարուն, այլ դընդայուն։ 'Ի ՉԱՐԱԽՕՍԷՆ լինի յառաջել 'Ի ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԻ, 'Ի ՉԱՐԱԽՕՍԷՆ 'Ի ՉԱՐԱՐԱՐՆ, միայն թէ ունիցի ոյժ։

Նախայիշատակեալն այն տիմոն աթենացի, որում մարդատեաց անուն կոչէին. ոչ թէ ըղձանայր միայն, այլ և ջանայր 'ի չիք դարձուցանել զամ̄ ազգ մարդկան։ Զեցոյց երբեք ումեք քաղցր երես, բայց միայն առ ալկիբիադես խարտեաշ մանուկ։ Ընդ որ 'ի զարմանալ քաղաքացւոց, ասէ. ՄԻ ԻՆՉ ԶԱՐՄԱՆԱՅՔ. ՈՐՈՎ ԵՍ ԶԱՅԴ ԱՌՆԵՄ, ՔԱՆԶԻ ԳԻՏԵՄ՝ ԹԷ ԴԱ ԼԻՆԵԼՈՑ Է ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՐՈՑ և ԱՄԵՆԵՑՈՒՆ ՅԵՏ։

Այս

Այս Տիմոն բերով մարդատեաց իմաստասիրութեամբ ձգէր զմարդիկ ելանել 'ի կախաղան. և միայն սիրէր զկեանս, զի կարողասցի խնդալ ընդ մահ այլոց։ Եւ երբեմն յառեան, արար խորում ժողովրդեան հրաւէր այսպիսի։ Կայ ծառ թզոյ իմոյ թզենւոյ փեսակին, ուրեմն բազումք 'ի ձերոց կախեցան. արդ կամ է ինձ կերտել տուն. զի ամենայն կանգնել զշինուած. ուր թէ ոք կամի 'ի ձերոց կախել, կախեսցի փութով գալ։ Խիղճ անզգամական, այլ անզգամագոյն ևս եղև խիղճ յուզիսոյն կայսեր. որոյ արդէն վատանեալ 'ի գլխատելոյ զայնչափ քաղաքացիս մի ըստ միոջէ, ըղձանայր՝ թէ ամ ժողովրդեանն լինէր մի միայն գլուխ, 'ի հատանել զայն միանգամայն։

Ոչ այսպէս հանդարտաւալ է խիղճ նախանձու. բայց է առաւել գժնդակ։ Զի չարակամութիւն ազատ է և յայտնի. բայց նախանձն, վասն լինելոյ խորոյ փոքրոգի, է և գաղտնի։ Այն ինչ եւ աշխարհ 'ի խանձարուրս չքութեան, եսես յառաջին երկուս եղբարս զօրինակ գաղտնութեան։ Պաշտակութեան անմեղեալ, թէ այնպէս փախստեան առնուլ ունի աշխարհ. զօրօրինակ կայուս սկիզբն (224)։

Բայց ասիցես։ Իսկ հնար իցէ ինչ զերծանել յերկոցունց ծանր ախտից՝ 'ի չարակամութենէ և 'ի նախանձուէ։ Սոկրատէս երբեմն հարցաւ յիւրմէ աշակերտէն, զիարդ հնար իցէ խուսել 'ի նախանձուէ, ետ պատասխանի. Եթէ կարծես ըստ մարդկան, որ եղև յետինն յետադիմաց, և անարգաց յանուան զօրուն. բայց այս դեղ չար ևս է քան զհիւանդութիւնն։

Այս իմ պատասխանի առ արդոյս այս է։ Հանրական դեղ ընդէմ չարակամութեան և նախանձու՝ է համառել զայնչափ մեծ ատելութեան՝ տիրապետելեայ փորձոյն պաշտօնէ, մինչև չարակամութեան խոկ լինել սարսափելի. և նախանձուն ամենևին անյոյս լինել ձգելոյ 'ի հաւատարմութի։ Թէ փորձ է առաքինութեան, չարակամութեան չփոխել զայն ընդ մոլութեան. թէ միջակային, նախանձն ակն ունի առնանել։ Բայց թէ է գեր 'ի վերոյ, չարակամն ամաչէ ատել զայն, զի մի լիցի ամենեցուն ատելի. և նախան-

խանձոտն՝ նախանձիլ զբ̅ այն, զի մի լիցի ամենեցուն ծանակ։ Նա՝ յայնժամ չարակամութիւն փոխի 'ի նախանձ. և նախանձն 'ի նախանձաւորութիւն,

որում հնար է լծակցիլ ընդ սիրոյ։

Իւ ևս [illegible] թափի թոյն չարակամութե̅. և [illegible] չիջանի հուր նախանձու, որ ամբարտաւանութե̅ բորբոքի։ Այլա եթէ և յետ այսց գեղոց՝ չարակամն կամիցի կալ մնալ 'ի չարակամութե̅, և նախանձոտն 'ի նախանձու, թող նոցա լինել անձնատանջ։ Հիարբիտաս 'ի ձիգն մտեալ նախանձու՝ հաւատարիլ պերճախօսութե̅ տիմագենէսի, հուսկ ուրեմն պայթեցաւ։



## Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ԺՕ: ԵՐՐՈՐԴ:

### Յաղագս արդարութեան, և ծայրից նր:

### ԳԼ: Ա.

#### Թէ զի՞նչ իցէ արդարութիւն:

Սորհրդով առասպելեցին նախնի իմաստասէրք, թէ գիտս յերկաթի դարուն խիթացեալ՝ թէ ամենայն մարդիկ սրով 'ի միմեանց սատակեսցին, առաքեաց յերկիր երկուս զօրութիւնս փրկականս՝ զամօթխածութիւն և զարդարութիւն. զի որք չէին զսպեալ զանձինս յազնուական երկիւղէ ամօթոյ, սանձահարեսցին 'ի ծառայական երկիւղէ պատժոյ: Այս իմաստնապէս Արիստոտէլ յետ ամօթխածութեան 'ի մէջ բերէ զարդարութիւն: Զօրութիւն քաջ և աչալուր, միշտ սիրեցեալ և ատեցեալ. բարեացապարտից բարի, և չարապարտից չարակար. զի կոյր է առ կաշառս, և խուլ առ աղերսանս. սուր 'ի ձեռին ունելով և կշիռ, կշռէ զյանցուածս, և պատուհասէ:

Այս դշխոյ է սա առաքինութեանց յայս վայր 'ի մէջ երևելոց. և այս՝ եթէ հայեսցեալ 'ի վեհութիւն իւր. զի այնչափ բարձրագահ նստի սա 'ի մէջ նց, որչափ բարձրագոյն գահոյք են կամք՝ քան զզգայական բաղձանս. և եթէ հայեսցեալ յիշխանութիւն իւր. իբր զի նոքա 'ի կարգաւորել զներքին կիրս, հային յառանձնական օգուտ. և սա 'ի կարգաւորել զարտաքին գործս՝ հայի 'ի հասարակաց օգուտ. և թէ պահէ՝ պահպանէ զթագաւորութիւնս:

Այլ յայսմ վայրի արժան է քեզ վերստին յիշել

զոր

զոր աստացուքն 'ի սկզբան անդ, թէ զչորեսին գըլխաւոր առաքինութիւնս մարթ է մատծել, կամ ոչ չորս տարերս պիտանիս իւրաքանչիւրում բարոյական առաքինութեան, կամ ոչ չորս մասունս որ առաքինութիւնս արտաշէալս յայլմէ ամէ սեպհական առարկայիւ: Այս ըստ այսմ արդարութիւն ընդհանուր գտանի յամ առաքինութիւնս. ըստ որում յամի 'ի նմա պիտի ուղղուել կամաց, և որ գործէ բարոյապէս՝ գործէ ուղիղ:

Բայց արդարութիւնն մասնաւոր, զորմէ է աստանօր խնդիր, ոչ արտաքոյ այլով անուամբ, բայց եթէ արդարութիւն: Այս գործ է գտանել զբուն և զգիտնական սահման արդարութեան, զորմէ յայսմ վայրի են բանք. առ որ պիտի մեծ աշխատութիւն քան զոր կարծես:

Արտաբերել՝ մի զի 'ի գծուարին խոյզս ոչ անգէն վաղվաղակի 'ի վերայ բերէ սահմանս, այլ 'ի խնդիր լինի այնց, ոչ թէ հաստատելով զհետ հետոց հասարակաց կարծեաց, զի ապա քննեսցէ իւրով գատմամբ, վասն 'ի վերայ առաքինութեան՝ որ ազնուագոյնն է և պիտանագոյն, բայց և խրթնագոյն և չափաթ [illegible] այլս, յերևելեաց անտի սահմանաց այլոց իմաստասիրաց՝ քաղէ սահման այսպիսի: Արդարութիւն է ունակութիւն, որով յօժարէ կամք [illegible]: Անիրաւութիւն է ունակութիւն, որով յօժարէ կամք [illegible]:

Բայց պէտս ունիմ տեսանել, զի չէ այս գիտնական և ճիշդ սահման արխտատելի 'ի վերայ արդարութեան, ոչ ամենայն կարծեն. այլ բովանդակութիւն ինչ երից սահմանաց այլոց իմաստասիրաց. որոց ոմանք սահմանեցին զարդարութիւն 'ի տրամադրութէ գտանման մտաց. այլք 'ի գործոց. և այլք՝ յունակութէ կամաց: Բայց ամենեքին եդեալ զարդարն ոչ բուն առարկայ արդարութեան, թողուին 'ի տարակուսի թէ զինչ իցէ արդարն: Մինչ զի սահման սոցա պէտս ունի այլում սահմանի. զոր օրինակ, եթէ 'ի հարցանել ցնա, ի՞նչ է արդարն, պատասխանեն.

նէին, առանձնական' որ յաճախեցաւ ՝ի գործել պետութեան։ Որոց յիրաւի էր անդրէն հարցանել. զինչ էջէ գործն արեանն. և յայտ է գլխովին դըժուարութիւն։

Այլ Արիստոտել ընկալեալ' որչափ ինչ զօրէն այս հասարակաց իմաստք, կոչէ զնոսա առաջին ստուերագրութիւն արդարութեան. որպ թէ կամելով ասել, ՝ի մէջ այսր ուրուական գծագրութեան գիտէ ինքն և առ արծարծ գունովք նկարել զկատարեալ պատկեր արդարութեան ճշգրիտ սահմանաւ, վաղվաղակի իբրև յայտ արասցէ, թէ զինչ է արդարն։ Բայց և յայնմ վայրի ՝ի սահմանաց անտի առնու նա զայսոսիկ հանրական ծանօթութիւնս, որք սկիզբն առնեն հորդել նմա ճանապարհ ՝ի դժուարինն յայն ձեռնարկ։

Առաջինն է, թէ արդարութիւն չէ ունակութիւն ուղղիչ կրից, իբրև զայլ առաքինութիւնս, որք կոչին, կարգեալք առ օգուտ անհատին. այլ՝ ուղղէ զկամս առ գործս արտաքինս, որք հային յօգուտ այլոց։ Մինչ զի յայլ առաքինութիւնս նախ մտածի, զինչ զգածեալ իցէ մարդ. և ապա, թէ զինչ գործիցէ. բայց յարդարութեան մտածի նախ՝ թէ զինչ գործիցէ մարդ, և ապա՝ թէ զինչ զգածեալ իցէ. իբր զի գործողութիւնք ծնանին ՝ի ներքին տրամադրութենէ։

Երկրորդ թէ ուղղութիւն կամաց ենթադրէ զուղղութիւն գործնական մտաց, առանց որոյ է նա կոյր դշխոյ՝ անառաջնորդ. իբր զի հնար է կամաց մերժել զուղիղ խորհուրդն. այլ ոչ գործել ուղիղ առանց ուղիղ խորհրդոյ մտաց։

Բայց թէպէտև միտք ճանաչեն զարդարն և զանիրաւն, և կամք ազատ են առ երկաքանչիւրն. սակայն և այնպէս ունակութիւն արդարութեան միտեցուցանէ միայն առ գործս արդարս, և անիրաւութիւն առ անիրաւս։ Զի ճանաչումն ձգի առ երկուս ներհակսն. բայց ունակութիւն է որոշեալ առ մին միայն։ Որպ գիտութիւն առողջութեան հայի յառողջութիւն և ՝ի հիւանդութիւն. բայց ունակութիւն առողջութեան միտեցուցանէ միայն առ գործս առող-

ջա

ջարդարս: Մինչ զի առ 'ի լինել արդար՝ շատ է ունել զունակութիւն արդարութեան. բայց առ ուսուցանել, թէ զինչ է արդարութիւն, պիտի և ուսուցանել, թէ զինչ է անիրաւութիւն:

Հուսկ ապա կնքէ, թէ ունակութիւնք ներքինք ճանաչին յարտաքին գործոց, և 'ի ներհականէն ճանաչի այլ ներհական, և 'ի քանի տեսակս բաժանի մի 'ի ներհականաց, 'ի նոյնքանս բաժանի և միւսն: Վ՟ այսորիկ արդարութիւն և անիրաւութիւն իսկութիւնք ճանաչին 'ի գործոց իւրեանց. բայց յանիրաւ գործոց դիւրագոյն ևս ճանաչին գործք արդարք. և թէ քանի տեսակք են անիրաւ գործոյ, նոյնչափ տեսակք են և արդար գործոյ: Եւ ահա է այս հետևաւոր շրջան իջանէ 'ի ճանաչումն արդար գործոյ, և մասանց նորա, ձգեալ 'ի ներհականէն այսպէս:

Կրկնակի սովոր եմք իմանալ, թէ գործէ ոք անիրաւութիւն. մի՝ եթէ գործէ նա ընդդէմ գրաւոր օրինաց. և երկրորդ՝ եթէ գործէ նա ընդդէմ բնական հաւասարութեան: Մին կոչի անօրէն. զի ոչ հատուցանէ օրինաց զիւր պարտս, պարտաւոր գոլով պահպանութեան նց: Երկրորդն կոչի անիրաւ. զի աւելի առնու 'ի բարեաց, և պակաս 'ի չարեաց քան զարժանն՝ 'ի վարել իւրում զընկերական կեանս:

Արդ՝ մեք խօսեսցուք նախ զօրինական արդարութենէ, որ հակադրի օրինական անիրաւութեան: Եւ ապա զհաւասարութենէ, որ հակադրի անհաւասարութեան. անուն կոչեալ նմա արդարութիւն հանրական. և սմա արդարութիւն մասնաւոր:

## ԳԼ. Բ:

### Յաղագս օրինական կամ հանրական արդարութեան:

Օրէնք են գրաւոր և հրապարակական կանոնք կառավարական կենաց՝ կարգեալ առ երջանկութիւն հասարակակութեան.

Այսպէս լուար, թէ երջանկութիւն առաւելապէս հաստատեալ կայ յառաքինութեան, որ գերագոյնն է 'ի

՚ի մարդկային բարիս : Եւ վն այսորիկ նիւթ օրինաց է խորհ փակէ զնմ առաքինութիւ, առ ՚ի վանել ՚ի հնրկութէ զնմ ձեռամբ, որք ուղղակի հակառակին երջանկութե, որպէս ասաք՝ կատարեալ առողջութիւն :

Բայց զմոլութիւս . և ահա բարձեր զօրէնս : Անկարգաս չեն գրաւոր օրէնս սպարտացւոց . զի փոփոխակ օրինաց ունէին բարի բարս գրեալս ՚ի ընէ ՚ի կենդանի կուրծս, և ոչ յօրէնսգրաց՝ ՚ի մեռելոտի մաշկս : Ոչ կային օրէնք յաւելեալն դարուն, զի ոչ կային առաքինութիք, յայնժամ ծնաւ իրաւախոհութի . յորժամ ծնաւ անիրաւութի . մոլութիք եղեն սկզբնապատճառք գեղեցիկ առաքինութես, ոմ հիւանդութիք՝ եղեն սկզբնապատճառք արուեստի բժշկութե :

Այս քանզի արդար է վախճան օրինաց, արդար են և օրէնք . և թէ չէին արդարք, ոչ լինէին օրէնք, այլ խեղդք հնրկաց ազատութե, և դեղատուութի թմլութիք : Արդ եթէ իւրաքանչիւր քաղաքացի մասն է հնրկութե, և նմ մասն համաձայնիլ ունի իւրում բոլոր մարմնոյ, յայտ է թէ օրէնք՝ որք պարտաւորեն զբոլոր մարմինն, պարտաւորեն և զիւրաքանչիւր մասն՝ լինել առաքինի (225) :

Այո՝ առաքինութիք իսկ պարտաւորեն զմարդ՝ խորշել ՚ի մոլութեց, ժուժկալութե ՚ի զեղխելոյ . արիութե ՚ի զենընկեց լինելոյ, հեզութի ՚ի սպանանելոյ : Բայց քանզի յոլովակի կամքն հակառակի բանին և իւրում օգտի, արդարութի օրինական, ՚ի վր ընաւոր պարտաւորութե որ հայի յօգուտ ամենայնի, յաւելու զպատժական խստութի, բուռն տանել ստամբակելոյ, զի իցեն արդարք՝ հայելով ՚ի հնրկաց օգուտ : Եւ ոչ վն այսր գրաւոր օրէնք բանաւորեն զազատութի, զի են համաձայն օրինաց բնութե :

Թէ ոչ է արժան յափշտակել զստացս, և ոչ սպանանել զանպարտն, և ոչ երդնուլ սուտ, և ոչ զինիլ ընդդէմ հայրենեաց, կանոնք են . որք ՟է որում թելադրին մարդոյ յառաքինութե, կոչին

բնա-

ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔ։ Բայց ընդ որում հրատարակեալ են ժողովրդեան յօրէնսդրաց, կոչին ՕՐԷՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ։

Արդ ոչ այլ ինչ է արդարութիւն օրինական, բայց նոյն ինքն առաքինութիւնն ընդ այլ և այլ հայեցուածոյ։ Վասն զի ընդ այնմ որ բարի առնէ զընկերակայն՝ յոր գտանի, կոչի ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ. իսկ ընդ այնմ որ հայի ՛ի հասարակաց օգուտ, կոչի ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ։ Բազումք բարիոք են վասն հասարակաց, որք չեն բարւոք յանձինս իւրեանց. և են՝ որք բարւոք և առաքինի են յինքեանս, բայց վասն հասարակաց են անպիտանք։ Բարւոք ասաց Պիտոս, իշխանութիւնն յայտ առնէ, թէ որպիսի ոք է մարդ։

Ո՞ր թագաւոր եղև անմեղ՝ քան զբարեպաշտն Նումիոս. յոր թագաւորեցին ամենայն առանձնական առաքինութիւնք. բայց ծանուցաւ նա այնչափ անըրաւական ՛ի հրամայել հասարակաց, մինչև ընտրեցաւ հրամայել անձին միայնոյ ՛ի սենեկի ուրեք (226)։ Ո՞չ եղեն առաւել ապիրատք և յամենայն մոլութիս շաղախեալք՝ քան զպատրիկոս և զտրիբոնիանոս. և ահա սոքա եղեն Ճարտարապետք քաղաքական իրաւանց, առ ազնուագունիւն ՛ի կայսերս. որոց առեալ զօրէնս ՛ի կնոջէ՝ ետ օրէնս ամենայն աշխարհի. (227)։

Արդ կնքէ արիստոտէլ, թէ արդարութիւն օրինական՝ ԳԼԽՈՅ է ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ, վասն երկուց. մի՝ զի փակէ ընդ իւրև զամենայն առաքինութիւնս. և երկրորդ՝ զի հայի ՛ի հասարակաց օգուտ. և առաքինութիւնք՝ որք առաւել օգտեն, են մեծագոյնք, այլ և մոլութիւնք՝ որք առաւել վնասեն, են յոռեգոյնք։

## ԳԼ. Գ.

### ՅԱՂԱԳՍ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ, ԿԱՄ ՄԱՍՆԱՒՈՐ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ։

Թէպէտ ամենայն առաքինութիւն համաձայն է թելադրութեան բնական օրինաց, սակայն ոչ ամենայն առաքինութիւն յատկապէս կոչի ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ՄԱՍՆԱՒՈՐ։

Երևին մոլեկան ինչ արարք առ մարդիկ. որոց չէք

չիք այլ անուն մոլութեան, բայց անուղղութեան կամ անհաւատարութեան ՚ի հաղորդել կամ ՚ի բաշխել բարիս և չարիս յընկերութեան մարդկան։ Փախուստ ՚ի պատերազմէ, և արբեցութիւն, և կռիւ, թէպէտ խոտորումն են ՚ի բնական օրինաց. սակայն և այնպէս ունին զանպատճառ անուն, զվեհերոտութիւն, զանժուժկալութիւն, և զցասումն։ Բայց առնուլ մինասուք այլոց՝ յաւէտ ՚ի բարեաց կամ նուազ ՚ի չարեաց, չունի զայլ անուն մոլութեան, բայց զանիրաւութեան, որ թէ զանձն առնու յատանձնաւորս, կոչի անիրաւութիւն մասնաւոր։

Այս՝ երբեմն մոլութիւնք ձեռն տան միմեանց։ Որպէս գործունեան գաւերբք փոխ տային միմեանց զթունաւոր աչս, որ էր նոցա հասարակաց (228). այսպէս մի մոլութիւն փոխ տայ միւսումն զիւր չարութիւն։ Ուստի և դէպ լինի անիրաւութեան չփոթիլ ընդ այլում մոլութեան. յորում խառնութեան գործն մոլեկան առնու զանուն ՚ի գլխաւոր վախճանէ գործողին։ Որ գողանայ վասն շնալոյ, առաւել շնացող է, քան գող. և որ շնայ վասն գողանալոյ, առաւել գող է, քան շնացող. առաւել անիրաւ, քան անժուժկալ. երկու յանցանք ընթացակցին ՚ի մի յանցանս. և գլխաւոր գիտումն առաւելապէս անուանէ զգործն։ Բայց ակնյայտական չարութիւն մասնաւոր անիրաւութեան, թէպէտ և խառն իցէ ընդ այլ մոլութիւնս, է միայն անիրաւութիւն, զոր ոմանք կոչեն անուղղութիւն։

Արդ եթէ գտանի անիրաւութիւն ինչ մասնաւոր հիմնեալ յանուղղութեան, հարկ է՝ թէ իցէ և արդարութիւն ինչ մասնաւոր հիմնեալ յուղղութեան, ՚ի չառնուլ վասն իւր, և ՚ի չբաշխել յայլս՝ յաւէտ ՚ի բարեաց՝ կամ նուազ ՚ի չարեաց՝ քան զարժանն։ Այս ինչ է՝ զոր ունի ՚ի ձեռին օրինաւորն ատեան, որ է անկաշառ արդարութիւն. որում անհնար է լինել արդար, եթէ երկարանչիւր թաթք չիցեն զուգակշիռ (229)։ Այս այն լուծ է, զոր դնէին ՚ի ձեռս Նեմեսեայ չաստուածուհւոյ, որոյ մէջն էր արդար. և որչափ խոտորիւր ՚ի ծայրս, կամ առաւելոյ քան զմիջասահման, էր անիրաւ։ Նշանակ է չափուս գա-

ւա-

ւաղանն արքունի, կամ իշխանական. նշանակեալ զընթակային արդարութիւն, զկոչեցեալն ուղիղ, ուղղոր, և հաւասար:

Այս արդարութիւն է անուն հանրական, որ փաղանունաբար բաժանի յարդարութիւն օրինական, և յուղղութիւն. գեղեցիկ քերք և արժանի ծնունդք երկնայնոյն աստրեայ. բայց կրտսերն հաւասակաւ՝ երիցագոյն է յաւագունէ. և անդրանիկն մն զի է աննմանագոյն, չէ ինչ մեծարգի:

Այնչափ մանկագոյն է արդարութիւն օրինական քան զարդարութիւն մասնաւոր, որչափ նախնագոյն է ուղղութիւն քան զօրէնս: Բայց նա ը̄ աշխարհի ծնեալ, չունելով զայլ օրէնս՝ բայց զբնութիւն, յանձուկ և 'ի ծխամած հիւղս անդէն և անմեղ հովուաց, առաւել սիրեցեալ՝ քան ահընկէց, եկեաց առանձինն: Բայց արդարութիւն օրինական՝ ծնեալ զկնի 'ի գալս հասարակութեանց և դրականաց (230). շուրջ պահ ունելով ձաղկաւորաց և սպասաւորաց՝ նստի թագաւորդ յաթոռ արքունի, առաւել երկրպագեալ քան սիրեցեալ. իբր զի ոչ յոյժ է սիրելի, որ ահընկէցն է:

Այս նմանք են միմեանց, և աննմանք: Նմանք ը̄ ընթակայի. զի երկաքանչիւրն են առաքինութիւք համառնչականք, զի տրամադրեն զկամս առ արտաքին գործս, որք հայեն յայլս: Բայց աննմանք ը̄ վախճանի, ը̄ նիւթոյ, ը̄ առարկայի, և ը̄ տեսակի: Իբր զի օրինականն, հիմնեալ 'ի հրապարակական իրաւունս՝ հայի 'ի հասարակաց բարին. ուղղութիւն ամփոփեալ յառանձնական իրաւունս՝ հայի 'ի մասնաւորաց բարին:

Նա յածի զբարերօք, որոց անհնար է լինել չար, այ̄ է, զառաքինութիւնք. որ միշտ են բարի: Նա յածի զբարերօք, որոց հնար է լինել չար այսմ կամ այնմ մասնաւոր ընթակայի. այ̄ է զմարմնական բարեօք, զընչիւք կամ զպատուով: Նա պէտպէտանայ ըստ պէտպէտութեան տեղեաց և ժամանակաց ըստ դատման օրէնսդրին: Բայց ուղղութիւն թելադրեալ 'ի բնութենէ 'ի հանրական մօրէ, յամենայն տեղիս է նոյն:

## ԳԼ. Դ.

## Յաղագս գերադասութեան :

Ի մէջ օրինաց և ուղղութե է միջական ինչ արդարութիւն, որ մեկնէ զօրէնս ըստ ուղղութե. և սա կոչի գերադասութիւն :

Զօրէնս արդարս պարտ է սրբութբ պահել, զանիրաւս՝ իսպառ նանրացուցանել, զերկբայականս՝ իմաստութբ մեկնել:

Մեռեղղս փոխեաց զօրէնս թուլացուց յօրէնս հռովմէականս՝ բաղում առաւելութբ արդարս. և աթենացիք յօրէնս սողոնի փոխեցին զօրէնս դրակոնի, զօրէնս արդարև վիշապի և ոչ մարդոյ. գրեալս արեամբ և ոչ մելանաւ. զի զամ թեթև ինչ վրիպակ պատուհասէր ծանու տանջանօք, բառնալով զգեր 'ի վերայն 'ի բարիս բնութե՝ յայնմանէ, որոյ բարձեալ իցէ յայլմէ զգուշանաքեայ իմն 'ի բարեաց բախտի :

Անագորոյն էին օրէնք Թոասայ արքայի 'ի Տաւրիս, զոհել սպանեալ զամ զպանդուխտս: Վնկ այն ինչ կամէին զոհել զպանդուխտն օրեստէս, նա ինքն զոհեաց զօրէնսդիրն, և արեամբ նորա ջնջեաց զնորուն օրէնս. (231) :

Հռովմայեցիք ոչ ջնջեցին զօրէնս երկոտասան տախտակաց (232), այլ մեկնեցին. վնկ իրաւաբանք նց ոչ կոչեցան նորոգիչք, այլ թարգմանք օրինաց: Են պատկերք, յորս թէ հայիս 'ի միջէ կողմանէ՝ երևին այլանդակ իմն. և թէ 'ի միւսմէ, երևին գեղք մդկային: Այնպէս օրէնք ինչ՝ թէ հայիս 'ի նկարագիրն, երևին գժնդակք. թէ մեկնես 'ի բարի գերադասութե, լինին մդկայինք :

Զարութին միայն առաւել յաղթութե քան յօրինապահութե. և վնկ օրէնք առաւել միայն յաճախ կուե՝ քան 'ի գթութե: Բայց գերադասութին ոչ քննող և միջնորդ երկոցուն, հայեցեալ յաւէտ 'ի միտս՝ քան 'ի խօսս օրէնսդրին, բարիոք օրէնս համարի խուսել երբեմն 'ի հրապարակական օրինաց: Բնութին, որ 'ի մէջ իւրոց երախաեաց ոչ

երբէք սարջանոյ, հայի 'ի պահպանութիւն իւրոց ինքնաբերաբար, այլ յեղծումն ըստ պատահման: Եւ ուղղութիւնն՝ որ նմանող է բնութեան, հայի առաւել 'ի պահպանութիւն, քան 'ի պատուհաս քաղաքացւոց:

Կրեոնն 'ի կատարածի Թեբէացւոց՝ ամբարձեալ 'ի Թագաւորութիւն Թեբէի՝ խիստ օրէնք հրամայեաց, զի կենդանւոյն Թաղեսցի, որ զմեռեալ Թեբէացի Թաղիցէ: Անտիգոնէ գթած կին, ըստ հրամանին՝ Թաղեաց զպողինիկէ զեղբայր: Կոչեցեալ նա առաջի կրեոնի 'ի դատաստան, համարձակ ետ պատասխանի. ՀՆԱԶԱՆԴ ԵՂԷ ԵՐԿՆԱՅՆՈՑ՝ ՕՐԻՆԱՑ. ՈՉ ԱՅՆՄ, ԶՈՐ ՉԳՐԵՑ և ՉՀԱՍՏԱՏԵԱՑ ԵՐԲԷՔ ԴՈՒ ԲԵԿԱՆԵԼԻԴ. ԱՅԼ ԱՅՆՄ ՈՐ ՅԱՄ ՅԱՒԻՏԵՆԻՑ ԵԴԵԱԼ ԿԱՅ 'Ի ՍԻՐՏ ՄԱՐԴԿԱՆ: Այս էր օրէնք բնութե. զոր և մրջիւնք պահեն. և այս է ուղղութին, որով անտիգոնէ մեկնեաց առաւելեաս ողջմտութբ զօրէնս կրեոնի, քան զնոյն ինքն կրեոն. որոյ եդեալ էր զայնս, թէ այն արգելուած ու 'ի ներքս քակէր զայր Գլուխ, Է. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԴԴԷՄ ԲՆԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ:

Սորա առաջին գործ գերարդարութն է չափաւորել ուղղութբ զխստութի գրաւոր օրինաց. զի ծայրագոյն խստութին է ծայրագոյն անիրաւութի: Երկրորդ գործն է, 'ի լրումն աճել մեկնութբ զհամառօտութի օրինաց: Յերկոտասան տախտակս օրէնք էին սակաւք. և բանք սուղք. և պղատոնի կամք էն, այսպիսի լինել օրինաց:

Չէ օգուտ կառավարութե հնրկուե բազմութի օրինաց: Յորժամ հատանի ինչ ուռ յորթոյ, բազում ուռք շառաւիղեն, և 'ի հոտոցէ անտի առնուն բեղնաւորութի. և հոտոց օրինաց յաճախէ զյանցուածս՝ յաճախելով զարգելմունս:

Եւ ևս առաւել չէ օգուտ բազմութի բանից. զի ոմն ասէ սենեկա, 'ի վր իւրաքանչիւր բառի օրինաց ծնանի ինչ վէճ: Յուլիոսի կայսեր կամք էին ամփոփել զքաղաքական իրաւունս 'ի գուղնաքեայ ինչ մատեան, բայց սուր դաւադրաց խողխողեցին զայն գեղեցիկ գործ 'ի սիրտ նր:

Վնչ այն առաջին օրէնք էին իբրև զպատասխանատուու-

տուուիս պատգամախօսից, այնչափ արգոյք, որ-
չափ էին սուղք: Այլ զորօրինակ մեհենապետն
իբրև յոգեշարժ ազդմանէ թարգման լինէր պատ-
գամախօսին, 'ի լռութիւն ածեալ զոր նոյն լսէր,
նոյնպէս այր իմաստուն զհետ երթեալ ուղղութեան
բնութեան՝ մեկնէ զհամր օրէնս, և խօսեցուցանէ
զմեռեալ օրէնսգիրն իւրով բարբառով:

Այսպէս նկարէր զգլխաւոր ձևս, թողեալ իւ-
րոց աշակերտաց նկարել զմանրամանր գծագրու-
թիս, զորս կոչէր նա յաւելուածս և գեղեցկու-
թեանս պատկերին: Ըստ սմին օրինակի գլխաւոր
նկարագրութիւնք քաղաքական կենաց նկարագրե-
ցան 'ի վերայ այնց երկոտասան տախտակաց, թո-
ղեալ, զի 'ի մանաւորս ուղղութիւն թարգմա-
նին տացէ գործոյն զլրումն:

Թո՛ղ զի թէև օրէնք լինէին ճոխք, յոյժ գժուա-
րին լինէր հպեցուցանել զնա անհատական դիպ-
ուածոց. զորս օրէնսգիրն անհնար է տեսանել 'ի
հեռաստանէ. զի անհնար է նմա լինել յառաջա-
տես, ոչ գոլով գուշակ:

Պարագայքն են՝ որք տեսակաւորեն. կամ ծան-
րացուցանեն, և կամ նուազեն զյանցանսն: Դա-
տապարտեն օրէնք զայն՝ որ խոցէ զայլս: Գուցէ
խոցիցէ ոք, բայց թեթև. ծանր խոցիցէ, բայց
ակամայ. կամաւոր իցէ հարուածն, բայց ոչ ա-
ղատ. ազատ իցէ, բայց գրգռեալ 'ի ծանր վնաս-
ուէ: Որ զայլ ոք գրգռէ, խնդրէ զվնաս անձին,
և անիրաւութեան ոչ լինի այնմ՝ որ 'ի խնդիր է նորա:

Ճարտարապետք 'ի յղկել զկիձս բոլորշի սեանց,
ոչ 'ի գործ ածեն ՉԱՓՈՒՆ ԴՈՐԻԿԵԱՆ, որ 'ի խիստ
և յանձնապուկ երկփթոյ. այլ ՉԱՓՈՒՆ ՅՈՆԻԿԵԱՆ՝ որ
'ի կապարէ, ուղիղ՝ միանգամայն և ծեքական, յա-
րեալ յարմարեալ ոչ զկիձն քանունի, այլ զքա-
նունն կձոյ: Կանոն երկաթի են օրէնք, և կանոն
կապարեայ է ուղղութիւն. երկաքանչիւրն ուղղորդք,
զի հիմնեալ են 'ի բանն: Այլ այն՝ անայլայլակ
հայեցիւք 'ի դիպուածն, և ոչ 'ի պարագայս, է
կարի իմն խիստ: Իսկ սա՝ հայեցիւք 'ի պարա-
գայս՝ է գողար և այլայլակ, պատշաճեալ զօրէնս
դիպ-

զխղուածոյ, և ոչ զդխղուածն օրինի։

Պիտոյ է գերարդարուն և 'ի միաբանել զօրէնս. յորժամ երևեին անմիաբան միմեանց։ Եւր օրէն ինչ յաւելնու, զի մի ոք 'ի դատաւորաց նստցէ 'ի մի դատարանի։ Եւր միւս ևս օրէն, որ հրամայէր, զի 'ի հանդէս ժողովոյ չառնելոյ 'ի մին, ոչ նոյն նստիցէն 'ի մի դատարանի։ Սողոն օրէնսդիր օրինացս՝ թուեցաւ խօսիլ պատուածոյս։ Այլ իբրև պաշարեցաւ աթէն, քաղքն սեմպրոնիոս 'ի պանդխտաց անուն ել 'ի վերայ պարսպին, և 'ի վայր հոսել զթշնամին՝ զելեալն 'ի պարիսպ անդր կանգնել յաղթութի, զերծոյց զքաղաքն։

Առ կայթիւն հասարակաց՝ կոչեցաւ սեմպրոնիոս յանաշաւ ատեան արիսպագին։ Ամբաստանեցաւ, որ թէ զընդդէմ գործեաց պանդխտական օրինաց. և ջատագովեցաւ յայլմ օրինէ համախուռն յարձակման։ Օրէն ընդ օրէն մաքառէին։ Սա ընդհանրութբ ցրէր զմասնաւորն. նա մասնաւորութբ ցրէր զընդհանուրն. և ողորմելին յերկուց օրինաց մէջի կայր ընդ ուռն և ընդ սալ, ընդ յաղթանակ և ընդ պատուհաս։

Այլ պէտք եղեն գերարդարուէ. զի 'ի բացատրել զերկպառանչիւր օրինացն զմախճան, յաղթականն մի դատապարտեսցի յաթենացւոց. և աթենացիք մի լիցին փառանուն, թէ սպանին ըզյաղթականն՝ առ չլինելոյ նմ փարձահատոյց։

Նպաքէն 'ի միտ առեր, թէ արդարուին օրինական հայի յօգուտ հնրկց. և մասնաւորն՝ յօգուտ առանձնական։ Նուտի և վերարերին՝ նա 'ի քաղաքականուէ, զի արասցէ քաջ օրէնսդիրս. և սա 'ի բարոյականն, զի արասցէ քաջ քաղաքացիս։ Արդ արխատել երկոցուն գիտուեցս ուսուցչապետ՝ զճառս օրինական արդարութե պահել դրոց քաղաքականութե, ճառէ առանձնոր միայն զմասնաւոր արդարութէ. բաժանել զայն յերկուս տեսակս հաւասարս, ըստ երկուց գլխաւոր գործողութեց նորա։

## ԳԼ. Ե ։

### Յաղագս արդարութեան տրամաբաշխականի, և փոխարինականի՝ ընդհանրապէս ։

Տրամաբաշխական արդարութիւն է, որ 'ի բաշխել զբարիս հանրից ըստ բաղդատման, պահէ զհամեմատութիւնն երկրաչափական, ըստ հանգամանաց ընդունողին ։ Փոխարինականն է, որ պահէ զհաւասարութիւն թուաբանական 'ի փոխարինութիւնս և 'ի դաշինս՝ որ 'ի մէջ առանձնաւորի և առանձնաւորի ։

Երկաքանչիւրն այս իւրաքանչիւրում զիւր արժանն հատուցու. բայց հատուցումն տրամաբաշխականին է համեմատական, 'ի չափել ըստ հանգամանաց անձին ընդունողի ։ Հաւասարութիւն փոխարինականին է անբաժանելի, 'ի չափել ըստ հանգամանաց իրին, զոր պարտն է տալ ։ Երկաքանչիւր հաւասարութիւն հաստատեալ կայ 'ի միջասահմանութեան. զի առն ոչ յաւելու և ոչ նուազ քան զպահանջել բանին ։ Եւ քանզի երկաքանչիւրն են առաքինութիւն, զի առաքինութիւն զմէջն ունի զերկուց ծայրից ։

Եւ մի ինչ դժուարին լիցի քեզ իմանալ, թէ զխա՞րդ մին երկրաչափական կոչիցի, և միւսն թըւաբանական ։ Թուաբանական կոչի փոխարինականն, զի հաստատեալ է 'ի մէջ անբաժան, իբրև զթիւս, այսպէս ։ Տիտիոս դարձեալ 'ի սեմպրոնիոսէ զձին ընկերջ գնեցոյ՝ վճարել հարիւր լիպրա ոսկի ։ Այս է դաշն փոխարինական. և հարիւր լիպրայն է թիւն, յորում հաւասարին պարտք և առնլիք. զի թէ վճարի հարիւրի հարիւր, մնայ և ոչինչ ։ Արդ 'ի կոչել սեմպրոնիոսի զտիտիոս 'ի դատաստան, իբր զի ոչ կայ 'ի խոստման, եթէ դատաւորն առնու 'ի տիտիոսէ հարիւր լիպրա ոսկի, և տայ սեմպրոնիոսի, լինի արդարութիւն փոխարինական, և հաւասարութիւն թուաբանական, զի թիւն է զուգահաւասար ։

Բայց արդարութիւնն տրամաբաշխական կոչի երկրաչափական, զի հաստատեալ է 'ի համեմատութեան երկուց իրաց առ երկու իրս ։ Տիտիոս սակարկէ ու-

ուանսա երկուց ծառայից · որոց մին է կարճիկ , և միւսն սկայ ։ Յայտ է թէ նոյնաքանակ կերակրով կարճիկն ապրի , այլ սկայն սովամահ մեռանի ։ Վնչ կամք են օրինաց , զի տացի կերակուր ըստ համեմատութեան անձին ։ Այպա պարտ է խնամածու բաշխողին հայիլ , որչափ ինչ ճահողական իցէ կարճկին , և ըստ համեմատութեան որչափ ինչ ճահողական իցէ մարմնոյ՝ քառապատիկ մեծ եղելոյ ։ Արդ այս համեմատութիւն հաստատի 'ի չորս ծագս տարանջատս · ՝բ յերկուս իրս , որք տուեալ ենին , և յերկուս անձինս , որք ընդունին · և այս ծագք դրոշմին 'ի ձև երկրաչափական ինչ քառակուսւոյ ։ Առաջին ծագն է կարճիկն · և երկրորդ՝ կերակուր կարճկին ։ Երրորդ՝ սկայն · չորրորդ՝ կերակուր սկային ։ Արդ զայս կերակուր հաշուէ խոհական բաշխողն 'ի կերակրոյ կարճկին կանոնաւն համեմատութեան՝ որ կոչի կանոն ոսկի ։ Եւ է առ անուանք երկրաչափական կարճկի դիտի երկու լինել րեան · քանի՞ լինելոյ դիտոյ իշէն ... ։ Այպա յայնժամ պահի արդարութիւն տրամաբախական և երկրաչափական , յորժամ չորրորդ ծագն զնոյն համեմատութիւն ունի ընդ երրորդին , զորինչ երկրորդն ընդ առաջնոյն · և փոխադարձեալ , յորժամ եկրորդն զնոյն համեմատութիւն ունի ընդ չորրորդին , զորինչ առաջինն ընդ երրորդին , այսպիսի իմն ձևով ։

ա. Կարճիկն. գ. Սկայն.



բ. Երկու լիտրա. դ. Ութ լիտրա ։

Եւ արդ քանզի բացատրեցաւ եզերք արդարութեան երկրաչափականի և թուաբանականի , տրա-

մա-

բաշխականի և փոխարինականի . սկիզբն արտաս_ ցուք խօսիլ զերկաքանչիւրոցն ուրոյն :

## Գ.Լ. Զ:

## Ցուցք քաղաքականութեան ուղղութեան :

Եթէ իւրաքանչիւր քաղաքացի մասն է հնրկու_ թեն , պարտ է նոցա բաժանորդ լինել բարեաց և չարեաց հնրկութեն . զի զայս պահանջէ ընկերու_ թիւն և արդարութիւն :

Այլ աստանօր մարթ է քեզ խնդրել երկու ինչ : Մի' եթէ պարտ իցէ իւրաքանչիւրում' բաժա_ նորդ լինել Թուաբանօրէն , այսինքն հաւասար մասանց . թէ Երկրաչափօրէն , այսինքն համեմատական հանգամանաց անձանց : Երկրդ , ո՞ր իցեն հանգամանք' որք առ_ նեն զանձինս յաւէտ կամ նուազ արժանաւորս : Երկաքանչիւր առարկայս կախեալ կայ զկարգա_ ւորութէ հասարակութեն բաշխողի , և զընթէ բա_ րեացն բաշխելոց . որովհետև բարիք զհետ եր_ թան արժանաւորութե , և արժանաւորութին զհետ երթայ կարգաւորութեն հնրկութե :

Զորք են' այսինքն արիստոտէլի , պարզ կարգաւորու_ թիւք հնրկութեն : Մենապետութիւն , որ է կառավա_ րութեն միոյ իշխանաւորի : Առաքինապետութիւն , որ է կառավարութիւն առաքինեաց : Ազնուապետութիւն , որ է կառավարութեն ազնուականաց : Ժողովրդապե_ տութիւն . որ է կառավարութիւն ժողովրդականաց : Բայց 'ի պարզ կարգաւորութեանց աստի լինին պէսպէս խառնուածոյք . ոչ 'ի չորից պարզ գու_ նոց բազմադիմին անթուաւ գոյնք :

Մենապետութիւն է կառավարութեն ազնուագոյն բայց ըստ կառավարողին' այլ ծանրագոյն այսինքն կառավա_ րեցելոյն . իբր զի ամենեքին կախեալ կան զանկ_ նութեն միոյ ուրուք :

Առաքինապետութիւնն է կառավարութիւն սակաւուց առաքինեաց , և իմաստնոց . որպիսի էր կառավա_ րութիւն փիլիսոփայից , և մոգուց , և քրմաց ե_ գիպտացւոց :

Ազնուապետութիւնն արիստոտէլ կոչէ կառավարու_ թիւն

փարթամաց. զի նա զազնուականութիւն սահմանէ՝ ծննդեան զարմ հանդերձ փարթամութեամբ: Փարթամութիւն առանց ազնուականութեան է նախանձելի. և ազնուականութիւն առանց փարթամութեան է ծիծաղելի: Եւ այսպիսի եղև կառավարութիւն հռովմէական ծերակուտին յետ թագաւորաց, և յառաջ քան զորբիրունութն: Մինչև Թուոյ տեարց մեծ լինել քան զաւագապետականն, և փոքր քան զժողովրդապետականն:

Իսկ ժողովրդապետութիւնն է կառավարուն առաւել անարգ, բայց առաւել ազատ. զի համակ են ժողովրդականք, բայց և համակ ինքնիշխանք. վասն զի այնչափ արժէ քուարկութն ստացականի, որչափ գլխաւորի. ոչ 'ի սպարտիս:

Ապա 'ի ժողովրդապետութեան՝ նա է առաւել արժանաւոր և բարեկացապարտ, որ առաւել պինդ ունի զհնրկաց ազատութիւն. յազնուապետութեան՝ նա որ է առաւել ազնուական. յաւագապետութեան՝ նա որ է առաւել առաքինի. և 'ի միապետութեան՝ նա որ առաւելամեծար է առ արքայն: Բայց ոչ յամ մարմնի կան անդամք մի քան զմի ազնուագոյնք, թէպէտ և 'ի նմին կուրոյ ստեղծեալք. սոյնպէս ամենայն հնրկապետութն թէպէտև ժողովրդական, է յօգուորեալ 'ի բազում կարգաց մի քան զմի արժանաւորաց՝ իբր 'ի պաշտամանց և պատուորուէից վերագունից, միջակայնոց և ստորնոց:

Յամ բարեկարգ հնրկապետութն միջի եղեն քահանայք, իշխանաւորք, ծերականք, ատենապետաւորք. բայց իբր կարգմունս հնրկապետութն՝ սատիճան քան զատիճան էր առաւել յարգական. 'ի Թեբէ քահանայք, յաթէնս դիւանաւորք, 'ի սպարտիա ծերականք, 'ի Հռովմ ազնուականք. և 'ի հնրկապետութն ինչ սպանդապետք: Թող զի անձն ոք բարեկացապարտ հասարակաց՝ միջի յաշս հասարակաց է մեծարգի: Մինչ զի յամ հնրկապետութն՝ թէպէտ և թուաբանական, դառնի միջի երկրաչափական ինչ համեմատութիւն անձանց:

Միւս տարակոյն է զբարեաց, զորս հասարակութն հաղորդէ իւրոց առանձնաւորաց: Վասն զի

ոմանք

ոմանք են առաքինեաց հանդերձ պարգեւատրութեամբ . որպ̄ Թոշակք քաղաքականք և զինուորականք . և վարձք գործաւորաց : Այլք պարգեւականք 'ի դատէն . որպ̄ յաղթանակք, պսակք, և առանձնաշնորհութիւնք վն̄ քաջագործութեանց եղելոց 'ի ծառայութեան հ̄րկաց : Այլք պարգեւաւորեալք մանգամայն և պատուաւորք . որպ̄ առաջնութիւնք, հանդերձանք հիւպատոսականք , և գործակալութիւնք զինուորականք և պաշտօնականք : Այլք առակաղեցրեականք 'ի յանկուցանել զոխութ քաղաքայնոց և զօրականաց . որպ̄ փառաւորութիւնք պարգեւականք, փրոկք դրամոց՝ կամ չափու ցորենոյ , կամ բաշխիւք կալուածոց և ագարաց : Այս ամ̄ է առարկայ արդարութեան . այլ ոչ ամ̄ տրամաբաշխականին :

Վճարք և Թոշակք՝ Թէպէտև առ անհաւասար անձինս , վն̄ զի են սակարկելք , ոչ բաշխին երկրաչափական արդարութ̄ այլ թուաբանականաւ . վն̄ զի ոչ լինի հայելով յորակ շ̄նորհողին , այլ՝ 'ի քանակն ճշգիւ պարտաւորելոյ . և ոչ մատծի հ̄րկութիւնն որպ̄ վերագոյն որք առ խոր հպատակ , այլ՝ որպ̄ առանձնաւոր որք առ առանձնաւոր . վն̄ զի փոխադարձ դաշինն հաւասար պարտաւորէ զդաշնադիրս : 'ի հատուցմանս պատասխանատուս , յորս ոչ է ճիշդ պարտաւորութիւն սակարկութ̄ , այլ պատշաճողութ̄ և հասարակաց օրինակաւ , պարտ է , զի 'ի բաշխելս պահեսցի արդարութիւն երկրաչափական , ըստ համեմատութե անձանց . զի մի կանգնեսցի արձան քարեղէն մեծին պոմպէոսի , և արձան ոսկեղէն գեմարի՝ խուրդ աղտագրելոյ ծառայի : Նոյն առաւել՝ զի նշանակք պատուոյ յոլովակի սակաւագին են պատուողին , և թանգագին պատուեցելոյն : Մեծապէս շնորհապարտ է հռովմ տարխելեանց շինուածոց գործակալի . որ նախ առաջին վարձահատոյց եղև ծերակուտին շքով . վասն զի որ յառաջն սինկղիտոսք և ազնուականք զամս հինգ հարիւր նստէին խառն ը. ժողովրդականս 'ի Թատրոնի , սա ետ նշ̄ տեղի ազնուականացն . որով տրամաբաշխական արդարութ̄ ձգեաց յանձն զսեր ամ̄ ազնուականաց , և զատելութիւն ամենայն ժողովրդեան :

Բայց

Բայց առաւել ևս շնորհապարտին ամ՟ հնրկապետութիւնք՝ աթենականին. որ եղև առաջին 'ի տալ յարգ անգին՝ տերևոյ ծառոյ, պսակեալ զյաղթականս սոսով ձիթենւոյ: Տերևք այնր անկոյ Ճարակ մատուցին զինուորական եռանդեան, քան հիւթ նորա՝ լապտերաց: Այլ չէր գիտելի, յաղթականն զպսակն պատուէր, թէ պսակն զյաղթականն: Յայնմ օրէ ձիթենիք եղեն թանգագին, և արիւն թեթևագին, 'ի հեղուլ մարտկաց զարիւն 'ի Ճակատամարտի, զի բարձեալ ունիցին ճիւղ մի:

ԱԹԵՆԱՑԻՔ 'ի կիր արկանէին կրկին արդարութիւնք. տրամաբաշխականն, 'ի համեմատել զպաշտօնս՝ անձանց. և փոխարինականն՝ 'ի վճարել զսակարկեալ թոշակս: Աւագութիւնք են ծանրունք պատուաւորք, և պատիւք ծանրաբեռնիք: Եւ վա՛յ այնորիկ յիրաւի կոչին և բեռինք. զի տաժանաւորք են 'ի վարել, և ծանրածախք 'ի տալ, թէ ոչ թեթևարեանին օգտիւ և պատուով: Այսպիսի պիտոյ են երկու արդարութիւնք՝ 'ի բաշխել զաւագութիւնս՝ անձանց. զի մի առ ան[illegible]ակուն՝ գնոց գնիցեն, կամ առ աղքատութեան վաճառեսցեն զարդարութիւն:

Եւ այս լաւ ևս լինի 'ի [illegible], քան յայլ հնրկապետութիւնս: Զի յաւագպետութե՟ առաւել առաքինիքն չեն առաւել գործօնեայք: Յազնուապետութե՟ առաւել ազնուականք չեն առաւել առաքինիք: Եւ 'ի ժողովրդապետութե՟ ազնուական իշխանութիւնք բաշխին յաճախութ՟ բուէից. զորս դիւրաւ վաճառեն աղքատք. և որ գնէն զարդարութիւն, վաճառէ զայն: Բայց 'ի միապետութե՟ հնար է արդար իշխանին յանխաղ հանգոյն ամ՟ կարգաց առնուլ ընտրանս զանձինս համեմատս ամ՟ աւագութեց և պաշտամանց՝ վերագունից, միջակայնոց և ստորնոց՝ ըստ [illegible], ըստ [illegible], ըստ [illegible], ըստ [illegible], և ըստ [illegible]: Թէպէտ վա՛յ զի 'ի միապետութե՟՝ բազումս ազգեն կիրք և նպատակք, որք են երկու ժանտախտք ընտրութե՟, յայսմանէ քաղաքականք

ա-

առնուն առած , թէ յայլ հնրկապետութիւնս յա_լովագոյն երևեին անձինք գերապանծք ։

իսկ'ի հարից դարգնափաութեան , եթէ լինեին բաշխոյք ը համեմատուն արժանաւորութեանց և գանձուց , մասնեն երկու մեծ ատպիմութիք · ճծագործութեան 'ի պարգևելն , և արդարութեան'ի բաշխելն · և շնոր_հապարտ առնեն զհնրկութիւնն առ աանձնաւորս , և զաանձնաւորս առ հնրկութիւնն ։ Բայց եթէ պարգևք ընկեցիկ լինեին անխտիր ում և իցէ , և տանց ինչ հարկի , աղքատացուցանեն զհնրկու_թիւնն · և ոչ զոք յաանձնաւորաց առնեն շնորհա_պարտ ։ Մանաւանդ թէ ծաղածանակ առնեն զպարգևատուն · իբր այն չափազանց առաւութեք օգտատուի , զորմէ առակս ասէին · ուլ ինւ էբող իւր , բայց ուրքին , և ութիւ (233) ։

Զհուսկն առացից · այն իշխան ծաղկեցուցանէ զիւր հնրկապետութիւն , որ տայ զգատաւորու_թն գիտնագունիցն · զզէնս զօրագունից · զքահն՝ հաւատարմագունից , զքննուն՝ արդարագունից · զկառավարութիւն՝ խոհեմագունից , և զաշխա_տութիւն՝ կորովագունից ։

Որինչ առայաւ զբաշխէ բարէաց հասարակաց , պարտ է իմանալ և զբաշխէ չարէաց հասարակաց · որպիսի են հարկք , և գլխահարկք , և փնահարկք , և զինուորա_կան ծառայութիւնք , և արքունի ծծհաց փոորք ։ Զի ը ամից արխատաելի , զարդարութիւն իւրովք հա_կառակօք լինի ուսանել · և յատուկ է ընկերու_թեն որ չէ գաղանական , մանաւորիլ տուժից , որպէս շահուց ։

Սոէպ ապատամբութիւնք հրէից առ ժողովուրդն հռովմէական՝ լինէին , ասէ ապպիանոս , յարգար գանդատանաց , զի էին նոքա առաւել ծանրաբեռ_նեալք քան զասորիս և քան զկապադովկացիս և քան զայլ հարկատու ժողովուրդս ։ Ոչ մորմոքէին յաղագս բեռին , այլ յաղագս անհաւասարութեն բե_ռին · չէ ինչ ծանր բեռնբարձուն , որում ամենե_քին միօրինակ տանին ։ Հաւասարութիւնն է մայր սիրոյ և խաղաղութեն · անհաւասարութիւնն՝ ա_տելութեն և կռուոյ ։

Վնկ

Վանկ գեղեցկահայրն է բևան արգասաւոր, բայց անի-րաւ. զի 'ի բաժանիլն թուաբանօրէն 'ի հաւասար մասունս, և ոչ երկրաչափօրէն ըստ համեմատութեան, նոյն հարկ՝ մեծատանն է անզգալի, այլ աղքատին անտանելի ։ Արգելեալ էր լծել զեզն և զէշ 'ի միասին. զի լծոյն ծանրութիւն անկեալ 'ի վր̅ փոքուն, ծանրի նմա յոյժ ։ Այս եղև անօրէնութե օգտատուի. որ յիւր գիրս գրեաց զանուանս ամենեցուն, այլ ոչ զամենեցուն ինչս ։ Գործման մատուցին յաջորդք՝ այսմ անկարգութեն, գրեալ և զամենեցուն ինչս. զի հանգամանակեսցեն ըստ դոյին՝ երկրաչափական համեմատութբ ։ Այն գիրք եղեն կշիռք արդարակշիռ, որ կշռեցին զիւրաքանչիւրոց զբևան և զկար ։

Դէպ է արդ յիշեցուցանել, թէ հայեցեալ ատանօր յարդարութիւն ոչ 'ի քաղաքական, այլ 'ի բարոյական, ըստ որում անէ արդար զամ մդ առանձինն, զամ զասացեալս զորամարաշխական արդարութեան իշխանին կամ հնրկունն՝ պարտ է մանաւորապէս հալեցուցանել պաշտօնէից, որք բաշխեն զբարիս և զայժս 'ի յանձնարարութե իշխանին, և հնրկունն ։

Պատահէ յոլովակի զի պատուէրն է ողջական, և կատարումն սատանայական ։ Միտ իշխանին է արդար և բարեպաշտ. այլ միտ գործակալին թիւրեալ, և շրջեալ յիւր օգուտ ։ Ընդ սիմպղեգադեան ժայռս նաւարկէ 'ի գեղմն ոսկի (234) ։ Մաքսաւորք՝ չար են քան զաւազակս՝ ստակապահանջք արքունի հարկաց, անյագ վաշխիւ և անզգամ բռնութբ տառապեցուցեալ զժողովուրդ՝ անուանարկ առնէին զկառավարութիւն գթառրին օգտատուի ։ Եւ փոխ 'ի լինել արդար հրամանի զհարկան ուղղակի յարքունի գանձս հասուցանել, այն զեղծագործ ձեռն 'ի բաց հալածեցաւ 'ի հռովմէական հնրկապետութե ։

Մինչ և անօրէնութե հնարեցաւ սիրեցեալն յազէրանդրէ սեւերոսէ, զոր վերագոյնդ սակաւ յիշատակեցաք ։ Իբրև զգայր սա, թէ ոչ իւր բաշխել կամ աւագութս, կանխէր առ որս ազնուանեալն

նեալն էին առնուլ. ցուցեալ թէ կամի զգա-լուան 'ի նոսա տարածանել, թէ այլին նմա լիա-ձեռն պարգև: Աղեքսանդր՝ որ 'ի տեսանել զա-նիրաւութիւն ինչ 'ի պաշտօնեայս իւր, բրդէր 'ի բարկութիւն, 'ի ծուխ հեղձոյց, ոչ արժան էր, զվաճառօղն ծխոյ:

Ո՛չ է արժան իշխանի անցուցանել զիւր պարգևս ընդ այլս ձեռն, բայց միայն ընդ իւրն: Գաղբա-ես օթանի երկու հազար հինգ հարիւր դահեկանս, բաշխել աղքատ զօրականին: Օթոն նորին կա-շառաբեկս արարեալ զպահապանս, սպան զգաղ-բա: Իշխանին պարտ է լինել նախանձախնդիր իւ-րոց շնորհաց, զի ժողովուրդն համբուրէ զձեռն՝ որ պարգևէ. և ոչ զայն՝ որ տայ պարգևել: Ծով ըմպէ զգետս, և յաղբիւր անդր ինչ ոչ հայի:

## ԳԼ. Է:

## Յաղագս քաղաքականին արդարութեան:

Մինչև էր բանաւորն սակաւոյ ազգաբեալ ըղ-ձարն զանկեղէն, նմ սակարկութիւն լինէր փո-խանակութ. 'ի տալ իւրաքանչիւր ուրուք զայն ինչ՝ զոր ունէր յաւելուած, և յառնուլ զայն ինչ՝ որում կարօտանայր: Բրուտն փոխանակէր գեր-ձկի այնչափ անօթս խեցեղէնս, մինչև հաւասա-րել արժողութեան հանդերձի. և գերձիկն փոխանա-կէր ճարտարապետի այնչափ հանդերձս, մինչև հաւասարել արժողութեան տան: 'Ի գնոց ատելմար-թիւ իմանալ, որպիսի ինչ էր պերճութիւն այնր գեղեցիկ դարու, և որպիսի գանձք, զորս 'ի պա-հեստ արկանէր ագահութիւն 'ի գանձարանս: Այն զսակարկութիւնս կոչէին քաղաքականութիւնս, և զար-դարութիւնն՝ քաղաքական:

Բայց քանզի խոչ մեծ էր խճողել զանձուկ տունս այնչափ խառնաղանճ կահիւք, որոց գժուարին էր փոխադրութիւն՝ ոչ և պահպանութ, եգիտ ագա-հութիւնն նոր հնար գնահատութ սակաւոյ, որում՝ մն քան զնմ բնական մարմինս զանխուլ լինելոյ, տալ եղեն հետաղօտ. և ըստ սակաւագիւան լինե-

լինելոյ՝ եղև և Թանգագին։ Ապա ոսկւոյն վաճառել յաչս զնորահրաշ իմն սեր զիւրոյ փայլման, անդէն վաղվաղակի եղև չափ գնոց և ըղձանաց. զի որ ունէր զոսկի, ունէր զամ̃. և զամ̃ն ամփոփ 'ի մի արկղ։

Յայնժամ սկսան իշխանք՝ կենդանւոյն սողեցուցանել ը̃ երկրաւ զգերիս, զի 'ի գուբս պեղեսցեն զայս հրաշալին, այս՝ պատուական, բայց և վնասակար, և այն ինչ յայտնեցաւ ոսկի, եւ արտաքս և երկաթ 'ի ծեծել զնա։ Եւ յայնժամ ծեծեցաւ ոսկի 'ի կրպակս, յորժամ իշխանք դրոշմեցին 'ի նա զպատկեր իւրեանց, զի կրկնապատիկ լիցի երկրպագելի։ Վա̃ս չէն ինչ զարմանք, թէ ոսկին տանջեալ 'ի մ̃դկանէ՝ տանջէ զմարդիկ. և զվրէժ խնդրէ զիւրոց հարուածոց՝ կռուովք։

Բայց թէպէտ և այսուիկ նորոգ եղանակաւ սակարկուէ՝ փոխարինութիւնն փոխեցաւ 'ի վճար, սակայն և այնպէս ա̃մ սակարկութիւնք պահեցին զնախնի անունն փոխարինութ̃ն։ Վա̃ս արդարութիւնն փոխարինական է այն, որ ուղղէ զանհաւասարութիւն սակարկուաց 'ի մէջ առանձնաւորի և առանձնաւորի, բարձեալ յայնմանէ՝ առ որում է աւելի քան զարժանն. և տուեալ այնմ՝ առ որում է նուազ քան զարժանն։ Ամին իբր՝ որպէս արդարութիւնն տրամաբաշխական փոխաբերէ ինչ ինչ 'ի հասարակաց առ առանձնաւորն, նոյնպէս փոխարինականն փոխաբերէ ինչ ինչ յառանձնաւորէ յայլ առանձնաւոր 'ի պահել զհաւասարութ̃ն մ̃դկային տուրեւառի։

Աշխարհս է ո̃ղ թատրոն ինչ, որոյ նստարանք են հն̃րկաց, ցորչափ են դատարկք. բայց որ նախ առաջին անդ տեղակալէ, եթէ 'ի վեր և եթէ 'ի վայր, զայն իւրացուցանէ, և ունի իրաւունս պինդ ունելոյ. այլ ոչ գրաւելոյ զայն՝ զոր այլ ոք ստացեալ ունի։ Բնութիւնն մայր հն̃րկաց՝ արար զաշխարհս՝ հասարակաց։ Բայց որ ժառանգութ̃բ, կամ սակարկութ̃բ, կա̃մ այլ ինչ օրինաւոր անուամբ ստացեալ ունի զմասն ինչ նր՝ եթէ փոքր և եթէ մեծ, ունի իրաւունս պահել զայն. և յայնժամ

առ

աշխարհ է 'ի խաղաղութեան, յորժամ իւրաքանչիւր֊ոք խաղաղութիւն ստացեալ ունի զիւրն: Թէպէտ և մասունք յիւրեանս իցեն անհաւասարք, եթէ իւրաքանչիւրոք գոհ է ընդ իւր մասն, յայնժամ յանհաւասարութեան իսկ պահի հաւասարութիւն

տուրեւառի:

Այո՛ բազում անգամ 'ի մէջ առանձնաւորի և ա֊ռանձնաւորի՝ առ պէսպիսութեան կարծեաց, 'ի վերայ հանրութեան լինի վէճ: Մեք կարծեմք, թէ հա֊կառակայք կախեալ կան ընդ ոտիւք մերովք, և հա֊կառակայք կարծեն, թէ մեք կախեալ կամք ընդ ո֊տիւք նոցա գլխիվայր. զի յերկնի չեք նշանակել սկիզբն, որ ցուցցէ՝ ո՞ր կողմն իցէ վեր, և ո՞ր կողմն վայր: Այսպիսի են վիճմունք կողման և կողման, 'ի պնդել երկաքանչիւրոցն, թէ միւսն այլթարէ յուղղութէ. զի չերևի յայտնի, թէ ո՞ր իցէ մէջ չափուն, հանգստամէտ կշռոյն և բուն մէտ բանին. վասն այսորիկ յոլովակի ոչ լուծանի կնճիռն առանց սուսերի:

Արդ այս է սեպհական պաշտօն դատաւորին, որ և արժանապէս կոչի ԴԱՏԱՒՈՐ ԻՐԱՒԱՆՑ. զի լսել զերկոցունց կողմանց փաստս, և մտախորհ լեալ, թէ ո՞ր իցէ ճշմարիտ մէջ երկոցուն ծայրից, և թէ ո՛ աւելի ունիցի՝ և ո՛ նուազ քան զարժանն, հատուցանէ զերկաքանչիւրն յայն հաւասարութիւն, զոր հաստատեաց յիւրում խորհրդեան:

Վասն պարտ է դատաւորի լսել երկաքանչիւր կող֊ման, 'ի տալ նմա բնութեան երկուս ականջս յայս սակս: Վասն զի որ դատէն՝ լսելով միոյ միայնոյ կող֊ման, թէպէտ և դատեսցէ արդար, է դատաւոր անիրաւ: Սմին իրի չէ պարտ նմա մտանել զախոր֊ժակն 'ի մին քան 'ի միւսն. զի որ մտէ 'ի մի կողմն, ոչ ևս է միջնորդ, այլ՝ հակամէտ. վասն որոյ և ոչ դատաւոր, այլ՝ դատախազ: Վասն չէ պարտ նմա հայիլ՝ ո՛չ յաւագութիւն, ո՛չ յազնուութիւն և ո՛չ յա֊ռաքինութիւն դիմելոցն առ նա. այլ միայն յառն և 'ի տուրն: Զի 'ի դատելն թուաբանօրէն, և ոչ երկրաչափօրէն, դատէ ըստ համեմատութեան հաւասա֊րութեան, և ո՛չ ըստ հաւասարութեան համեմատութեան:

Զհուսկն

Ջհուսկն ասացից. պարտ է նմա լինել այնպիսի, որ արդարութին փոխարինական զգեցցի զմարմնե_զէն պատկեր նր, եւ ձայնիւ նորուն խօսեսցի առ մարդիկ, 'ի պահել զտուր և առ։

Որք՝ 'ի մեկային տուրց եւ առից՝ ոմանք են կամա_ւորականք եւ քաղաքականք. ոմանք ակամայք եւ ընչեանա_կանք. ոմանք նիւթական եւ մարմնեղէն իրօք. եւ ոմանք զաննիւթականօք եւ զանմարմնականօք։ Բայց կանոն փո_խարինական արդարութե է նոյն։

Կամաւորականք եւ քաղաքականք են վաճառմանք. գնմանք, 'ի վարձու փոխառութիւնք, աւանդք, եւ այլ նմ առաջարկութիւնք, որք պահանջեն զփոխադարձ եւ զա_զատ կամս երկաքանչիւր կողման։

Ակամայք, եւ եղեռնականք են. գողութիւնք, հար_ուածք զրպարտութիւնք եւ այլ նմ մնասք, որք բռնա_նան յայլմէ ներնգութեն զինչս, զպատիւ, կամ զա_ռողջութի, ընդդէմ կամաց միոյ 'ի կողմանց։ Ոչ առ_նեն զրկանք, բայց եթէ կամելով. եւ ոչ ընկալեալ լինին, բայց եթէ չկամելով։ Որ կամի զեւր վնաս, արժանի է թէ չար եւս ինչ լիցի նմա. եւ այնմ՝ որ կամի զզրկանս, ոչ լինին զրկանք. սակայն թէ հաւանութիւնն ազատ իցէ, եւ ոչ բռնադատ։ Բայց թէպէտեւ ոչ լինին զրկանք՝ այնմ որ կամի զայն, սակայն լինին զրկանք արդարութե, որ ոչ երբէք կամի զանարդարսն։

Այս այն է հանրական կանոն փոխարինական արդարութե, զի որ ոք բառնայ զօտարինն, եթէ փող իցէ, եթէ համբաւ, եթէ աչք, եւ եթէ կեանք, պահէ առ իւր՝ զոր եբարձն եւ շահեցա_տուժիւք օտարի։ Եւ ոչ երբէք լինի վճար ար_դարութե, ցորչափ որ շահեցաւն՝ չհատուցանէ զյարձեալն կամ զհաւասար գինն՝ այնմ որ տու_ժեցաւ։ Եւ այս փոխարինաւի է, որ պահէ զհա_ւասարութիւն 'ի մէկային կենակցութս քաղաքա_կանս, կամ յատենականս։ Եւ այսուիկ սկզբամբ ճանաչել ուսնիս դիւրաւ, թէ զինչ է այն արդար եւ խիստ պատիժն, զոր կոչեն [illegible]. զորմէ արժան է խօսիլ ինչ առանձինն։

## ԳԼ. Ը.

## [illegible]

Ռադամանթն այն, որ արբանեկէ արդարութեան՝ իմաստիւք, յօրինեաց քաղցր չափաբերութ օրէնս փղձկեցուցիչս բազմաց, այնպիսի եղև թագաւոր իրաւանց, օրէնսդիր անաչառ և դատաւոր արդարակորով 'ի Լիկիա, մինչև բանաստեղծից ընարել զնա և դատաւոր դատապարտ ոգւոց: Սա 'ի գրել իւրում համառօտ զփոխարինական արդարութէ, զնմ օրէնս յայս օրէն բովանդակեաց.

### [illegible]

Այս է համբաւեալն այն [illegible], որ կոչի [illegible], այնպէս իրաւացի, մինչև՝ ամենայնի պատգամ գրեցաւ 'ի բարոյական մատեանս, հրատարակեցաւ յօրէնսգրաց, 'ի գործ արկաւ 'ի դատաւորաց. և 'ի բանաստեղծից իսկ գրեցաւ յատեան սանդարամետականաց գլխագրովք.

### [illegible]

Այս այն անյեղլի չափ է նեմեսեայ, որով չափին ոչ միայն ամ իրաւունք քաղաքական և յանցաւորական, այլ և օրէնք իսկ ամ օրէնսգրաց: Զի կարի անգթականք համարին, թէ անցանեն ըստ այս չափ, և կարի ներողականք, թէ չհաւասարին այնմ:

Կարի իմն ներողական եղև օրէն Լիկուրգոսի, որ ոչ պատուհասէր զգողն, թէ ոչ ըմբռնիւր 'ի գողութեան անդ: Ո՛չ թէ պատուհասէր զյանցուածն, այլ՝ զանհնարունն 'ի յանցանել իւրում: Կարի անգթական եղև օրէն Դրակոնի, որ՝ որպէս ասացաւ, զամ թեթևակ գողութի՛ կենօք պատուհասէր, զուգակշռեալ զգուշութեայն 'ի շահս՝ ընդ մեծն 'ի կորուստ:

Ապա ոչինչ օրէնք երևեցան երբեք այնպէս արդար, և չափաւոր, որպէս այն՝ թէ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐՈՔ ԶԱՅՆ ԿՐԵՍՑԷ, ԶՈՐ ԵՒ ԱՐԱՐՆ։ Որ խաբեաց զգրամ, տուժեսցի զգրամ. որ թափեաց զատամն, կորուսցէ զատամն. որ եհան զակն, կորուսցէ զակն, որ եբարձ զկեանս, կորուսցէ զկեանս։ Այս է թուաբանական փոխարինութիւն։

Վնկ ենթադրեալ բարոյապէս զօրէնս՝ ըստ ասացելումդ, թէ իւրաքանչիւր ոք ունի առ իւր, զոր յափշտակեացն յայլմէ, ո՞ր արդ թուեսցի այնպէս հաւասար, որպէս հատուցանել արդարութիւն, զոր առ իւր ունիցի ընդդէմ արդարութեան։ Ոչ ոք պարտաւոր՝ յայսմ բնաւոր վճռոյ՝ թուի կարող լինել բողոքել. զի նա ինքն 'ի գողանալ իւրում՝ կամ 'ի սպանանել, գրէ ձեռամբ իւրով զիւրն դատապարտութիւն. գիտելով՝ թէ որչափ ինչ նա առնէ, այնչափ ինչ արասցի նմա։ Որ ոք առնէ յանցանս ինչ, կամ գողն, պարտաւորեալ զանձն արդարութեան ընկալեալն, կրել զայն ինչ չար՝ զոր այլում առնէ. և վնկ չունի զայլմէ արտունջել, բայց միայն զանձնէ։

Այս՝ այս փոխարինութիւն թուաբանական գիտաւոր է տուժից ՆԻՒԹԱԿԱՆ և ՄԱՐՄՆԱԿԱՆ ԻՐԱՑ. զորս մարթ է թուաբանօրէն չափել և թուել. այլ ոչ գիտաւոր ԱՆՄԱՐՄՆԱԿԱՆ ԻՐԱՑ և ԱՆՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԱՑ. ոգ գեղջկութեանց, ստութեանց, և շնութեանց. զի ոչ է հնար կշռել զհամբաւ կամ զվստահամբաւութիւն, և ոչ պատժել զյանցուած ինչ այլով յանցուածով։ Սակայն և յայսպիսի իրողութիւնս ուղիղ դատաստանն եգիտ զիւր զուգակշիռն. արար երևելի զանմարմնականն, և փոխարինեաց անհամեմատ յանցուածոց պատիժս համեմատս։

Զաղարտօղն գեղջկութիւն զհամբաւ օտարի, օծանէին մեղու, և մերկ առաջի արկանէին պիծակաց 'ի տապ արևու. զի խայթոցօք թունաւոր ճանճեաց, որ նման են խայթոցի չարախօս լեզուի զայլս չխթողի, և նա չխթեսցի։ Այս է փոխադարձ տոյժ։

Զստերդմանց հատանէին զլեզու. և զսուտ գիր գրողաց հատանէին զձեռն. զի լեզուն՝ որ ողջ և խօ-

խօսուն գոլով ուսոյց ստութն, համբուրէ և պա-
պանձմամբ քարոզեսցէ զճշմարտութն. և ձեռնն՝
որ կենդանի և անկասուր աղաւաղեաց զճշմար-
տութն, համամամբ և մեռելութբ յայտ արասցէ
զստութն: Այս է փոխադարձ տուժ:

Զշնացողի հանէին զաչս. զշնացելոյն թողուին
զաչս, բայց հատանէին զունչս. զի տարփածուն
կորուսեալ զաչս՝ որք անարժան սիրոյ էին առաջ-
նորդք, կարօտասցի աչաց այլոց. և շնացեալն,
որ առ հայելւոջ գեղգեղէր զիւր երեսս, 'ի հայել-
ւոյ անտի սոսկասցի, և սիրողաց քամահելի լիցի,
թողեալ 'ի տարակուսի, թէ որ իցէ կնոջ մեծա-
գոյն տանջանք: Այսպէս ըստ արդար փոխա-
դարձ տուժի, որով իւիք մեղաւ ոք, նովին և
պատժեցաւ, և գուոյն՝ ցաւ փոխատրեցաւ:

Այսպ կարի իսկ արդար էր յինքեան՝ փոխադարձ
տուժն հաւասարութեան. բայց միով իւիք թուէր
կարի իմն խիստ. զի չտայր տեղի ոչ ընտրողութե,
և ոչ հանգամանաց անձանց: Ընդ դատաստանա-
արկանէր անխտիր՝ եթէ զազնուականս և եթէ
զանարգս, եթէ զմեծատունս և եթէ զմուրօղս,
եթէ զգիտունս և եթէ զտգէտս, եթէ զբարեպա-
ցաղարտս և եթէ զչարեացապարտս. որպէս մար-
մինս մերկեալս յոգւոյ. մինչև 'ի դժոխս իսկ դա-
տէր զոգիս մերկեալս 'ի մարմնոյ: Հայէր 'ի գործն,
և ոչ 'ի գործօղն: Եւ այս իմաստ էր նմ օրէնսդրա-
դրաց և դատաւորաց, որք զգուշաւորքն էին պահ-
պանութե հաւասարութեան փոխադարձ տուժի.
չխտրել 'ի մէջ պարտաւորի և պարտաւորի: Էր
օրէնն խիստ քան զերկաթ. և դատաւորն խիստ
քան զօրէնս. ԳԹՈՒԹԻՆ յատենէ աստի էր արտա-
հալած:

Զալևկոս օրէնսդիր ղոկրաց՝ աշակերտ Հաւդա-
մանթայ՝ հրատարակեաց զնախայիշատակեալդ օ-
րէն, թէ շնացողին բրեսցին աչք: Դէպ եղև
ամա, ոմ դէպ լինի կարի իմն գիտնոց՝ որք կարի
իմն խուզարկութբ՝ պատահէն իւրեանց ձետաու,
զի առաջին յանցաւոր օրինացն՝ եղև միամօր իւր
որդի: Ծերակոյտն նմ աղաչեաց զԶալևկոս նե-
րել

Ապա ոչինչ օրէնք երևեցան երբէք այնպէս արդար, և չափաւոր, որպէս այն՝ թէ Իւրաքանչիւրոք զայն կրեսցէ, զոր և արարն։ Որ խաբեացն զդրամ, տուժեսցի զդրամ. որ թափեաց զատամն, կորուսցէ զատամն. որ եհան զակն, կորուսցէ զակն, որ եբարձ զկեանս, կորուսցէ զկեանս։ Այս է թուաբանական փոխարինութիւն։

Վ՟նկ ենթադրելոյ բարոյականս զօրէնս՝ ըստ առաջելումդ, թէ իւրաքանչիւր ոք ունի առ իւր, զոր յափշտակեացն յայլմէ, ո՞ր առոյժ թուեսցի այնպէս հաւասար, որպէս հատուցանել արդարութե՟, զոր առ իւր ունիցի ըղձեմ արդարութե՟։ Ոչ ոք պարտաւոր՝ յայսմ բնաւոր վճռոյ՝ թուի կարող լինել բողոքել. զի նա ինքն 'ի գողանալ իւրում՝ կամ 'ի սպանանել, դրէ ձեռամբցի զիւրն դատապարտութի. գիտելով՝ թէ որչափ ինչ նա առնէ, այնչափ ինչ արասցի նմ։ Որ ոք առնէ յանցանս ինչ, կաէ դաշն, պարտաւորէ զանձն արդարուե ըն-լեայն, կրել զայն ինչ չար՝ զոր այլում առնէ. և վ՟նկ չունի զայլմէ տրանջել, բայց միայն զանձնէ։

Այո՛ այս փոխարինութի թուաբանական գլխաւոր է տուժից նիւթական և մարմնական իրաց. զորս մարթ է թուաբանօրէն չափել և թուել. այլ չէ գլխաւոր անմարմնական իրաց և անհամեմատականաց, ոպ գեղջկուեց, ստութեց, և շնուեց. զի ոչ է հնար կշռել զհամբաւ կամ զվստահամբաւութի, և ոչ պատժել զյանցուած ինչ այլով յանցուածով։ Սակայն և յայսպիսի իրողութիւնս ուղիղ դատաստանն եդին զիւր զուգակշիռն. արար երևելի զանմարմնականն, և փոխարինեաց անհամեստ յանցուածոց պատիժս համեստս։

Զաղարտօղն գեղջկութե զհամբաւ օտարի. օծանէին մեղու, և մերկ առաջի արկանէին պիծակաց 'ի տապ արևու. զի խայթոցք թունաւոր ճըճեաց, որ նման են խայթոցի չարախօս լեզուի զայլս չխթողի, և նա չխթեսցի։ Այս է փոխադարձ առոյժ։

Զսուտերդմանց հատանէին զլեզու. և զսուտ գիր գրողաց հատանէին զձեռն. զի լեզուն՝ որ ողջ և

խօսուն գոլով ուսոյց ստութե̅, համրութ̅ և պա_
պանձմամբ քարոզեսցէ զճշմարտութի̅. և ձեռնն՝
որ կենդանի և անկասուր աղաւաղեաց զճշմար_
տութի̅, հատմամբ և մեռելութ̅ յայտ արասցէ
զստութի̅ ։ Այս է փոխադարձ տոյժ ։

Զչնացողի հանէին զաչս. զչնացելոյն Թողուին
զաչս, բայց հատանէին զունչս. զի տարփածուն
կորուսեալ զաչս՝ որք անարժան սիրոյ են առաջ_
նորդք, կարօտասցի աչաց այլոց. և չնացեալն,
որ առ հայելւոյ գեղգեղէր զիւր երեսս, 'ի հայել_
ւոյ անտի սոսկասցի, և սիրողաց քամահելի լիցի,
Թողեալ 'ի տարակուսի, Թէ որ իցէ կնոջ մեծա_
գոյն տանջանք ։ Այսպէս ըստ արդար փոխա_
դարձ տուժի, որով իւիք մեղաւ ոք, նովին և
պատժեսցաւ, և դաւոյն՝ ցաւ փոխարկեսցաւ ։

Այսպ կարի իսկ արդար էր յինքեան՝ փոխադարձ
տոյժն հաւագամանթեան. բայց միով իւիք Թուէր
կարի իմն խիստ. զի չտայր տեղի ոչ ընտրողութե̅,
և ոչ հանգամանաց անձանց ։ Ընդ դատաստանա_
արկանէր անխտիր՝ եԹէ զազնուականս և եԹէ
զանարգս, եԹէ զմեծատունս և եԹէ զմուրօղս,
եԹէ զգիտունս և եԹէ զադէտս, եԹէ զքարեա_
ցապարտս և եԹէ զչարեացապարտս. որպէս մար_
մինս մերկեալս յոգւոյ. մինչև 'ի գԹոյս իսկ գա_
ւեր զոգիս մերկենս 'ի մարմնոյ ։ Հայէր 'ի գործն,
և ոչ 'ի գործօղն ։ Եւ այս իմաստ էր նմ օրէնսդրա_
գրաց և դատաւորաց, որք զգուշաւորքն էին պահ_
պանութե̅ հաւագամանթեան փոխադարձ տուժի.
չխարեալ 'ի մէջ պարտաւորի և պարտաւորի ։ Էր
օրէնն խիստ քան զերկաԹ. և դատաւորն խիստ
քան զօրէնս. ԳԵՌԱԲԵՆ յատենէ ատի էր արտա_
հալած ։

Զալեւկոս օրէնսդիր ղոկրաց՝ աշակերտ Հաւագա_
մանԹայ՝ հրատարակեաց զնախայիշատակեալդ օ_
րէն, Թէ չնացողին բրեսցին աչք ։ Դէպ եղև
սմա, ում դէպ լինի կարի իմն գԹանոց՝ որք կարի
իմն խուզարկութե̅՝ պատահեն իւրեանց մնասու,
զի առաջին յանցաւոր օրինացս՝ եղև միամօր իւր
որդի ։ Ծերակոյտն նմ աղաչեաց զզալեկոս նե_

րել

բել որդւոյն, և պահել զաչսն, որք էին ընկեա-կան ատտեղք յուսոյ թագաւորութե։ Այլ զոլե-կաս խիստ եւ էր և անլսող քան զտարատրատա-կանն հաւագամանթ։ Գիտելով թէ անուն դատա-ւորի սրբազնագոյն է քան զհօր, և թէ օրէնքն են աչք արդարութե, առաւել պատշաճ համա-րէր կատարել զօրէնս, կուրացուցեալ զորդին, քան անցանելով զօրինօք՝ կուրացուցանել զար-դարութի։

Բայց յաղաչել նդ զզոլեկոս առաւել եւ ժառք, չթողուլ զթագաւորութին կոյր՝ կուրութք յաջոր-դի. յետ բաղումս ընդէմ դառնալոյ՝ ետ ուրեմն զայս եւ պատասխանի. Խորհեցայ (ասէ) հաստատել օ-րէնս հնար համեմելոյ ընդ ծովացելոցն, մանկանց և կանանց խրատուն օրինաց։ Որդի և հայր են անյն մի. աղա բերելոյ միայն մի ակն նմայ որդւոյ. և միոյ՝ բերելոյ նմ ակն. և այնպէս օրէնք ու լուծցին, և յանցաւորն ու եղիցի նոյր։

Եւ արդարև եթէ բանքն իցեն զիխասուէ՝ տա-րի, երևի թէ ոչինչ գթութի կարող է անօրինել յօրէնսն գրեալ 'ի հաւագամանթէ, բայց թելա-դրեալ 'ի բնութէ։ Զի հիմնեալ յայապխի բնա-ւոր կանոն, թէ իւրաքանչիւրոք հօրացոյց զայն, զոր եբարձ յառաջս յայլմէ, այո՝ կարող է իշխանն գթած շնորհել զխասն՝ որ եհաս անձին, այլ ոչ զխասն՝ որ եհաս այլում. եթէ իշխանն չկամարէ յիւրոց անտի՝ խասելոյն։

Բայց խստութի փոխադարձ տուժի հաւագաման-թայ ոչ էր անզիջողութին, 'ի չներել ումեք. այլ անհնարութին 'ի պատժել զամենեսին միօրինակ զ նմանակ գործոյ։ Զի ով իմաստութ ասէ արխ-տոտել, եթէ 'ի միևնոյն գործ եմ մարդիկ ու-նէին հաւասար ախորժակ, և եմ պարագայք ըն-նէին հաւասարք, 'ի լինել անխրաւուէն հաւասար՝ պարտ էր և պատժոյն լինել հաւասար։ Բայց քանզի նոյն գողութի լինի յանցաւորագոյն 'ի մի-ումն, քան 'ի միւսում. և նոյն խակ հարուածն ա-ռաւել նախատական՝ յումեմնէ քան յայլմէ, անի-րաւ փոխադարձ տոյժ լինի պատժել զանիրաւու-թիս

թնս մեծի և փոքու հաւասար: Ո՛չ ամենեցուն է գիտել՝ չափել զչափ անիրաւութեն :

Պատգամախօսն գեղփեայ հրամայեալ էր յունաց երկրաչափել զսեղան ապողոնի, եթէ կամէին ը-ունիլ զփրկանս հայցուածս. նոքա այնչափ ապա-հով կարծեալ զընդունելութիւն շնորհին, որչափ դիւրին էր երկրաչափութ սեղանոյն, անդէն վաղ-վաղակի կոչեցին զհիւսունս. և 'ի սեղանն, որ էր քառակուսի. յաւելին միւս ևս քառակուսի հա-ւասարաչափ : Պատգամախօսն խարդաւան, որ ոչ կամէր լսել նջ, ծաղր արար զանմտութն նջ. իբր զի առադրել քառակուսւոյ քառակուսի, ոչ է երկրաչափել զքառակուսին տեսակաւ, այլ միայն նիւթապէս. մանաւանդ թէ է աղճատել զտեսակն, արարեալ 'ի հաւասարակողմն քառա-կուսւոյ՝ երկայնաձիգ իմն քառանկիւն: Այլ տե-սական երկրաչափութն քառակուսւոյ է գտանի իմն. գծել բոլորակ ինչ զքառակուսեաւ. և ապա այլ քառակուսի զբոլորակաւ : Վասն զի քառա-կուսին արտաքին՝ է արդար երկպատիկն ներք-նոյն, ոճ ապացուցանեն երկրաչափք :

Ըստ սմին օրինակի ամ անմիտ գիտէ դատել, թէ գողութն հարիւր սկեղ՝ կրկնապատիկ աւելի է քան զգողութն յիսուն սկեղ. այլ այս է չափել զնիւթական քանակ գողութն, և ոչ զտեսական. որ միայն 'ի մտացի դատաւորաց չափի. ոչ թուա-բանօրէն, այլ երկրաչափօրէն. քննեալ զանձն, զվախճանն, զտեղին, զժամանակն, և զայլ ամ պարագայս գործոյն, որք առաւելուն կամ նուա-զեն զչարութն, որ է տեսակ յանցանացն: Ապա-քէն գողանալ հարիւր սիկղ 'ի տաճարէ, է մեծա-գոյն յանցանք՝ քան զգողանալ հարիւր սիկղ յու-մեմնէ ռամկականէ: Մանաւանդ թէ տեսակապէս մեծագոյն յանցանք են գողանալ տասն սիկղ 'ի տաճարէ, քան հարիւր սիկղ 'ի ռամկականէ. զի այս է լոկ գողութն, և այն սեղանակապտութն : Յոյժ աւելի նախատինք են՝ ասէ արիստոտել, ածել ապտակ սինկղիտոսի քան գիւղականի. զի նա է անձն արքունի. և նախատինքն՝ որ լինի

ար-

արքունեայն, յոյժ մեծ է քան զեղեալն առնկա-
նին։ Մինչ զի ը͞ կանոնի երկրաչափական համե-
մատութե, որչափ մեծագոյն է անձն սինկղիտոսին
քան զգիւղականին, այնչափ առաւել մեծ է նա-
խատինքն եղեալ սինկղիտոսին քան գիւղականին։
Եւ վ͞ս այսորիկ. չէ արդար կանոնն համեմատե-
թեայ. ՈՐՊԷՍ ՈՐ ԱՌՆԷ, ՆՈՅՆՊԷՍ Ե ԿՐԵՍՑԷ։ Վ͞ս զի. ե-
թէ որ եածն ապտակ գիւղականի, արժանի է
ապտակի, յայտ է՝ թէ որ եածն ապտակ սինկղի-
տոսի, մեծ ևս պատժոյ է արժանի։

Բայց առիցես ԵԹԷ Ի ՓՈԽԱՐԻՆԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԵՆ՝ ՊԱՐՏ
Է ՊԱՀԵԼ ԶՀԱՄԵՄԱՏՈՒԹԻ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ Ե ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ.
ԱՊԱ ՈՉ ԼԻՆԻՆ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿՔ ԱՐԴԱՐՈՒԹԵՆ, ԱՅԼ Մ ՄԻԱՅՆ։
Պատասխանեմ. ը͞ առնել զարդարութի, կան եր-
կու գործողութք. մի՝ ԲԱՇԽԵԼ ԶՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՆ. երկր՝
ԲԱՇԽԵԼ ԶՊԱՏԻԺՍ։ 'Ի վ͞ր առաջնոյն՝ պարտ է զա-
տաւորին 'ի կիր արկանել զհամեմատութի երկրա-
չափական։ Բայց 'ի վ͞ր երկրորդին պարտ է նմա
'ի կիր արկանել զհամեմատութի թուաբանական,
ոչինչ հայեցեալ յանձինս։ Այնպէս՝ զի մեծի ա-
նիրաւութե տացի պատիժ մեծ, փոքուն փոքր.
հաւասարին հաւասար։ Այս են կշիռք ատրեայ
(կանխաւ յիշատակեալ)։

Եւ ը͞ այսմ պարտ է իմանալ զփոխադարձ այժ
համեմատեթեայ. ՈՐՊԷՍ ՈՐ ԱՐԱՐ՝ ՆՈՅՆՊԷՍ Ե ԿՐԵՍՑԷ.
հայեցեալ 'ի գործն ոչ նիւթապէս, այլ՝ տեսակա-
նապէս. ոչ 'ի գործողութին, այլ՝ 'ի չարութին։

Զնոյն պարտ է իմանալ և 'ի վ͞ր ՓՈԽԱՐԻՆԱԿԱՆ
ՔԻՆԱՏՈՒՐ ՊԱՏԺԻ 'ի տակարկութս քաղաքականս, որ
հիմնեալն է յայսպիսի նմանակ կանոն. ՈՐՊԷՍ ԱՌՆԷ
ՈՐ ՊԱՐՏ, ԱՅՆՊԷՍ ԱՌՑԷ 'Ի ԼԱՀԷՆ։ Վ͞ս զի ող յընկե-
րութե և 'ի տուրեւառ քաղաքական՝ փոխանակու
ընչից հաւասարի գնահատութե, որոյ չափ է փողն.
այնպէս 'ի քաղաքական վէճս երկու ինչ ունի գի-
տել դատաւորն. մի՝ համարել զգինս. երկրորդ՝
հաւասարել զփողն վճարուն։ Առաջինն պահան-
ջէ ԶՀԱՄԵՄԱՏՈՒԹԻ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ. երկրորդն ԶՀԱՄԵՄԱ-
ՏՈՒԹԻ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ։ Զի երկաքանչիւր կողմն ու-
նիցի, որ ինչ նմա հասանի։

Գ.Լ.

## Գ.Լ. Թ.

## ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ:

Արդարութիւն 'ի մէջ այլոց խորհրդաւոր դրօշուածոց նկարեցաւ ('ի բանաստեղծից) որպէս ա͞ծուհի իւր եռագիծ և եռանուն. որ միանգամայն բնակեալ յերկինս, և յերկրի, և 'ի ստորինս երկրի. յերկինս կոչեցաւ Թեմիս (235)· յերկրի՝ օրէն. և 'ի ստորինս երկրի՝ պղուտոն: Կամեցան այն քօղուտումն խոհականք ձևացուցանել մեզ երիս տարբերութիւնս արդարութե. [illegible], [illegible], և [illegible]. զԻՐԱՒՈՒՆՍ [illegible]՝ զոր 'ի յերկնից եկեալ. զԻՐԱՒՈՒՆՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ, որ սեպհական է մարդկան. և զԻՐԱՒՈՒՆՍ ԲՆԱԿԱՆ, որ հասարակ է կենդանեաց:

[illegible] է յա͞ծային իրաւանց. զի զայն ուսոյց մեզ միայն տեսօղ աներևութից: [illegible], է 'ի բնական իրաւանց. զի զա͞մ կենդանեաց ուսոյց զայն բնութիւն: [illegible] 'ի [illegible], է 'ի քաղաքական իրաւանց, կամ յիրաւանց ազգաց. զի 'ի քաղաքական ընկերութեան իմացան զայն մարդիկ լուսով բանի:

Բայց պահեալ զա͞ծային իրաւունս այլում վեհագոյն դպրոցի, երկու մեծ համանմանութիւնք 'ի վեր երևին 'ի մէջ իմաստնոց՝ 'ի վ͞ր բնական իրաւանց. և քաղաքական իրաւանց: Վ͞ս զի՝ ըստ որում հաղորդ է մարդ զգայական բնութե՝ որ հասարակ է կենդանեաց, և բանաւոր բնութե՝ որ սեպհական է մարդոյ, յայսմանէ ոմանք բնական իրաւունս կոչեն միայն զհասարակն կենդանեաց, և այլք բնական իրաւունս կոչեն և զբանաւորն. ուստի է [illegible] 'ի [illegible]: Նոյնպէս, քաղաքական իրաւամբք՝ ոմանք իմանան միայն զգրաւոր օրէնս, և ոմանք իմանան նովաւ և զբնական օրէնս բանաւորս:

Բայց արիստոտէլի իմաստասիրեալ բարձրագոյն ես սկզբամբ, ընդհանրապէս բաժանէ զքաղաքական օրէնս հաւասար յերկուս տեսակս. թ է, 'ի

[illegible]

ԳՐԱՒՈՐ ՕՐԷՆՍ, և 'Ի ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՍ. չորոշեալ 'ի մտքի զբնականն բանաւոր՝ 'ի բնականէն որ հասարակ է կենդանեաց, ըստ այնմ որ ծառայեն քաղաքական ընկերութեան։ Վ̃ զի, ոպ̃ 'ի կենդանիս օրէնքն բնական կատարելագոյն է 'ի միում քան 'ի միւսում, ընկերութիւնն ամուսնական 'ի տատրակս քան 'ի ճնճղուկս. սնունդ զաւակաց 'ի ծիծառունս քան յարծուիս. հոգաբարձութիւն տնտեսական 'ի մըրջիւնս քան 'ի ճանճս. կառավարութիւն կարգաւորական 'ի մեղուս քան 'ի մրջիւնս. սոյնպէս այս ամ̃ բնական օրէնք կատարելագոյնք են 'ի մարդիկ քան 'ի կենդանիս, զի են կարգաւորեալք 'ի բանէ, և յօրինաց։

Եւ ոպ̃ զգիտութ̃ք՝ բնութիւն ուսուցանէ սկզբունս ինչ հանրականս, յորոց միտ մարդոյ իմաստասիրեալ քաղէ իմաստս գիտնականս. նոյնպէս զանելի իրօք լոյսն բնական ծանուցանէ սկզբունս ինչ հասարակս կենդանեաց, և ինչ ինչ ևս հասարակ ամ̃ մարդկան, որք փորձիւ և խոհեմութ̃ գան 'ի լոյս ևս կազմութ̃՝ վ̃ ընկերութ̃ և կենակցութեան, և այս է հանրական իրաւունք քաղաքական։

Այս իրաւունքն քաղաքական հանրական, ըստ արիստոտէլի, է բաղկացութ̃ ինչ գրաւոր օրէնաց, և բնական օրինաց՝ կարգեալ 'ի պահպանութ̃ քաղաքական ընկերութ̃։ Բայց որ ոք մադրութ̃ ընթեռնու զվճ̃ռութ̃ նորա, տեսանէ՝ թէ որոշէ նա զքաղաքական իրաւունս ինչ զանձկագոյն և զյատկագոյն, զո̃ ԶԱՅՆ՝ ՈՐ ԿԱՊԷ ԶԺՈՂՈՎՈՒՐԴ ԻՆՉ ԸՆԴ ԳՐԱՒՈՐ ՕՐԷՆՍ.

Մինչ զի՝ ընկերութիւն քաղաքական՝ ԸՆԴԱՐՁԱԿ. նշանակէ և զկենցաղավարութիւն քաղաքական, զքաղցրախօսութիւն և զքուարճախօսութիւն։ Բայց ընկերութիւն քաղաքական ՆԵՂԱԿ, նշանակէ զթիւ ինչ անձանց ազատաց, ըստ այնմ որ չեն միմեանց ստորադաս, այլ՝ ամենեքին ստորադաս նոյն իսկ գրաւոր օրէնաց, որոյ վախճանն է, զի ամենեքին բաժանորդիցեն բարեաց և չարեաց հասարակաց. և փոխադարձ փոխարինութ̃ք պահեսցեն յիւրեանց միջի

զհե-

զկենակցութ̄ վն̄ պիտոյից մ̄դկային կենաց։ Բայց այս գրաւոր օրէնք է հիմնեալ 'ի բնականն։

Բնութիւն՝ որ յա̄մի սիրէ զներգաշնակութի̄, եւ մ̄դկան ետ̄ ձայնս և կերպարանս, նոյնպէս յօժարութիւս և խառնուածս պէսպէս. զի պիտոյս ունելով միմեանց, իցեն ընկերական. և կազմեսցեն միաբանութ̄ մի նուագածութ̄ ներգաշնակաւոր։ Մի միայն մարդ չառնէ ինչ ընկերութի̄. զի մի լար միայն չառնէ ներգաշնակութի̄։ Այնպիսին՝ ըստ յառաջն ասացաք, կամ է էրէ ինչ վայրի, որ յամենեցունց խորշի. կամ ած̄ երկնաւոր, որ չունի ուստեք պիտոյս։

Բազում մ̄դիկ, որ 'ի գրաւոր օրէնս իցեն այլեայլս, չառնեն ընկերութի̄ քաղաքական. զի չառնեն զհասարակութ̄ ինչ։ Իսկ բազում մարդիկ, որոց իցէ նոյն օրէն. բայց իցեն համարուեստ, չառնեն ընկերութի̄ քաղաքական. զի ոչ հաղորդին ընդ միմեանս փոխանակութեամբք. ուստի և սովորութիւն է ասել, բրուտ զբրուտ՝ և բժիշկ զբժիշկ՝ ոչ սիրէն։

'Ի տիեզերական հ̄րկապետութ̄ մի տարր նման է այլում տարեր 'ի միում որակութ̄, բայց աննման յայլում. զի պիտոյասցին միմեանց 'ի գործել։ Եթէ ամենեքեան լինէին ամենեւին նման, սէրն լինէր անպտղական՝ առ 'ի չգոյէ արտադրութեց. և տիեզերք ոչ եւս լինէին հանրական, առ 'ի չգոյէ պէսպիսութ̄ իրաց (236)։ Այլ զոր օրինակ ընդ տիեզերս, ամ̄ տարերք թէպէտև այլևայլք՝ կառավարին 'ի մի միայն գերակայ մտաց. նոյնպ̄ 'ի միում հ̄րկապետութ̄ ամ̄ առանձնաւորք թէպէտ և ազատք՝ ներքոյ են միոյ օրինի, և այնմ որ երևեցուցիչն է օրինին, այ̄ է իշխանի. որ է օրէն կենդանի, և իրաւունք քաղաքական անձնաւոր և խօսուն։

Որպիսի և իցէ այս իշխանութ̄, եթէ միապետական, եթէ աւագապետական, եթէ ազնուապետական, և եթէ ժողովրդապետական, ստոյգ իմն է, թէ ուր չիք իշխան, չիք գրաւոր օրէն. և ուր չիք գրաւոր օրէն, չիք յատկապ̄ և մարմին քաղաքական։

Յայս

Յայտնանէ մարթիս իմանալ, որ նշեն ԻՐԱՒՈՒՆՔ օրինաւոր իշխանութեան, որ իցէ նորա ԿԱՄԱՒՆ. և գործոյ ԱՒԷՆԻ կարողութեան: Յայն վայր ձգի հեղինակութեան իշխանին, յոր վայր ձգի հեղինակութեան գրաւոր օրինին. դդ է՝ ՊԱՀԵԼ ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ Եւ ԶՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՏԵՆՆԱԿԱՆՈՒԹԵ ԺՈՂՈՎՐԴՈՑ Ի ԲԱԺԱՆՈՐԴՍ ԼԻՆԵԼ ԲԱՐԵԱՑ Եւ ՉԱՐԵԱՑ Եւ Ի ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵ ԴԱՏԱՆՑ: Այս պաշտօն է օրինաց, և այս պաշտօն իշխանին:

Բազում պանծալի վերատառութիւնք բարեմարդկեանութեն կամեցաւ բարձրացուցանել զանուն պերիկլեայ իւրոյ իշխանի 'ի վ՞ր այլոց: Բայց պերիկլեսի մերժեալ զնա, եցոյց՝ թէ կամք են նմա կոչել. ԴԵՍՊՈՏ ՍՏՈՐ, և հաշակեաց ժողովուրդն այնչափ գովութ զայն նոր վերատառութ. մինչև 'ի պատմութիս այսօր խակ հնչէ (237):

Պարտ է իշխանի յանձին բերել զամ առաքինութիս. բայց ոչ է նմա հնար առանց արատոյ փառամոլութե՝ զմիոյ յառաքինութեց թէպէտև փոքունց՝ յանձին բերել զանուն. որպէս եթէ տալ է կոչել ԻՄԱՍՏՈՒՆ, ԱՐԻ, ԱՐԴԱՐ, ԺՈՒՇԱՆԱԿ, ԽԱՐ ԳՈՒԹ: Արդարն անուն վեհագոյն է քան զայլ անուանս. զի արդարութին մեծագոյն է 'ի բարոյական առաքինութիս: Բայց թէպէտև անունն է պանծագոյն, սակայն և այնպէս չէ ինչ փառամոլ. զի է սեպհական անուն օրինաց, և իշխանի՝ որ երևեցուցիչն է օրինաց:

Եւ որպէս օրէնն անիրաւ, թէպէտև զինու զօրացեալ՝ չէ օրէն. նոյնպէս իշխանն անիրաւ, թէպէտև ամ առաքինութք զարդարեալ, չէ իշխան, այլ բռնաւոր: Մինչ զի զօրօրինակ հնար է իշխանի առանց փառասիրութե կոչել ԲԱՐԻ, նոյնօրինակ հնար է նմա առանց փառասիրութե կոչել և ԱՐԴԱՐ: Այն զի վերտառութիւնք այլ ամ առաքինութեց հնար է թէ նախանձ արկանիցեն յայլ իշխանս. զի մարթ է միոյ իշխանի լինել քան ըզմիւսն ՔԱՋԱԳՈՅՆ, ԻՄԱՍՏՈՒՆ, ԱՐԻ Եւ ԾԱՌԱՅՈՂ. բայց վերտառութիւնք ԱՐԴԱՐ ոչ արկանէ նախանձուկս. զի չընդունի առաւելութի. անհնար գոլով միոյ իշխանի լինել արդարագոյն քան զմիւսն. վասն զի

ար-

արդարն՝ որ՟ ասացաւ, հաստատեալ կայ 'ի մէջ
անբաժանելի :

Բայց՝ յայսմանէ միւս ևս կարևորագոյն հետևումն յառաջ բերէ աշխատել. զի՝ թէ որ՟ օրէնն ոչ իւր ինքեան արքանեկէ, այլ այնց՝ որք ենն ընդ օրինօք, նոյնպէս իշխանին ոչ է պարտ հայիլ յիւր օգուտ, այլ յօգուտ իւրոց հնազանդելոց : Արդարութիւն ըստ այնմ որ արդարութիւն, է առաքինութիւն առանձնական. որ՟ ասացաւ. զի ոչ հայեցեալ առաւել 'ի բարութիւն անձին, այլ 'ի գործողութիւն նր՟ առ այլս. տայ իւրաքանչիւրում զիւր արժանն : Ըստ այսմ իշխանն արդար ոչ կեայ վա՟ իւր, այլ վասն ժողովրդեան իւրոյ. զի թէպէտ վա՟ ժողովրդեան, և ոչ վասն անձին :

Եւ վա՟ զի մեծագոյնն 'ի մ՟կայն գործս է թագաւորել. և մեծագոյն գործք արժանի են մեծագոյն վարձուց, պարտ է իշխանի՝ սաէ աշխատել, շատանալ ընդունելութե՟ 'ի վարձ պատւոյ և փառաց : Զփառս և զպատիւ, ասաց աշխատել, ըստ նախնի մեկնչաց : Բայց արդէք, որոց հեղասիւկ հաղմ փառաց և պատուոյ թուեցաւ վարձ ինչ կերակրելոյ զգեռնաւիւծս և ոչ զիշխանս, փոխանակ փառաց և պատուոյ, կարգալ կամեցան, պատւոյ և փառաց բանաւորս, որք յիրաւի կոչին պատուոյ սուրբ վայելչականք իշխանի :

Այլ թէպէտև այսոքիկ են բանաւորք և վայելչականք. բայց աշխատել խօսի զվարձուէն, որ բովանդակ է 'ի վայելս իշխանին. և ոչ զայնմանէ՝ զոր ծախէ 'ի ժողովուրդս 'ի պաշտպանել նոցա, որպիսի են հարկք: Թող զի խօսի նա զվարձուէ, որ զուգահաւա՟ր իցէ գործոյն. որոյ մեծային գոլով, անհնար է զն՟ր հաւասարն կշռել, բայց այնուիկ, որ էր՟ ընծայի :

Զհուսկն ասացից. խօսի նա զաղատաղնէայց, և ոչ զընդ ըծով եղելոց. և որոշէ զպերիկլէս՝ որոյ փոյթ էր օգուտ հնրկաց, 'ի գիոնեսիոսէ, որոյ փոյթ էր օգուտ անձին: Եւ վա՟ այսորիկ 'ի վերայ բերէ. Եւ որ ոչ է հովիւ և պահապան ժողովրդեան, ոչ է իշխան, այլ բռնաւոր :

## ԳԼ. Ժ.

ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ, ՈՐ ԱՆՅԱՊԱՂ Է ՓՈՓՈԽԱԿԱՆ: ԵՒ ՆՈՅՆ ՅԱՂԱԳՍ ՀԱՅՐԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ:

*'Ի սահմանէ քաղաքական իրաւանց՝ մարթիս քեզէն զիւրաւ իմանալ, թէ ո՛ր իցէ իրաւունքն՝ որ զնմանութի բերէ զքաղաքականին, բայց իրք չէ։ Այսպէս ասացաւ, թէ* ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆ Է, ՈՐ ՄԱՏՈՒՑԷ ԶՄԱՐՄԻՆ ԻՆՉ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԸՍՏ ՄԻ Ե ՆՈՅՆ ՕՐԷՆՕՔ. *և ուր չէն* ՕՐԷՆՔ, *և* ՈՉ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, *և* ՈՉ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ, *անդ անկար է լինել ճշմարիտ և յատուկ իրաւունք քաղաքական։*

*Այսպ* ՀԱՅՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ *չեն յատկապէս իրաւունք քաղաքական։ Զի ոչ գոլով յորդին ազատուն և հաւասարուն ը̄ հօր, չկայ ընկերուն. և յառնուլ որդւոյն սնունդ 'ի հօրէ, չէք փոխադարձ փոխարինուն. և զի է իմն սեպհական հօր, 'ի վ̄ր իւրոց սեպհական իրաց ոչ կարէ լինել դրաւոր օրէն, զի չէք անդ անիրաւութի քաղաքական, այլ միայն բնական։ Վ̄սն օրէնսդիրք ոչինչ օրէնս եդին 'ի վ̄ր հօր, գիտելով, թէ բնաւորապէս ոչ ոք կամի վնասել իւր ինքեան, և որ վնասէ զաւակի՝ վնասէ անձին։ Այլ արուեստաւոր սիրէ բնաւորապէս զգործ իւր. թէպէտ և անկատար իցեն, երբեմն նմա գեղեցիկք. զի սիրէ 'ի նոսա զանձն իւր։ Մինչ զի փոխանակ քաղաքական օրինի, շատ է բնաւորականն. զի զերկիւղին տեղի լնու հայրական սէրն։*

*Այլանդակ իմն եղեն յաշխարհի մանզիսս՝ մանզիսսի որդւոյ իւրոյ սպանող, և պաղոմէոս՝ պաղոմէոյ հօր իւրոյ սպանող. յոյր վ̄ր արկ համբաւն զվստահամբաւ մականուն* ՀԱՅՐԱՍՊԱՆ (238)։

*Անստոյգ է՝ թէ ո՛ առաւել մեղանչական դաւաբնութե. ո՞րդեօք որ երարձն զկեանս յայնմանէ՝ որում եառ, եթէ որ երարձն զկեանս յայնմանէ՝ յորմէ էառ։ Բայց մարթ է մեզ ասել, թէ հայրասպանն է առաւել ապերախտ. և որդեսպանն՝ առաւել անգութ։*

՚ի բաշխել բնութեն զպաշտամունս, եհեղ յորդիս զպարտաւորութի, և ՚ի հայրս զսէր, որ հուր իմն է՝ հակառակ բնութեն տարրական հրոյ. զի սա ՚ի վեր ցոլանայ, և նա ՚ի ստոր: Մինչ զի մեծ ևս այլանդակ է հայր որդիատեաց, քան զորդի հայրատեաց: Այսու մտօք գրաւոր օրէնք հեթանոսաց եդին ծանր ծանր տանջանս ՚ի վր հայրասպանին, իսկ որդեսպանին և ոչ մի. Թոյլ տուեալ հօրն՝ առաջի արկանել զորդիս՝ գազանաց. և խողխողել իսկ, այնուիկ անբանական փառաւք. Թէ իուրան իուրաթանլիուրաթ է աղաթ հրամանաթաւ. ով Թէ որդիք ծննանիցին միայն վս հօրն. և ոչ վս հայրենեաց կամ տիեզերաց:

Բայց եգիպտացի օրէնսդիրք, որք չէին այնչափ խժաբարոյք, որդեսպանին, ՚ի վերայ եդին զայս պատիժ. զի զերիս աւուրս՝ պահպանութ սպասաւորաց տանեին՝ նոցին առաջի անթաղ մարմնոյ մեռելոյն. զի ՚ի տես ամ ժողովրդեան տեսցէ՝ թէ զինչ արար: Զինչ պատիժ քան զայդ մեղմ, և խնայական. զինչ անպատժութի քան զայդ պատժական և անխնայական: Ատեան էր թատրոնն քաղաքացեաց քամնելոց. ամբաստանող էր մեռելն. վկայք՝ աչք. դատաւոր՝ խիղճն մտաց. երկու դահիճք՝ սէր և կսկիծ: Անդ էր տեսանել ողորմ նշաւակ. ՚ի ծիւրիլ նեխ և ժահահոտ մարմնոյ՝ հիւծեալ հաշէր հայրն յաղէկտուր կսկծանաց. որդունք զազիրք կրծէին զմարմին մեռելոյն, և զոգի կենդանւոյն: Յուրտ արիւնն, որ սպանողին առաջի եռայ ՚ի գինկունս ՚ի դուրս հոսեալ ընդ վէրս՝ անբարբառ կշտամբէր զհօրն զանգթութի: Եւ այն էր փոխադարձ տոյժն՝ ոչ հաւագամանթայ, այլ մեղենախառ անողորմ արքայի. որ ուստոյց մեռելոյ տանջել զկենդանիս, (239):

## ԳԼ. ԺԱ.

### ՅԱՂԱԳՍ ՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ Ի ՎԵՐ ԾԱՌԱՅԻՑ:

Մարթ էր նախ առաջին խնդիր 'ի մէջ արկանել, թէ արդեօք ծառայութիւն իցէ ինչ բնական պատճառ. զի թուի թէ բնութիւն մայր ամենեցուն զամենեսին կամեցաւ լինել ազատ:

Գիտելի է, զի բնութիւն մասնաւոր՝ հայի միշտ 'ի կատարելութիւն մասնաւոր իրաց: Բայց քանզի 'ի պակասութէ նիւթոյ՝ ոչ ամ̃ իրք կարողանան լինել կատարեալ. սմին իրի չէ ինչ անկատարութիւն, և թէ ընդհանուր բնութիւն չծառայէ կատարելապէս 'ի հասարակաց ինչ պէտս:

Ոչ ամ̃ պտուղք միոյ ծառոյ՝ ողջիկ հասունանան, գտնիլ 'ի սեղան մ̃դկան. բայց ոչինչ պտուղ է այնպէս թթու և ժողխ, որ անպիտան իցէ 'ի բուծ անասնոց, կմ̃ յաղբ երկրի: Չիք ինչ յաշխարհի աւելորդ: Ահա այսպիսի են խելք մարդկան. ոմանք ծնանին այնպէս զգօնք և կատարեալք, որ երևին հաստեալք 'ի հրամայել. և այլք այնպէս տխմարք և խելաթափք, որ երևին կարգեալք 'ի ծառայել. վս̃ զի՝ որոյ չիք զգօնուն, վարիլ ունի զգօնութբ̃ այլոց:

Արդ այս է ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՆ, պիտանի եթէ այնմ որ ծառայէ, և եթէ այնմ՝ որ հրամայէ. զի չիք ոք այնպէս անպիտան, որ չիցէ բաւական 'ի կրել զջուր կամ 'ի բերել զփայտ, կամ 'ի պահել զանդեայս. գործք, որք զգօնաւորի չեն ինչ ըմբռն. և 'ի դարձ փոխարինի՝ որ այլում ծառայէ, յայլմէ անտի կեայ:

Որինչ ասի ՂՈՆՀԱՐԷ, զնոյն մարթ է ասել համակ ԳԻՈՒՉԻԱՐԴԻՆԻ: Յամերիկա գտան ազինք այնպէս անագորոյնք, և այնպէս պաճարամիտք, որ գազանական կենաց նոցա՝ կամ պաճարամտութե, չէր հնար յաջողել քաղաքավարութիւն քան զայն՝ զի եղեն ընդ լծով: Եւ այսու օրինակաւ համեմատեցեք և բախտաւոր արարին սարմատացւոց, լեւբկեցւոց, և գեղձնացւոց, արկեալ զնն 'ի ստրկուն, զի ե-

կես

կեացեն 'ի մարդկանէ: Բայց արժան է որոշել 'ի մէջ ծառայի և սարկի, որպէս լուիցես յառաջիկայդ:

Արդ՝ որինչ ասացաւ աշխարհային իմաստնոց, զայն զօրագոյն ևս պատճառաւ պարտ է իմանալ 'ի վերայ փիլիսոփայ իմաստնոց առ ծառայս: Արժանի է ազատութեն, որ երբեք ոչ գիտաց զայն, արժանի է գթութեն, որ կորոյս զայն 'ի չար պատահարէ. արժանի է ծառայելոյ, որ վաճառեաց զայն փողոյ: Բայց որով օրինակաւ և իցէ, ծառայութեն 'ի բաց արտաքսէ զընկերութի, ուստի և աշխարհային իմաստնոց: Նա՝ 'ի մէջ որդւոյ և հօր, թէ չիք ընկերութեն, սակայն կայ սէր. բայց ընդ ծառայութեն այնպէս անյարիր է սիրելութի, մինչև ըստ վաղնջուց առակին. որքան են ծառայք, այնքան են թշնամիք: Որ մինչ անձկայ ազատութե, ոչ կարէ սիրել զծառայութեն, և որ առեալ զծառայութիւն, ոչ կարէ սիրել զտէրն. և վայ տերանց՝ որոց բաղձացուցանեն զծառայս:

Թռչուն արկեալ 'ի վանդակ, թէպէտ և քաջ կերակրի, յամի զծերպս խնդրէ զելոյ վանդակագործի, ճողոպրել 'ի դուրս. և ծառայ առաւել ըղձանայ լինել մուրող և ազատ, քան կերակուր ունել, և ի տերամբ լինել: Թող զթշուառ կեանս սարկութեն, անարգ և վատաբարեկ քան զանասնոցն, ձինչ 'ի կերակուրս, և ծանրաբեռնեալ յերկաթս. և ըստ վաղեմի իրաւանց՝ այնպէս ներքոյ անկեալ ազատ իշխանութեն տն, մինչև 'ի սեսանել զտէրն տեսանել նմա դաշինս: Եւ մեք զարմանամք, զի որչափ են ծառայք, այնչափ են և թշնամիք:

Փիլիպպոս մակեդոնացի առեալ և հրձիգ արարեալ զողիւնթոս քաղաք աթենացւոց, զքաղաքացիսն վաճառեաց 'ի սարկանոց: Պարրասիոս անուանի պատկերահան աթենացի՝ 'ի նկարել ըզպատկեր պրոմէթէոսի տանջելոյ 'ի գխոսէ 'ի քարաժայռի վր, գնեաց զծերունի մի ազնուականագոյն և առաւել վշտագին 'ի մէջոյ անտի ողիւնթացւոց: Առ 'ի նկարել զպատկեր պրոմէթէոսի բա-

բաւական էր առաջի ունել զդէմս սորա զվատէն 'ի սովէ և 'ի ցաւոց վասն կորստեան հայրենեաց, որդւոց, ընչից և ազատութեան: Բայց պարրասիոսի կամեցեալ ճշգրտագոյն հանել 'ի նկար զգծագրութիւն ցաւագին դիմաց, զայրումն աչաց, զուռոյց կրծոց, զձգումն մկանանց, և զխլխլել ոսկերաց պրոմեթէոսի, ետ տարածանել մերկ զծերունին, և այնպէս բուռն ձգտեցոյց քարշողաց զայն կենդանի անդամս, մինչև ողորմելւոյն 'ի կարկամութենէ անտի անշնչանալ 'ի տանջանսն:

Զար ևս չարիս անցոյց պարրասիոս ընդ ծառայն, քան փիլիպպոս ընդ թշնամին: Փիլիպպոս ոչ սպան, զի վաճառեսցէ զնա. պարրասիոս գնեաց, զի սպանցէ զնա: Ո՞վ չար ևս չարչարեցաւ անմեղ ողինթացին 'ի բարեկամ տնէ, քան մեղապարտն պրոմեթէոս 'ի ծանրացասումն դիւսէ: Դիւս վշտագնեաց զպրոմեթէոս 'ի պատժել զնա. պարրասիոս սպան զծերունին 'ի նկարել զնա վշտագին.

Զամ՝ զինչ և կամիցի, ձեռներէց պատկերահանի օրէն է նկարել. բայց ոչ ոք այլ պատկերահան օրինաւոր համարեցաւ սպանանել զսկզբնատիպն, զի նկարեսցէ զպատկերն: Սակայն օրէնք թողացուցանէին մեծ ևս ձեռներիցութեան տն, քան պատկերահանի: Հաւաստանմանթոս ըստ խրոււմ արդար [illegible] [illegible], դատապարտէր արդեօք զպարրասիոս, զի նկարեսցի 'ի կերպարանս տխուր նովին արուեստիւ, որով նկարեաց ինքն զողինթացին 'ի կերպ պրոմեթէոսի (240):

Ի մեր մարդասիրագոյն դարս՝ արդարագոյն և ապահովագոյն է վիճակ այնց ծառայից. որոց պայման եդեալ ծառայութեան իւրեանց է կամս, փոխադարձ փոխանակութեամբ, տան զիւրեանց աշխատութիւն, և ընդունին զարժանին թոշակ. և այնպէս դիւրաւ հրաժարելով 'ի ծառայութենէ իւր ապահարզանաւ, ազատ կացուցանեն զանձինս, այլ ոչ կամելով ծառայել: Ո՛չ պակասին երբեք տեարք ծառայից. և ոչ ծառայք տերանց:

Այսու օրինակաւ ընդրդի ընկերութիւն է անհա-

ւա-

սատարուն . ազատութիւն ընդ ծառայուն, և իրաւունքն տիրական ընդ իրաւունս քաղաքական, մինչև լինել տանն փոքրիկ ինչ հնրկուն . և ծառայից ունել զտեղի արքունի սպասաւորի, և տանուտեառնն լինել ինքնուրոյն արքայիկ ։

Արդ՝ այսպիսիք են ծառայք, այլ ոչ թշնամիք տն . զի չեն բանադրեալք ։ Մանաւանդ թէ են սիրելի բարեկամք . զի են երախտաւորեալք . և վճկ առաւել ես հաւատարիմք . զի են առաւել բարեկամք ։ Ընդ այսպիսիս քաղաքավարագոյն ես վարի տրն, գիտելով յոր ժ օրէ անցից, քանի դիւրին է նմ ՚ի նոյայն լինել վիճակի ։ Ամ ծառայ սերեալ է յումեմնէ թագաւորէ . և ամ թագաւոր սերեալ է յումեմնէ ծառայէ ։ Նա՝ վս զի ամ մր է ընդ աւագագոյն տիմք, այնպէս վարի ընդ ծառայս, որպ կամէր թէ վարեսցի աւագագոյնն ընդ իւր ։

## Գլ. ԺԲ ։

### Յաղագս ամուսնական իրաւանց ։

Առաւել ևս դժուարին իմն է սահմանել, թէ որպիսի ինչ իրաւունք կոչիցի ամուսնականն . զի թուի թէ չէ այն՝ ոչ յածային իրաւանց . ոչ ՚ի քաղաքականէն . ոչ յիրաւանց ազգաց, և ոչ ՚ի բնականէն ։ Չերևի լինել յածայնոյն . ապա թէ ոչ՝ ամ մարդ պարտաւոր լինէր ածել կին . և մեղապարտ լինէր այնչափ սպանութեանց, որչափ որդիս յանհոգութէ ամուսնութե չընծայէր աշխարհի և այլ ։ Մանաւանդ զի այնչափ առաւել հաճոյ է այլ վիճակն կուսական քան զամուսնական, որչափ առաւել նման է ածեղէն բնութե հոգի քան զմարմին ։ Իսկ եթէ մեծ առաքինութի է համարեալ չանցանել յերկրորդ ամուսնութիւն, մեծ ևս առաքինութիւն լինի չանցանել յառաջինն ։

Ոչ ևս առաւել չթուի կախեալ ՚ի քաղաքական իրաւանց ։ Զի թէ ամուսնութիւնն յառաջէ քան զտոհմ, և տոհմ քան զքաղաք, և քաղաք քան զքաղաքական իրաւունս, ապա և ամուսնական իրաւունք յա_

առաջին քան զքաղաքական իրաւունս. զի բաղկացուցիչ մասունք յառաջագոյն են քան զբաղկացեալն ։

Այն զի, եթէ իրաւունքն քաղաքական՝ ոչ տացան, չէ՛ 'ի մէջ Վերնագրութեան Ու ստորագրութեան, այլ 'ի մէջ հաստատէից, անմարթ է այդմ հաւատարուէ ունել զանգի յամուսնացեալս. վասն լինելոյ տանուտէն ոչ արեգակն յերկնի, և իշխան 'ի թէքբրուէ, և գլուխ 'ի մէկեղէն մարմնի. վնկ բնութիւնն եւ մէջ զգօնութիւն, և 'ի կանանց զայն երարձ ։

Թող զի՝ եթէ իրաւունքն քաղաքական է կարգեալ առ հնրկաց օգուտ, կարգաւ զնմ պատմութիւնս, և գոյես, զի ՟Ը միոյ կնոջ, որոյ գործեալ ինչ իցէ օգուտ հնրկուէ, բեւրաւորք եղեն պատճառք մեծամեծ չարեաց ։

Նոյն տաւել չերևի միաբանիլ ամուսնական իրաւունքն ընդ Իրաւանս ազգաց ։ Զի թէ հաստատեալ է սա տաւելապէս յընկերական կեանս, և յաղագս անցին. զինչ ինչ կայցէ տաւել հակառակ երկաքանչիւր օգտի՝ քան զամուսնութի ։ Զի թէպէտ նախ առաջին՝ կարի իսկ ճշմարիտ է, թէ Միանութիւնն է մայր ամուսնուէ. բայց ամուսնուին է հայր անմիաբանութե ։ Այն ինչ վասն սէրն զՋահ հարսանեաց, ատելութիւնն 'ի վր հասեալ չիջուցանէ ։ 'Ի սուղ ժամանակի՝ փոխի հաւանութեանն զհետ գայ հաճր ապաշաւ. և ուրախ հարսնածուէ տխուր կոծութիւն. (241) ։ Մինչև անձամբ զչափ առեալ ուրումն իմաստնոյ՝ կնքեաց. Թէ Երկուս միայն աւուրս բարեբաղդս ընդունի առնն կին.

զհարսանեացն և զթաղման ։

Իսկ յաղագս Մուսին՝ ոչ ազատուի իցէ տաւել ծնողական քան զայն, յորժամ երկու ազատ անձինք անձնատուր լինին ոչ միմեանց. և երկաքանչիւրն զպարանոցս խոնարհեն ՟Ը միով լծով, ում կամաւորութ լինին 'ի խնդիր, և բռնութ ակամայ կամօք, զի մի միայն վայրկենական կամք լինի նոցա մշտնջենաւոր հարկ ։

Այպա եթէ լինի անջատումն առագաստի, չար եւ է վիճակն. զի դու այնուհետև չես ծառայ,

բայց

բայց և ոչ աղաւա · ոչ ևս ես նր , բայց և ոչ քոյ · զի ոչ կարես լինել այլում · մինչև զկնի ստրկու-թեանդ դեռ ը քարշ տանիլ քեզ զքո շղթայդ ։ Այլ եթէ խզեսցես իսկ զայն՝ խապաւ բաժան-մամբ , կամ խոստովանիս՝ թէ չար ընկերութիւն է ամուսնականն , և կամ՝ թէ հարիւրոց ես ար-ժանի , եթէ միով չշատանաս ։

Հուսկ ապա՝ երևի , թէ անյարիր է իրաւունքն ամուսնական ընդ բնութեան ։ Զի թէպէտ բնութիւն եա անասնոց ներ զաւակի , բայց ոչ կապեաց ըզ-նեւ նր ը մի միայն անհատ ։ Թող զի՝ նա նոյնա-տեսակ անհատից եա զնոյն բարս · վնկ յընտրու-թեն ընկերի՝ ոչ կարեն անասունք սխալել կամ սարջանալ ։

Այլ 'ի կանայս այնչափ բարք են և այնչափ մոլու-թիւնք 'ի միմեանց տարբերք իբրև զդէմս , սակայն համակ քօղարկեալք ը չքնաղ և համեստ կերպա-րանաւ իբրև օձք 'ի մէջ ծաղկանց · մինչև անհնար է ճանաչել զնոսա , բայց յորժամ ճանաչումն նչ այլ ոչ օգնէ ինչ · զի նա այլ դեղ չարագոյն գո-րովքան զայն չար , հարկ լինի կամ հանդուրժել , և կամ փախչել ։

Բայց բաց յանհատական մոլութեանց կան և հասա-րակք բովանդակ իգական սերի ։ Վասն զի եթէ կինն է անպարկեշտ , ով քանի ամօթ նախատա-նաց իցէ · եթէ պարկեշտ , ով քանի նր անտա-նելի · եթէ աղքատ , ով քանի վայրապար ծախք · եթէ փարթամ · ով քանի խրոխտանք ։ Թէ է ա-մուլ , քանի վէճք · թէ է բազմածին , քանի թըշ-նամիք ։ Թէ է մանկամարդ , լինի պճնասէր · թէ չափահասակ , լինի նախանձախնդիր ։ Թէ է տը-գեղ , անհաճոյ է այնմ , որ է · թէ գեղեցիկ , հա-ճոյ է այնմ , որ չէ ։ Եւ զինչ այնքն դժուարին իցէ պահել , որ զայն որ բազմաց է ակնահաճոյ ։ Զհուսկն ասացից ։ Պրոտագորաս առ 'ի հասու-ցանել զմեծն 'ի չարեաց իւրում թշնամւոյ , ետ 'ի նա զդուստր իւր կնութեան (242) ։

Բայց յայլմէ կողմանէ , թուի թէ իրաւանց ա-մուսնական փակէ յինքեան զայլ նա իրաւունս ։

Է՝ նա ստուգապէս յԲՆԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ. զի կարգե_ցաւ յիւր ընդհանուր հրամանաւ. որ պարտաւորէ զամ ազգ մարդկան 'ի լինել զաշխարհ, որ արա_րաւն վն նր: Նա՝ թէպէտ և կարող էր ամ կալ_մել իւրով ձեռամբ զամ մգ իբրև զառաջինն, ոչ կամեցաւ՝ թէ 'ի սկզբնատպէն լիցի նոցա հաստա_տուած. այլ զի սերեսցին 'ի միմեանց, 'ի պահել զսէր առ զաւակս և առ ընկերուն ամուսնական: Վն այսորիկ ծնեալ էառ զկինն, ոչ 'ի գլխոյ, ոչ յոտից, այլ՝ 'ի կողէ առնն. յայտ առնելով թէ կինն ոչ է իշխանուհի արկին, և ոչ անարգ աղա_խին. այլ՝ անանջատելի ընկեր, և 'ի բարիս և 'ի չարիս մտերիմ մխիթարակից:

Բայց իբրև հանրական սերնդեանքն՝ աճեցել են պիտոյացաւ ժողովրդոց բնակութի, քան բնակութի՝ ժողովուրդ. և այնպէս 'ի լինելն աշխարհի՝ մնայր միայն լինել զերկինս, ԲՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ տեղի ետ ազգ_աց իրաւանց, և պարտիք ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ տեղի ե_տուն պարտուց ԻՐԱՒԱՆՑ և անկրնութեն: Սակայն և այնպէս հրաման սերնդեան մնայ առ ամ ազգ մարդկան ընդ հանրապէս, այլ ոչ առ իւրաքանչիւր մասնաւոր. ցորչափ՝ արարչին աշխարհի կամք ի_ցեն պահել զայն:

Բայց՝ բաց յայսմ գաղափարեաց, զոր վաղնջուց ի_մաստասիրութիւն ոչ ծանեաւ, առոյգ իմն է, թէ ամուսնական իրաւունքն մեծապէս անկ է ՔԱՂԱ_ՔԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ: Անկ է նախ 'ի սակս ՏԱՆՆ ՍԵ_ՓԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ երկուց, որք 'ի սկզբանէ ազատ գո_լով հաստատեցին 'ի մէջ իւրեանց զինչս և զան_ձինս, յորում բաժանորդութե վն զի հնար է թէ գիտեսցի անիրաւութի և զնաս, ունին զանեղի առ_գարութե և օրէնք: Իսկ չէ ընդդէմ, թէ ամուս_նութիւն եղև յառաջագոյն քան զքաղաքական օ_րէնս: Զի և առաքինութիք և մոլութիւնք եղեն յառաջագոյն քան զօրէնս. սակայն և այնպէս օ_րէնք արգելուն զմոլութիւնս, և օրինադրեն զա_ռաքինութիւնս:

Անկ է և 'ի սակս ՀԱՍԱՐԱԿ ԻՐԱՒԱՆՈՒԹ. իբր զի ամուսնութիւն է սերմնարան հասարակապե_տու_

տութեանց․ որք առանց այլոյ նուաղին, ո՛հ պարտ-
ուեցք անձրգիք ։ Վասն ամուսնացելոց՝ իբրև բա-
րեացպարտից հայրապետութե՛ն, հռովմայեցի օ-
րէնսդիրք շնորհեցին առաջարկութիւնս նպաստա-
մատոյցս, և մեծաշուք նախապատուութիւնս ։ Եւ
սպարտացիք ամուրեաց ոչ տային տեղի 'ի Թատ-
րոնս, ոչ կամեցեալ 'ի հիմ դասել քաղաքացեաց
զայն՝ որ ոչ յաւելոյր զԹիւ քաղաքացւոց ։

Եւս առաւել անկ են ամուսնական իրաւունք ի-
րաւանց ազգաց ։ Զի որովհետև այր մի առաւել
մասաւորութի ունի 'ի վ՟ր ընդհանուր իրողութեանց,
և կին մի առաւել զգուշաւորութիւն 'ի վ՟ր մա-
նկանց իւրոց, 'ի ծառայել նո՟ հայրենեաց՝ սա պա-
հէ զտունն ։ Նա աշխատի 'ի կերակրել զզաւակն,
սա պահապան է նո՟ ։ Նա հրամայէ խմբից զօրաց,
և սա ծառայից ։ Մինչև կնոջն՝ ձեռամբ առնն
զինիլ 'ի բանակի, Թէպէտ և կայ 'ի տան ։ և առնն՝
աչօք կնոջն պահել զտունն, Թէպէտ և կայ 'ի
բանակի ։

Եւ ես՝ ո՛րչափ առաւել փութաջան լինի վասն առնն,
բայց որ միճակակիցն է միճակի նորա ։ Ո՛րչափ քան
զնա երկայնամիտ լինի 'ի հիւանդութիւնս․ ո՛րչափ քան
զնա անձնատուր 'ի վտանգս․ ո՛րչափ քան զնա քաղցր
'ի միշտս․ ո՛րչափ քան զնա հաւատարիմ 'ի խորհուրդս ։
Զչափ եւս զորս իմաստունն 'ի կայսերս (այն
է օգոստոս) 'ի դաւադրութիւնս կիննեայ․ որ ա-
ռանց հանճարոյ կնոջ իւրոյ չգիտէր ելանել 'ի
լաբիւրինԹոսէ հանապազորդ դաւադրունց ։

Իսկ Թէ իրաւունք ամուսնական անկ լինին բնա-
կան իրաւանց, քաջայայտ է ։ Զի որովհետև վախ-
ճան բնութե է պահպանութե ազգի մարդկան, և զի
չէ հնար անհատից լինել անմահ, և ոչ ծնանիլ
միանգամայն՝ առ չբաւելոյ գեանի այնչափ բազ-
մութե, պատշաճ եղև նդ հետ զհետէ մեռելոց
մերտանին ծնանիլ 'ի զաւակս, և մահկանացութե
անհատից անմահանալ յիւրեանց տեսակի ։

Թող զի գեղեցիկ իմն գոլով մի [illegible] աշ-
խարհի, Թէ 'ի մէջ միայն ծնցի մարդ, ամենեքին
ծնանէին արդեօք նոյնատիպ և նոյնօրակ՝ իբրև

զպտուղս միոյ տնկոյ. ուր տարբերութիւն սերմ իբրև պատուաստիւ պէսպէս տնկոց՝ ծնանի պէսպիսութիւն գունոց և բարուց և բնաւորութեանց ապէսպէս ՏՐՈՒՆԿՈՒՓՍ : Եւ ոչ մի այսր պատճառօղ է մարդոյ՝ որպէս անասնոց, ԽՈՍՆ ՈՒՐԱՆԳՈՒՏԱՆՆ. զի սէրն բաժանեալ մի ծնցի յաճախութիւն մեծս քան զորդիս, և որդիս քան զինչս. իբր զի առնմից և հնրկութեց մեծ է պիտանութիւն սնուցումն և միաբանութեան՝ քան բազմութիւն զաւակաց : Վնկ բնութիւն իսկ ազնուագոյն և կատարելագոյն կենդանեաց՝ ետ մեծ եւս հաւատարմութիւն և հաստատութիւն 'ի սէր իւրեանց :

Իսկ թէ 'ի կանայս իցեն աւելի ՃՈՂՈՒԹԻՒՆՔ՝ քան յարս, ոչինչ են զարմանք. որովհետև ոչ այլ ինչ է կին, բայց անկատար մարդ : Բայց և արժան է յուշել. մի իցէ թէ մոլութեանց նոցա պատճառք՝ իցեն մոլութիւնք արանց, որք են կարի իմն դժնդակք : Վնկ նոյն ինքն բնութիւնն անզօր կենդանեաց ետ թոյն, և կանանց չարութիւն 'ի պաշտպանութիւն իւրեանց :

Ո՞չ և իցէ՝ մոլութիւնք կանանց չեղեն երբեք խոչ առաքինութեան արանց : Ոչ կարողացան խափանել թշնամանք սանտիպպեայ՝ սոկրատայ իմաստասիրի. և ոչ պաւլոյինն՝ կատոնի քննչի. և ոչ սկրիբոնայն՝ օգոստոսի քաջի. և ոչ սաբինայն՝ ադրիանոսի վեհանձին : Մանաւանդ թէ իբրև ոչ կարողացան բարւոքել զոքա զկանայս իւրեանց գանիւ, բարւոքեցին զանձինս իւրեանց համբերատար ժուժկալութեամբ :

Բայց կարի իմն դիւրին է առն մտաւորի՝ գիտել 'ի ձեռն բերել զվարդ զանփուշ. ընտրեալ կին ԳԵՂԵՑԻԿ, ԱԶՆՈՒԱԿԱՆ, և ՀԱՐՈՒՍՏ, բայց և ԳՈՐԾՈՒՆ, ԻՄԱՍՏՈՒՆ, և ՀԱՆԴԱՐՏ : Այն է միայն դժուարին, թէ ո՞ւր գտանիցի :

ԳԼ.

## ԳԼ. ԺԳ.

### Ցուցակ իրաւանց, զոր ունի մարդ ՚ի վերայ անձին իւրոյ ։

Այս և ՚ի վ՟ր անձին իւրոյ՝ իւրաքանչիւրոք ունի ինչ իրաւունս, ըստ որոյ կարող է գործել արդարութեամբ կամ անիրաւութեամբ։ Այլ այս է իրաւունք ինչ անյափական և ծախաբերական ։

Վ՟ն զի եթէ մարդկայինս բաղկացեալ մասամբ ոգ՟ ծածկէք ինչ փառն. յորում հոգի և մարմին են երկուքինք, որոց հնազանդին շաւղք, որ են կէրք. և ծառայեն զգայութիւնք՝ իւր օրէնսդէք. ով քանիցս բանաւորին այս անտեսական իրաւունք կարի իմն մեղկութ աննուաճեան, և սաստկութեամբ ծնչյից ։ Կամ եթէ մասամբ մ՟ց ոգ՟ ծածկէք ինչ համարաւոր փառքիւն, յորում միջն ՚ի ձեռին ունի զմիապետական իշխանութիւն. առաջնորդք են ազնուականք. և արտաքին զգայութիւնք ժողովրդականք. քանիցս բռնաւորին քաղաքական իրաւունք, մ՟ն զի իշխանն պահանջէ՝ զոր չէ արժան. կամ ժողովրդականքս ապստամբեն յիշխանէն ։

Բայց քանզի արդարն և անիրաւն է ՚ի մէջ երկուանյանց. որոց մին պահանջմամբ աւելի քան զարժանն, կամ առնլով աւելի քան զոր պարտն է, եթէ զարդարութիւն տրամաբաշխական կամ փոխարինական, վ՟նկ այս մասնաւոր իրաւունք չեն յատկապէս փոփոխական, և ոչ հաստատական. այլ՝ ծախաբերական, ըստ որում մասունք մի և նոյն բաղադրելոյ կեղծին ո՟ղ անձինք որոշք ՚ի միմեանց ։ Եւ այս իսկ եղև փոխաբերութեն, որով իմաստունն ազգիսպաս զգաստացոյց զժողովուրդն ըմբռնացեալ առ ծերակոյտն յաւէնախն. բերելով օրինակ զանդամս ըմբոստացեալս առ որովայն, որում կամելով մնասել, ինքեանց հասուցանէին մնաս (243) ։

Յայսմանէ մարթիս լուծանել զերկուս երևելի խնդիրս ։ Մի՛ թէ որ սպանանէ զինքն, անիրաւեսցէ արդեօք առ ինքն ։ Երկրորդ, թէ սպանօղն աւրաւք՝ որ ի ...

Գ ԲԷ ՕՊԱՆՑԻ, ԱՆԻՐԱՒԵԱՑԻ ԱՌ ՕՊԱՆԵԱՑՆ: Զոր պարտ է իմանալ 'ի վ̄ր այլ ամ̄ մնասուց պատուոյ կամ ընչից, զոր կամաւ ոք հասուցէ անձին, կամ յայլմէ կամաւ ընկալցի:

Եւ առ առաջինն՝ դիւրաւ կարող եմ տալ պատասխանի, ոչ̄ ասացեալ. թէ՝ թէեւ անիրաւութ̄ լինէր մնասել կամաւ անձին, այն լինէր անիրաւութի ՓՈԽԱՐԷՆԻՐԱԿԱՆ. զ̄ որում երկու ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՔ 'ի նոյն բաղադրեալ անբաժանարար լծորդք՝ կեղծին իբրու երկու ԱՆՁԻՆՔ 'ի միմեանց խակութ̄ որոշք, եւ ը̄ միմեանս խառնք, մինչեւ միայն զմիւսն թշնամանօք անարգել: Ըստ օրինակի այլանդակին՝ որոյ երկու գլուխք էին, եւ չորք բազուկք ը̄ միմեանս մարտագիրք. մինչեւ նոյն այլանդակին թշնամացեալ անձին՝ վէրս ընդունիլ եւ վէրս 'ի վ̄ր դնել:

Բայց թէ զեւկն խօսիցիմք, անհնար է մ̄դոյ անիրաւել առ ինքն: Զի ոչ̄ ոչ է հնար անիրաւիլ, բայց եթէ ԿԱՄԱՑ. նոյնպէս ոչ է հնար ընդունիլ զանիրաւութի, բայց եթէ ԱԿԱՄԱՅ. անհշակից գոլով այսց եղերաց: 'Ի կամս միայն է ոյժ անիրաւութ̄: Որ մնասէ այլում յանդգնաս կամ բռնութ̄բ, առնէ այս՝ անարգար ինչ, այլ ոչ անիրաւի. զի անարգարութին չափի յօրինաց, այլ անիրաւութին չափի 'ի կամաց. նա է չար նիւթապէս, եւ սա չար տեսականապէս: Մինչ զի անիրաւել տեսականապէս ոչ է առնելն այլում չար, այլ կամիլն առնել այլում չար: Արծուին չար արար Եսքիղոսի, բայց ոչ անիրաւեցաւ առ նա. յորժամ ընկէց զկրիայն 'ի վ̄ր ճաղատ գլխոյ նորա, կարծելով թէ իցէ քար: Կամէր զկրիայն խորտակել, եւ ոչ թէ զբանաստեղծն սպանանել. իւրում օգտի ըղձանայր, եւ ոչ թէ մնասու այլոց
( 244 ):

Արդ ասեմ, թէ այս՝ հնար է մարդոյ մնաս հասուցանել անձին, այլ ոչ է նմա հնար անիրաւել առ անձն. զի անհնար է նմա կամիլ զչար իւր: Ապա եթէ կարողասցի կամիլ ինչ՝ անձին իւրում չար, ոչ է հնար թէ կամեսցի տեսականապէս

պէս ոչ չար, այլ ոչ բարի. զի բարին է սեպհական առարկոյ կամաց, ոչ ճշմարիտն մտաց: (245): Հերակլէսի՝ չհանդուրժել ցաւոց արեան նեսոսի, որ ուտէր զմարմին նր. ընկէց զանձն 'ի հուր: Եւ կատոնն 'ի չհամբուրել զզինեալ ձեռս իւրոյ թշնամւոյ, սրով իւրով զիւր երակս եհատ: Երկաքանչիւրքն ըղձանային մահու, ոչ որպէս ճնաստակար առարկայի, այլ՝ մին ընտրելոյ զթոյն՝ 'ի դեղ իւրոց ցաւոց. և միւսն զսուր՝ ոչ բառնալի իւրոյ ազատութեան: Երկաքանչիւրքն ախտնային չարաբաստութեան, և ոչ թէ անձանց:

Բայց կամեցեալ մտածել յետ մահուանս փորձս, թէ արդեօք սպանանել զանձն իցէ անիրաւել առ անձն, տեսցուք, ըստ յերկուց տասի արդարութեանց անկ իցէ զայս անիրաւութիւն ածել յուղղուն. արդեօք արդարութեան հաստատուէ, թէ օրինական: Յայտ է թէ ոչ արդարութեան մահուանօրի: Վասն զի նոյն գոլով որ անիրաւէ՛ և որ զանիրաւութիւն կրէ, նոյնն միանգամայն լինէր պարտապան և պարտատէր: Այս վն զի պարտ է փոխարինական արդարութիւն հրամայել զայժն անիրաւութեան ընդ թուաբանական հաւասարութեան, պարտ և պատշաճ էր նոյն ինքեան՝ փոխատրել զկեանս՝ զոր եբարձ. կամ եթէ հոգին սպան զմարմինն, պարտ և պատշաճ էր մարմնոյ սպանանել զհոգի:

Իսկ ըստ օրինական արդարութեան՝ խոստովանելի է, թէ օրէնսդիրք ամենք հրամայեցին զդիակունս անձնասպանից ընկենուլ 'ի բացի. զի ըստ դատանանելոյ նր առ. անձինս՝ փոր գազանաց լիցի նր գերեզման: Փոխադարձ այսժ այս՝ վայելչական, և ահընկէց կենդանեաց, քան պատժական մեռելոց: Բայց այս քաջ ցոյց է, թէ անիրաւեցան նոքա առ. հայրենիս, յանցանել ընդ օրէնս. և ոչ թէ անիրաւեցան առ. իւրեանց անձինս: Իբրզի 'ի ծնանել ընդ մկան վն հայրենեաց, ոչ այլուր տացաք, կամաւոր է այն սպանութիւն՝ հայելով 'ի սպանեալն. այլ ակամայ՝ հայելով 'ի հայրենիս. և վն այնորիկ անիրաւ է առ. հայրենիս, այլ ոչ առ. սպանեալն:

Վճարու

Վճռումն հաստատի անընդէլ օրինակաւ։ Մարսիլիա, որ երբեմն ազատ էր և բարեկարգ հասարակապետութիւն, էր անաչառ վրէժխնդիր՝ որոց կամաւոր դաշինձն լինէին անձանց. բայց պահէր նա յարքունի պահեստ զթունաւոր մալախինդ, ոմն զառողջարար ինչ դեղ պիտանի առ չարեաց, եթէ օրինաւոր թոյլտուութիւն իշխանաւորաց լինէր առնուլ 'ի կիր։ Վասն եթէ 'ի քաղաքացեաց ոք ախտաժէտ կամ դժբախտ՝ տաղտկանայր 'ի կենաց, խնդրէր աղաչանօք յիշխանաւորաց կենադրաւ լինել. որք թէ իրաւացի համարէին զնոյն յառաջբերեալ պատճառս, տային նմա զայն մահարեր ումպ. որով 'ի դէպ ժամու, յետ հրաման տալոյ վասն տան իւրոյ՝ քաղցր 'ի քուն լեալ, զրաւիւր 'ի կենաց և 'ի տաղտապանաց։ Գերմանիկոս կեսար՝ ըստ պատմելոյ տակիտոսի, զայսր գործավական և խժդժական օրինի եսես զվեհանձնեայ փորձ 'ի բամբիշ ումն երևելի, թըշւառ՝ միանգամայն և երջանիկ կարծեցեալ։

Ցայսմ օրինաց՝ գրելոյ ըստ աղօտանուաղ լուսոյ բնութեան, և ոչ ըստ լուսապայծառ աւետարանի, մարթիս համաչել նախ՝ թէ ըստ դատման իսկ այնց իմաստնոց, որ սպանանէ զանձն՝ անիրաւի առ հայրենիս. յորժամ հայրենիքն չեն հաւան ընդ պատճառանան. այլ ոչ յորժամ թողացուցանեն զմահ՝ ոմն մեծ ինչ երախտաւորութիւն այնմ անձուկ ունողին։ Նա եկրորդ, թէ ես առաւել չանիրաւի առ ինքն, իբր զի յառաջ գայ գործն յիւրոյ կամաց, և ոչ 'ի կամաց այլոյ։ Նա՝ ըստ կարծեաց նոյն, առնէ անձին մեծ ինչ ծառայութիւն. զի այնուիկ կարճառև և քաղցր դեղթափաւ բառնայ զբռնութիւն երկարատև և ցաւագին թունոյ վշտակիր կենաց, և արարեալ հաճելի զահաւորն քան զամ որ յաշխարհի, քաղցր թխավարէ 'ի քնոյ 'ի մահ՝ 'ի միում բաժակի։

'Ի նախընթաց վճռումէ ասաի մարթիս զիւրալուծանել և զմիւս խնդիրն, թէ սպանողն այնորիկ, որ կամի թէ սպանցի, անիրաւեացէ արդեօք առ սպանեալն։

Սոյդ

Ստոյգ իմն է, թէ 'ի փոխարինութիւն ոչինչ արդարութեն կոչէ վնասեալ՝ զայն, որ կամի զվնասան. կամ զրկեալ, զայն՝ որ կամի զրկանան։ 'Ի փոխանակուն զինուց, զոր 'ի նշան դաշնաւորութեան արարին 'ի մէջ իւրեանց դիոմեդէս և գղաւկոս, թէպէտ զէնք գղաւկոսի էին յոսկւոյ, և դիոմեդեայն յերկաթոյ, ոչ դատապարտեցաւ դիոմեդէս ածել 'ի հաւասարութիւն զանհաւասարութիւն գնոց. զի անհաւասարութիւն էր նիւթական. այլ ոչ տեսական. ապա հաւանութիւն ընդոյր զինան. զի մարդ ոք տէր է իւրոյն։ Ըստ այսմ օրինողն այնորիկ որ կամի թէ սպանցի, այս՝ հնար է թէ անիրաւեսցի նիւթապէս, այլ ոչ տեսականապէս ։ Յիրաւի յանդիմանեցաւ յարիստոտէլէ ովրեստէս յեղերերգութեն եւրիպիդեայ. զի խոստովանելով և 'ի չքմեղս լինելով՝ եա պատասխանի, թէ սպան զմայր իւր. ասէ.

### Կամաւ սպանողն. ակամայ սպանողն ։

Որպէս թէ ասէր։ Եթէ կամէր նա, թէ սպանցի, սպանի կամաւ. եթէ ոչ կամէր նա, սպանի ակամայ։ Ոչինչ զրոյց յոյժ մեծի բանաստեղծութեն քան զայդ եղերական, և ոչինչ քան զայդ յիմարական։ Չգիտեմ ով առաւել շաղփաղփիցէ. ովրեստէս, եթէ բանաստեղծն, որ կամելով արդարացուցանել զովրեստէս, լինի նորա չարախօս. զի անդ է տեսականապէս յանցուածն. ուր է նորա սկիզբն. և սկիզբն յանցուածոյն է կամքն։ Ապա չատ էր ասել. սպանի զմայրս. զի նա կամեցաւ թէ սպանցի. փոխանակ զի նա բնաւ ընդդիմացեալն էր սպանանել զմայր իմ։ Այսու օրինակաւ ովրեստէս արկանէր զյանցուածն 'ի հեղինակին վերայ. զի արդարութեն ենթադրէ, թէ որ կամի զպատճառն, կամի և զպտուղն՝ որ հարկիւ ընթացորդ է ընդ նմա։ Ապա ոչ էր պարտ նմա ասել, կամաւ սպանողն. այլ թէ ակամայ սպանողն. զի կամքն բռնադատեալ ոչ է կամք. և կրկին էր բռնադատեալ կամք ովրեստեայ. 'ի հարկէ վրէժխնդրութեն հօր, և 'ի հրամանէ պատգամախօսին։

Իսկ

Իսկ արդ՝ եթէ միջնորդական կամք սպանելոյն՝ բաւական է, զի սպանողն մի՛ անիրաւեսցի, որչափ եւ չանիրաւի, յորժամ յայտնի և ապա կամք սպանելոյն առաւել զսպանողն: Իսկ եթէ որ իւրով ձեռամբ սպանանէ զինքն, ոչ անիրաւի առ ինքն, որպէս ասացաւ, զիա՞րդ անիրաւութիւն ընկալցի, եթէ այլոյ ձեռօք կամի՝ թէ սպանցի: Նա ինքն է սպանեալն և սպանողն:

Արքայ Սաւուղ էր վիրաւորեալ 'ի մահ. բայց քանզի կամ յամառ ոգին չելանէր 'ի մարմնոյ 'ի տանջել զնա, կամ կարի իմն անձուկ դուռն թըւէր իւրոյ հպարտութեան՝ մի միայն վիրաւորեալն, ողորմելին կիսամեռ և կիսակենդան՝ տանջիւր և ոչ մահանայր: Ապա հրամայեաց միում յիւրոց զօրականաց՝ ամաղեկացւոյ, զրկել զնա 'ի կենաց. նա 'ի հնազանդութէ և յաղեխորով գթոյ ընդարձակագոյն եւ պատառուածով լայնեաց զելս հոգւոյ և զմուտ մահու: Ո՞ր չարագործ եղև երբեք զսա բարեգործ: Ո՞վ անիրաւութի կոչեսցէ զայսպիսի հնազանդութի խորումն այն դիւրիւ (246):

Բայց ասիցես: Եթէ ամաղէկացին չանիրաւեցաւ առ Տր. Իսր. զիա՞րդ ապա դատեր այր իմաստուն և ոչ Դաւիթ զամաղեկացին վասն այդր բանի: Թէ չեղև նա անիրաւ, անիրաւեցաւ ուրեմն դաւիթ 'ի դատապարտել զանպարտն. Եթէ դաւիթ իրաւամբք դատապարտեաց զնա, ապա չէ ճշմարիտ, թէ ոչ լինի անիրաւութի 'ի սպանանելն զայն՝ որ կամի թէ սպանցի:

Պնդեմ, որպէս յառաջն, թէ զորօրինակ որ սպանանէ զինքն, ոչ անիրաւի առ ինքն, այլ՝ առ հայրենիս. նոյնպէս դաւիթ ոչ դատապարտեաց զամաղեկացին, զի անիրաւեցաւ առ սաւուղ, այլ զի անիրաւեցաւ առ ած, որ օծեալն էր զնա ձեռամբ սամուէլի: Այն որ օծումն էր պահանորդ այնր մարմնոյ: Կեանք թագւորի են 'ի ձեռս այ. 'ի նմ պարտ էր ամաղեկացւոյն առնել զայն տապատան: Նա արար՝ որինչ կամք էին սաւուղայ. չարար՝ որ ինչ կամք էին այ: Բայց դուցէ թէ այն եղև սնապարծութեան ինչ ամաղեկացւոյ:

Գ.Լ.

## ԳԼ. ԺԴ.

### Թէ որ իցէ ճշմարիտ և կատարեալ սահման արդարութեան։

Ճարտարանք ոմանք սահմանեն այսպէս. Արդարութիւնն է խոտորիլ ՚ի չարէ, և առնել զբարի։ Բայց սոքա չփոխեն զգլխոյն առաքինութեանց ը̅ իւր ազախնայս։ Քանզի և ժուժկալն, հեզն, և առատաձեռնն առնեն զբարի, և խորշին ՚ի չարէ. զի զմէջն ունին զառաքինուն, և խորշին ՚ի ծայրից. բայց վ̅ այնր ոչ ժուժկալուն, ոչ հեզուն, և ոչ առատաձեռնութիւն են արդարութիւն։

Արիստիդէս Ճարտարն յարդարութեն, որ էառ յիւր վերայ զԱրդար մականուն, իբրև հարցաւ, թէ զինչ է արդարութն, ետ պատասխանի. ոչ յանձին ընդունիլ այլոց։ Քաջ գիտաց դա ՚ի գործ դնել զարդարութիւն, քան սահմանել զայն։ Արժանի էր կնոյ միայն իւրոյ անուան, թէ չէր արարեալ աւելի քան զիւրն սահման. որ սահման կարեալ զարդարութիւնն ընդ մէջ չատանայր թերևս վ̅ նորա, այլ ոչ վասն այլոց։

Լրագոյն ևս է սահմանն Իրաւագիտաց, թէ արդարութիւնն է հաստատուն և մշտնջենաւոր կամք տալոյ ամենեցուն, զոր պարտն է։ Բայց և այդ է առաւել գաւեհկական, քան գիտնական. զի ՚ի տեղի սեռի դնէ զենթակայն, և թէպէտ էակն է ճշմարիտ, բայց պարագայքն են աւելորդք. զի և արիւնն և այլ բարոյական առաքինութիւնք պահանջեն զհաստատուն և զմշտնջենաւոր կամս ՚ի գործ դնելոյ զնոսա։

Առաւել ևս արամաբանօրէն և ևս ընդարձակ սահմանեցաւ յայն նախնի փիլիսոփայից, որք ՚ի սկզբան անդ ասացաք. Արդարութիւնն է առաքինութիւն, որով մարդ լինի պատրաստական տալոյ զիրաւունս, և խնդրելոյ առնել զնոսա։

Միայն թէ՛ սոքա դնէին յայտնի զսեռն, ի՛ թէ արդարութիւն է ունակութի. բայց թողուին անյայտ զտարբերութիւն, մնալով ՚ի մթան թէ որ

իցէն

իցեն արդար իրք, ապա եւ՝ թէ զինչ իցէ արդարութիւն. մինչ այնուհետև չերևիլ սահման, այլ՝ վայրաբանութիւն:

Ապա արխատածել 'ի վերայ այսց նախանկար գծագրութեանց աշխատասիրեալ, և [illegible] օրէնաւն՝ որ ը իւրև փակէ զնոյն առաքինութիւն, որոշեալ 'ի [illegible], որ հայի 'ի հասարարութեան [illegible] և [illegible], ճշգրտիւ նկարէ զրուն և զկատարեալ պատկեր արդարութեան սահմանաւս 'ի բանից նոր քաղեցելով: Արդարութիւնն է առաքինութիւն ինչ, [illegible]: Յորում սահմանի արտայայտեալ տեսանես բովանդակ զէութեան արդարութեան. օրէնականի և մասնաւորի. և զատարբերութիւնն յիւրոց ծայրից, և յայլոց բարոյական առաքինութեանց: Ասաց նա նախ առաջին, թէ արդարութիւն է առաքինութիւն ինչ, կամ առաքինական ունակութիւն: Ո՛վ պարտ է քեզ առնուլ 'ի միտ, թէ ոչ [illegible] մարթ է իմանալ յերկուս նշանակութիւնս, ըստ կամ [illegible] արդարութեան, և կամ վասն [illegible] որ առնէ, նոյնպէս արդարութիւն մարթ է իմանալ կամ [illegible] և կամ ունակութիւն արդարութեան: Վասն զի իմացուցեալ մեզ [illegible], թէ արդարութիւն ըստ որում գործ՝ հայի 'ի բարիս այլոց՝ առ որս է կարգեալ. բայց ըստ որում ունակութիւն, առնէ բարոյապէս բարի զանձն նորա. յայս միտ խօսի նա աստանօր, ուսուցիչ լեալ բարեաց բարուց. և այս է հասարակ [illegible] նմ բարոյական առաքինութեանց. որովհետև բնաւքն են ունակութիւնք [illegible] առ առաքինական գործս [illegible]:

Այժմու զոր ասէ, թէ յօժարեցուցանէ [illegible], նշանակէ մեզ [illegible], յորում զանեղի առնու արդարութիւնն. զի թէպէտ նմ առաքինութիւք ըհանրապէս ընթացակցին առ [illegible], բայց արդարութիւնն մասնաւորապէս ունի ենթակայ [illegible]. և ոչ զկիրս՝ իբրև զայլ առաքինութիւնս, որ ասացան: Ուստի իրաւագէտն կոչեաց զարդարու-

բութեն, հաստատուն և մշտնջենաւոր կամք. առել զեն-
թակայն փոխանակ ունակութեան, որ և ասացաւ:
Եւ վասն զի կամքն ոչ գործէ ուղիղ՝ առանց ուղ-
ղութեան գործնական դատման որ է խոհեմութիւն,
՚ի վերայ բերէ, ուղիղ դատողութեամբ, զի ՚ի մէջ այլ-
ոց առաքինութեանց՝ սա մասնաւորապէս պահանջէ
զմտադիր ինչ դատաստան, ՚ի ճանաչել զարդա-
րութիւն միջոյն, յորմէ և դատաւորք առին զանուն:
Խորհրդով ՚ի վերայ բերէ անդանօր և զայն համրա-
կան եզերս, որք երևին նոյնանշանք ընդ արդարու-
թեան. յաւելն, թէ այս ունակութիւն յօժարեցուցանէ
առ ամենայն արդար իրս. նշանակել կամեցեալ զգործականն
արդարութեան, որ հրամայէ բազմաց առաքինութեանց,
որք առանց օրինաց լինէին միայն ընտրելի. բայց
օրինօք փոխին յարդարութիւն:

Աւարտէ յայն, թէ հայի նա ՚ի համեմատութիւն և
՚ի հաւասարութիւն ՚ի բաշխս և ՚ի փոխարինութիւնս. որ է
սեպհական տարբերութիւն մասնաւոր արդարութեան
յայլ ամենայն առաքինութեանց, որպէս լուար: Բայց
բաց յայսմանէ՝ եզերօքս համեմատութեան և հաւասարութեան
որք նշանակեն զհամեմատութիւն երկրաչափական ՚ի
բաշխականս. և թուաբանականն ՚ի փոխարինականս,
արտայայտէ մեզ խոր ինչ գաղտնիս. զի թէ որք
իցեն ծայրք արդարութեան, և քանի տարբերք իցեն
՚ի ծայրից այլոց առաքինութեանց. որպէս լուի-
ցես արդ:

Սոյն իմն է, թէ իւրաքանչիւր առաքինութիւն է
միջասահման ինչ եդեալ ՚ի միջի ընդ յաւելս և ընդ
նուազ, որք են նորա ծայրք, զի առաւելութիւն, և
նուազութիւն: Այսպէս արիութիւնն է միջասահ-
ման ինչ ընդ մէջ կարի իմն երկիւղի, և կարի իմն
աներկիւղութեան: Առատաձեռնութիւնն ընդ մէջ կա-
րի իմն առաւելութեան և կարի իմն նուազութեան ՚ի
տալն: Բայց ծայրքն յաւելուածն կամ նուազն այլոց ա-
ռաքինութեանց են երկու չարութիւնք յառաջ եկեալք
յերկուց մոլեկան ունակութեանց, որք չեն համա-
կիր ընդ միմեանս, և դժուարին է որոշել զնոյն յա-
ռաքինութենէն որ ՚ի մէջն: Եւ վասն այսորիկ այլև-
այլ անուանակոչութիւն է նոցա: Ծայրք արդարութեան են

յանդուգ-

յանդգնութիւն, 'ի կարի իմն աներկիւղութեան, և վեհերոտութիւն' 'ի կարի իմն երկիւղի։ Նոյն ծայրք առատաձեռնութեան են շռայլութիւն, 'ի տալ կարի իմն աւելի. և ագահութիւն, 'ի տալ կարի իմն նուազ. մինչ զի ծայր ընդ ծայրի են անհամաձայնք։

Բայց զայլին հակառակն, միջասահմանութիւն արդարութեան կայ 'ի մէջ երկուց եղերաց անդչակցաց, միանգամայն և համակրաց, յառաջ եկելոց 'ի մի և նոյն մոլութե. որ է յափշտակութիւն։ Զի եթէ մատծի ինչ ոք զառաւոր, անարդարութիւն լինի 'ի տալ միումն յաւելի և միւսումն նուազ քան զպարտն։ Իսկ եթէ մատծի ոք մասնաւոր ինչ, անարդարութիւն լինի յառնուլ վն իւր աւելի քան զպարտն, և 'ի տալ այլոց նուազ քան զպարտն։

Մինչ զի՝ ոչ այլ ինչ է արդարութիւն, բայց հաւասարութիւն. և ծայրքն են երկու անարդարութիւնք կամ անհաւասարութիւնք. մին 'ի յաւելն, և միւսն 'ի նուազն։ Մին ներգործական և կամաւոր. միւսն ակամայ և կրաւոր։ Սակայն ոչ երկարանչիւր ծայրք ունին մի և նոյն անուն, որ անհաւասարութիւն կամ անարդարութիւն, նոյնպէս սովոր եմք ասել, թէ առաքինութիւնն արդարութեան ունի մի միայն ծայր, և այլք երկուս։

Յայսմանէ ունիս ճանաչել, թէ որ իցէ անարդարութիւն քաղաքային, և ձեւային. զի եթէ անարդարութիւնն չէ կամաւոր, լինի անարդարութիւն նիւթային և քաղաքական. իսկ եթէ կամաւոր է ներգործական, լինի անարդարութիւն ձեւային, և խղճական անիրաւութիւն։

## ԳԼ. ԺԷ.

### Յաղագս անարդարութեան։ Եւ բաղդատութիւն արդարոյ ընդ անարդարոյ։

'Ի սահմանէ արդարութեան, որ նախագրեալ կանոնի ներհականաց, մարթիս ճանաչել, որ իցէ սահման անարդարութեան, որ է. Անարդարութիւնն է սովորութիւն հոգւոյն, որով յօժարի մարդ առնել կամս, որ ինչ է անարդար, ու գործել 'ի բանիս և 'ի գործս.

փոխարինութեան ընծայատուութեան և ընդունողութեան:
Բայց քանզի գերիմաստ որն օգտաւէտս համառօտեաց զանձման արխատտելի, այսպիսի իմն օրինակաւ, որում զհետ չոգան և ածարանք, թէ արդարութիւն է առաքինութիւն ինչ, որ զայս ինքնահանդերձ ընդ արժանն. մինչ է և մեզ առել, թէ անարդարութիւն է մոլութիւն, որ չյայս ինքնահանդերձ ընդ արժանն: Եւ այս սակաւ բանք բաւական են 'ի նկարել ճշգրիտ բաղդատութեամբ զպատկերս առն արդարոյ և անարդարոյ:
Ոչ զի արդարն առաջնորդեալ յառաքինական ունակութենէ առ որ ինչ արդար՝ մեծապէս խնդայ ընդ առնելութիւն: Եւ անարդարն վարեալ 'ի մոլեկան ունակութենէ առ որ ինչ անարդար, մեծապէս խնդայ ընդ անիրաւութիւն: Վասն զի եթէ բնաւոր յօժարութիւն հեշտ և քաղցր առնէ զգործն, ապա և ունակութիւն՝ որ է երկրորդ բնութիւն:
Որպէս սովորական արդարութիւն, արդարն ունելով զօրէնս ոչ իւր կամք, առեալ ընդհանրապէս զամ մոլութիւնս. իսկ անարդարն՝ ունելով զիւր կամս միայն ոչ օրէնք, առեալ ընդհանրապէս զամ առաքինութիւնս: Զի որովհետև ամ առաքինութիւնք են հրամայեալք յօրինաց, որ միանգամ վարէ 'ի սրտէ իւրմէ զօրէնս, գունն բանայ ամենայն մոլութեանց:
Իսկ զինչ 'ի մասնական յետոյ: Արդարն 'ի բաշխս ունի չափ հաւասարման զարժանաւորութեան անձանց. իսկ անարդարն ունի չափ արժանաւորութեան զիւրն նպաստ. և մինչ նա վերադասէ զառաքինիս քան զհզօրս, սա վերադասէ զմոլիս քան զառաքինիս. զի մոլին 'ի վարձահատոյց լինել մոլեաց՝ վարձահատոյց լինի անձին:
'Ի փոխարինական ստացուածս, արդարն վերադասեալ զիրաւացին քան զօգուտն, եթէ գնեսցէ, և եթէ վաճառեսցէ, ոչինչ կամի ունել աւելի քան զարժանն: Անարդարն վերադասեալ զօգուտն քան զիրաւացին, թէ վաճառէ՝ խաբէ. և թէ գնէ, գողանայ. մինչ զի Ը շահաւորին ամ սակարկուն աւարտի 'ի վէճ:

Տուր յաւանդ ոսկի և արծաթ յերկոցուն ձեռս. 'ի ձեռս արդարոյն իբրև յաւանդատեղի մը՝ այնչափ գտցես, որչափ ետուր յաւանդ. 'ի ձեռաց անարդարոյն իբրև յախերոնեան գբոյ անհնար է թէ հանցես արտաքս՝ զոր արկերն 'ի նա (247)։

Յանձն արա երկոցուն պաշտօն ծառայելոյ առանձնաւոր ինչ դատաստանի, այն քանոն 'ի ձեռին արդարոյ լիցի կանոն պողիկլետեան, որ ոչ 'ի սիրոյ և ոչ յերկիւղէ թեքթեքի. 'ի ձեռին անարդարոյ է կանոն լեսբեան, որ թեքի՝ յոր կողմն իւր կամք իցեն։

Յանձն արա երկոցուն պէտս արտաքին իշխանութեան։ 'ի կշիռ արդարոյն՝ յանցանք աղքատաց և մեծատանց են հաւասարք. 'ի կշիռ անարդարոյն՝ յանցանք փոքունց են մեծամեծք, և յանցանք մեծամեծաց են փոքունք. զի նդ ոչինչ, և ոդ զամ թողացուցանէ, և տուողին տայ տեղի (248)։

Եթէ կարի իմն նորոգ կամ մեծին են օրէնք, արդարն առնէ օրէնս զինաւոր ուղղութեան. և բերանովն նորա ննջեցելոյ օրէնսգիրն յայտնէ կամ մեղմէ զիւր օրէնս։ Անարդարն՝ կամ կարի իմն խնայութեամբ և կամ կարի իմն խստութեամբ, թարգման առնէ օրինաց զիւր կիրս։ Ուստի օրէնք առ իւր սիրելիս են ուռկանք սարդի. առ ատելիս՝ են ադամանդեայ ցանցք հեփեստեայ (249)։

Ո՛չ լաւ ևս ինչ ուղղութեան պահէ 'ի դատաւորական իշխանութեան քան 'ի քաղաքականս։ Վարի դա ընդ իւր ծնակից իբրև ընդ հարճ, ընդ որդիս իբրև ընդ ծառայս, և ընդ ծառայս իբրև ընդ անասունս։ Արդարն գնայ ընդ ծառայս գթութեամբ, ընդ որդիս սիրով, ընդ կին իւր հաւատարմութեամբ, և ընդ ամենեսին մարդասիրութեամբ. զի սա զսիրօղս իւր փոխարէն սիրէ. և նա ոչ կարէ սիրել, բայց միայն զանձն։

Այս ամենայն իսկ՝ արդարն վարէ զառաջնորդութիւն միանձնական, ըստ միապետական իմն առաջնորդութեան, հնազանդեցուցելոյ զկիրս կամաց, և զկամս բանին. այլ անարդարն վեր 'ի վայր շրջէ զառաջնորդութեան ամենայն, որպէս և զհասարակացն հնա-

հնազանդեցուցեալ զբանն կրից, և զկիրս՝ արտաքնոց զգայութեանց :

Հուսկ ապա՝ նա 'ի տալ ամենեցուն զարժանն, ընծայէ քաղցրութիւն առ կրտսերս. հաւատարմութիւն առ հաւասարս. յարգութիւն առ մեծամեծս. հնազանդութիւն առ իշխանս. երկիւղածութիւն առ Ած : Սա չունի՝ ոչ քաղցրութիւն, ոչ հաւատարմութիւն, ոչ յարգ. և ոչ երկիւղածութիւն. զի անուղիղ միտս ունելով, և ամբոխեալ, չփոխէ զԱծ իրաւունս. զԱծային, զմարդկային, զքաղաքական, զազգային, և զբնութէ :

Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ԺԷ. ԵՐՐՈՐԴ.

## ՅԱՂԱԳՍ ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ, Ե ԽՈՐՈՑ ԾԱՅՐԻՑ։

## ԳԼ. Ա.

### ՅԱՂԱԳՍ ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ։

Ոչինչ 'ի բարոյական դպրոցի առաւ լաւոր ատեայ յիշատակեալ, որ զանունդ՝ ՈՂՋՈՅՆ ԲԱՆ. և յիրաւի. զի յայս հաստատեալ կայ մեծ առաքինութեան. զոմանց կախեալ կայ ամ իմաստութեան ընտրութիւն. առաւել որոշեն արարք մարդկան յարարից անասնոց. և առանց սորա մարդն է խլուրդ։

Իսկ զինչ իցէ ուղիղ բան, բայց ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ, որ թէ ուղիղ է պատշաճեալ, իբր կարականիւ չափէ զգիտութիւն ը ուղղութեան, և զմիջոցս ընդ գիտման։ Որ մեծամասնէ մայր է ամ մուղայից (250), նոյնպէս խոհեմութեան մայր է ամ առաքինութեանց։ Զի ճանաչումն յառաջէ քան զուղղագործութիւն։ Արդ քանզի այս մեծ առաքինութիւն այնչափ առաւել ազնուագոյն է քան զայլս, որչափ առաւել ազնուական է միտք՝ քան զայլ ամ կարողութիւն հոգւոյ, վասն խոհեմութիւնն արժանաւոր է առաւել 'ի համար դասիլ առաքինութեանց իմացականաց քան բարոյականաց. և հարկ է խնդրել 'ի բարձրագոյն և ազգահամարէ գիտութեան հոգւոյ զնորայն ծնունդ։

Բայց պարտ է քեզ յուշ առնել, զոր վաղու ևս առայցաք յառաջին գիրս, թէ երկու են ՄԱՍՈՒՆՔ հոգւոյ, մին ԱՆԲԱՆԱԿԱՆ՝ հասարակ անասնոց. և միւսն ԲԱՆԱԿԱՆ՝ սեպհական մարդոյ. և թէ՝ եր-

կա-

կաքանչիւր մասն ունի կրկին յարաբերութիւն, մին մա_
նաւորական, և միւսն բաղդատական. զի ամ կենդանի
բաղձայ իւրում բարւոյ. և ոչ ոք բաղձայ այնմ,
զոր ոչ ճանաչէ։ Նոյնպէս, թէ յանբանական մա_
սին՝ ճանաչողական է երևակայութիւն, բաղձողական
է բաղդատական ախորժական։ Իսկ 'ի բանական մասին,
ճանաչողական է միտքն, և բաղձողական՝ է կամքն։
Մինչև երևակայութիւն լինել իբրև միտք ինչ նիւ_
թական. և մտացն՝ երևակայութիւն ինչ հոգեկան.
բաղձանացն լինել իբրև կամք ինչ նիւթական, և
կամացն՝ բաղձանք ինչ հոգեկան։ Հաւակ ապա,
թէ առարկայ մտաց է ճշմարիտն, և առարկայ
կամաց է բարին, բայց յոլովակի մտաց ըմբռնել
զառերևոյթն որ̄ ճշմարիտ, խաբէ զկամս. և կա_
մաց ըմբռնելով զսուտ բարին որպէս իրօք բարի,
խաբէ զմարդ. և այնպէս եթէ կամք և եթէ միտք
յոլովակի 'ի բաղձանաց և յերևակայութենէ խաբին
և խաբեն։

Արդ զորօրինակ առարկայից մտաց՝ ոմանք են
ընդհանուրք, հարկաւորք և անայլայլելիք, որպէս
էութիւնք իրաց, և ոմանք մասնաւորք, ներընդունա_
կանք, և այլայլելիք, որ̄ այս մարդ, այս ծառ,
այս քար, սոյնպէս 'ի ճանաչել զառարկայս այլև_
այլ սեռի պահանջին այլ և այլ կարողութիւնք։
Մինչև զիմացական կարողութիւն՝ որ ճանաչէ զընդ_
հանուր առարկայս, կոչել արիստոտէլի միտ ընդ_
հանուր, և զայն՝ որ ճանաչէ զառարկայս մասնա_
ւորս, միտ մասնաւոր։ Նոյնպէս՝ եթէ զգործնական
առարկայսն զկայ առնու միտն 'ի ճանաչումն
հայեցողական կամ վերացեալ ինչ ճշմարտութեան,
կոչի միտ հայեցողական կամ տեսական։ Բայց եթէ
ուղղէ նա զճանաչումն առ վախճան ինչ առնելի,
և 'ի գործ դնելի, կոչի միտ գործնական։

Այս է ազգահամար կարողութեանց հոգւոյ. յոր_
մէ մարթ է քեզ քոյին հանճարով տրամաբանել
Ընդհանրապէս, թէ ամնակուն խոհեմութեան բնակէ
մտաց գործնական յարաբերութեան, զի կարգադրել, խորհուրդ_
տալ, ուղղել, և պատճառս յառաջ բերել. են
գործք յանկաւորք յառաջատես մտաց, և ոչ կամ_
կա.

կամաց. թող թէ անբանական կրից, կամ խաբէ_բայ բաղձանաց: Նաեւ, թէ խոհեմութիւն ոչ զանե_ղի ունի յընդհանուր եւ 'ի հայեցողական միտս. այլ 'ի գործնական եւ 'ի ճարտարար միտս. զի ունի իւր ա_ռարկայ զառնելի եւ զներընդունական իրս, եւ վախճան՝ զբարոյական իրս եւ զառաքինականս. որպէս յիւրում տեղւոջ լուեյես:

Մնայ միայն առ այժմ գիտել, թէ զո՞ր տեղի ու_նիցի խոհեմութիւն 'ի մէջ իմացական առաքինու_թեանց. եւ իւ տարբերեսցի յայլոց իւրոց քերց:

## ԳԼ. Բ:

## ՅԱՂԱԳՍ ԻՄԱՑԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ:

Ասպաքէն լուար, թէ ունակութիւնք են կատա_րելութիւնք կարողութեանց հոգւոյ: Իւրաքանչիւ_րում կարողութեան՝ բնութիւն, որ ոչինչ գործէ վայրապար, ետ տրամադրութիւն ինչ յօժարեցու_ցիչս առ առաքինութիւն. զորս մարթ է կոչել ա_ռաքինութիւն անկատարան. առ 'ի թողուլ մարդկային ճարտարմտութեան՝ տալ նմա կատարելութիւն եւ կեր_պարան:

Անդէն իսկ 'ի տիս մանկութեան ծանուցաւ եւ դա_շակեցաւ 'ի դրուասանէ անյեղլի ծանրութիւն կատո_նի. 'ի շիպիոնէ՝ քաղաքավար խոհեմութիւն մարիո_սի. 'ի պոմպէոսէ՝ արիական համարձակութիւն կա_միոսի, եւ 'ի սիղղայէ՝ անդուգական վեհանձնութիւն պոմպէոսի: Այն մեծամեծ առաքինութիւնք ստուե_րագրեալք 'ի փոքր տիս յընդարոյս բնաւորութէ, իբրեւ ընկալան յիւրեանց առաքինական ունակու_թէ լիով զկատարումն, յանձանց իւրեանց եւ ոչ 'ի բնութէ բարգաւաճեցին:

Այլ այնչափ տարբերութիւնք են ունակութեանց, որչափ են բնական կարողութիւնք 'ի նոցանէ կա_տարելագործեալք. եւ այնչափ տարբեր են 'ի մի_մեանց կարողութիւնք, որչափ տարբեր են նոցին առարկայք. զի ամ առնչացեալ առնու տեսակ յիւրմէ առնչակցէ: Նա յայսմանէ ճանաչել ու_նիս տիրապէս՝ զերկուս գերագոյն սեռս առա_

քի

քննական ունակութեանց : Զի որք կատարելագործեն զկարողութիւնս իմացականս, կոչին առաքինութիւնք իմացականք. և որք կատարելագործեն զկարողութիւնս բաղձողականս, կոչին առաքինութիւնք բարոյականք:

Այլ թողեալ 'ի մի կողմն զառաքինութիւնս բարոյականս, զորոց արդէն խօսեցաք, խօսեսցուք միայն զիմացականաց: Սոքա կամ կատարելագործեն զհայեցողական և զընդհանուր միտս, և կամ կատարելագործեն զգործնական և զմասնաւոր միտս: Եւ աստ քեզ երկու գերագոյն սեռք իմացական առաքինութեանց, որ է առաքինութիւնք հայեցողականք, և առաքինութիւնք գործնականք:

Արդ՝ հայեցողական առաքինութիւնք թէ կատարելագործեն զմիտս 'ի ճանաչումն առաջնոց սկզբանց հանրականաց, ծագի ազնուականն այն առաքինութիւն, կոչեցեալ տեսութիւն, ունակութիւն սկզբանց. (այն է որ յոյլոց հանճար կոչի): Բայց եթէ կատարելագործեն զմիտս 'ի հայեցողական եզրակացութիւնս, որք յայնց սկզբանց հաւաքին, ծագի այն միւս ազնըուագոյն առաքինութիւն, որ 'ի փիլիսոփայից կոչի գիտութիւն: Սակայն թէ այս գիտութիւն ունի իւր առարկայ զբնական իրս և զաստուածայինն, կոչի իմաստութիւն, և գերապանծ գլխոյ առաքինութեանց:

Ունակութիւնք գործնականք թէ կատարելագործեն զգործնական միտս 'ի կարգի առ արտաքին գործածոյ, ծնանի արուեստն: Բայց թէ կատարելագործեն զնա 'ի կարգի առ բարոյական ներգործութիւնս, ծնանի խոհեմութիւն. զորմէ է աստանօր խնդիր:

Սոքա են ունակութիւնք կատարեալք, և առաքինութիւնք իմացականք, բայց մնան մեզ դեռ երկու ունակութիւնք անկատարք. մին 'ի հայեցողական միտս. և միւսն 'ի գործնական միտս: Նա խօսի կարծ 'ի կարծ 'ի վերայ ընդհանուր իրաց. և է կարծիք: Սա խօսի կարծ 'ի կարծ 'ի վերայ մասնաւոր իրաց, և է խոկած: Բայց քանզի ճանաչումն հիմնեալ 'ի կարծ՝ է առաւել պատիր քան ճշգրիտ. վասն այսորիկ այս երկու ունակութիւնք՝ չեն կատարեալ առաքինութիւնք, այլ ընդմանեայ առաքինութիւնք. Ի օրինակի

այնց

*այնց կիսակենդան կառաբուսից, որք են տեսակ ինչ միջակային 'ի մէջ տնկոց և կենդանեաց, թերազգացք քան զկենդանիս, և առաւելեալք քան զտունկս, որպէս սպունգք.*

*Արդ՝ որպէս այլուր եդաք քոյ առաջի աչաց՝ զծառ ծիւղագրութեն ամ բարոյական առաքինութեց 'ի մի էջ. կամ է ինձ առնել նոյնպէս զծիւղագրութին իմացական առաքինութեց, մինչև ձեռնարկեալ է իմ խօսել զիւրաքանչիւրոյն մի ըստ միոջէ:*

*Իմացական առաքինութիւնք հայեցողականք:*

Եթէ կատարելագործէն զմտօ [illegible] [illegible] [illegible],

*Ունակութիւն մտաց:*

Եթէ կատարելագործէն [illegible] [illegible],

*Գիտութիւն:*

Եթէ [illegible] ինչ և [illegible] [illegible],

*Իմաստութիւն:*

*Իմացական առաքինութիւնք գործնականք.*

Եթէ կատարելագործէն զգործնական մտօ [illegible],

*Արուեստ:*

Եթէ կատարելագործէն [illegible] [illegible] [illegible],

*Խոհեմութիւն:*

[illegible] [illegible] 'ի հայեցողական մտօ,

*Կարծիք:*

[illegible] [illegible] 'ի գործնական մտօ,

*Կասկած:*

## Գլ. Գ.

### Ցուցակ ուղղութեան մտաց, կամ ակնոցաց։

Միտ մարդկային ստուգաբանեցաւ յիմաստասիրաց՝ որպէս թէ ակն. զի վերծանէ զիրս 'ի ներքս յինքեան (251)։

Կրկին վերծանէ զիրս արտաքոյ իւր. զի շարժի ի իրաց ինչ, հայեցեալ յառարկայս արտաքինս. որոց ըղձանայ. մինչ զի ոչ թէ գիտէ զնա. այլ հետամուտ է նոցա։ Բայց միտքն հայեցողական է մտքեան ինչ հոգևոր, իւր ինքեան վերծանող. զի գլխովին ամփոփեալ յինքեան, նկատէ զգեղեցիկ իրս՝ զոր ունի 'ի ներքս յինքեան. ըստ օրինակի սիրամարգի, վայելէ 'ի զրոս գեղեցկութեանց՝ զոր զիւրև ունի, լեալ իւր ինքեան գիտող և գիտարան։

Բայց գեղեցկագոյն նկարք, զորս գիտէ նա 'ի պատկերատան իւրոց մտաց, են առաջին ակնոցք, և ընդհանուր առածք, որք ոչ ցուցանեն պատճառս, այլ նոքօք ցուցանէ զամենայն պատճառսն։ Չեն գիտութիւնք, այլ սկզբունք գիտութեանց։

'Ի սոցանէ ոմանք են առաւել հեռատեսք, որպէս սահմանք սեռից և տեսակաց։ Իսկ ոմանք առաւել մերձատեսք, և բնական լուսով ծանուցեալք. որպէս առքն. Բոլորն է մեծ քան զմասն։ Ամ դոցանէ յառաջագոյն է քան զկէտն։ Ցուրտ ոչինչ ինի։ Իսկ ոմանք են իւր մերձատեսք. և մին կոչին մանրք անհրաժեշտք, և ճշմարտութիւնք անջրպետք ամ ողջամտի. որպիսի են այսոքիկ. Ամենայն է իէ իծ իցէ և ոչ իցէ։ Ցերեկոյ հակառակն նախադասութեան՝ հարկ միայն է մտօրինք, և մին առոգ։ Այսոքիկ են բնական լոյս վառեալ յիմացական կարողութեան. առ 'ի կարող լինելոյ տրամաբանել 'ի վր իրաց գործնականաց և հայեցողականաց, օգնութբ ունակութեանց։

Ուր ոք խօսեցաւ զգիտութեանց այնպէս անմտաբար, որպէս փիլիսոփայն անուանեալ ծծային. այն է

պղա.

պղատոն: Կարծեաց սա, թէ գերագոյն արարիչն յետ ստեղծանելոյ զամ ոգիս միանգամայն՝ յամենայնն եհեղ զամենայն սկզբունս ընդհանուրս, և զամենայն գիտութիւս կատարելապէս: 'Ի մ̃ բերէ, թէ ապա յընկղմիլ ոգւոց 'ի մարմինս նիւթականս, և 'ի փոխաբերիլ նոցա հետ զհետէ 'ի մարմնոյ 'ի մարմին, կորուսանեն զյիշատակ գիտութեանց, զոր յառաջն ունէին. բայց առ իւրեանս պահելով զյիշատակ ընդհանուր սկզբանց: Մինչզի՝ ըստ սորա կարծեաց, մարդիկ 'ի հասու լինել գիտութեանց, ոչ հասու լինին այնմ՝ զոր ոչ գիտէին. այլ՝ վերստին յիշատակեն զայն ինչ զոր մոռացեալ էին, անմոռաց ունելով զընդհանուր սկզբունս:

Ո՞ երբէք լուաւ բան՝ քան զայս անբան, և քան զայս անմիտ իմաստասիրութի: Եթէ ած հեղոյր յոգիս զգիտութիս կատարեալս, զինչ պիտէին սկզբունք նոյ տարատրոհք: Իսկ թէ անդնդախոր լիճ մարմնոյ ոչ մոռացոյց նոյ զսկզբունս, զիարդ ընկլոյզ զգիտութիս զնոյին լծորդս: Զինչ է գիտութի, բայց իմացական ինչ կապակցութի եզրակացութեանց ընդ իւրեանց սկզբունս: Իսկ թէ ածային ձեռամբ գիտութին ընդ իւրոց սկզբանց գրեցաւ 'ի հոգի անմահական, հարկ էր նոյ կամ 'ի միասին յարանալ, կամ 'ի միասին 'ի մոռացօնս լինել:

Այպա այն է Հշմարիտ, թէ միտն 'ի սկզբանէ է [illegible] ոչ յղեալ ինչ տախտակ, բնաւորեալ առ ընդունիլ [illegible] առարկայից, ոչ նիւթն առաջին զանազանս. և ապա յօգել զնոսա ընդ միմեանս և կազմել զհասկացուածս. և հաւաք ապա 'ի նախադասութեանց անտի հանել եզրակացութիւնս, որ է յետին Հիգն մտաց: Այպա ոչ այլ ինչ են սկզբունք զորոց խօսիմք, բայց եթէ նախադասութիւնք ընդհանուրք, [illegible]

[illegible]:

Իսկ վասն միտքն 'ի հայիլ յիւր սկզբունս՝ մեծապէ զուարճանայ. վս զի ունելով [illegible] իւր սեպհական առարկայ, ոչ տեսանէ ինչ Հշմարտագոյն

քան

քան զայն հանրական առածս. իբրգի գիտութիւն ը այնմ է ճշմարիտ, ը որում ճշմարիտ է սկիզբն՝ ուստի իջանէ նա անմարթ գոլով առաւել լինել յստակագոյն քան զիւր աղբիւրն։

Եւ թէպէտ ը՟հանուր սկզբունք, ը թուչնոց ան-տառին արգաւենայ (252), բերեն ընդ իւրեանս լոյս, որով լուսաւորին 'ի խաւարի, ա՟յ է՝ զընդ-աւոր և զանշուշտ ճշմարտութի նոցին իսկ եղերաց, յոր բնաւորալ՝ բայց անկատար միան կարողու-թեն։ Սակայն և այնպէս, առ 'ի կարող լինելոյ մտաց կազմակերպել առնել հաստատուն ինչ գա-ղափն, և շրջշրջիկ գիտութեամբ վարել զայն 'ի պէտս, հարկ է նմա ունակութի ինչ երկնեալ 'ի փորձոյ. և այն է ամենակալութիւն նորա, զորմէ խօսիմք։ Այս ճշմարտութիւն գիտութեան ճանաչի պա̄ճառաբանու-թբ. բայց ճշմարտութիւն ամենեցունց ոչ ճանաչի պատճառ-աբանութբ, այլ միայն փորձառական մակածու-թբ յանհատական իրաց, զոր նկատէ միտն յին-քեան։ Մինչ զի՝ սկիզբն առնէ մարդ ունանիլ զնոսա, յորժամ սկիզբն առնէ կեալ. և յանկ հա-նէ զուսումն նց, յորժամ կերպարանէ զամենակալութիւն ամենեցունց։ Եւ ոչ կարէ մոռանալ զնոսա, մինչգեռ կացմ են միաք։ Այլ 'ի խանգարիլ նորա հիւան-դութբ կամ մոռթափութբ՝ մարթի 'ի վը̄ հասա-նել թիւր ըմբռնումն. մինչև մոռանալ զիւր իսկ անուն, զորօրինակ պատահեալ որբիլիոսի առն քաջիմաստի, որպէս պատմեն։

Ամ ոք՝ որ ունի միտս. առնել համարի հակառա-կիլ սկզբանս, բոլորն է մեծ քան զմասն. զի շատ է ունել աչս 'ի ճանաչել, թէ բովանդակ մարմինն մեծ է քան զգլուխ։ Բայց որ ունի զունակութի մտաց, կերպարանեալ ունի զլինելի իմացումն նախադասութեան զգալի ամբողջութեան բազմաց ան-հատից այլ և այլ սեռի. այս 'ի թուաբանական բոլո-րէ, յերկրաչափական բոլորէ, 'ի մեքենական բոլո-րէ, 'ի բնական բոլորէ, 'ի բարոյական բոլորէ, 'ի քաղաքական բոլորէ, և 'ի բաղադրեալ բոլորէ՝ որ մեծ է քան զբաղադրիչն։

Եւ այդ ունակութի բազում օգնէ մտաց 'ի մա-

կա-

կարերել զՏԻՓՈՆԱԿԱՆ ՀԷՓՆՈՒԹԻՒՆՍ, մերձեցուցեալ զայն սկիզբն յայլեայլ ենթակայս. զոր օրինակ, նուագ բոլորաձայն է ներդաշնակագոյն քան զըս-տեղաձայն (որ քան զկիսաձայն). զի ԲՈԼՈՐՆ Է ՄԵԾ ՔԱՆ ԶՄԱՍՆ: Թէ արժան է կորուսանել զմի ակն՝ 'ի պահել զկեանս. զի ԲՈԼՈՐՆ Է ՄԵԾ ՔԱՆ ԶՄԱՍՆ: Թէ պարտ է քաղաքացւոյն դնել զկեանս վն̃ իշխանին, զի իշխանն երևեցուցանէ զբովանդակ հասարակապետութիւն. և ԲՈԼՈՐՆ Է ԱՒԵԼԻ ՔԱՆ ԶՄԱՍՆ: Թէ օրինական արդարութիւն է առաքինութիւն մեծ քան զարիութիւն. զի նա բովանդակէ զամ̃ առաքինութիւնս, և սա զմի միայն. և ԲՈԼՈՐՆ Է ՄԵԾ ՔԱՆ ԶՄԱՍՆ:

Բայց առաւել ևս պիտանի է ունակութիւն սկըզբանց 'ի ՀԻՄՆԱՒՈՐՈՒԹԻ. զի թէպէտ զսկզբունս ոչ է հնար ապացուցանել, բայց և այնպէս հնար է պաշտպանել: Չիք ճշմարտութիւն յաշխարհի, որում չեղև դիմամարտութիւն, կամ տգիտութիւն, և կամ չարութիւն:

Զինչ սկիզբն կայցէ ընդհանրագոյն և յայտնագոյն քան զայն, թէ ՉԵՐԿՈՒՑ ՀԱԿԱՌԱԿԱՑ ՀԱՐԿ Է ՄԻՈՅՆ ԼԻՆԵԼ ՃՇՄԱՐԻՏ, Ն ՄԻՒՍՈՅՆ ՍՈՒՏ անհնար գոլով թէ իմն համանգամայն իցէ և չիցէ: Այս այն սկիզբն է, որ յանկ հանէ զամ̃ վիճաբանութիւնս. և խեղդ 'ի պարանոց արկանէ ըմբռստացելոց: Սակայն և այնպէս ճշմարտութիւն պայծառ քան զլոյս միջօրէի՝ եգիտ երկուս չղջիկունս, որոց թուեցաւ մթին քան զմէջ գիշերի.

Անաքսագորաս ոչ բաւեալ լուծանել զհաւաքաբանութիւն ինչ խաբէական, և պրոտագորաս 'ի պատրանել զայլս իւրովք խաբեպատիր ձեռնարկութք. հակառակ կացին ճշմարտութեան, իբր ախտանեանք ընդդէմ արևու (253): Պնդէին՝ թէ արեգակն է ԼՈՅՍԱՒՈՐ, Ն ՈՉ ԼՈՅՍԱՒՈՐ. հուրն է ՋԵՐՄ, Ն ՈՉ ՋԵՐՄ. գետն միանգամայն ՀՈՍԷ Ն ՉՀՈՍԷ: Բացասէին զիմ, զոր դու ստորասես. ստորասէին զիմ, զոր դու բացասես: Այոն և ոչն առ նոսա էր նոյն:

Եւ զիարդ հնար էր ըմբերանել զնս̃, որք արհամար-

մարտէին զնամ զէնս, որովք հնար էր յաղթել նմա։
Եթէ ուրկան թակարթելոյ զյամառս յիմաստա-
սիրական միջամտեան՝ է միայն հարկադրել զնոսա
հակառակաբանել անձանց, որ արխատէսս կարող
էր կապել զայն պրոտէոսս (254), որք 'ի ստորա-
սել և 'ի բացասել զմի, երկոքումբ և եթ բա-
ռիւք այո՝ և ոչ, լուծանէին ը ձեռնածուաց զնամ
զկնճիռս։

Այս երկաքանչիւրոցն աղաւաղեալ առաջնութեան
սկզբանց, ունէին միտս այնպէս անբոյժս 'ի վաստ-
ակից, մինչև արիստոտէլ խոկ, որ 'ի զարմն էր
ասկղեպիոսի բժշկապետի, որպէս հաստատեն վի-
պագիրք վարուց նր, զոր կորոյս 'ի պատճառս
նոցա՝ զժամանակ, և զգեղս, որ 'ի մեթաֆիզի-
գական գիրս։ Սակայն նա ինքն խոստովան լինի,
թէ առաւել անբուժելի գտաւ պրոտագորաս քան
զանաքսագորաս. զի սորա ախտաւորութին էր 'ի
միտս, այլ նորայն էր 'ի կամս։ Անաքսագորաս
սխալէր 'ի ագիտութէ. պրոտագորաս յամառէր
'ի չարութէ, որպէս առնեն արդի յամառ հերե-
տիկոսք։

Վնզ որ մեղանչէ ագիտութբ, յերկարեալ դիմա-
խօսել անձին, հնար է թէ զգաստասցի։ Բայց
հետամուտ լինել բժշկութե, այնմ՝ որ ոչն կամի
բժշկիլ. է զրաջան ընդ բիրտն մտանել, իբր հե-
րակլէս ընդդէմ խեցգետնի։

'Ի վր բերէ արիստոտէլ. թէ ըղեմ ժխտողի ա-
ռաջնոյ սկզբանց, թէ ժխտէ անգիտութբ, պարտ
է վիճել արամաբանութբ. թէ ժխտէ յիմարու-
թբ, պարտ է դեղ մատուցանել զեղբորոս, (այն
է խօսք հրապէ. և փաձէ". դրոյնակ օրէն). իսկ եթէ
ժխտէ 'ի չարուէ, պարտ է վիճել ը այնպիսւոյն
գաւազանաւ։

Այսուհետև մարթիս իմանալ վերջին ծայրս այսր
ստուգինութն։ Զի են միտք, յորս ոչինչ ստու-
գութի է սկզբանց. և այս կոչի գիտութիւն բացա-
սութեան։ Եւ են՝ յորս տարրացեալ են սկզբունք ա-
մենայն սուտք, համարեալք որպէս ճշմարիտք. և
այս է գիտութիւն թիւր հրամատութեան։

## ԳԼ: Դ·

## ՅԱՂԱԳՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ:

Րտասիկ քեզ գեղեցիկն 'ի զգեստս, զոր զիւրև արկանիցէ իշխան (255): Ծիրանագոյն տառատոկք զօրագլխաց, ճոխաձեւ արկանելիք պատըրկաց, պարգեւական ըղբիկք յաղթականաց, փողփողեալ օթոցք թագաւորաց, ականակուռ քղամիդք ինքնակալաց, են ցնցոտի վերարկուք' առ արկանելեօք գիտնոց. Նոքա զգեցուցանեն զմարմին, և ընդ մարմնոյ փտին. սոքա զգեցուցանեն զոգի, և ընդ ոգւոյ կեն մնջու անմահական: Լիկինիոս կայսր կոչէր զԳԻՏՈՒԹԻՒՆ' թոյնս և ժանտախտս իշխանաց, և չէր ինչ զարմանք, զի զիւր անուն անգամ չգիտէր ստորագրել 'ի հրովարտակս: Աղարտէր զգրագիտութիւն, զի մի լուիցէ զիւրոյ անգրագիտութեան վատանունութիւն, սովորեալ առ անգիտութիւն, իբր միհրդատ առ թունաւորութիւն, արհամարհէր զգիտութիւն որ դեղթափն է ագիտութեան.

Առաւել ես իմաստուն գտաւ Վեսպասիանոս, որ բնաւորեալ 'ի գիտութիւս, բայց սնեալ 'ի զինաշարժութիւնս, թէպէտ և չեղև գիտուն, սակայն սիրէր զգիտունս. և հնարեցաւ ստանալ զգիտութիւն առանց ուսանելոյ: Ոչ փարթամ է, որ թէպէտ և չունիցի ոսկի 'ի ծոցի, ունի հանքս ոսկւոյ յիւրում վիճակի. նոյնպէս գրագէտ է, որ ունի առ իւր այրս գրագէտս.

Երանի էր Աղեքսանդրի, եթէ գիտէր վարել 'ի պէտս' զիւրն վիճակ: Ունէր նա 'ի տան հանքս գիտութեանց, և շրջէր 'ի խնդիր նորա այլուր: Կոչէր զբանաստեղծութիւնս Հոմերոսի' իւր պաշար. և միշտ ունէր զայն 'ի տուէ 'ի ծոցի, և 'ի գիշերի 'ի սնարից: Լաւ ես պաշար լինէին նմա մատեանք իւրոյ ուսուցչի (Արիստոտէլի). այլ միտ անմիտ արածէր 'ի բաջաղանս բանաստեղծից. և մնայր սուտաղեալ:

Այս ամե. մեծ եղև բարեբաստութիւն թագաւորաց.

բայց, որ ինքեանք իմաստութեան գոլով ը. իմաստութեանս կենցաղեցան. իբր պերիկլէս 'ի յունաստան, պղտղոմէոս յեգիպտոս, և օգոստոս 'ի հռոմ: Սոքա ուսուցեալ զոր գիտէինն, և ուսեալ զոր ոչն գիտէին, առաւելութիւն բազում տոկոսեօք զիւրեանց գիտութիւն. որովհետև չիք յաշխարհի տուրևառ առաւել շահեկան և բերկրական, քան տալ զիւրն առանց կորուսանելոյ, և ստանալ զօտարինն առանց գնոյ:

Ապա երկու ինչ նկատէ արիստոտէլ զունակութ գիտութեան, մի՝ թէ ո՞ր իցէ իւր մատերիայ. երկրորդ՝ թէ ո՞ր իցէ իւր ֆորման: Բայց քանզի առարկայք գիտութեանց այնպէս շփոթ են ընդ միմեանս, մինչև շփոթել և զունակութիւնս, կարծեմ չլինել քեզ տաղտկալի՝ լսել սուղ ինչ և որոշ բաժանարարութիւն, հետազօտեալ զայն 'ի բարձրագոյն սկզբնէ առարկայից նց, այսպէս:

Ապաքէն լուար, թէ գիտութեանց ոմանք են գործնականք, և ոմանք հայեցողականք: Արդ 'ի գործնականաց՝ ոմանք կանոնաւորեն զներքին ներգործութիւնս վերաբերեալս առ բաղձանս. և են գիտութիւնք բարոյականք: Այլք կանոնաւորեն զներքին ներգործութիւնս մտաց կարգեալս առ խօսս. և սոքա են տրամաբանականք. այսինքն է. տրամաբանութիւն, որ դատանէ փաստս զվիճաբանելի խօսք. և հռետորութիւն, որ դատանէ փաստս զհաւանելի խօսք: Բայց սա 'ի ներքս փակէ երիս այլ մակացութիւնս. զի պատմութիւն, որ պատմէ զճշմարիտն. բանաստեղծութիւն, որ 'ի պատմել անդ խուռն՝ նմանօղ է ճշմարտի. և քերականութիւն, որ ուսուցանէ ուղղախօսել: Այսոքիկ են գործնականք:

Իսկ 'ի հայեցողականաց, որք ոչ հային յայլ վախճան, բայց 'ի ճանաչումն ճշմարտութեան, ոմանք նկատեն զնիւթական իրս՝ ներքոյ անկեալս փոփոխութեան. և այսոքիկ են ֆիզիկական, զի բնականք. որք և 'ի ներքս փակեն զբժշկութիւն հայեցողական: Ոմանք նկատեն զքանակութիւն վերացեալ 'ի նիւթոյ. և սոքին են մաթեմատիկականք. զի երկրաչափութիւն շուրջ զշարունակ քանակութ. և թուաբանութիւն շուրջ զատորոշ քա-

նա-

նակութք: Էին և այլք խառն 'ի ֆիզիգականէ և 'ի մաթեմաթիգականէ, ըստ ԵՐԿՐԱԳՐՈՒԹԻՒՆ որ չափէ զերկիր. ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ, որ չափէ զերկինս. և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ, որ չափէ զձայնս:

Է՛ միւս ևս գերագոյն քան զամ, որ հայի յիրս ԲԱՐՁՐԱՆՍ և ՅԱՒԻՏԵՆԻՍ, վերացեալս բոլորովին 'ի նիւթոյ և 'ի քանակութենէ, այն է ՄԵՏԱՓԻԶԻԿԱՅ, ըստ բնազանցութիւն կամ համաբնաբանութիւն. որ եթէ խօսի բնական ճանաչմամբ, կոչի ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ կամ ՀԱՄԱԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՆ. իսկ եթէ սկզբամբք յայտնեցելովք յԱյ, այն ինքն է ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Արդ զորօրինակ ամ ակունք են պատուականագոյնք քան զհասարակ ջուրս, բայց ակն քան զակն է պատուական, զի ջուր նր է յստակագոյն և սակաւագիւտ. սոյնպէս ամենայն գիտութիւնք են ազնուագոյնք քան զարուեստս. բայց գիտութի քան զգիտութիւն այնչափ է ազնուագոյն, որչափ ԱՌԱՐԿԱՅ նորա է ստուգագոյն և յստակագոյն, ըստ առաւել վերացեալ 'ի զգալի նիւթոյ:

Ցածինն ԳԻՏՈՒԹԵԱՆՑ է ազնուագոյն քան զազնուագոյնն ԱՐՈՒԵՍՏԻՑ. զի արուեստն յածի զարտաքին, զնիւթական, և զզգալի գործուածով. իսկ գիտութիւնք են գործողութիւնք մտացի՝ հոգեղէնք և ներքինք: Վոկ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ որ ստորինն է գիտութեանց՝ ազնուագոյն է քան ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, որ գերագոյնն է արուեստից. զի նա է զրուցական, և սա գործողական. նա կանոնաւորէ զմարդկային ինչ առնելուն (ըստ զխօսս). և սա է արտաքին ինչ գործուած:

Ազնուագոյն են ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ գիտութիւնք քան ԸՆԳՈՐԾՆԱԿԱՆՆ. զի զորօրինակ այն է ազնուականագոյն՝ որ առաւել զերծ է յամ ծառայութենէ, սոյնպէս այն գիտութի է ազնուագոյն, որոյ նիւթ է առ այլս արգանեկութի. ունելով իւր վախճան միայն՝ զճանաչումն ճշմարտութեն:

Այլ ինչ է ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱԶԱՏԱԿԱՆ, և այլ ինչ՝ ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱԶԱՏ: Ազատականն է, որ արժանի է անձին ազատի և ազնուականի, ոչ ցածազգւոյ և ծառայա-

կա-

կանի․ որպիսի են ամ արուեստք ազատականք ։ Բայց գիտութիւն Ազատ՝ է այն, որ միայն վն իւր է ըղձալի, ոպ հայեցողականք ։ Մինչ զի՝ ամ գիտութիւնք Ազատ՝ են ազատականք․ բայց ոչ ամ ազատականք են ազատ ։ Ուստի որոշմարանութիւն, որ ծառայէ հայեցողականաց առ անվթար խօսել՝ է ազատական, այլ ոչ ազատ ։ Բայց 'ի մէջ Հայեցողականաց՝ ազնուագոյնք են Մաթեմատիկականք քան Ֆիզիկականքն․ զի Ֆիզիքականք հային յիր Նիւթական՝ իբր 'ի նիւթ զգալի և փոփոխելի․ բայց Մաթեմաթիգականք հային 'ի Նիւթ Իմանալի․ զի 'ի բանակ վերառեալ 'ի նիւթոյ ։ Օրինակ իմն․ Հայեաց 'ի Գունդակն՝ իբրև 'ի մակերևոյթ իմն զուգահեռական 'ի կեդրոնէ․ առանց զմտաւ ածելոյ, 'ի քարէ իցէ այն, 'ի պղնձոյ՝ թէ 'ի փայտէ ։

Յայսմանէ և Մեթաֆիզիկականք այնչափ են ազնուագոյնք և վսեմագոյնք քան զՄաթեմաթիկականս, որչափ առարկայն է զատագոյն և վսեմագոյն․ Հայեցեալ յԷակն իբր որում Էակ․ զի՝ յէութե իրաց վերառեալ յինչ և իցէ զգալի և իմանալի նիւթոյ ։ Յիրաւի Ճարտարապետք կոչեցան Հանճարաւորք, զի մեծ հանճար ցուցին 'ի գործս իւրեանց, և առաւել 'ի հինգ կարգս սեանց, որք են տարերք արուեստին, համեմատեալք հինգ այլ և այլ բարձրութեանց մարդկային մարմնոց ։ Կարգն Տոսկանեան սակաւս ունելով տրամագիծս, ըստ ստուարութեն մարմնոյ, նման է նր բարձրութեն ։ Կարգն Կորնթական աւելի ունելով տրամագիծս, այնչափ ունի բարձրութի, որչափ նման է նր մարմնոյն ։ Եւ վնկ նա երևեցուցանէ զանձինս ցածունս և ծառայականս․ և սա երևեցուցանէ զուսումնականս․ նշանակելով, թէ գիտութեանց որչափ նման է նիւթականութիւն, այնչափ առաւելու ազնուութեն և վսեմութիւն ։

Այս Ճշմարիտ Գեղեցկութիւն՝ զորմէ աստանօր են բանք, ոչ է Զգալական, զի զանհատից, որք ներքոյ անկանին աչաց կամ այլոց զգայութեանց․ զի Ճանաչումն զգայութեն այնչափ միայն տևէ, որչափ առարկայն առաջի կայ․ և զգալին չէ գիտելի ։

Անասունք զգան զիրս, բայց ոչ գիտեն զնս. զի գիտելն է ճանաչել զիրս 'ի պատճառաց իւրեանց. և այս սեպհական է մտաց. և վ՟ն իբր հեռագոյնք 'ի մարմնաւոր աչաց՝ լաւ ևս ճանաչեն աչօք մտաց: Չիք ճշմարիտ գիտութիւն և [illegible] իրաց, և զփոփոխականաց. զի եթէ առարկայն է փոփոխելի, փոփոխելի լինի և գիտութիւնն. և որ այսօր է ճշմարիտ՝ վաղիւ լինի սուտ:

Այսպէս պարտ է առարկայի գիտութեան լինել ԱՆՓՈՓՈԽ և յաւերժական, վասն որոյ և ԻՄԱՆԱԼԻ է ը̄նդհանուր. զի ը̄նդհանուր իրք են հաստատունք, և հարկաւորք. իսկ մասնաւորք են առօրեայք և վաղանցիկք: Այս՝ և [illegible]՝ հնար է թէ լինիցի կատարեալ գիտութիւն. բայց միայն ը̄ որում ներքոյ են ընդհանուր և յաւերժական պատճառաց:

'Ի վաղաթառամ ծաղկանց իսկ, որ յայգուէ ծաղկին, և առ. օրին թօշնին, էութիւն մշտնջենաւորէ հանճարահնար ցքաչանն. որոյ որոշեալ զթանձրագանգաղն և զապականացուն յաղթուական մասանց բնութե, հանէ անտի անուշահոտ ցքիս, և որակս զօրաւորս և մնայունս. մինչև 'ի ցրտասարսուռ ձմերայնի զգալ քեզ զօդի ծաղկի, և չտեսանել զմարմինն: Ըստ սմին օրինակի բնախօս զննիչն՝ յիմաստասիրել իւրում 'ի վ՟ր առարագրուն և փոււթե բնական իրաց, մեկուսեալ [illegible] և [illegible], հանէ անտի էական ինչ մասնուն ընդհանուր և մշտնջենաւոր իմաստից. յորոց վերայ հիմնէ զիւր գիտնական և անվրեպ ապացուցութիւն: Այսչափ ինչ 'ի վ՟ր առարկայի. արդ խօսեսցուք զպատճառէ:

Պատճառ ճշմարիտ և կատարեալ գիտութեան են ԸՆԴՀԱՆՈՒՐ [illegible]. յորոց տրամաբանութ՟բ մտաց ապացուցաբար յառաջ բերին գործք ճշգրիտ և անմիջական պատճառաց: Զի ոչ այլ ինչ է ապացուցութիւն, բայց տրամաբանութիւն, որ ուսուցանէ գիտել կատարելապէս զինն:

Այսպ ոչ է կատարեալ գիտութիւն ճանաչել զառարկայ ինչ լոկով [illegible], կամ լոկով [illegible].

հանէ. որ ճանաչին առաջին սկզբունք, զորոց ա-
սացաւ. այլ հարկ է թէ լցէ երրորդ իմն գործողութեան
մտաց, իջուցանելով համառօտաբանօրէն զմի ինչ յայլ-
մէ: Աստի տեսանել զիր ինչ՝ ոչ է գիտել զայն:
Ոչ է կատարեալ գիտութիւն ճանաչել զճշմարտութի
ինչ փորձաբար. որպէս, թէ հուրն այրէ. զի այս և
այգ և այն հուր այրէ զայրեցիս: Վասն զի մակա-
ծութիւնն է հիմնեալ 'ի փորձ զգայութեանց. և հա-
գոյնն զգայութեանց, հետագոյն է 'ի գիտութենէ: Եւ-
փոկ լաւ ևս էր ալլինիսի հաւատալ այնմ, քան
'ի փորձ մատչիլ. (256):

Ո՛չ է ճշմարիտ գիտութիւն ճանաչել զառարկայս
հաւանական պատճառօք. որ տրամաբանութիւնն
և հաւատութիւնն: Վասն զի՝ որ անբաւ հնրկ քա-
րինք չառնեն անգամանդ մի. այնպէս անբաւ
կարծիքական ձեռնարկութիւնք չառնեն ինչ ձեռ-
նարկութիւն ապացուցական:

Եւս առաւել չէ ճշմարիտ գիտութիւն, ճանաչել
զեզրակացութիս իմաստական ձեռնարկութեան. թէպէտ
և երևին անլուծանելիք. որք իմաստակացն
էին՝ լորենի խաղալեաց, որք զանուն աւին զի-
մաստութե՝ 'ի ցոյց տգիտաւէ: Դիոգինէս՝ այնմ
անլուծանելի սուտ ձեռնարկութե, որով եզրա-
կացուցանէր զենոն, թէ անհնար է իմիք շար-
ժիլ. ոչ այլ ինչ արար պատասխանի, բայց յոտն
յառնել յաթոռոյ և շրջիլ: Եւ այնպէս ոչ կա-
րացեալ լուծանել զձեռնարկութիւնն մաօք, եղյծ
տախեք:

Ոչ է ճշմարիտ գիտութի և յանդիմանել զատուծ
հակառակորդին, 'ի նեղ լծեալ զյամառութի նր,
'ի յաղթանել. զի իմացուցանել զայլոց տգիտութիւն,
չէ ճշմարիտ ցոյց ճշմարտութե: Աւասիկ 'ի խնդիր
անհնոյն, դիւրագոյն մարթ է քեզ գիմամարտիլ
կարծեաց օտարի, քան նշանակել զզուգահաւա-
սար պատճառ քոյոյդ:

Եւ ևս, չէ կատարեալ գիտութի ծանուցանել ըզ-
պատճառն 'ի գործոյ: Թէ ասես դու, Աստեղք
որք ոչ շողշողեն՝ մօտագոյն են մեզ. մոլորակք ոչ շողշո-
ղեն. ապա են մեզ մօտագոյն: Սա է ապացուցութի
առոյգ:

առոյգ. զի գործք ծանօթագոյն են մեզ քան ըզպատճառս. և չշողշողելն ոչ է պատճառ, այլ գործ մտաւորութեան: Բայց քանզի պատճառք բնութի իւրեանց յառաջագոյն են քան զգործս, շրջումն իմաստասիրութեան է՝ ապացուցանել ըզպատճառս 'ի գործոց: Սակայն թէ ասես. Լուսաւորք մօտագոյնք մեզ ոչ շողշողեն. մոլորակք են մեզ մօտագոյնք. արդ ոչ շողշողեն: Սա է բուն և կանոնաւորեալ ապացուցութիւն, զի ցուցանէ զգործն 'ի պատճառէն:

Զհետևեալն առացից. չէ կատարեալ գիտութիւն, և թէ պատճառն չէ անընդմիջական: Այս՝ հնար է թէ գործ ինչ կախեալ կայցէ զբազում պատճառաց. որոց բնաւ են ճշմարիտք և հարկաւորք, բայց կարգեալք ընդ միմեանս, իբրև զանուրս շղթային համբռնի: Իսկ են բնաւք իբրև զապացուցութիւնս եւկղիդեայ, զի կախեալ կայ մին զմիւսմէ:

Զարմանայ մդ ը̅ նոր իրս. զի խորհի 'ի մտի ըզպատճառն, զոր ոչ գիտէ. և խորհի մդ 'ի մտի, զի է կենդանի բանական: Մինչ զի՝ լինելն բանական է պատճառ անընդմիջական՝ լինելոյ տրամախոհական, և լինելն տրամախոհական է պատճառ անընդմիջական՝ լինելոյ զարմացական:

Արդ՝ եթէ ցուցանես դու, թէ մարդն է զարմացական, զի է տրամախոհական, գիտութիւն չէ կատարեալ. զի թէպէտ և պատճառն է ճշմարիտ և անընդմիջական. բայց և զայդ պիտի ցուցանել վերագոյն իմն պատճառաւ: Իսկ նոյնպէս՝ եթէ ցուցանես դու, թէ մարդն է զարմացական, զի է բանական, գիտութիւն չէ կատարեալ. զի պատճառն ը̅միջական պէտս ունի անը̅միջական պատճառի: Այլ եթէ միակցես դու զերկաքանչիւր պատճառս ասփձանաւ, գիտութիւնն կատարեալ է 'ի քեզ. բայց անկատար յուսուցանելդ զայն. զի միտ համբակին դժուարեալ ը̅ սանդուղս պատճառաց, մեայ առաւել շուարեալ, քան հաւանեալ: Վնկ առաց ոմն, թէ այս եղանակ ձևանորկուն ասփձանիւ, որ կոչի համաձայնութիւն, ու-

նի

նի ինչ յիմաստականէն և 'ի խաբէականէն, ոչ զի է այնպիսի, այլ՝ զի նման է նմա, և է երկեղում. զի իմաստակաց է սովորութիւն լարել որոգայթս այսպիսի [illegible]։

Բայց յայս կնքեմք զբանս. թէ կատարեալ գիտութիւնն [illegible]։

Իսկ առ չխոտորելոյ յօրինակաց Արիստոտէլի, այսպիսի ապացուցութի՛ լինի, եթէ ցուցցես դու, թէ 'ի [illegible]. [illegible]։ Կամ թէ [illegible], [illegible]։ Վն զի ասքին են Ճշմարիտ և հաւատարական և անընդդիմ-ջական պատասխանք այսց գործոց։

Մնայ քեզ գիտել, թէ 'ի վր իւրաքանչիւր առարկայի չորս խնդիրս մարթ է ապացուցանել։ Առաջին, [illegible]. զոր օրինակ, [illegible]։ Երկրորդ, [illegible]. զոր օրինակ, [illegible], արդեօք լուսաւոր ինչ երկնային, թէ գունտ ինչ երկրային։ Երրորդ, [illegible], զոր օրինակ, [illegible]։ Չորրորդ, [illegible]. զորօրինակ, [illegible]։ Արդ՝ 'ի չորից աստի խնդրոց՝ զերիս առաջինսն մարթ է ապացուցանել 'ի գործոց։ Թւէպէտ երկրորդն է առաւել առնման, քան ապացուցութե։ [illegible] միշտ ապացուցանի գործն յիւրմէ պատճառէ. և մնկ սա է Ճշմարիտ ապացուցութիւն, յորժամ պատճառն ունի զապացեալ պարագայս։ Զի ոչ ամ պատճառք են հաւատարականք և գիտականք։

Բայց յայսմ ամէ մարթ է քեզ դիւրաւ Ճանաչել, թէ որք իցեն [illegible] առաքինութիս, ոմ ատացաւ զօկզրանց։ Այսինքն է [illegible], կամ սուկ անգիտութի. և [illegible], որում մարթ է ննանիլ կամ 'ի սուտ ուսմանց, կամ 'ի ոկարութե, և կմ 'ի

չա-

չարութեն :

Սոյն անգիտութեան ճշմարտութե՟ բժշկի : Երկ՟րդին գժուարագոյն է դարման . զի թէ յառաջ գայ ՚ի սուտ ուսմանց, կրկին աշխատութի՟ պէտք են ՚ի խլել զսուտն, և ՚ի պատուաստել զճշմարիտն : Եթէ ՚ի փիլիսոփայութենէ, եղբօրաւս բժշկի : Իսկ եթէ ՚ի ճա֊րութենէ, ոմ՟ իմաստակականն՝ որ ճանաչէ զճշմա֊րիտն, և յարի ՚ի սուտն ՚ի պատրել զայլս, այս ոչ բժշկի երբէք, բայց եթէ մաշակաւ :

## ԳԼ. Ե.

## Յաղագս իմաստութեան :

Այս այն մեծ առաքինութիւն է, որ յարիստոտե֊լէ պատկեցաւ, և բարձրաբարբառ քարոզեցաւ՝ Գերազանց դշխոյ առաքինութեանց :

Յիւրաքանչիւրում սեռի ճշմարիտ առաքինութեանց՝ մին միայն է պատկաւոր . զի բովանդակեալ յին֊քեան զկատարելութիւնս ստորնոց, ինքն է վերջին կատարելութիւն կարգաւն : Յառաքինութիւնս կա֊նոնաւորիչս կրից, առաքինութիւնն [illegible]՝ է դշխոյ . զի որ ստացեալ ունի զնա, այնպէս ինք֊նիշխան տէր է իւրոց կրից, մինչև ընդ առասպելա֊կանն գիւցազանց՝ երևիլ նմա ստորին քան զմարդ, և վերագոյն քան զմարդ : Յառաքինութիւնս կանո֊նաւորիչս կամաց՝ արդարութիւն է դշխոյ . զի ան֊հնար է չկամիլ զմարդ բարոյական առաքինութիւն՝ այնմ որ կամի զարդարն : Այլա յառաքինութիւնս կանոնաւորիչս մտաց, մի միայն է դշխոյ . որ գե֊րագոյն բովանդակէ զկատարելութիւնս այլոց ամի. և սա է Իմաստութիւն :

Նա՝ վս՟ զի ՚ի տիեզերական դասակարգի ստո֊րինն վերին պարունակի՝ ազնուագոյն է քան ըզ֊վերինն ստորին պարունակի, ուստի գերագոյնն վերագոյն պարունակի՝ ամի. երիցագոյն է քան զամ՟ պարունակս, հարկիւ հետևի՝ թէ ՚ի լինել կամաց ազնուագոյն քան զկիրս, և մտաց քան զկամս, և ՚ի միտս անդ գերագահ գոլով իմաս֊տութեն, նա միայն ամ՟ մեկայլին առաքինութեանց է

է գլխոյ ։

Ջեռն ասացից. զի Թէպէտ իմաստութիւն պատահումն ինչ է հոգւոյ. ասացեալ 'ի մէջ, բայց և այնպէս յոյժ է ազնուական քան զնոյն ինքն հոգի ածաստեղծ ։ Լոյսն պատահումն ինչ է մակերևութ մարմնեղէն գոյացութեանց. բայց և այնպէս այս պատահումն ազնուագոյն է քան զգիմահար մարմին ։ Գոյացութիւն է հոգի. պատահումն է գիտութիւն. բայց և այնպէս գիտութիւնն ազնուագոյն է քան զհոգի. զի հոգի առանց գիտութեան է որպէս մարմին անլոյս ։ Իսկարդ՝ եթէ գիտութիւն առ իմաստութեամբ՝ ջահ ինչ է առ արեգակամբ, քանի՞ ազնուական և արգոյ իցէ իմաստութիւն՝ Թէպէտ և որակ է ստացական և պատահական, քան զհոգի որոյ և իցէ անիմաստ աղքայի ։

Բայց ո՞ր իցէ այս գլխոյ առաքինութեանց՝ իմաստանագոյն քան զգիտութիւն, և կատարելագոյն քան զամ կատարելութիւն ։ Թուեցաւ ոմանց, թէ լինի, միայն իմաստութիւն, որ ոչինչ իմիք անգէտ գոլով կատարելապէս ստացեալ ունի զամ Գիտութիւնս և զամ Արուեստս Ազատականս և Մեքենականս. մինչև մտաց հաւասարիլ բովանդակ պարունակի իմանալեաց. զի միապէս հնարաւոր Թուի՝ միոյ կամաց զամ կամիլ, և միոյ մտաց զամ իմանալ ։

Հռչակ հարկանէ նախնին յունաստան զիւրն հեղեան իմաստակ, որ պանծայր 'ի խռանն ոլիմպիական՝ ոչ միայն գիտել զգիտութիւնս ամ, և զամ արուեստս ազատականս, այլև զարուեստս մեքենականս և ծառայականս. իբր զի իւր ձեռակերտ էր ամ զոր արկեալ ունէր զանձամբ. արտախուրակն, Թիկանոցն, ասուի ամպանն, մաշկեղէն գօտին, արծաթի Ճարմանդք, ոսկի մատանին, երկաթի կարոցն, մինչև մաշիկն իսկ ապարանցի ։ Այո՞ արար սա զկրպակն համալսարան, կամ զհամալսարանն կրպակ. բայց դիւրագոյն կարողացաւ անչքացուցանել զիմաստութիւն անարգ արուեստիւք, քան չքեղ ընծայել զանարգ արուեստս իմաստութք ։ Յայտ է՝ Թէ ոչ ոք յեօԹանց իմաստասիրացն յունաց մեծ համարեցաւ գիտել զար-

զարուեստ կօշկակարի ։

Այլք կարծեցին թէ ճշմարիտ իմաստութիւն իցէ ԳԻՏՈՒԹԻՒՆՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ. որ ունի իւր առարկայ՝ զմ՛դ, որում ծառայէ աշխարհս ամ. և վախճան՝ զկատարելութիւն քաղաքական, զոր փիլիսոփայք կոչեցին ԱՐՈՒԵՍՏ ԱՐՈՒԵՍՏԻՑ, և ԳԻՏՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵՑ ։ Բայց սոքա կամ կարի իմն մեղանչեն, կամ կարի իմն անգիտանան. յայն ինչ ոչ հային, թէ յիմանալեաց աշխարհի կան առարկայք յոյժ ազնուագոյնք և բարձրագոյնք ք՛ աննիւթական գոյացութիւնք, միտք անջատեալք. և ներգործութիւնք մաքուրք. առ որովք մ՛դս է արձան ինչ պրոմեթէոսի, որ ընդ տիղմ չաղախեալ (257) ։

Թո՛ղ զայն, զի եթէ գիտութիւնն հայեցողական ազնուագոյն է քան զգործնական, վ՛ լինելոյ գիտութեանց այնչափ ազնուագոյն՝ որչափ են ազատագոյն, յայտ է թէ՝ 'ի լինելն իմաստութեն գործնական, անարգագոյն լինէր քան զգիտութիւն հայեցողականս. և ոչ լինէր դշխոյ գիտութեանց, եթէ էր աղախին արքունեաց, ոչ այլ ինչ գոլով արքունի իշխանութիւնն, բայց եթէ արքունի ինչ ծառայութիւն ։

Ապա երկու են առաւելութիւնք իմաստութե քան զգիտութեն, ք՛ մեծագոյն ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՅ. և մեծագոյն ՍՏՈՅԳՈՒԹԻՒՆ ՊԱՏՃԱՌԱՑՆ. զորոց խօսեցուք ուրոյն ։

## ԳԼ. Ը.

### ՑՈՒՑԱՆԻ ԹԷ ԶԻՆՉ ԻՑԷ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՅ ։

Որպէս կարողութիւնն տեսողական, նոյնպէս ՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆՆ ԻՄԱՑԱԿԱՆ կատարելագոյն է և սրագոյն 'ի միում քան յայլում ։ Տիբերիոս 'ի մթին գիշերի տեսանէր յստակ. և ով կարող էր լինել անհոգ 'ի նմանէ, որ 'ի տուէ էր յովազ, և 'ի գիշերի չղջիկն ։ Ստրաբոն յափրիկեան պատերազմի 'ի գարափնէ սիկիլիոյ նշմարէր զելումն նաւահանգստին կարքեդոնայ ։ Հնար էր գալիլէոսի յայնց աչաց ուսանիլ զատարաղ գիտական (258) ։ Այլ

ոքան-

սքանչելի եւս էր սրատեսութն սարգիացւոց, որք տեսողական շառաւիղօք ը՟ մտեալ 'ի սիրտ երկրի՝ տեսանէին զգիւտկունս, եւ զթաղեալ գանձս. մինչ_չեւ 'ի զննուէ այնց բրոց՝ ոչ հանգիստ մնելոց, եւ ոչ ագահուն կենդանեաց էր ծածկեալ։ Այս_պիսի են ամենեքին միտք մարդկան զառարկայիւք արուեստից եւ գիտութեանց. ոմանք են չղջիկն, եւ ոմանք յովազ. նոքա ոչ տեսանեն զերեւելին, սոքա տեսանեն զաներեւակն։

Այս իմաստունք կոչեցան յարուեստի ապեղէս, եւ լիւսիպպոս. զի նա 'ի նկարչութեան, եւ սա 'ի դրօշուածս՝ այնպէս 'ի խոր թափանցէին ուժ_գնութ՟ իւրեանց հանճարոյ, մինչ զի ճշմարիտն աղէքսանդր՝ նկարեալ կմ՟ դրօշեալ յայլոց՝ թուէր կեղծ, եւ կեղծեալն 'ի սոցանէ՝ թուէր ճշմարիտ.

(259)։

Ըստ սմին օրինակի 'ի գիտութիւս նա կոչի ԻՄԱՍ_ՏՈՒՆ, որ տեսանել սրութ՟ ընդմտեալ ը՟ նմ՟ ծանօ_թութիւս, եւ ընդ զաղտնածածուկ ՊԱՐԱԳԱՅՍՆ՝ որ յառարկայս, եւ ըծորդեալ զնն՟ ը՟ միմեանս, արագ. նկատէ զսկզբունսն յայտնիս եւ յաւերժականս. զպատճառսն՝ ոչ մակերեւակս կմ՟ հասարակս, այլ՝ զանընդմիջականս, զխորինս եւ զնորս. որոց առա_ւել եւս ստուգութեամբ հասու լինի, առաւել եւս հաստատութ՟ պահէ 'ի մտի, եւ առաւել եւս յայտ_նութ՟ ուսուցանէ, զոր ոչ առնեն այլք, որք առ իմաստնով երեւին տղայք։

Այս օրինակս իմն՝ բայց իմաստութ՟ ասացաւ, թէ ԱԹԷՆԱՍ ԴԻՑՈՒՀԻ ԻՄԱՍՏՈՒԹ՟Ն ԾՆԱՒ ԶԻՆԵԱԼ ՅՈՒՂԵՂՈՅ ԱՐԱՄԱԶԴԱՅ։ ՅՈՒՂԵՂՈՅ. զի ուր այն միան է զատագոյն, է մտաւորագոյն. ուստի կարինէագէս, յորժամ հանդերձեալ էր միճել ընդ սայլիկեանս, մաք_րէր զուղեղ իւր եղբորսաւ։ Եւ ԶԻՆԵԱԼ. զի այլ գիտութիւնք են պաշտպանեալ յիմաստութ՟է, բայց իմաստութին միայն՝ է ինքնուրոյն պաշտպան, եւ ցորչափ չէ զինեալ անյաղթելի ապացուցութ՟ք, չէ իմաստութ՟ի։ Ահա այս է ՍՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ մտաց։

## ԳԼ. Ի:

### ԹԷ ՈՐՔ ԻՑԵՆ ԱՌԱՐԿԱՅՔ ԻՄԱՍՏՈՒԹԷ:

Նշան մեծ երևեցաւ 'ի հռովմէական հրապարակի, յորժամ յանկարծակի բացաւ այնպիսի խոր վիհ, որ որչափ նիւթ յայն արկանէին, զամ ընկլնոյր, և ոչ լնանէր: Բայց զարմանագոյն եւս նշան արար բնութիւն, բացեալ 'ի մարդկային միտս անդունդ անյագուրդ, այն է՝ անուրաւ ՏԵՆՉ ԳԻՏԵԼԵՑ: Ինչ 'ի յաճախել յաչաց անկանին, կրադես ամաց զնա 'ի ծով, և միգաւ յղփացեալ ուսեալ տաղակացաւ յիւրոց բղձից: ՓԱՓԿՈՒՆՔ ելք են զզուանք. և ոչինչ այնպէս մտաւորաւ է հեշտութեն, որ̃ ապաշաւն կամ դառնութին: ՊԱՏԻՒ և ՓԱՌՔ որչափ են մեծ, այնչափ և ծանր. և որ անձկայրն արքունի իշխանութե, յոգւոց եհան մի՛ տանձնաւոր կենաց: ԿԵԱՆՔ իսկ առեալ է իւր ինքեան. և բաղումք վաղեցին 'ի մահ, որ էր 'ի նոցանէ փախուսեալ: Այս ամ բարիք են վիհք, բայց ոչ կարի խորք, բաղումք ըղձման, և վաղ յափրանան: Միայն ՀԱՐՍՏՈՒԹԵՆ ՎԻՇԱՔ են վիհ թափուր, մանաւանդ թէ յորձանուտ. որ որչափ ինչ ճարակէ յառարկայից՝ այնչափ առաւել ածի. որչափ ինչ գիտէ, այնչափ առաւել ըղձանոյ գիտել: Զի այլ ամ բարիք՝ ընդ 'ի բուռն ածել՝ թողանան, բայց սոքա միայն և յետ մահու անմոռաց մնան: Առարկայն զգալի՝ է սահմանաւոր, այլ առարկայն իմանալի՝ անսահման:

Նայս ամ միտք են միապէս անյագք 'ի գիտել. բայց այսուիկ տարբերին. զի որպիսի են միտք, այնպիսի են և առարկայք. մինչև ԱՆԱՐԳ ՀՈԳՈՑ անյա է լինել առ աղտեղիս և անարգս. ընդ ՎԵՀԱՅՐԱՔՆՑ առ անպիտանս և ունայնս, և ԻՄԱՍՏՆՈՑ առ հաստատունս և վսեմականս:

Աննպատական լուալիք պղծուեց էր Տիբերիոս, որ գտաարկեալ զմիտս իւր 'ի քաղաքային խորմանց, 'ի լնուլ զանձն վաւաշանօք, մեկուսացաւ 'ի կղզին Կապրեայ ի̃ այծեմանց. այս՝ 'ի կղզի վայրի

րի անասնոց, զի մեծաջան միտ դիցէ անասնական արուեստից, զոր չէր արարեալ 'ի կղզին Հռոդացւոց 'ի ստացութեան ազատական արուեստից: Ընդ՝ թէպէտ և վաղու ևս ուսուցիչ էր գիտնաւոր՝ այպանելի գիտունս, ոչ ամօթ համարեցաւ աշակերտիլ լաւ ևս ուսուցչաց, զի առաւելցի քան զոր էրն, ուսեալ անյագուրդ 'ի վաւաշ գրոց, յաղտեղի պատկերաց, 'ի պիղծ խօսից, յանառակ խաղուց, և 'ի կենդանի օրինակաց զա՛մ զամօթալի խօսերս, զոր ուրեք երբեք ուսեալ իցէ ուրուք յաշխարհի: Եւ ոչ շատացեալ այսուիկ, խոստացաւ մեծապարգև վարձս տա՛լ՝ որ գտանիցէ նոր ինչ և անլուր ազգ պղծութեան, կարգեալ ատեկան այնմ գպրոցի զախտս կեանխոս ումն, որ մեծանունն էր յայնմ անառակ իմաստասիրութեան քան զսոկրատէս 'ի բարոյականս:

Թերևս մարթ իցէ ումեք ասել, թէ այդպիսեաց՝ որպէս և անասնոց՝ տուաւ հոգի, ոչ ուղ գործարան գիտութեանց. այլ՝ որպէս աղ՝ 'ի պահել զմարմինն 'ի նեխոյ: Իսկ զիա՞րդ միտ տուաւ սոցա, և ոչ անասնոց, բայց եթէ՝ զի իցէ յաշխարհի անբան անբանագոյն քան զա՛մ անասուն: Զիա՞րդ համարեցան ուղղորդք, եթէ փոխանակ հայելոյ յերկինս, հայիլ ունէին միշտ յերկիր: Արժան էր սոցա խոտ ճարակել, և ոչ հաց ուտել. որովհետև ըստ գրելոյ բնախօս իմաստասիրին, կենդանիք՝ որք ցորեան ուտեն, իմաստնագոյնք են. և սոքա անբանագոյնք:

Կարի առաւել վերամբարձ և հանճարաւոր են Մեծք ընդվայրաքննիկք. միայն թէ և սոքա թողեալ զուղիղ ճանապարհ իմաստութեան. 'ի խնդիր լինին առարկայից անյայտից, վէ՛ր և անպիտանից, կամ խաբէականաց. և յայնպիսի սնոտի խնդիրս հաստատեն զանձուկ իւրեանց և զանյագ փոյթ. յորմէ և յիրաւի կոչեցան ընդվայրաքննինք:

Ընդվայրաքննին եղև յայժ հանճար դիգիմասիքերթողի, զորմէ վաղու ևս խօսեցաք. որ շարագրեաց չորս հազար գիրս ընդվայրաքննին խնդրոց նորեց, 'ի քաղել զառասպելս 'ի բանաստեղծից.

ծից, և 'ի հանել զճշմարտութիւն յառասպելոց: Գործ այս՝ ընդարձակ, բայց այնպէս ունայն, մինչև գովլոց իսկ նորա ախտակցիլ նմա, զի մի միայն մատենագիր կարողացաւ գրել այնչափ, որչափ ոչ ոք 'ի վերծանողաց կարողացաւ ընթեռնուլ անտաղտուկ:

Բայց առաւել ևս ընդվայրաբանին գտաւ Մեծն այն ախանէաս (260), որոյ օրէալ զհանճար իւր յեռանդեալ իմաստակութե, և ոչ կազմակերպեալ զայն ըստ ճշգրիտ ուղղոյ տրամաբանութե, զարմանաւոր և օտարոտի առարկայից եղև հետամուտ: Նոյնց սա Է կողմաս՝ 'ի հետազօտել զգիտութական գուշակութիւնս փիլիսոփայից հնդկաց. նաւեաց ընդ ծով արևելեան՝ հասու լինել կախարդական սնապաշտութեանց մերկիմաստակաց եթովպիոյ. կամեցաւ հասկանալ զլեզուս թռչնոց, ըմտանել 'ի դաղտնիս երկնից, և հրամայել սանդարամետական այսոց: Մինչև դժուարակոխ գնացիւք և ալէկոծութեք 'ի խնդիր լեալ գիտութե, եգիտ զանգիտութի. և պատրեալ 'ի մոլար ուսուցչաց՝ պատրեաց զիւր աշակերտս սուտակապաս ցնորիւք:

Յոյժ կարճօրեայ են մարդկան կեանք. և յոյժ ընդարձակատարր է աւելորդաց ճանաչումն: Ուղին է երկար, և ժամանակն սուղ: Որ կամի հասանել իմաստութեան, չունի ժամ կորուսանելոյ յընդունայն զրօսանս. զի այն է յետինն գիտութեց: Բազում ինչ է, զոր լաւ է աչաց չտեսանել քան տեսանել. և բազում ինչ, զոր լաւ է մտաց չգիտել քան գիտել. և գիտողին արժան էր առնուլ զքարն գաղափարին, այն է կաթնծոր, 'ի մտանել (261). զի մի պղծեսցի ախանէանն 'ի միտս ընդ անարգ առարկայս, որպիսի են ԴԱՇՏ––ՈՒԹԻՒՆՔ ախանէսսի. ՏԺԳՈՓԷՀ––ՈՒԹԻՒՆՔ գիզիմոսի. և ԱՆՔԱՆ––ՈՒԹԻՒՆՔ ախրերիսսի:

Ապա ոչինչ միտ է առաւել անյագ առ գիտութի, քան զիմաստնոյն: Բայց 'ի գիտել զամենայն, ոչ է հարկ գիտել զմիմիօջէն. չափ է գիտել զվերագոյն իրս, որք ճարտարապետօրէն և գերազանց.

զանցապէս բովանդակեն զատորինս։ Ոպ̃ ճարտա_
րապետն հրամայէ որմնադրին, հիւսան, քարտ_
կոփին, գործնին, բրչին, և ա̃մ արուեստաւորաց
գործադրաց իւրոյ գաղափարին, թէպէտ և ոչ
ձեռն մերձեցուցանէ 'ի գործ ն̃չ. սոյնպէս իմաս_
տունն ուղղևորէ, և սահմանէ և որոշէ, և գա_
տէ զա̃մ գիտութիւն, և զա̃մ արուեստ։

Այս ըղձանոյ իմաստութիւն գիտել յա̃մ արուեստս
Տէքնաքան՝ ղու Տէքնաքանան։ Չպարծի 'ի գործ դը_
նել զնոսա 'ի կրպակս, իբրև զիմաստակն հեղին.
այլ՝ ճանաչել զն̃ս 'ի համալսարանի, ոպ̃ փիլիսո_
փայ։ Ո՛չ գիտէ նկարել, և ոչ քանդակել. սա_
կայն նմա է անկ որոշել զկէտ 'ի մէջ նկարչութե̃
և քանդակագործութե̃, և ընտրուել տանել ճար_
տարութե̃ գործոց նոցա։ Մինչև գործնականին
իւրաքանչիւր արուեստի լինել յարուեստագէտն,
բայց հայեցողականին ամենայնի սոցա՝ լինել յի_
մաստունն։

Իմաստութիւնն է թագուհի գիտութեց. չափ է
թագաւորի գիտել հրամայել՝ ում հրամայէ։ Ա_
ռաջին շարժիչն մե̃ծ ինչ գործէ, եթէ տայ գոր_
ծել։ Յեթեղավոփս՝ առ իմացուցանելոյ ժողովըր_
դեան զգերակայութիւն իւրեանց թագաւորի, 'ի
սկիզբն տարւոյն շիջուցանեն զա̃մ կրակ։ Եւ թա_
գաւորն հարկաւ զգայլախաղ ը̃ պողպատ, լուցա_
նէ նոր հուր. յորմէ առեալ ջահս ի̃ թուոյ գա_
ւառաց, տարեն մի մի յիւրաքանչիւր գաւառ. և
գաւառք լուցեալ նովաւ այլ ջահս՝ տանին յիւ_
րաքանչիւր քաղաքս. և քաղաքք 'ի տունս. մինչ_
զի՝ 'ի լուցանել թագաւորին մի միայն կրակ, լու_
ցանէ զա̃մ կրակ. զի տարք ընծայեն իւրեանց
սկզբան։ Արդ ըստ այսմ օրինակի է թգ̃ւրութի
իմաստութե̃. վ̃ա զի որովհետև ա̃մ արուեստք են
ստորադասք գիտութեց, և գիտութիւն իմաստու_
թե̃. իմաստութի̃ն ոպ̃ թագուհի վառէ զառաջին
ջահն, ո̃ր է զուգութիւն գատման. և այս գերա_
կայ լոյս յաջորդաբ փոխանցի 'ի գիտութիւնս հայե_
ցողականս. անտի 'ի գործնականս. ապա յար_
ուեստս արտաբողականս. հասանէ ապա 'ի ծառ̃յկանս։

Եւ

Եւ ոչ միայն՝ իմաստութիւն կատարելագործէ զունակութիւս գիտութեանց, այլ և ԴԱՐՄԱՆԷ զնա. և բուժէ 'ի մոլորութեանց, որք են ախտք մտաց. որում բժշկութեան անհնար է լինել, թէ ոչ ճանաչէ սա զճշմարտութիւն առարկայից նոցա:

Քանի՜ անհեթեթս խօսեցան նախնի իմաստունք, զորս և այսօր տգէտք իսկ ծիծաղին: 'Ի մէջ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵ՝ յերազեցին ամ իմաստասէրք. զոր ինչ ուսուցին վս այրեցածին, որ է հասարակածս, կարծելով զայն անբնակելի 'ի սաստիկ տապոյ. և սակայն գտաւ այն առաւել բարեխառն և բերրի կողմն երկրի, խուժադուժ խափշկաց նախանձելի: Վրէպ յայտնեցան կարծիք երկուց գերզգօնից՝ Օգոստինոսի և Լակտանտիոսի, թէ երկիրս իցէ կլորագունդ ինչ. զի անհնար թուէր նց, թէ 'ի ներքոյ մեր 'ի կախ կայցեն բնակիչք՝ առանց անկանելոյ: Եւ սակայն գտան քինեացիք, որք շրջին ընդ ոտիւք մերովք անկախ և անանկ: Եւ զիարդ հնար էր այնց փիլիսոփայից ճանաչել զերկինս՝ որ ոչն ճանաչէին զերկիր, յոր վերայ կային:

ՅԱՍՏԵՂԱԳԻՏՈՒԹԵ իսկ, որ ազնուագոյնն է յուսմունս, գրուատանօք ուսոյց պղատոն, թէ ընդութե պարունակաց վերնոց ներգաշնակաւոր համեմատութե հոլովելոց 'ի վերայ առանցոց՝ յօրինէ ածային ինն նուագ: Պտղոմէոս ուսոյց, թէ 'ի թանձրութե պարունակաց կառուցան այլ շրջանակք արտակեդրոնք՝ համակեդրոնք և մակաշրջանակք միապէս ընդգակաղմք, ամբափակ կոչանաւորիւք եօթանց աստեղաց մոլորակաց. բայց մոլորակ էին միայն իւրեանց միտք: Շարժումն արուսեկի և հրատ՝ ծանուցեալ 'ի մեր ժամանակս. և զգալի վերելք գիսաւորաց յենթալուսնեայ գաւառէ մինչև 'ի վեր քան զերևակն, ըստ նշմարելոյն տիքոնի, յայտնի ցուցանեն ակամայն, թէ այս ամ ընդարձակութե յերկրէ մինչև ցհաստատութեն, ոչ այլ ինչ է, բայց լոյծ և միայար ձգումն լոկոյ օդոյ:

Թող զբիծս լուսնի. զորս բազումք 'ի փիլիսո-

փայից

փայլից համարեցան տարաւեւ կեղաս նորուն պայ-
ծառ դիմաց. և արդ յաղձանկս ընդդիմացի պլշա-
ցեալ աչօք յերկինս՝ երկոքումբք Թեւօք ապակեայ.
ստորագրէ զլուսինն ոպ̅ երկրագունտ ինչ, որոյ
ընծք են ծովք: Եւ 'ի գունտ ինչ աշխարհագրա-
կան՝ տրոհէ մեզ զկղզիս, զծովեզերս, զդաշտա-
վայրս, զցամաք երկիրս և զլերինս հանդերձ իւ-
րեանց սահմանօք. որ և պարգեւաց զայն աշ-
խարհ՝ Թագաւորաց այսմ աշխարհի, իւրաքան-
չիւր յանուանէ:

Այսու օրինակաւ մեք ծիծաղիմք զարգիտութի̅
նախնեաց, և յետնորդք մեր ծիծաղեսցին զմե-
րովք, և իմաստունն ծիծաղեսցի զամենեքումբք.
զի իւր բուն առարկայ է առաւել վսեմ. և վեր-
ացեալ և անվրէպ քան զայլոցն ամենեցուն:

Այլ իմբռնումն և գլխաւորագոյն առարկայ ի-
մաստութե̅՝ ոպ̅ նշանակեցաք, է ԷԱԿՆ ԲՈՒՆ ՈՐՊԷՍ
ԷԱԿ. ի սոսկ էութիւն իւրայ, մշտնջենաւոր, ան-
նիւթական, անայլայլակ, և անվրէպ: Եւ մի այ-
սորիկ այս գիտուի կոչի ՄԵՏԱՓԻԶԻԿԱՅ. որ թարգ-
մանի ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ, այսինքն 'ի վերոյ քան զբնա-
կանն, և իբր ա̅ծային. զի է վերագոյն քան զֆի-
զիքայ:

Վերացուցանէ, որպէս լուսոյ, իմաստունն՝ նորին
իմացողութե̅ զաննիւթականն 'ի նիւթականէն,
զանզգալին 'ի զգալւոյն, զգոյացութիւն 'ի պատահ-
մանց, զտեսակն յանհատէն, զսեռն 'ի տեսակէն,
և յընդմիմեամբ սեռից զսեռն զսեռականագոյն. և
կառուցեալ սկզբունս ընդհանրականս՝ քննէ զճշմար-
տութի ամ̅ գիտութեց. և որ ծնունդ հուսկ յե-
տոյ քան զամ̅, իբրեւ մեծաւ զօրութեամբ դշ-
խոյանայ:

Եւ ոչ շատացեալ իմաստնոյն արտաքին իրօք, իբր
զի գերագոյն իմաստութի է ճանաչել զինքն, բա-
ժանէ զինքն իսկ յիւրմէ. և անմեռ զատուցեալ
ոգին յիւրմէ մարմնոյ, կամի ճանաչել թէ զինչ ի-
ցէ այն. արդեօք կուտակութի ինչ հիւլէից, ոպ̅
կարծեաց դեմոկրիտոս. եթէ հուր, ոպ̅ երակլի-
տոս. եթէ օդ, որպ̅ դիոգինէս. եթէ ջուր, որպ̅
թա-

Թաղես. եթէ արիւն, որպէս կրխոխս. և եթէ ներդաշնակութիւն ինչ, որպ եմպեդոկղէս : Իմաստասէրք ոչինչ քան զանասունս զգօնագոյնք. որք ունին ոգի, և չճանաչեն զայն. և չեն արժանի ունելոյ :

Բայց ծանուցեալ նր յիւրմէ վերայուցիչ իմացողութէ, թէ ոգին է հոգի անմահական, կամի իմանալ՝ թէ զիա՞րդ իմանայ, ո՞րպ զգայ, ո՞պ գործէ, ո՞րպ կերպարանէ զանդամս. և թէ յինչ զօրէ, յորժամ 'ի մարմնոյ հրաժարի :

Այսուիկ մտադիւրագոյն ևս վերելս առնէ յազնուագոյն և 'ի վերառեալ մասն աշխարհի. ցոյց է, [illegible] հրեշտակական հոգւոց, կամեցեալ գիտել՝ ոչ անապաշտ ընդվայրաքննութե տխանեաւ, այլ հաստատուն սկզբամբք, թէ իցեն, թէ ո՞րպ շարժիցին, զիա՞րդ ը միմեանս խօսիցին, եւ տարբերիցին 'ի միմեանց, և համօրէն 'ի հոգւոց մարդկան. անհնար թուելով, թէ ծանիցէ զհրեշտակս, որ ոչն է հրեշտակ :

Եւ ո՛չ յայս սակս այս ամ մեծամեծ առարկայք, և տխեղերք ամ ընուն զվեհ մարդկային մտաց : Իրանէ իմաստութն արտաքոյ աշխարհի. անձուկ ունելով ճանաչել զամենամաքուր և զամենապարզ [illegible], զպատճառ պատճառաց, զսկիզբն անըսկիզբն, և անչափ, իւր ինքեան միայն հասանելի. զի միտ հունաւոր ոչ կարողանայ բովանդակել, բայց զառարկայ հունաւոր : Զինք ազգ այնպէս խուժադուժ, որ ոչ ծանիցէ, թէ է մի ած. և ո՛չ ըղձանայցէ ճանաչել՝ թէ ո՛ իցէ այն : Եւս և 'ի հեռաստան ընդ բևեռօք, ուր 'ի կէս տարւոյն չծագէ արև՝ յայն խաւարային օդս և 'ի միտս՝ ճառագայթէ այս ճշմարտութի. ամ ուրեք կանգնին սեղանք և տաճարք, ամենեքին երկրպագուք են ածպետութե, նմա աղերս արկանեն, յանուն նր երդնուն, և չճանաչեն զնա :

Հայեաց 'ի տունէ յիսկն գեղանկար ծաղկանց. հայեաց 'ի գիշերի ը կանոնաւոր շրջանս աստեղաց. ամ ինչ թէպէտև անմռունչ, քարոզէ քեզ. թէ է ած. զի այսպիսի գեղեցիկ արուեստու֊

րու֊

բութիւն՝ չէ առանց արուեստագիտի։ Նոյնպէս յատայն սարգէց ստայնանկաց. 'ի տնտեսական կենակցութի միջմանց. 'ի քաղաքական հոգեկալութեան մեղուաց. այսպիսի մանուանց աշակերտաց միայն բնութիւն է վարժապետ. մինչև հարկիս ասել, կամ ած է բնութիւն, և կամ գործ այ։

Իսկ արդ՝ եթէ առ ամ առարկայ իմանալի կարգեալ է կարողութի իմացական, որ յառարկայէն առնու զտեսակ, և կատարելագործի, զինչ զարմանք են, թէ միտ մարդկային անձկանօք բերիցի 'ի ճանաչել զառարկայ ինչ այսպէս մեծ և ածային, յորմէ միայն շնորհի զվերջին զիւր կատարելութի։ Հայեաց 'ի գեռածին լակոտ շան զի 'ի լոյս ընծայեալ աչօք փակօք՝ 'ի խնդիր է թաւամազ ընտեանց. զոր ոչ ետես երբէք. զամ մերժեալ և յամէ խորշեցեալ՝ միշտ կաղկանձէ, միշտ կնծկնծէ, մինչև գտանել նմա զծոց մայրենի. և իբրև գտանէ, զայն գիէ՝ յայն հանգչի և վայելէ։ Ըստ ամին օրինակի միտքն՝ արարեալ յայ վն այ՝ ոչինչ իմէք այնպէս սաստիկ և ներքուստ անձուկ ունի, ոմ ճանաչելոյ այ. բայց քանզի ոմ զաշացու առ ածայինս, յորի յառարկայս զգալիս, յարարածս խնդրէ զարարիչն. յանցաւոր բարիս խնդրէ զգերագոյն բարին. և չգտեալ 'ի սոսարինս՝ զոր խնդրէն, տառապի, և չգիտէ՝ էր աղագաւ։

Ապա այս է գերագոյն բերկրութիւն իմաստնոյն, այս է ———չ—յն՝ Է որ զուարճանայ։ Զի որովհետև միտ իւր լուսաւորագոյն է և սրատես քան զայլոյն, կերպարանէ ևս բարձրագոյն և ճշգրտագոյն և յանկագոյն իմաստս զայն անբաւ մտաց, որչափ հնար է տանել մտաց հունաւորի. յայնմ ընկղմի, յայն յառեալ հայի, և յայնմ վայելէ զերանութի ինչ յերկրի։ Զի՝ ոմ ուսուցանէ արիստոտէլ, առաւել շքեղ է և զուարճալի փոքր 'ի շատէ ճանաչել զածայինս, քան լինելի զմարդկայինս։

Այս վսեմական տրամախոհութիւնք են իմաստնոյն, յորժամ ներածնանյ։ Սոքօք յափշտակէ

զունկնդիրս, և ապշեցուցանէ։ Վնկ ասացաւ յա-ռասպելս, թէ Աթենաս չա̃ծուհի իմաստութե̃, զորս միանգամ տեսանէր, արձանացուցանէր։ Անմիտ քան զանասունս են այնք, որք կարծեն, թէ Որփէոսի յապուշ կրթեալ իցէ զանասունս՝ քաղցրանուագութ̅բ իւրոյ քնարի (262)։ Քնար էին երգք ՚ի նմանէ յօրինեալք ՚ի վ̅ր երկնային ի-րաց՝ և ներքին առաւելութե̃ց, առակաւ ծած-կեալք ՚ի տգիտաց՝ առասպելեաց քօղով. որ եղև բնաւոր ներարանութի այնց դարուց, յորս միայն իմաստութիւնն էր համարեալ մ̃գ, և այլ մ̃գին վայ-րի անբանք։

՚Ի վերոյասացելոց առաւ մարթիս իմանալ զսահ-ման իմաստութե̃՝ և զնորայ ծայրից։ Իմաստութիւն է ուղղել զմ գիտութեանց՝ ազ̃ գիտութի̃ բարոյական և ընդ-հանրական. խոհեմ ընդհանրական ... ՚ի ... իւրոյ ... ՚ի նիւթոյ. ... տարրից ... ընդ ... և ... համե-ղին և ... ։ Ծայրք իմաստութե̃ են՝ գիտու-թի̃ այսց գերագոյն առարկայից, և անապաշտ կա̃ յանդուգն ընդդիմադարձութե̃ զնոքօք։

## ԳԼ. Բ։

## Յաղագս արուեստի։

Ո՛չ խօսիմք մեք աստ զազատական արուեստից, որք ՚ի դասակարգէ են գիտութեց, ա̃յլ ասացաք, այլ՝ զմեքենական արուեստից կերտուածոց, որք յա-ծին զգործովք արտաքնովք, որ ՚ի պէտս են մարդ-կային կենաց։

Վաղնջուց տրտունջ է հանապազ ազգի մարդկան՝ զմօրէ հասարակաց, թէ անասունք անաշխատ և անջան գիտեն զարուեստս որ պիտոյ է նց. իսկ մարդկան բազում աշխատութե̃ պէտք են ՚ի գտա-նել զնոսա, և ես առաւել առ ուսանել զնս։ Ո՛չ պիտի չերամոյ արարագործ՝ ՚ի մանել զիւր թելս. և ոչ ծիծռան ճարտարապետ՝ ՚ի կերտել զիւր պա-լատ. և ոչ ցլու վարժեալ, վարել ՚ի պէտս զիւր եղջիւրս։ Ծնանին արուեստք ընդ նոսա. իւրա-

քան-

քանզի իւրն է իւր վարդապետ և աշակերտ, և յա_մօթ առնեն զմարդ, որ իմաստունն է քան զնո_սա։ Որ շատ գիտէ, սակաւ գիտէ։

Բայց որ ոք վն այդր քրթմնջէ, նախատինս գնէ անձին, և իւրում արարչին, որ նախ առաջին զա_տոյց [illegible] յանասնոց. կամեցեալ՝ զի սոքա ու_սցին զարուեստս խոշորս 'ի բնէ, և մարդ ուսցի զգեղեցկագոյնս յիւրմէ հանճարոյ։ Եւ երկրորդ՝ զատոյց [illegible] 'ի ռամկայնոց. 'ի տալ նց զընդունակութի ազատական արուեստից, և սո_ցա զյարմարութի առ ծառայականս, տալով զու_շիմութիւն բաւական 'ի գտանել, և ձեռն հնարա_ւոր 'ի կատարել։

Զինչ լինէին հասարակապետութիք առանց ռամ_կաց. և զինչ լինէին ռամիկք առանց [illegible]։ Այս անսչութիւն անօրինէ գերագոյն արուեստա_գէտն, զի ռամիկք ծառայեսցեն իմաստնոց՝ [illegible]. և իմաստունք ծառայեսցեն հարկաւորութեան [illegible]։

Նա՝ 'ի պահել զյառաջագէմ կարգ յանկատարից առ կատարեալս, նոյն ինքեան արարչին կամ ե_ղեն, զի անասունք ուսցին զարուեստ 'ի բնուէ, և մարդիկ յանասնոց։ Զճարտարապետուէ ուսու_ցին մեղուք, զերաժշտութի սոխակք, զքանդա_կագործութի արջք, զլրտութիւն բզէզք, զնա_ւարկութի կարապք, զնետաձգութի ողնիք, զա_կանահատուէ նապաստակք, և զգալարիս բժշկա_կանս՝ հիւանդագին անասունք։

Իմաստնապէս սահղծարանեցին խորախոհ իմաս_տասէրք, թէ թաւմաս՝ որ է [illegible]՝ եղև ծնող ծիածանի (26;). 'ի նշանակել՝ սաէ պղա_տոն, թէ զարմանքն է ծնող արուեստից։ Բայց 'ի դէպ է զանազանել զայս իմաստուն առաց_ուած։ Զարմանքն եղև ծնող ազատական արուես_տից. ուստի և ասած է, թէ 'ի [illegible]. Բայց հարկն եղև ծնող ծառայ_ական արուեստից. ուստի է և այլ առած, թէ [illegible]։ Այս հարկն բանա_գատեաց զմարդիկ՝ 'ի խնդիր լինել այնց. օրինակն

անաս_

անասնոց ուսոյց նոցա. հնարագիտութիւն յաճա-խեաց, և պերճասիրութիւն կատարելագործեաց։

Եօթն արուեստս ազատականս որոշէ նախնի իմաստասիրութիւն. զի. Քերթողութիւն, Հռետորութիւն, Տրամաբանութիւն, Թուաբանութիւն, Երաժշտութիւն, Երկրաչափութիւն, և Աստեղաբաշխութիւն։ Եւ զուգաթիւ որոշէ զմարմ-նականսն և զձեռնականս. զի է. Երկրագործութիւն, Որսորդութիւն, Զինուորութիւն, Դարբնութիւն, Վիրաբուժութիւն, Նաւագործութիւն, և Նաւարկութիւն։

Բայց այժմ եղև պատճառ՝ կամ պարզմտութիւն այնց գարուց, կամ խորհուրդ եօթնեակ թուոյ՝ նուիրական համարելոյ, և կամ համանունութիւն անուանց՝ նշանակաց աւելի քան զոր հնչէն։ Որ և իցէ՝ յայտ է թէ որպէս եօթնեակն ազատական արուեստից է թերատ. զի ոչ յիշի Քաղաքականու-թիւն և Բարոյականն. նոյնպէս թերատ եղև և եօթ-նեակն ծառայականաց, ոչ յիշելով զԳաղափարահանու-թիւն, և զՃարտարագործութիւն, որ յանարգաց միջի են ազնուագոյնք։ Մինչև մարթ է ասել, թէ այնք իմաստունք ընդ թուով արկին միայն զարուեստս հարկաւորս հասարակապետութեան, և ոչ զփափ-կականս և զաւելորդս։

Թող զի՝ սաստիկ խիստ է, թէ արուեստն Զինուորական 'ի կողմանէ հրամայողին՝ վերաբերի առ քաղաքա-կանութիւն. այլ 'ի կողմանէ հնազանդելոյն, այս՝ մարթ է կոչել զայն Բարոյական, բայց ոչ Մեքենական, և ոչ ծառայական, սեպհական գոլով արիութեան։ Սակայն թէ չիցէ իմաստն զարուեստէ Զինագործու-թեան, և ոչ զինակրութեան։

Բայց ո՛ր և իցէ բաժանումն արուեստից, սահ-մանն բանից զատ համանունութեան։ Այս նեղա-պէս խօսիլ կամեցեալ Ազատական արուեստից, որք կոչին Մեքենականք, և ոչ Ձեռագործականաց, որք որոշ ազատականք՝ 'ի համար դասին գիտութեանց, այս է նոցա ճշմարիտ սահման։ Արուեստ է հմ-տութիւն մտածանելոյ յեռագործութեան ձեռագործութեան իմ-մտանել 'ի նիւթ ինչ արտաքին, 'ի դէպս մարդկային կենաց։

Հմտութիւն կոչի ուղիղ եղանակ արուեստաւորին, հիմ-

հիմնեալ 'ի ճանաչումն ճշմարիտ խորհրդոյ, որ ինքնին չեն սխալական ։ Որով զանազանի արուեստն 'ի բաղդէ, որոյ երբեմն զծաղու եկեալ՝ առնէ ըզգործս արուեստի, 'ի ծաղր առնել զարուեստաւորն ։ Ով յորժամ նէալկէս անգիտացեալ նկարել զփրփուր ամեհի երիվարի, և պրոտոգինէս զփրփուր կատաղի շան, կոյր բերումն բախտի արար՝ զոր երկու ականի նկարիչք ոչ գիտէին առնել, առ այպանել զերկաքանչիւրն ։

Կերպարանաւորն արտաքին և երևելի՝ որ մուծանի, կախեալ կայ զներքնոյն և զիմանալւոյն. ըստ զաղափարեալն զգաղափարէն, օրինակեալն զնախագիծ օրինակէն, և տիպն զնախատպէն ։ Զի արուեստաւորն ոչ գործէ իբրև զանասունս կոյր աղդմամբ, այլ՝ որպէս արուեստապետ, հայեցեալ յիրս 'ի ներքս յինքեան ։

Նիւթ է այն՝ յոր մուծանի կերպարանութիւն, հնար գոլով զնոյն կերպարանութիւն մուծանել յայլևայլ նիւթս այլևայլ արուեստի. որպէս կուրիոն արար զթատրոն 'ի փայտէ, պոմպէոս 'ի կճոյ, և ըսկաւրոս յապակւոյ ։

Գործարանն ևս առաւել նիւթական կամ առաւել ոգեկան պէսպիսացուցանէ զարուեստս. որպէս զկենդանագրութիւն աղեքսանդրի երեք միայն արուեստաւորք այլևայլ ճարտարութեամբ աշխատաւորեցին գիմամրցանակաւ. պիւրգոտելէս ակրով (փորագրողի), ապելլէս գրչաւ (նկարչի), լիւսիպպոս ձուլիւք (անդրիագործի). և ոչ որ յաղթեաց այլում. այլ՝ երեքին ևս գտան ամենեցուն յաղթական (264) ։

Վախճանն է կրկին ։ Անմիջական վախճան է նոյն ինքն գործուածն. Վերջին վախճան է կիրառութիւն գործոյն ։ Նա է վախճան արուեստաւորին. սա է վախճան արուեստին. որ է դիւրութիւն մարդկային կենաց ։ Յայսմ վերջին վախճանէ առնու արուեստաւորն զկանոնս արուեստին ։ Զի թէ չինէ նաւ զնետ, զի թռուցեալ խոցեսցէ, առնէ զնա թեաւոր և սայրասուր ։

## ԳԼ. Թ.

### Առաւելութիւնք և կերպարանութիւնք ծառայական արուեստից:

'Ի սահմանէ անտի մարթիս խնդալ, թէ որչափ հմտութիւնն է կատարեալ, և կերպարանութիւն՝ չքնաղ, և նիւթն պատուական, և գործածն քերթող, և ճախճանն մեծարգի, այնչափ առաւել ազնուական է արուեստն: Բայց քանզի դժուարաւ պատահէ այս ամենայն կատարելութեանց ընթացակցութիւն 'ի մի արուեստ և 'ի մի գործ. գովանի գոլով ոմանց 'ի միում, և ոմանց յայլում, որպէս կազմութիւնք 'ի մարդկային մարմինս, յայսմանէ ծագեն ծառ. արուեստից. և դժուարութիւնք 'ի գտանել զնոյն, և յորոշել:

Բայց և այնպէս՝ սարգ խնձ է, թէ որչափ արուեստ ինչ ծառայական աւելի մերձաւորութիւն ունի ընդ ազատական արուեստս և ընդ գիտութիւնս, այնչափ առաւել է ազնիւ. զի ազնուութիւն չափի 'ի ծագմանէ իւրմէ: Այս ազնուագոյն են պատկերահանութիւնք և քանդակագործութիւնք, քան ճարտարութիւնք կամ շինութիւնք. զի ոչ կանոնք են բոլորովին մեքենականք, զորս ուսուցանէ փորձն, այլ երկոքին առաջինքն առնուն կանոնս 'ի բանաստեղծութենէ, որ կեղծեօք զնմանութիւն բերէ զճշմարտի:

Բայց յերկուսին յայսոսիկ բարեկամ հակառակորդս՝ այնչափ ազնուագոյն է պատկերահանութիւնն քան զքանդակագործութիւն, որչափ նմանողութիւնն է առաւել հանճարաւոր: Վասն զի քանդակագործութիւն զնմանութիւն բերէ զհաստատուն մարմնոյ՝ կլլնգօք և խորափիեօք նիւթականօք, բայց պատկերահանութիւնն նմանաբերեալ զերեւոյթս պայծառ գունովք, և զխորափին ստուերարկութ., զարմանաւոր զօրութ. հանդիպահայեցութեն, տայ մակերեւոյթին լինել մարմին, և ճշմարտանմանին երեւիլ ճշմարիտ: Ուստի և ճարտարապետութիւնն լինի ազնուագոյն քան զպատկերահանութիւն. զի սա առնու զկանոնս 'ի հանդիպահայեցութեն, որ խառն երեւու

բնութիւնք. և նա առնու 'ի [illegible], որ է գի-տութիւն իրական և վերագոյն :

Այս՝ [illegible] [illegible]՝ առաւել արգոյ և ազնուական է [illegible]՝ քան [illegible], զի կենաց տալ մարմարինի մեռելոյ անձնոյ երկաթում տաշել 'ի նման տաշուածս անցաւս, այնչափ է զուարճալի. որչափ տաղտկալի է և սոսկալի՝ տեսանել արինաշաղախ ձեռօք տաշել զմիս ցաւակիր, և խառել զոսկերս զմարմնոյ կենդանւոյ :

Բայց եթէ ազնուութիւն արուեստից չափիցի յայ[illegible] [illegible], որ պիտանագոյն իցէ առ հասարակաց օգուտ, խոստովանելի է՝ թէ [illegible] է ազնուագոյն քան [illegible], և արուեստն՝ որ վարէ [illegible] [illegible] մի հասարակաց պաշտպանութեան, քան զայն՝ որ վարէ [illegible] 'ի պէտս կահուց կարասւոց տան : [illegible], որ օգնէ բնութեան 'ի հասարակաց պէտս, քան [illegible], որ խաթարէ զայն վասն առանձնաւոր բերկրութեան :

Բայց յայլմէ կողմանէ, եթէ [illegible] գիտութիւնք, որք հաճեն միայն զմիտս՝ ազնուագոյնք են քան [illegible], որք ծառայեն հասարակաց, իբր զի նիազն 'ի ծառայութեան՝ է առաւել աղատ, և առաւելեալն յազատութեան՝ է առաւել ազնուական և վեհական, հարկաւ հետեւի՝ թէ [illegible] է առաւել վեհական քան [illegible]. զի սա 'ի վար արկանի մի օգտի. և նա մի լոկոյ բերկրութեան : Ուստի և արուեստք պիտանագոյնք են առաւել անարգք. և զբօսականքն առաւել ազնուականք. զի են ազատականք :

Իսկ եթէ մտածի [illegible], խոստովանելի է՝ թէ ազնուագոյն է արուեստն՝ [illegible] ազնուութեան և պատուականութեան [illegible] և [illegible], յոր գործի : Վասն ոչ առանց պատճառի գչխոյ արուեստից կոչեն զեւրեանց [illegible] քիմիագործք. որոց կամեցեալ կեանս տալ բոցոյ փիւնկանն 'ի հրահալեցն ( ... ոսկւոյ ), մերձեցուցմամբ ներգործաւորաց 'ի կրաւորս, ջանան առնել արուեստի գերընալ

նոյն 'ի գործս բնութե, որ չափն է նմ գնոց, և իւրեանց ըղձանաց: Արուեստ այս՝ ըստ ինքեան իրական, այլ 'ի գործադրութե երևակայական. զի չէք գտանել զճշմարիտ նիւթն, ուստի բնութն արտադրէ ոսկի. և ոչ զորոշ չափն առաջնոց որակութեց համգամանակաւորաց՝ 'ի մուծանել յայն ըղձեսակ ոսկւոյ: Ուստի այն աղնուական հեփեստականք, փշմամբ 'ի քուրայս [illegible] զոր ունին՝ վն 'ի ձեռն բերելոյ զայն յոր յուսացեալ են, փակեն յապակեղէն աման՝ իբր յանօթ պանդորեան՝ ըղձոյս իւրեանց. որ հուսկ ուրեմն անյոյս՝ ծխաղելի ճայթմամբ ստացեալ արտաքս, Թողու նց միայն զոսկին յաչս, և զմուրն յերեսս (265):

Բայց թէ խօսիմք ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՒԹՈՅ և զճշմարիտ արուեստէ, անտարակոյս աղնուագոյն է [illegible] քան [illegible]. և [illegible] քան [illegible]. և աղնուագոյն քանդակագործ եղև ալիւրդառեղէս՝ որ քանդակէր ՅԱԿՈԲԱ ՊԱՏՐԻԱՐՔԱՆ, քան զփիղխաս՝ որ քանդակէր 'Ի ՀՈՂՈՄԵՆԵ: Սակայն յայլմէ կողմանէ, վն զի գործք ալիւրդառեղայ վասն մանրութեան իւրեանց՝ պարծանք էին արկեղաց, այլ ոչ զարդ տաճարաց և քաղաքաց՝ իբրև զգործս փիդեայ, որք բազում առաւելութբ վն [illegible] իւրեանց էին անուանի: Վասն այսորիկ առաւել ընթանայր աշխարհ 'ի գնիդոն՝ տեսանել զափրոդիտեան կուռս փիդեայ, քան 'ի մակեդոնիա՝ տեսանել զաղէքսանդրն ալիւրդառեղայ. իբր զի առաւելայր քան զյարգ ՆԻՒԹՈՅՆ գեղ ԱՐՈՒԵՍՏԻՆ:

Յայսմանէ՝ որպէս աղնուագոյն են զխառւէք, յորում աղնուագոյն է նոյն [illegible]. այնպէս [illegible] գործոյն [illegible] զոլով գործաւորին, աղնուագոյն լինի գեղեցիկ ինչ [illegible]՝ քան զգեղեցիկ ինչ [illegible]. և [illegible] անմանեայ, քան [illegible] զուգինեայ (266):

Այս եթէ գեղեցկագոյն [illegible] իմանայցի նմանագոյնն բնականին, առոյգ իմն է, զի թէպէտ և աղնուագոյն է մարդ քան զզրաստ, բայց և այնպէս՝ գեր 'ի վերոյ մեծարգի եղև [illegible] նկարեալ 'ի ալիւրդառեղայ, քան [illegible] նկարեն

յա

յապեղէսէ. զի թէ սա զարհուրեցոյց զկատանդ-րաս, նա վրնջեցոյց զերիվարս, Եւ թէ համեմատեմք Նիկողայ քանքանայ ընդ Հերակղեայ պարրասիասի, սա եղեւ նմանագոյն խնկականին. վէս և սասւել գովելի. զի քանքախ նկարեալ խաղողն խաբեաց զթռչունս. և պարրասիոս նկարեալ վարագուրաւ խաբեաց զնոյն ինքն զքանքախ։

Բայց եթէ տառկայք գիտութեց են ազնուագոյնք՝ որչափ են Հռովմայեցիք և վերագոյնք քան կարծեաց ամբոխին, յայտ է թէ ազնուագոյն լինին այն արուեստք, որք ցուցանեն գործս հանճարոյ և իբր հրաշակերտս. մինչև թուիլ նոցա ոչ գործ մարդկային, այլ՝ գերանձային։ Այսպիսի եղեն Պօղիկղետ արքիմեդեայ և Ծովանգոյն Աստեւոր, պարփակեալ յապակեայ մին գերկնից անբաւութի, և միւսն զժամանակին փոխուստ։ Եւ այսպիսի եղեն Ազաւնեակն արքիտասայ, որք իւրովի թռչէին՝ փայտեղէն գոլով. և Արջանք գեղապոսի, որք իւրովի փախչէին, թէ չէին կապեալ. ունելով երկաքանչիւրոց փոխանակ հոգւոյ զանեռնյթ հանճար հեղինակաց իւրեանց (267)։

Բայց և այսու ամիւ՝ հնար է մեղ հաստատութբ կնքել, թէ ով այն արուեստաւոր է գերապանծ, որ յարուեստի իւրում՝ որ զինչ և իցէ՝ գիտէ զամ զոր հնար է գիտել, և առնէ զամ զոր հնար է առնել. այնպէս գերապանծ լինի գործն, յոր Գերմանաց արուեստաւորն 'ի վար արկանիցէ Այլոց Ձիգն Գիտոյ Գիտագիտ։ Այսպիսի եղեւ Արքեան պացեկղեստի, անուանեալ Ճան Ճանեաց. Նա յետ ըսձեռց. զի անտի միայն ամ նկարիչք և քանդակագործք առնուին զգաղափարական համեմատութիւ մարդկային մարմնոյ (268)։

Մինչ զի՝ ոչ փառացն արժանեաց, և ոչ այլ ինչ Հռովմաճառագայթեալ արուեստի (որ են եօթն սքանչելիք աշխարհի) հաւատարիլ կարողացան սոյն միայնոյ։ Ձի զոյլովք ամենեքումբք՝ յաձախուճ սակւոյ և ձարտար արուեստաւորաց՝ հնար եղեւ անցանել զանցանել. այլ այսմ միոյ միայնոյ հանձարոյ մասց ոչինչ այլ հանճար կարողացաւ կատարելապէս լինել

նել նմանող: Բնութիւն իսկ ուսուցիչ արուեստից՝ յայսմ միայնոյ ճարտարէ կարող էր ուսանել ինչ, քան ուսուցանել. զի նախատիպք նր երբեք չհասանեն, ցոր վայր եհաս այս օրինակ:

Յայսմ համէ՝ որ ասացաւ, մարթիս խմանալ՝ թէ յինչ հաստատեալ է արուեստն ՔԵՐԹՈՂԱԿԱՆ, և որք իցեն ծայրք նր: Մի ծայրն է ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԿԱՆ, անուանեալ ԱՆՈՒՇԱՒԷՏՈՒԹԻՒՆ, և միւսն՝ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՍԱՐ ԲՆՈՒԹԵԱՆ, որպէս իսկ լուար: Նա չունի զսկզբունս արուեստին. սա ունի խանգարեալս. վասն այսորիկ ասացեալ ճշմարտակար է սա քան զնա: Զի որ չունի՝ զոր ոչ գիտէ, գովութեան է արժանի. այլ որ ունի՝ զոր ոչն գիտէ, զայլս խաբէ, զորգիւնս կորուսանէ, և պատժոյ լինի արժանի:

Ոչ սխալէ յարուեստն, որ կամաւ սխալէ ընդդէմ արուեստին. որպէս այլուր ասացաւ. նա՝ երբեմն ճարտարութիւն է սխալել յարուեստն: Անյատկուն լեզուի ամօթ է քերթողի, յորժամ անյատկութիւն դուստր է ագիտութեան, բայց որ կամաւ խոտորի 'ի քերթողական կանոնաց, առնէ քերթողութիւն վթար, այլ՝ չէ քերթող վատթար: Նա՝ երբեմն 'ի վրիպակ անգր ցուցանի հանճար. և ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ լինի յա. յորժամ քերթողն առէ ինչ, և կամի թէ խմանայցի այլ ինչ. որպ 'ի ՆՈՐԱՁԵՒՈՒԹԵՆ, որ որչափ խոտորի 'ի ՅԱՋՈՂՈՒԹԵՆ, առանց ՀԱՆՃԱՐ. և ՆԵՐԲՈՂՈՒԹԻՒՆ փոխի 'ի ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ: Այդպիսի ՆՈՐԱՁԵՒՈՒԹԻՒՆՔ լինին և յարուեստս մեքենականս: Նկարիչն հնարագէտ՝ գիտութբ խանգարէ զհամեմատութիւնս մարդկային մարմնոյ, 'ի նկարել զայլանդակ ինն, և որ 'ի ագէտ նկարչի է ագիտութիւն, 'ի ներհուն նկարչի է հմտութիւն:

Բայց յայսմանէ պարտ է որոշել 'ի գործն և յարուեստաւորն՝ ՆԵՐՆՈՒՆԱԿԱՆ բարութիւն 'ի ԲԱՐՈՅԱԿԱՆԷՆ: Եթէ նուազ է գիտութիւնն, բայց բարւոք գիտուն արուեստաւորին, բարի է արուեստաւորն, այլ գործն յոռի: Եւ զարդն հակառակն՝ եթէ վարէ զարուեստն ըստ յոռի ինչ վախճանի, յոռի է արուեստաւորն, այլ ոչ արուեստն:

Մեր-

Միրտիղոսի կամեցեալ դաւաճանութե վտանգել զենոմաոս զտէր իւր յոլիմպիական խաղս, կառոյց կառս յանկարծ 'ի կործանումն, քան յառաջնորդութեն 'ի նպատակ անդր։ Ներոն առ հեղձուցանելոյ զմայր իւր, ետ շինել նաւակ յանկարծ 'ի նաւաբեկութեն քան 'ի նաւարկութեն։ Բարիք են զեն գործոյ, այլ չարաչար գործառութեան, զի բարութիւն գործոյն չափի յարուեստէն, որ է ունակութիւն մըտաց. այլ ուղղութիւն կիրառութեան արուեստին չափի 'ի չարութեն, որ է 'ի կամս։

Վասն այսորիկ և արուեստք անմեղականք որչափ հնանան, այնչափ յառանան. և հնարեալքն վասն հարկի՝ արքանեկեն հեշտութեան։ Յոռանայ արուեստն, յորժամ շահասիրութիւնն լինի արուեստաւոր. քանզի յորժամ հանճարն ոչ առաջնորդի 'ի բանէն, այլ առաջնորդի 'ի շահասիրութէ, միտք կորուսանեն զհանճար, և մոլութիւն լինի հանճարաւոր։

Բժշկապետութիւն եգիտ առողջարար իւղս 'ի զօրացուցանել զմարմինս. իսկ շահասիրութիւն իւղավաճառաց քնքշեցոյց զիւղս՝ 'ի նուաղել զօգիս (269)։ Կտաւագործութիւն. որ անկանէր հաստ թելս 'ի ծածկել զմերկութի, ուստի ապա 'ի սարդից՝ ոստայնս թափանցիկս 'ի ցոյց մերկութե։ Արուեստ խոհանոցի 'ի մերժել զքաղց, արուեստակեաց հաւուկ ուրեմն պատուական համեմունս 'ի զարթուցանել զնա։ Պերճասիրութիւն ոչ շատանայ սակաւուք. թանգագին են չար սովորութիւնք։

## ԳԼ. Ժ.

## Թէ զինչ իցէ խոհեմութիւն։

Իմաստնապէս արիստոտէլ մօտ առադրէ զխոհեմութիւնն՝ արուեստի. զի 'ի մէջ երկոցունց՝ տարբերութեն միոյ լոկոյ բառի՝ մեծ տարբերութեն 'ի մէջ բերէ ազնուութե, որպէս լուիցես (270)։

Այլ ոչ այլ ինչ է խոհեմութի, բայց ուղղութի-ւն ինչ ունակութեան մտաց, 'ի գործել ազատ և ուղիղ գոր-ծոց մարդկային արարոց՝ զայնոսիկ, որք բարոյականք են բարի

ԲԱՐԻ՝ ԿԱՄ ՉԱՐ:

Այսուհետև սահմանաւ արխտոտէլ որոշէ մեզ նախ՝ զԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ յայլոց ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵՑ. զի այլք հանգչին 'ի կանոնաւորեալ բաղձանս, և սա 'ի ԽՈ-ՀԱՆԱՒՈՐԻՆ ՄԻՏՍ: Ուստի այնչափ ազնուագոյն է սա քան զայլ առաքինութիս, որչափ միտք ազնուա-գոյն են քան զայլ կարողութիս:

Այլ և որոշէ զխոհեմութիւն յայլոց ԻՄԱՑԱԿԱՆ Ա-ՌԱՔԻՆՈՒԹԵՑ, եթէ 'ի հայեցողականաց և եթէ 'ի գործնականաց: Վ՟ զի հայեցողականք զանգի առ-նուն 'ի խոկումն ճշմարտութ. և սա է կարգեալ առ արարս: Եւ գիտութիք ներգործականք հային յուղղումն իմացական. և սա յուղղութի բարոյա-կան. և վ՟ այսորիկ նոքա առնեն գիտուն, և սա բարի:

Եւ ևս առաւել որոշէ զխոհեմութիւն 'ի ԽՈՐՀՐԴՈՅ և 'ի ԽԱԽԱԾԱՆԱՑ. զի այնք են անկատար ճանաչմունք, մին հայեցողական, և միւսն գործնական. բայց խոհեմութիւն է առաքինութի ամենակատար, զի ունելով ստոյգ և ապահով կանոնս, ոչ խաբել կարող է. և ոչ խաբել կամի:

Բայց առիցես, եթէ խոհեմութիւն է ՃՇՄԱՐՏԱՅԻՆ Ա-ՐԱՐՈՂԻ. զի՞արդ ճշմարիտ և ապահով լինիցին կա-նոնք խոհեմութե. եթէ մարդկային արարք են Ե-ՂԱԿԱՆՔ և ՊԱՏԱՀՄԱՆԱԿԱՆՔ, զի՞արդ միաբանիցին ան-ՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ, և ՊԱՏԱՀՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ. ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ, և ԱՆՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ:

Պատասխանեմ, թէ ճշմարտութիւն է երկատեսակ. մին ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, և միւսն ԳՈՐԾՆԱԿԱՆ. Հայեցողականն է համակերպութի ճանաչման ը՟ իմանալի առար-կայն. և սա չէ անվրէպ, եթէ առարկայն չէ ան-վրէպ, որպէս 'ի գիտութիս: Բայց ճշմարտութին գործնական է համակերպութի իւր կանոնի ընդ առարկայ գործելի. և սա է ինքնին ստոյգ. եթէ գործողութիւն չէ արգելեալ: Բայց բաց յայսմա-նէ, խոհեմութիւն կանոնաւորէ ՈՒՂՂԱՅՆ՝ ԲԱՆԻՒ, և համակերպութի բանին ը՟ բարեկարգեալ բաղ-ձանս՝ ոչ սխալէ երբեք:

Յետ այսորիկ՝ որոշէ զխոհեմութիւն 'ի ՎԵՐՆԱԿԱՆ

արդարութեան. զի նա կանոնաւորէ զներգործու-
թիւնս, և սա զարդարէ զկերպարանս: Եւ մի՞ այսորիկ
նա՛ է Ճշմարիտ առաքինութիւն, և սա ոչ. մի՞ զի
արուեստն հայի առաւելապէս 'ի բարութիւն գոր-
ծոյն, և խոհեմութիւն 'ի բարութիւն գործողին:
Հաւակ ապա որոշէ զխոհեմութիւն առնականն 'ի ներ-
գործականէն, զարդասականն 'ի բնականէն, և զմարդկայինն
յանբանականէն: Ո՛չ կոչի խոհեմ, որ առնէ զմի միայն
գործ խոհեմութեան. որպէս և ոչ իմաստուն, որ Ճա-
նաչէ զմի միայն Ճշմարտութիւն, նա՛ է խոհեմ, որ
ունի յինքեան զօրութիւն խոհեմաբար գործելոյ դիւ-
րաւ. և սա է ունակութիւն: Մի՛ոյ ներգործութեան
հնար է լինել առանց ունակութեան. բայց ունա-
կութեան անհնար է լինել առանց ներգործութեանց.
զի ծնունդ գոլով ներգործութեանց՝ ինքն ևս ծնանի:
Եւս և 'ի տղայս երևի ինչ ինչ խոհեմական՝ յա-
ռաջ քան զժամանակն. բայց միշտ խակ է խոհե-
մութիւն, որ չէ հասուցեալ ունակութիւ. և չէ
հասուն ունակութիւն, որ չէ կերպարանեալ խոր-
հրդով, որ անլծորդն է ընդ տղայութեան: Անասունք
մի քան զմի յաւէտ՝ արագ և զգուշաւոր հնարիւք
'ի պաշտպանութիւն և 'ի հոգաբարձութիւն անձանց,
կոչին խոհեմք կամ խորագէտք. որպէս մեղուք, աղ-
ուէսք, և արջք: Բայց չէ Ճշմարիտ խոհեմութիւն,
ուր չիք ուղիղ բան. և չիք ուղիղ բան յայն արա-
րող, որ չէ բանական զպատճառն առ զիւրոց
արարից: Ապա չեն խոհեմ անասունք, այլ բը-
նութիւն, որ գործէ 'ի նո. և ոչ այլ ինչ է խոհե-
մութիւն բնութեան, բայց նոյն ինքն ծածկեալ պե-
ղութեանն:

Այո՛ և մարդկային ուսուցմանց ոմանք անասունք
են շնորհակք քան զայլս, որպէս շունք, կապիկք, և
փիղք, յորմէ երևի թէ և անբանք իբրև զտղայս
ուսանիցին խոհեմութիւն 'ի խոհեմ մարդկանէ:
Բայց այնչափ խտիր է ի մէջ երևելոյ և գոլոյ,
որչափ ի մէջ Ճշմարտանմանի և Ճշմարտի: Ստոյգ
է՝ թէ որպէս խոհեմութիւն յածի զառնելի իրօք եղա-
կանօք, նոյնպէս եղական պատկերք՝ վասն զի են
մարմնաւորք և զգալիք, ոչ տպաւորին յանմարմին

և

և յընդհանուր միտս. այլ՝ 'ի կարծողականն, որ է կարողութիւն զգալի և մարմնաւոր, հասարակ և անասնոց: Յայս սակս անասունք, որք ունին կազմուածս մարմնականս նմանակս մարդկայնոց, ունին և կարծողական՝ ընդունակ պատկերաց եզականաց. և որ առաւել պինդ ունի զնա, է առաւել ընդունակ ուսանելոյ. զի այն տպաւորեալ պատկերք սովորութեամբ կամ գանիւ՝ չարժեն զանասունս և զողայս 'ի նմանակել զայն՝ զոր տեսանեն, և 'ի գործել զայն՝ զոր ըմբռնեն:

Բայց բազում ինչ ընդ մէջ է մարդկային խոհեմութե, և այսմ անասնական նմանողութե: Վս զի անասունք և տղայք՝ չհարկն ունելով փոխանակ կամաց. 'ի յանդիման լինել նոցա այնց պատկերաց, գործեն միշտ միօրինակ: Բայց այր խոհեմ համեմատէ զպատկեր առ պատկեր. հետևեցուցանէ զմի 'ի միւսմէ. և յեզական պատկերաց կերպարանէ նախադասութիւս հանրականս, և հակեցուցեալ զնս 'ի տեղիս, 'ի ժամանակս, և յանձինս, գործէ կամ չգործէ, որպ զիարդ առաւել պատշաճ թուիցի. և այս է կանոն ուղիղ բանին. որում տղայք և անասունք չեն ընդունակ:

## ԳԼ. ԺԱ.

### ՅԱՂԱԳՍ ԹԷ ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ ԻՑԷ՞ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ:

Առաքէն լուար. թէ յամ մարդկային արարս մարթ է մտածել իմն ֆիզիգական և իմն բարոյական: Ֆիզիգականն ծնանի 'ի բնական կարողութէ, և հայի յամբողջութիւն գործոյն. բարոյականն ծնանի յազատաքննական պատշաճողութէ. և հայի 'ի բարութիւն գործողին: Մինչև լինել գործոյ ինչ ֆիզիգապէս բարի, բայց բարոյապէս չար. որպ նկար ինչ գեղապանծ, բայց անհամեստ. և գործոյ ինչ՝ ֆիզիգապէս չար (կամ յոռի), բայց բարոյապէս բարի. որպէս նկար ինչ սրբազան, բայց գեղջկօրէն նկարեալ: Յայնմ կատարեալ է արուեստն. բայց մոլի՝ արուեստաւորն. յայսմ ա-

ռա-

առաքինի է արուեստաւորն, բայց անկատար՝ արուեստն։

Արդ բարոյական բարութիւն՝ յատկապէս համառօտեալ է յուղղութիւն բանական բաղձանաց, և զգայական բաղձանաց. մինչև կամացն համակերպիլ արդարութեան, ցասմնականին՝ արիութեան, և ցանկականին՝ բարեխառնութեան։ Այս երեքին բարոյական ուղղութիւնք կոչին բարի առաջնորդութիւնք. զի այն երեք կարողութիւնք կատարելագործին բարիոք ունակութեամբք. և ունակութիւնք կերպարանին առաջնորդութեամբ. որպէս այլուր ասացաւ։

Սոյնպէս է թէ՝ և ունակութիւնք արուեստից և գիտութեանց ասացանին առաջնորդութիւն, իմա, գործադրութիւն. վ̄յ և կոչին առաքինութիւնք. բայց ոչ կոչին բարի առաջնորդութիւնք. զի բարութիւն նոցա է բարութիւն ֆիզիկական, այլ ոչ բարոյական. են առաքինութիւնք մտաց, այլ ոչ ախորժակաց. առնեն գիտուն, այլ ոչ բարի զստացիչս իւրեանց. և իրօք բազումք եղեն նոքա, բայց ագէտք. և այլք գիտնաւորք, բայց մոլիք։

Յայսմ տրամաբանութենէ մարթիս եզրակացուցանել. թէ ճշդիւ խօսելով՝ զխոհեմութիւն ոչ է պարտ համադասել ընդ առաքինութիւնս բարոյականս, այլ ընդ իմացականս. զի ոչ հանգչի 'ի բաղձանս, այլ 'ի միտս, իբրև զգիտութիւնս. վասն լինելոյ իւրոյ իսկութիւն գիտութիւն առնելի իրաց։ Եւ ոչ վասն այսր նուազ է յազնուութեան քան զբարոյականս, նա՝ որպէս ասացաւ, այնչափ է ազնուագոյն քան զնոսա, որչափ միտք են ազնուագոյն քան զբաղձանս, իմա քան ըղկամս, և քան զկիրս։

Բայց և այնպէս, որպէս բուսան է բոյս 'ի մէջ քարանց՝ և քար 'ի մէջ բուսոց, նոյնպէս զխոհեմութիւն առ առաքինութեամբք բարոյականօք՝ մարթ է կոչել՝ իմացական. և առ իմացականօք՝ բարոյական, վասն ներքին և փոխադարձ հաղորդութեան, զոր ունի նա միանգամայն ընդ իմացականս և ընդ բարոյականս։

Հաղորդի նա ընդ իմացականս, զի քաջ խորհրդածել գործ է մտաց։ Հաղորդի և ընդ բարոյականս. զի

զի գործ է նր̅ ԽՆԱՄԱՏԱՐԵԼ ՀԱՍԱՐԱԿԱՑ: Վ̅յ̅ս̅ տիրապէս խոհեմութիւն կոչի ԱՅՆ ՀՈԳՒՈՅ. ակն, ոչ իմացական. հոգւոյ, որ̅պ̅ բարոյական: Եթէ արդարութիւն, եթէ արիութիւն, և եթէ բարեխառնութիւն գործեն բարիոք. ըստ այնմ գործեն բարիոք, ը̅ս̅ որում զհետ երթան առաջնորդութեան խոհեմութեան, առանց որոյ առաքինութիւնք բարոյականք են կոյրք:

Մարդն է ծառ շրջուն. գլուխն է արմատ, և անդամք՝ ոստք: Որպիսի է ՆՈՐԻՆՆ ՔՆՆԱԿԱՆՆ, այնպիսի է և ՆՈՐԻՆՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՆ. առաքինութիւնքն են անդամք, խոհեմութիւն գլուխ. նոքա ոստք, և սա արմատ: Հնար է արմատոյ լինել գալար, թէպէտ և ոստք իցեն խանձրեալ. բայց թէ արմատն է խանձրեալ, ոստք մնան անպտուղք: Հնար է մարդոյ լինել խոհեմ հայեցողապէս, թէև բարոյապէս չիցէ առաքինի. բայց անհնար է նմա լինել բարոյապէս առաքինի, եթէ չէ խոհեմ:

Վ̅ո̅կ պղատոն վերածէ զամ̅ բարոյական առաքինութիւնս 'ի խոհեմութիւն. և ոչ արձանք գեղազոյն՝ թէ չեն կապեալք, փախուստ առնուն, այնպէս՝ ասէ նա, առաքինութիւնք բարոյականք առանց կապանաց խոհեմութեան չեն հաստատուն. չքանան, և նուաղին:

Այն զի խոհեմութիւն խակ՝ առանց բարոյական առաքինութեանց անհնար է լինել ամբողջ: Զի զինչ օգուտ իցէ քաջ խորհրդածել, քաջ դատել, և քաջ հրամայել խոհեմութեան, եթէ բանական բաղձանքն ոչ կամիցի լսել բանին. և խուժան կրից նշկահեսցէ զօրէնս նր̅: Չէ ՃՇՄԱՐԻՏ ԹԱԳԱՒՈՐ, որ հրամայէ, և ժողովուրդն չհնազանդի նմա. և զո՞ւր պարծի խոհեմութիւնն՝ իբր ՏԻՐՈՂ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆԱՑ, եթէ չեն նոքա կամակատարք հրամանաց նորա: Վեր 'ի վայր է թագաւորութիւնն, յորժամ որ հրամայէն՝ ծառայէ, և որ ծառայէն հրամայէ:

Թող զի՝ անհնար է խոհեմութեան քաջ հրամայել, և քաջ խորհրդածել, յորժամ երկաքանչիւր բաղձանք չեն քաջ կարգաւորեալք: Զի զօրինակ

ըս.

շտգէք որ ը̄ օգս՝ այլ ը̄ այլոյ երևեցուցանեն ըղ-գոյն և զմծութեն արևու, այնպէս ծուխ կրից խանգարէ զդատաստան, երևեցուցեալ նմա զառ-երևոյթ բարին՝ ճշմարիտ բարի : Ապա այս է առանձինն իմն առաւելութեն իշխանութեն 'ի մէջ այլ ամ առաքինութեց, զի թէպէտ և կանոնա-ւորէ զգործոյական առաքինութիս, սակայն ինքն է առաքինութեն իմացական . և թէպէտ հանգչի 'ի միտս, սակայն է նա առաքինութեն բարոյական :

## ԳԼ. ԺԲ.

### Յաղագս պետական իշխանութեանց : Եւ նախ յաղագս քաղաքական իշխանութեանց :

Որչափ են տեսակք արդարութեն, նոյնչափ են և տեսակք իշխանութեն . զի իշխանութիւն քաղա-քական, տնտեսական, և անձնական : Յայլևայլ վախ-ճանաց այոց իւրաքանչիւր տեսակաց՝ ծնանին այլ և այլ կանոնք . զի յառնելի իրս՝ վախճան արուես-տին է սկիզբն իւրոց կանոնաց :

Ապա վախճան քաղաքական իշխանութեն, որպէս անուն իսկ ցուցանէ, է օգուտ հասարակաց : Զի վախճան իւրաքանչիւր անհատի՝ ըստ որում ան-հատ, է օգուտ իւր . և վախճան իշխանին ըստ որում իշխան, է օգուտ այլոց :

Տիբերիոս 'ի յաջորդել իւրում այնմ՝ որ գաղա-փարն էր իշխանաց (զի Օգոստոսի), զայս վկայու-թիւն վկայեաց յատենի ծերակուտին. Եւ յետ մահ-ուն, և այսուհետև ընդ այն քաղաքին. դարձ է քաղաքին իշխա-նի ծառայել ամենեցուն ընդհանրապէս, և իւրաքանչիւ-րոց մասնաւորապէս : Զայս ճշմարտութեն խոստովան եղև նա ինքն, ցորչափ էր իշխան. այլ մոռացաւ՝ յորժամ փոխեցաւ 'ի բռնաւոր : Որք արդարու-թիւնն, նոյնք և քաղաքականութիւն, են առաքի-նութիւնք անձնականք առ օգուտ այլոց : Ուստի՝ ամ քաղաքականաց հաւանութք, ընդ մէջ իշխանի և բռնաւորի այս միայն է էական տարբերութիւն, զի բռնաւորն թագաւորէ առ իւր օգուտ, և իշխանն թա-գաւորէ առ օգուտ իւրոց հպատակաց :

Յայսմ հիմնական չափաւորութեան քաղաքական խոհեմութեան բղխեն ամ կանոնք թփթփելոյ, զի բովանդակ ուղերձին առ հասարակութիւնն :

Այս առաջին կանոնն է. Թէ օրէնք իցեն սակաւոք հասարակական. և բարւոք պահեսցին : Օրէնք են կապանք հարկաւորութեանց, զի կապեսցեն զամ ժողովուրդն 'ի մի միայն մարմին : Վասն որոյ պէտաւոր օրինաց՝ պէտք են և հարկաւորութիւնք : Այլ օրէնք բնաւորապէս են առնելիք՝ վս հարկի հնազանդութ. և ամ իշխանութիւն բնաւորապէս է նեղացուցիչ՝ վասն հրամայական իշխողութեան : Բայց օգուտ ժողովրդեան բառնայ՝ որ ինչ առնելին է յօրէնս, և որ ինչ նեղացուցիչ յիշխանութ. զի իւրաքանչիւրոք երջանիկ համարի զհարկն՝ և քաղցր զհրամանն, յորժամ հրամանն յորդէ յօգուտ հնազանդելոյն, և ոչ հրամայողին : Այս երկու օգուտք են ժողովրդեան յօրէնս. ապահովութիւն ընկերի, և բարեկամութիւն առաջնորդաց :

Նա որ ունի զիւր ինչս. և ունի զայն, որ պահպանիչ է նմա : Վն այսորիկ ժողովուրդք, թէպէտ և աղքատք, ներքոյ արկին զազատութիւն իւրեանց հզօրագունի, զի բառնի պաշտպանեսցին 'ի բռնութէ : Բայց առաւել օգտէր պաշտպանելոյն լինել ապահով 'ի վտանգաւորաց, եթէ ոչ ապահովանայր 'ի պաշտպանողէն : Իսկ յայտ է եթէ առանց ընչից ժողովրդոց ոչ կայ իշխանութիւնն 'ի կայի. այլ և ոչ ովկիանոս՝ առանց ջուրց գետոց՝ որոց է սահմանական :

Որ է երրորդ, անդ և հարկ. և ամ հարկ բնաւորապէս ցաւ բերէ հարկատուի. այլ եթէ հատցի մի կենդանի 'ի մեկային մարմնոյ : Բայց այլ հիւանդն յանձն առնու զիւր ցաւ, յորժամ սակաւն այն որ հատանի՝ պահպանէ զմարմինն, այնպէս հարկն բռնական՝ լինի կամաւոր, յորժամ տեսանեն զայն կարգեալ առ հարկաց օգուտ՝ 'ի խաղաղութեան կամ 'ի պատերազմի :

Այլև չորրորդ եղանակ պահանջողութեան առնէ զհարկն քաղցրիկ : Պերիկլէս յորժամ կամէրնար ինչ հարկըս հանել յաթենացւոց, յառաջագոյն ուրախ առ-

տանէր զնա հասարակաց խրախութիւք, և մեծա-
հանդէս տօնախմբութիւք, և թատերական հան-
դիսիւք. և յորժամ ջերանեկին յուրախութեան,
ապա առաջի տանէր զախուր խնդիրն. ըստ օրի-
նակի ճարտար երակահատի, որ մեղկաշօշափ շփեալ
զբազուկն՝ մխէ զնշտրակն յերակն, և հանէ ա-
րիւն անդուստ։

Միւս օգուտ օրինաց է առաքինի առնել զժողո-
վուրդս։ Զի առաքինութիւնն մեղմէ զախտ 'ի նմա,
և հնազանդս առնէ զնա իւրեանց տեարց. բայց
առաւել եւս կրօնն, որ ամ առաքինութեանց սկիզբն
է՝ և վախճան։ Վասն այսորիկ ամ օրէնսդիրք աս-
տի սկիզբն արարին քաղաքային իրաւանց։

Յուդային օրէնս առաջին պատուիրանն է ածպաշ-
տութիւն։ Յօրէնս հելլենացւոց՝ առաջին օրէնք հրա-
մայեցին պաշտել զած։ Յօրէնս հռոմայեցւոց առաջին
խօսք այս են. պաշտել զածս հայրենիս։ Վասն 'ի վր
բերել պաշտօն մեծանուն քաղաքականն հեթա-
նոսաց, թէ ինքնակալութիւն հաւանեցուցեալ զօրա-
գոյն եղև քան զամենեսին, զի հաւանեցուցիչք եղեն
կրօնաւորք քան զամենեսին։ Նոյն օրինակաւ
'ի խաւարի հեթանոսութեան այն անկատար լոյս բնա-
կանաբար օգնեաց ինքնակալութեն. զի ուսցին
առաւել եւս լուսաւորեալքն յոյժ.

Հաստատեն՝ որ պատուէ զած, պատուէ և զիշ-
խանն. զի որովհետև թագաւորքն են գործ ածային՝
հաղորդեալ մահկանացուի, յիրաւի զթագաւորն
կոչեաց Սենեկաս փոխանորդ Ածոյ. և պղատոն՝ Ածոյ նորդ-
կեղէն։ Ուստի և որ արհամարհէ զած, արհամար-
հէ և զիշխանն. զի որ ոչն երկնչի 'ի կայծականց,
որք են գաւազանք թագաւորին երկնաւորի, առա-
ւել ևս չերկնչի 'ի գաւազանաց՝ որք են կայծա-
կունք այլ երկրաւորի։ Եւ անտարակոյս՝ յանցա-
ցեալն ընդդէմ ածային մեծվայելչութեան՝ ոչինչ
խղճէ յանցաւորել առ մդկային մեծափառութեն։
Զփորձ սորա յայտնի տեսաք յանցեալ դարուն
յաղմուկս գերմանիոյ և գաղղիոյ. որոյ սկիզբն ե-
ղև Ընդդէմ եկեղեցւոյ, և յանկ եղ ընդդէմ իշխա-
նաց. զի 'ի չառնել հոգևորական միաբանութեն,

չառ-

չարեան և ժամանակեան թփուորութն :

Ապա չէ բաւական քաղաքական իշխանութեան գիտել՝ օրէնս դնել պիտանիս, եթէ չէ ձեռնհաս տալ դարձել : Նա՝ կրկին նախատինք են օրինաց, տեսանել զնոսա զարտուղէ կախեալս, և անգոսնեալս, ուր կախել արժան էր զանգոսնիչս :

Բայց առաջին կանոն քաղաքական իշխանութեն պահելոյ օրինաց զհուրն պատիւ, է այն՝ զի օրէնսդիրն պահեսցէ զհուր մեծափառութեան : Մեծափառութիւն մըդկային՝ ոչ ասացաւ, ոչ այլ ինչ է, բայց նշոյլ իմն ածային մեծվայելչութեն․ որ առ կարծիս հպատակաց առնէ զանձն իշխանին աքանչելի և սրբոյ․ զի ոչ որ յարգէ զած, յարգէ զիշխանն ոչ պատկեր այ, նոյնպէս որ յարգէ զիշխանն, յարգէ զօրէնս ոչ պատկեր իշխանին :

Պահի մեծափառութիւնն Մեծագործաց, Ծանրախօսաց, և Անարժարաց Հարսից : Մինչև գործոյն երկուց գործ քաջացանց, խօսից պատասխանատւութիւն պատգամախօսից, և վարուց անախտական գաղափար :

Անթերի լրումն մեծափառութեն սովոր է լինել Յաւոյն Հերդարձնեն․ մինչև 'ի մարմնաւոր բնակարանէն ճանաչել զհոգին բնակեալ 'ի նմա, թէ վեհ է՝ և արժանի իշխանութեն : Բայց քանզի չէ այս գործ արուեստի, այլ բնութեն, որ սիրէ երբեմն ծածկել զանկրատեա՝ սիգենաւի կերպարանաւ (271), զայր պակասութեն արուեստն լնուզանեղի՝ Տուն Ալբէր Երկնաւորի․ մինչև երևիլ իշխանին պատկեր ինչ նուիրական, որ 'ի տնտեսութեն առուրս միայն դնի յերևան :

Տաճարք մթինք, փապարք խորխորինք, և բաւուերք դիշերականք, պատճառեն ինչ յարգ և ահարկութիւն : Ոչինչ այնպէս է գեղեցիկ, որ 'ի հրապարակ հանեալ, ոչ լիցի ձանձրալի : Արեգակն անդրանիկ է մոլորակաց․ բայց քանզի է մշտերև, ոչ ով դիտէ․ գիսաւոր աստեղք են տխուր վիժածք օդոյ․ բայց քանզի գան սերեմն երևին, առաւել ևս ձգեն 'ի դիտողութիւն :

Չիք ինչ այնպէս կատարեալ, յոր ոչ կայցէ ինչ թե֊

թերութիւն . 'ի հեռաստանէ չնշմարի , բայց 'ի մօտոյ երևի ։ Երևոյթք տեսափոխութեանց խաղալկաց 'ի բացուստ երևին տաճարք , աշտարակք , թատրոնք , անտառք , և ծովք . բայց թէ մօտ մատչիս , են կցկտուր փայտակերտք , և հնոտի կապերտք , և չնչին թուղթք խաշորաներկք ։

Գորտք իսկ խնդրեցին զԱծ̃ թ̃գւր . գիտս ընկէց 'ի ճահիճս գերան ինչ մեծ՝ թագաւորել 'ի վ̄ր նոցա ։ Դղրդիւն նորա , մեծութիւն , և նորաձևութիւն՝ արկ յայն ճահճային ժողովուրդ՝ յարգ ինչ ապշութեն ։ Բայց իբրև 'ի բաց եդեալ զերկիւղն , և մօտ եկեալ 'ի թ̃գւր անդր , ծանեան թէ էր անզգայ իմն բուն ծառոյ , ոստեան 'ի վ̄ր , և արարին իրեանց խաղալիկ ։

Սոյնգ իմն է , թէ 'ի թագաւորութիւնս ինչ ընտանութիւն իշխանին է առաւել հաճոյական . բայց ստոյգ է և այն , թէ այնպիսի թագաւորութիւնք առաւել նշաւակ են աղէտաւոր պատահարաց . զի ընտանութիւնն՝ դուռն բանայ նորաձևութեանց ( որ նորանոր անկարգութեանց ) ։

Բայց մեծափառութիւնն չէ մեծափառութիւն , թէ չունիցի առընթեր զայն երկու դիւցազնուհիս , որք ըստ հեթանոսաց կան միշտ արթուն առ ի և անտի աթոռոյ մեծին գիտի ։ Այն են ՀՕՐՀԴպակ 'ի ձեռին , և ՀՐԷՃԻՆՏՐՈՒԹԻՒՆ սուր 'ի ձեռին . որ են ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ և ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ . վարձ , և պատիժ . վարձ՝ յերախտաւորել զօրինապահս , և պատիժ 'ի պատուհասել զօրինազանցս ։

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆՆ է առաւել սիրելի . բայց ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ առաւել ևս պիտանի . զի 'ի ժողովուրդս առաւել յորդէ չարութեն քան զերախտագիտութեն . և առաւել է միոյ ուրուք չարութեն վ̃սաս՝ քան զբազմաց երախտագիտութեն օգուտ ։ Իմաստունն այն թ̃գւր Լուդովիկոս մետասաներորդ՝ ոչ ունէր յիւրոց հպատակաց խոնարհէր զգլուխ , բայց միայն կախաղանի . առէ , ՈՒ Է՛ ՈՐ ՈՏՆԷ ԳՆԻ ԲՃՈՐ . զի առաւել շարժէ երկիւղ պատժի , քան յոյս վարձուց հատուցման ։

Այո՛ ստոյգ իմն է . թէ երկաքանչիւր այն դիւ-

ցազ-

ցաղնուհիք՝ Թէպէտ և բարեգործ մարք, ծնանին ծնունդ չար. զի արդարութիւնն ծնանի ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ, և երախտաւորութիւն ԲԱՐԵԿԱՄՍ: Բայց երկաքանչիւրոյն բարի են երք՝ և անարատ, յորժամ երկաքանչիւրն գիտեն զշնորհակաց օգուտ: Յայնժամ ԱՊԱՒԷՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ, յորժամ պատժէ զաղանիս, և Թողու անպատիժ զագրաւս. կամ յորժամ տաուել ցանու 'ի վԲ յանցուցելոյն՝ քան 'ի վԲ յանցանողն: Վն զի ՄԵՂՔ 'ի ԽԵՂՃ առնել զարհաւրեցուցանէ զբարիս քան զչարս. և տաուել տանել է հնրկց, քան օգտակար տանձնաւորին: Նոյնպէս՝ յայնժամ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆՆ ՊԻՏԱՆԻ ՆԵՂՈՒԹԵԱՆ, յորժամ շնորհք 'ի շնորհաց վԲ անձրևեն առ մի ոք միայն. կամ յորժամ երախտաւորութիւնն է միութիւն առ անձն, և ոչ հատուցումն տարբերութեան: Զի յայնժամ երախտապարտ առնէ զմի միայն, և աներախտապարտ զժողովուրդն ամ:

Զորբին հակառակն՝ յորժամ երախտաւորութիւն է ՀԱՐԱԶԱՏՈՒՄՆ ԵՂԲԱՐՑ, յայնժամ իշխանն 'ի վարձահատոյց լինել միում ումեք՝ ուրախ առնէ զամենեսին. զի խնդան առ հնրկ, Թէ տարբերուԹՆ փոխատրեցաւ վարձ. և զի ակնունին, Թէ Թերևս և ինքեանք տարբերուԹԲ վայելեսցեն յայն՝ յոր այլք վայելեցին: Մինչ զի ոչ է տանել արդարուԹե, և ոչ նախանձուկս արկանէ երախտաւորութեան, յորժամ արդարութիւնն 'ի պատժելն պահէ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ, և երախտաւորութիւնն 'ի պարգևելն պահէ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ. զի երկաքանչիւրն են յօգուտ ժողովրդեան:

Այս են գլխաւոր սկզբունք, և այս բանալիք ՓԱՌԱՒՈՐԱՆ ԽՈՀԵՄԱՆ՝ հայելով ԻՄԱՍՏՆՈՅՆ: Բայց քանզի անհնար է Թէ արուեստաւոր ոք՝ Թէպէտ և քաջահմուտ՝ գործիցէ անգործի. և Գործիք իշխանին են պաշտօնեայք և խորհրդականք, գերագոյն կանոն խոհեմութե է, զի ԻՄԱՍՏՆՆ ՏԻ ՀԱՆՃԱՐՈՅ ԺՈՂՈՎ ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ:

Պարտ է իշխանի կառուցանել 'ի սրտի այնպիսի ա-

սեննակ խորհրդոյ . այլ թէ չալխաէին նմա խոր-հրդականք . բայց ընտրել իւր այնպիսի խորհրդա-կանս . այլ թէ ոչ կայր իւր խորհուրդ : Եւ զօ-րին հակառակն՝ պարտ է խորհրդականաց լինել այնպէս ժողովրդ, որ կարող իցեն լինել և իշխան . բայց և այնպէս ժողովրդ . որ ոչ 'ի նախանձ որ-կանիցեն պիշխանն . գիտելով . թէ եկամուտք են և ոչ գլխաւորք , հպատակք և ոչ ընկերք . խորհր-դականք և ոչ ուսուցիչք : Վնչ պարտ և պատ-շաճ է , զի իցեն աւելի քան զմի . զի իրողութիւք բաշխք լաւ են կատարին , և բազմաւորուն իրա-գէտ առնէ զիւրաքանչիւրոն , թէչէն ինքնիշխան : Եւ թէ մին միայն բաւական լինէր նմի , լինէր արդեօք իննկէլի :

Բարիոք կանոն է, [illegible] որ իբրև զանգիտել քննականաց նմանութեան՝ եթէ յայտնի : Բայց քանզի է և վտանգաւոր 'ի կարևոր իրս գործել առանց խորհրդի . և ոչ մարթ է հարցանել խորհուրդ առանց վտանգ լի-նելոյ , պիտոյ է գտանել մէջ 'ի մէջ ժողովրդութեան և միապետութեան :

Այլ բաջ կանոն է , չհարցանել զկարծիս անե-նեցուն միահաղոյն , այլ իւրաքանչիւրումն ուրոյն . և ոչ որոշակի այլ գիտութեան ինչ առոյց , այլ երկ-բայօրէն այլ գիտութեան ինչ կարելի , հանդերձ այ-լոյլոյն ինչ պարագայիւք . զոր յայտնեալ է գաղտ-նեացն յայտարար . և թէ արժան են իցէ վրդ-տահանել ուժք զնա զխորհուրդն , մի վտանգա-ցի ուժք զիւր մասաց որոշումն : Բայց եթէ իշ-խանն ունի վախճան զհասարակաց օգուտ , և բնա-րէ խորհրդականս համաձայնս իւրում վախճա-նի , նա խորհրդականք՝ թէպէտ և անգէտք 'ի մի-մեանց , գտցին համաձայնք . որպէս այլևայլ գոր-ծիք ներդաշնակութեան համաձայնին միմեանց , և թէ բնաւքն համաձայնին ընդ գլխաւոր թաւա-ձայն :

Այլ նա կանոնք քաղաքական իշխանութեան յայս միայն բովանդակին , զի ժողովուրդն հնազանդ իցէ օրինաց իշխանին . և իշխանն հնազանդ իցէ բնա-կան

կան և ածային օրինաց։ Զի թէպէտ ինքնագլուխ իշխանն վերագոյն է քան զիւր օրէնս, և քան զքաղաքական օրէնս իւրոց նախորդաց, սակայն յածային և 'ի բնական օրինաց ոչ թագաւորական վեհափառութն կարող է զնա անօրինել, և ոչ ածային մեծվայելչութին կամի անօրինել։

## ԳԼ. ԺԳ։

### Յաղագս փոփոխման ունակութեանց։

Որ ոչ գիտէ վարել զտուն իւր, եւ առաւել ոչ գիտէ վարել զթագաւորութիւն ինչ, ասէր իմաստունն քիղոն։ Զի ընդ մէջ տան և թագաւորութե այն միայն է խտիր, որ ինչ ընդ մէջ մեծի և փոքու. իբր զի թագաւորութին է մեծ ինչ տուն, և տունն՝ թագաւորութի ինչ փոքրիկ։ Բայց առածն քիղոնի չէ ճշմարիտ, թէ ոչ տրոհի ըստ ունակութեանն յունակութեանց. Զի բնաւոր կարողութիւնն մտաց 'ի հանճարոյ ստացելոյ հայեցողական գիտութե, կամ գործնականաւ։

Նկարել պատկերս մեծամեծս և նկարել պատկերս մանունս՝ թէպէտ և միաբանին 'ի մի հասարակ սեռ նկարչութե. բայց երկու տեսակք են ընդ նմեամբք՝ տարբերք 'ի միմեանց. զի բաց յընդհանուր կանոնաց՝ որք հասարակ են երկաքանչիւրոց, իւրաքանչիւրն պահանջէ կանոնս մասնաւորս, և գործածութիւն տարբեր։ Որ ունի զբնաւոր տրամադրութիւն առ նկարչութե հանրական, ունի զտրամադրութիւն առ երկաքանչիւր տեսակ։ Բայց որ 'ի վար արկանէ զերկաքանչիւր տեսակ, է զի ստանայ զսորայս ունակութիւն, և զնորայն ոչ։

Նա՝ ունակութե ունակութե ներհականայ, և միոյն գործածութե արգելու զմիւսոյն։ Վնր ոչ երևեցաւ, թէ ռուբէն՝ մերոյ դարուս ապեղէս, նըրբացոյց երբէք զիւր գրիչս՝ 'ի նկարել մանր ըստ հանսխոսի, թէպէտ և ունէր զնորա կատարեալ հայեցողական հմտութիւն. (272)։

Ըստ այսմ յաղագս ունակութեան և փոփոխութեան են երկու

կան տեսակք խոհեմութե, բայց այնպ տարբերք, որպ նկարել խոշոր, և նկարել մանր. իբր զի՛ որպ տառացս, անտեսութիւն է փոքրիկ ինչ իշխանութիւն, և իշխանութիւն՝ մեծ ինչ անտեսութի: Այս ստոյգ է ամի, թէ որ ոչ ունի զգօնութիւն 'ի վարել զտուն ինչ, նա առաւել չունի 'ի վարել զթագաւորութի ինչ. զի զգօնութիւն է ՏՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒԹԵԱՆ. որ թէ ոչ զօրէ առ դիւրին արարս, նա առաւել չզօրէ առ դժուարինս:

Բայց թէ բանն է ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԷ, դիւրին է պատահել, թէ իշխան ոք իցէ գերազանց վարիչ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԷ, և ոչ ԽՈՐՀՈՒՄ ՔԱՆ, մի առ 'ի չգոյէ ըզգօնութե, կամ հայեցողական հմտութե, այլ զի զբաղմունք մեծամեծք ընկլնուն զմանունս. կամ զի անարժան վարկուցեալ մեծի հանճարոյ զփոքր արարս, որպէս քաջաց պատկերահանաց զամփոփ նկարս, կերպարանէ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՀԵՄՈՒԹԷ 'ի հասարակաց իրողութիւնս, թողեալ այլոց զհոգ ընտանի իրողութեանց:

Ոչոք յիշխանաց եղև զգուշաւոր քան զՕգոստոս 'ի ՔԱՂԱՔԱԿԱՆՍ. բայց և ոչոք քան զնա անհոգ 'ի ՏՆՏԵՍԱԿԱՆՍ: Կարգէր նա զամ իւր ինքնակալութե, և տուն իւր յանկարգութե կայր կործան. և որչափ հնչէր նր համբաւ առ օտարս, այնչափ վատանունութիւն զիւրեամբ արկանէին իւր ընտանիք: Այլ մարթ էր նմա անպարտ առնել զանձն յամօթոյ՝ բանիւ մեծի քաջամարտին՝ առ Եւրիպիդեայ, զոր յոջ բերէ Արիստոտէլ:

[illegible]
[illegible]

Զնոյն ասեմ և զայնց փիլիսոփայից, որք ունելով ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ քաղաքականութե և տնտեսութե, անկիրթ էին ամենևին առ երկոքանչիւրն. զի յառաւելուլ 'ի նմին ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ [illegible] ստացելոյ 'ի դպրոցս, պակասէր ԳՈՐԾՆԱԿԱՆՆ՝ որ ստացանի գործածութբ: Այսպիսի եղև Փորմիոն իմաստակ, որոյ չէր երբէք տեսեալ զսուսեր մերկեալ 'ի պատենից, և խօսէր առաջի Աննիբաղայ

ղայ գլխաւորական արուեստէ, որ և գովեցաւ ողջ Ճարտարախօս յիմար (273):

Իսկ յաղագս ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՃԱՐՈՅ խօսիլ կամեցեալ, յայտ է թէ արուեստք ընական նկարչութեն (որ պահէ զլար մեծութեն ակզբնատպին), և ամփոփ նկարուց (որ 'ի գոյղն քանակ վերածէ զգաղափարն) առնուն զհամրական կանոնս 'ի համրական նկարչութենէ. բայց ամփոփ նկարն առնու զմասնաւոր կանոնս 'ի համեմատութենէ, զոր ունի նա ընդ ընական նկարչութեն. ամփոփեալ զայնս համփակցութիւ 'ի մեծէ 'ի փոքր: Այսպէս ըթ այսմ արուեստականն՝ բաց 'ի կանոնաց համրական խոհեմութեն, որ համարակ է քաղաքականին, անտեսականին և անձնականին, առնու կանոնս մասնաւորս 'ի համեմատութենէ 'ի մէջ մեծի և փոքու, յոր 'ի մէջ կառավարութեն թագաւորութեն, և կառավարութեն տան:

Համեմատին (որպ վաղ ուրեմն ասացաւ) համեմատութեան համեմատութիւ, ՔԱՂԱՔԻՆ՝ իշխանի. ԻՇԽԱՆ՝ ոստիկանի, ԱՐՔԱՅԻՆ՝ ազնուականաց, ԾԱՌԱՅՔ՝ ժողովրդականաց, ՔԱՂԱՔՆ՝ ապարանից, ՀՊԱՏԱԿՔ՝ հարկատուաց, ՏՆՏԵՍԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ՝ դաշնաւորութեանց, ՀԱՆԳԻՍՏ՝ օրինաց, ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆՆ՝ մեծափառութեան, ԳԻՏՈՒԹԻՒՆ՝ տրամաբանական երախտաւորութեանց, ԱՆՏԵՍՈՒԹԵԱՆՑ՝ պատժողական արդարութեն. և եթէ վախճան քաղաքականութեն է ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ ժողովրդոց, վախճան տնտեսութեն է ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ տան: Այսպէս նա է քաջ տնտես, որ քաջ ճանաչէ զհամեմատութիւնս. և քաջ գիտէ մերձեցուցանել ընկանոնս քաղաքականութեան տնտեսականին. Ձգեալ զհամեմատութիւն 'ի մեծէ առ փոքրն, որպ ամփոփ նկարն 'ի բնական նկարչութենէ:

Որ ժամս պարտ էր այսմ բաւական լինել առ ընհանուր կանոն ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ. որովհետև վաղուես զբոլյցս եղեն զանտեսական խրատանց 'ի Ճառս արդարութեն: Բայց քանզի այս է խիր բուն տեղի, ձեռնարկեմ յուշ առնել քեզ զկանոնս խնամանաւորս, և զգործնական առածս, զորս փորձն ուսոյց խոհական արանց, և նոքա տնտեսաց: Եւ-

ղի

զի պահեսցի նոյն կարգ համեմատական, խոհեմ անտես լինի տանուտէրն. եթէ հայր նա ողջէր՝ չէր ժառանգն։ Այսն զի եթէ առաջադրի նմա օգուտ տան, լինի փոքրիկ թագաւոր. եթէ իւրն իւր, լինի մեծ բռնաւոր, կործանումն տան, և իւր իսկ անձին։

Տանուտէրն է և օրէնսդիր. բայց ձեռնարկէ օրէնս է ոչ ինքն իւրոց ծառայից. Բանք՝ են օրէնք թաքուցիկք. վարք՝ են օրէնք հաստատունք. որոյ պահպանութիւն հաստատեալ է 'ի նմանողութե. և չէ հնար նմանողութեն լինել բարի, եթէ օրինակն է չար։

Թագաւորի տունն է դիտարանութիւն, և փառաւորն ծառայութիւն. որ մի՛ զի խառնուրդ իմն է լուրջ առաքինութե և ապաքինի լրջութե, ծնանի յընտանիս յարգական իմն երկիւղ՝ և երկիւղած ինչ յարգ, բաղում իւիք տարբեր 'ի ծառայական երկիւղէ. զի ծառայականն երկնչի, զուցէ պատժեսցի. և յարգականն երկնչի, զուցէ բարկացուսցէ։

Ի մանկութենէ տղայոց ծնողութիւն իւր յաջորդացն՝ չէ բարեյն թագաւոր առանց թագուհւոյ. և 'ի մանկութենէ ընտանեաց իւր չէ բարեյն հայր առանց մօր։ Չէ նա աղախին. բայց և ոչ տիրուհին, այլ ընկեր։ Մտանելն ամուսնական չէ շղթայ գերութե, այլ յօդ ընկերութե. հաստատակաց ունելով զգուշակս, ըղձմունս, և զանձինս. բայց 'ի հնրկութե անդ բարեաց՝ այլեայլ են նոցա պաշտամունք։

Անմարթ է կնոջ ունել հաւատարութե 'ի հեզինաութեան. զի չունի հաւատարութիւն 'ի զգօնութե։ Երկաքանչիւրոցն են բնութիւնն հանգամանս հակառակս 'ի սոյն սակս։ Այրն է հոգաբար և ժըներէծ՝ 'ի շահել. կին խնայող և խծծի՝ 'ի պահել։ Ունի նա զգօնութիւն բաւական 'ի կառավարել զտունն. այլ ոչ 'ի կառավարել զանձն։

Փիդիաս քանդակեաց զպատկեր կնոջ՝ ընդ ոտիւք ունելով զկրիայ՝ զերկչոտ սողուն, որոյ բնաւորեալ պահել զտուն իւր՝ չելանէ երբէք 'ի տանէ։ Իբրև չոքաւ տրամեմս 'ի մանկաբարձութիւն երկանցն ոլիմպեայ, երաստրատոս այլեայց զանձար նորա (274). և երբ տիկինն ելանէ 'ի տանէ, ան-

կար-

կարգաւորութիւնք մասանն 'ի տուն:

ԵՐԿՈՒ ԳԼՈՒԽՔ 'ի միում տան՝ լինին երկու թագաւորք 'ի միում թագաւորութեան. Հրէշ երկգլխի՝ իւր ինքեան թշնամի: Վնկ բնութիւնն վարուք, և օրէնք քաղաքաց ծածկեն զգլուխ կնոջ. զի չունի նա այլ գլուխ և կամք, բայց զայնն իւրոյ. անշփոթգելի գոլով երկուց կամաց ը մի միայն, կամ երկուց արանց ը միաւորս համակամութիւն:

Ընդ մեկնիլ երկնային համակամութեան՝ մանաւանդ գժտութեան գժտութիւն. և 'ի փոխել սիրոյ յատելութ փոխի անմեղ ջահ նր 'ի խանձող գեհենական, որ տայ անայ փշմանք ընտանեաց՝ արձակէ ծուխ և կայծակունս ը կողմն տան: Պատրուակաւ կուսակից լինելոյ միոյ 'ի կողմանց՝ ծառայք կախեա և գրգռեն տածեն 'ի մէջ տերանց. զի աւար հարկանիցեն 'ի հրայրեացն. և եղկութիւնք տանն առանձնաւորի գաւժեն 'ի յայտնի հրապարակս, 'ի վը բերկալ մասուն և եղերանս:

ԱՅՐՆ սիրեսցէ զկին իւր. եթէ կամի լինել նմա սիրելի. ընտրողութը գնասցէ, եթէ կամի գտանել նր հլու. և եթէ կամի զնր պարկեշտութե, ինքն լիցի պարկեշտ: Կայիս կեկիլիա եղև օրինակ կանանց. և կայիոս սերվիոս տուղղոս՝ օրինակ արանց: Վնկ 'ի հանդէսս հարսանեաց (առ հռովմայեցիս) սա փեսայ հարցանէր ցհարսնն. ԸՆԴԻՐԷՔ ԴՈՒ ԻՆՉ ԿԻՆ ԲԱՐԵՔ. Նա հարսնն տանէր պատասխանի. ՈՒՐ ԴՈՒ ԿԱՅԻՈՍ, Ն ԵՍ ԿԱՅԻԱ. Թէ զաւլցիս ինձ միա սերվիոս, և ես եղեց քեզ միա կեկիլիա. (275):

Գ. ծաւծ անտեսութի է ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ 'Ի ՏՆՏԵՍԱԳՈՒԹԵԱՆ ԴԱՐՁԻՑ: Հանդերձ նր մի լիցի անարգ և մի պճնական, այլ՝ բամբշական. զի թէ զարդարի նա առ երևելոյ գեղեցիկ յաչս աւն, աւելորդ են զարդք. եթէ առ երևելոյ գեղեցիկ յաչս օտարաց. ամօթալի են զարդք: Որ բաւէ զարդուց՝ կոչէ զօտար աղաւնիս: Ճշմարիտ պճնութիւն կնոջ՝ է ԴԱՐՁԻ ՏԱՆՆ. և այս առաւելապէս կախեալ կայ զնմանէ: Զի 'ի պահել նորա զպատիւ տանն, պահէ զիւրն. և 'ի պահել զիւրն, պահէ զտանն,

զաւակն, որ է անմեկնելի։

Մի՛ իցէ նա ՄԻԱՄԻՏ, և մի ԽՈՐԱԳԷՏ։ Միամիտն չիմանայ զչարութիւն ծառայից. խորագէտն անհոր-ժէ անցանել զանցանել զխոհեմութ՟ նոցա։ Եր-կոքանչիւր ծայրք են վտանգաւորք. բայց մին յա-ռաջոյն է քան զմիւսն։ Լաւ է լինել միամիտ. քան խորագէտ. զի միամիտն յետ ժամանակաց լինի աչալուրջ. այլ խորագէտն յետ ժամանակաց լինի ժպիրհ։

Լինել ՔԱՂՑՐ ԵՒ ՀԵԶ տաւել պատշաճող է սի-րուհեաց, քան տիրուհեաց. նա՝ թէ մանուկ յուղեղ-նի նշոյլ ինչ բռնատեղծութե, այնուհետև մի՛ ակնկալցիս անաեւութե. փոխան կայից կեկի-լեայ՝ տասցիս քեզ զկորինեկ. նա լիցի մուրա կործանարան, և դու սիղենոս ապարան (276)։

Մի՛ խօսեսցի կին ընդ ստորս՝ տանց զխելոյ ան իւրոյ. ամ զոյց գաղտագողի ծնանի զյայտ-նի կասկած. և ամ կասկած մնայ 'ի ձախող միտս. զի սիրտ մարդոյ է 'ի ձախակողմն իւր. և թէ այրն չուանիցի կասկած զկնոջէն, աշխարհ կասկած կալցի զաւակէն։

ՈՐԴԻՔ ԵՆ ՕՂԱԿՔ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵ ԱՄՈՒՍՆԱՑԵԼՈՑ. ԶԻ ԵՆ ՀԱՆԳՈՅՑ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍԻՐՈՅ։ Եւ զորին հակառակն. թէ պակասի շաղկապ սիրոյ, յուծանի սէրն 'ի բաց փախիչի. և մնայ ատելութիւն։

Ցանկալի են որդիք 'ի պաշտպանութիւն անսահի. բայց տաւել ես 'ի պաշտպանութիւն անձանց ծնողաց։ Զի թէ հարք չափահասք կերակրեն զզե-ւածին որդիս, որդիքն 'ի չափ հասեալ՝ կերակ-րեն զզառամեալ հարս. և 'ի փոխարէն զկեանս՝ առողջին, փոխարինեն զկրախախն՝ որ է անփո-խարինելի։

Թող զի հարկաւոր են որդիք՝ վն ՓՈՓՈԽԱԿԱՆ ըն-ԿԵՐՈՒԹԵ։ Վն զի երկու ինչ պիտեւորք առ ամ գոր-ծողութիւն մեկային, որ ԳԻՏԵԼ ԵՒ ՂՕՐԵԼ. զեղեցիկ յաջողէ այս գործ մեծ ընտանի կառավարութե, յորժամ 'ի մի զուգաւորին խորհուրդք ծերոց ընդ ժրութիւն երիտասարդաց։

Բնաւոր իմն է, զի ուսանելք տաւել սիրելի են հօր,

հօր, և դստերք՝ մօր. զի ըստ նման սիրէ զիւր նը-մանն: Եւ վա՛ այսորիկ օրէնք են սիրոյ և բնութ., զի ուստերք դաստիարակեսցին 'ի հօրէ, և դըստերք 'ի մօրէ. զի մնասցեն զնմանութիւն բե-րելով զծնողացն. ուստերք լիցին քաջք և անվե-հերք, և դստերք՝ երկչոտք և պարկեշտք:

Առաւել փոյթ կալցի հայրն ճոխացուցանել զոր-դիս առաքինութեամբ քան բարեօք բախտի. զի ըզ-ճոխութիւն իբրև զանտարբեր բարիս հնար է մար-դոյ վարել 'ի բարի և 'ի չար. և առաւել վարէ 'ի չարն քան 'ի բարին, յորժամ ոչ իւր է ստացեալ: Բայց զառաքինութիւնս՝ վա՛ զի ինքնին են բարի, ոչ է հնար վարել, բայց եթէ 'ի բարի: Թող զի առաքինութիւնք ստացանեն ճոխութիւնս. այլ ճո-խութիւնք ոչ գնեն առաքինութիւնս:

Հօր աչալրջի պարտ է ճանաչել զԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ որդ-ւոց. զի կարգեսցէ զիւրաքանչիւր յիւր վարժս: Բնութիւնն, որ չտանէ ինչ վայրապար, անուշու-թեամբ իւրաքանչիւր ծննդոց բնաւոր յօժարութիւնս պէսպէս՝ ետ և զկերպարանս: Այլ ամ կատա-րեալ հասարակապետութի է բաղկացեալ յերից կարգաց. որ 'ի քահանայից, յիշխանաւորաց և 'ի զինուորաց, նոյնպէս ամ կատարեալ ազն ունի ունի ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ունի ԻՇԽԱՆԱԿԱՆ, և ունի ԶՕՐԱԿԱՆ: Վա՛ զի զօրականն 'ի բանակի և 'ի դուռն արքու-նի, իշխանականն յատենականութիւնս և 'ի ծերակու-տի, եկեղեցականն յեպիսկոպոսարանս և յեկեղեցի, ա-ռաջինն [illegible], երկրորդն [illegible], և երրորդն [illegible]՝ փափաքեն զպէտս հայրենա-թեան, և ամենեքին սատարեն զինչս և զպատիւ-սանն 'ի պատերազմի և 'ի խաղաղութե:

Այս՝ ճշմարիտ է, թէ այս այլևայլ բնաւոր յօ-ժարութիւնք պահանջեն զայլև այլ մշակութիւն. և փորձ է խոհեմութ հօր՝ լսելով զիւրաքանչիւրոյ բնաւոր յօժարուն. և դաստիարակել նդ ըստ իւ-րեանց յօժարութե: Զինչ որ երբեք գերապատիւ, թէ ոչ զհետ վարի իւրոց բնաւոր ձիրից: Դիւրին է ճանաչել զյօժարութիւ 'ի [illegible], 'ի [illegible], 'ի [illegible], և [illegible], բայց առաւելապէս 'ի

Խօ.

խաղուց նոցա, որք առնէին ապարատայինք · զի սիրտ արձակ և զուարթ' 'ի բաց արարեալ զհեղձաւո_րութիւն' յայտնէ զյօժարութիւն : Ըղձականն [illegible]' մի թողցի դեգերել յապարանս · ըղձականն [illegible]' մի թողցի զքնով անկանել 'ի գայրոցս · ըղ_ձականն [illegible]' մի թողցի խենեշանալ 'ի խըն_ջոյս, և ուր ժողովք են կանանց :

Մեծամեծս սխալեն հարք, որք զորուշեալն յորդ_ւոց 'ի զինուորութիւն' հասանել կամին նախ 'ի մարդ_կային իմաստից մարդս : Սուղ են կեանք · յեր_կարաւոր է արուեստն · ժամանակն տուեալ յայս իմաստ մարդ, բաւնի 'ի միուսմէ · և ոչ 'ի միուսմէ լինի նա կատարեալ : Արդ թէպէտ և յաւելուր ժամա_նակ, չէ համաձայնութեան մարդ ընդ իմաստս · և ոչ մին պատերազմ գրեալք կի՞ գրելը : Պատերազմ ծնաւ_սպառազէն · պարտ և պատշաճ է զինուորի 'ի մանկութենէ զձայն լսել զփողոյ, յածել զզինուք, գիտել զ կաթին զոգի արիական, ելանել 'ի տանէ հայրենի խնամոց, զհետ վարել դաշտաց, զի ուս_ցի տանիլ ըստ պղոյի անկող փայլի' սօթոյ հարա_ւային, և սառնամանեաց հիւսիսոյ : Պարտին լսե_լեա գոլորշի զ մայրենի հովանեաւ 'ի գետնի անդ ուր բուսաւ · բայց թոնդեալ առնել պարկա_տանի այլուր անկեալ' մերկանալ զթոյն : Որ ծը_նաւն առ ընդունելոյ [illegible] զառն խորոյ հովանի, զի մի պան_դխտութիւն զբաղեցի · բայց ոգի աշխոյժ և պա_տերազմասէր փոխագրեալ յերկիր օտար' լիցի ա_ռաւել եւս քաղաքական, ուսեալ կեալ ընդ կեն_դանականս :

Ն՛ա դիւրին , և եւս դժուարին է դաստիարա_կութիւն դստերաց քան զուստերաց · Եւ դիւրին, զի են երկչոտք և ամօթխածք · բայց եւ դժուա_րին, զի երբեմն սէրն վանէ զերկիւղն, և զուար_թութիւն զամօթխածութիւն : Ոչ բաւեցին հարիւր աչք արգոսի, զգուշանալ 'ի պահպանութ յակաց' երբեմն զերինջ կայտառելոյ 'ի պատրանաց հերմէ_սի (277) :

Յամր ամուսնասցին [illegible] · բայց [illegible] վաղ_վաղ ·

վաղ. զի այն է վաճառ, որ երթալով երթայ և բարեպաշտաց 'ի տուն, և սա վաճառ, որ յաւանաց։ Որդիք երթալով երթան և առաքինանան. և գտանեն երթալով երթան և կորուսանեն ըղջեղ և զամօթ։ Մեծն կարողս յայնչափ իւր իմաստուն արարս՝ զայս միայն արար անմտութի, և յայնչափ իւր փառս զայս միայն յիւքն էարկ կեղտ անուն, զի յապաղեսցէ ամուսնացուցանել զցանկս քան զարժանն։ Այն ինչ ապաւէր փեսայից ըստ իւրում սրտի, նոքա զտին տարփածուս ըստ իւրեանց սրտի. և ինքն առանց փեսայից ըն-
տացաւ թոռունս։

Ընդհանրապէս՝ պարտ է տանուտէրն առանց սէրս ընտանութե ԼԻՆԷԼ ՕԻՐԷԼԻ, և առանց խստութե ԼԻՆԷԼ ԱՀԱՒՈՐ. զի մի կարի իմն խստութի նկուն արասցէ զոգիս մանկանցն. և մի կարի իմն ընտանութիւն նուաղեսցէ զիշխանութիւնն տիրականն։ Մի ՎԵՐՋԷ նպաստաւորութիւք 'ի մի քան 'ի միւս որդի. զի մի վառեսցէ նախանձ առ սիրելին իւր, և տանելով առ անձն իւր. այլ գովեսցէ և վարձատրեսցէ լիցի առաքինութե. զի յուսացուցել զամենեսին վիճակիլ այնմ, առանց նախանձու արկցէ նախանձաւորութիւն նմանող լինելոյ։ Մի յայտնեսցէ, մի բանիւ և մի գրով, թէ զոր յորդւոց ընտրեալ իցէ լինել ԺԱՌԱՆԳ. զի բարեյոյս լեալ ամենեցուն, ամենեքին լիցին նորա կամակատարք։ Այլ եթէ յայտնեսցէ զժառանգն, այլ ոչ սիրեսցի յայլոց. և ոչ 'ի ժառանգականէն իսկ. զի որ ապաէ մաչու սրտուք, ոչ ըղձանայ կենաց նորա։

Բայց և խոստովանելի է, թէ անհնարին ցաւ է, յորժամ առ ԱՆՇԱՌԱՅԼՈՒԲԷ տանուտէրն երկի հայր անորդի. բառնայ զբերան զամուսնութե՝ առանց սփոփու, և զաշխատութեան՝ առանց գիտելոյ թէ ում աղագաւ. և տանջեալ յըղձանաց առանց ակնկալութե, մեկնիլ ունի յաշխարհէ՝ ոմ թէ չէր եկեալ յաշխարհ։ Սակայն և յայսմ մեծի արկածի մեծ քաջալերութիւն զգենու խոհեմութիւն անտեսական՝ ՈՐՓԷՏՐՈՒԲԷԱՄԷ։ Սա է սքանչելի իմն

բեղ

բեղնաւորութի, իբրև զցիսուն՝ որ 'ի գլխոյ իւր-մէ երկնեաց զաթենաս ։ Այսպէս յուլիոս կայսր և օգոստոս և ներոնս, ընդ հակառակս բնութե և ճակատագրի՝ բարեբաստ պատուատիւք բեղ-նաւորեցին զառն իւրեանց և բովանդակ զինք-նակալութին ։ Ծնունդք անտարակոյս բարեբաս-տագոյնք • իբր զի բնական որդիք ընտրին, որպ̃ 'ի բնութէ տուան, այլ որդեգրականք ընտրին որպէս ըղձալիք ։ Նոքա 'ի տղայութե պատճառեն առա-ւել երկիւղ քան քաջալերութի, և յոլովակի իսկ լինին կամ խեռ, կամ ապերախտ • բայց սոքա ա-ռանց աշխատութե ծնողեան՝ ծնանին չափահաս • և յառաջագոյն են ծանուցեալ, մինչև են ծնեալ ։ Թագաւորութեանց դիպոյ են դաստիարակք • և բարեբախ-տիկ տան՝ բարեխնամութիւնք • բայց մտերմագոյն բարեկամ պարտին լինել ծնողաց ։ Դստերք ամուսնասցին ը̃ Մեծատանց, զի ելեալք 'ի տանէ՝ մի կարօտասցին հանապազ տան ։ Որդիք ամուսնասցին ընդ Մեծա-տնաց • զի զաւակք ուռճասցին, և մի ապատահեա-ցին ։ Ոչ զօրութիք անկոյ, նոյնպէս զօրութիւնք տոհմից գնան միշտ յապատահմութի ։ Ծի՝ որպէս փիլիսոփայն ասէ, և փորձն իսկ ցուցանէ, իմաս-տուն առհմքյանկին 'ի յիմարս, և պտղամականք 'ի կատաղիս ։ Բայց ոչ հինաւուրց տունք՝ աչ-խոյժ պատուատիւք, նոյնպէս տունք յապատահ-մութիւն խոնարհեալք՝ ազնուական ամուսնութբ անդրէն նորատունք նորոգին ։

Այս գործ բնաւորապէս նմանի իւրում պատճա-ռի • բայց և այնպէս յոլովակի երևին՝ զի 'ի ժի-րաժիր հարց ծնանին որդիք Դեղք, և յառիւծուց ճագարք ։ Հրեշք անտարակոյս՝ ծնեալք 'ի խառ-նութե օտար ազգաց ։ Վնկ երբեմն ծնունդք ոչ հայրանման, այլ մայրանման • կերպարանեալք յան-ձինս զոմն 'ի նախահարց մայրենի տոհմի ։ Յայն հայիլ պարտ է զգուշութբ, զի որպէս ախտք ինչ մարմնոյ, նոյնպէս ախտք ինչ հոգւոյ են փոխան-ցիկք, անցմամբ 'ի մայրական գծէ՝ որ շաղախեալ էր այնուիկ, 'ի հայրականն, որ անշաղախ էր յայնմանէ ։

Որ ոք ամուսնանայ ապաւինեալ 'ի շնորհս բարեկամաց կմ հզօրաց, բազում անգամ գտանի պատրեալ. և ուր ակն ունէր թէ սկիզբն լիցի բարձրութն, անտի սկիզբն լինի գահավէժ կործանմանն: Զոր օրինակ մարդկային իրք իբրև զերկնային մարմինս են 'ի մշտնջենաւոր շարժման, և բարձրագոյն կէտ գագաթան է առաջին կէտ յետադարձի մոլորակաց, սոյնպէս անկումն բարեկամին պարտնէ 'ի կործանումն զապաստանեալն
'ի շնորհս նորա:

Իշխանի դիտին ազատաւորք, և փնտենի դիտին ծառայք: Երկու ազգք ծառայից պիտոյ են 'ի տան. ոմանք 'ի հոգաբարձութիւն, և ոմանք յաշխատութիւն: 'ի նս պահանջի ուղղութիւն և հաւատարմութիւն. 'ի սոսա զօրութիւն և հնազանդութիւն: Եւ վսկ զնս պարտ է պահել հաստատարիմս՝ անյապաղ թոշակօք, և
զսոսա զօրաւորս՝ պատշաճաւոր կերակրովք:

Լաւ ևս են փոքրաւոր ծառայք, քան զարծաթագին գերիս: Զի նոքա ծառայեն 'ի լրումն պիտոյից և ոչ բռնութք. վսյ սիրեն զտեարս որք զբարերարս: Սորա ծառայեն բռնի. վսյ են ներքին թշնամիք. զի որ տանեաց զծնյուն, տանեաց զտր: Մի իցէ քեզ ծառայից աւելի քան զպիտոյն: Որ ունի մի միայն ծառայ, ունի զնա բովանդակ. որ ունի երկուս, ունի մի և կէս. որ ունի երիս՝ ունի և ոչ մի. զի 'ի վստահել միոյն՝ թէ միւսն ծա-
ռայեսցէ, և ոչ մին ծառայէ:

Եթէ տրն է առաջինի, ծառայքն ևս լինին առաքինի: Զար նշան է տն՝ ունել ծառայ ամպարտա. զի այնպէս համարի, թէ նա ինքն ուսուցեալ իցէ նմա, կամ ուսեալ 'ի նմանէ: Վն այսորիկ չէ արժան տն՝ թողուլ անպատիժ 'ի ծառայս՝ զչար յանցանս. վասն զի որ ներէ յանցանաց ինչ, հրապուրէ յևս մեծամեծս. և որ թողացուցանէ զայն, երևի հեզինակ նորուն: Եւ չէ իսկ արժան ծանր պատուհասել վն թեթև յանցանաց. վն զի պատիժն փոխանակ ուղղութն մարքերէ 'ի խոժոռութն. և լաւ է արտաքսել 'ի տանէ զխոժոռեալն, քան ու-
նել 'ի տան զթշնամի:

Բար-

Բարւոք է գիտել զամ, բայց ուսուցանել թէ գիտէ զամ ։
Կարի խիստ հետաքննիննն՝ գտանէ ինչ, զոր ոչ կամէր գիտել. կարի խիստ անհոգն՝ տեսանէ ինչ, զոր ոչ կարծէր տեսանել ։ Կատարիլն պահէր զծառայս 'ի գժտութե. զի իրազեկ լիցի յամանց՝ զինչ այլոց է գործ ։ Այլ այս դեղ չար եւս է քան զախտ. զի 'ի ծառայս թիւրէ նախանձ. եւ նախանձուն մօտաւոր է զրպարտութիւն ։

Ոչ ինչ այնպէս պիտանի է կառավարչի, ոպ լռութիւն. բայց եւ չիք ինչ քան զայն դարշ եւ վտանգաւոր ։ Ծառայ՝ որ աչս ունի յոլովս, լեզու նր լինի կաշառակի ։ Որ հաւատացանէ յանձն տն զայլոց մոլութիւն, հաւատացէ յանձն այլոց եւ զմոլութիւն զիւրոյ տն ։ Անմեկնելի են 'ի միմեանց լրտեսութիւն եւ զրպարտութիւն, երկաքանչիւրոցն չար ծնունդ գոլով չարախօսութեան որ, դուստրն է դիւական չարակամութեան ։

Ամենեքին սրատես եւ յատակատես լրտեսք են տղայք. որ որչափ փոքր են, նոյնչափ եւ սուր. եւ որչափ յատակ, նոյնչափ եւ հաւատարիմ ։ Զի որովհետեւ աւելի սիրեն զհայր՝ քան զայլս, եւ ջանան լինել նմա սիրելի. առ նա քան առ այլս տանին զրոյց զամենայնէ՝ զոր տեսանեն ։

Չիք ոք թշուառ քան զտանուտէր, որ փոխանակ անձամբ կառավարելոյ զտունն, թողու զկառավարել զտուն 'ի ծառայից ձեռս ։ Զի ոչինչ կեանք է թշուառական քան զծառայութիւն. եւ ոչինչ ծառայութիւն է թշուառ քան զծառայանալ ծառայի ։

Ապերախտ է որսորդն՝ որ վարէ 'ի տանէ զշունն, որ երբեմն էր պիտանի, այլ առ ծերութեան եղեւ անպիտան ։ Բայց անգթագոյն է տէրն, որ ոչ կերակրէ զծառայ ծերացեալ, յորմէ՝ մինչ էրն յուժի, ընկալաւ քաջ ծառայութիւն ։ Եթէ տն այլ չպիտի նա, նմա պիտոյ է տր ։ Յայնժամ հետէ այլ ոչ զօրէ բարիս արգիւնաւորել. բայց է բարեկացապարտ ։ Որ ոչն է թոշակ արդի ծառայութեան, եղիցի հատուցումն անցելոյն. եւ թէ պակասի նր ոյժ ծառայելոյ, յաւելցի յայլս սիրտ քաջ ծառայելոյ ։ Բայց եւ այն ճշմարիտ է, թէ մինչեւ ցյետին շունչ ծա-

ծառայն ծերացեալ 'ի տան՝ է յոյժ պիտանի. զի ոչ այլում ումեք առաւելագոյն յանձն լինին փականք դրան, և կղպակի, բայց այնմ որ գտաւ հաւատարիմ: Եւ թէև բոլորովին խեղանդամ իցէ, շատ է նմա աչս ունել. զի թէ չէ կարող գործել ինչ, կարող է գիտել՝ զինչ այլք գործիցեն: Են և այլ ծառայք, ոչ նուազ հարկաւորք՝ բայց են վտանգաւորք. այն են աղախնայք: Հարկաւոր են աղախնայք, 'ի ծառայել մօր, և դստերաց, և մանկանց աղայոց. բայց ծառայութի նոցա է վըտանգաւոր: Զի թէ են պառաւեալք, առաւել պիտոյս ունին ծռ̃յութի ը̅դունելոյ՝ քան ծառայելոյ: Եթէ են գեռահասակք և առոյգք, փոքր արնութիւն պիտի պահպանութե բերդի 'ի թշնամեաց, քան աղախնոյ յիւրոց ծառայակցաց: Եւ ո՞ կարող իցէ պահել զայն, որ իւրովի ըղձանայ կորնչիլ: Հաւասարութի վիճակի է միաբանեցուցիչ սիրոյ. դիւրութի ընտանութե՝ է փեսաւեր ցանկութե. և ցանկութին լծորդեալ ընդ աղքատութե՝ է միջնորդ ընտանի գողութեց:

Ոչ բաւեն կուպղք՝ անջրպետել 'ի մէջ յարկաց արանց և կանանց. զի ը̅ ասից վաղեմի առակին, սէրն առ իւր ունի զնմ̃ բանալի: Զէ բաւական և ազեղութի՝ առ պահպանութի համեստութե. զի չիք կենդանի այնպէս ազեղ, որ ոչ գեղեցիկ թուիցի միում 'ի կենդանեաց: Թող, զի որ վտանկել կամի զհամեստութիւն աչկնոջ և դստերաց, կաշառէ զհաւատարմութիւն պահապան կանանց: որոց թափուր գոլով յըստից, և 'ի խորամանկութե պատարուն, ոչինչ է նոցա դժուարին վաճառել զայլոց համեստութիւն քան զիւրեանցն: Այժմ անկարգութեան, որ պատահէ սաէպ՝ վ̃ լինելոյն բնաւոր, երկու միայն են հնարք: Մի՛ ակն ծեր ծառայի, և մանկանց աղայոց, որ̃ ասացաւ. զի զգան 'ի հեռաստանէ զառաջին նշանն: Երկրորդ՝ յառաջին նշանն թէպէտ և անստոյգս, այնպիսիս վարել խստութիւ և զգուշաւորութիւ և սեաչութիւ ընդդէմ չարութե, մինչև անմեղութեանն իսկ զահի հարկանիլ:

Ու-

Որդիք հասարակապետութեանն, նոյնպէս և փառքն ծոյլք չինական երկրին իւր. զանձինս, և զինուր: Այլ խոհեցեալ զանմտութէն որ զանձամբ, մինչ խորհիլ ըզանմտութէ, որ զընչիւք. և սա հաստատեալ կայ 'ի տփանաւ զայնս, 'ի պահէն. և յառաջանալու:

Են տունք, յորս են ձեռաձև ատագանի. և են՝ յորս անձինք գանձինք. և են՝ յորս ճչակայինք 'ի մէջ բարձր և ցած վիճակի: Ես իւրաքանչիւրն 'ի սոցանէ լինի ճոխ յոյժ, եթէ ունի զբաւականն իւրում աստիճանի. և երջանիկ յոյժ, եթէ շատանայ բաւականաւն: Ոչ մարդկային իղձն է միայն որ ճոխացուցանէ զաղքատութի, կամ աղքատացուցանէ զճոխութի: Ըստ հեսիոդոսի, ոմ յիշէ արխատտել, հոգին, և կին նորա, և ճանանց, և երկնքան 'ի որնունց նոցա՝ բաղկացուցանէին զնախնի տունս: Վսեմական աւագութիք, հոյլք ծառայից, ոսկեզօծ ապարանք, մեծածախ սեղանք, անբաւ վիճակք գետնի, կացուցանեն մեծ ևս տուն, բայց չառնեն ինչ տառեալ երջանիկ. զի յառաւելուլ ընչից՝ առաւելուն և զժուարութիւնք: Մեք ասա խոսիմք առաւելապէս զճչակայսն ընչից. զի որպէս ըմբռնողաց առաւելութի և նուազութի նիւթոյ խանգարեն զարուեստ մեքենական, սոյնպէս չափազանց առաւելութի և նուազութի տան՝ խանգարեն զարուեստ տնտեսական, յեղափոխեալ զկանոնս: Երկու ազգ անձանց չգիտեն զոր ունին յաշխարհի աստ. այն՝ որ չունի ինչ, և այն որ ունի յաճախութ յոյժ: Փոքրիկ նաւակք 'ի մրրկի կործնին. մեծամեծ նաւք 'ի խաղաղական ապահովեան անպիտան: Միջասահման ճոխութիք իբրև զմիջակային նաւս դիւրագոյն ղեկավարին եթէ 'ի խաղաղական ապահով. և եթէ 'ի մրրկի:

Երկակի են ինչք. բնականք, և արուեստականք:
Բնականք հիմնեալ են 'ի սեպհական կալուածս. արուեստականք 'ի սեպհական հանճար:

Աւաղ այնմ, որ բնակեալ 'ի հնդկաց երկրի, չունի թիղ մի գետնի՝ որ իւր իցէ: Որ չունի փոսն սեպհական, է մեռեալ անթաղ: Է՝ նա յաշխարհի, և արտաքոյ աշխարհի. թշուառ քան զգազանս.

զանս, որք 'ի խորխորին փապարս անձեն իւրեանց որջս, 'ի բնակութեն իւրեանց, յառագաստ հարսանեաց. յորոց ձագուց, և 'ի գերեզման մահու, յուսացեալք առ հորն' թէ ծերանալ ունին, ուր մանկացան. և մեռանիլ' ուր ծնան : Տոհմք տանուտիրականք' (որ և տունք ասին), տային զանուն 'ի տանց : Որ չունի տուն, չունի տոհմ. օտար է նա յիւր հայրենիս : Որ 'ի վարձու ունի զտուն, միշտ է տատանդական, ոչ բնակէ, այլ պանդխտի. վաճառէ զկահու կարասի, և գնէ օդ : Ո՛չ հաստարմատ աճեն տունկք որք ստէպ տեղափոխին :

Եղիցի տուն քո 'ի քաղաքս ամուրս. բայց հեռի 'ի բերդէ : Եղիցի գեղեցիկ և առողջարար, զի գեղեցկութեն տան օգտէ գեղեցկութեն զաւակաց. և առողջարարութեն օդոյ' առողջութեն անձանց : Լինի ԳԵՂԵՑԻԿ, թէ ունիցի դուռն և սանդուղս և սրահ մեծակառոյց. սենեակս ազխտակս և պայծառս' զարդարեալս իմաստալից նկարուք, որք արբանեկեն յուսումն և 'ի զբօսանս : Լինի ԱՌՈՂՋԱՐԱՐ, թէ մի կողմն հայեսցի 'ի ջերմային հարաւ, և միւսն 'ի ցրտային հիւսիս, 'ի պատսպարել յերկրաքանչիւրոց վնասուէ յեղանակս հակառակս : Բայց և կողմն մի բնակուէ հայեսցի յարեւելս : Զի առաւել գեղեցիկ և արդասաւոր են տունկք, որք ընդունին զառաջին շառաւիղս արեգական : Այսու օրինակաւ հողմ զհողմոյ վնաս 'ի բաց արասցէ. և ամենեքումբք օդն սրբեսցի : ԱՆՈՒՇ իցէ տունն, որ բուսական իցէ 'ի զետեղել անդ զընտանիս, և 'ի վարձել զայն խաղաղական արուեստաւորաց. զի ոչինչ եկամուտ է ապահով իբրև զվարձ տան, և ոչինչ դրացի է օգտակար' իբրև զվարձաւորս տան : Այս եթէ յաւելցի քեզ անդի 'ի ՊԱՐՏԷԶ ԲԱՆՋԱՐՈՅ, և 'ի ՀԱՒԱՆՈՑ, լիցի 'ի տան քում դիւրութեն քաղաքի և գեղջ. զորմէ արդ հանդերձեմք խօսիլ :

Ճոխութիւնք առաւել բնաւորք և ազնուականք' են ՀԱՒՔ ԽԱՂԱՂԱԾՈՅ ՔՈՅ : Սոքա են գանձք' որք ունին արմատս, և առանց ուրուք տուժելոյ' բազ-

մա-

մանան։ Ուստի կղկղի 'ի տղմոյ, բայց և այնպէս շողշողէ։ Միայն յերկրէ օրէն է ազատնել զազանութեն, պահանջելով 'ի նմանէ ընդ միոյ հազար. զի մայր է նա միապէս շռայլ և ժլատ. և փոկ տայ որդւոց մեծամեծ տոկոսիս, գինելով թէ ամենայն ինչ դառնայ յինքն։ Բայց չէ նա շռայլ առ անփոյթս. և ոչ գթած առ այն, որ կարի խիստ գթայ 'ի նա. կամի նա սնունդ առնուլ. բայց տառապանօք։ Թէ չպարարես զնա և չարօրադրես, 'ի գերև հանցէ զքոյդ մանգաղ ունայն հասկօք։

Բայց ոչինչ այնպէս արդասաւորէ զնա, որքան Աշխատ, և Աշխատ։ Թէ աղաւնինիս յարօրադիրս քո. և 'ի վանդակն. կամ լիցի նա անբեր, և կամ պտղաբերեսցէ վասն նոցա՝ և ոչ վասն քոյ։

Երկրորդ Ճոխութիւն է Արուեստական, զի մթերի յարուեստից։ Եթէ արուեստն է մեքենական, Ճոխութիւնք լինին մեքենականք. եթէ ցածուն, լինին ցածունք. եթէ ազատական, լինին ազատականք. զի այնպիսի են գործք, որպիսի են նոցին պատՃառք։

Բայց թէև հարստութիւնք ծնեալք յազատական արուեստից՝ առ մեքենականօք՝ են ազնուագոյնք, սակայն առ այնոքիւք, որք ծնանին 'ի սեպհական կալուածոց՝ առանց ձեռագործելոյ մն, են նուազ բնաւորք և նուազ պատուաւորք։ Զի առաքինութիւնք՝ որպէս չեն ընձայելիք վասն այլոց, այլ՝ վասն իւրեանց. այնպէս ոչ հային յօգտակարն, այլ՝ 'ի պատուաւորն։ Մինչ զի թէպէտ և գիտութիւնք ազնուագոյն են քան զկալուածս, սակայն եկամուտք կալուածոց են տիրական, և եկամուտք գիտութեանց՝ վարձկանական։

Վաշխառութիւն սեղանաւորաց թէ գուղձնաքեայ իցէ, օգտակար է. թէ յորդութ[իւ]ն՝ վտանգաւոր է. երկարանչիւրն են անյծորդական ընդ քաջի ազնուութե։ Արծաթն թէպէտև է սպիտակափառ, սևագոյն ներկանէ զձեռս. որպէս յանդիմանեցաւ պապն օգոստոսի, որ էր սեղանաւոր։

Դիւրին է հարստի՝ լինել բազմահարուստ, քան աղքատի լինել հարուստ. զի դժուարին է 'ի չունե-

նե-

նելուէ անցանել յունակութիւն . բայց ունակութիւնն գործովք հեշտանաւ առաւելու :

Ճոխութիւնն ՅԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԵԱԼ՝ ոչ է Ճոխութիւն , այլ՝ աղքատութիւն . զի անմարթ է քեզ հաշուել 'ի քո հասոյթ զայն՝ որ է օտարի : Նա՝ Ճոխութիւնն ստացեալ յանիրաւութէ՝ տայ քեզ կորուսանել և զարդար վաստակդ , 'ի թշնամութիւնս , 'ի վէճս , և յապաշաւս : Զի բառնայ 'ի քէն զայն ինչ , որ աւելի արժէ քան զՃոխութեն . Ի զանուն բարի , և զերկնաւոր շնորհս :

Մեծ եկամուտ է ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ . և մեծ մախուան՝ Ա-ՆԵՐԴՈՒԹԻՒՆ : Այն տուն է բարեկարգ , ուր չիք ինչ աւելորդ , և չիք ինչ պակասորդ : Որ ոչ ԽՆԱՅՈՅ , տանէ մեծ խնայութի . զի ամ փող և տունք և կալուածք խաղացողի կախեալ կան զքուէից . և աւուրն բախտ՝ արկեալ զքուեայս մերթ 'ի սորա և մերթ 'ի նորա կողմն , չքաւորէ զերկաքանչիւրն , 'ի Ճոխացուցանել զձեռնածուն : Այս եթէ դէպ լինի բախտի Ճոխացուցանել զոք խաղիւ , զոյգ ընդ բախտի մտանէ դաւաճանութիւն . և մուտք դաւաճանք չանցանեն յերրորդ ժառ՜նդ : Բայց առաւել քան զխնայութի օգուտ է ապահովել զտունն յօտարոտի և յընտանի ՅԱՓՇՏԱԿՈՂԱՑ : 'Ի ձեռաց օտարոտաց ապահովէ զնա հսկողութի ծառայից . և 'ի ձեռաց ծառայից՝ հսկողուի տանուտն : Տանուտրն՝ տաէ սոկրատես , մինչէ յանկողին յետ ամենեցուն , և յարիցէ յանկողնոյ յառաջ քան զամենեսին . զի 'ի քուն լինել նր՝ ծառայք դարան գործեն :

Մի կալցի առ իւր ԾԱՌԱՅՍ ԱՆԱՌԱՔԻՆԻ . զի ամ կենդանւոյ՝ որոյ է ծնունդ , բնութի ուսուցանէ լինել գող : Մի թողցէ դեգերիլ 'ի տան ՊԱՐԱՊԵԱԼՍ . թէպէտ և հաւատարիմ թուիցին , և բարեպաշտ : 'Ի չարաչար ազգէ է գողոց , զոր հարկն ստիպէ գողանալ : Քանզի գողութե նր չիք դարման վն չքաւորութե . և կարեկցուե իսկ է արժանի՝ վն հարկի : Ուսոսի ոչ ստգտանի այն՝ որ ձեռն ձգեաց , այլ այն՝ որ թողացոյց լինել ձեռնաձիգ :

Որ փառաւորն է ագահ, ծառայն լինի գող։ Վ՟ն զի տեսեալ ո՟ր, թէ ագահն ոչ վարէ 'ի պէտս՝ զոր ունի յաճախութ՟. ընու նովաւ զիւրն պակասորդ. և զգթութի համարի հանել 'ի բանտէ զբանտար-կեալ ճոխութեն։

## Գլ. ԺԴ.

## Յաղագս անձնական խոհեմութեան։

Խոհեմութեն քաղաքական հայի յերջանկութ՟ հասարա-կութեան։ Տնտեսականն՝ յերջանկութիւն տան։ Անձ-նականն՝ յերջանկութիւն անհատի։ Անհատն է յա-ռաջ քան զտեսակս, և տեսակն քան զսեռն. զի եզակիք են յառաջ քան զընդհանուրս։ Արդ զինչ օգուտ իցէ գիտել կառավարել զայլս, և ոչ գիտել կառավարել զանձն։ Չէ իմաստուն, որ անգէտ է անձին. և ոչ խոհեմ, որ չէ խոհեմ վասն անձին։

Սա է խոհեմութեան նպատակ. որ յառնելի իւր՝ ու-սուցանէ զհետ երթալ արդար, օգտակար և հաճոյ իրաց, և խորշել 'ի հակառակաց, առ 'ի վայելել 'ի մահկանացուաց միջի յերջանիկ կեանս։

Այս անձնական խոհեմութեն հաստատեալ է 'ի միջասահմանն 'ի մէջ երկուց մոլեկան ծայրից. ոչ գործելով ըստ բուռն դիտման, և ոչ թուլով. այլ հա-խոհ, և ողջոյն խորհրդով։ Որ գործէ թափով կամ ը՟ դիպման, արժանի է քամահանաց՝ վ՟ն ձախող ելից. և ոչ ոք գովէ զնա՝ թէ յաջողեն ելք. զի չէ նա տէր իւրում առնելութեն։ Բայց խոհեմն է տէր իւրոց արարից, և անձին. զի կիրք նկունք հնազանդին կամաց, և կամքն կանոնաւոր հնա-զանդի մտաց։ Մինչ զի 'ի խնդրել բաղձանաց պշամեսան, և 'ի չգտանել կամաց զխնդրեալն, մարդն է երջանիկ։

Խոհեմն կազմ ունի զմիտս այնչափ գիտութ՟, և զսիրտն այնչափ առաքինութ՟, որ ոչ ագիտութեն և ոչ չարութեն կարող են խաթարեցուցանել զսիրտ նր՟ 'ի բանաւորէն։ Կենդանի է 'ի նմա առաքինութ՟. որ ոչ թողացուցանէ նմա գործել ինչ ըղձմ քա-

ղա

ղաքական օրինաց, կամ բնաւոր ուղղութեն։ Կենդանի է ԱՐԻՈՒԹԷ, որ ոչ թողացուցանէ յանդուգն ձեռներէց լինել յամօթալի վտանգս, կամ վեհերոտութե խոյս տալ 'ի պատուաւոր վտանգից։ Կենդանի է ՔԱՂԷԽԱՆՈՒԹԷՆ, որ ոչ թողացուցանէ նմա խամրիլ 'ի դատարկութիւս և խղանալ 'ի դրդանս։

Յատուկ է խոհեմի ձեռնարկել յՕԳՏԱՒԷՏ իրս․ բայց ոչ համարի օգտակար լինել՝ զայն որ չէ համեստ և պատուաւոր, և ոչ շատ է նմա, թէ ՀԱՆՃԱՐՆ իցէ արդար և համեստ, եթէ չէ հնար առանալ՝ բայց անհամեստ և անիրաւ ՄԻՋՈՑՔ։ Ամպարիշտ խոհեմութեն եղև՝ զոր արարն առաջին, յընթացուցանել զկառս 'ի վե րոտայնի հօր իւրոյ, միայն զի հասցէ 'ի դէմ եղբօր սահման (278)։ Ճշմարիտ խոհեմն գիտէ, թէ ոչ ամ հաճոյք՝ են օրինաւորք․ և ոչ զամ օրինաւոր՝ արժան է առնել։ Կշռէ նա խոհականութե զամ ՄԻՋՈՑՍ․ և 'ի բազմաց անտի ընտրէ զլաւն։ Հայի 'ի պարագայսն․ զի բարին և չարն հաստատեալ է յաւէտ 'ի պարագայսն, քան յէութի իւրն։

Վերպարանք նո, և ձայն, և շարժմունք են ԾԱՆՐ։ Զի 'ի լինել արտի կազմ, արտաքինք ներքնոյն լինին նմանօղ։ Խօսի, շարժի և գործէ ՄԵՂՄԻՆԱՒ․ զի չառնէ ինչ 'ի թափոյ կրից։

'Ի ԳՈՐԾՍ իւր ոչ է դիւրաբորբ, և ոչ դիւրափոփոխ։ Շատ խորհի․ յամր որոշէ․ բայց վաղ ձեռնարկէ 'ի կատարումն․ գիտելով թէ ոչինչ ժամանակ է այնպէս դիւրօղ ձեռն 'ի գործ առնելոյ, որպ յորժամ ջերմ է սիրան․ վասն այսորիկ որոշէ անշտապ, բայց շուտափիր ձեռն մխէ 'ի գործ։

Ոչ համարի ինչ այնպ դիւրին, որում չիցէ հնար յառաջ եղանել ծանր դժուարութե․ և ոչ այնպէս դժուարին, որում արիութե և զգօնութե չիցէ հնար յաղթել։ Եւ վս այնորիկ յոչինչ ձեռնարկէ, զոր ոչ հասուցանէ 'ի կատար։ Բայց և չէ այնպէս յամառ, որ յառաջ քան զգործելն՝ լըսեալ լաւ ևս ինչ խորհուրդ՝ ոչ փոխիցէ զիւր կարծիս․ գիտելով թէ եղական իրողութիւք առնե-

նելիք՝ են պատահականք և փոփոխականք․ վ̃նզ
փոփոխութիւնք ոչ լինին յիւրում սրտի, այլ յիլս ։
Ցայս սակս՝ և յետ եղանութեան իւրին՝ եթէ 'ի յա-
ջող ելս և եթէ 'ի ձախող, ոչ զարմանայ երբեք․
քանզի գիտէ թէ յիւրն կողմանէ ոչ պակասեաց․
զի ունելով գիտութիւն ուղիղ, զայն իւր գիտութիւն
էդ 'ի գործ ։ Մ՞ինչ զի 'ի բարեբաստ ելս՝ իւր են
պարծանք․ և 'ի ձախող ելս՝ բախտին է մեղ ։

Չէք ինչ ներկայ․ յոր ոչ ակնարկէ․ չէք ինչ ան-
ցեալ, զոր ոչ վերծանէ․ և յանցելոցն և 'ի ներ-
կայից՝ այնպէս անշուշտ զապագայիցն առնու ճա-
շակ, մինչև երևիլ գուշակ ։ Հիպոկրատէս 'ի
հողմոյ ինչ շնչելոյ՝ գիտաց, թէ յայնմ մարդէ գայ
ժանտախտ․ որ եղև իսկ ։ Եւ խոհեմն 'ի նշանաց
ինչ՝ զոր ոչ նշմարեն այլք՝ յառաջ գուշակէ զա-
պագայ դիպուածս ։ Վ̃ն այսորիկ յոչինչ իրաց խը-
ռովի․ զի ոչինչ է նմա յանկարծադէպ ։

Համարեալ է նա պատգամախօս ոք, մանաւանդ
թէ ած̃ ոմն երկրաւոր․ զի ոպ̃ ասէր Սեքստիոս,
այս խտիր է 'ի մէջ այ̃ և խոհեմի, զի ած̃ ոչ կա-
րէ՝ և սա ոչ կամի՝ գործել ինչ հակառակ ուղ-
ղութեան ։

## Գ․Լ․ ԺԵ ։

### Ցուցք ուղղութեան հանրական սկզբանց խոհեմութեան ։

Ո՛ր օրինակ 'ի գիտութեան պիտոյ են հայեցա-
ղական սկզբունք առաջ իմաստասիրելոյ․ նոյն-
պէս 'ի խոհեմութեան պիտոյ են ուղղելի սկզբունք՝ առ-
աջ խորհրդածելոյ․ բայց բազում ինչ ընդ մէջ
է սոցա և նոցա ։

Սկզբունք գիտութեան են ընդհանուրք, հարկաւորք,
և անպայմանելիք․ բայց սկզբունք խոհեմութեան
են գործնականք, մասնաւորք, ներընդունականք,
և բազում անգամ իրքինք՝ միմեանց դիմամարտք ։
Թէ դու յառաջ բերես զայս առած․ չէ պարտ խո-
հեմ համարել զոք, բայց միայն յանձն․ այլ որ յառաջ
բերցէ զառած սմին ներհական․ խոհեմութեան է ու-
ղղութիւն ըստ խոհեմութեան ։ Եւ թէ ցուցանես դու,
թէ

թէ այս ինչ գործ է պատշաճող. նի է օգտակար, ցուցցէ ներհականաւն, թէ այդ գործ է անպատշաճ, նի է անիրաւ:

Եւ են՝ սկզբունք գիտուն, վն զի են ընդհանուրք և յաւերժականք, զետեղանան յընդհանուր և յանմահ մտաս. և սկզբունք խոհեմութե յոլովակի յեղծական մտաս, զի է 'ի խոկացողական կմ 'ի կարծողականն. որ կոչի զգայուն ներքին, ուր են եղական պատկերք:

Այսու որպէս քաջ իմաստասիրելն հաստատեալ է 'ի գիտել կազմակերպել 'ի հայեցողականն և 'ի յաւերժական սկզբանց հաւաքաբանութիւնս գիտնականս, այնպէս քաջ խորհրդածելն հաստատեալ է 'ի գիտել կազմակերպել 'ի սկզբանց խոհեմութեան հաւաքաբանութիւնս գործնականս: Այս այն է խոհեմագոյն քան զայլս, որ 'ի գանձ իւրոյ յիշողութե գանձել իցէ՝ ոչ մթերս հայեցողական սկզբանց, այլ գործնականաց. և յառաջագրել նմա զինչ և իցէ առնելի խնդրոյ, գիտիցէ 'ի վար արկանել զնոսա հեշտաւ՝ 'ի լուծումն նորին:

Յայտ է, որպէս իսկ լուար, թէ քաջ տրամաբանութի զհայեցողական գիտութեանց, և քաջ խորհրդածութի զիրաց առնելեաց, են ունակութիք կարի իմն տարանջատք. նա՝ յոլովակի եղծիչ են միմեանց. զի սկզբունքն են այլեայլք:

Արդ այս հաւաքումն 'ի խոհական առնել՝ լինի հնգակի. զոր մարթ է մեզ կոչել հինգ յորդ աղբիւրս խոհեմութե: Առաջինն է 'ի սեպհական և յընդարձակ լուսոյ բնականէ: Երկրորդն՝ յուսուցանելոյ իմաստասիրաց կամ ծերոց, ձայնիւ կամ գրով: Երրորդն՝ յիւրմէ փորձառութենէ 'ի վր բնական կամ արուեստական իրաց: Չորրորդն՝ 'ի ճորջոյ տեղեկացածոյ օտարոյ: Հինգերորդն՝ 'ի ճորջոյ իւրոյ տեղեկացածոյ:

Եւ 'ի յայտնել քեզ յիւրաքանչիւր աղբերէ երակս ինչ այսց առնելի սկզբանց, սկիզբն արասցուք յառաջնոյ անտի: Ամենայն խորհրդածութիք առն խոհեմի՝ յածին զծղխնեաւք երկուց այսց խնդրոց. եթէ զայս ինչ հնար իցէ առնել. և եթէ զայս ինչ պատշաճ իցէ

իրք առնել։ Զի բզմ ինչ է պատշաճ, բայց անհնար է առնել զնա. և բզմ ինչ հնար է թէ լինիցի, բայց ոչ է պատշաճ։ Վս առաջին խնդրոյ հարկաւոր են սկզբունք և առածք կարելւոյ և ան-կարելւոյ. վս երկրորդին՝ առածք պատշաճաւորի և ան-պատշաճի։

Արդ՝ որպէս 'ի կենդանեաց ոմն է բնաւորապէս խորագէտ քան զմիւսն 'ի պատճառել զկերակուր և 'ի պաշտպանել զիւր կեանս, այնպէս 'ի կազմակերպել բնութեան զմարդիկ պէսպէս հանճարով վասն պէսպէս վախճանի, յամենս տարրացոյց առածս և սկզբունս իմանալիս և հայեցողականս՝ վս գիտութեց, և յայլս՝ առածս և սկզբունս գործնականս՝ վասն մարդկային կենաց։

Ապա նախնական խնդրոյն արբանեկեն, օրինակ իմն այս սկզբունք։ Յայնժամ իրն է կարելի, յորժամ ըստ կամաց է և կարողութեան։ Զի 'ի դնել վախճանի՝ և միջոցաց, զհետ գայ գործն։ Յորժամ մեծ են կամք, իրն դիւր է կատարելի։ Զի կամակար կամք որեն զհանճար. վզն ասի, թէ ոչինչ է դժուարին այնմ որ կամի։ Զոր ինչ կարող է առնել բնութիւնն, հնար է առնել զայն և մարդկային ճարտարութեան։ Զի արուեստին հնար է հետեւող լինել բնութեն, բայց բնութեն ոչ է հնար՝ հետեւող լինել արուեստի։ Զոր ինչ արար ոք, կարող է առնել և այլ ոք։ Որ ինչ առանց օգնականութեան է դժուարին, [illegible] օգնականութեամբ լինի դիւրին։ Եթէ հնար է լինել մասին, հնար է լինել և բոլորին։ Եթէ եղև [illegible], եղիցի և [illegible]։ Եթէ եղև նման, եղիցի և այլ նման։ Եթէ հակառակն է կարելի, գուցէ և հակառակ է կարելի։ Իւ յսկզբանց հակառակաց ասյա՝ ցուցանի և հակառակն։

Երկրորդ խնդրոյն արբանեկեն այս սկզբունք։ Այն է պատշաճ, որ է բնաւոր։ Զի բնութին է քաջ օրէնսդիր. և օրէնք քաղաքականք հիմնին 'ի բնաւոր օրէնս։ Այն է պատշաճ, որ է օգտակար մարդկային կենաց։ Զի ամ որ պարտական է պահել զայն։ Իւ ևս առաւել, եթէ իրն է հարկաւոր. զի հարկն է 'ի վերայ քան զօրէնս։ Իւ ևս՝ Այն է պատշաճական որ է գովելի։ Զի ոչ գովի, բայց միայն

հա

համեստն: Այն է անպատշաճ, որ է անիրաւ: Զի զօգուտ մեր ոչ է պարտ գնել տուժիւք այլոց: Այն է մեզ պատշաճ, ընդ որ բարեկամք մեր խնդան, և թշնամիք մեր տրտմին: Զի անհնար է լինել չար՝ զոր ըղձանայ մեզ բարեկամ մեր. և անհնար է լինել բարի, զոր ըղձանայ մեզ չարակամ մեր: Այլեւ նուազ անպատշաճն լինի պատշաճական, յորժամ անհնար է խորշիլ յերկաքանչիւրոցն: Զի 'ի յետին նեղութեան փոքր չարն զգենու զբարութիւն: Քաջ կարօղ ես տեսանել թէ այս աւանդք չեն յաւերժական ճշմարտութիւնք՝ իբրև զաւանդս գիտութեան, այլ՝ մասնաւորք և ներքուանականք՝ ի պարագայից, զորոց կախեալ կան: Զի յանհնարին իրս յիմարութիւն է խնդրել զապացուցութիւն:

Երկրորդ աղբիւր են ասացուածք իմաստնոց և խոհական անձանց: Այսպիսի եղեն այն յիշատակելի ասացուածք եօթանց իմաստասիրաց յունաստանի. որոց իւրաքանչիւրն մղել քամեաց զիւր ամ իմաստն յերկուս խօսս. որք են գերակատար կանոնք մարդկային կենաց, և առաջին սկզբունք խոհեմութեան:

Կղէոբուղ ասէ. պահեա՛ զչափաւոր. որ է փականք խոհեմութեան. զի միջասահմանութիւն է չափ պատշաճականին:

Պիտտակոս ասէ. մի՛ ինչ իցէ առաւելազանց: Զի որ խորշի 'ի մոլեկան ծայրից, հարկիւ զտեղի առնու յառաքինական ուղղութեան:

Պերիանդրոս ասէ. սանձեա՛ զբարկութիւն: Վա՛ զի բարկութենն առաւել անսանձ գոլով 'ի կիրս, որ ոք սանձէ զնա, տիրէ այլոյ ամի, և 'ի բաց առնէ զքող յաչաց խոհեմութեան:

Սողոն ասէ. հայեաց 'ի վախճանն: Զի թէ վախճանն է թիւր, գործոյն անհնար է լինել ուղիղ. և որ հայի յելս իրաց, զգուշաւորի ձեռնարկել յայն:

Բիաս ասէ. բազումք են չարք: Քաջ կանոն քաղաքական կենաց: Զի որ գիտէ թէ բարիք են սակաւք, և չարք անթիւք, ոչ յուսիցէ խաբել, զի սակաւուց հաւատայ:

Թաղէս ասէ. մի՛ լինիր երաշխաւոր: Զի վտանգաւոր

ւոր յանձնառութիւն է խոստանալ վն անձին, ոչ գիտելով, զինչ անցք առ յապայ անցանելոց իցեն ընդ նա։ Բայց վտանգաւորագոյն է խոստանալ վասն այլոց, ոչ գիտելով զայլոց կամս։

Հասկ ուրեմն քիզոն ասէ․ [illegible]։ Ուսումն խոհականագոյն քան զնմ․ զի որ ճանաչէ զիւր տկարութիւն, ոչ խոնարհէ զպարանոց իւր ը բեռամբ՝ որ ՚ի վեր է քան զկար իւր։ Բայց և ուսումն դըժուարագոյն քան զնմ․ զի նմ սէր է կոյր․ և նմ աք սիրէ զանձն իւր։ Ստուգութիւն գրէ զանձնէ գաղենոս․ [illegible]։

Հանգոյն ասացուածոցս են հասարակ առակք․ որոց ծնունդ գոլով հասարակաց ձայնի՝ որ ուր ուրեմն սխալէ, և հաստատուն ընկալեալ ՚ի ժամանակէ, որ ոմ ծերագոյն՝ քաջ ք զամենայն գիտէ, եղեն իմաստալից առածք խոհեմութեան։ Վս այսորիկ խրատէ արիստոտէլ, թէ արժան է աւելի հաւատս ընծայել առից ծերոց՝ առանց հիման պատճառի, քան պատճառի պատանւոյ՝ առանց հիման փորձոյ։

Այսպիսի են այն հասարակաց ասացուածք։ [illegible]։

Երրորդ աղբիւր է գիտողութիւն բնական իրաց կամ արուեստականաց, որք ընթերցեալ լինին կամ նկատին։ Ոմանք ընթեռնուն զգիրս, որպէս ատայոգ զրոյցս, ժամանակ անցուցեալ և կորուսեալ։ Հային յառարկայս աչօք և ոչ մտօք․ ոչ իմանան, թէ բնութիւն յամ իւր բնական գործս

ընդ

Է խափանաւ ծածկէ զսկզբունս բարոյականս, որոց խոհեմն ուշի ուշով խելամուտ լինի, և նմանաբերութբ յանկաւորէ զնոսա մարդկային գործողութեց. այսպէս:

Երէլըտ կենդանեաց բնութեն ըէտ զէնո 'ի խոռիւ. այլ որոնա 'ի ծախիւ. զի ակարի խնամածութն է փախչել 'ի վտանգից. և հզօրի ամօթ է չելանել նց Է տառ. և վնկ հզօրոց պիտին զէնք: Կտարէլ-ք-յն կենդանեաց յէրէ-ր-ք-յն ծամանաք դէտ 'ի ծնանիւ. և զմեծամեծ գործս պարտ է յերկարագոյն խորհիլ: Կենդանիք՝ որ շուտ ծնանին, վաղ ծ-անին, 'ի գոյն ջրոյ ցօղելոյ յամառոյնի 'ի վերայ փուշոյ՝ անդէն ոտաջի գորտ. բայց անդէն վաղվաղակի դառնայ 'ի փուշի. փիղն 'ի տասն ամս ծնանի. բայց ապրի ընդ դարս: Այնպէս գործք, որք շուտափութբ լինին, վաղվաղ չքանան. այլ որք յերկարաւոր մտածութբ, յերկար տեւեն: Յ-ս ֆէթ-յի ֆործ-ուէր ծիղ-ուց՝ ծնանի խուծիղ-ու իւր ֆործ-տէաց, որ ծ-խէ ղեղը: Նոյնպէս 'ի տունս քաջաղունս ծնանի ոք անմիտ, որ վատնէ զինչս.

Զնոյն ասեմ և զաղատական արուեստից և զմեքենականաց: Վասն զի որովհետև խոհեմութն է արուեստ արուեստից, յառածից նմ արուեստի հաւաքին առածք խոհեմութեան: Բժշկութին է դարմանիչ մարմնոց, և խոհեմութին դարմանիչ հոգւոց:

Մ-ն ինկ բծ-լ--թէ է ն-խ-ղ-հ-ղ-ք-ն, և մ-ն ինկ ող-ք-ն-ղ-ք-ն. նա նախապահէ 'ի հիւանդութէ. սա անդրէն յառողջութի հաստատէ զհիւանդն: Ըստ սմին օրինակի մասն ինչ խոհեմութէ նախապահէ զմարդ 'ի գործելոյ չար. և մասն ինչ յանդիմանէ և յուղղութի ածէ զգործեալ չարն: Յործ-ս ու օփ-ին տ-ղ- մ-ք-ղ-ք-ն-ք, 'ի չ-ր -րք-նին տ-ղ- ք-ր-ղ-ք-ն-ք: Յորժամ ոչ օգտեն յանդիմանութիք. ձեռն արկանի 'ի սուր: Ա-ն-լ չ-ն-ք-ր է ֆ-ր ինլ խ-ց -նի-ց, ք-ն ղէր ինլ լ-յն-ի-ց: Ասաւել դժուարին է դարման դաղանի չարութեան. քան զայսանի ցաւութէ. զի յայանի ախտին յայանի է դեղ, այլ անտես ախտին՝ դժուարին է դարման:

Յ-ս

[illegible] Յամ մոլեկանէ հանեն գեղթափ մոլութե նորա՝ պատժելով զնա: [illegible] զի 'ի նմ անձեցուն ոյժն առնէ նոր մարմին: Դիւրագոյն գան յուղղումն մանկահասակք քան զծերս. զի 'ի նմ դիւրագոյն կերպարանի նոր ունակութիւն. բայց ունակութիւնն հնացեալ ոչ փոխի երբեք:

Յերկրագործութե՛ որ քաջ ուսուցիչն է վարուց, հնար է ուսանել զպյսոսիկ իմաստս: [illegible] Երիտասարդք՝ որք ձեռներկց են 'ի մեծամեծ մոլութիւս, ընդունակ են և առաքինութեց մեծաց: [illegible] Նա ես զարգանայ չափաւոր ինչ մի մեծաւ ջանիւ, քան ըզմեծ ինչ ուշ՝ սակաւ ջանիւ: [illegible] Սոյնպէս բարոյս ջան՝ ուսուելոյ զիմաստս, բայց նուազէ զկեանս: [illegible] ողոյք, որոց կանխահաս է խոհեմութն, լինին կարճակեաց: [illegible] Հատափոյթ խորհուրդ երբեմն ոչ յաջողէ 'ի բարի. բայց կարի յամր խորհրդոց՝ միշտ ձախող են ելք: [illegible] 'ի գժուարին ձեռնարկս պարտ է հայցել զօգնութե երկնային. զի օգնութեք մարդկան են օգտախնդիրք անձանց. վճն և գժրօղք: [illegible] Եւ սունք յապաստահմութե խոնարհեալք և աղքատացեալք, ազնուական ամուսնութը գտանան 'ի բարեառնմութե: [illegible] Բարեբաստ են ամուսնութիւնք և բարեկամութիւնք 'ի մէջ հաւասարից, քան 'ի մէջ անհաւասարից:

'ի նաւարկութէ արուեստէ քաղէ խորհեմն այսպիսի իմաստս : [illegible] ցուցարարաց . և գիտել, ը որով ընթանալ, և ը որով ստախմնաւ, և ը որով շինամոր հողմոյ և ցէն իւր ընթացք . առ 'ի խուսել 'ի ժայռից, 'ի ցամաքաց, և 'ի ծովափանց մատանաւորաց : Եւ որ ձեռնարկէ 'ի գործ ինչ մեծ, պարտ է այնպիսւոյն հայել 'ի պարագայս տեղեաց, ժամանակաց, և անձանց, առ զգուշանալոյ 'ի չար պատահարաց : [illegible] : Ըստ սմին օրինակի, որ ոչն կարէ առնել՝ որչափ ինչ կամի, պարտ է նմա պատշաճել զկամս՝ իւրում կարի : Զի լաւ է այնպիսւոյն յառաջ խաղալ աշխատութը, քան ընդ կրունկն դառնալ վերջասութը : [illegible] : Եւ յառաջքան զձախող պատահարս՝ երևելն 'ի բացուստ չար գուշակութիւք՝ քաջի խորհելն : [illegible] : Եւ յորժամ երկու գործավարք հակառակին 'ի վը գործոյ ինչ, մեծն յանկ ելանէ 'ի շահ երգին : [illegible] : Եւ վտանգաւորագոյն յառնելն է փոխել զառաջադրութեն յետ յառաջադէմ լինելոյ գործոյն : [illegible] : Եւ շնորհընկալն զրկեալ 'ի շնորհաց, անգէն իսկ դառնայ յոխերիմ թշնամի այնմ՝ յորոյ էր 'ի շընորհս :

Ըստ սմին օրինակի 'ի Ճարտարապետութէ, 'ի գարբնութէ, և յայլ ամ արուեստից յինքն առարկանէ խորհեմն ուսուցչական իմաստս վն բարոյական գործոց :

Բայց քան զսոսա ազդողագոյն են իմաստք, որք քաղին 'ի կենդանի օրինակէ յաջող կամ ձախող գիտուածոց այլոց : Վն այսորիկ ամ 'ի հայեցողական գիտութիս առաւել ազդու ձեռնարկութ

է

է մակածութիւն , նոյնպէս յաւելլ իրս ազդողագոյն ձեռնարկութիւն՝ է օրինակն։ Բայց այն ինչ ընդ մէջ է սոցա . զի մակածութեն ոչ եզրակացուցանէ ինչ , թէ ոչ ընդ թիւ մասանն բազում դիպուածք . բայց յօրինակն մի միայն դիպուած եզրակացուցանէ . քանզի մարթ գոլով թէ ամենեցուն պատահիցէ՝ որ միում միայնոյ պատահեաց , 'ի միջէ լոկոյ դիպուածոյ՝ կազմի իմաստ հանրական . որոյ յաջողուած՝ զքեզ քաջալերէ , և որոյ ձախող ելք՝ առնեն զքեզ զգուշաւոր . և երկաքանչիւրն առնեն զքեզ խոհեմ :

Քսերքսէս արքայ պարսից առնէր պատրաստութ̃ մեծ տիրել Եգիպտոսի : Խոհեմ աթենացին արար խորհուրդ ը̃ իւրոյն յօգնութե̃ հասանել Եգիպտացւոց , այսուիկ և եթ օրինակաւ . [illegible]

[illegible] :

Վէհ Կոռնելիոս Տակիտոս երաց նոր գալրոց քաղաքայնոց յիւր տարեգրութեա և 'ի պատմութեան , տրարկեալ 'ի վ̃ր իւրաքանչիւր դիպուածոց թէպէտ և պատահականաց՝ խորին խորհրդածութիւ : Եւ առ 'ի քաղել ինչ ինչ օրինակ միայն 'ի Տիբերիոսէ անուն իւրմէ , ընթերցիր զառաջին վեց գիրս տարեգրութեց , յորս բովանդակի ինքնակալութի այսր գոռոզի : Անդանօր ուսուցանէ քեզ Տակիտոս , թէ որովք սկզբամբք վարիցի իշխան որ զգուշաւոր բայց չար : Եւ թէ որովք սկզբամբք վարիլ ունիցի բարի որ քաղաքացի է այնպիսում իշխանի : Եւ օրինակք այլոց , որ չար և որ բարի , առնէ զքեզ իմաստուն : Զի առաքինութիւնն ուսեալ լինի եթէ յառաքինութէ , և եթէ 'ի հակառակէ նորա . զայնր զհետ երթալով , և 'ի սմանէ խորշելով :

Խոհեմութեն է արուեստ ուղղելոյ զմիջոցս 'ի գիտել վախճան : Եթէ վախճանն է արդար , խոհեմութեն է խոհեմութիւն . եթէ վախճանն է անիրաւ , խոհեմութիւնն է չարութիւն : Խոհեմութեն

է

է դիւրագոյն, զի գնայ ընդ հարթյատակ ճ̅ճհ. չարութիւնն է դժուարագոյն, զի գնայ ընդ առապար : Նմա պիտի անկեղծութիւն, և առաքինութին. սմա կեղծիք, և ապիրատութին. և այսպիսի էր չարայոյզ խոհեմութիւն Տիբերիոսի, որպէս

եցոյց վախճանն :

Տիբերիոս որդի էր Կղոդիոսի Ներոնի, և Լիւիայ Դրուսիղլայ, որ ապա եղև ծննդական, այլ անծնունդ կին Օգոստոսի (279). Այս Տիբերիոս ը̅ հայրենի անգթութե̅ ընդօրդեաց զմայրենի կեղծիս, ուստի և հնարեաց զայն խժդժական առած. [illegible] : Ատեայր Լիւիա զքաջատոհմ զաւակ Կեսարեանց, 'ի բարձրացուցանել յաթոռ զայս ամբարտաւան զածած կղոդեանց. զի այն էր նորա խիղճ, ը̅ սովորութ խորթ մարց : Այսմ անձկացեալ և Տիբերիոս՝ խորհէր զբռամբ ածել զինքնակալութին, որ բնաւորապէս անկ էր Ագրիպպայ՝ առաջնոյ արքայազնի 'ի զարմէ Օգոստոսի : Մայր և որդի յայն առած էին ապաստան, թէ [illegible]

[illegible] :

Ունէր մայրն վաղեմի ինչ իշխեցողութի 'ի վ̅ր̅ ծերակուտին, իշխեցողութե̅ զոր ունէր 'ի վ̅ր̅ Օգոստոսի: Ունէր և Տիբերիոս զտրիբունական իշխանութիւն, որով ահեղ էր նորա զօրութի. մինչև անհնար էր չինքնակալել նմա, որ զփականսն ունէր 'ի ձեռին: Այսպէս ընդօրդեալ զխորամանկութի զաղուեսու ընդ անգթութե̅ առիւծու, գաղեաց զմեռանիլ Օգոստոսի, մինչև ցհրատարակել մահուն Ագրիպպայ. որ միայն էր մնացեալ 'ի թոռանց Օգոստոսի. որ և աճընկէց էր 'ի նա քան զթոռնորդիս. զի [illegible] : Բայց և այնպէս երդուաւ, թէ ոչ իւր էր հրամայեալ սպանանել զագրիպպաս. այլ պալատականք ասէ, կատարեցին զպատուէր Օգոստոսի՝ մինչ 'ի հոգեվարս էր. գովին զայս առած ուսուցեալ նորոց յաջորդաց, [illegible] : Զբարբառութիւն անհաւատալի, բայց եղև հաւատա-

տալ՝ յաճէ այնորիկ, որ կարող էր սպանանել՝
զորս ոչն հաւատային:

Այլ երբեւ առաջնոյ չարութեան յաջողելով հորդեցաւ ճ̄ղ̄հ առ այլն ամ, ձեռնտուութե̄ մօրն եւ ծերոց ծերակուտին՝ որ կուսակից էին նորա, ջանացաւ, զի ծերակոյտն ամ առաջի տրացէ նմա զինքնակալութին 'ի հռոմ, մինչեւ գնդաց զօրաց ընծայեալ էր զայն գերմանիոսի 'ի գերմանիա: Եւ զիարդ հնար էր ծերակուտին զլանալ նմա զայն պատիւ. որ 'ի պատրաստի ունէր սատակել զայնոսիկ, որք իշխէին խափան լինել այնմ. 'ի գործ արկեալ զբռնաւորութի յառաջ քան զիշխանութի: Այլ իւրաքանչիւր զհետ չոքան կեղծ կամաց նորա: Կամէր տիբերիոս հաւատացուցանել ծերակուտին, թէ ակամայ ընդունի զայն, [illegible]: Կամէր ծերակոյտն հաւատացուցանել տիբերիոսի, թէ յօժարամիտ ընծայէ, զոր [illegible]:

Այլ երբեւ ծերակոյտն ամ 'ի ծունկս անկեալ աղաչէր զտիբերիոս՝ յանձն առնուլ զինքնակալութին, որ 'ի գիրկս նորա էր ապաստան, եւ պատասխանի տկարաց մգահաճութե̄ն՝ կեղծ ցածութբ, 'ի յայտնել զգաղտնի միտս ծերակուտին՝ զիւրն ծածկելով: Ոչ պատասխանէր նա երբէք մեկին, այո՝ կամ ոչ. 'ի գործ արկեալ զբռնաւորացն զառած, [illegible]. ըստ պատասխանատուութեց գեղփեան պատգամախօսի, որոց ոչ իմացեալ լինէր միտ, բայց եթէ յետ եղելութեան, 'ի մեկնել նորա ը̄ս հաճոյս իւր: Վ̄ն̄կ պատասխանի եւ տիբերիոս. [illegible]: Որ ասէ, զի տիբերիոս գժուարին կոչէ. այլ ոչ անհնարաւոր. զվարելն բովանդակ զինքնակալութի. եւ եթէ չառնու զայն յանձն, բայց եւ ոչ մերժէ. այլ թողու տեղի մեծ եւս աղաչանաց ծերակուտին. կամ յայտնագոյն եւս նշանաց ձախող կամաց նց, 'ի պատառպուռ սատակումն նոցին:

Եւ արդարեւ ասինիոս գաղղոս, ծեր համարձա-
կա-

կախօս, բայց անզգոյշ, կեղծաւորեալ յանձն՝ հաւատալ, թէ տիբերիոս անկեղծ խօսիցի, ասէ. [illegible] Տիբերիոս՝ յետ երկիւղագին ինչ լռութեն՝ քաղցրութբ ետ պատասխանի. [illegible] Յայնժամ ծանեաւ ասինիոս, թէ այնուիկ հարցմամբ եդ 'ի կշիռ զկեանս իւր. ոչ իսկ եղև: Ուր տակիտոս կերպարանէ զայս առած. [illegible]

Այլ՝ մատնն, զոր կամէր տիբերիոս, էր այն, զի ինքնիշխան հրամայել՝ իւր իցէ. իսկ ծերակոյտն զյանձնեալն յիւրմէ ծառայաբար կատարեսցէ. զի ինքն միայն իցէ առաջնորդ պանծալեաց, և ծերակոյտն՝ անզթականաց:

Այսու օրինակաւ զրաւմբ ածեալ զինքնակալութիւն՝ սկսաւ հնարս հնարել նորոց եղեռնութեց 'ի հաստատել զայն. զի առած է հորկց, թէ [illegible]: Երկնչէր 'ի գերմանիկոս կեսարէ, վս ամուսնութեն ընդ ագրիպպինայ՝ բարեբաստիկ մօր աղայոցն կեսարեանց, բայց առաւել ևս վս քաջութե նորա և մեծամեծ յաղթութեցն 'ի գերմանիա, որով սիրելի էր յոյժ ժողովրդեան և զօրուն, և վս այնորիկ ատեալ զնա տիբերիոս, թէպէտ և հայրագիր էր նր: Երկնչէր յերևելի աւագանւոյն, զորս օգոստոս 'ի յիշատակագրի ուրեք համարէր բաւականս ինքնակալութե. իբր զի ահրնկեց են չար իշխանաց՝ արժանաւորքն իշխանութե: Երկնչէր 'ի յիշատակէ սպանելոյն ագրիպպասայ, որոյ վասն ամենեքին ողբային և յոգւոց հանէին: Վս այսորիկ մի 'ի գերեաց ագրիպպասայ, որ ամենևին նման էր նմ, առեալ զանուն և զզգեստ մեռելոյ տն՝ մեծամբ յուսացոյց զժողովուրդն, և երկեցոյց զտիբերիոս. որ թէպէտ և քաջ գիտէր զմահ ագրիպպասայ, բայց և այնպ ծանեաւ՝ թէ կեանք իւր չէին յապահովի: Երկնչէր և յիւրմէ խղճէ մտացն, գիտելով թէ [illegible]

որ

որ [illegible], [illegible] ։ Եւ վն այնորիկ ոչ համարէր զանձն ապահով, թէ ոչ սատակէր զամենեսին զնոսա յորոց երկնչէր. ածեալ զմտաւ զայն առած, թէ [illegible] ։

Այս ձեռնարկեալ յայս երկար և դժուարին ձեռնարկ՝ պատրուակ արկանելոյ անգթութեն զարդարութիւն, զնմ հնարս հնարեցաւ, զի երևեցուսցէ զնմ անմեղութիւն՝ ժխտապատար ։ Առաջինն եղև վերստին յարուցանել զթաղեալ [illegible] որ 'ի [illegible] առ [illegible]. բայց յոյժ առաւել անողորմ և սարսափելի քան զնախկինն ։ Զի առաջինն այն պատուհասէր միայն զգործս, կամ թէ աւելի՝ զգրուածս նախատագիրս իշխանի. թողեալ յազատ հնրկայութեան անգ. զխօսս ազատս ։ Բայց այս նոր օրէնք պատուհասս 'ի վր կայլէին նմ երգիծանաց՝ ակնարկութեց և խորհրդոց ։ Շատ էր չզօրել զնորա ապիրատութիւն՝ 'ի լինել ապիրատ ։ Իւ ևս՝ 'ի նախնումն օրէնի էր անցի ապաշխարութեան, աղերսարկուե, և ներման. և պարտ էր իշխանի դեղ մատուցանել հաւատարմութեց՝ գործովք բարեաց ։ Բայց յայսմ, միայն լուր գոյզն վրիպանաց՝ էր յանցաւորութե անթողլի և մեծեղեան ։ Իւ 'ի կարկաչել անզուսպ ձայնի չարախօսաց՝ լսեր նմ պաշտպանուի ամբաստանելոյն. խզէին նմ կապք բարեկամութեան և ազգականութե. լինէր յաչս առհմայնոց առ. կենդանութի զզուելի, և 'ի մահուն հայրենի դերեզմանաց անարժան. զի մի կարծեսցի՝ թէ հասարակց իցէ յանցանքն, ոճ դերեզմանն ։

Յետ այսորիկ ձեռն էարկ յայլ հնար՝ չար ևս քան զառաջինն. [illegible], ոչ միայն ռամկայնովք՝ որք սիրողքն են վատանունութե, այլև ազնուազգեօք՝ որք թշնամիքն էին աղքատութե և փառամոլք. և ոչ ամօթ համարէին զայսպիսի անարգ սպասաւորութի. ակնեալ թէ չամաչէր իշխանն պատուել զնս՝ [illegible] կոչելով, և ճոխացուցանէր զնս ընչիւք դատապարտելոց ։ Վն այսորիկ 'ի հանել զմիտս

զմիտս ռանուորին՝ ոչ միայն զդոյց բերելով, այլ բարուրանս բարգելով` անամօթաբար կատարէին երիս պաշտօնս, [illegible], [illegible], և [illegible]: Եւ քանզի արգելուին օրէնք՝ տանջանօք վկայութեան քաղել 'ի ծառայից ըղձեմ տեարց. հաստատեաց տիրերիս նոր օրէնս, զի [illegible] [illegible]: Այսու օրինակաւ ահիւ պարանէր զամենեսին. քանզի այնուհետև ոչ ոք վստահ էր 'ի ծառայս տան. զի շատ էր ծառայական սրախ յոյս վարձուն՝ առանց տանջանաց՝
'ի լինել զըպարտող.

Բայց մեծ քան զամ ռանուորական հնարս եղև [illegible] և [illegible]. Եւ այն եղև եղխոս սէյխանոս. մահերիմ յոյժ, վս լինելոյ նորա ընկեր և մեղսակից տիրերիսի յաքսորանս հաւգոսի. և անօրէն յոյժ, զի ոչ կամէր լինել լաւ քան զնր խւր, որ նմա միայնոյ բանայր զգաղանիս իւրոց խորհրդոց. իբր զի իբաղէտ գոլով նց գաղանեաց վարուց միմեանց, ոչ ռանուորն ամաչէր յայանել ապառաւորին զիւր ամպարիշտ միտս, և ոչ ապառաւորն խղճէր 'ի կատար հասուցանել զնն: Այպ էր սա գործեաց գործի 'ի նիւթել զնենգութիւս, 'ի հեննուլ զամբաստանութիւնս, 'ի գեղերեսել զզրպարտութիւս, 'ի զզրգռել զծերակոյտն առ ատելիս կամ կեղակարծս, և 'ի կատարել անողորմ զգաղանի ապանութիւնս, կամ զյայտնի կոտորածս:

Այնպիսի էր երկաքանչիւրոցն արուեստ, որ [illegible] 'ի [illegible], և [illegible] 'ի [illegible], ցուցեալ զանձն առաւել նախանձախնդիր բարօրուն իշխանին՝ քան զնոյն ինքն իշխանն: Վս որոյ և ծերակոյտն մատգիւր շնորհակալութե անսայր ակնարկուն սէյխանոսի, քան կենդանի բարբառոյ տիրերիսի: Այսուիկ նենգաւ տիրերիսի բարձան 'ի միջոյ ամենեքին նորա, զորս 'ի մահ եղեալ էր նր մատնել 'ի մահ. ոմանք սրով, ոմանք թունով, որպէս և ոմանք՝ իւրեանց իսկ ձեռօք. քանզի տեսեալ զանձինս՝ անմեղս և
ան-

անօգնականս, զբանաւորն առանց ողորմութեան և առանց բարկութեան, զծերակոյտն առանց ազատութեան և առանց իրաւանց, լաւ համարեցան ըղձալ կամաւոր՝ քան զմահ նախատական։

Յետին ճիգն նր եղև 'ի կենաց խորշել զնոյն ինքն, յայս յետոյ հնարեցաւ 'ի կենաց խորշել զայլսն ևս. կարծելով վայելել իբրև 'ի հանդէս ինչ եղերական, 'ի հանել զնա 'ի բարձանց 'ի վայր։ Գիտէր Տիբերիոս, թէ Գ Գայն ճանապարհ գահավէժ առնելոյ զմեղաւորսն՝ էր Թեփայեան Թեփրէն զնա. զի փառամոլութիւն չունելով սահման, այնչափ վերբերի 'ի բարձունս, մինչև անտես առնել և զանձն։

Քանզի բաժանորդ լեալ էր Սէյիանոս ձախողութեանց, եղև բաժանորդ և բարերաստութեանց։ Իշխանութիւն առեալ գործակալութեան պրետորական գնդին, ոչ հանդէաւ, մինչև զամենեսին ամփոփեաց յիւր պալատ. զի կախեալ կայցեն զիւրմէ հրամանէ միայնոյ։ Հոգաբարձու լեալ դրուսոսի որդւոյ Տիբերիոսի, որում մնայր յաջորդ լինել ինքնակալութեան, ամուսնացոյց զդուստր իւր ընդ կղոդիոսի իշխանի՝ որ յաջողականութեան օգոստոսի, 'ի հաստատել զիւրն ակնկալութի. և անդէն զհետ այնափ ամուսնանալ ընդ լիւիայի կնոջ դրուսոսի։ Մինչև ածեալ զնա կնութեան՝ շնացաւ ընդ նմա. զի արբուցեալ դրուսոսի դեղ մահու, բացցէ ինքեան ճանապարհ ինքնակալելոյ. և ոչինչ դժուարին եղև հրապուրել զնա յայն անդթութի, յետ կորուսանելոյ նորա զհամեստութիւն։

Հասուկ ուրեմն իբրև յայտնեցան յայսմ յետնում նուագի՝ նորա ամ անօրէնութիւնք, որոց համեալ 'ի ծագ՝ ինքնին եկին 'ի յայտ. յանկ եւ եղերերգութեին՝ կատարմամբ ամ զարմի նորա մինչև ցանմեղ անդիացս։ Եւ յետ սակաւուց տիբերիոսի իսկ եհաս օրհաս, աղաղակելով ամ ժողովրդեան. տիբերիոս ընկեցի 'ի տիբերիս։ Այսպէս իմաստք հիմնեալք 'ի խորամանկութի և ոչ 'ի խոհեմութի, Ը ճշգհ Ը նոյն, որով կարծիւր լինել կանգնումն, առաջնորդեն 'ի կործանումն։

Սերջին աղբիւր խոհեմութե է փորձ իւր։ Բայց

քան-

քանզի այս առածք՝ ըստ պէսպէս մասնաւոր դի-
պուածոց, որոց հնար է պատահել ամ̄ մարդկան՝ են
անբաւք. վասն պարտ է թողուլ՝ զի իւրաքանչիւր
ոք արասցէ զայն իւրովք ձգամբք։ Հատ է ասել
ընդհանրապէս, թէ ոչինչ այնպէս իմաստուն առ-
նէ զմարդ, որպէս փորձն. զի ոչինչ լաւագոյն ապա-
ւորի 'ի միտ՝ քան զկսկիծ։

## ԳԼ. ԺԹ։

## ՅԱՂԱԳՍ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ։

Հնգից ներգործութեանց պարտ է ընթացակից լինել առ գործողութիւն ինչ կատարելապէս խոհեմ։ Առաջինն է ԿԱՄԱՑ. որոյ անընչացեալ առարկայի իմիք պիտանացուի և բարւոյ առ մարդկային կեանս, շարժէ զմիտս 'ի գտանել միջոցս առ ստանալ զայն։ Երկրորդն է ՄՏԱՑ. որոյ հնազանդեալ կամաց՝ հետազօտէ բազում միջոցս, որոց հնար է պիտոյ լինել առ ստացումն անընչացեալ վախճանին։ Երրորդն է նոյնպէս ՄՏԱՑ. որոյ քննեալ մի ըստ միոջէ զմիջոցս, և բաղդատեալ միմեանց, ընտրութիւն առնէ՝ թէ ո՛ր լաւ իցէ։ Չորրորդն ևս է ՄՏԱՑ. որ զեկուցանէ կամաց, զոր համարեցաւն լաւագոյն, և յորդորէ զնա գիրկս արկանել այնմ։ Հինգերորդն է միայնոյ ԿԱՄԱՑ. որ վասն զի յայր խոհեմ ենթադրի կարգաւորեալ՝ զհետ երթայ բարւոյ խորհրդոյ. և հրամայէ զայն գործադրել կարողութեանց։

Առաջին ներգործութիւն պատկանի ոչ խոհեմութեան, այլ ՓԱՓԱՔԱԿԱՆԻՆ, որում անկ է ԸՂՁԱՆԱԼ ՀԱՃՈՅ ԻՐԱՑ, և ԽՈՐՇԻԼ 'Ի ՀԱԿԱՌԱԿԱՑ։ Մինչ զի խոհեմութիւն ոչ թէ առաջադրէ զվախճան, այլ միայն խորհի զմիջոցաց՝ առ 'ի հասանել այնմ։ Որպ̄ արդարակորով իշխան՝ 'ի մտի եդեալ մարտ դնել ընդ սահմանակցին, ժողովէ զխորհրդականս պտ̄րզմի, ոչ առ հարցանելոյ խորհուրդ, եթէ պարտ իցէ յարուցանել զպտ̄րզմ, այլ թէ ո՛ր ճնպ̄հ լաւ և օգուտ իցէ 'ի յարուցանել զայն. նոյնպէս յայր խոհեմ՝ ուղիղ գոլով կամաց և մտաց, կամք ոչ

առա-

առաջագրեն մտաց, բայց եթէ զուղիղս. վն̃ և միտք ոչ խորհին 'ի վ̃ր բարուն վախճանին, այլ միայն զմիջոցաց: Եւ այս է պաշտօն խոհեմութեան. անուանեալ յարիստոտելէ Եւբուլիա, որ է Բարեխոհութիւն:

Անհնար է խորհրդոյն լինել բարի, եթէ վախճանն է չար: Եւ թէև միտք գտանիցեն կարի խիմ̃ հնարս և զօրաւոր միջոցս առ հասանելոյ 'ի չար ինչ վախճան, չէ խորհրդածութիւն ճշմարիտ, այլ՝ այլաբանեալ. ոչ է խոհեմութիւն, այլ՝ չարութիւն. ոչ է Եւբուլիա (Բարեխոհութիւն), այլ՝ Պանուրգիա (չարախոհութիւն). որպիսի է աւազակացն, որք խորհիցին, թէ զիարդ կողոպտեսցեն զխարթամ ոք վաճառական: Եւ այսպիսի էր խոհեմութիւն տիբերիոսի և սեյիանոսի:

Ճշմարիտ Բարեխոհութիւնն է ուղղութիւն մտաց 'ի հասանել Բարւոյ միջոցաւ առ Բարի ինչ վախճան: Եւ վն̃զ հետազօտէ զբազում միջոցս, և զա̃մն քննէ, առ ընտրելոյ զլաւն:

Ոմանք 'ի բնէ միճակեալ են այնպիսի Երագութեան մտաց, որ յառաջագրել վախճանի ինչ, անդէն վաղվաղակի 'ի պատրաստ ունին միջոց խմ̃ առ սատանալ զայն. և յայնմ զկայ առնուն, և երբեմն հասանեն իսկ: Այլ այդ չէ ճշմարիտ խոհեմութիւն. զի չէ ճշմարիտ խորհրդածութիւն: Խոհեմն հայեցեալ 'ի վախճանն, 'ի խորհուրդ կոչէ զա̃մ զխելս Խորհման. հարցանէ իւրում մտերիմ Յիշողութեան զնմանակ դիպուածս. զի չէք ինչ, որ ոչ լեալ իցէ յառաջ. հայի յօրինակս. քննէ, զինչ ը̃ մէջ է նց̃. 'ի միտ առնու զգուշաւոր անցս. մտաբերէ յաղագս. խնդրէ միջոցս յարմարաց անտի, ուստի իմաստասէրն խոյզ և խնդիր առնէ միջնորդ եզերաց հաւաքաբանութեանց, ա̃յն է, 'ի պատճառաց արարչականաց, նիւթականաց, տեսականաց, և յանչականաց. հայի թէ ունիցի Գործողական, ա̃յն զօրութիւն գործելոյ, իցէ՞ 'ի նմա, թէ արտաքոյ նորա:

Վն̃ զի եթէ գործողական կարողութիւն է 'ի կամս գործողին, այլ՝ ինչ ոչ պիտի, բայց միայն իւր կամք:

կամք ։ Բայց թէ կախեալ կայցէ զայլմէ, որ կարող է օգնել՝ կամ խափանել, հայի թէ զհարդ-հնար իցէ բառնալ զխոյս, և ստանալ օգնութիւն. [illegible], [illegible], [illegible], [illegible]: Զի ոչ եք խոհեմ խորհրդածել, բայց եթէ զիրզք, որ յիւր ձեռս են. ըստ այլում ասացաւ:

Բայց յայսմանէ հայի 'ի [illegible] [illegible], [illegible], և [illegible]: Քանզի յայտ է, թէ այս ինչ միջոց յայն ինչ պարագայս լինի աղգու և օգտակար, որ յայլս լինէր ներհակ և վնասակար: Իւր ուր պակասին մարդկային օգնութիւնք, պարտ է դիմել յածայինսն:

Որպէս քաջ իմաստասէր գտանէ բաղում միջնորդ եզերս՝ 'ի ցուցանել զմի և նոյն եզրակացութիւն, այնպէս խոհեմի գտանէ բաղում միջոցս առ որոշել զգործողութիւն ինչ. և զնմի քննէ և կշռէ՝ զդիւրուն և զհետևանս նորուն. քանզի չիք ինչ այնպէս ամօթալի առն խոհեմի, որպէս ասել՝ թէ [illegible] [illegible] [illegible]:

Ոչ է պարտ երբէք խորհրդածութեան լինել այնպէս երկար, մինչև 'ի խորհրդածել անդ՝ դիպողութեան 'ի ձեռաց ելանել. զի ըստ ասացոք, կարի իմն չատալ յոլովակի խաբէ. բայց կարի իմն դանդաղանք միշտ խաբեն:

Զհուսկն ասացից. չէ խոհեմ խորհրդածութիւն, թէպէտ և յաջողեսցէ [illegible], եթէ յաջողել գործոյն չիցէ 'ի զօրութեան [illegible]: Ոչ չէ ճըշմարիտ գիտուն եզրակացուցանել զճշմարիտ ինչ նախադասութեան 'ի սուտ առաջարկութեանց, նոյնպէս չէ ճշմարիտ խոհեմութեան հասանել 'ի դէմ եղեալ վախճան՝ յետ [illegible] [illegible]: Առաւել է գովելի յետ քաջի խորհրդածութեան՝ չհասանել 'ի վախճան, քան հասանել 'ի վախճան՝ յետ չարաչար խոհելոյ:

'Ի պաշարել աթենացւոց զպատարացիս 'ի կղզւոջ ուրէք, Նիկիաս քաջ զօրավարն աթենացւոց՝ թէպէտ և գուն գործէր ամ իրօք, սակայն դեռ չէր յաղթեալ նոցա: Կղէոնն երիտասարդ յանդուգն

անձ-

անձնամատոյց եղև ունել նոցա յաւուրս քան: Անժուժութիւն աթենացւոց չըջեցաւ յանմտութիւն. նին փաղփաղակի զհրամանատարութիւն 'ի Նիկիասայ, և ետուն կղեովնի: Գիտէք եղև, զի յայնմ պահու սպարտացիք, որք 'ի Նեղելոյ Նիկիասայ յոգիս էին ապատան, հաստատեցին 'ի միտս առնուլ զկղզին աթենացւոց. և արարին այնպէս: Ժողովուրդն մեծաբարբառ գոչէր զկղեովն. այլ ծերակոյտն շնորհ ունէր Նիկիասայ, գիտելով թէ յաղթութիւն էր 'ի խոհեմութեան նորա՝ թէպէտ և յանծանօթէ, և ոչ 'ի յանդգնութեան կղեովնի՝ թէպէտև յաջողելոյ:

Բայց չէն ինչ պարծանք գիտել գտանել միջոցս յոլովս և օգտակարս առ վախճան, յորժամ չգիտիցէ ոք գտանել՝ որ իցէ միջոց ճահողագոյն: Ապա այս գտաւումն, զոր արիստոտել կոչէ [illegible], [illegible], է այն, յոր սակս այր խոհեմ կոչի զգօն և անյողդողդ և քաջախոհ յառնելի իւս:

Այս՝ բաղումք են ձորք 'ի գիտաս և 'ի միջոցս. բայց առաւել յամի 'ի նն, նմանեալ գրաստու, որ զմէջն ունելով զերկուց պարկաց հաճարոյ, զոր բարձեալ ունէր յերկոցունց կողմանց, կայր 'ի միջի նդաղեալ: Բայց ճշմարիտ խոհեմն առաւ է 'ի գտանել, և անտայթաք 'ի գտանել, և հաստատուն 'ի գտանումն իւր: Զի քաջ խորհեցաւ, և քաջ գտանեալ. ոչ կարէ փոխել զիւր կարծիս, թէ ոչ փոխին պարագայք: Բայց 'ի փոխել պարագայից՝ չէ ամօթ փոխել զկարծիս. զի փափոխութիւն ոչ է 'ի նմա, այլ՝ յառարկայն:

Այսպ [illegible]:

Որ եթէ այս գտաւումն համաձայնի օրինական արդարութեան, կոչի [illegible]. եթէ բնական արդարութեան, կոչի [illegible]:

Զչորրորդ ներգործութիւն խոհեմութեան համարի արիստոտել՝ սեպհականագոյն խոհեմութեան. այն է [illegible] ներգործութիւն [illegible], որ շարժէ և գրգէ զկամս ձեռնարկել 'ի միջոցն,

զոր

զոր ինքն լաւ համարեցաւ. զի 'ի գլուխ ելցէ գործն: Վասն զի և 'ի գիտութիւն պահանջի հետազօտութիւն միջնորդ եղերաց, և ուղղութիւն դատման յորոշել զլաւագոյնս, բայց ոչ է հարկ, թէ իցէ հրաման ինչ մտաց, որ յառնելի իրս, 'ի շարժել զկամս:

Բայց են և արդոյ իմաստասէրք, որոց բացատա-ցեալ զհրամայել՝ մտաց, համարին զայս չորրորդ ներգործութիւն մտաց ոչ պատշաճիլ խոհեմութեան. իբր զի կամաց միայն է սեպհական, որպէս ազատ կարողութեան, լինել հրամայողական: Վասն զայդ ներգործութիւն աւելորդ համարին խոհեմութեան. զի թուի նոցա, թէ 'ի գտնել հետազօտութեան միջոցաց, և հաստատուն դատման լաւագոյն միջոցի, առանց ինչ հրամայելոյ մտաց՝ կամքն հաճեալ ընդ վախճան՝ և կանոնաւորեալ, դիմէ ազատօրէն առ 'ի գործ դնել:

Այլ արիատանել խորագոյն ես նկատեալ, թէ միտքն երևեցուցանէ կամաց զիւր որոշողական դատումն՝ որ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ և ՃԱՆԱՉ և ՕՐԷՆՔ առնե-լեաց, որք են սեպհական ներգործութիւնք մտաց՝ կարգեալք 'ի շարժել և 'ի դրդել զկամս, զոր կոչէ զայս երևեցուցումն՝ ՀՐԱՄԱՆ ՄՏԱՑ: Ստոյգ է թէ որովհետև միտքն է կարողութիւն բնաւորապէս արարող, և կամքն կարողութիւն ազատ, հրամայելն մտաց ոչ է ազատ իբրև զհրամայել կամաց. մինչ զի միտքն ոչ կարէ չհրամայել կամաց, այլ կամքն կարող է չհնազանդիլ մտաց: Բայց յայր խոհեմ, քանզի միտք և կամք են ուղիղք, և կիրք են կար-գաւորեալք, չիք ինչ՝ որ ընդդէմ դառնայ ուղ-ղութեան: Վասն այսորիկ որ առ հրաման կամաց, որ է առաջարկութիւն վախճանին, միտք 'ի խնդիր լի-նին միջոցաց, այնպէս առ հրաման մտաց՝ որ է որոշեալ երևեցուցումն միջոցի, կամք դիմեն 'ի կատարումն: Մինչև հասարակաց հաւանութիւն՝ կամաց շարժել զմիտս, և մտաց շարժել զկամս: 'Ի վերայ խորհրդածութեան և ընտրութեան լիով խօ-սեցաք յառաջին գիրս, 'ի ճառել զմարդկային ներ-գործութեանց:

## ԳԼ. ԺԵ.

## Յաղագս անխոհեմութեան, և խորամանկութեան ։

Այս ինչ է մէջ է անխոհեմի, և խորամանկի, զի խորամանկին կամքն է աւեր, այլ միտքն առողջ. և անխոհեմին հնար է թէ կամքն իցէ առողջ, այլ միտքն է աւեր ։ Երկաքանչիւրոցն կիրք են անբարեկարգք. բայց անխոհեմն յայտնէ զնոսա պարզմտութեամբ. իսկ խորամանկն ծածկէ կեղծեօք. և ոչ թէ իցէ առանց բարկութեան և առանց սիրոյ, 'ի ժամանակի յորժամ առաւել ամբոխեալ է նորա սիրտ՝ ցուցանէ երեսս զուարթս և խաղաղականս ։

Երկաքանչիւրքն են մեծ մոլութիւնք. զի հակադրին այնմ որ մեծն է յառաքինութիւնս. բայց անխոհեմութիւն է առաւել անմտութիւն. և խորամանկութիւն առաւել չարութիւն ։ Խորամանկութիւն առ անխոհեմութիւն երևի խոհեմութիւն. և անխոհեմութիւն առ խորամանկութիւն երևի անմեղութիւն ։

Խորամանկն իբրև զսիբերիս՝ ունի խառնուած չար և սևամաղձային, երես սուր, և կերպարանս զաղուեսու ծերոյ՝ ուր և զրաբս ։ Անխոհեմն իբրև զվիտեղզիս՝ ունի խառնուած զուարթաբարոյ, և դէմս պարզս, ունելով ինչ նմանութիւն հայեցուածոյ և տխմարութեան եզին ։

Խորամանկն է քաղաքացի, որ կենցաղեալ նա ընդ բազում նենգաւորս. և վասն տեսանելոյ և ընթեռնլոյ և գրելոյ նա բազում ինչ. հաւաքեալ հանապազ զչար օրինակս, և մեկնեալ զնոյն 'ի չար միտս ։ Վն որոյ կազմակերպեալ 'ի միտս իւր բակդրունս և առածս ամբարիշտս՝ վնասակարս և անգթականս, թաքուցանէ զնոսա 'ի սրտի իւրում, որպէս 'ի մթերանոց դաւաճանութեանց և հնարից, զորոց ինքն միայն ունի զբանալի ։

Զորին հակառակն անխոհեմութիւն ծնանի առաւելապէս 'ի լինելոյն անփորձ, կամ 'ի բնաւոր տխմարութենէ, որ պատճառէ զպարզմտութիւն ինչ՝ որ տգիտաց երևի առաքինութիւն. բայց 'ի յայս գոյ 'ի

'ի գործոց. զի խորամանկութիւն գիտէ չնաւել այլոց. բայց անխոհեմութիւնն չնաւէ միայն անձին ։

Բարւոյ երկոցունց մոլութեանցս երևի լինել նոյն ը տարրկայի խոհեմութեան, զի է բարին ծառայական հեշտոյ. բայց է 'ի նմ աննմանութիւն մեծ ։ Խոհեմութիւն հայի 'ի ճշմարիտ բարին. զի յօգտակարն՝ ըմակցեալ ը բանաւորի և ընդ առաքինութեան. զի ոչ է հնար, թէ լինիցի խոհեմութիւն առանց առաքինութեան, և ոչ առաքինութիւն ինչ առանց խոհեմութեան ։ Բայց անխոհեմութիւն, և խորամանկութիւն հային միայն 'ի ճառանար բոլոր բարի, եթէ ճշմարիտ իցէ այն, և եթէ առերևոյթ. եթէ արդար, և եթէ անիրաւ. միայն թէ բաղձանքն առաջի առաջեցէ զայն մտաց, 'ի գտանել զեղանակ ստացուն նորա ։

Բայց յայսմ այլազգ առաջնորդի խորամանկն, և այլազգ՝ անխոհեմն. զի անխոհեմն չունի այնչափ չարայոյզ միտ, մինչև ճանաչել զանիրաւութիւն առարկային. շատ է նմա, թէ առարկայն հաճոյ իցէ բաղձանաց ։ Բայց խորամանկն ճանաչէ՝ թէ չար է այն. սակայն և այնպէս ջանայ ստանալ. միայն թէ իցէ նմա օգտակար ։

Իսկ ևս, անխոհեմն չար խորհի, առնել խորհի. ամենեցուն յայտնէ զխորհուրդ իւր, և ամենեցուն վստահանայ. զի պարզամիտ գոլով՝ համարի զամենեսին իւր նման ։ Բայց խորամանկն խորհի առնել, խորհի բազում. և ոչ առնէ վստահի. զի զամենեսին համարի խորամանկս և խաբեբայս. և վն այսորիկ ծածկէ զիւր գիտումն. զայս ինչ կամեցեալ, կեղծաւորի կամիլ զներհակն. և ոչ ճանաչի երբեք կամք նր, բայց եթէ 'ի գործոյն ։

Անխոհեմն թեպէտ և եռանդագին անձամբ ունիցի առ առարկայն, ոչ ունի հանճար 'ի խորհեդուծնել. այլ զառաջին միջոց, որ ընդառաջ լինի մտաց նր, համարի լաւ. ուր զպանդուխտ որ. որ առ հասանել 'ի քաղաք, ոչ անսանէ՝ բայց զի միայն ճգնի, որ բերէ անդամ խաբէ, կամ 'ի չարանիւթից իցանի ։ Իսկ խորամանկն ճանաչէ զան ճգն,

և

և զա՛մ դժուարութիւնս . բայց ընտրէ զզարտուղին և զղանխուղն . և միայն թէ հասցէ իւրում վախճանի , ձեռնարկէ յա՛մ միջոց՝ եթէ յիրաւացի և եթէ յանիրաւ ։ Վ՟նկ անխոհեմն յա՛մ գոյզն դըժուարութէ զանգիտեալ՝ վ՟ լինելոյ նր՟ անակնկալ և յանկարծադէպ , տարջանայ , կամ զաեղի առնու ։ Բայց խորամանկն՝ որ ա՛մ է յառաջատես , զա՛մ հնարս հնարի . և թէպէտ և միջոցն իցէ ապիրատ , դժուարութիւն ապիրատութեան յաղթէ մեծ ևս ապիրատութբ ։

Ջհուսկն ասացից . եթէ անխոհեմն և եթէ խորամանկն՝ ձեռնարկեն ՚ի չար միջոցս ՚ի բարւոյ վախճանի . կա՛մ ՚ի բարի միջոցս ՚ի չար վախճանի . և կամ ՚ի չար միջոցս ՚ի չարագոյն ևս վախճանի ։ Բայց անխոհեմն վ՟ անմտութեան , և խորամանկն վասն չարութեան ։ Վ՟նկ անխոհեմն չհասանէ երբեք բարւոյ վախճանի , բայց եթէ ըստ հանդիպման , զի որում բախտ երբեմն նպաստաւորաց լինի անմտոց և պակասամտաց ։ Բայց խորամանկն յոլովակի հասանէ այնմ , որում ըղձանայ . զի չարութիւն՝ թէև անման իցէ յառաքինութէ , ոչ պակասի հանճար ։ Բայց թէ զարգարն խօսիցիմք , որովհետև խորամանկութիւնն իւրովք գործովք յայտնի է ամենեցուն և ատելի , և ա՛մ չար գործոց դշևտ գան չարաչար հետևութիւնք , ճուրուրեմ պատահէ՝ թէ այնպիսի չարարուեստն ոչ ըմբռնիցի իւրովք արուեստիւք ։ Եւ ուր անխոհեմն ա՛մ ոք ախտակցի , ը՟ մեա խորամանկին ա՛մ ոք խնդայ ։

Բարոյական իմաստասիրութիւն

# ԳԻՐՔ ԺԲ. ԵՐՐՈՐԴ.

## Յաղագս մարդկային կրից. և Յաղագս հեշտութեան:

### ԳԼ. Ա.

Պատճառ ճառին:

Յառաջ քան զմտնել 'ի տրոհութիւն իւրաքանչիւր բարոյական առաքինութեանց, թէ ընաւոր ոճոյ պիտէր նախակարգել իմաստս ինչ հանրականս, առ կարգաւ յառաջանալոյ 'ի մասնաւորս: Բայց արխատել, որ մինչ հայի 'ի լուսաւորել զմիտս՝ առանց խառնելոյ զմտաց աչս, երևեցոյց 'ի սկզբան անդ աղօտանուաղ նշոյլ. այժմ պահու պաշեալ զկատարեալ հետազօտութեան, յորժամ աչք ականողաց կարողանայցին ժուժալ անաղօտ լուսոյ:

Խօսեցաւ այո՝ 'ի սկզբան անդ ԶԵՐԱՆՈՒԹԵՆԷ. բայց չեցոյց՝ թէ զինչ է ՀԵՇՏՈՒԹԻՒՆ՝ գլխաւոր առարկայ ցանկութեան. և ոչ՝ թէ զինչ է ՑԱՒ և ԱՆՑԱՒՈՒԹԻՒՆ, որք տարօրինակ հային 'ի հեշտութիւն: Խօսեցաւ ԶՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՂՁԱՆՍ, որ վառարանն է կրից. բայց ոչ խօսեցաւ ԶԲՆԱՒ ԿՐԻՑ. և ոչ ԶԲԱՐԵԿԱՄՈՒԹԵՆԷ, որ գեղեցիկ դուստր է գեղեցկագունին 'ի կիրս: Խօսեցաւ ԶԱՌԱՔԻՆՈՒԹԵՆՑ և ԶՄՈԼՈՒԹԵՆՑ ՀԱՆՐԱԲԱՐ. բայց ոչ ԶՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵՆԷ, որ գագաթն է ամ առաքինութեանց. և ոչ ԶԳԱԶԱՆԱԲԱՐՈՅՈՒԹԵՆԷ, որ գերան է ամ մոլութեանց: Խօսեցաւ ԶԵՐՋԱՆԿՈՒԹԵՆԷ. բայց անմարթ էր ճանաչել զգեղեցկութիւն երջանկութեան յառաջ քան զգեղեցկութիւնս առաքինութեանց, որոց ծնունդ է նա:

Արդ քանզի զայսոքիւք նիւթովք՝ յիմաստասիրաց

րաց միջի ծագեն բազում և դժուարին երկբայութիւնք, որոց լուծումն այնպէս կարեւոր է 'ի գիտել, որպ զուարճալի 'ի հետազօտել, կամ է ինձ 'ի յաջորդ գիրս՝ զքո բարեբաստիկ հանճարոյ հանձնել զմիտս, հետազօտել կարգաւ 'ի բարձրագոյն սկզբանց զերացդ ստուգութիւն:

## ԳԼ. Բ.

## Յաղագս ճարտասանին ոճոյ.

Չեղև ինչ անտեղի կարծիք Եմպեդոկղի, թէ աշխարհի բաղկացութիւն լեալ իցէ 'ի բարեկամութէ և 'ի հակառակութէ. զի չիք ինչ 'ի նմա, որ չունիցի զիւր ախորժակ. և ոչ ախորժակ ինչ՝ որ չունիցի զիւր ընդդիմակ: Չիք ոսկի անկեղծանք, և ոչ վարդ անփուշ. և ոչ 'ի փեթակէ քաղցի մեղր՝ անվտանգ 'ի խայթոցաց: Չիք ինչ բարի 'ի աստրինս, որ խնդրողին ոչ պատահիցի ինչ հակառակութիւն:

Այնկ բնաւոր տեսչութիւն ամ շնչաւորաց և անշնչից՝ եա երկուս կարողութիւնս, մի՝ ըղձանալ իւրում օգտակարի. և երկրդ՝ դիմակալել հակառակողի իւրոց ըղձանաց: Հրոյ եա սաստիկ թեթեւութի, և սաստիկ վառումն. զայն՝ 'ի վերացլանալ յիւրն սիրելի կամար, որ պահէ զնա. և զայս՝ 'ի քակել զաշտարակս, զքարաժայռս, և զլերինս, և զամ որ խոչ իցէ վերելից նր:

Առ այս երկու գործ՝ արբանեկեն, եթէ 'ի մարդիկ և եթէ յանասունս՝ այն երկու կարողութիւնք զգայական բաղձանաց, զորս ասեմ յիշատակեցաք. ցանկականն և ցասմնականն: Ցանկականն 'ի խնդրել բարւոյն, և 'ի փախչել 'ի չարէն: Ցասմնականն 'ի դիմակալել այնմ՝ որ հակառակի իւրոց ըղձից և փափաքանաց: Մինչև ցանկականին լինել անսեւ և հոգաբարձու պիտոյից մարդկային կենաց. և ցասմնականին լինել զինակիր և պաշտպան ցանկականին:

Տես, քանի արդարութբ ամ անասուն՝ կամ ատամամբք, կամ եղջերբք, կամ ճիրանօք, կամ այլովք

զի-

զինուք վասնզի զխափանարարն խորոց հաճոյից ։ Այս զէնք են արտաքինք ցասմնականին ։ Ամենայն գազան զգրգռեալ՝ և եռ գազանանայ ։ Տես, որպիսի սրամտութեամբ այր զայրագին՝ ներքուստ զինի կատաղանօք, և արտաքուստ ձեռն ՚ի զէն արձակէ . գոռայ, կրճտէ զատամունս, ապառնայ, արձակէ բամբիւն ՚ի կրծոց, բոց յաչաց, և ծուխ յըռնգաց . այս են արտաքին յարձակմունք ներքնոյ ցասմնականին . որոյ հանդիպեցեալ ՚ի ճակատ մարտի, առնու իւր կուսակից զցանկականն ։

Ապա ԶԳԱՅԱԿԱՆ ՔԱՂՑԱՆՔՆ է հրէշ երկկերպարան, բաղկացեալ յերկուց հրէշից . մին բոլորովին խանդակաթ և հեղահամբոյր . միւսն զլխովին բարկացայտ և կռուարար . փակեալ ՚ի մի սիրտ զերկուորեակ ատրեարս ՔԱՂՑԱՆԱԿՈՒԹԷ, և ՀԱԿԱՌԱԿՈՒԹԷ ։ Այլ զօրինակ ամ գլուխ հիդրայի շատախղէր բազմապատիկ գլուխս հրէշաւորս, այնպէս ՑԱՆԿԱԿԱՆՆ և ՑԱՍՄՆԱԿԱՆՆ երկնեն այնչափ ԿԻՐՍ, որչափ են ոչ շարժմունք զբարեաւ և զչարաւ ։

Եթէ յըմբռնողականէն առաջագրի զգայական բաղձանաց առարկայ ինչ բարի, կամ կարծեալ բարի, ծնանի ՚ի ցանկականն ՍԷՐ . ապա եթէ առարկայն է բացական, յառնէ յետ սիրոյ ՑԱՆԿՈՒԹԻ . և թէ ցանկութեն ունի զըղձումն, զհետ գայ ԲԵՐԿՐՈՒԹԻՒՆ ։ Իսկ զարին հակառակն, եթէ առարկայն է ատելի՝ և չար, ցանկականն շարժէ ԶԶՈՒԵԼՈՒԹԻՒՆ . և թէ առարկայն է բացական, զհետ գայ ՓԱԽՈՒՍՏ . իսկ թէ չիք հնար փախստի ՚ի չարէն, անդէն ՚ի վերայ հասանէ ցաւոցին ՏՐՏՄՈՒԹԻՒՆ, որ զմեզ հալէ և մաշէ ։

Բայց թէ առաջեկեալ բարին է դժուարին և խիստ վասն դիմադրութեն ինչ, եթէ ՚ի մտի դնէ մարդ՝ թէ կարող է յաղթել, ծնանի ՚ի ցասմնականն ՅՈՅՍ . եթէ ՚ի մտի դնէ՝ թէ չէ կարող, ծնանի ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ ։ Զարին հակառակն, եթէ չարն դժուարին՝ է բացական, ծնանի կամ ջեռեալ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ ունելոյ զայն ՚ի բացեայ, կամ ցուրտ ԵՐԿԻՒՂ, եթէ վտանգն է մեծ քան զյոյս ։ Բայց

եթէ

եթէ չարն 'ի մէջ հասեալ իցէ, ծնանի բարկութիւն՝ 'ի խնդրել զվրէժ նորա, և կամ մեղկութիւն՝ 'ի համբերել այնմ. բայց մեղկութիւն ընական, ոչ մոլեկան, և ոչ առաքինական: Արդ. թէ կամիս տեսանել զնկարագրութիւն կրից, որպէս տեսեր զառաքինութեանց, աւասիկ քեզ:

## ԲԱՂՁԱՆՔ ԶԳԱՑԱԿԱՆ.

| ՑԱՆԿԱԿԱՆ. | ՑԱՍՄՆԱԿԱՆ. |
|---|---|
| Զբարին և զչարն պարզաբար: | Զբարին և զչարն դժուարին: |
| Սէր. Ատելութիւն. | Յոյս. Յուսահատութիւն. |
| Ցանկութիւն. Փախուստ. | Համարձակութիւն. Երկիւղ. |
| Բերկրութիւն. Ցաւ: | Բարկութիւն. Մեղկութիւն: |

Որոշ գիտեմ, թէ ոմանք տաղտկացեալք 'ի դեգերելոյ 'ի շաւիղս իմաստասիրաց, ուսուցին թէ չկայ կիրք աւելի քան զմին. և այն է սէր: Ցանկութիւն, բերկրութիւն, յոյս, և եւս առաւել՝ ատելութիւն, փախուստ, բարկութիւն, և երկիւղ՝ ոչ են (ասեն) այլ և այլ կիրք, այլ՝ այլ և այլ գործք մի և նոյն սիրոյ. որ փոխէ զանուանս և զկերպարանս, այլ ոչ զէութիւն:

Եւ թերեւս ճշմարիտ իցէ, զոր ասեն. այլ ոչ նոր ինչ. զի խաղալ կամին 'ի մէջ բառից: Թէ դու սէր կամիցիս կոչել զզգայական բաղձանս, որ ոչ այլ ինչ է՝ բայց ախորժակ մարմնական, ոմ̃ և ամ̃ իսկ կիրք կոչին ախորժակք, այո՝ հնար էր քեզ ասել՝ թէ ամ̃ շարժմունք զգայական բաղձանաց են շարժմունք սիրոյ. բայց չփոթէիր զեզերս՝ 'ի ցուցանել զհանճար:

Գ. Լ.

ԳԼ. Գ.

### ԹԷ ՈՐՔ ԲՆԱԿԱՆԱՆ ԿԻՐՔ ։

'Ի վերադաս աղխտակեդ մարթիս իմանալ զան-մետ մոլորուն քրիսիպպոսի (280), թէ կիրք ընա-կանան 'ի միտս . 'ի կոչել նր̅ զբերկրութ̅ին՝ ԿԱՐԾԻՔ ԻՆՉ ՆԵՐՔԻՆ ԲԱՐՒՈՅ, և զցաւն՝ ԿԱՐԾԻՔ ԻՆՉ ՆԵՐՔԻՆ ՉԱ-ՐԻ. և նա իսկ կիրքն՝ ը̅ նր̅. ոչ այլ ինչ են, բայց ԿԱՐԾԻՔ։ Բայց ո՞չ եթէ գտեալ էր նա 'ի ցուլ փաղարեան, զչափ առնոյր արդեօք, թէ ցաւք իցեն կարծիք. նոյնպէս իւր մոլորութն ինքնին սախ. զի մտաց առարկայ է ՃՇՄԱՐԻՏՆ, և ոչ թէ ԲԱՐԻՆ։

Մարթիս սակս և զայնց ևս մոլորուն, որք օթե-ցուցանեն զկիրս յիմացական բաղձանս, զ'ի ԿԱՄՍ. տեսեալ քո, թէ բազում անգամ կիրք յառաջէն քան զկամս. և բազում անգամ հրաման կամաց յաղթի 'ի հրամանէ յամառ կրից։ Ստոյգ է թէ կամքն իսկ բաղձանք իմն գոլով և սա ևս ունի զիւր շարժմունս ՍԻՐՈՅ և ԱՏԵԼՈՒԹԵԱՆ, ՑԱՆԿՈՒԹԵԱՆ և ՓԱԽՍՏԵԱՆ, ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ և ՏՐՏՄՈՒԹԵԱՆ. բայց քանզի է նա բաղձանք ինչ իմացական և ոչ զգայական, շարժմունք իւր չեն զգայականք, այլ իմացականք. նմանօղք կրից, այլ ոչ կիրք։

Նա՝ թէպէտ և երբեմն կարող է նա կամ շար-ժել և կամ մեղմել զզգայական կիրս իւրով քա-ղաքական, այլ ոչ տիրական իշխանութ̅բ, որպէս իսկ լուար, բայց և այնպէս՝ առ այս ծառայե-ցուցանէ զզգայական բաղձանս, որ բազում ան-գամ ը̅դիմանայ։ Մինչ զի թէպէտ և կիրք են ընդ կամաւ, այլ ոչ 'ի կամս։

Այս յայտ է թէ զգայական կիրք օթին 'ի ԶԳԱ-ՅԱԿԱՆ ԲԱՂՁԱՆՍ. որոյ աթոռ է 'ի սրտի։ Եւ որպ̅ ուղեղն է գործարան ըմբռնողական կարողութ̅եց, նոյնպէս սիրտն է գործարան բաղձողական կարո-ղութ̅եց զգալեաց. կամեցեալ տեսչութ̅ն զատա-նել զայսուիկ անարգ գործառունս յազնուագու-նից։ Այս ոչ շարժին կիրք 'ի ՍՐՏԻ, թէ ոչ յա-ռա-

ռաջէ 'ի գլուխն երևեցուցումն առարկայի · զի ոչ տանից աչաց՝ այլ Թմբ է սա, նոյնպէս տանից ըմբռնողականին՝ կայր է բռնողականն ։ Այսպ սիրտն անդրանիկ անդամոց՝ և արմատ կենաց, է միանգամայն և գործարան բաղձանաց, և Թարգման կրից և ախորժակաց՝ իւր պաշտելի շարժմամբք ։ Ովկիանոսի տուաւ 'ի բնութէ ոսկրականն ինչ և կարգաւորեալ հոսումն, որ կոչի տեղատուութիւն և մակընթացութիւն · զի կալով յերկրի ոչ տայ յօրոցի · յիւրում շարժման 'ի քուն լինի · բայց Թէ 'ի ցրտաապարսաւ հողմոց հիւսիսոյ, և 'ի տապախառն հողմոց հարաւոյ յուզի, ոչ ևս կարացեալ զուսպ կալ, է զի գայ՝ և է զի գնայ, է՝ զի յամպս վերանայ, և է՝ զի յանդունդս իջանէ ։ Նոյն տեսչութի՛ ետ սրտի մշտնջենաւոր իմն և բնաւոր շարժումն պատշաճող խառնուածոյ անհատին, լայնեալ և կծկեալ բազմօրինակ չափու, 'ի տուրևառութն շնչոյ, և 'ի ծաւալել զկենդանական ոգիս ընդ ամ մարմինն ։ Բայց Թէ յուզի նա 'ի հողմոց կրից, յայնժամ օտարոտի լայնմամբ կամ կծկմամբ այլայլեալ զհամեմատութն բնաւոր շարժմանն, այլայլէ զզգայարանս · և այնչափ են փոփոխութիք սրտի, որչափ և կրիցն ։ Եւ յայտ է Թէ յառաջ շարժի հոգին յառարկայէ, քան գործին 'ի հոգւոյ ։ Սա է շարժումն ֆիզիգական, և այն՝ բարոյական ։

Տեսարան լինէր զուարճալի, եթէ ընդ ապակի ինչ 'ի կրծոց անտի հնար լինէր երևիլ շարժմանց սրտի՝ իբրև զժամացուցացն ։ Եթէ ըմբռնողականն առաջի անէ զառարկայ ինչ սիրելի, սիրտն զգլխովին խանդակաթ՝ յառաջ մատչի, և ընդարձակի գիրկս արկանել նմա ։ Եւ Թէ զառարկայ ինչ ատելի, սիրտն զգլխովին զզուանօք կծկի, և ոչ Թէ փախչի ։ 'Ի կարի իմն ուրախութենէ, կայթէ սիրտն և ստտուտէ · և 'ի տխրութ՝ ամփոփի, և լքեալ երևի ։ 'Ի բարկութենէ սիրտն եռայ, և արիւն 'ի գուրս տայ · և յերկիւղի սառի, և բաբախէ և դողայ ։

Փղքրիկ անդամ է նաւի՝ ղեկն · բայց ամ փղքրիկ շար-

շարժումն զեկն շարժէ զմեծ զայն մեքենայ լայնատարր շրջանաւ յաջ և յահեակ ։ Նոյն ամ փոքրիկ շարժումն սրտի, որ կայ 'ի մէջն, պատճառէ 'ի շրջանակ մարդկային մարմնոյ շարժմունս մեծամեծս ։ Այն քաղցր ծիծաղ և անձուկ գրկախառնութիւնք պատահելոյն սիրելւոյ բարեկամի, այն երեսդարձութիւն և խոժոռումն 'ի տեսանել զանհաճոյ ինչ կամ զզուելի, այն ծափին ձեռաց և դոփիւն ոտից յուրախութեան, այն հեծութիւնք և հառաչանք 'ի տրտմութեան, այն վառիլ երեսաց՝ և շրջշրջիլ աչաց՝ և կրճել ատամանց 'ի բարկութեան, այն սառնատարոյց դեղնութիւն և գողդողջումն անդամոց 'ի տագնապել երկիւղի, առ հասարակ են արտաքին գործք ներքին շարժմանց սրտի. որք փոքր են 'ի մէջն, այլ մեծամեծք 'ի շրջանակն ։

Այս գեղեցիկ սահմանեաց արիստոտէլ զկիրս այսպէս. Ներքին են շարժմունք զգայական բաղձանաց՝ ըմբռնմամբ բարւոյ և չարի, հանդերձ մարմնային իմն փոփոխութեամբ 'ի բնաւոր վիճակէ յանբնաւոր վիճակ ։

Որ ունիս տեսանել երկուս շարժմունս 'ի կիրս. մին բաղձանաց, որ այլայլէ զզգայական հոգի. միւսն սրտի, որ յայլայլել զնոքն՝ այլայլէ և զմարմինն. վասն կիրք կոչին [illegible] ։ 'Ի սահմանէ աստի առցես դու 'ի միտ, թէ ո՞րչ երբեմն հոգին միով ներքին պատերազմաւ պատերազմի, և պտրզմ կրէ ըդդէմ իւր ։

Առաջին մարտն է 'ի մէջ զգայական բաղձանաց և բանական բաղձանաց՝ շարժմամբ կրից 'ի սրտի, և բանին 'ի միտս, դէմ ընդդէմ միմեանց՝ յերկուս այլեայլ թատրոնս ։ Զայսպիսի մենամարտութիւն յանձին զգաց օգոստինոս՝ տարտամութեամբ իւրև յերկճիւղ ճանապարհ պառօգիկոսի (281) ։ Ցինքն ձգէր զնա [illegible]. յինքն ձգէր և [illegible]. մին զինեալ [illegible], միւսն զգայական [illegible], բաղխեցան 'ի միմեանս, և ինքն յերկուց կողմանց կայր հարուածեալ ։ Ասէիր արդեօք, թէ յօգոստինոսի էին երկու օգոստինոսք, որոց մին կամէր, և միւսն ոչ կամէր պարկեշտանալ ։ Կամ թէ 'ի մի միայն օգոստինոս էին երկու կամք,

կամք, մին պարկեշտ, և միւսն անառակ: Ցեր-
կարեաց կաւին, վն լինելոյ միոյ սիրոյ իմաստնա-
գոյն, և միւսոյն բանագոյն. և ոչ արդեօք յանկ
ելանէր, բայց եթէ ընդ կենաց, թէ շնորհն երկ-
նային չէր լեալ զօրավիգն ՕՐՈՍԻ ԻՍԻՍԱՅ, և դըժ-
խաճար ՏԻՓՈՆԻՆ: Բայց յառաջինն հեթանոսաց,
որպէս նա ինքն խոստովան լինի (282), անեաց
կաւուն՝ որ 'ի մէջ բանի և զգայութեն մինչ 'ի մահ,
առ առաւելութի փառաց նր: Վն զի յամի յաղ-
թական գանեալ բանին, հանապազորդ մարան եղև
նմա հանապազորդ յաղթանակ:

Երկրորդ մարան է միայն 'Ի ԴԷՆԴԵՐԱՅԻ ՏԱՃԱՐԻՆ,
մարան ընդերաց և սրտի. յորժամ յառաջադրել
երկուց ներհականն ատարկոյից զգալեաց, պա-
տերազմին 'ի թատրոն սրտի երկու ներհական
կիրք:

Մարտ այսպիսի գրգռեցաւ 'ի սիրտ մեգեայ (283).
'ի մէջ երկուց բանագոյն կրից ՏԻՓՈՆԻՆ և ՕՐՈՍԻ:
Աղաշնորհին յաստիճի մերժեալ էր զմեգիա, զի
ածցէ կնութե զգուստր կրէօնի: Կինն զայրա-
գին հաստատեաց 'ի միտս սպանանել զզաւակն,
զորս ծնեալ էր 'ի յասոնէ: Սիրէր զորդեան, զի
էին իւր. ատեայր զնն, զի էին յասոնի. ՏԻՓՈ-
ՆԵԱՆՆ վանէր զնէր, և ՕՐՈՍ փոխանակ վանէր զՏԻՓՈ-
ՆԵԱՆՆ: Ասաի բորբոք ՏԻՓՈՆԻ, և անտի բորբոք
ՕՐՈՍԻ. բայց զբոց չիջուցանէր, և ինքն երկոքումբք
բորբոքիւր: Վաղեցին ասաի և անտի ձեռն առ
յօգնականութի կողմանց՝ այլ ևս կիրք: Նախան-
ձաւորութին ընդ սիրոյ, ատելութին ընդ բարկու-
թե զհասարակաց դատ վարէին: Մի առ միով
մարտնչէին՝ երկինն ընդդէմ համարձակութե, հա-
մարձակութին ընդդէմ յուսահատութե, և յուսա-
հատութին ընդդէմ երկիւղի: Խորև այնպէս 'ի վա-
րանս էր ողորմելին 'ի բազմադէմ մենամարտութեց
ասաի, ոչ պարտեալ՝ և ոչ յաղթական, սիրող՝
միանգամայն և թշնամի, աճարեկ և խորոխ, ա-
ղեխորով և անգորով, հուսկ ուրեմն ՏԻՓՈՆԵԱՆՆ
յաղթեաց ՕՐՈՍԻ: Ուշ եգեալ թէ այնուհետև չէ
կին, մոռացաւ զլինել իւր մայր. խողխողեաց
զան.

զանմեղսն, վա զի չէր ձեռնհաս խողխողել զպա-տաճանն :

## Գլ. Դ.

### Հարցումն [illegible] 'ի վերայ կրից :

Խնդրիցէ նախ քոյին զգուշաւոր հանճար. [illegible]

Պատասխանեմ, թէ վա զի մարդն է բաղադրեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. այսպէս նմա երկու [illegible]. մին [illegible], և միւսն [illegible]. ըստ միոյ, և երևակայութե, զի ըստ եղանակի [illegible] յերկուսին եղանակ [illegible]. և այլևայլ առարկայից ըստ այլևայլ կարողութեց : Արդ և այսպէս երկու [illegible]. մին [illegible], և միւսն [illegible]. ըստ կամաց համեմատ մտաց, և զգայական բաղձանք՝ համեմատ երևակայութե. զի ըստ եղանակի [illegible] յերկուսին եղանակ [illegible] :

Իսկ երբեմն [illegible] երևեցուցեալ զառարկայս ինչ պատշաճող մարմնոյ, և [illegible] երևեցուցեալ զառարկայս ինչ պատշաճող հոգւոյ, յարուցանեն զայն կռիւ 'ի մէջ հոգւոր և մարմնաւոր բաղձանաց, որ ոչ վերջանայ երբեք՝ մինչև ցբաժանիլ հոգւոյ 'ի մարմնոյ :

Խնդրիցես երկրորդ. [illegible]

Պատասխանեմ. բաղձանք անասնոց հարկիւ ըղձեն երթան առարկային, և բաղձանք մարդկան ազատօրէն զձեն երթան առարկային, կամ բանին. առարկայն կարող է շարժել զնա, բայց բանն կարող է զսպել : Իսկ [illegible] կիրք բաժանորդ գոլով ազդեցութե կամաց, կամ առաքինականք են, և կամ մոլեկանք. բայց անասնային կրից ոչ է հնար լինել՝ ոչ առաքինական,

և

և ոչ մոլեկան : Սորա զհետ երբեմն աստուածային բնութեան, որ է անվրիպակ. Նորա զհետ երբեմն մարդկային բնութեան, որ ներքոյ անկեալ է բազում վրիպանաց. և յոլովակի կուրացեալ 'ի նոյն իսկ կրից : Այլ է գտանումն մէջ ախտակրի, և այլ խաղաղականի. վ՛ն յաղեքսանդրէ ցասուցելոյ բողոք լինի յատեան աղեքսանդրի հանդարտելոյ (284) :

Եւ վ՛ն զի անասունք ոչ ըմբռնեն ոչ զբարի և ոչ զչար, բայց միայն զներկայն, կամ զփոքր մի բացական, սակաւ կրից են ներքոյ անկեալ. և թէ 'ի բաց առնուս զսէր կենաց և զզաւակաց, այլ ամ՛ առարկայք անտարբեր են ն՛ց : Բայց մարդ յօրինէ իւր ցանկութիւնս և երկիւղս. գնայ 'ի խնդիր կարի իմն հեռաւորաց, կամ աւելորդաց, և անբաւից, յոլովակի՝ և անհնարաւորաց : Մինչև տանջել նմա յանցելոյն և 'ի ներկայէն և յապագայէն, և 'ի ճշմարտէ և 'ի սուտոյ. և տանջիչ է իւր ինքեան :

Հարցես. կամիս գիտել յայտնագոյն ևս, թէ

Ո՛չ կամք շարժեն զկիրս, և ո՛չ կիրք շարժեն զկամս :

Կամք շարժեն զկիրս. զի բնաւոր կարգն պահանջէ, թէ վերնագոյնն հրամայեսցէ ստորագունին : Եւ զայս առնէ նա երկակի. կամ հրամայելով մտաց՝ առաջադրել զգայական բաղձանաց զայն առարկայս, որք շարժեն զկիրս : Եւ կամ հրամայելով իշխանաբար բաղձանաց, զի շարժեսցի 'ի յառաջադրեալ առարկայն. ո՞չ Ոդիսևս հրամայէր իւրում սրտի չերկնչել յալէկոծութէ, (ը գրելոյ Հոմերոսի).

Քննութիւն սիրոյ եւ համբերութեան,
որ բնականոյն չարեաց պատճառ :

Իսկ կիրք շարժեն զկամս, ոչ հրամայելով, զի ստորինն ոչ հրամայէ վերնագունին, և ոչ նիւթականն՝ հոգեղինին. այլ դիպուածով, կամ պատճառաւ : Դիպուածով, եթէ առարկայն այնպէս 'ի հրապոյրս ձգիցէ, որ կիրք յառաջեսցեն քան զկամս, և կամքն յառաջեսցէ քան զտրամաբանութիւն մտաց.

մտաց. մինչև շարժիլ կամաց յառաջ քան զուշաբերիլ։ Իսկ ԴԺԲԱԽՏԱԲԱՐ, յորժամ կիրք մթագնեն զմիտս, ոչ ստացաք. զի յայնժամ կոյր կուրի առաջնորդէ 'ի խորխորատ։

Ինչ գրեցես և ես. ԻՐՔ ԻՐԻՑ ԴԺՈՒԱՐԱԳՈՅՆ ԻՑԷ ՅԱՂԹԵԼ։ ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆՆ է բանագոյն, բայց ՀԵՇՏԱՒԱՆՆ կարի յամառ։ Վա՜ զի բարկութիւն է զայրոյթ հակառակ բնութեան, և միկ սուղ. այլ հեշտութիւն է քաղցր խաղ բնութեան, որ յանդորր քուն ըմբռնէ զզգայարանս. բայց դժուարաւ սթափի։ Բարկութիւն գրգռեալ 'ի բանէ՝ բանիւ դիւրաւ զիջանի։ Հեշտութիւն բթացուցեալ զոյժ մտաց, ոչ անսայ բանի՝ և ոչ յորդորանաց։

Օհաւակն ասացիր. բարկութիւն է ոչ առիւծ, որ թէպէտև է գազանաբարոյ, կրթանայ ընտելանայ։ Հեշտութիւնն է ոչ ձուկն, որ թէպէտ և անմեղ է, ոչ շողոմութեամբ՝ և ոչ ահարկութեամբ նուաճի։

Հարցանիցես և ես. ԵԹԷ այր ԻՄԱՍՏՈՒՆ ՈՒՆԻՑԻՆ ՊԷՏՍ ԻՐՔ. ՔԱՆԶԻ ԱՂՔԱՏ ԵՐԵՒԻ ԱՅՆ ՅԻՆՔՆԱԲԱՒԱԿՈՒԹԵԱՆ ԱՊԱՅԻՆԵԱՆՑ, ԹԷ ԻՐՔ ԵՆ ԱՄԲԱՐՏԱՒԱՆՔ ԱՐԴԻ. ԱՄԲԱՐՏԱՒԱՆՔ ԵՆ ՀԻՄԱՐՈՒԹԵԱՆՔ. ԻՐՔ ՀԻՄԱՐԱԳՈՅՆ ԷՐ ԱՌԱՒԵԼ. ԱՊԱ՛ ԹԷ ԷՐ ԱՌԱՒԵԼ, ԷՐ ԻՄԱՍՏՈՒՆ։

Պատասխանեմ. կիրք ոչ են ամբոխմունք և ոչ ախտք սրտի, բայց միայն յորժամ չեն կանոնաւորեալք։ Իսկ զի յիմաստունն են կանոնաւորեալք, ոչ են ախտք և ոչ ամբոխմունք, այլ՝ ճշմարիտ առաքինութիւնք։ Ճշմարիտ իմաստութիւն է կանոնաւորել զկիրս։

ԲԱՅՑ ԶԻՄԱՐԴ ԶԱՄԲԱՐՏԱՒԱՆՆ ՀՆԱՐ ԻՑԷ (ԱՍԷԱ) ԿԱՆՈՆԱՒՈՐԵԼ։ Պատասխանեմ. բանն կանոնաւորէ զնոսա կրկնակի. ՃՇՄԱՐՏԱՊԷՍ, հրամայելով զզգայական բաղձանաց և խռովում սրտի. ոչ ասացաւ։ Իսկ ԲԱՐՈՅԱՊԷՍ, վերածեալ 'ի միջասահման, զորօրինակ յիւրում տեղւոջ ասացաւ. ըր է՝ խորշելով 'ի ծայրից, և չափմամբ պարագայից։

Սէր և ԱՏԵԼՈՒԹԻՒՆ են ԻՐՔ բնականք և անտարբերք։ Լինին ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ, եթէ լինի սիրել և ատել զայն զոր արժան է, և որչափ արժան է, և ոչ ար-

ժան է . Լինին [illegible], յորժամ զանցանեն ըզ-
չափովս . չափ է բանն, և բանն է յիմաստութիւն :
Մինչ զի բարուն և չարուն ոչ են 'ի կիրս, այլ
'ի գործածութեան կրից :

Տարակուսիցիս և ևս, թէ զուարճացուցիչն և ծիծաղ 'ի
համար մարդկային կրից իցեն . կամ ոչ՞ 'ի նոցանէ [illegible]
[illegible]
[illegible] զուարճանալ [illegible] . և
ծիծաղն [illegible], 'ի ծիծաղել [illegible] :
Զպատասխանին մարթ է առնուլ 'ի սահմանաց
նոցին : Զուարճացուցիչն է [illegible] 'ի [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] : Ուս-
տի որ զարմանայն՝ բացագանչէ բարբառ այս-
պիսի . [illegible] : [illegible]
[illegible] : Որ ունիս տեսանել,
թէ զուարճացուցիչն չէ կիրք . զի ոչ է գործ զգայական
բաղձանաց , այլ մտաց և կամաց : Տարամտութիւն
և չգիտութեան պատճառին հայի 'ի միտս : Խղճն և
խնդութիւն ը գիտութիւն ՛նր՛ ոչ հայի 'ի զգայա-
կան բաղձանս, այլ յիմացականն, որ է կամքն :
Իսկ թէ զարմանքն այլայլէ զերեսս, այն չէ գործ
կրից . այլ մտաց . որոյ զարմացումն զեղու և 'ի
մարմինն, ըստ պատաճէ յաղչուն : Իսկ վն այսորիկ
զարմանք ոչ հիացուցանեն զանասունս, զի ան-
սանեն զգործս, և ոչ 'ի խնդիրս են պատճառին :
Իսկ ծիծաղն է [illegible]
[illegible]
[illegible] : Իսկ շարժման ոգւոյն
զհետ գայ շարժումն սրտի և կրծոց, որ ցնցէ զստա-
ծանելին և զմկանունս բերանոյ և աչաց : Ուստի որ
ծիծաղի, բացագանչէ բարբառ այսպիսի . Ո՛հ հա-
[illegible] : [illegible] : Մահ է
[illegible] 'ի [illegible] :

Բայց յուշ լիցի քեզ . զի թէ ազեղուն ստորկային
է ազատեղի, և [illegible] . շարժի նախ [illegible]
[illegible], և կիրք անարգ խնդութե, որ ձևացուցանե
ծի-

ծիծաղ ինչ ուժգնակ և տարապայման ։ Այլ թէ ազեղութիւն է խնդալի, որ 'ի զրոյցս նուրբս կամ երգիծականս և հանճարաւորս, շարժի նախ բաղձանքն խնդացական. և ծիծաղն է առաւել պայմանաւոր, վասն լինելոյն առաւել 'ի միտս քան 'ի զգայութիս ։ Իսկ թէ առարկայն է խառն 'ի զգալւոյ և յիմանալւոյ, խառն լինի և ծիծաղն ։

Բայց թէ կամիցիս գիտել, ընթեռ գիրք ինչ այն՝ որք արտաքինն և արքայական խնդաքամերք կոչին Ցանկոսբերտն ։

Պատասխանեմ. է սա բառ բազմանշան ։ Վասն զի ընդարձակապէս նշանակէ զամ զզգայական բաղձանս, ներառեալ զցասմնականն համայն և զցանկականն ։ Նեղապէս նշանակէ զցանկականն. և ևս նեղապէս զկիրքն յօժարեցուցիչ որոյ հեշտութիւն, զորմէ՝ վասն զի նիւթ է ժուժկալութեան և անժուժկալութեան, յիրաւի է մեզ խօսել ընդարձակագոյն ։

# ՅԱՂԱԳՍ ՀԵՇՏՈՒԹԵԱՆ ։

## ԳԼ. Ա ։

### Յաղագս երկեակ հեշտութեան ։

Այս այն է, որ յամենեցունց խնդրեալ, այլ 'ի սակաւուց ծանուցեալ, զգամիցս իբր յաւէտ տարբերութեանն՝ քան ուրախ առնէ ։ Եւ այս պատահէ վասն միգկայլին ցանկութեան խորհել խորհրդայի, որ անզգուշութեամբ ըմբռնէ զհեշտութիւն ինչ փոխանակ այլոյ ։

Երկուս Աֆրոդիտէս առասպելէին նախնի դիւցաբանք (285). մի՝ Երկնային՝ դուստր դիոսի և լուսոյ, մայր աստուածային սիրոյ. և միւս՝ Դժոխային՝ դուստր անդրադարձի և գիշերի, մայր՝ մարմնական սիրոյ հակամարտի ։ Զիք ինչ բարի՝ առանց հակառակի. և ոչ հակառակ ինչ առանց վիճի ։ Երկաքանչիւրոցն յաթենս նուիրեցան մեհեան՝ պէս-

պէս

պէս զոհիւք. զի նա օգնեսցէ, և սա մի՛ վնասես-
ցէ. յորմէ ծագեաց այն ճարտար զրոյց, թէ և
չարաց դից պարտ է հատուցանել զոհս ։

Այս երկու Ափրոդիտէք, որպէս մեկնէ մեզ Պղատոն, ոչ այլ ինչ են՝ բայց երկու այլեայլ հեշտութիւնք. մին ազնուական և տիրական, որ սեպհական է մարդոյ՝ ըստ որում բանական. միւսն անարգ և ծառայական, որ հասարակ է անասնոց անբանից։ Նա ծնեալ յերկինս, այսինքն 'ի բարձրագոյն մասն հոգւոյ, միշտ առաջնորդէ յերջանկութիւն. սա ծնեալ 'ի սանդարամետս զգայութեանց, յորժամ չիշխի յերկնայնոյն, առաջնորդէ 'ի թշուառ կեանս։ Թէ յիշես դու զայն երկու աղջկունս երկճիղ ճանապարհին Պռոդիկոսի, այնպիսի երեւք են երկոցուն Ափրոդիտացս։ Երկնայինն բամբիշն ցածուն, և ծանրութեամբ զարդարեալ, առաւելու 'ի ճշմարտութեան քան 'ի նանրութեան։ Գետնայինն պերճ և զուարթագին առ երեւս՝ մնապաճոյճ պաճուճանօք, իբրև զվհուկն Կիրկէ, թէ զերծուն 'ի նմանէ զարտաքնայարդար կերպարանն՝ և լուծանեն զկամարն, մնայ անպաճոյճ գձուխային ինչ ուրուական ։

Վա՜յ անզգոյշք, որպիսի են բազումք 'ի մարդկանէ, զ[illegible] հեշտութիւն ճշմարիտ կարծեալ՝ ըմբռնին 'ի հաղբս. և յայնժամ առաւել թշուառանան, յորժամ կարծեն զանձինս 'ի բարօրութեան։ Այս միայնոյ բարոյական իմաստասիրի անկ է իմացուցանել, որն իցէ ճշմարիտ, և որն սուտ. իբր զի հեշտութիւն է գլխաւոր վախճան բարոյականին, որ բովանդակ ամփոփեցաւ յայս իմաստ։ Նա է առաքինի, որ հեշտութեան և տխրութեան է 'ի վեր այնր, որ արժան է։ Նա է չար, որ հեշտութեան և տխրութեան է 'ի վեր այնր, որ ոչ է արժան։ Արդ այս ծանօթութեան կախեալ կայ զահմանէ, որպէս արդ լուիցես ։

## ԳԼ. Բ։

### Թէ զինչ իցէ հեշտութիւնն ։

Հեշտութիւն է կատարելութիւն ինչ գործողութեան, որ համարի բարեխառնութեան պատշաճօղ անձին։ Այս

հաշա-

հաշակել առնման է ձեռնականաց. որոյ մասունք՝ թէ քաջ մտաւին, բովանդակեն զամ՝ զոր ինչ մարթ իցէ ասել 'ի նիւթ այսչափ հաճելի, միանգամայն և վաստակաւոր:

Որովհետև կեալն է կարգեալ առ 'ի գործել, ընդհանուր տեսչութին համեմեաց զամ բնաւոր գործողութիս մասնաւոր իմն բերկրանօք, 'ի յորդոր գործելոյ. զի ոչինչ կարողութի միայն անգործ յինքեան, և անպիտան աշխարհի.

Հաճոյին՝ զոր զգան ոք 'ի վայելել 'ի լոյս և 'ի զուարճալի գոյնս, անուշութին՝ որ հեղու յոնկն զօգային մեղր մեղեգեաց, և ամ փափկութիք այլոց ԱՐՏԱՔԻՆ ԶԳԱՅԱՐԱՆԱՑ, ոչ այլ ինչ են, բայց անուշակ համեմմունք բնաւոր գործողութեց: Բայց բաց 'ի հաճոյթէ արտաքին զգայութեց, հաճեալ է և [illegible] ընդ իւր երևակայմունս. և անըրջական ճոխութիք իսկ՝ թէպէտ և սուտք, են բերկրականք, զի են երևակայեալք: Հաճ է և ՅԻՇՈՂԱԿԱՆՆ ընդ անցեալ հաճոյս, առաջի արարեալ զնո յիշատակաւ նոցին: Նա՝ որ ինչ գաւն էր 'ի կրել, քաղցրանայ 'ի յիշատակել զայն: Զի որպէս չունելութի բարւոյ մեծի՝ է մեծ ինչ չար, նոյնպէս չունելութի մեծի չարի՝ է մեծ ինչ բարի: Հաճեալ է [illegible] ընդ մաքրութի իւրոց առաքինութեց. զի եթէ պտուղք իսկ չար ունակութեց են քաղցր, ևս առաւել քաղցր են պտուղք առաքինական ունակութեց: Հաճեալ է [illegible] ընդ արամաբանել, ընդ հրամայել, և ընդ ուսանիլ իւր: և ևս առաւել ընդ խորհիլ իւր զխորին խորհուրդս երկնային և ածային: Զի յերևիլ նմա, թէ յափշտակեալ իցէ յերկինս, կամ յինքն կոչեալ զերկինս, վայելէ 'ի մահկանացուաց միջի՝ յերջանկութեան անմահից:

Արդ այս ամ համեմմունք գործողութեց զգայականաց կամ իմացականաց՝ կոչին [illegible] [illegible] ԳՈՐԾՈՂՈՒԹԵՑ. և այն է ՀԵՇՏՈՒԹԻ:

Բայց ամ հեշտութիք բերկրալի անեն զգործողութիւնս. բայց ոչ ամ գործողութիք են բերկրականք: Այնք են բերկրականք, որք ըմբռնին

ով

որպէս պատշաճողինն. և այս պատշաճողութեան համառօտեալ է 'ի համեմատութիւն առարկային ընդ տրամադրութեան կարողութեան։

Ախորժելիք ոմանք բնաւորապէս պատշաճին ամենայն մարդկան. ոմանք ինքնաքանչիւր հաճոյք. ոմանք աստիճանի ինքնաքանչիւրոց. և ոմանք այժման տրամադրութեան, և ըստ ախտելոյ ինքնաքանչիւրոց. որպէս սովելոյն կերակուր, վաստակելոյն հանգիստ, կալանաւորին ազատութիւն։ Բայց ընդհանրապէս ամենայն ինչ բաղձալի՝ 'ի լինել զբաղձանս՝ է բերկրական։ Վասնորոյ պղատոնականք սահմանէին զհեշտութիւնն լրումն պակասութեան. և զցաւն՝ պակասութիւն լրման։ Մինչ զի՝ թէպէտ և գործողութիւնքն լինին հաճոյ, կամ զգայութեանց ներքնոց, և կամ զգայութեանց արտաքնոց, հեշտութիւնն միշտ է 'ի բաղձանս։ Հեշտութիւնք զգալիք՝ 'ի զգայական բաղձանս, որ է 'ի կիրս. և հեշտութիւնք իմանալիք՝ 'ի կամայական բաղձանս. այսինքն է 'ի կամս։

Մնայ արդ ճանաչել, թէ որպէս հեշտութիւն իցէ կատարելութիւն գործողութեան։

Երկուս կատարելութիւնս ունի ինքնաքանչիւր գործողութիւն բերկրական։ Մի՝ ներքին, և էական՝ գործողութեանն. ըստ այնմ որ ամենայն գործողութիւն է կատարելութիւն գործողական կարողութեան. որպէս ամենայն պտուղ է կատարելութիւն տնկոյն. և ըստ այսմ ամենայն ներգործութիւն է կատարելութիւն ունակութեան։ Այս է ներքին և էական կատարելութիւն գործողութեան։ Երկրորդն է կատարելութիւն ինչ պատահական և արտաքին. ծաղկեալ 'ի բաղձանս (որպէս ասացաւ) 'ի պատշաճող գործողութիւն։

Առաջին կատարելութիւն է տեսակ ինչ, որ տարբերէ զէութիւն գործողութեան իբրեւ յէութէ այլոյ. որպէս զտեսանել 'ի լսելոյ. կամ զտեսանել զայս ինչ առարկայ՝ 'ի տեսանելոյ զայլ առարկայ. քանզի յայտ է թէ տեսանել զծառ՝ չէ տեսանել զգազան։

Բայց հեշտութիւն է տեսակ ինչ եկամուտ, որ տարբերէ զհաճոյական գործողութիւն յանհաճոյ գործողութենէ. կամ զհաճութիւն ինչ յայլմէ, իբրեւ յայտ

է՝ թէ մի և նոյն գործողութիւն է զի հաճոյանայ միում և ոչ միւսում, վն զի միում է պատշաճա_կան և միւսում ոչ. որպէս մի և նոյն կերակուր քաղցր է առողջի, և տաղտկալի հիւանդի:

Այս հեշտութին է ՎԵՐՋԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՄՏԱՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ. զի յանկ հանէ նա զշարժմունս ոգ_ւոյ, կարէ զթևս սիրոյ և ցանկութե. սպանանէ զյոյս և զերկիւղ. յաղթանակէ բարկութե և ցա_ւոյ. և սառցութե առաջակայ բարւոյն՝ ամ ան_հանգստութեց տայ հանգիստ և դադար:

Այս չորք իրք ընթացակցին 'ի հեշտութե. ԿԱ_ՐՈՂՈՒԹԻՒՆ, ԱՌԱՐԿԱՅ, ԳՈՐԾՈՂՈՒԹԻ, և ՀԱՃՈՒԹԻՒՆ. Կա_րողութին է սկիզբն շարժելոյ. առարկայն է սկիզբն շարժիչ. գործողութին է շարժումն. հաճութիւնն է աւարտ: Գործողութին է նիւթ. հաճութիւնն տեսակ. բայց տեսակ արտաքին և պատահական: Մինչ զի՝ 'ի լինել ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ արամադրագոյն, և ԱՌԱՐԿԱՅԻՆ ամբքագոյն, և ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ պատշաճո_ղագոյն գործողին, ՀԵՇՏՈՒԹԻՒՆՆ լինի քաղցրագոյն, և հանգարտագոյն 'ի հանգստեան:

Բայց 'ի վերքան զամ՝ հարկաւոր է ԸՄԲՌՆՈՒՄՆ ՊԱՏ_ՇԱՃՈՂՈՒԹԻ. զի բաղձողական կարողութիք ոչ շար_ժին, բայց եթէ լոկով ըմբռնողականին. և ա_ռանց ըմբռնման առարկայք ցաւագինք ոչ ցաւե_ցուցանեն, և բերկրականք ոչ բերկրեցուցանեն: Եւ զորին հակառակն, շատ է թէ իցէ ըմբռ_նումն, 'ի լինել բերկրականաց ցաւագին, և ցա_ւագնաց բերկրական: Բազումք են թշուառք, զի ոչ ճանաչեն զիւրեանց երջանկութի. և բազումք են երջանիկք, զի ոչ ճանաչեն զիւրեանց թշուա_ռութիւն. մինչև կարծել միում 'ի փիլիսոփայից (որպէս լսար), թէ երջանկութիւն և թշուա_ռութիւն իցեն կարծիք:

(286). Այնչափ երջանիկ էր աղքատն Թրասիւ_ղոս, որ կարծէր զինքն լինել թագաւոր. որչափ թշուառ էր արքայն դիոնեսիոս, որ կարծէր հա_նապազ ունել սուսեր կախեալ 'ի վր գլխոյ:

## ԳԼ. Գ ։

### Յաղագս հեշտութեան մարմնոյ և հոգւոյ ։

Հոգին է սկիզբն մարդկային գործողութեանց. և մարմինն է գործի հոգւոյ, որպէս այլուր ասա- ցաւ ։ Բայց անհնար է մարմնոյ լինել ըմբռն գոր- ծի, թէ չիցէ 'ի նմա բնաւոր ինչ կազմութիւն պատշաճական ։

Գիտեմ 'ի մարդկային մարմնի կուռ ոսկերոտի, աղխաղխեալ յօդակապօք և մկանամբք և ջղօք 'ի դիւրութեն շարժման, ծեփեալ մանամբք 'ի դըր- գութիւն զգայութեան, պատեալ երակօք և ջնջե- րակօք 'ի ճապաղիս արեան և ոգւոյ, հաստատեալ բարեխառնութեամբ չորից հիւթոց և չորից առաջ- նոց որակութեանց, յորոց ծագեն պէսպէս խառն- ուածք, և 'ի խառնուածոց անտի այլևայլ բնա- ւորութիւնք յիւրաքանչիւր անհատ ։

Գիտեմ և 'ի հոգին բազմօրինակ համեմատութիւնք կարողութեանց արտաքնոց և ներքնոց, կենսակա- նաց և կենդանականաց, բաղձողականաց և իմա- ցականաց, որք կազմ իցեն և պատրաստական առ իւրեանց անբանական և բանական գործողու- թիւնս ։

Իւրաքանչիւր մասնիկ մարմնեղէն կազմուածոյ թէ խախտի, թէ ողջի, և թէ այլայլի, բովանդակ բաղադրեալն զգայ զցաւ ։ Նմին իրի անդամք ընդ- թուով անկանին. այլ ցաւք նոցա են անթուելի ։ Ծառ մի 'ի ծովեզերն Թրակիոյ կարեալ յԵնեա- սայ ( ըստ ասելոյ բանաստեղծից՝ ) եհան 'ի վիրաց արիւն, և 'ի կարօնոյ անտի հեծութեան. Զի եթէ բուսականք ունէին զգայութեան, ցաւ լինէր ծա- ռոյ զգալ՝ թէ զրկի 'ի մասնէ ինչ, որ ամբողջութեան իւրոյ կազմածոյ և ազատութեան իւրոց գործողութեանց էր պատշաճօղ ։ Եւ բերկրութիւն լինէր նմա ծծել արգաւանդ հիւթս, ճապաղել ոստս, ար- ձակել սաղարթս, և բերել պտուղս. Ըստ այսմ օրինակի՝ յորժամ մարմինն ունի զամ՟ պատշաճեալս իւրոց բնաւոր գործողութեանց առանց ինչ խափա- նա-

նածոյ, բնութիւն 'ի նմա է կատարելապէս տրամադրեալ, վեհ և ուրախ: Եւ զորբին հակառակն՝ այնչափ ցաւ է նմա և արտմուն, որչափ 'ի բնաւոր վիճակն այլայլի կամ խափանի:

Ապա ոչ այլ ինչ է հեշտութիւն մարմնական, բայց յառաջնութիւն ինչ բարւոքութեանց դիպուածականաց մարմնոյ, որպիսի են գործողութիւնք զգայութեանց արտաքնոց: Եւ հեշտութիւն հոգւոյ՝ յառաջնութիւն ինչ բարւոքութեանց դիպուածականաց հոգւոյ, որպիսի են խօսել, հրամայել, և խոկալ: Այսպիսի է բերկրութիւն զգօնամտաց, որք հասանեն 'ի ճանաչումն գաղտնի և նոր ինչ գիտողութեան:

Այսպիսի եղև բերկրումն Արքիմեդեայ, որում իբրև հրամայեցաւ 'ի Հերոնէ արքայէ գտանել՝ քանի խառնուրդ օտար հրահալելոյ կայցէ 'ի պսակ մի ոսկեղէն՝ առանց հալելոյ զայն, գտեալ զորս զապացոյցն ամանով ինչ ջրոյ, իբրև խելայեղ՝ աղաղակէր 'ի խնդութեան, Գտի, գտի. որպէս թէ գտեալ էր մեծ ինչ գանձ: Այսպիսի եղև և բերկրութիւն Պիւթագորեայ. որոյ գտեալ ըզհռչակաւոր զերկրաչափական ցոյցն, որ առ Եւկղիդեայ՝ է երեսներորդ ութերորդն առաջին գրոց, զոհեաց գիտոսի հարիւր զուարակս, որպ թէ առացեալ էր մեծ ինչ թագաւորութիւն (287):

Ապա այսու օրինակաւ՝ է հեշտութիւն, որ հաճէ զբաղձանս զգայական, և է՝ որ զիմացականն: Բայց միոյ հաճոյք զեղուն 'ի միւսն. և թէ մին ախտակրէ, միւսն ախտակցի: Կարի գորովանօք սիրեն զմիմեանս այս երկու անբաժան ամուսինք՝ հոգի և մարմին. և 'ի լծակցութեան իւրեանց՝ հասարակաց են նց բարիք և չարիք: Թէպէտ երբեմն՝ որպ պատահէ 'ի մէջ սիրելի լծակցաց, երեւին առ միմեանս խեթահար, բայց և այնպէս՝ առ վայր մի է կռիւն, և երկար՝ հաշտութիւնն, և սիրան է նց թարգման և միջնորդ հաշտութեան: Մինչև հեշտութեան մարմնոյ յոլովակի ընկլուզանել և 'ի մոռացօնս արկանել զհոգի. և ուրախութեան ոգւոյ ցայտել 'ի մարմինն, և փայլատակել յերեսս:

վէկ իմաստնացն ասացաւ. Թէ գիւտութիւնք մարմնոյ՝ գեղ են ոգւոյ ։ Զի զորօրինակ ցաւք, երկիւղ, անատաղութիւն, և ախտք, 'ի չարչարել զմարմինն՝ ամբոխեն և խափանեն զոգի յիւրոց ազնուական գործոց, նոյնպէս չափաւոր հաճոյք, զուարթութիւնք և խաղ, անոյշ կերակուրք, և քաղցր հանգիստ, 'ի կազդուրելն զոյժ մարմնոյ՝ զօրացուցանեն զզօրութիւնս ոգւոյ ։

Թող՝ զի հաճոյք մարմնոյ ունին իւրեանց կայար. յոր իբրև լինի հասանել, խնդութիւնն յետս ընկրկեալ փոխի 'ի տաղտկութիւն ։ Յորժամ որովայնն է յագեալ, անուշութիւն կերակրոյն փոխի 'ի զզուանս, և հաճոյքն լինին տանջանք ։ Բայց բերկրուն մտաց չունի ինչ կէտ նպատակի. որչափ առաւել ճարակէ, այնչափ առաւելու ախորժակ քաղցի. հնար է մեզ ուտել աւելի քան ըղչափն. այլ ոչ է հնար գիտել աւելի քան զչափն ։ Ապա թէ երբէք հոգի՝ երկասիրութեամբ մտաց խնդրի, խնդութիւնն չէ հոգւոյն, այլ՝ մարմնոյն. զի արուեստաւորն է անձանձիր, այլ գործին ակար ։ Յասացելոցս մարթ է քեզ գիւտաւ որոշել զերկեակ տրոհմունս հեշտութեան ։ Ոմանք ինքեամբք ամի են բարի. զի ծագին 'ի գործողութեանց բընութեան բոլորովին կատարելոյ, որպիսի են առաքինութիւնք և գիտութիւնք ։ Ոմանք են հեշտութիւնք, ոչ ամի ինքեամբք բարի, այլ՝ ըստ այնմ որ արբանեկեն 'ի կատարելագործել զբնութիւն. որպէս գիւտութիւնք մարմնականք, որք 'ի բաց առնեն՝ի հոգւոյ զխափանարարն բանաւոր և առաքինական գործողութեանց. և սոքա են գեղք հոգւոյ ։

Արդ գիւրին լիցի քեզ որոշել զերկուս ափրոդիտս, առ իմանալ, ո՞ր իցէ Երկնաւորն, և ո՞ր Դըժոխայնն ։ Այսուհետև ոչ են մեր զրոյցք առ որոշելոյ զհեշտութիւն մարմնոյ 'ի հեշտութենէ ոգւոյ, այլ՝ առ որոշելոյ զհեշտութիւնն Հոգևոր յաշխարհայնէն. զի եթէ մարմնական և եթէ իմացական հեշտութեանց՝ ոմանք են առաքինականք, և ոմանք մոլեկանք. ոմանք ճշմարիտք, և ոմանք սուտք. որպէս և լուիցես ։

Եւ

Եւ արդ՝ սահմանն է, որ ցրեալ զթովչութիւն, և 'ի բաց արարեալ զպատրուակ հեշտութեան ծրարուելոյ՝ 'ի յայտ ածէ զնորա պղծութիւնս և զգարշութիւնս, և զհետևողաց նորա նախատինս։ Այսպէս մոլեկան հեշտութիւն է՝ [illegible] զուարճութիւն ինչ ծագեալ յայնմ գործողութենէ, որ պատշաճական թուի նմին տրամադրեցելոյն առ մոլութիւն. որպէս արբեցութիւն՝ անժուժկալին։ Ուստի և մոլեկան տխրութիւն է [illegible] ինչ ծագեալ յայնմ գործողութենէ, որ անպատշաճ թուի նմին տրամադրեցելոյն առ մոլութեան. որպէս զգաստութիւն՝ անժուժկալին, և աշխատութիւնն՝ ծուլին։

Մի և նոյն ախտ է չարազգած կարողութեան, մտանել 'ի չարն, և փախչել 'ի բարւոյն. խնդալ ընդ վնասակարս, և խորշել յօգտակարաց։ Սմին իրի որպէս մոլութիւնք և առաքինութիւնք զանազանին 'ի միմեանց ըստ պէսպիսութեան կարողութեանց և առարկայից, նոյնպէս մոլեկան հեշտութիւն ըստ հանրապէս բովանդակէ յինքեան զամ հեշտութիւնս ծնեալս յանկարգ կարողութենէ 'ի մոլեկան առարկայից։ Ուստի և առասական անուամբ [illegible] կոչեմք զամենեսին զնոսա, որք զհետ երթան մոլեկան հեշտութեանց, և փախչին յառաքինական գործոց. զի չարայօժար բնութ այնոքիկ են դիւրինք, և այսոքիկ՝ դժուարինք։

Արդ՝ զորօրինակ 'ի կարողութեանց (որպէս ասացաւ) ոմանք են զգալիք, և ոմանք իմանալիք. նոյնպէս 'ի հեշտութեանց՝ որք թշնամիքն են առաքինութե, ոմանք անկեալ գնին 'ի ստորայարկ զգայական մասին, և ոմանք 'ի գահաւանդ իմացականին։ Բայց է միւս ևս ազգ միջնայարկեան, յորում կամ ըղձութիւնն զգաստացուցանէ զզգայութ. և կամ զգայութիւնն կուրացուցանէ զըղձութ։ Եւ բաց յայսմանէ՝ հեշտութիւնք ինչ են մոլեկանք վասն առարկային, որ յիւրմէ է ապօրինաւոր. և այլք վն չափազանցութ միայն, որ անցուցեալ զգործն յօրինաւորէ յապօրինաւոր՝ փոխէ զդեղն 'ի մահադեղ։

Այսպէս 'ի մոլեկան հեշտութեանց ոմանք են անասնայինք, աղտեղիք, և ամօթալիք. և ոմանք [illegible]կանք,

Խանդք, հեշտանքներ, և գրգանքներ:

Անասնայինք են այնք, որք խնդրեն զանխուլ ուղղիս առ ապահովութեն, և առ ամօթոյ: Անփորգիտք այս՝ դժոխականք, խաւարասէրք, և որժանիք թաղելոյ 'ի դժոխային խաւարի: Առաւել քան զդժոխականն եղև արտաշէսինն, որոյ ազգայլիղծ բազմակնութբ ածեալ կնութեն զերկուս զիւր դստերս, նախանձաբեկս արար զերկոքանչիւրն հարճիւք ըստ աւուրց տարւոյ, և եկամուտ յաւելուածովք ըստ ժամանակի աւուր: Ապշեցան սանդարամետք, զի թագաւորն մարաց ոչ ժուժեաց կեալ՝ առանց այնչափ ափրոդիտաց, մինչ պէտ սանդարամետից շատացաւ միով միայնով:

Ոչինչ նուազ անասնայինք և ամօթականք են հեշտութիք չուայտութեն և արբեցուե. որպիսի էր ատրիգամասայն, որ հրաւիրեալ յարբեցողանոյ արքայէ 'ի մեծապատրաստ հանդիսի կոչունս, անձամբ միայն լափլիզեաց զամ զոր հանդերձեալ էին ուտել կոչնականք, և ցամաքեցոյց զամ կարասս: Ինքն միայն եղև կոչնական, իսկ այլքն ամ ակնկառոյց դէտք, զարմացեալք թէ զիարդ մի միայն փոր՝ զամ փորոց նց տարաւ զուտեստ: Այս հեշտութիք են անասնայինք և հիւթանիւթեայք, որք աւելազանցութբ օգտակարաց մարմնոյ՝ այնպէս զնա յառացուցանեն, մինչև նոյն իսկ մեղաց լինել նմա պատուհաս:

Իսկ այլք են հեշտութիք նոյնպէս անասնայինք ըստ զգայական բաղձանաց, այլ անծանօթք անասնոց: Զի են ճապկուեք ջանահնարեալք 'ի մարդկային մտաւորութե. և վն այնորիկ կոչին ճարտարականք: Եւ որ անձնատուր լինի 'ի սոսա, ոչ հեշտասէր կոչի. այլ՝ գիրգ: Ծառայական մոլութեն գիջութեն սովոր է յաջորդել փարթամական մոլութի գերձութեն, գոլ փափկութե և գրգանաց ամ զգայարանաց: Մինչև նց ակարացուցանել զմարմինս, այլ ոչ ակարացուցանել զոգիս: Չիք մոլութի քան զայս գիրգ. բայց և չիք քան զայս բուռն յիմացուցանել զհուժկու արս:

Զօր

Զուր ջանաջնար եղև տեսչութիւն զբօսեցուցանել [illegible] այնչափ գեղեցկագիտակ տեսարանօք, ծաղկազարդութիւն աստեղաց յերկինս, և աստղազարդութիւն ծաղկանց 'ի դաշտս, և այնչափ պեսպիսակ գեղովք, առ ամոքել 'ի սէր և 'ի զարմանս: Անցոյց զանցոյց սախոս լիբերտիոս՝ գտանել գրգանս ընդվայրաքննինս և Նախատս, 'ի զբօսեցուցանել զաչս իւր, ագուցեալ պեսպէս հայելիս 'ի սեննակս իւրոց հաճոյից, 'ի փայփայել զանձն ըստ Նարկիսոսի. այնու ևեթ առաւելեալ, զի Նարկիսոս հայէր յիւր գեղ, և սախոս յիւր գարշանս:

Դոյզն և թարմատար գրգանք թուէին Թ̃ուրոց ասորեստանեայց արբենալ քաղցր օշարակօք, թէ ոչ արբեցութեանէին և [illegible] անատակ երգօք մերկ յուշկապարկաց: Նա՝ առ առաւել յանցաւորել զերաժշտութիւն, կարէին ցաւագին կարացու զարութիւն ազնուական ողայոց, զի 'ի նրբաձայն աւաչելոյ՝ երգեցիկք թուեցին վարձակք:

Բայց մի [illegible] ոչ չատ եղև վերրէսի պրետորի սիկկլիոյ՝ նմանաբերել զբարս խաղի, զորոյ կրէր և զանուն, յորժամ ընկողմնեալ 'ի պատգարակ՝ շրջէր ը̃ գաւառն, [illegible] խաղ ինչ մալեալ. եգիտ և գիւտ գրգանաց. կախեալ զանգաց վանդակագործ քանակս վարդալիրս. գրգանք որ ոչ ինչ էին [illegible] ունդաց անասնոյ ողմաւորի (288): Բայց զանցոյց զ[illegible] աւրելիոս անտոնինոս. որոյ գլխովին ուշ եդեալ բարեբաստել զանդունս, լուղէր 'ի սոթագին աւուրս 'ի լիճ ինչ անուշահոտ ջուրց. և լուղեցուցանէր զլոյս ճրագաց 'ի բալասանի, զի և ծուխն լիցի նմա խնկենի:

Քանի՛ ղուկուղոսք աշխատ եղեն զինի, 'ի տալ [illegible] ճաշակ՝ ստարատի իմն և անլուր համեմիք: Բայց չեղև ինչ անլուր օրինակ քան զանտոնիոսին և զկղէոպատրայն: Սոցա՝ մեծագործութ̃ ընթրեաց անցեալ զանցեալ զամենեքումբք, որք գտօղ եղեն արուեստի՝ ոչ մերժելոյ, այլ զար-

զարթուցանելոյ զքաղցն, 'ի բասս եկին ընդ մի֊մեանս, թէ ո՛ կարող իցէ գտանել գրգանս մեծա֊հարուստս, և գրգական մեծութիւնս' 'ի հրաւի֊րել զմիմեանս 'ի կոչունս: Այնչափ մեծածախ համագամս ղուկուղեան դպրոցի եգիտ անտա֊նիոս, մինչև թուէր անյաղթելի: Բայց պարտե֊ցաւ յեգիպտական հանճարոյ. քանզի կորզեալ տարփածուի նորա (այն է՝ կղէոպատրայ) յիւրմէ ունկանէ մարգարիտ մի՝ որ արժէր զթգւրուն, եւ ըմպել անտոնիոսի՝ ողողեալ և համեմեալ. կամէր ողողանել և զզոյգ նորա, բայց անտոնիոսի պարտութե խոստովանեալ, չթողացոյց. և այնր գոհարի թէպէտ և կորեաւ ընկեր, բայց առա֊ւելան գինք, զի մնաց չնաշխարհիկ՝ ո՞մ մի միայն փիւնիկ կարմիր ծովու:

Բանի՝ փափկութիք հաւուկ ուրեմն հնարեցան 'ի նուաղել զէփիկուրդ զփայութեն տաղտկութե 'ի նե֊ղութենէ. աքսորեցան մաշկեայք և ասուէք, որք պաշտպանէին զմարմինս 'ի պատահարաց օդոյ. սկսան քաղել զտերևս ծառոց մն մետաքսի. ծե֊ծել զվուշս հոլանդիոյ, անկանել ոստայնս թա֊փանցս, և թեթևս, մինչև չիմանալ՝ թէ մարմինն զգեցեալ ինչ իցէ, թէ մերկ: Ոչ կարեն գտանել քուն գիշերոյ՝ բայց 'ի փափուկ անկողինս, որոց տունջեանյին աշխատութիւնք կակղէին արդեօք և զապառաժ քարինս: Ոչ տեսան՝ առանց հեծութե, ոչ թէ ցաւոց վիրաց, այլ և ոչ չփթելոյ ձանձից. որ և զմի 'ի հռովմէական կայսերաց արար ձանձ֊որս (289): Զհուսկն առացից. ոչ զօրեն համ֊գուրժել այնմ, որում եմ մարդոյ պարտ է համ֊գուրժել. ոչ 'ի սակս անզօր և ակար խառնուա֊ծոյ, այլ 'ի սակս մոլեկան ունակութե, որ թու֊լամորթից զգոյշն տաղտկութիւն առնէ ծանրա֊տաղտուկ:

'Ի ցուցանել քաջի արքային լիւսիմաքոսի դես֊պանաց իգասիրի արքային դեմետրի՝ զապիս ժա֊նեաց առիւծու, յոյր մն ցասումն աղեքսանդրի զնա յարձակեցոյց, դեսպանքն ետուն պատասխա֊նի. Դու ցուցանես մեզ զայն ճանեաց առիւծու. և մեզ

Բա֊

ԹԱԳԱՒՈՐ ԴԵՄԵՏՐԷ ԿՐԷՐ 'Ի ՊԱՐԱՆՈՑԻ Ն 'Ի ԲԱԶՈՒԿՍ ԶՕՂՍ ԺԱՆԵԱՑ ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿԻ: Եւ այն էր հարճ նր սիրելի, Լամիա անուն, որ թարգմանի յուշկապարիկ:

Նմանքին այսոքիկ են մոլեկան հեշտութիւնք ԶԱՆՁԱՆՁԻՆ. ամօթականք հետամտին, քան մեծատա_կարք օտարի: Բայց աչաւոր և երկխողալի հեշ_տութիւնք են հեշտութիւնք ԶԱՌԱՆՁԱՆԻՆ:

Այնպիսիք են և այսօր ուշոյ յիշատակաց՝ ԶԱՒՐ փաղարեան, ՆԵՐԿԻՐԻՆ բուսիրեան, ԱՐԻՍՏԻ Թեոդա_մասայ, ԸՆԿՈՂՆԻՆ պրոկոստեայ, ԸՆԲԻՐԻՆ տարէոսի, ՀԵՐՅԻՆ ԾԱՌԱՅ սկիներոսի (290). և այլ մեքենայք հնարեալք 'ի մզախոշոշ մ̈գկանէ. որոց քաղցր էր որ̄ պղրկաց արիւն կենդանի, և ոչ̄ ամեհի գա_ղանաց՝ գիշատութիւն մարդկային մարմնոց: Համ_լեցի տաւշի անհել զանգթութեն Ասդրուբաղայ, որոյ կուտակեալ 'ի վերայ պարսպաց կարքեցունի ակնյանդիման Սկիպիոնի և հռովմէական զօրուն զամ հռովմայեցիս, զորս ունէր 'ի կալանս, իբրև 'ի խաղալկաց խնջոյս զուարճանայր յանձն, զի զմիոյ ուրուք բրէին զաչս, զայլոյ կարէին զլեզու. զոմանս կարթակոտորս առնէին, և զոմանց կեն_դանւոյն զերծուին զմորթ, և զամենեսին բիւր_ազգի կտտանօք տանջեալ՝ կախէին զպարսպաց: Տեսիլ երկակի հեշտալի խժդժութեան, 'ի լսել նր զչնծութիւն ականողաց և ականելոց. և 'ի տե_սանել տաժ զհոսումն արտասուաց, և անտի՝ ա_րեան:

Նման են այսոցիկ ՀԵՇՏՈՒԹԻՒՆՔ ՉԱՐԱԽՕՍԱՑ. իբր զի բղխեն 'ի մի և նոյն աղբերէ ցասմնականին չարա_գործութիւն և չարաբանութիւն. ոչ̄ այլուր ա_սացաք: Կարի անողորմ չարագործուն է սպանա_նել լեզուաւ քան սրով. և խոցել գրչաւ, քան նետիւ. զի մեծ կորուստ է կորուսանել զպատիւ քան զարիւն: Թէ՞ոզ զի սպանողն վտանգելով իւ_րով սպանանէ զկենդանիս, այլ չարախօսն աներ_կեան սպանանէ և զմեռեալս:

Բայց գոյղն և ծառայական հեշտութիւն բերէ ան_պաճոյճ և յայտնի ԼՐԱՔԱՆՈՒԹԻՒՆՆ. չարաչար եւ բերկրուն բերէ ՆԵՐԳԻԾԱԿԱՆՆ Ն ՀԱՆՃԱՐԱՒՈՐՆ: Որ̄_ բեա.

բեւեռ օծեալ ձիթով ուժգնագոյն մխի 'ի փայտ , նոյնպէս չարաբանութիւն համեմեալ սրամտութեամբ խորագոյն խոցէ ։ Ոչ ախորժէր մարտիալէս ( լատին բանաստեղծ ) զզրոյցս Նորբինս , թէ չէին կըծանողք ։ Զնոսա անուանէր խիւս աղայոյ , և ըղստա կերակուրս տեարց ։ Ուստի գրէ զնմանէ , թէ դիւրին էր նմա առնուլ 'ի բերան կայծ ինչ վառ , քան զրոյց ինչ չարախօս . և մտադիւր կորուսանէր զբարեկամ ոք , քան զմի 'ի զուարճ խօսից ։

Են և այլ հեշտութիւնք մեծամեծք և մոլեկանք , որք գան կարծեօք ՅԱՐՓԱՓԻՆ ԲԱՐԵԱՑ . ոմն երբեմն յագահս , որք ըստ պիգմալիոնի ( 291 ) 'ի մթերել զինչս միշտ են ընչայեղցք և ընչաքաղցք . և 'ի փառամոլս , որ ըստ գետնառիւծոյ կերակրեալք հողմով գովութեան և պատուոյ , միշտ են փքացուռոյցք , և սովեալք .

Յայսմ ագահական հեշտութենէ՝ ծնանի հեշտութիւն խաղացողաց , այո՛ բերկրական վ̅ յուսոյ յաղթութե̅ և շահելոյ ինչ , այլ ի̅ խառնակար ագահ խաղացողի . որոյ յագահուէ 'ի չռայլութիւն յեղեալ՝ վատնէ զինչս 'ի հեռամոլել ստացութե̅ . և չքաւորէ զտունն առ հարստացուցանելոյ զնա ։

Են և այլ ևս մոլեկան հեշտութիւնք ԽՄԱՍՏԱԿԱՆՔ , որք ծնանին յանկարգ ցանկութէ գիտելոյ . որպէս մնապաշտական կամ կախարդական և սատանայական արուեստք . որոց լաւ ևս է չգիտութի̅ քան գիտութիւն ։ Եւ կա̅ ժամավաճառ դեգերանք աղատական արուեստից . որպէս վտանգաւոր բանաստեղծութիւնք , և դերասանական խաղարկութիւնք , վատնիչք ժամանակի և խանգարիչք բարի վարուց ։

Զհուսկն ասացից . այն ամ̅ , որում ստորին կամ վերին բաղձանք ըղձանան աւելի քան զպիտոյն , կամ ընդ̅էմ բանի , բովանդակ է հեշտութիւն մոլեկան . և զորին հակառակն , այն ամ̅ որ բերկրեցուցանէ 'ի կոպար բանի , է հեշտութիւն առաքինական ։

## ԳԼ. Դ:

### Հարցուածք 'ի վր հեշտութեան:

'Ի նախընթաց վճռութեան զարթուցեալ՝ այլ ոչ լիով շատացեալ քո ուշիմ մտացդ, գուցէ նախ առաջին ցիս հարցանիցէ. Ո՞ր հեշտութիւնք իցեն մեծագոյնք, հոգեւորականք թէ մարմնականք:

Որում ընդհանրապէս տամ պատասխանի, թէ մարմնականք են մեծագոյնք՝ հայելով 'ի զգայական բաղձանս. զի են առաւել զգալիք. եւ հոգեւորականք են մեծագոյնք՝ հայելով յիմացական բաղձանս. զի են առաւել իմանալիք: Իւրաքանչիւրն հաճ է ընդ այն, զոր համարի պատշաճողագոյն ինքեան: Բայց թէ խնդրի բացարձակ, ո՞րք իցեն մեծագոյնք, յայտ է թէ կարողութեան կատարելագունի կատարելագոյն է գործողութիւն. եւ գործողութեանն կատարելագունի կատարելագոյն է հեշտութիւն. վա որոյ եւ մեծագոյն: Այն 'զի հոգեւորական հեշտութեանց ներքին գոլով, եւ զգալեացն արտաքին, մարթ է ասել թէ զգալին է 'ի ներքս 'ի հեշտութեան, եւ հոգեւորականն զհեշտութիւնն ներառնու յինքեան:

Հարցանիցես եւ ես. Իբրէ ճշմարիտ է այն սահման, բարին է՝ որում ամենեքեան բաղձան, զի՞ է՝ զի ոչ ամենեքին ըղձան պատուականն եւ իմանալի հեշտութեանց, այլ առաւել ընկղմին 'ի մարմնականս եւ 'ի մոլեկանս:

Պատասխանեմ նախ, թէ թէպէտ ոչ ամենեքեան ըղձանան մի եւ նոյն հեշտութեան 'ի տեսակի, սակայն ամենեքին ըղձանան նմին 'ի սեռի. յ. այնմ՝ որ երեւի պատշաճական եւ բարի: Զի ամենեցուն է բարի՝ ոչ այն՝ որ է բարի, այլ՝ այն որ երեւի բարի:

Բայց բաց յայսմանէ՝ պարտ է հայիլ յայն, զի ընդհանուր բնութիւն է ածական իմն. զի կախեալ կայ զառաջնոյ սկզբնէ, որ է ած. եւ ամ ածային գիտէ առ եւս բարեգոյնն եւ կատարեալն: Վա այսորիկ բնութին միտեցուցանէ զամենեսին առ ճշմարիտ եւ կատարեալ հեշտութիւն, որ է երջանկու-

կութի. որ և հաստատեալ կայ յիմացական գոր-ծողութիւն: Բայց ոչ յառաջն ասացի, անզգու-շաւոր միտք տարածեալ 'ի խնդիր նոր, ըմբռնեն այլ ընդ այլոյ:

Բայց ասիցես. Զի՞ է, զի շատք հեշտութեանց ճաշ-ճաշակի գոն 'ի յագեցութիւն. և որ վշտացեալ էր հաճոյ՝ լինի վշտացեալ անհաճոյ:

Պատասխանեմ, թէ զգալի հեշտութիւնք ծնանին 'ի կրից. և զի կիրք են բուռն բերմունք վայրկե-նականք՝ հաստատեալք 'ի բաղձողականն և ոչ 'ի բանաւորականն, ընդ դադարել բուռն բերմանն՝ դադարէ և բերկրութիւն: Նմին իրի առարկայք՝ առ որս եռանդնաշարժ է տարփումն, վաղագոյն լինին ատելի:

Բայց զի՞արդ գէթ իմանալի բերկրութեանց ու հանդար-տութեան. և զի՞արդ ասացեալ և խոկացեալ մշտնջենաւորաց ու մշտնջենաւորեն 'ի մէջ շնաձեռութեան խորհրդոց:

Պատասխանեմ, թէ առարկայ ինչ եղեալ կա-տարեալ, և կատարելապէս ըմբռնեալ՝ կայէ զմիտս և զկամս մշտնջենաւոր կայանօք: Որ նկատէ զԱծ դէմ յանդիման լուսով փառաց, անհնար է թէ յագեսցի երբէք: Բայց որ նկատէ, հեռաւորաբ (յարարածոց) լուսով գիտութեան, հնար է այնպի-սւոյն զգալ յագուրդ վն երկուց: Մի՝ զի մարմ-նեղէն կաղմուածն, որ արբանեակէ մտաց, 'ի գոր-ծել անդ. իւրում վաստակի. ոչ խարտոց 'ի մա-շել զերկաթ ինքն ես մաշի: Եւ երկրորդ՝ զի այլ ինչ առարկայ առաւել սախալ կամ բերկրական լինի յանդիման. և ինքն անձկանօք և ես գիտե-լոյ, թողու զայն՝ որոյ էր 'ի խնդիր. ոչ որսորդ-շունք փախուցեալ զմի յերեաց՝ վաղեն յայլ: Վնկ պէսպիսութիւն բնաւորապէս է հաճոյական, վն անյագ գոլոյ զգայութեան՝ առ առնուլ զփորձ, և մտաց՝ առ իմանալ զնորանորս: Եւ վն զի նորոց իրաց առաւել մատչի է միտք մարդկան, այնչափ առաւելու բերկրութիւնն, որչափ առաւելու մտադրութիւնն:

Կամիցիս գուցէ գիտել և զայն, թէ Երկու վճա-վճ՝ Բայց Բոլորովին զուգել հեշտութեանց՝ լինիցին վճա-հա-

հանգոյն 'ի միում ժամանակի:

Պատասխանեմ. ստոյգ է թէ որ յառաւել զմայլեալ իցէ 'ի քաղցրանուագ ինչ եղանակութիւն, այնպիսւոյն չէ հնար՝ հաւասարապէս միտ դնել միանգամայն 'ի հայիլն և 'ի զմայլիլ չափակցութե̅ք քերուք ինչ նկարու: Վ̅ս զի ամ̅ գործողութիւն ինչ խափանէ զայլ. նոյնպէս հեշտութիւն միոյ գործողութե̅ խափանէ զհեշտութիւն այլոյ գործողութե̅. գէթ չթողացուցանէ լինել 'ի հաւասար աստիճանի: Վ̅նկ ասացաւ, թէ 'ի հարկանել թրակացւոյ նուագածուի (յօ որփէոսի) զքաղցրանուագ զիւր կիթառ, մոռանային անդեայք զարօտս, թռչունք զբոյնս, և մարդիկ զիւրեանց գործս, յայն համաձայնութիւն լարից քաղցրութե̅ յափշտակեալք, և անշարժ կացեալք: Որոյ պատճառն է. զի ամ̅ ամ̅ բնական արարողք, նոյնպէս ամ̅ մարդկային կարողութիւնք ձգին ցորոշ ինչ կատար ներգործականութե̅, յորմէ և անդր ոչ գործեն, կամ ակար գործեն: Եւ վ̅նկ որ ուշ դնէ գործոյ ինչ, ոչ կարէ միանգամայն ուշ դնել այլում գործոյ:

Եւ յայսմանէ մարթիս քեզէն լուծանել զայս միւս և խնդիր, թէ Է՞ր աղօթս հանգոյն Բազկոյ ժամանակին այնմ որ 'ի հայելս իցէ, և երկրորդ այնմ որ 'ի հիւսս իցէ: Նոյն է պատճառն: Իբր զի բերկրութե̅ն այնպէս ընկլնու զմիտս այնորիկ՝ որ 'ի վայելս իցէ, մինչ զի ոչինչ ուշ եդեալ նորա յաջորդական անցողութե̅ ժամանակի, մինչ զառաջին վայրկեանն ը̅ յետնոյն, ամ̅ որ 'ի քուն իցէ. վ̅նկ յերկարաւոր ինչ ժամ թուի նմա րոպէ: Եւ զարդին հակառակն, որ 'ի ցաւս է և 'ի վիշտս, ոչ այլ իմիք ըղձանալով, ամ̅ հասանելոյ 'ի վերջ, չափէ զամ̅ րոպէս. և ամ̅ րոպէ թուի նմա դար: Վ̅նկ նշան մեծ՝ լինելոյ ուրուք կատարեալ յիւրում արուեստի՝ է այն, յորժամ ը̅երկար աշխատի նա, և չիմանայ. վ̅ս զի՝ ամ̅ լուար, ունակութիւն առնէ զերկիս զայսանիկ օգուտ. զի առյ պատաղիլ զգործով բերերանոց, դիտորսթե̅, և ընդերկրոր:

Յայսմանէ իմանաս և ես, թէ ընծէր յոյժ աաաւ-

-նէւ

աւել բերկրեցուցանեն քերթուածք ոգեշարժք, այ վիպեր-գականք և գործականք, քան շարժնաբանականն և ներա-տաղէտական ճառք։

Պատճառ այն է, զի ոգեշարժ իրք մեծապէս շարժեն զկիրս մեր զգալի իմն համակրութեամբ 'ի մէջ ախորժականին և առարկային. և 'ի շարժիլ զգայութեան՝ ազդողագոյն գործէ երևակայութիւն. և վասն առաւել զմայլի՝ քան 'ի խօսս սոսկապէս մտաւորականս։ Եւ ևս, կարողութիւնք իմացականք՝ վասն զի վարեն 'ի պէտս զգործարանս գրգռագոյնս, դիւրագոյն խանձին։ Այն զի՝ իմանալի խօսք միանգամայն հաճոյանան, զի լիով հաճեն զմիտս. բայց ոգեշարժք կրկին և կրկին լսելութք կամ ընթերցմամբ՝ միշտ բերկրեցուցանեն. զի բաղձանքն չհատանին երբէք։

Խնդրիցես հաւակ ուրեմն. Արդեօք մարդիկ սիրեցեն զկեանս քան զհեշտութիւն, թէ զհեշտութիւն քան զկեանս։

Պատասխանեմ. կարի դժուարին է որոշել զսէր կենաց 'ի սիրոյ հեշտութեան։ Զի որովհետև կեանք հաստատեալ են 'ի գործողութեան, և ոչ այլ ինչ է հեշտութիւն, բայց կատարելութիւն ինչ գործողութեան, ոչ է հնար սիրել զմին առանց միւսոյ։ Սակայն և այնպէս՝ երևի թէ առաւելապէս սիրելի իցեն կեանք քան զհեշտութիւն. զի որովհետև հեշտութիւնն հանգիստ իմն է բաղձանաց 'ի պատշաճական գործողութեան, ինձ թուի թէ ցանկութեանն պատշաճական գործողութեան՝ պարտ է յառաջել քան զցանկութիւն հանգստեան։

Բայց և խոստովանելի է, թէ ոմանք 'ի մարդկանէ սիրեն զհեշտութիւն առաւել քան զկեանս. և ոմանք զկեանս առաւել քան զհեշտութիւն։ Վասն ոմանք առ չհանդուրժելոյ ցաւոց կամ վատանունութեան, սպանանեն զանձինս։ Եւ կամ առ վայելելոյ 'ի հաճոյս մարմնոյ, որք են վավաշականք, կամ 'ի հաճոյս սրտի, որպիսի են փառք, բարձի թողի առնեն զկեանս. զթիթեռանն առնելով. Միայն թէ 'ի լոյս վայելչութեան իմ աչք, թող այրեսցին թևաւորք։ Իսկ այլք զսորին հակառակն՝ հանդուրժեն հարուածոց և տանջանաց, կամ վատանունութեան և

անարգ

անարգ ծառայութեան. միայն թէ կեցցեն ։ Որոյ այն է պատճառ, զի որովհետև իւրաքանչիւր ոք զայն համարի լաւ, զոր համարի առաւել պատշաճական, ոմանք ըմբռնեն զայն պատշաճականութիւն 'ի կեանս, և այլք 'ի կատարումն հաճոյից իւրեանց ։ Բայց այր առաքինի, յաչս որոյ չիք ինչ յարգի՝ բայց միայն համեստն, առաւել պատշաճական համարի զհամեստութիւն առանց կենաց, քան զկեանս առանց համեստութեան ։

Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ ԺԹ. ԵՐՐՈՐԴ.

ՅԱՂԱԳՍ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ։
ԵՒ ՅԱՂԱԳՍ ՏԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ։

## ԳԼ. Ա.

### ԹԷ ԶԻՆՉ ԻՑԷ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ։

Ուսաք բազում անգամ, թէ բան և բաղձանք են երկու սկզբունք մարդկային առնելութեանց ։ Ասել բաղձանք՝ է ասել շարժութիւն. է ասել՝ կիրք ցանկականին և ցասմնականին. է ասել՝ սէր հեշտութեան. և փախուստ 'ի ցաւոց ։ Եւ այսմ հակադրի անկիրքն, կամ անզգայութիւն, և թմրութիւն ։ Ասել բան՝ է ասել միտ լուսաւորեալ յուսմանէ բնական օրինաց, որ է տրամաբանականն կամ խիղճ մտաց. է ասել՝ համաձայնութիւն ընդ աստուածային ջանանի, յորմէ յառաջ գան ամ օրէնք ։ Եւ այսմ բանի հակադրի խաւարութիւն կամ փքութիւն ։ Թէպէտ և բանն միայն 'ի համեստն, և բաղձանքն 'ի բերկրականն. բայց և այնպէս յոլովակի միաբանին ընդ միմեանս, և յոլովակի տարաձայնին ։ Յոր-

Յորժամ բանն է կանոնաւորեալ, և բաղձանքն կանոնաւոր. երկաքանչիւրն միաբանին 'ի բարին. և անտի ծնանին գեղեցիկ և կատարեալ առաքինութիւնք, որք ցուցան քեզ 'ի նախընթաց գիրս: Յորժամ ոչ բանն է կանոնաւորեալ, և ոչ բաղձանքն կանոնաւոր, երկաքանչիւրն միաբանին 'ի չարն. և յայնմանէ ծնանին ոգեղ մոլութիւնք՝ այնց հակառակք: Յորժամ բանն է կանոնաւորեալ, բայց բաղձանքն անկանոն, յառնէ 'ի նս տարաձայնութիւն և վէճ. և որ զօրագոյնն է՝ յաղթէ: Վն այսորիկ եթէ բանն զօրանայ քան զբաղձանս, ծնանի ժուժկալութիւն. բայց եթէ բաղձանքն զօրանայ քան ըզբանն, ծնանի անժուժկալութիւն:

Ապա ժուժկալութիւնն է առաքինութիւն իմն հոգւոյ, որով կանոնաւորեալ բանն [illegible] [illegible] բաղձանս հեշտութեան: Իսկ անժուժկալութիւնն է մոլութիւն իմն հոգւոյ, որով բանն թէպէտ կանոնաւորեալ՝ [illegible] [illegible] [illegible] բաղձանաց՝ [illegible] [illegible] հեշտութեան: Մինչ զի յանժուժկալութեան ցանկութիւնն է ուժգնագոյն քան զբանն, և 'ի ժուժկալութեան բանն է ուժգնագոյն քան զցանկութիւն. զի յաղթեալն է տկարագոյն քան զյաղթօղն:

Յասացելոց աստի մարթիս իմանալ նախ առաջին, թէ ժուժկալութիւն է առաքինութիւն իմն անկատար. զի 'ի կատարեալ առաքինութիւն եթէ բանն և եթէ կիրք՝ են կանոնաւորեալք և միաբանք. բայց 'ի ժուժկալութեան ցանկութիւնն դեռ մարտնչի ընդ բանին. թէպէտ և հուսկ ուրեմն գայ 'ի պարտութիւն: Ուստի և անժուժկալութիւն է մոլութիւն [illegible] իմն անկատար. զի թէպէտ բաղձանքն է տկար և անզօր, բայց դատումն է բանաւոր և ողջամիտ: Եւ ես մարթիս իմանալ զտարբերութիւն՝ որ 'ի մէջ ժուժկալութեան և բարեխառնութեան: Վն զի 'ի բարեխառնն ուղիղ է բանն, և ուղիղ բաղձանքն. բայց 'ի ժուժկալն բանն է ուղիղ, այլ բաղձանքն դեռ ըմբոստ: Մինչ զի բազումք են ժուժկալք, բայց սակաւք՝ բարեխառնք:

Եւ առաւել ևս իմանալ զայս, յուշ լիցի քեզ՝ զոր լուարն 'ի ճառս բարեխառնութեան. թէ ընդ

մէջ գործողութեանց անբանից և անբարեխառն մեղկան՝ այս է խոիր. զի յառաջադրեալ բերկրական ինչ առարկայի, անբանն առանց ինչ տրամաբանութե բնաւորապէս յայն ընթանայ, որպ քարն 'ի կեդրոն. բայց անբարեխառնն կազմէ 'ի սրտի տրամաբանութե ինչ առժամեան ըստ օրինակի գործողական և եղական հաւաքաբանութե, այսպէս.

Ամ բերկրական է բաղձալի.
Այս առարկայ է բերկրական.
Այդ առարկն է բաղձալի:

Արդ՝ բաջ տեսանես, թէ Ձեւագոյնք այդպէս ընդհանուր և անկողմ՝ է ոճիղքն ինչ զեղծ գաստման և թիւրեալ բանի: Նմին իրի, եթէ զգալի ըմբռնողականն՝ յառաջադրեալ բերկրական առարկայի՝ առնէ զփոքրագոյնն, այնուհետև թիւր ցանկութիւն՝ անբարբառ, բայց գործադրաբար, եզբոխացուցանէ 'ի կողմն հեշտութե, գիմեալ արագագիրկս արկանել զնովաւ: Վասն զի 'ի միաբանել թիւր բանին ընդ թիւր բաղձանաց, այնուհետև առանց ինչ խափանածոյ բնաւորապէս զհետ գայ թիւր գործն:

Այլ անժուժկալն, յորում բաղձանքն է զեղծ, այլ ոչ զեղծ է գատումն, ոչ ըստ ունի 'ի միտս իւր զայն ընդհանուր ոճիղքն, այլ՝ ամփոփէ զնա և կարպաւորէ բանիւ այսպ. Բերկրականն է բաղձալի, Գոյն բէ իշէ հաճեաք: Բայց եթէ ըմբռնողականն, յառաջադրեալ նմա հրապուրողական ինչ առարկայի՝ կազմէ զփոքրագոյնն հաւաքաբանութե. խոյ տոյ ինչ է բերկրական, անդէն անժուժկալն առանց զկայ առնլոյ յայնմ գատողական կարգի, թողու հրապուրանօք յափշտակիլ յանկարգ բաղձանաց առ անբանաւորն հեշտութիւն:

Բայց ժուժկալն՝ թէպէտ և չունի բարեկարգ բաղձանս, սակայն և այնպէս կացեալ հաստատուն յիւր ոճիղքն կարպաւորեալ 'ի բանէ, բուռն առնէ ցանկութեան, թէպէտ և միաեալ իցէ նա 'ի չարն և ըմբոստ, զի մի զանցանիցէ զկարպաւ համեստութեան:

Վն՟ այսորիկ անժուժկալն է առաւել ախտակցելի քան զանբարեխառնն. զի ը՟ ամենայն դատաստանաց, յանցանք որք գործին բորբոքեալ կրիւք, համարին առաւել արժանի ախտակցութեան: Եւ յայտ է թէ անբարեխառնն մեղանչէ կամաւոր ընտրութբ՟. և այս է չարութիւն. այլ անժուժկալն մեղանչէ 'ի թափոյ կրից: Վասն զի 'ի նմա բաղձանք հոլովուբ՟ զառածանելն 'ի մտաց. 'ի սմա միտք ջերաջերմ վառին 'ի հրատապ բաղձանաց:

Յորմէ զհետ գայ և այս ևս, զի անժուժկալն դիւրաւ ուղղի քան զանբարեխառնն. զի 'ի նմա չար է ուղղել զապականեալ բաղձանս. բայց յանբարեխառնն ապականեալ են և՛ բաղձանք և՛ դատումն. և դժուարագոյն է վանել զերկուս թշնամիս, քան զմի միայն թշնամի:

## ԳԼ. Բ:

## Առարկայք ժուժկալութեան, և անժուժկալութեան:

Յայտ է սահմանաւն, թէ առարկայ ժուժկալութեան է հեշտութիւն: Բայց քանզի 'ի հեշտութեանց՝ որ՟ տեսեր, ոմանք ծագեն 'ի ցանկականէն, և այլք 'ի ցասմնականէն. ոմանք 'ի մարմնաւոր բարեաց, այլք յարտաքին բարեաց, և այլք յիմանալի բարեաց. յիրաւի է քեզ խնդրել, արդեօք այս ամ՟ հեշտութիւնք իցեն առարկայք և նիւթք ժուժկալութեան կամ անժուժկալութեան:

Թէ խորհուրդ հարցանես մերում պատգամախօսի (իմա՛ արիստոտէլի), դիւրին է քեզ առնուլ 'ի միտ, թէ նիւթ բարեխառնութեան և ժուժկալութեան է նոյն. զի երկաքանչիւրն նման են 'ի նիւթն, բայց աննման յեղանակն, ըստ որում 'ի միումն բաղձանքն է հլու քան 'ի միւսումն, որպ՟ տեսցես. և վնկ մինն է առաքինութի. և միւսն կիսամասնեայ առաքինութիւն:

Արդ՝ յուշ լիցի քեզ. զի 'ի ճառս բարեխառնութե տեսցուք, թէ յատուկ նիւթ բարեխառնի է հեշտութիւնք երկուց ստորին և անդրագոյն զգայութեանց, որք հասարակ են ընդ անասունս. ի՟ ճաշակելեաց և շօշա-

շօշափելեաց. որոց մին հայի 'ի պահպանութիւն անհատին, և միւսն 'ի պահպանութիւն տեսակին։ Ուստի և Արիստոտէլ 'ի ճառելն աստանօր ըզժուժկալութենէ թուի յայն կնքել զբանն, թէ յատուկ և ճշմարիտ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆՆ հայի միայն 'ի հեշտութիւն ճաշակելեաց և շօշափելեաց. և այլ ամ ժուժկալութի՛ է անյատուկ և այլաբանական։

Բայց յայլմէ կողմանէ, եթէ մոլութի է անժուժկալութե՝ չափանցել զհեշտութիւն ՀԱՄԱՒ ՑԱՆԿՈՒԹԷ, զի մարդ չիցէ մոլութիւն անժուժկալութե չափանցել զհեշտութե ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԷ, ՓԱՌՈՒԹԷ, ԾԱՌԱՄՈԼՈՒԹԷ, ԼՐԱՋԱՆՈՒԹԷ, ԸՆԴՀԱՅՐԱԿԱՆՈՒԹԷ, և ԳԻՏՈՒԹԷ ևս. 'ի մոռանել անչափաւոր կերից, որք բաղում անգամ զեղուն յանհնարին աւելազանցութիւս։ Եթէ ժուժկալութե է ճնշել զցանկութի, ով չասիցէ, թէ ցանկութիւնն թեւարկէ յամ որինչ է հաճոյ, եթէ զգալի իցէ, և եթէ իմանալի։ Ցանկութիւնն կրէ 'ի կապարճս ազգս ազգս նետից, է որ կապարեայ, է որ ոսկեղէն, և է որ բոցեղէն. որովք խոցէ բազմօրինակ. ոմն սիրահարի ԱՆՈՒՇ ՀՈՏՈՅԻՑ, ոմն ԶԷԾՈՒԹԷ, և ոմն ՊԱՏՈՒՈՅ. ամն է ցանկութե։ Ասիցէ ոք. ճնշել զայսոսիկ մոլութիւս՝ յատուկ է հեզութե, արդարութեան, համեստութե, քաղցրաբարոյութե, խոհեմութե, իմաստութե, և այլ մասնաւոր առաքինութեց։ Եւ ես ասեմ, թէ ճնշել զցանկութի այնց երկուց զգայութեց՝ յատուկ է բարեխառնութե, և ոչ ժուժկալութե։ Եւ թէ կրկնիցէ ոք, թէ 'ի բարեխառնութե առողջ են միտք, առողջ են և բաղձանք. բայց յանժուժկալութե առողջ են միտք, և հիւանդ բաղձանք։ Ի վ՟ր բերեմ և ես, թէ 'ի բարկութեան, յագահութե, և 'ի փառասիրութե միտք առողջ են, և բաղձանք հիւանդ։

Եւ զի մարդ չիցէ պատշաճօղ ճշմարիտ անունն անժուժկալութե՝ այնմ, որում պատշաճի ճշմարիտ սահմանն։ Բայց թէ յայն մոլութիս տրոհի գործողութիւնն 'ի հեշտութէ գործողութե, յայտ է թէ՝ թէպէտ և ճնշել զմոլեկան գործողութիւնն անկ է կատարեալ առաքինութե. սակայն և այնպէս՝

պէս՝ Ճնշել զցանկութիւն զհեշտութե այնր մոլեկան գործողութե, պատշաճի ժուժկալութե:

(292). Ատրեոսի խորհեալ զանողորմ վրէժխնդրութիւն առ եղբայր իւր, առաւել յափշտակիւր 'ի հեշտութէ եղանակի, քան պատշաճողութեան պատժին. ասէ.

Բուն ճրէծ փինաս՝ ինչ եղանակ՝ ըս քաղցրանայ,
այր կերպարան՝ այծմըն 'ի յաւու՝ իմ յեղանայ.
'Ի ծովակս՝ հոսման արեան՝ ոխերս զովանայ,
Եւ զի՞ հեշտամ՝ զիմ բերկրականնն՝ լուծել նըմա.

Ճանաչէր ատրէոս զչափազանցութի յանցանացն, բայց 'ի բերկրանաց էր յափշտակեալ: Բարկութին է դառն քան զօշինդր, և քաղցր քան զմեղր: Ատրէոս միանգամայն կայր սասանեալ և զուարճացեալ: Դատաւն էր առողջ. այլ ցանկութին թիւրեալ: Եւ զինչ այլ իցէ Ճշմարիտ անժուժկալութիւնն:

(293). Աստղիկոս աւազակ՝ առասպելեալ որդի մերկուրիոսի՝ յն հերմէսի չաս աւազակաց, կամ ծնեալ ը̄ համանուն յափշտակիչ մոլորակաւ (այն է փայլածու՝ մերկուրիոս ասացեալ), էր յօժարամիտ 'ի գողանալ՝ ոչ վս օգտի ինչ որ 'ի յափշտակուէ, այլ զի հեշտալի էր նմա յափըշտակել: Գիտէր թէ չար է զոր գործէ. բայց առիթն առնէր զնա գող: Որպ մագնիս առ երկաթ, այնպ ձեռն նր վազէր յունկի. որ յափըշտակութի զնա յափշտակէր: Աւստի մարտիալէս կոչեաց զայն ձեռն ֆիւթաւածծ: Եւ զինչ այլ իցէ Ճշմարիտ անժուժկալութին, բայց ցանկութիւն մոլեգին, և դատաւն ողջամիտ:

Զայն անզուսպ հեշտութի, զոր զգայր զմիլոս յերգիծանել զայլս, և լեպիդոս 'ի տիրել, զորս զառաջինն քերթողք կոչեցին լարաճարտարութեան, և զերկրորդն տուղղիոս՝ անկարութեան, որով անուամբ հնար էր իսկապէս իմանալ, բայց կոչելով ծաղկաւորութեան. վս անկար լինելոյ երկաքանչիւրոցն սանձել զանյագ կամս. թէպէտ և երկաքանչիւրն գիտէին, թէ այլ ոչինչ քաղէն անտի, բայց եթէ ցաւս.

ցաւս (294)։

Քանիցս անգամ տարապայման հեշտութեն յիմարեցուցանէ զքաջիմաց իմաստութիւն։ Արքիմեդէսի 'ի բաղանիս լեալ, և 'ի համեմատութենէ ջրոյն՝ որ ելանէր յաւազանէն 'ի մտանել իւրում անդր, 'ի միտ առեալ զառաջեալ առաջոյցն ոսկեղէն պսակին, ը̄ որում էր խառնուրդ օտար հրաշալելոյ, չհանդուրժեալ զսպել զզեղումն ուրախութեն նորահնար գիւտոյ, ել 'ի բաղանեաց. և գլխովին մերկ և օծեալ՝ վազէր ը̄ տունն որպէս խելագար, ձայն բարձեալ. Գտի, Գտի։ Թ.է չէ այս անժուժկալութիւն իմանալի հեշտութեան, զինչ այլ իցէ։

Ապաքէն՝ դեմոկրիտոս ածել զմտաւ խոր իմաստութեն զյիմարութիւն մարդկան, այնպէս բուռն խնծղայր ծաղու, մինչև լինել նմա ծաղածանակ։ Եւ քսենոփոն չհանդուրժեալ զսպել զպայթիւն ծաղու, պայթեցաւ (295)։ Արդ՝ մեք զինչ ասիցեմք թէ իցէ՝ չկարելն զսպել զայն չափազանց կիրս, բայց եթէ ճշմարիտ իմն անժուժկալութ։ Արդ եթէ յայսոսիկ օրինակս տեսանես դու ըղկանոնաւոր գտաումն բանի, և զանկանոն բաղձանս ցանկութե զհեշտութիւնս, որք չեն հեշտութիւնք ճաշակելեաց և շօշափելեաց, ապա է անտանոր ճշմարիտ իմն և ոչ այլաբանական ժուժկալութիւն. կխամմանեայ իմն առաքինութե, որոյ չեն նիւթ այն երկու ստորին զգայութիւնք։ Իսկ յայսմանէ զինչ ունիցիմք եզրակացուցանել. բայց զայն թէ թարգմանիչք ոչ բարւոք թարգմանեցին զբան մերոյ պատգամախօսի. որ ոչ երբեք գտաւ երկխօս, և ոչ երբէք իւր ինքեան ներհակախօս. թէ քաջ իմանայցի։

Արդ ասեմ. եթէ զգուշագոյն հայիս դու 'ի միտ քան 'ի խօսս արիստոտէլի, տեսանես, զի որովհետև մեծ փոյթ էր նր կարճ 'ի կարճոյ ուսուցանել, և ոչ միում յառաքինութեց կամեցաւ ներքոյ արկանել նիւթ անբաւ, այլ չափաւոր. զի մի ընկղմեսցէ յըսարձակ ծովածոցի զհամբակ լուղորդս։ Այնկ որոշեալ նր զմանաւոր խոհեմութեն

յընդ-

յընդհանրոյն, և զմասնաւոր արդարութին յընդ-
հանրոյն, նշանակեալ մասնաւորին առարկայս ինչ
մասնաւորս, ըստ նմին օրինակի և յայս ևս խորթին
ճառ. ժուժկալութեն որ 'ի պղատոնեանց և 'ի ըս-
տոյիկեանց խարանօք կրեր մաքառումն, որոշէ
զՄԱՍՆԱՒՈՐ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵՆԷ.
զերկոսին իսկ զհեշտութս. բայց զմասնաւորն
զառարկայիւք բարեխառնութն, և զընդհանուրն
զառարկայիւք այլոց առաքինութեց:

Կարի իսկ կարևոր է առ դիւրութն վճռութն
որոշումն բանից. զի սկիզբն գիտելոյ է վարա-
նիլ 'ի խօսս: Նմին իրի 'ի խօսիլ նր զժուժկալու-
թէ ԼԱԿՈՅ, իւր կամք են, թէ իմանայցի ժուժկա-
լութիւն, որ ունի առարկայ զհեշտութիւն որկորոյ
և փառաց ցանկութ՝ վերաբերելոյ առ բարեխառ-
նութիւն: Բայց 'ի խօսիլ իւրում զժուժկալութէ,
որ ունի առարկայ ԴԺՆԴՈՒԹԻՒՆՍ՝ վերաբերեալ առ
այլ առաքինութիւնս, կամի, զի կոչեսցի ժուժկա-
լութի ՀԵՐԱԳՈՐԱ, 'ի վր բերեալ զվերատառութիւն
այլոց առարկայից. ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ ԲԱՐԿՈՒԹԵՆԷ. ԺՈՒԺ-
ԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՐԾԱԹԱՍԻՐՈՒԹԵՆԷ. ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ ՀԱՄԲԵՐՈՒԹԵՆԷ,
առ 'ի չշփոթելոյ ընդ մասնաւոր ժուժկալութն,
որ ունի զհամարակաց առարկայ ընդ բարեխառ-
նութեան:

Իւ թէ այս իցէ միտ մեծի իմաստասիրին, եր-
կու յայտնի ձեռնարկութիւք քաջայայտ երևի:
Վզ զի նախ առաջին՝ ոտ որոշեաց նա զժուժկա-
լութին 'ի բարեխառնութէ, ըստ այնմ որ բարե-
խառնութին է կատարեալ առաքինութ, և ժուժ-
կալութին կիսամասնեայ առաքինութի ընդվիմը
առարկայիւ. նոյնպէս զբարկութի կայ ԿԱՓԱՐԵԱԼ
ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ, որ է հեզութի. և ԱՆԿԱՓԱՐ ԱՌԱՔԻ-
ՆՈՒԹԻՒՆ, որ ժուժկալութի բարկութն. որ զնովին
առարկայիւ ունի ուղիղ դատումն, բայց բուռն
ցանկութիւն: Միւս ձեռնարկութիւնն է. զի
յայս ճառ ժուժկալութն ոչ միայն խօսեցաւ ըզ-
ՄԱՐՄՆԱԿԱՆ ՀԵՇՏՈՒԹԵՆԷ՝ ընդդէմ պղատոնեանց, այլ
ըզ ՈԳԵՂԷՆ ՀԵՇՏՈՒԹԵՆԷ՝ ընդդէմ ստոյիկեանց. յայտ
առարեալ, թէ բովանդակ իմաստասիրութին բա-
րոյա-

բոյական կայ 'ի կշիռ 'ի մէջ երկուց առանցից . Գիտէլ առաջինն և վերջինն՝ որպէս արժանն է։ Այսոք հեշտութիւն մասնաւորի պիտակինէ ժուժկալութեան մասնաւոր, նոյնպէս հեշտութիւն ընդհանրոյ պատասխանէ ժուժկալութեան ընդհանուր։

Յաւել և զայն, թէ որովհետև կարգէ նա զայս ճառ ժուժկալութեան առ առաքինութիւն [illegible], որ է յաղթութիւն ինչ վախճանական, և անթերի յաղթանակ ցանկութեան ամ հեշտութեանց՝ որք հակառակին առաքինութեան, թերի արդեօք լինէր յաղթանակն, եթէ միայն ժուժկալութիւն այսց երկուց անարգ զգայութեանց՝ շատ համարիւր առաքինութեան գիւցազնականի։ [illegible] և [illegible]՝ յառաջատութեամբ ամաց, և իւրամի իսկ երթալով երթան և նուաճին. և փոքր յաղթութիւն է յաղթել նկուն եղելոյն. բայց [illegible], [illegible], և [illegible], որչափ ծերանայ մարդ, այնչափ զօրանան և ըմբոստանան, և վասն առաւել ժուժկալութեան պէտս ունին։

## ԳԼ. Գ.

## Տեսակք ժուժկալութեան։

Եպիկտետոս փիլիսոփայի ծառայ, որ եթող իշխանաց իմաստս տիրականս, բովանդակեաց զբարոյական իմաստասիրութիւն յերկուս սուղ զըրոյցս. հրաժարեա, և համբեր. (296)։ Այսոքիկ են երկու գլխաւոր տեսակք ժուժկալութեան. անձնապահ լինել յամենայն հեշտութեանց, և համբերել [illegible] [illegible]։

Իւրաքանչիւր 'ի սոցանէ ստորաբաժանի յայլ երկուս տեսակս. որք լաւ ես ճանաչին 'ի հակակայ մոլութեանց։ Զի ընդդէմ անձնապահութեան մեղանչեն երկու ազգք անբարեխառնութեանց, [illegible], և [illegible], և ընդդէմ համբերութեան՝ այլ երկուք, [illegible], և [illegible]։

Չ[illegible] է այն անժուժկալ, որում եթէ առաջի լինի առարկայ հեշտալի, բայց անպատշաճական, ճանաչէ այն՝ զանպատշաճութիւն, բայց անձինչ

զինչ և ապաժոյժ ցանկութեն առանց ժամանակ տալոյ հայիլ յայն մտածութեն, վաղ 'ի վաղ ձգի յայն՝ որում ըղձանայ : Իսկ փափուկն է, որ ուշի ուշով հայեցեալ յանվայելչութեն և 'ի զազրութեն գործոյն, խորհի ընդ միտս հրաժարիլ, բայց խաբեալ և գրգեալ 'ի ցանկութենէ՝ հուսկ ուրեմն մտանի 'ի պարտութիւն :

Մինչ զի անժուժկալն և փափուկն ոչ տարբերին 'ի նմին, այլ յեղանակն : Երկաքանչիւրն անձնատուր լինին հեշտութեան, բայց մին դիւրաւ, և միւսն դժուարաւ : Հոգին [illegible] [illegible] [illegible] խառնուածոյ մարմնոյն : 'Ի մարմնի են չորք հիւթք, որք համեմատին չորից տարերաց . դեղնաղձն՝ հրոյ . սեւ աղձն՝ հողոյ . արիւնն՝ օդոյ . և մաղասն՝ ջրոյ : Արդ՝ ոմն հուր և հող ունին ինչ սեպհական կայան, և սեպհական ինչ սահման . բայց օդ և ջուր են հոսական, և յամ արտաքին սահման փոխեն զկերպարան . նոյնպէս մաղձոտք և սեւամաղձոտք են առաւել ժուժկալք, և հաստատունք 'ի բարի առաջադրութեն . բայց մաղասուտք և արիւնայինք դիւրագոյն դիմեն 'ի բերկրական առարկայս, որք յանդիման երևին նց :

Այս երկու տեսակք են անժուժկալութեն զհեշտալի առարկայիւք : Մնան այլ երկու զցաւագին առարկայիւք :

[illegible] է, որ տոկայ փոքունց նեղունց . այլ ոչ մեծաց : 'Ի թեթև չարիս արի է քան զայր . 'ի ծանունս՝ կնատ է քան զկին : Փիլոկտետէս հարեալ յիժէ, թէպէտ և բուռն առնէր իւրոց ցաւոց, ոչ կարէր զսպել զարտասուս, և ոչ ընկրկել զկողկողագին կականս և զհեծութիւն : Այնպէս ապաժոյժ էր ցաւուն, մինչև լինել անտանելի ամ զօրուն : Վնկ վարեալ յանապատ ծովեզերեայ, անդ առ խուլ ալիս, և յոգս թեթեւս թափէր զիւր արտօսր, և արձակէր կական (297) :

Բայց [illegible] այն է, որ և ոչ փոքր նեղունց ժուժայ . ոչ առ հիւանդութեն և ոչ առ տկարութեն խառնուածոյ, այլ՝ առ իգութեն, և չար ու-

նա.

նակութեն, կամ կարի խիստ ճապուկ մննդեան, որք վերադոյն ասացաւ: Այնպէս այլ ընդ այլս էր մնունդ փաիակացւոց և լատինաց, մինչև երևիլ, թէ 'ի մարմինս նոցա ընակէին այլ և այլ ոգիք: Լատինք ուսեալք զուսպ ունիլ զխառնախուխ վարսս սաղաւարտիւ, և զմնդակազմ անդամն՝ թաւամազ մորթովք գազանաց, զհետ երթեալ գազանաց 'ի ոսթագին և 'ի սառնասառոյց եղանակս, զզբոսանս համարէին պատերազմ, և զպատերազմ՝ զբոսանս: Փաիակացիք արկեալ զիւղաթորմ վարսիւք պսպղուն ծամակալս, և ըղմարմնով օթոցս թեզանեօքս նրբամանս, որպէս կնամարդի և անարի զեղխէին 'ի դրգանս և յօծութխս. զորս ոմն 'ի լատինաց ծաղր արարեալ՝ ասէ (298).

ՈՀ ՓՌԻԳՈՒՀԵԱՆ՝ ԻՆԱՄԱՐԴԻՔ, ՈՒ ՓՌԻԳԱՑԻՔ,
ԵՐԹԱՅՔ, ՈՐՔ ԷՔ՝ ՅԷՐ ԴԻՆԴԻՄԵԱՆ՝ ԲԱՐՁՐ ՍԱՅՐԻՔ:
ՈՒՐ ՍՈՒՏ ՓՈՂՈՑ՝ ԴԱՓԵՐԱԶՆ՝ ՀՆՉԷՆ ԲԱՐԲԱՌՔ,
ԱՅԼ ԻՆԱՄԱՅԻ՝ ԲՄԲԻՒՆ ԴԱՐԻԱՅ՝ ԷՆ ԴԷՊԷՐԱՆՔ:

Ապա չափ ժուժկալութեն է հասարակաց 'ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆՆ: Որ ոչ հրաժարէ 'ի հեշտութեց, որք 'ի հասարակաց սովորութէ են մեղադրելի, է ձեռներեց, կամ ակար. բայց ակարն է նուազ անժուժկալ քան զձեռներէցն: Իսկ որ ոչ տանի տաղտկութեց, որք 'ի հասարակաց սովորութէ են տանելի, է ապաժոյժ կամ մեղկ. բայց մեղկն է առաւել անժուժկալ քան զապաժոյժն: Այն է առաւել անժուժկալ, որ 'ի փոքր հեշտութեց յաղթի. և այն է առաւել ժուժկալ, որ մեծաց հեշտութեց յաղթէ: Այն է առաւել ժուժաւոր, որ տոկայ մեծաց նեղութեց. և այն է առաւել մեղկ, որ խորշի 'ի փոքունց նեղութեց: Զի որ խորշի 'ի փոքունց, առաւել ևս խորշի 'ի մեծաց. և որ տանի մեծաց, առաւել ևս տանի փոքունց: Հուսկ ապա մարթիս եզրակացուցանել, թէ ոչ զժուժկալն ոչ է մարթ կոչել բացարձակապէս բարի. զի չունի ուղղութեն բաղձմանց. նոյնպէս զանժուժկալն ոչ է մարթ կոչել բացարձակապէս չար. զի

զի չունի թիւրութիւն գաւաման :

Իսկ արդ խնդրիցես : Եթէ առաքինութիւնք հաստատեալ են 'ի մէջ երկուց ծայրից. ո՞ր իցէ մէջն ծածկութեան : Եթէ ցայսվայր ոչ եղև զրոյց, բայց եթէ զմիոյ ևեթ ծայրէ, որ է՝ զանժուժկալութենէ, ապա ժուժկալութիւն ոչ է 'ի մէջն. ուստի և ոչ առաքինութիւն է, և ոչ կիսամանեայ առաքինութիւն: Պատասխանեմ, թէ՝ և ժուժկալութիւն ունի զիւր մէջն իբրև զբարեխառնութիւն: Արդ որպէս բարեխառնութիւն եդեալ կայ 'ի մէջ անբարեխառնութեան, և թմբրութեան. Նոյնպէս ժուժկալութիւն՝ եդեալ կայ 'ի մէջ անծածկութեան և թմբրութեան : Բայց քանզի թմրութիւն է մոլութիւն նուազագիւտ և անծանօթ, և անժուժկալութիւն ստէպ և յայտնի, ընդդէմ այսմ միայն բողոք ունին ամ դպրոցք և ամբիոնք :

Զնոյն է ասելի զանժուժկալութէ սուրբ չափաւորութէ, և զայլ ամ առաքելոց մասնաւոր առաքինութեանց. պահեալ միշտ զտարբերութիւն, որ 'ի մէջ կատարեալ առաքինութեանց՝ և կիսամանեայ առաքինութեանց, և 'ի մէջ կատարեալ մոլութեանց՝ և կիսամանեայ մոլութեանց.

# ՅԱՂԱԳՍ ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ

## առաքինութեան :

### ԳԼ. Ա.

Թէ զինչ իցէ առաքինութիւնն դիւցազնական :

Սաւասիկ քեզ առաքինութիւն, որ կարօղ է առնել զքեզ մեծ քան զամենայն մեծս, քաջ քան զքաջս, և 'ի մարդկանէ դիւցազն. (299) :

Յամենայն 'ի աշխարհական զարգս գտանի կարգ. և կարգն հաստատեալ կայ 'ի համեմատութեան մասանց՝

տանց՝ գերակայից, ստորնոց, և միջակայնոց : Ցիմացական կարգի գերակայ է ա՟ծ . ստորին՝ մ՟դս . և միջակային է հրեշտակն : Հրեշտակն բոլորովին է հոգի . բայց բաղադրեալ 'ի ներգործութենէ և 'ի կարողութենէ : Մարդն է բաղադրեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ : Ա՟ծ է հոգի ամենապարզ, անըստեղծ, անհուն . չէ միայն տիեզերաց, այլ 'ի վերոյ քան զտիեզերս . չէ ներառեալ 'ի կարգ, այլ 'ի վերոյ քան զկարգ :

Նախնի իմաստասէրք, յայն միջակային աստիճան 'ի մէջ ա՟յ և մարդոյ՝ ուր մեք դասեմք զհրեշտակ, դասեցին զդիւցազինն, փոքր քան զա՟ծ բնութեամբ, մեծ քան զմ՟դ առաքինութեամբ . ո՟պ մ՟դ որք ա՟ծեղէն, կամ ա՟ծ որք մարդկեղէն : Եւ այսպիսիս անուանեցին զհերակլէս, զաքիլլէս, զկաստոր և զպողիկեւոս . որք թէպէտ և մահկանացու էին, ստացան անուն անմահութեան քաջութեամբ (300) :

Արդ որովհետև մ՟դն է բաղադրեալ ինչ 'ի հոգւոյ և 'ի զգայութենէ, և միջակայրն 'ի մէջ դիւցազին՝ և անասնոյ, ունելով հասարակ ընդ դիւցազին զհոգի իմացական, և ը՟ անասնոյ զոգի ըզգայական : Վ՟սկ 'ի հաղորդիլ միջակայսն երկոցունց ծայրից, եթէ հաղորդի միում աւելի քան միւսում, նմանագոյն լինի միում քան միւսում : Ուստի և որչափ առաւել հեռանայ մարդ յանասնային զգայականութենէ, լինի առաւել նման դիւցազին . և որչափ առաւել հեռանայ 'ի դիւցազնական վեհմութենէ, լինի առաւել նման անասնոց :

Զնոյն համեմատութեն նկատելարժան է յառաքինութիւնս, տրոհեալ զայն յերիս աստիճանս, 'ի գերակայս, 'ի ստորինս, և 'ի միջակայսն : Առաքինութին միջակային հասարակ է բարի մարդոց, ո՟պ բարեխառնութիւն : Ստորինն է առաքինութին անկատր, ո՟պ ժուժկալութիւն : Իսկ գերակայն է առաքինութին գերակատար . կոչեցեալ դիւցազնական :

Զորին հակառակն, երեք են աստիճանք մոլութեան . չար . չարագոյն, և՛ չարագոյն : Միջակայինն է չարութ հասարակ մ՟դկային մոլութեանց . յորս զեղծ է բանն՝ և բազմանքն . ո՟պ անբարեխառնութիւնն : Փոքր մո_

մոլուն է այն. յորում զեղծ է բաղձանքն, այլ ոչ բանն. որպէս [illegible]: Եւս չարագոյն է այն, յորում յայն ապականութի հասանէ բանն և բաղձանքն, մինչև այլ չերևիլ մարդոյ՝ մարդ, այլ՝ վայրենի գազան. և այս կոչի [illegible]:

Արդ քանզի 'ի նախընթաց գիրս խօսեցաք զառաքինութեանց և զմոլութեանց միջակոյնոց, և 'ի սմին յայսմիկ՝ զառաքինութեանց և զմոլութեանց անկատարից, այլ ոչ մնայ մեզ, բայց խօսիլ զառաքինութենէ՝ որ գեր 'ի վերոյ է քան զամենայն առաքինութիւնս, և զմոլութենէ՝ որ անցանէ զանցանէ զամենայն մոլութեամբք:

Արդ ոչ այլ ինչ է բարոյական առաքինութիւն, բայց եթէ [illegible]: Յորմէ երևի լինել 'ի նմա յաւէտ աստուածեղէն իմն քան մարդկեղէն. որպէս ասէ Համերոս զերկրորդ Հեկտորէ:

[illegible]
[illegible]

Եւ ոչ 'ի միում միայն առաքինութեան գերապանծ է նա, այլ զամենայն առաքինութեամբք՝ է 'ի նմին տրամադրութեան: Զի նմա մեծ աշխատութիւն զհետ երթալ ամենայն առաքինութեանց քան միում միայնոյ. և ոչ խորշիլ յամենայն մոլութեանց, քան 'ի միոյ մոլութենէ միայնոյ: Զի այլ ամենայն առաքինութիւնք ունին սեպհական ինչ առարկայ. բայց ամենայն առարկայք այլոց առաքինութեանց են սեպհական առարկայ առաքինութեան դիւցազնականի. սակայն յաստիճան գերակոյ:

Բազում ինչ ընդ մէջ է մեծանձին և դիւցազին: Մեծանձնութիւն ունի սեպհական առարկայ՝ զմեծ պատիւ. և է մի միայն առաքինութիւն, ընկերելով նմա ամենայնի, բայց յաստիճանի միջակոյին առաքինութեանց: Դիւցազնութիւն է առաքինութիւն ինչ ընդհանուր իբրև առաքինութեան ամենայնին, որ զանցանէ զամենայնիւ առաքինութեան:

Առաջի առնեն Չիպիոնի յափրիկեան աւարէ օրիորդ մի քան զամենայն չքնաղ և ազնուական. յորժամ առաւ Կարթագինէ. և Չիպիոն անդէն անվթար առա-

ռաքէ զնա առ ծնօղս իւր ։ Պանծագոյն գտաւ անյաղթութի̅ 'ի կարթագինուհւոյն՝ քան յաղթութի̅ կարթագինեայ ։ Այս է ՏԻԿՆԱՅԻՆ ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ ։

Կալանաւորի 'ի պատերազմի ագեսիղայոս իշխան սպարտացւոց. և խժգժական կտտանօք տանջեալ յարքայէն պարսից. ոչ յոգւոց հանէ, ոչ յողոք խոնարհի. մինչև երևիլ թէ տանջեալն ոչ ագեսիղայոս իցէ, այլ՝ արձան ն̅ր. վ̅ն այսորիկ կարծիս 'ի մտի եդեալ թշնամւոյն թէ գերմարդկային ա̅ն իցէ, արձակէ յազատութի, զի մի 'ի գից զօք ունիցի 'ի կալանս ։ Այս է ՏԻԿՆԱՅԻՆ ԱՐԻՈՒԹԻՒՆ ։

Տուրնոս պարտեալ 'ի մենամարտի՝ մատուցանէ ենէասայ բաղում տաղանդս ոսկւոյ, զի շնորհեսցին նմա կեանք ։ Ենէաս՝ թէպէտ և 'ի կարօտելոց էր սակի, մերժէ զն̅մզգանձն, զի մի դժրևսցէ արդար վրէժխնդրութե̅ն բարեկամի իւրոյ պալլասայ ։ Այս է ՏԻԿՆԱՅԻՆ ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ ։

Յանդիման լինելն կամիլլոսի (501) ընտիր ընտիրքն ազնուական որդւոց փաղիսկեանց պաշարելոց, որք մատուցան նմա ո̅ղ պատանդք յաղթութե̅՝ մատնութ̅ իւրեանց դաստիարակի. նա տայ կապել զդաստիարակն, և գանակոծ արարեալ զնա ձեռամբ իւրոց աշակերտաց, նոքօք հանդերձ առաքէ անդրէն առ պաշարեալսն. վ̅ն զի սիրելի էր նմա յուշիկ յաղթութի իւրով քաջութ̅, քան զարատ յաղթութի մատնութ̅ ։ Այս է ՏԻԿՆԱՅԻՆ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ, որ յաղթեաց պաշարելոյն՝ առանց զինուց. զի այնուհետև երջանկութի անձանց համարեցան նոքա հարկատու լինել այնմ, որ գեր 'ի վերոյ թուէր քան զմ̅դ ։

Այս 'ի Ճշմարիտ գիւղաքն հաւաքի բարեխառնութի շիղինի, արիութի ագեսիղայոսի, զգաստութի ենէասայ, հաւատարմութի կամիլլոսի. և այս ա̅մ, որ զրանչելի առնէ զմ̅քաջազունս, միաբանի 'ի մի միայն գիւղաքն ։ Տես արդ, որպիսի առաքինութի լիցի ՏԻԿՆՈՒԹԻՒՆ ։

Թէ այդ̅ իցէ, ապա ՔԱՂՑՐԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆՆ է մալուի ինչ, որ յառաջուցանէ և զեղծանէ զզաստու̅

և

և զկնիս՝ ցայն վայր, որ յառաջագրեալ որպիսի և իցէ անձռունի և մեծեղեան առարկայի, մարդ զօրէն անասնոյ բնաւորապէս գրգռելոյ՝ անզուսպ յայն դիմէ. մինչև ճշմարիտ կերպարանափոխութ երևիլ նմա փոխակերպեալ 'ի գազան, իբր լիկայն 'ի գայլ. և ընկերք Ոդիսեայ 'ի գարշ անասունս. (302):

Նա՝ չիք յաշխարհի գազան աճաւոր և այլանդակ քան զմդ գազանաբարոյ: Զի իւրաքանչիւր մասնաւոր տեսակ անասնոց ունի ինչ մասնաւոր անբանութիւն անհաղորդական այլոյ տեսակի. այլ 'ի մդ անբանական՝ բնաւք միահաղոյն միաբանին: 'Ի նմա լինին միանգամայն առիւծուն խողի, հովազայութն գայլոյ, անգղոյն վագեր, ննջանն աղուեսու, բռնոյն վարազու, կոկորդոյթն շան: Իսկ արդ եթէ մդ, յոր տարրացեալ իցէ մի միայն մոլութի, չար է քան զանասուն յայնմ մոլութի, որպ ասէ Արիստոտել, զի թիւր կամաց 'ի վր գայ հնար մդկային. որպիսի գազան իցէ այն, յոր չեղջակուսին ամ մոլութիւնք:

## ԳԼ. Բ:

### Թէ որո՞վ օրինակաւ լինիցի հասանել յաստիճան դիւցազնական, և 'ի գազանաբարոյութիւն:

Աստուածն 'ի մդ է առաքինութի, այլ յոյժ է կատարելութին՝ անբաւութ առաւելեալ քան զառաքինութի. որ և կոչի ածային: Թերութիւն 'ի մարդ է մոլութի, բայց յանբանս է որակութի յոյժ յոյժ, վն լինելոյ նց անընդունակ ամ բանի. և վն այնորիկ կոչի անբանութիւն:

Ապա զորօրինակ այն ամ որ խառնի 'ի մէջս, դիմէ 'ի ծայր, և 'ի նմանէ առնու անուն, այնպէս առաքինութին՝ յանցանել իւրում քան զսովորականն մդկային առաքինութեց, երևի բաժանորդ լինել ածայնոյն. և մոլութին՝ յանցանել իւրում քան զսովորականն մդկային մոլութեց, երևի բաժանորդ լինել գազանականին, որպ արդ լուար: Բայց ո՛չ առաքինութ և ո՛չ մոլութ մդկայնոյ՝ հնար

է

է թէ անցանիցեն յայսոսիկ ծայրս 'ի մի վայրկեան։ Ոչ որ լինի յանկարծակի բարի կամ չար, և ոչ որ յանկարծակի 'ի բարւոյ լինի եւս բարեգոյն, կամ 'ի չարէ եւս չարագոյն, անհնար գոլով անցանել ծագէ 'ի ծագ՝ առանց ը̄ մէջն անցանելոյ։

Երեք են մէջք, ը̄ որս լինի ժամանել յառաքինութիւն դիւցազնական, կամ 'ի գազանաբարոյութիւն։ Առաջինն է ԲԱՐՔՆ։ Երկբայական է թէ որ զօրագոյն իցէ, վիճակ ծննդեան, թէ սովորոյթ սննդեան։ Բայց ստուգութիւն՝ երկաքանչիւրն ունին բուռն զօրութիւն յանկուցանելոյ զմիտս 'ի մեծամեծ մոլութիւնս, կամ 'ի մեծամեծ առաքինութիւնս. Այս՝ երևի երբեմն, զի 'ի կրպակէ բրտի 'ի վեր երևի դիւցազն սիրակուսացի (որպէս եղև Ագաթոկղէս զգօն արքայ սիրակուսացւոց, որոյ հայրն էր բրուտ), և յընտիր ընտիր հռովմայեցի դիւցազանց 'ի վեր երևին կայսերք անասնաբարոյք. (որպիսի գտաւ ներոն, և այլք նմանողք նմին)։ Բայց դէպք են հրէշք կերպարանեալք յայլ պատճառաց, զորոց առասցի առաջև։

Չէ ինչ բնաւոր, թէ 'ի հաստաբեստ կաղնոյ բուսցի դիւրաբեկ մոշայ. և ոչ 'ի կաղամբոյ ամբառնայ արմաւենի։ Զարմին պեղոպեայ ուսք էին փղոսկրեայ. զարմին Թեսէոսի՝ դէմք արծուային. և զենտուղեանց պխակոտ էին մորթք։ Եթէ նիշք մարմնոյ անցանեն 'ի զաւակս, ապա և նիշք ոգւոյ։ 'Ի ԴԻՒՑԱԶԱՆՑ ԾՆԱՆԻՆ ԴԻՒՑԱԶՈՒՆՔ, 'Ի ԳԱԶԱՆԱՑ ԳԱԶԱՆՔ։ Թո՛ղ զի՝ ո՞չ այլուր առասցաւ, ոչինչ պատուէր, ոչինչ ուսումն, ոչինչ օրէնք այնպէս խոր տպաւորին, ո՞չ օրինակն հայրենի։ Այս օրէնք են, որք աւանդին գործովք, ուսեալ լինին աչօք, գրին 'ի սրտի. և որդիականն հնազանդութիւն միապէս արգոյս յորդորէ զուսուցիչն, և զուսումն։ Այլ և ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ, և ՀԱՅՐԵՆԻ ՕԴ՝ միանգամայն ազդեն առ առաւելուլ դիւցազնական կամ անասնական բարոյից։ Կիմմերացիք, որոց կէս տարւոյն է գիշեր, և կէս արշալոյս, կրեն զիւրեանց խաւար 'ի միտս։ Սարմատացիք ծնեալք յապառաժուտս՝ արգաւանդաբերս երկաթոյ քան կերակ.

բաւերոյ, զապառաժն 'ի սիրտ արկեալ, և զերկաթն 'ի ձեռս առեալ, որ զօրագոյնն է՝ կեայ յաւարէ տկարին: Մարդակերք, որպէս անուանն իսկ ցուցանէ, վասն զի մարդկան միս է՛նոցա կերակուր, շամփրով և պատառմամբ որսայեալ զօտարս յան-տառս, յայն մարդկեղէն որսոց միայն սնանին, ա-ռաւել գազանացեալք 'ի թաղել զնոսա՝ քան 'ի սպանանել:

Զայրն հակառակն՝ նախնի եգիպտացիք, թե-բէացիք և հռովմայեցիք համարեալ զմարդկութեան ընդհանուր ինչ ազգակցութե, կարծէին նախա-տինս դնել ածութե գինոյ վաճառալի, եթէ ա-ռնէին ոչ ցուցանէին զանձինս կրօնաւորս, և մար-դասէրս: Զհասակն առացից. այնպիսի են մարդիկ, որպիսի են այնք, զ՛ որս կենցաղին. զի ամ որ ա-մաչէ չնմանիլ իւրում նմանւոյ:

Երկրորդ պատճառն է պատերազմական ինչ քաջազօրութիւն բնաւորապէս կամ 'ի վերնախնամ տեսչութէ 'ի վր ելեալ իմացական կմ զգայական կարողութէ:

(303). Դիւցազնն ամբաստէս, այո քաջայաղթ բայց դժնդակ, դրդուեալ 'ի հայրենի ուրուական-նէն սպանանել զծնօղեալ մայրն, այլ 'ի մայրենի ուրուականէն դիւադնեալ, որ և փախչէր՝ թը-ուէր նմա թէ բանադրօսի յեւմենիդեայ ջահիւք և օձիւք՝ սպանանել զմարդիկ, և ուտել զիւր մար-մին. Այլ 'ի լոկոյ ախտանէ վասն յետնեալ հա-մարելոյ 'ի յունաց քան զայլս 'ի կագել իւ-րում 'ի վր զինուց աքիլլեսի, այնպիսեաւ հարաւ-սրտացութե և գազանային կատաղութե, մինչ զի 'ի կոտորել և 'ի պատառատել համակ զան-դեայս, կարծէր հանել զվրէժ քինու 'ի յունաց: Եւ զայրն հակառակն՝ սքանչելի իմն ազգէ ա-դիւցազնական գործս՝ Նախանձայուզութիւն մեծանուն դիւցազանց: Վզի լոկ երևակայութե յաղթական հանդիսից միլտիադեայ ոչ թողացուցանէր 'ի քուն լինիլ քաջամարտ հետևողաց. (304):

Այլ զօրագոյն զարթուցիչք են երկնային ոգեշնչու-թիւնք, զորս բաշխէ ած իւրոց սիրելեաց: Վզի հե-թանոսք իսկ պաշտօն մատուցանէին յունաց չաս

իբր աստղոյն խոհական խորհրդոյ. և Քաղդեայ ընծայէին զնոր գիտութիւնս, հերձելի զհանճարաւոր արուեստս, և ուշելի զգիւտազնական ձեռնարկս. որք իրօք ոչ այլ ինչ էին, բայց երկնային օգնականութիւն Ճշմարտի Աստուծոյ:

Բայց հերկ և բնաւորական պատճառ գիւտազնական տարբերութեան, և յետամնաց անբանութեան, հաստատեալ է 'ի Հօրէն տարբերական կամ մասնական ունակութեանց: 'Ի դուզնաքեայ սկսուածոյ լինին հասանել 'ի մեծամեծ աւելազանցութիւնս: Յորդախաղաց հասանք սկսանին երբեմն 'ի կաթուածոյ. և անշէջ հրայրեացք՝ 'ի կայծէ:

Այլ ունակութի ունի որոշ ինչ սկիզբն. բայց ոչ որոշ ինչ աւարտ, գիտէ ոք՝ թէ երբ սկսանի, բայց ոչ գիտէ՝ ուր յանկ ելանէ: Մի ներգործունի է արմատ տրամադրութե. 'ի տրամադրութէ բողբոջէ ունակութի. և ունակութի արձակէ բղջատաւելիս իւր աւելի քան զոմ նշանակեալ վայր: Որպէս ախտեան չունի վերջ աճման, այլ ցորչափ անանի, աճէ. սոյնպէս ունակութիւն չունելով աւարտ դադարման՝ միշտ միտէ 'ի նոր ներգործութիւս. և ամ ներգործութի առաւելու զունակութի, մինչև տարբերութե և չարութե մեծիլ ընդ անբաւութե:

Մի միայն լոկ հաճութի մէկ երբեմն զսիրտ անմեղ՝ յանկանելով իմն անհամեստութի: Մի միայն վայրկենական սկարութի հրապուրէ զցանկութի 'ի համանման ներգործութիւնս: Յաճախումն ներգործութեանց անկարգացուցեալ զկիրս՝ լինի անժուժկալութի: Անժուժկալութիւն խաւարեցուցեալ զմիտս՝ հասուցանէ յանբարեխառնութիւն: Եւ անբարեխառնութիւն անցեալ զանցեալ զսահմանօք մարդկային վիճակի, խարդաւանէ 'ի վէհ ազգապղծութէս, և անասնական եղեռնութէս. և որ 'ի սկզբանն եղև ազատութիւն, հաւակ ապա լինի հարկադրութի:

Այսպէս ընդ աստիճանս՝ 'ի միոյ լոկոյ ներգործութենէ՝ տարբերական յառաջատուութե, և պանչելի աճելութե բարեբաստօրէն հասին 'ի գագաթ գիւ-

գիւցազնական և ծայրային առաքինութեան, թէ ոչ քսենոկրատեսք, սոկրատեսք, և կատոնք 'ի հեթանոսաց, այո՛ պախոմեոսք, բենեդիկտոսք, և փրանկիսկոսք, և այլ քրիստոնեայք քաջազունք. որք բարոյական առաքինութեանց 'ի վերայ յաւելին գերբնական ունակութիւնս, հանապազորդ հոսմամբ երկնային շնորհաց. որ ոչ պակասէ երբեք, որոց խնդրենն զնա 'ի սրտէ:

## Բարոյական իմաստասիրութեան

# ԳԻՐՔ Գ. ԵՐՐՈՐԴ:

### Յաղագս բարեկամութեան. որ է առ ի սիրելութեան. (305):

### ԳԼ. Ա:

### Յաղագս սիրելութեան առ հասարակ:

Սէրն է այն ոք յօդակապ, որ 'ի խառնիխուռն վհէ՝ զատուցեալ զհակառակամարտս 'ի միմեանց, ընդ նման առ նման ըմբռնեալ. և յանկերպարան ձուլոյ կերպարանեաց զգեղեցիկ կազմութիւն աշխարհաց. (306):

Սա յանշնչականս պահէ զէութիւն. 'ի կենդանականս զընկերութիւն. և 'ի բանականս զառաքինութիւն: Յանշնչականս է սէր փոխադարձ, այլ չծանուցեալ: 'ի զգայականս է փոխադարձ և ծանուցեալ, բայց կանոնաւորեալ 'ի զգայութէ: 'ի բանաւորս է ծանուցեալ և փոխադարձ, բայց կանոնաւորեալ 'ի բանէ: Վասն այսորիկ առ ընտրելագոյն ցուցանելոյ զգործս՝ փոխելով զանուանս, յանշնչականս է կոչի համակրութիւն. 'ի զգայականս է բնաւոր ողորմութիւն. և 'ի բանաւորս է կամաւոր սիրելութիւն, (որ կոչի 'ի մեզ

մեզ սեպհական անուամբ Բարեխառնութիւն)։

Այս ազնուագոյնն 'ի մարդկային կիրս է Սէր. և ազնուագոյն պտուղ սիրոյ է Բարեխառնութիւնն. որ թէպէտև է Անկատար առաքինութիւն, իբրև զժուժկալութիւնն. բայց և այնպէս՝ իբրև զի է յոյժ գեղեցիկ, և յոյժ պիտանի քաղաքական կենաց, և մարդկային երջանկութեան, արժանի համարեցան իմաստասէրք և զսա ևս դասել ընդ Բարոյական առաքինութիւնս։

Իսկ արդարև զինչ կայցէ ածայնագոյն յերկրի քան զկատարեալ բարեկամութիւն, 'ի հաղորդել այս անձանց մահկանացուաց՝ զայն որ ազնուագոյնն է 'ի նմա և երանական, այսինքն է զմիութիւն 'ի բազմութեան։ Զինչ ազնուագոյն կայցէ՝ քան զլինել երկուց մի, և ունելով երկուքանչիւրոց զիւր սիրտ՝ կեալ 'ի սիրտ միմեանց։ Երկուքանչիւրքն ունին երկու ոգի. կամ և ոչ մի. զի կեան միմեանց ոգւով, և ոչ իւրեանցայնով։ Զինչ զուարճագոյն, բայց հաստատակաց տանել զկեանս բարւոյ իրերաց։ Վնկ ոմ ջերմ շառաւիղք արեգական անդրէն ցոլացեալք յերկուց հայելեաց 'ի նոյն՝ տաւելուն զնոցա ջերմութիւն, նոյնպէս 'ի փայլել երկուքանչիւրոց 'ի բարիս միմեանց՝ սքանչելապէս տաւելուն 'ի նոսա փայլեալք։

## ԳԼ. Բ.

### Պատճառ Բարեխառնութեան, կամ Ախորժելութեան։

'Ի ՆԵՐՀԱԿՈՒԹԵԱՆ ԾՆԱՆԻ ատելութի, և 'Ի ՆՄԱՆՈՒԹԵԱՆ ծնանի սէր. որպէս մարթիս իմանալ մակածութ յամ գոյացութեանց անուանելոց անշնչական, զգայական և բանական։

Սքանչելի սէր յանշնչական մարմինս՝ է սէրն մագնեսի միմ ընդ երկաթոյ (307). որ ապշեցուցանէ զքեզ, թէ զիարդ մագնիսն գեղջուկ սիրուհի՝ բուռն յափշտակէ զսիրեցեալն երկաթ. կամ երկաթն եռանդագին սիրող՝ տենչայ 'ի հետամտել զսիրեցեալն տարփոյ, անդէն 'ի նա յառի, անփետուր ը՛ օդս սլանայ, և անբաղձուկ գիրկս

գիրկս արկանէ։ Արանչելիք են ընծայեալք յիմաստասիրաց Նմանոսէ բնաւոր խառնուածոյ տարերաց և տարրականաց, կարգելոյ առ պաշտանութեն մարմնոյ. իբր զի մագնիսն է երկաթ քարշելոյ, և երկաթն մագնիս մատաղական։ Վն և ը մարմնոյ մակացեալ՝ երկպատկեն զիւրեանց ոյժ, և հաղորդեն մարմնոց զիւրեանց զօրութեն. մագնիսն երկաթանոյ, և երկաթն մագնիսանոյ։ Բայց զարին հակառակն՝ թէ առմառուցանես զառ երկաթոյ այլ մագնիս, որոյ խառնուած հակառակ իցէ իւրոյն, տեսցես զայն բռնամարտիկ մնալ երկխուզիւ յետս ընկրկիլ, և թիկունս ընդդէմ դարձուցեալ նախատանօք 'ի փախուստ դառնալ։

Հայեաց և 'ի փոքունս աշխարհս. ո՞րպ արմաւենին առ արմաւենի խայտայ, և դարձուցեալ 'ի մարմնոյ զազդարթաչարդ դէմս՝ փոփոխ գրկախառնութբ արմատոց զանխուլ զմարմնոյ ողջագուրեն. և որ էինն անուշակ ծնունդք՝ գան 'ի մայրութիւն. և թէ մին կարի, միւսն սանեալ ողկուզօք և տխուր զալկութբ թօշնի և ցամաքայ։

Հայեաց զարին հակառակն յորթն, որ քան զա՞մ տունկս է արդասաւոր և զուարթարար. բայց թէ զդոյ մօտ իւր զկաղամբ, որոյ տերևքն և ցուրտ է հիւթ, իբր արհամարհանօք և ցաւօք՝ դարձուցեալ զխիղբս և զարմատս յայլ կողմն, խորշի յաւելի երեսաց նր, թող թէ 'ի շօշափմանէ։ Իսկ թէ ոչ բառնան յերեսաց նր զիւր թշնամի, կամ 'ի ցաւոց և կամ 'ի կատաղունն ծիւրեալ հաշի։

Իսկ արդ՝ եթէ բնական սիրով այնպէս վառին գոյացութիւնք անզգայք, մինչև երևիլ գործովք, և ո՞չ թէ լսելի լինիլ հեծութենց նոցա. ո՞րչափ ևս սատարիկ զգայլեն զփայտունք։

Ո՞վ ոչ տեսանէ, ո՞րպ նոյնատեսակ անասունք՝ համաձայնեալք 'ի խորագիտութեան հնարս՝ ընկերական ազդմամբ սիրեն զմիմեանս, ընկերակցելով ձեռնտու լեալ միմեանց 'ի գործս իւրեանց։ Այսպիսի է գործակցութի մեղուաց 'ի քաղաքականս, մրջ-

մրջմանց 'ի անտեսականս, և ամ չորքոտանեաց և թեւաւորաց 'ի սնունդ զաւակաց՝ և 'ի փոյթ որսոց, 'ի մաքրաբել է թշնամիս՝ և 'ի խաղալ է մեմեանս սիրողապէս. և ոչ պակասի նոցա բարբառ 'ի կոչել զիրեարս, և 'ի յայտնել միմեանց զսէր իւրեանց:

Եւ զաւրէն հակառակն՝ ո՛վ ոչ տեսանէ, քանի՛ գժնէութիւ գարշին խորշին 'ի կենակցութէ անասնոց. որոց օտար է խառնուած և բոյս բարուց: և թէպէտև չիցեն յառաջածանօթ և նախատես, կամ երկիւղիւ 'ի նոցանէ փախչին, կամ ատելութի զնն հալածեն. մնալով ոխութն նց և երկիւղի՝ եւ և յետ մահու: Վ͞նկ փետուրք արծուոյ յափշտակողի ունեն (նեռաձգութի) զփետուրս ագռաւուց անմեղի. և աղեք գառինն անմեղի որբեալ և տողեալ 'ի լար քնարի է աղես յափշտակող գայլոյ՝ ոչ երբեք միաբանին 'ի ձայնարձակութե, յայտնի նշանակ գոլով անմիաբանութե:

Արդ՝ քանզի 'ի վերագոյն կարգի միանան կատարելութիւք ստորագաս կարգի, վասն այսորիկ 'ի կենդանիս [illegible] [illegible] միանայ է [illegible] [illegible]. ուստի և 'ի մարդիկ՝ որ գերագոյնն են յառաքինս, միանան [illegible] [illegible], [illegible] [illegible], և [illegible] [illegible]:

Սէր [illegible] և [illegible] եղև պղծեալ ստորատոսին և հիպոկրիտեայն. (308): Ծնեալ սոցա յաշխարհ 'ի միևնոյն օր, 'ի նմին կղիմայի ընդ նովին համաստեղութի, համանման խառնուածով, գիմօք, հանձարով և բախտիւ, զառաջինն 'ի տեսանել զմիմեանս, սիրաք նոցա գաղանի կապանօք սերտ կապեցան ընդ միմեանս. և ա՛յ 'ի միասին ծնան, նոյնպէս 'ի միասին կեցին, 'ի միասին հիւանդացան, և 'ի միասին մեռան. որպէս թէ մի միայն հոգի յերկուս մարմինս էր արարեալ մնաս և եւ:

Եւ՝ 'ի մարդիկ և [illegible] [illegible] [illegible], բայց բանաւորագոյն քան զմեզուայն, հիմնեալ 'ի նմա[illegible] համարուեստութեան կամ քաղաքային իրագործութեց, յարեալ յարմարեալ այնց զինչս և զու-

զուշիմութն, 'ի ձգել անձն զհասարակաց օգուտ:
Այսպիսի եղև երդմնակուռ բարեկամութիւն Թէ-
սէոսի և Պերիթոսի (309), մի փոխեն նիզակակ-
ցութիւն 'ի ձեռնարկս պատերազմի, առ սատա-
րել պարծանս և ինքնակալութիւնս: Վ̃կ որ ոք զմի
'ի նոցանէ ունէր իւր թշնամի, երկուս ունէր
ոխերիմ թշնամիս, կամ մի թշնամի երկգլխի՝ և
քառաբազուկ. որ և էր օրինակ դաշնաւորութեց
երկրաւոր իշխանաց:

Այսպիսի եղև բարեկամութիւն Դամոնի և Պիւ-
թեայ (310), որք ետուն զանձինս 'ի ձիգն հա-
սարակաց իմաստից, 'ի դպրոցի Պիւթագորայ.
օգնելով միմեանց յուսումն իմաստից իբրև յըն-
թերցասիրաց շահավաճառի: Այսպիսի է և բա-
րեկամութիւն արուեստաւորաց և վաճառականաց,
որք կոչին միմեանց ընկերք, և սիրելիք զի յօգտէ
անձն ծնանի սէր:

Բայց ոչ սիրելութին համակրական՝ հարկ է մարդոյ
և անշնչական իրաց, և սիրելութին ընկերական՝
հարկ է մղայ և անասնոց. սոյնպէս սիրելութիւն ազ-
նուական մարդոյ (այն է սիրապէս բարեկամութիւն). հաս-
տատեալ է 'ի նմանութեան բարի վարուց:

Գաղափար այսր բարեկամական սիրոյ 'ի մէջ հե-
թանոսաց՝ եղև բարեկամութիւն երկուց աղնուա-
կան թեբէացւոց պեղոպիդայ և եպամինոնդայ.
որք յերկարաւոր փորձիւ ծանուցեալ ներքուստ
զառաքինութիւն իրերաց, կապեցան ընդ միմեանս
անքակ սիրով բարեկամութեան մինչ 'ի մահ: Տեսին
'ի միմեանս մեծ խոհեմութիւն, սիրելի ծանրութիւն,
պարկեշտ պատկառութիւն, անկաշառ արդարութիւն, դիւ-
ցազնական արիութիւն սրտի. և 'ի վեր քան զամ՝ ե-
ռանդագին սէր առ հայրենիս, յոյր վերայ բռնա-
նային սպարտացիք: Այսպ հաստատուն բարեկամու-
թիւն էր, ոչ պատիւ, ոչ ճոխութիւն, ոչ իւրեանց
օգուտ, ոչ յընկերութիւն. այլ սէր առաքինութեան.
մինչ զի 'ի միաբանիլ իւրեանց 'ի վախճանն, այլ
ոչ էր հնար նոցա բացաձայնիլ:

Երկաքանչիւրն մարտնչէին, այլ ոչ գիմամրցանա-
կաւ. ուրախ էին 'ի յաղթութիւն միմեանց, զի ուր

է

է սէր. անդ չէր նախանձ. և ուր չէր նախանձ, զուարճալի է այլոյ առաքինութիւն իբրև զիւրն: Եւ զի սէրն արարեալ էր յերկուց անձանց մի միայն անձն՝ փոխանակերպեալ զմին 'ի միւս, 'ի յաղթանակել միայն՝ յաղթանակէին երկոքին իսկ. և երկոցունց նոյն յաղթանակէր սէրն:

Այս նմանութիւն է մայր սիրելութեան կամ բարեկամութեան. ուստի առած է հնոյց, կրկնեալ յարիստոտէլէ, և առեալ 'ի համբաւական գարերայէ: ՆՄԱՆՈՅՆ ԱՌ ԻՒՐ ՆՄԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴԷ ԽՆԱՄ ՎԵՐՆԱԿԱՆ: Որ և ասացեալն պղատոնի, զոր յառաջ բերէ կատոնն կրասեր. ՊԻՏԱՌԱԿԻ ԻՄՆ ՆՄԱՆԻ, ՀԱՍԱԿԱԿԻՑ ԸՆԴ ՀԱՍԱԿԱԿՑԻ:

## ԳԼ. Գ.

### ՅԱՂԱԳՍ ՍԻՐՈՅ ՑԱՆԿՈՒԹԵԱՆ, Ի ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ:

Թէ Նարկիսեայ տեսեալ զինքն յականակիտ աղբեր՝ հարաւ 'ի սէր իւր, չեղեն ինչ զարմանք. զի սիրոյ ակն յանգիտման ունելով զատարկայ սիրելի, և յազդել 'ի նա բորբոքմանն՝ որ բիւրուց ազդէր յաւերժահարսանց, չէր նա խաբեալ յիւրոց աչաց, այլ միայն 'ի կարծեաց՝ թէ ոչ իւր իցէ, որ իւրն էր:

Մեծ ևս զարմանք այն եղեն, զի ակկա նեխեալ և զարշատեսիլ պառաւ, (յիշելով զգեղ մանկութեան իւրոյ) կարծեալ զինքն ոչ անիղ միայն, այլ և չնաշխարհիկ տեսուհի գեղոյ. այն ինչ ականէր 'ի հայելւոջ յանկերպ իւր կերպարան, ոչ կապարիչս ընդ բագին խանդակաթեալ կաթողնէր, գիրկս արկանէր, և յիմարէր, իւր ինքեան լեալ նախանձախնդիր տարփածու, ոչ զոք ունելով տարփակից:

Այս է աւելազանցութիւն ԻՆՔՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ, որ 'ի տեսչութեան տպաւորեցաւ յոգի 'ի պահպանութիւն անհատի: Բայց թէ չէ չափաւորեալ 'ի բանէ, լինի վնասակար սիրողին, և ծաղածանակ՝ տեսողաց, իբրև զանմիտն ակկա, և զհրապուրեալն Նարկիս:

Ոչ այլ ինչ է ինքնասիրութիւն, բայց իւրական ցանկութիւն, առաւել այլ ամ մարդկային բաղձանաց. որ է հետամուտ լինել իւրոց բարեաց, և խորշել ցաւոց չարեաց. վայելել 'ի բարին՝ զոր ունի, և ցանկալ վասն բարեաց՝ զոր չունի։ Եւ այս զգալի բարեաց՝ ունի դադար 'ի ստորին բաղձանս, և զիմանալի բարեաց՝ 'ի վերին բաղձանս։ Բայց քանզի նոյն ինքն [illegible] արար զմարդն ընկերական, հաստեաց 'ի նա միւս ևս ազդեցութիւն, հաղորդել այլոց զինչս իւր։

Ըղձալի է առատաձեռին հաղորդել այլոց զիւր ինչս, և ուսումնականին՝ զիւր ուսմունս։ Ըղձալի է հոգւոյ փոխարկել յայլս զիւր խոկմունս, և զսէր իւր։ Ա՛մ ծաղիկ ծնունդ իմն է սերման. և սերմն՝ ծնունդ այսր ծաղկի։ Ծնանի սէրն յանհատ ոք. և տարածի յայլ անհատ 'ի ձեռն կամաց։ Ոչ ոք շատանայ՝ կամելով բարի իւր ինքեան, թէ ոչ կամի բարի այլում իւրականի։ Ա՛յն է սէր միայն 'ի ներքս. այս է սէր զեղուն առ արտաքս, այն է սէր ցանկութեան. այս է բարեյօժարութեան։

Բայց դեռ ամուլ է այս սէր բարեյօժարութեան առ սիրեցեալն, թէ ոչ արտածէ 'ի սիրեցեալն փոխադարձ սէր առ սիրողն, որ յերկուց սիրողաց առնէ երկուս սիրելի բարեկամս։ Սկիզբն բարեյօժարութեան է սէրն իւրական, բայց ոչ է բարեյօժարութիւն։ Սկիզբն բարեկամութեան է բարեյօժարութիւն, բայց ոչ է բարեկամութիւն։ Ա՛մ բարեկամ է բարեյօժար, բայց ոչ ամ բարեյօժար է բարեկամ։

Թէպէտ աչք են հաւատարիմ առաջնորդք սիրոյ. բայց և այնպէս զսէր բարեյօժարութեան մարթ է խմանալ և ականջօք. զի շատ է համբաւն առաքինութեան 'ի ծնանել զսէր առ անծանօթն՝ 'ի միվայրկեան. Բայց սէրն բարեկամութեան ծնունդ է ժողի, որ վասն զի է երկայնակեաց, երկար ժամանակ պիտի նմա 'ի ծնանել։ Յոյժ կեղեւապատ և խորածոց են ոգիք մարդկան. չէ հնար խելամուտ լինել կամ ճանաչել, բայց եթէ ուշեղ հետազօտու-

տութիւնք, երկար ընտանութիւնք, և պատշաճով փորձիւ: Զանասունս իսկ՝ և զտունկս մարթ է սիրել սիրով բարեյօժարութեան, բայց ոչ սիրով բարեկամութեան. զի ոչ փոխարէն սիրեն զսիրողն: Սոյն սիրով պաշտեցեալ և զարդարեալ 'ի քնքշանս, այնչափ անզգայ էր առ այն սէր, որչափ սիրողն եղև անմիտ: Գիւղական այնչափ սիրէր զիւր երիվար, մինչև մեռ մարդոյ ջամբէր նմա. և փոխանակ այոր իւրն եղև նր կուր: Սիրեցեալ էր զրաստն, այլ ոչ սիրէր. կամ թէ սիրէր զմիս մն իւրոյ, և ոչ թէ զանէրն:

Բարեկամանէն թուի սիրելուէն շան, որ 'ի գգուել խրում գգուէ, 'ի շողոմիլն շողոմէ, սիրեցեալ՝ փոխարէն սիրէ զանէրն, բայց քանզի այն է լոկ կիրք, և անարժան զգայական, ոչ ընտրողական, և ոչ բանական, կոչի սիրելութիւն, և ոչ բարեկամութիւն: Սիրէ՝ զի բարերարութիւն գտցէ. ոչ եթէ փոխարէն սիրէ, վասն զի է սիրեցեալ:

Զէ բարեկամութիւն, եթէ սիրեցեալն ոչ ճանաչէ զսէր սիրողին, և ոչ փոխարէն սիրէ ընտրութեամբ: Այսպէս երեքկին է սէր. ծագեալն 'ի ներքս, արտաքոյ յայտնի, և փոխադարձ: Սէր ինքնական, սէր բարեացակամութեան, և սէր բարեկամութեան:

Ստոյգ իմն է, թէ որ սիրէ՝ արժան է թէ սիրեսցի. բայց և այնպէս՝ սիրել զի փոխարէն սիրեսցի, է առաւել սէր ցանկութեան քան բարեկամութեան. և ևս առաւել, եթէ սիրէ նա՝ առ ընդունելոյ զօգուտ կամ զբերկրութին: Որ բարերարէ, արժան է թէ բարերարութիւն ընկալցի. բայց որ բարերարէ առ ընդունելոյ զբարերարութիւն, ոչ է բարերար, այլ բարերարութեանց վաճառող: Նոյնպէս որ սիրէ առ ընդունելոյ զսէր, ոչ է բարեկամ սիրելի, այլ սիրոյ վաճառող. ոչ սիրէ զբարեկամն, այլ զանձն իւր: Վնկ սէր ցանկութեան ոչ պարտաւորէ առ փոխադարձ սէր. զի փոխարէն այնր սիրոյ ունի 'ի վարձ զբերկրութիւնն կամ զշահն:

## ԳԼ. Դ.

## Տեսակք բարեկամութեան :

Երեք են սիրելի առարկայք. օգտակար, բերկրական, և համեստ: Բարիք բախտի են օգտակարք, բարիք մարմնոյ են բերկրականք, և բարիք հոգւոյ են համեստք. որպէս այլուր ասացաք:

Օգտակարք չեն սիրելիք ըստ ինքեանց, այլ ըստ պատահման. ըստ այնմ որ արբանեկեն 'ի ստացութի բերկրականաց կամ համեստից: Բերկրականք՝ են սիրելիք ըստ ինքեանց՝ բնութեն զգայականի ըստ պատահման այլայլելոյ: Համեստք են սիրելիք ըստ ինքեանց՝ բնութեանն բանաւորի և կատարելոյ: Մինչ զի ըստ կարգի տեւչութե օգտակարք մարմնականք են կարգեալք առ բերկրականս. և բերկրականքն առ համեստս. զի արտաքինքն արբանեկեն մարմնոյ, և մարմինն ոգւոյ:

Այս երեք են տեսակք բարեկամութեան. օգտակար, բերկրական, և համեստ. զի ունակութիւնք 'ի ներգործութեց, և ներգործութիւնք յառարկայից առնուն տարբերութիւն: Յորմէ մարթիս ճանաչել, թէ այս երեք տեսակք բարեկամութե ոչ բաժանեն զսեռն միաչափապէս, այլ համեմատօրէն. վասն զի երից սիրելի առարկայից մի քան զմի առաւելագոյն զօրով, սիրելութեդ կամ բարեկամութեդ անուն գլխաւորապէս և յատկապէս պատշաճի համեստին. ապա բերկրականին, հուսկ ապա օգտակարին. մինչ զի համեստն՝ էապէս, իսկ օգտակարն և հեշտականն՝ միայն նմանական ինչ փոխաբերութբ՝ են սիրելութիք, կամ բարեկամութիք:

Վնկ բարեկամութին՝ որոյ առարկայ է օգուտն, որ 'ի խորհրդակցութիս և 'ի վաճառական ընկերութիս, քանզի չէ հիմնեալ 'ի հաստատուն և 'ի ներքին առաքինութի, այլ յարտաքին և 'ի պատահական օգտախնդրութիս, 'ի փոխել սոցա՝ փոխի. և յոլովակի բարեկամութին 'ի թշնամութի շրջի, և ընկերութին մարդկային յընկերութիւն գազանային:

'Ի

'ի համեմատական երրորդապետութե՛ լեպիդոսի՝ անտոնիոսի և հոկտաւիանոսի՝ այնչափ տևեաց բարեկամութին ն՟ց, ցորչափ տևեաց յոյս բաժանելոյ 'ի մէջ իւրեանց զհամեմատականն ինքնակալութի՝ կործանմամբ բրուտոսի և կասսիոսի: Բայց իբրև կործանեցան երկոքին սոքա, և բաժանեցաւ ինքնակալութիւն, բաժանեցին և երրորդապետք ըզբարեկամութիւն: Վ՟ս զի իւրաքանչիւրոյ անձուկ ունելով բոլորին, միաբանեցան անտոնիոս և հոկտաւիանոս 'ի մերժել զլեպիդոս յիւրմէ բաժնէ. ապա ամբարձաւ անտոնիոս 'ի մերժել և զհոկտաւիանոս յիւրական մասնէ. բայց 'ի զօրանալ քան զնա հոկտաւիանոսի քաջութ՟բ կմ՟ բերմամբ բախտի, նա միայն մնաց միահեծան (311). և այլ ոչ պիտոյացան նմա [illegible]. զի անձնեքին եղեն նմա [illegible]: Այս վախճան [illegible] [illegible]:

Ձե ինչ համառօտ քան զայս՝ [illegible] [illegible]: Հեշտութիւն՝ (ըստ վարդու եւ լուսոր), է արտաքագոյն 'ի մարդկային կիրս, և յառուկ է կրից լինել առօրեայ. և այնչափ անկայուն, որչափ են արտաքագոյն: Վ՟ս զի բավանդակ են անբանաւոր շարժմունք, որք 'ի մայրկենի փոփոխին. որչափ առաւել են բուռն, նոյնչափ կարճառև: Յիրաւի հեշտական սէրն նկարագրեցաւ [illegible] [illegible], անբան գոլով քան զայս, և թեթև քան զխուր փետուրս. զիրաց 'ի ձեռին ունելով 'ի ցողնոյ, որ շոյս վառի՝ և վաղ շիջանի: Տեւէ սէրն հեշտական, ցորչափ տեւէ հեշտութիւն: Թ-է առաւրց շրջան և կամ խօթութի փոխէ յերեսս ըզծաղկեալ գարուն յեղեմնապատ ձեռն, կամ գեղեցիկ ինչ գեղք 'ի գեղեցկագոյն ինչ զխմաց սանոս խաւարումն, սիրելին լինի ատելի, և ոչ յառաջին էր հաճոյական, բերէ զզուանս: Խրատացի և ոչ ծանր ինչ եղև արատւնջ արխանեայ սա թեռեաս, և գեանիրայ սա հերակլէս. որք քաջքն էին 'ի շահատակութեա, այլ յաղթողք 'ի սէր. զի յերևիլ նորոյ գեղոյ՝ խղէին զհաւատարմութեն կայս սա աււջինն, վ՟յ շահատակէին որպ [illegible],

և

և սիրելին ում հեշտասէրք։

Մեծ են զարմանք այն եղեն, զի պերիանդրոս մի յեօթանց իմաստասիրացն յունաց՝ իբրև հարաւ 'ի սէր փրինեայ օտարուհւոյ ումեմն կնոջ, թշնամացաւ մելիսեայ իւրում զուգակցի. կտրեալ սրով զկապ ամուսնութեան և զկենաց նորա. (512)։ Բայց սէր այն իմաստնոյ չէր արժանացեալ յիմաստութե, այլ 'ի բերկրանսն։ Շատ գիտէր, բայց չէր գիտուն, թող թէ իմաստուն. զի Ճշմարիտ իմաստունն ոչ սիրէ վասն հեշտութեան, այլ վասն առաքինութեան։ Ուստի այն իմաստունք լաւ են գիտելին ուսուցանել, քան առնել։

Ապա չէ Ճշմարիտ բարեկամութիւն ոչ օգտակարն, և ոչ հեշտականն. զի և ոչ մին հայի 'ի բարին բարեկամին, այլ յիւրական բարին. ուստի սէր է ցանկութեան, և ոչ թէ բարեխառնութեան։ Այս Ճշմարիտ և կատարեալ բարեկամութիւն է միայն առաքինականն՝ հիմնեալ յառաքինութե. որպիսի եղև Եպամինոնդայն և Պելոպիդայն, որպէս ասացաւ։

Չէր ինչ յաշխարհի կայուն և հաստատուն քան զառարկայ առաքինութեան, համակերպութիւն իմն գոլով որ է ուղիղ բանի, որ է յաւիտենական և անփոփոխ օրինաց ածային մտաց։ Ապա անյեղլի և անփոփոխ է լաւ ինքեան բարեկամութիւն առաքինական. զի առարկայն չէ փոփոխելի. և անձնն ոչ սիրէ զիրս, այլ առաքինութիւն։

Բայց թէպէտ Ճշմարիտ բարեկամութիւն ոչ սիրէ վն օգտի, և ոչ վն բերկրութե, այլ վն առաքինութեան, սակայն և այնպէս հանդերձ գոլով հարկիւ է և օգտակար և բերկրական։ Թէ բերկրութիւն է ամ ումեք՝ տեսանել 'ի հայելւոջ զպատկեր իւրոյ դիմաց, յորժամ դէմքն են զուարթ և գեղեցիկ, քանի բերկրութիւն իցէ առաքինի սիրողի, յորժամ փողփողելով տեսանիցէ յառաքինի բարեկամին իւր սիրելի զպատկեր իւրոյ առաքինութեանն, և իւրոյ բարի կերպոյ։ Իսկ եթէ փոխադարձ իցէ սէրն, քանի առաւելու բերկրութիւնն. իբր զի ցոլմամբ սիրոյ 'ի միմեանս, երկաքանչիւրն վայելէ 'ի վայելս յիւրականս և 'ի բարեկամին։

Թող

Թող զի զինչ օգտակարագոյն կայցէ երկաքան-
չիւր վիճակի՝ քան զբարեկամ ոք հաւատարիմ,
մերթ խորհրդատուութբ յիրողութիս, և մերթ
ձեռնտուութբ 'ի վիշտս: Ոչինչ ընկերուն շահա-
վաճառի երկպատկէ զգլուխ գրամոյ, որպէս Ճշմա-
րիտ բարեկամութին. զի 'ի տալ զսէր իւր փոխա-
րէն. տանիս՝ որչափ ինչ ունի սիրելի բարե-
կամն, տանեն կորուսանելոյ զիւրն. իբր զի 'ի սի-
րելի բարեկամաց միջի նմն է հասարակաց. որպ
և լուիցես:

Յառաջելոց աստի մարթ է քաղել, թէ հատակ
սեպհական Ճշմարտի բարեկամութեն է հատակն
ՄԻՋԱԿԱՅԻՆ: Աշխոյժ երիտասարդ՝ ուժգնակի յու-
զեալ 'ի կրից, սիրէ վս հեշտութե: Ծեր ակար՝
որում բազում օգնականութեան պէտք են, սիրէ
վս օգտի: Միջակայինն. յոր ցածուցեալ են կիրք,
բայց ոյժն դեռ չէ թօշնեալ, սիրէ վասն համես-
տութե: Երիտասարդն կարէ լինել դիւրահաւան՝
հաւատայ ամենայն սիրելեաց իբրև բարեկամաց:
Ծերն կարէ լինել կասկածոտ՝ յամէ անու կա-
կած: Միջակայինն զմէջն ունելով զերկուց ծայ-
րից, գտանէ ըստ Ճշմարտութե, և սիրէ ը դատ-
ման:

## ԳԼ: Ե:

### ԳՈՐԾՔ ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵՆ:

Երեք են գործք Ճշմարիտ բարեկամութե. այս-
ինքն. ԲԱՐԵՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ. ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ, և ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ:
Բարեյօժարութին՝ որ և ասի բարեհաճութե, է
սոսկ շարժումն ինչ կամաց, որ ըղձանայ ումեք
բարի. բայց առանց կամելոյ առնել նմա բարի:
Թէ դէպ լիցի քեզ տեսանել հանդէս ինչ զինա-
շարժութե. կամ զուարճալի ինչ շահատակութե
երկուց ասպետաց՝ զորս չիցէ երբեք քո տեսեալ.
ընտրութեամբ յանձին զգաս յանկարծակի լինել և
մեկողմանի միտումն 'ի յաղթութե սորա քան նր.
բայց վս այդր չշարժիս մատուցանել նց օգնութե:
Այս՝ բարի կամք է այն՝ պատճառեալ 'ի բնա-
ւոր

ւոր համակրութէ կամ 'ի յանկարծ կրից · բայց է սէր բարեյօժարութեն, և ոչ թէ ցանկութեն · զի ըղձանաս նմա բարի՝ վն օգտի նր, և ոչ վասն օգտի քո ։ Սակայն ցայտնայր է այն գործ ներքին և ամուլ · զի ոչ ծնանի գործ ինչ արտաքին առ սիրեցեալն ։

Ոչ կարէ լինել բարեկամ, որ ոչն է բարեյօժար · բայց որ էն բարեյօժար, ոչ վն այդր է իսկևիսկ բարեկամ։ Եւ թէև սոսկ սէրն բարեյօժարութեն լինէր փոխադարձ, անմարթ էր կոչել զնա բարեկամութի Ճշմարիտ, այլ՝ այլաբանական և անգործ · սկիզբն բարեկամութեն, այլ ոչ բարեկամութի ։

Արդ առաջին գործ բարեկամութե՝ է կամիլ բարի բարեկամին · ըղձանալ, զի կեցցէ նա, և կեցցէ զուարթագին · խնդակցել բարեբաստութեց նր, և կարեկցել դժբախտութեց ։ Բայց ծաղրական է այս Բարեկամութիւն, թէ ոչ ձեռն կարկառեսցէ Բարերարութեան ։

Չէ կամք գործադրիչ այն՝ որ կամի զայլոյ բարի, բայց ոչ գուն գործէ՝ թէ հասցէ այնմ։ Որ ոչ ըղձանայ օգնել, ոչ սիրէ · բայց որ կարող է օգնել՝ և չօգնէ, ոչ ըղձանայ օգնել։ Սէրս Ճանաչի 'ի գործոյ, որպէս առողջութին 'ի զարկէ բազկի։ Ծիծաղեցաւ գիտս 'ի վերայ հերկագործին, որ ուխտս դնէր, զի սայլ իւր ելցէ 'ի տղմոյ՝ յոր խրեալն էր · և ինքն չարկանէր ձեռն 'ի գործ ։ Այնչափ արժէ բարեկամն՝ որ չօգնէ, որչափ թշնամին՝ որ չվնասէ ։

Բարերարութի և անիրաւութիւն են երկու ներհակք ։ Անիրաւութին քակէ զբարեկամութի, և բարերարութին ածէ ։ Այո՝ սիրել առ ընդունելոյ զբարերարութի, ոչ է սէր բարեկամութեն · բայց սիրել վնկ՝ զի ընկալաւ զբարերարութիւն, գեղեցիկ սկիզբն է բարեկամութեն ։ Այս բարերարութիք յառաջ են արարքք, և այս սնունդք բարեկամութեն · զի ամ մարմինք որով իւիք բաղադրին, նովին և պահին ։

Այլ ո՛չ ամ բարերարութի՝ է բարերարութի, թէ

չէ

չէ հանճար։ Բարեբարութիւն երբեմն է չարաբարութի. զի 'ի հաճոյանալ բարեկամին՝ մնա առնէ բարեկամութեն, և առնէ զնա չար ևս քան զթշնամուն։ Էին սերտ բարեկամք հաստիքիս և սկաւրաս. բայց 'ի խնդրել սկաւրաւի 'ի հաստիքինէ անիրաւ ինչ, նա չէառ յանձն։ Խառնեցաւ սկաւրաս ընդ մեծութիւն. ասէ. ՂԷ՞ ՊԷՏԷ ԲՆՋ ՔԱՐԷԿԱՄՈՒԹԷ. ԲԷ ԼԸՆՏՈՒՆԷՄ ԲՆԼ 'Ի ՔԷՆ ՔԱՐԷԲԱՐՈՒԹԷ. Էր հաստիքիս ևս պատասխանի. ՂԷ՞ ՊԷՏԷ ԲՆՋ ՔԱՐԷԿԱՄՈՒԹԷ. ԲԷ ՃԱՅ ԲՆՋ ԷՕ ՔԱ ԱՆԷՐԱՈՒԲԼ։ Էր անդէն փախճանեաց զբարեկամութիւն։ Սէրն երեկ զաղեղն, և չէջոյց զշահն։ Գեղեցիկ ևս եղև պատասխանին պերիկլեայ. բայց ոչ նոյնպէս գեղեցիկ հետեւութին։ Խնդրեաց աղաչել զնա մի 'ի բարեկամաց իւրոց՝ 'ի շնորհս բարեկամութե երդնուլ սուտ՝ 'ի նպաստ իւր. և նա ետ պատասխանի. ՔԱՐԷԿԱՄ ԲՆԶՆ ՉՈՒԷԶԱՆԱ. կամիմ (ասէ) զի լիցուք բարեկամք, բայց մինչ 'ի մր սեղանս։ Սովոր էին հնդիկայքս երդուազ գնել զձեռն 'ի վր սեղանոյ։ Վս այսորիկ առաւել ևս յիշատակաց արժանի եղև իւրն պատասխանին՝ քան զհաստիքիսին. բայց սա ոչ անդէն վաղվաղակի կարեաց իւրև զհաստիքիս՝ զամօթականն բարեկամութե։

Ճշմարիտ յօդ բարեկամութե ոչ է այն. որ միդէ զսէր ոք բարեկամ. և սուտ բարեկամ է այն, որ 'ի պէտս բարեբարութե՝ պահանջէ առնել ինչ սեղանակապտութե։ Բարեկամութիւն լինէր այն՝ ԸՆ ասից կատարելի. ոչ ՔԱՀԷԼԻ. այլ ԲԱՐԷԼԻ։

Ի ՔԱՐԷԿԱՄՈՒԹԵ կցորդելոյ ընդ ՔԱՐԷԲԱՐՈՒԹԵ՝ ծնանի ՓԱՔԱՆՈՒԹԵ կամ ՓԱՌԱՒՈՐԹԵ. որ ոչ այլ ինչ է, բայց միուն երկուց սրտից։ Սիրտ մարդկային (որ վազու ևս լաւար) է խչնան անդամոց, սկիզբն կենդական շարժմանց, գործարան կրից, և աթոռնիք սիրոյ։ Յերկուց քնարաց միարանելոց 'ի նոյն ձայնադաշնակութի՝ թէ մտի ոք (մատամբ) 'ի միոն, միւսն իւրովի միաձայնի։ Որ ինչ են 'ի քնարն լարք, այն են 'ի սիրտս՝ նոյին սիրտք։

Վս այսորիկ՝ թէ երկու ճշմարիտ բարեկամք յետ ժամոց ինչ պատահեն միմեանց, յանկարծակւոյ լինիլ

նիլ նոցա՝ երկոցուն սիրոյ բարախառնելով զխմն 'ի միմեանս, և 'ի Թարգման իւրեանց փոփոխ ախորժակաց՝ ընկերեկ ձայն արձակեն 'ի լեզու, ջերմաջերմ ոգիս յերեսս, քաղցր արտասուս յաչս, անոյշ ժպիտ 'ի բերանն. և գործական զրկախառնութե՛ լանջակցել՝ զսիրտ ընդ սիրտ միաւորեն

ըստ մարթելոյ ։

Այսպէս 'ի հաղորդիլ սրտից ընդ միմեանս 'ի ճշմարիտ բարեկամս, փոփոխակի հաւասարորդ լինին և խորհուրդք նց և կամք. զայն կամիցելով, զոր միւսն կամի, և այնմ հաւանելով՝ որում միւսն է հաւան. անմարթ գոլով մտաց նոցա լինել տարաձայն, որոց սիրան է միաձայն։ Յայսմանէ ծագէ ծայրագոյնն այն սրտի գիւր՝ 'ի կենցաղիլ նոցա 'ի միասին, և յականել 'ի միմեանց ոգիս ե աչս՝ որք պատուհանքն են սրտի. որ և լեալ միմեանց տեսարան՝ պչուցելով հային 'ի գեղեցիկ արարս իրերաց։ Յայսմանէ ծնանին և այն ծանր անձկութք՝ 'ի մեկնիլ նոցա 'ի միմեանց, զի բաժանին սիրտ 'ի սրտէ։ Այն 'ի հեռաստանէ խօսակցութք՝ առաքմամբ խորհրդոց փակելոց 'ի նամակի։ Այն աղեկտուր կսկիծ 'ի մահու անբակ սիրելւոյն. մինչև մղիլ երբեմն կենդանւոյն 'ի փայտակոյս մեռելոյն յոյլութն. կամիցելով մանաւանդ մեռանել ընդ նմա՝ քան կեալ առանց նորա, և իբրև զամիանտեանն կապերտ՝ առաւելուլ բոցով զփայլիւն իւրոյ մտերմութե. (313)։ Իւ զինչ զարմանք իցեն. զի գոլով 'ի նոսա մի միայն սիրտ, մի միայն կամք, և մի միայն միտք, եր ՅԵՐԿՈՒՍ ՄԱՐՄԻՆՍ ՄԻ ՄԻԱՅՆ

ՀՈԳԻ։

Մայր դարեհի խաբեալ 'ի չքեղ հանդերձից հեփեստիոնի, նմա մատոյց մեծարանս փոխանակ աղեքսանդրի. և 'ի լինել նր 'ի չքմեղս վն սխալանացն, ասէ աղեքսանդր. ՈՉ ՍԽԱԼԵՑԵՐ ՄԱՅՐ. ԶԻ Է ՍԱ ԵՒ։ Սքանչելի է սէր, և Թովիչ հզօր. որ առարատի իմն՝ այլ ճշգրիտ ոգեփոխութե զայս ոք յայն ոք փոխարկէ, և յերկոցունցն առնէ մի։

Այսպէս ոչ ատեցին առաջի բանաւորի՝ այն անսանի ախտք սիրելի բարեկամաց պխաղագես և ով-

րեստէս․ Երբ վասն մեռանելոյ փոխանակ մի-մեանց․ Պիւղադէս ասանէր՝ թէ է Որեստէս, և Որեստէս՝ թէ է Պիւղադէս։ Զառոյգն ասէին ՚ի առուժն անդ․ Որեստէս կենդանի էր ՚ի Պիւղադէս, և Պիւղադէս յՈրեստէս․ ՚ի սպանանել բռնաւորին զմին՝ սպանանէր զմիւսն․ և ՚ի սպանանել զերկուսին՝ սպանանէր զմի ոք․ նա՝ և ոչ զմի ոք․ զի համբաւ սքանչելի սիրոյն արար զնս անմահս․ (314)։

## ԳԼ. Զ։

### ԱՐԴԵՕՔ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ԻՑԷ՞ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ. ԵՒ ԹԷ ՈՐՊԻՍԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԻՑԷ։

Անարժան են որոշման անուան առաքինութեան՝ բարեկամութիւնք, որք հային ՚ի հեշտութիւն և յօգուտ զգայական. զի չափաւորան ՚ի կամաց համեստութե, այլ՝ անկեալ գնին ՚ի սորին սահման ցանկութե, որ հասարակ է և անբանից։

Բայց սիրել զոք՝ վն լինելոյ նր առաքինի, է ներգործութի առաքինական բարեյօժարութե, վն ունելոյ նորա եղբ զառաքինութիւն։ Եթէ սիրես դու զարին Լեոնիդաս՝ վն լինելոյ նր արի, լինի ներգործութի ինչ բնաւորական, որ վերածի յարիութիւն. Եթէ զքաջախոհն Կատոն՝ ըստ քաջախոհ, վերաբերի ՚ի քաջախոհութիւն. Եթէ զԱտտիկոս ճշմարտախօսն, ՚ի ճշմարտախօսութի. Եթէ զՔսենոկրատէս պարկեշտն, ՚ի պարկեշտութի. զի այնպիսի է ներգործութիւնն, որպիսի է առարկայն։ Թէ այս ներգործութիւնք լինիցին սակս, ծնանին ունակութիւն բնաւորականս և առաքինականս համատեսակս. զի այնպիսի է ունակութիւն, որպիսի է ներգործութիւն։

Բայց այս առաքինական բարեյօժարութի չէ առաքինական բարեկամութի, եթէ ոչ է փոխադարձ։ Պղիմասոս առաքինասէր դրագէտ, այնչափ համբաւ ՚ի սէր մեծամեծ առաքինութեանց արքային կղուկնեայ՝ զորոյ լուեալ էր զհամբաւ. մինչև եւ ՚ի փարիզէ՝ երթալ հասանել սէր բարեկամութե

ընդ

ընդ այնպիսում առաքինական առաջնորդի: Իսկ որքայն՝ որ ոչ ճանաչէր զնա, ը̃ տեսանելն կարծեաց թէ գեղջուկ ոք իցէ, այնպէս սաստիկ հակակրութիւն կալաւ առ նա, մինչև (զոր չէր երբեք արարեալ այլում.) զդուրս ը̃գէմ փակել նմա, զի մի տեսցէ զնա: Երկարանչիւրն էին առաքինիք. բայց արիմաստս սիրէր զարքայն, և էր ատեցեալ 'ի նմանէ. իսկ արքայն ատեայր զարիմաստս, և էր սիրեցեալ 'ի նմանէ: Մին էր բաղեղն, որ սիրէ զկնձնի. և միւսն կնձնի, որ ատեայ զբաղեղն: Բայց երբև ծանեաւ արքայն զառաքինութիւն արիմաստսի, եղև սէրն փոխադարձ և մեծ. և այնգեցին ընդ միմեանս բարեկամութիւն առաքինական և նշանաւոր:

Այս սեպհական է Բարեկամութեան՝ յաւելուլ 'ի վ̃ր լոկոյ առաքինութեան զդժուարագիւտ ինչ և զգերազանցիկ որակ. զի է Գերաբարեկամութիւն, Է սա առաքինութիւն ինչ ծագեալ յերկուց առաքինութեց. ո̃ր յանդրէն ցոլմանէ նշուլից ծնանի ջերմութիւն, նոյնպէս 'ի միաւորութէ առաքինական գործոց երկուց սիրողաց ծնանի սէր: 'Ի փոխադարձ ատելութէ բորբոքի թշնամութիւն. և 'ի փոխադարձ սիրոյ բարեկամութիւն:

Այս առաքինութիւն բարեկամութեան հաստատեալ է 'ի Քաղաքականութեան առաքինական սիրոյ. ո̃ր փոխանակութիւն և անդրէն փոխանակութիւն 'ի քաղաքական ընկերութիւնս: Սէրն է հարուստ ինչ գլուխ գրամոյ տուեալ մարդկան յերկնից. զոր մարթ է նոցա 'ի գործ արկանել 'ի բարի կա̃ 'ի չար. է՝ որ պարգևէ. է՝ որ ը̃վայր հարկանէ. է՝ որ վաճառէ, և է՝ որ վատնէ 'ի անտախս. է որ յանտառակս, և է՝ որ 'ի համեստս. և այնպիսի է սէրն, որպիսի է պատաղումն:

Բայց արդ՝ ո̃ր Ճշմարիտ Բարեկամութիւնն է իբրև փոխ ինչ և լուելեայն դաշն 'ի մէջ երկուց առաքինեաց և հաւատարից՝ սիրելոյ և փոխարէն սիրելոյ զմիմեանս վ̃ս առաքինութեց իւրեանց՝ ը̃ հաւասարութեան, այնպէս հայի նա յառաքինութիւն արդարութեան, որ առարկայ է հաւասարութիւն 'ի տուր-

եառս

ւստս և 'ի դաշինս: Ոչինչ կարող է քակել զբա- րեկամութիւն. բայց միայն ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ. և ոչինչ կարող է պահել զնա, բայց միայն ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ: Այսպէս լուար, թէ արդարութիւնն է հաստա- տուն ինչ կամք տալոյ այլում հաւասարութ(եամբ) զիւր պարտս, և բարեկամութիւն ևս է կամք, որ հայի 'ի բարին այլոց՝ և ոչ յիւրն, ը̅ արդեանց: Վ̅նզ ոչ այլ ինչ է ԱՒԵԼԻ ՀԱՒԱՍԱՐԱԿԱՆ, բայց կամել բարի բարեկամին վ̅ս իւրոյ առաքինութեան: Բայց յար- դարութեան բաւական է առնչական կամք միայն առ- միւսն. և 'ի բարեկամութեան երկու են կամք առըն- չակիցք:

Ճշմարիտ է, թէ առաքինութիւն հաճոյականութեան, զորմէ խօսեցաք, ունի ինչ նմանութիւն ընդ բարե- կամութեան. բայց այն է առաքինութեան տարբեր յոյժ: Գիտաւորութիւնն է, որ տարբերէ զներ- գործութիւնս և զունակութիւնս մարդկայինս: Հա- ճոյականութիւն յորդորի հաճոյանալ ամ̅ մարդկան. զի այսպէս պահանջէ մարդկութիւն՝ և քաղաքական կենցաղավարութիւն: Բայց բարեկամութիւն յոր- դորի փոխարէն սիրել զբարեկամն, զի արդարու- թիւնն բարեկամական այդպէս պահանջէ: Ամե- նայն մարդ քաղաքավար՝ ևս և առ թշնամին 'ի կիր արկանէ զքաղաքավարութիւն և զհաճոյականութիւն, այլ ոչ զբարեկամութիւն.

Բայց քանզի բարեկամութիւն է առ̅ ինչ ԲԱ- ՐՈՅԱԿԱՆ՝ և ոչ քաղաքական, և չափ հաւասարու- թեան չէ ֆիզիքական, այլ՝ բարոյական, վ̅նզ ոչ է նա կատարեալ արդարութիւն: Իսկ յայս սակս ասացաք, թէ բարեկամութիւն չէ կատարեալ ա- ռաքինութիւն: Ոչ է նա արդարութիւն օրինական համեմատութեան, այլ՝ արդարութիւն բարոյական հա- մեմատութեան. բայց այնչափ կանոնաւորեալ 'ի բա- նէն՝ սկզբամբք օրինական արդարութեան, և այն- չափ գեղեցիկ և օգտակար մարդկային կենաց, մինչև բազում իմաստունք 'ի փիլիսոփայից ը̅ ա- ռաքինութիւնս դասեցան:

Երկու են տեսակք արդարութեան. առ̅ լուար յիւ- րում տեղւոջ. ՓՈԽԱՐԻՆԱԿԱՆ և ՏՐԱՄԱԲԱՇԽԱԿԱՆ: Իւ-

կր-

երկու են տեսակք բարեկամութեան. թուաբանական, որ չափէ զքանակ իրին՝ զոր պարտի որ. համեմատականն, որ չափէ զորակ անձին՝ որում պարտի որ: Այն է բարեկամութիւն հաւասարութեան. որ տայ հաւասար ընդ հաւասարի: Այս է անհաւասարութեան, որ տայ զհամեմատականն ընդ համեմատականի:

Զերկաքանչիւրոցն արժան է խօսիլ:

## Գլ. Ի:

## Յաղագս բարեխառնութեան հաւասարականի:

Նման հիմն օրինական արդարութեան փոխարկնականի է փոխադարձ տուժն հատուցմանեան. այսինքն՝ զի խորտակողին տայ ընկալցի զոր արար՝ ըստ հաւասարին: Սոյն սա է հիմն բարեկամութեան հաւասարականի. զի տայցէ ով ծախարէն տէրէոցի, որ- ւոյ տէրէ: Այս հաւասարութիւն է հարկաւոր 'ի մի- ձոյ անձանց՝ որք սիրեն. 'ի տանոյ սիրոյն՝ որով սիրեն. և յորոյ բարեացն՝ զոր երկաքանչիւր սի- րողք ընձեռեն միմեանց:

Բայց թէև 'ի փոխարկնական հաւասարութեան մա- սին՝ բարեկամութիւնն նման է օրինական արդա- րութեան, սակայն այլազգ է նա յեղանակ փոխարկ- նելոյն: Արդարութիւն փոխարկնական ենթադրէ զանհաւասարութիւն 'ի մէջ պարտապանին, և պարտա- տեառն. և ածէ զայն 'ի հաւասարութիւն: Ենթա- դրէ, թէ տխախոս ունի առ սեպուհ զկէս գնոց կալուածոյ իւրոյ, և տալով նմ վճարել զայն կեան՝ հաւասարէ զպարտն առնելեաց: Բայց բարեկա- մութիւն փոխարկնական ենթադրէ զհաւասարութիւն արդեանց 'ի մէջ սիրողին և սիրեցելոյն, և ըստ հա- ւասար արդեանց՝ հաւասարէ զփոխադարձ ներգոր- ծութիւնս բարեյօժարութեան և բարերարութեան և միա- բանութեան:

Վն այսորիկ Ճշմարիտ և կատարեալ բարեկամու- թիւն է հիմնեալ (որպ լսւար) 'ի նմանութիւն առաքի- նութեան. զի առաքինութիւն հաւասար՝ հաւասարէ զարդիւնս. և հաւասար արդեանց համեմատի հաւասար սէր, և հաւասար գործք. և այս է

ար-

արդարութիւն ինչ, որ տայ իւրաքանչիւրում, զոր պարտն է:

Բայց և ճշմարիտ է, թէ 'ի կատարեալ բարեկամութիւն փոխարինականի ըստ նմանութեան տարբերութեան պահանջի և հաւասարութեան անձանց, զի արդիւնք երկաքանչիւր կողման իցեն հաւասարք: Նաև լուն արդիւնք տարբերութիւն ըստ առաւելութեան արժանապատուութեան անձին: Ապա եթէ կրտսերն 'ի փոխարինել զսէր երիցուն պահէ ըղ հաւասարութիւն անձանց, այնուհետև ոչ լինի բարեկամութիւն փոխարինական, որ հայի 'ի բացարձակ հաւասարութիւն, այլ լինի բարեկամութիւն տրամաբաշխական, որ հայի 'ի հաւասարութիւն համեմատական. ուստի և ոչ լինի կատարեալ բարեկամութիւն, որ և լուծցի:

Բայց առաւել ընդդէմ գտանի մեծ ամն փիլիսոփայ, ասելով թէ ճշմարիտ բարեկամութիւն ոչ ծնանի 'ի նմանութենէ. այլ 'ի ներհակութենէ: Ո՞չ տեսանէք' ասէ եմպեդոկլէս, որպէս երկիր պապակեալ 'ի ծարաւոյ' սիրէ զզով անձրևաց. և մարմին տարապայեալ 'ի ցրտոյ սիրէ զջերմ շոգի ջերմուկի. ապա ներհականն սիրէ զներհակն: Ո՞չ տեսանէք, որպէս գիտնաւորք անմիաբան ազանդովք սրեն զլեզուս ընդդէմ միմեանց, և զգրիչս խայթիչս. և արուեստաւոր արուեստաւորի նախանձ բերէ, և ոխակալէ: Ապա 'ի նմանութենէ ծնանի ատելութիւն, և ոչ թէ սէր:

Իմաստուն' յանմտաց, այլ անմիտ յիմաստնոց համարեցաւ այս խնդիր: Նա որ ասելի է' (որպէս այլուր նշանակեցաք), թէ յորժամ ենթակայ ինչ գտանի քաջ տրամադրեալ յիւրում պատշաճական և բնաւոր վիճակի, բնաւորաբար սիրէ զիւր նմանն, կամ վասն պահպանութեան, և կամ վասն կենակցութեան: Բայց թէ է այլայլեալ, և արտաքոյ իւրում պատշաճական վիճակի, սիրէ ըստ պատահման զիւր ներհակն. զի դարձցի անդրէն յիւր բնաւոր խառնուած: Ախտք ցուրտք բժշկին ջերմային դեղօք, և ջերմք' ցրտայնովք, զի դիմամարտելով ծագի ընդ ծագ' դարձցի առողջութիւն, որ հաստատեալն է

է 'ի միջասահմանութեան։ Մինչ զի նմանն բնաւորապէս սիրէ զիւր նմանն. և ըստ դարաձման սիրէ զիւր ներհակն։ Ուստի և 'ի նմանութենէ ծնանի բարեկամութիւն բնաւորական. և թշնամութիւն ըստ դարաձման։

Երկու ամոլք գերյորջորջակ պատկերահանաց, պրոտոգենէս ընդ ապեղեսի, և տավրոս ընդ բակտրակոյ, եղեն յարուեստի և 'ի բարեկամութեան անբաժ ընկերք։ Եպիկուրոս և Մետրոդորոս փիլիսոփայք, գամոն և պիւթիաս աշակերտակիցք՝ եղեն օրինակ բարեկամութեան ըստ նմանութեան։

Նա՛ ոչ միայն նմանութիւն առաքինական գործոյ՝ այլ և մոլեկանաց՝ պատճառէ զբարեկամութիւնս։ Բարեկամութիւն տատարայ և նումենիոսի՝ այնպէս սերտ, մինչև լինել յառակս, էր հիմնեալ 'ի նմանութեան արուեստի գողութեան. որպէս և սիմոնին և նիկոնին յարուեստ սակրդմութեան. (3:5)։ Այս նմանութիւն արուեստի եթէ ազատական, և եթէ մեքենական՝ ըստ ինքեան բնաւորապէս ծնանի զսէր։ Բայց քանզի յոլովակի պատահէ, զի արուեստաւոր ոք կամ ճարտարութեամբ նուազէ զմիւսս, և կամ մատուորութեամբ նուազէ զշահավաճառ այլոյ, նախանձ, ատելութիւն և թշնամութիւն չեն բնաւոր գործ նմանութեան արուեստին, այլ մոլեկան դէպք արուեստաւորաց։

Բայց տատանօր մեր զրոյցք չեն զսիրոյ նմանութեան, այլ զայնմանէ ևեթ, որ համաստեալն է յառաքինութեան։ Արդ այս է ը̅ ինքեան սիրելի, և անլծորդելի ընդ նախանձու և ը̅ փառամոլութեան. զի առաքինութիւն է անլծորդ ընդ ամենայն մոլութեան։

## Գ.Լ. Ը։

### Յաղագս բարեխառնութեան անհաւասարականի։

Ըստ հայեցողութեան ընդհանուր բնութեան՝ այլե՛ր ամ մարդկան լինել հաւասար յառաքինութեան, յիմաստութեան, 'ի բախտի, և 'ի վիճակի. զի չունելով ոչ երկիւղ և ոչ պիտոյս 'ի միմեանց՝ հաւասա-

սրբութիւն պահեսցէ զսէր, և սէրն զխաղաղութիւն:
Եւ այսպիսի եղև թերևս բնաւոր վիճակն յայնմ բարեբաստ՝ բայց վաղանցիկ՝ ոսկեղէն դարուն, մինչև զեղքն երկոքին ԻՄ և ՔՈ՝ խորտակմամբ դրանց սանդարամետից, 'ի վեր բղխեցուցեալ էին զյոր-ձանս անմիաբանութեան:

Բայց քանզի մասնաւոր բնութիւն՝ կամ առ ստակասութեան նիւթոյ, և կամ առ 'ի պէտս նիւթոյ առաքինութեան ոչ կարէ հաւասարաչափ առնել զամենեսին իմաստունս, և ոչ զամենեսին առողջս, և ոչ զամենեսին մեծատունս, և ոչ զամենեսին Թագաւորս, խնամ կալաւ՝ զի ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆՆ ԱՆՀԱՒԱՍԱՐԱԿԱՆ, ԿԱՄ ՍԻՐԵԼՈՒԹԵԱՆ ԱՆՀԱՒԱՍԱՐ, առաւելութիւն միոյն լցուսցէ զպակասութիւն միւսոյն՝ համեմատութեամբ:

Վասնզի հիւանդն սիրէ զբժիշկ՝ որպէս զիւր բնեական սատող. աղքատն զմեծատունն՝ որպէս զիւր ապաստան. տղդքաւորն զիմաստունն՝ որպէս իւր փաստաբան. հպատակն զիշխանաւորն՝ որպէս իւր պաշտպան: Բայց այս է սէր ՇԱՀԱԿՑՈՒԹԵԱՆ, և ոչ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ: Եւ լոկ առնչութիւն չունեորին առ ունեորն, առանց առնչակցութեան սիրոյ ունեորին առ չունեորն: Որ սէր վերադարձի յինքն՝ (որպէս լուար), այնպիսին ոչ սիրէ զայլս, այլ զինքն: Թող զի ոչ գոլով անդանոր հաւասարութիւն 'ի մէջ ունեորի և չունեորի, անհնար է թէ լինիցի անդ ճշմարիտ սէր բարեկամութեան: Ապա՝ ԱՆՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆՆ է թոյն սիրոյ:

Այո՛ հնար է. թէ անգեղեայն Գղաւկոս սիրեսցէ զհրաշագեղն Ներեա. բայց ոչ է հնար Ներեայ փոխարէն սիրել զանգեղեայն Գղաւկոս (316): Գեղեցկութիւն չափազանց՝ է միշտ ամբարտաւան. պաշտեցուցանէ զինքն, և անդոսնէ զնոսա. կամի զի պաշտեսցի, և ոչ թէ սիրեսցի. և ինքն ոչ սիրէ, այլ բռնակալէ:

Չէ ճշմարիտ բարեկամութիւն ասէր Սողոն, 'ի մէջ սոսկականի և 'ի մէջ Թագաւորի. զի Թագաւորն կարող է առնել ընդ բարեկամն՝ զոր ինչ առնէ խաղարկուն զքուէայս, արժեցուցեալ զնոսա ըստ կամս

կամս իւր՝ երբեմն դահճական մի, և երբեմն լո-
մոյ ։

Այնչափ առաւելուն արդիւնք առաքինութեն, որչափ առաւելու արժանապատուութեան անյին, ոչ տացաւ ։ Զի թէպէտ ներքին արժանաւորութեան առաքինութեն նոյն է յիշխան ոք, և 'ի ժողովրդական, բայց և այնպէս՝ ի արտաքին արժանաւորութէ, որ յաչս ռամկաց առնու փայլուն յանձնէ, առաքինութեն մեծագի է յիշխան ոք, քան 'ի ժողովրդական ։ Թէ սիրելի է նա 'ի ժողովրդականն, խնկելի է յիշխանն ։ Այսպէս պարտ և պատշաճ է վերածել զայս անհաւասարութեն 'ի հաւասարութի. զի սէրն առանձնական ծնցի զանձնականն. և լոկ սէրն փախեսցի 'ի բարեկամութեն համեմատութեն ։ Զոր օրինակ 'ի հաւասար ամենայն վերածի սէրն 'ի հասարակութեան ռամկական փոխարինական արդարութ. այնպէս յանհաւասար ամենայն վերածի սէրն 'ի հասարակութեան ազնուապետական՝ արամադրաշխական արդարութը. զի որ արժանաւորագոյնն է՝ առաւել եւս սիրեսցի ։

Հաւասարի առաւելապէս այդ ինչ սիրոյ ի սէր այլասէր ։ Գեղեցիկ հաւասարութի եղև՝ հաւասարութեն կաղի և կուրի՝ առ խիգորոսի ։ Կոյրն կարող էր գնալ, այլ տեսանել ոչ. կաղն կարող էր տեսանել, այլ գնալ ոչ ։ Այլ կոյրն վարեալ զկաղն՝ զոր բարձեալ էր շալակաւ, և կաղն ուսուցեալ կուրին զուղին, կոյրն փոխ տայր զոտս կաղին, և կաղն փոխ տայր զաչս կուրին. և յերկուց մարմնոց լեալ մի մարմին, կրկնակի սքանչելեօք կոյրն տեսանէր, և կաղն գնայր ։ Այսուիկ փոփոխ երախտաւորութը՝ ցուցեալ 'ի միմեանս զփոփոխ սէր, արձանացուցին զճշգրիտ օրին անհաւասարական բարեկամութեն, ի անզուգականութեն գործոց, բայց վերածեալ 'ի փոխարինական ի հաւասարութէն երախտեաց ։

Զինչ անզուգականութի մեծ քան զերկեանն 'ի մէջ արտախշատասի աղքատի և մեծահարուստ արքային գինեխանի ։ Բայց յընդունիլ աղքատին 'ի փարթամէ անօթ զինչս, և փարթամին յաղքա-
տէ

ամէն անուն զխմաստութիւն, փոխանակելով համեմա_
տական հաւատարութիւն զբարիս հոգւոյ ընդ բարիս
բախտի, 'ի փոխադարձ արգեանց ծնաւ փոխա_
դարձ սէր: Ըստ սմին օրինակի, 'ի պարգեւել ար_
գեղին գղաւկոսի՝ չքնաղին ներքոյ մարգարիտս,
և յընդունել խորոմ 'ի ներքոյ բերկրանս, սէրն
բերկրական հաւատարեցաւ ընդ սէր օգտաւոր. և
յերկու այլեայլ սիրոյ ծնաւ հասարակ սէր բա_
րեկամութեան՝ օգտաւոր համայն և բերկրաւէթ.

Զէ այնպէս հակառակ հիւսիս հարաւոյ, որպէս
ակրութիւն գեղութեան: Սակայն և այնպէս Մարկոս
Անտոնիոս Հռոմայական Հրամայողութեն, և գերի նորա
Եգիպտացւոց Թագաւորութեն՝ այնչափ վառեցան բորբոքե_
ցան սիրով առ միմեանս, մինչև համբերել գեր_
եալն գծնգակ մանրաճաշից վս̄ ոն̄ն, և ոն̄ն հաղոր_
դել խորոմ գերւոյ ազատորէն զիւր ինչս, դա_
սեցան երկաքանչիւրն ընդ երևելի օրինակս բարե_
կամութեան:

Զիք ինչ այնպէս փանաքի, որում չիցէ բաղդատ՝
անբաղդատ ինչ երախտաւորութիւն, և մեծի սի_
րոյ արժանաւորութ: Աղաւնոյն արկեալ 'ի գետ
շիւղ մի, ապրեցոյց զփոքրիկ մրջիւնն 'ի հեղձմանէ.
և մրջմանն խածեալ զոտս հաւորսին՝ զերծոյց ըն_
բարեացապարտ աղաւնին յաստղէ, զոր լարեալ
էր հաւորսին՝ առ որսալոյ զնա:

Բայց թէ պակասեսցի ևս ոյժ 'ի փանաքին՝ փո_
խարինել հաւասար երախտիս ընդ երախտեաց,
միշտ հնար է համեմատօրէն՝ փոխան երախտեաց
փոխարինել շնորհակալիս: Ո՛չ եթէ Առատութիւնն է,
որ մեծացուցանէ զպարգևն, այլ Սիրտն՝ որով
պարգևի. և ոչ երբէք այնպէս մեծ է սիրտ պար_
գևողին, որում չիցէ բաւական հատուցանել ըստ
իրաց ինչ սիրտ ընդունողին: Վճարք են մեծաց շը_
նորհաց՝ շնորհակալիք 'ի սերտ սրտէ. զթերին ըն_
նաւ զակար զօրուն՝ առատաձեռն կամք: Մեծա_
փափաք իղձ բարերարելոյ՝ է մեծ ինչ բարերա_
րութիւն:

Այսու օրինակաւ արամարաշխական արդարու_
թեն հաւասարեալ երկրաչափական համեմատու_
թեն

Թէ զփոքրն է մեծի, համառօտէ նովին զպարտա-
ւորութիւն է արդեանց, և զմեծ բարերարութիւն
է մեծի բարեյօժարութեան, և փոխադարձ սիրով
հիմնէ յանհաւասարութեան հաւասարութիւն ինչ բա-
րեկամութեան. Թէպէտև անկատար :

Յայսմ ամէ, զոր ցայսվայր որոշեցաւ, դիւրին է
քեզ փարատել զշփոթ կարծեալ և անկատար բարե-
կամութեան՝ իւրովք սեպհական և բովանդակեալ
սահմանօք :

Կատարեալ բարեկամութիւնն է [illegible]
[illegible] ի մէջ երկուց հաւասար ան-
ձանց. պատճառաւ ի նմանութեան առաքինութեան, անխափան
բարւոյ միմեանց, հանդերձ [illegible] բարերարութեամբ և միաբա-
նութեամբ :

Բարեկամութիւնն անհաւասարութեան է [illegible]
[illegible] ի մէջ երկուց անհաւասար անձանց, հա-
մեմատ հաւասարութեամբ բարերարութեան և միաբանութեան
ըստ միմեանց :

## Գլ. Թ.

### Հարցուածք ի վերայ բարեկամութեան :

[illegible]

Մեծամեծ փիլիսոփայք իսկ ասէին, Թէ լաւ է
իմաստնոյ չունել զբարեկամ՝ քան ունել. զի մե-
րձաւորելոյն քան զամենեսին՝ չէ արժան լինել
ումեք ստորադաս :

Այս պատասխանեմ, Թէ կապեալն իւրով ա-
զատ կամաւ՝ չէ կապեալ: Մանաւանդ Թէ այն-
չափ կապէ նա զկամս ստորի է իւրումն, որչափ
զիւրն է ստորին. և այնչափ ինչ ստանայ, որչափ
ինչ կորուսանէ: Բայց Թէև մարթ իցէ ասել,
Թէ ազատութին իր իրաց ինչ նուազի 'ի բարեկա-
մութեան, այնմ փոխարէն այնչափ պխաանի բա-
րեք՝

րեք՝ կարեւորք առ կենաց մարդկան, մինչ մեծ եւս երջանկութիւն է լինել կատարեալ, քան լինել ազատ:

Արդեօք զանձն առաւել պարտաւոր իցէ սիրել մարդ, թէ զբարեկամս: Ըստ իրաց իսկ ամօթալի ախտ է սէր իրական, զի է սէր ցանկութեան, մահացուցիչ սիրոյ բարեկամութեան: Յայտնէ խնդրմանէ՝ եթէ արժան է սիրել զբարեկամս, զի լծորդ է 'ի սէրն, ո՞ առաւել լծորդ իցէ մեզ քան զանձինս մեր: Որ ոչ բարի կամի անձին, ոչ բարի և կամի այլոյ:

Պատասխանեմ. թէ 'ի բնականն բարիս, կամ 'ի բարիս բախտի՝ գովելի եւս է վերադասել զբարեկամն քան զանձն. բայց 'ի բարիս հոգւոյ՝ պարսաւելի է յետնիլ յառաքինութե վն հաճոյանալոյ բարեկամին, կամ ջանաջեռ լինել առաքինութեանց՝ առաւել վն այլոյ, քան վն անձին: Բարեկամութիւն է մեծագոյն արտաքին բարեաց. բայց ներքին բարիք լաւ եւս են քան զբարեկամութիւն: Օրինակ առաջնոյն եղև Սկիպիոն ափրիկանոս. որ 'ի հեռանալ հիւպատոսութե, առաւել եւս փառս ստացաւ՝ տալով զայն բարեկամին, քան կորզելով յանձն: Օրինակ երկրորդին եղև հռուտիլիոս, որ (որպ̃ ասացաւ) առաւել ընտրեաց կորուսանել զբարեկամութե. քան զարդարութիւն: Եւ երկոքին իսկ չեն ընդդէմ օրինաց՝ ոչ ինքնասիրութե. և ոչ սիրելոյն այլոյ՝ ըստ բարեկամութե: Զի թէ բարեկամն է առաքինի, զնոյն առնել ունի առ քեզ. ապա թէ է մոլի, չէ ճշմարիտ բարեկամ. և կորուստ սուտ բարեկամի է մեծ գիւտ:

Արդեօք բարեկամ ոք իցէ պարտաւոր տանել զկեանս ի բարեկամին: Զի 'ի մեջ խնդրմանէ առ գործելն ընթերցե զգօն, նայնպէս բարեկամութեան ընթերցե զենան. և 'ի խորհրդոցն ինչ՝ խորհի և բարեկամութեան: Ճշմարիտ լաւ բարեկամութե է սիրել զբարեկամս իբրև զանձն: Զանձանէ զենանն, որ 'ի խնդրութեան զայլ ոք իւրայն՝ խորտակն զանձն. զի ու սիրէ զնա իբրև զանձն, այլ առաւել քան զանձն: Ընդդէմ զանձինս առ առաւել դատեաւ գործելն է անձնասիրութեան մեծ: Վասն ձեռնտու, տիգ

բա-

բարեխառնոց, ասէր՝ զո՞ր են բարեխառն արարածք, վասն թէ խեցգետք: Իսկ յայնժ խաղմանէ, եթէ գազանն է լաւ համեստ, յայտ է թէ՝ գրեթէ գազանաց իբր թնոց յերկինս ձկնաթիւեցին այնք, որք են կենաց բարեխառն զանազանս րենոյ պատարագեցին:

Պատասխանեմ, թէ 'ի համեմատել զկեանս ընդ կենաց՝ ամենայն ոք պարտաւորի վերադասել զիւր կեանս քան զայլոյ. զի կարգաւորեալ սէրն սկսանի յանձնէ: Բայց թէ համեմատին կեանք ը՟ առաքինական ինչ գործոյ, մարթ է վերադասել զառաքինականն գործ քան զիւր կեանս: Իսկ զինչ առաքինագոյն գործ կայցէ՝ քան զնել զկեանս վ՟ հայրենեաց, վ՟ իշխանի, և վասն հօր: Բայց այնչափ առաւել արիական առաքինութիւն է դնել զկեանս վասն բարեկամին քան վ՟ հօր, որչափ առաւել սէրս մնգէ կապ արենակցութեան քան ըղկապ բարեկամութեան: Ա՛յն է պարագ օրինական արդարութեան. այս է արգիւնք բարոյական համեստութեան: Իսկ առաւել արիական է առաքինութեն կամաւոր քան զբռնադատ:

Ճշմարիտ է և այն՝ թէ պարտաւոր գոլով ճշմարիտ բարեկամին սէր փոխարինել հաւասար ըղձմամբ, եթէ դու դնես զկեանս վասն նր, պարտի և նա դնել զիւրն վասն քոյ: Իսկ եթէ 'ի հաւասարակաց նուաբեկութեն, մի միայն առաւել գոլով քոյ՝ արիական առաքինութ՟ թողցես զայն 'ի նա, նոյնգունակ առաքինութ՟ պարտ է նմա հրաժեշտ տալ զի դու ապրեսցիս. ապա թէ ոչ՝ ոչ հաւասար և ոչ փոխադարձ է սէր: Իսկ յայս հաւասարակշռութեն հիմնեցան այն խանդակաթ միամունք պիւղադեսի և օրեստեսի, որք և ցարդ 'ի թատրոնս երևոցեալ՝ յարտասուս լուծանեն ըղլսօղս. քանի և՛ յորժամ խօսք եղեն:

Ո՞րթէ մերենն ու այլ իէլ է. բայց ըղձանալ բարւոյ բարեխառնին, խածի գիտել՝ մրցանք իէլ բարի պարտ իջէ ըղձանալ նմա: Վասն զի թէ ըղձանալ նմա քաջ բարին՝ է մերել զնա ապխաս, ապա որ մեծագէս մերէ զնա, ըղձանալ նմա մեծամեծ բարիս, մեծ բարեբաստութիւն, և մեծ իմանսութիւն: Դարձեալ վասն զի մեծագէս մերեր զիար

զն-

պաշտելութեան, ընդհանրապէս նմա տրուած ոգւոյ և տրուած մար-մնոյ, որուած հարց էին 'ի նոսա, որ տանէր նա 'ի յե-րկին. (317):

*Պատասխանեմ. թէ ցանկութիւն գործադրիչ ոչ անցանէ ըստ կոպար կարելւոյ. և խնձք ճշմարիտ բարեկամաց ոչ են անբաղադրելիք ը̄ բարեկամութե: Տկարութութիւն է կանոցի՝ ըղձանալ այլայց մեծութեան ցնորականս. և անմիտ է խղձ բարեկամի ուրուք ստականնի՝ ըղձանալ բարեկամին մեծ ինչ իշխանութիւն: Զի թէ ըղձանաս դու և քեզ ինկ իշխանութիւն հաւասար, է ունայնութիւն մեծ: Եւ թէ մնալով քո 'ի ստակականութեան՝ բարեկամդ քո ամբարձցի յաթոռ թագաւորութե, բարձման հաւասարութե՝ բառնի և բարեկամութիւն:*

*Կցկեցին ակամայ կամք լեալ թագաւոր ամէնայ՝ կոչեաց զնա սիրելի բարեկամս, և արտաւօք արձակեաց զնոցայն բարեկամութիւն. գիտելով թէ բարեկամութե և մեծափառութե անմարթ է բաղդիլ 'ի մի գահոյս. և որ արկանէ զանձամբ զարգարութե, զերծու յիւրմէ զբարեկամութիւն: Մ՞ինչ զի 'ի սամանալ նոյա զթագաւոր զամէ՝ կորուսին զբարեկամն իւր:*

Ո՞ր առաւել յաւիտենական իցէ բարեկամութիւն, սիրելն եթէ սիրիլն. ցիմանալի որպէս լաւ է պարգեւել քան ընդունել. իւր եւ 'ի պարգեւել՝ գոյ յարգէս կարևոր առաքինութիւն, իսկ 'ի պարգեւին՝ գոյ յարգի առաքինութեան. այսպէս 'ի սիրելն պարգեւս գոյ կարևոր առաքինութեան, իսկ 'ի սիրելն՝ գոյ պարգև առաքինութեան:

*Պատասխանեմ. թէ 'ի սէր ցանկութե՝ լաւ է սիրել քան զսիրել. բայց 'ի սէր բարեկամութեան՝ լաւ է սիրել քան զսիրիլ. զի այն սէր անգրեն ցուցանող 'ի սիրողն, և սա ուղղակի հայի 'ի սիրեցեալն: Բարեկամութիւն է ունակութիւն ինչ առաքինական, և ամենայն ունակութիւն է ներգործական քան կրաւորական. զի յօժարեցուցանէ առնել զներգործութիւնս իւրոյ տեսակի: Սէր ցանկութե է սէր կրաւորական. սէր բարեկամութե է սէր ներգործական: Սա սիրէ 'ի սիրել. նա սիրէ 'ի սիրիլ: Ունակութիւն առաւաձեռնութե՝ թէպէտև առա-*

առաքինութի է չափաւորիչ ախորժակի 'ի բարե-բարել և յընդունիլ զբարերարութիւնս, որպէս և լուար, բայց և այնպէս ընդ ինքեան առաւել մեծ առ առնել զբարերարութիւնս, քան առ ընդունիլ. զի այն է իւր սեպհական. ուստի և յատկագոյն է բարեկամութեն սիրել, քան սիրիլ:

Բայց բաց յայտմանէ որ սիրէ, գիտէ թէ սիրէ, բայց սիրեցեալն ոչ գիտէ թէ սիրի: Զի իւրաքանչիւր ոք լաւ եւս ճանաչէ զսիրտ իւր քան զայլոյ: Իսկ որդ՝ գոլով մինն ստոյգ՝ և միւսն անստոյգ, որ մեծ է ստուգութեամբ մեծ է և սէրն:

Արդեօք որ լաւ իցէ. ունել բազում բարեկամս, թէ զմի միայն բարեկամ: Զի 'ի միջէ կողմանէ առաւել հափափուն է նոա բազմախառնից, և առաւել ապահով բեան բազմամայթ: Բարեկամք՝ են խառնելոց ընդդէմ ակէկոյթաթէ, և մայթ ընդդէմ անկման: Այդ լաւ է ունել ըն-բազմամս քան զմակամս: Յայսմ կողմանէ, գուցէ առաջեալն մեծի ուրախու խնամակալից, թէ ոչ բարեաց կեղ լինել առաւելագ աւան, այլ և մի՝ ունել նմա բազում որ. և ոչ բարեաց խնամակաց լինել առաւելագ բարեկամի, և ոչ իւր ունել բազում բարեկամս. զի որ ունի բազումս, ըննի և ոչ մի:

Պատասխանեմ յաղագս օգտակար և բերկրական բարեկամութեն, թէ՝ ունել բարեկամութի երկուց՝ է դժուարին. բազմաց՝ է անհնար. վս զի ոչ մին և ոչ միւսն են կատարեալ բարեկամութի, չունելով մշտաւոր հիմն. օգուտն և բերկրութին փոփոխին ժամ 'ի ժամէ:

Բայց յաղագս կատարեալ բարեկամութեն. գտանել զբարեկամ որ նման քեզ ըստ միտակի, ըստ խառնուածոյ, ընդ բնաւորութեն, և ընդ առաքինութեն, է դժուարագիւտ իմն. իսկ գտանել զբազումս՝ է անհնարին իմն: Կատարեալ բարեկամութին պահանջէ մեծ բարեխօսութի. մեծ բարերարութիւն, և մեծ միաբանութեն: 'ի բազմաց միջի չլինի մեծ բարեխօսութիւն. զի սէրն տարա ոք՝ նուազէ զսէրն առ այն որ: Եւ ոչ մեծ բարերարութի. զի որ 'ի բազմաց ընդունի, բազմաց պարտի: Եւ ոչ մեծ միաբանութի. զի մարթ է

է սրտի միաբանել ը այլ սիրտ. այլ ոչ ընդ բա-
զումս. զի որչափ են մարդիկ, այնչափ և յօժա-
րութիւնք:

Այս սիրել զբազումս թուլակի, և սիրել 'ի բազմաց թուլակի՝ չէ ինչ դժուարին առաքինութին. բայց հարկաւր թոյլ սէր՝ չարժեն մի կատարեալ սէր: Բայց սիրել զբազումս կատարելապէս իբրև զանձն քո՝ չէ քեզ հնարաւոր, թէ չբաժանիս դու 'ի բազումս, կամ չմիակցես զբազումս: Նաև ընդ միում, և խնդալ ը այլում միանգամայն, յերկուրել զգոյգ բնաւորութ բառ այլ և այլ բնաւորութեց՝ այնպէս է դժուարին, որպ ծառայել տեարց բազմաց: Մինչ զի՝ իղձ դարեհի, թէ իցեն նորա այնչափ գերակատար բարեկամք, որչափ հատք են 'ի նռան, մի էր յերազոց դարեհի, որ որում իմէք ըղձանայր՝ զայն երազէր:

Զչիպխոնէ ափրիկանոսէ կրսերոյ գրի, թէ չելանէր երբէք 'ի տանէ, զի մի տեսցի զոք բարեկամ: Ճշմարիտ բարեկամք չգտանին իբրև ըղքարինս 'ի վր ճանապարհի: Ի՞նչ նորա բարեկամարք, ոչ բարեկամք: Մի միայն և ճշմարիտ բարեկամ նր էր պողիբիոս, որ զայն իբրեւ տուեալ էր նմա: Այս լաւ է առն խոհականի ոչ զոք ունել թշնամի. զնմանին ունել բարեկամս. այլ բարեկամ մի միայն:

ՈՐ ԵՂ ԱՐԴԵՕՔ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՑԷ. ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆՆ, ԹԷ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆՆ. Ե ՈՐ ԱՌԱՒԵԼ ՊԱՐՏԵՍՑԻ. ԵՂԲ՞Ր, ԹԷ ԲԱՐԵԿԱՄ:

Պատասխանեմ. կապ եղբայրութե հիմնեալ է յայն սկիզբն երկրաչափական. ԵԹԷ ԵՐԿՈՒ ԻՆՉ ՀԱՒԱՍԱՐԻՆ ԸՆԴ ՄԻՈՒՄ ԵՐՐՈՐԴԻ. ՀԱՒԱՍԱՐԻՆ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ: Իսկ զի իւրաքանչիւր եղբարք մի ինչ են ը հօր, երևին մի ինչ ը միմեանս: 'Ի նոյն սկզբան վր հիմնեալ է կապ բարեկամութե. զի իւրաքանչիւր բարեկամք միանան 'ի մի ինչ երրորդ. յդ 'ի սէր առաքինութե: Մինչ զի 'ի սիրել նոցա զառաքինութի միմեանց, սէրն միաւորէ զնս ընդ միմեանս. նա՝ փոխակերպէ իսկ 'ի միմեանս:

Այս յոյժ ազնուագոյն է կապ բարեկամութե
քան

քան զեղբայրութիւն. զի սա է մարմնական, և հաստատեալ ևս և անբաժին. և նա հոգևոր՝ և սեպհական մտաց ։ Սա միաւորէ արիւն ընդ արեան, նա զկամս ընդ կամաց, զմիտս ընդ մտաց, զոգի ընդ ոգւոյ ։ Վնկ 'ի մէջ եղբարց թէպէտև ողջին կայցէ կապ արեան, սէր ուրեմն է միաբանութիւն. և որ միաւորիչն է նոցա, լինի բաժանարար ։ Զի ակն եդեալ իւրաքանչիւրոց յինչս հօր, մի զմիոյ բղձանան կորզել 'ի ձեռաց զինչս ։ Բայց 'ի մէջ սիրելի բարեկամաց՝ ցորչափ տևէ կապ սիրոյ, անհնար է թէ տեղի ունիցի անմիաբանութիւն ինչ. զի իւրաքանչիւրոց միաբանեալ 'ի կամիլ միւսում բարի, հասարակաց լինին իւրական ինչք ։

Այլս ասելի է, թէ եղբայրութիւն է կապ բնական. բարեկամութիւն է կապ առաքինական ։ Նա պարտաւորէ 'ի բարերարել ըստ օրինական արդարութեան, և սա վասն բարոյական համեստութեան ։ Եւ՝ որպէս լուար, մեծ ևս առաքինութիւն է առնել այլում բարի յօժարամիտ բարեյօժարութեամբ, քան պարտաւորութեամբ արդարութեան ։

Հուսկ ապա խնդրեցես. Արդեօք հաւն սնուցանեցէ զբարեկամութիւն ։ Վասն զի գուցէ հաւաս հերքէին զեր հարցեալին իւրոյ. եթէ թէ նոյնն կարոյաս օրահաւի կարէ զկապ կենաց և սիրոյ ։ Այլ են բանք աստանօր զգերբնական և զերկնային սիրոյ. իբր զի երկինք զլխովին սէր են. և գծոխք զլխովին գժնեայ ոխութիւն ։ Այլ բանք են զրնաւոր վիճակէ անջատեալ հոգւոյ, հրաժարեցուցեալ զայն 'ի յաւիտենական փառաց, և 'ի յաւիտենական դատապարտութենէ ։

Այս պատասխանեմ. թէ զգայական սէրն վախճան առնու ընդ վախճանիլ կենաց. բայց իմացական սէրն կեայ և յետ մահու. զի մարմնական կարողութիւնք մեռանին ընդ մարմնոյ. բայց հոգեղէն կարողութիւնք մնան յոգւոջ ։ Մնան 'ի հոգի միտք. ուսալի մնան 'ի հոգի և կամք. զի բաղձողական կարողութիւնք անանջրպետք են յըմբռնողականաց. և 'ի կամս մնան ունակութիւնք հոգեղէնք, որպիսի և ճշմարիտ բարեկամութիւնն ։

Արդ թէ յիշէ միտք մտելոյն զայն առարկայ , որ եղև նմա սիրելի յոյժ՝ և զուարթարար , 'ի նոյն շարժի միանգամայն և կամքն իւրական ունակութիւն . և այն շարժումն է առաջին սէրն : Նա՝ վասն զի յանջատեալ հոգւոյ միոյն յօժարական առ մարմին՝ է առաւել մաքուր և յստակատես , կամքն ևս լինի առաւել եռանդագին , և սէրն առաւել ջինջ . զի որ լուսագոյն Ճանաչէ զառարկայն սիրելի , առաւել ևս սիրէ :

Այս եթէ յանջատ հոգւոյ՝ որպէս ուսուցանեն սրբազան դպրոցք , կենդանի է յօժարութի ինչ բնաւոր՝ անդրէն միաւորելոյ ընդ իւր անդամս , և խնդութ միւսանգամ տեսանելոյ զիւրն շիրիմ՝ կաթոգին է առ իւր սիրելի կողոպուտ , և ըստ կարի ըղձանայ զայն անդրէն զիւրև արկանել . իբր զի մարմինն սիրելի իմն բարեկամ եղև հոգւոյ , ոչ փոքր խղճ է նմ միւսանգամ ը միա ածել և անդրէն տեսանել զՃշմարիտ բարեկամն , որ եղև առարկայ սիրոյ իւրոյ , և ոգի ոգւոյ իւրոյ : Զսորին հակառակն , զոր ոգի՝ մինչ էրն ընդ մարմին միաւորեալ , մեծապէս տաեայր , բնաւորապէս տաեալ՝ և յորժամ է բաժանեալ . մնալով տաեկութեն՝ ոչ և սիրոյն՝ միապէս յոգի :

Յայտնի վկայէն այսմ մարմինք սպանելոց . որք եթէ առաջի բարեկամի , և եթէ առաջի թշնամւոյ՝ հոսեն 'ի վէրաց արեան Ճապաղիս : Չէ այս սքանչելիք , այլ ցոյց զարմանալի , որ առագրի յիմաստնոց տկարութե և սիրոյ . որ խոր տարրացեալ յոգի սպանելոյն , որպէս թէ արեան բարբառով զարիւն կոչէ զսպանողին . և զբարեկամն տեսլեամբ արեան վառէ որպէս զփիղ 'ի վրէժխնդրութիւն :

## ԳԼ. Ժ.

### Օրէնք բարեկամութե : Եւ բովանդակութեան Ճառիս :

Եթէ 'ի բարեկամութե , և եթէ յայլ փոխարկնական զաշինս , պիտին օրէնք , դաշնադրք , ապէտնք , կարգք , և պայմանք . զի հաւատարութե պահես_

հեցի, և անհաւատարմութիւնն հաւատարմեցի: Այսր ազնուական դաշին բարեկամութե̃ վարձ է [illegible]. պատիժ՝ [illegible]. առեան՝ [illegible]. դատաւոր՝ [illegible]. օրէնք՝ [illegible]:

Օրէնք բարեկամութե̃ համարեցան [illegible]. զի փոխանակ ձեռագրի առեալ զերդումն, և փոխանակ վկայից զուենտինեանն դիոս (318), համարեցան այն նախնի իմաստունք, թէ դաշանց որոց անմարթ է լինել այլ վկայ, բայց ակնն արատես:

Օրէնք իսկ հիւրասիրութե̃ կոչէին սրբազանք. զի հաստատեցան 'ի վերայ օրինաց բարեկամութե̃: Բայց հիւրասիրութիւն է բարեկամութիւն ինչ առժամայն և անցաւոր. բարեկամութիւն է հիւրասիրութե̃ հանապազորդեան. յորում օթեվան միայ 'ի բարեկամաց է սիրտ միւսոյն: Մինչ զի, եթէ անցանել զօրինօք հիւրասիրութե̃ էր դրժողութիւն, անցանել զօրինօք բարեկամութե̃ էր սեղանակապտութիւն:

Արդ՝ քանզի չորք են ներգործութիւնք բարեկամութե̃, ըստ երևի 'ի նախագրելոյ, [illegible], [illegible], [illegible], և [illegible], չորեքին իսկ ներգործութիւնք առնուն զօրէնս իւրեանց 'ի հաւատարմութե̃ փոխարինական արդարութե̃:

Առաջին օրէնք ընտրութե̃ է այս, [illegible]. զի ոչ կարէ լինել կատարեալ փոխադարձութի̃ սիրոյ, բայց եթէ 'ի հաւասարս: Սակայն և ոչ նմանութիւն կարէ լինել կատարեալ, բայց եթէ այն՝ որ առաքինութեան է. զի այլք ամ̃ են սիրելի ը̃ պատահման. միայն առաքինութիւն կատարելապէս է սիրելի ըստ ինքեան, առ որ են կարգեալ այլք ամ̃:

Զայսմ ընտրութե̃ կախեալ կայ հաստատութիւն կամ յողդողդութի̃ բարեկամութե̃: 'Ի դառնանալ ուրուք և յասել. [illegible] է և [illegible]. այդ դանդատ առաւել յամօթ առնէ զդանդատաւորն, քան զայն՝ զոր ամբաստանէ դանդատն: Եթէ չճանաչէիր դու զնա, ապա անմիտ

մեռ էիր՝ զի ընտրեցեր զնա կոյր զկուրայն . իսկ թէ ճանաչէիր , ապա մոլի ոք էիր , զի ընտրեցեր զմոլին . քանզի յայտ է՝ թէ նմանն սիրէ զիւր նըմանն : Բայց եթէ էր նա սուտ բարեկամ , չէր բարեկամ : Ո՛չ կորոյս նա զհաւատարմութիւն , այլ՝ զկեղծիս . և քեզ պատիր ընտրութեանդ լինի 'ի պատիժ և 'ի խրատ :

Բևեռացոյց մագնիսն նաւորդաց՝ թէպէտ և աչս ոչ ունի , յայնչափ կիսագնտեան աստեղաց միջի՝ գիտէ ճանաչել զայն միայն , որ է անփոփոխ : Այլ ևս աստեղք՝ պայծառքին յառաջնում շարժունի , որ անդադար զօրով՝ չթողու իմիք կալ դադար : Միայն աստղն բևեռական յայնչափ շարժական աստեղաց միջի կայ անշարժ . զի յեց է՝ի բևեռն հաստատուն : Զուր են բնուին զգօնուն մարդկան . եթէ յընտրութիւն հաւատարիմ բարեկամի անդգօն են քան զանդգայս քար :

Ծերակոյտն հռովմէական 'ի բարեկամութիւն ընկալաւ զեւմենէս արքայ (պերգամացւոց յասիա) : Ամենայն ծերք ծերակուտին ընթացան գործել զնա . միայն մարկոս կատոն՝ ոչ հաճեցաւ ընդ բարեկամութիւն նր . և 'ի յորդորել զնա ամենեցուն , պնդեալ թէ եւմենէս սիրէ զհռովմայեցիս , և յոյժ պիտանի է մեզ և հաւատարիմ , ասէ կատոն . Թագաւորն այսպէս իցէ , գազան է նա ամենի . իմ ոչ են կամք լինել ընդ բարեկամ և դորայ : Այս կատոն միայն գտաւ անխաբ :

Բարեկամութեան օրէնք այս են . սիրել զբարեկամն իբրև զանձն . և ձախորդին սիրել . որչափ իցէ նա սիրէ : Այս է կանոն փոխադարձ տուժի փոխարինականի , թէ իւրաքանչիւր որ սիրէ անձն , նոյնպէս ընդունել անձն :

Չափ սիրոյ յերկուանչիւր բարեկամս է սէր անձին . ոչ մին և ոչ միւսն պարտաւորի առ աւելին . զի 'ի սիրել երկուանչիւրոց զընկերն իբրև զանձն , յերկու սիրոյ առնեն մի միայն սէր . որ այնչափ տայ , որչափ առնու . և այս է կատարեալ հաւատարութիւն : Վզկ՝ որ սիրէ զբարեկամն , սիրէ և զինքն բարեկամն . զի իւրաքանչիւր ոք 'ի սիրել զանձն , սի-

սիրէ և զնա. ԺԷ առակին, Խորագանութիւնք գե-
ղեցիկ են խորհն։

Այլ սաստիկ արժան է որոշել զառաքինականն անձնասիրութիւն 'ի մոլեկանէ։ Մին սիրէ զանձն, և միայն անձին շողոքորթէ։ Իսկ միւս նա այնչափ սիրէ զնա իբրև, որչափ ունի զնոցանէ համարում. սա այնչափ ունի զայնց համարում, որչափ սիրէ։ Զի նա հայի աչօք բանին, և սա շնորհ-
ցութիւն իմն։

Յորժամ կամիք արծուի ընտրել զգեղեցկագոյնս 'ի ձագուց թռչնոց՝ իւր սպասաւորս 'ի պատիւ, մատոյց բու զիւր ձագս. և ասէ. մա զուարթ ուր-
թայութեան, որ գեղեցիկ են տան զամ յոգս. զի նման են
էնք։ Մոլին առաւել սիրէ զիւր մոլութիւն, քան զայլոց առաքինութիւն. բայց առաքինին սիրէ զիւր բարեկամին, որ սիրել պարտի զնորան. զի ոչ ոչզոքորթելով յիւրան, ոչ շողոքորթէ և յայլոցն։ Ոչ գործէ զգործելիս առ նախանձու, և ոչ գործէ զգործելիս 'ի շնորհակս։ Իսկ եթէ հնար իցէ ուղղել զգործելիս, խրատէ զբարեկամն. որ և ինքն կամի, թէ խրատեսցի։ Այլ եթէ ուղղել չէ կարող, գործէ զգիտութիւն, և անմեղադիր առնէ զնդեան. զի բարեկամութիւն և համբերականութիւն եթէ չեն զօրք, սակայն են խնամք։

Ուստի և այս եւս օրէն է բարեկամութեան. Լինի գոյգ բարեկամ ունի թշնամի, և գոյ ոմ խաւսիր զնուա
որ թշնամի. զի ոչ է նման նմանւոյն, որ չիցէ համաձայն հակառակին։ Հերովդէս մաերիմ բարեկամ գեմեղոսի, քակեաց զբարեկամութիւնն, զի գեմեղոս բարեկամ եղև աղեքսանդրի՝ ոխերիմ թշնամւոյն հերովդի. (319)։

Որ ոք բարի կամի բարեկամին որպէս անձին, ոչ կարէ բարի կամիլ այնմ՝ որ բարեկամին չար կամի. զի այդ լինէր ասել միանգամայն, և սիրել զանձն Հարկ է կամ բաժանել 'ի միոյն՝ 'ի սիրել ըզմիւսն, կամ բաժանել յերկոցունց՝ 'ի կալ երկուստեք հրաժեշտ. և կամ հաշտեցուցանել զնո
ՂԷ միմեանս, զի մնասցէ կցորդ երկոցուն։ Այս երդ խորհուրդ է բանաւոր. զի թէ բարեկամ

քո

քո է առաքինի, համեստ պայմանօք հաշտի ընդ իւրում թշնամւոյ. և թէ չէ առաքինի, չէ քո Ճշմարիտ բարեկամ. զի Ճշմարիտ բարեկամութիւն հիմնի յառաքինութեան: Բայց թէ այն թշնամի է անհաշտելի և մոլի, արժան է քեզ առնել զնա ոչ մոլի, թէպէտ և քեզ թշնամասցի. և թէ զէն առնու անիրաւութեան ընդդէմ քումդ բարեկամի, պարտ է քեզ պաշտպանել զբարեկամդ ոչ զանձն քո: Այս օրէն է մարդկային բարեկամութեան ըստ բնաւոր սկզբանց:

Բարեյօժարութիւն հպատակ է բարերարութեան: Ճշմարիտ է՝ թէ մի միայն պտուղ բարեկամութեան է սէրն. բայց թէև բարեկամութիւն ոչ զհետ երթայ օգտի, օգուտն զհետ երթայ բարեկամութե: Ընտրել զոք բարեկամ կարօտեալ, ոչ է յատուկ բարեկամութե հաւատարմանի. բայց թէ կարօտութի ՚ի վր գայցէ բարեկամութե, զմիմեանց պարտաւորին խափանել ըստ կարի զվնասն, որ երկաքանչիւրոց հնար է գիտել: Դժբախտութիւնք առաւել են պատրաստական քան զբարերաստութիւնս:

Այս օրէնք բարերարութեան է առնել բարեկամին զբարին, զոր կամէր՝ թէ ընծի նմա ՚ի բարեկամէն ՚ի կարեւոր իւր: Դաւղքա (կայսր) ՚ի տալ զգերադաս խնամակալութիւն որդեգրելոյն պխաննի, զոր զկանոնս բարւոք թագաւորելոյ յայս կանոն ամփոփեաց. Արա դու այնպէս ընդ այլս ՚ի վերայ այլոց, որպէս կամէիր թէ ընէին այլք ընդ քեզ ՚ի վերայ քո: Այնպիսի է այս օրէն բարերարութե. որպիսի եղև միւս օրէն բարեյօժարութե, երկաքանչիւրն հիմնեալ ՚ի փոխադարձական ուղղութի. բայց միայն՝ զի նա չառնել, և սա առնել:

Բայց զայս ևս օրէն պարտ է մեկնել իբրև զնախընթացն, ըստ համեմատութեան իւրեանց յատկութեանց: Մինչև առնել քեզ բարեկամին զայն բարերարութիւնս, զոր և քեզ համեստօրէն արժան էր խնդրել ՚ի նմանէ ՚ի նմանակ դիպուածս: Այսու օրինակաւ բարերարութիւն մնայ ՚ի կապար բարեկամութե. որպէս բարեկամութիւն ՚ի կապար հա-

մեա-

մասնութեն. և կարօղ լինիս ասել զպերիկլեայն.

Բարեխառն մնալ 'ի օգտին ։

Այսուիկ նման է բարեկամութիւն առատաձեռնութեան, զի երկաքանչիւրն է բարերար. բայց այնուիկ տարբերի բարերարութիւն բարեկամութեն 'ի բարերարութեն առատաձեռնութեն, զի 'ի սմա ոչ լինի արտաքոյ զապաշնորհէն. բայց յայնմ լինի. զի բարեկամութիւն էապէս է փոխադարձ. բայց առատաձեռնութիւն ոչ ։ Առատաձեռնն առնէ բարերարութի տարի, բայց պահանջել զայն 'ի նմանէ՝ չէ նմա արժան ։ Բարեկամն առնէ բարերարութիւն բարեկամի, և արժան է նմա պահանջել զայն 'ի նմանէ, յորժամ պիտոյ լինիցի ։ Նախատինս գնէ բարեկամին, որ դիմէ յայլ ոք՝ մինչչև է դիմելոյ առ նա. զի փոխադարձ բարերարութիւն է՝ փոխարինական հաւասարութի բարեկամութեն ։

Որ ընդունի յառատաձեռնէ, պարտի նմա շնորհակալութիւնս փոխանակ գործոյ. բայց որ ընդունի 'ի բարեկամէ, պարտի գործս փոխանակ գործոյ. զի բարերարութիւն լինի արդարութի ։ Այս՝ յոլովակի 'ի մէջ բարեկամի և բարեկամի 'ի գործածի առատաձեռնութեն՝ ձրիական պարգևօք արտաքոյ պիտոյից. այլ այնք են առհաւատչեայք սիրոյ, և ոչ հարկք բարեկամութեն ։

Բայց է և այլ մեծ առաւելութի 'ի մէջ բարեկամի և առատաձեռնի. զի առատաձեռնն պարգևէ զմասն ինչ իւրոյ ընչից. բայց Բարեկամն պարգևէ զինքն ։ Զի որ պարգևէ բարեկամին բովանդակ զինքն, պարգևէ զամ ինչ զիւր ։

Պիւթագորաս, որ մեծին յունաստանի՝ չասացից թէ մոլեկանին՝ ուսոյց զօրէնս բարեկամութեան, եդ զայս օրէն հիմնական. 'Ի մէջ բարեկամաց ամենայն ինչ են հասարակաց ։ Կամէր հալածել 'ի բարեկամութե զայն երկեակ դեռ տարաձայնութե՝ զիմ և զքո. և վասն այսորիկ հասարակաց եդ զամ ընդհանրական գոյս բարեկամաց, զկալուածս, զդրամս, զտունս, զհանդերձս, ևս և զկանայս ։ Ուստի սկիզբն կալաւ պիւթագորեանն այն առած.

ռած . [illegible] : Այլ այս էր հալածել զզգէ՛ չար են գիտաւ : Այդ օրէն էր մտաւոր իմն անհամեմատ , և մտաւոր իմն անփոփոխական : Անքաղաքական , կեղծաւորելով զբուն սառացեալ իրին , զի արասցէ զնա՛ պաղղյն միայն բանանորդ : Եւ անհամեստ , համարակաց արարկալ զայն ինչ , որում՝ պահմամբ համեստութեան՝ անմարթ է լինել համարակաց : Զատոլ զոր պարտն է տալ , և տալ՝ զոր չէ արժան տալ , 'ի բարեկամութեան են միօրինակ յանցանք :

Ծանուցեալ օրէնք բարեկամութեան՝ զնոմ 'ի մէջ բարեկամաց առնէ համարակաց՝ ըստ օրինակիս բառայմիկ . [illegible] : Այսու օրինակաւ չկողոպտեն զմիմեանս . և երկարանչելորքն վայելեն յինչս միմեանց : Երկարանչելորքն են կայլեալք , և են ագաւք : Որ բոլորովին չքաւորի յիւրոցն , այլ ոչ կարէ լինել բարերար . որ ծախէ զգլուխ դրամոյ , չքաւոր : 'Ի փոխանակ առնուլ բարերարութեն՝ փոխանակ առնու և բարեկամութիւն : Վասն զոյիւ չափ պարգևատուութիւք առ կենդանութիւ՝ են անվաւերք . զի հակառակին բարեկարգութեան :

Թէ ո՞րք բարերարիցէ բարեկամ որ խրոում բարեկամի՝ 'ի լինել բարեկամութեան կատարեալ , որ դրամեկան է՝ ուսցի օրինակաւ յորջորջակ գաղափարաց : Բարեկամք , 'ի բարերատութիւ՝ լինին . 'ի գժտութեան՝ ճանաչին :

Իսկ յաղագս [illegible] զլխաւոր օրէն այս է . [illegible] :

Որ զնէ յաւանդի զոսկոս իւր 'ի կուրծ բարեկամին , ոչ կարէ ծածկել 'ի նմանէ՝ զայն որ է 'ի սրբտի . և որ ընդունի յինքն զայն մեծ աւանդ , երկիւղածութիւ պահել ունի զայն :

Զարմանալին քաղաքականք իբրև ընդ գիւղական ինչ պատգամ՝ ընդ այն կանոն բեռայ , որ մի երջեւթանց իմաստասիրաց յունաստանի . [illegible]

[illegible]

ըեա զբարեկամս, ոչ թէ առնի լինել թշնամի : Այս ասացուած իմաստնոյս մեծի՝ յիրաւի թուեցաւ Չիլոնի մեծ ինչ հայհոյութիւն. զի է առած ինչ դիմընդդէմ թշնամի բարեկամութեան. (320) : Շատ է այդ ՚ի բառնալ ՚ի բարեկամաց զմտերմութիւն՝ զազանի կասկածանօք, և զհաւատարմութիւն՝ փոխադարձ անվստահութիւն. կամելով ասել համառօտ. բարեկամն մի կարգագոյն ՚ի միմեանս : Թէ բարեկամն չէ հաւատարիմ, չեղև երբեք բարեկամ. և թէ յերկբայս ես դու ՚ի հաւատարմութեան նր, լաւ ես եր քեզ չակամնիլ սիրել զնա, քան ըստրջանալ ՚ի սիրոյ նորա : Այս պատշաճող կանոն է այդ մտ բարեկամութեան տարփածուաց և առաղակաց. բայց մտ բարեկամութեան առաքինեաց՝ այն է լաւ կանոն. մի արասցես ինչ. զոր ոչ կարող իցես հրապահանալ ՚ի թշնամւոյ :

Դարձեալ՝ անապաշտական է այն միւս կանոն. Հաւատացեր փոքր բարեկամի զոր յանձնել դեռ, զի արժն արասցես զնա. այլ ու զմաիրատ, զի մի փորձեցացես զնա. զի ասրժն առնել է համձայնել. այլ փորձցոյցանել է գեղձմանէ : Բայց խաիր մեծ է ՚ի մէջ ընկեր համաձայնութեան, և բարեկամութեան : Այդ առած յօտարաց մէջ է քաղաքավարական հանձայնանութեան, բայց ՚ի բարեկամաց մէջն է անպաղպաճուրութիւն, նախատագիր միում, և մխտակար միւսում : Բառնայ ՚ի բարեկամեր զվստահութիւն՝ թեթևաբեռնելոյ ընդ քեզ փոխանակաւ զնուր մխշաս, և ՚ի քեն զգիպողուն ընդունելոյ զօգնութիւն՝ կամ գէթ զքաջալերութիւն :

Իբրև եհաս հերակլէս յամփրիա՝ ՚ի ցաւագին պահու, յորում ազնիւ արքայ՝ վաղնջուց իւր ընկեր՝ ըսյր զյանկարծագէպ մահ չքնաղին ազկեստեայ, ազնիւ կեղծաւորեցաւ լալ յուրախուն մտ եկաւորուն նր. և ես զրօսեցուցանել զնա ՚ի զուարճալի ուրեք պարտիզի, մինչ ինքն ցաւագին հանգուցէ զաղտագողի ՚ի շիրմի զսիրելին զիւր աւանդ. պատուէր տուեալ ծառային չհանել ՚ի վեր զբան տխուր պատահարին : Զգացեալ հերակլէսի ՚ի նշանաց ինչ, և սաստկեալ ՚ի ծա-

ծառայէն զգաղանիսն սպառնալեօք , յանդիմանեաց զագգեաւ մի ցրեալ նորա զբարեկամութիւն՝ կեղծ թագաւորաց Ճշմարիտ ցաւոց : Բայց և անգէն կորզեալ 'ի ձեռաց պերսեփոնեայ զթագուհին՝ որ Ը ամսեալս էր համարեալ , դարձոյց կենդանի առ ալքայ , որոյ և ողիք արծարծեցան անդրէն . (321) :

Ոչ սիրտ բարեկամի ոչ է բոլորովին իւր , նոյնպ ոչ տրամութիւն և ոչ ուրախութիւն է բոլորովին իւր : Այլ ոչ իրաւամբք տարատրոհէ զանտրոհելին , եթէ հաղորդէ բարեկամի իւրում զմին , և թաքուցանէ զմիւսն : Թէ հաղորդես զերկաքանչիւրսն , յերջանկութիւն և 'ի թշուառութիւն գտանես ընկեր : Որով ոչ երջանկութիւնն զեղու դքե , և ոչ թշուառութիւնն առնէ հեղձամուղձ , յաննուլ նր 'ի քէն՝ և 'ի կորուսանել քո՝ զկեան :

Մ՝իւս ևս օրէն միաբանութ է , ՀՐԱՄԱՅԷԻ ԶՄԵԾԱՆԺՈԺՈՎՈՒՄՆ 'Ի ՃԱՌ , ՈՐ ՀԱՄԵՄԱՏԷ ԻՒՐ ԱՌԱՎԵԼ ՅՈՎԱՅՐԱՅՏԱՆ ԶԻԶՈՎՈՒԹԻ . զի փոխադարձ խրախութիւք սնուցանեն զբարեկամութիւն . իսկ զեղխութիւն արտասահմանէ զընտանութիւն՝ որ ընկերն է բարեկամութեան :

Տարակուսնիս 'ի կարակցել զբարեկամութ համմայեցւոց և լատինացւոց՝ կարգեալ առնս համմեղսակիսն 'ի ըերինն ալբեայ , ուր տարուօջէ 'ի տարի կոչուէին արարեալ լատինք և համմայեցիք , ուտէին 'ի մի և նոյն զոհից՝ որպ մի մարմին , զի իցէ նդ մի ոգի : Այլ և կառնելնաս 'ի կարակցել զսեր երդուելոցն ընդէմ հայրենեաց , խառնեալ զարիւն իւրաքանչիւրոց 'ի մի , արբոյց անտի իւրաքանչիւրում զիւր մասն . կոչնականք սեղանակապութ՝ և կոչունք նզովելեք . զորոց յիրաւի էր ասել , թէ ոգի անանոց է յարեան : Բայց և այնպէս զարմանալի իմն միաբանութն՝ հեղին մի մինանց զարիւն և զոգի ընդ մերս . (322) : Իսկ արդ՝ եթէ 'ի սուտ բարեկամութիս , կոչունք այսչափ ինչ ներգործեն , զինչ ոչ ներգործիցեն Ճշմարիտ կոչունք :

Արդար օրէն բարեկամութ է՝ ԳԻՏԷՆ ՅԻՍՈՒ 'Ի ՎԱ-

ԽՃՆ

ԱՅՆ ԸՆԴ ՍՈՓԱԽՈՅ ԲԱՐԵԽԱՌՆ , միակցեալ նոյնգունակ զկարծիս և զկամս, զի մտաւորայ անձանց սիրոյք մի իցեն բացականք. բայց և արդար օրէն է ԳԻ-ՏԵԼ ԽԵԱՒ ԸՆԴ ԲՈՑԱԽԱՆ, ԶԻ Ի ՀԵՌԱՍՏԱՐ ԱՆՁԱՆՑ՝ ՍՈ-ՓԱԽՈՅ ԻՇԵՆ ԱԻՐԴԴ :

Օրէն անջրելի՝ ճշմարիտ բարեկամութեան է.

ԱՅՆՊԷՍ ԱԻՐԷԼ ՉՀԵՌԱՍՏԱՐ ԲԱՐԵԽԱՌՆ, ԱՌ ՉՍՈՓԱԽՈՅՆ :

Նա՝ որպ ծխածանն լաւ ևս երևի ՚ի հեռաստանէ քան ՚ի մօտոյ, նոյնպէս ճշմարիտ բարեկամութիւն տաւել ճանաչի ՚ի հեռաւորութե քան ՚ի մերձակայութե. զի զբերկրական տարրկայից տաւել զգամք զցաւ զըկման, քան զհաճոյս տացութե :

Աւէք է սիրեցեալ՝ և ոչ սրտիւ, այն՝ որ ՚ի հեռանալ յաչաց՝ հեռի լինի ՚ի սրտէ :

Հոգին կեայ, ուր սիրէ. և սիրէ՝ ուր խորհի : Ուր հասանէ խորհուրդն՝ հասանէ և սէրն. և չէք լեառն, կամ ծով, կամ այրեցած գօտի, որ խափանեսցէ զընթացս, կամ այրեսցէ զթևս խորհրդոյ : Պաշարէ զբարեկամն փակեալ ՚ի բարձրաբերձ պարսպի, որ երկաթի թմբօք, և խիտ տախիտ տիգօք ցանկապատէ զնա ճանապարհ տեղւոյ և լրոյ : Հիրտիոս և Բրուտոս հանապազորդեցին ը̅ օգս զերթևեկ թղթոց՝ թևօք թռուցիկ աղաւնոյ. (232): Բայց ոչինչ պիտի զարմանալ ը̅ այն աղաւնի. որովհետև աղաւնին լիգուրացի՝ (այն է կոլոմբոս), թևօք տապատաւից եգիտ երթևեկ ՚ի մէջ միոյ և միւսոյ աշխարհի. (324) :

Ապա չարգարանան սուտ բարեկամք, յասել՝ թէ հեռաւորութիւն խրամատէ զբարեկամութի : Իսկ զինչ հեռաւորութի կայցէ մեծ քան զմահուն. սակայն և ՚ի մահուանէ և անդր պարտ է հանապազորդել զընտանութի բարեկամութէ :

Ապա վերջին օրէն բարեկամութե է. ԹԷ ԱՌ ԱՄԷՐԷԱՑՆ ՉԲԱՐԵԽԱՌՆ ԱՌ ԽԵՆԴԱՆՈՒԹԷ. ԱԻՐԷԼ ՈՒՆԻ Ի ՅԵՏ ՄԱՀՈՒ : Եթէ ոգի մեռելոյն սիրէ զկեա զոյժ մնացելոյն, (ոպ ասացաւ), մեծ անիրաւութի է սիրոյ, եթէ մեռելոյն սիրեսցէ զկենդանիսն. և կենդանիքն ոչ սիրեսցեն զմեռեալն. և մին վախճան առնոցէ սիրոյ, յորժամ միւսն ՚ի վախճան հասանէ

կե.

կենաց։ Պարտ է կենդանւոյն դարձուցանել 'ի կեանս զբարեկամն հանապազորդ յիշատակութբ իւրոց պանծալի առաքինութեց, խօսից և բարի գործոց, հայեցեալ առէպ 'ի պատկեր նորա, այց ելարեալ գերեզմանի նորա. և գթասիրութբ ողջունեալ զայն հոգի, որ առէպ դառնայ անհարկել յիւր 'նշխար. գիտելով ստուգիւ, զի թէ առաքինի ոմն էր բարեկամն, ողջ տայցա, վայելէ յուրախութն, և ձեռնհաս եւս է օգնելոյ։
Այլ անգթական գթութիւն էդև գթութն մահակացուն եղխպատեցող, որք փակեալ 'ի չիրիմ մեռելոյն բարեկամի, զրկախառնեալ ը նմա մահացուն ներխէին. զի այլ մի վայելեսցէ 'ի կեանս մին քան զմիւսն։ Այդ ոչ էր սիրել զբարեկամն իբրև զանձն, այլ առել զինքն և զբարեկամն. իրր զի մեռեալն սպանանէր զկենդանին. և կենդանին բառնայր 'ի մեռելոյն զայն երկգ կեանս՝ որ մնայր նմա, երկնակի զնա մեռուցեալ։ Լաւ է կեալ ըստ կխոյ, քան մեռանիլ բոլորովին։ Ըստ կխոյ կեայ մեռեալն, որ կեայ դեռ 'ի կենդանին։ Բոլորովին մեռանի, որ ոչ թողու 'ի կեանս բարեկամ՝ և ոչ մի։
Այլ յայս ըսկի մեզ կերպել զրանս, թէ կառարեալ բարեկամութեն չէ պարտ լինել իբրև զհուր մոլի, որ 'ի վերայ գերեզմանաց առ վայր մի երևեալ, և անդէն շքանայ. այլ իբրև զհուր մշտատևս, որ 'ի վերայ սեղանոյ սրբոյ առ անդամ մի վառեալ՝ անշէջ ճառագայթէ։



Բա-

Բարոյական իմաստասիրութե՛

# ԳԻՐՔ ՎԵՐՋԻՆ։

## Յաղագս մարդկային երջանկութեան։

### ԳԼ. Ա։

#### Թէ ուր իցէ երջանկութիւն։

Աւասիկ քեզ հասուկ ուրեմն այն, որ հաւաքեալ 'ի կապիտոլիոն փառաց զժրաջանատայիչս գիւցազնական առաքինութե՛ն, փոխադրէ պանծալի վառառակօք յաղթական և յաւերժական հանդիսա. (525)։

Առ այս ամ՛ մարդ ընթանայ, թէպէտ և չգիտէ. բայց է որ որչափ առաւել ընթանայ, առաւել ևս հեռանայ. զի զհետ երթեալ սուտ երջանկութե՛ ոչ ճշմարտի, զզուարաւոզին զնայ շաւիղ. և որ չարաչար սկսանի, երթալով երթայ և յառանայ։ Այս սա յընթացս իմոց բանից բացցէ քեզ դուռն. և սա առաջի արասցէ քեզ նպատակս. վ՛ս զի 'ի մարդկային գործողութիւն առաջին անկեալն 'ի միտ, վերջին է 'ի ստացութեան։ Այս ուրեմն՝ եթէ 'ի մատենի սա գտեր դու ինչ առաւել անախորժ քան ախորժելի, գէթ զայն խոստովան լիջիր, թէ սկիզբն նորա և կատարած եղև երջանիկ. զի սկիզբն արարեալ յերջանկութէ, աւարտ էառ երջանկութե՛։

Գիտեմ՝ զի 'ի սկզբան անդ ասեր դու զերջանկութե՛ իբրև 'ի հեռաստանէ. և աղօտ, առանց հասու լինելոյ գեղեցիկ հանդամանեաց նր՛ և զարդուց և մեծագին կահուց. զի որպէս ասեն իմաստասէրք, առաջին ծանուցեալն է միշտ ընդհանուր, վ՛ս և չփոթ։ Ձկնորսի, որ դիտէր 'ի հեռաստանէ

նէ զառաջին նաւն արգոնաւորդաց, այն նաւ-
թուկեաւ զառաջինն հաստատուն ինչ ժայռ՝ յան-
կարծ ուրեմն 'ի վեր երեւել. ապա վիշապ ձուկն
կայտառական. բայց տեսեալ են 'ի ծովոյ և 'ի լոյս
տունջեան տեսեալ նորա զյօրինուած թռուցիկ
կերպարանուածոյն, զկայմն, զառագաստն, զչուանսն,
և զապառաժէն քաջազուն՝ որ 'ի նմա, յապուշ
հարաւ ընդ այն տեսիլ զուարճալի :

'Ի սկիզբն գործոյս հարկ եղեւ մեզ խօսել զերջան-
կութէ, որ վերջին վախճանն է բարոյական ի-
մաստասիրութե : Բայց քեզ անհնար էր լռել խե-
լամուտ լինել այնմ, մինչեւ 'ի վերայ հասանել էր
քո՝ զինչ իցեն մարդկային կիրք, զինչ բարոյա-
կան առաքինութիւնք, և զինչ իմացական գործո-
ղութիւնք, առ որս պիտէր մեծ ես յայտնութիւն :
Արդ՝ վա զի այդմ ամի հասու եղեր դու, մար-
թիս յայտնագոյն եւս խելամտել դաղտնի իմաստից
սահմանի երջանկութե, որ 'ի սկզբան անդ առա-
ջի եդաւ քո :

Ծայրագոյն երջանկութիւնն է ամենակատար գործողութիւն
հոգւոյ, ըստ առանց բարեաց արտաքնոց և մարմնականաց՝
ըստ օգնելոյ. ընկերեալ զառաքինութիւն և զիմաստութիւն ըստ
կատարելոյ, և ապահովութիւն և յաջողուածոյ հանդերձելոյ :

Մեծամեծս խոստանայ այս սահման. բայց ամն
է ճշմարիտ, և բացայայտ. զի է համառօտ ինչ
վերադասութեանց՝ որ առաջին, և բարոյական
իմաստասիրութիւն ինչ 'ի քառեակ տողս ամփո-
փեալ :

Արդ՝ ասէ նախ արիստոտէլ, թէ երջանկութիւն
հաստատեալ կայ 'ի գործողութե : Զի որպէս և
տեսաք՝ չէ նա ունակութիւն, թէպէտ և ծնանի
յունակութենէ : Գործէ նա առաքինօրէն, բայց
չէ առաքինութի ինչ : Չէ նա նոյն ինքն առաքի-
նութի, այլ դուստր նր : Եթէ երջանկութիւն լի-
նէր ունակութի ինչ, մարդ և 'ի քուն՝ լինէր եր-
ջանիկ. զի քունն խափանարար է գործոյ, այլ ոչ
ունակութենէ, որպ և լուսր :

Որ ոք ննջէ, կեայ կենօք անկոյ. զի գործէ 'ի նմա
միայն աճողականն՝ որպ 'ի տունկս : Որ ոք գործէ

զգայապէս , կեայ կենօք անասնոյ . զի զգայունն է որ գործէ 'ի նմա , ոչ յանասունս . որ երջանիկն է , կեայ կենօք մարդոյ . զի գործողութին է բանաւոր , և սեպհական մարդոյ ։

Նու արդ՝ թողեալ զգործողութիւնս հասարակս մեզ կան ընդ տնկոց և ը չորքոտանեաց , յորս երջանկութի չունի զտեղի , 'ի միտ առեր դու՝ թէ այնք գործողութիք են առաւել կատարեալք և առաւել սեպհականք մարդոյ , որք վերաբերին առ կարողութի գերագոյն , այս առ Իմացականն ։

Միան է կարողութի երեւցագոյն քան զամ մարդկային կարողութիս . նա է դատաւոր գործողութեց ամ զգայութեց արտաքնոց . նա է խթան երկիւղի , և սանձ բարկութե ։ Կամքն ցոյնվայր է ուղեղ , ցորվայր 'ի մտաց առնու զօրէնս ։ Նա է գրաւոն անցից անցելոց . պատգամախօս ապագայից . գործաւոն արուեստից . գանձարան գիտութեց . տաճար մտաւոր առաքինութեց . առաջին շարժուն գործողութեց . հրեղէն երկինք հոգւոց . պաշտօնակից հրեշտակաց . պատկեր երկնաւոր ածպետութե . նա՝ ածպետութիւն է երկրաւոր . զի նա է իշխան հասարակապետութեան փոքու աշխարհի , ոչ ած է իշխան հնրկապետութե մեծի աշխարհի ։

Բայց 'ի մէջ ազնուական գործողութեց Հոգւոյ՝ տեսեր , զի երկու են գերազանցագոյնք և կատարելագոյնք . մին է գործածութի Խոհեմութե . որ կանոնաւորիչն է առնելեաց , և առաքինութեց բարոյականաց . միւսն է գործածութիւն Իմաստութե , որ կանոնաւորիչն է հայեցողական իրաց , և նըկատող անմահականաց և ածայնոց ։ Արդ ծանեար , թէ 'ի մի և նոյն աղբերէ բղխեն երկու երջանկութիք . որոց մին վերաբերի —— Գործնական կեանս , և միւսն —— Տեսական կեանս . զորոյ թողին իմաստասէրք վէճ , թէ ո՞ր լաւագոյն իցէ ։

Սիմոնիդէս՝ որ 'ի մտաւորաց ոք էր , արտաքսեալ զտեսական գիտութիւնս , հաստատէր զերջանկութին 'ի բարոյական առաքինութիւնս , 'ի վ͞ր բերեալ զհասարակաց զայն առած . որ ինչ 'ի վեր է քան զմ-
եզ .

Դէ. Լէ ան. Դէ ։ Թողոյր զխոսութիւն երկնային գաղանեաց՝ այնմ որ ասացին զնա․ կարծէր թէ յանկագոյն իցէ մարդոյ բարոյական կարգաւորութի մշկային կրից, քան զընդվզայրաքննին հետազօտութի ածային գաղանեաց, զոր ինքն ած իննեակ անթափանց ազգամանդեայ վարագուրօք պարածածկեաց․ Ծածկէր այս իւր նիւթական իմաստասիրութիւն 'ի թանձրամասնէ, զի կարծէր թէ հողի չէ ինչ բարեխիծակ քան զմարմին․ և զն այսորիկ ծիծաղէր, եթէ մահկանացուք մեծամեծս խորհէին զանմահականաց ։

Բայց Ճշմարիտ իմաստասիրօղք, որոց սրտաւս միտ ունէին՝ որ ինչ 'ի միտս է անրաժան, անմահ, և ածային, իմաստնապէս 'ի վր բերին, թէ արժանագոյն և խակագոյն գործողութիւն այսպիսի գերապանծ կարողութէ, է հետազօտել զբարձունս և զածայինս․ որով մահկանացուն մտանի յաւիտենականին ըս կարգ ։

Այս գերահրաշ իրք 'ի յառաջատես ածպետուէ ոչ կարի իմն յայտնեցան, և ոչ կարի իմն ծածկեցան․ իբր զի սրամիտք 'ի նմանէ սփրեցեալք ըս իւր նմանակք, մեծապէս խնդայցեն 'ի խոյզ նոցա ։ Անմիտք անծանօթք անձանց, և եւս առաւել ածային առարկայից, կեցցեն արբանեկեալ այլոց․ փոխանակ զի չեն արժանի վայելել յերջանկութէ ։ Բայց որք ոչ անմիտ են, և ոչ սրամիտ, թէ չվայելեն 'ի հայեցողական երջանկուէ, վայելեսցեն 'ի գործնականն առ իւրեանց քաղալեշութիւն ։

Այո՛ կեանք գործնական պիտանագոյն են քան զհայեցողականն․ զի առաւել պիտոյ է մարդոյ լինել բարի, քան լինել գիտուն՝ առ 'ի լինել երջանիկ ։ Բայց գործողութի հայեցողական կենաց՝ նմանագոյն գոլով գործողութէ անմարմին գոյացութեց, այնչափ է կատարելագոյն քան զգործնականն, որչափ մերձաւորագոյն է ածայնոյն ։

Արդարև սեպհական են մարդոյ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ, բայց ըս իրաց ինչ՝ թէպէտ և թերապէս՝ ընծային և անասնոց․ զի և սոցա բաժանորդ

նորա գոլով զգայական բաղձանաց, մարդկային ուսուցչութեամբ եւ սովորութեամբ ուսմնին եւ սորա սանձել զնոսա, 'ի սանձել զբարկութիւն եւ զցանկութիւն յուսով եւ երկիւղիւ։ Նա՝ իմաստասէրք ետուն մարդկան ուսուցիչ բարոյական առաքինութեանց ընդ նոսին իսկ զանասունս, զառիւծն՝ Արիութիւն, զարագիլ՝ Երախտագիտութիւն, զտատրակ՝ Ողջախոհութիւն, եւ զշուն՝ Հաւատարմութիւն. զի 'ի նոսա գործէ բնութիւն, որում անհնար է սխալել։ Բայց Հայեցողութիւնն է գործ մտաց՝ այնպէս ամբարձեալ 'ի զգայութեանց. եւ վերացեալ 'ի նիւթական առարկայից, զոր ոչ լիուլի եւ ոչ թերի հնար է պատշաճել անբանից. այլ միայն ոգւոյ եւ հրեշտակաց եւ մարդկան։

Ապա անանջրպետ են 'ի մարդ՝ այս երկու կեանք (հայեցողական եւ գործնական) առ հասանելոյ 'ի ստացութիւն կատարեալ երջանկութեան։ Վասն զի գոլով նորա Իմացական եւ Զգայական, ոչ կարէ լինել կատարելապէս երջանիկ, եթէ ոչ իմացականն՝ ոչ կատարելագործէ զմիտս Իմաստիւ. եւ ոչ զգայականն ոչ չափաւորէ զկիրս Խոհեմութեամբ։

Բայց քանզի յարանուանութիւնք առաւել լինին 'ի կատարելագոյն եւ յաղնուագոյն մասին ենթակային. վասն այսորիկ արհաստել յարանուանեաց զերջանկութիւն Միայն 'ի Հայեցողութեան Անձնայնոյ իբրեւ 'ի կատարելագոյն եւ յանձնայնագոյն գործոյ։ Այլ քանզի յընդմիմեամբ զատուորեալս կարգն վերին 'ի ներքս փակէ զկարգն ստորին, թէպէտ եւ ըստորինն ոչ փակէ զվերին, վասն երջանկութիւնն գործնական թէպէտ ոչ 'ի ներքս փակէ զհայեցողականն, բայց եւ այնպէս հայեցողականն փակէ գերազանցապէս զգործնականն։

## ԳԼ. Բ։

### Նկարագրութիւն առն երջանկի։

Իսկ արդ՝ ով իցէ երջանկագոյն քան զայն, որոյ ունակացուցեալ զմիտ իւր երկար սովորութեամբ յամենայն բարոյական առաքինութիւնս, վասն եւ ազատ լեալ 'ի ծառայական կապանաց մոլութեանց, յայն-

պիսի հլութն հաստուցանէ զըղձական ախորժակս. և յայնպիսի հանգստութն զաղմկալի երկիւղս, մինչև պատրաստական գտեալ առ ծմ պատահար, թէպէտ և փոխեսցի բաղդն, ինքն երբէք ոչ փոխի. և թէպէտ և կործանեսցի աշխարհ, ոչինչ զարհուրի. զի յինչ իրաց երկնչիցի, որ 'ի ծայրագոյնէն ահարկուաց չերկնչի:

Նա զի փոքր կոպար է մարդոյ իւր անհատ, զեղու յիւրմէ և անդր զյորդեալ զիւր առաքինուն առ օգնելոյ հասարակութն, որոյ ինքն է ընտրելագոյն մասն. վերաբարձեալ զհայրենիս' խորհրդով և գործով, իբր ատլաս զերկինս' գլխով և ձեռամբ. ( 326 ): Որով անդէն իսկ հանդիսանայ՝ աղաչաւորս զիւրև ունելով բազումս, և շնորհակալուս անթաւս. բարեհամբաւեալ 'ի ռամկայնոց, և մեծարգի յաչս ուսզաց. սիրելի իւրոց, և մեծանուն առ օտարս. որում ամենեքին խորհուրդ հարցանեն, և որոյ պատգամախօսի ծունր ածեն:

Բայց չէ պարագրեալ իւր երջանկութն մարդկայնովքս կամ եղականօքս: Ոչ շատանայ այնուիկ զոր առնէ, թէ ոչ ճանաչէ և զծմ, որ լինի ընդ ախեղերս: Ամբառնայ մտօք 'ի գիտողութն համակ տարրական աշխարհի. և 'ի վր հասեալ ճշգրիտ պատճառաց բազմանց բնաւոր գործոց' երևելոց 'ի ծովու և 'ի ցամաքի, յօդս և յերկինս, որք պարզամիտ ամբոխին թուին անհաս սքանչելիք. ծիծաղի զ զարմանս ախմարաց. յանդիմանէ զմոլորութիւնս իմաստնոց. և խնդայ վն գիտելոյ իւրոց, զոր այլք ոչ գիտեն. մինչև թուիլ նմա, թէ ոչ վն այլոց, այլ վն իւր միայն ստացեալ իցէ աշխարհ:

Նա՛ անցեալ զանցեալ զնիւթականօք և զփոփոխելեօք, և 'ի գերմարդկային գործոց ծանուցեալ զգոյութն գերմարդկային գոյացութեանց ( զն հրեշտակաց ), որք 'ի վեր են քան զմարդ, և ստորև քան զծմ, ջինջ միտք, պարզ իմանալիք, սակ հոգեղէնք, անմարմին գեղեցիկք, անթև երագունք, անուսումն իմաստունք, զ նոսին կենդա-

ղի

զի նա․ ածեալ զմտաւ, որպիսի ինչ իցեն նոցա կեանք, ո՞րպ գլորիցեն, զիա՞րդ տեսանիցեն, ո՞րպէս շարժիցին, ո՞րչ միմեանց խօսակից լինիցին: Եւ այս իսկ են զարմանք մեծ, թէ ո՞րպ մարդ ծանիցէ զհրեշտակս, և յերկրի գոլով բնակեսցէ յերկինս :

Բայց անբաւութիւն առաւելու նո՛ր երջանկութեան, յորժամ ոչ միայն յիւր փոքր աշխարհէ ելանէ յաշխարհ տարրական, և 'ի տարրականէն 'ի հրեշտակական, այլ և 'ի հրեշտակական աշխարհէ ուղղոյ 'ի սկզբնատիպ և յածայինն աշխարհ: Եւ նշողիւք բնաւոր լուսոյ իւրոյ՝ որ յարարածս, նկատել զարարիչն, խորհել զայն հրաշափառ և յաւերժական առարկայ, զոր այլ մարդիկ ո՞րպ խլուրդք 'ի միջօրէի իսկ չտեսանեն :

Յինչ մեծագոյն երջանկութիւն հնար իցէ մարդկային մտաց վայելել, քան 'ի նկատել զածային միտս, և 'ի ճանաչել՝ թէ որով օրինակաւ ճանաչէ ած զեղականս, և ճանաչելով 'ի գոյ ածէ զամ յոչնչէ. թէ քանի՛ գեղեցիկ իւր արար, և թէ՝ ես գեղեցիկս կարող է առնել: Եւ թէ կարել և կամիլ են յած էապէս մի և նոյն, զիա՞րդ ապա ոչ կամիցի զայն ամ զոր կարէ: Եւ որպ՞ ազատօրէն կամելով առնել կամ չառնել, ազատութիւնն՝ որ կարօղ է կամիլ կմ չկամիլ, ոչ յաւելու ինչ գործ պատահական, որում իցէ հնար լինել կամ չլինել յած: Եւ թէ՝ կարօղ է նա առնել 'ի միում վայրկենի զայն ամ, զոր կարօղ է առնել, առանց ծախելոյ զիւր կարողութի:

Արդ յանբաւ կարողութէ անցեալ յանբաւ բարութի. ճանաչէ. քանի՛ երախտիս ոչ միայն յամ կեանս, այլ և յամ վայրկենի ընդունի նա: Եւ զի յայտնի ճանաչէ. թէ յած միայնոյ կախեալ կայ ամ իւր բարութի. 'ի նա միայն ապաւինի. և առ նա միայն դիմէ: Եւ յայսմանէ առ այլ բազում քաղցրիկ խոկմունս միայն առաջնորդութ իմաստասիրութե գնայ խրախամիտ. որոց իւրաքանչիւրն կարօղ է արգահատել յաւիտեան զամ անգորր միտ: Արդ այս է այն կատարեալ իմաստութի՝

թե՛ դշխոյ առաքինութեանց, յոր հանգուցանէ Արիստոտէլ զգերակատար երջանկութիւն բնական։

## ԳԼ. Գ.

## ՕԳՆԱԿԱՆՔ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ։

Որ ինչ ցայս վայր լուար, է ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ ԷԱԿԱՆ։ Յաւելու աստ Արիստոտէլ, թէ ՄԱՐՄՆԱԿԱՆ ԲԱՐԻՔ և ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԻՔ են օգնիչք երջանկութեան։ Եթէ լինէր մարդ՝ միտ վերացեալ, և սոսկ հոգի, հայեցողութ[եամբ] լոկով վարէր զերջանիկ կեանս. և այլ ամ[ենայն] բարիք լինէին նմա աւելորդք։ Բայց անհնար է նմա ստանալ զերջանկութիւն առանց արբանեկութեան զգայութեանց, որք են դրունք՝ ընդ որս մտանեն ճանաչելի առարկայք 'ի տաճար մտաց. և ոչ զօրէ 'ի վեր արկանել զայն, եթէ մտաւոր գործողութեանց չօգնեն մարմնականք։

Այսպէս պիտոյ են ԲԱՐԻՔ ՄԱՐՄՆՈՅ, առողջութիւն, ոյժ, կերակուր, ըստ այնմ որ արբանեկեն գործողութեանց հոգւոյ։ Վասն որոյ պիտոյ են և ԲԱՐԻՔ ԲԱԽՏԻ, ճոխութիւնք, կալուածք, և դիւրութիւնք. ըստ այնմ որ արբանեկեն 'ի հաստել զմարդկային մարմին։

Չեն ինչ անլծորդականք ընդ երջանկութեան ճոխութիւնք. ոչինչ արդարութիւն պարաւանդէ զփիլիսոփայական իմաստութիւն առ խիստ մուրողութիւն։ Կատաղի նախանձ եղև՝ նախանձ շնական աղանդոյ կինիկեանց. որոց ոչ միայն աղտեղի էին գնացք, նոյնպէս և հանդերձք. որ և յիմաստասիրել իւրեանց 'ի մարդագս, հաչէին ընդդէմ Պղատոնի, Արիստիպպոսի, և Զենոնի, սակայն. ստացեալ ունէին բազում ճոխութիւնս, մեծակառոյց ապարանս, զուարճալի դրախտս, պերճապաճոյճ պճղնաւորս, բազմախորտիկ սեղանս, և ուսուցանէին՝ թէ կեանք փիլիսոփայի սակաւուք շատանայ։

Այլ իմաստասիրել՝ ոչ պիտի ընկենուլ զգանձս 'ի ծով իբրև զԿրատէս. և ոչ բրել զաչս՝ իբրև զԴեմոկրիտոս. և ոչ մուրանալ զցնցոտիս՝ իբրև զԴեմետրիոս, և ոչ բնակել 'ի կարաս՝ իբրև ըզԴիոգինէս։ Նա՝ որպէս 'ի Հնդիկս բուսանի ծառ,

որ

որ արժանապէս կոչի Երջանիկ. զի յիւրմէ ևեթ արտադրէ (ասեն) պտուղս, և իւղ, և ասր, և գինի, և զամ որ ինչ պիտոյ առ մարդկային կեանս. նոյնպիսի պարտ է լինել երջանկութեան իմաստնոյն, լի ամ բարեօք, և ոչինչ իւիք կարօտեալ. զի երջանկութիւն կոչի ՎԻՃԱԿ ԿԵՆԱՑ ԸՍՏ ՀԱՍԱՐԱԿ ԿԱՏԱՐԵԱԼ։

Չեն ինչ արտաքսահման յերջանկութէ իշխանք և մեծամեծ թագաւորք, զի չեն արտաքսահման յիմաստութէ։ Նա՛ որչափ առաւելուն քան զայլս բարեօք, այնչափ դիւրագոյն քան զայլս կարօղ են իմաստասիրել, և լինել երջանիկ։ Լաւ ես իմաստասիրէր պտղոմէոս մեծահարուստ եգիպտացին, դիտելով աչօք յերկինս, 'ի գիրս, և 'ի մեծագին տափարակ աշխարհացոյցս՝ զընթացս աստեղաց, քան անմիտ դեմոկրիտոս՝ բրելով զիւր աչս, 'ի նկատել կոյր զկուրայն։ Լաւ ես իմաստասիրէին մերկիմաստակք 'ի գիրգ կոչունս, քան սովեալ կիւնիկեանք իբրև զանասուն ծղաունս. լաւ ես իմաստասիրէին պղատոն և զենոն 'ի կրակատունս ապարանից իւրեանց, քան դիոգինէս 'ի տակ արևու, 'ի կարասի անդ իւրում, զոր երգիծաբանն գովէ և մանրամասն պախարակէ։

Առ քաջ իմաստասիրելոյ, լաւ է ստացօղ լինել քան մուրօղ. լաւ է մեծատուն լինել, քան ըղմեծատանց զհետ ընթանալ։ Ժամանակն զոր կորուսանէին կիւնիկեանք փոխանակ հնոտեաց 'ի տունս տունս, խափան էր հայեցողութէ ճեմանոյ, ուստի և երջանկութէ։

Թող, զի՝ որովհետև երջանկութիւնն ոչ է բոլորովին հայեցողական, այլ՝ մասամբ ինչ գործնական, բաղում ինչ պիտոյ է իմաստնոյն ի գործնականին, որ ըստ հայեցողականին էր աւելորդ։ Կատարեալ և ժրագլուխ խոհեմութէ պիտին վեհ իշխանութիւնք և մեծ գերդաստան. արդարութէ՝ աստձկինակք և ատեանք. մեծագործութէ՝ մեծ ծախուծք. մեծանձնութէ մեծ պատիւ. բարեխառնութէ՝ մեծ գրգանք։ Իսկ կիւնիկոսի չէ մեծ բարեխառնութէ ժուժկալել յայնմանէ՝ զոր ոչն ունի։

Մինչ

Մինչ զի ձոխութիւնք լաւ ևս կան 'ի ձեռս իմաստ_նոյ, քան մոլեկանի. զի նա կամ վարէ 'ի պէտս, կամ բաշխէ. սա կամ մսխէ, և կամ գողէ: Լաւ է և ձոխութիւն պղատոնի՝ քան զմուրողութիւն կիւ_նիկոսի. զի նա պատուէ զիմաստասիրութիւն, և սա անարգէ:

Բայց ասիցէ կիւնիկոսն: Իսկ զիարդ զենոն և պղատոն և արիստիպպոս ուսուցանէին, թէ կեանք իմաստնոյ շատանայ սակաւուք, և ինքեանք ստա_ցեալ ունէին ինչս բազումս:

Զորօրինակ անուաւոր ժամացոյց, յորժամ անիւ_ցուցակին չէ բաղադրեալ ընդ անիւ զանգակին, մի ժամ ցուցանէ՝ և այլ հարկանէ. սոյնպէս այնք իմաստասէրք, բացաձայնք յինքեանց, այլոց աղ_քատութիւն քարոզէին, և ինքեանք փարթամութեան զհետ վարէին:

Իսկ ընդէ՞ր այնպիսի իմաստուն փիլիսոփայք ոչ կէին՝ ոռ̄ քարոզէին, կամ ոչ քարոզէին՝ որպէս կէին:

Առաւել է, թէ արդարև ոչ բացաձայնէին նոցա կեանք 'ի վարդապետութէ: Ոչ եթէ ձոխութիւնք խոչ են իմաստութեան, այլ՝ կիրառութիւն: Հնար է լինել աղքատ յառաւելուն, և ձոխ 'ի չքաւո_րութեան. յորժամ ձոխն խնայօրէն վարէ 'ի պէտս՝ զայն զոր ունի, և աղքատն տարփմամբ բղձանայ այնմ զոր չունի: Ագահն իսկ դիւրէ լինել աղ_քատ 'ի ձոխութեան. բայց ագահն թշուառութ̃ կեայ՝ 'ի պահել. իմաստասէրն խնայօրէն վարէ զայն առանձինն՝ առ օգտելոյ հասարակաց. առաւել խնդամիտ լեալ 'ի պարգևել զայն, քան 'ի վայ_ելել:

Այսպէս վարէին 'ի պէտս իմաստասէրք զձոխութիւն, այլ ոչ ծառայէին ձոխութեանց. ստացեալ ունէին զայնս, այլ չէին ստացեալ 'ի նոցանէ. Էին այնք՝ ինչք արտաքինք, այլ ոչ ներքինք: Ունէին զնոսա առ մարմնով, այլ ոչ 'ի ներքս 'ի հոգի. զի 'ի հա_սանել առ նա ժառանգութ̃, կամ վարձատրութ̃, խաղաղական անձամբ ընկալեալ՝ ոչ ցնծային 'ի ստացութեան նոցա, ոչ խռովէին 'ի պահպանութեան, և

և ո՛չ տառապելին 'ի կորստեան։ Ջհուակն տառա-ցեց․ գիտելին լինել երջանիկ՝ նոցա, և առանց նոցա․ որպէս արդ ասասցուք։

## ԳԼ. Դ։

## Յատկութեանց երջանկութեան։

Առաջին յատկութիւն երջանկութեան է արխատ-ուելի, է՝ չինէր նմա կեանս ինչ ծառայագոյն բերկրական։ Զի եթէ երջանկութիւն չէ բերկրական, զինչ ինչ բերկրական կոչեսցէ յաշխարհի։ Բայց գործ է գի-տել, որ իցէ նորա բերկրութիւն։

Աստի սկիզբն առնու տատանումն այնոցիկ, որք պատրեալ 'ի բաւէն՝ զուտ հեշտութիւն կարծեն ճշմարիտ։ Այսպէս աշակերտքն Եպիկուրոսի՝ լուեալ թէ վ̃պ իւրեանց զմտական գերագոյն բա-րին հաստատէր 'ի հեշտութեան, և չիմացեալ թէ որ հեշտութիւն իցէ այն, արձակերասան դիմեցին 'ի հեշտութիւն զգայական. խնդրելով ոչ զբերկրութիւն յերջանկութեան, այլ զերջանկութիւն 'ի բերկրութեան։ Թէ հարցանես զու զրաստու, որ ջամբ իցէ համ-եղաճաշակ, տացէ պատասխանի. խոտ մայիսի, և վարսակ (այսինքն եւլափ) օգոստոսի. և թէ հեշտասի-րի հարցանես, որ իցէ մեծագոյն երջանկութիւն, յայտ է թէ տացէ պատասխանի. հեշտութիւնն զգայ-ական։ Այլ յզգախուսմ քմաց՝ այզգախոխ վայելէ ջամբ։ Ոչ կարէ առնել կատարեալ դատաստան զիրաց, որոց ոչ կատարեալ են խելք։ Ղուկուղոս (երևե-լին 'ի հանդերձանս կոչնոց) մարթի ընտրութիւն առնել համոց, և ոչ թէ կին յղի՝ որոյ թիւր է, բնակայութիւն զառածանէ զճաշակ. մինչև դառնին թուիլ նմա քաղցր, և քաղցուն դառն։ Ապա ի-մաստունք և ոչ ռամկայինք առնուն զճշմարիտ ճա-շակ բերկրականին։

Այսպէս լուար, թէ բերկրութիւն է վերջին ինչ կատարելութեան, և անհատական իմն հանգիստ գործողութեց ի-րականութեամբ պատշաճելոյ։ Իսկ արդ՝ եթէ հայեցո-ղութիւն է գործողութիւն առաւել սեպհական և ա-ռաւել պատշաճական մտաց, որպէս ասացաւ, ապա

չիք

չիք ինչ գործողութիւն քան զայն բերկրական. զի չիք ինչ քան զայն պատշաճական: Եւ եթէ այնչափ բերկրականագոյն են գործողութիւնք իմացականք, որչափ լաւագոյն են առարկայք, ապա այնչափ լաւագոյն են բերկրանք իմաստնոյն՝ քան զայլոց մարդոց, որչափ առարկայն ածային է լաւագոյն քան զայլ առարկայս:

Եթէ զբերկրանս մտաց ընկալեալ ՚ի խոկումն ածայնոց՝ կարող լինէին տեսանել հեշտասէրք, ատուգէին արդեօք զատացեալն յընկերաց ազիակայ. որոց ՚ի ճաշակել զեղեգնաշաքար ՚ի ծովափնեայ ամայութիւն լերինդ, ամբրեալք յայնմ անակնկալ քաղցրութեան՝ և մոռացեալք զզուարճութեն յունաստանի և զփիւրաւոր հայրենի վաստակոց, կամէին յայնմ անապատի վախճանել զկեանս.

(527):

Ասացէն ՚ի մետ առեր դու, թէ երջանկութիւն չէ ինչ նուազ ԴԻՏՈՒԹԵԱՆՑ քան ՔԵՐԻՔՄԱՆ: Եթէ պատիւն է յարգ ինչ, զոր ընծայեմք այլում գերազանցութեան, և վնկ առաքինութիւնն է պատուաւորագոյն քան զայլ ամ մարդկային բարիս, ապա իմաստութիւնն այնչափ է պատուաւորագոյն քան զայլ առաքինիս, որչափ առաքինութիւնք ածայինք են գերագոյնք քան զմարդկային առաքինութիւնս:

Բայց յայսմ վայրի իւրով խորին խոհականութեամբ որոշեաց արիստոտէլ երկուս ազգս ԳԷՐՕԶՄԱՆՑ ԽՕՏԻԼԻԱԹԷՆՑ: Մին ՔՕՑՕՐՋՕՆ, որ կատարելագործէ զմարդ ՚ի ներքս յինքեան. և միւսն ԱՆՆՇՕՆ, որ կատարելագործէ զմարդ հայելով յայլս: Զառաջինն կոչեաց նա ԴԻՏՈՒԹԵԱՆՑ, և զերկրորդն ԳՕՉԷԼ: Զի պատիւն հայի յանձն. իսկ գովեստն հայի յորԴԻՏՆ ԳՈՐԾՈՅ:

Վնկ ասէ նա, թէ ած առաւել պատուելի է, քան գովելի: Ընդունէն առաւել վայելէ լաւելայն երկրպագութիւն, քան բազմարեղուն գովասանութիւն. մն զի գովել ած մեզ պարտաձանկեալ յինքեան՝ և էապէս զմայլեալ ՚ի հայեցողութիւն իւր, է ինքնաբաւ՝ առանց գործելոյ ինչ արտաքոյ իւր: Եւթէպէտ և գործէ արտաքոյ իւր բազում ինչ գե-

ղե-

ղեցիկ և սքանչելի. սակայն և այնպէս գործէ հա-յեցողութիւն յինքն՝ իբր 'ի գաղափարական պատ-ճառ նմի: Մինչև յամ՝ հայեցողական կենաց՝ լի-նել հարկաւոր, և գործնականին՝ ազատ:

Այս յայսմ տրամաբանուէ քաղէ, թէ որովհետև մարդ երջանիկ՝ պարապեցուցեալ զմիտս յածային խոկմունս կեայ յինքեան, առաւել յարգելի է նա և պատուելի քան գովելի. իբր զի երեւի նա առաւել ածանման ածն, քան մարդ մահկանացու: բայց քանզի իմաստունն Է առաւելութեն հայեցո-ղականին լծորդէ երբեմն զառաւելութիւն գործնակա-նին, որ հայի յօգուտ այլոց. անտարակոյս՝ է նա և մեծապէս գովելի. ոչ ած՝ բայց յերկրպագու-թէ մի իւրոյ կատարելութեն՝ գովի եւ երգովք մի իւրոց գերահրաշ գործոց արարքնոց:

Մտոյգ իմն է, թէ ոչ միայն պատուելի է այս անձն երջանիկ՝ ոչ ածանման ածն յերկրի, այլև պատուելի առնէ զծնողսն՝ որք 'ի լոյս ընծայեցին զնա, զհայրենիսն՝ որ եղեն նմա ժառանգաւոր, ըն-տանիսն՝ յոր եա զանձն խոկման, և ուր միտ նորա երկնեաց զայն ածային իմաստս. ոչ պատուիւր օրոցն, ուր ծնաւ գիտս յիգաս լերին: Երևէին 'ի Սամոս՝ որդոյ աւերակք լուին իրաձթին, ուր հա-մերց ուսոյց պիւթագորաս զիմաստութիւն: Եւ-սողոնին 'ի սաղամինա, և անաքսագորայն 'ի կլա-զոմենէ, և քսենոկրատայն 'ի քաղկեդոն. և ար-տաքոյ աթենայ (քաղաքի) նաեւ քարայրն եպի-կուրոսի, և մետրոդորոսի. որ 'ի համբաւոյ նոցա պայծառացաւ:

Այս չեն ինչ զարմանք, եթէ արիստոտելի մըտ-աւեալ զպայպիսի մեծ համարում զիմաստնոյ, և ծանուցեալ զանխ նր 'ի դիւցական յիւր վար-ժապետ (զր 'ի պղատոն) ձօնեաց նմա սեղան, և առ նովաւ զնորուն անդրի, որում օրըստօրէ մա-տուցանէր խունկս ծաղկահատս յաւելեալ 'ի մր պայպիսի իմն մերատաւութի. սա է. որպէս գործ է բնակեցեալոց զատիա ընծայել. և նմանող լինել:

Յանձին կալաւ մեծն աղեքսանդր զնորայն վար-դապետութեն և զօրինակ. պատուեաց և սա եւ

զիւրն

զիւրն Արիստոտէլ, ոչ Արիստոտէլի պատուեալ էր զիւրն Պղատոն: Արար քաղաք մեծ զփոքր Ստագիրաս, ուր ուսուցիչ իւր էր ծնեալ, և ուր մտախոհութբ շարագրեալ էր նր զերկնային ճառս զերկնայնոց: Նա Արիստոտէլ ԶԱՇԽԱՐՀ ԵՐԿՆԻՑ իւրում աշակերտի. եւ աշակերտն իւրում ուսուցչի ԶԵՐԿԻՐՆ, յորում ծնեալն էր: Պարգև պատուական. այլ այնչափ անհաւասար, որչափ երկիր երկնի. զի մեծամեծս գիտէ պարգևել իմաստունն իշխանի, քան իշխանն իմաստնոյ:

Բաւել եւ գժուարին թուի թերեւս այն միայնակութեն, լինել երջանկութեն բարի ինչ անուամբ և ճշմարտութեամբ:

Ասիցէ ոք. որոյ բարւոյ [illegible] իցէ լինել [illegible] [illegible], և ճշմարտութեան 'ի [illegible]: Ու այլ ինչ էն այս [illegible] [illegible]. բայց [illegible] ինչ [illegible] [illegible] [illegible]. [illegible] բարին և [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible]. է՝ զի [illegible] [illegible] բարեօք. և է՝ զի [illegible] 'ի [illegible]:

Վոհ վեհք իմաստնոց յունաստանի յիշեցուցին, թէ չէ պարտ զոք կոչել երջանիկ՝ ցորչափ է կենդանի: Արդ եթէ երջանկութիւն ոչ գայ՝ բայց եթէ յետ մահու, (իմա զբնական երջանկութէ.) զինչ օգուտ իցէ մարդոյ, որ այլ ոչ եւս է մարդ: Իսկ թէ յայնժամ մարթ է ասել, ԷՐ ԴՈ ԵՐՋԱՆԻԿ. զինչ բարի իցէ այն, որ ոչ է՝ յորժամ է, այլ միայն՝ յորժամ եղեն:

Բայց և յայլմէ կողմանէ՝ նախ ճշմարիտ է, թէ ճշմարտապէս երջանիկն՝ կարէ ասիլ ԵՐՋԱՆԻԿ. մինչ դեռ կենդանի է. և չէ ճշմարիտ երջանկութիւն, թէ չէ մնայուն: Սակայն արժան է հայիլ՝ թէ յինչ հաստատեալ իցէ ճշմարիտ երջանկութի:

Թէ երջանկութիւն հաստատեալ իցէ 'ի մարմնական հեշտութիւնս՝ որպ. էպիկուրեայն, չա՛տ է աւելադանց հեշտութեն առնել զայն թշուառ: Եթէ 'ի բարիս բախտի՝ որպ. կրասոսին, չա՛տ է միայն դժբախտութե՝ վեր 'ի վայր շրջել զայն: Եթէ 'ի պատիւս՝ իբր գինեխոսին, չատ է ապստամբութե ինչ ժողովրդեան զթագաւոր սիրականայ առ-

նել

նել մանկավարժ 'ի կորնթոս։ Ո՛չ է մեր այն ինչ՝
զոր բախտն առնէ մեր։

Արդ յաւէժ՝ զոր լուար, մարթ եղեւ քեզ ճանաչել, թէ մարմնական բարիք, եւ բարիք բախտի, ճոխութիւնք, պատիւ եւ իշխանութիւնք, են օգնիչք երջանկութեան. բայց չմտանեն յէութեան երջանկութեան, որ հաստատեալն է 'ի գործողութեան իմաստութեան եւ առաքինութեանց։ Այս գործողութիւն է բարի ինչ ներքին եւ կամաւոր, որ ոչ ժողովրդեան, ոչ բախտի, եւ ոչ մարմնական պատճառաց, այլ միայն իւրական կամաց է ներքոյ անկեալ։ Եւ մարթ է կոչել մշտնջենաւոր զայն բարի, որ առնէ այնչափ որչափ կամի մարդ։

Ճշմարիտ է, թէ երջանկին՝ հնար է թէ 'ի վերայ գայցեն ոչ միայն բախտի՝ այլ եւ մարմնոյ եւ զգայութեան ցաւք եւ ցաւագին պատահարք։ Ոչ կամիմ առնել ընդ եպիկուրեանս. թէ՛ եւ 'ի ցուլ փալարեան, եւ 'ի մամուլս պրոկրուստեան, իմաստունն թմբրեալ յայն անզգայ անհրականութեան, չզգայցէ ինչ ցաւ. (328)։

Բայց եւ այն է ճշմարիտ, զի թէ պատահարքն բղկայ առնուն 'ի կորուստ արտաքին բարեաց, կիւնիկեանն իսկ առանց այնց իմաստասիրէ, եւ ուրախ կեայ։ Եթէ անցանէ ցաւն 'ի մարմնական զգայութիւնս, բայց այնպէս, որ հնար իցէ տոկալ, ոչ միայն չխափանէ զերջանկութիւն իմաստնոյն, այլ եւ պայծառացուցանէ, որպէս պողպատն զգայլախազ։

Երջանկութիւն եւ թշուառութիւն չեն ընդդիմակք, բայց երջանկութիւն ընդ ցաւոց է ընդդիմական։ Զեն ապա երկու շարժմունք ներհակականք 'ի միում ենթակայի. զի երջանկութիւն է 'ի հոգւոջ, եւ ցաւն յանդամս։ Թէպէտ եւ ոգի մարդ մեկնի գոչէ եւ հեծէ եւ ցաւագնի, բայց եւ այնպէս հոգի նորա ունի ինչ ազատ խորշ 'ի վերնայարկ իւր։ Թէ ոչ կարէ առ ժամն մտադնել նկատողութեան հետաքրքննին եւ վերամբարձ իրաց, վարէ 'ի պէտս՝ որոց յառաջն օգտիւ եղեւ նկատող։ Աղաչէ զնա, զոր ծանեաւ. յուսայ յանձայլն ակնչութեան՝ որ խնամ-

ղաշ

ղաշխարհ. մխիթարի յիւրում անձկութեն, որ գի-
տէ պատիւ փոխատրել նմ վշտաց: Զատէ ինչ
զբոյց անարժան առն իմաստնոյ, և չառնէ ինչ
գործ անարժան առն արիականի: Մինչ զի՝ թէև
ոչ 'ի վերայ գայցեն վերագիրք երջանկութե. եր-
ջանկութիւնն էական գործէ զիւր գերապանծ
գործս, անշնար գոլով իմաստնոյն լինել թշուառ,
թէ ոչ յեղափոխեսցի 'ի մոլի կամ 'ի խելագար:
Այլա եթէ հուսկ ուրեմն ը ագեխղայսն՝ ել-
ցէ յաղթական 'ի տանջանաց անտի, ոչ այնի նմա
անցքէն տատնալ զերջանկութի նորովք ունակու-
թեք իմացականօք և բարոյականօք՝ առելի քան
եթէ լեալ էր առ վայր մի 'ի քուն: Մանաւանդ
թէ առաքինութե նր առաւել եւ զօրացեալ 'ի
փորձ վշտաց, երկպատկէ զիւրն երջանկութի, և
գործէ մեծ եւ զօրութբ և բերկրանօք: Բայց և-
թէ տանջանք այնպիսի իցեն, մինչև խզեալ զկա-
կանն յօգակապ՝ բանագատեսցեն զոգի վտարան-
գիլ 'ի մարմնոյ, մեան 'ի հոգի (ոգ և լուար) ու-
նակութեք առաքինութեց պարահովագոյն. և ու-
նակութիւնն իմաստութե առաւել եւ մեծապայ-
ծառ. որով և գործողութեք լինին առաւել գե-
րապանծք յանջատ միաս՝ քան 'ի միացեալն ը մար-
մնի, առանց պրանչելեաց: Մինչ զի յամօթ երե-
սաց տանջանաց և մահու, տանի զիւր երջանկու-
թիւն 'ի լաւագոյն եւ կեանս:

Ըստայս վերագոյն, թէ երջանկութիւն է [illegible]
[illegible]: Բայց այս թուիցի թե-
րեւս առարկոյս ինչ կարի իմն դժուարամարելի:
Ասիցէ որ. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Բայց յառաջելոյս փոքր մի յառաջ՝ քաջայայտ է
պատասխանին: Նպարէն ցուցաւ, թէ բարիք
բախտի ը այնմ միայն են հարկաւորք, ը որում
կազդուրեն զմարմին. և բարիք մարմնոյ ը այնմ
միայն են հարկաւորք, ը որում արքանեկեն հոգ-
ւոյ.

ւոյ, այլն ամ ոչ միայն չէ հարկաւոր առ երջանկութիւն, այլ է և վնասակար:

Ապաքէն 'ի մեր առեր, թէ երկու են երջանկութիւնք. մին ճշմարիտ, և միւսն սուտ. այն է առաքինական, և այս մոլեկան. այն է բանաւոր, և սա անբանական: Առ երջանկուն հեշտախառն բազում բարիք մարմնոյ և բախտի են հարկաւորք: Ամենայն խայծ՝ սակաւ է քաղցու մեծի: Բազմաց պէտս ունի, որ բազում ինչ ստացեալ ունի: Ամենայն ինչ պակասի այնմ, որ ամի ըղձանայ, զի խղձն է անյագ, և բարիքն նիւղ: Բայց երջանկութիւն առաքինական՝ յետ միանգամ ստանալոյ, սակաւուք պահի. և այլ չեն նմա հարկաւոր՝ ճգանք և ճոխութիւն, որք օգնեցին 'ի ստանալ զայն:

Այս եթէ իմաստունն, մինչդեռ կեայ՝ պիտոյս ունիցի բարւոյ ինչ արտաքնոյ կամ մարմնականի, ոչ պիտոյս ունի այնմ՝ որպէս իմաստուն, այլ որպէս զգայական: Զի որպէս իմաստուն՝ կեանք իւր է իմացական՝ իւրև շատացեալ, որպէս հրեշտակականն և ածականն: Գիտես, զի վերագոյն իրք բովանդակեն զստորինս. և որ ստացեալ ունի զառաւելն՝ ստացեալ ունի և զնուազն: Չունի հրեշտակն զզգայութիւն անոյշ հոտոց, և ոչ ներդաշնակութեան հնչմանց, և ոչ քաղցրութեան կերակրոց, բայց է 'ի նմա հոգեղէն ինչ զօրութիւն, որ բազում իւիք առաւելու քան զայսոսիկ զգայութիւնս. և յայսպիսեաց աստի ինչ ոչ պակասի նմա. զի և ոչ մի 'ի սոցանէ պիտի նմա:

Երջանկութիւն իմաստնոյ է կեանք ինչ իմացական՝ կատարելագոյն յոյժ քան զգործնական, և քան զհեշտական: Նկատող լինել, և կեալ առաքինօրէն՝ չէ ինչ թանգագին մարմնոյ և գանձուց: Որ կեայ մօք, չունի պիտոյս հեշտութեան մարմնոյ: Զի հոգի իմաստնոյ, որպէս լուար, եւս և անջատ 'ի մարմնոյ՝ վայելէ յիւրում իմաստութեան. և նկատող է գեղեցիկ գաղափարաց կրելոց յինքեան՝ լաւեւս, քան թէ լինէր 'ի բանտի մարմնոյ:

Յստացելոց աստի յատկութեանց հարկաւ զհետ

գայ

դայ յետինն այն և մեծն քան զամ, թէ երջան-
կութիւնն է Աստուծոյ ինքն Երանութեան:

Վերատառութիւնն գերապանծ, զոր նախնի փիլիսո-փայք ընծայէին դից իւրեանց, եղև Երանելին, նշանակեալ նովաւ զիմացական կեանս մեծին Այ: որ միշտ գործէ մտօք, և միշտ է անդադար 'ի նը-կատումն իւր. ուստի և կեանքն՝ զոր կեայ, է զիւրև, և ինքնարար. և վեհ ամենազուարճ և ե-րանական: Զմտաւ ածին, զի թէպէտ և մարդիկ կերպարանեն իմաստս զԱյ մարդկօրէն, բայց և այն-պէս յԱծ տիրաբար չունին զանեղի առաքինութիւնս բարոյականս, զի չունի ծայրս՝ առ չափաւորելոյ միջասահմանութիւն, այլ՝ 'ի տեղի նմ առաքինու-թեանց ունի զիւր միտս, զէական և զգերագոյն կա-նոն ուղղութեան:

Այսպէս մն զի Նծ է ամենապարզ ներգործութիւն, ը̄ այսմ իմաստութիւն նր ող և բարութիւն՝ են մի և նոյն ը̄ իւրումն էութեն: Մինչ զի յԱծ՝ ը̄ խոկուէ, ոչ միայն իմաստութիւնն է բարի, և բա-րութիւն իմաստուն, այլ իմաստութիւնն է նոյն ինքն բարութիւն, և բարութիւնն՝ նոյն ինքն իմաստութիւն:

Յայս վայր եհաս Արիստոտէլ իւրով բնաւոր տրա-մաբանութբ. յորմէ իմաստասիրեալ 'ի վերայ բե-րէ, թէ ող երջանկութիւնն Այ իւրք հաստատեալ է 'ի նկատումն իւր ինքեան, նոյնպէս գերակատար երջանկութիւն մարդոյ տիրապէս հաստատեալ է 'ի նկատումն Այ: Իսկ ող երջանկութիւն Այ կոչի ե-րանութիւն, նոյնող երանութիւն կոչի երջանկութիւն իմաստնոյ. այսուհետև տարբերութբ, զի Աճ է ե-րանեալ էութբ, և իմաստունն է երանեալ հա-ղորդութբ: Արդ՝ եթէ 'ի նմանութէ ծնանի սէր, և 'ի սիրոյ՝ հաղորդակցութիւն բարեաց, ո՛ իցէ այն-պէս սիրեցեալ և նպաստաւորեալ յԱյ, ող ի-մաստունն. որոյ ամբարձեալ զմիտս յերկրաւոր տարերկայից յԱծայինն տարերկայ ըստ արևանէր անկոց. թէպէտ և տախուք կառեալ ը̄ գետին, ա-չք միշտ հայի յարեգակն, գէտ ակն ունելով նր յԱծ, և Այ 'ի նա:

Այսպս միայնոյ իմաստնոյ՝ եւս 'ի մանկանացու յաւ-

տի

տի կեանս յիրաւի պատշաճի Ներնեուգ անուն : Այս այն անուն է , զոր հռովմէական կայսերք (յետ դրուելոյ փառամոլութե զառաքինութեանն տեղի ) , 'ի հրովարտակս իւրեանց , և 'ի յաղթական կամարս՝ յիւրեանս կորզեցին յաղկաղկ ժողովրդոց , որք ակամայ կամօք կոչէին զնա Ներնեուր և ազնուական , և 'ի սրտէ կղկաթէին կոչել զնա Ծնրանաշխեաց գողանս՝ և անդորրամեփային ափանս : Առաւել ևս իրաւամբք քրիստոնէական եկեղեցի , որ չափէ զպատուոյ անուանս՝ ոչ 'ի Ճորճորանէ լերանց , և ոչ 'ի բնաւոր լուսոյ գործոյն երկնից , այլ 'ի բարոյական առաքինութենց , 'ի վերաձայնել նր զվեհանձնութիւն՝ ընդորդութեան քեր , ոնչ քեր , որճափութեան քեր , արժանապէս զայս մեծ վերատառութի Նրանութեանց քեր , ընծայեաց այնց սրբազան վեհապետաց , որք՝ ըստ օրինակի առաքելոյ՝ ած իմաստ գրլխով բարձեալ ունէին զերկինս 'ի յերկրի : Եւ թէպէտ և նոքա կոչեն զանձինս փրոպ ծառայս , բայց և այնպէս հաւատացեալք կոչեն զնա Ներեներանեան եարս : Եւ երկրպագանչիւրոյն է իրաւացի պատճառ : Զի որ զայդ վերատառութիւն ընդունի , հայի 'ի մարդկայինն իւրոյ անձին : Եւ որ տայ , հայի յածականն՝ որ յիշխանութե անդ . որ կամ իրօք , կամ համարմամբ՝ ընդդէմ է ը իմաստութե ածայնոց :

## ԳԼ. ՎԵՐՋԻՆ :

### Ցուցք անեփորանային երջանկութե : Եւ ափորփ գործոյ :

Տեսեր դու 'ի բովանդակ յայսմ մատենի , ով աշխատասէր քաջ վարժապետ՝ 'ի բարոյական իմաստասիրութե առաջնորդէ Ներանութեան Խմափոփրային . Մնայ քեզ տեսանել 'ի զուարթարար լուսոյն՝ ով երանութիւնն իմաստասիրական առաջնորդիցէ Ներանութեանն անեփորանային : Իմաստասիրականն հաստատեալ է 'ի հայեցողութե ածային իրաց , ոխչմեփ անուշեղն Խմափոփրային ի 'ի բնաւոր լուսոյ : Աւետարանականն հաստատեալ

է

է 'ի հայեցողութեն ածայնոց՝ ՕՊՏԻՔԱԿԻՔ ՅԱՅՏՆԵՑԵՐՈՒՑ 'ի լուսոյ հատուածոյ: Բայց չափաւորելով զայս իմաստասիրական և բնական: Այս և բնականն և իմաստասիրականն նշոյլ միայն են ածային լուսոյ. և 'ի քն իսկ համաբնակէին իմաստութենն անստեղծ, և ստացական, և մին զմիւս ոչ արտաքսէր:

Մեծ եղև այս՝ երջանկուն ածանկատ նրց, որք թողեալ զիմաստասիրական գիտողութիւս գիտնոց ճառատողաց 'ի ստոյիկեան և 'ի լիկէականն սրահի, և մեծ եղեալ առաւել անձանց՝ քան իւրեանցայնոց, աւետարանչաց քան փիլիսոփայից, այ քան մարդկան, գային 'ի լուին անապատս նեղոսի և եփրատայ զկորուսեալ շաւիղս երկրաւոր դրախտին, որ մուտն է երկնայնոյն: Բայց խոստովանելի է, թէ մեծ ևս եղև երջանկութիւն օգոստինոսի, հերոնիմոսի, և թովմայի, և այլոց սրբց վարդապետաց. որք յածային գիտողութիւս իւրեանց՝ ընդ աւետարանական լուսոյ կցորդեցին և զիմաստասիրականն: Այս և 'ի սր սեղանս, թէպէտ և 'ի լոյս արևու՝ լուցանին փոքր ճրագունք 'ի պատարագի.

Բայց մեծ խտիր է 'ի մէջ երկոցունց երջանկութեանցս. զի իմաստասիրականն ունի վախճան առաքինութն զհայեցողութն. իսկ աւետարանականն ունի վախճան հայեցողութն զառաքինութն: Եւ իրաւամբք: Վն զի ներգործութիւնք մտաց ազնուագոյն են քան զներգործութիւնս բարոյական առաքինութեանց, զի կարողութին է վերագոյն. բայց առաքինութիւնն աւետարանական է ազնուագոյն քան զոր և իցէ ներգործութիւն մտաց. զի լծորդ է ընդ ածային սիրոյ:

Յայսմ՝ արիստոտելի պիտէր մեծ ևս ուսուցիչ. բայց և այնպէս անատակցութեն է արժանի, զի ոչ ծնաւ երկրհարիւր ամօք անդան. (329): Այսպէս կամք էին նր, զի բարոյական առաքինութք ցածուցեալ մարդոյ զկիրս՝ խաղաղեցէ զմիտս, առյատակագոյն ընդունելոյ զապաւորութիւս գերագոյն հայեցողութեց, զորօրինակ ջինջ և հեզահոս գետ յատակագոյն ընդունի զպատկերս աստեղաց

երևե-

երևելոց 'ի նմա. և յայնմ գնէր զիմաստասիրական երջանկութեանն վերջին կատար սահմանափակ. (530) :

Բայց իմաստասիրութիւն քրիստոնէական՝ Թէպէտ և տրամադրէ զմիտս առ ճանաչումն երկնայնոց, բայց յայնմ չառնու դադարի, այլ կարգէ զճանաչումն այ 'ի սէր այ, որ է գերագոյն առաքինութիւն աստուածաբանական : Առաւել հաճոյ է այ՝ սէր ընդունել 'ի մահկանացուաց քան հայեցողութիւն : Մտադիւր բնակէ նա 'ի սրտի, քան 'ի միտս. նա ինքն խնդրէ յիւրոց որդւոց զսիրտ՝ զաթոռ սիրոյ, և ոչ զուղեղ՝ զաթոռ իմաստութե. զի զիմաստութիւն նա պարգևէ իբրև ինչ իւր. զսէր խնդրէ իբրև ինչ մեր.

Այս սէր միայն է, որ կատարելագործեալ զերանութիւնն աստուածաբանական, արժանացուցանէ երանութեան յաւիտենականին : Այս է ձայն առակի, որով չափի երկնայինն եհմ. զի երանական տեսութիւնն չէ հասուցումն գիտողութե, այլ սիրոյ : Նա՝ բովանդակ իմաստութիւնն աստուածաբանական՝ որ է համափոփն, չարժանանայ երկնայինն երանութե, թէ ոչ արծարծանի սիրով :

Եւ զինչ իցէ սէրն հեղական, բայց սէր 'ի մէջ մարդոյ և այ, և 'ի մէջ մարդոյ և մարդոյ, յորում երկոքին կցորդ են այ. զի ոչ լուար, որք միաբանին ընդ միում եզրի, միաբանին ընդ միմեանս : Իսկ արդ՝ եթէ 'ի մարդկայնում սիրելութե՝ ոչինչ օգտէ ճանաչել զսիրելին, եթէ ոչ սիրի, յայտ է թէ առաւել հեղական սիրոյ՝ ոչ միայն ամ իմաստութիւն իմաստասիրական, այլ և ամ իմաստութիւն մարգարէից և հրեշտակաց լինէր անգիտութե հաւասար. զի ճանաչել զած, և ոչ սիրել զնա՝ չար ևս է քան զչճանաչել զնա. զի այդ է ապիրատութիւն դիւաց : Եւս և յերկինս տեսութի երանելոց հարկիւ եզրանայ 'ի սէրն : Յած իսկ նկատողութին արտադրէ զբանն. և եզրանայ 'ի սէրն : Մինչ զի՝ սէրն է լրումն երջանկութեան աստուածաբանականի, երանականի, և ածայնոյ :

Եղուկ մտաց այնց , որք գիշերավարժ տքնութեք , և տունջենային վաստակովք գրգռեն զգայարանս , ըղնուն զԹուղԹս , և առ ԹղԹովք գալկանան . 'ի ճանաչել Թէ զինչ է ած . զո՛ւր ժամանակ կորուսանեն , և հոգւոյ հասեն զաշխատութիս , եթէ վախճան ճանաչման նր չիցէ սէր նորուն ։ Ո՛վ կոյր անմտութիւն բարձրամտաց . դիւրին է սիրել զած քան 'ի խնդիր լինել նր . 'ի խնդրել զնա՝ բազում է աշխատութի . 'ի սիրել զնա՝ բազում է օգուտ . բայց և այնպէս առաւել սիրեն աշխատիլ 'ի խոյզ և 'ի խնդիր , քան վայելել 'ի սէր գերագոյն բարւոյն . որ Թէ ոչ սիրի՝ 'ի զուր խնդրի , և տաժիւք գտանի ։

Բիւրիցս երջանկագոյն են այնք ազէտք , որք Թէպէտ և անծանօԹ են բարձանց ստորոգելեաց . և խորոց գաղտնեաց ածային էութե . բայց գիտնագոյն գտեալ կոյր հաւատով՝ քան ականի խմաստասիրութեամբ , լոկով սիրով նորա արժանանան տեսանել զնա . և յառաջ քան զիմաստասիրել 'ի գալրոյս՝ Թէ զինչ է ած , գնան վայելել 'ի նմա ։

Եւ զինչ իցէ այս սէր . բայց եթէ համեմատական իմն՝ բայց խանդակաԹ բարեյօժարութի առ առարկայ ինչ անբաւապէս սիրելի վասն իւր . որոյ գերազանցութիւն է այնչափ գերազանցեալ , մինչև շարժել զսիրտ խոնարհ 'ի խոր երկրպագութիւն ։

Այսմ բարեյօժարութե զհետ գայ անքակ միաբանութի . կերպարանակցեալ զկամս մեր՝ իւրոց կամաց . յարգական երկիւղիւ չյարկացուցանելոյ զայն անբաւ բարութիւն , որ ամենեցուն է ձեռնկալու ։ Եւ յայսմանէ ծնանի փոխադարձ բարեբարութիւն , ըստ մարԹելոյ սիրելւոյն՝ անբաւութե անհաւասարականի . 'ի տալ բոլորովին զանձն քո այնմ՝ որ ետ քեզ զած զոր ունիս , և կարող է տալ զած՝ որում ըղձանաս ։

Իսկ արդ՝ եթէ սոսկ երջանկութիւնն բարոյական է բարի ինչ այնչափ գերազանցեալ , որչափ լուար . որպիսի լրումն երջանկութե լինիցի 'ի հոգի , որ Թէ-

Թէպէտ և ընկղմեալ 'ի մարմին, գլխովին ընկղմե-
ցի յԱծայինս . և 'ի վերայ յաւելեալ լուսոյ գի-
տութե զլոյս հաւատոյ զայլծառագոյն, և բնա-
կան սիրոյն ընդ զգերբնականն սէր զեռանդագոյն,
արծուօրէն յայն լոյս յառեալ հայեցի . և ընդ հրա-
կեաց Թիխթաւն յայն վառ վայելեսցէ, եւ քան
զեւ բորբոքեալ սաստկագոյն եւ ներգործութեամբ
երկրպագութե և սիրոյ : Վ.ս զի է այն շարժումն
ինչ հանապազորդեան, և փոփոխ պատճառելու-
թիւն գերբնական կարգի . զի յառաւելուլ սիրոյ՝
առաւելուն շնորհք, և յառաւելուլ շնորհաց՝ ա-
ռաւելու սէրն :

Եւ Թէպէտ զբաղնու յոլովակի սիրտ 'ի խոր խո-
ղութիւնս՝ 'ի պէտս հասարակաց, և միոյ միոյ 'ի
մանկաւորաց . բայց վ.ս այդր չհեռանայ յԱծային
սիրոյ, որ գլխաւոր առարկայն է մտաց նր : Նա՛
վ.ս զի սիրէ զԱծ, օգնէ ամենեցուն, վ.ս լինելոյ
Ածութե այնչափ սիրելի, մինչ անհնար է նմա սի-
րել զայլ ինչ, և ոչ իսկ զանձն իւր, բայց եթէ
ըստ այնմ որ դարձ առնէ 'ի սիրել զայն ծայրա-
գոյն սէր, որ զամենեսին սիրէ : Վ.ս այսորիկ սէր
իւր առ այլս՝ չէ այնուհետև սէր մարդկային,
այլ՝ սէր Ածային :

Այսր աղագաւ բազմապատիկ առաւելու զիւր
երջանկութիւն . իբր զի 'ի սիրոյ՝ զոր ունի յաստի
կեանս, ծնանի 'ի նմա յոյս յաւիտենական երանու-
Թե . և այնուհետև զհանդերձեալ բարեացն ա-
ստոյն առեալ զՃաշակ, նախագրաւէ յերկրի
զերջանկութիւն երանելեաց : Եւ այս է յետին եզր
երջանկութե, յոր մարթի հասանել հոգի՝ աստ
'ի սորինս պանդխտեալ :

Զի որովհետև միտ նկատող՝ փոխակերպի յա-
ռարկայն՝ զոր նկատէ, և սէրն եւս փոխակերպէ
զսիրողն՝ յայն զոր սիրէ, ապա հարկաւ զհետ գայ,
թէ առաքինութբ կատարեալ սիրոյ՝ որպէս թէ
պանչելի իմն անձնաւորական միաւորութբ իբրև
անձամբ յօդի սիրող մարդկութիւնն ընդ սիրեցելոյ
Ածուն . մարդ փոխակերպէ զԱծ յինքն, և զինքն
յԱծ . մինչև կարող լինել ասել ( ըստ առաքելոյն ) .

ԿԵՆԴԱՆԻ ԵՄ ԱՅՍՈՒՀԵՏԵՒ, ՈՉ ԵՍ, ԱՅԼ ԿԵՆԴԱՆԻ Է ՅԻՍ ՔՍ։ Որ է ճշմարիտ ածայնութիւն մարդոյ մահկանացուի, (331)։

Այսպէս առ այս փոխման մեծապէս օգտամատոյց կա՛լ քեզ զբարոյականս իմաստասիրութիւն. միայն թէ 'ի սկզբան անդ ԴԻՏՄԱՄԲ սերտ ուղղեսցես զայն 'ի սէրն այ, իբրեւ 'ի վերջին նպատակ քոյդ իմաստուէ։ Ո՞վ սքանչելի զօրութէ մարդկայինս գիտման։ Սա է այն ածական, որ 'ի սկզբան իբրաց հայի 'ի փոխման։ Սա է ճարտար ձեռնածու, որոյ յեղափոխեալ զմարդկային գործս, կարող է լռկով ակնարկութը՝ փոխագրել 'ի ստորէ 'ի վերին կամար, եւ փոխակերպել յանարգէ 'ի պատուական, 'ի նիւթականէ 'ի հոգեւոր, յերկրաւորէ յերկնաւոր, 'ի մարդկայնոյ յածային։

Այսպէս այս ԴԻՏԱՒՈՐՆ որպէս հաւատարիմ ուղեցոյց՝ ածային օգնականութը առաջնորդեսցէ քեզ յիմաստասիրական երանութէ յաւետարանականն. եւ յաւետարանականէն 'ի յաւիտենականն, եթէ 'ի սկզբան անդ հայիցիս 'ի փոխման։

Զի թէ քո քաջ մտաւորութ, մնեալ յուղղափառ հաւատս, եւ ոչ աղճատեալ թիւր ունակութիք, ուսցի յիմաստասիրէն, քանի ինչ իցեն կարողութիք հոգւոյ, եւ որոմք ունակութիք կատարիցին. քանիօն իցեն կիրք մարդկայինք, եւ որովք կաննոք նուաճիցին, քանի իցեն ծայրք մոլեկանք, եւ որ իցէ մէջ բանին, անտարակոյս կարող լիցիս բարոյական առաքինութիք առնել զքեզ ընդունակագոյն իմացական ունակութեց, որք ամբառնան զմարդ 'ի նկատումն երկնայնոց եւ ածայնոց։ Ամբոխեալ կիրք ամբոխեն զմիտս. որ վճռագոյն ըմբռնէ զճշմարիտն, յորժամ է խաղաղ, քան յորժամ է ամբոխեալ 'ի կրից։ Եւ վասն զի բաղձողական զօրութիւնք ընաւորապէս զհետ երթան ըմբռնողականաց, անտարակոյս՝ որչափ յայտնագոյն ծանիցես դու իմաստասիրական եւ աւետարանական ուսմամբք զանբաւ բարութիւն արարչին, այնչափ յորդեռանդն վառեսցի 'ի քում սըրտի սուրբ սէր առ ած, որ ոչ երբէք պարտեսցի

'ի

'ի սիրոյ :

Ապա ոչ էր հնար բնաւորական նկատողութեան հեթանոս փիլիսոփայից, և ոչ բնաւոր սիրոյ՝ որ հետևորդ է բնաւոր նկատողութեան, խուրովն արժանանալ յաւիտենական փառաց. զի ոչ գոլով ինչ համեմատութիւն 'ի մէջ բնական կարգի և գերբնականի, անհնար է թէ պատճառ ինչ ստորին կարգի՝ արտադրեսցէ զգործ ինչ վերագոյն կարգի: Մինչ զի իմաստասիրականն այն երանութիւն ոչ կարողանայ առնել զիմաստասէրն խակապէս երանելս: Ապա եղեն նոքա գիտողութիւք իւրեանց իբր հերմեայն անդրիք քառուղեանք (332). զի մատամբ ցուցեալ այլոց զճանապարհ երջանկութեան, և ոչ զհետ երթեալ, մեզ օգտեցին, և ոչ անձանց:

Բայց 'ի քնաւէր իմաստասիրի՝ եթէ այն գիտուն [illegible] կարգի [illegible], ամայն շնորհօք՝ 'ի հողոյ փոխի յոսկի, յիմաստասիրական երանութենէ յերանութիւն աւետարանական. զի սէրն իմաստասիրական հոգևորեալ հեղական սիրով յեղափոխի 'ի գերբնական: Ապա այս է ճշդ, ը̃ որ ա̃մ սոսկական և ա̃մ իշխան քնաւէր կարողանայ դիւրաւ վերանալ 'ի բարոյական իմաստասիրութենէ յերկնայինն երանութիւն:

Այս՝ կամեցեալ ա̃յ երբեմն շնորհս առնել պարգամաց և ադխատաց, հեղու 'ի նս նշոյլ բաւական 'ի վառել զրոց սիրոյ իբր 'ի ցողուն ինչ. և ընդ գաղտնի և համառօտ ճանապարհս յափշտակէ զնս յերկինս. կամ ինքեանք իբր ստամամբ՝ գողեգող յափշտակեն զայն: Բայց ազնուական սիրտ նախատինս դնէ իւրում ազնուութեան, և հոգւոյ բանականի՝ զոր ա̃ծ եհեղ 'ի նա, եթէ կարող գոլով ելանել յերկինս ընդ արքունի և լուսաւոր ճանապարհս իմաստութեան, շատասցի ելանել յայն ընդ մթին շաւիղ անգիտութե̃ն: Ապաքէն ստոյգ իմն է առ մեկնիչս ս̃ր գրոց, թէ ուշիմ մտաց ուղղափառաց՝ որք փայլեն իմաստութեամբ 'ի մէջ կենդանեաց, և յերանելեաց միջի պատրաստեալ է մասնաւոր իմն փառք 'ի վերագաս կար.

կարգի:

Ապա այս լիցի, արքայազուն բողբոջ սարաւ-
դեան քաջազանց, փոխանակ քումդ իմաստութեն.
և աստանօր լիցի փոխանակ իմում բազմաջան եր-
կասիրութեան. զոր ոչ յիմմէ յանդուգն ձեռնե-
րիցութենէ, այլ 'ի վսեմական հրամանէ արքայա-
պատիւ հօր քո և տեառն իմոյ գթասիրի. 'ի վեր-
ջին աւուրս ութնամեայ իմոյ ծերութեան' 'ի
պէտս քո' հնազանդութեամբ յանձն առի. զոր
և խոնարհութեամբ 'ի սրտէ քեզ վերընծայեմ.
(333):

## ՎԵՐՋ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## Թարգմանչի։

Որ առաջի դնեն ազգի ազգի ծանօթութիւնս եւ հնախօսութիւնս եւ առասպելս եւ այլ ինչ ինչ նորանոր իրանիս յիշատակելոյ արժանաւոր համառօտի։

Լնուլ կամեցեալ զխոստումն մեր՝ որ 'ի յառաջաբանի անդ, մատչիմք առանձին յաւարտ գործոյ Թարգմանութեանս՝ տալ փոքր 'ի շատէ տեղեկութիւնս ընթերցասիրաց 'ի վերայ վիպասանական եւ բանաստեղծական օրինակաց, զորս 'ի մէջ առնու առէպ հեղինակս մեր Թէաւրոս։ Փոքր 'ի շատէ առեալ, որպէս եւ կանխաւ յուշ արարաք 'ի խոստման մերում՝ 'ի համառօտ բերել ծանօթաբանութիւն. զի թէ զամ իւրաց մի առ մի ճառել կամէաք, հարկ լինէր մեզ 'ի վայր յեղյեղել 'ի կարգիս զբանաստեղծութիւնս Հոմերոսի, Վիրգիլիոսի, Ովրատիոսի, Ովիդիոսի, Մարտիալեսի, եւ այլոց բազմաց. յորոց բազում ինչ քաղէ հեղինակս. նոյնպէս եւ զերեւելի երեւելի վիպասանից հելլենացւոց եւ հառոմայեցւոց զոչ սակաւ բանս երկարել։ Մեր փոյթ այս եղեւ, զի ընթերցօղք առցեն ինչ հանրական տեղեկութիւն. եւ մի գտցին անծանօթ ծանօթագոյն հնախօսութեանց՝ հարկաւորի յիշատակելոց 'ի Թէաւրոսէ. զիմաստ առաջին եղեալ օրինակին իմասցին, եւ ոչ եթէ զամ հանգամանս առասպելաց յանօգուտ լուիցեն։

Այլ 'ի վ՛՜ այսր ամի ոչինչ առարկել վարկաք

ու-

ուրեք ուրեք փոքր մի ճարձակագոյնս՝ քան զոր առաջիկայ բանն պահանջէր, զերան տառագրել. զի յայտնի լիցի՝ թէ յորպիսի անցից պատմութեանց կամ 'ի քերթածոց բանաստեղծութեանց զմանաւոր ինչ պարագայ ևեթ վեր 'ի վերոյ յիշէ հեղինակս. և թէ՝ 'ի բազմապատիկ աւանդութեանց հնախօսից զո՛րն ընտրէ յօրինակ բանից իւրոց։ Թող զայն, զի յոլովակի նոյն պատմութիւն կամ առասպելք ըստ այլում մասին յայլում վայրի պէտս ունէին առանձին բացատրութեան. և մեր չկամեցեալ կարի յոյժ ցրիւ գնել զգիտելիսն, 'ի մի վայր հաւաքեցաք ը̅ կարի. և այլուստ անդր յղեցաք, ասելով թէ ոեւս զայսմանէ յոյն ինչ թիւ համարոյ. և թէ երբեք զանց արարաք զայն երկբ̃ել, դիւրաւ կարեն գտանել ընթերցողք՝ հայելով 'ի ցանկն որ զկնի։ Ուրեք ուրեք և՛ ոչ յանդգեալ ինչ արդեօք՝ երկարեցան բանք մեր 'ի պատճառս բերելոյ զվկայութիւն նաև 'ի հայերէնագիր մատենից. ո̃ր եթէ 'ի բանից մատենագրաց ազգիս մերոյ, և եթէ 'ի յունական մատենագրութեանց թարգմանելոց անգատին 'ի մերոց նախնեաց։

'Ի հաւաքումն նիւթոց ծանօթութեանց՝ է զի 'ի հին հեղինակս անդր ընթացաք, զորոց զանուանս յիշատակեմք առընթեր. և բազում այն է՝ զի յերևելի բառարանաց հատընտիր արարաք. ոմն են [illegible], [illegible]. [illegible] [illegible]. ընդ որս և մատեանն բազմահատոր՝ [illegible] [illegible] կոչեցեալ, և այլ ևս հաւաքածու մատենագրութիւնք հնախօսութեանց յունաց և լատինացւոց. և յայսպիսիս չեղև ինչ մեզ փոյթ նշանակել զանուն գործոյն կամ հաւաքողին։ Ո՛ւր թողից, զի չէր իսկ հնար զմիոյ զբան յա̃ջ բերել, այլ՝ համեմատութ̃ բազմաց զիմաստ ինչ բաղդել։

'Ի տառադարձութիւնս յատուկ անուանց զգուշագոյնս զհետ գնացաք նախնի սովորութեան թարգմանչաց մերոց. այլ քանզի գտանին և պէսպէս գրութիւնք նոյն անուանց յաճախեալ առ բազումս, ը̅ տեղւոյն նշանակեցաք և զայնս. ոմ̃ և բազում անգամ զընիկ հնչումն այլոց ազգաց հարկ համարե-

բեցոք երկչել, մանաւանդ 'ի սառուցաբանելն։
Իսկ զոմ շարագրութեն՝ որչափ և հնար էր պար-
զագոյնս և բացայայտագոյնս յօրինել փոյթ կա-
լաք, առ դիւրիմաց ընծայելոյ ամէն։

Համարքն կմ թուանշանքն յաջորդաբար եդեալք
յընթացս ծանօթութեց՝ ցուցանեն ըստ կարգի
դիւրաքանչիւր տեղիս. յորս հային այս բանք 'ի
կարգի անդ մատենին, համեմատութբ նոյն թը-
ուանշանաց՝ որք եդան անդէն. Թող զայն համա-
ռօտ տեղեկունս, զորս կանխաւ անցուցաք փա-
կագծիւ 'ի կարգ բանից հեղինակին. Իսկ զի որ-
չափ ինչ բառք կամ բանք տեսանին յընթացս
թարգմանութեան եդեալ 'ի մէջ փակագծի, եթէ
հային 'ի բացատրութիւն յատուկ անուանց կամ
մթին իմացուածոց, առ 'ի մէնջ եդան. Իսկ եթէ
հային առ դիւրութի ընթերցանութե՝ առ ամ-
փոփնշանակելոյ զմիջանկեալ ինչ ասացուած, նո-
րին Իսկ հեղինակի են փակագծութեք։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅԱՌԱՋԻՆ ԳԻՐՍ։

Սովորութիւն էր առ հեթանոսս՝ ոչ միայն զե- (1)
րեկելի անձինս, այլ և զանուանս առաքինութեց,
որպէս երբեմն և մոլութեց, կրից և ախտից,
յաջող բախտից և ձախող ելից, ձևացուցանել
իբր չա՛ծս և չա՛ծուհիս՝ կանգնելով արձանս յա-
նուն նոցա, և պաշտօն մատուցանելով, հանդերձ
ազգի ազգի առասպելօք՝ զոր պատմէին զնոցանէ.
զորս և յետինք պէսպէս օրինակաւ այլաբանեն,
ոմն այսպէս՝ և ոմն այնպէս բացատրելով, առ 'ի
չգիտելոյ բազում անգամ զառոյգն։ Ուստի և յառա-
ջինկայգ՝ զվոլուպիա է զանդերձս դիս յիշատա-
կեալս 'ի թեսաւրոսէ հեղինակէս մերմէ, ոչ միօ-
րինակ ստորագրեն. զի ոմանք մի և նոյն չա՛ծուհի
սեփն լինել զերկաքանչիւրն՝ կրկնակի անուն ա-
ռեալ ըստ այլ և այլ գործոյ. քանզի սեփն՝ վոլու-
պիա, այն է ըստ լատինացւոց ՎՈԼՈՒՊԻԱ՝ չա՛ծուհին
հեշտութե. (ծագեալ 'ի բառէս ՎՈԼՈՒՊՏԱՍ, որ է
հեշտութի կամ փափկութի) անուանեցաւ անդե-
րոնա

րոնա կամ Ἀγγερώνα, ոչ թէ փարատիչ ցաւոյ, (ծագեալ 'ի բառէս ἀγχόνη, որ է փողացաւ). զի 'ի ժամանակին յորում փարատեցաւ 'ի հասարակ քաղաքէ հանրական ինչ ախտ փողացաւի, համարեցան կռապաշտք՝ թէ 'ի ձեռն վոլուպիայի լեալ իցէ այն գիւրութի: Իսկ այլք ասեն՝ թէ այլ էր 'ի վոլուպիայէ անգերոնա աստուածուհին. միայն թէ չունէր սուէն առանձին մեհեան, այլ՝ արձան նորին եդեալ կայր 'ի մեհենին վոլուպեայ առընթեր բագնի նորա կմ՝ 'ի վր մի և նոյն սեղանոյ. և կամ թէ 'ի մեհենի միոյն՝ պաշտօն մատուցանէին և միւսումն: Իւ ըստ ոմ՝ Ἀγγερώνα, ստուգաբանի չածուհի նեղութեց՝ և անձկութեց՝ որոց ող_ ռանի լռին հեծութբ. կամ որովք ող տագնապի յանձին՝ և ոչ յայտնէ բանիւ բերանոյ. (ծագեալ 'ի բայէս ἄγχω, որ է նեղել, պնդել). և 'ի նշան այսմ զարձանն անգերոնայ դրօշէին փակեալ և կապեալ բերանով, ըստ գրելոյ պլինիոսի: Այլ որք զայս գնեն՝ հաստատակօրէն անուանեն զնա չածուհի լռութե, և զանունն հնչեն անգենորա, կամ ἀγηνόρα. որպէս և ոմանք ագենորիա, կմ ἀγηνορία: Հեթանոսք համարէին՝ թէ սա գիւրիչ է ցաւադնեալ սրտից. փոխանակ ասելոյ՝ թէ լռութին 'ի վիշտս տանջ ամբերութե թեթևացուցանէ զարանցութին. կամ 'ի ձեռն համբերութե քաղցրանայ դառնութի նեղութեց և վշտաց:

(2) Կրիտողայոս, ըստ յունաց Κριτόλαος (որ թարգմանի՝ դատաւոր ժողովրդեան), էր անուն իմաստասիրի ուրումն աթենացւոյ 'ի դասէ Ճեմական փիլիսոփայից՝ այսինքն արիստոտէլեանց. որ գեղեցիկ վճիռ եհատ. թէ բարիք հոգւոյ և առաքինութիք՝ անհամեմատ առաւելութբ ծանրակշիռ են քան զբարիս մարմնոյ և զբախտի. կամ որ նոյն է՝ հոգևորն յանչափս առաւել է քան զմարմնաւորն: Այլ զայս յայտնի իմաստ սորա հանդիսացոյց բանն կիկերոնի Ճարտարախօսի՝ յասելն 'ի Ե. Գիրս [illegible] խնդրոց. Գլուխ. 17. "Զինչ
" զօրութ իցէ կշռորդին այն կրիտողայ, որ իբրև
" 'ի

,, 'ի մի կողմն եդ. կշռոյն զկարիս հոգւոյ, և 'ի
,, միւսումն զմարմնոյն և զարտաքինս, այնչափ
,, ծանրակշիռ եցոյց զառաջինն զայն թաթ բար-
,, ւոյ մասին (հոգւոյ), մինչև զծով և զցամաք
,, ը̄ խուրև ճնշել: Զնոյն կրկնէ նա ինքն Կիկե-
րոն իբրև 'ի դիմաց իւրոց՝ 'ի Ե. Գիրսն յղ. Հար-
ցմանց. Գլ. 30:

Յուլ փաղարիսի, կամ փաղարեան ցուլ՝ էառ (3)
զանուն 'ի փաղարիս անուն բռնակալէ ակրական-
դացւոց 'ի սիկիլիա. որ բաց յայլոց նորաձևոց
տանջանարանաց՝ ունէր և պղնձի մեքենայ մեծ
ցլաձև, յոր արկանէր զմահապարտս. և 'ի ներքոյ
հուր բորբոքէր. զի յորժամ փակեալն 'ի ներքս
ձչեսցէ առ տագնապին, բառաչ ցլու լսելի լիցի
արտաքս: Յայս անողորմ տանջանս էարկ նախ
զարուեստաւորն գործոյն զպերիլոս. և այն ը̄
արժանւոյն, զի նա 'ի շնորհուկս բռնաւորին հնա-
րեալ էր զայնպիսի չարարուեստ ճարտարութիւն:
Այլ 'ի վախճանի ինքն իսկ բռնաւորն արկաւ 'ի
ժողովրդենէ յայն մեքենայ. և այնպէս կորեաւ՝
իբր 'ի ըթ ողոմպիադի, յաւուրս յովսիայ արքային
յուդայ, կամ քանի մի ամօք զկնի: Ուր ծանիր,
զի նոննոս մեկնիչն առասպելաց յիշատակելոց 'ի
գրիգորէ ածաբանէ՝ նոյնացուցանէ զպերիլոս շի-
նողն ցլու ընդ փաղարիսի. և փոխանակ անուան
բռնաւորիս դնէ զգինեսիոս զերևելի բռնակալն
սիրակուսայ՝ որ 'ի սիկիլիա. բան նորա է այս՝
ըստ հայերէն հին թարգմանութեան. " Էր փաւ-
,, լաւրիդոս այսպիսի ոմն է, զի և նա նորագոյն
,, տանջանարանաց եղև գտիչ. այլ էր ինքն ազ-
,, գաւ սիկիլացի: Նա գինեսայ բռնաւորի շը-
,, նորհուկս առնելով՝ առնել ցուլ պղնձի. յոր
,, պարտ վարկանէր արկանել զպատժապարտսն,
,, և հուր առ նովաւ վառեալ. զի 'ի ներքս գո-
,, լով և կիզեալ լինելով աղաղակեսցեն. և
,, ձայնին ելանելով ընդ բերան ցլուն՝ թուես-
,, ցի ցուլն կիզելով գոչիւն հանել: Իսկ գինե-
,, սիոս թէպէտ խստագոյն գոլով և պատժա-
,, ւոր, սակայն տեսանելով զփաւլարիսն 'ի տը-
,, մար-

«մարդութիւն, զինքն արկ 'ի ցուլն, և կիզեալ «հրով այրան»: Դիոնեսիոս սիկիլիոյ բանացաւ՝ բազում ամօք յետոյ քան զփաղարիս բանաւոր, այլ թէ յորոյ աւուրս լեալ իցէ այս գործ, մեզ չէ փոյթ:

(4) Ո'ւր ուրեք յիշատակի յընթացս թարգմանութեան մերոյ անուն [illegible], իմա 'ի թեատրոնէ եգեալ յիմալականն առանց անուան՝ [illegible]. զի այսպէս անուանէ միշտ զարիստոտէլ. որում յանդի զհետ երթայ 'ի բարոյական իմաստասիրութեան. զի և այլ ոչ ոք 'ի փիլիսոփայից այնպիս գեղեցիկ ճառեաց զայսմանէ իմաստասիրական ոճով, որպէս ներհուն այն իմաստասէր:

(5) [illegible] կամ [illegible] անուամբ նշանակի աստանօր դիոգինէս կարասաբնակ փիլիսոփայն, որ էր աշակերտ անտիսթենեայ՝ առաջնորդի կինիկեան (այս շնական) կոչեցեալ աղանդոյ: Արդ՝ սա ինքն դիոգինէս ծաղկեալ յաւուրս աղէքսանդրի մակեդոնացւոյ, գտաւ 'ի մէջ արտաքին իմաստասիրաց առաւել խստակեաց, և գլխովին թշնամի դիւրութեան կենաց. կեայր անյարկ՝ բնակեալ 'ի կարաս. որով ատ անդ հոլովեալ յածէր ըստ ժամանակին. և առէր ըստ կատակս՝ ունել իւր տուն շրջական և հոլովական, որ ըստ փոփոխական ժամանակի շրջան առնուցու. զի յաւուրս ձմերան՝ զերեսն կարասին 'ի հարաւակողմն դարձուցանէր, և յամարայնի առ հիւսիսակողմն. այլ առէպ 'ի ցերեկի յոր կողմն և դառնայր արև, յայն կողմն և նա զկարասն շրջէր: Բազում են նր գործք յօրինակ խստակրօն և տառապագին կենաց:

Նոյնպէս և մետրոդորոս էր այլ ոմն խստակեաց փիլիսոփայ՝ ժամանակակից դիոգինեայ. բնակէր 'ի քարանձաւս. և քարոզէր հանգոյն նմին՝ գործով քան բանիւ, թէ կարող է մարդն բնաւպէս երջանիկ գտանիլ յօ և իցէ վիճակս թշուառութեան: Եւ զի առաւել քան զչափն ատայրին և արարին ոզքս, նմին իրի հեգնէ զնա հեղինակս: Իսկ կիկերոն զմետրոդորոս կոչէ [illegible] [illegible], 'ի կշռամբել զերկրաւորն եւ 'ի Ե. գիրս [illegible] [illegible]:

Բանա-

Բռնաւոր սիրակուսայ կոչի՝ երեւելին 'ի բռնաւո- (6)
րութեն դիոնեսիոս արքայ սիրակուսացւոց 'ի սի-
կիլիա. որպիսի եղեւ նախ հայրն՝ եւ ապա որդին
համանուն, զորս յիշատակէ եւսեբիոս 'ի ձբ. ո-
ղոմպիադն. ասելով. "Դիոնիսիոս վախճանի, տի-
„ րեալ սիկիլիացւոց ամս ժը. յետ որոյ մա-
„ նուկն դիոնեսիոս": Եւ սոքա երկոքին իսկ 'ի
բռնաւորութեան անդ. ունէին իմաստասէր բարս.
այլ առաջիկայ բան թեատրոսի հայի առ առա-
ջինն դիոնեսիոս. զորմէ պատմի այսպիսի ինչ: 'Ի
զարմանալ երբեմն դամոկլեայ կամ դեմոկլեայ ու-
րումն ընդ յաջողուածս եւ ընդ փառս դիոնի-
սեայ, եւ յերանելն զնա մարդահաճութեամբ,
պատասխանի ետ նմա բռնաւորն. կամիս եւ դու
հաղորդ լինել իմում բարեմանութեն, եւ զփորձ
առնուլ երջանկութեն իմոյ: Եւ 'ի հաւանիլ նորա
խնդրութե̃, հրաման ետ արքայ զգեցուցանել նմա
թգ̃րական ծիրանիս, եւ բազմեցուցանել զնա յոս-
կեղէն գահոյս իւր 'ի սենեակն արքունի, որ զար-
դարեալն էր բեհեզօք եւ մեծագին սպասուք. եդ
առաջի նր̃ սեղան բարելից՝ համագամ կերակրովք
եւ ծաղկահոտ ըմպելեօք, կարգեալ մանկունս գե-
ղեցիկս՝ զարդարեալս 'ի զգեստս պայծառս՝ սպա-
սաւորել նմա ըստ ամ̃ ակնարկութե նորին: Եւ
յետ ամ̃ ետ կախել 'ի բարձանց սուսեր մի մերկ՝
ուղղակի վերոյ գագաթան դամոկլեայ՝ կախեալ
զթելէ միոջէ, որ մերձ ընդ մերձ թուէր անկանիլ:
Եւ այն ինչ սոսկացեալ կայր նա յերեսաց սրոյն,
ասէ ցնա արքայ. մի երկնչիր. վայելեա 'ի բարիս՝
որ կան քո առաջի. կեր արբ եւ ուրախ լեր: Իսկ
նա պաղատէր լալով՝ արձակել զինքն 'ի բաց. չառ̃
էր ինձ ասէ վիճակ իմ անփառաւոր, չկամիմ
զայդպիսի երջանկութի. միայն զերծայց 'ի սրոյ
սատի: Յայնժամ ասէ ցնա դիոնեսիոս, ահա եւ
ես զոր ամ̃ զփորձ առնում այդպիսի աւաղելի եր-
ջանկութե̃. զի հնարք թուի ինձ տեսանել սուր
այնպիսի կախեալ 'ի վերոյ գագաթան իմոյ զգի-
րախղելի աղաղանւոյ. որով եւ դառնանան ինձ ամ̃
վայելք իշխանութե̃ իմոյ: Զայս յիշէ կիկերոն 'ի
է.

Է. Գիրք Թագաւորացն խնդրոց Գլ. 21. և պերսիոս փլակկոս բանաստեղծ՝ ընդ այլ մատենագիրս ։ Արդ՝ որոյն այնուիկ իմանայր գինեխիս ըստ կարծելոյ ումանց զյիշատակ մահուն կամ զերկիւղ հանդերձելոյն. և ըստ այլոց՝ զխայթ խղճի մտաց իւրոց վս ազգի ազգի չարութեց 'ի գործս բանաւորութե ։

(7) Կրասոս մարկոս լիկինիոս՝ որպ յայտ է, եր երևելի զօրավար և հիւպատոս հռովմայեցւոց. այր ընչաւէր և անյագ. որ յաճախեաց որ քան զոր 'ի մեծութե և յիշխանութե. և համարէր վայելել յերջանկութե. այլ 'ի փոխանակ թշուառացաւ յոյժ. զի յետ լինելոյ գոհակից կեսարու և պոմպէի՝ յորժամ խաղաց պատերազմաւ 'ի վերայ պարթևաց, թ հայոց և պարսից. չարաչար 'ի պարտութե մատնեցաւ 'ի տիգրանայ միջնոյ հայոց արքայէ. և ընդնաքինք եղև զօրքն հանդերձ. և տմ գանձք և մեծութե նր յաւարի եղեն զօրացն տիգրանայ. որպ յայտ է 'ի պատմութեց հայոց և հռովմայեցւոց ։ Յայտնի է և պատմութիւն կրեսոսի լիւդացւոց արքայի, (որ և գրի կրիւսոս կամ կրոյիսոս), որ ճոխացաւ գանձուք և մեծութե՝ քան զամենայն թգրս իւրոյ ժամի, և համարէր զանձն հասեալ 'ի կատարեալ երջանկութի. այլ խրատեցաւ 'ի սողոնէ իմաստնոյ աթենացւոյ՝ չերանել զբարեբախտութի մարդոյ մինչև ցվախճան. զոր և որդեամբք յանձին իւրում ետես. զի յետ այնչափ փառաւորութե իւրոյ՝ անարգաբար 'ի ձեռս մատնեալ թշնամեաց իւրոց, յերկաթի տապակ հանաւ 'ի կիւրոսէ պարսից արքայէ. կամ ըստ խորենացւոյն՝ յարտաշիսէ պարթևէ հայոց արքայէ. այլ 'ի յիշելն հառաչանօք զբան սողոնի՝ եգիտ գըթութի, և արձակեցաւ 'ի տանջանաց ։ Երանի թէ տմ մեծատունք և փառաւորք աշխարհի, կամ որք երջանկանան յանձինս իւրեանց. 'ի մտ ածէին զօրինակն կրեսոսի. և ստէպ ասէին 'ի յաջողութե զասացեալն 'ի կրեսոսէ 'ի ձախողութե. " աւաղ " փառացս անցաւորի ||։

(8) Տարեանցի, բայց որոշակի ծանոյց բանիւս հեղի.

զինակն զընթացս և զնպատակ գործոյս. յորում ամ բանք ուղղին առ ընական երջանկութիւն ընական իմաստասիրութե. որպէս և 'ի յառաջաբանի անդ ըստ յուշ արարաք. նմին իրի և խոնարհութե հրաժեշտ տայ Թեսաւրոս խօսիլ զգերբնական երանութէ, որ ածաբանից և ածիմաստ մտաց է անկ. զոր և յածեղէն գրոց և յայլոց հոգևորական մատենից ըստ ուսանիմք, զածայինն ասեմ գիտութի և զգերագոյն իմաստութի. որ ուսուցանէ զաւետարանական երանութիւն՝ որք առաջնորդեն յերանութի յաւիտենական։ Այլ 'ի սոյն իսկ կնքէ և հեղինակս զվախճան գրոց իւրոց. ով և տեսեր:

Պադուայոս. յն. ռշլթօ. հայրենեօք 'ի փոփխս քաղաքէ արկադացւոց (որ 'ի մօրա), եր այր նուաստասոհմիկ և աղքատ ծնեալ և սնեալ 'ի հայրենաժառանգ փոքրիկ կալուածի իւրում. որ մինչև 'ի խոր ծերութի ոչ ել արտաքոյ քան զսահմանս անդոյ իւրոյ. զի 'ի հասից նորին զտակաւայեա կերակուր իւր հոգայեալ՝ կայր գլխովին շատացեալ և գոհ ը վիճակ իւր յառանձնութե անդ. զերծ 'ի բազում հոգոց աշխարհի։ Իւ եղև յոլժամ գիւգես արքունի հովիւ ը յաջողելոյ բախտին զօրացաւ և Թգւրեաց 'ի լեւգիա՝ 'ի տեղի կանդաւղէսի արքային լեւգացւոց, մեծամեալ ընդ յաջողուածս իւր՝ որով անկարծ 'ի նուաստութէ վերացեալ եղև յայն պատիւ բարձրութե, եհարց ցգեղփեան պատգամախօսն դից ապողոնի, թէ կայցէ արդեօք այլ ոք երջանիկ իբրև զնա 'ի մը երկրի. և լուաւ պատասխանի, թէ բազմօք երջանիկ է քան զքեզ ագլայոս փոփխացի։ Զայս պատմեն պլինիոս. Գիր. է. Գլ. 46. և վաղերիոս մաքսիմոս. Գիր. է. Գլ. 1։ Յիշէ և պաւսանիաս 'ի Ը. Գիր.. այլ սա փոխանակ գիւգեայ դնէ զկրեսոս երևելին զարքայն լեւգացւոց։ Իսկ Թէ զիարդ եհաս գիւգէս յաթոռ Թգւրութե. այլ և այլս գրեն վիպասանք. յորոց միջի հերոդոտոս համարի. թէ կանդաւղէս զկին իւր ցուցեալ իցէ գիւգեայ. և ը այս դժուարին՝ ախնողն՝ մերժանեալ՝ (9)

իցէ

լցէ ըստ գիւգեայ, և 'ի ձեռն նորա սպանեալ զայր իւր, և զնա ինքն զգիւգէս հանեալ յաթոռ տէրութեան: Այլ զայս բան հերոդոտեայ հերքէ մեր մովսէս քերթող 'ի գիրս պիտոյից՝ յօրինակ հաւտարական եղծման. ուր անուն արքային կոչի կանդաւղէս կամ կանդաւլէ:

(10) Ոսկեղէն դար կոչի յընթացս մատենիս ըստ առման բանաստեղծից՝ նախկին դար աշխարհի, կամ առաջին ժամն, մինչդեռ որդիք մարդկան շատանային բնաւորս բարեաց երկրի, և չև էին զբաղեալ 'ի ծփանս մեծամեծ հոգոց՝ վասն ազգի ազգի հանդերձանաց կերակրոց և զգեստուց, վաճառականութեանց և արուեստագործութեանց, խռովութեանց և պատերազմաց. եւն:

(11) Ապեղէս էր նկարիչ և պատկերահան երևելի՝ հայրենեօք 'ի կովս կղզւոյ կմ կողոփացի, (Թէպէտև ոմանք վրիպակաւ գրեցին քիացի), յաւուրս մեծին աղեքսանդրի մակեդոնացւոյ: Սա ասեն, գերազանցեալ յիւրում արուեստի զամենեքումբք՝ որ յառաջ քան զնա էին, և 'ի յետնոց իսկ սակաւք հասին 'ի չափ նր: Այնչափ անուանի եղեն նկարք սորա, մինչև պատուէր հրամանի եա աղեքսանդր, զի մի ոք այլ իշխեսցէ նկարել զպատկեր իւր՝ բաց յապեղէսէ. զի 'ի ձեռն այնպիսւոյ պանծալի արուեստաւորի մնասցէ փառք յիշատակ իւր յապագայս: Վսն և թեսաւրոս կոչէ զապեղէս՝ նկարիչ գիւցազանց: Թող զայն՝ զի նկարեաց նա և զերկուս պատկերս ափրոդիտեայ քաջ ճարտարութբ, որոց մեծ էր յարգ առ հելլենացիս. այլ և զպատկեր բարեկամին իւրոյ անտիգոնոսի միականւոյ՝ զմի կողմն նորա եւեթ ցուցանելով, առ առագաստել զթերութիւն կոյր աչացն: Նկարեաց և զերիվար մի այնչափ բնական կենդանագրութբ, մինչև 'ի տեսանել զնա այլոց երիվարաց խխնջային. ուստի և ասի՝ թէ ասացել իցէ երբեմն ապեղէս ցաղեքսանդր ըստ խաղս. երիվար քո առաւել իրազեկ է նկարուց քան զքեզ: Իսկ զուգիոն՝ որ և զուգիոս, (ըստ լատ'' [illegible]. այլ ըստ ոմանց [illegible], ըստ որոց և յիտալ'' գնի [illegible].

փրձնէ էր նկարիչ ումն 'ի հռոմ յաւուրս օգոստոսի կայսեր: Սա՛ ըստ ասելոյ պլինիոսի. Գիրք. ԼԵ. գլ. 16. հնարեաց զառաջինն՝ զվայելուչ նկարս որմոց առ 'ի զարդ և 'ի զուարճութիւն, ստուերագրելով գիւղս և ագարակս, դաշտս և հովիտս. լերինս և բլուրս, անտառս և գետս, ծովափունս և նաւահանգիստս. և յիւրաքանչիւր տեղիս ընդանկաւոր արարս մարդկան և անասնոց. զորօրինակ շինականս՝ որ բառնան բեռինս 'ի վերայ իշոյ կամ գրաստու, հնձօղս հանդերձ որայիւք, հովիւս հանդերձ խաշամբք, եզնավարս և անդեորդս, որսորդս, ձկնորսս, նաւորդս, և այլն: Արդ՝ զայս ամ յուշ առնել կամեցեալ թեսաւրոսի, 'ի մասնաւոր ինչ գործոյ կոչէ զգուգիան նկարիչ եղնավարայ. որով տայ իմանալ զնուաստութիւն արուեստին առ համեմատութիւն ապեղէսի. որ նկարէր զդիւցազունս:

Բայիէս կամ պայա՝ էր 'ի հնումն անուն քաղաքի, (12)
այժմ՝ աւանի, 'ի կամպանիա գաւառն իտալիոյ, երևելի ըստ զուարճալի դիրս՝ և ըստ առողջարար ջուրցն առատութեան, յանկաւոր 'ի շինութիւն բաղանեաց. առեալ զանուն 'ի բայոսէ ուղևորէ անդ թաղելոյ, որ համարի հիմնադիր քաղաքին: Արդ՝ հեղինակն որպէս զփաղարեան ցուլ բերէ յօրինակ գառն վշտաց, նոյնպէս և զբայեան բաղանիս յօրինակ զուարճութեանց:

Հերակլէս կամ երակլէս կոչի 'ի գիրս մեր՝ հա- (13)
մաձայն յունականին Ἡρακλῆς, այն զոր լատինք Hercules կոչեն, և իտալացիք Ercole. զորմէ բազմապատիկ առասպելս յօդեն նախնի բանաստեղծք, համարելով զնա իբր մի միայն քաջ 'ի մէջ քաջացն հելլենացւոց, գլուխ հսկայից՝ և վեհ դիւցազանց. են՝ և որք հաւաստեն զնա սամփսոնի. որպէս և զժամանակ նորա փոքր մի յառաջ դնեն քան զսամփսոն՝ առ ժամանակօք արգոնաւորդաց, իբր 1200 ամօք նախ քան զՔս. Թող զի բազումք բազում հերակլէսս թուեն, և յայլևայլ ժամս ձգեն: Այլ զերևելին հերակլէս հայք կոչէին երբեմն նաև վահագն 'ի մի կարգ

դասելով զնա ընդ քաջին Վահագնի հայկազնոյ։ Իսկ հեղինէ՝ որ և եղենէ՝ էր քոյր երկուորեակ եղբարց կաստորի և պողիկեսեայ, և կին մենեղաւոսի դքսին սպարտիոյ. համբաւեալ ը͞ գեղոյն 'ի մէջ հելլենացւոց. և յափշտակեալ նախ 'ի թէսէոսէ, և ապա 'ի պարիսայ տրոյացւոյ. զորմէ բազում բանք լինին յառասպելեայօք պատմութե արգոնաւորդաց և տրոյացւոց. և սա իսկ էր յորոյ 'ի պատճառս եղև իլիոնական պատերազմն այն տասնամեայ՝ հանդիսացեալ առ հին վիպասանս արտաքինս։

(14) Ու բարբառք իմացուած բանից հեղինակիս յառաջիկայս գլուխ՝ ծանիր նախ, զի առ լատինացիս և իտալացիս մի և նոյն բառ է, որ նշանակէ [illegible] և [illegible]. այն է ըստ ՚նց՝ [illegible]. կամ [illegible]՝ և ըստ այսմ թեասուրս զզօրութին բաժանէ յայլ և այլ տեսակս, և ը͞ կարգի ուղղէ զբանս իւր 'ի վերայ բարոյական առաքինութե։ Զգոյն իսկ և 'ի մեր բարբառ մարթ է իմանալ. զի ձայնս [illegible] ը͞ ինքեան առեալ նշանակէ զարիական զօրութի. կամ զքաջամարտիկ շահատակութի. ևն. այլ 'ի բարոյական կարգի ունի զիւր մասնաւոր նշանակութի. որպէս և առ յոյնս ձայնս [illegible]։

Ծանիր երկրորդ. զի պատմուճանի կամ զգեստու նմանեցուցանէ հեղինակն զունականն առաքինութին, ոչ միայն վասն պատշաճական ինչ նմանաբանութե, այլև յաղագս մ͞ն յարմարութե համաձայն բառիս առ իտալացիս [illegible], որ միաբենակ նշանակէ [illegible] և [illegible]. առեալ յայնմանէ՝ զի զգեստն կամ ձորձն է այն ինչ, զոր ունի որք 'ի վ͞ր մարմնոյն. որպէս և առ յոյնս՝ բառդ [illegible], զոր մեք [illegible] ասեմք, ակնարկանեալ կրօնաւորական զգեստու. թո՛ղ և զայլ առմունս այդպիսի անուանց 'ի թարգմանութիս։

(15) Կենտաւրոս, ըստ յն. [illegible], ստուգաբանի՝ խթանսու վարիչ ցլու. կամ ցլավար. որով նշանակի հրէշ ինչ առասպելեալ՝ կիսով չափ մարդակերպարան յառաջոյ կողմանէ, և կիսով չափ իբր ցուլ

ցուլ ձիախառն յետոյ կողմանէ . որ և 'ի գիրս հայոց կոչի Κένταυρος, համառօտել 'ի յունական բառէս ἱπποκένταυρος՝ որ թարգմանի [illegible] : Կոչի սա 'ի մեզ նաև [illegible], իբր [illegible] [illegible] . որ է անուն հրէշաւոր կենդանեաց՝ ըստ հաճոյս բանաստեղծից կերպարանեալ . ոմն և պարիկն, և համբարուն կամ խշացուլն, ծովացուլն, եղջերուաքաղն, յարալեզն, ևն. զորս առ հասարակ կեղծիք մտացածին լինել գիտեն ամ մացիք, ոմն և բազմաց ցուցանէ մեր եղնիկ կոչեցի [illegible]. 87: Իսկ թէ ուստի սկիզբն առեալ իցէ առասպելն կենտաւրոսաց կամ ձիացլոց, աւանդեն հին պատմիչք՝ թէ 'ի փախչել երբեմն եզանց և ցլուց, պնդեցան զհետ նոցա արք ձիաւորք, և հասեալ առ նոսա խթանօք վարեցին և դարձուցին յետս. Իսկ շինականք տեղւոյն՝ որոց չև էր տեսեալ զայր հեծեալ 'ի ձի, ընդ տեսանելն զնոսա՝ համարեցան թէ 'ի վերայ ձիոյ բուսեալ իցէ կերպարան մարդոյ, և զցուլս՝ որ առ նոքօք՝ իբր խառն ընդ նոսա նշմարելով, կարծեցին լինել նորատեսիլ կենդանի՝ ձիախառն և ցլախառն : Եւ այս ասի լինել յաշխարհին Թեսաղացւոց կամ 'ի Թեսաղիա գաւառի, 'ի սահմանս պելեթրան քաղաքի առ պելիոն գետով. զի ասեն՝ նախ 'ի Թեսաղիա եղև գիւտ սանձելոյ զերիվարս, և հեծանելոյ 'ի նոսին. փոխանակ ասելոյ՝ թէ Թեսաղացիք քաջավարժ էին 'ի ձիավարել: Ոմն և իցէ՝ բնակիչք Թեսաղիոյ ըստ մասին կոչեցան լափիթեայք, և ըստ մասին կենտաւրոսք կամ ձիացուլք. զորոց ունիմք յիշել և 'ի սորին՝ 'ի համարն. (124):

Պրաքսիտելէս, յն. Πραξιτέλης, էր մեծանուն (16) անդրիագործ՝ յաւուրս արտաշէսի ոքոսի արքային պարսից, իբր 350. ամաւ յառաջ քան զքն : Սա քաջարուեստ գտաւ 'ի դրոշել զարձանս կճեայս. և բաց յայլոց բազմապատիկ գործոց՝ դրոշեաց երկուս արձանս ափրոդիտեայ. զմին զգեստաւորեալ. զոր գնեցին բնակիչք կղզւոյն կովայ. և զմիւսն մերկանդամ՝ 'ի խնդրոյ գնիդացւոց. և այս գնիդեան արձան այնչափ մեծահամբաւ գըտաւ ,

տաւ, մինչև 'ի հեռաւոր վայրայ նաւեալ գային 'ի գնիդոն՝ 'ի տեսանել զայն: Կամեցաւ Նիկոմե-դէս արքայ Բիւթանիոյ յետ Ժմկաց գնել զայն, խոստանալով բնակչաց տեղւոյն՝ վճարել զամենայն պարտս՝ զոր ունէին նոքա առ օտարս, կամ ըզ-հարկն՝ որ յարքունիս. այլ նոքա չառին յանձն. ոչ գրէ պլինիոս. Լզ. 5: Այլ այս արձան Ափ-րոդիտեայ՝ որչափ էր ճարտար կենդանագրեալ, այնչափ առաւել եղև նշանակ անպարկեշտութեն 'ի գայթակղութիւն տեսողաց. զորմէ բաղում ինչ գրեն հնախօսք. և յայս յաւէտ հայի բան Թէ-աւրոսի 'ի յետագայ բացատրութիւն իւր: Այլ է և պրաքսիտելէս ճարտարարուեստ արձանա-գործ յաւուրս մեծին պոմպէի:

Այնպէս և փիդիաս, ըստ յն. Φειδίας, էր հնա-գոյն անդրիագործ երևելի՝ յաւուրս երկայնա-ձեռն արտաշէսի պարսից արքայի, իբր 450 ա-մօք յռջ քան զքն: Սա յաջողաձեռն գտաւ յոյժ 'ի քանդակել արձանս փղոսկրեայս զքանչելի ճար-տարութե. յորոց միջի նշանաւոր եղև արձանն աթենասայ չածուհւոյ, զոր արար յաթէնս՝ 'ի փղոսկրէ, ԻԶ ոտանց՝ իմ կանգուն 'ի բարձրութի: Թո՛ղ զդիան ոլիմպիական՝ նոյնպէս փղոսկրեայ, և զափրոդիտէ, և զայլ դիս քանդակեալս 'ի նմէ. մինչև առեալ կուինտիլիանոսի. Թէ փիդիաս յա-ջողակ ևս էր 'ի դրօշել զդիս քան զմարդիկ: Այլ Թէ 'ի դրօշել սորա զարձանն աթենասայ, չիշխելով զանուն իւր դրօշմել՝ զի չէր օրէն, ձևացոյց հնարիւք իւրև 'ի զարդ զպատկեր դի-մաց իւրոց 'ի վահանի անդ՝ զոր ունեալ էր 'ի ձեռս արձանին: Ասած իմն եղև՝ Ἔργον Φειδίου անուանել զգործս ճարտարութե, որք բաղում աշխատութե լինէին և ընտիր գտանէին: Այն առ փիդիաս էր միանգամայն և պատկերահան քաջ:

(17) Կղօդիանոս, ըստ լատ՝՝ Κλαυδιανός, էր անուա-նի բանաստեղծ կամ տաղասաց 'ի լատին բար-բառ, հայրենեօք եգիպտացի, 'ի վախճան չոր-րորդ դարուն՝ յաւուրս մեծին Թէոդոսի կայսեր. որոյ որդիքն արկադէոս և ոնորիոս ետուն կանգ-նել

նել արժան 'ի յիշատակ կղոգիանոսի, թէպէտև հեթանոս ոք էր նա: Են սորա բազմաչափիկ
ոտանաւորք համեղաբան և իմաստալից:

Իսկ սիմոնիդէս էր հին բանաստեղծ հելլենացւոց և նուագայարդար' 'ի կէայ կամ 'ի ղէայ կղզւոյ, յաւուրս կիւրոսի և դարեհի վշտասպեայ պարսից արքայի: Սա առաւել յաջողակ էր 'ի յօրինել ողբերգական կամ ղեղերերգական տաղս' քան զուրախական և զյաղթողականս: Եւ զի սա ձեռն էարկ գովել զջօրին յաղթական յընթացս ողիմպիական խաղուց, սովին որպէս թէ նախանձ էարկ վիրգիլեայ եւ քան զևս մեծացուցանել զեբագընթաց վազս կամիլլայի յիւրում բանաստեղծութե. իսկ թէ ո իցէ կամիլլա, ունիս տեսանել զնի 'ի համարն. (32): Կան և այլ բանաստեղծք սիմոնիդէս անուամբ' յետոյ ժամանակաւ:

Այլ թեմիսոն էր անուն ուրուամն երևելի բժշկի. զորմէ գրէ պլինիոս. Է. 15. * Հռչակ եհար —է ,, և թեմիսոն բժիշկ զհաստարակ զայն բոյս ջղախոտ, իբր գտակ նորին, գիրս շարագրեալ 'ի ,, վ̅ր ն̅ր ||: Սա աշակերտ էր ասկղեպիադեսի. և յետ մահու վ̃պին իւրոյ բաղում ինչ 'ի գրուածոց ն̅ր ը̅ կամս ուղղագրեաց:

Իսկ նա ինքն ասկղեպիադէս էր անուանի բժըշկապետ 'ի պրուսիոյ բիւթանացւոց (այն է պրուսսա). ծաղկեալ 'ի հռոմ յաւուրս մեծին պոմպէի իբր 100. ամօք յառաջ քան զք̃ս: Զոր ասէ զնմէ թեսաւրոս' թէ գովեալ իցէ զարտեմիսիա, թուի առեալ 'ի պլինիոսէ. ԻԵ. 21. այլ անդ ոչ գրի արտեմիսիա, այլ' անթեմիս. * Անթեմիս ,, (խոտ' ասէ) մեծաւ գովութեամբ հռչակի յասկղե- ,, պիադեսէ ||: Եւ թէպէտ կայ նաև այլ խոտ ծանօթագոյն արտեմիսիա անուն, զոր յիշէ պլինիոս այլուր. ԻԵ. 7. բայց ոչ գիտեմք' թէ մանաւոր գովութի առեալ իցէ և այնմ ասկղեպիադէս:

Սոյնպէս և բանիաս էր բնագէտն ոք, որ բժ̃ գովութիս խօսեցաւ զեղնջոյ, բառ վկայելոյ պլի-

նիո-

Նիսոսի. ԺԷ, 13. ուր 'ի խօսիլն 'ի վերայ եղինջ խատոյ, ասէ. * Յօրինեաց զգովութիւն սորին Փա„նիաս բնախօս ||. և յարէ զպատճառս գովութեն, թէ յորչափ ինչ իրս պիտանացու իցէ եղինջն:

(18) Ալկիդէս է մականուն կամ առասական անուն քաջին Հերակլեայ. իբր զի Ալկիդէս և Հերակլէս է նոյն այր, որպէս Տուղղիոս և Կիկերոն. վ̃յ և բանաստեղծք անխափ վարեն զերկաքանչիւր զայս անուանակոչութիւս: Իսկ թէ ուստի եղև Հերակլեայ կոչիլ Ալկիդէս, ոմանք համարին՝ թէ անուն հաւու նր էր Ալկէոս. վ̃յ և նա Ալկիդէս ձայնի, որդ թէ Ալկիդեան՝ կամ թոռն Ալկէոսի: Իսկ այլք գնեն՝ թէ 'ի գործոց քաջութե առեալ իցէ զայդ անուն. զի Ալկիդէս, այն է ը յունաց ἀλκίδης, թարգմանի՝ զօրաւոր, հզօր, ուժեղ. ելեալ 'ի բառէս ἀλκή, որ է զօրութիւն կամ ոյժ:

(19) Արիստիդէս Թեբայեցի էր նկարիչ երևելի ժամանակակից Ապելլեսի. սա ասեն նախ քան զամենեսին ձեռնամուխ եղև նկարագրել 'ի պատկերի զկենդանական շարժմունս հոգւոյ և զկիրս մարդոյ. թէպէտ և փոքր մի գունեղ յօրինէր: 'Ի նկարս սորա այն պատկեր էր առաւել 'ի համարի, յորում ձևացոյց մանուկ դիեցիկ դիմեալ 'ի ստինս մօրն առ 'ի մահ վիրաւորելոյ. ուր մայր նորա ձեռօք արգելոյր զպտղայն, որդ թէ զգուշացեալ՝ զի մի փխէկ կաթին զարիւն դիեցէ մանուկն: Զայն պատկեր տեսեալ Աղեքսանդրի՝ ետ պահել ուրեք 'ի պատուի: Իսկ թէ սոյն այս պատկեր իցէ, զոր յետ ժմկաց գնեաց Ատտալոս, և կամ այլ, չունիմ ասել զհաւաստին:

Իսկ նա ինքն Ատտալոս էր արքայ Պերգամայ՝ ընչաւէտ յոյժ և առատաձեռն. և այնչափ բզմ էին նր մեծագին ստացք՝ գնոց առեալ կամ շինեալ տուեալ, մինչև մեծամեծ և մեծաշէն իրաց Ἀτταλικὰ կոչիլ առ մատենագիրս: Սա անզաւակ մեռեալ՝ եթող զա̃մ ինչ իւր կտակաւ 'ի ժառանգութիւն Հռովմայեցւոց, իբր 200. ամաւ յառաջ քան զքս̃:

Տիմոլէոն կամ Թիմոլէոն կորնթացի՝ էր սպարապետ անուանի, քաջութեամբ և առաքինութեամբ փայլեալ՝ իբր 350. ամօք նախ քան զՔս: Խաղաց նաւաւք 'ի Սիկիլիա 'ի վերայ բռնաւորին Դիոնեսիոսի կրտսերոյ. և առեալ զՍիրակուսա քաղաք՝ աքսորեաց զբռնակալն հանդերձ գործակցօք նորին 'ի Կորնթոս: Դիմեաց ապա և 'ի վերայ Լեոնտացւոց, և ձերբակալ արարեալ զբռնաւոր նոցա՝ սպան: Յաղթեաց և այլոց բազմաց բռնաւորաց և զօրավարաց յայլ և այլ կողմանս, ուր ուրեք յօգնութեան կոչէին զնա նեղեալքն 'ի բռնակալաց: Իսկ զՍիկիլիա ողջոյն՝ որ 'ի բազմաց հետէ հեծէր ընդ հարստահարութեամբ ինքնիշխան բռնաւորաց, գլխովին յազատութիւն դարձոյց: Եւ ինքն յետ բազմապատիկ գործոց քաջութեան՝ նստաւ խաղաղութեամբ 'ի Սիրակուսա իբրև սովորական ոք առանձնացեալ իւրովք ընտանեօք: 'Ի մեռանել սորա կանգնեցաւ յանուն նորուն մեծաշէն մահարձան 'ի հրապարակն Սիրակուսայ. յորմէ և կոչեցաւ տեղին հրապարակ Տիմոլէոնեան: (20)

Ակադեմիա, ըստ յն. Ἀκαδημία կամ Ἀκαδήμεια, էր զուարճալի վայր պարտիզաց և անտառաց՝ իբր միղոնաչափ հեռի յԱթենայ. անդ ծնաւ Պղատոն, և անդ կարդեաց դպրոց, և ուսոյց փիլիսոփայական իմաստս բազմութեան աշակերտաց իւրոց. վասն և հետևօղք նորա ակադեմականք կոչեցան. և յայս անուն զուսումնարանս սովորութիւն եղև ակադեմիա ձայնել: (21)

Իսկ Լիկէոն կամ Լիւկիոն, որ է ըստ յն. Λύκειον, և ըստ լտ. Lycæum, էր անուն ձեմարանի՝ մերձ դպրատան, յորում ձեմելով ուսուցանէր զաշակերտս նրբախօսն Արիստոտէլ աշակերտ Պղատոնի. և այս եւս մօտ յԱթէնս: Եւ զի արիստոտելեան ուսումնարանն առաւել ծաղկեցաւ և հանդիսացաւ քան զՊղատոնին, վասն սովորութիւն եղև զմեծամեծ դպրոցս՝ յորս երևելի մակացութիւնք ուսանդին, Լիկէոն կոչել. իբրև վերադաս և առաւելեալ քան զայլ դպրատունս՝ ակադեմիա անուանեալս:

Ակտա, այն է ըստ յն. ἀκτή կամ ἀκταί, է (22)

ակն

ակն ինչ պատուական, որ նախ 'ի սիկիլիա առի գտեալ առ աքատ գետով. և անտի առեալ զա_նուն: Էր առ նախնիս 'ի մեծ յարգի, զի համա_րէին ցածուցանել զխռովութն օդոց, և մեղմել զհոսանս բռնութե գետոց. ևն: Արդ՝ առի, թէ պիւռոս Թգր եպիռոսայ ( այն՝ որ մղեաց պտրզմ ը̄ հռովմայեցիս իբր 300. ամաւ յառաջ քան զքն ) ունէր զմի յականց առի, ո̄ր ակատ մի, յորում 'ի բնէ ձևացեալ էին ութուական պատկերք ինն մուսայից, որք համարէին առ հելլենացիս չնծու_հիք բանաստեղծութն և իմաստութեան և այլի այլի ազատական արուեստից՝ հանդերձ իւրեանց նշանակօք, ը̄ որս և ապողոն չնծն երաժշտուէ՝ հանդերձ քնարաւ իւրով. տե՛ս զրէ պլինիոս 'ի լէ. գիր. գլ. 1: Զայն ակն օրինակ 'ի մէջ առ_նութեաւորս՝ նմանեցուցանելով գլխոյ, յորում հաւաքեալ իցեն բազմազիմի իմաստութիք և մա_կացութիք: Յիշի ակատ և 'ի գիր. Եւէ. իէ. 19. և լը. 11:

(23) Փաղերէոս, որ և դեմետրիոս փաղերեւս կոչե_ցեալ, էր մեծանուն հռետոր և փիլիսոփոս ճե_մական՝ աշակերտ Թէոփրաստոսի, յուսուցս ա_ղեքսանդրի մակեդոնացւոյ՝ և պտղոմէոսի առաջ_նոյ արքային եգիպտացւոց: Սա վս զգօնութեան իւրոյ ընտրեցաւ իշխանապետ աթենացւոց ամս տասն, և արար բազում բարեկարգութիս. վսյ և յանուն նորա կանգնեցին աթենացիք արձանս պղնձիս՝ թուով 360. իբր ը̄ս աւուրց տարւոյն. այլ զկնի այսր փառաւորուէ, մինչչև լցեալ էին այնչափ աւուրք՝ որչափ էր թիւ արձանացն, կոր_ծանեցին արք յաչաղկոտք զարձանս նր. և զփա_ղերէոս արտասահման արարին. և նա դիմեալ անկաւ յեգիպտոս առ պտղոմէոս: Սա եղև՝ ըստ աւելոյ ամանց, յորդորիչ պտղոմէոսի փիղադեղ_փեայ չինել դրատուն մեծ յաղեքսանդրիա, և հա_ւաքել անդ ընտիր ընտիր մատեանս. ընդ որս և զմծաշունչն երբայեցւոց տալ թարգմանել 'ի յու_նական բարբառ 'ի ձեռն եօթանասուն և երկու ծերոց: Գրեաց սա և պէսպէս պիտանութիս.

յորոց

յորոց ծնացուածք ինչ հաւատարականք կան մինչև ցայսօր ։ Յիշէ զսա Եւսեբիոս 'ի Քրոնիկոնն , 'ի ՃԺԸ . ՈՂՈՄՊԻԱԴԻՆ ։

Յառաջիկայ բանսդ հայի առելն Եւսեբի 'ի Քրոնիկոն կանոնի . ՈՂՈՄՊ՟ . ԽԷ , 'ի ժամանակին՝ յորում Մրջիւնային Դանիէլ և Եզեկիէլ ՚ Սողոն ,, ետ օրէնս և քակեաց զԴրակոնին ||։ Քանզի Դրակոն ( որ Թարգմանի վիշապ ) առաջին օրէնսդիր աթենացւոց՝ անագորոյն մտօք վճիռ հատեալ էր՝ զամենայն մեղս միօրինակ պատժել չարաչար , մինչև զպղերգս անգործս կամ զգողն ինչ իրաց գողացօղս՝ անձնարին մանջանօք պատուհասել , եւս և գլխապարտ առնել . վասն և առած էր առ հելլենացիս , թէ Դրակոն զօրէնս իւր ոչ մելանաւ , այլ՝ արեամբ արձանագրեաց ։ Իսկ Սողոն այր իմաստուն՝ մին յեօթն իմաստասիրաց , նոր օրինագիր եղեալ աթենացւոց , մերժեաց զնոմ օրինադրութիւնս Դրակոնի , բաց յայնց՝ որք հայէին առ արիւնահեղս ։ (24)

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՍ ։

Մարգիտէս , ըստ յն . ՀՈՄԵՐՈՍԻ , առ ի լինել իշխանաւոր ոք յաւուրս կործանման տրոյիոյ՝ եկեալ յօգնութիւն պրիամոսի յանհագան ժամու , այլ ապուշ մտօք և իբր անզգայ . մինչև անգէտ իսկ էր օրինաց ամուսնութե . զոր խարանօք իմն ձգեաց առեն կին նորա 'ի զուգաւորութե ։ Այլ ոմն կարծի՝ ոչ գոյր ոք այսպիսի անուամբ . այլ այս եղև գիւտ բանաստեղծական . իբր զի ըստ առակաց ոմանց՝ անուանս ՀՈՄԵՐՈՍԻ ծագի 'ի բառից ՄԷ ԵՐԳՈՆ , ՄԷ ոչ գործ . այն է անգործ և անպէտ յամի ։ Եւ 'ի սոյն անուան վերագրեցաւ բանահիւսութե ինչ հոմերական . ուր առ ի վն Մարգիտեայ . (25)

ԶՈՐ ՈՉՆ ԷԳԻՆ՝ ԴԻՔ ՀԵՐՆԱՅԻՆ ,
ԳՈՐԾԵԼ ԻՆՉ ԳՈՐԾ՝ 'Ի ԿԵՂ ՀԱՐԴԿԱՆ .

Ո՛ւ Հերմէս [illegible],
[illegible] իմաստութեան ։

(26) Հերմէս, ըստ յն. Էրմէս, և ըստ լատ. Մէրգուրիոս, ըստ բանաստեղծից դիցաբանութեան էր որդի Դիոսի ծնեալ 'ի Մայեայ. և համարիւր դեսպան և թարգման աստուածոց. խելամուտ ամենայն գիտութեանց, գտիչ ազգի ազգի արուեստից. և միանգամայն աստուած պերճախօսութեան, վաճառականութեան, և աւազակութեան ։ Թող զայն՝ զի ոմանք բազում թըւեն Հերմէս կամ Մերկուրիոս ։ Իսկ տաղաչափն այն Թեսաւրոսի վն արձանին Հերմէսի՝ է բան Պիւթագորայ փիլիսոփայի, որ ասէր. « Զէ օրէն յինէ և լեալ փայտէ դրոշել զարձան Հերմեսի ». այլ թէ զորպիսի ազնիւ փայտ կամ նիւթ այլ ընտրելի վասն արձանի նորա, չէ մեղ յայտ ։

(27) Աքիլլէս կամ Աքիւղէս է ծանուցեալ անուանի քաջն առ Հելլենացիս՝ և ազգային Թեսաղացւոց յաւուրս Տրոյական պատերազմին. զորմէ բազմօրինակ քաջութիս գրեն հնախօսք՝ ազգի ազգի յաւելուածովք. մինչև ախորժել Խորենացւոյն՝ զի մերս Զարմայր Հայկազն հզօր 'ի հանդէս արուէ, որ անկաւ յայնմ մարտի. չիցէ պատմեալ յայլմէ. այլ 'ի քաջ բազկէն Աքիլլեայ. « 'ի քաջացն Հելլենացւոց ( ասէ 'ի Գիրս. Ա. Գլ. 31 ) « վիրաւորեալ մեռանի, այլ կամիմ յԱքիլլեայ, « և մի յայլ ումեքէ 'ի քաջացն ». Նոյն և զմարազդատ քաջ ազգայ Հայոց Արշակունի համեմատէ նմին Աքիլլեայ. Գիրք Բ. Գլ. 40. « և անդ էր « տեսանել ( ասէ ) նոր զոմն Աքիւղէս՝ ընդ Սկա- « մանդրոս գետ վազեալ ». ԵՒ։ Իսկ մեկնիչն Գրիգորի Աստուածաբանի Նոննոս՝ յաւելու 'ի մէջ բերել և զստուգաբանութիւն անուանն Աքիլլեայ, յառեալ ըստ հին թարգմանութեան. « Ծնեալ Աքիւ- « ղէս՝ աւանդեցաւ առ Քերոն. որով վարեալ « լինէր սնուցողաւն համանգամայն և վարժապետ ա- « ռաքինութեան. և էր այս Քերոն Իպպոկեն- « տաւրոս ( [illegible] ) բնակեալ յայրս ինչ քար-
ան-

,, անձաւացն 'ի Թեառղեայ. արդ՝ առեալ քե-
,, րոն զայս աղբիւրս, և նստուցեալ յետոյ իւր
,, 'ի վ՟ր ձիւղէն կողմանն. մնուցանելով զնա ոչ
,, կաթամբ կամ հացիւ, այլ ուղղովք առիւծուց
,, և այլոց կենդանեաց. վ՟ն աղբիւրս անուանե-
,, ցաւ, իբր ոչ քիղոսի անեալ. քանզի քիղոս
,, (ըստ յն. խիլոս) սովորական կերակուրս
,, է ||: Այլ վ՟ն քերոնի ձիացլու տես 'ի ստորև
'ի համարն. (94):

Իսկ Ոդիսևս՝ որ 'ի յունաց Ոդիսևս ասի, և 'ի լա-տինացւոց Ուլիսէս. էր այր մի երևելի՝ ժամակից աքիլլեայ, այր ճարտարամիտ և խորագէտ. որ և եղև Թ՟գ իԹակայ և դուղիքեայ կղզեաց. և վ՟ն բազմագիմի գործոց իւրոց առ տրոյական մար-տիւ՝ համարեցաւ 'ի կարգս դիւցազանց. յորոյ վ՟ր բանաստեղծական առասպելս ուրոյն գիրս ոտանաւորաց յօրինեաց հոմերոս: Զսա ես յիշէ խորենացին 'ի Բ. գիր. գլ. 60: Ունիմք և մեք յիշատակել 'ի կարգի ինչ ինչ 'ի գործոց ընծայե-լոց սմա:

Գեղեցիկ է օրինակս, բայց զի մի խրթնասցի (28) առ ոմանս յընթերցողաց, հաճոյ Թուեաւ ես պար-զել այսպէս. Որ խաղայ քուէիւք, կ՟մ զառով, ո՟պ Թավլու. եՆ, ցանկայ յաջողուԹե քուէից. բայց Թէև անյաջող գայցեն, նա հնարի ա՟ր կարի այնպէս զետեղել զգարինս կամ զփուլս, զի մար-Թասցի շահիլ զխաղն. ո՟պ և շահի իսկ յոլովակի: Իսկ իմաստ օրինակիս յայն հայի. Թէ նաև 'ի բնական ձիրս Թէև նուազեալ գտցի ոք. չպար-տի լքանիլ. այլ՝ ջանալ նուել առաքինուԹե ըղ-ձականն. ո՟րպ և տեսանեմք իսկ. զի ժրաջանք՝ Թէպէտև տկարք կամ ագէտք, առաւել յառա-ջադէմ գտանին յառաքինուԹս, քան զայնոսիկ՝ որք ունին ձիրս բնատուրս, այլ՝ հեղգասէրք են և անփոյԹ: Զայն ակնարկէ և նախակար-գեալ օրինակն անդաստանի. որ Թէև չիցէ քաջ արգասաւոր, 'ի ձեռն հնտզորդ մշակուԹե բերէ արդիւնս շահեկանս՝ քան զայլ արգաւանդահող տեղիս, ուր նուազ լինի մշակուԹի:

Կագ

(29) Կադմոս էր որդի Ագենովրայ, ըստ նախնեացն եգիպտացի՝ և ինքն փիւնիկեցի. որ և Թեբեաց 'ի կողմանս փիւնիկեցւոց յերկրին տորւոց. և ապա անցեալ 'ի յունաստան՝ շինեաց զնոյն Թեբաս 'ի բիովտիա գաւառի, և անդ եդ զաթոռ իւր: Սա ասեն ստեղծ զառաջինն՝ նշանագիրս յունաց, բերեալ ԺԶ իւր ալփաբետս ինչ 'ի փիւնիկեցւոյ՝ թուով ժզ. որովք առ ժամ մի վարեցան հելլենք. և ապա այլք ես յաւելին հետ զհետէ քանի մի տառս: Գործակից էր Կադմոսի և եղբայր նր փիւնիկբս. այլ անուն Կադմոսի նշանաւոր եղև յոյժ: Էր սա ասեն առ ժմիք Մովսէսի՝ փոքր մի զկնի, և կամ ըստ ոմանց՝ փոքր ինչ յառաջ: Եւսեբիոս դնէ յաւուրս Յեսուայ և Գոթոնիելի:

(30) Անաքսիմանդր միլետացի՝ էր փիլիսոփայ ամն աշակերտ և գործակից Թաղեսի առ ժմիք Կիւրոսի մեծի. եղև քաջ աստեղաբաշխ, և եգիտ պէսպէս զննութիւն լուսաւորաց և պարունակաց երկնից. սա ասի լինել առաջին հնարող ժամացուցի արեգական. եգիտ և զնկարութիւն աշխարհագրութե, և գծագրեաց աշխարհացոյցս:

(31) Փոխանակ անուան դիպլենոսի, առ որ հայի բան հեղինակիս, յիտալական տպագրութե վրիպակամբոյ տառի դնի դիպեղաս. այլ չեք այնպիսի անուամբ անգրիագործ ոք. Թող զայլև այլ անձինս գիփիեղոս կոչեցեալս, յորոց մին էր յամբագործ ճարտարապետ շինուածոյ. մինչև յաւանս եղև գլուշիկ գործոցս կոչել [illegible]: Այդ՝ դիպլենոս կրետացի, զորմէ մեր բանքս են, որ և գրի դիպլինոս կամ դիպոյենոս, է այն՝ զոր յիշատակէ պլինիոս. լզ. կ. յառելն. ,, 'ի գրոշել ,, զկճեայս ([illegible]) նախ ,, քան զամենին ծաղկեցան դիպլենոս և սկիւղիս՝ ,, ծնեալք 'ի կրետէ կղզին, մինչդեռ տակաւին ,, տիրէին մարք՝ յառաջ քան զսկիզբն Թգրելոյ ,, կիւրոսի 'ի պարսս, այս է իբր 'ի Ծ ողոմպիա,, դի: Սոքա գեմ եզեալ գնացին յերկիրն սիկո,, նացւոց, որ Է բազում ժմկս եղև տեղի գոր,, ծա֊

,, ծառանաց տմ՛ մատաղաց . զդրօշեալս քանի մի
,, գիր եդին հրապարակաւ 'ի սիկղնին . այլ
,, մինչև էր լրումն առեալ այնց գործոց , ար-
,, ուեստաւորքն հարստահարութիւն ինչ կրեալ՝
,, խոյս ետուն առ եառղայսին : Իսկ և իսկ զօ-
,, րացաւ 'ի սիկղնին սով և անպտղութիւն և ա-
,, ղէտք անհնարին : 'Ի խնդիր լինել հնարից դէ-
,, ղոյ՝ ապողոնն պիւթեան ետ պատասխանի խոստա-
,, նալով հասանել նոցա յօգնուն , եթէ գիպենոս
,, և սկիւղիս 'ի գլուխ հանցեն զդրօշեալս դիցն :
;; Վ̄յ և բազում վարձուք և աղաչանօք կոչեցին
,, զնն 'ի կատարումն գործոյն . և էին դրօշեալքն
,, այն՝ ապողոնի , արտեմիդեայ , հերակլեայ , և
,, աթենասայ՝ որ յետոյ շանթահար եղև || : Իր-
ացա 'ի սոսին հայի նաև ասանդեալն 'ի խորե-
նացւոյն Է. 11. յաւելն վասն արտաշէսի պարթևի
հայոց արքայի . " Գտեալ յասիա պղնձաձոյլ ոս-
,, կեզօծ պատկերս զարտեմիդեայ և զհերակլեայ
,, և զապողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր , զի
,, կանգնեսցեն յարմաւիր : Զոր առեալ քրմա-
,, պետացն՝ որ էին յազգէ վահունեաց , զապո-
,, ղոնին և զարտեմիդայն կանգնեցին յարմաւիր .
,, իսկ զհերակլայն զանդրիապատկերն , զոր առա-
,, րեալ էր 'ի սկիւղեայ և 'ի դիպինոսէ կրետաց-
,, ւոյ . զվահագն իւրեանց վարկանելով նախնի՝
,, կանգնեցին 'ի տարօն յիւրեանց սեպհական գիւղն
,, յաշտիշատ՝ յետ մահուանն արտաշիսի || :
Իսկ պալլաս , այն է ըստ յն . Παλλάς . է անուն
չաստուածուհւոյ պատերազմաց . որ ըստ առասպելաց ծնաւ-
յուղղոյ դիոսի առանց մօր . և զի ջախջախմամբ գըլ-
խոյ դիոսի հնար եղև հանել զնա 'ի դուրս , 'ի
վիրաց անտի նորա սոսի ծնեալ պալլասն՝ զինավա-
ռեալ անձամբ . նմին իրի և նկարին զինեալ և
վահանաւոր . որ և վահանաւ իւրով փախեաց ա-
սեն զմահն 'ի մարդկանէ 'ի քարինս : Հռոմկօրէն
նոյն համարի սա է աթենասայ չաստուածուհւոյ գիտու-
թե , որ 'ի լատինացւոց կոչի Մինէրվա . զի սա ինքն
է ասեն՝ ծնեալն յուղղոյ դիոսի 'ի նշանակ իմաս-
տութե . վ̄յ և ոմանք զմիներվայդ անուն ստուգա-
բա.

բանէն՝ սպառնացող. այլ՝ ազդարարող. և կէսք նուազեցուցիչ կամ տկարացուցիչ ջղաց. մն̄ մաչելոյ ուսմանց զգիտնականս ։ Իսկ պալլաս կոչեցաւ աւէն՝ կամ մն̄ սպանանելոյ նր̄ զերեւելի ոմն հսկայ պալլաս անուն, և կամ զի ծագի 'ի յունական բայէս ԲԱԼԼԷԻՆ. որ ձօձել կամ կշռել զնիզակն. մի̄ և հնրկորէն նիզակ 'ի ձեռին նկարի՝ իբր պատրաստեալ 'ի ձգել 'ի մը̄ թշնամեաց.

(32) Կամիլլէ կամ ԿԱՄԻԼԼԱ էր դուստր մետաբոսի արքային վոլսկաց 'ի սահմանս իտալիոյ՝ առ ժամօք տրոյական պտրզմին. զոր ը̄ ծնանելն՝ նուիրեցին արտեմեայ չա̄ծուհւոյ՝ ընկեցեալ յանտառս. ուր 'ի կաթանց երինջաց սնաւ աւէն. և 'ի սնուցչաց անտի իւրոց (որ 'ի ձիոց վայրի) ուսեալ վարժեցաւ 'ի ձիընթացս և 'ի մարտադրութիւս, և առաւել ևս յերագոտն վազս. մինչև ըստ բանաստեղծութեան վիրգիլեայ՝ 'Ի Է. ԷՆԷԱԿԱՆ ԳԻՐՔ. 'Ի ՀԱՄԱՐՆ 800. երագաթռիչ լինել քան զթևս հողմոց, և անթաց ոտիւք անցանել ընդ երեսս ծովու ։ Ելեալ ապա 'ի տուն հայրենի՝ սիրեաց ըղպարկեշտութի, և ոչ կամեցաւ լինել առն՝ իբր նուիրեալ կուսան ոք. ԷՆ. զորմէ երկար ճառէ վիրգիլիոս 'Ի ԺԱ. ԷՆԷԱԿԱՆ ԳԻՐՔ ։ Յօգեն զնմէ և այլք ազգի ազգի առասպելս. և հնրկորէն յորինակ բերեն երագութե և պարկեշտութե ։ Այլ ը̄ հանրապես անուանս ԿԱՄԻԼԼՈՍ՝ յարականն, և ԿԱՄԻԼԼԱ՝ յիգականն, էր առասական յարջարջումն՝ ընծայեալ այնոցիկ, որք 'ի մանկութե կարգեալ լինէին 'ի սպաս գից. մի̄ և այս անուն նշանակէր արբանեակ կամ պաշտօնեայ չա̄ծոց ։

(33) Յայս իմաստ հայի՝ և պարզէ իսկ զառաջիկայս տեղի՝ այն խոնարհական ասացուած ոճին գրիգորի նարեկացւոյ 'Ի ԲԱՆՆ ԿԷ. "ատտիկեցիս ըստ " վատթարութե, այլ ոչ ըստ բարերարութե ||: Իբր զի ատտիկեցիք՝ որ և աթենացիք. (զի Աթէն էր մայրաքաղաք ատտիկէ գւռին 'ի յունաստան) ունէին բարերարութիւն ըստ իմաստութե մասին, և միանգամայն վատթարութի ըստ մոլեկան վարուց ։

Ազա.

Ագասիկղէս. յն. Ἀγασικλῆς, էր մեծանուն և ի- (34)
մաստուն արքայ սպարտացւոց՝ իբր 650 ամօք
յառաջ քան զՔս, առ Ժմկօք մանասէի արքային
յուդայ։ Արդ՝ 'ի դէմս սորա յառաջ բերեն վի-
պասանք քանի մի իմաստուն առացուածս, զի ի-
մաստնագոյն գտաւ 'ի մէջ լակեդեմոնացւոց (որ
են սպարտացիք), որոց եղանակ խօսից արդէն
էր հաշակեալ՝ իբր վճռական և իմաստալից յաւէտ
'ի լակոնիա գաւառի. յորմէ և կոչին լակոնացիք։
Հռչակաւոր է այն առած ագասիկղեայ առ ալ-
լուստալքեայ. [illegible]
[illegible]
[illegible]։ Իսկ զոր գրէ Թեսաւրոս՝ ասել
ագասիկղեայ 'ի մանկութեան, այլք այսպէս 'ի մէջ
բերեն. 'ի հնչել համբաւոյ փիլոփանեայ սոփես-
տի 'ի մէջ յունաց, ասաց ոմն ցագասիկղէս արքայ
լակեդեմոնացւոց. քանզի այդչափ մեծ է քո սէր
առ ուսումն գիտութեանց, զարմանամ՝ զի ոչ ու-
նիս առ քեզ զայնպիսի այր մեծանուն։ Առ որ
պատասխանի տուեալ նր իմաստութեամբ՝ ասէ. [illegible]
[illegible]։ Յայտ արարեալ
թէ չամ է ուսմք. եթէ հետեւող գտանիցի հայրե-
նի առաքինութեանց։

Բեղերոփոն, լթ յն. Βελλεροφόντης, էր թգւր (35)
եպիւռոսայ կամ եփիւռայ. առ Ժմկօք դատաւո-
րացն իէլի. որ իբրև անկաւ 'ի թշւութէ, կայր
յարքունիս պրիտոսայ արքային արգիացւոց. և 'ի
լինել չարախօսութե՝ ով թէ բեղերոփոն բռ-
նադատել իցէ զկին արքային. առաքեաց զնա
թղթովն առ աներ իւր յօբատ արքայ լիկիացւոց.
և նա յղեաց զբեղերոփոն 'ի պտրզմ. զի մեռցի
'ի նմա։ Այլ իբրև յաղթող գտաւ նա, զի էր
այր քաջ և վարժ 'ի ձիավարել, առաքեցաւ դար-
ձեալ 'ի վր խուժադուժ բնակչաց լերինն քիմե-
ռայ՝ որ 'ի նմին լիկիա գաւառի. բայց նա և անդ
զօրացաւ, և լցոյց զլեառն զայն շինութբ և նոր
բնակութբ. որոյ վն սիրելի եղև յօբատայ, և փե-
սայացեալ նմա՝ կարգեցաւ յաջորդ թգւրութե։
Արդ՝ քանզի լեառն քիմեռայ հուր շնչէր 'ի դա-

դա-

գաթանէ հանգոյն ետնային սիկիլեայ , և 'ի լան_
ջակողմանս նր̄ առիւծք որջացեալ կային , որք և
յայլ կողմն քաղք և քօշք վայրի , և 'ի ստորոտն
զեռունք և վիշապք , առասպելարկուք զքիմե_
րայն ասացին լինել հրեշ ինչ հրաշունչ և բազ_
մագլխի , որոյ գլուխք և լանջք՝ առիւծուցեն ,
մարմն՝ այծի կամ քաղի , և տուտն վիշապի ․ ը̄_
դէմ որոյ կռուեալ իցէ բելերոփոն՝ հեծեալ 'ի
պեգասոս ձի թեւաւոր , և սպանեալ զհրէշն զայն ։
Սոյն այս անգոյ քիմերա՝ կոչեցաւ 'ի հայումս
Եղջերու—ա—ղ ․ զորմէ ասա 'ի բառարանի ։ Նաև 'ի
թարգմանութիւս պահի և բառս քիմերա կամ քե_
մեռա ․ որք է տեսանել 'ի բանս Նոննոսի ․ ուր այս
առասպել համառօտի այսպ̄ ․ * Էր լեառն՝ յորում
„ երևեցաւ գազան ինչ , որոյ առաջին կողմն էր
„ առիւծու , և վերջինն վիշապի ․ և 'ի մէջն էր
„ քեմեռա (ո̄ր քաղ կամ այծ ) ․ յորմէ հուր ելեալ
„ ապականէր զպատահեալսն ․ իսկ յետոյ եկեալ
„ բելերոփոնտէս՝ ունելով զերիվարն պեգասոս՝
„ սպան զնա ॥ ։ Նոյնն ը̄դարձակ ևս գրի այլուր
'ի նոյն գիրս ․ համգերձ յիշատակութ̄ բ̄ առխախս
անուան արքային լիւկացւոց ։

(36) Սան եպիկուրոսի՝ յաւուրց անտի նորա մինչև
ցայժմ հկռ̄կութի է , թէ արդեօք յինչ միտս ա_
սաց զերջանկութի մարդոյ լինել 'ի հեշտութեան
կամ 'ի բերկրալից հաճութե ․ գիմոկրատէս՝ որ
էր յեպիկուրեան դպրոցէ ․ որոշել զանձն յայնմ
աղանդոյ՝ գրով և բանիւ եպերեաց զեպիկուրոս
և զվ̄պուն նորա ․ և զի եղեն ոմանք 'ի մէջ եպի_
կուրեանց խառնակեաց և անկարգ վարուք , յան_
ցանք նոցին առ ուսուցիչ իւրեանց վերագրեցաւ ։
Բայց սակայն եղին և բազում մատենագիրք որք
'ի ձեռն գրոց եպիկուրոսի՝ ուր ընտիր ընտիր
խրատք գտանին առ պարկեշտ և առաքինի քա_
ղաքավարութիւն , միանգամայն և 'ի խստակեաց
վարս նորին հայելով , բազմապատիկ պատճառօք
ցուցին՝ թէ բանք նր̄ ոչ հայէին 'ի մարմնապաշ_
տութի , այլ՝ 'ի ներքին հանդարտութի կրից և
յանայլայլակ անդորրութի հոգւոյ յինչ և իցէ
վիշտս

միշտս տառապագինս. որպէս և մերս Թեսաւրոս զնոյն պնդէ:

Գեղեցիկ կշտամբէ սենեկա զայնոսիկ՝ որք պատճառս առնուին անառակութե իւրեանց զվարդապետութիւն եպիկուրոսի, յասելն 'ի ԳԻՐՍ. ՅՂ. ԵՐՋԱՆԻԿ ԿԵՆԱՑ. ԳԼ. ԺԷ. "Աղաքէն գոքա ոչ 'ի սադրելոյ եպի- ,, կուրեայ (***) անառակին, այլ անձամբ զան- ,, ձինս մատնեալ 'ի ձեռս ախտից՝ զանառակութե ,, իւրեանց 'ի գիրկս իմաստասիրութե ղուղակեն, ,, և անդ ուրեմն համախուռն ընթանան, ուր ,, լսենն գովս հեշտութեան: Զատնուն երբեք 'ի ,, միտ՝ թէ հեշտութին այն եպիկուրեայ, որպէս ,, ինձ թուի, զիարդ պարկեշտ է և չորակեր. ,, այլ 'ի լոկ անուն անդր դիմեալ ապաւինին, ,, խնդրելով հեշտախտութե իւրեանց պաշտպա- ,, նութի ինչ և քօղարկութի: Որով և զոր ու- ,, նէին ինչ մի բարի 'ի չարիս անդ, կորուսանեն, ,, զամօթն ասեմ 'ի մեղանչելոյ: Զի գովեն զայն ,, ինչ՝ ը որ պարտ էր ամաչել. և անպատկառ ը ախտս պարծին):

Օ այս առասպել սեռափոխութե 'ի մէջ բերէ (37) պլինիոս, ԳԻՐՔ. Է. ԳԼ. Դ. յասելն. "Լիկինիոս ,, մուկիանոս աւանդեայ, թէ տեսեալ իցէ ինքն ,, յարգիացւոց երկրի զարեսկոն անուն (այր), ու- ,, րում անուն լեալ էր յառաջն արեսկուսա (կին). ,, և թէ յորժամ առաւ 'ի կնութի, նոյնժամայն ,, մօրուս և այրականութի առացաւ, և եառ եւ ,, իւր կին: Այն նման և 'ի զմիւռնա տեսեալ ,, իցէ նորա զմանուկ մի||: Եւ թէպէտ նա ինքն պլինիոս ոչ անհաւան ցուցանէ զինքն այսպիսի կեղծեաց, այլ մանդ և այլովք օրինակօք ջանայ հնարաւոր ցուցանել. այլ մեզ աւելորդ թուի զայնպիսի իրաց խնդիր 'ի մէջ առնուլ: Բաւ լի- ցի իմանալ՝ թէ Թեսաւրոս զայսպիսի օրինակ իբր անհնարաւոր 'ի մէջ առնու՝ խօսելով 'ի ձև չափազանցական, 'ի կամիլ իւրում ցուցանել՝ թէ իբր անհնարին իմն է ունակացելոյն 'ի մոլութե յանկարծակի միով և եթ ներգործութբ փոխիլ յառաքինութե,

(38) Եթէ ճշմարիտ իցէ՝ և եթէ սուտ՝ այս պատմութիւն քրմապետի առ Նախնի հռովմայեցիս, 'ի դէպ գայ օրինակս առ 'ի խրատ լսողաց. զի թէ հեթանոսք այնչափ մեծ յարգ ունէին առ կրօնս իւրեանց, և ամ իրօք պարտ վարկանէին պաշտօնէից կռոց՝ անարատ վարուք քաղաքավարիլ, զինչ պարտ իցէ առնել վասն ծառայից ճշմարտին այ, և մանւնդ վր անմիջական պաշտօնէից նորա՝ որք մատչին յահաւոր խորհուրդս ածային։ Զայս յայն սակս յուշ արարաք, զի մի անպտուղ լիցի ընթերցումն այսպիսի օրինակաց 'ի սմին մատենի. և մի վայրապար ինչ կարծեսցի յառաջ բերեալ 'ի հեղինակէս, որ զամն խորհրդով դնէ 'ի խրատ ընթերցողաց։

(39) Լուսատու՝ որ յունարէն ասի լիքնօս, է անուն բանջարոյ՝ կամ ծառոյ. որոյ տեսակ ինչ ասի լինել յեգիպտոս՝ բուսեալ 'ի Նեղոս գետ, և 'ի կիր առեալ 'ի նախնեաց անտի եգիպտացւոց 'ի պաշտամունս դից։ Իսկ այլ տեսակ յափրիկէ՝ դառնարմատ և քաղցրապտուղ։ Արդ՝ ասի 'ի բանաստեղծութիւն պատմութեան ոդիսական պատերազմի, թէ յորժամ ոդիսեւս դիւցազն 'ի նաւել իւրում հանդերձ ընկերօք՝ բռնութբ հողմոց անկաւ 'ի ծովափն ափրիկոյ, տեսեալ ուղեկցաց նորա զբոյս լուսատուայ 'ի պտուղն լոտոֆաղից այն լուսատուակերաց, և ճաշակեալ զքաղցրահամ պտուղ նր՟ ոչ ևս յօժարէին դառնալ 'ի հայրենիս իւրեանց. չէ արժան մեզ ասեն մեկնիլ յերկրէ աստի՝ որ բերէ այսպիսի ազնիւ բոյս, և զրկիլ 'ի վայելից լուսատուայ. մինչև հազիւ ուրեմն մարթացաւ ոդիսեւս հաւանեցուցանել զնոսա՝ գնալ զճնպհ իւրեանց։ Իսկ ահա յայս հայի այն բան խորենացւոյն յաշխարհագրութեան. «Լինի յափրիկէ բանջար ինչ՝ լուսատու անուն. զոր թէ ուտէ ոք, զհայրենիսն մոռանայ»։ Իսկ թէ ուստի անուն առեալ իցէ բոյսս այս, յաւելուն առասպելաբանք՝ թէ լոտիդէ մին 'ի յաւերժահարսանց փախուցեալ յերեսաց պրիապոսի, իբրև եսես թէ չկարէ զերծանիլ փախստեամբ, աղաչեաց զդիս՝

զի

զի կերպարանափոխ արասցեն զնա. և նոյնժա-
մայն փոխեցաւ 'ի ծառ. և այնպ՜ հետամուտն ան-
ցեալ առ նովաւ՝ չկարաց գտանել զնա. և այն
է ասեն լուտոս ծառաբոյսն:

Կուինդոս մուկիոս՝ մականուանեալն սկեւոլա. (40)
էր ազնուական ումն հռովմայեցի՝ այր կորովի և
արութեալ. որոյ առեալ հրաման 'ի ծերակուտէն՝
միաբանեաց Ե իւր զարս սրիկայս գալ զթշնա-
մին. և նախ ինքնին առանձին գնաց 'ի բանակն
պորսենայ արքային՝ որ պաշարեալ էր զհռովմայե-
ցիս, եղեալ 'ի մահ մտանիլ վասն հայրենեաց՝
միայն թէ մեռուցէ զթշնամին հայրենեաց: Եւ
զի ոչ ճանաչէր զպորսենաս, տեսեալ զդպրապետն
արքունի՝ համարեցաւ թէ նա ինքն թգւրն իցէ,
և անդէն եհար և սատակեաց զնա: Եւ իբրև
կալան զնա և ածին առաջի թգւրին, աներկիւղ
խոստովան եղև՝ թէ ես այս անուն հռովմայեցի
եմ՝ թշնամի ձեր, եկեալ 'ի սպանանել զթշնամին
մեր. և մի կարծեք ասէ՝ թէ ես միայնակ յայս
յօժարեցայ, զի են և այլք 'ի քաջաց՝ որք սովին
օրինակաւ պատրաստեալ կան դնել զանձինս 'ի
մահ: Յայնժամ հրաման ետ պորսենաս՝ բորբո-
քել խարոյկ. և սպառնայր զմուկիոս՝ բացայայտա-
գոյնս 'ի յայտ ածել զդաւադրութիւն իւր և զըն-
կերացն. ապա թէ ոչ՝ ասէ, կենդանւոյն 'ի հուր
այրեսցիս: Իսկ մուկիոս ձգեաց վաղվաղակի զաջ
բազուկ իւր 'ի խարոյկ անդր. և ետ այրել չարա-
չար 'ի բոց հրոյն. ես ինքնին վրէժ խնդրեցից
ասէ յաջոյ իմմէ՝ որ վրիպեցաւ 'ի հարկանել զայլ
ոք փոխան արքային. և ցուցից՝ թէ ոչ ինչ տան-
ջանք կարէ ահ արկանել յիս: Սքանչացեալ ար-
քային ընդ անպարտելի արիութիւն առնն՝ հրաման
ետ արձակել զնա յազատութի: Յայնժամ ապա
և մուկիոս փոխարէնս կամելով հատուցանել շնոր-
հի նորա՝ պատմեաց անպատրուակ, թէ երեքհա-
րիւր կորովի երիտասարդք յիմում խորհրդի են՝
գալ զանձն քո: Որոյ վասն զահի հարեալ պոր-
սենայ՝ յետս եկաց 'ի պաշարմանէ. և առեալ պա-
տանդս՝ դարձաւ 'ի տեղի իւր: Ասէ մուկիոս՝
սկե-

սկեվոլա անուն էառ ասեն, որպ թէ ահեկեան. զի սքէոս յունարէն նշանակէ ձախ կամ ահեակ. իբր զի անպիտանացաւ աջ նորա, և այնուհետև միայն ձախու ձեռամբն վարէր։

(41) ՚Ի խաղալ ենէասայ յետ տրոյական պատերազմին յարևմուտս, էառ ը իւր զպալլաս որկադացի զորդի եւանդրի՝ պատանի կայտառ և զօրաւոր. և ունէր զնա իբրև զմի յիւրոց մտերիմ սիրելեաց։ Եւ եղև՝ զի յելանելն ՚ի մարտ պատերազմի ընդդէմ տուռնոսի իշխանին հռուտուլաց, սպանաւ պալլաս ՚ի տուռնոսէ։ Ընդ այս կարի յոյժ տրտմեցաւ ենէաս, և կոծ առեալ ՚ի վր պատանւոյն՝ առաքեաց զմարմին նր առ հայր նորին։ Եւ ինքն իբրև միւսանգամ եւ ՚ի պատերազմ, յարձակեցաւ գազանաբար ՚ի վերայ տուռնոսի՝ և սատակեաց անխնայ։ Վիրգիլիոս բանաստեղծն ՚ի վախճան ենէական գրոց իւրոց գեղեցիկ նկարագրէ, թէ զիարդ տուռնոս ՚ի պարտութեն մտանել՝ պարտութեն խոստովանէր, և յաղագ անկեալ աղաչէր զենէաս խնայել յինքն. այլ նա ոչ իւիք յանձն էառ, զի դառնացեալ էր ոգի նր վս սպանանելոյ տուռնոսի զպալլաս պատանին զիւր սիրելի։

(42) Ոդիսևս յետ մեկնելոյ ՚ի դաւառէն լուտասակերաց՝ զոր ՚ի վերայ յիշեցաք, նաւեաց ՚ի սիկիլիա. և ՚ի հասանել իւրում անդր՝ բանս եդեալ ը ուզեկիցս իւր փութով դառնալ առ նա, եւ ՚ի ցամաք հանդերձ երկոտասան ընկերօք. այլ յակամայս յամեաց անդ վս այսպիսի պատճառանաց՝ ը տառապելոց։ Էր անդ ասեն պողիւփեմոս որդի պոսիդոնի՝ կիկղոպ կամ կիկլոպս կոչեցեալ, այն է հրէշ գագաթակնեայ՝ բնակեալ յայրի ուրեք՝ ուր էին գոմք խաշանց, զի էր խաշնարած. առ սա գնաց ոդիսևս իւրովքն հանդերձ՝ ակնունելով գտանել ՚ի նմանէ մարդասիրութի. այլ նա անդէն և անդ գիշատեալ եկեր զերկուս յընկերաց նր. և յետ սակաւուց զայլ ևս երկուս։ Եւ թողեալ զոդիսևս մնացեալ ընկերօքն յայրի անդ՝ իբր ՚ի կերակուր այլոյ պահու, թաւալեցոյց վէմ մի ահագին ՚ի դուրս այրին. և ինքն մեկնեցաւ ՚ի

'ի բաց ընդ ջոկս ոչխարաց ։ Յայնժամ ոդիսևայ հնարս խորհեալ հանել զփայտ կիկղոպայ. և աղաւեալ զանձն և զորս Է նմա 'ի ձեռաց վերագին այնորիկ, պատրաստեաց գինի ազնիւ՝ զոր ընբեալ էր Է իւր, ընծայել նմա ։ Եւ իբրև դարձաւ կիկղոպ, և մտեալ 'ի ներքս՝ փակեաց անդրէն քարամբ զմուտս այրին, մատոյց նմա ոդիսևս զգինին՝ աղաչելով զնա խնայել յինքն և յընկերս իւր ։ Իսկ նա արբեալ զայն՝ ասէ. խնայեմ 'ի ձեզ, եթէ միւսանգամ տայցես ինձ 'ի գինւոյ այտի. և իբրև եարբ երկիցս և երիցս, եհարց ցոդիսևս, զինչ անուն է քո. և նա ասէ. Ուտիս. (որ յունարէն նշանակէ՝ ոչ ոք) ։ Յայնժամ ասէ ցնա կիկղոպ. փոխ զի ետուր ինձ այսպիսի ըմպելի ազնիւ, ահա 'ի մեծարանս երևաց քոց՝ յետ ամէն պահեմ զքեզ ինձ 'ի կերակուր ։ Այլ յետ սակաւուց թմրեալ կիկղոպայ 'ի գինւոյն՝ զոր եարբ, եմուտ 'ի քուն թանձրութ ։ Զոր տեսեալ ոդիսևայ՝ փութացաւ հրացոյց զփայտ ինչ, և մխեաց ուժգին յաչս կիկղոպայ, և անդէն կուրացոյց ։ Եւ 'ի ձայնել նորա ատագնապաւ առ իւրսն՝ որ արտաքոյ այրին, հասանել յօգնութիւն, եկեալ ամենեցուն առ դուրս՝ որ փակեալն էր, հարցանէին ցկիկղոպ, թէ ո՞ վնասեաց քեզ. և նա ասէ. Ուտիս ։ Եւ նց պատրեալ 'ի ձայնէ անտի, համարեցան՝ թէ ոչ ուրուք վնասեալ է նմա, այլ՝ ախտ ինչ բնական խօթութ պատահեալ իցէ. և ասեն. զդիւցազն հայր քո կարդա՛ քեզ յօգնութ. և թողեալ զնա՝ 'ի բաց գնացին ։ Յետ այսորիկ ստիպեալ կիկղոպայ՝ երաց զդուրս այրին, զի հօտք ոչխարաց՝ որ կային 'ի ներքս, ելցեն արտաքս. այլ յելանել նց՝ նստեալ էր ինքն առ դրօքն, և շօշափէր ձեռօք զմի մի 'ի նցէ, զի մի և ոդիսևանք Է նն զերծցին ։ Յայնժամ ոդիսևս և ընկերք նր մտին 'ի ներքոյ խաշանց, կամ արկին զանձամբք զմորթս ոչխարաց. և այնպ պատրեալ զկիկղոպ՝ ճողոպրեցան 'ի ձեռաց նր, և ելեալ գնացին 'ի տեղիս իւրեանց ։ Այս ամ է առեղծուածութե բանաստեղծից. զոր ամենք մեկնաբանեն այսպ.

Պո.

Պողիւփեմոս (անուն) էր այր աչալուրջ և ըզ-գաստ. և փոք ասացաւ ունել զաչս 'ի գագաթան կամ 'ի ճակատն մերձ յուղեղն. զի խորագիտութ իւրով քաջատես երևէր յամի. և զի ոգիսես խորագիտագոյն էս գտաւ, և խոհական հնարիւք ինչ յաղթեաց նմա, յայս սակս կեղծեցին բանաստեղծք՝ թէ նա կուրացոյց զկիկղոպ։ Այլ վասն կիկղոպայց բնակչաց սիկիլիոյ ունիմք յիշել և 'ի ստորև 'ի համարն. (69)։

Զայն զայս առասպել կիկղոպայ այսպէս համառօտէ Նոննոս մեկնիչն ճարտասանի. "Կիկլոպոս այս
,, ասի դիցազն գոլ առաղական և հովիւ, որ
,, բնակեալ էր 'ի սիկիլիայ, և ունէր մի ակն։
,, Արդ՝ ոդիսևս յետ արձակման պատերազմին մար-
,, տեալ ընկերօքն իւրովք՝ եկն 'ի սիկիլիա. և
,, կիկլոպեայ ըմբռնել զնա՝ կեր նախ զընկերսն
,, ոդիսեայ. իսկ զոդիսևս պահեաց յետոյ ու-
,, տել. այլ ոչ կարաց. քանզի զերծաւ՝ արբեցու-
,, ցեալ զկիկլոպս և կուրացուցեալ. և ընդ ա-
,, ւոյ խոյի միոյ գաղտաբար կալեալ զանձն իւր՝
,, ել։ Ասէ գրիգորիոս (ԱԾԱԲԱՆՆ), թէ որպէս
,, կիկլոպս զոդիսևս պատուեաց՝ յետոյ ուտել
,, համարելով. այսպէս յուլիանոս՝ զիս և զբարսե-
,, ղիոս. սպառնացեալ յետոյ քան զայլսն տան-
,, ջել. վասն և ասէ՝ թէ վրէժխնդիր եղև մեզ հողն
,, պարսից||. (ուր սատակեցաւ յուլիանոս)։

(43) Ովրեստէս կամ որեստէս միկենացի որդի ագամեմնոնի՝ հանդիպացեալ է 'ի ստեղծաբանութիւնս առասպելաբանութեանց ըստ այլ և այլ գործոց, զոր կեղծեն զնմէ 'ի թատրոնական խաղս և յեղերերգութիւնս. ոմն է և առաջիկայս դիպուած յիշատակեալ 'ի թեսաւրոսէ. ոմն թէ յանդէպս հարեալ զեղջերուն զնուիրեալն դից արտեմեայ, պարտաւորեալ իցէ 'ի մահ. այլ 'ի փոխանակ անի զերծեալ. ոմն և յայլ բազում վտանգաց ճողոպրեցաւ ասեն։ Անուն որեստէս. յն. օրէստէս, թարգմանի լեռնային, (զի օրոս է լեռն). և այսպէս կոչեցաւ ասեն վասն վայրենի և անդորրոյն բարուց իւրոց. զի սպան զմայր իւր զկլիւտեմնեստրէ.

տրէ. արար և զայլ արիւնհեղութիւն. մինչև ա-
ռած եղև ասել՝ թէ յանցանք որեստեայ ընուն
ծայրալեր զերկոսին կողմանս քարափ. և նա յա-
ւելուն. և յայնմանէ գդրուածս երկարս տաւե-
լեալս քան զպատուհաՃն՝ որեստես կոչէին: Հրա-
չակեալ է և սերտ բարեկամութիւն որեստեայ ը̅
պիւղադեսի. մինչև գնել զանձինս 'ի մահ 'ի վ̅ր
իրերաց. այլ զայսմանէ անս ուրոյն 'ի համարն.

( 314 ):

Ագամեմնոն՝ որ այն ինքն է հայրն որեստեայ (44)
վերոյասացելոյ, էր թագաւոր միկենայ և արգիաց-
ւոց. որ ընտրեցաւ զօրավար 'ի յունաց ընդդէմ
տրովացւոց: Եւ եղև 'ի հասանել զօրուն յունաց
նաւուք յաւլիս կմ յաւլիդէ գաւառ բիովտիոյ,
յորժամ հարցին զդիս վասն յաջողուՃ պ̅տրզմի,
եղև պատխնի 'ի պատգամախօսէն, թէ ոչ այլազգ
յաջողի նեզ՝ եթէ ոչ զոհեսցի արտեմեայ չ̅ծուհ-
ւոյ իփիգինէ դուստրն ագամեմնոնի: Ընդ այս
թէպէտև յանհնարինս դժուարացաւ ագամեմ-
նոն, այլ զի մի շարժեսցէ ընդդէմ իւր զբովան-
դակ յոյնս, ակամայ կամօք միաբանեցաւ 'ի զո-
հել զդուստր իւր. և զի գիտէր՝ թէ մայր աղջ-
կանն չթողու զնա, եդ պատՃառանս՝ թէ կա-
միմ զդուստր մեր ամուսնացուցանել քաջին աքիլ-
լեայ. և այնպիսի հնարիւք ետ բերել զնա: Այլ
իբրև այն ինչ ունէին զոհել զիփիգինէ, արտե-
միս չ̅ծուհին գթացաւ 'ի նա՝ ասեն. և եդեալ
'ի տեղի ն̅ր զեղն մի, յափշտակեաց զաղջիկն. և
թեւօք հողմոց թռուցեալ տարաւ զնա յերկիրն
տաւրիկայ (որ է խրըմ). և արար զնա քրմու-
հի մեհենին իւրոյ՝ որ անդ կայր: Թող և զայլ
ևս տասնամեայ պ̅տրզմս, զոր 'ի սմին պատմուՃ
կցկցեն բանաստեղծք: Այլ նոննոս մեկնիչն ա̅ծա-
բանի զայս օրինակ համառօտէ զնախադրեալդ.
" Յորժամ յելլադայեաց նաւարկութիւն եղև 'ի
,, վ̅ր տրովադայ, և ժողով ելլենացոցն. առ յավ-
,, լիդայ բիովտացւոց՝ զոհ լինելով արտեմիդեայ,
,, զդուստրն ագամեմնոնի՝ որում անուն էր ե-
,, փիգենիայ՝ 'ի սպանդ աւանդելով. արտեմիս
,, զի

„ զի կայս էր՝ ողորմելով կուսին յափշտակէ զնա,
„ և 'ի բաց տանի առ. տաւրոս 'ի սկիւթիա. և
„ երևեցոյց փնկ կուսին եղն. զոր առեալ ելլէ-
„ նացոցն զոհեցին. իսկ իփիգենիա 'ի սկիւթան
„ քահանայուհի եղև արտեմիդեայ ||:

(45) Լուկրետիա էր մեծազգի օրիորդ հռովմայեցի՝ դուստր լուկրետիոսի քաղաքապետի, տուեալ 'ի կնութիւն կողատինոսի արքայազնի, գեղեցիկ տեսլեամբ և պարկեշտ վարուք: Իւր եղև 'ի գովել առն նր զգեղ նորուն՝ առաջի որդւոց տարկուինեայ սուպերբոսի արքային հռովմայ, և 'ի յանդիման առնել զնա նց, սեքստոս երէց որդի թագաւորին հարաւ 'ի սէր նր. և յետ բազում հնարից՝ բռնաբարեաց զնա ընդէմ կամաց նր: Ընդ որ չհանդուրժեալ լուկրետիայ, և յանհնարինս ալեկոծեալ 'ի խորհուրդս իւր, կոչեաց առ ինքն զհայր իւր և զայր իւր և զայլ մերձաւորս. և պատմեաց նոցա զաղէտս անձին իւրոյ. և անդէն ձգեալ զձեռն 'ի գաշոյն՝ զոր ծածկեալ ունէր ընդ հանդերձիւք, մխեաց ինքնին 'ի սիրտ իւր յանդիման նոցա: Իւր թէպէտ կարող էին արգելուլ զնա՝ որք մերձն կային, բայց անմիտ մտօք թոյլ ետուն նմա, որպէս զի զերծցի 'ի տառապանաց սրտի իւրոյ: Այլ այս գործ աղէտալի գրգռեաց ըզհռովմայեցիս 'ի վրէժխնդրութիւն. մինչև հալածական արարին զթգրն, և կարգեցին իւրեանց ծերակուտական իշխանութիւն. եդեալ հիւպատոս ատրեկան՝ նախ զառաջին զկողատինոս զայրն լուկրետիայ, հանդերձ բրուտոսիւ: Իսկ եթէ թեաւրոս չէրէ. 313. զլուկրետիա կոչէ կին բրուտոսի, շփոթութիւն անուանց է 'ի մէջ երկուց հիւպատոսացս. քանզի ըստ ամ պատմչաց՝ լուկրետիա էր կին կողատինոսի, որ էր 'ի զարմէ տարկուինեան արքային. իսկ յունիոս՝ կոչեցեալն բրուտոս՝ էր ազգական և բարեկամ կողատինոսի՝ և քեռորդի տարկուինիոսի: Որ և զայս անուն էառ առեն վասն կեղծելոյ զանձն յիմար, (քանզի դ———տ———՝ անասուն անբան թարգմանի). և այս կամ առ երկիւղի, և կամ առ 'ի կարող լինելոյ հնա-

րիւք

ըւք սպանանել զտարկուինիոս արքայ, որոյ
սպանեալ էր զհայրն և զեղբայրն բրուտոսի: Եւ
երբև այնպէսի անցք անցին ընդ լուկրետիա
յորդւոյն տարկուինիոսի, սա ինքն բրուտոս ե-
ղև գլխաւոր վրէժխնդիր, և ետ հալածական
առնել զԹգրն. և կարգեցաւ հիւպատոս ընդ կո-
ղատինոսի, որպէս ասացաք: Իսկ յորժամ մեռաւ
բրուտոս 'ի մարտի, սուգ առին 'ի վ̅ր̅ ն̅ր̅ա տիկ-
նայք հռովմայեցւոց՝ զամ մի ողջոյն, երբև 'ի վ̅ր̅
առաքինի առն՝ որ եղև վրէժխնդիր պարկեշտու-
թեն իւրեանց՝ 'ի պատճառս լուկրետիայ:

Ողբերգութեանց անունն՝ որ և ողբերգութիւն կո- (46)
չի, առեալ լինի 'ի մենջ փոքր ողբերգական տա-
ղից կմ՛ խաղուց, յորս նկարագրին ողբալի գիպ-
ուածք. այն է ի յունաց τραγῳδία ասացեալ. յոր-
մէ և առ եւրոպացիս τραγῳδός ասի. որ թարգ-
մանի նոխազերգուն. զի սովոր էին 'ի նախնումն
նոխազ պարգևել ողբերգակաց, ք այսպիսի եր-
գարանից կամ խաղարկուաց: Այլք ասեն, թէ
նուագեալ լինէր 'ի պատիւ բաքոսի չծոյն խաղո-
ղոյ և գինւոյ, որում զոհէին զնոխազ՝ որ ապա-
կանիչն է այգեաց:

Ոմանք որոշէին զպիտակոս օրէնսդիր հելլենաց- (47)
ւոց՝ կրտսեր կոչեցեալ, 'ի պիտակոսէ միտիլի-
նացւոյ՝ որ մին էր յեօթն իմաստասիրաց, իսկ ո-
մանք նոյնացուցանեն. և 'ի մէջ այլևայլ իրատուց
և օրինադրութեանց ն̅ր̅ա գտեն և զայս, թէ սահմա-
նեաց՝ զի տուժել ծանունս պատժեսցին զինչ և
իցէ յանցանք արբելոց քան զգաստից. զի կրկին
է աւէր նոցա մեղն, մի՝ արբեցութին, և միւս ևս՝
գործն վնասակար՝ զոր առնեն վասն արբեալ գո-
լոյ: Գոյր և այլ ոմն պիտակոս անուն իմաս-
տակ, որ առ ցուցանելոյ զճարտարութեն մտաց
իւրոց՝ յօրինեաց ներբողս 'ի վ̅ր̅ երկանաքարի:

Կղիտոս այր քաջ և իմաստուն՝ էր եղբայր հեղ- (48)
ղանիկեայ դայեկին աղեքսանդրի մակեդոնացւոյ,
և սիրելի յոյժ ն̅ր̅: Սա առ գրանիկ գետով տե-
սեալ զաղեքսանդր զլխիրաց կոտիլ՝ վահանաւ
իւրով ծածկեաց զգլուխ նորա. և զձեռն հատա-
կայ՝

կայ՝ որ ձգէր 'ի հարկանել զաղէքսանդր՝ սուսերահար կորեաց 'ի բաց։ Եւ յայնմ հետէ առաւել ևս յաւելու սէր աղէքսանդրի 'ի վ՟ր կղիտոսի իբրև ազատչի իւրոյ։ Եւ եղև զի 'ի կոչունս ուրեք ը̅ գինի մտեալ ը̅ արքային՝ սկսաւ կղիտոս գովել զգործս և զպատերազմունս փիլիպպոսի քան զաղէքսանդրի, և յորդորել զնա լինել նմանօղ հօր իւրում։ Ընդ որ ծանրացասումն լեալ արքային՝ եհար զնա նիզակաւ, զոր ունէր մօտ առ իւր, և անդէն սատակեաց։ Այլ յորժամ սթափեցաւ 'ի գինւոյն, այնչափ տարջացաւ աղէքսանդր ընդ կորուստ այնպիսի առն, մինչև կամէր նովին նիզակաւ հարկանել և զանձն իւր, թէ չէր արգելեալ 'ի մերձակայից, և ապա եռօրեայ անկաւ 'ի սուգ թախծագին՝ փակեալ յառանձնութե, և եդեալ 'ի մտի անձնասպան լինել սովու։ Եւ թէպէտ բարեկամք արքային մխիթարել կամէին ըզնա՝ ասելով, թէ իրաւամբք սպանաւ կղիտոս, այլ նա գնալով զսուտ փաղաքշանս նց՝ առաւել ևս 'ի խոր խոցէր. այլ 'ի վախճանի առ փոքր մի դիւրութե սրտի իւրոյ՝ հրաման ետ մեծահանդէս փառօք թաղել զկղիտոս։ Միւս այլ կանխագոյն ագարարութի կղիտոսի առ աղէքսանդր՝ յիշատակեալ 'ի յետագոյ բանս թեսաւրոսի, այն էր, զի 'ի հաճել ամանց 'ի սուսապարտից զմիտս աղէքսանդրի, որպէս թէ չիցէ նա որդի փիլիպպոսի, այլ՝ ծնունդ ուրումն 'ի չածոց, որ 'ի կերպարանս փիլիպպեայ մտեալ իցէ առ ողիմպիա մայր աղէքսանդրի, կղիտոս մեղմով իմն ազդեաց արքային, թէ այդ հրապոյրք սուտութե դառնան 'ի նախատինս հօր և մօր քո՝ և քոյդ անձին գլխովին։

(49) Թեմիստոկղէս էր մեծանուն և քաջ զօրավար աթենացւոց. որոյ գործք յայտնի են 'ի պատմութիս պատերազմացն յունաց ը̅ քսերքսեայ պարսից արքային։ Այլ թէ սորա որդի իցէ դեփիանտոս, կամ այլոյ ուրուք, ոչ գիտեմք։ Յիշեն ոմանք դեփիանտէս անուն զոմն որդի անախմաքոսի. այլ ոչ ինչ գործ որոշակի 'ի մէջ բերեն։ 'Ի

դէպ

դէպ գայ ինէր բանից թէոդորոսի՝ այն, որ ասի յոմանց զթեմիստոկղեայ՝ թէ սովոր էր ասել. «զանցանեն զամենի երիվարաց՝ անսանձ քուռակք, „ եթէ քաջ կրթանօք սանձեսցին ||. ցուցանելով այսու զանձին իւրոյ զյռ̃ջադիմութն. զի յռ̃ջն էր պատանի ցոփակեաց, և ապա 'ի զօրավարութն առաքինի հանդիսացաւ:

Սամի ասել, թէ պարիս որդի պրիամոսի տրո_վացւոյ յափշտակելով զհեղինէ զկին մենելաւոսի դքային կամ արքային սպարտացւոց, նովին իսկ և ինքն յափշտակեալ էր 'ի նմէ, ք ըմբռնեալ և գե_րեալ գլխովին 'ի ձեռ նր̃. և այս եղև պատճառ տասնամեայ պտրզմին և աւերածոյն տրովադայ. զի յոյնք խնդրէին զհեղինէ, և պարիս չառնոյր յանձն՝ տալ: (50)

Սիրկէ. յն. ճն–ճէ. և լա. չն–չէ. ը̃ առասպե_լաց՝ էր դուստր արքային կողքիսաց՝ կոչեցելոյ հինգերորդ արեգակն, և պերսիդայ յաւերժա_հարսին, առ ժմկք տրովական պտրզմի: Սա ա_սեն այնչափ հմուտ գտաւ յարուեստ վհկութն և կախարդական դեղատուութն, մինչև յարբուցա_նել զբաժակ իւր ումեք՝ դարձուցանէր զնա 'ի կերպարանս անասնոյ: Ամուսնացեալ ը̃ արքային սարմատացւոց՝ դեղամահ սատակեաց զնա. և իբրև սկսաւ ինքնակալել անագորոյն օրինօք, հա_լածեցաւ 'ի բնակչաց տեղւոյն. և փախստեայ ան_կաւ յիտալիա. և արար իւր իջավանս բնակութե 'ի լատեան լեառն երկրին վոլսկոց՝ 'ի տեղի խա_ռաւէտ. ուր ընթանային առ նա բզմք 'ի հեռա_ւոր վայրաց վս̃ հմբաւոյ կախարդութեց նր̃. և զի զբաղումն աշակերտաց յանխմատ մոլորութ̃ իւր՝ և յանբանութի գլխովին դարձոյց զմիտս նո_ցա, բանք եղեն յառասպելս՝ թէ զոմանս փոխար_կեաց 'ի չորքոտանիս, զայլս 'ի թռչունս և 'ի ձը_կունս, ևն. զոր բաղումք պէսպէս մեկնաբանեն: Սա՝ ասեն, և զընկերս ոդիսեայ նախ դարձոյց 'ի կինձս վայրենիս, և ապա անդրէն ետ նոցա զմ̃դկային կերպարանս՝ 'ի շնորհս նորին ոդիսեայ. որում և կին լեալ՝ ծնաւ նմա զտեղեգոնոս: Իսկ (51)

տե_

տեղին այն՝ ուր դադարեաց կիրկէ յերկրին վոլս_
կաց, կոչեցաւ յանուն նորա կիրկէա. այն է ա_
սեն՝ որ այժմ կոչի ՄՈՆԴԷ՝ ՉԻՐՉԷՕ. որ Թարգմանի
հին քաղաք։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՉՈՐՐՈՐԴ ԳԼԽՈՅ։

(52) Կղոդիոս կայսր 'ի զարմէ օգոստոսի և տիբե_րեայ՝ անդստին 'ի մանկութենէ էր ապուշ մտօք, որպէս և մարմնով տկար. մինչև մայր նորա 'ի պա_խարակել զդա իբրև անմիտ և անպէտ, ասէր. զխորդ նման է դա որդւոյ իմում կղոդեայ։ Նա թէպէտ 'ի հասանել յարբունս, երևէր խոհական մտօք՝ և յաջողակ 'ի բանս և 'ի գործս. այլ յոր_ժամ նստաւ յաթոռ ինքնակալութեն, եցոյց որ_դեամբք զընդարմոյս անմտութիւն իւր՝ անխմատ անտեսութեն. մինչև վնաս բազում առնել կայսե_րութեն, և օգուտ սակաւ։

(53) Սիղլա՝ այն է կոռնելիոս սիւլլա կամ սուլլա, էր ազնուական ոմն հռովմայեցի՝ այր գիտնաւոր և հզօր, այլ դժնեայ և անագորոյն բարուք. որ_դարակորով երևէր և առատաձեռն՝ մեծամիտ և բարեզարդ, բայց 'ի զայրանալ մոլեկան բա_րուցն՝ կարի յոյժ անգութ և անողորմ գտանէր։ Որ և դատաւորական իշխանութիւն առացեալ 'ի հռովմ, այնպէս ընկճեաց զծերակոյտն և հարըս_տահարեաց զժողովուրդն. մինչև ասել կիկերոնի 'Ի Գ. ԳԻՐՔ. ՅՂ. ՎԵՐՐԷՍԻ. ԳՈՐԾ. Է. « Մի միայն
,, եղև անդստին 'ի հիմնարկութենէն հռովմայ մին_
,, չև ցարդ, (երանի թէ և ոչ այլ լիցի), յորոյ
,, 'ի ձեռս գլխովին մտանեաց զանձն՝ հասարա_
,, կապետութիւն այս, նեղեալ 'ի դառնութեց ժա_
,, մանակին և յառանին չարեաց. այն ինքն է սիղ_
,, լա։ Սա այնչափ զօրացաւ, մինչև ոչ ումեք հնար
,, էր առանց կամաց նր անկորուստ պահել զինչս
,, և զհայրենիս և զկեանս։ Նա յայն յանդգնու
,, ժամանեաց իրոխտացեալն օգւով, մինչև իշ_
,, խեաց ասել յառեան բազմութեն, թէ ես երբ
,, 'ի վաճառ հանեմ զինչս քաղաքացւոցդ հռովմայ_
,, եցե

« եղեւոյ, ոչ զօտարին ինչ, այլ զիմ սեպհական
« ստացուած վաստակեմ»: Եւ սա այն է՝ որ եր-
կար պատերազմունս մղեաց ընդ միհրդատայ յա-
րեւելս:

Ասացաք վերագոյն 'ի համարն (18), թէ աղկի- (54)
դէս է ռուստական անուն քաջին հերակլեայ. զոր
վն յաղթահասակ հսկայութեն՝ ը ներհական ծայ-
րի համեմատէ թեսաւրոս ը թզուկի. գր ը թը-
զաչափ գաճաճի: Կարէր եւ 'ի մէջ բերել զգո-
ղիաթ մեծանուն հսկայ փոքր հերակլեայ. այլ չը-
կամի 'ի կարգս արտաքին առասպելաց խառնել
զօրինակս ստոյգ պատմութեց սբ գրոց:

Պողիկղետոս, ըն յն. Πολύκλειτος, էր երեւելի ան- (55)
դրիագործ յոյն՝ աշակերտ ագեղադայ, հայրենեօք
սիկիոնացի՝ կմ ազգաւ սիթոնացի, իբր 400. ամօք
յառաջ քան զքն: Եւ զի սա երկաթի քանոն 'ի կիր
առնոյր՝ առ հաստատուն ունելոյ զչափ եւ զհամե-
մատութիւն գործոյն, քանոն նր օգտէր միայն ուղ-
ղորդ եւ տափարակ ձեւոյ. նմին իրի եւ յօրինակ
առեալ լինի անզիջանելի բարուց կամ ճիշդ չափ-
մանց, որպէս եւ անայլայլելի եւ անկաշառ օրինաց
արդարութեան: Իսկ լեսբացիք էին բնակիչք լես-
բեայ կղզւոյն հանդէպ տրովադայ եւ մեծին միւ-
սիոյ. ուր ճարտարապետք 'ի կիր առնուին քա-
նոնս արճճեայս՝ առ դիւրաւ յարմարելոյ առ նմ
ձեւ, ը պխելոյ ուղիղ պահելով եւ կամ թեքե-
լով. յորմէ եւ յառակս եղեւ՝ λεσβιον κανονα կոչել
զայն, որ ը նմի նմ լինի, կամ զայն ինչ՝ որ ը
յարմարութեան անդւոյն 'ի գործ ածի. ոն եւ յոր-
ժամ օրէնքն զիջանին զկնի սովորութեան, կամ իշ-
խանն վարի ը բարուց հպատակաց: Վն 'ի բա-
րի կողմն առեալ՝ յօրինակ բերի խոհեմութեան կմ
դերդգօնութեան. իսկ 'ի չար կողմն՝ նշանակ է ան-
արդարութեան կամ անիրաւութեան:

Փայեթոյ, որ է ըն յն. Φαέθων, եւ ստուգաբա- (56)
նի լուսանշոյլ կամ հրափայլ, 'ի բանաստեղծից
կոչի որդի արեգական: Սա ասեն խնդրեաց եր-
բեմն 'ի հօրէն իւրմէ թոյլ տալ ինքեան գէթ զմի
օր՝ վարել զկառս նր. եւ իբրեւ թոյլ ետ նմա ա-
րեւն,

րեն, մանուկն տխմար՝ անվարժութբ̅ իւրով խըրտեցոյց զերիվարս, և վեր 'ի վայր ընթացուցեալ զկառս արևու՝ և անցեալ ըստ սահման երկնից, հրդեհեաց զեթերս և զերկիր: Վա՛յ և կայծականահար պատուհասեն 'ի գիսոսէ կործանեցաւ ասեն 'ի կառաց, և անկաւ 'ի պադոս գետ. և այլ ես բանք առասպելաց՝ որ 'ի նոյն յարին: Այս առակ բազմօրինակ մեկնաբանին 'ի բազմաց՝ հասարակօրէն յօրինակ բերի չարաչար անկման այնոցիկ, որք տղայամտութբ̅ կա՛մ ամբարտաւանութբ̅ ձկտին 'ի գեր 'ի վերոյն քան զկար իւրեանց. ոպ̅ և երբեմն՝ իբրաց արտաքոյ կարգի գործելոց, կամ մեծամեծ հրդեհից եղելոց ընդ Ժմս Ժմս: Այլ ըստ սոյն պատմութեց՝ փայեթոն էր իշխան ոմն 'ի սահմանս եգիպտոսի. առ որով հրայրեացք մեծ եղև յեթեովպիա. ոպ̅ յիշէ եւսեբիոս 'ի Ժմկագրութե՝ առեալ 'ի պղատոնէ:

(57) Վասն նեմեսեայ դիցուհւոյ ունիս տեսանել 'ի ստորև 'ի համարն. (210):

(58) Դեդաղոս էր անուանի անդրիադործ աթենացի. որ գրօշեաց սաեն արձանս շարժունս. մինչև ը̅ բանաստեղծից՝ թէ չէր զնն̅ կապեալ, սա առեալ փախչէին 'ի տեղւոջէն. արար և այլ մեքենայս հարտարարուեստս: Իսկ զի կասկածէր սա՝ թէ թոռն իւր դաղոս անուանի լիցի քան զինքն 'ի գիտս հարտարութե, հնարիւք սպան զնա. և ինքն առեալ զորդի իւր զիկարոս՝ փախտեաց անկաւ 'ի կղզին կրետայ առ մինոս արքայ: Անդ շինեաց լաբիւրինթոս երևելի կամ բանտ աներևանելի. և իբրև կամէր մեկնիլ 'ի կղզւոյ անտի, արգել զնա մինոս յայն բանտ անել հանդերձ որդւովն: Յայնժամ ըստ առասպելաց նոր հնարս խորհեցաւ դեդաղոս. շինեաց թևս մեծամեծս վն̅ իւր և վասն որդւոյն, և մածուցեալ մոմով փորձ փորձեաց թռչելոյ. և այնպէս թևաւորեալ վերացաւ յօդս, գիմել յիտալիա, պատուէր տըւեալ որդւոյն՝ միջասահման բարձրութբ̅ միշտ թևարկել: Իսկ իկարոսի ոչ պահեալ զխրատ հօրն՝ վերացաւ 'ի բարձունս քան զսահման օդոյ.

և

և այրեալ զԹևս իւր 'ի կամարին հրոյ՝ Թևաթափ անկաւ 'ի ջուրս ծովու, 'ի տեղին՝ որ յանունն նր̅ ասի կոչեցեալ Իկարեան ծով: Այլ Դեդաղոս եհաս անվնաս մինչև 'ի Կաղաբրիա. և յետ ժմկաց դարձ արար անտի 'ի կողմանս Եգիպտոսի, և անդ պատանաւ: Զայս առասպել գրեԹէ ամէքին մեկնեն վասն փախչելոյ Դեդաղոսի 'ի Կրետեայ առագաստեալ նաւուք, և չկարելոյ այլոց հասանել զկնի նր̅ Թիավարութբ. ոմ̅ և զարձանս նր̅ չարժականս իմանան վասն արուեստագործ դրօշմածոյն. իբր զի ինչ ինչ նորագիւտ Ճարտարեաց առ յայնմ արուեստի քան զառաջինս: Վիճէ զայսոսիկ Եւսեբիոս 'ի քրոնիկոն կանոնի՝ յաւուրս Գեդէոնի դատաւորի, յասելն. "Դեդաղոսի իբրն.
„ որ կարծեցուցանէր, Թէ պատկերս ([illegible])
„ շարժունս առնիցէ. քանզի նախ (աս) զոտս
„ պատկերաց 'ի միմեանց զատանէր. և պատմէ
„ պաղեփառոս. և Թէ որպէս հանդերձ որդւովն
„ իւրով Իկարոսիւ զնաւէ կալեալ՝ փախեաւ 'ի
„ Մինովէ. և վասն չգտանելոյ պատսպարան փա-
„ խըստեանն՝ համարեցաւ Թռանել": ԹԷսաւ-րոս անգԹական կզզի կոչէ զԿրետէ՝ վասն արգելեալ գոլոյ անդ Դեդաղոսի, կամ վասն լաբիւրինԹոսին որ անդ շինեցաւ 'ի Նմանէ. բայց միանգամայն կամի առանց տալոյ զանուն կըղզւոյն՝ 'ի ձեռն այսր ըստուգաբանութեան յայտնել զայն. զի [illegible]՝ է Կրետէ, և [illegible]՝ է անգուԹ: Իսկ զԻտալիա կամ զԿաղաբրիա կոչէ երկիր խաղաղական, կամ ըստ Իտալական բառին՝ բարեկամական, զի անդ զերծաւ. ԵԹէ ոչ՝ գուցէ այլ ինչ ստուգաբանուԹիւն գիտէ:

Մանղիոս պատանի հռովմայեցի՝ էր որդի Մանղիոսի ախոյանի հիւպատոսի տորկուատոս կոչեցելոյ: Սորա գնացեալ 'ի պատերազմ՝ Թեպէտ և յաղԹեաց քաջուԹեամբ, այլ քանզի առանց հրամանաց հօրն եղև Ճակատամարտ նորա, տապարահար սպանաւ 'ի հօրէ իւրմէ: Զայս յիշէ և Եւսեբիոս 'ի [illegible], իբր 335 ամօք (59)

ամօք յառաջ քան զՔս, յասելն. * Հռոմայեց_
,, ւոց հիպատոսն ( Μάνλιος Τορκουᾶτος, Τί_
,, τος ) զորդի իւր առշեաց տապարաւ, թէ ընդ_
,, դէմ առանց նորա կամաց ճակատ եառ և յաղ_
,, թեաց ||:

(60) Սա ինքն է տորկուատոս մանղիոս հայրն նախա_ սացեալ մանղիոսի պատանւոյն: Արդ՝ սա 'ի ման_ կութենէ թէպէտ և երևէր աչխոյժ բարուք և ե_ ռայր 'ի սրտի, այլ՝ անյաջող երյոյժ 'ի քաղաքա_ կան կենցաղավարութիւն. վասն և հայր նորին՝ կո_ չեցեալն մանղիոս ռուկիոս՝ չեառ նմա թոյլ կալ 'ի հռովմ քաղաքի, այլ յղեաց զնա յագարակս իւր արածել զխոզս 'ի դաշտի: Իսկ եղև՝ զի պոմպո_ նիոս տրիբունն թշնամացեալ ընդ հայր մանկանն, խորհեցաւ 'ի մահ մատնել զնա աղգի աղգի ամ_ բաստանութեամբք, յորոց մի էր և անգթութիւն նորա առ որդին: Զայն իմացեալ մանկանն՝ եկն գիշե_ րայն 'ի քաղաքն. և մտեալ 'ի տուն պոմպոնիոսի, և գտեալ զնա դեռ յանկողնի, մերկեաց զսուսեր և ահացոյց զայրն. մինչև եառ 'ի նմանէ երդումն՝ չառնել ինչ չար հօր իւրում. մի լիցի առէ վասն իմ վնաս ինչ նմա՝ որ եառ ինձ զկեանս. և այնպ աղատեաց զհայր իւր: Իսկ իբրև յարբունս եհաս նա՝ եղև այր զօրաւոր, և արար բազում քաջու_ թիւս 'ի հանդէս մարտի. և 'ի միում նուագի մե_ նամարտեալ ընդ գաղղիացւոյ ումեմն հզօրի՝ սպան զնա, և եառ զանկի մանեակ 'ի պարանոցէ նորա: յորմէ և ընկալաւ զանունս տորկուատոս, բա_ լառ, τορκουᾶτος. այն է՝ մանեկաւոր կամ մանե_ կաւորեալ: Սա բազում անգամ կարգեցաւ հի_ պատոս. և բազմապատիկ մրցանօք յաղթահա_ րեաց զթշնամիս հռովմայեցւոց. այլ 'ի վերջոյ ինք_ նակամ հրաժարեցաւ 'ի պատուոյ հիւպատոսու_ թեն՝ առելով, չկարեմ տանիլ մոլեկան բարուց ժողովրդեան. որպէս և ժողովուրդն իսկ զայն կամէր, զի և նոքա չկարէին տանիլ խիստ բա_ րուց նորա:

(61) Հաչակեալ է առ ամենին անուն մեծանուն զօրա_ վարի հռովմայեցւոց՝ չիպիոն կամ սկիպիոն կոչե_ ցե_

ցելոյ, այն՝ որ բազմագիմի քաջութիւք հանդիսա-
ցաւ ընդէմ անհնարաց քաջ զօրավարին կարքեդո-
նացւոց. և յաղթական գտեալ ընդդէմ նր̄ և նո-
րայոցն՝ թ̄ ափրիկեցւոյ, էառ մականուն ափրի-
կանոս, թ̄ ափրիկեցի. ը̄ որում յիշէ և Նոննոս
մեկնիչն ածաբանին, յասելն. « Այլև սկեպիոն
« զօրավար էր հռոմայեցւոց . . . յաղթեաց և սա
« կարքեդոնական մարտին. որ և 'ի յաղթութէն
« ազգին՝ ընկալաւ մականունութի. վ̄ն զի կո-
« չեցաւ սկեպիոն ափրիկեցի՞. և ափրիկեցիք
« կարքեդոնացիք են ‖: Արդ սա ինքն սկեպիոն
կամ չիպիոն Թէպէտև 'ի մանկութե անառակ գը-
տաւ, այլ երբև զգեցաւ զզօրութի արութե յե-
րիտասարդական տիս՝ եցոյց յանձին զգովելի օրի-
նակս պարկեշտութե: Այլ առաւել մեծապէս
համբաւեցաւ առ հռովմայեցիս այն առանձին
գործ չիպիոնի, զի յառնուլ իւրում զկարքեդոն
քաղաք՝ որ և կարթագինէ, տեսեալ 'ի մէջ գե-
րելոց աղջկանց օրիորդ մի նշանաւոր գեղով, զոր-
մէ չչնջէին ամ զօրք բանակին, 'ի ցոյց համեստու-
թե իւրոյ հրաման ետ արձակել զնա և դարձու-
ցանել պատուով 'ի տեղի իւր, ուր և զայլ մեծ-
ազգի տիկնայս՝ հանդերձ որդւովք ազատաց:

Ր.յս կադմոս այն է՝ որ առի լինել առաջին գը- (62)
տակ յունական նշանագրաց, ուր յիշատակեցաք
վերագոյնդ 'ի համարն, (29), արքայ Թեբայ՝ որ-
դի ագենովրայ արքային փիւնիկեցւոց՝ առ ժա-
մանակօք մովսեսի կամ գթուրայն եբրայեցւոց:
Զամանէ բազմապիսի առասպելք յօդին առ հնա-
խօսս. յորոց մինն է և առաջիկայս օրինակ. զի
'ի միում նուագի՝ յորժամ կամէր առեն զոհ մա-
տուցանել գիտսի, յղեաց զընկերս իւր 'ի մերձա-
կայ անտառ՝ բերել անտի ջուր. իսկ վիշապ օձն՝
որ կայր մօտ աղբերն, սատակեաց զնոսա: 'ի վր̄
հասեալ ապա կադմոս՝ սպան զօձն. և լուաւ
ձայն՝ որ ասէր առ նա, թէ հանդերձեալ ես դու
յօձ փոխարկիլ: Եւ մինչդեռ 'ի վարանս էր նա,
եկն եկաց առեն առ նմա պալլաս չածուհին զին-
ւորութեն. և հրամայեաց կադմոսի ցանել յեր-

կիր զատամունս օձին սպանելոյ. և նոյնժամայն 'ի վեր բուսան 'ի հողոյ անտի բազմութիւնք երիտասարդաց քաջ սպառազինաց. որոց 'ի զէն անձապարեալ՝ մարտ եդին ը̄ միմեանս. և անդէն սատակեցին զիրեարս. և մնացին միայն հինգ արք 'ի նոցանէ. որք հրամանաւ պալլատայ 'ի համբոյր հաշտուե̄ եկեալ՝ միաբանեցան ընդ կադմոսի. և շինեցին նմա քաղաք թգ̄րութե̄ եօթնադրուռն 'ի բիովտիա գաւառին եղլադացւոց. որ կոչեցաւ Թեբաս կամ Թեբէ՝ յանուն Թեբայ քաղաքին եգիպտացւոց, ուստի էին նախնիքն կադմոսի:
Զայս ա̄մ այսպէս համառօտէ Նոննոս. „ 'ի Թե-
„ բաս բիովտացւոց՝ ասի, թէ կադմոս՝ և կամ
„ այլ ոմն՝ առեալ զատելչինս վիշապին զատա-
„ մունս՝ սերմանեաց 'ի յերկիր. և վերաբուսեալք
„ եղեն արք սպառազինեալք. այլ եղեն վերաբու-
„ սեալք 'ի բարձիցն մինչև 'ի վեր. Նոյնպէս կա-
„ լով մարտնչէին ը̄ միմեանս և ը̄ այլս ||:

(63) 'Ի Նկարագրել հեղինակին զզոհագործութիւն հեթանոսական՝ պարտ է քաջ գիտել զվախճան նորին, որ ո՛չ յայն հայր՝ թէ դից զոհեր օգտոսս, այլ թէ զգործ կրօնի առնէր. Նմին իրի և իբր գովութե̄ առաջի դնէ. իբր զի բառ ինքեան էր գովելի՝ եթէ առ ճ̄շմարիտն ա̄ծ ուղղեալ լինէր: Վ̄ս և խորհուրդ սպանութեանն՝ զոր մեքենայէր կինն՝ 'ի գործ դնել յայնմ պահու զոհից, լինէր առաւել չարագոյն, և առաւելոյր զյանցանս ն̄ր. զի մեծա̄պ անարգուե̄ էր կրօնի՝ թէպէտ և սուտ կրօնի. 'ի դէպ եկեալ իմաստութեանն առածի.
„ Զի ոչ եթէ երդմնեալեացն զօրութիւն, այլ մե-
„ ղուցելոցն դատաստան հանէր ը̄ զլուխ զանիրա-
„ ւաց զյանցանս ||. Իմաս. ծ̄դ. 31. տես և զնախ-
ընթաց համարս. 29. և 30:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՍ:

(64) Որպ̄ վերագոյնդ յիշեցաք 'ի թիւն, (31). պալլաս համարիւր չա̄ծուհի պատերազմաց. և աթենաս՝ չա̄ծուհի գիտութեանց. մանաւանդ թէ

մի

մի և նոյն կաց ընծայիւր քաղցրութիւն՝ պալլաս անուամբ, և իմաստուն՝ աթենաս անուամբ. վայ և առեալ 'ի գործ ածին այս անուանք փոխկ պատերազմական արուեստ, և մակացական գիտութեն : Այլ զնախընթաց նկարագրութիւն հեղինակիս 'ի վերայ արիութեն ազգի ազգի նմանաբանութք և խորհրդածութք, ոչ ինչ հարկ համարեցաք մի առ մի բացատրել աստանօր. զի շատ է ընթերցողաց իմանալ՝ թէ արիութիւն առ արտաքս երևի վեհ քան զխոհեմութի և քան զարդարութի. այլ ըստ ստոյգ տեսութեն բազում իրօք նախապատիւ են սոքա քան զնա. որպէս ցուցանէ նա ինքն թեսաբոս 'ի բազում գլխոց :

Պսակազացիք կամ պսակեալք, ը յն. στεφανῖται, էին (65) ժողովուրդք միոյ մասին լիբիոյ, առեալ զանուն 'ի պսակաց ուռենէ արքայէն իւրեանց : Արդ՝ որպէս յիշէ պլինիոս, Է. 2. և այլք 'ի հնախօսից. 'ի մարմինս պսակազացեաց ասիւր լինել բնածին թոյն ինչ սատակիչ օձի, կամ հոտ զօրաւոր թմրեցուցիչ թունաւոր զեռնոց : Եւ էր առ նմա սովորութի՝ ը ծնանել զմանկունս՝ առաջի արկանել գըմնդակագոյն օձի, առ 'ի զփորձ առնուլ հաւատարմութ լծակցաց. քանզի ասէին՝ թէ 'ի խառնածին մանկանց ոչ ինչ խորշի օձն. իսկ յերեսաց հարազատածին ազգայոց ապշնալի և կմ թմրել ը արմանայ. մինչև համարձակ բուռն հարկանել նոցա զօձն, և ինչ ոչ վնասել : Եւ պլուտարքոս գրէ, թէ կատոն զօրավար յանցանել իւրում ը ամայի և ընդ ծարաւուտ տեղիս լիբիոյ, ունէր ը իւր սպասաւորս պսակազացիս. որք զարման մատուցանէին ընդդէմ խայթուածոց օձից, երբեմն բերանովք իւրեանց ծծելով զթոյնս նոցին, և երբեմն թուքովք թափելով զզօրութի նոցա :

Ամփիտրիոն, յն. Ἀμφιτρύων, էր իշխան թեբայ- (66) եցի՝ որդի աղկեոսի. սորա կին էր աղկմենէ մայր երկուորեակ եղբարց՝ հերակլեսի և իփիկլեսի. որք որպէս համամայր էին՝ նոյնպէս և համահայր, բայց մայր նոցա յայտնի, և հայր նոցին անյայտ, վասն խառն անկողնոյ մօրն իւրեանց : Իսկ բա-

բանաստեղծք ԺԷ կամս արածելով զերամ՝ հայր հե-
րակլեայ համարեցան զարամազդ զհայր [illegible],
և ափխկլեայ զամփիտրիոն: Ըստ որում յիշէ և
Նոննոս՝ յասելն զհերակլէ. « Եւ սա առի որդի
« գոլ արամազդայ. քանզի զևս ( այն է դիոս՝ կամ
« արամազդ ) նմանեալ ամփիտրիոնի՝ շաղաշարի
« Ը ալկմենեայ, և ծնանի 'ի նմէ զհերակլէս »:
Եւ դարձեալ առէ այլուր. « Սուժդին Տաաս հրա-
« տարակեալ լինի զհերակլեայ, իբր թէ որդի է
« արամազդայ և ալկմէնեայ. և դիցազն գոլով
« զերկոտասան նահատակութեան կատարեաց »:
Այլ այս դիւտ հեթանոսական 'ի նախատինս
դառնայր քաջին հերակլեայ. զի թէպէտ իբր 'ի
պատուոյ սակս ընծայի նմա չաստուծորդի լինել,
բայց ընդ նմին կրէ և զանուն աղջկորդւոյ. իսկ
ափխկլէս մնայ որդի հօր իւրոյ հարազատի՝ ք
ամփիտրիոնի:

(67) Պրիամոս՝ որդի յայտ է, էր արքայ տրոյացւոց.
յորոյ աւուրս եղև առումն տրովադայ կամ ի-
լիոնի: Զսա սպան պիւռոս, որ էր որդի քաջին
աքիլլեսի, և եղև առաջինն որ եմուտ յառասպե-
լեալ ձին փայտակերտ, և 'ի գիշերին՝ յորում
առաւ քաղաքն, արար կոտորածս մեծամեծս, և
անխնայ խողխողեաց զարքայն պրիամոս 'ի մեհե-
նի: Այդ՝ թէաւրոս ըստ օրինակի բանաստեղ-
ծից նկարագրէ իբրև արիական գործ զանգոր-
ծանեայ քաջութիւն պրիամոսի 'ի յետին պաշտօ-
նեդ, յորում յոգնս ապաստան եղեալ մրցեցաւ
Է պիւռոսի. յաղթեցաւ առէ, այլ եցոյց զարու-
թիւն իւր նաև 'ի ծերութեան անդ:

(68) Կեղտացիք կամ կեղտք, որ և գաղատացիք կո-
չէին, ազգ կորովիք և յախուռք, էին 'ի նախնումն
մասն ինչ ֆռանսայոց, որք երբեմն կոմանեան
գաղղիացիք ասացան. և հունք յետոյ լուգդոնա-
ցիք անուանեցան:

(69) Սիկղոպայք կամ կիկլոպեանք՝ էին առասպելեալ
հսկայք գագաթնակնեայք. զի էն նախնի ժողո-
վուրդք սիկելիոյ առ եռնայ լերամբ. զորոց ա-
սացին բանաստեղծք ունել մի և եթ ակն մեծաբո-

լոր

լոր 'ի գագաթան կամ 'ի ճակատու. զի և անուն նոցա յունարէն κύκλωψ՝ տառագրանի բոլորակն կամ շրջանակս. զի κύκλος է շրջան, և ὤψ կամ ὀψ՝ աչք կամ տեսութիւն: Այլ թէ ոչքա նախ գըտին զպղնձագործութիւն 'ի Սիկիլիա. յորմէ և ել առասպելն այն, թէ կիկղոպայք էին գործինք՝ արբանեակք Հեփեստեայ չոյ, որ Հրոյ գտակ կոչի. և կայծակունս շինէին արամազդայ, որ գիտակ, որոյ գործ համարիւր շանթաւաք լինել կամ արձակել զկայծակունս յերկնից 'ի յերկիր. և զի 'ի ձեռս կիկղոպայց էր պատրաստել նմա զկայծակունս կամ զշանթս, իշխէին ստանալ նաև նմին խակ շանթաւաք արամազդայ: Յայս հայի բան կատակոլի Ժամագրի, զոր 'ի մէջ բերէ եւսեբրիոս յառաջին մասին քրոնիկոն գրոց. * Բեղոս
„ էր (ωτ) սարեստանեայց թէր. և առ նովաւ
„ կիկղոպայքն՝ փայլատակունս և շանթս հրա-
„ ցանս (Πολύφημον) արամազդայ մատուցելոյ
„ ը տիտանացին նպաստ 'ի կռիւ լինէին ||: Եւ
նոննոս մեկնիչն նծարանի ասէ, * 'ի Սիկիլիա
„ կղզոջն առ լեռնակողմամբքն բնակել ասեն կիկ-
„ լոպեանքն՝ համուական կենցաղով կեալ ճաշա-
„ կելեալք, և մանաւանդ բանութ. և սոխն մար-
„ գակերք գոլ ոչքայ. ոքք և զընկերս ոդեսեայ
„ կերան. այլ երիս ասացեալ լինին 'ի սոցունց
„ առ տուն անկեալքն գործինք արուեստի.
„ ոքք 'ի ձեռն իւրեանց արուեստին զօրութեամբ
„ և զփայլատակութիւն արամազդայ կազմեցին, և
„ սոխն առ տուն անկեալք գոլ այսորիկ, բռոն-
„ տէս, ստերոպէս, արգէս: Կիկլոպեանք անուա-
„ նէին՝ որպէս խաւզոս ( [illegible] ) ասէ, զի
„ մի ակն ունէին բոլորեալք. և որպէս այլք ասեն՝
„ զի 'ի բոլոր կղզոջ բնակէին ||: Եւ կիկերոն 'ի
Ե. [illegible]. Գլ. 19. հեգնելով խօ-
սէ: * Ոչ կարծեմ զքեզ յայն կարծիս լինել,
„ ոչ թէ կիկղոպայք յեռնայ շանթ կազմեալ ի-
„ ցեն գիտոլ. քանզի արժան էր զարմանալ, թէ
„ զիարդ գիտս այնչափ կայծակունս արձակէ,
„ երբ մի շանթ իցէ նորա ||. եւն:

Հիգ.

(70) Հիգրայ կամ Հիւդրաս, յն. Ւդրա, է օձ ջրային՝
ծագեալ 'ի բառէս Ւդօր, որ է ջուր։ Այլ ըստ
առասպելեաց՝ Հիգրայ Լեռնեան ասի լինել վիշապ
օձ եօթնգլխեան կամ բազմագլխի 'ի լճին Լեռ-
նայ. ը որում իբրև կամեցաւ կռուիլ Աղկիդէս՝
այն ինքն է քաջն Հերակլէս, անկարանայր սա-
տակել զնա. զի ը հատանել զմի 'ի գլխոց նորա՝
կրկին բուսանէր, և կամ փոխ միոյ եօթն ևս այլ
գլուխք 'ի վեր երևէին. մինչև եհաս յօգնութեն
Հերակլեայ եղբօրորդի նորա Յոլաոս, կամ Յոլաս
որդի Իփիկլեայ. (ըստ այլոց՝ Հիւլաս որդի նորին
Հերակլեայ, կամ Հիւլաս որդի Թէոդամանայ).
որոյ առեալ ասեն ջահ մեծ՝ իսկ և իսկ կիզոյր
բոցով նորին զտեղի գլխոցն հատելոց սրով Հե-
րակլեայ, զի մի ևս բուսցի նոր գլուխ. և այն-
պէս 'ի ձեռն սրոյ և հրոյ կարողացան երկոքին
կորուսանել զՀիգրայն։ Զոր այսպէս 'ի մէջ բերէ
Նոննոս. " Առասպելեալ եղև գազան ինչ 'ի Լեռ-
" նէ (անուն լճի՝) գոլով յիսունգլխի, և այլք
" ասեն իննագլխի, զգլուխսն օձի ցուցանելով.
" զոր եկեալ Հերակլէս հանդերձ հեղոսիւ ման-
" կամբ իւրով սպան։ Այլ առասպելաբանի և
" այլ, թէ 'ի հատանել միոյ գլխոյն՝ 'ի տեղւոջ
" անդ երկու գլուխք բուսանէին. որպէս զի լինել
" գազանին հարիւրագլխի. այլ Հիւղոս իմացեալ
" այսպիսի ինչ, հուր բերեալ՝ և զհատեալ գըլ-
" խոյն տեղիս այրեր հրով. այնպէս կարացին
" սպանանել զնա ||։

Զայս առասպել թէպէտ և պէսպէս մեկնաբանեն
ոմանք, այլ գուցէ յարմարագոյն գրեցին այլք
'ի փիլիսոփայից. թէ Հիգրայ էր անուն լճի 'ի Լեռ-
նայ գաւառն արգիւացւոց. որոյ առատացեալ և
բաժանեալ յայլևայլ առուս՝ հեղեղեալ ապակա-
նէր զշրջակայ տեղիս. և եթէ ուրեք փակէին
զանցս՝ այլուր յորդեալ տարածանէր. զոր տե-
սեալ Հերակլեայ՝ փոխեաց զհունս գետոցն, որք 'ի
լիճ անդր իջանէին, և այնպէս ցամաքեցոյց ըզ-
լիճն, կամ գէթ չափաւոր արար զջուրն։ Իսկ
ըստ ոմանց պղատոնի, զոր և յիշէ Եւսեբիոս 'ի

քրոնիկոն կանոնի. հիդրոյ էր սոփեստուհի ոմն խորագէտ. զորոյ զհարցուածս դժուարանոյին լուծանել արք իմաստունք. զի 'ի պնդել միոյ 'ի բանից նորա՝ նա այլ եւ բազմապատիկ ը̃դիմունս հանէր: Ա̃պ զնմրդ եւ իցէ, յառակս եղեւ ասել. զՀիդրայն հատանէ դա, երբ 'ի ջանալ ուրուք բառնալ զդժուարութիւնս առաջիկայ գործոյ՝ այլ նորանոր դժուարութիւնք ընդառաջ ելանեն: Յոյատեսի տառապելոյ առեալ եգին 'ի կարգս համաստեղութեանց զհիդրայն կամ զօձն ջրային. որ բաղկանայ 'ի խը̃ աստեղաց:

Իսկ խեցգետինն սպանեալ 'ի հերակլէ՝ յիշատակի 'ի կարգի նախասացեալ տառապելոյ. քանզի ասի՝ թէ 'ի վտանգիլ հիդրայի յերեսաց հերակլեայ, հերա չնածուհի օգնականութեան՝ հրաման ետ խեցգետնի միում մեծի՝ հասանել յօգնութիւն հիդրայի, եւ ապրեցուցանել զնա 'ի ձեռաց հերակլեայ: Եւ եղեւ իբրեւ դիմեաց խեցգետինն 'ի լճէ անտի, եւ եխած զոտս նր̃, անձապարեաց հերակլէս՝ եւ օգնականութ̃ յոլաոսի եհար եւ ջաղխեաց զխեցգետինն. եւ ապա սպան եւ զհիդրայն: Իսկ հերա վերաւէր զխեցգետինն՝ դասեաց 'ի կարգս կենդանակերպից, սպ̃ եւ զհիդրայն՝ ը̃ տառապելոց: Արդ՝ քանզի հերակլէս 'ի մարտնչիլն ընդդէմ երկուց գազանաց՝ կարօտացաւ գործակցութեն յոլաոսի, վ̃յ եւ առած եղեւ ասել. * եւ ոչ „ հերակլէս ընդդէմ երկուց || կարող եղեւ առանձինն մենամարտել.

Ասկանիոս էր որդի ենէասայ տրովադացւոյ, եւ (91)
յաջորդ նորա 'ի թագաւորութեան լատինացւոց: Իսկ առաջիկայս բան թեատրոնի զասկանեայ՝ առեալ է 'ի վիրգիլիոսէ բանաստեղծէ, որ 'ի Դ. գիրս Ենէականին 'ի համարն. 150. նկարագրէ զելանելն ենէասայ ը̃ որդւոյ իւրում ասկանեայ յորս երէոց. ուր ասէ այծեմունք եւ եղջերուք ընթանային ը̃ լերինս եւ ը̃ բլուրս. իսկ մանուկն ասկանիոս հեծեալ յերիվար յայսկոյս յայնկոյս վազատանայր 'ի ծործորս. եւ քերեալ զփախստեայ էրէովք՝ անփոյթ առնէր. քանզի ցանկայր՝ զի 'ի բար-

բարձանց իջեալ կինձ կատաղի կամ առիւծ ահեղի, և կամ այլ ինչ գազան ահագին. և 'ի նոսա ցուցցէ զքաջութիւն իւր։ Այլ յանկարծակի յարեաւ ատէ խռովութիւն օդոց, և ամպոց անձրևկարկտախառն. մինչև փախչել ասկանիոսի և Ենէասայ յայլևայլ ծերպս և 'ի խորշս լերանց։ Այլ է և այն աւանդել՝ զոր 'ի մէջ բերէ եւսեբիոս 'ի պատմութեանց հռովմայեցւոց վս̃ Ենէասայ, թէ յորժամ կամէր նա զոհել դից խոզ մի մատակ՝ համակ սպիտակ, որ մերձ էր 'ի ծնանել, զերծաւ այն 'ի ձեռաց նորա, և ելեալ 'ի բլուր մի՝ ծնաւ անդ երեսուն խոճկորս կամ խոզքուրակս. և ասացաւ Ենէասայ՝ թէ յետ երեսուն ամի 'ի տեղւոջ անդ շինեսցի քաղաք. այն է ալբան քաղաք (որ թարգմանի սպիտակ), զոր շինեաց յետոյ ասկանիոս որդի Ենէասայ։

(72) Յուգուրթաս էր թ̃գր Նումիդացւոց՝ մի 'ի գլխաւոր թշնամեաց հռովմայեցւոց, այր խորին և սէգ. որ յետ պէսպէս պատերազմաց՝ յորս յաղթեաց և յաղթեցաւ, հուսկ յետոյ 'ի նեղ անկեալ՝ դիմեաց առ բոկքոս արքայ մաւրիտանացւոց. և 'ի ձեռն ն̃ր մատնեցաւ 'ի ձեռս սիղղայի զօրավարին հռովմայեցւոց. և ածաւ կապանօք 'ի հռովմ. ուր հանաւ 'ի հանդէս յաղթանակի. և ապա արգելաւ 'ի կալանս. և այնպէս 'ի շղթայս մեռաւ դառնութ̃բ, իբր 105. ամօք յռ̃ջ քան զք̃ս։

Սոյնպէս և սիփակ էր թ̃գր միոյ մասին Նումիդացւոց. որ նախ 'ի կողմն հռովմայեցւոց գոլով՝ միաբանեցաւ յետոյ ը̃ թշնամիս ն̃ց ը̃ կարքեդոնացիս. և 'ի պարտութ̃ն մատնեալ՝ ձերբակալ եղև 'ի հռովմայեցւոց, և եդաւ 'ի բանտ հանդերձ կնաւ իւրով. և 'ի բանտի անդ մեռաւ տուայտանօք առ անհնարին ցաւոց սրտին, իբր 200. ամօք յառաջ քան զք̃ս, յաւուրս պատերազմացն շիպիոնի և աննիբաղայ։

Իսկ պատմութ̃ն կրասոսի և կրեոսի յայտնի է. ա̃յ և փոքր 'ի շատէ յիշատակեալ է մեր 'ի համարն. (7)։ Արդ՝ թէպէտ ա̃յ բոց կրեոսի կոչէ զելանելն նորա յերկաթի տապակ հրացեալ,

նոյն

նոյնպ և տրչամարչանս կրասոսի անուանէ զշաբաշար խորտակումն սորին ամ զօրքն հանդերձ 'ի պարթևաց. զի արդարև ամ իրք ամօթապարտեալ խայտառակեցաւ առաջի տիգրանայ հայոց արքայի՝ յարչամարչանս անձին իւրոյ և 'ի նախատինս բովանդակ ծերակուտին հռովմայ։ Յոր յաւելուն պատմիչք հռովմայեցւոց և այլ ինչ նոր հանգամանս արչամարչանաց. և զայն իսկ թուի յուշ առնել թեաւորս. քանզի ասեն՝ թէ յորժամ գլուխն կրասոսի տարեալ եղև առ արշէզ արքայ պարթից ( այն՝ զոր ինքեանք որոդէս կոչեն ), անդ գտաւ առաջինկայ և արտաւազդ որդի տիգրանայ արքայի հայոց. ուր յետ անարգելոյ ասեն զմտանել գլուխն բանիւք թշնամանաց, ետուն հալեալ ոսկի և լնուլ ը բերան նորա՝ ասելով. ոսկւոյ և մեծութեան էր փափաքող այրդ այդ, որ յայսչափ չարիս ձեռնարկեալ. արդ՝ ոսկի լիցի վերջին տանջանք քորա, և գէթ յետ մահուան յագեսցի ոսկւով։

Կղէոպատրա Թագուհին՝ որպէս և յայտ է, եղև (73)
վերջին 'ի թգւորս եգիպտացւոց. որ միաբանեալ ը անտոնիոսի զօրավարին հռովմայեցւոց՝ պարտեցաւ յօգոստոս կայսերէ. և առ չկալոյ զանձն 'ի ձեռս կայսեր՝ չոքաւ զիւրովին. մինչ և չկարաց օգոստոս՝ որպ կամէր՝ կենդանւոյն ըմբռնել զնա, և հանել 'ի հանդէս յաղթանակի. այլ միայն նր արձան մի յանուն նր ետ բերել զհետ կառաց իւրոց 'ի հանդիսի անդ։

Իսկ զենոբիա էր թագուհի պալմիրայ, որպ կարծի՝ 'ի զարմէ թգրացն եգիպտացւոց և կղէոպատրայ, յերրորդ դարուն յետ քսի, դշխոյ իմաստուն՝ գրագէտ և սրտեայ. այլ 'ի յանդգնիլն ըդէմ կալ օրելիանոսի կայսեր՝ 'ի պարտութեան մատնեցաւ, և կենդանւոյն ձերբակալ եղև յանգս եփրատայ՝ յամի տն 272. զոր բերեալ կայսեր հանդերձ որդւովք նորա 'ի հռովմ, եհան 'ի հանդէս յաղթանակի 'ի պարծանս իւր. և ապա բնակեցոյց զնա յանդորրու։ Արդ՝ հեղինակս բառ աբեալ մասին նուաստացուցանէ զնա քան զկղէոպատ-

պատրա. այլ և այլ բանի բազմօք գովելի էր առ քան զնա: Թող զայն՝ զի և արիութիւն կղէոպատրայ յառաջինկայս օրինակ՝ ոչ պարզապէս գովի, այլ և ինքն ասեսցէ. ապա թէ ոչ՝ անձնասպանն լինել չէ արիութիւն, այլ՝ յետին կնատութիւն և վատասրտութիւն. զի է գործ անյուսութեան և անձարակ գոլոյ:

(74) Կամի ասել, թէ որպ յետ յաղթութեան պերճի օրէն էր 'ի պատիւ յաղթանակի ծիրանիս ագանել ը ձիշոն՝ ը որ մտանէր 'ի քաղաքն կմ 'ի պալատն յաղթօղ զօրավարն կամ թագաւորն, եւ և կամար կանգնել յաղթողական՝ յթ է նոր դուռն կամարաձև կառուցեալ, զի ը այն անցցէ փառօք յաղթականն՝ եթէ կենդանի, և եթէ դի նորա պատկեալ և եդեալ 'ի դահոյս. սոյնպէս և արին 'ի տալ զանձն 'ի մահ վս համեստ և օրինաւոր պատճառի՝ արեամբ իւրով ծիրանազարդ առնէ զճանապարհ իւր աստի 'ի հանդերձեալն, և կամար նը համարի զդուռն վերաբերմանն կամ պատառած վերայն:

(75) Ս ն մանլիոսի ասացաւ վերագոյն, թէ յինչ առթէ կառ զանունդ թորքուատոս կմ torquatus, յթ մանեկաւոր. տես 'ի համարն. (60): Իսկ կուրիոս մանիոս՝ մականուանեցաւ դենտատոս, այն է ը լատ՛. dentatus, յթ ատամնաւոր. զի այնպէ ծնաւ ասեն, ըստ պլինիոսի. Է. 16. իբր զի ընդ ծնանելն դատն ատամունք նորա բուսեալ բաս կարգի 'ի տեղիս իւրաքանչիւր: Սա եղև այր հզօր և հանճարեղ. երիցս կարգեցաւ հիւպատոս հռոմայեցւոց, և արար բազում յաղթութիւնս և գործս գովելիս, իբր 280 ամօք յառաջ քան զքն: Կայ միւս եւս այր երևելի սիկկիոս անուն՝ մականուանեալն նոյնպէ դենտատոս կամ dentatus, զոր յիշէ պլինիոս 'ի նոյն Է. գիր. գլ. 28. որոյ բազմապատիկ են քաջութիւնք և հանդէսք մրցանաց. ազգի ազգի յաղթութիւնք և ընդունելութիւնք յաղթանակաց: Երկոցունց եւս միօրինակ պատշաճի բան թեասուրսի, եթէ չիցեն նոյն:

Իսկ կոսսոս կոռնելիոս՝ որ և կոչի կոռնելիոս կոսսոս,

սոս, էր աշնունական ամս հռովմայեցի՝ կարգեալ
'ի պատիւ դիկտատորութե իբր 380 ամօք յառաջ
քան զքս. սա բազում պտրգմունս մղեաց ընդ-
դէմ հրջակայ թշնամեաց. և սպան զլարէս վո-
լումնիոս զարքայ վէյենտացւոց. և զզէնս սորին
իւրոյ կողոպտեալ՝ կախեաց 'ի մեհեան դիոսի։
Համարեալ էր առ հռովմայեցիս իբր նոր աքիլ-
լէս կամ նմանօղ հռոմուլոսի։

Նացուածն պալլատայ կամ աթենասայ չածուհ- (76)
ւոյ առ տեղեմաքոս՝ առեալ է 'ի բանաստեղծու-
թէն հոմերոսի. ուր նկարագրին ազգի ազգի ա-
բարք տեղեմաքոսի և հօր նր ոդիսեայ դիւցազին.
զի յաւուրս դարձի զօրավարացն հելլենացւոց 'ի
պատերազմէն տրովադայ՝ տեղեմաքոս որդի ոդի-
սեայ տեսեալ թէ յամէ հայր իւր, եւ 'ի խնդիր
նր. և հազիւ օրեամ մարթացաւ զնա գտանել.
և եղև գործակից հօր իւրում յայլեայլ գործս
քաջութե, և զօրացաւ յոյժ. և այս ը դիւցազա-
նից՝ 'ի ձեռնատուէ և 'ի յորդորանաց պաղլատայ։
Ցուցէ զտեղեմաքոս զոդիսեան՝ նննոս մեկնիչն
ամարանի այսպիսի օրինակաւ. " Աղամեմնոն
,, յորդորեր զովդեոս ( ὁ [illegible] ) եղանել 'ի
,, տրովադայ. և նորա ոչ կամեցեալ ձեանայր մա-
,, լութի ( ὁ [illegible] ). և լծեալ եզ և արջառ,
,, իբր թէ արօրադրել ձեով մոլութե. իսկ պա-
,, ղամիդէս յանդիմանել զայն ոչ դոլ մոլեալ. և
,, յանդիմանեաց այսպէս, զտեղեմաքոս զորդի
,, նորա եդ առաջի արօրոյն. ապա հասեալ ոդի-
,, սեայ մինչև ցմանուկն՝ վերացուցանէ զարօրն,
,, զի մի դանեսցի մանուկն. և ծանուցաւ՝ թէ
,, զգաստ է ||։ Յայս հայի և առելն գրիգորի մա-
գիստրոսի 'ի թուղթն առ կարծեցեալ ամս դիտ-
նականն. " Բայց եթէ պատճառեա այժմ իբրև
,, զոդիսեւս. զի մի զինուորիցիս ը մեզ՝ զեզն և
,, զձի 'ի միասին լծեալ. սակայն գտցի քեզ պա-
,, ղամիդէս և զտեղեմաքոս կալեալ 'ի պատճառս
,, զենման, զի զգաստասցիս ||։

Իսկ պատմութիւնն աղեքսանդրի մակեդոնացւոյ
յայտնի է, այն՝ զի հայեցեալ նր 'ի դերազանց
դո-

գովութիւնս ընծայեալս քաջին աքիլլեայ 'ի հոմերոսէ, ըղձակերս լինէր և ինքն ունել զկնի իւր վիպասան զոք՝ նոյնօրինակ գովիչ գործոց իւրոց։ Ո՟ղ և յետ Ժմկաց յուլիոս կեսար տեսեալ զմեծամեծ գովութիւնս՝ զորս ընծայէին պատմութիւնք նմին աղեքսանդրի, նախանձաւոր եղև նմանիլ նմա, և ունել զնմանօրինակ գովասանս. և արդարև ոչ վրիպեցաւ յակնկալութենէ իւրմէ. զի ոչ նուազ գրեցին և համեմայեցին զյուլիոսէ՝ քան հելլենացիք զաղեքսանդրէ։

(77) Եպամինոնդ էր ազնուական ոմն Թեբայեցի կամ Թեբացի, իբր 350. ամօք յառաջ քան զՔրիստոս, որդի պոլիմնեայ, այր զգօն և արի, աշակերտեալ փիլլայոսի պիւթագորականի, և ծաղկեալ 'ի մէջ հելլենացւոց՝ փիլիսոփայութեամբ, պերճախօսութեամբ, և նուագածութեամբ, մանաւանդ թէ և առաքինի քաղաքավարութեամբ. զի այնպէս ճշմարտախօս էր, մինչև չառնուլ յանձն և ոչ կատակս ասել ինչ սուտ։ Հուսկ յետոյ եղև զօրավար քաջ. եգիտ զհայրենիս իւր 'ի ծառայութեան, և 'ի մեռանելն եթող յազատութեան։ Սա զկնի բազմապատիկ մրցմանց 'ի միում նուագի մարտնչելոյ իւրոյ ընդ լակեդեմոնացիս 'ի կողմանս մանտինէոյ՝ կարեվէր խոցեցաւ 'ի ճակատու. և յորժամ բարձեալ 'ի զօրականաց ածաւ 'ի բանակն կիսամեռ, և հազիւ հազ կարէր բարբառիլ, զայս մի ինչ և եթ խնդրեաց 'ի մերձակայից՝ ասել նմա, թէ 'ի խոցիլ իւրում և յանկանիլն արդեօք թշնամեացն կորզեա՞լ իցէ զվահան իւր. և իբրև ասացին՝ թէ ոչ, այլ՝ աստ առ քեզ կայ ասպար քո, եւ բերել զայն՝ և համբուրեաց իբրև գործակից ճգանց իւրոց և պարծանաց։ Եւ յաւել հարցանել. ո՞ր կողմն յաղթեաց. և յորժամ լուաւ՝ թէ Թեբայեցիք, ասէ. ուրախ մեռանիմ՝ ուրախակից լինելով հայրենեաց իմոց, եւն. և անդէն փչեաց զոգին։ Այլք ասեն, թէ յորժամ խոցեալն էր նետիւ 'ի ճակատամարտին անդ, չեթող ումեք հանել յանձնէ զնետն, այլ հանդերձ նետիւն մնալով յառաջ մղեաց զմարտն՝ հրաման տալով զօրացն՝ զոր ինչ օրէնն էր. մինչև

յետ

յետ խապառ վանելոյ զթշնամիս՝ ասէ. արդ՝ շատ է ինձ կեալ, զի անյաղթ մեռանիմ. իբր այն թէ միւսանգամ ծնանիմ. և յայնժամ հանեալ յանձնէ զնետն՝ ըստ նմին և զոգին եհան։ ՚Ի մէջ բերէ զայս և կիկերոն ՚ի Բ. Գիրս, յՂ. Հանգանաց. ՚ի նկարագրել իւրում զմահ քաջ արանց։

Ո՛ պալլատայ շատ լիցի՝ զոր առաջարկեն ՚ի հա֊ (78)
մարն. (31). և յայլ տեղիս։

Այս բան թուի հայիլ ՚ի պատմութիւն կրեսոսի (79)
լիւդացւոց արքայի. զոր իբրև կամէր հարկանել սուսերաւ ոմն ՚ի զօրականաց կիւրոսի յանգէտս, որդի նորին կրեսոսի՝ համր ՚ի ծնէ՝ բարբառեցաւ անդ առ տագնապ սրտին, մի՛ մխեր զձեռն քո, զի հայր իմ կրեսոս է դա։ Զայս պատմէ հերոդոտոս, և այլք յետ նր։

Պսեղարգն համուլայի ծառացեալ ՚ի հովանի լի֊ (80)
նել քաղաքացւոց, ոչ այլ ինչ թուի, բայց եթէ բանաստեղծական առացուած ինչ, իբր զի ՚ի ձեռն գործոց քաջութեն նր կանգնեցաւ հաստ և պաշտպանեցաւ ընդդէմ թշնամեաց։ Յիշէ պլինիոս յայլևայլ տեղիս զայլ և այլ ծառս անկեալս ՚ի համոյլ՝ ՚ի համուլայէ կմ յանուն համուլայի. ըստ որովք ժողովեալ քաղաքացւոց յաւուրս հանդիսից՝ առնէին ազգի ազգի խաղս և զուարճութիւնս։ Պատմէ և պլուտարքոս այսպիսի ինչ. համուլոս ուխտեաց (ասէ) զխաղ յեղանելն ՚ի պտրղմ ընդդէմ ակրոնի կենինեցւոց արքայի, զի թէ յաղթեսցէ թշնամւոյն, զզէնս նորա նուիրեսցէ նմին զխաղ։ Եւ իբրև ՚ի գլուխ տարաւ զյաղթութիւն. և ըսպան զակրոն, եբարձ ինքնին շալակաւ զզէն և զզարդ նր. և եբեր ՚ի համոմ քաղաք. եւ կոտրեալ և զկաղնի մի բարձր՝ որ կայր ՚ի տեղի պտրղմին, և ածել ընդ իւր. զոր կանգնեալ ՚ի մէջ հրապարակի քաղաքին իւրոյ՝ կախեաց զսաստ նր զզէնս ակրոնի. և արար մեծաւ շքով հանդէս յաղթանակի՝ հանդերձ բազմութբ ժողովոյն, ըստ նկարագրելոյ պլուտարքեայ. որ և յարէ՝ թէ առաւ ըսկիզբն կոչաւ առ համմոյեցիս սովորութիւն առնելոյ զհանդիսաւոր յաղթանակ մարտի։ ՚Ի վերայ

այսր

այսր ձմի՝ գրեն եւ պատմիչք, թէ հռոմուլոս ընկալաւ զմականուն կուիրինոս. զոր բազումք պէսպէս ստուգաբանէին. ոմն և ոմանք՝ ընդ նորին պլուտարքեայ վկայելով՝ ասացին, թէ առ նախնիս ընդ բարբառոյ սաբինացւոց գեղարդն կամ նիզակն կոչիւր քուիրիս, և կամ գուրիս. և զի նիզակն էր նշանակ հերայի և արեսի դիցն պատերազմաց և յաղթութեան, և զի յաղթօղ զօրականաց նոր նիզակ տային 'ի պարգեւս, հռոմուլոս եւս վասն յաղթութեանց իւրոց անուանեալ իցէ կուիրինոս, որպէս թէ նիզակաւոր, կամ իբր երկրորդ արէս՝ չաստուած նիզակաց. ոմն և տունն կամ տաճարին կանգնեալ 'ի հռովմ յանուն հռոմուլոսի՝ կոչեցաւ կուիրինեան։

(81) Նեսոս է անուն միոյ յառասպելեալ կենտաւրոսաց, որ 'ի ձիացլուց կամ 'ի յուշկապարկաց. զորմէ ասի՝ թէ տեսեալ զդէյանիրա դուստր ենեայ արքայի եաողացւոց զհարսնացեալն հերակլեայ քաջին առ ափն գետոյ, զի վարանէր անցանել յայնկոյս՝ և ոչ կարէր, գոլով ինքն քաջ լողորդ՝ երարձ զնա հրամանաւ հերակլի 'ի վ͞ր ուսոց իւրոց, և անցոյց յայն կողմն. և իբրեւ ելին 'ի ցամաք, յափշտակե͞լ զաղջիկն՝ փութացաւ փախչել։ Իսկ հերակլեայ տեսեալ զնենգ նեսոսի՝ արձակեաց զկնի ն͞ր զնետ իւր, և կարեվէր խոցեաց զնա։ Յայնժամ դառնացեալ յոյժ նեսոսի, և յուսահատեալ 'ի կենաց իւրոց՝ անձկայր մեռանիլ և ազատիլ 'ի ցաւոց. այլ կամեցե͞լ նախ վրէժ խնդրել յերկոցունց անտի դաւանօք, ետ յարենէ իւրմէ կամ զարիւնաթաթաւ հանդերձ իւր զկախարդեալն բժժանօք՝ իբրեւ ընծայ յիշատակի դէյանիրայ, ասելով թէ ունի սա զօրութի͞ ձգելոյ 'ի քեզ գլխովին զսէր առն քո։ Եւ եղեւ յետ ծնանելոյ հերակլի զորդի մի 'ի դէյանիրայ, իբրեւ հովացաւ 'ի սիրոյ նորա, 'ի կիր էառ դէյանիրա զայն կախարդեալ պատմուճան կի͞մ զարիւնն նեսոսի. որով դեղեալ հերակլի՝ անկաւ յախտ չարաչարանաց, այն է ըստ ոմանց ժանտախտ. մինչեւ ցնորեալ 'ի մտաց՝ էարկ անձամբ զանձն 'ի խարոյկ

բոյկ հրոյ, և մեռաւ. զոր տեսեալ կնոջն՝ սա-
գաանութեն սրտին չոքաւ և նա զհուրովն: Զայ-
սոսիկ յիշատակէ և Նոննոս գոյզն տարբերութբ.
խսկ վն մահուն հերակլեայ այսպէս գրէ. *Յոր-
,, ժամ զգեցաւ հերակլէս (ղղ-տմ-ձ-նն ծՆԷ-Լ
,, յ-րԷՆԷՆ ՆԷ---Է), վառեալ պատմուճանն եկեղ
,, զնա. խսկ նա մինչդեռ այրէր, ընկեց զանձն
,, 'ի գետն՝ որ մերձն էր, և ջերմացոյց զջուրսն.
,, յորմէ և եղեն (Ը-Տ ----ԴԷԼ-Ղ) ջերմաջուրք
,, և ջերագրութիւնք 'ի մէջ Թեսաղացոյն և
,, փոկկիսոյ||: Այլ Եւսեբիոս 'ի քրոնիկոն կա-
նոնի համաձայն նախագրելոցս ասէ. *Հերակղէս
,, 'ի սրտծութե խօթութե (ա 'Է ծ-Ն-Տ-Է-Տ) ան-
,, կեալ՝ 'ի կրակ գիռեալ. և այնպէս 'ի մարդկա-
,, նէ վճարեցաւ, կեցեալ ամս ծբ||:

Սխոս էր արքայ մեգարացւոց յաքայիա, որ 'ի (82)
գագաթան գլխոյն ունէր աւեն քանի մի հերս
ծիրանեգոյն. զորս և պահէր ամենայն զգուշու-
թբ իբրև սրբազան ինչ և բարեգուշակ. քանզի
ասացեալ էր Նմա պատգամախօսն, թէ ցորչափ
անկորուստ պահէին 'ի քեզ այն հերք, ոչ պար-
տեսցիս յումեքէ, այլ՝ մշտայաղթ և անսասան
մնասցես 'ի թագաւորութե քում: Եւ եղև 'ի
պաշարել մինոսայ արքային կրետացւոց զմեգարա,
դուստր Նիսոսի սկիւղէ անուն՝ որ կամէր հաճոյ
լինել յոյժ մինոսայ և հարսնանալ Նմա, գեր-
ծեալ հնարիւք զծիրանի հերս 'ի գլխոյ հօր իւ-
րոյ. և մատնեաց զքաղաքն 'ի ձեռս թշնամեաց:
խսկ թէ զինչ յետոյ գործեցաւ. բազում են բանք
առ առասպելաբանս: Մի արգեօք 'ի պատմու-
թե ամփոփանի գողացեալ իցեն զայս բանաստեղծք.
որպէս և զայլ պատմութիս ինչ Նբ գրոց խառ-
Նեալ 'ի Նոսա ազգի ազգի մոլորածին առաս-
պելս:

Բաջայայտ է օրինակ մահուն յուլիոսի կեսա- (83)
րու. յորոյ վրյարեան ոմանք 'ի ծերակուտէն, և
չարաչար խոցոտեցին սրով աւլով Նմա իբր քսան
և երեք վէրս: Սոյնպէս և վախճան սոկրատայ
յայտնի է, որում արբուցին աթենացիք դեղ մա-
հու՝

հաւ՝ կանխոն կամ գէտնոն ասացեալ առ յոյնս, որ ՚ի մեզ մօլեխինդ կամ խնգամոլի ասի։ Զայս յիշէ Նոննոս՝ յասելն. «Սոկրատէս այս էր ազգաւ աթենացի՝ իմաստասէր հրահանգաւ... և դատապարտեալ եղև մեռանել... և ապա ըմպելով կոնիոն, և արբեալ մահացաւ»։ Եւ զնոյն յիշատակէ Եւսեբիոս ՚ի քրոնիկոն կանոնի ՚ի ՂԵ. ողոմպիադն, ասելով. «Սոկրատէս արբ զկոնիոնն և մեռաւ, որ է խնգամոլի»։ Ցայս հայի և ասելն Խորենացւոյն. Է. 89. յողբերգութեան իւրում ՚ի վերայ սրբոյն Տրդատայ. «Տան նմա արբուցանել. որպէս անդ ուրեմն ՚ի հինսն աթենացիքն Սոկրատայ զմօլեխինդն»։ Այլ թէ յորժամ պատմեցաւ Սոկրատայ դատապարտելն իւր յաթենացւոց ՚ի մահ, ետ պատասխանի անխռով սրտիւ. ես անգամին ՚ի բնութէ վաղու ես դատակնքեալ եմ ՚ի մեռանել։ Եւ զի կին նորա լայր դառնապէս վասն յանիրաւի դատապարտութեան առն իւրոյ առանց երկբ յանցանաց, սաստեաց նմա Սոկրատէս՝ ասելով. և զինչ, կամէիր արդեօք՝ զի իրաւացի լինէր իմ դատապարտութիւն իբրև զմիոյ ՚ի չարագործաց։

(84) Ատիղիոս հռեգուղոս՝ հիւպատոս հռովմայ, այր անուանի, յետ յաղթահարելոյ զկարքեդոնացիս ՚ի բաղում մրցմունս ծովուն՝ հուսկ յետոյ անկաւ ՚ի ձեռս նոցա, իբր 251. ամօք յառաջ քան զՔս։ Յորում ժամի կամեցեալ ափրիկեցւոց առաքել զեսպասն ՚ի հռովմ վս հաշտութեան, երդմնեցին ընդ նմ և զհռեգուղոս. զի թէ հաստատեսցի խաղաղութիւն ՚ի մէջի, ազատ լիցի և նա. ապա թէ ոչ՝ անդրէն դարձցի։ Եւ եղև յորժամ լըուաւ ծերակոյտն զխնդիր ափրիկեցւոց, և թըղուէր յանձն առնուլ զհաշտութիւն, նա ինքն հռեգուղոս զընդդէմն հաստատեաց. քանզի հայելով յօգուտ և ՚ի պարծանս հայրենեաց՝ և ոչ յազատութիւն անձին իւրոյ, յանձն էառ՝ զի ինքն դարձուսցի անդրէն ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։ Եւ այսպէս հաստատուն կացեալ ՚ի վերայ բանից իւրոց՝ գնաց անդրէն յափրիկէ իբրև գերի։ Խմացեալ

ցեալ թշնամեացն՝ թէ հաւեգուղոս ինքնին խափա-
նիչ եղև հաշտութե̃, վառեցան յանհնարին սրտ-
մտութե̃ ընդդէմ նորա. և նորահնար տանջանօք
խորհեցան սպանանել զնա. 'ի բաց կորեցին յար-
մատոց զարտևանունս նորա, զի մի կարասցէ փա-
կել զաչս իւր և 'ի քուն լինել. և ապա եդին զնա
'ի մէջ մեքենայի՝ որ լի էր երկաթի սլաքօք կամ
ածելեօք. և այնպէս չարաչար տանջանօք ան-
քուն արթնութե̃, և գազանամահ կտտանօք սայ-
րասուր կորոյց բարձին զնա 'ի կենաց:

Իսկ սեննեքայ փիլիսոփային՝ այլն մեծիմաստ, որ
դաստիարակն եղև ներոնի կայսեր, 'ի նմին իսկ
մարդախոշոշ բռնաւորէ մահու դատեցաւ. որ ա-
պառուամ մօք զայս մարդասիրութիւն ևեթ եցոյց
առ վարժապետն իւր, զի ասաց. ընտրեա՛ քեզ
սեննեքա զտեսակ մահու, որով ըստ հաճոյս քո
սպանից զքեզ, և նա յանհնարս մահուն՝ խնդրեաց,
զի հատցին երակք նր̃ 'ի բաղանիս, և առ սակաւ
սակաւ դիւրութբ̃ լուծցի 'ի կենաց՝ խօսակից լի-
նելով ը̃ բարեկամս իւր: Եւ իբրև արարին այն-
պէս, տեսեալ նորա՝ թէ տագնապ մահու կրէ
ը̃երկար, խնդրեաց և մահադեղ. այլ ոչ այնչափ
'ի զօրութէ̃ թունիցն, որչափ 'ի հասմանէ արեանն
և 'ի ջերմութէ̃ բաղանեաց հեղձամղձուկ լեալ և
անշնչացեալ մեռաւ:

Գիտեմ ինձ աստանօր զգեղեցիկ ստացուածս (85)
հեղինակիս յաղագս քրիստոնէական արիութեան,
որով նահատակեցան երջանիկ վկայք 'ի սէր փրկ-
չին. և 'ի միտ առ զհետևանս բանից, թէ որպէս
յարիութե̃ մասին՝ նոյնպ̃ և յայլ ամ̃ առաքինու-
թե̃ց կարգի այնչափ վսեմ է և գերագոյն քրիս-
տոնէական առաքինութի̃ն քան զբարոյականն, որ-
չափ 'ի վե̃ր են ա̃ծայինն իրք քան զմարդկայինս:
Եւ ահա սովին համառօտ ազդարարութբ̃ տայ ի-
մանալ թեսաւրոս, թէ ինքն 'ի մատենի աստ խօ-
սելով միայն զբարոյական առաքինութե̃ց, և ցու-
ցանելով զլաւութիւն նոցին՝ զօրութբ̃ իւն միշտ մե-
ծացուցանէ զգովութի̃ ա̃ծային առաքինութեանց
ևս քան զևս, և որպէս թէ անբաւական զանձն

 խոս-

խոստովանի ճառել զնոցանէ ։ Զայս յայն սակս երկնչեցաք ասա , զի ընթերցօղք 'ի հայել անդ 'ի կատարելութիւն բարոյական առաքինութեց՝ յորդորեսցին առաւել ևս բորբոքիլ 'ի սէր գերագունից , ի քրիստոնէական և ածային առաքինութեանց ․ զի և հեղինակն գլխովին զայն յուշ առնէ ։

(86) Մասն չիպիոնի և սիփակոյ փոքր 'ի շատէ բանք եղէն վերագոյն ․ տես 'ի համարն , (61) ․ և (72) ։

(87) Կեպիոն էր հիւպատոս հռովմայեցւոց , որ նիզակակցութը մանլիոսի հիւպատոսի եւ 'ի պատերազմ ընդդէմ աղդայն գերմանացւոց՝ որք կոչէին կիմբրացիք և տևտոնեանք ․ այլ զի անխորհրդաբար մղեցաւ 'ի գործ մարտի՝ անսաստ գըտեալ խրատու խորհրդականաց , յաղթեցաւ չարաչար , իբր 100 ամօք յառաջ քան զՔս ։

Այնպէս և մինուտիոս էր զօրավար ոմն հեծելագնդին հռովմայեցւոց՝ յաւուրս պտրզմաց փաբիոսի մեծի սպարապետի ընդդէմ պենացւոց , ի ընդդէմ լիբէացւոց՝ զօրացն աննիբաղայ կարքեդոնացւոյ ․ որոյ տեսեալ զգանդաղանս փաբիոսի՝ զի ոչ համարձակ մխէր 'ի ճակատ ընդդէմ աննիբաղայ , այլ զգուշութը սպասէր դիպող ժամու և տեղւոյ , չկարաց հանդուրժել ․ այլ որոշեալ զիւր գունդ՝ ձեռներէց եղև 'ի դիմի հարկանել թշնամեաց ․ խրատեաց զնա փաբիոս հանդարտել առ վայր մի , և ոչ կարաց խափանել ։ Այլ իբրև յարձակեցաւ մինուտիոս յանդգնաբար իւրովքն հանդերձ , չարաչար խորտակեցան զօրք նորա և ինքն սակաւ արամբք մազապուր զերծաւ ․ իսկ փաբիոս 'ի դէպ ժամու պտրզմեալ՝ վանեաց ըզթշնամիս ։ Զայս ամ երկար ճառագրէ պլուտարքոս 'ի գործս փաբիոսի մաքսիմոսի , և 'ի վերջս յարէ , թէ զխորդ ամօթապարտ կորանօք յանդիման եղեալ մինուտիոսի առաջի փաբիոսի՝ խոստովան եղև զանխորհուրդ գործ իւր ․ այլ փաբիոս մարդասիրութի ցուցեալ առ նա՝ չկամեցաւ յանրեսս հարկանել զանմտութի նր և կամ պատուհասել ։ Յայնժամ ասէ մինուտիոս ցփաբիոս , ըստ

գրե-

գրելոյ պլուտարքեայ. «Կրկնակի յաղթութի՛ւն 'ի
» գլուխ տարար այսօր իշխանդ քաջ, մի՝ արութ̄
» ը̄դէմ թշնամեաց, և միւս ևս՝ ընդդէմ նիզա-
» կակցացդ քոց՝ խորհրդով և մարդասիրութ̄.
» առաջնովն ապրեցուցեր զմեզ, և երկրորդիւս
» հրաշանդեցեր. և այն ինչ մեք չարաչար կորա-
» նէաք 'ի պարտութե̄ մատնեալ էաք յաննիրաղայ,
» ահա և առ 'ի քէն հանդարտամիտ և ազատա-
» բար յաղթութե̄ պարտեալ գտաք»:

Կոդրոս որդի մեղանթոսի էր արքայ աթենաց- (88)
ւոց. յորոյ աւուրս՝ իբրև յարձակեցան թշնամիք
պե̄րգման 'ի պելոպոնէսոս (՟ռ 'ի մօռայ, լուե̄լ
կոդրոսի 'ի պատգամախօսէն՝ թէ այն ժողովուրդ
լինի յաղթօղ, որոյ առաջնորդն մեռանի 'ի պա-
տերազմի, ծպտեցաւ 'ի հանդերձս առն սոսկա-
կանի. և մտեալ իբր անգէն 'ի ճակատ թշնամեաց՝
գրգռեաց զզօրական մի, և սպանաւ 'ի նմէ՝ իբր
հազար ամօք յառաջ քան զք̄ս: Զայս յիշէ և եւ-
սեբիոս 'ի քրոնիկոն կանոնի՝ յաւուրս դաւթի ար-
քայի. «Կոդրոս փախճանեցաւ՝ տուեալ զանձն 'ի
» մահ վասն յայտնութեան». և յաւէ՝ թէ յայնմ
հետէ բարձաւ թագաւորութիւն աթենացւոց,
և սկսան նստիլ իշխանք. որոց առաջինն եղև մե-
դոն որդի կոդրեայ: Ոմանք ասեն, թէ 'ի յիշա-
տակ այսր քաջութե̄ կոդրոսի ոչ ևս կամեցան ա-
թենացիք ունել թագաւոր, այլ լոկ իշխան, որ
'ի յունաց կոչի ԱՐԽՈՆ:

Իսկ կլիւդնոսդ անուն, կամ կլիկնոս, որ յունա-
րէն ասի ՓԻ՛ՓՆՈՍ, և լատիներէն ՃԻՆՈՍ, նշանակէ
զթռչունն անուանեալ կարապ կամ պոր: Եւ զի
ոմն 'ի թ̄ւրացն լիգուրացւոց կիւդնոս կոչիւր,
ասացաւ յառասպելս՝ թէ 'ի կարապ թռչուն փո-
խարկեալ իցէ զնա արամազդ: Քանզի ասեն՝
յորժամ փայեթոն որդի արեգական կայծակնա-
հար եղեալ անկաւ 'ի պադոս գետ, քորք փայե-
թոնի՝ որք լային ընդ կորուստ եղբօր իւրեանց,
փոխեցան 'ի կաղամախս կամ 'ի սօս, և արտասուք
նց̄ 'ի բուրկէն կամ յամպէր. և զի կիւդնոս ևս
էր մերձաւոր ազգական նց̄, և լայր, փոխեցաւ
և

և նա 'ի կարապ թռչուն, և նմանէ յոտս քերցն փայտեղինայ ծառացելոց, կամ ը̄ հովանեաւ նոցին՝ ձայն արձակեալ եղանակէր զերգս ողբոց, են: Զայս ևս նկարագրեն ովիդիոս և վիրգիլիոս բանաստեղծք. զորոց զբանսն պէսպէս մեկնաբանեն այլք: Իսկ առաջիկայս բան Թեսաւրոսի հայի յայն՝ զի 'ի գագաթան կիւգնոսի ասին բուսեալ փետուրք պայծառք և արծաթափայլք իբրև զսպիտակ կարապոյ. զոր ոմանք իմանան վս̄ սպիտակացեալ հերաց նր̄:

(89) Կամի ասել, թէ կայսերք՝ որք յաջորդեցին զկնի յուլիոսի կեսարու, յանձեալ գտան 'ի քաջութէ գործոց նր̄՝ իբր յանարժանս կրելով զանուն նր̄. զի կայսրդ անուն ինքնակալաց առեալ էր 'ի բառէս կեսար կամ չէզար՝ որ մականունն էր յուլիոսի: Մեք հնորկօրէն առ որոշումն անուանց զյուլիոս՝ կեսառոս կամ կեսար կոչեմք, և զայլ ինքնակալս կայսր. Թող և զնոսա՝ որք կեսար կոչին իբր գահակից կայսեր. Թէպէտև Թեսաւրոս զամենայն միօրինակ չէզար կոչէ յիտալականն. զի մի և նոյն անուն է ըստ ինքեան կեսառոս, կեսար, և կայսր:

(90) Համեմատութն սերմնարանի ընդ ուսումնարանի ընտանի է առ իտալացիս, վասն համաձայն առման բառիս ՍԷՄԻՆԱՐԻՕ. որ ստուգաբանի սերմնարան, և նմանութբ̄ 'ի գործ ածի փոխանակ ուսումնարանի կամ համալսարանի:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՐՍ:

(91) Յաղագս առասպելեալ հիդրայի և խեցգետնի լեռով ասացաւ 'ի համարն. (70). տես անդ:

(92) Հանգոյց հիմէնեան նշանակէ զկապ ամուսնութ, իմ̄ զպսակն անլուծանելի. քանզի հիւմէն կամ հիմենէոս, որ էր̄ ոմանց համարի ծագեալ 'ի յունական բառէս ԻՒՄՆՈՍ, այն է երգ կամ տաղ ուրախական, համարեալ էր առ հելլենացիս չա̄ծ հարսանեաց կամ ամուսնութե. զոր և նկարէին պատանի առոյգ՝ պսակեալ ծաղկօք, ունելով 'ի միում

ձե-

ձեռին ջահ բոցավառ, և 'ի միւսում քօղ կարմիր: Բազում են առասպելք՝ զոր յօդեն զնմէ բանաստեղծք տարբեր յերկրաց:

(93) Զոր ինչ խօսի Հեղինակս զազդեցութէ երկնից ըստ այլ և այլ կլիմայից՝ պարտ է իմանալ 'ի բնական կարգի անդ, և ոչ բարոյապէս. որպէս յայտ է. իբր զի տեղիք ծննդեան կամ դիրք բնակութ ոչ եթէ առնեն զոք առաքինի կամ մոլի, այլ միայն զբնական խառնուածն պէսպէս տրամադրեն: Արդ՝ թէպէտ և այլ և այլ խառնուածք այլ և այլ գործս յառաջ բերեն, մինչև լինել ոմանց 'ի բնէ յայս կամ յայն առաքինութի և կամ 'ի մոլութ առաւելագոյնս տրամադրել, բայց 'ի ձեռս անձնիշխան կամաց իւրաքանչիւր անձին է ուղիղ տնօրինել զկեանս իւր ըստ ուղիղ թելադրութէ բանի: Թող զարտաքին ձիրս բնաւորականս, որք չեն 'ի ձեռս մեր. որպէս լինել սրամիտ, սրատես, ուժեղ, ևն:

(94) Քիրոն կամ Քերոն է անուն միոյ յառասպելեալ ձիացլուց՝ իմաստնագոյնն համարեալ 'ի նս և ամ իրաց խելամուտ. սա ասեն նախ որսորդութե թափառեալ 'ի լերինս՝ անվրէպ նետաձգութե ստացաւ զյաջողութի ձեռաց առ ամենայն գործս. և ապա զննելով զզօրութիս բուսոց՝ որ 'ի լերինս և 'ի դաշտս, հմուտ գտաւ կատարեալ արուեստի բժշկութե. նոյնպէս և գիտողութե աստեղաց՝ եղև քաջ աստեղաբաշխ. ևն. վն և այնչափ անուանի եղև, մինչև առնուլ իւր աշակերտս զնմանին զնա՝ որք ականաւորք եղեն յայլ և այլ գիտութիս և յարուեստս, որպէս ասկղեպիոսին բժշկութե՝ ուսոյց ասեն զբժշկականութե. հերակլեայ դիւցազին՝ զաստեղագիտութի. քաջին աքիլլեայ զերաժշտութի և զզօրութի խոտոց. ևն: Եմուտ 'ի նաւ յասոնի ընդ արգոնաւորդս, և եղև նց բժիշկ: 'Ի վախճանի դիպուածին խոցեցաւ ասեն 'ի թունաւոր նետից հերակլեայ՝ մխելոց արեամբ հիդրայ գազանին, 'ի խառնելն անզգուշութե զկապարճս նորա. և առ զերծանելոյ 'ի ցաւոցն՝ աղաչեաց զդիս հանել

զինքն

զինքն յերկրէ. և արամազդ վերաբերեաց զնա 'ի կարգս աստեղաց: Այն է մին 'ի կենդանակերպից՝ կոչեցեալն աղեղնաւոր. զի առաջին գործ քիրոնին էր աղեղամբ շրջել յորս: Եւ զի վիրահատուն (որ Չիրուրղիք) յունարէն քիրուրղիասի, համարին ոմանք՝ թէ անուն առեալ իցէ անուն քիրոնի, վասն լինելոյ նորա գիտակ մեծ տեսակաց բժշկութեան. մանաւանդ թէ վասն անուանն ընծայեալ իցէ նմա այնպիսի արուեստ: Թող զի քի- կամ Խիր նշանակէ ձեռն. և զի զայս համարէին յաջողակ առ մեծ արուեստ ձեռաց՝ քիրոն կամ Խիրոն կոչեցին. որպէս և աղեղնաւորի առաւել քան զամ յաջողութեն ձեռաց պիտի. զնոյն իմա և վասն վիրահատի:

(95) Զեւքսիս՝ որ և զեւքսիս ասի, կամ ըստ իտալացւոց՝ Զէօքսի, էր պատկերահան երևելի 'ի հերակլեայ, ծաղկեալ ըստ ոմանց 'ի հը ողոմպիադին՝ յաւուրս քսերքսեայ առաջնոյ պարսից արքայի, իբր 460 ամօք յառաջ քան զՔՍ: Սա ըստ պատմըն պլինիոսի և այլոց՝ 'ի վերջ մնեալ է պարրասիոսի նկարչի եփեսացւոյ, նկարեաց ողկոյզ մի խաղողոյ այնչափ բնական, մինչև իջանել թռչնոց 'ի յափշտակել զայն: Իսկ պարրասիոս նկարեաց վարագոյր մի՝ իբրև 'ի ծածկոյթ պատկերի. զոր տեսեալ զեւքսեայ 'ի հեռուստ, և համարեալ իսկական պաստառ ինչ, առէ ցպարրասիոս. զի է՛ զի ընդ վարագուրաւ ծածկես զարուեստդ. բայց զի տեսցեն ամենքն. այլ իբրև գիտաց՝ եթէ այն ևս է պատկերն նկարեալ, 'ի միտ էառ՝ թէ քանի քաջ է արուեստն պարրասիոսի. որ գիտաց խաբել ոչ զթռչունս, այլ զայր պատկերահան: Նկարեաց զեւքսիս և այլ պատկեր. ըստ մանուկ մի՝ բարձեալ զողկոյզս խաղողոյ. և դարձեալ եկին թռչունք 'ի վերայ պատկերին: Զոր տեսեալ զեւքսեայ՝ զայրացաւ ընդ անարուեստ նկարչութե իւր. զխաղողս առէ լաւ ես նկարեցի քան զմանուկն. զորոյ զհակառակն պարտ էր գործել. զի յայնժամ խուսափէին արդեօք թռչունք յերեսաց մանկանն, և չիշխէին իջանել 'ի վերայ խաղողոյ. վասն ջըն.

ընչեաց զխաղողսն 'ի պատկերէ անտի. զի գուցէ մանուկն առանձին կենդանատիպ երեւեցի. այլ ասին լինել սորա և այլ նկարք նշանաւորք: Իսկ վասն գրաստուն նկարելոյ 'ի պրաքսիտելեայ չունիմք ինչ ասել. զի պրաքսիտելէս համբաւեալ է յարուեստ անդրիագործութե, որպ ասացաւ 'ի համարն. (16). և թէպէտ գիտէր ասեն ոմանք և զնկարչութիւն, այլ այսպիսի ինչ գործ ոչ յիշատակեն: Յիշին առ պլինիոսի կառք և երիվարք գրոշեալք 'ի նմէ. և գուցէ յայնս հային առաջիկայ բանք թեսաւրոսի. և կամ թէ շփոթութե անուան իցէ աստանօր. զի 'ի դէպ գայ յառաջ բերեալ օրինակն այնմ երիվարի՝ զոր նկարեաց ապելլէս. տես 'ի համարն. (11). բայց սակայն թեսաւրոս և այլոք երկդէ զյիշատակաւն այսր նկարու պրաքսիտելեայ:

Բրաքմաննեայք. ըստ յն. Բրախմանէ կամ պռահմա-նէս, էին կարծեցեալ իմաստունք հնդկաց՝ 'ի կարգէ մերկիմաստակաց՝, քննիչք աստեղաց և որդեք աստեղաբաշխից. զի կրկին ազգ մերկիմաստակաց ասին լինել. Նոքա՝ որք ինքնակամ ընտրութեամբ փիլիսոփանոյին, սամանեանք անուանէին. իսկ որք իբր ժառանգորդ հայրենի իմաստասիրութե յաջորդութը իշխեալ պարապէին 'ի քննութիւս իրաց, բրաքմանեանք կոչէին. և սոքա յետինքս՝ յոլովակի զանունն եւեթ կրէին իմաստասիրու. և արդեամբք անիմաստք էին, ցոփակեացք, մարմնապարարք և պորտաբոյծք: (96)

Աման ակամայ կամօք հարկելոյ ագամեմնոնի 'ի զոհել զիփիգինէ զդուստր իւր, յիշեցաք վերագոյնդ 'ի համարն. (44): (97)

Պաւզիկոս էր սոփեստէս ոմն 'ի կոլայ կամ կովոցի, մեծապէս համբաւեալ 'ի մէջ աթենացւոց: Սա շարագրեաց գիրք մի, յորում ընտրական ստեղծարանութը առաջի արար զայն նմանութն՝ զոր յառաջ բերէ հեղինակս, իբր զի նկարագրեաց զդիւցազն հերակլէս իբրու վարանեալ 'ի վերայ երկշաւիղ պողոտայի՝ կի՛ փողոցի բաժանելոյ յերկուս առաջս. որոց մին է զաւ 'ի վեր (98)

մէր տանէր , այն է դժուարակոխ ճգն առաքինութն . և միւսն ը̅ զառ 'ի վայր , այն է հաճոյք մարմնոյ՝ կամ հեշտութեն , յոր ինքնին միտէ բընութիւն : Առաքինութիւն իբրև օրիորդ համեստ յորդորէր զնա գնալ ը̅ իւր ճգն . և ընդ հակառակն՝ հեշտութիւն լինեալ հրապուրէր զնա՝ գալ զհետ իւր . այլ հուսկ յետոյ քաջն հերակլէս՝ որ ցուցանէ զանձն առաքինասէր , սիրեաց սակ զառաքինութն , և անգոսնեաց զհեշտութիւն :

(99) Պինդէ , ը̅ այլոց փիփօ , կամ փիփոնէ , որ և եղիսա կոչի , էր դուստր կաղքեդոնի կամ բեղոսի արքային տիւրոսի՝ տուեալ 'ի կնութն սիքերայ կամ սիխեայ ընչաւէտ քրմի . և եղև 'ի թագաւորել պիւգմալիոնի եղբօրն դիդեայ , իբրև սպան նա զքեռայր իւր առ 'ի ժառանգել զհարստութիւնս , դիդէ այրի մնացեալ՝ եառ զթագուցեալ ինչս առն իւրոյ , և մեկնեցաւ 'ի կիպրոս . և ապա եանց յափրիկէ . ուր շինեաց զհոյակապ քաղաքն կարքեդոն , որ և կարթագինէ ասի . և արարեալ այլ ևս բազում շինութիւնս և կարգաւորութիւն՝ նստաւ անդ իբր դշխոյ զօրաւոր : Եւ իբրև տարածեցաւ անուն նորա ը̅ ծմ տեղիս , պատգամ յղեաց առ նա յարբաս թգւրն մաքսիտանացւոց՝ ամուսնանալ ընդ իւր . ապա թէ ոչ՝ ասէ , ելից ծանր պտրզմաւ 'ի վր քո : Իսկ դիդէ՝ որ 'ի սէր վախճանելոյ առն իւրոյ առաջնոյ 'ի սուգ էր համակեալ զամ ամուրս , և հաստատեալ էր 'ի մտի չլինել առն այլում , իբրև լուաւ զայսպիսի պատգամ , սկսաւ յոգւոց հանել և լալ դառնագին : Ժամադիր եղև՝ յետ երից ամսոց տալ պտխնի բանից արքային . և ինքն լուծեալ լքեալ 'ի խորհուրդս իւր՝ ետ կանգնել 'ի մի կողմն քաղաքին փայտակոյտ մեծ . և 'ի խարոյկ անդ նուիրեաց զոհս բազումս 'ի պատիւ առն իւրոյ քրմի . և ապա առեալ սուր 'ի ձեռս՝ ել անձամբ 'ի վր խարուկին յանդիման ամենայն բազմութն . և ասէ ցնոսա . ահա գնամ ես առ այր իմ , ոպ եղև ինձ հրաման . և անդէն սպան զանձն սրով , և այրեցաւ 'ի մէջ բոցոյն : Գրեն ոմանք՝ թէ սա 'ի գոր-

ծոյ իւրոց առնել իցէ զանուն գիրք կամ ՃԺԴ, ում թէ ստուգաբանելով չէ՞ն ԹՈՂ․ զի առաջին անուն նր եղեալ էր սմին ։

ԱՅԼ ծանիր, զի Թեատրոս տատանօք զհետ գնայ ստեղծաբանութեանցն վիրգիլեան լատին բանաստեղծի, որ փնկ յարմարսայ արքային մաքսիմանացւոց գնէ զննէսս տրոյացի զեկեալն յարեմուտս, և Ճոխագոյնս նկարագրէ ՚ի Դ․ ԷՆԷԱԿԱՆ ԳԻՐ․․ թէ զեսորդ բանս եդ գիրք ընդ եննէասայ՝ լինել նմա կին․ և այնուհետև կասեցաւ ՚ի գործոց շինութե ։ Իւ աչա նոյն իսկ համառօտ ստանալով յառաջ բերել ՚ի հեղինակէս, առնել է յԹԳարձակ բանից անտի վիրգիլեանի․ որ ՚ի ՀՆԴՐԴ 86․ սահ․ (արձակ շարագրութե գեղեցիկ իբր բառ առ բառ)․ ՚ԱՐ ՚ի վեր բարձրանան հիմնարկեալ աշտարակք․ ոչ ՚ի զէն քաջութե կրթի
„ առոյգ հասակ մանկութե, և ոչ նաւահանգիստս
„ կամ մարտկոցս անառիկս պատրաստէ․ ՚ի կախ
„ ման գործք ընդհատեալք, և աչագին պա-
„ րիսպք մեծամեծ, և երկնաբերձ ամբար-
„ տակք ||։ Բայց սակայն ըստ առոյգ պատմութեանց՝ առաւել արմակայ, առ որով էր ենէաս, բյմ ամօք յառաջ էր քան զշինութիւն կարքեդոնի ՚ի դիդեայ ։ Ցայս հայի և սակն եւսեբեայ ՚ի քրոնիկոն կանոնի, յաւուրս դաւթի արքայի․ ՚Կար-
„ քեդոն շինեցաւ ըստ ոմանց ՚ի կարքեդոնէ տիւ-
„ րացւոյ․ և ըստ այլոց ՚ի դիդեայ նորին դստերէ,
„ յետոյ քան զտրովացւոց իրքն՝ ՃԼԳ ամօք ||․ զոր այլք ընթեռնուն ՃԼԳ ամօք ։ Ուր և հարևանցի ՚ի մէտ առ․ զի զկարքեդոնդ անուն վարեն նախնիք մեր համաձայն յունականին ԿԱՐԽԷԴՈՆ․ այն է ըստ լատինացւոց ԿԱՐԹԱԳՕ, և ըստ իտալացւոց ԿԱՐԹԱԳԻՆԷ․ ըստ որոյ և ՚ի մեզ երբեմն գրի կարթագինէ ։

Ասացնէ՝ որ սոս լինել դուստր արեւելի ծնեալ (100) ՚ի Թերեայ կնոջէն տասվսոսի, տուաւ ՚ի կնութ կապանեայ քաջ զօրավարին արգիացւոց ։ Սա այնչափ սիրեր զայր իւր, մինչև ՚ի լսելն զմեռանիլ նր ՚ի պատերազմի ՚ի կողմանս Թեբայեցւոց, ցնորեալ

բեալ անկաւ 'ի մտաց. և իբրև բերաւ մարմին
առն նորա, զի այրեսցի հրապարակաւ՝ իբր 'ի նշա_
նակ պատուհասի թաղման, եւագնէ զգեցաւ
հանդերձ հարսանեաց, և եարկ զանձն 'ի նոյն
բոցբոցեալ խարոյկ. ուր զի գէթ մոխիր ոսկերաց
իւրոց միացցի ը̅ ոսկերս առն իւրոյ. և մի զատ_
ցի 'ի նմանէ 'ի մահու, ը̅ որում միացեալ էր նմ
սիրով 'ի կենդանութե̅:
Իսկ պղատիս կամ պլուտիս էր իշխան ոմն հը_
ռովմայեցի. որ հրամանաւ ծերակուտին խաղա_
ցոյց յասիա վաթսուն նաւս պատերազմի. և կին նորա
որեստիլլա ընդ նմա. և եղև իբրև հասին 'ի տա_
րենտոն, անդ ծանրացեալ կինն 'ի խօթութե̅ մե_
ռաւ: Յորոյ վերայ սուգ մեծ էառ այր նորա, և
ապա ինքնին օծեալ զմարմին նորա՝ պատրաստեաց
զհանդերձ այրման նորին 'ի խարոյկ, և առ սաս_
տիկ սիրոյն՝ որ առ նա, մերձ եղև 'ի փոյթակոյս
անդր, և մխեալ զսուրն 'ի կողս իւր՝ չոքաւ զիւ_
րովի: Յայնժամ առեալ զնա բարեկամաց նորին՝
եդին 'ի վերայ նոյն խարուկի հանդերձ զինուքն,
ուր և էր զինեալ նմ զինուորական զարդուք. և
ապա հուր մատուցեալ՝ այրեցին 'ի միասին զեր_
կոցունց ընկերաց զմարմինս: Գերեզման սոցա
կայր 'ի տարենտոն քաղաքի. և կոչիւր յունարէն
ΤΩΝ ΦΙΛΟΥΝΤΩΝ. յն սիրողացն կամ սիրելեաց. որպ
գրէ վալերիոս մաքսիմոս. Գիր. Դ. Գլ. 6. և այլք
ը̅ նմա:
Ուր արժան է գիտել. զի զգործ սոցա գովութը̅
ճառագրէ թեատրոս՝ լոկ բառ բանի կատարեալ
սիրելութե̅, զոր անկ է ունել ընկերաց առ մի_
միեանս, այլ ոչ ըստ անկարգ եղանակին՝ որով զան_
ձինս մահացուցին յումպէտս 'ի սէր իրերաց.
քանզի մահ բերել անձին վասն սիրելւոյն, ոչ
զանձն է սիրել (որում նախ է նմ ոք պարտա_
կան), և ոչ զընկերն (որում ինչ ոչ օգտէ), այլ
է անմտութիւն գլխովին, կամ կուրութի սիրոյ:
Այլ և հեղինակս զայս անկարգ գործ հեթանո_
սական յառաջ բերէ միայն 'ի նշանակ սաստկութե̅
սիրոյն, զոր ունէին ընկերք 'ի կենդանութեան
իրե_

իրերաց ։

Փիլոքսենոս (որ թարգմանի օտարասէր կամ (101)
հիւրասէր) եղև անուն այլ և այլ որկորամէտ ան֊
ձանց. յորս առաւել գասէ փիլոքսենոս կիւթե֊
ռացի որդի եռիւքսիդեայ, մականուանեալն Փէն֊
ֆէֆէ՝ այն է ձկնասէր ։ Սա՝ ՟Ը գրելոյ աշխա֊
տելի 'ի բարոյական գիրս, մոլեալ զհետ համա֊
ռութեան կերակրոց՝ ասէր, երանի թէ երկայ֊
նաձիգ լինէր իմ որկոր քան զպարանոց կռնկան,
առ 'ի կարօղ լինելոյ երկարագոյնս վայելել զհա֊
մեղութի ճաշակոյ ։ Պատուիրէր որդւոյ իւրում
գնել ազնիւ կերակուրս. և յասել մանկանն՝ թէ
թանկագին է այն ինչ ուտելի, տայր պխնի. այն֊
չափ քաղցր լինի 'ի կոկորդս իմ, որչափ թանկ
գնեսցես ։ Խրատ տայր խոհարարին, զի ջերա֊
ջերմ բերցէ զկերակուրս 'ի սեղան. մինչև չկա֊
րել այլոց ուտել. և այն ինչ ապաւէին բազմա֊
կանք՝ զի փոքր մի հովասցի կերակուրն, նա իսկ
և իսկ լափէր զամ. և նոքա զարմացեալ հայէին
՟Է երեսս նորա ։ Երբեմն և այնչափ մոլեգին յար֊
ձակէր 'ի խորտիկս, մինչև մտել 'ի ներքս և զը֊
ռունգունս իւր. յորմէ տաղտկացեալ սեղանակ֊
ցաց յետս կային 'ի սկաւառակէ անտի. և նմա միայ֊
նոյ մնայր ամն ։

Յունական հուր կոչիւր արուեստական ինչ նիւթ (102)
հնարեալ 'ի նախնեաց՝ առ 'ի այրել ծովային պա֊
տերազմաց, զոր արձարձեալ ձգէին 'ի ծով. որ
և առաւել բորբոքեալ 'ի մէջ ջրոյ՝ բոցավառ առ֊
չորէր զնաւս թշնամեաց. և դժուարին էր շիջու֊
ցանել զայն. զի 'ի փչելն 'ի նա՝ կամ 'ի շնչել հող֊
մոյ՝ առաւել սաստկանայր, և ջրով ոչ յաղթահա֊
րէր ։ Այլ այս գիւտ բարձաւ յետոյ 'ի միջոյ ։
Իսկ մոլի հուր կոչի վառումն իւղային գոլորշեաց
յօդս 'ի վ՟ր գերեզմանաց և 'ի վ՟ր մարմնոց կա֊
խելոց զփայտէ. և ասացաւ մոլի՝ վասն յայսկոյս
յայնկոյս շրջշրջելոյ 'ի շարժութէ օդոյն. զի թէ
ոք զհետ նորա ընթասցի, 'ի բաց խուսափէ մղանօք
օդոյն. և թէ ոք 'ի բաց հեռասցի՝ նա զկնի գայ
վ՟ս օդոյն յայնկոյս ձգելոյ ։ Այլ զայսմանէ տես

'ի

'ի փիլիսոփայութեն՝ 'ի Ճառն մետէորայից ։

(103) Ի միտ առ և սա, թէ զինչ համառօտ բանիւ գեղեցիկ արտայայտէ Թեսաւրոս զգերազանցութիւն քրիստոնէական կուսակրօնութեն ։ Ախորժէր արդեօք երկարագոյնս ճառել զգովութենէ նորա, բայց քանզի դիտումն իւր յայս գիրս է խօսել միայն զբարոյական բարեխառնութենէ՝ որչափ ինչ լուսով բանի ճառեցին զնմանէ փիլիսոփայք, չառ համարի կարճ 'ի կարճոյ անցանել զմիասին, յուշ արարեալ թէ կամաւոր ժուժկալութի քրիստոնէից 'ի վեր էր քան զաեսութի արտաքին փիլիսոփայից ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՎԵՑԵՐՈՐԴ ԳԻՐՍ ։

(104) Վերտումնոս, ըստ լատ. ՎԵՐՏՈՒՄՆՈՒՍ կամ ՎԵՐՏՈՒՆՈՒՍ. էր չաստուած մի առ հռովմայեցիս, որ յամենայն կերպարանս յեղափոխէր զանձն, ուստի կերպարանափոխն պատուէաս առ յոյնս. առեալ 'ի բայէս ՎԵՐՏՕ, որ է դարձուցանել կամ յեղաշրջել ։ Բազում են առասպելք՝ որ զմանէ, և բազմօրինակ մեկնաբանութիւնք բանաստեղծից ։ Իսկ բան Թեսաւրոսի հայի յայն, զի ասի՝ թէ կամեցեալ վերտումնոսի հաճոյ լինել յուշս միոյ 'ի յաւերժահարսանց՝ որ կոչիւր պոմոնա, եմուտ 'ի պարտէզ նորա, և յայլ և այլ կերպարանս երևեցոյց զանձն. զի գէթ ընդ միով կերպարանաւ ախրեսցի 'ի նմանէ. ձևացաւ ասեն 'ի կերպարանս երկրագործի, հնձողի, այգեպանի, և ծերունւոյ ։ Իսկ զի պոմոնա ծագի 'ի բառէս ՊՕՄՈՒՄ՝ որ է խնձոր կամ պտուղ, ուղիղ մեկնաբանեն ոմանք ասելով, թէ չաստուածն անուանեալ վերտումնոս այլայլափոխ՝ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ նկարագրութիւն չորից եղանակաց տարւոյն, որ պէսպիսանայ ըստ ժամն՝ առ 'ի հասուցանել զպտուղս երկրի և շատացուցանել զմիրգ ։ Վասն զի վերտումնոս իբրև երկրագործ՝ նշանակէ զգարուն, իբրև հնձօղ՝ զամառն, իբրև այգեպան կամ կթօղ խաղողոյ՝ զաշուն, և իբրև ծերունի անշքացեալ և ալևորեալ՝ զձմեռն ։

Սառ.

Աստեղի օրինակ Թեսաւրոսի ըստ երկարանչիւր (105)
կարծեաց եւ. Իրր զի եթէ ըստ նախնեաց ոմանց գիցին 'ի յատակս ծովու ստորերկրեայ անցք ջրոց, եւ 'ի նոցունց լինիցին աղբերակունք՝ յորոց բղխեն գետք, եւ թէ ըստ արդեաց ոմանց ոչ գիցին այնպիսի անցք, այլ՝ լոկ 'ի գոլորշեաց ելլոց յերկրաց ծովու եւ յամպացելոց՝ եկաւորութ̄ անձրեւաց անպակաս մնասցեն լինք եւ բղխմունք աղբերաց եւ գետոց, ըստ երկուց կարծեաց իսկ (սակս՝) ծովն է աղբիւր աղբերաց եւ գետոց. կամ է շտեմարան աղբերականց, յորոց բղխեն գետք. որպէս եւ գետք անդրէն հասեն 'ի ծով անդր:

Պրոտէոս՝ որ եւ պրովտէս կամ պռոտեւս, ըստ (106)
յն. Πρωτεύς, որդի անուանեալ ովկիանոսի՝ ըստ առասպելաց, համարիւր մի 'ի չաստոց ծովու՝ արածօղ ծովային որթուց. էր սակն գուշակ ապագայից, այլ չասայր սոյգ պատգամ, եթէ չլինէր կապեալ եւ ստիպեալ բռնութ̄. բայց դժուարին էր ունել զնա. զի ոչ միայն երագ փախչէր, այլեւ կերպարանափոխութ̄ անյայտացուցանէր զանձն՝ այլափոխեալ ըստ հաճոյս յայլ եւ այլ կերպարանս մարդկան եւ անասնոց, ընչաւորաց եւ անշունչ առարկաց. զորմէ բազում են բանք առասպելարկուաց. եւ են՝ որք կարծեն զնա նոյն լինել ը̄ Նախաստեղեալ վերանամնոսի: Այլ ըստ Դիոդորոսի Սիկիլիացւոյ՝ պռոտեւս էր մի 'ի թագաւորացն եգիպտացւոց, որ եմոյծ սովորութիւն՝ կրել յառաջոյ կողմն թագի կմ̄ սաղաւարտի ազգի ազգի զարդս փոփոխելով. զի երբեմն առիւծաձեւ ունէր զայս նշան, եւ երբեմն վիշապաձեւ. է՝ զի սաղարթազարդ կամ փետրաւոր, եւ է՝ զի հրակերպ կամ բոցաւորեւ, առ ահաւոր եւ փառացի երեւելոյ յաչս տեսողաց: Իսկ զի սա ը̄ արձակեաց զօրութի իւր ը̄ ծովակողմն, վէս եւ իշխան ծովու կմ̄ չած ծովային համարեցաւ: Յիշէ զսա Նոննոս՝ յասելն, թէ յորժամ երկրորդ որդիք նորա Մողոն եւ Տեղագունոս յաւաղակութե̄ ըմբռնեալ սպանան 'ի Հերակլեայ, *Սգացեալ պրոտէոս վասն սպանման

'' զա-

,, զաւակացն Խուրոյ՝ ընկեաց զանձն Խուր 'ի ծով.
,, զոր անմահացուցին ածքն ողորմելով նմա. և
,, եղեալ դև ծովային՝ եկն բնակեցաւ 'ի փարոս
,, կղզոջ ... այլ առի զպրովտեայ կերպափոխիլ
,, առ հանդիպելայն՝ պէսպէս, բայց 'ի սպիտա-
,, կէ||: Եւ դարձեալ այլուր գրէ զնմանէ, թէ
,, լինէր փոխակերպեալ առ մերձաւորսն, զի մի
,, հայցեսցի գիւթութիւնս աւել և նախագիտու-
,, թիս||. և յանուն սորա փարոս կղզին կոչեցա-
ւաէ պրովտեան կղզի. իսկ ինքն էր թրակացի:
Այլ զոր ասէ թէոսուրոս վն̃ յաջորդին դարեհի՝
իմանայ զքսերքսես առաջին զարքայն պարսից.
ոմ̃ և յայտ է. նմին իրի և 'ի ստորև բացարձակ
ծանուցանէ՝ թէ յիշեցաք վերադոյն զքսերքսես:
Արդ՝ կոչէ զնա յաջորդ ատելութե̃ դարեհի. զի
դարեհ թշնամութե̃ մեծ ունէր ը̅ յոյնս. և պատ-
րաստեալ էր եկանել ընդդէմ նց̃ 'ի պտ̃րզմ. այլ
իբրև եհաս նմա վախճան, յաջորդ նորին քսերք-
սէս 'ի գործ եդ զայս պտ̃րզմ՝ աշխարհագումար
ամբոխիւ զօրաց ընդ ծով և ը̅ ցամաք. ձգեաց և
նաւակամուրջ 'ի վերայ ծովուն հելլեսպոնտեայ, և
անցոյց զզօրս: Եւ եղև իբրև 'ի պարտութե̃ մա-
նեցաւ յերեսաց յունաց, առ զայրոյթ սրտի կա-
մելով վրէժ առնուլ 'ի ջ̃րյն ծովու 'ի պրոտէոսէ՝
վն̃ չյաջողելոյ նորա զծովային պտ̃րզմ մեծ, ընկէց
'ի ծով ոմանակապս՝ որպէս թէ կապել զջ̃րծն 'ի
շղթայս, կամ ծառայեցուցանել զծով, թեպէտ և
ունկն արար զոմանակապսն՝ 'ի պատիւ ջ̃րյն: Յիշէ
զայս և արրիանոս 'ի Է. Գիրս արշաւանացն աղեք-
սանդրի մակեդոնացւոյ, յասելն. ° Ոմանք ասա-
,, ցին, թէ աղեքսանդր հրամայեալ իջէ քանդել
,, զմեհեան ասկղեպիոսի ([illegible]) որ յեկ-
,, բատան, ([illegible]
,, [illegible]). բայց և այս գործ է բարբարո-
,, սական, և ոչ իւիք յանկաւոր աղեքսանդրի.
,, այլ յաւէտ 'ի դէպ գայ ամպարշտութեն քսերք-
,, սեայ առ դիս, և ոմանակապից նորա՝ զօրս ըն-
,, կէց նա աւեն 'ի հելլեսպոնտոս առ 'ի վրէժ
,, խնդրելոյ ([illegible])||: Եւ սեննքա ասէ 'ի

Գիրսն

[illegible]. * Ձեւոյդ
,, Թուխ քեզ, յորժամ խակամիտ արքայն ([illegible]
,, [illegible]) բազմութք նետից սուսերացոյց զլսա
,, տանջեան, մինչ գծեալ ինչ նետ՝ արեան. և
,, կամ յարկանել նի շղթայս 'ի խորս ծովու, կա.
,, րող ինչ եղև արկել զպոռիգոն), որ է գլխա.
ւորն 'ի ծովային գիս:

Հեսպերեան պարտէզ, կամ պարտէզ եսպե.(107)
րիդեայց է այն՝ զոր յիշէ խորենացին յաշխարհա.
գրութեն իւրում, և կոչէ *երեկորեական պար.
,, տէզն ||. զի [illegible] յունարէն [illegible] լսի: Այս
տեղի ը աստապելոց եառ. զանուն յերից օրիոր.
դաց, որք անուանէին եգղէ, արեթուսա, և ի.
պերթուսա կամ եսպերեթուսա, դստերք եսպե.
րայ (ը երեկոյի) և նիւկտեայ (ը գիշերոյ): Իբր
սոցա ասէն դրախտ զուարճալի յափրիկէ, ուր
կային ծառատունկք ոսկեպտուղք. կամ որոյ
ծառքն բերէին ոսկի խնձորս. և զի մի ոք մերձ
լիցի 'ի պտուղ ծառոյն այնոցիկ, կարգեալ էր 'ի
պահպանութիւն դրախտին վիշապ օձ մի աչագին՝
բազմագլխի և բազմաբարբառ, մինչ արթուն ըղ.
տիւ և զգիշեր: Այլ քաջն Հերակլէս եմուտ
ասէն անդր հրամանաւ եւրիսթեայ արքային մի.
կենաց. և սպանեալ զվիշապն՝ եբեր զոսկի խըն.
ձորս առ արքայ: Ոմանք եւս ասեն, թէ որովհե.
տև յունական բառս [illegible], որ է խնձոր, նշանա.
կէ երբեմն և խաշինս կամ ոչխարս, փոխանակ ասե.
լոյ՝ թէ Հերակլէս յափրիկոյ եբեր 'ի յունաստան
զխաշինս՝ որք ունէին ասր ծիրանեգոյն, առասպե.
լեալ՝ թէ ոսկի խնձորս իցէ բերեալ: Իսկ
այլք այլ և այլ օրինակաւ մեկնաբանեն զայս ա.
մենայն. ոմն և ոմանք կարծեն ինչ ինչ խառնեալ
յայսոսիկ և 'ի պատմութեց դրախտին ադենայ:

Պոմոնա կամ [illegible], ոմն վերադրութ. յիշատակե.(108)
ցաւ, ծագել 'ի լատին բառէս [illegible], այն է խն.
ձոր կամ պտուղ, էր անուն միոյ յառասպելեալ
յաւերժահարսանց, որ համարիւր իբրև չաստուհի
պտղոց՝ իշխել պտղաբեր ծառոց. որոյ և մեհեանն
կայր 'ի հռոմ. և քուրմ նորա ըստ ժամանակին

զոհէր նմա՝ զի տայէ պտղաբերութիւն երկրի. արձան նորա գրօշեալ լինէր իբրև կին նստեալ 'ի վերայ պտղալից կողովոյ՝ ունելով 'ի ձեռին պտուղս և սոսս 'ի ծառոց ։

Նոյնպէս և փլորա՝ կմ Φλῶρα, ծագեալ 'ի բառէս Flos, որ է ծաղիկ, համարիւր չաստուհի ծաղկանց. այլ ըստ հելլենացւոց կոչիւր Χλωρίς, որ թարգմանի կանաչ, և համարիւր իշխել դալարւոյ կամ ամ բուսոց ։ Սորա ևս գոյր առանձին մեհեան 'ի Հռովմ, և գրօշեալ լինէր իբրև կին ծաղկապսակ՝ ունելով 'ի ձեռին անօթ ծաղկալից ։ Այլ բազում են զնմէ բանք առասպելաբանից. և մեծ էր հանդէսն՝ զոր առնէին հեթանոսք 'ի տօնի նորա անհամեստ սովորութեամբ ։

(109) Պաշտպանեալ չաստուածն սորայնոց կամ սանդարապետան, որ և միանգամայն համարիւր չաստուած ճոխութեանց, կրկնակի անուն ունէր առ հելլենացիս. մի՝ Ադէս կամ ᾅδης, որ թարգմանի գժոխք կամ գժոխական. զոր լատինք կոչեն Orcus. և միւս ևս պղուտոն կամ Πλούτων, այն է մեծատուն կմ ճոխ. ոմ և առ լատինս կոչիւր Dis, իբր արմատ բառիս Dives, այսինքն ճոխունք. իբր զի ինչք և գանձք ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց 'ի սորայնոց ելանեն. այս է 'ի ներքին ընդերաց հողոյ. յոր միտ և առ սորիս մամմօնա կամ մամոնայ կոչիւր չաստուածն ընչից, և ինչքն ։ Իւր էր մականուն այսր դից ագեղայոս կամ Ἀγέλαστος, իմ՝ անծաղր. զի սորին երկրի կմ գժոխք անհամամ են յամ ծաղուց և յուրախութեանց ։ Նկարէին զսա այր խոժոռադէմ՝ նստեալ 'ի կառս լծեալս 'ի չորից սեաւ երիվարաց, ունելով 'ի ձեռին երկաժանի և փականս գժոխոց. և էին արօտք երիվարաց նորա մարմինք մարդկան՝ որք թաղէին 'ի ծոց երկրի ։ 'Ի կարգի դից համարիւր, այլ ատելի էր ամենայն. ոչ կանգնէին ուրոյն տաճար կմ բագին յանուն նորա. և ոչ երգ ինչ յօրինէին 'ի պատիւ նորա. և թէ ուրեք երբեք զոհէին նմ, միայն սեաւ անասունս կամ ցուլս մատուցանէին. և զամ ձախող պատահարս և դժբախտ գուշակու.

կուռս նմա ընծայէին: Ոմանք 'ի վիպասանից ասեն զսա լինել մի յերից ախտամնեանց, որդի կրօնոսի և եղբայր արամազդայ և պոսիդոնի. և եղև սա 'ի բաժանիլ թգ̃րութն հօր իւրեանց՝ երկինք վիճակեցաւ արամազդայ, ծով՝ պոսիդոնի (որ և կոչի պոսիդոն չած ծովու). և ստորինք երկրի՝ պղուտոնի. զի նա էր կրտսեր. Գ̃ է՝ ասեն, առաջինն տիրեաց արեւելեան կողմանց տ̃րութն հօր իւրեանց՝ թագաւորեալ 'ի կրետէ. երկրորդն տիրեաց կղզեաց՝ թգ̃ւորեալ 'ի պելոպոնէսոս. և երրորդն տիրեաց ստորին գաւառաց յարեւմտակողմն՝ թգ̃ւորեալ յեսպանիա. Ո՛ր և իցէ. այլ և այլ արձանք պղուտոնի կային յաթէնս. և անուն նորա առաւել առ աթենացիս էր ծանուցեալ: Բայց են ոմանք՝ որք երկու պղուտոնս առաջեն. և զայլ և այլ անուանս նր̃ պէսպէս մեկնաբանեն: Անուն սորա 'ի գիրս խորենացւոյն. Բ. 62. կոչի պղատոնէոս կամ պղէտոնիոս. զորմէ տես 'ի բառարանի. և 'ի թարգմանութե բանից նոննոսի գրի միշտ պղատոն. փխն գրելոյ պղուտոն:

Փարրիկիոս լուսկինոս՝ էր ազնուական ոմն հռով-(110) մայեցի, որդի մեծատան. այլ ինքն աղքատ կեցի, զի էր այր անպաճոյճ գլխովին՝ և աղքատութե սիրող. որ ոչ թողոյր վարել 'ի տան անօթս ոսկեղէնս և արծաթեղէնս՝ բայց 'ի քանի մի սպասուց 'ի պաշտօն գից իւրոց. այլ պատուանդան նոյին եա եղջերեայ կազմեալ: Եղև հիւպատոս իբր 280 ամօք յառաջ քան զՔն̃: Գնացեալ դեսպանութբ առ պիւռոս արքայ՝ պատուեցաւ 'ի նմէ. և 'ի տալ նմ̃ արքային ինչս բազումս և պարգևս մեծամեծս՝ չէառ ինչ բնաւին: Եղեալ 'ի պտ̃րազմ ընդդէմ սամնիտացւոց և ընդդէմ պիւռոսի՝ վանեաց նուաճեաց զնս̃. և զբժիշկն պիւռոսի, որ խոստանայր փարրիկեայ դաւել զարքայ մահացուցանել, կապեալ առաքեաց 'ի ձեռս տն̃ իւրոյ: Իսկ սամնիտացիք իբրև անկան ը̃ ծառայութբ փարրիկիոսի, առաքեցին նմա ընծայս՝ տասն տաղանդս ոսկւոյ, և հնգետասան տաղանդս ար-

ծաւթոյ, հանդերձ հնդեստանն ծառայիւք 'ի ըս-
պաս ՆՐ. այլ նա զամն յետս դարձոյց՝ ասելով. եթէ միոյ միոյ 'ի հռովմայեցւոց բերէիք զոյնչափ. ընդունէի և ես. այլ ինձ միայնոյ և ոչ դանկ մի առնում: Իբրև կարգեցաւ փաբրիկիոս քննիչ կամ դատաւոր ժողովրդեան, փոյթ կալաւ՝ զի յամենին պահեսցի չափաւորութիւն, և մի որք արասցէ աւելորդ ծախս 'ի պէտս շքոյ. սմին իրի և մերժեաց 'ի դասէ սենեկլիտոսաց զհռուփինոս հիւպատոս՝ զայրն երևելի, զի չինել առեալ էր նորա անօթ մի արծաթի 'ի տասն տաղանդոյ: 'ի փոխանակի՝ իբրև մեռաւ, այնչափ անինչ գտաւ, մինչև առ ամուսնացուցանելոյ զդստերս նորա՝ հարկ եղև ծերակուտին 'ի հասարակաց արկեղէ պատրաստել զօժիտս ՆՑ:

(111) Սա ինքն է ապեղէս անուանի նկարիչն՝ յաւուրս աղեքսանդրի մեծի, յիշատակեալն 'ի մէնջ 'ի համարն. (11): Յորում ժամի էր և արկեսիղայոս փիլիսոփայ 'ի պիտանայ՝ առաջնորդ աղանդոյն իմաստասիրաց երկրորդ ակադեմեան կոչեցելոյ, որք զամ ինչ անստոյգ ասէին լինել, և անհնար համարէին որոշել զստոյգն 'ի ստոյ: Սա ինքն արկեսիղայոս էր այր քաղցրաբարոյ, բարեկամասէր և առատաձեռն. ոպ̄ և ընդ խաղս եցոյց ապեղեսի զառատաձեռնութիւն իւր՝ հնարիւք իմն դնելով ը̄ սնարիւք ՆՐ քսակ մի ոսկւով: Էր նաև գրասէր յոյժ. մինչև ասել, թէ յորժամ ընթեռնում զգրուածս երևելի արանց, և մանաւանդ զհոմերոսին, այնչափ քաղցրանամ, ոպ̄ թէ ը̄ սիրելի ումեք բարեկամի խօսակից լինէի անյագ սիրով:

Զառաջիկայ գործ արկեսիղայոսի 'ի մէջ բերէ սենեկա 'ի Է. Գիր. յղ. Բարերարութեանց. զի յետ ասելոյ՝ թէ " երբեմն պարտ է և զնա պատրել ո-
,, րում նպաստեմք. զի ունիցի՝ զոր խնդրէ, և
,, ոչ՝ յումմէ առնու՝ գիտասցէ ||. յարէ 'ի Գլ. Ժ.
" Արկեսիղայոս՝ ոպ̄ ասեն, 'ի տես երթեալ բա-
,, րեկամի իւրոյ աղքատի, որ առ ամօթոյ ծած-
,, կէր զիւր աղքատութի, և 'ի հիւանդութեան
,, խոկ

„ իսկ չիշխէր ասել զհքաւորուն անձին 'ի պէտս
„ կարևորս, բարուք հմրելով լաւիկ նմին նպաս-
„ տել՝ զանխուլ սպրդեցոյց զքսակն ընդ սնարս
„ նր. առ զի այրն առաւօտեալ՝ որ 'ի զուր ամա-
„ չէր, յաւէտ գտցէ՝ քան թէ տացէ՝ որում կա-
„ րօտէր||: Այսպ 'ի մ՟ր բերէ. "Եւ չէ ինչ, թէ
„ անգէտ լիցի՝ որ էառն, թէ յումմէ էառ. նախ՝
„ զի և այդ իսկ գործ է երախտեաց ([illegible]
„ [illegible])... և միւս ևս, թող՝ չգիտասցէ նա,
„ թէ էառ, շատ է այն՝ զի ես գիտեմ զոր եառ...
„ Պարտ է շատանալ անձին վկայութը. ապա թէ
„ ոչ՝ յայտ առնես, թէ ոչ բարերարել, այլ՝ բա-
„ րերար երևիլ խնդրես||:

Փիլոկտետես որդի պէասայ էր մին յարգոնա-(112)
ւորդաց՝ մտերիմ բարեկամ քաջին հերակլեայ:
Արդ՝ առ յառասպելս, թէ հերակլես 'ի մեռա-
նիլ իւրում երդմնեցոյց զփիլոկտետես չյայտնել
ումեք զտեղի ոսկերաց իւրոց. և ետ նմա 'ի յի-
շատակ պարգևի զկապարճ իւր. յորում կային
նետք դեղեալք լեղեաւ հիդրայի կամ մխեալք
յարեան նորա: Եւ եղև՝ յորժամ էր պատգամ 'ի
դեղփեանն ապողոնէ առ յոյնս, թէ առ 'ի կարող
լինելոյ կործանել զտրոյա՝ պէտք են նետից հե-
րակլեայ, եկեալ յունաց հարցանէին զփիլոկտե-
տես. ո՞ւր թաղեցաւ հերակլես, և ո՞ւր իցէ կա-
պարճ նորա: Իսկ նա թէպէտև յօժարէր լնուլ
զխնդիր նց, բայց վն երդմանն չկամեցաւ բերա-
նով ասել զտեղի գերեզմանին՝ այլ ժխտել՝ թէ
ոչ գիտեմ, եհար միով ոտամբ զգետինն՝ յորում
էին ոսկերք հերակլեայ: Եւ վն կապարճին խոս-
տովան եղև՝ թէ առ իւ է. այլ չկարէ ոք առ-
ձգել զնետս նր՝ բաց յինէն. վն առեալ յունաց
զփիլոկտետես՝ կամէին տանել 'ի տրոյիա: Այլ
յանցանել նց ը՟ լիմնոս կղզի՝ իբրև փորձել կա-
մեցաւ փիլոկտետես զնետաձգութն իւր, առ ան-
վարժութն նր առհեալ նետին խոցեաց զոտս նր,
որով ցուցեալ էր զգերեզման հերակլեայ. և ան-
կեալ հիւանդագին՝ չկարաց գնալ յն դէմ եղեալն
էր. մինչև զկնի ժմկաց եկեալ ոդիսեայ՝ տարաւ
զնա:

զնա։ Եւ յետ առման Տրոյիոյ եանց ասեն Փի-լոկտետէս յարեւմուտս. և եկեալ 'ի Կաղաբրիա՝ շինեաց զՊետիլիա։ Բայց ըստ Հոմերոսի՝ ոչ եթէ 'ի նետէ խոցեցաւ Փիլոկտետէս, այլ 'ի թունա-ւոր զեռնոյ, կամ 'ի հիդրայէ միոջէ, որ 'ի ջրային օձէ։

(113) Սա ինքն է Կրատէս Թեբայեցի որ 'ի Թեբայ քա-ղաքէ Բիովտիոյ գաւառին Յունաստանի, որդի Ասկոնդեայ, և աշակերտ Դիոգինեայ, փիլիսո-փայ նշանաւոր. որ զամ ինչս իւր ընկէց ասեն 'ի ծով առ ազատորէն բերել յիմաստասիրութիւն։ Այլք ասեն՝ թէ եդ զգոյս իւր 'ի ձեռս աւան-դապահի ուրումն կամ սեղանաւորի, այսու դա-շամբ՝ զի եթէ որդիք իւր անիմաստ գտանիցին, դարձուսցէ զնոսա 'ի ձեռս նոցա. ապա թէ իմաս-տունք լինիցին՝ քեզ լիցի ասէ նմին. զի եթէ ի-մաստասէրք գտանիցին նոքա, ոչ ինչ պիտոյ են նոցա ինչք։ Իսկ Նոննոս այսպէս պատմէ զիրսն. "Կրատէս Թեբայեցի՝ էր բիովտացի ազգաւ. ,, սա կամեցեալ իմաստասիրել ըստ նշանակի ի-,, մաստասիրութեն, առեալ զգոյս իւր՝ ընկէց 'ի ,, հանդէսն, բողոքելով այսպէս. Կրատէս արձա-,, կեմ զոր ինչ Կրատեսին էն, զի մի յաղթեսցեն ,, Կրատեսի գոյքս Կրատեսի. և թողացոյց ըղ-,, վայրս իւր՝ լինել միլօբոտաց. և միլօբոտ է ,, վայրին ուր արձակեալ լինին ոչխարքն 'ի ճա-,, րակս. քանզի մելօ ոչխարն է ասացեալ Հոմե-,, րոս. աստուստ և միլոճարակք են հովիւք. և ,, միլօտ է մօրթ ոչխարին ||։ Զայս յետին բանքս՝ որք հային առ բոտս Թէօ, յայն ասկս օրինակե-ցաք աստ, զի օգտեն առ իմաստ ասացելոցս 'ի համարն. (107)։ Այս և այլ ոմն Կրատէս անուն փիլիսոփայ ակադեմեան. որոյ աշակերտ եղև ա-սեն Արկեսիղայոս, զոր փոքր մի յառաջ յիշեցաք։ Իսկ մեծն Քսերքսեայ՝ թէ զիարդ ստնակալ ոսկի ընկէց 'ի ծով, ասացաւ 'ի համարն. (106)։

(114) Իմաստ բանին կախեալ է զատուցարանութենէ անուանն գինոյ. զի գինի ըստ խալդացւոց սախ [illegible]. իսկ [illegible]՝ նշանակէ [illegible]։ Նոյնպէս է և 'ի

լա.

լատինս, զի զգիրս ('ի սեռական հոլովի) կոչեն ՃԵՐՈՒՆՏԻՈ. և ՅՈՒՎԱՆՏԻ է՝ օգնել։ Նոյնին մասը մեկնարանեն և զանունս ՃԵՐՈՒՆՏԻՎԻ՝ ընծայական գրոսի (յուղղականն), զի է առեն ՅՈՒՎԱՆՏՈՒՍ ՃԵՐՈՒՆՏԻՎՈՒՍ, այն է՝ օգնող հայց. որք և զներս զկին գրոսի՝ որ և էրս կամ իւայ. անուանեն ՅՈՒՎԱՆՏՈ. և խոտալեցիք ՃԵՐՈՒՆՏԻՈ. որ և համարի չէծուհի օգնականութեն ներելոյ 'ի մարտի. կամ յաղթութեց պատերազմի, եւս և Ճախուեց և պարգևաց։ Արդ՝ մեզ հարկ եղև պահել զատուգարանուն հեղինակին. զի մի հարկեացուք նոր ինչ ստուգաբանութ հնարել ըստ հայումս. զոր օրինակ, թէ գիրս գիրէ զպարգևս, կմ գիւցուցանէ զկարօտեալս. թէպէտև քաջ յարմարեր անգուոյն։ Թող զայն զի և անունս գիրս փոխառեալ է 'ի լատինականեն. զի առ յոյնս գիրոն անուանի ՂԻՄԱ կմ ՓԵՐՈ. որոյ սեռականն լինի ՓԵՐԱ. որ 'ի մեզ փոխի ուղղականի վարի։ Իսկ ըստ հասարակ գործածութ՝ որ 'ի գիրս նախնեաց, կոչի նոյնն ԱՈՐԻՍՏ. այն է՝ որ ըստ պարականին գրի երբեմն ԱՈՐԻՍՏ կամ ԱՈՐԻՍՏ։ Սա ինքն է ներբովք հակոյն ըստ գրելոյ յոհաննու իմաստասիրի 'ի Ճառն ըստ գեմ պօղիկեանց. քանզի ասէ. * Ըստ այսմ օրինակի
„ քաղդէացւոցն առեալ զախտաննեանն զայն միթ-
„ խարի և աշխոյժ... զգերամբարձեալն մարմնոյն
„ տրամադրութե՝ ածօրէն իմն պատուով պատ-
„ ուեցին. և սորա խաւար չարապաշտութեն ըզ-
„ բոլոր ախեղերս ըստ իւրև կալեալ կուրացոյց՝ ըստ
„ իւրաքանչիւր լեզուաց այլաձևելով զնորա զա-
„ նուն. քուշացիք ներբովք կոչելով. բաբելա-
„ ցիք բէլ. փղշտացիք բահաղ. եգիպտացիք գիոս.
„ պարսիկք որմըզդ. հայք արամազդ||: Իսկ կիկերոն բազում գիասս կմ արամազդս 'ի թիւ արկեալ 'ի ԳԻՐՍ ՅՂ. ԲՆԱԿ ՏԱԾՈՑ, ասէ. Գ. 16. * Հին-
„ գերորդ (ՏԻՈՍ) 'ի հնդիկս, որ բէլ անուանի||.
իբր զի ըստ թուոյ քաջազանց կամ հսկայից՝ որք անուն առացան յայլ և այլ ժամս և 'ի տեղիս, բազմացան և դիւցազունք՝ գիոս կամ արամազդ անուամբ. յոր միս ասէ և խորենացին. Ա. 30.
* Բայց ըստ դիւցազնութեն կարծեաց հաւասարի

„ է

,, Է և աստեղս մեր, ոչ արամազդ որք, այլ՝ 'ի կա-
,, մեցօղսն լինել արամազդ, չորից եւ այլոց ան-
,, ուանեցելոց արամազդ. յորոց մի է և կունդ
,, ամն արամազդ॥ :

(115) Մեկենաս կիլնիոս՝ էր 'ի զարմէ նախնի Թագաւորացն տոսկանայ, այր ձոխ և զգօնամիտ, սիրեցեալ յոյժ յաչս օգոստոսի կայսեր՝ և երևելի 'ի տան նորա 'ի կարգէ ներքին խորհրդականաց : Սա եղև ամն խնամածու և պաշտպան գիտնաւորաց՝ ուսումնասիրաց և բանաստեղծից, և առաւել եւս՝ վիրգիլիոսի և ովրատիոսի. զորս ընկալաւ 'ի սերտ բարեկամութիւն իւր. և 'ի նշէ ընկալաւ տալս յօրինեալս յանուն իւր: Նա զի առատաձեռնէր առ գրասիրաց ինչս բազումս և պարգևս մեծամեծս, և յորդորէր 'ի պիտանի գըրուխս, այսպիսի գործ սորա եղև յիշատակ մեծ առ հանդերձեալս, մինչև այնուհետև զերևելի սատարիչս ուսումնականաց՝ մեկենաս անուանել: Նա ինքն խոկ մեկենաս էր այր գրագէտ. որ և յօրինեաց սակս քանի մի գրուածս. այլ չերևին այժմ 'ի միջի: Շատ է այն, զի մնաց անուն նր գովութե 'ի գործս այլոց՝ որոց նա եղև սատար 'ի գրել:

(116) Անունս ՏԻԲԵՐԻՈՍ յոմանց ստուգաբանի անագորոյն կամ խիստ, համեմատ 'ի յունական բառս ՀԻՒԲՐԻՍ, որ է անխրատութիւն, հարստահարութիւն, ամբարտաւանութիւն, Թշնամանք, խստութիւն, եւն: Այլ Թէ միտ Թեւաւրոսի առ այսպիսի ստուգաբանութե հայի արդեօք, և կմ առ սովորական բարս տիբերեայ կայսեր, չէ յայտ:

(117) Գետ լիւգիոյ խմն զպակտոլոս անուն գետ 'ի լիւգացւոց աշխարհի, որ անցանէր առ սարդիս քաղաքաւ կամ ը մէջ քաղաքին. իսկ լեառն միդայ կոչեցեալ՝ Թերևս յանուն ոսկեմոլ արքային միդասայ, յայլոց կոչի տմոլգոս լեառն լիւգացւոց: Արդ որ գրէ հերոդոտոս 'ի Ե. ԳԻՐՔ. Հատուր. 144: 'ի լեռնէ տմոլ իջանէ ոսկի բազում 'ի գետ անդր. նմին իրի և 'ի յատակս նր է աւազ ոսկեխառն, կամ ոսկի աւազ. զոր ժողովեն

բառ

ըստ մասին բնակիչք երկրին. այլ բազում մասամբ եւ վարի ոսկին 'ի հոսանաց ջուրց 'ի տմոլղոս գետոյ 'ի հերմոս գետ, որ անկանի 'ի ծով: Իբր գործեալ նոյն հեղինակ ասէ 'ի Ա. Գիր. Հատոր. 18. Թէ լիւդիա ոչ ինչ այլ ունի արժանի յիշատակի՝ բայց 'ի հատուածոյ ոսկւոյ, որ իջանեն 'ի տմոլղոս լեռնէ: Բանաստեղծք զտմոլղոս կոչեն լեառն քրքմաւէտ, եւ զպակտոլոս՝ ոսկեբեր գետ լիւդիական:

Իսկ լերինք արիմասպեաց առին զանուն յարիմասպեանց, որք են ազգ ինչ սկիւթացւոց 'ի հիւսիսակողմն եւրոպիոյ, կամ սարմատացիք արեւմտեանք 'ի սահմանս մոսկովաց, որք աղեղնաւորք. կարծեցեալքն միականիք կամ ճակատակնեայք՝ վասն խփանելոյ զմի ակն 'ի նետաձգութեան առ ուղիղ դիտողութիւն նպատակի. քանզի ասեն արի կամ արիմա նշանակէ 'ի բարբառ սկիւթացւոց՝ մի, եւ մասբոս կամ սպոս, ակն կամ աչք: Արդ՝ ըստ աւանդէ հերոդոտոս 'ի Գ. եւ 'ի Դ. Գիրս, եւ պլինիոս 'ի Է. եւ 'ի ԼԳ. Գիրսն, որք ասեն կռուէին ընդ մրջիմաւրիւծ գազանս 'ի պատճառս հանքաց ոսկւոյ. զի մրջիմաւրիւծքն փորեալ զմետաղս՝ հանէին գիզէին զոսկին 'ի բացի, եւ պահէին զգուշութ. իսկ արիմասպեանք 'ի վր հասեալ 'ի տօթաժամու՝ յորում գազանքն յորջս իւրեանց դնային, առնուին զոսկին եւ երագոտն ուղտուք 'ի փախուստ դառնային. այլ սակայն շատ եւս այն էր՝ զի գազանքն զհոտ առեալ եկաւորութե նց, կատաղաբար յարձակէին զկնի, եւ գեշագէշ պատառեալ զարսն հանդերձ ուղտուքն, անդրէն յետս դարձուցանէին զոսկին, բնաւոր իմն սիրով մելեալ զհետ ոսկւոյն. այլ զայս ամենայն ը̅ առասպելս դասեն:

Եպամինոնդ այր իմաստուն՝ եւ քաջ զօրավար Թե- (118)
բայեցւոց. զոր յիշեցաք 'ի համարն (77), յետ
բազմապատիկ երախտեաց՝ զոր եցոյց առ հայրե-
նիս իւր, որով եւ սիրելի գտաւ յոյժ յաչս ամն,
մեռաւ իբր անինչ. զի էր ատեցող ընչից, եւ ոչ
ինչ փոյթ տանէր ժողովելոյ զգանձս՝ կամ փառ-

Թա-

Թամացուցանելոյ զիւրան. վասն և գանձ սորա կոչի լի բարեկամօք. այլ Թափուր յընչից: Իսկ պատանիաս էր երևելի զօրավար Լակեդեմոնացւոց, որ քաջութբ վանեալ զզօրս Քսերքսեայ արքային պարսից՝ ոչ միայն անուն մեծ ստացաւ, այլ և լցաւ փարթամութբ ընչից. այլ յետոյ դաւաճան գտեալ առ հայրենիս իւր՝ բանս եդ ընդ Քսերքսեայ՝ մատնել 'ի ձեռս նր զքրութի սպարտիոյ. եթէ տացէ ինքեան արքայ զդուստր իւր: Զայս իմացեալ իւրայոց՝ սպանին զնա. և այսպէս՝ Թեպէա և հարուստ մեռաւ. այլ առեալ հայրենեաց իւրոց. ամն իրի և գանձ նորա կոչի լի դրամօք՝ Թափուր 'ի բարեկամաց: Կայր և այլ ոմն պատանիաս Մակեդոնացի, որ սպան զփիլիպպոս արքայ, և յորդւոյ նր յաղեքսանդրէ մեծէ 'ի փայտի բևեռեցաւ. իսկ Ողիմպիաս արքայ եպիրոսայ գործակից մահուն փիլիպպեայ՝ եկեալ սաութ 'ի լալ զփիլիպպոս, գիշերայն Թագ ոսկի եդ 'ի գլուխ պատանեայ կախելոյն զփայտէ: Բայց բան Թեսաւրոսի առ առաջինն հայի:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՅԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԼԽՈՅ:

(119) Հռոդովպէ կին Թրակացի՝ էր ծառայակից եսովպոսի, ի աղախին նորին ամն՝ որում ծառայ լեալ էր եսովպոս առասպելաբանն. եղև նմին և գերեկից՝ 'ի միասին վարեալ 'ի գերութի. այլ իբրև զերծաւ հռոդովպէ 'ի գերութե առեալ զանձն 'ի գործս անարժանս, ժողովեաց չարեօք իւրովք գանձ բազում. մինչև կարօղ եղև շինել զմեծ ամբարտակ մի յեգիպտոս՝ առաւել չքեղ քան զամ բրգունս Թէքրայն եգիպտացւոց. մանաւանդ Թէ ըն ասելոյ ոմանց՝ եղև և Թագուհի եգիպտացւոց. լեալ կին պսամմետիքոսի արքայի: Բայց 'են՝ որք ասեն զայս ամ. և զմեծ ամբարտակն զայն՝ որ համարեցաւ մի յեօԹն սքանչելեաց աշխարհի, ընծայեն միկերինոսի արքային եգիպտացւոց: Թեսաւրոս զհետ երԹայ բանից պլինիոսի, որ 'ի լզ. գիրս. գլ. 12:

Զա.

Ստացուածն տիտոսի այլք այսպէս յիշա-(120)
տակեն. տիտոս որդի վեսպասիանոսի էր այնչափ բարի, մինչ զի թէ յիշէր 'ի սեղանի ընթրեաց ոչ ումեք յայնմ աւուր բարի ինչ արարեալ, ասէր. սի-
րելիք՝ զօրս զայս կորուսի։

Եօթն սքանչելիք տիեզերաց կամ եօթն հրաշք(121)
աշխարհի անուանեցան 'ի հնախօսից եօթնեակ հոյակապ կերտուածք կամ ամբարտակք՝ մեծա-կառոյց և ահաւոր տեսլեամբ յայլ և այլ տեղիս։ Արդ՝ թէպէտ թիւ եօթանցն ամբողջ պահի 'ի վիպասանից, այլ՝ ոմանք զայս և ոմանք զայն ինչ երևելի շինուած յայն թիւ մուծանեն։ Քանզի բազումք եօթներորդ դնեն զբուրաստանսն կախաղանեայ անուանեալս՝ որ 'ի բաբելոն, բարձրացեալ յօդս իբրև վերնայարկ ինչ՝ սեամբք կալեալ 'ի չորից կողմանց. յորում կային և ծառատունկք և ջրմուղք։ Յիշէ զայս եւսեբիոս յառաջին գիրս Ժամագրութե. ուր յետ յառաջ բերելոյ զբանս աբիւդենեայ. թէ զխորդ նաբուգոդոնոսոր՝ "զարքունիս մատաղատունկ անկոյք
„ ծառոց զարդարեաց, և անուն կոչեաց կախա-
„ ղանաբուրաստանս ||, յարէ. "Եւ մի ըստ մի-
„ ջէ մեկնութիւն ընծայեցուցանէ ([illegible])
„ անուանելոյ կախաղանաւոր բուրաստանին. զոր
„ ասէ և յոյնք յանուանելոց յեօթն չքնաղ հրա-
„ շակերտից համարին ||։ Այլք յաւէտ 'ի նոյն կարգ դասեն զշամիրամայ քարն միապաղաղ՝ բերեալ 'ի լերանց հայոց, և կանգնեալ իբրև կոթող 'ի բաբելոն. որոյ բարձրութիւն ասի ՃԾ ոտնաչափ, և լայնութիւն ԻԴ։ Իսկ այլոց 'ի կարգի եօթն հրաշից դնի կապիտոլեան տաճարն հռովմայ. թէատրոն ինչ 'ի հերակլիա՝ շինեալ 'ի վր գլխոյ անդրւոյ միոյ. մեհեանն քարաշէն 'ի կիզիկոն. եւն. զորոց չէ տեղւոյս գրել։ Շատ լիցին յիշատակեալքն 'ի հեղինակէս՝ հանդերձ համառօտ
բացատրութբ իւրեանց յայլ և այլ տեղիս։

Մարծանքն արեգական վն մի միայն գոլոյն՝ ախորժալուր ձեւանայ յիտալականն վասն մերձաւորութեան ձայնիցս «օլէ և «ոլ». որոց առաջինն է

ա-

ἀρχαῖον, և երկրորդն՝ νέον։

(123) Նմանատեղծք զանազանութեն Ժմկի նմանեցուցա-նեն կանոնի չափ՝ որկորեայ ծերունւոյ․ որ (ը որում ունիմք յիշատակել 'ի համարն․ 158․) ու-տէր զիւր ծնունդս․ խորզի գործք 'ի ժամանակի ե-ղեալք՝ Ժմկաւ ծախին և սպառին։ Արդ՝ կամի ասել Թեոդորոս, թէ գէթ հաստատուն գործս շինեաց մեծագործն, զի Ժմկն մի կարասցէ դիւ-րաւ ծախել և եղծանել զայն, այլ՝ դժուարա-ցի 'ի ծախել․ որ է ասել՝ լիցի գործ հաստա-տենդ և երկարատև։ 'Ի դէպ գայ նմանութիւնն յաւէտ 'ի յունական բարբառ․ զի ըստ յունաց Κρόνος՝ է չաձն կանոնս․ և χρόνος՝ թարգմանի ժամանակ։

Այլ կիկերոն քաջ յարմարէ զայն և 'ի լատին բարբառ՝ վասն կոչելոյ լատինացւոց զկանոնս Σατοῦρνος, որպէս թէ ծագեալ 'ի բայէս σατοῦρο, որ է յագեցուցանել կամ շատացուցանել․ յաւելն 'Ի Բ․ Գիրս․ յղ․ բնութեան աստուծոց․ Գլ․ 24․ և 25․

" Դարձեալ և յայլ պատճառէ՝ այսինքն է 'ի բը-
" նախօսութեէ յառաջ եկին բազմութիւն հոյլք
" ածոց․ որոց զգեցեալ զձև մարդկային՝ նիւթ
" առասպելաց ընծայեցին բանաստեղծից․ և ա-
" մենայն աւելորդապաշտութեամբ լցին զմարդկան
" կենցաղս ... Որ՝ սատուռնոս համարեցան զնա
" լինել, որ զընթացս և զշրջանս ամաց և Ժմկաց
" յանձին կրեաց․ և այս այն ածն է՝ որ և առ
" հելլենացիս զնոյն անուն կրէ․ քանզի կռոնոսդ
" անուն, որ նոյն է ընդ ձայնիս խռոնոս, զչափ
" Ժմկին յայտ առնէ։ Իսկ սատուռնոս կոչեցաւ
" (ա՛ս սատուռնո), զի շատանայ (կամ յագենայ) ա-
" մօք, իբր զի յօգէն բանս զնմէ որպէս թէ սովո-
" րեալ իցէ ուտել զիւր ծնունդս․ մի՛ զի անմա-
" նակն ծախէ զմիջոցս Ժամանակաց, և անյա-
" գաբար յագենայ ամօք անցելովք։ Որ և կա-
" պեցաւ 'ի գիտաէ, զի մի յանչափս երագեսցէ
" ընթացս, այլ՝ կապեալ կայցէ ընդ գիրս աս-
" տեղաց ||։

(124) Լապիթք կամ Լապիթեայք էին ժղովրդք Թեսա-ղիոյ,

զիդ, ի̄ Թեսսաղիայ գաւառի, մօտ յողիմպիոս լեառն և 'ի Լարիսսա քաղաք. առեալ զանուն 'ի Լապիթեայ զաւակէն Ապողոնի: Արդ՝ ը̄ առասպելոց, 'ի ժամի հարսանեաց Պերիթոսի որդւոյ Իքսիոնի արքային Լապիթայ, յարձակեցան կենտաւրոսք՝ ի̄ ձիացուլք. որ և յուշկապարիկք, կոչեալ զհիպպոդամէ հարսն. վ̄ն և գրգռեցաւ պ̄րզմ մեծ ը̄ Լապիթս և ը̄ ձիացուլս, և եղեն բազում հեղմունք արեան. այլ հուսկ յետոյ 'ի պարտութե մատնեցան ձիացուլք յերեսաց քաջին Հերակլի և Թեսեոսի. որք էին գլխաւորք գնդին Լապիթայ: Յիշէ զայս Եւսեբիոս 'ի Քրոնիկոն կանոնի՝ յաւուրս Թովլայ դատաւորին Եբրայեցւոց, այսու օրինակաւ: "Իշացլոց և
„ զապիթայ կռիւ: Իշացուլքն Թեսաղացւոց
„ հեծեալք էին. որպէս պատմէ Պալեփատոս
„ յառաջնումն (հոբէնէ) վասն անհաւատից ||:

Որպէս և Խորենացին 'ի պատմել անդ զկռուին որդւոյ Բագրատունւոյ ընդ Բակրոյ նահապետի Սիւնեաց 'ի պատճառս Նազինեկ անուն կնոջ՝ 'ի վերայ ասղանոյ, ասէ. Է. 60. "Եւ անդ էր
„ տեսանել նոր զամն Օդիսեա զվենապայ սեղեհին
„ սատակելով. և կամ զԼապիթեայցն և զուշկա-
„ պարիկանցն կռիւս 'ի վերայ Պերիթեայ հար-
„ սանեաց ||:

Նիմփարան, ը̄ յն. Նիմֆէոն. Թարգմանի հարս- (125)
նարան, եկեալ 'ի բառէս Նիմֆէ՝ որ է հարսն. այլ յառասպելաբանութեանց զոյգս Նիմփայք կոչին յաւերժահարսունք. որք համարին չաստուածք խըբախութեց, լուացմանց, աղբերականց, գետոց, անտառաց, և ծով զուարճալի տեղեաց. ը̄ նմին և Նիմփարանն կ̄մ հարսնարանն պէսպէս առեալ լինի 'ի բանաստեղծից: Իսկ 'ի մատեանս Հռովմայեցւոց տային զայս անուն՝ երբեմն բաղանեաց կամ ջերմկաց, և երբեմն ջրմղաց կամ ստորերկրեայ անցից ջրոյ. և յաւէտ եւս՝ լուալեաց, ուր հաւաքին աղտեղութիք քաղաքի:

Նամի ասել, թէ յաւուրս յետագայ կայսերաց՝ (126)
'ի բազմանալ կճեայ շինուածոց 'ի Հռոմ. մեհեանն

հեղանն գինւոյ ոչ լոկ կճեայ՝ այլեւ ոսկեայ գլխա-
վին երեւէր. զի հեռաչեռէ զարգարէին զայն եւ
ընտրին փարթամութբ ընծայատուութեք եւ յիշա-
տակք ինքնակալացն հռովմայեցւոց. եւ թէ եր-
բեք մնասիւր 'ի կայծականց կամ յայլոց պատա-
հարաց. կրկին եւս նորոգէին հոյակապ զարդուք.
եւ զի գինս համարիւր չած շանթաւոք. 'ի շան-
թահար լինել մեհենի նորա՝ ասէին ռամիկք. թէ
գինս կամելով զի առաւել հոյակապ նորոգեսցի
տաճար իւր, հրդեհեաց զհենն:

(127) Միդաս էր ընչաւէտ եւ ոսկեւէր արքայ փռիւգիոյ.
որպ եւ յօրինակ բերի փարթամաց եւ արծաթասի-
րաց: Շատ լսելի յոյժ բերել զբանս նոննոսի զնմէ.
( ուր գրի մինդաս՝ այն, զոր առ այլս ընթեռ-
նումք միդաս. որպ եւ յունարէնն է Μιδας ). * Մին-
" դաս այս թիւր էր ( ուրէ ) փռիւգացոցն, եւ
" էր արծաթասէր յոյժ եւ ոսկեմոլ. որպ եւ գործք
" նորա յայտնեն: Արդ՝ ըղձացաւ սա, թէ յոր
" ինչ եւ մերձեսցի՝ ոսկի լինիցի. եւ կատարեցան
" խնդիք սորա, եւ յոր ինչ եւ մերձենայր ձեռամբ
" կամ բերանով, ոսկի լինէր. եւ այնպէս զամ ինչ
" նմա ոսկի էր. այլ ուտել ոչ կարելով մաշ-
" ւամբ կորուսեալ լինէր. զի ուտեալ նմա կե-
" րակուր 'ի ձեռն բերանոյն ոսկիացեալ լինէր.
" որպ եւ ապականեցաւ սովով: Այլ պատմեն
" այլք ոմանք, թէ հրաման առեալ եկեաց. եւ
" հրամանն էր այսպիսի ինչ. վարել զկառսն, եւ
" ուր արգելցին կառքն՝ լինել քաղաք. եւ արար
" այնպէս, եւ շինեաց զանկիւրիոս գաղատացոց.
" քանզի խարիսխ երկաթի գտանաւ ի կառա-
" ցեալ 'ի կառսն արգելլաւ եւ առկայացոյց ըղ-
" մինդաս. եւ այնպէս շինեցաւ քաղաքն. եւ կո-
" չեցաւ անկիւրիոյ, որ թարգմանի խարիսխ ||:
Այլ այս զամ է մոացածին գիւտ բանաստեղ-
ծից. որպ եւ յայտ իսկ է:

(128) Պանթէոն. յն. Πάνθεον, թարգմանի ամենածեան
կամ զամ գից. նմին իրի եւ 'ի թարգմանութն եւ-
սեբեայ գնի ամենաստուածեան Πάνθειον: Այսպէս կոչե-
ցաւ տաճարն շինեալ 'ի մարկոսէ ագրիպպայ
'ի

'ի փեսայէն օգոստոսի կայսեր 'ի հռովմ քաղաքի՝ յանուն ամ ածոց. բոլորաձև կառուցեալ. մի և եթ լուսամուտ ունելով 'ի գագաթան. այն է՝ որ յետոյ 'ի ժմս քրիստոնէութեան սրբեալ նուիրեցաւ 'ի պատիւ ամ սրբց ճշմարտին այ։

Այս յիմարական փառասիրութե սովորական ինչ (129) եղև առ նախնի կայսերս զկնի ոսկերերայ. զի անպիտանք ոմանք 'ի կենդանութեան զանձինս ածացուցանէին. և զայլս երբեմն յետ մահու ծերակոյտն 'ի նոյն պատիւ գրէր. որ յունարէն կոչի ԱՓՈԹԷՕՍԻՍ, իբր աստուածացումն։ Այդ է տեսանել 'ի քրոնիկոնն եւսեբեայ. ուր ասի. " Գայիոս (յա_
,, ՃՈՐՃ ՓԻԲԻՍԻԼԱՅ) զանձն ածացոյց ... սինկղիտի_
,, կոսն վճիռ պատգամաւորութե տալով տեսա
,, (ՋԷՓ ՏՈՀՈՒՆ) ած անուանեցաւ ... սինկղի_
,, տոսն զներոնս (ՋԷՓ ՏՈՀՈՒՆ) ած համարե_
,, ցաւ ... սինկղիտոսն համարեցաւ զադրիանոս
,, (ՀԷՆՏՈՒՆԱՅՆ) ած ||։

Յառաջ բերեալն 'ի սրբոյն պօղոսէ՝ բան կրետաց_(130) ւոյն մարգարէ անուանելոյ. " կրետացիք հանա_
,, պազ ստեք, չարագազանք, դատարկապորտք ||, ՏԻՏ. Ա. 12. է ասացուած եպիմենիդեայ փիլիսոփայի. որ էր 'ի գնոսոս կամ 'ի փեստոս քաղաքէ կրետայ կղզւոյն. և վասն մենակեաց առանձնութե իւրոյ, և 'ի ձեռն բազմապատիկ գրուածոց իւրոց՝ զոր արար ոտանաւոր չափմամբ, սացեալ էր անուն մեծ առ կրետացիս՝ իբր պատգամախօս 'ի կողմանէ դից. մինչև կոչել զնա և պղատոնի այր դիւցանական կամ աստուածային։ Ասի թէ սա 'ի մանկութե վաստակեալ ննջեաց 'ի քարանձաւի միում անընդհատ ամս իբր յիսուն. յորմէ առեալ եղև ասել առ ընէածս կիր դատարկասէրս. ԷՓԻՄԷՆԻԴԷՍ ՆԻՐՀԷՍ. կամ թէ ԷՊԻՄԷՆԻԴԷՈՍ ԲՆՐԱՄԲ ԱՆԻ ՂԷՆՂ։

Ամփրոդիոն կոչին սոա կանոյք, որք խոսո_(131) րեցուցին զսիրտ օգոստեայ կայսեր ապողոնակերպ զգեստաւորելոյ՝ խեննէչանալ և չայելն 'ի խրախճանս խնճոյից յագեալն պաշտօն անդ սովոր։

Ծանօ.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅՈՒԹԵՐՈՐԴ ԳԼԽՈՅ:

(132) Այս փոխարկութիւնք յարմարին յիտալականն տաւեղայես ըստ նմանաւոր գոլոյ բառից. զի ՓՕՐԼԷ նշանակէ ջահ, և ՓՕՐԼԻՍ՝ մանդաղ. ՈՓՕՐԼ՝ անդուղք, և ՌՓՕՐԼԱ՝ դպրոց. որ եթէ և մեք 'ի հայումս յարմարեսցուք այսոք. Ճշմարտութեան ՁԱՆ, երկբայութեան ՁԱՆ. տարբերութեանց ՈՍՏՈՆԱՑ, և ջանք գիտութեանց ՈՍՏՈՆԱՑ:

(133) Ռուաջիկոյ անուանք պատուոյ կամ վերտառութեանք, որ և տիտղոսք ասին, հայսին 'ի սովորութի արևմտեայց՝ յաւէտ ՇԱ վիճակի յետին դարուց, զորս դժուարին է պահմամբ նախկին նշանակութեան վերածել 'ի հայս. և մանուկ զբաղդ ՍԵՐԵՆԻՏԱ՝ կամ ՍԵՐԵՆԻՍԻՄՕ, որ է պայծառութիւն օդոյ կամ անամպորդ երբեմ զօդ յատակ. ուր մեք եդաք ՎՍԵՄ:

(134) Ըստ աւանդելոյ՝ կերբերոս կամ կերբեր անուանեալ շունն էր դալան եռագլխի կարգեալ 'ի պղուտոնէ սանդարամետեան պահապան դրանց դժոխոց. որ սիրով ընդունէր զամենն զ'ի ներքս եկեալսն, այլ չտայր թոյլ ումեք ելանել արտաքս. առ այսն զպերիթոս՝ որ եկեալն էր 'ի յափշտակել զպերսեփոնէ դուստր դեմետրի և զկնամերերոյ զյափշտակեալն 'ի պղուտոնէ. գործակից էր պերիթոսի և թեսևս, որ արգելաւ 'ի դժոխս. այլ զերծոյց զնա աւեն հերակլէս, և զկերբերոս կապեալ շղթայիւք նուաճեաց: Զայս ոմանք մեկնաբանեն այսպէս. կերբերոս աւեն էր շուն պղղուտոնի արքային եպիրոսի կամ ատրին աշխանիոյ, ուր գառանցն շունք աչագին՝ որ թէ եռապատիկ աւելի լինել քան զհասարակ շունս. և եղև յորժամ թեսևս ըմբռնեցաւ 'ի կալանս պղղուտոնի արքային, հերակլէս հնարիւք հանդարտեալ զշունն՝ որ կայր առ դուրս բանտին, ազատեաց զթեսևս: Իսկ ոմանք գնեն՝ թէ կերբերոս էր օձ մեծ, զոր սպանեալ իցէ հերակլէս. Այլք այլազգ մեկնեն. կերբերոսդ անուն կամ

[illegible]՝ ծագի ամէն 'ի բառէս [illegible], այն է
մահուլ. որով նշանակի ամէն գերեզմանին կամ
հող երկրի, որ կլանէ զմարմինս մեռելոց. և վն
ազատելոյ հերակլի զթեսևս 'ի մահուանէ, ասա-
ցու թէ ազատեալ իցէ 'ի գերեզմանէ, կամ 'ի
կերբերոս մահուլ շանէ. և այս առակ թուի ա-
ռեն ծագեալ 'ի սովորութենէ եգիպտացւոց, որք
գնէին շունս աշաւորս 'ի պահպանութի գերեզ-
մանաց: Յիշատակէ զայս առասպել նաև Եւսե-
բիոս 'ի Քրոնիկոնն՝ գրելով յաւուրս դատաւո-
րացն Իսրայէլի այսպէս. "Ալջկան (պերսեփո-
,, նեայ) յափշտակութե իւր յայդոնեայ մօղո-
,, սացւոց արքայէ. որոյ էր շուն մի յաղթանդամ
,, կերբերոս. որ զպերիթոս յեռայ սպան եկեալ
,, ([illegible]) 'ի կնոջն առևանգութի թեսևա-
,, հանդերձ. և զթեսևս ապրեցոյց. որ մերձ էր
,, յապականել (այսինքն [illegible]). պատահեալ
,, հերակղի. իսկ վասն յայտնի վտանգին 'ի դժո-
,, խոյ ելեալ կարծէր (թեսևս). պատմէ և փի-
,, ղոքորոս ||: Իսկ Նոննոս ըստ Նախադրելոցս ա-
սէ. "Առասպելեալ լինի, թէ է ինչ շուն՝ որ
,, ունի գլուխս երիս, որ և կոչի եռանդ. սա ա-
,, ռեն պահէ զդրունս դժոխոց. և զիջեալսն 'ի
,, դժոխս ողջունեալ շողոմէ. իսկ զելեալսն խա-
,, ծանէ՝ և ոչ թողացուցանէ ելանել. արդ ասի
,, թէ հերակլէս յորժամ էջ յափշտակել զպերին-
,, թոս և զպերսեփոնէ՝ ելանելով սատակեաց ըզ-
,, կերբերոսն ||:

Իսիս (որոյ սեռականն լինի իսեայ կմ իսիդեայ)(135)
էր չաստուծի եգիպտացւոց՝ պաշտեալ 'ի նցէ 'ի
կերպարանս արջառոյ. զի ըստ առասպելաց յով
դուստր ինաքայ փոխեալ յարջառ կամ յերինջ 'ի
զևսէ՝ գնաց յեգիպտոս, և անդ չաստուածացեալ՝ իսիս
անուանեցաւ. որ էր անուն գերագոյն պաշտա-
ման առ հեթանոսս: Այլ ոմանք ասեն՝ թէ իսիս
պաշտեալն յեգիպտացւոց էր լուսին, որ նշանա-
կիւր եղջերաւոր անասնով. ոմ և արեգակն կո-
չիւր 'ի նցէ ոսիրիս՝ [illegible] բազմաչեայ, վն լուսաւոր-
չալ ճառագայթիւն. զոր համարէին եղբայր իսի-
դեայ՝

դեայ՝ միանգամայն և այր․ վասն կոչէին և զնա ապխա, որ թարգմանի արջառ։ Իսկ զոր ասէ թետաւրոս վասն գրաստուն՝ որ բարձեալ ունէր ըղպատկեր խոյգեայ, թուի զայս բանաստեղծից․ Իբր զի կամ որոշեցին ամենք զարջառն խոյս յայսմէ գրաստէ, և կամ հեգնօրէն ասացին, թէ գըրաստն կարող էր պարծիլ․ ոչ թէ երկրպագու արձանին՝ զոր բարձեալ տանէր, Ինքեան երկիր պագանեն, և ոչ արձանին։

(136) Ոյաս կամ Էյաս ը յունաց, որ և այաքս կամ այաքս ըստ լա՞․ և Իտալ․, էր անուն երկուց քաջ արանց․ որոց մին կոչեցաւ Ոյիլեան յանուն հօր Իւրոյ Ոյիլեայ, և միւսն Տեղամոնեան յանուն հօր Իւրոյ Տեղամոնի։ Արդ՝ աս Ինքն այաս Տեղամոնեան՝ որ էր արքայ Սաղամինայ, եղև նշանաւոր արութբ առ հելլենացիս՝ Իբր երկրորդ յետ Աքիլլեսի․ վնյ և պնդեր՝ թէ Ինքեան անկ է ժառանգել զզահանն կամ զզէնս քաջին Աքիլլեայ․ այլ Ոդիսևս այր խորամանկ հաճեցոյց զդատաւորս յունաց, զի Ինքեան տացեն զիրաւունս ժառանգելոյ զայն զէնս։ Ընդ որ յանհնարինս դառնացեալ այասայ՝ ցնորեցաւ 'ի միտս․ և գիմեալ 'ի գաշտն 'ի վր հօտից անգեղց՝ արար կոտորած մեծ, կարծելով զայնս կոտորել․ այլ Իբրև 'ի յուշն դարձաւ և 'ի միտ եառ զանմտութն Իւր, առ ամօթոյ անձամբ զանձն սպան։ Այլ առի յառասպելս, թէ վահանն Աքիլլեայ անկեալ 'ի ձեռաց Ոդիսեայ 'ի ծով, և վարեալ յալեաց՝ եհաս 'ի ցամաք անդր, ուր թաղեալն էր այաս, ցուցանելով թէ նմա էր անկ։ Իսկ արիւն նորին այասայ փոխեցաւ ասեն 'ի յանկինթ ծաղիկ, հայելով 'ի ստուգաբանութիւն անուանն, զի անւն է ծաղիկ․ յորմէ Իա֊կինթոս, որպէս թէ էյասայ կամ այասայ ծաղիկ կոչեցեալ Իցէ յակինթն։

(137) Կուինտոս կինկինատոս երկիցս եղև դիկտատոր կամ Իշխանապետ հրամանատար 'ի հռոմ․ զի զկնի առաջին նուագի Իշխանութե Իւրոյ՝ յօրում ժմկի արար գործս մեծամեծս, Իբրև եհաս յամս ծերութե՝ առանձնացաւ 'ի մենակ կալուա-

ծոյ

ծոց իւրոց յութսնամեայ հասակի. ուր 'ի հեր-կելն նորա զերկիր կամ 'ի սերմանելն զցորեան, յանկարծակի հասին պատուիրակք 'ի ծերակոյ-տէն հռովմայ. և դարձուցին զնա 'ի քաղաքն՝ կա-ցուցանել անդրէն դիկտատոր: Արդ՝ 'ի գործոյ տալի մականուն եդաւ նմա ասեն սերրանոս կմ սերանոս. զի ՍԷՐՕ 'ի լատին բարբառ նշանակէ սերմանել: Սմին նման անցք անցին և ը ատտի-լիոս ռեգուղոս. որոյ վս և նա սերանոս կամ սարանոս կոչեցաւ անուն: Բայց են ոմանք՝ որք նոյնացուցանեն զանգս երկոցունց: Թեզաւրոս առնու զբանս իւր 'ի գրոց պլինիոսի. ԺԸ. 3: Յայս հայի և տակն սենեքայ 'Ի ԳԻՐՍ. ՁԶ. ԽՈՐ-ՃՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՑ. ԳԼ. ԺԵ. ՙԿուինտոս փութայ „ յանձնէ թոթափել զպատիւ դիկտատորութե. „ այլ յետս կոչի 'ի գործոյ արօրագրութե ||: Եւ կիկերոն 'Ի ԳԻՐՍ ԾԵՐՈՒԹԵԱՆ. ԳԼ. ԺԶ. ասէ. ՙՅա-„ գարակս գտանէին և անձինք ծերակուտի, և „ այն՝ ծերունիք: Զի ահա յարօրագրել անդ „ կուինտոսի կինկիննատոսի տուան նմա աւե-„ տիք, եթէ եղեր դիկտատոր ... Յանդաստա-„ նէ 'ի ծերակոյտ հրաւիրեցան և կուրիոս և „ այլ ծերք. յորմէ՝ և հրաւիրակք նոցին ուղե-„ գնաց (ՎԻԱՏՈՐԷՍ) անուանեցան ||:

Ագրիպպաս էր փեսայ օգոստոսի՝ շինօղն պան-(138) թէոնի. զորմէ տես 'ի վերոյ 'ի համարն. (128). և Մեկենաս՝ մտերիմ սիրելի նորին կայսեր. որ յիշեցաք 'ի համարն. (115): Արդ՝ սոքա երկո-քին էին իմաստուն խորհրդականք և խրատուք կայսեր 'ի բաղում իրս. վսյ և յետ մեռանելոյ նց՝ որչափ ինչ վրիպակ գործէր օգոստոս անխորհրդ-դաբար, յոգւոց հանէր վս չունելոյ առ իւր զագ-րիպպաս և զմեկենաս:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ ԳՐՈՅ:

Արգոս որդի արիստորայ՝ ըստ առասպելաց ու-(139) նէր հարիւր աչս. որոց յիսունքն միշտ բաց էին՝ 'ի փակել այլոց յիսնից 'ի քուն. վասն որոյ և 'ի

հելլենացւոց կոչեցաւ քանքրէս, որ անմնադէտ կամ ամ ուտէք տեսօղ. զի Ը ամ մարմինն ծաւալեալ էին առ քեզ։ Արդ՝ բանաստեղծք յօդեցին, թէ Հերա (որ և յունոն) կին դիոսի կարգեաց զարգոս պահապան յովայ դստերն ինաքայ՝ 'ի փոխելն նորա յարջառ կամ յերինջ. որ այն ինքն է իսիս՝ նախայիշատակեալն 'ի մէնջ. այլ յետոյ հերմէս հրամանաւ դիոսի սպան զարգոս, և յափշտակեաց զյով. վա՛յ և մականուն կոչեցաւ հերմէսի արգէիփոնդէս, որ արգոսասպան։ իսկ զաչս արգոսի եառ առեալ հերա, և ընդելուզեաց յագիս թռչնոյ իւրոյ, այն է սիրամարգ։ Զայս առասպել ոմանք մեկնեն այսպէս. Արգոս ասեն հարիւրաչեայ աստղալից երկինքն է՝ բազմանշոյլ լուսով փայլեալ իբրև բազմաչեայ. յով կամ իսիս յարջառ փոխեալն է երկիր, զոր եգիպտացիք 'ի նմանութեն արջառոյ ձևացուցանէին 'ի խորհրդաւոր նկարագրութիս. և զի աստեղք երկնից լուսատու լինին երկրի 'ի գիշերի, վա՛յ ասացաւ թէ արգոս բազմաչեայն կայր իբրև դէտ 'ի պահպանութեն յովայ. և այն 'ի ձեռն հերայի, այն է այեր կամ օդ. իսկ հերմէսիւ նշանակի արեգակն, որ յայնժամ սպանանել ասի զարգոս, յորժամ ծագեալ ընդ առաւօտս՝ ծածկէ զլոյս աստեղաց իւրով պայծառութը 'ի տեսութենէ մարդկան, և լինին յափշտակէ զյով այսինքն զերեսս երկրի։ Առած է ասելն՝ արգոս էսսէ, յորժամ ոք կարծէ պատրել զաչալուրջս։ Նուերիոս այսչափ ինչ յիշատակէ 'ի կանոնն՝ յառաջին ամս մովսէսի. « Առ սոքօք այլք լեալ պատմեն ... զարգայ ամե-
» նադիտէ, և զյովայ դստերք պրոմիթեայ ||։

Ծննդաբանէ 'ի փանէրոսէ գիրս։

(140) Սան դեգաղոսի լեալ ասացաւ վերադոյնդ 'ի համարն (58). տես անդ։

(141) Արդ ապուլեան, բառ լա. անտիքուա քուլիէա առացեալ, է տեսակ ինչ թռչնոյ սարդի, որ

ուստէ զայլ սարգս և զվարգս. Թշնամի է կար-
ծաց, և լոկ տեսլեամբ իւրով ապացուցանէ և
Թմրեցուցանէ զնս. և զի ոչ այնչափ գտանի յայլ
գաւառս խաղից, որչափ յապուլիա գաւառն նեա-
պօլսոյ, անտի եառ զանուն։ Ունի սա և սաստա-
նիչ կծոտուածս 'ի վ̃ր մարմնոյն, վ̃ս և լատինք
կոչեն զնա նաև [illegible], իբ̃ սաստղանիչ։ Բայց
քանզի [illegible] է յատկապէս անուն ինչ մողէ-
զի կոչեցեալն 'ի մեզ կովադիւոց, Թուի Թէ ո-
մանք 'ի մի շփոթեն զյատկուԹիւս երկոցունց կեն-
դանեացս, որպէս և խաղալիք զերկաքանչիւրն իսկ
կոչեն [illegible]։ Իսկ յիրաւի բան Թեատրոսի
'ի դէպ գայ նաև կովադիւոցի. զորմէ ասի՝ Թէ ու-
նի Թոյն վնասակար, այլ ոչ մահաբեր. և կամ
Թէ 'ի ձեռն ԹովչուԹե ակարացեալ՝ ոչ յոյժ ազ-
դէ Թոյն նր̃. է խորամանկ բարուք. ամ ը̃ ամէ
փոխէ զկաշին, և ուստէ սակն զայն՝ զի մի լիցի
դեղ 'ի պէտս այլոց։

Բրինեկյա կամ վրինեկյիս էր մականուն հիւպատ. (142)
դամէի դատեր վրինեսի արքային լևոնեացւոց՝
յաւուրս տրովական պտրզմին. և եղև յառնուլ
յունաց զլևոնեաս քաղաք. և 'ի բաժանել վի-
ճակաւ զգերիս 'ի մէջ իւրեանց, բրինեկյա անկաւ
քաջին աքիլլեսի։ Իսկ ագամեմնոն արքայ ար-
գիւացւոց և միկենացւոց՝ որ սպարապետն էր բովան-
դակ զօրուն յունաց, աչս արձակեալ 'ի բրինեկյա՝
կորզեաց զնա 'ի ձեռաց աքիլլեայ. ընդ որ դժգ-
մնեալ նր̃ յոյժ՝ յետս եկաց 'ի գործոյ պտրզմին,
և չկամեցաւ այլ ևս մարտնչել ընդ Թշնամիս յու-
նաց ը̃ տրովադացիս. մինչև յետ տարւոյ միոյ 'ի
սպանանել պատրոկղի սերտ բարեկամին իւրոյ
'ի հեկտորէ տրովացւոյ, փոխան 'ի վրէժխնդրութե
արեան նորա՝ անդրէն բուռն եհար զգործոյ քա-
ջուԹե. մինչև սպան անձամբ զհեկտոր։

Ող̃ այլուր յիշէ սա ինքն Թեատրոս յէջս 246. (143)
պատճառ զայրանալոյ աքիլլեայ եղև սնոտի կա-
կած իւր. զի 'ի յիշելն զենանի հաւատորի զչա-
դար 'ի միտ անկաւ աքիլեսի աքառդանքն իւր յա-
ռաջ ժմկաւ յայն կղզի, և համարեցաւ՝ Թէ նաև
զի-

զենոն առ 'ի նախատինս գնելոյ նմա յիշեալ իցէ զանուն կղզւոյն այնորիկ. նմին իրի և 'ի բարկութ անհնարին բրդեալ՝ սպան զնա վաղվաղկի։

(144) Այսն համարի Թեոդորոս ըստ ոմանց 'ի մատենագրաց՝ զխաղն կոչեցեալ պենտաթղոս կամ ԲԷՆՏԱԹԼՈՆ ընդ միասին, որ կոչիւր պանկրատիոն կամ ԲԱՆԳՐԱՏԻՈՆ. արդ ԲԷՆՏԱԹԼՈՆ թարգմանի հընգամրցական կամ հնգեկին մրցանք. իսկ ԲԱՆԳՐԱՏԻՈՆ՝ ամենազօր կամ ամենայաղթ մրցանք. զի յորում ամ տեսակ մրցմանց կատարիւր. վզի և 'ի թարգմանութեն եւսեբեայ գնի ԱՄԵՆԱԽԱԱՄԷ ՏԱՐՓ։ Արդ՝ եթէ տեսիլնոտ քաջայաղթ կամ ամենայաղթ կոչեցաւ, կամ որ նոյն է ԲԱՆԿՐԱՏԻԱՍՏԷՍ, որպէս առէ հեղինակս, կամ 'ի հնգեակ մրցանաց խաղի եղև յաղթօղ, և կամ յայնմ. յորում ամ տեսակք ըմբշամարտութե կատարէին։ Քանզի և են՝ որք ասեն, թէ մի և նոյն համդէս էր հնգեակ մրցանաց. յորում թէ ոք լե ամի յաղթօղ գտանիւր՝ կոչիւր ամենայաղթ։

(145) Եզելինոս էր բռնաւոր ոմն 'ի կողմանս Իտալիոյ 'ի ԺԳ դարուն. որ զամս քառասուն վեր 'ի վայր արար զբազում աւեր, և մեծագոյն զսահմանս վերօնայի և պատուայ։ Ընդ բանիւ արարին զնա քահանայապետք, զի թերեւս զգաստասցի. այլ նա և եւս սաստկացաւ։ Հուսկ յետոյ 'ի դիմելն 'ի վր մեդիոլանու՝ 'ի պարտութե մատնեալ յիշխանացն լոմպարտացւոց՝ վիրաւորեցաւ չարաչար, և ձերբակալ եղեալ եդաւ յարգելանս. ուր անձամբ զանձն պատառոտեալ յուսահատաբար կորեաւ՝ յամի տն 1259։

(146) Անուանս կեսար կամ ՔԷԶԱՐ՝ եղեալ 'ի լատին բառէս ՔԷԶՈՒՍ, որ է հատեալ, կամ ՔԷԶԻՈ՝ որ է հատումն. յայն սակս առ ընծայեալ յուլիոսի, զի 'ի ծնանիլ նր հարկ եղև ատեն հատանել զորովայն մօրն. արդ՝ Թեոդորոս կամելով նկարագրել ըզբարկասիրտ բարս յուլիոսի՝ առիթ առնու զանուանակոչութի նր։ Իբր 'ի վերջոյ յայս աւարտէ զբանն, թէ յուլիոս՝ կեսար ծնաւ, և կեսար մեռաւ. զի հատմամբ կամ կարմամբ մօրն ծնաւ, և

ինքն

ինքն սրակոտոր եղեալ 'ի գաւադրաց մեռաւ։ Իւ արդարեւ ըստ բարկացողութեան մասին այսչափ պախարակելի եղեւ յուլիոս. բայց յայլ գլխոց բաղմապատիկ ձիրս բարեկաւութեան յանձին բերէր. ոմն և ուրեք ուրեք յիշատակէ հեղինակս։ Յաւէլ և զայս, զի ոմանք զանուանս կեսար հանեն 'ի բանէս ճեդոպէս, որ է գէս կեղծեալ, թ հեր գլխոյ յօրինեալ յոտար մազից՝ առ 'ի զարդ շքեղութեան։

Ըստ ինչ հայի պատուհան սոկրատայ. չէ մեզ (147) յայտ. բայց առաջինկայ բանք հեղինակին քաջ յարմարին պատուհանին մոմոսի, որ՝ ըստ որում ունիմք յիշել 'ի համարն (159), ամբաստանէր ըղգործս հեփեստոսի չեայն՝ ասելով, թէ պարտ էր քեզ դնել պատուհան մի 'ի մէջ կրծոց մարդկան, զի ը այն տեսցի՝ զոր ինչ ունին մարդիկ 'ի սրտի, և մի լիցի ումեք գաղտնի ինչ չարիս խորհիլ։ Այլ մարթ է յարմարել տեղւոյս և զայլ ասացս որ պատմին զսոկրատայ։ Առաքեալ առեն երբեմն մեծատուն ոք զորդի իւր առ սոկրատ՝ փորձել և տեսանել զուշիմութիւն մանկանն. և եղեւ իբրեւ ասաց մանկածուն ցսոկրատ, ածի առ քեզ զպատանիս զայս ը հրամանի հօր իւրոյ՝ զի տեսցես. ասէ սոկրատ ցմանուկն. խօսեաց որդեակ, զի տեսից զքեզ. յայտ արարեալ՝ թէ 'ի բանից ճանաչի իւրաքանչիւր ոք, և իբրեւ ը հայելի կամ ը պատուհան տեսանի բերումն սրտի նր. զի 'ի յաւելուածոց սրտի խօսի բերանն։ Այլ է և հայելի սոկրատեան. իբր զի խրատէր սոկրատէս զմանկունս կամ զաշակերտս իւր՝ հայիլ երբեմն 'ի հայելիս. զի թէ գեղեցիկ իցեն դիմօք, զգուշասցին չարատել զգեղս չարեօք. և թէ տգեղ, փութասցին ընդ առաքինութեան զթերին ընութեան, գեղազարդելով զհոգիս փոխանակ մարմնոյ։ Դարձեալ պատմի՝ թէ անախթենէս կինիկեան փիլիսոփայ արկեալ զիւրեւ վերարկու կարկատուն և պատառոտեալ, շրջշրջէր զպատառուածս նր 'ի ցոյց մարդկան. զոր տեսեալ սոկրատայ ասէ. ընդ ծերպուածս վերարկուիդ տեսանեմ ես (իբ-

րեւ

րեւ ը պատուհան) զքո անափառութի։

(148) Սա ինքն է միջինն տիգրան՝ արքայ հայոց՝ արշա-կունի, որդի արտաշիսի պարթևի, քաջազօր ա-խոյեան ընդեմ հռովմայեցւոց զօրութե գործակ-ցութբ քեռայն իւրոյ միհրդատայ։ Զարին տիգ-րանայ զմեծամեծ գործս բազում անգամ տեսին հռովմայեցիք, և զարմացան և սասանեցան. այլ 'ի յաղթիլ նր 'ի մեծում նուագի յանպատրաստից, առաւել քան զչափն ուրախացան, և մեծ ինչ համարեցան՝ զի յաղթեցին անպարտելւոյն. վս և մեծացուցին ևս քան զևս զանուանն պոմպէի որ զխմամարան էր տիգրանայ. և բազմօրինակ նկա-րագրեցին զայն յաղթուն. ոչ թէ տիգրան յառա-նկեալ իցէ պոմպէի, և զթագն յերկիր եդեալ. այլ 'ի նմանէ մարդասիրութբ ընկալեալ, ևն. բայց զառոյգն ունիս տեղեկանալ 'ի գրոց պատ-մութե հայոց։

(149) Այս գլուխ՝ բառս [illegible] կամ [illegible]՝ առեալ լինի փոխանակ ախտակցութե 'ի գործածելի սրտէ ընդ թշուառութի ուրուք, մինչև յողորմ գալ և ցաւիլ նաև ը գոյզն իրս, և կամ ընդ ար-ժանահաս պատիժ յանցաւորաց։ Մարթ էր զայս կոչել կարեկցութի, ողեկիզութի, ևն, կամ ըստ իտալական բառի ողորմասրտութիւն։ Զայս կա-րևոր է 'ի միտ առնուլ, զի մի շփոթեսցի ը առա-քինութե ողորմածութե, և կամ նաև ը գթու-թե՝ զորմէ 'ի նախընթաց գլուխն ճառեաց հե-ղինակս։

(150) Պրամէթէոս կամ պռոմիթևս, որ թարգմանի յառաջախնամ կամ նախահոգակ, ըստ առասպե-լաց էր այնպիսի ոք ճարտարահնար, մինչև տուեն իմաստութբ իւրով 'ի հողոյ երկրի կերպարանեաց զբազում մարդիկ. և ապա ելեալ նաև յեթերս վերին՝ մերձեցոյց խրձունս ինչ զիւրավառ խըռ-ուոյ յանիւս արևու. և գողացեալ անտի հուր՝ եբեր և եա 'ի պէտս իւրաստեղծ մարդկան. ընդ որ ցասուցեալ աւեն արամազդայ՝ առաքեաց 'ի մարդիկ պէսպէս ախտս հիւանդութե. և զնոյն ինքն զպռոմիթևս ետ կապել 'ի ձեռն հերմէսի 'ի

'ի վերայ քարի միոյ 'ի լերինն կովկասու. և արձա֊
կեալ 'ի վերայ նորա արծուի մի, զի կրծիցէ և կե֊
րիցէ զլեարդ նորա: Եւ ահա այս է առասպելեալ
տանջանքն պռոմիթեայ. զոր իբրև տեսանեն ախ֊
մարք նկարեալ 'ի պատկերս, շարժին 'ի ցաւակ֊
ցութիւն: Յաւելուն առասպելաբանք, թէ յետոյ
եկեալ հերակլէ սպան զարծուին. և ազատեաց
զպռոմիթևս: Զայս ամ այսպէս համառօտէ նոն֊
նոս: *Արդ՝ պռոմիթէոս այս ասի թէ գողա֊
,, ցաւ զհուր յածոցն, և շնորհեաց մարդկան, և
,, եթէ առ միս զոհիցն պատրեաց զարամազդ, և
,, 'ի բարկութենէ շարժեաց զնա կրկին. իսկ արա֊
,, մազդ զսա կամեցեալ պատուհասել, եդ արծուի՝
,, ուտել զլեարդ նր. և գիշերի դարձեալ ողջանայր.
,, և միաւանգամ արծուին սկսանի ուտել 'ի վա֊
,, ղիւն. մինչև եկեալ հերակլեայ՝ նետիւք խո֊
,, ցեաց զարծուին ||: Ոմանք ըստ եւսեբեայ դնեն
զպռոմիթևս յաւուրս յովսեփայ նահապետի, և
զառասպելն վն առեղծանելոյ նր զիմդիկ՝ այսպէս
մեկնեն. քանզի (ասեն) իմաստուն էր 'ի մարդ֊
կանէ և 'ի գիտունն փոխակերպէր զանասնաբարոյս
'ի մարդկանէ: Այլք ասեն՝ թէ նախ առաջին սա
ուսոյց գրոշել արձանս. որք և զելս նր յերկինս
մեկնեն ոմանք վն պարապելոյ նորա յաստղաբաշ֊
խութեն, կամ վն քննելոյ զպատճառս փայլատա֊
կանց. ևն: Գրիգոր մագիստրոս 'ի թուղթն առ
պառուտես պատրիկ այսչափ ինչ յիշէ. *զոր իւր
,, բերել զպռոմիթեան զայն յածոցն զհուր գողա֊
,, ցեալ շնորհէր աշխարհի համդերձ հեփեստո֊
,, սիւ ||: Եւ 'ի թուղթն առ պետրոս կաթուղի֊
կոս՝ զնախանձն անուանէ, *կայծակն հրափայ֊
,, լուն քան զպռոմիթեայն և զհեփեստոսին ||:
Իսկ վն գիգեայ այրասէր կնոջ, որ անմխիթար
լայր ը մահ առն իւրոյ, և առ չառնելոյ յանձն լի֊
նել առն այլում՝ ցաւագին մահուամբ չոքաւ զիւ֊
րովի, յիշեցաք 'ի վերոյ 'ի համարն (99). յորոյ
վերայ վերգիլիոս և այլ բանաստեղծք այնպիսի
ցաւագին առեղծաբանութիս յօրինեն, մինչև յորդ
շարժել զընթերցօղս կամ զլսօղս:

Այլ

Այլ առաւել աղետալի ձեւանան 'ի խաղս եղեր-երգութեան մտացածին անցք Իդիպոսի կամ Իդիպո-դեայ, որ և Էդիպուս կամ Ոյդիպուս ասի, որդի Լայոսի արքային Թեբայ. Արդ՝ ը͞ս առասպելաց Լայոս լուեալ 'ի պատգամախօսէն, թէ յորդւոյ քումմէ սպանիս, հրաման ետ հովուի միոյ տա-նել զմանուկն Իդիպոս 'ի դաշտ և կորուսանել։ Իսկ հովիւն աղեկիզեալ 'ի վ͞ր արքայորդւոյն, և միանգամայն երկուցեալ յահէ արքայի, առեալ ծակեաց զղձղունս ոտից մանկանն իբրև զշխա-րի, և կախեաց զծառոյ. որ͞պ զի մի լիցի կերա-կուր գազանաց, այլ առ սակաւ սակաւ ինքնին մեռցի 'ի սովէ։ Եւ մինչդեռ կայր այնպ͞ս կախեալ Իդիպոս, և ձայն բարձեալ լայր, եկն 'ի տեղի անդր փորբաս հովիւ պոլիւբոսի արքային կորն-թացւոց. և գթացեալ 'ի տղայն՝ իջոյց զնա 'ի վայր. և առեալ տարաւ առ թագուհին իւր մերովպէ, որ էր անզաւակ. վ͞ս և գութ մեծ անկաւ 'ի սիրտ թագուհւոյն, և սիրեաց զմանուկն, և ետ դար-մանել. մինչև ողջացաւ 'ի վերայ ոտիցն. յորմէ կոչեցաւ նա ասեն Οἰδίπους, յ͞ս ցաւոտն կամ ուռոտնոյց։ Եւ իբրև աճեաց մանուկն, տեղեկութ͞ի առեալ վ͞ս հայրենեաց իւրոց՝ դարձ արար յերկիր իւր, և մինչչև էր ծանուցեալ զծնողս իւր, հան-դիպեալ յաղմուկ ինչ քաղաքական՝ սպան զհայր իւր իբրև զմի 'ի թշնամեաց. ապա ասեն յանգէտս ամուսնացաւ ընդ մօր իւրում, և թ͞գրեաց։ Եւ այլ ևս անհեթեթ զրոյց՝ խառն յաղետաւոր և յեղեռնաւոր գործոց. մինչև հուսկ յետոյ ինքնին կուրացոյց ասեն զաչս իւր վ͞ս հայրասպան և աղ-գապիղծ լինելոյ, և ինքնակամ յաքսորս չոգաւ 'ի յաթէնս. իսկ որդիք ն͞ր անցեալ 'ի տեղի ն͞ր սպանին զիրեարս. ե͞ւն։ Յորոց յայտ է թէ բովան-դակ պատմուի Իդիպոսի ծայրէ 'ի ծայր է շեղջա-կուտեալ մտացածին կեղծեօք աղետալի դիպուա-ծոց՝ 'ի պէտս եղերերգական խաղուց. վ͞ս և բար-ւոք ասէ հեղինակս, թէ նաև այն՝ որ լայ 'ի վ͞ր այսպիսի աղէտից, գիտէ թէ են կեղծիք։

Ծա

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՉՈՐՐՈՐԴՆ ԳԻՐՍ։

'Ի դէպ գայ՝ ասացուածս յիտալական բարբառ (151)
վասն մերձաւորութեան բառից գոնձէ—ազինէ և
գոնէ—ղ—ազինէ. որպէս եթէ և 'ի հայումս ասէաք
նմանաւոր ձայնիւ, կենցաղակցութիւն և կենսա-
պահութեն. կամ կենաց կցորդ լինել 'ի վարել ըստ
իրեարս՝ և 'ի պահել զիրեարս։

Տիմանթէս էր անուանի պատկերահան ոմն 'ի (152)
վերջին աւուրս աղէքսանդրի մակեդոնացւոյ։ 'Ի
մէջ նկարուց նր երևելի էր այն, զի ձևացոյց զի-
փիգինէ զդուստր ագամեմնոնի մատնեալ 'ի բա-
գինս զոհից. ուր յետ նկարելոյ զդէմս ամ մեր-
ձաւորաց նորա տխրագին և լալագին, անկարա-
ցեալ այլազգ արտայայտել զանհնարին աղէտս
հօրն նր՝ էարկ քօղ զերեսօք նորին. որով եցոյց՝
թէ ցաւ նր է անպատմելի։ Իսկ բան թեստորո-
սի հայի յայն նկար տիմանթեայ, զի ձևացոյց ըղ-
կիկղոպ հսկայն անհեթեթ 'ի փոքրիկ տախտակի.
յորում կամեցեալ քաջ ևս բացայայտել զմարմնո-
թն հսակի նորա, նկարեաց առ նովաւ ճիւաղս
կամ այծամարդս՝ որք ունէին 'ի ձեռս ըստ բաքո-
սի գաւազանս կամ սատս 'ի թաւ ծառոց, և նո-
քօք չափէին զբոյթ կիկղոպայ. որով տայր իմա-
նալ՝ թէ երբ մին 'ի մատանց այնպիսի քանակա-
չափի. որչափ ևս մեծ իցէ բովանդակ մարմինն։
Զայս ամ 'ի մէջ բերէ պլինիոս 'ի լե. Գիրս. Գլ.
10. և ասէ, թէ "Յամ գործս նր միշտ առաւել
„ իմն նշմարի՝ քան զոր նկարի. և թէպէտ ար-
„ հեստն է գերապանծ, այլ հանճարն 'ի վեր է
„ քան զարհեստն||։

Գորգոնս կամ գորգոնեայք կոչին ըստ առասպե- (153)
լաց՝ երեք քորք ծովածինք, նստեալք յեզր կի-
սագնտոյ երկրիս կամ առ դուրս դժոխոց, պղն-
ձանիւթ ձեռօք՝ և օձախառն գիսովք. որոց այն-
չափ ագեղ էին (ասեն) կերպարանք. մինչև տե-
սողացն առ ահի ցնորիլ, և 'ի դժնեայ հայեցուա-
ծոյ նց թունաւորիլ. և այլ պէսպէս բանք մատ-

ցա-

ցածինք. զորս բազմօրինակ Ելլենէն մեկնաբանք ըստ այլ և այլ պատմուեց: Այլ սակայն բազումք ևս ընդ հակառակն ասացին, թէ ոտքս այնչափ գեղեցիկ էին, մինչև սքանչանալ տեսողաց և թմբրիլ և քարանալ ևս: Եւ յայս միտ գրէ Եւսեբիոս առ Ժմկօք դատաւորացն ինէլ 'ի կանոնի իւրում. *Պերսևս ('ի վր̄) պարսից զօրաժողով
,, եղև. զգորգոնս գլխատեաց, և ինքն այլ կին
,, գեղեցիկ արար, որ աղչեցուցանէր զտեսօղսն.
,, գեղով. մինչ քարանալ համարել||: Իսկ Նոննոս ըստ առաջին կարծեաց խօսի՝ յասելն. * Այլ յաղագս
,, գորգոնեացն այսպիսի ինչ է. երեք ահագին
,, կանայք էին. այնպէս զարհուրական ունելով
,, զդէմսն՝ ոչ զի մահացուցանել զտեսօղսն. այլ
,, ասի պերսեայ զմին 'ի սոցանէ սատակել նիզա-
,, կաւ գերանդոյ||:

(154) Ի մէջ առնու թեսաւրոս նաև զնիւթական նըմանութի 'ի մէջ մարդահաճոյի և գովասանի վն̄ նոյնատառ գոլոյ երկուց բառից [illegible] (որ է մարդելոյզ կամ մարդահաճոյ), և [illegible] (այն է գովիչ): Այլ զի չէր մարթ նիւթապէս վերածել զնոյն 'ի հայերէն, մեք ընդհանրապէս զմիտ բանին եդաք այլով բացատրութբ̄: Իսկ բուն բան հեղինակին ըստ բառիցն է այս. * Ոչ
,, ոչ նման են անուանք մարդահաճոյի և գովա-
,, սանի, մինչև առաքինութն և մոլութն 'ի նոյն
,, տառից յօդիլ. բայց որչափ նման են միմեանց
,, անուանքն, այնչափ տարբեր են նոցին վախ-
,, ճանք||:

(155) Փռիւգացի ծառայ կոչի նա ինքն Եսովպոս առասպելարկուն և առակախօսն. զի հայրենեօք էր 'ի փռիւգիոյ. և ըստ վիճակին 'ի ծառայական կարգէ, մանաւանդ թէ և 'ի սորկութն անդ ծնեալ: Յիշէ զսա Եւսեբիոս 'ի ծդ̄ ողոմպիադն՝ առ ժամանակօք կիւրոսի և աժդահակայ՝ յասելն. * Ե-
,, սովպոս բանաստեղծ, 'ի գեղփացւոց սատակե-
,, ցաւ||:

(156) Սա ինքն է կեղեստինոս կամ կելեստինոս հինգերորդ՝ պապն հռովմայ 'ի վախճան ժգ̄. դարուն.

րուն. որ յառաջն էր կրօնաւոր 'ի կարգէ նոյն բենեդիկտոսի, և եղև սահմանադիր կարգի կեղեստինեանց 'ի լերինն մաւեղայ: Ընտրեցաւ քահանայապետ արժանաւոր յամի տն 1294. այլ ընկնի հնգից ամսոց ինքնակամ հրաժարեցաւ յաթոռոյն՝ հրատարակելով զհրաժարումն իւր 'ի ժողովն նէապօլսոյ, 'ի ձեռն կոնդակի՝ որոյ սկիզբն է. [illegible]. և այս եղև առեն թելադրութ հնարից բենեդիկտոսի կայետանոսի, որ ջանայր հասանել յայն իշխանութիւն. որպէս և եղև իսկ. զի ինքն նստաւ 'ի տեղի նր, և կոչեցաւ վոնիփակիոս ութերորդ. և զերանելին զկեղեստինոս ետ փակել 'ի բերդի ուրեք. զի մի նա կարասցէ դառնալ յիշխանութիւն իւր:

Կաստրուկիոս կաստրական, այն է ըստ իտալ (157)
[illegible]՝ մականուանեալն [illegible], էր երևելի իշխանաւոր լուկայեցոց յերկրին տոսկանայ 'ի սկիզբն ժդ. դարուն, այր զօրաւոր զինուք և զգօն մտօք. որ մեռաւ յամի տն 1328:

Ոսէա կամ ոսէ և կամ հոէ, որ և կիւրեղէ կո- (158)
չի, մայր անուանեալ չաձոց, էր ը դիւցարանից քոյր՝ միանգամայն և կին կռոնոսի. և յորժամ ծնանէր զորդիս, այր նր որկորեայն կռոնոս կլանէր զմանկունսն, կասկածելով թէ մին 'ի նոցանէ յարիցէ 'ի վր իւր և թգրեսցէ, ոպ ինքն բռնացեալ էր ընդդէմ հօր իւրոյ ուրանոսի (տս երկնից): Այլ յորժամ ծնաւ ռէա զդիոս՝ որ և արամազդ. հնարս խորհեալ ապրեցուցանել զնա՝ առաջի եդ կռոնոսի արձան մի քարեղէն իբրև զծնունդ իւր. և նա եկուլ զայն. և նոյնժամայն զառաջին կլեալսն նա արտաքս փսխեաց: Իսկ դիոս ապրեալ և աճեցեալ՝ զօրացաւ ընդդէմ հօր իւրոյ կռոնոսի, և ընկէց զնա յերկնից. և փակեաց 'ի սանդարամետս ը այլ տիտանեանս: Երկար են առասպելք հեթանոսաց վս սոցին իրաց. զորս պէսպէս մեկնաբանեն բազումք: Յիշատակէ զայս գրիգոր մագիստրոս 'ի թուղթն առ անանիա վանահայր՝ 'ի խօսիլն զառասպելեալ կանանց դից. „ Այ կանայս ([illegible]), ոչ զսեմելայն,

,, և

„ և զուէյն՝ ումն որձանական առն կլուցեալ, և
„ ումն շանթից սաստկեալ, իբրու զափրոդի-
„ տէս՝ որ 'ի փրփրոյ և յարենէ ծնեալ||: Իսկ
Նոննոս գրէ այսպէս. * Այլ յաղագս այնր՝ որ
„ զձմերին զձուն կլանէր, ոչ ասէ յաղագս երի-
„ կապէտոսի, այլ յաղագս կռոնոսի. զի ասի թէ
„ զորդիսն՝ զորս կանխաւն ծնաւ, դարձեալ զնա
„ եկուլ. և դարձեալ 'ի վեր եբեր՝ զորս միան-
„ գամ եկուլն. զի ասի քար կլանել փոխ զեւսայ.
„ և քարիս իջեալ՝ զձմերին եա 'ի վեր բերել||:
Այլ վն կռոնոսի տես և 'ի Համարն (125):

(159) Արիստարքոս սամոթրակեցի՝ որ կարգեցաւ դաստիարակ որդւոյ պտղոմեայ փիլոմետորի արքային եգիպտացւոց, էր սոփեստէս ումն իմաստակ՝ հետամուտ 'ի խուզարկել և 'ի պախարակել զգրուածս այլոց. որ և առաւելապէս արար ճիշդ քննութիւն կշտամբողական 'ի վն քերթուածոցն հոմերոսի. նմին իրի և ատելի եղև յաչս յունաց՝ որք զհոմերոս անտագիւտ բանաստեղծ գնէին: Եւ աստի եղև սովորութիւն արիստարքոս ձայնել զայնոսիկ՝ որք վայրապար զհետ լինին խուզարկել և երգիծանել զբանս և զգրութիւնս իմաստնոց:

Իսկ տիմոն աթենացի՝ մականուանեալն 'ի հելլենացւոց միսանթրոբոս. յն մարդատեաց, էր փիլիսոփոս առանձնասէր՝ մանաւանդ թէ անմարդասէր և վայրենասէր, գլխովին թշնամի մարդկային ընկերութե: Հարցին զնա ումանք, թէ զի՞ է՝ զի սիրես դու զալկիբիադէս փոքր, երբ ատելի են յաչս քո ամ մարդիկ. նա ետ պտխնի, քանզի գիտելով գիտեմ ասէ, զի նա հանդերձեալ է լինել պատճառ կործանման աթենացւոց: Սա ինքն տիմոն է, որ (ըստ այլուր յիշէ և թեսաւրոս) եկեալ 'ի հրապարակ՝ քարոզեաց առ ժղվրդն ասելով. կամիմ կտրել զթզենին՝ որ կայ 'ի պարտիզի իմում. որ որք կամին կախել զանձն՝ փութասցին գալ. զի յետոյ ոչ կարէ գտանել զայն ծառ. (որ լեալ էր կախաղան հասարակաց): Ասի եւ՝ թէ սա նախ քան զմեռանել իւր յօրինեաց տապանագիր

գիր վասն չիմի իւրոյ. ուր անձն և չարամաղ-
թութիւն էր կարգեալ 'ի վ՟ր այնոցիկ՝ որ ընթեռ-
նուն զայն. և յայս յաւէտ հայի առաջիկոյ բան
հեղինակիս:

Այլ մամոն՝ որ թարգմանի ստացուածք կամ մե-
ղապարտք, համարիւր չա̄ծ խեղկատակութն կամ
կծանելոյ զայլս բանիւք եղկերանոց, կարծեցեալ
ծնունդ քնոյ և գիշերոյ. որ այպն առնէր և ծի-
ծաղէր զարարուածովք այլոց դից. զի ոչ՟ ասի
յառասպելս, հեփեստոս և պոսիդոն և աթե-
նաս դիքն դատաւոր կացուցին զմամոն՝ ընտրել,
թէ ո՞ր 'ի նցէ գործք առաւել գովելի իցեն: Իսկ
նա զերեսին եւ սկսաւ երգիծանել քանզի մե-
ղադիր եղև հեփեստոսի, թէ պարտ էր քեզ դը-
նել պատուհան մի 'ի վերայ կրծոց միոյ միոյ 'ի
մարդկանէ, ոչ՟ զի տեսցի ընդ այն՝ սիրտն, որ
կայ 'ի ներքս, և մի ոք կարասցէ ունել ինչ ծա-
ծուկ 'ի սրտի: Իսկ պոսիդոնի մեղադրեաց՝ ասե-
լով. պարտ էր քեզ զեղջիւրս ցլու առաջի աչացն
դնել, զի տեսցէ՝ թէ զո՞ և ո՞ւր հարկանէ. և
կամ 'ի թիկունս կոյս, զի ուժգին եւ հարցէ:
Իսկ զաթենաս ստացանէ՝ ասելով. պարտ էր
քեզ զտունքս շարժական շինել. զի յորժամ դրա-
ցի ոք չար հանդիպի, դիւրաւ այլուր փոխա-
դրեսցի բնակութիւնդ:

Ոսկէ կամ զոյիլոս էր հռետոր ոմն յամփիպօ- (160)
լիս քաղաքէ թրակիոյ՝ իբր 270. ամօք յառաջ
քան զՔն, բարուքն մանն վերայինչեալ արիստարքո-
սի՝ և առաւելեալ քան զնա 'ի դիմախօսել և յեր-
գիծանել զբանս այլոց: զի և սա ծիծղ խուղար-
կու և կշտամբիչ հանդիսացաւ դրուածոց նախ-
նեաց, ոչ՟ պղատոնին, իսոկրատեսին, և յաւէտ
եւ հոմերոսին. Ըդէմ որոյ յօրինեալ ստանաւորս
ինչ՝ ընթերցաւ առաջի պտղոմէոսի փիղադեղփեայ
դրասեր արքային եգիպտացւոց, ընդ որ զժուա-
րեալ արքայի՝ ամօթով արձակեաց զնա. և որպէս
այլք ասեն՝ ետ սպանանել զնա քարկոծմամբ կա՟
'ի փայտ հանելով, և են՝ որք ասեն, թէ կենդան-
ւոյն այրեցաւ 'ի զմիւռնիա: Յանուն սորա եւ՝
դըժ.

դժնեայ դատաւորք գրուածոց այլոց կամ ճիվայ-րահար քննիչք՝ զսիւէ ձայնէին իբր ատելի անուամբ։

(161) Լիկայոն կամ Լիկաոնիէս, ելեալ 'ի յունական բառէս Լիւքօս՝ որ է գայլ, արի լինել թգւր արկադացւոց՝ անուանեալ որդի տիտանայ և երկրի, կամ որդի պեղասգոսի՝ առաջնոյ արքային արկադիոյ. սա՝ ըստ առասպելաց՝ վասն արիւնահեղ բարուց իւրոց, որով խողխողէր զհիւրս, կամ թէ զենեալ զորդի իւր՝ արեամբ շաղախեալ էր զսեղանն դիոսի, պատուհասեցաւ և փոխակերպեցաւ 'ի գայլ։ Բանաստեղծք այսպէս նկարագրեն զիրսն։ Լուեալ սաեն դիոսի՝ թէ ամպարշտութիք մարդկան յաճախեալ են յերկրի. և ոչ գիւրահաւատացեալ այնմ, եթող զերկինս և էջ անձամբ յերկիր՝ տեսանել զգործս նոցա. և եկեալ զհասարակ գիշերաւ յարկադիա գաւառ՝ իջեւանս կալաւ 'ի տան լիկայոնի. և ազդ արար բնակչաց տեղւոյն, թէ ինքն իսկ է դիոս հայր դից ամենից։ Եւ այն ինչ պատրաստեալ էր ժողովուրդն զոհիւք պատուել զնա, լիկայոն արքայ ծաղր արարեալ զգիւրահաւան բարուք ամբոխին՝ ասէ ցնոս. Թոյլ տուք առ վայր մի, զի ես յայսմ գիշերի հնարիւք զփորձ առից, եթէ դա ինքն իցէ դիոս՝ անմահ կարգացեալ։ Սովին խորհրդով ննջեցոյց զդիոս. և յանկարծակի յարեաւ 'ի մտ՝ սպանանել զնա։ Այլ իբրև ետես, թէ նա և 'ի քուն իբրև արթուն կայ, չիշխեաց առնել զոր խորհէր. և յայլ ինչ ձեռն եարկ։ Զոմն 'ի պատանդից յղելոց առ նա յազգէն մողոսացւոց զենեալ իբրև զոչխար, եփեաց և եդ առաջի դիոսի, տեսանել թէ ուտէ՞ զայն, և կամ իմանայ զոր ինչ էն։ Յայնժամ չհանդուրժեալ սաեն դիոսի ընդ այնպիսի մեծեղեան գործ նր, հրձիգ արար զտուն բռնաւորին շանթատամբ զօրութբ իւրով. և զնա ինքն զլիկայոն՝ որ 'ի փախուստ աճապարէր յանտառս, փոխեաց 'ի գայլ։

(162) Ոչինչ փոյթ կալաք մի առ մի բացատրել՝ թէ ո՞յք ոմանք էին այս մատենագիրք կամ անձինք, և

զինչ

զինչ գործք ոչ. Շատ է իմանալ՝ թէ վն պատա-
հելոյ ումանց անզգուշից գրգռուածս այլոց՝ մե-
ծամեծ յոյզք և դիմամարտութիւնք եղեն և լինին
'ի մէջ դպրոցաց գրով և բանիւ. և 'ի դոյզն իրաց
սակի երբեմն ծանր աղմուկք յառնեն, երբ եր-
կոքին կողմանք եւ ունիցին իւրեանց կուսակիցս
և թեւակիցս 'ի յաղթահարել զմիմեանս։

Մն լափիթաց և կենտաւրոսաց կամ ձիացլուց՝ (163)
տես 'ի համարն (124). եւ և (15)։

Այս բան առեալ է 'ի Գ. Գրոց. սենեկայի յաղագս (164)
բարկութն. գլ. 8. ուր կամեցեալ նորա ցուցա-
նել, թէ զիարդ բարկասիրտք երբեմն առաւել
բորբոքին 'ի տեսանել իւրեանց զհակառակորդն
խոյսա զղջանիլ ինքեանց կամ շողալել, ասէ.
'Կեղիոս Ճարտարախօս՝ որպէս յայտ է, էր այր
,, բարկասիրտ յոյժ. ընդ որում նստէր առեն եր-
,, բեմն յընթրիս 'ի սենեկի նորին՝ ամն ապաստա-
,, նեալ 'ի նա՝ այր համբերատար. այլ իբրև ընդ
,, գինի մտին, դժուարին էր սմա խուսափել 'ի
,, հակառակաբանութէ անափ նր, ընդ որում ու-
,, տէր. Նմին իրի լաւ վարկաւ զղջանիլ նմա զոր
,, ինչ և ասիցէ, և զոյն չհետ բերել առանց
,, դիմադարձութեան։ Չկարաց հանդուրժել կե-
,, ղիոս ընդ զղջողական հաւանութի առնն, այլ
,, գոչեաց մեծաձայն. ասա ինչ ընդդէմ, զի եր-
,, կու լիցուք։ Բայց ինքն իսկ Է բարկանալն վն
,, չբարկանալոյն, իսկ և իսկ հանդարտեաց առանց
,, հակառակորդի ||։ Արդ՝ զոր բերէ սենեկա յօ-
րինակ բարկուե, զնոյն յարմարէ թեսաւրոս բա-
նից իւրոց՝ որ յաղագս համոզականուե 'ի փոխա-
դարձ հակառակաբանութե։

Պեղոփս կամ պեղոպս և կամ պելոպաս, յորմէ (165)
էառ զանուն կղզին մօռայու ասացեալ պեղոպո-
նեսոս, [illegible] կղզի պեղոպոսի, էր որդի տանտաղո-
սի արքային փռիւգացւոց. Արդ սա 'ի բանաս-
տեղծական առասպելս, թէ տանտաղոս ընկալու
երբեմն 'ի տուն իւր զդիս, և ետ առաջի նոցա
սեղան բարելից. ուր կամեցեալ զփորձ առնուլ՝
եթէ խաբին արդեօք ածքն, Է այլ խորտիկս ե-
հան

հան 'ի սեղան և զմարմին որդւոյ իւրոյ պեղոպայ՝ խորովեալ: Եւ իբրև այն ինչ դեմետրէ չնծուհին յանդգէտս սկսաւ ուտել 'ի մսոյ անտի, և համեղ գտեալ զայն՝ ազատեաց զմի կողմն բամակին, զգացեալ դիսն զգաւաճանութիւնն, պատուհասեաց զտանտաղոս՝ առաքելով զնա 'ի դժոխս. իսկ զպեղոպայ զխորովեալ մարմինն անդրէն կենդանացոյց. և 'ի տեղի այնր մասին՝ որ կերեալն եղև, հաստեաց նմա նոր քամակ փղոսկրեայ, կամ 'ի փղոսկրէ շինեաց զմի կողմն ուսոց նորա: Իսկ թէ զիարդ մեկնեն ոմանք զայս առասպել, չէ տեղւոյս պճեա լինել այնմ:

(166) Հերակլէս հսկայն յաղթահարեալ զդիոմեդէս զարքայն բիստոնիոյ կամ թրակիոյ, որ զերիվարս իւր կերակրէր 'ի մարմնոց օտարաց և հիւրից եկելոց առ նա, զնա ինքն էարկ առաջի երիվարաց իւրոց 'ի կերակուր: Եւ յորժամ վաստակեալ անձամբ գնաց հերակլէս առ սիրելի բարեկամն իւր ադմետէս արքայ փերէյացւոց 'ի թեսաղիա, և հիւրընկալեալ 'ի նմէ՝ նստաւ յընթրիս, տեսանէր զերեսս ադմետայ տխուր. եհարց զպատճառն. այլ նա ոչ եհան նմա 'ի վեր, զի մի և նա տխրեսցի: Իսկ մի ոմն 'ի ծառայից տանն գաղտ ծանոյց հերակլի, թէ մեռաւ 'ի սոյն աւուրս աղկեստիս թագուհին, և այն իսկ է պատճառ տրտմութեան տն̃ մերոյ: Յայնժամ տրտմեցաւ յոյժ և հերակլէս, և ընթրիքն համադամ կերակրոց դառնացաւ նմա: Այլ սկսաւ սրտով գանգատել զադմետայ, և ասէ. եթէ ճշմարիտ բարեկամ զիս քեզ գիտէիր, չէր պարտ թաքուն ունել ըզցաւս քո և առանձինն վշտագնիլ, այլ հաղորդել և ինձ զնոյն տրտմութի: Իսկ մահ թագուհւոյն՝ այսպիսի օրինակաւ աւանդի լինել ըստ առասպելաց: Հիւանդացեալ ատեն երբեմն ադմետայ՝ ընուաւ տալ 'ի գից, թէ ոչ այլազգ հնար է քեզ ազատիլ 'ի մահուանէ, եթէ ոչ փխնակ քո յանձն առցէ ոմն 'ի սիրելի մերձաւորաց քոց ինքնակամ մեռանիլ: Զայս լուեալ կնոջ նորա աղկեստեայ՝ խնդրեաց մահ անձին, և մեռաւ. և յայնմ միջո-

ցի

ցի եհաս ասեն հերակլէս 'ի տուն անդր: Այլ յաւելուն առասպելաբանք, թէ յետոյ դիքն յարուցին զաղկեստիս:

Դելով կամ լեառն, ըստ յն. Δῆλο. և ըստ լատ. (167)
Delos կոչեցեալ, էր գաւառ կեռսի տխաանաց-ւոյ, կամ ըստ այլոց՝ կռնոսի: Արդ՝ ըստ առասպելախօս դիւցաբանից, յորժամ սիրեաց զա-դիոս և յղացոյց, հերա կին դիոսի զչարեալ ընդ այն՝ երդմնեցոյց ասեն զերկիր, զի մի տացէ ուրեք զետեղ տեղի ծնանելոյ զմանկունս իւր. և կարգեաց զվիշապ օձ մի պիւթոն անուն՝ պհել լինել նմա սուր և երթիցէ: Այլ պոսիդոն չած ծովու գթացեալ 'ի նա՝ 'ի վեր եհան 'ի ծովէ նոր կղզի, որ կոչեցաւ դելոս, (ըստ յն. Δῆλος, որ թարգմանի յայտնել). անդ ծնաւ ասեն զետով զարտեմիս զդուստր իւր, որ և անաչիտ. և յետ սակաւուց զեղբայր նր զապողոն. որում մանկաբարձ լեալ իցէ նա ինքն արտեմիս: Յետ այսորիկ դէպ եղև ասեն զետովայ անցանել ընդ գաւառն լիկիոյ հանդերձ մանկամբք իւրովք. և յորժամ վաստակել և ծարաւեալ անձամբ խնդրեաց ըմպել ջուր 'ի լճէ միոյ, ոմանք 'ի շինականաց արգելին զնա և պղտորեցին զջուրս. և նա անէծ զնս. և նոյնժամայն 'ի գորտ դարձան նոքա, ասեն առասպելաբանք:

Պելասոր կամուրջն՝ որ 'ի վենետիկ կղզւոջ. (168)
միակամար՝ մեծադիր և լայնանիստ՝ շինեալ 'ի վր լայն առուի կամ ջրանցից ծովու, կոչի կամուրջ ռիալդեան, կամ Ponte di Rialto:

Օխախոսն առեալ լինի աստ եթէ 'ի տեղի ա(169)
բեայն, որ այլազգերէն Bb-Bb-Ն ասի՝ առեալ 'ի ծխոյն, և եթէ 'ի տեղի փոշւոյն՝ որ պ---ն-- կոչի, ը̅ քթախոտ. վա ընդ ընդունան ձգելոյն: Արևմտեայք զերկաքանչիւրն ևս կոչեն տապակօ, յանուն կղզւոյն՝ ուր յառաջ բուսանի ասեն. ոչ և երբեմն նիկոտեան խոտ անուանեն, իբր զի ասեն՝ յետ բացման նորոյ երկրի ը̅ ամերիկոյ, նախ զառաջինն բերին ոմանք 'ի փլորիտայ կղզւոյն ամերիկոյ զծխախոտ առ նիկոտիոս դեսպան ար-

 քային

վայրին գաղղիացւոց յուլիսախպագմա. և նա և-
մոյծ զկիրառումն նորա առ գաղղիացիս. յորոց և
առ այլ եւրոպացիս տարածեցաւ խոպառ: Իսկ
թէ արևելեայք երբ սովորեցան յուսեա 'ի գործ
արկանել զխառն՝ քան զփոշին, չէ մեզ յայտ:
Որպէս և իցէ որովհետև յատուրս Թեատւրոսի
դեռ այն ինչ սկսեալ էր յաճախել սովորութիւն
ծխախոտի յարեւմուտս, բազումք հնարեցան պէս
պէս պատճառօք համոզել զմարդիկ յետս կալ 'ի
յաճախ կիրառութէ նորին, ոչ միայն վս չլինե-
լոյ նորա այնչափ օգտակար՝ որպ կարծիւր, այլ և
վասն պժգալեայն՝ որ հանդիպէր յանվայել կիրա-
ռուէ նորին ըստ քաղաքավարութե յանդիման
այլոց. և ահա յայսմ մասին ծանուցանս և սաստիկս
խօսեցաւ հեղինակս. և այն՝ որպէս երևի, 'ի մա-
նաւոր թելադրութէ դքսին սարուգինոյ՝ առ 'ի
կարճել զայս սովորութիւն 'ի միջոյ մեծամեծաց,
կամ գէթ մեղմել. այլ ոչ սորա բանք և ոչ այլոյն
ազդեցին կամ ազդեն ինչ ըստ արմատացեալ սո-
վորուէ: Երանի թէ առցեն ոմանք 'ի բանից սո-
րա սորա խրատ զգուշութե գէթ վս չսկսանելոյ՝
թէ չև են սկսեալ. զի դիւրին է չսկսանիլ՝ քան
յետ սկսանելոյն դադարել:

(170) Զեզնորէն նմանեցուցանէ հեղինակս զծխախոտն՝
առողջարար խոտոյն այնմիկ, զոր հելլենացիք կո-
չէին βήχιον, գովութբ յիշատակեալ 'ի հոմերոսէ
'Ի Է. Գիրս. բանաստեղծութեց խղխնական պա-
տերազմի: Անուն այնր խոտոյ կոչեցաւ առեն 'ի
գառզէ նորա, որում անուն էր պէքս կամ բէքս.
որոյ բժշկեալ իցէ սովաւ զպղուտոն անբուժե-
լին՝ զկարեվէր խոցեալն 'ի հերակլէ: Այս թէ
և ամերիկացիք զծխախոտն կոչեն պետոն կամ
բեգում:

(171) Կամի ասել. թէ 'ի փռնգալն մարդոյ՝ սովորու-
թիւ է մերձակայից ողջունել զնա բարեմաղթու-
թբ. որպ թէ զերծեալ իցէ 'ի վտանգէ՝ որ կարէր
պատճառիլ 'ի ցնցմանէ ուղղոյն և ոգւոցն. քան-
զի և դիպեալ իսկ է մեռանիլ ոմանց յայնպիսի
արկածից. և կմ թէ համարելով զայն յառաջ ե-
կեալ

կեալ յաւելորդ եւ 'ի ճատակար հիւթոց՝ մաղ-
թեն զերծ լինել անտի անվնաս։ Արեւմտեայք
յորջորջեն անդ զփռնչօղն՝ ասեն. Ճհ օֆնալիմ էֆէ-
ֆի թէդ. կի՞ պանէսդէ 'ի լուէ. եւ զայլ ինչ նման սո-
ցին. եւ յայս մտօ խօսի Թեսալոս։ Իսկ մեք
հայերէն ասեմք տատաչքալեն (նէգէ). որ եւ տաճ-
կերէն ասի հայր օլա, կամ հայըրլը օլա. որ յաջո-
ղութիւն լիցի, կամ բարենշան եղիցի. որ եւ հայի
նոյնիմ առ բարեմաղթութիւն անձին. եւ ոչ որ ո-
մանք անտի առմամբ զհետ բերեն, թէ յիշեցին
զիս ոմանք 'ի հեռաւոր տեղիս, կամ թէ նոր ինչ
բարեյաջող լուր կայցէ ակնկալութիւն։

Սա ինքն է գլխաւոր որդի արեւի ասացեալ (172)
արքայ Թրակիոյ. զորմէ յիշեցաք 'ի վերոյ՝ թէ
զերիվարս իւր կերակրէր 'ի մարմնոց մարդկան.
որդ՝ ասի առ բանաստեղծս, թէ երիվարք նորա
էին ամեհիք յոյժ. եւ հուր շնչէր ընդ ռնգունս եւ
ընդ բերանս նց. փոխ ասելոյ թէ արեամբ շաղա-
խեալ էին։ Այնն նման ասացաւ եւ զառասպելեալ
ցլուց կարգելոց 'ի պահպանութիւն ոսկի գեղմանն.
զորս ցուլս յասոնի կոչէ Թեսալոս, զի յասոնն
էր առաջնորդ արգոնաւորդաց՝ որք գնացին 'ի
յափշտակել զոսկի գեղմն. եւ մեդիա՝ որ եղեւ կին
յասոնի. ուսոյց ասեն առն իւրում սանձել զայն
ցուլս հրաշունչս, եւ թմբեցուցանել զանկուն վի-
շապն ահագին։

Սան օծանելեաց կապոսայ՝ զորս 'ի կիր առ-(173)
նոյր անմիրաղ, տես 'ի սարբեւ 'ի համարն (269)։

Ծանօթութիւնք չորրորդամասնեայ գրոց։

Դ՝իդիմոս քերթող աղեքսանդրացի՝ ծաղկեցաւ (174)
յաւուրս օգոստոսի կայսեր. կարգեցաւ ուսու-
ցիչ 'ի հռովմ. եւ գրեաց գիրս կամ ճառս եւ քեր-
թուածս թուով 3000. կամ 3500. ըստ այլոց՝ 4000.
եւ վա անձանձիր ուսումնասիրութե իւրոյ կոչե-
ցաւ Խալքէնդէրոս, այսինքն ունօղ զաղնձանիւթ ա-
ղիքս, կամ պղնձի աղիք։ Ոմանք եւս կոչեցին
զնա գրամոլաց. զի այնչափ ինչ էր շարագրեալ
մինչեւ

մինչև մոռանալ զառաջեալսն այլուր. ոչ և փոր-
ձիւ ունաւ. զի 'ի պախարակել նորա զպատմու-
թիւն գրեալ յայլմէ իբրև յայտնի սուտ, հակառա-
կորդն 'ի մէջ բերէր՝ թէ ասա և 'ի գիրս քո սուտ
դի այդ իբրև սոսկ յայն ինչ գլուխ բանից. զո-
րինքն ոչ յիշէր: Այլք ևս գրամոլ անուանեցին
և յաւէտ ևս վայրախօս և ժամավաճառ. զի ըղ-
բաղում ինչ իրաց ստուեաց գրեաց ընդ վայր. ոչ
յիշէ և հեղինակս: Այլ է և դիդիմոս աղեքսան-
դրացի եկեղեցական մատենագիր՝ յաւուրս Թէ-
ոդոսի մեծի:

(175) Զայս գործ փիլոնեանեաց լեզոյնս առաջի ե-
դաք 'ի վերոյ 'ի համարն (112): Իսկ նախընթաց
ասացուածն, [illegible], որ առանց ան-
ուան հեղինակի դնի, առեալ է 'ի կիկերոնէ.
Գիրք. Ա. Ե՛ւ, առ եղբայր իւր կուինտոս:

(176) Դեմադէս էր ճարտարարան ումն աթենացի՝
յառաջ եկեալ 'ի նաւավարութէ, նախանձաւոր
պերճախօսութե դեմոսթենեայ մեծանուն հռե-
տորի՝ և նմանօղ նմա: Եւ սորա երկոքին այլ և
այլ ճանապարհաւ հնարէին պատել զհայրենիս
իւրեանց 'ի ծառայութէ փիլիպպոսի արքային մա-
կեդոնացւոց. դեմոսթենէս՝ զաթենացիս գրգռե-
լով, և դեմադէս՝ որ անկեալ էր 'ի ձեռս մակե-
դոնացւոց՝ զնոսա հաւանեցելով: Բազում ինչ խօսէր
դեմադէս քաղցրաբանութբ առաջի արքային, և
սիրելի լինէր յաչս նորա. այլ երբեմն ևս ճար-
տար բանիւք յանդիմանէր զարքայ՝ վս հարստա-
հարելոյ նորա զգերիս կմ զաւրուկս, և առաւել
ևս վս սնոտի խրախտանաց նորա ը յաղթութեն
զոր արար 'ի քերոնիա, և էառ զկորնթա քա-
ղաքն աթենացւոց:

(177) Քսենոկրատէս փիլիսոփայ անուանի՝ էր աշա-
կերտ պղատոնի, միանգամայն և աշակերտակից
արիստոտելի, ծաղկեալ բարոյական վճպութբ
և անսադիւտ վարուք. մականուանեալն [illegible]-
[illegible], այսինքն անծիծաղ կամ անծաղր՝ վասն ծանր
բարուցն: Զամանէ բազում ինչ իրք պատմին վս
առաքինի քաղաքավարութե նր. և [illegible]

կեշտութն, ը̅ անընչութն. և ը̅ անկեղծ ճշմարտախօսութն. մինչև զի ծերակոյտն աթենացւոց՝ որ ոչ ուրուք վկայութն հաւատայր երբեք յատենի առանց երդման, սմա և եթ տիրապէս հաւատս ընծայէր առանց պահանջելոյ զերդումն ինչ:

Հաբրիաս էր ասպետ ոմն հռովմայեցի, որ (178)
սպան զսատուրնինոս ապուլէոս տրիբունն՝ զայր խռովարար. և զի առանց իրաւանց թուէր զայն արարեալ, չարախօս եղև զՀաբրիոսէ տիտոս լաբիենոս տրիբունն. այլ կիկերոն հռետորն արդարացոյց զՀաբրիոս: Կայ և այլ Հաբրիոս ասպետ հռովմայեցի՝ պոսթումոս կոչեցեալ. յորոյ վր եւս եղեն այլ ամբաստանութիւնք 'ի մեմմիոսէ տրիբունէ վն կաշառոյ կամ գողունի դրամոյ. բայց նա ինքն կիկերոն եկաց 'ի պաշտպանել և նմա: Այլ է և Հաբրիոս բանաստեղծ ժամանակակից ովիդիոսի. և Հաբրիոս ճարտարպետ անուանի յաւուրս դոմետիանոսի կայսեր: Բան հեղինակիս հայի առ մին յերկուց ասպետաց. յորոց վերայ կան ատենախօսութիւնք կիկերոնի:

Նարկիսոս՝ ըստ առասպելաց կոչեցեալ որդի կե- (179)
փիսոս գետոյն. և լիւրիոպեայ յաւերժահարսին դստերն ովկիանոսի, էր մանուկ գեղեցիկ յոյժ. որ արհամարհէր զգեղ կանանց առ հասարակ, և ոչ ումեք 'ի նցէ հաւանէր: Եկեալ սորա երբեմն 'ի դաշտէ՝ մատեաւ յաւազան աղբեր՝ կամ յառու մի գետոյ ըմպել ջուր. և 'ի խոնարհել զգլուխն՝ տեսեալ զպատկեր դիմաց իւրոց 'ի ջուր անդ իբրև 'ի հայելւոջ, հարաւ 'ի սէր իւր, և ը̅արմացեալ՝ փոխեցաւ 'ի ծաղիկ, որ յանուն նր կոչեցաւ նարկիս. տամկ. ՆԵՐՃԻՍ: Եւ այս դիպաւ սմին առասպելարկուք 'ի պատիժ նր. զի որ անգոսնէր զգեղ այլոց 'ի սիրոյ գեղեցկութե իւրոյ խռանեցաւ: Ցայս հայի ասելն մագիստրոսին մերոյ 'ի թուղթն առ կարծեցեալ ոմն գիտնական. " Բայց քեզ գերապանծ պանծալովդ ը̅
,, նարկիսեայ յորսուց դարձեալ պատահեցի աղ-
,, բեւր ||: Այլք ասեն, թէ նարկիսոսի էր քոյր

մի

մի՝ ամենևին նման նմին. և եղև 'ի կորնչիլ կամ
'ի մեռանիլ քեռն նր՝ երթայր նա յափն գետոյն,
զի տեսանել զդէմս իւր 'ի ջուր՝ մխիթարեսցի իբր
տեսութե քեռն իւրոյ: Թւ՛ոյ զոր այլք այլազգ
գրեն. և պէսպէս մեկնաբանեն. բովանդակն է
կեղծիք: Գրեն միապատիք՝ թէ կայր շիրիմ յա_
նուն նարկիսեայ 'ի բնակութիւն գաւառի. առ որով
լռիկ և անշշունչ գնային անցաւորք. վէպ և կո_
չիւր գերեզման լռութե:

Իսկ պարոնիէ՝ կամ ըռճառչէն՝ էր ասեն այլ մա_
նուկ գեղեցիկ դիմօք և իմաստուն մտօք. որոյ
տեսանել՝ թէ գեղ իւր 'ի գայթակղութ լինի բազ_
մաց, խոցոտեաց ինքնին զշրթունս իւր, և խան_
գարեաց զվայելչութի դիմաց իւրոյ:

(180) Օ սոկրատէս փիլիսոփայն՝ զծաղկեալն բարոյա_
կան իմաստութ և ընտիր քաղաքավարութ իւր
մի միայն աշակերտին 'ի մէջ հելլենացւոց, 'ի մէջ
բերէ հեղինակս առ 'ի խրատ իմաստուն անձանց.
որք թէպէտ և չիցեն վայելուչ դիմօք կամ առոյգ
մարմնով, շա՛տ է նոցա զգօնութի մտաց և վարք
բարի. զի այս ձիրք բազում առաւելութ լինին
զպակասութի բնական. և առնեն գովելի ոչ միայն
յաչս Այ, այլ և առաջի մարդկան. քանզի ամէքի
առաւել գովեն զիմաստունն և զառաքինին՝ ան_
մանն 'ի գեղոյ, քան զգեղեցիկ մոլին: Թւ՛ոյ զ
ասէ կիկերոն 'ի դ. գիր. յղ. Հարճանաց. գլ. 22.
"Ուղղութ մարթի և գեղեցիկ կոչիլ (այր ի_
,, մաստուն և առաքինի). քանզի գծագրութիւ
,, հոգւոյ առաւել գեղեցիկ դատանին՝ քան մարմ_
,, նոյ||:

(181) Սա ինքն ագաթոկղէս՝ որ էր որդի առն բրուտի
'ի կաղարբիոյ, եղև անուանի բռնակալ 'ի սիկի_
լիա. որ և բազմօք յաղթահարեաց զկարքեգոնա_
ցիս՝ իբր 300 ամօք յառաջ քան զՔն: Սա՝ ամ ա_
ռի, նաև յաւուրս իշխանութե իւրոյ խեցեղէն ա_
նօթս 'ի կիր առնոյր յարքայական սեղանի, առ
անմոռաց ունել զարհեստ հօրն՝ և զնուաստ վի_
ճակ տոհմին իւրոյ:

(182) Մարկոս տերենտիոս վարրոն՝ էր հիւպատոս
հռով_

հռովմայեցի. որոյ ելեալ 'ի պտրզմ նիզակակցութբ ղուկիոսի եմիլիոսի պօղոսի՝ ընդդէմ քաջին աննիբաղայ կարքեդոնացւոյ առ կաննայ քաղաքաւ ապուլիոյ պեւկետեայ, 'ի պարտութեն մատնեցաւ չարաչար, և խորտակեցան զօրք նորա. մինչև անկանիլ քառասուն հազար արանց 'ի գնդէ հռովմայեցւոց: Նա եղև 'ի դառնալ նորա կորանօք 'ի հռովմ, մեծամեծք հռովմայ փոխ պատուհասելոյ զնա՝ ընկալան բազում մարդասիրութբ, և կամեցան ընտրել 'ի պաշտօն դատաւորուն՝ որ կոչիւր դիկտատօր. զի մի անկցի լքումն 'ի սիրտ քաղաքացւոց վասն այնպիսի մեծի կոտորածին. բայց նա առ ամօթոյն չէառ յանձն զայն պատիւ: Այլ է և անուանակից սորա մարկոս տերենտիոս վարրոն՝ երեւելի մատենագիր հռովմայեցի, ժամակից կիկերոնի. որ և այլ ոմն ժամակից նորուն՝ տերենտիոս վարրոն՝ ատակինոս կոչեցեալ, անուանի բանաստեղծ գաղղիացի 'ի նարբոնայ. զորոյ գրուածս օրինակ առնոյր վիրգիլիոս 'ի յօրինուածս ընտիր քերթուածոց իւրոց:

Եմպեդոկլէս ակրագանդացի 'ի սիկիլիոյ՝ իբր (183) 450. ամօք յառաջ-քան զքս. էր փիլիսոփայ բնազննին և բժիշկ. որոյ գնացեալ 'ի լեառն եանայ՝ եթող զընկերս իւր առ ստորոտով լերինն, և ինքն մերձեցաւ 'ի հրաբուղխ տեղին. զի 'ի բոցակէզ լինել իւրում անտես 'ի մարդկանէ՝ կարծեսցի յերկինս փոխադրեալ. այլ սակայն երկաթի կօշիկք նր 'ի դուրս ստուացեալ 'ի լեռնէ անտի՝ յայտնի արարին զպարտաչար կիղումն նորա: Այլք ասեն, թէ գիպուածով կիզաւ նա, և ոչ կամովին. իսկ այլք՝ թէ 'ի նուաղել իւրում 'ի ծերութե՝ 'ի ծով անկաւ և հեղձաւ. զոր արդէք ոմանք առաւել հաւանական համարին: Այլ զառաջին կարծիս հաստատէ և նոննոս մեկնիչն ածաբանի՝ գրելով այսպէս. "Եմպեդոկլէս այս՝ սի-
„ կիլիացի էր ազգաւ, վարժեալ պիթագորական
„ իմաստութբ, և կամեցեալ անմահանալ՝ եթէ
„ որբազանեալ յերկինս վերացաւ, արկ զանձն
„ իւր 'ի հուրն՝ որ ելանէ 'ի լեռնէն սիկիլացւոց
„ յետ.

„ յեանէ. զի այս է անուն լերինն, այլ հուրն
„ ասի թէ հեփեստոսի խառնելեքն է: Արդ՝ նա
„ կործեալ 'ի ձեռն հրոյն. այլ մծ կամեցեալ հրա-
„ պարակել զանփառութի նր՝ և զգի նորա ողջ
„ հրոյն 'ի բաց եա թքանել, նախ զհողաթափն՝
„ և ապա զմարմինն այրեցած խանձողեալ. և
„ այսպէս ծանուցաւ՝ թէ ոչ վերացաւ, այլ կե-
„ զաւ ը̅ արժանի անփառութե իւրոյ||:

(184) Ասկղեպիոս, ըստ յն. Ἀσκληπιός. և ըստ լտ. Esculapius, համարիւր չա̅ծ բժշկութե, որդի ապողոնի՝ և աշակերտ քիրոնի ձիացլու. բժշկեր առեն զցաւս անբուժելիս, յորոց յուսահատ լինէին բժիշկք, մինչև մեռելոց անգամ յարուցիչ լինել 'ի ձեռն դեղոց առասպելեն դիւցաբանք: Հնութիւն ճմին եա զայսպիսի ընծայել նմա. այլ ը̅ սորա պատմութեց՝ քանի մի ևեթ ըսկզբունք բժշկութե գտան յասկղեպիոսէ, ոճ և արուեստ հանելոյ զատամունս: Նկարիւր սա երբեմն 'ի ձև օձի, և երբեմն ոճ ծերունի ոք՝ ունելով 'ի ձեռին գաւազան օձապատ: Մին 'ի համաստեղութեց՝ որ կոչի օձ, սմա ընծայի. որպէս թէ նա ինքն ասկղեպիոս անդր փոխեալ իցէ. իբր զի օձն է նշանակ բժշկականուե՝ վս պիտանութեն 'ի դեղորայս. և դարձեալ նշանակ նորոգութե կենաց՝ վասն փոխելոյ զխորխն հնացեալ. ոճ և խորագիտութե կամ հանճարոյ՝ որ հարկաւոր է բժշկի: Բայց ը̅ ոմանց՝ ասկղեպիոսի նըշանակն 'ի համաստեղութիս ոչ է օձն, այլ՝ օձակալն. և յայս միտ գրէ նոննոս՝ ասելով. * իսկ
„ օձակալ ասի գոլ ասկղեպիոս՝ վերատեսուչ
„ բժշկականին. և նշանակէ օձգ զոչ ծերանալն.
„ զի ասի՝ թէ մերկանայ զծերութին, և նորո-
„ գի. արդ քանզի ասկղեպիոս 'ի ձեռն բժշկա-
„ կանին նորոգէ զմարդկային մարմինս, առնեն
„ զնա հանդերձ վիշապաւ. արդ՝ կամելով ածքն
„ սրբազանել զնա, փոխեն պատկերի 'ի ձեռն ա-
„ տեղաց սրբազանեցին յերկինս||:

(185) Գոնսալվոս կորդովա, ըստ իտալ՝ Consalvo Cor-dova, անուանի զօրավար՝ էր 'ի կորդովեան ե-րևե-

բևեռի տանէ սպանիացւոց. դուքս դեռռանովայի
և իշխան վենուսայի, և գոնդստապլ թ̃րութն
նէապօլսոյ. մեռաւ յամի տն̃. 1612։

ՑԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԴԻՑ։

Դեմետրէ կամ դիմետր, որ յունարէն կոչի (186) ԴԻՄԻՏԻՐ, և լատ. ՑԵՐԵՍ, որպէս և իտալ. ՑԵՐԵՐԷ. ըստ դիցաբանութեան հելլենացւոց՝ էր դուստր կռոնոսի, և քոյր դիոսի. համարեալ շնորհի արմտեաց և պտղաբերութեան երկրի. որպէս և անունն իսկ ստուգաբանի առ յոյնս՝ երկիր մայր. կամ տուիչ մայր։ Սա ասեն ամուսնացեալ ընդ եղբօր իւրում դիոսի՝ ծնաւ ուստր մի բաքոս անուն. որ և դիոնիսոս ասի՝ չա̃ծ խաղողոյ և գինւոյ. և դուստր մի՝ որ կոչեցաւ պերսեփոնէ, (ը̃ յն. ՓԷՌՍԷՓՕՆԻ, և ը̃ լտ. ՓՌՕՍԷՐՓԻՆԱ). զոր գտեալ 'ի դաշտի ուրեք սիկիլիոյ յափշտակեաց ասեն սանդարամետն պղուտոն, և տարաւ 'ի խորշս խաւարինս՝ որ 'ի դժոխս, առնել իւր հարսն։ Իսկ մայր նորա դեմետրէ խնդրեալ զնա զօրն ողջոյն՝ և ոչ գտեալ, ելոյց ապա ջահս 'ի հրոյ եթնայ լերին. զի և 'ի գիշերի շրջեսցի 'ի խնդիր դստեր իւրոյ։ Եւ յետ յածելոյ ընդ ամենայն երկիր՝ իմացեալ թէ նա 'ի սանդարամետս անդնդոց պահի, դիմեաց առ դիոս՝ զի նա հնարեսցի հանել զդուստր իւր. իսկ նա ասէ. հնար է նմա ելանել յանդնդոց. եթէ չիցէ ինչ ճաշակեալ անդ. այլ քանզի կերեալ էր նորա զերիս կամ զեօթն հատս նռան յեղիսեան դաշտէ, վ̃յ չկարաց ելանել անտի. Այլ հուսկ յետոյ թոյլ տուաւ, զի զկէս տարւոյն ընդ առն իւրում պղուտոնի լիցի 'ի ստորինս երկրի, և զկէս այլ ընդ մօր իւրում դեմետրեայ 'ի վերայ երկրի։ Ահա յայսպիսի առասպել ձևացուցանէին բանաստեղծք զլուսինն, որ երբեմն լուսնոյ՝ և երբեմն նուազի. երբեմն է 'ի մի կողմն՝ և երբեմն 'ի միւս կողմն հաղագն.

զագնտոյս ։ Թողից և զայլ հետեւանս այսր առաս-
պելոց վասն յամրեալ պատուոյն. զի ըստ բա-
ւականին բացատրէ հեղինակն 'ի կարգի անդ բա-
նից իւրոց ։ Ըստ մասին յիշատակէ զայսոսիկ և
նոննոս՝ յասելն. * Գիմէտր ունէր դուստր զպեր-
„ սեփոնէ. զնա յափշտակեաց պղատոն. և շրջե-
„ լով գիմէտրի և խնդրելով զդուստրն՝ եկն յատ-
„ տիկէ. և իջավանեալ առ տրիպտողմեայի ու-
„ մեմն 'ի գեղն որ կոչի եղեւսինէ. արդ իմացեալ
„ 'ի տրիպտողմեայէ՝ թէ պղատոն յափշտակեաց
„ զպերսեփոնէ, յաղագս այսր երախտեաց ետ
„ տրիպտողմեայի զսերմանիս ցորենոյ և գարոյ,
„ ոսպն և ոլոռն և զայլ սերմանիս, պատուէր
„ տուեալ ոչ մնալ, այլ՝ շրջել և ցրուել ըղ-
„ սերմանիսն առ ամենայն մարդիկ. զի ուսցին
„ զսերմանելն և ուտել զպտուղս ընտանիս՝ գոր-
„ ծելով զերկիր. քանզի յառաջագոյն ուտէին
„ կաղինս վայրի անկոց անտի. վասն որոյ քանզի
„ կաղնոյն յունարէն փիգոս (այսինքն φηγός) ա-
„ սէն, ուտելոյն առացու փագին (այսինքն φα-
„ γεῖν) || ։

(187) Հեղինակս մեր էմմանուէլ թեասուրոս՝ բաց յայլ
գործոց իւրոց ունի և գիրս մի շարագրեալ խառ-
լերէն 'ի վր հռետորական ձեւոց և արուեստա-
ւոր առացուածոց՝ ըստ ընթացից արիստոտէլի,
անուանեալ cannocchiale aristotelico, այսինքն
դիտակն ( կամ տեսրպխն ) արիստոտելեան.
և ահա այն գիրք է՝ յոր յղէ աստ զընթեր-
ցողս ։

(188) Բառս [illegible] անձկօրէն առեալ լինի
աստ որպէս և առ բառինս՝ [illegible], 'ի տե-
ղի անուշավարութեան՝ կամ հաճոյական զրու-
ցարանութեան, զոր վարեն անձինք ազնուա-
կանք և գիտնականք 'ի վայելուչ և յախոր-
ժալուր զուարճախօսութիւնս, յօդելով զբանս
իմաստալից եղերօք. յորս պէսպէս գիւտ և
անակնկալ ձեւք կամ փոխաբերութիւնք առա-
ջի դնին ։ Յայս միտ և 'ի նախընթաց գլուխս
ծանոյց հեղինակն, թէ արիստոտէլ իսկ քաղա-

քա-

քաղաքութն կոչեաց զզուարճախօսութիւն :

Թովմաս սոփիստոս՝ ասպետ մաղգայրու, էր (189)
բանաստեղծ կմ տաղասաց յիտալական բարբառ.
որ մեռաւ 'ի մէջն ԺԷ դարու :

Սա ինքն է մարկոս որեղիոս կայսր՝ մականուա- (190)
նեալն եղիոգաբաղոս կամ աղագաբաղոս 'ի ըն-
կերըն երրորդ դարու, խենէշ բարուք, և անա-
ռակ վարուք :

Կիկղոպ կամ կիկլոպս կոչին առասպելեալ հըս- (191)
կայք գագաթականեայք կմ միականիք 'ի ճակատս,
որպէս յիշեցաւ 'ի համարն (42). և (69) :
Արդ կամի ասել ովրատիոս, թէ կիկղոպն կամ
այլ ոք նմանեալ կիկղոպայ ըստ կերպարանացն,
վասն միականի գոլոյ և յաղթանդամ այլանդակ՝
յելանելն 'ի հանդէս չունի կարօտութիւն ար-
կանել յերեսս դիմակ նորատես 'ի ծաղր շարժել
զայլս. երբ ունի յինքեան բնական այլանդա-
կութիւն անհեթեթ և ծիծաղաշարժ կամ աճար-
կու :

Տէր ըստ լատ″ ամօ—, և ըստ իտալ″ ամօ—է, ա- (192)
ռեալ լինի տառանոր փոխանակ չայն սիրոյ. որ
նկարեւր երկոքումբք աչօք կոյր. և համարեւր
որդի ափրոդիտեայ. որ համարեալն է չածուհի
գեղոյ :

Յայտնի են իմաստք բանիցս՝ որոց դիտակն են (193)
պատմութեանց հռովմայեցւոց : Վասն կատոնի ու-
նիմք ասել 'ի սորին 'ի համարն (205) : Իսկ ներ-
ուաս կայսր հռովմայ՝ որ նստաւ յամի տն 97.
կամ 98, եղև մին 'ի գովելի ինքնակալաց, հեզու-
թեամբ և իմաստութբ թագաւորեալ, այնչափ՝
մինչև 'ի տեսանել երևելի անձանց զայսպիսի իշ-
խան, առաւել ընտրելի համարէին զկայսերական
միապետութիւն՝ քան զծերակուտական հասարա-
կապետութն որպէս և զհակառակն դառէին՝ երբ
յայլ անպիտան կայսերս հայէին : Ըստ աշա զայս
կամի յայտնել բանաստեղծն մարտիաղէս՝ այնու
բանիւ. "եթէ դառնայր արդ կատոնն յաշխարհ,
„ զկողմն արդեօք ունէր զկեսառանոսի||. կամ ըն-
ներ [illegible]. որպ թէ ասել կատոնն ճարտա-
րա-

րախօս՝ որ չէր հաւան ը միահեծան ինքնակալու-թն յուլիոսի կեսարու, այլ՝ ջատագով էր հասարակապետութն. եթէ կենդանի լինէր յաւուրս ներուասայ, անսանելով զարքելութի նորին՝ ջատագովէր զկարծիս յուլիոսի, ք թէ լաւ ևս է միապետութի քան զհասարակապետութն։

(194) Պարիս՝ որ և աղեքսանդրոս հռչի, որդի պրիամոսի արքային տրովացւոց, ըստ առասպելաց ընտրեցաւ 'ի դիսուէ դատաւոր՝ առ որոշելոյ զգատ երից չքնաղուհեաց, աթենասայ, հերայ, և ափրոդիտեայ, որք վիճէին ընդ միմեանս 'ի վերայ ոսկի խնձորոյ միոյ, որ եդեալ կայր յառենի դիցն՝ այսպիսի իմն մակագրութբ։ Գեղեցկագունին լիցի, կմ վասն նորա է՝ որ առաւել գեղեցիկին իցէ։ Իւ իւրաքանչիւրն յերից անտի խոստանային պարիսի տալ մեծ ինչ պարգևս ըստ զօրութե իւրեանց, եթէ զինքն 'ի մէջ երից դատեսցէ արժանի ոսկի խընձորոյ։ Յայնժամ պարիս անգոսնեալ զաթենաս՝ զօրինակն իմաստութե, և զհերա զօրինակն փառթամութե, ընտրեաց զափրոդիտէ զօրինակն գեղեցկութե, իբրև արժանաւոր ժառանգելոյ զայն ոսկի խնձոր։ Ընդ որ ուրախացեալ ափրոդիտեայ՝ ետ առեն պարիսայ 'ի պարգևս զհեղինէ, որ և եղենէ, զկին մենեղաւոսի արքային սպարտացւոց՝ զհամբաւեալն գեղեցկութբ. փոխ առելոյ՝ թէ պարիս յափշտակեաց բռնութբ 'ի յունաստանէ զհեղինէ. յորոյ 'ի պատճառս եղև մեծ պատերազմն իղիական, և քանդումն իղիոնի կամ մեծի քաղաքին տրովադայ։ Զայս նշանակէ և եւսեբիոս 'ի կանոնի իւրում՝ յաւուրս եսեբոնի դատաւորին եբրայեցւոց, յասելն. " Աղեքսանդրոս
" զեղենէ առեւանգեաց ( այսինքն յափշտակեաց զհէ.
" ղինէ ). և եղիական պատերազմն զատան ամ
" գումարեցաւ՝ վասն խնձորոյ գեղոյ ( երից կա-
" նանց ). որոց ընտրոյ տէր էր պարիս անդիորդ ||։

(195) Սա ինքն է իգիպոս կմ իգիպոտէս՝ որդի զայոսի արքային թեբայ, որ յանգէտս սպան զհայր իւր, և թզուրեաց. որպէս ասացաւ 'ի համարն (150)։

(150). Իսկ սփինքս՝ որ և սփինգս՝ ասի լինել դուստր Թիփրի ուրուին, կամ կին Կադմոսի. և մի իբրև յանցանաց իւրոց փոխեալ ՚ի խառն ճիւաղ ըստ առասպելաց՝ իբրև գազան չորքոտանի, առիւծաձև, թևաւոր, և վիշապատուն, դարանէր յայրի միում ՚ի դուրս Թեբայ կամ ՚ի կիրճս լերանց՝ գիշատել զանցաւորս. քանզի առաջի առնէր նց՞ առակս խրթինս և առեղծուածս մթինս. և յոչ կարելն նց՞ լուծանել՝ ձգէր զնս՞ ատամբն, և տարեալ յորջ իւր՝ յօշոտէր: Արդ՝ ՚ի մտանել Էդիպոսի ՚ի Թեբայս, առաջի արար նմա ասեն սփինքս զայն առած. ո՞ր կենդանի է այն, որ ընդ առաւօտս է չորքոտանի, ՚ի հասարակ աւուր երկոտանի, և ընդ երեկս եռոտանի: Եւ նա իսկ և իսկ ելոյծ՝ ասելով. է մարդն, որ ՚ի տիս տղայութե՞ է իբր քառոտանի ՚ի քայլելն. զի առ չկարելոյ յոտին կալ՝ յափսիթերս գնայ, երկու ձեռօք և երկու ոտիւք սողելով ընդ գետին. այլ յորժամ զարգանայ և քայլէ ոտիւք համարձակ, է տիրապէս երկոտանի. իսկ ՚ի ծերութե՞ առ տկարութե՞ ոտիցն կարօտի յենուլ և ՚ի գաւազան, որով լինի եռոտանի: Յայսմ պատուոյ զամօթի հարեալ սփինգայ՝ առ կատաղութե՞ ընկեց զանձն ՚ի ժայռս, և սատակեցաւ. կամ թէ նա ինքն Իդիպոս սատակեաց զնա, և Թեբեայց: Զայս ճիւաղ անգոյ՝ որ յունարէն ասի σφίγξ, և ստուգաբանի ձնչող կմ՞ կաշկանդող, պաշտէին եգիպտացիք և Թեբայեցիք՝ այլ և այլ օրինակաւ դրոշելով զպատկեր նր՞:

Մնջկատակ խմմ՞ զայն, որ առ յոյնս ասի παν- (196) τόμιμος, ի՞ ամենամիմոս, կամ ամէն նմանող. որպիսի էին ծաղրածուք կմ՞ կատակերգուք, որք ՚ի թատրոնս և ՚ի հանդէսս խաղալեաց ձևացուցանէին զնմ՞ ազգ շարժմանց ՚ի յայտարարութի՞ այլ և այլ կրից կամ գործոց այլոց, երբեմն անշշունչ իբրև զհամերս, և երբեմն հանդերձ ձայնիւ. այլ առաջիկայս բան հայի յաւէտ առ անձայն կատակողս:

Այս գրուած խորհրդաւոր կախեալ է յաւէտ (197) զնմա-

զնմանաձայնութիւնն է լատին բառիցս, Նոմէն էտ Նու֊մէն. որ թարգմանի ընդ ձայնին, Անուն և Աստուածութիւն (բարեբախտուն)․ որ է ասել․ զոր ինչ նշանակէ անունն՝ արդեամբք արժանի է այնմ ունողն զնոյն անուն ։

(198) Ողորմածուք պորտաբոյծք՝ զորս մեք պատառաքաղս կոչեցաք, ՚ի յունաց կոչին Փարասիտի, ընդ սեղանակապուտք կամ սեղանանենգք, որք թէ ՚ի ձեռն արուեստի ծաղրածութեան վայելողք ՚ի սեղանոյ այլոց ։ Կային և Թաչունք ինչ յոյն անուն անուանեալք ՚ի հելլենացւոց՝ վասն յարձակելոյ նոցա ՚ի մեհեանս գից, և գողանալոյ ՚ի սեղանոյ բագնաց զմիս զոհից ։ Իսկ հարպայք, յն․ Արբիէ, ընդ յափշտակիչք, էին ըստ բանաստեղծից թաչունք գիշատիչք՝ անյագք ՚ի կերակրոց, ՚ի կերպարանս աղջկանց հիւծելոց ՚ի սովէ․ որ և կոչէին դըստերք ծովու և ցամաքի․ ուր և հասանէին՝ ծախէին զնմ ճարակ, և պատճառէին սով անբերելի․ ընդ տեսանելն ուրեք սեղան եդեալ՝ ՚ի վերայ դիմէին և լափէին զնմ․ յոր ինչ և հպէին գարշ հոտով աղտեղէին, մինչև անմերձենալի լինել մարդկան․ և որչափ ոք վանէր զնոսա ՚ի բաց՝ անդրէն դառնային ։ Թող և զայլ բանս առասպելաբանութեանց․ յորոց ոմանք դեռ յափշտակիչս կոչեն զնս, և այլք այլազգ մեկնեն ։

(199) Ներէէ՛ որ ընդ ձայնին և ընդ նշանակութեան դըրեթէ՝ նոյն է ընդ բառիս Վէրրա․ զի թարգմանի խոզ արու կամ ոչ մալեալ, էր անուն ուրումն յիշխանացն հռովմայեցւոց ։ Սա կարգեալ ՚ի ծերակուտէն ՚ի վերակացութեան սիկիլիոյ՝ հարստահարեաց զբնակիչս տեղւոյն բռնաւորութեամբ, և կեղեքեաց զնս յոյժ․ և զայլ ևս բազում չարիս գործեաց յայլևայլ տեղիս ։ Վնս և կիկերոն ատենախօս մեծ ճարտարաբանն յոյզ և խնդիր արարեալ նմ գործոց նորա՝ խօսեցաւ ընդդէմ նորա երկարագոյնս և զօրագոյնս յատենի դատաւորաց․ և ՚ի կարգս այլոց բանից կշտամբել կամեցեալ զնա և ՚ի ստուգաբանութէ անուանն՝ ՚ի մէջ երեք զայսաւիկ․ Տեսեալ ասէ ժողովրդեանն զանօրէն օ֊

րէ֊

ընադրութեան գորա՝ վկայելին ասելով. չէ՛ն ինչ զարմանք՝ թէ 'ի վերբերսէ մարազային գործք գործեսցին, կի՛ զի՞արդ լինիցին իրաւացի՝ իրաւունք վերբերսի (դր խողի կամ մարազու)։ Այլք ասէ գժուարելին Է գործս քրմաց, որոց թողեալ ըզվերբերս մարազանման՝ զարժանին ստոտակման, կամ զպարարեալն իբրև զխոզ՝ օտարին ընչիւք, զայլս յանասնոց՝ զանմեղս կամ զվաստակս՝ 'ի ընտանդ զոհից մատնէին։ 'Ի մէջ էած կիկերոն և զգիր ինչ դաշանց՝ խարդախեալ 'ի վերբերայ. ուր երևէր գրեալ մաքուր գրչաւ առաջին մանկն անուան նորա Վերր, և միայեալ տառք ինչ եղծեալ. մինչև չիմանալ ընթերցողաց՝ արդեօք Վերրէս իցէ այն անուն, կամ Վերր—փ—, և կամ այլազգ ինչ. յորոյ վ̄ր այսպիսի կշտամբութի արար կիկերոն. տեսանէք ասէ զառաջին տառն ամբողջ. տեսէք և զվերջն, թէ զի՞արդ ողմաշաղախ կայ ձեռ վերբերսի (կամ մարազու)։ Այլ որ մեծն է. քանզի զայդ առենախօսութի արար կիկերոն յաւուրս գործակալութե իւրոյ 'ի վերայ չինուածոց, Ճարտարեաց գովին և զայլ ստեղծաբանութիւն. զի որովհետև այնպիսի գործակալաց էր գործ՝ հրաման տալ վասն լինելոյ գաղանամարտութե 'ի թատրոնի 'ի զբօսանս ժողովրդեան, 'ի վ̄ր երևր քաջ Ճարտարարանն. քանի գեղեցիկ դիպաւ ինձ ասէ կատարել փառօք զիմ պաշտօն. հանել յատեան զվերբերս (այսինքն զվարազ մայրենի), և անձամբ մենամարտիլ Է նմա յանդիման ամենեցուն, որոց զբօսալի է պարտութի նր. և այլ ևս սոցին նըման բանք։ Թող զոր այլք ասէին՝ թէ յիրաւի կոչեցաւ անուն նր վերբերս, որպէս թէ աւելածու, (զի Վերրօ՝ է ա—ել ածել), վ̄ս կողոպտելոյ նորա զգանձս մեհենաց. Նւ։ 'Ի վախճան ամի՝ զի մի 'ի ծառայութեն գաւառին հաստահիմն փաստաբանութեն իւր, յաւել ասել. "Այսպէս աւելորդ
" էր ինձ զայդսոսիկ յիշատակել... այլ ստէպն
" գովին իսկ յուշ առնել ձեզ կամեցայ, թէ զի՞արդ
" հրապարակեալ յածին 'ի բերանս ամենեցուն
" չարութիւք գորա և ապիրատութիւք. մինչև յա-
" ռակ.

,, ռակս խակ լինել ||։ Այլ կիկերոն՝ որ զմծ ճիգն յանձին եցոյց ըզդէմ առնս այսորիկ, ոչ այլ ինչ օգտեցաւ, բայց միայն՝ զի վերբերս ինքնակամ յաքսորս գնաց. և ինքն խակ կիկերոն յառաջ ըսպանաւ քան զվերբերս ։

(200) Սան քսենոկրատայ՝ որ կոչեցաւ ագելաստոս, յն. ἀγέλαστος. այս անծիծաղ կամ անծաղր, յիշեցաք 'ի վերոյ 'ի համարն (177)։ Այլ այս անուն ագելաստոս տաւելապէս սեպհականեալ է կըրասոսի հռովմայեցւոյ՝ հաւուն կրասոսի կոտորելոյ 'ի պարթևաց. քանզի ասի՝ թէ միանգամ ևեթ ծիծաղեալ իցէ 'ի կեանս իւր, յորժամ ետես զէշ մի՝ որ ուտէր զեկքան փուշ զճարակ ուղտու (այն է [illegible]). և ասաց. ահա ծամելիք գտեալ են զիւր ծամելին. կմ ահա աղցան յարմար քմաց ։

(201) Թուէ ո՛ որ իցէ տիմոն՝ տես 'ի համարն (159)։ Իսկ աստ կամի ասել հեղինակն, թէ բնութիւնն իբր վրիպակաւ հրէշս ինչ առնելով ետ օձարարոյ տիմոնի զկերպարան մարդկային. որում յաւէտ օձագէմ կամ գլխովին օձ պարտ էր լինել. որովհետև ունէր զգժնեայ բարս անմերձ 'ի մարդկանէ՝ հանգոյն օձի ։

(202) Հերակլիտոս կամ հերակղիտոս էր փիլիսոփայ ոմն եփեսացի, աշակերտ քսենոկրատայ ագելաստոսի, կամ ըստ ասելոյ այլոց առանց ուսուցչի ինքնին մտավարժ գտեալ և բնական ճարտարութբ յիմաստասիրութն կրթեալ։ Սա ոչ միայն անծիծաղ էր ըստ քսենոկրատայ, այլև դիւրալալարաստ 'ի լալ. զի յելանելն 'ի տանէ՝ յորժամ տեսանէր զաղմուկ որդւոց մարդկան, հայելով 'ի վերայ բազմավրդով վիճակի նոցա՝ յարատեւս հարեալ լայր իբրև սգաւոր ոք։ Անուն կոչեցաւ սմա 'ի հելլենացւոց σκοτεινός կամ սկոտինոս, որ թարգմանի խաւարային կամ մթին. և այս թէպէտ 'ի դէպ գայ անղուարթ բարուց նորա, այլ սակայն յոմն վիպասանից այս անուն ասի տուեալ նմա վն շարագրելոյ նորին բանս մթինս և խրթնածածուկս յաղագս բնութեան, զի աշխատութբ

ճգնեա-

Ճգնեցին այլք առ իմանալոյ զաստուածս իւր։ Եւ յայս միտ խօսի կիկերոն 'ի Ա. ԳԻՐՍ ՅԱՂ. ԲՆՈՒ-ԹԵԱՆՑ. ԳԼ. 5։

Իսկ Դեմոկրիտոս էր փիլիսոփայ աբդերացի՝ մականուանեալ ԳԵԼԱՍԻՆՈՍ կամ գելասինոս. յօ ծիծաղօղ կամ ծիծաղական. զի 'ի տեսանել զգործս որդւոց մարդկան՝ սակս 'ի ծաղր շարժէր 'ի վր̅ աղայամտութե̅ նց̅, և ծիծաղէր զնոքօք։ Սա հաւակ յետոյ կուրացոյց ան̅ զերկոսին զաչս իւր, զի մի խափան լիցին անզբաղ խոկմանց հոգւոյն։ Զերկու զայս փիլիսոփայս միանգամայն յիշատակէ և Նոննոս՝ յասելն. " Հերակլիտոս և Դիմոկրիտոս ոչ 'ի միում ժամի լեալք, այլ ընդդանականք գոլով՝ նմանապէս զաշխարհիս զայսորիկ զհետևմունս խաղ առնէին. մինն ծիծաղելով, և միւսն լալով. Դիմոկրիտոս սակս զիրողութի̅ք աշխարհիս ծիծաղելով, և Հերակլիտոս լալով. այլ Դիմոկրիտոս աբդերացի էր, " և Հերակլիտոս եփեսացի||։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՈՒԹԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԳԻՐՍ։

Ոչ ելորդ համարեցաք մի առ մի յիշել զորոն մի(203) զկնի միոյ յիշատակելս 'ի բանի անդ հեղինակիս. յորոց ոմանք 'ի մասնաւոր գործս իւրեանց, և ոմանք 'ի սովորական բարս՝ զայս կամ զայն պակասութի̅ մոլեկան բարձեալ բերէին։ Շատ լիցի իմանալ զմիտս Թեսաւրոսի, թէ զիարդ ի̅ համեմատութե̅ մի մոլութի̅ քան զմիւսն ամօթալի կոչի. և այն երբեմն առաւել կամ նուազ գտանի ի̅ վիճակի իւրաքանչիւր անձանց։ Թող զայն՝ զի ինչ ինչ 'ի մոլութե̅ց, որ նուազ ամօթալի երևին առաջի մարդկան, առաւել յամօթ առնեն զմարդ առաջի նոյ՝ յահեղ ատենին, քան զայլ մարդկային պակասութիս ինչ՝ որ առ մարդկան առաւել ամօթալի թուին։

Իղոս՝ որ և տրովս կոչի, էր արքայ դարդանիոյ(204) որ շինեաց զիղիոն կմ̅ զտրովաս, այն է մեծ քաղաքն տրոյիոյ։ Արդ՝ ի̅ առասպելաց գիտս ըն-

կէս յերկնից դարձան մի պալլասոյ չնծուհւոյ, պալլադիոնն ասացեալ. զոր նա ինքն իլոս յա-փշտակեաց, և փոխ նր գրօշեաց զայլ արձան նը-ման նմին, որոյ վն և պատուհասեալ կուրացաւ: Յաւելուն առասպելաբանք, թէ յետ ժամանա-կաց յառման տրովիոյ յոյնք կարծելով զերկնա-ւոր արձանն ՚ի քաղաքի անդ լինել՝ կորզեցին հնարիւք. այլ հռովմայեցիք համարէին՝ թէ յոյնք զերկրորդն առին. իսկ առաջինն այն փոխադրե-ցաւ ասեն ՚ի հռովմ: Իսկ վն դեմոկրիտեայ փոքր ինչ ՚ի վեր ասացաւ:

(205) Կատոնն անուամբ՝ (որ լտ. ասի ֆէլիս, և իտալ. գատտօ), բաղում եղեն որք երևելիք ՚ի մէջ հռով-մայեցւոց. այլ առաւել անուանի գտաւ մարկոս պորկիոս կատոնն՝ մականուանեալն իմաստուն և մեծ, որ մեռաւ իբր 150 ամօք յառաջ քան զՔն ՚ի հասակի 86. ամաց, այր իշխանաւոր և զի-նաւոր, զօրաւոր գրով և բանիւ և գործով. մի-չև ասել կիկերոնի զնմանէ, թէ եղև առենաբան ճարտարախօս, խորհրդական հանճարեղ, և զօ-րավար քաջ: Սա ասէր՝ թէ վն երից իրաց եթէ զղջացեալ է իմ. վասն անցուցանելոյ զօր՝ յորում չիցէ իմ ուսեալ ինչ նոր. վն հաւատալոյ զգաղտ-նիս իմ կնոջ իմում. և վն նաւելոյ ընդ ծով երբ կարօղն էի ը ցամաք ճանապարհորդել: Յետ մր անուանի եղև թոռնորդի սորին (թոռն որդւոյ նորին) մարկոս կատոնն իմաստասէր՝ այն է մակ-անուանեալն ուտիկեցի, կամ կատոնն կրտսեր, երևելի գտեալ յամի հանգոյն նախահաւուն իւ-րոյ, և առաւելեալ ՚ի մեծանձնութեան և ՚ի քա-ջարտութեան. սիրէր զիմաստասիրութիւն, այլ մե-ռեալ զհետ աղանդոյ ստոյիկեան փիլիսոփայից: Սա է՝ որ երբեմն միախոհ գտաւ ընդ կիկերոնի հռետորի, և այլ հակառակ. ջանացաւ միարա-նել զյուլիոս կեսար ը պոմպէի, և յետ կարելն խաղաղել՝ եմուտ ՚ի կողմն պոմպէի, և բաղմօք ը դէմ եկաց միահեծան իշխանականութեան կեսարու. վն և ՚ի մեռանել պոմպէի և ՚ի զօրանալ յուլիո-սի՝ փախստեայ անկաւ կատոնն յերկաթ նր. և

առ

առ գտանութիւն որոյն՝ մահ խնդրեաց անձինն , հրաման ետ վն տան իւրոյ , և ընթերցեալ երկիցս զճառն պղատոնի՝ որ վն անմահութե հոգւոյն , արհամարհեաց զմահ մարմնոյ , և մխեալ զսուրն 'ի կողս իւր՝ մեռաւ յուտիկէ քաղաքի · ուստի և եառ զուտիկեցին անուն ։ Զսա ըստ գամնէ թեատրոս վն արբեցուն , ոչ և զպատ- չինն վասն ատփանաց 'ի ծերութե · զորոյ ուրոյն

ուրոյն ճառեաց պլուտարքոս ։

Նշանկերտ իմաստնոյն սենեքայի եղև անխմատն(206) ներոն կայսր՝ հրէշ մոլութեց , ամենեին աննման իւրում վարժապետի՝ և չարաչար նմին · ոչ այլուր յիշեցաք ։ Ներոն կամ Նէրօ ըստ ումանց սառգաբանի 'ի յն · և 'ի լտ · Քիղ · իսկ թեատրոս առատանօր թուի խաղերէն առոդգաբանել սեաւ կամ թուխ , ողմատեսակ կամ արիւնըռուշտ ։ Այլ 'ի հայումս ոչ ինչ առարագեալ նոյնանոյ ընդ անուան քնամարա գերազանին , այն է Նեռն · մանաւանդ թե ոչ կարծի անունս Նեռն առեալ է

'ի Ներոնէ ։

Բան սենեքայի 'ի ժա թղթին իւր առ ղուկիլիոս ,(207) այսպիսի ինչ է · "Պարտ է մեզ ընտրել զայր ոք
,, բարի , և հանապազ առաջի աչաց ունել զնա · որպէս
,, զի իբր յառաջիկայութե նր քաղաքավարեսցուք ,
,, և զամ ինչ այնպէս արասցուք՝ որպէս թէ նա հայե-
,, ցեալ տեսանէ ... երանի այնմ՝ որ գիտէ այն-
,, պէս պատկառել յումեքէ , մինչև ը̄ յիշելն իսկ
,, զնա՝ յարդարեսցէ և ուղղեսցէ զանձն իւր ։
,, Որ այսպէսն գիտէ պատկառել յայլմէ , փու-
,, թանակի և ինքն լիցի պատկառելի ։ Իբր արդ՝
,, ընտրեա քեզ զկատոն · և եթէ սա թուի քեզ
,, կարի խիստ , ընտրեա զբարեմոյն անձն զլե-
,, լիոս · ընտրեա զայն , որոյ վարք և բանք հա-
,, ճոյ եղեն քեզ ... Չէ մարթ քեզ ուղղել ինչ
,, առանց մերձ գոլոյ զկանոն || ։ 'Ի բանից աստի՝
որպէս և յայլոց տեղեաց սենեքայի երևի , թէ 'ի գիրս թեատրոսի փոխանակ անուանս կատոն՝ առրգեալ է կեռնարինոս · քանզի և կիկերոն իսկ՝ որ 'ի բաղում տեղիս դովէ իբրև առաքինի զլե-

լիոս ,

լեռս, առ նմին յարէ միայն զկատունս:

(208) Օ՟այս պատմութիւն գրէ Հերոդոտոս յառաջին գիրս, 'ի համարն. 15: 'ի լինել առէ հակառակուն 'ի մէջ արգիացւոց և սպարտացւոց վասն անդոյն կամ դաշտին, որ կոչիւր Թիւրէա, ընտրեցան յերկուց կողմանց եւս երեքհարիւր արք՝ մարտնչել ընդ միմեանս մինչև խաղաղ կոտորելոյ միոյ կողման զմիւսն. և յորում կողման մնացորդք առանց գացին, նոցա լիցի տեղին, և իբրև կռուեցան մինչև ցերեկոյ, 'ի սպարտացւոց մնաց միայն ոթրիադէս. իսկ յարգիացւոց մնացին երկու արք՝ ադկինոր և քրոմիոս. որք իբրև յաղթողք դարձան յետս անհոգութբ. իսկ ոթրիադէս կողոպտեաց զզէնս անկելոց թշնամեաց, և բերեալ 'ի կողմն բանակի իւրոյ՝ եկաց մնաց արիաբար 'ի տեղւոջ մարտի: 'ի վաղիւ անդր պնդէին արգիացիք, թէ մեր է յաղթութիւնն. զի 'ի մէնջ երկուք մնացին. և ընդ հակառակն սպարտացիք ասէին, թէ մինս 'ի մէնջ տակաւին անպարտելի կայ մնայ. և այն զի ձերքդ 'ի բաց փախեան 'ի տեղւոջէ պատերազմին, և մերս հաստատուն և անվեհեր սըրտիւ ժուժեաց. և զաւար ես զձեր եառ: 'ի սաստկանալ վիճմանց՝ այնուհետև խմբեցաւ պատերազմ մեծ յերկուց կողմանց. և յաղթեցին ըսպարտացիք քաջք: Յարէ ապա Հերոդոտոս. " Այլ վն ոթրիադեայ՝ որ միայն էր մնացեալ
" յերից հարիւրոց անտի ընտրելոց, ասեն՝ թէ
" ամօթ համարեցաւ դարձ առնել 'ի սպարտա
" յետ նիզակակցացն անկանելոյ. և անդրէն 'ի
" Թիւրէա անձամբ զանձն կարճեաց 'ի կենաց||:
Այլ վն լուկրետիայ հռովմայեցւոյ յիշեցաք վերագոյնդ 'ի համարն (45). ուր և յայտ արարաք՝ թէ յայսմ վայրի վրիպակաւ կոչի նա կին բրուտոսի, փխկ ասելոյ կին կողատինոսի՝ որում հեպատոսակից եղև յետոյ բրուտոս:

(209) Մ՝իւռռա կամ միւռռա, որ թարգմանի զմուռս և զմռսենի. ըստ առասպելաց էր դուստր կինիւռայ արքային կիպրոսի. որոյ տռփեալ ասեն առ հայրն իւր՝ հնարիւք դայեկին եմուտ առ նա 'ի մթան,

մթան, և յղացաւ 'ի նմանէ. իսկ Կինիւռոս իբրև խնդրեաց լոյս, և իմացաւ՝ զի դուստր իւր է նա, իսկ և իսկ կամեցաւ սատակել զնա. այլ նր̅ օգնական իւր առեալ զգիշեր՝ փախեաւ 'ի տանէ հօր իւրոյ, և դիմեալ անկաւ յարաբիա. ուր փոխեցաւ ասեն 'ի համանուն ծառ, յթ̅ 'ի զմռսենի։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԳԻՐՍ։

Թէպէտ ոմանք այլ և այլ դիս համարին զՆէ- (210)
մեսիս և զադրաստիա, բայց բազումք եւս մի և նոյն գնեն։ Արդ՝ Նեմեսիս անուն, որ կրկնակի ստուգաբանի, այսինքն բաշխողք, և սրտմտութի, ընծայիւր չ̅ծուհւոյ՝ համարելոյ վրէժխնդիր արդարութեան. զի փոյթ նորա է ամէն պատժել զյանցաւորս զառ 'ի մարդկային դատաստանէ զերծեալս, և պսակել զարժանաւորս զառ 'ի մարդկանէ անտես եղեալս. վա̅ և կոչիւր դուստր արդարութե։ Իբրու Նեմեսիս բաշխէ ամէն բարիս իւրաքանչիւր ըստ արժանի արդեանց, և իբրև ադրաստիա (որ թարգմանի անխուսափելի, կամ մշտընթաց և երագահաս) անվրէպ հատուցանէ յանցաւորաց զպատիժ։ Ասէին ունել նմա աչս մշտաբաց և սրատես՝ գիտել զա̅մ որ ինչ գործի յաշխարհի։ Նկարիւր օրիորդ թեւաւոր, ոտ̅ և երբեմն նստեալ 'ի վերայ անուոյ կամ եդեալ զմի յոտիցն յանիւս, առ 'ի նշանակել՝ թէ հոլովեալ շրջի ը̅ ա̅մ աշխարհս, և երագ 'ի վերայ հասանէ՝ տեսանել և քննել զգործս որդւոց մարդկան։ Նշանակ նորա յատենի չ̅ծոյ՝ էր ունել 'ի ձեռին չափ երկրաչափական, որ է անվրէպ։ Գոյր առանձին մեհեան նր̅ 'ի Հռովմ 'ի կողմն մի կապիտոլինի. ուր պահիւր արքունի չափ կանդնոյ՝ իբրև յատենի արդարութե. հռովմայեցիք հանդիսադիրս զոհ մատուցանէին նմա, յորժամ ունէին ելանել 'ի պատերազմ։

Նարկիսոս՝ որ երբեմն ծառայ ոք էր և անարգ (211)
գերի, ամբարձեալ 'ի կղոդեայ կայսերէ 'ի պատիւ աւագութե մեծացաւ յոյժ յոյժ իշխանութ̅

և

և հարստութիւն · մինչև ը գրելոյ գխուլին՝ ունել
նմա աւելի քան զատան միլիոն ոսկի : Յորմաղ
բանաստեղծ 'ի մի կարգ դասէ զնա ընդ կրեսոսի
լիւդացւոյ ընչաւէտ արքայի, և ը հարստագոյնս
'ի Թփւրացն պարսից · և այլք նմանեցուցանեն
զնա միդասայ որ խնդրեաց ոսկի լինել ամի , յոր
ինչ և մերձեցի · ըստ որում յիշեցաք 'ի համարն
(127) : Արդ՝ նարկիսոս , որ այնչափ համարձա-
կութի եգիտ առ կղոդեաւ , մինչև չանկանիլ մեոյ
'ի բանից նորա 'ի գետին , և ը խրատու նր սպա-
նանել կայսեր զկին իւր , յետ սակաւուց յաւուրս
ներոնի սպանաւ չարաչար՝ Թելադրութը ագրիպ-
պինայ մօրն ներոնի :

(212) Յայտնի է պատմութի գործոց քաջ զօրավարին
բեղիսարիոսի , որ յետ մեծամեծ յաղթութեց՝ ո-
րովք մեծացոյց զանուն մեծին յուստինիանոսի
կայսեր յունաց , հաւսկ յետոյ ամբաստանեալ ե-
ղև իբրև դաւագիր ընդդէմ ինքնակալին · վն և
կայսրն ըստ սադրելոյ կնոջ իւրոյ՝ մերկեաց զբե-
ղիսարիոս յամ ընչից և 'ի պատուոյ , և բրեաց
զաչս նորա · և այնուհետև անկեալ նր 'ի հրապա-
րակս՝ մուրացիկ լինէր ը ադքատս : Բայց են և
ոմանք , որք ասեն՝ թէ կայսրն 'ի պատուոյ եեթ
զրկեալ իցէ զնա առ ժմի մի , և անդրէն դար-
ձուցեալ 'ի նոյն պատիւն առաջին · առ ասի վախ-
ճանեալ յամի տն իբր · 565 : Յեասադայ բան թե-
ոդորոսի հայի առ նախատեցեալ կայսերս · յորոց
մին՝ ըր կղոդիոս յարքունի ընչից ճախացոյց զնար-
կիսոս գերի անպիտան , և միւսն ըր յուստինիա-
նոս կեղեքեաց զբեղիսարիոս՝ և եառ զինչս նորա
յարքունիս , և այն՝ որպէս ասացաւ՝ յորդորանօք
կնոջ իւրոյ .

(213) Եւտրոպիոս էր ներքինի ոմն՝ 'ի պաշտպանաց
կանանցին (ըր հարեմն) յաւուրս արկադեայ կայ-
սեր որդւոյ մեծին Թէոդոսի : Սա օր քան զօր
յառաջեալ 'ի պատիւ , եհաս մինչև յաւագութի
հիւպատոսութե · և անձնանաշօղ գոլով չափա-
ւանցին յանդուգն ձեռնամուխ լինէր 'ի բաղում
իրս ընդդէմ իրաւանց · նմին իրի և աւելի եղև

յաչս

յաչս տմն՝ մինչ մի հարստահարելոյ նր զեկե-
ղեցականս և զերևելի եպիսկոպոսս ։ Այլ իբրև
իշխեաց խրոխտալ նաև ընդդէմ եւդոքսեայ Թա-
գուհւոյն, աղաչեաց Թագաւորին արս զինի նորա՝
առնուլ զգլուխ նորին . և նա փախեաւ յեկեղե-
ցին ։ Ապա 'ի դիմել բազմութ ամբոխին յափշ-
տակել զնա՝ ոչ ետ Թոյլ նր հայրապետն յովհան
ոսկեբերան՝ մի ապաւինելոյ նր 'ի տաճարն այ . և
խօսեցաւ առ ժողովուրդն 'ի վերայ այսր քարոզ
զբանչելի ։ Յետ այսորիկ աքսորեցաւ եւտրոպիոս
'ի կիպրոս . և հուսկ յետոյ գլխատեցաւ 'ի քաղ-
կեդոն՝ յամի տն 399 ։

Վիճակ կամ վիճակընկեցուն, ըստ լատ . [illegible], (215)
և ըստ յոյն . [illegible], 'ի գործ ածիւր առ հեթա-
նոսս բազմապատիկ մեծապաշտութք 'ի գուշակու-
թիւն բախտից . քանզի ընուին 'ի բախտանոցս՝ ի
յամանս ինչ՝ որպ յեղջիւրս կամ 'ի սափորս՝ վէգս
(ի [illegible]) կամ քուէայս (ի [illegible]) և կամ այլ ինչ
բեկորս, յորոց մի կային նշանակեալ մատյածին
տառք կամ գիծք առ որոշումն յաջողուեց և ձա-
խողութեց . և 'ի դատարկել անդ զամանն՝ ում
և ելանէր այս կամ այն նշանակ, համարիւր այն
նմին գուշակ երջանկութն կամ թշուառութն ։
Արդ ը այսմ նմանութն յօդեցին բանաստեղծք,
թէ վիճակն իբրև զօրութն ինչ վերին՝ Թափէ 'ի
մի մարդկան զայլ և այլ դիպուածս բախտից յեր-
կուց ամանոց, յորոց 'ի միում կային քուէայք
երջանկութն, և 'ի միւսումն՝ Թշուառուն ։ Այլ
այս տմ է անայնաբանութն, եթէ չիցէ նմանո-
բանութն . զի փոխ ասելոյ՝ թէ ած է որ յաջողէ
զմ յմի, և բաժանէ զպարգևս իւրաքանչիւր
որպէս և կամի, այսպիսի բանից մեռաեաց զհետ
կրթեցան ։

Եգիսթոս . ը յն . [illegible], որ Թարգմանի այ- (215)
ծասուն կմ սնուցեալ յայծէ, ըստ առասպելաց
էր որդի Թիէստեայ՝ ծնեալ յանկարգ խառնա-
կութե ի 'ի դստերէ նորա 'ի պելոպեայ . արդ-
ասի, թէ մայր մանկանն 'ի ծածկել զչարիսն ըն-
կեց զաղայն յանտառս, զի լիցի կերակուր գա-
զա.

զանաց․ այլ դառեալ զնա հովուի միոյ՝ սնոյց կաթամբք այծից․ վասն և կոչեցաւ նմա անուն Էգիթօս։ Իբրև եհաս յարբունս, եղև այր զօրաւոր, այլ վայրագ և անառակ․ և յետ սպանանելոյ ըզհօրեղբայր իւր զատրևս և զորդի նորա զագամեմնոն՝ սպանաւ ապա և ինքն յօրեստեայ յորդւոյ ագամեմնոնի։

Իսկ Հիպպողիւտոս էր որդի Թեսէոսի 'ի Հիպպողիւտեայ ամազոն կնոջէ, սա ըստ առասպելաց՝ անգոսնեալ զազգ կանանց՝ սիրեաց զամուրի կեանս և պարապէր յորսորդութեան։ Իսկ մօրու նորա փեդրա ուշ արձակեալ 'ի նա՝ բռնադատեաց 'ի պղծութեան․ և յոչ առնուլ նորա յանձն՝ չարախօս եղև զպատանւոյն առաջի հօր նորա․ և նա յաքսորս առաքեաց զնա։ Կամ ըստ այլոց՝ իբրև գիտաց Հիպպողիւտոս զցասումն հօր իւրոյ, հեծեալ 'ի կառս՝ փութացաւ փախչել․ այլ յանիծից հօր իւրոյ՝ անկեալ 'ի կառաց, յօշոտեցաւ յերիվարաց իւրոց․ բայց յաւելուն առասպելարկուք, թէ դիք անդրէն կենդանացուցին զնա․ եւն։ Մտացածին պատմութիւնք Եգիսթոսի և Հիպպողիւտոսի համգիտացեալ են առ բանաստեղծս և առ եղերերգուս։

(216) Մարսիաս էր փողահար ազգաւ փռիւգացի, որ ըստ առասպելախօսաց՝ իշխեաց կոչել իւր ախոյեան 'ի նուագածութեան զփիբոս, այսինքն զապողոն զաստուածն երաժշտութեան, տեսանել թէ ո՞յր գործի քաղցրաձայն հնչիցէ, փո՞ղ իւր՝ եթէ քնարն ապողոնի․ Իսկ դատաւորք հանդիսի ոմանց ասին լինել տմօղոս արքայ լիւդացւոց՝ որդի արեսի կարծեցեալ, և միդաս արքայ կողմանցն փռիւգացւոց։ Տմօղոս յաղթող դատեցաւ զապողոն, և պարտաւոր ըզմարսիաս․ իսկ միդաս գովեաց զմարսիաս․ ընդ որ զայրացեալ ապողոնի՝ ասէ․ փինկ զի այդչափ թանձրալուր դատար, և ոչ գիտացեր որոշել ընդ քաղցրալուր և ընդ խոշոր հնչիւն նուագաց, բուսցին քեզ ականջք իշոյ․ իսկ զմարսիաս կապեալ 'ի ծառ մի՝ արար մորթեզերծ ըստ դատաստանին տմօղոսի, վասն իշխելոյ նորա 'ի վէճ մտանել

ը

ընդ խուր։ Այլ ոմանք զգաստատան տմողոսի և միգասայ գնեն լինել յայլ տուասպելեալ գիպուած, յորժամ պանէս չածն հովուաց նոյնօրինակ 'ի վէճ եմուտ ը ապողոնի, հանդերձ այլևայլ պարագայիւք։

Սաղմնեոս կամ «ուլմնէ» որդի էյողայ՝ արքայ (217) հեղինացւոց կամ Թեսաղացւոց, ը տուասպելաց՝ ցանկացեալ յածոց կարգի համարիլ, խորհեցաւ որոտմունս և կայծակունս հնարել հանգոյն արամազդայ հօր չածոցն, այն է գիտս շանթառաքչինեաց կամուրջ մի պղնձի, բարձր, լայնանիստ և երկայնաձիգ. յորոյ վր ընթացուցանէր զկառս իւր ամէհի երիվարօք՝ մարտկեալ զնն արջառաջըլօք. և առնէր շառաչիւն մեծ և գղրգիւն որոտաձայն. և միանգամայն լուցեալ ջահ բոցավառ՝ սպառնայր կիզուլ զմարդիկ՝ իբր յօրինակ կայծականց։ Զայն տեսեալ ահեն արամազդայ՝ յարոյց յարկարծակի զնիկական որոտմունս, և արձակեալ կայծակունս 'ի վերուստ՝ շանթահար իջոյց յանդունդս զսաղմնեոս։ Սարապրէ զայն անյս վիրգիլիոս 'ի Զ. ենէադեան գիրս. 'ի 580. համարն։ Նոննոս փոքր մի այլազգ գրէ. "Սաղմնէս որ-
„ դի էր (աոե) եովլոսի Թըւրին Թեսաղացոց.
„ սա ամբարշտեալ առ ածն չոր և կարծր ար-
„ ջառակաշիւք և կառայօք (այսինքն պղնձի ամանօք)
„ Թնդմունս և հնչմունս գործէր, 'ի ձեռս ունե-
„ լով լապտերս վառեալս՝ պարծէր և մեծաբա-
„ նէր որոտալ որպէս զեւս և փայլատակունս առ-
„ նել. մինչև շանթահար եղեալ կիզաւ յարա-
„ մազդայ"։

Իսկ վն պերիգղոսի՝ որ գտակն եղև փաղարեան պղնձացլու, տես 'ի համարն (3)։ Այլ յաղագս առն՝ որ սիրելի էր յաչս աղեքսանդրոսի սևերոսի կայսեր, բայց քանզի զծխս կամ զաւագութիւս շնորհեալս յարքայէ՝ կաշառօք վաճառէր այլոց, 'ի ծուխ հեղձուցաւ, բաղում անգամ յիշատակեաց Թեսաւրոս, եթէ կամիս՝ տես յէջէս. 124. 278. ևն։

Ցիտալականն՝ առած ձևանոյ 'ի ձեռն նմանու- (218)

ձայն

ձայն բառիցս [illegible]. [illegible]. որոց առաջինն նշանակէ զնպաստաւորութիւն կամ զգործակից ձեռն-տուս. իսկ երկրորդն զբուն հեղինակս գործոյն կամ զսկզբնապատճառս ։

(219) Այնպար առաւել լինի աստանօր նշանակութիւն անուանցս նեմեսիս և ադրաստիս, հայելով 'ի գործս ընծայեալս նոցին. այլ զմիջդ ստու-գաբանութիւնն ունիս տեսանել 'ի համարն (210)։

(220) Ի չորից անտի արանց՝ զորս ասաց սակն աղեղ-գէս ի հերակլէս քաջն, Կակոս որդի հեփես-տեայ կարծեցեալ՝ էր աւազակ մի առ տիբերիս գետով՝ ուր յետոյ հռոմ շինեցաւ. սա գողացաւ սակն զարջառս հերակլի 'ի դառնալ նր 'ի սպա-նիոյ յայն տեղիս. քանզի յանկարծուստ 'ի վերայ յարձակեալ անդէոց 'ի թիկանց կուռէ՝ բռուն զօրութբ ձգէր զագիս նց. և տանէր յայր իւր. այլ 'ի բառաչել նոցա յայրի անդ՝ զգացեալ զայն հերակլի՝ գիմեաց 'ի տեղին, և հատ բրածն իւ-րով հարեալ սատակեաց զկակոս. և ապա զոհս մատոյց գից վասն այսր յաղթութե 'ի տեղին՝ որ կոչիւր հրապարակ արջառոց կամ [illegible]։ Կա-կոս՝ ըստ յն. [illegible], թարգմանի չար՝ կամ չարա-գործ. վն և 'ի հայերէն թարգմանութե առաջին մասին ժամագրութենն եւսեբեայ գրի այսպէս. "Հերակլէս երթեալ 'ի սպանիայ աշխարհէ՝ բա-"գին կանգնեաց 'ի հրապարակի բոյարեայ ('ի "հռոմ.) վասն զի զՉար որդին եփեստեայ բա-"պան||։

Իսկ բուսիրիս էր բռնակալ մի յեգիպտոս՝ հա-մարեալ որդի պոսիդոնի չաստուծոյ. սա ըստ ասելոյ ո-մանց զանցաւոր օտարն հիւրընկալեալ զատ-ճանէր՝ զոհէր զնոսա դից իւրոց. և իբրև զնոյն կամեցաւ առնել և ընդ հերակլէս՝ 'ի վեր եւ ննն-գութին, և սպանաւ 'ի հերակլէ։ Առ սա հայի ասացեալն եւսեբիոյ 'ի կանոնի իւրում՝ յասուրս յեսուայ. "Բուսիրիս առ կողմամբքն նեղոս գետոյ "բռնանայր, և զանցաւորս զօտարս կոտորէր||։ Ոմանք գնեն՝ թէ սպանեալն 'ի հերակլէ բու-

սի.

սերկևիա՛ լցէ այլ ոմն բանաւոր 'ի սպանիա ։ խոս-
կրատէս սոփեստէս յօրինեաց առանձին ճառ 'ի
գովեստ գործոց բուսիրիսի անողորմ բանաւորի՝
'ի ցոյց ճարտարութե մտաց իւրոց ։

Անտէոս էր հսկայ ոմն վիթխարի և ուժով ան-
պարտելի 'ի լիբիա՝ համբաւեալ 'ի խաղս ըմբշա-
մարտութե . որում հերակլէս ևեթ կարողացա-
ւեն յաղթել . բազում են բանք բանաստեղծից
զնմանէ ։ Զսա ևս յիշէ եւսեբիոս 'ի կանոնի՝ առ
Ժմիօք գեդէոնի , յասելն . ՚Հերակլէս զնահա-
,, տակութիւ կատարէր . և զանտէոս սպանանէ ,
,, և զկղին աւար հարկանէ . ասի թէ երկրածին
,, էր անտէոսն . քանզի միայն յանուանելոյն կը-
,, ռուողաց 'ի գետնի՝ հմուտ էր կռուոյն . մինչև
,, կարծել յերկրէ մօրէն իւրմէ օգնականութի
,, գտանել ։

Այնպէս և գերիոնն կամ գերիւսյան բանաւոր ար-
քայ սպանիայ՝ էր այր քաջալանջ և քաջարաղուկ՝
եռամարմին ասացեալ ըստ առասպելաց . թերևս
վասն տիրելոյ երից կղզեաց՝ որպ կարծեն ոմանք ,
կամ զի ունէր և զերկուսին եղբարս իւր համա-
կամ թևակիցս և օգնականս , որպ այլք դնեն . Է
որում մարտուցեալ հերակլէս՝ յաղթահարեաց ա-
սեն զնա , և ձերբակալ տարեալ՝ եբեր յիտա-
լիա ։ Զայս նոյն գտանես յիշատակեալ առ վիրգի-
լիոսի և առ այլ բանաստեղծս՝ 'ի խօսիլն նց ըղ-
քաջութեց հերակլի ։

Գորգիաս սիրոս կոչեցեալ . այսինքն սուրացի (221)
կամ ասորի՝ վասն գոլոյն հայրենեօք յերկրէն ա-
սորւոց , էր բանաստեղծ միմոսական՝ անուն մեծ
ստացեալ 'ի հռովմ յաւուրս յուլիոսի կեսարու .
և սիրելի յոյժ յաչս նորա վասն հանճարոյ իւ-
րոյ ։

Արքիլօքոս էր բանաստեղծ ոմն կամ երգայար (222)
գար լակեդեմոնացի , ըս սպարտացի , իբր 650 .
ամօք յառաջ քան զՔս . որոյ որչափ ճարտարար-
ուեստ և ազգու էին բանքն , նոյնչափ և խայթո-
ղական . վայելչահիւս , այլ երգիծաբան ։ Լիւ-
կամբէս ոմն խոստացեալ էր զդուստր իւր տալ
որ .

արքիլոքոսի 'ի կնուԹն. և ապա տուեալ նմա՝ այլում ետ. վ̃ն և արքիլոքոս զայրացեալ յօրինեաց 'ի կշտամբանս նորին տաղս ինչ՝ այնչափ զկծեցուցիչս, մինչև լիւկամբեայ չկարացեալ տանել այնմ՝ խեղդ եարկ անձին։ 'Ի մեռանիլ ապա և արքիլոքոսի՝ քանդակեցան պեծակք 'ի վ̄ր շիրմի նորա 'ի նշանակ խայԹողական բանից նորին։ Արգելեալ էր 'ի սպարտիա ընԹերցումն տաղաչափուԹեանց նորա. զի մի ուսցին համբակք վարել զայնպիսի ոճ կծանողական։ Զհետագայ անձանց՝ որք բանիւ կամ գրով չարիս խօսեցան զայլոց, չկամեցաք կարգել առ ծանօԹուԹն. զի ոչինչ աւելի օգտեն առ իմանալ զմիտս բանին։

(223) Ստիւգս կ̃մ ստիւգեան լիճ կոչի 'ի բանաստեղծից տարտարոսեան լուալիքն՝ իբր ընդունարան ամենայն ժահից. որ էր ատեն յառաջն դուստր ովկիանոսի, և մայր լերնեանն հիդրայի. և ապա փոխեցաւ 'ի ջրակոյտ դժոխոց. ե̃ն։ Այս առասպել առեալ է ըստ ոմանց յըստիւգս անուն աղբերէ բղխելոյ յարկադիա գաւառի. որոյ ջուրն այնչափ ցուրտ էր ատեն և դժնեայ, մինչև սպանանել զըմպօղն, զերկաԹ և զպղինձ մաշել, և զայլ անօԹս իսկ և իսկ խորտակել. միայն կ̃ճղակք ջորւոյ տոկային ը̄դդէմ նր̄։ Եւ 'ի ջրոյ աստի էր ատեն Թոյնն՝ որ տուաւ աղեքսանդրի մակեդոնացւոյ։

Իսկ զբռնաւոր գազանն, որ 'ի յունաց կոչի Ὑέ-ναινα, և 'ի լատ. hyaena, յիշէ և խորենացին յաշխարհագրուԹն՝ յասելն. "Եւ լինի 'ի դաղ-
" մատիա գազան, որպէս զէգն, բոռնոսս անուն,
" որ զկոյն ձգէ որսորդացն (կամ զկուն ձգէ որ-
" սականացն), և այրէ (զնոսա)"։ Զնոյն երկրորդէ և վանական վ̄դպ 'ի հարցմունս իւր, ասելով. "'Ի դաղմատիա գազան ինչ է՝ որ̄պ զէգն,
" բոռնոս անուն. զկոյն ձգէ որսորդացն, և
" այրէ"։

(224) Յայտնի է իմաստ բանին, զի այն ինչ իբր նոբածին էր աշխարհն, եւես զդաւաճանուԹիւն կայենի ընդդէմ եղբօր իւրոյ հաբելի. յորմէ ձեռնար-

կէ

կէ Թէոդորոս, թէ՝ և ՚ի կատարածի իւրում ոչ նուազ ապիրատութենս անցէ այս աշխարհ հնացեալ:

Ծանօթութիւնք ՚ի Քառասներորդ Գլխոյ:

Զանց արարաք զստուգաբանութիւն անուանս օրէնք. ☐ խառն՝ Պանդեկ. զոր հանէ Թէոդորոս յերկուց բայից, Պանդեկտէ՝ որ է ընդունող և Դիգեստէ՝ որ է դասել. զի կալէ ամէ զընթերցօղն՝ պարտաւորելով լինել օրինապահ և առաքինի: (225)

Ռամիրոս եղբայր թգ̃րին արագոնացւոց՝ ընտրեալ էր իւր վարս միակեցական. այլ ՚ի մեռանիլ արքային՝ ստիպեցին արագոնացիք զքահանայապետն, զի առցէ հրաման Ռամիրոսի գալ նստիլ ՚ի տեղի եղբօր իւրոյ, և կանգնել զթ̃գրութին և զզարմ արքունի. և այնպէս յակամայս թագաւորեաց նա, և ամուսնացաւ. այլ յետոյ տեսեալ զանձն անբաւական ՚ի բառնալ զբեռն արքունի հոգոց, և ցանկացեալ իւրում առաջին վիճակի, դարձաւ ՚ի միայնութիւն իւր, ուր և ժողովուրդն իսկ զայդ կամէր, զի տեսանէին զնա անյաջող ՚ի հասարակաց տնտեսութեն: (226)

Պատրիկիոս և Տրիբոնիանոս՝ արք անուանիք ուշիմութ̃բ, միանգամայն և ապիրատութ̃բ անիրաւ գործոց, եղեն հրատարակք ՚ի վեցերորդ դարու յաւուրս մեծին յուստինիանոսի կայսեր. որ ՚ի ձեռն նց̃ և այլ եւս իմաստուն անձանց յօրինեաց զհաւաքումն գրոց իրաւանց և օրինաց. որոյ դատաստանագիրքն նշանաւոր է յայժմ մինչև ցարդ: Այլ՝ թէպէտ ինքն յուստինիանոս չէր գիտնական ոք, բայց սիրող էր գիտնաւոր արանց: Եւ զի սոյն այս կայսր արար և ինչ ինչ անկարգ՝ անսալով խրատու կնոջ իւրոյ, գուցէ նմին իբր պախարակէ զնա Թէոդորոս՝ ասելով. թէ այն՝ որ օրէնս ետ աշխարհի գրով, օրինագրեալ (227)

[illegible]

(248) [illegible] 'ի համարն (155):

(249) [illegible] 'ի համարն (250):

(250) [illegible] 'ի համարն (24): [illegible]

(251) [illegible] (այն է [illegible] 'ի խրիմ) [illegible]

կեալ հանդիպի յայն տեղի. զոհ լինի նա արտեմեայ։ Իսկ էր անդ քրմուհի կարգեալ իփիւգինէ դուստր ագամեմնոնի. զոր յափշտակեալ էր արտեմիս 'ի զենմանէ. որպէս յիշեցաք 'ի համարն. (44). Իսկ եղև զի յորժամ օրեստէս եղբայրն իփիւգինեայ սպանեալ զմայր իւր զկղիւտեմնեստրա' լինէր չարաչար 'ի դիւաց, ասացաւ նմա 'ի պատգամախօսէն ապողոնի, թէ ոչ այլազգ զերծցիս 'ի տանջանաց այտի, եթէ ոչ առեալ բերցես յաթէնս զարձանն արտեմեայ' որ 'ի տաւրիս, զկարծեցեալն յերկնից իջեալ. և նա գնացեալ գողացաւ զայն հնարիւք. և այն ինչ խորհէր փախչիլ. 'ի վեր ել բանն. և հրաման ետ թոաս զենուլ զօրեստէս 'ի զոհ արտեմեայ իբրև զայլսն. բայց նա օգնականութեամբ քեռն իւրոյ' որում ետ ծանօթս զանձնէ, ապրի զեղբայրն. և այնպէս արեամբ նորա ընջեաց զօրէնս նր. և զարձանն տարաւ յաթէնս։ Իսկ նոննոս գրէ այսպէս. "Տաւ-
,, րոսք ազգ են սկիւթացոց. առ որս փախագըրե-
,, ցաւ 'ի ձեռն արտեմիդեայ իփիւգինիա դուստր
,, ագամեմնոնի, յորժամ հանդերձեալ էին զոհել
,, զնա յաղագս ելլենացոցն յաւլիդիս (որ 'ի
,, բիովտիա գաւառի). վասն որոյ եղն փոխանակ
,, տուեալ ածուհին' ոչ ետ զոհել զկոյսն. արդ'
,, այս իփիւգենիա 'ի տաւրոս գոլով, զի մի ծա-
,, նիցի 'ի հիւրոցն եկելոց' եթէ ով ոք իցէ, հրա-
,, մայէր զոհել զնոսա արտեմիդեայ. և նա էր ա-
,, տարասպանն' զոր առէ ածային գրիգորիոս։
,, Յետ այնորիկ երկուցեալ օրեստէս առ 'ի
,, կղեխտեմնեստրայ, և եկեալ 'ի տաւրոս, ըմ-
,, բռնեալ 'ի նմէ իբրև հիւր' 'ի սպանումն ածա-
,, առ իւր քոյրն իփիւգենիա իբր առ քահանայ-
,, ուհի. և ծանուցաւ վասն փղոսկրէից ուսոցն,
,, և թողաւ 'ի զենմանէն. և այսպէս առեալ օր-
,, եստէս զքոյրն իւր զիփիւգենիա' բերէ յելլա-
,, դա ||։ Հարևանցի յիշէ զայս պատմութիւն և գրիգոր մագիստրոս 'ի թուղթն առ անանուն վանահայր. ուր զայն բագին կոչէ [illegible]։

(232) Այս հայի ասելն ոմանց, թէ 'ի Քր. ողոմպիադն, հռոմայեցիք 'ի յունաստանէ օրէնս խնդրեցին. յորոց զերկոտասան մատեանսն շարադրեցին: Իւ- այն մատեանք կամ տախտակք համարեցան առ. նախնի հռոմայեցիս իբր անվրէպ կանոն օրինաց. և 'ի մեկնութի նոցա գեղեցիկն իրաւագէտք նո. ցին:

(233) Որ ասած կախեալ է յաւէտ զնմանաձայնուէ լատին բառից [illegible] et [illegible]. զի են՝ երկինք և տիղմ. որպ եթէ և մեք ասեմք՝ երկին և երկիր. կամ եթեր և երր: Իւ միտ բանին է, թէ օգոստոս վն չափազանց առատաձեռնութեն՝ 'ի մեռանիլ իւրում ոչինչ այլ պահեաց վասն իւր, բայց միայն վասն հոգւոյն (թէպէտև չէհաս երկնից) զհանդերձեալ աշխարհ, և վասն մարմնոյն զհող գերեզմանի:

Սոյնպէս և միւս այլ ասացուած՝ որ 'ի սորև, [illegible], կախի զնմանաձայն խառլա. կան բառից [illegible], և [illegible]. ուր և 'ի մեզ նը. մանաւոր գան երկոքին բառք: Որպ և այլուր յի. տալականն գնի [illegible] և [illegible], և 'ի մեզ 'ի դէպ յարմարի [illegible] և [illegible]:

(234) Սիմպղեգադեան ժայռք, որք և հասարակօրէն գիանեան վէմք կոչին, են երկու փոքրիկ կղզիք Եւքսինեան ծովու 'ի բերան վտաղորին Թրակիոյ. զի մերձ յանցս նեղ ծովու ը կիրճս կոստանդի. նուպօլսոյ. որք այնչափ մերձ են միմեանց. մին. չև փոքր մի 'ի հեռուստ միացեալ համարին. վն և յունարէն կոչեցան [illegible], զի միացեալք կամ զօդեալք՝ կամ ընդհարեալք ընդ միմեանս: Արդ՝ ասի, թէ 'ի գնալ արգոնաւորդաց 'ի գիւտ ոսկեգեղմանն՝ իբրև հասին մօտ յայն տեղի, տե. սեալ զկոհակս փրփրադէզ ալեաց՝ որք բաղխէին ընդ այն ժայռս, և միգապատ առնէին զօդն, եր. կեան յոյժ. և յետ բազում աշխատութե հաղիւ անցին ընդ այն տեղի. յորոյ վն ազգի ազգի ա. ռասպելս յօդեն բանաստեղծք:

(235) [illegible] է բառ յունական, որ թարգմանի [illegible]. (ուստի և [illegible] վկայն՝ [illegible] ձայ.

ձայնի 'ի մէջ)։ Արդ՝ թէպէտ անուն ընծայիւր չաստուածուհւոյ իրաւանց և արդարութեան՝ իբր ծնողի աստուած ուղիղ կարգաց. վասն և դստերք նորա անուանէին ուղղութիւն, օրէնք, և խաղաղութիւն. կամ ըստ այլոց՝ մի և նոյն համարէին ընդ նմա, ըստ այլ և այլ գործոց այլ և այլ անուանս առեալ։ Իսկ վասն ալ-ղուատնի այլուր յիշեցաք, թէ թարգմանի Ձախ, և համարի չաստուած տարրայնոց. որ և առ լատինս կոչի ՅՈՒՍ իբր թէ ՅՈՒՍՏՈՒՄ, ըստ Ձախ կամ մեծատուն. և խալդերէն ՅՈՒԴԷ։

Առ խալդացիս մի և նոյն բառ՝ այն է ԱՆԴԻՔԻՈՒ-(236) ԱՍ, նշանակէ ՀԱՆԴԱՐՏ և ՏԻԵՂՆԵՐ. վասն որոյ և 'ի դէպ գայ ասացուածն այն, ախեղերք են համբական։

Պերիկղէս աթենացի՝ որդի քսանթիպպոսի, ա-(237) շակերտեալն այլ և այլ երևելի արանց 'ի բազմապատիկ գիտութիւնս, եղև մի 'ի նշանաւոր արանցն յունաստանի՝ ծաղկեալ իմաստութբ̄ և քաջութբ̄, առևնախօս Ճարտար՝ և հզօր զօրավար։ Յորժամ կարգեցաւ իշխան աթենացւոց, այնպէս յինքն ձգեաց զսիրտ ամենեցուն, մինչև ոչ ևս համարիւր ծերակուտական իշխանութբ̄ վարիլ ժողովրդեան, այլ 'ի միահեծան արքայէ առաջնորդիլ։ 'Ի տալ նմա աթենացւոց զպէսպէս վերատեսչութիւնս կամ զանուանս պատուոյ, ընտրեաց միայն կոչիլ ՍՏՐԱՏԵՂՈՍ։ Սա քանզի կարի եռանդեամբ և առաւելագոյն սաստկութբ̄ բարբառէր յատենախօսութն, կոչեցաւ յոմանց փայլատակող և որոտացող. և յայլոց ողիմպոս ձայնեցաւ։ Մեռաւ իբր 430. ամօք յառաջ քան զՔ̄ս։ Որդիք նորա պարալոս և քսանթիպպոս ուսան 'ի հօրէ իւրեանց զարուեստս իմաստութն, այլ ոչ զառաքինութիւն։

Վասն մանդինաից տես 'ի վերոյ 'ի թիւն (59)։(238) Իսկ հայրասպանն ասացեալ պտղոմէոս՝ է չորրորդն պտղոմէոս արքայ եգիպտացւոց՝ որդի պտղոմեայ եւերգետեայ, մականուանեալն փիլոպատոր. և թէպէտ այս անուանակոչութիւն նորին՝ այն է ըստ յն. ՓԻԼՈՊԱՏՈՐ՝ նշանակէ հայրասէր, բայց որպէս ասի՝ 'ի նախատինս իւր կոչեցաւ

այնպէս. իբր զի համբաւ էր զնմանէ՝ թէ դեղ մա-
հու արբուցեալ հօր իւրում կարծեալ իցէ զնա
'ի կենաց: Եւ չէին ինչ զարմանք. զի և վն պտղո-
մէոսի փիղադեղփեայ, ի՜ եղբայրասիրի. ասեն
ընկալեալ զայդ անուն՝ հեգնօրէն. զի սպան ա-
սեն զեղբարս իւր. որպ և վն այլոյ պտղոմէոսի՝
փիղոմետոր կոչեցելոյ, այն է մայրասէր. ասի
թէ որովհետև ատէր զմայր իւր զկղէոպատրա՝
ներհական անուն ընծայեցաւ նմա 'ի նախատինս
նորուն:

(239) Մեզէնտիոս էր արքայ ետրուրիոյ՝ առ Ժմկօք
ենէասայ և տրովական պտրզմին, այր բռնաւոր
և անողորմ առ հպատակս իւր. որ բաց յայլոց
դժնդակ տանջանաց՝ զոր տայր յանցաւորաց և
անմեղաց, հնարեցաւ և զայս անգթութիւն, զի ը̅
մեռեալ դիակունս տայր կապել զկենդանի մար-
դիկ՝ երես ը̅ երես, բերան առ բերան, ձեռն 'ի
ձեռն. և այնպէս թողուր տագնապիլ կամ մեռա-
նիլ կենդանեացն 'ի գարշութէ մեռելոյն: Մինչև
չհանդուրժեալ ժողովրդեանն՝ հալածական արա-
րին զնա 'ի տէրութենէն. և նա յետ դեգերելոյ
յայլեայլ տեղիս՝ գնաց և 'ի պտրզմ ը̅դէմ տրո-
վացւոց. և հուսկ յետոյ 'ի մարտ գրգռեալ նաև
ը̅դէմ ենէասայ՝ յաղթեցաւ 'ի նմանէ:

(240) Տիտիոս կամ տիտիւոս՝ ը̅ առասպելոց էր ծը-
նունդ դիոսի յեղարայ դստերէն որքոմենոսի,
ծնեալ յանդայտ խորշս երկրի. վն և ասացաւ
երկրածին: Եւ իբրև եհաս 'ի չափ հասակի, եղև
հսկայ անհեթեթ. մինչև յընկողմանիլն 'ի գետնի՝
ընոյր ասեն զտեղի ինն արտաչափ հողոյ: 'Ի յառ-
նել սորա բռնութ 'ի վր զլատոնայ մօրն ապողոնի՝
եհար զնա ապողոն նետիւ, և ընկեցեալ յան-
դունդս դժոխոց՝ կապեաց զնա անդ, և հրա-
ման ետ՝ զի ցինք կրծեսցեն զլեարդ նր. և այն՝
հանապազ. զի ը̅ ապաւիլն բուսանէր նոր լեարդ
'ի փորոտիս տիտիոսի. և այնպէս ցինք միշտ կըր-
ծէին, և տիտիոս միշտ չարչարէր: Նոննոս այլ-
ազգ գրէ զտանջանաց տիտիոսի. ՙ Տիտիոս
,, ցանկացաւ (ասէ) լետոսի. և տափեալ բուռն
,, է-

,, եհար զգլխաւորինդ վարշամակէն. ապա արտե-
,, միս և ապողոն մանկունք գոլով լեառսն՝ նե-
,, տիւք վիրաւորեցին զնա, և սպանին. և այժմ
,, է 'ի գժոխս, և ունի զնետան կառուցեալս 'ի
,, Նմա, և այնուքիւք պատուհասեալ լինի ||:
Իսկ զատեանս պրոմիթեայ յիշեցաք վերագոյնդ 'ի համարն (150). ուր և տեսանես՝ զի նոննոս ըստ մասին զայն ինչ գրէ զպրոմիթեայ. զոր ինչ այլք զախսասէ ասեն:

Օ Նմանաձայն եղերս հեղինակին [illegible] և [illegible]՝ Թարգմանեցաք ըստ ճիշդ նշանակութեն [illegible] և [illegible], այլ մարթ էր և 'ի հայումս նմանաձայն յօրինել ըստ յարմարութե իրացն այսպ. « [illegible] հաւանութեն [illegible] ապաշաւ զհետ գայ ||: Իսկ անմիջական հետևորդն այն. « և ուրախ (241)
,, հարսնածութեն՝ տխուր կծուե ||, յիտալ՛՛ գնի այսպէս. « և ուրախ հիմենէից՝ տխուր օմէից ||: Սւր օմէ յայտ առնէ զաւաղական հեծութե ձայնից որպ զկոծ 'ի մ՚ մեռելոց. իսկ հիմենէոս է նշանակ ուրախութեան հարսանեաց՝ համարեալն չած ամուսնութե, որպ յիշեցաւ վերագոյն 'ի համարն (92):

Պրոտագորաս էր փիլիսոփայ ոմն աբդերացի 'ի Թրակիոյ՝ աշակերտ դեմոկրատեայ, և օրինագիր Թուրացւոց. ուստի առ ժմկ մի յաթէնս, և ապա աքսորեցաւ վս նորաձայն վՊպուԹեց իւրոց. ըստ սորա ծառատանս և պղատոն առանձին ծառիւք կշտամբեաց: Եւսեբիոս 'ի ձՊ ողոմպիադն ասէ. « Պրոտագորաս սոփեստէս. զորոյ զգիրսն (242)
,, վՃիռ եառուն այրել աթենացիք ||: Եղեն և այլ իմաստասէրք կամ իմաստակք ոմանք նովին անուամբ:

Ադրիպպոս մենենիոս էր իմաստուն և զօրաւոր հիւպատոս հռովմայեցւոց՝ իբր 500. ամօք յառաջ քան զքս. յորոյ աւուրս ամբոխ ժողովրդեանն հռովմայ ընդվզեալ ընդդէմ ծերակուտին՝ մեկնեալ որոշեցան, և համախումբ դիմեցին յաւենտին լեառն, որ այժմ [illegible] կոչի, կր լեառն սը: Իսկ ադրիպպայ փնացեալ առ (243)

Նոսա՝ խրատեաց զնն այսու առակաւ. տեսեալ ամէ անդամոց մարմնոյն զորովայնն անգործ, որ գիտէ ուտել եւեթ զվաստակս իւրեանց, պշարեցան ընդդէմ նր, եւ ոչ եւս կամեցան տալ նմա կերակուր. եւ եղեւ 'ի նքօղել որովայնի լուծեալ լքան եւ անդամքն ամ. եւ յայնժամ 'ի միտ ածին զպիտանութիւն որովայնի, որ սնուցիչն է բովանդակ մարմնոյն: Սովին առակախօսութբ շահեցաւ զմիտս ժողովրդեանն, եւ հաճեցոյց զնոսա հպատակիլ անդրէն ը իշխանութբ ծերակուտին. յայտ արարեալ՝ զի թէպէտ ծերակոյտն վայելէ 'ի վաստակս ժողովրդեան, այլ ոչ եթէ առանց նորա կարէ յոտին կալ ժողովուրդն:

(244) Էսքիլոս էր անուանի երգահան, ք յօրինող ազգի ազգի երգոց 'ի պէտս թատրոնական խաղուց, այր կունտ կամ ճաղատ գլխով: Սորա՝ ասի 'ի պատմութիւս ոչինչ ըհատ յառաջելոյ՝ գուշակութե լինել յամանց առ Եսքիլոս, թէ բար անկցի գիպուածով 'ի վերայ գլխոյ քո, եւ այնմ մեռցիս, վն եւ զգուշանայր ասեն շրջիլ 'ի ներքոյ շինուածոց: Դէպ եղեւ, զի յելանել նր երբեմն 'ի դաշտ եւ 'ի նստիլ ուրեք, արծուի մի՝ որոյ բարձեալ էր 'ի մագիլս իւր զկրիայ, եւ կամէր գտանել տեղի ապառաժ՝ ուր ընկեցէ խորտակեսցէ զայն՝ առ 'ի կարօղ լինելոյ ուտել, տեսեալ զճաղատ գլուխ Եսքիլոսի՝ համարեցաւ թէ վէմ հաստատուն իցէ. վն եւ ընկէց ուժգին ըզկրիայն 'ի վր գագաթան գլխոյ նր 'ի բարձանց. եւ այնպէս փխկ խորտակելոյ զկրիայն՝ ջախջախեաց զգլուխ Եսքիլոսի. որով եւ մեռաւ իսկ: Եւ սա եւս ծաղկեցաւ իբր 500. ամօք յառաջ քան զքն:

(245) Վն Նեսոսի եւ մահուն հերակլեայ լիով ասացաւ 'ի համարն (81). որպէս եւ վն կատոնի՝ որ սպան զանձն 'ի չտեսանել զյուլիոս 'ի պատիւ ինքնակալութե, տես 'ի համարն (205):

(246) Մի ոք 'ի պարզամտաց համարեսցի, թէ թեւաւորս գովէ ըն ինքեան զգործ ամաղեկայցուոյն, կամ անպարտ կացուցանէ 'ի մեղաց. զի ոչ եր-

րէք արդարանոյ ոք 'ի սպանանելն զայն՝ որ կա-
միցի սպանանել. այլ՝ զայս միայն ասէ հեղի-
նակս 'ի բովանդակ յայս խնդիր. թէ ըստ ճիշդ
բանի անձնական իրաւանց՝ առ 'ի լինել ումեք
անիրաւութեան պահանջի ընդիմութեան կամաց յա-
նիրաւելոյն. և զի ամաղեկացին ենթադրի լինել
կամակատար սաւուղայ. ըստ այսմ բանի ոչ ասի
անիրաւեալ առ նա. այլ թէ ոչ՝ ըստ ինքեան
ծանուցանս յանցեաւ և անիրաւեցաւ. զի պարտա-
կան էր գիտել թէ չունի ոք իշխանութիւն 'ի վերայ
կենաց իւրոց. որով կարող լիցի հրաման տալ այ-
լում սպանանել զինքն. և հետևաբար՝ թէ նաև
ինքն չկարէ ունել իշխանութիւն սպանանելոյ. և
այն զի այր թգւր էր և օծեալ տն. վն գեղեցիկ
ասէ Թէոդորոս. [illegible]
[illegible] : Նոյն զայն. զի սոյն բա-
զումք հաւաստի համարին ընդ հեղինակիս. ամա-
ղեկացին սասութք յօգնեաց զայն պատմուն սպան-
ման սաւուղայ յիւրմէ՝ կարծելով հաճոյանալ
յաջս դաւթի. և ընդունիլ պարգևս 'ի նմէ. այլ
փոխ պարգևաց զարժանին պատիժ մահու ընկա-
լաւ:

Ասացի՝ թէ չունի ոք իշխանութիւն 'ի վերայ կենաց
իւրոց. և այս ոչ միայն լուսով հաւատոյ յայտ է,
զի [illegible]. և զի՝ [illegible],
[illegible].
[illegible]. այլև 'ի բնական լուսոյ
ինքնին քաջայայտ է. զի սոյն ոչ մեզէն եղաք, այլ՝
յայտ արարաք, (ըստ այնմ, Նա [illegible]
[illegible]. և թէ [illegible]). Նոյնպէս
և կեանք և մարմինն մեր՝ ոչ 'ի ձեռս մեր է,
այլ՝ տն մերոյ և արարչի. ապա որ ոք ըստ կամս
իւր իշխէ բառնալ զկեանս իւր, յայտնապէս ա-
նիրաւէ առ տէրն կենաց և մահու, յն առած.
որով և գործէ ապիրատութեան մեծ՝ ընդէմ ածային
և բնական օրինաց: Զայս սմ իբրև անտարա-
կոյս ենթադրէ հեղինակս. վն և բանք նր ոչ են
զայսմանէ, թէ արդեօք անձնասպանն անիրաւէ՞
առ ած, կամ մեղանչէ՞, թէ ոչ. այլ զայն եւեթ
պնդէ

պնդէ ըստ ոմանց 'ի հին փիլիսոփայից՝ թէ աս. տանձն իւր չտանէ անիրաւութի ոք զրկանս. իբր զի ոչ է ինքն յինքենէ բաժանեալ՝ զի ընդէմ իւր զինեսցի, և ոչ յակամայս առնէ զայն գործ՝ զի ընդդէմ կամաց իւրոց անիրաւեսցի. ետ. որ է տեսական խնդիր ինչ սոփեստական, և ոչ իւիք գործադրական ։

(247) Մ,խերոն էր անուն զանազան գետոց երեցունց՝ 'ի կաղաբրիա, յեպիռոս, և 'ի բիւթանիա. (յոր եթէ յաւելցես և զախուրեանն՝ որ 'ի հայս, իբր նմանաւոր ըստ անուան, լինին չորք) ։ Եւ զի ջուր եպիռոսեանն ախերոնայ էր դառնահամ և մխա. սակար, և միանգամայն երկար միջոցաւ ընդ ստոր. երկրեայ անցս յածեալ՝ աներեւութանայր, յօդե. ցին առասպելաբանք՝ թէ իցէ նա մի 'ի գետոցն անդնդոց դժոխոց, կամ թէ ակն այնր գետոյ ի. ցէ 'ի տարտարոսն. վէպ փինկ ասելով՝ դժոխային և անել դուռ. յոր թէ անկցի ինչ՝ չէ մարթ հա. նել 'ի վեր, ասէին՝ ախերոնեան դուռ, կմ ախե. րուսիա ։ Թող և զայլ հանգամանս այսր առեղ. ծաբանութե ։ Անուանս ախերոն ըստ ոմանց առու. գաբանի 'ի յունականն՝ հոսանք ցաւոց, կամ յոր. ձանք տրտմութեց. որ 'ի դէպ գայ դժոխոց իմ իրօք ։ Իսկ վասն պղիկլետեան և լեոբեան քա. նոնաց առէպ յիշատակելոց՝ տես 'ի համարն. (55) ։

(248) Անուանուր բառիւք վարեցաք յայն բան. Ὁ φε- [illegible] φως φέγγει. իբր համաձայն նմանաձայնութե բնագրին, ուր ասի. ա [illegible] [illegible]. այսինքն տուողին ներէ ։ Եւ միտ բանին է, թէ անիրաւ. դատաւորին գիւրաւ ներող գտանի այնմ՝ որ տայ ինչ նմա. որ է ասել, կաշառօք զիջանի ։

(249) Հեփեստոս կամ Հեփեստոս, ըստ յն. Ἥφαιστος, և ըստ լտ. Vulcanus, համարիւր առ հեթանոս չաստ հրոյ, կամ առաջին դտակ կրակի, և վերա. կացու դարբնաց. որ 'ի դարբնոցի իւրում շի. նէր ասեն 'ի ձեռն պաշտօնէից իւրոց կիկղոպայց շանթս կամ կայծակունս 'ի պէտս դիոսի, և զէնս պէսպէս 'ի պէտս այլոց դից՝ ընդէմ հսկայից տի.

տա.

տանեանց ։ Արդ՝ ըստ առասպելաց հեփեստոսս, որ ամուսնացեալ էր ընդ ափրոդիտայ, տեսեալ զկին իւր յարեալ յարէս չաստծն, արար ցանց մի անխզելի կամ ուռկան երկաթի, և ըմբռնեալ զերկոսին զնոսա զափրոդիտէ և զարէս 'ի ներքս անդ՝ կապեաց աներևոյթ շղթայիւք. մինչև չկարել նց զերծանիլ. և ածեալ զնոսա 'ի հրապարակ տանելի՝ ուր ժողովեալ էին ամ դիք, նշաւակեաց զչարիս նոցա ։ Զայս առասպել ոմանք մեկնեն 'ի վր զօդուածոյ երկաթոյ և պղնձոյ և այլոց հրահալելեաց ։ Եւ այս չէ ինչ ընդդէմ. զի վասն գործոյ դարբնութն պղնձոյ և երկաթոյ յօդեցան 'ի վերայ հեփեստեայ այս ամ և այլ եւս ազգի ազգի առեղծուածութիւնք ։ Եւ ոչ բազումք առոյգ գատեն, հեթանոսք զգիւտ թօրեղայ՝ որ ըստ սբ գրոց. ԾՆՆ. Դ. 22. "էր Դարտարապետ դարբին " պղնձոյ և երկաթոյ", ընծայեցին յանուն հեփեստեայ. մինչև համարիլ ոմանց, թէ և անունս ՎՈՒԼՔԱՆՈՒՍ առեալ իցէ յանուանէս ԹՈՒԲԱԼՔԱՅԻՆ. զի զթօրեղ այսպ ձայնեն լատինք իբր ըստ հնչման եբրայեցւոց ։ Արդ՝ յասել թեսաւրոսի, թէ ադամանդեայ ցանց հեփեստեայ համարեալ են օրէնք առ ատելիս օրինաց, իմանայ ցանց անխզելի կամ ուռկան անձողոպրելի ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԻՐՍ ։

Մնեմոսինէ, որ է յն. ՄՆԻՄՕՍԻՆԻ, որ թարգմանի (250) յիշողութիւն կամ յիշատակումն, որ բանաստեղծից էր մի 'ի յաւերժահարսանց՝ համարեալ մայր ամենայն մուսայից, որ ծնօղ ամ գիտութեանց և ազատական արուեստից ։ Գոյր աւեն և աղբիւր մի յանուն Մնեմոսինեայ. յորմէ եթէ ըմպէր ոք զջուր, յիշէր զամ՝ զոր միանգամ տեսեալն էր 'ի կեանս իւր ։

Լատինք զբառս ԻՆՏԷԼԼԷԿՏՈՒՍ, որ է իմացութիւն (251) կամ միտք. ստուգաբանեն ԻՆՏՈՒՍ կմ ԻՆՏԷՐ ԼԷԳԷՐԷ, որ 'ի ներքս ընթերցողութիւն, կամ ներմերծանութիւն. և սոյին նմանութբ ըլլայնէ Թեսաւրոս

րոս զբացատրութիւն իւր։ Արդ՝ մեք պահեցաք զայն բացատրութի՛ որ հայեր յիրն. այլ զնիւթական առուգաբանութիւն ը̅ հայումս յարմարեալ եդաք. փ֊՝ ոչ թէ հ֊֊փ. յոր թէ յաւելցես և զբառդ հ֊փէ֊ն իբր նմանաձայն, հպաւորի 'ի դիտումն հեղինակին։ Գտանեմք և առ հոգեկիր հառաւորին մերում՝ նըյն գրիգորի նարեկացւոյ, զբառս հ֊֊փփ է̅ փփփ բառիս զուգորդեալ խորհրդարար. 'ի փ֊ճ֊֊փ ֊֊֊փէ֊՝ յաւելն. 'Երագունք ,, 'ի թռիչս իմաստից բանի, 'ի հ֊֊փ անմատոյց հփօփ ուղացեալք ||։

(252) Արդուեննա կամ արդեննա էր անտառ 'ի գաղղիա բելգացւոց՝ յարմար որսորդութե. յորմէ և արդուինա կամ արդոյինա էր անուն ընծայեալ 'ի նախնի գաղղիացւոց և 'ի սաբինացւոց՝ արտեմեայ չնծուհւոյն, իբր վերակացուի որսորդաց որ շրջիցի յանտառս. վն և դրօշէին զնա 'ի ձեռանացի՝ զբահաղդեատ, աղեղն 'ի ձեռին, և շուն առ ոտամբն. և մանաւոր տեղի որսորդութեան նորին համարէին զայն անտառ արդուեննեան. որոյ թռչունք լեալ իցեն լռութեայլ է̅ թեօք իւր զփոստուրայս, որք 'ի թռչիլն՝ ինքնին լռութ իւրեանց 'ի յայտ գան. գուցէ կամելով ասել՝ թէ գիւրաւ որսացեալք լինին։

(253) Տիտանեանք կամ տիտանացիք բաղում ուրեք առեալ լինին 'ի գիրս փոքր հսկայից. որք երևելի եղեն յաղթահասակ մարմնով։ Իսկ ը̅ բանաստեղծից տիտանեանք կի՛ հսկայք էին որդիք երկրի և տիտանոյ ուրումն չա՛յ կոչեցելոյ որդի երկնից. որ հանդերձ որդւովք իւրովք աւի մարտուցեալ է̅ այլ դիս վերինս և է̅ զօրութե երկնից։ Կամ ը̅ այլոց՝ տիտանեանք կռուեալ իցեն ընդ արեգական, որ յոլովակի տիտան կոչի առ վիրգիլիոսի և առ այլ բանաստեղծս։ Այլ առաւել հանդիպացեալ է առ ռմ հնախօսս պատմութի հսկայիցն շինողաց աշտարակին՝ այսպիսի օրինակաւ այլաբանելով զառոյգ բանս նր գրոց։ Վարարանջեալ աւեն տիտանեանց 'ի դիւաէ՝ ֆ յարամաղդայ, որ կոչի հայր չնծոց, խորհեցան ըն-

ընկենուլ զնա յերկնից. և եդեալ լերինս 'ի վերայ
լերանց՝ մերձ եղեն զինուք յերկինս. յայնժամ
միաբանեցան դիք ընդդէմ նց՟՝ վանել զնս՟. և նա
ինքն դիտս շանթս արձակեալ՝ քակտեաց և տա-
պալեաց զնա 'ի նջէ՟ դիզեալ լերինս, և զտիտա-
նեանս արկ 'ի սանդարամետս:

Ան պրոտէոսի յիշեցաք և այլուր, թէ ըստ ա- (254)
ռասպելաց՝ ունէր զարուեստ գուշակութե՟ և հան-
ճարաւոր խորհրդատուութե՟, բայց չասէր ումեք
զոր գիտէրն, եթէ նախ ոչ լինէր կապեալ. զի կամ
փախչէր, և կմ՟ զդէմսն յայլ կերպարան փոխէր:
Իսկ արիստէոս էր որդի ապողոնի և կիւրենեայ՝
արքայ արկադիոյ. որ եղև ասեն առաջին դար-
մանիչ մեղուանոցաց, և ուսոյց մարդկան 'ի գործ
ածել զմեղր. որպէս և մակարդել զկաթն, տնկել
զձիթենիս, ևն: Եւ զի 'ի պատճառ սորա մե-
ռաւ եւրիդիկէ կին որփէոսի, վրէժ առնուլ կա-
մեցեալ յաւերժահարսանց յարիստէոսէ՝ կորու-
սին յերկրէ զամ՟ մեղուս: Յայնժամ արիստէոս դի-
մեաց յօգնականութիւն մօր իւրոյ կիւրենեայ՝ որ
մին էր 'ի յաւերժահարսանց. և նա յղեաց զնա
առ պրոտէոս՝ խորհուրդ հարցանել 'ի նմէ վասն
նոր գիւտի մեղուաց. բայց խրատ ետ որդւոյն,
զի հնարեսցի 'ի քուն գտանել զծերունին պրո-
տէոս, և պնդագոյնս կապել զնա կարկամ չուա-
նօք. զի մի աւէ խուսափեսցէ. կամ ծածկեսցէ
զանձն իւր յաչաց քոց 'ի ձեռն բիւրափոփոխ կեր-
պարանաց իւրոց: Եւ նա իբրև արար ըստ բանի
մօրն, ուսոյց նմա պրոտէոս հնարս կենդանա-
ծնելոյ նոր մեղուս՝ թաղելով յերկրի զփորոտիս
ցլու, և այլն: Այլ վս՟ պտրզմին հերակլի ընդ-
խեցգետնի՝ յիշեցաք 'ի համարն. (70): Իսկ վասն
զօրութե՟ եղբարս անուանել բուսոյ տես 'ի հայե-
րէն բառարանն մնացորդաց:

Ունակութեն գիտութե՟՝ զգեստու նմանեցու- (255)
ցանէ հեղինակս. և այս՝ ստ՟ ասացաք 'ի համարն
(14). դիպողագոյն է յիտալական բարբառ՝ վասն
համաձայնութե՟ բառիս abito, որ միօրինակ նշա-
նակէ veste, և abitudine:

(256) Սա ինքն է երևելին և առաջինն պլինիոս վերո-նացի մականուանեալն սեկունդոս, մին յիմաստուն գրագիտացն հռովմայ, այր նշանաւոր գրով և բանիւ. յառաջին դարու՝ որ յետ Քի. արդ սա 'ի գնալ իւրում 'ի տես հրաբուղխ լերինն վեսուվայ՝ վտանգեցաւ 'ի ծխոյ նր, և մեռաւ։ Սոյն այս պլինիոս է, յորոյ 'ի գրոց՝ որ մակագրի պատմութիւն բը-նութե, կամ բնական վիպասանութե, 'ի մէջ բե-րաք ուրեք ուրեք բանս ինչ։

(257) Վն պրոմեթեայ՝ որ համարիւր 'ի հողոյ զմարդիկ կերպարանել, տես 'ի համարն (150)։

(258) Գալիլէոս գալիլեան փլորենտացի՝ ծաղկեցաւ մաթեմաթիգական ուսմամբ 'ի սկիզբն ժէ դա-րու. եղև դասատու 'ի պատուեա (այն է բատ-ուա), 'ի պիզա, և 'ի փլորենտիա (որ է ֆիօրէնցա)։ Հնարեաց Ճարտարութբ ազգի ազգի գործիս և ընտիր գիտակունս (իբր տէլէսքօբիոն). որովք նախ զառաջինն 'ի յայտ եհան զչորեսին արբանեակս լուսնթագին. շարագրեաց և բազում գրուածս ուսումնականս։

Իսկ սարդիացիք էին այլք գերեզմանակրկիտք կամ դիակապուտք. զի ընդ առնուլն զլուր՝ թէ թաղեալ իցէ ոք ուրեք մեծագին զգեստուք, գը-նային գաղտ 'ի գամբարանս, և կողոպտէին զա-մենայն զարդս մեռելոյն։ Սարդիացւովք իմա-ցեալ լինին երբեմն սարդենիացիք, իբր բնակիչք սարդենիոյ կղզւոյն յարևմուտս. և երբեմն բնա-կիչք սարդիս քաղաքի լիւդացւոց։

(259) Վն ապեղեայ Ճարտար նկարչի ասացաւ վերա-գոյն 'ի համարն (11)։ Իսկ լիւսիպպոս սիկիոնա-ցի էր անուանի անդրիագործ, որ դրօշեաց բա-զում արձանս՝ մի քան զմի Ճարտարարուեստ. վն որոյ և աղեքսանդր մակեդոնացի ընտրեաց՝ զի լիւսիպպոս եւեթ քանդակեսցէ զարձան իւր. որպէս և զապեղէս միայն ըն-տրեալ էր 'ի նկարել զիւր պատկեր։

(260) Տիանէ կամ տիւանէ էր քաղաք կապադովկաց-ւոց 'ի ստորոտս տորոսի, որ և կոչի տիանա քա-ղաք գամրաց մերձ 'ի ստորոտս անտիտորոսի։ 'Ի

քա-

քաղաքէ ատի էր երեւելի մոգն կմ՛ բազմարուեստ իմաստակն ապողոնիոս, վա՛յ եւ կոչի ափանէոս՝ ցի ափանացի. կեցեալ 'ի վերջին աւուրց օգոստեայ կայսեր մինչեւ ցՃմկս ղամետիանոսի։ Սա յետ շըրջելոյ զբ բազում աշխարհս եւ զբ անծանօթ վայրս՝ հուսկ յետոյ յանծանօթս մեռաւ, եւ գրեցան գործք նր մասացածին բանիւք եւ լի առասպելեօք՝ յաշակերտէ նր 'ի դամիսայ, եւ ապա նաեւ 'ի փիլոստրատոսէ. ուր անհեթեթ նշանք եւ արուեստք հրէշաւորք ընծային նմա, եւ ազգի ազգի գործք մեծամեծք արտաքոյ կարգի. որոյ վասն իսկ առ բազումս 'ի հեթանոսաց մեծացաւ անուն նր, եւ համարեցաւ 'ի նչէ իբր ած ոմն՝ զբ օրինակին սիմոնի մոգի։

Պաղակոնի, զբ յն. [illegible], որ թարգմանի կաթնածոր. է անուն քարի միոյ պատուականի 'ի գոյն կաթին. այլ երբեմն ունի եւ նիշս ինչ իբր 'ի գոյն արեան։ Լինի աւեն յայլեայլ տեղիս, այլ առաւել կաթնագոյնն ելանէ 'ի նեղոս գետոյ. որ 'ի լուծին կամ 'ի ձմլելն ծորէ յեւրմէ աւիշկ ինչ կաթնորակ եւ կաթնահամ։ Տայ աւեն կաթնատու գայեկաց առատութի կաթին. եւ եթէ կախեսցի զպարանոցէ սանդկաց մանկանց՝ գոյացուցէ 'ի բերանս նց հիւթ թքոյ կաթնահամ. իսկ եթէ մատուցի 'ի բերանն, հալի։ Զայս ամ յիշատակէ բաց յայլոց եւ պլինիոս 'ի լէ գիր. 'ի գլ. ժ. 'ի համարն 59. ուր եւ յարէ, թէ աւի ունել եւ զօրութի բառնալոյ զյիշողութի կամ առնելոյ զմարդ մոռացկոտ. եւ յայս հայի բան թեաւերոսի։ (261)

Որփէոս, որ զբ նախնեաց գրի որփեւս կամ որփեւս, որոյ եւ զբ յն. [illegible], որդի համարեալ ապողոնի գեղն երաժշտութեան, էր թրակացի ան բանաստեղծ եւ քնարահար մեծանուն յոյժ առ հելլենացիս. մինչեւ զբ առասպելոց՝ 'ի ձայնէ քնարահարութե նորա շարժիլ եւ սասանել տնկոց եւ բուսոց, կասիլ գետոց յընթացից իւրեանց, վայրի կերեց թմրիլ եւ ընդարմանալ, եւ թռչնոց վայրաքերիլ եւ ամոքիլ յընտանութի. փոխ առելոյ՝ (261)

թէ

թէ քաղցրաձայնչիւն թուէր 'ի լսելիս ամ մարդ-
կան: Սա ասի լինել մի յարգոնաւորդաց. զոր
յայն սակս է իւրեանս առեալ իցեն ուղեկիցքն,
զի 'ի պատահիլ յուշկապարկաց ծովու՝ մարթա-
ցի որփէոս քնարաւ իւրով յաղթել քաղցրաձայ-
նութեն նոցա, և մի լիցի ինչ վտանգ նաւորդաց:
'Ի մեռանիլ կնոջ իւրոյ եւրիդիկեայ՝ էջ ասեն
որփէոս քնարաւ իւրով 'ի սանդարամետս, և
քաղցր նուագօք հաճեալ զսանդարապետն՝ աղա-
չեաց զկին իւր. այլ անդրէն զրկեցաւ 'ի նմէ՝
ոչ պահելով զխոստումն իւր. զոր խոստացեալ
էր՝ չհայիլ յերեսս նր զճանապարհայն: Բազում
և այլ առասպելք գրին յաղագս երգոց և նուա-
գածուէց որփէոսի. որոյ և քնարն գլխովին դա-
սեցաւ 'ի կարգ համաստեղութեանց: Ածին քանի
մի բանաստեղծութիւնք 'ի գիրս յանուն որփէոսի.
այլ 'ի բազմաց է անստոյգս գտանին: Բազումք 'ի
նախնեաց համարեցան, թէ սա եղև առաջին 'ի
մէջ հելլենացւոց, որ կարգեաց զպաշտամունս
կրօնից, և յօրինեաց գիւցաբանութիւնս, կմ գրեաց
բանս պէսպէս զերկնայնոց և զծոյ, այլ ըստ հեթա-
նոսական կարգաց՝ կամ ըստ տանելոյ լսելեաց կը-
ռապաշտից: Յայս ամենայն հայի ասելն նոննո-
սի, * Որփեւս երաժիշտ այն էր ազգաւ թրակա-
„ ցի. ասի՝ թէ կանխաւ այնպէս երգէր, որպէս
„ զի հետևել երգոյն զծառս կաղնիս, և զանդրան
„ կենդանիս և զքարինս և զգետս հետևելով 'ի
„ ձայն հնչմանցն. այլ սորա քերթուածք բերին,
„ զորս իբրև ածաբանութիւնս ունին հելլենացիքն.
„ այլ առ այսոքիւք քերթուածովք 'ի ձեռն ա-
„ ռասպելական նշանաց ասէ զածոցն դասս և
„ զսէրս, եթէ որոց ումանց ոյք են գործք. և
„ ոյք որոց ումանց կատարմունք, և ոյք ումանց
„ որոց են գոյացուցիչք||: Իւ դարձեալ այլու-
ասէ, թէ * որփիւս . . . ածաբանելով զհելլենաց-
„ ւոց միւստերիոնն (ի՞ Դիոնիսիական), ուսոյց
„ թէ ո՞ր զածոյն պատուել պարտ իցէ||. Եւ:
(263) Հելլենացիք զծխածանն կոչէին Թաւմանդէաս, և
ասէին լինել դուստր Թաւմասայ ծովային դից՝ ծը-
նեալ

նեալ յեկեկարեայ գաւառէն ակնկալանօք. փինկ
աւելոյ՝ թէ ծիածանն, որ գոյանայ յանձրևաց,
առեալ է զանունն առ հելլենացիս 'ի զարմանալի
տեսոյ իւրմէ. զի յունարէն թա՛ւմա զարմանք կամ
զարմանալիք լսի, որպէս և թաւմա՛զօ զարմանալ. և
յիրաւի՝ զի վայելչանկար տեսութիւն ծիածանի
պատճառէ զարմանս յամենին, որք հային յաղեղ-
նաձև մեծ կամար նորա և 'ի գոյնս երփնագեղս:
Ցուելոյն բանաստեղծք, թէ Թաւմանդիաս
կամ ծիածանն՝ իցէ պատգամաւոր գից յիրս չա-
րագուշակս, իբրև բօթաբեր. որպէս և ընդ հակառակն
զհերմէս գեսպան դիցն ասէին լինել պատգա-
մաւոր լրոյ բարւոյ՝ կամ աւետաբեր: Եւ այս
ներհական իմն իմացուածով առեալ 'ի բանից ոք
գրոց. զի որովհետև ասաց ած Նոյի, թէ զաղեղն
իմ եդից յամպս 'ի նշանակ հաշտութեան՝ չածել այլ
ևս անձրև համաշխարհական, հեթանոսք՝ որք ոչ
ինչ առոյգ գիտէին 'ի բանից ածեղէն տառից.
տեսանելով զաղեղն երկնից 'ի ժամս անձրևային՝
համարեցան գուշակ լինել ամպրոպաց և խռովա-
կար օդոց. զորոյ զհակառակն պարտ է իմանալ: Ուր
ծանիր. զի Թէպէտ յունարէն թա՛ւմա է անուն
արական. վն և 'ի յունաց կոչի նա հայր Թաւ-
մանդիայ կամ ծիծանի, բայց քանզի իտալական
ստուգաբանութիւն [illegible] է անուն իգական,
վն հեղինակս կոչէ մայր ծիածանի. ուր մեք ծը-
նող եդաք:

Որպէս վն Ապեղեսի նկարչի, և Լիւսիպպոսի անդ- (264)
րիագործի յիշեցաք վերագոյնդ. թէ այնչափ ան-
ուանի էին յարուեստի իւրեանց. մինչև ոչ միայն
տայր հրաման Աղեքսանդր Մակեդոնացի նկարել
զպատկեր իւր և դրօշել կմ ձուլել զարձան իւր,
այնօրինակ՝ սահ և վն Պիւրգոտելեսի քաջ ակ-
նագործի, որ գիտէր քանդակել դրօշուածս 'ի
վերայ ականց պատուականաց. որպէս թէ պատուի-
րեալ իցէ Աղեքսանդրի, զի մի ոք այլ քանդակես-
ցէ զպատկեր իւր 'ի վերայ ականց՝ բաց 'ի Պիւր-
գոտելեայ: Ցայս հայի ասեն Պլինիոսի Դ Է.
ԳԻՐ.. ԳԼ. 37. *Այն այս Ինքնակալ (.......)
,, պաս.

„ պատուէր եդ, զի մի ոք այլ նկարեսցէ զինքն՝
„ բաց յապելլեայ. մի ոք քանդակեսցէ՝ բաց 'ի
„ պիւրգոտելեայ, և մի ոք ձուլեսցէ 'ի պղնձոյ՝
„ բաց 'ի լիւսիպպոսէ || : Որ և 'ի ԼԷ. Գիրք. Գլ.
1. ասէ. ՙԱռ Ժմիք խամենեայ . . . երևի սովո-
„ րութիւն քանդակելոյ և զմրուխտս. հաստատէ
„ զայն կարծիս՝ պատուէրն աղէքսանդրի մեծի,
„ որով արգել չքանդակել ումեք զինքն 'ի վերայ
„ ական՝ բաց 'ի պիւրգոտելեայ. որ անշուշտ եր-
„ ևելին էր յայն արուեստ || :

(265) Հեփեստեանս կմ՛ հեփեստոսս ձայնէ Թեսաւրոս զմոլար. քիմիականս՝ հեգնելով. իբր զի՛որ հեփեստոս համարիւր չած դաակ հրոյ. և դարբնապետ դից, որ զտիւ և զգիշեր 'ի պէտս չածոց առ հրով վաստակիւր, նոյնպէս և քիմիականք զամ աւուրս իւրեանց զրոցով հրոյ յածին 'ի գիւտ անգիւտ ոսկւոյ: Իւ դարձեալ՝ քանզի ըստ բանաստեղծից հուրն փոխաբերաբար հեփեստոս ձայնի, որ և իմաստութիւն՝ աթենաս, և քաջութիւն՝ պալլաս, նմին իրի և հրապաշտք կամ որք 'ի զուր ճգնին առ հրով, հեփեստեանք ձայնին: Իսկ թէ զինչ պանդորեանն անօթ իցէ՝ ծանիր, զի պանդորա. Ը յն. πανδώρα. (որ թարգմանի ամենապարգև. կամ ըունող ամ պարգևաց) կոչի 'ի բանաստեղծից անուն առաջնոյ կնոջ, զոր ստեղծագործել իցէ հեփեստոս հրամանաւ դիոսի, և կացուցեալ առաջի այլոց դից՝ արկեալ քող զերեսօք նր, և եդեալ պսակ ոսկի 'ի գլուխ նր. յայնժամ դիք իւրաքանչիւր պարգևս տուեալ իցեն կնոջն այնմիկ. աթենաս ասեն ետ նմա զիմաստութի, ափրոդիտէ զգեղեցկութի, ապողոն զնուագերգութի, և հերմէս զճարտարաբանութի: Իւ եղև ասեն 'ի գողանալ պրոմիթեայ հուր յերկնից 'ի պէտս մարդկան յիւրմէ ստեղծելոց, բարկացեալ դիոսի 'ի վր նր՝ խորհեցաւ հնարիւք պատուհասել զնա և զբնակիչս երկրի. յղեաց յերկնից 'ի յերկիր զպանդորա՝ ունելով 'ի ձեռին բախտանոց մի, այսինքն անօթ ինչ հմայական ուժգին խփեալ՝ ըունորան ձախող բախտից և թշուա.

ուսառութեանց սխալից, տանիլ զայն պրոմիթեայ իբրև 'ի պարգևս։ Այլ նոր զգացեալ զգուածանութիւն՝ չէառ յանձն ընդունիլ զայն պարգևս։ Իսկ եպիմեթէոս եղբայրն պրոմիթեայ առեալ զանօթն գեղեցիկ, և կարծեցեալ զայն լինել աման բարելից՝ լի բարեբախտութ՟ք՝ մեծաւ յուսով եբաց զայն. և նոյնժամայն թափեցան յերկիր թշուառութիւնք լցեալք յայն աման. և այն ինչ փութայր նա խփանել զանօթն, չէր ինչ այլ մնացեալ 'ի նմա, բայց միայն յոյսն՝ որ իջեալ կայր 'ի յատակս անօթոյն։ Եւ ահա այսպիսի անօթ անուանէ իրաւամբք հեղինակս զաման՝ յորում դնեն քիմիականք զյոյս իւրեանց 'ի գիւտ ոսկւոյ։

Վասն տիմանթեայ ասացաւ 'ի համարն (152). (266) ուր և վասն զուգիոնի և ապեղեսի 'ի (11)։ Իսկ յաղագս պրաքսիտեղեայ և զեւքսեայ և պարրասիոսի 'ի (95)։

Արքիմեդէս սիրակուսացի՝ ազգակից և ընտա- (667) նի հերոնի սիրակուսացւոց արքայի, եղև 200. ամօք յառաջ քան զՔ՟ն, մեծապէս համբաւեալ 'ի մաթեմաթիգայն, եղև քաջ հնարագէտ 'ի ճարտարել զգործիս մեքենայականս, մաթեմաթիգականս, և աստղաբաշխականս. մինչև ասել լեւիոսի զնմէ, "մի միայն զննիչ երկնից և աստեղաց, „ գտիչ զարմանալեաց, և հնարիչ արուեստական „ մեքենայից"։ Սա կազմակերպեաց պարունակ ինչ ապակեղէն, յորում ամ՟ շարժմունք աստեղաց և երկնից նշմարէին. շինեաց և ժամացոյց անուաւոր և այլ գործիս 'ի ցոյց չափմանց ժ՟մկի։ Սա ինքն է՝ որ սքանչելի ճարտարութ՟բ 'ի ձեռն այլևայլ գործեաց և հրացայտ հայելեաց վառնդեաց զնաւս հռովմայեցւոց 'ի պաշարել ն՟ց զսիրակուսա. այլ յետոյ յորժամ առաւ քաղաքն. սպանաւ յանգէտս 'ի զօրականէ միոջէ՝ երբ զբաղեալ կայր 'ի տան իւրում 'ի գժուարին չափմունս և 'ի գծագրութիւնս մաթեմաթիգականս։

Իսկ արքիտաս կ՟մ արքիւտաս էր փիլիսոփայ ո՟մն տարենտացի՝ 'ի դասէ պիւթագորեանց, երբ 400

ա-

ամօք յառաջ քան զՔն, քաջ աստեղաբաշխն և երկ-րաչափ. զոր Ովրատիոս կոչէ "չափող ծովու և « ցամաքի և անթուելի աւազոյ || : Սա ասեն հնարեաց ազգի ազգի մեքենական գործիս, յորս համբաւեալ է աղաւնին փայտակերտ, որ երևէր թռչել իբրև զկենդանի: Մեռաւ նաւաբեկութբ 'ի ծովու, կամ անկաւ 'ի նաւէ անտի 'ի ծովն ադ-րիական: Այլ են՝ որք թուեն չորս և հինգ անձինս արքիտաս անուամբ՝ ծաղկեալս փիլիսո-փայութբ և պէսպէս ճարտարութբ:

Այլ վասն դեդաղոսի՝ զորմէ առասպելեն շինել արձանս ինքնաշարժականս, լիով ասացաւ 'ի հա-մարն (58):

(268) Սա ինքն է պողիկղետոս անդրիագործ երևելի, որ վարէր երկաթի քանոնաւ. ոն յիշեցաք 'ի հա-մարն (55). արդ՝ թէպէտ և մեծ գրոշուածք սո-րա ունէին զգեղեցիկ համեմատութիւն մասանց, զի զնմին ճիշդ կանոնաւ և չափմամբ գործէր, այլ առաւել նշանաւոր եղև այն գործ նորա՝ զոր մասնաւոր գիտմամբ արար 'ի ցոյց ճարտարութե իւրոյ. քանզի 'ի միում նուագի խորհրդով գրո-շեաց զերկուս արձանս նմանաձևս, այլ ոչ նոյն-արուեստս, զմին յօրինեաց այնպէս՝ որպէս ինքն գիտէր և կամէր, ըստ անվրէպ կանոնաց արուես-տին իւրոյ. իսկ զմիւսն արար ըստ խրատուն ամբոխին, որք 'ի տեսանելն զնա 'ի գործել իւ-րում՝ ասէին, այսպէս և այնպէս պիտէր լինել այս և այն մասն արձանին: Եւ եղև իբրև կա-տարեաց զերկոսին ևս, կոչեաց զբազմութիւն, և հանեալ եցոյց առաջի նց նախ զիւրոյին արուես-տի գործածն. զ որ մեծին հաւանեալ գովեցին միաբան. եցոյց ապա և միւսն՝ զոր ըստ հաճոյս նոցա էր գործեալ. ընդ որ ոչ ոք գտաւ հաւան: Յայնժամ ասէ ցնոսա պողիկղետոս. զայդ՝ զոր գարշիքդ, դուք արարիք. իսկ զոր գովեցիքդ՝ իմ էր արարք: Եւ ահա այս այն արձան է ճար-տարարուեստ, որ կոչեցաւ 'ի ճարտարապետաց կանոն անդրիագործութե. զի 'ի նմէ առնուին օ-րինակ քաջ արուեստաւորք: Եւ այս է՝ զոր յիշէ պլի.

պլինիոս 'ի ԼԷ. Գիր. Գլ. 8. յասելն վն պողիկղե-
տեայ. "Արդ և զոր յոնն կոչեն Ճարտարա-
,, պետք, 'ի նմէ առնլով զգծագրութիս արուես-
,, տին իբրև յօրինակէ օրինաց. որ և միայնակ
,, համարի 'ի գլուխ տարեալ զարուեստ 'ի մէջ
,, մարդկան' 'ի ձեռն արուեստին||:

Շահասիրուի խաղավաճառաց բացատրի 'ի Թե-(269)
տերոսէ բառիւ [illegible]. որ էր անուն հրա-
պարակին կապուայ քաղաքի' որ 'ի կամպանիա.
ուր վաճառք լինէին ազգի ազգի օծանելեաց և
խնկոց անուշից. որովք մեղկացաւ տանն քաղքն
անձնիւրաղ յետ արիական մրցանաց խուրոյ. զի 'ի
մտանել խուռն 'ի կապուա' տուեալ զանձն 'ի
վայելս այնպիսի օծանելեաց սերլասիոյ. զհետ
եղև Թուլամորթութեն: Յայսմանէ սովորութիւն
եղև սերլասիա ձայնել զխաղավաճառութիւն կամ
զգործս վաճառողայն զխնկս անուշունս, որք պէս-
պէս հնարս հնարեն առ տաւել հաճոյ ընծայե-
լոյ զօծանելիս. որով և պատճառեն 'ի մարդիկ
զփափկասիրութի և զԹուլամորԹութի:

Մխով բառիւ առ տարբերել խոհեմութին յար-(270)
ուեստէ, հայելով 'ի բուն ստորեայ կամ 'ի սեպ-
հական փոխաճան երկոցունց. զի արուեստն է ու-
ղիղ բան ([illegible]) [illegible] իսկ խոհեմութին'
ուղիղ բան ([illegible]) [illegible], այն հայի յար-
տաքին և 'ի նիւթական գործս, սա 'ի ներքին և
'ի բարոյական ներգործութիս. այն զգործն առ-
նէ բարի. իսկ սա' նաև զգործօղն, որպէս և 'ի
տորև բացատրէ հեղինակս: Արիստոտէլ 'ի
բարոյական գիրս. Զ. Կ. 5. այսպէս զանազանէ.
Արուեստն է ունակուն գործելոյ' ճշգրիտ բա-
նիւ. Խոհեմութին է ունակութի առնելոյ ինչ
զմարդկային բարեաց' ճշգրիտ բանիւ: Սա է ա-
սէ առաքինութի, և այն ոչ:

Սիղենոս, որ 'ի յունաց կոչի [illegible], սատուգա-(271)
բանի յամաց' հնձանաշրջիկ, կամ Թաղեալ 'ի մէջ
հնձանի և գինւոյ, և յայլոց' ոռնգաշուրջ, կամ
կամարաքիԹ' գէտ 'ի վեր ոլորեալ: Արդ' այս
անուն էր ըստ առասպելաց' արբշիռ ծերունւոյն,

 որ

որ համօրինուր դաստիարակ բաքոսի, ՚ի գինւոյ չմոյն արբեցութեան, և ուղեկից նորա և գործակից յամի: Նկարագրէին զնա իբր արբեալ ոք անհեթեթ կերպարանօք, արխնդրաուշտ և լըրբենի ժպտեալ. հաստ ոլնդամբք՝ վերնակամար և սրածայր, մեծափոր և պորտապարար, կարճ հասակաւ՝ և գլխովին անդեղեայ, հեծեալ յէշ կամ յեցեալ ՚ի գաւազան, անկար ՚ի քայլել: Համառօտիւ ասել, այնպէս ձևացուցանէին զպատկեր նր, մինչև ամ տեսողաց իմանալ՝ թէ է արբեցող և շուայտեալ ծերունի. և զնոյն անուն տային նաև այլոց հետևողաց բաքոսի, ՚ի գինեւէր և շուայտոտ անձանց: Եւ զի սոկրատէս փիլիսոփայն ը արտաքին կերպարանաց երևէր իբր այսպիսի ոք լինել. և այնպէս իսկ գտեալ եղև ՚ի զօպիւրոսէ իմաստակէ ը տեսանել նր զառաջինն զգծագրուն դիմաց սոկրատայ, և ես յաղկիբիադէսէ բաղդատեցաւ կերպարան նորա կերպարանաց սիղենոսի և այլոց ծիւաղաց, յայն սակս ասէ թէոդորոս, թէ ըստ ոճին տայ երբեմն արանց իմաստնոց և զգաստից որպիսի ոք սոկրատէսն էր, զայնպիսի գծագրութեն արբշիռ և շուայտոտ արանց՝ ոյքի ոք սիղենոսն էր:

(272) Ռուբէնս կամ ռուպէնս անդուերբայի՝ պետրոս պօղոս կոչեցեալ, եղև անուանի պատկերահան յարևմուտս ՚ի սկիզբն ժէ դարու. սա նախ շըրջեցաւ ը քաղաքս աեղիս եւրոպիոյ, և մնւնդ յիտալիա՝ տեսանել զգործս երևելի նկարչաց. և առաւելապէս ՚ի վենետիկ քաղաքի փոյթ կալաւ նմանօղ լինել մեծանուն պատկերահանաց՝ դիցիանոսի, պօղոսի վերոնացւոյ, և դինդորեդդոսի, ապա դարձ արարեալ ՚ի քաղաք իւր անդուերբիա, որ և անվերսա, ՚ի լոյս ընծայեաց զարդի ազգի ձեռագործս իւր վայելչանկարս. և անդ մեռաւ յամի տն 1640: Սա էր մեծանգամոյն և քաջ ճարտարապետ շինուածոց, և քաջ լեզուագէտ՝ հմուտ եօթնեակ լեզուաց: Իսկ հանճարս էր այլ ումն քաջարուեստ յայն տեսակ մանր նկարուց, որ ասի մինիադուրա:

Զանգս

Օ անցս փորմիոնի և աննիբաղայ 'ի մէջ բերէ(273) Կիկերոն 'ի Բ. ԳԻՐՍ. ՅՂ. ՃԱՐՏԱՐԱԽՕՍԻ. ԳԼ. 18. յասելն 'ի դիմաց կատուղոսի. "Չեն ինչ ինձ
,, պէտք այնպիսւոյ հելլեն վարժապետի. որ ըզ-
,, սովորական վճռութիւնս 'ի լսելիս իմ յեղյեղես-
,, ցէ, երբ չիցէ նր երբեք 'ի հրապարակ ելեալ.
,, և ոչ յատեան ուրեք հանդիսացեալ. ոմն որք
,, Ճեմականն այն ասի լինել փորմիոն. զի յոր-
,, ժամ աննիբաղ տարագիր եղեալ 'ի կարթագե-
,, նայ՝ եկն վտարանգի առ անտիոքոս յեփեսոս,
,, դէպ եղև ասեն՝ զի վն անուանի լինելոյ նորա
,, մեծաւ փառօք՝ առ ամենին, հրաւիրեցին զնա
,, հիւրընկալուք նորին՝ զի թէ կամք իցեն՝ առա-
,, ջիկայ գտցի 'ի լուր բանից նախասացեալ առն
,, (ՓՈՐՄԻՈՆԻ): Եւ յոյժ անհաւան գտանիլ նորա՝
,, խօսեցաւ այլին պերճախօս զօգուտ ժամս զի-
,, րաց իրաց, որք անկ են սպարապետի զօրուն,
,, և զզինուորական կարգաց համօրէն: Յայն-
,, ժամ որք մերձն կային յունկնդրութիւն, յակ-
,, Ճիւս եղեալ՝ հարցանել սկսան և զաննիբաղ,
,, թէ քեզ զիարդ թուի վն իմաստասիրիս այսո-
,, րիկ: Իսկ պենացին այն (ՊՆ ԼԻԲԷԱՑԻՆ ԱՆՆԻԲԱՂ)
,, թէև ոչ իբրև քաջ հելլենախօս, այլ ազատօ-
,, րէն եա ասեն պինի, և ասէ. Բազում բա-
,, զում անգամ տեսեալ է իմ 'ի շաղփաղփ ծերոց,
,, բայց և ոչ զմի որ տեսի այնպէս շաղփաղփել՝
,, որպ զփորմիոն: Եւ կարի յիրաւունս (ԱՍԷ ԿԻ-
,, ԿԵՐՈՆ). զի զինչ այլ յանդգնագոյն, կամ զինչ
,, այլ անհնարին շաղակրատանս մարթ իցէ ասել՝
,, քան զայդ. զի առաջի աննիբաղայ՝ որոյ զայն-
,, չափ ամս մարտ պտրզմի էր մղեալ 'ի վր տէրու-
,, թն ը հռովմէական ժողովրդեան՝ ը ամ ազգաց
,, յաղթականի, իշխեսցէ այր ոք հելլենացի՝ որոյ
,, ոչ երբեք զթշնամւոյ զփորձ առեալ իցէ, կամ
,, զբանակ անգամ տեսեալ, և պարզաբար ասել՝
,, և ոչ 'ի դոյզն գործ արքունի անձամբ երբեք
,, մտեալ, օրինադիր լինել յաղագս զինուորական
,, կարգաց ||:

Յայտնի է գիւտ բանաստեղծից և վիպասանից(274)

հելլենացւոց, որոց կամեցեալ տալ պատճառս՝ թէ զխիրդ 'ի միում աւուր գիւտ ծնունդ աղեքսանդրի մակեդոնացւոյ յաղխմղեայ թագուհւոյն, և հրկիզումն տաճարին արտեմեայ չանծուհւոյ յեփեսոս 'ի ձեռն հերոստրատոսի ուրումն, յօդեցին զայն առասպել. թէ արտեմիս գնացեալ էր յայնժամ մանկաբարձ լինել աղեքսանդրի, և յայն զբաղեալ՝ չեղև ձեռնհաս պահել զտաճար իւր՝ զի մի այրեսցի: Այլ գեղեցիկ է հետևութիւն, զոր հանէ թեսաւրոս 'ի բանաստեղծական օրինակէ այսմ:

(275) Ոմանք համարեցան՝ թէ կային կեկիլիա իցէ կին կայիոսի սերվլիոսի տուղղոսի՝ որ վեցերորդն էր 'ի թագաւորս հռովմայեցւոց յետ հռովմուլոսի. և յայս միտ խօսի թեսաւրոս. բայց ըստ այլոցն աւանդելոյ իբրև առոյգ՝ էր նա կին կայիոսի տարկուինիոսի պրիսկոսի՝ հինգերորդ թագւորին հռովմայ: Ըստ զխիրդ և իցէ, անունն [illegible], և կամ [illegible] (համաձայն յունականին). զոր ոմանք բռ-տուգարանեն [illegible], [illegible], [illegible]. և ն, եգեալ լինէր իբրև մականուն այնոցիկ՝ որք համարէին լինել պատճառ խնդութեան ծնողաց, կամ պանծալի զաւակ. և բազում անգամ ևս առեալ լինէր փոքր անուան պատուոյ. և նշանակէր [illegible] և [illegible] կամ [illegible]՝ [illegible]: Արդ՝ 'ի մէջ կանանց, որք յայս անուն կոչեցան առ հռովմայեցիս, անուանի գտաւ նախասացեալդ կայիա կեկիլիա, կին այրաւէր և ժրաջանի, ճարտար և յաջողակ 'ի գործ և 'ի վաստակս ձեռաց իւրոց: Նմին իրի և պարծանս համարէին անձանց տիկնայք հռովմայ յայն անուն կոչել. մինչև սովորութիւն իսկ եղև, զի յաւուր հարսանեաց՝ յորժամ ածեալ լինէր հարսն 'ի տուն փեսային, 'ի հասանելն առ դուրս հարցեալ լինէր. [illegible] [illegible]. և նա իբր բարեգուշակ անուան տալով անձին՝ ասէր. [illegible] ([illegible]): Իսկ կամ 'ի փեսայէն հարցեալ. թէ [illegible] [illegible] [illegible]. զայս տայր պատասխանի. Թէ [illegible] [illegible] ([illegible]). և [illegible] [illegible] ([illegible]):

(276) Կորիննէ կամ [illegible] էր կին հելլենացի՝ նշանա,

նաւոր գեղով. և ականաւոր յարուեստ բանաստեղծութեան յաւուրս քսերքսեայ առաջնոյ պարսից արքայի. յորում ժամի ծաղկէին երևելի բանաստեղծք և նուագայարգարք առ յոյնս. յօրինեաց բազում ազգս և երգս ճարտարս, զորս և նուագէր 'ի հարկանել իւրում զքնար. մինչև ըստանալ անուն քնարահար մուզայի՝ համարեալ իբրև զմի 'ի մուզայից ժ 'ի չնծուհեաց երաժշտութեան. վէպ և թեատրոս զկնի նուագածու կին կորովարան նմանեալ կորիննեայ՝ մուզա կոչէ. որ̃ և զայր նր̃ նմանեցուցանէ սիղենոսի՝ շաղփաղփ և բանդագուշեալ ծերունւոյ. որոյ բերանն ոչ բանաւոր ինչ բարբառէր, այլ միայն արբեցութեան գինւոյ ծառայէր. որ̃ յիշեցաք վերագոյնդ:

Սան հարիւրաչեայ արգոսի՝ որ կարգեալն էր(277) 'ի պահպանութիւն յովայ, և սպանաւ 'ի հերմեսէ, տես 'ի համարն (139): Ուր ծանիր, զի որովհետև ըստ առասպելաց յով փոխակերպեալ էր յարջառ կամ յերինջ. թեատրոս ատանոր փոխանակ անուան յովայ դնէ ՀԻՓԷՍ. այն է երինջ, իսկ մեք բացատրութ թարգմանեցաք:

Տուզզիա (որ յիտալականն չփոթութբ̃ անուան(278) 'ի տպագրողէն դնի տարպէյա) էր դուստր սերվիոսի տուղղոսի վեցերրդ թագաւորին հռովմայ զկնի հռոմուլոսի, տուեալ 'ի կնութիւն տարկուինիոսի սուպերբոսի: Արդ՝ սա առ վաղագոյն թագաւորեցուցանելոյն զայր իւր միաբանեցաւ ընդ նմա 'ի սպանութիւն հօր իւրոյ. և ապա անագորոյն մտօք ընթացոյց զկառս իւր 'ի վերայ մարմնոյ հօրն. որ յարեան թաթաւէր. և թէպէտ երիվարքն խըրտուցեալ զանգի առնուին, այլ նա մտրակեաց ուժգին. և այնպէս կոխոտելով զգի ծնողին իւրոյ՝ եանց առ տեղեաւն:

Լիւիա դրուսիլլա դուստր լիւիոսի դրուսոսի(279) տուաւ 'ի կնութիւն տիբերիոսի կղոդեայ ներոնի. յորմէ ծնաւ նա զտիբերիոս կայսր, և զդրուսոս գերմանիկոս կեսար: Արդ զսա ինքն զլիւիա՝ մինչդեռ յղի էր, էառ օգոստոս կայսր իւր 'ի կընութիւն իբր հաւանութբ առն նր̃. և զի ինքն օ-

գոս.

գոստոս ոչ ունէր զաւակ արու, զծնունդս լի-ւիայ արար իւր յորդեգիրս՝ ընդ թախանձելոյ կեղծաւոր և նենգամիտ կնոջն. որ գլխովին որսացեալ էր յինքն զկամս նր. ոչ թէ իշխան լինել նմա 'ի վե կամաց օգոստոսի. զի զամ՝ զոր ասէր լիւիա, առնէր ինքնակալն. և այնպէս յաջողեցաւ տիբերեայ որդեգրեցելոյն օգոստեայ յաջորդ լինել կայսերութե նորին. այլ գլխովին աննման 'ի բարեխառնութեց անտի նր:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԳԻՐՍ:

(280) Քրիսիպպոս կամ Խրիւսիպպոս էր փիլիսոփայ ոմն յաղանդոյն ստոյիկեանց, աշակերտեալ զենոնի և կղէանթեայ. որոց և յաջորդ եղև 'ի դպրոցի նոցա. և համարեցաւ գլխաւոր առաջնորդ ստոյիկեանց: Էր այր խորագէտ և խորամանկ՝ յաջողակ մտօք. վս և 'ի տրամաբանութե զօրաւոր գտաւ քան զյոքունս. գրեաց բազում ինչ 'ի վե իմաստասիրական իրաց, է՛ որ ուղիղ. և է՛ որ վրիպական. ոչի է և յառաջ բերելն 'ի հեղինակէս: Մեռաւ 'ի հասակի իբր հգ ամաց. փառանգեալ ընդ ասելոյ ոմանց 'ի գինարբութէ. զի հրաւիրեալ յաշակերտաց իւրոց 'ի կոչունս զոհից, և արբեալ աւելի քան զչափն զգինի անոյշ՝ շնչարգել եղև. և յետ հինգ աւուրց փչեաց զոգին: Կամ ընդ այլոց՝ մեռաւ փառանգեալ յուժգին ծիծաղմանէ. զի տեսեալ աւեն զէշ մի՝ որ ուտէր թուզ. ժպտեալ ասէ ցաղախինն, հապա բեր և գինի, զի տացուք իշոյդ ըմպել. և այս ծաղրական ասացուած իւր այնչափ ախորժալուր ցուցաւ առաջի իւր, և շարժեաց զնա 'ի ծաղր սաստիկ, մինչև չկարացեալ հանդուրժել՝ հեղձամահ եղև: Զայսպիսի անշնչութե յերեաց ծաղու պատմեն և վս քսենոփոնի. զոր յիշատակէ այլուր թեսաւրոս. միայն թէ չիցէ լեալ շփոթութե անուանց ընդ քրիսիպպոս և ընդ քսենոփոն:

(281) Սեան երկճղի ճանապարհին պրոդիկոսի յիշեցաք

ցաք 'ի վերայ 'ի համարն (98). այլ և հեղինակս լեալ բացատրեաց չէրէ.. 105։ Արդ՝ գեղեցիկ նմանեցուցանէ սա զայն ճանապարհ երկշաւիղ՝ վարանմանն օգոստինոսի յաւուրս դարձի իւրոյ. զոր բազմօք նկարագրէ նա ինքն օգոստինոս 'ի գիրս խոստովանութ. այլ յասելն 'ի Գիրս Է. Գլ. 10. *Ես յորժամ խորհուրդ 'ի մտի դնէի՝ թէ
,, այսուհետև ծառայեցից տն այ իմոյ, այլ վա_
,, ղագոյն ընտրեալ էի. ես ինքն էի՝ որ կամէի,
,, և ես ինքն՝ որ ոչն կամէի։ Այո՛ այո՛ ես էի.
,, որ բոլորովին կամէի, և ոչ բոլորովին չկամէի։
,, Նմին իրի և ընդ անձին ոգորէի, և անձամբ
,, յանձնէ քակտեալ բաժանէի։ (Ն 'ի յաջորդ Գլ.
,, 11. յարէ). Զայսօրինակ տագնապէի յանձն
,, իմ և տառապէի. գանգատելով զանձնէս զառն
,, քանքարատնօք արտաքոյ սովորութե. և շրջշր_
,, ջելով զիս 'ի մէջ կապանաց իմոց, մինչև խոր_
,, տակեսցին շղթայքս բովանդակ ... Եւ ասէի
,, 'ի սրտի իմում. ահա արդ լիցի. այժմ լիցի։
,, Եւ այն ինչ բանիւ մերձենայի 'ի բարին, առ_
,, դեամբք այլ թէ առնէի և ոչ առնէի ... և ա_
,, ռաւել զօրանայր յիս չարն սովորեալ՝ քան բա_
,, րին անսովորական. Եւ որչափ մերձեալ լինէր
,, այն վայրկեան ժամի՝ յորում հանդերձեալ էի
,, փոխիլ յայլ այլ. այնչափ առաւել ահ և ար_
,, հաւիր արկանէր զինև։ Եւ ոչ եթէ յետս ըն_
,, կրկէր կամ 'ի բաց դարձուցանէր, այլ կախ 'ի
,, կախ թողայր։ Կաշկանդէին զիս մնոտիք սնո_
,, տեաց և ունայնութիք ունայնութեց ... և յա_
,, պաղէին զխէթս իմ. մինչև դանդաղէի բուռն
,, առնել անձին և կորզել զիս 'ի ձեռաց նց, և
,, յառաջ խաղալ 'ի տեղին՝ յոր կոչեցեալն էի։
,, Վս զի ասէր ցիս բռնաւոր սովորութիւն. եթէ
,, համարիցիս՝ թէ կարող ինչ իցես կեալ առանց
,, այդոցիկ (սովորեալ հեշտութեանց աշխարհի.
,, են)||։ Մինչև յետոյ ուրեմն յաղթեաց առէ յորդոր առաքինութեն. և ուսոյց զիս ապաւինիլ յած 'ի բոլոր սրտէ. և վառեցաւ 'ի խորհուրդս իմ բոլորովք առ բարին. *Այս (տե՛ս 'ի

Գլ.

„ Գւ. 12.) տարածեցի զձեռն իմ 'ի գետին՝ ընդ
„ Թզենեաւ միով, ոչ գիտեմ որպէս. արձակեցի
„ զկապանս արտասուաց, և յորդեղ զեղան գետք
„ իբրև յաղբերականց յաչաց իմոց՝ 'ի պտ̃րգ ընդու-
„ նելի այ̃ ... և արձակեալ ձայն ողորմ ( առէլ
„ ցանձն իմ) մինչև ցերբ. մինչև ցերբ. վաղիւ,
„ առ վաղիւ: Ընդէր ոչ այժմ. հիմ ոչ յայսմ պա-
„ հու վախճան եղիցի վատթարութե̃ն իմոյ ||: Յա-
րէ առա զնի և զօրինակ կատարեալ դարձի խ-
րոյ մանաւոր շնորհօք ա̃ծային ողորմութե̃:

(282) Նուի ակնարկել յայն բան առաքելոյն. "Հա-
„ ճեալ եմ ը̃ օրէնսն այ̃ ըստ ներքին մարդոյն.
„ բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ՝ զինե̃լ
„ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ զիս
„ օրինօք մեղաց՝ որ են յանդամս իմ: Այր մի
„ տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուցէ զիս 'ի
„ մարմնոյ աստի մահու. այլ շնորհքն այ̃ 'ի ձեռն
„ յ̃սի ք̃սի տ̃ն մերոյ ||. Հռովմ. Է. 22: Եւ կամ
յայն. "Եւ զի մի առաւելութի̃ յայտնութե̃ցն
„ հպարտացայց. տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշ-
„ տակ սատանայ կափել զիս, զի մի հպարտացայց.
„ և վ̃ն այնորիկ երիցս աղաչեցի զտ̃ր, զի 'ի բաց
„ արասցէ յինէն. և ասէ ցիս. շատ են քեզ շը-
„ նորհք իմ, զի զօրութի̃ իմ 'ի տկարութե̃ կա-
„ տարի ||. Բ. Կոր. ԺԲ. 7:

(283) Ըստ առասպելապատում հնախօսութե̃ց՝ որ յա-
ղագս արգոնաւորդաց, մեդիա ասի լինել դուստր
այետայ արքային կողքիսաց, ը̃ որոյ ձեռամբ էր
գեղմն ոսկի. իսկ յասոնն էր որդի արքային Թե-
սաղացւոց՝ և եղև առաջնորդ արգոնաւեանց. որ
իբրև եհաս 'ի կողքիս՝ հարաւ 'ի սէր մեդեայ. և
'ի ձեռն ն̃ր կորզեալ զգեղմն ոսկի՝ յափշտակեաց
և զնա, և տարեալ 'ի Թեսաղիա՝ արար իւր կին:
Բայց յետ ծնանելոյ 'ի նմէ զորդիս՝ անտես արա-
րեալ զնա յասոնին՝ ամուսնացաւ ընդ գղաւկեայ
դստեր կրէոնի արքային կորնթացւոց: Ընդ որ
յանհնարինս դառնացեալ մեդեայ, և դրդեալ
'ի վրէժխնդրութի̃ դեղեաց մահաբեր թունիւք
զգղաւկիա և զկրէոն. սպան և զզաւակս իւր

ԸՂ-

զծնեալս 'ի յասպիճսէ. և ինքն խոյս ետ յաթէնս: Այս ամուսնացաւ Է եգեոսի որդւոյ պանդիոննի. յորմէ ծնաւ որդի մի մեդոս անուն. և նովաւ հանդերձ դարձ արար 'ի հայրենիս իւր 'ի կողքիս. և տեսեալ՝ թէ հայր իւր ընկեցեալ է յաթոռոյ թշրութեն 'ի ձեան որդւոյ իւրոյ պերսէսի, անդրէն հնարեցաւ դարձուցանել զնա յաթոռն: Բազում են և այլ գործք ընծայեալք մեդեայ 'ի բանաստեղծից անտի. որք համարին զնա վհուկ լինել՝ երևելի յարուեստ կախարդութեն: Զմի 'ի մասցածին գործոց նորա զնկարագրեալն յեւրիպիդեայ ողբերգակէ եղծանէ մերս մանկէս քերթող 'ի գիրս պիտոյից. Է այսու մակագրութբ. Երգծ Մեդեայ:

Սմին նման գրեն այլք զփիլիպպոսէ զհօրէն աղեքսանդրի. թէ յորժամ 'ի ժամ թմրութե 'ի քնոյ կամ 'ի գինւոյ՝ արար դատաստան անիրաւ. զորկեալն աղաղակեաց, և ասէ. բողոքեմ առ արքայ. Ասէ փիլիպպոս առ ո՞ բողոքես ով դու. ոչ ապաքէն ես ինքն եմ արքայ փիլիպպոս՝ որ որոշեցի զդատ քո: Եւ նա ասէ. բողոքեմ 'ի փիլիպպոսէ թմբրելոյ առ փիլիպպոս սթափեալ: Այս իմաստուն պինի ոչ զայրացոյց զփիլիպպոս, այլ սթափեցոյց. և ետ դատել դատաստան արդար. բայց ոչ յետս դարձոյց զառաջին վճիռ իւր, այլ յարքունի գանձուց ելից զզրկանս նեղելոյն: (284)

Ափրոդիտէ. Է յն. ափրօդիտէ. ելեալ 'ի բառէս (285) ափրօս, որ է փրփուր. թարգմանի փրփրածին. քանզի առի յառասպելս՝ թէ ծնաւ 'ի փրփրոյ ծովու. յոր կաթեալ էր արեան ուռանոսի ի երկնից՝ հօրն կռոնոսի: Զսա լատինք կոչեն վէնէրա. զոր ոմանք պէսպէս ստուգաբանեն. այլ հասարակօրէն նշանակէ վէնուս. և է արմատ բառիս վէնուստաս, որ է չնաղութիւն, են: Արդ՝ ափրոդիտէ կամ վէնուս համարեալ էր առ հեթանոսս՝ չաստուածուհի սիրոյ, գեղեցկութե, և հեշտութեան: Բայց ոմանք երկու ափրոդիտէս դնէին՝ ոպ̄ յիշէ և թէոդորոս. և այլք երիս. իսկ կիկերոն չորս

թը.

Թուէ. զորոց չէ մեզ անկ խօսիլ: Այլ ծանիր, զի ոմանք համարեցան, թէ նոյն իցէ ը̄ ափրոդիտեայ եւ անահիտ, գուցէ շփոթելով զանուն անահտայ ը̄ յունական անուանս Ἀναΐτις, որ թարգմանի ἀναίδεια, որ եւ էր գործ ափրոդիտեայ. եւ սակայն բազմօք յայտ է 'ի գրոց նախնեաց, զի անահիտ ոչ է ափրոդիտէ, այլ՝ է նոյն որ առ լատինս կոչի Diana, եւ առ յոյնս Ἄρτεμις. զոր եւ մեք սովոր յունական ձայնիւ արտեմիս կոչեմք. որոյ սեռականն լինի արտեմեայ՝ կամ արտեմդեայ համաձայն յունականին. 'ի կարգս մոլորակաց վէնուս կամ ափրոդիտէ է արուսեակն, որ եւ լուսաբեր. իսկ ախտա կամ անահիտ է լուսին, ըստ ոմանց բանաստեղծից: Այլ զկիրկէ վհուկ՝ որ 'ի սորա յիշատակի. յիշեսցուք վերագոյն 'ի համարին (51):

(286) Թրասիբուղոս կամ Թրասիբղայոս աքսոնացի որդի պիւթոդորոյ անկեալ յախտ մտաթափութե̄ համարէր զանձն լի փարթամութե̄ք եւ անկարօտ յամ. 'ի կորնչիլ իրեք՝ չցաւէր. իբր զաւաւելն ունելով. խնդայր ը̄ մեծուն այլոց իբր ը̄ բախտ իւր. 'ի հասանել նաւուց 'ի նաւահանգիստն պիւրեայ, իւր կարծելով զնս̄՝ ընդառաջ ելանէր նոցա, եւ մեծաւ խնդութե̄ ընդունէր. եւ 'ի մեկնելն 'ի տեղւոյէն՝ յուղարկէր զնոսա պատուով առ փոքր մի ուղեկից լինելով առ ցամաքաւ. եւ պարզաբար ասել՝ երջանկացեալ էր յանձին, զի համարէր զինքն տէր այնչափ իրաց: Իսկ եղեւ իբրեւ կամեցաւ եղբայր նորա տանիլ զնա 'ի բժիշկս, չէառ նա յանձն. մինչեւ յետոյ ինքնին 'ի յուշն դարձաւ: Իսկ ապա սովոր էր ասել. ոչ երբեք այնպէս երջանիկ եւ քաղցր կեանս վարեալ է իմ. որպէս յայնմ մտաթափութե̄ կամ 'ի մոլար յայն կարծիս փարթամութե̄. զի ոչ ինչ պակասէր ինձ ը̄ խնդումս կարծեաց:

Իսկ վս̄ դիանիսեայ երեւակայութե̄ն՝ ունիս տեսանել 'ի համարն (6):

(287) Պոմպ տեսակ ինչ հանդիսական զոհից առ հելլենացիս, զոր մատուցանէին յաւուրս մեծախումբ

խումբ ուրախութեան, և անուանէին զայն ἑκα֊
τόμβη, ի հարիւր զուարակեան. զոր ոմանք մեկ֊
նեն՝ զոհ հարիւր զուարակաց կամ հարիւր ցլուց.
բայց այլք մեկնաբանեն լինել հարիւր կճղակեան
կամ հարիւրոտնեան, ի զոհ քսան և հինգ զուա֊
րակաց: Սոյն այս է՝ որ ἑκατόμβη կոչի 'ի
Թուղթն Գրիգորի Մագիստրոսի յասել նորա առ
Թոռնիկ Մամիկոնեան. "Վեհ կազմելով զինչ ե֊
,, րախանին բազմազան խորտկաց՝ տալ քան
,, 'ի պէղէթեամաղացուց զզոհն հարիւրաւոր ա֊
,, րամազդայն տօնի ||: Իսկ թէ յիրաւի պիւթա֊
գորաս զայնպիսի ինչ զոհ մատուցեալ իցէ. չհա֊
ւանի Կիկերոն, յասելն 'ի Գ. Գիրս. յղ. Բնութեան
Աստուածոց. Գլ. 36. "Թէպէտև ասի զպիւթագորայ,
,, թէ 'ի գտանել իւրում նոր ինչ գիւտ յերկրա֊
,, չափուն՝ զուարակ զոհեալ իցէ մուզայից (Աստուածու֊
,, հեաց Գիտութեան). այլ ինձ անհաւատ թուի այդ.
,, քանզի նա չէառ յանձն զոհ մատուցանել և ոչ
,, իսկ դեղոսեանն ապողոնի. զի մի առ է արեամբ
,, շաղախեսցի զսեղանն ||:

Սան Վերրեսի եղեն բանք մերագոյնք 'ի հա֊ (288)
մարն (190): Նոյն զառաջինկայ գործ նորա ստո֊
րագրէ Կիկերոն 'ի Գործ. Բ. Ընդդէմ Վերրեսի. Գիրք
Ե. Գլ. 11: Ոչ այլուստ իմանայր (ասէ) զգար֊
նանային եղանակ, բայց միայն թարթափելով 'ի
մէջ վարդից. նստէր 'ի գահաւորակ կամ 'ի պատ֊
գարակ՝ բարձեալ 'ի յութից. յորում էին բարձ֊
կնեար վարդալից. պսակ ունէր 'ի գլուխն վար֊
դաչէն, և մանեակ 'ի վարդից արկեալ զպարա֊
նոցաւ. և այլ վանդակագործ քսակ վարդալից
առ հոտոտելեօք, և այլն: Իսկ վն յետագոյ ան֊
ուանց ըստ բաւականին տայ տեղեկութիւն նա ինքն
Թեասուրան՝ նկարագրելով զգործս նց:

Սա ինքն է Դոմետիանոս տղայամիտ կայսր հռով֊ (289)
մայեցւոց, որ 'ի սկզբան անդ իւրոյ տէրութեան
սահմանեալ էր անձին օր ըստ օրէ ժամ պարապոյ՝
մտանել 'ի սենեակ իւր առանձին, և որսալ ճանճս
սրածայր գրչեօք, 'ի խաղալ նոքօք, կամ 'ի զեր֊
ծանիլ 'ի ձեռաց նց: Եւ եղև երբեմն միում յիշ֊
խա֊

խանաց նր̅՝ որ կոչիւր ուրբիոս կրիսպոս, մատա-
նել առ կայսրն վս̅ կարեւոր ինչ իրաց. և իբրև
ել արտաքս 'ի սենեկէն, եհարց զնա այլ ոմն իշ-
խան՝ թէ ուր է ոք առ ինքնակալին. զի և ինքն
ունէր ինչ բանս առնել նմա. իսկ ուրբիոս զայս
ետ պատասխանի ընդ խաղ. և ոչ իսկ ճանճ գտանի առ
կայսեր:

(290) Վասն փաղարիսի և ցլու նորա լիով ասացա-
կանխաւ 'ի համարն (3): Այնքա̅ և վս̅ բուսիրի-
այ մարդախոշոշ բռնաւորի յիշեցաք 'ի համարն
(220). Թէպէտև ոչ գտաք ինչ բանս վս̅ երիվա-
րաց նորա. միայն վասն դիոմեդեայ ասանգի՝ թէ
մարմնովք օտարաց կերակրէր զերիվարս իւր. որ̅
ունիս տեսանել 'ի համարն (172). զնոյն ասէ
հեղինակս և վասն գլաւկոսի չէրէս. 544. գուցէ
և բուսիրիս այնպիսի ունէր սովորութիւն, կամ
թերևս յագիս ձիոց կապէր զմարդիկ. և այնպէս
թողոյր ձգձգիլ ընդ քարուտ տեղիս: Ոչ գտաք
ինչ և վասն առիւծուց թէոդամասայ բռնաւորի,
որ սպանաւ 'ի հերակլէ՝ որ̅ զբուսիրիս. գուցէ
առաջի առիւծուց արկանէր զմարդիկ, որպէս և
բազումք 'ի բռնաւորաց արարին: Այլ է և ա-
թամաս արքայ թեբայ, զորմէ ասի յառասպելս
ոսկի գեղմանն և արգոնաւորդաց, թէ վս̅ հալա-
ծելոյ նր̅ զղաւակս իւր զփռիքսոս և զհելլէս 'ի
սադրելոյ ինովայ՝ որ էր մօրու մանկանցն, հա-
րաւ 'ի դիւէն. և 'ի տեսանել իւրում զինով և
զորդիս նորա՝ համարելով զնս̅ առիւծուս լինել,
'ի վր̅ յարձակէր սպանանել զնս̅. և այլ ևս բանք
ասին:

Պրոկոստէս կամ պռոկրուստէս էր աւազակ նշ-
շանաւոր յատտիկէ գաւառի առ կեփիս գետով.
որոյ ընկալեալ զանցաւորս իբր հիւրասիրութե̅
հանէր յանկողինս 'ի հանգչիլ. և եթէ տեսանէր
զհասակ ուրուք երկայն քան զչափ անկողնոյն,
ծայրատէր անդէն զոտս նր̅՝ զի հաւասարեսցի ը̅
անկողինն. և եթէ գտանէր կարճ քան զանկո-
ղինն, ձգտեցուցանէր զմարմին նր̅ ճարճատելով
չարաչար, թող զայլս՝ զորս 'ի մամուլս ոլորէր
և

և այլ ևս անբերելի տանջանօք կորուսանէր. ըզ-
սա ևս սատակեաց յետոյ հերակլէս, կամ ըստ
այլոց թեսևս ։

Ատրէոս կամ ատրևս էր որդի պեղոպայ ար-
քայի. (յորմէ պեղոպոնէսոս գաւառն կոչեցաւ).
սա յետ մահու հօրն կալեալ վասն ժառանգութե
թշնամութե ընդ եղբօր իւրում թիեստեայ՝ վանեաց
զնա. և ապա նենգաւոր կոչեալ զնա առ ինքն՝
սուտ թէ գաշնակից առնել խոստանալով. արար նմ
կոչունս ընթրեաց. և յընթրիս անդ եհան 'ի սե-
ղն խորտկաց զմարմինս երկուց որդւոց թիես-
տեայ խորովեալս, կամ զմին խորովեալ 'ի հուր
և զմիւսն խաշեալ 'ի ջուր. որպէս և զարիւ-
նս խառնեալ ընդ գինւոյ՝ մատոյց եղբօր իւրում
բաժակաւ ։ Եւ յետ ընթրեաց ետ բերել զգլուխս
մանկանցն. և ցուցեալ զնոսա թիեստեայ՝ ասէ.
Ճանաչես զոսա. ահա 'ի մայ անոթ գոգս էին
խորտիկքն՝ զորս կերար ։ Զայս անգթութիւն ան-
բերելի յայտնարանեալ կամելով վիպասանիցն հել-
լենացւոց՝ ասացին, թէ չհանդուրժեալ արեւ
այսպիսի մեծեղեան գործոյ՝ յետս կոյս դարձաւ.
կամ թէ եղև խաւարումն արեգական ։

Իսկ սկինէս կամ ըսկինիս էր աւազակ ոմն մերձ
'ի կորնթոս՝ այր գազանամիտ և զօրաւոր, որ ընդ
դրկելոյ ոմնգիտաւ՝ ինքնին ձեռօք իւրովք բուռն
հարեալ զերկուց ծառոց՝ զերկոցունց զծայրս մին-
չև 'ի գետին իջուցանէր և միացուցանէր. և կա-
պեալ զմարդիկ զոտից և զձեռաց յերկոսին կող-
մանս, թողացուցանէր զոստս ծառոցն. և այն-
պէս 'ի վերանալ նոցին յոգս յեղակարծ յարձակ-
մամբ՝ հերձեալ կտորէին մարմինք կապելոցն ։

Այլ անցին զանցին զորօք բանաւորքն յետա-
գայք՝ 'ի նախատակել զոր վկայս այսպիսի և այլ
ևս ազգի ազգի տանջանօք ։

Պիգմալիոն կամ պիւգմալիոն էր որդի բէղոսի (291)
արքային տիւրոսի. այր ընչաքաղց. որ ամ իրօք
զհետ էր հաւաքելոյ զինչս. և որչափ հարստա-
նայր՝ և ևս ագահէր. ստ օրէն է ամ արծաթա-
սիրաց ։ Եւ զի քեռայրն իւր, այն է սիխէոս ա-
կեր-

կերպաս քրմապետ՝ այրն գիտեալ՝ ունէր ճոխութի բազում գաղէն 'ի Թագաւոր. սակայն զնա պտղմաղեան գաւազրութե յառանձին պաշտօն առաջի զոհարանին. այլ ոչ էհաս ժառանգել զծմ ինչս նորա. զի քոյր իւր գիտէ իմացաւ զգաւն, և ժողովեալ զինչս առն իւրոյ՝ խոյս ետ 'ի տիւրոսէ 'ի կիպրոս. և ապա անկեալ յափրիկէ՝ շինեաց անդ զկարքեդոն. որ յիշեցաք 'ի համարն (99)։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԻՆՆԵՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼԽՈՅ։

(292) Սա ինքն է ատրէոս կմ ատրևս եղբայր Թիեստեայ. զորոյ զանողորմ բարս փոքր ինչ վերագոյն յայտնեցաք։ Արդ՝ կամի աւել Թեսաւրոս ըստ բանից բանաստեղծից, Թէ ատրևս 'ի տալ եղբօր իւրում ուտել զմարմինս որդւոց նորին և ըմպել զարիւնս նոցա խառն ը գինի. ոչ եԹէ 'ի պատշաճողութի կամ յանպատշաճութիւն գործոյն հայէր՝ յորժ պարտ էր սոսկալ, այլ միայն հեշտանայր ընդ անագորոյն եղանակ այնր ապիրատութն։

(293) Աւտողիկոս, որ և գրի աւտողիոս կամ անուղոքոս, էր անուանի գող և աւազակ, համարեալ 'ի գիւցազանց որդի հերմէսի չծյն, որ առ լատինս մէրկուրիոս ասի, և զի մերկուրիոս կոչի առ նս և փայլածուն, ասի յայլոց՝ Թէ աւտողիկոս ծնեալ իցէ ը աստղեցուԹե այնր մոլորակի։ Արդ՝ ը առասպելաբանից էառ սա զօրուԹիւն 'ի հօրէ իւրմէ 'ի հերմէսայ՝ կերպարանափոխ լինել յայլ և այլ դէմս. և զայն 'ի կիր առեալ 'ի գործս յափշտակութն՝ ոչ միայն զանձն այլակերպէր, զի մի ծանիցի, այլև զգրաստս և զանդեայս՝ զորս յափշտակէր, յայլ գոյն փոխարկէր ը երևուԹի մորԹոյն. մինչև անմարԹ էր տրանց նց գտանել և ճանաչել զնոսա։ Իւ եղև 'ի յաճախել նր յայս չարիս, որով համարձակ գողանայր և զգրաստս դրացեաց, զգացեալ զայս սիսիփոս ուրումն 'ի մերձաւորաց նր՝ նշան եդ 'ի մր գրաստուց իւրոց խորագոյնս քան զմորԹն. և

յոր-

յորժամ գողացաւ զայնս Աւտողիկոս, սա նշա-
նաւ խուրով կոչաւ զգողօնն և զգողն։ Այս ամ
զմի ինչ միայն ցուցանէ, թէ ամիւ Ճարտար էր
Աւտողիկոս յարուեստ գողութեն և յափշտակու-
թեն. բայց ամ գող Ճարտար ըմբռնի հուսկ յետոյ
Ճարտարութբ իւրով։

Վասն չարամիտ և երգիծաբան Զոյիլեայ ասա- (294)
ցաւ 'ի վերոյ 'ի համարն (160)։ Իսկ Լեպիդոս՝
Մարկոս Եմիլիոս կոչեցեալ՝ էր ազնուական ումն
յերևելի տանէ, այլ փառասէր և իշխանասէր,
որ միշտ փառաց 'ի փառս, և յաւագունէ յաւա-
գութեն վերանալ ձգտէր, եղև մեծ քրմապետ. և
երիցս եառ պատիւ հիւպատոսութեն. կարգեցաւ
զօրագլուխ և սպարապետ և դարձեալ ընտրե-
ցաւ մի յիշխանաց եռապետական տէրութեն՝ ընդ
Օգոստոսի և ընդ Անտոնիոսի։ Եւ ոչ այնու շա-
տացեալ՝ ձեռն էարկ սեպհականել ինքեան և
զտէրութեն Սիկիլիոյ. և այն ինչ կարծէր նստիլ
իշխանաբար 'ի Մեսսինա, ըմբռնեցաւ յաւոսէ իւր-
մէ, և արտասահմանեցաւ 'ի փոքրիկ քաղաք մի
Իտալիոյ։ Արդ՝ զախտ այսպիսի իշխանասիրու-
թեն, որով ոք անյագաբար ձգտի եւս քան զեւս մե-
ծանալ և տիրել, (զնոյն իմա և զբուռն բերմա-
նէ ցանկութեն, բարկութե, եւն) Կիկերոն կոչեաց
[illegible]. իբր թէ չկարէ այնպիսին զուսալ ու-
նել զանձն, և կամ չէ տէր անձին, բուռն ձգեալ
'ի բերմանէ կրից և ախտից։ Վյս և բառս [illegible],
որ թարգմանի անկարութիւն, բազում
անգամ վարի առ լատինս 'ի տեղի անժուժկալու-
թեն։

Զայսպիսի մահ յառաջ եկեալ 'ի սաստիկ ծի- (295)
ծաղմանէ յիշեցաք և վերագոյնդ 'ի համարն (280)։
Այլ թէ որ Քսենոփոն իցէ յիշատակեալն աս-
տանօր՝ չէ մեզ յայտ. զի բաց 'ի պատմաբանն
Քսենոփոնայ, որ և Քսենոփոնտ ասի, վեց եւս այլ
նոյնանուն թուեն մատենագիրք։

Եպիկտետոս էր մեծանուն փիլիսոփայ ստոյի- (196)
կեան, հայրենեօք 'ի հերապօլսոյ Փռիւգացւոց.
սա 'ի ծառայական կարգէ յառաջ եկեալ՝ եղև մի
'ի

'ի սեննեկապետաց Ներոնի կայսեր, և երևելի գըտաւ յոյժ 'ի Հռովմ. վճարուԹն սորա և ընԹացք վարուց տաւել մերձաւոր եղեն քրիստոնէական կարգաց՝ քան զամ Նախնի փիլիսոփայից. գրեաց բազում ինչ՝ ընտիր և պիտանի: Ասած էր դորա, Թէ բովանդակ իմաստասիրուԹին կախեալ կայ զերկուց բանից, Համբեր, և Հրաժարեա: Եւ եղև 'ի Ժմկին՝ յորում արտաքսեաց դոմետիանոս կայսր զամ փիլիսոփայս 'ի Հռովմայ, յամի տն իբր 94. գնաց և բնակեաց 'ի Նիկոպօլիս քաղաք Եպիրոսայ. և անդ մեռաւ 'ի խոր ծերուԹեան: Աշտանակն կաւեղէն՝ զոր 'ի կիր առնոյր նա, վաճառեցաւ յետոյ երեք Հազար դենարի:

(297) Սա ինքն է փիլոկտետես յիշատակեալն 'ի մէնջ 'ի Համարն (112). զոր ոմանք 'ի խոցմանէ Նետի ասեն մեռեալ, և այլք ը Համբաւ 'ի խայԹուածոյ օձի, տես անդ:

(298) Այս բան է վիրգիլիոսի լատին բանաստեղծի 'ի Ը. Էնէական գրոց. 'ի 614. տանն. ուր Փռիւգուհիս անուանէ զկնամարդի արս Փռիւգիոյ վասն կանացի ԹուլամորԹուԹե նոցին: Իսկ Թէ զինչ իցեն գինդիմեան մայրիք, կամ բարձունք գինդիմեայ, ծանիր. զի գինդիմոս կամ գինդիմա էր անուն անկախիս լերին 'ի Փռիւգիա. ուր 'ի ներքոյ վարսաւոր ծառոց գոյր տեղի պաշտաման կիւբելեայ, իբ ռէայ մօր չաստծոց. որ Համարիւր դուստր գինդիմեի կնոջն մեոնեայ արքային լիւդացւոց. ուստի և ինքն կոչիւր գինդիմենա. և անտառ նր գինդիմեան. յորում տեղւոջ լինէին խրախունք ՀեԹանոսականք Թմբկօք և պարուք: Եւ յայս տեղի Հայի առեալն խորհրդացւոյն յաշխարհագրուԹե: *Փռիւգիա ... ունի լեառն ըզ-
" գինդինիա (կամ զգինդիմոն)||:

(299) Յոյնն Դիոգենէ ԹէպէտԵւ 'ի մեր բարբառ ըստուգաբանի՝ յազգէ գից կամ 'ի զարմէ չաստծոց, այլ սակայն ստորուԹե առեալ լինի փոքր բառիս քաջացն կմ փառաւորուն, այսինքն որ երևելին է 'ի մէջ մարդկան 'ի ձեռն մեծամեծ արուԹեց և առաքինուԹեց. զոր յոյնք Հէրօ. կամ Հէրօս կոչեն,

և

և այլապէս ստուգաբանեն: Արդ՝ որպ յայտ է, հեթանոսք մոլար մտօք՝ զորս միանգամ համարէին առաւելեալ քան զհսրկ մարդիկ իւիք իւիք կատարելութբք, ձայնէին զնս հերոս կամ դիւցազն՝ իբր ածանման և ածամերձ. յոր մի ասէ յովհաննէս իմաստասէր 'ի ճառն ըդէմ պօղիկեանց. «այլ և դիւցազունք անուանեալ՝ գեր 'ի վերոյ » մարդկայնոյս համբաւանոյին բնութն ‖: Այլ մեք զնոյն անուն յարգիս 'ի կիր առնումք ը սովորութն 'ի վր երևելի անձանց ծաղկելոց մեծագործ առաքինութբ: Դմին իրի և սա դիւցազնական առաքինութն նշանակէ զայնպիսի կատարեալ առաքինութի, որ գեր 'ի վեր գտանի քան զհսրկ առաքինեաց՝ իբր առաւել ածամերձ. կմ զքաղաքավարութի այնպիսի՝ որ 'ի վեր տեսանի քան զհսրկ ընթացս մարդկան, և իբր հրեշտակային իմն երևի. որպ և ընթացք բանից հեղինակիս լաւ ևս յայտնեն:

'Ի մէջ որց՝ զորս յիշէ թեսաւրոս 'ի կարգի դիւց. (300) ազն կոչեցելոց առ հեթանոսս, քաջայայտ է անուն քաջին հերակլեայ. կամ հերքուլեայ հրակայի. որ բազում անգամ յիշեցաւ. և 'ի մեզ վահագն ևս անուանի: Իսկ ուրիշ էր անուանի ոք քաջազն, զորմէ ասեն շրջեալ յարևելս և յարևմուտս, և 'ի բազում տեղիս սահմանեալ և հաստատեալ քաղաքական կեանս, արուեստս ազգի ազգի, երկրագործութիւնս, ևն. և այս յաւէտ յեգիպտոս. մինչև նոյն կարծի լինել (գէթ ըստ ոմանց) ը գլխաւոր չաստն եգիպտացւոց, որ կոչիւր ալիս կամ սերապիս, որդի դիոսի՝ ծնեալ ըստ առասպելաց 'ի Նիոբեայ դստերէն փորոնէի արքային արգիւացւոց, եղբայր և այլ իսիդեայ. զորմէ յիշեսցուք 'ի համարն (135): Իսկ կաստոր և պողիկևոսիս (այն է ը լատ" Բօլլուքս") էին յընկերաց անտի արգոնաւորդաց, եղբարք հեղինեայ. վերաբերեալք 'ի հելլենացւոց 'ի պատիւ դիւցազանց, և դասեալք 'ի կարգս համաստեղութեց՝ երկաւոր կամ երկուորեակ անուամբ, որ և կոչին դիոսկուրք կամ դիոսկուրացիք:

(301) Կամիլլոս՝ որ և Մարկոս Փուրիոս, էր մի յերևե_լի զօրավարացն Հռովմայեցւոց՝ իբր 390 ամօք յառաջ քան զՔս, և ընտրեալ բազում անգամ 'ի պէսպէս աստիճանս աւագուն: Արար բազ_մապատիկ գործս քաջութե 'ի սէր հայրենեաց. մինչև կոչիլ նմա ԵՐԿՐՈՐԴ ՀՌՈՄՈՒԼՈՍ՝ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՆՈ_ՐՈԳԻՉ. յորոյ անուն կանգնեցին Հռովմայեցիք ար_ձան մի հեծելոյ յերևելի հրապարակի: Իսկ վն պտրզմին եղելոյ ը տուռնոսի ասացաւ 'ի հա_մարն (41). սոյ և վն չիպիոնի 'ի (61):

(302) Յաղագս Լիկայոնի 'ի գայլ փոխելոյ ը աստա_պելոյ՝ տես 'ի համարն (161). սոյնպ և վն ըն_կերաց ոդիսեայ՝ որք ասին փոխակերպեալ յայ_լայլ անասունս 'ի կիրկեայ վհկէ. տես 'ի (51):

(303) Շնուն Լիցի՝ զոր յիշեցաք վասն ովրեստեայ մայ_րասպանի 'ի համարն (232). սոյ և վասն այասայ կատաղելոյ 'ի (136). Թող զի և հեղինակն բա_ցատրէ ը բուականին:

(304) Միլտիադէս էր անուանի զօրավար աթենաց_ւոց, որ միատասն հազար արամբք վանեալ խոր_տակեաց զմեց հարիւր հազար զօրս պարսից 'ի մարաթոնեան դաշտին: Եւ այսպիսի անուն քա_ջութե նր եղև օրինակ և յորդոր այլոց քաջաց: Այլ սա ինքն Միլտիադէս հուսկ յետոյ ըմբռնեալ յաթենացւոց իբրև պարտաւոր՝ 'ի կապանս բան_տի վճարեաց զկեանս:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ԳԻՐՍ:

(305) ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԴ անուն 'ի մերս բարբառ՝ սոյ և յայտ է, առեալ է 'ի կամելոյ զբարի այլում, որ է հարազատ գործ սիրելութե, կամ նշան ճըշ_մարիտ սիրոյ. այլ այնպէս՝ զի յանուանելն զոք բարեկամ, ոչ այնչափ նշանակի բարի կամիլն նր այլում, որչափ 'ի մէջ բերի բուն իսկ սիրելու_թիւն. այն է մտերիմ սէրն նր՝ որով կապեալ է ընդ սիրելւոյն, յորմէ և հետևաբար կամի միշտ զբարին նորա: Իսկ առ լատինս և առ յոյնս ը հակառակն է. զի զբուն բարեկամութիւնդ անուն առ_

տանուն յանուանէ սիրոյ. որպէս [illegible] ըստ լատ՝
ծագի 'ի բառէս [illegible], որ է սէր. կամ 'ի բայէս
[illegible], որ է սիրել. և [illegible] ըստ յն. ծագի 'ի բայէս
[illegible], որ է սիրել կամ համբոյր սիրոյ տալ. Նը-
մին իրի և առ նոսա նոյն է տալ սիրելութի կմ̅
բարեկամութի։ Եւ ըստ այսմ տարածանեն զնոյն
բառ ոչ միայն 'ի վերայ սիրելութե՝ որ գտանի 'ի
մէջ բանաւորաց, այլև փոխաբերաբար 'ի վերայ
բնաւոր յօժարութե՝ որ գտանի յանասունս, եւ
և 'ի վր̅ համակրութե՝ որ 'ի տունկս կամ յայլ
էակս նիւթականս։ Զայս քաջ 'ի միտ առ, զի
դիւրաւ իմասցիս զընթացս բանից հեղինակիս 'ի
բովանդակ Ճառս առաջիկայ. ուր միշտ զմի և
զնոյն բառ վարէ նա, ըստ [illegible]. այլ մեք է զի
[illegible] եդաք, և է՝ զի յաւելաք և [illegible]։
Իսկ զմերձաւոր նշանակութի ձայնիս [illegible]-
[illegible]. ըստ բարի կամեցողութի այլում, գնեն լաւինք
իբրև մասն սիրելութե՝ կամ գործ բուն բարե-
կամութե. և կոչեն զայն [illegible], որ թարգ-
մանի բարի կամեցողութի. բարեհաճութի, բա-
րեյօժարութի. և զայսմանէ ես ըստ կարգի խօսի
հեղինակս. ուր մեք եդաք [illegible]. այն է
ըստ յն. [illegible], կամ [illegible]. ևն։

Սէրն ըստ բանաստեղծից այլաբանելոյ համարիւր (306)
լինել գեղեցկագոյնն 'ի համօրէն էակս և երից-
գոյն ժմկաւ. 'ի վեր երևեալ ըստ հեսիոդոսի ան-
գամին 'ի սկզբնութե տիեզերաց, յորում էր լոկ
երկիր աներևոյթ և անպատրաստ՝ կմ̅ նիւթ ան-
կերպարան. որ յայլոց կոչի անդունդ կամ վիհ
խառնութեց. արդ՝ ըստ արիստոփանեայ, սէրն
զարդարեալ ոսկի թևօք՝ միացաւ ընդ վհի, և 'ի
զուգաւորութէ անտի 'ի վեր ելին մարդիկ և կեն-
դանիք, և նոր զարդք երկնի և երկրի։ Եւ ահա
ըստ այսմ նմանաբանութե, զոր բազմօք ընդլայնեն
մեկնաբանք, խօսի աստ թեոսաւրոս։ Յիշեցաք
և վերագոյնդ զսէր անուանեալ չաստուծ սիրոյ 'ի
համարն (192). զոր ոմանք նոյն համարին ընդ
ամին, և կոչի աւէն նաև ցանկութի։

Թեոսաւրոս 'ի բնագրի անդ զմագնիս կոչէ [illegible]. (307)

[illegible]

թաուշան թար կամ հերաճշան չեմ, որպ և զերկաթն՝
հրաթ հանթաշ, յամ նարա մեթաղաշ. քանզի ոմանք հա-
մարին, թէ մագնիսն առնուլ իցէ զայն անուն
փոխաբերական ՚ի քաջէն հերակլեայ, որ և հեր-
քուլէս ասի. և այս վն բնաւոր իմն յօժարութե-
նն առ պտրզմական մրցմունս՝ որ նշանակի հրա-
տիւ, որպ է բերումն մագնիսի առ երկաթ: Իսկ
այլք ասեն, թէ ոչ յանուանէ հերակլեայ կմ
հերքուլեայ հսկայի, այլ՝ ՚ի հերակլիոյ քաղաքէն
լիւդացւոց կոչեցաւ մագնիսն վէմ հերակլեան.
որպ և երբեմն քար լիւդեան կոչի եթէ մագնիսն,
և եթէ փորձաքարն. և նոյն իսկ մագնիս կամ
մագնեսախս անուանդ առնուլ է ասեն ՚ի մագնե-
սիոյ քաղաքէն լիւդացւոց. զի յայն կողմանս յա-
ճախ գտանի: Այլք յաւելուն՝ թէ ընտիր եւս
մագնիս ելանէ ՚ի սահմանս միւս հերակլիոյ քա-
ղաքի՝ որ ՚ի մակեդոնիա: Իսկ երկաթն կոչի հրատ
՚ի մէջ հանքաց. կամ մարս յն արէս ՚ի մէջ մետա-
ղաց, մի՝ զի արտադրութի հանքաց երկաթոյ ըն-
ծայի հրատ մոլորակի. և միւս ևս՝ զի հրատն
առ լատինս կոչի մարս, որ նշանակէ մարտ. և
յայտ է թէ գլխաւոր գործի մարտի պտրզմաց
երկաթն է. զորօրինակ սուր, գեղարդն, նետ,
և ըն նմին նման արէս յոյնն՝ զոր լատինք նոյնպ
մարս կոչեն, համարիւր վերատեսուչ պատերազ-
մաց:

(308) Ըստ գրելոյ վաղերիոսի մաքսիմոսի. Գիրք. Ա.
Գլ. 8. պօղիւստրատոս և հիպպոկղիդէս էին փի-
լիսոփայք՝ ՚ի մի և ՚ի նոյն աւուր ծնեալք. որք
և ՚ի միում դպրոցի եպիկուրոսի աշակերտեալք՝
կացեալ ը միմեանս սիրով, և ունէին զամ ինչ
՚ի մէջ իւրեանց իբրև հասարակաց. և այնպ կա-
ցեալ ՚ի միաբանութե՝ որ առ միմեանս մինչև ցխոր
ծերութի, ՚ի միում աւուր մեռան երկոքեան:

(309) Պերիթոս, ըստ յն. ՊԵՐԻԹՈՍ, էր որդի իքսիոնի
արքային լապիթեայց. մեծերիմ սիրով բարեկա-
մութե կապեալ ը գիւցազինն թեսեայ աթենաց-
ւոյ: Էառ ՚ի կնութիւն զհիպպոդամէ զդուստր
ատրակայ. զոր իբրև յափշտակել կամեցան կեն-
տաւ-

տուրօք կամ ձիացուլք․ Թեսեւս հանդերձ հերակլիւ ձեռնտու լեալ պերիթեայ՝ վանեաց զի վն յորձակելւոյն․ ով յիշեսցուք 'ի համարն (124)։ Ցուեկուն տասապետարկուք․ Թէ 'ի մեռանել հիպոդամէի՝ պերիթոս և Թեսեւս միաբան յարձակեցան 'ի տարտարոսն՝ կորզել զպերսեփոնէ զկին պղուտոնի սանդարապետի․ այլ ընդ հաւանելն մօտ առ դուռն՝ պերիթոս սատակեցաւ 'ի կերբերոսէ, որ էր շուն եռագլխի՝ պահապան դրաց դժոխոց․ և Թեսեւս վտանգեալ ըմբռնեցաւ 'ի ներքս անդ․ մինչև եկեալ հերակլէ՝ ազատեաց զնա․ որպէս ասացաւ 'ի համարն․ (134)։ Նոննոս այսպէս յիշատակէ զերան․ "Պերինթոս
„ (առէ) իջեալ 'ի դժոխս․ զի յափշտակեսցէ ըզ-
„ պերսեփոնայ զդուստր դեմետրի․ զոր պղատոն
„ յափշտակեալ տարաւ 'ի դժոխս․ և կա-
„ պեալ եղև պերինթոս 'ի պղատոնէ առ վէմս
„ ամանս։ Արդ՝ իջեալ հերակլէս՝ զի ապցէ ըզ-
„ պերինթոս, զնա առ ինքն ձգեաց․ այլ յա-
„ տակք նորա առ քարինն մնացին․ և կոչեցաւ
„ պերինթոս անյատակ"։

Օ այս յառաջ բերէ կիկերոն 'ի Գ․ գիրս պաշտ․ (310)
Յանց․ գլ․ 10․ այսպիսի բանիւք․ "Պատմէն վասն
„ դամոնեայ և պիւթիայ (կամ փինտիայ) պիւ-
„ Թագորեանց՝ այնպիսի ունել մտերմութի առ
„ միմեանս, զի յորժամ զմին 'ի սոցանէ 'ի մահ
„ դատապարտեաց բռնաւորն դիոնեսիոս 'ի սահ-
„ մանեալ ինչ աւուր․ և այն՝ որ դատակնքեալն
„ էր 'ի մահ, խնդրեաց աւուրս քանի մի՝ երթալ
„ հրաման տալ վն տան իւրոյ, միւսն եկաց ե-
„ րաշխաւոր փոխան ընկերին վն դարձի նորա,
„ յանձն առեալ զմեռանիլ՝ թէ ոչ դարձցի նա։
„ Եւ եղև՝ իբրև դարձ արար նա յաւուր ժամա-
„ դրութեն, զարմացեալ բռնաւորին ընդ հաւա-
„ տարմութի նոցին, խնդրեաց՝ զի և զինքն եր-
„ րորդ գրեսցեն 'ի բարեկամութե իւրեանց"։

Ր․ բացատրութի իմաստիցն եդաք, "սա միայն (311)
„ մնաց միահեծան"․ ուր խաղական բառքն հըն-
չէն․ "սա միայն մնաց արև"․ և զայս ձև սաց-

ուա-

ուածոց վարէ Թեսաւրոս վԹ նմանաձայնութեան բառիցս ὅρος, ὄρος. և ὀρὸς, ὀῤῥός. որք և այլուր նշանակեալ եղև 'ի մէնջ։ Սոյնպիսի նմանաձայնութք 'ի յաջորդ գլուխն՝ ἐλλείποντι և ὑπολείποντι բարեկամութե կոչէ զբարերարութիս. ուր մեք ճշգիւ Թարգմանեսցուք φιλίαν և εὔνοιαν։

(312) Պերիանդրոս՝ մին յեօԹն իմաստասիրաց, էր որքայ կորնԹացւոց՝ որդի կիպսելեայ։ Սա Թէ պէտև զանուն էառ իմաստասիրի վասն ճարտարութե մտաց իւրոց, և գիտնաւոր գրուածոյն՝ զորս յօրինեաց յաղագս վարուց մարդկան. այլ անձամբ էր մոլի՝ տառապեալ բռնանալ յախտ ցանկութե, և կատաղի բարկութե։ Իւր էր առածն գովելի. τὸ πᾶν ἐπιμέλεια. և ինքն էր անսանձ բռնաւոր, անագորոյն և խիստ առ հպատակս. այնչափ առեալ իւրոյն, մինչ զի յելանելն 'ի տանէ՝ կապկածէր ատենց բազմութե զինուորաց երեւիլ առաջի ամբոխին, և ակն ածէր նաև յերեսաց տկարաց և վատաբարաց։ Յայս հմ հայեցեալ՝ համարեցան ոմանք, Թէ իմաստասէրն պերիանդրոս այլ ոք իցէ՝ որիշ 'ի բռնաւորէս կորնԹացւոց։ Բայց այլք պնդեն նոյն լինել՝ բերելով օրինակ զսողոմն, որ իմաստնագոյնն էր քան զամենայն իմաստունս, այլ խոտորեցաւ ընդ կնի ցանկութե. ևն։ Եւ յայտ իսկ է՝ Թէ իմաստութի մտաց ոչ ինչ օգտէ այնմ՝ որ ոչն դնէ 'ի գործ զիմաստութի իւր. և ոչ վարի բարոյական իմաստասիրութք. զի կարգելով զգիտութիւն 'ի գործադրութի ուղիղ վարուց։

(313) Ամիանտ. բառ յն. ἀμίαντος. է տեսակ ինչ քարի, որոյ մասունքն զատուցեալ գզզին իբրև ասր կամ բամբակ. մինչև մարթ է նիւԹել կամ մանել. և գործել իբրև զկտաւ։ Եւ զի բնիկ նիւԹն է քարեղէն. ոչ այրի 'ի հրոյ իբրև զպաստառս վիլ. այլ մնւնդ՝ եԹէ աղտեղեալ իցէ՝ հրով մաքրի. և Թէպէտ 'ի մէջ հրոյ լինի հրաշէկ. և վառի 'ի բոցոյ. այլ ոչ ծախի. զի 'ի շիջանիլ բոցոյն՝ անդրէն 'ի նախկին իւր որակութե դառնայ պայծառ քան զառաջինն։

Պիւ-

Պիղատոս կամ պիլատոս էր որդի՝ ատրոփեայ(314) արքային փոկէացւոյ, ազգակից ովրեստեայ որդւոյ ագամեմնոնի արքային միկենայ։ Էւ էին սոքա երկոքին՝ ը̅ ովրեստէս և պիւղադէս սերտ սիրով զօդեալք ը̅ միմեանս, և գործակիցք իրերաց յամի. և եղև 'ի գնալ ովրեստեայ յափշտակել զարձանն արտեմեայ՝ որ 'ի տաւրիս սկիւթացւոց, զորմէ յիշեցաք 'ի համարն (231). ընդ նմա էր և պիւղադէս. և երկոքին 'ի միասին ըմբռնեցան և մատնեցան 'ի շղթայս՝ լինել զոհ արտեմեայ։ Յայնժամ քրմուհին իփիգինէ կամեցաւ ազատել զմին, զի շատ է ասէ 'ի լնուլ զօրէնս տեղւոյս՝ զոհել զմին և եթ յօտարաց առի. և ընտրեաց պահել զպիւղադէս 'ի սպանդ զոհից։ Զայն իբրև գիտաց ովրեստէս՝ ասէր, թէ ինձ յաւէտ պարտ է մեռանիլ. և ը̅ հեռէն պիւղադէս ջանայր՝ զի ինքն սպանցի, և բարեկամն իւր սիրելի կացցէ մնասցէ կենդանի։ Էւ յետ բազում հակառակելոյ ընդ միմեանս վը̅ սիրոյ՝ ածան առաջի թոասայ բռնաւորի, որ թագաւորն էր տեղւոյն. և նա հրամայեաց, զի ովրեստէսն այն՝ որոյ եկեալ իցէ 'ի յափշտակել զարտեմիս, զոհ լիցի. իսկ միւսն իբրև ուղեկից նորին գտեալ՝ ազատ լիցի։ Յայնժամ յառաջ մատեաւ պիւղադէս, և հաստատեաց երդմամբ՝ թէ ես ինքն եմ ովրեստէս մահու պարտական։ Իսկ ովրեստէս երդնոյր թէ ես ինքն եմ ճշմարիտն ովրեստէս. ապա թէ դա իցէ (ասէ) ովրեստէս, ես պիւղադէսն եմ մահապարտ։ Զարմացեալ բռնաւորին՝ և ոչ գտեալ զելս իրացն. եհան զնո յառենէ իւրմէ. և մինչդեռ խորհէր՝ թէ զինչ արասցէ վը̅ արանցն, ծանեաւ քրմուհին իփիգինէ 'ի նշանաց՝ թէ ովրեստէս եղբայր իւր է. և զերծոյց զնա և զբարեկամ նր̅. և 'ի ձեռն նր̅ սպանեալ զթոասայ՝ խոյս ետ նոքօք հանդերձ յերկրէ անտի 'ի հայրենիս իւր յարկադիս։ Իսկ նոննոս այսպէս համառօտէ զբանն՝ ասելով. „Ովրեստէս այս որդի էր ագամեմնոնի. այլ սիրելութիւն այնչափ ունէր առ պիլադէս, և

պի.

[illegible]

(Ձ15) [illegible]

[illegible]

(Ձ16) [illegible]

(Ձ17) [illegible] և հա հարուածել զանձն, և

այն-

այնպէս արիւնաշաղախ մարմնով գնաց առ քաղա-
քակիցս իւր առ բաբելացիսն՝ իբրև փախստական
յերեսաց դարեհի. որպէս թէ յարքայէ լեալ իցէ
նմա այն հարուածք՝ վասն յորդորելոյ իւրոյ զնա
մեկնել 'ի պաշարմանէ բաբելոնի: Եւ զի մեծ էր
անուն զովպիւրոսի, հաւատացին բանից նորա քա-
ղաքացիք, և ընկալան յիւրեանս. մինչև յետ սա-
կաւուց առաջնորդ պտրզմի եւս եղև զովպիւրոս,
և մատնեաց զբաբելոն 'ի ձեռս դարեհի: Եւ-
ահա վասն այսպիսի մտերիմ սիրոյ նորա այնչափ սի-
րեր զնա դարեհ արքայ. մինչև յառնուլ երբեմն
'ի ձեռս զնուռն մի՝ ասաց. ցանկայի արդեօք՝ զի
որչափ հատք են 'ի նուռնս, նոյնչափ ոգի և մար-
մին լինէր զովպիւրոսիդ իմում. ցաւ է ինձ ա-
սէր վասն ծայրատուէ անդամոցն՝ զոր յանձն էառ
նա կամակար 'ի սէր իմ. զի առաւել արժէ յաչս
իմ զովպիւրոս մի ողջանդամ քան զքսան բաբե-
լոն: Այլ զնախատացեալ գործ զովպիւրայ, զոր
գրեն յուստինոս՝ Ի Ա. ԳԻՐ. ԳԼ. 10. և հերոդո-
տոս Ի Գ. ԳԻՐ. Ի ՀԱՏՈՒԱԾ. 97. 'ի մէջ բերէ և
նոննոս. ուր չգիտեմ զիարդ 'ի հայերէն թարգ-
մանութեան փոխ դարեհի հասարակօրէն կիւրոս
գրի. հաճոյ թուի օրինակել աստէն զգրեալն.
„ Քանզի բազում ժմկս մարտնչելով կիւրոսի ընդ
„ բաբելոնի, և դժուարամարտ գոլով նորա և ան-
„ առիկ, յոյժ տրտմեալ լինէր. ապա այր ոմն
„ զովպիւրոս անուանեալ՝ արիագոյն անձամբ,
„ որ եցոյց իրն՝ որ առ 'ի նմանէ գործեցաւ, և
„ առ կիւրոսիւ ոչ վաստափառ լեալ. հնարի այս-
„ պիսի ինչ. հատեալ զունչս իւր և զականջս,
„ և խարազանօք յոյժ հարեալ զանձն իւր, գնայ
„ առ բաբելացիսն ինքնակամ կամօք՝ որպէս չարիս
„ բազումս կրեալ առ 'ի կիւրոսէ. և 'ի գնալն՝
„ բարեմտութիւն ցուցանէ բաբելացոցն, և 'ի խնդ-
„ մտանէ ընդ նս զընդդէմն կիւրոսի. և պարգա-
„ բար՝ հաւատարմանոյ բաբելացոցն՝ զմիտս նոցա
„ յանդուցեալ յինքն. և զօրավար եղեալ բաբե-
„ լացոցն՝ սպանանէ զբազումս 'ի զօրացն դարե-
„ հի. ([illegible]). այլև

„ ժա-

» ժամադիր եղեալ նորա և սահմանեալ օր տա-
» կիւրոս, յորում պարտ իցէ գալ 'ի դուռն բա-
» բելոնի. և յայնմ աւուր հաւանեցուցանէ զբա-
» բելացին, և առնու զբանալիս դրացն, պատ-
» ճառելով զայս ինչ, մի գուցէ ձանձրացեալ 'ի
» կռուոյն կամ զարհուրեալ յերկիւղէն անձն-
» տուր լինիցին. և այսպէս խաբելով, և ապա
» բացեալ մուծանէ զպարսիկսն. և այսպէս ա-
» ռեալ բաբելոն: Զայսոսիկ հերոդոտոս տայ
» յերկրորդում պատմութեան ||: Այլ որոյ տա-
ցոյց՝ այս բան գրի 'ի հերոդոտեայ յերրորդում
պատմութե. և այն՝ միշտ դարեհ անուամբ, դէթ
յայժմու օրինակս. նոյնպէս դարեհ գրի միշտ և 'ի
լատին թարգմանութեան բանից նորին:

(318) Հեթանոսք ստէպ զայս ձև երդման վարէին.
* երդուեալ 'ի գլուխ ||, կամ * օն և էն արարցէ
» ինձ արարածդ ||: Այլ թէ որ կուռք կամ բա-
գին գլխոյ իցէ աւետարանեան ասացեալն, ոչ գի-
տեմք: Աւենտինոս կամ աւենտին էր անուն
միոյ յեօթն բլրոց հռովմայ՝ առեալ զանուն յա-
ւենտինեայ յորդւոյ հերակլեայ, զոր ծնաւ նա
ասեն 'ի ռէայ քրմուհւոյ 'ի գալ իւրում յիտա-
լիա: 'Ի անդուոջ անդ գոյր նախ մեհեան արտե-
մեայ. ուր այժմ է եկեղեցի սրբոյն սաբինայ. վն
և բլուրն այն կոչի լեառն սրբոյն սաբինայ: Այլ
հանդիսական տեղի երդմանց և ուխտադրութեանց
առ հռովմայեցիս՝ էր բագինն գլխոյ ամենապա-
րի և ամենամեծ կոչեցելոյ 'ի կապիտոլիոն, ըստ
կիկերոնի 'ի Բ. գիրս. յղ. պաշտամանց. գլ. 29.
և այլն:

(319) Յովսեպոս 'ի ԺԲ. գիրս Հնախօսութ. գլ. 8. պատմէ
երկար, թէ զիարդ 'ի սաստկանալ թշնամութեան
և ատելութեան ընդ հերովդէս և Ը. աղեքսանդրոս
որդի նր. կասկած առեալ հերովդի՝ թէ ոմանք 'ի
բարեկամաց իւրոց կուսակից են աղեքսանդրի, 'ի
բաց մերժեաց զնս 'ի պալատանէ իւրմէ: 'Ի մէջ
սոցա էին և անդրոմաքոս և գեմեղոս որք ան-
ուանիք և պիտանիք 'ի գործ արքունեաց և իբր
առաջին խորհրդականք. * Զանդրոմաքոս (ասէ)
» մեր-

„ մերժեաց, զի որդի նորա դեմետրիոս սերտ ըն-
„ տանութիւն ունէր ընդ աղեքսանդրի. և զդեմա-
„ դոս, զի տեսանէր զնա բարեսէր լինել առ ա-
„ ղեքսանդրոս. քանզի և 'ի մանկութենէ հետէ 'ի
„ մարդս գրաւորութեն դատախարակեալ էր զնա,
„ և 'ի գեղեցիկ նորա 'ի հասակ՝ Է նման էր կա-
„ ցեալ"։

Օրան բնաւոյ՝ ամանք ընծայեն քիղոնի, որ և (320)
նա մի էր յեօթն իմաստասիրաց. և այլք յանուն
այլեւայլ նախնի փիլիսոփայից և բանաստեղծից 'ի
մէջ բերեն։ Այլ թեատրոս զշեա երթայ բա-
նից կիկերոնի տուզղիսուն, որ 'ի ճառն յաղագս բա-
րեկամութեան. գլ. 16. գրէ այսպէս. "Նախ զայն
„ յուշ արարից, զոր մեծապէս կշտամբել սովոր
„ էր շիպիոն։ Ոչ մարթ ասէր գտանել զայլ
„ ասացուած այնչափ թշնամի բարեկամութեան,
„ քան զնորայն որ ասաց, թէ այնպէս պարտ
„ է սիրել՝ որպէս թէ ատել ունիս երբեմն։ Իւ-
„ անձնայր է ինձ ասէր հաւատալ երբէք, թէ
„ այս ասացուած ոմն ասի՝ իցէ ասած բիասայ,
„ որ մի համարի յեօթանց իմաստնոց. այլ՝ է
„ զրոյց խաւանակեցիկ առն. կամ բարձրամտի,
„ և կամ նր՝ որ զամ ինչ բառ իւր կարի յարմա-
„ րէ։ Քանզի զիարդ մարթի որ բարեկամ լինել
„ այնմ, որում թշնամի լինել երբէք կասկածէ...
„ ամին իրի՝ այդ պատուէր, որոյ և իցէ. 'ի բար-
„ ձումն բարեկամութեան գխաէ առաջնորդել։
„ Այսպէն զայն յուէա պարտ էր պատուիրել.
„ թէ զայնպիսի զգուշութիւն պէտք են մեզ ու-
„ նել 'ի ստանալ զբարեկամութիւնս, զի մի եր-
„ բէք սկսցուք սիրել՝ զոր երբեմն ունիմք ա-
„ տել"։

Զայս գործ հերակլի և ոգեմնոսյ յիշեցաք կան- (321)
խաւ 'ի համարն (166)։

Կատիլինա, որ և լուկիոս կատիլինա, էր պատ- (322)
րիկ հռովմայ, այր սրտեայ և յաջողամիտ, այլ
չաալ և անառակ. որ յետ ապառելոյ զամ ինչս
իւր՝ խորհուրդ չար յանդգնութեան եռ 'ի մտի՝
վրդովել զհայրենիս իւր, ցրել զծերակոյտն, և
ու-

տիրել բովանդակ հարստութեան և տէրութեան հռով-
մայ։ Մխարանեաց է իւր արս սրիկայս և արիւ-
նահեղս. և արարեալ նոցա կոչունս խրախութեան
էառ 'ի նչէ երդումն միաբանութեան. և առ հաս-
տատութիւն երդմանն՝ ետ նչ ըմպել զարիւն մար-
դոյ, կամ խառնեաց 'ի բաժակս գինւոյ զշիթս
ինչ արեանց իւրաքանչիւր բազմականաց, և այն-
պէս արբոյց միոյ միոյ 'ի նչէ։ Եւ արդարև 'ի
գլուխ տանէր զխորհուրդ իւր այրն անագորոյն
'ի կործանումն հռովմայեցւոց. եթէ չէր 'ի յայտ
եկեալ գաղտնահնար դաւ նորա՝ 'ի ձեռն զգաստ
և աչալուրջ կառավարութեան մեծին կիկերոնի,
որ 'ի Ժամին յայնմիկ ունէր զպատիւ հիւպատո-
սութեան, զի սա խրոխտ լեալ չարութեան կատիլ-
նայ 'ի ձեռն միոյ ուրուք 'ի միաբանելոցն ընդ նմա,
կշտամբեաց զնա յատենի ծերակուտին աքանչելի
ատենախօսութեամբ իւրով. և ետ աքսորել 'ի հե-
ռաւոր վայրս. այլ նա հնարիւք զերծեալ անտի՝
Ժողովեաց անդրէն զառաջին համախոհս իւր և
զայլ ևս զօրս, և խաղաց 'ի վերայ հռովմայ. և 'ի
լինել սաստիկ պատերազմի՝ Թէպէտ և եցոյց զզօրութիւն
բազկի իւրոյ, այլ հուսկ յետոյ ակարացեալ ան-
կաւ և կորեաւ հանդերձ գործակցօք իւրովք։

(323) Պլինիոս 'ի Ժ. Գիր. Գլ. 37. 'ի խօսելն զաղաւ-
նեաց՝ ասէ, թէ պատգամաբեր գտան երբեմն
յերս մեծամեծս. որպէս յորժամ բրուտոս հիւպա-
տոս կապեալ գիր յոտս աղաւնւոյ 'ի պաշարման
մուտինայ՝ առաքեաց 'ի բանակն։ Իսկ փրոնտի-
նոս վասն հիրտիոսի գրէ, թէ յղեալ իցէ գիր այն-
պիսի առ բրուտոս։ Երկաքանչիւրն է ճշմարիտ՝
որպէս ասեն ոմանք, զի նոյնօրինակ թղթակցութիւն
արարին ընդ միմեանս։ Եւ յայս միտ խօսի Թե-
սաւրոս։

(324) Քանզի աղաւնի առ լատինս Գօլօմպա կամ
Գօլօմպ ասի, ստուգաբանութիւն անուանն՝ աղաւ-
նոյ նմանեցուցանէ հեղինակս զԳոլումպոս լի-
կուրացի, այն է քրիստափոր կողոմբոս գենուա-
ցի 'ի գաւառէն լիգուրիոյ, գտիչն ամերիկոյ յամի
տն 1492. այլ անուն այնր նորագիւտ երկրի
է.

եղաւ ըստ անուան ամերիկոսի վեսպուկիոսի քաջ աշխարհագիր առն փլորենտացւոյ, յամի տն 1497։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ 'Ի ՎԵՐՋԻՆ ԳԻՐՍ ԻՆՆԵՐՈՐԴ։

Կապիտոլիոն՝ որ սակս յիշատակի յընթացս(325) մատենիս, էր հոյակապ տաճար դիոսի 'ի հռովմ՝ երևելի 'ի պաշտամունս հռովմայեցւոց։ Անդ էր տեղի խորհրդոց. և անդ լինէին հանդիսական ուխտագրութիւնք վասն մեծամեծ իրաց. և անդ լինէին երդումն հաւատարմութեան ինքնակալաց և զօրավարաց. և որք միանգամ յաղթող գտեալ 'ի մարտի՝ գտանէին 'ի հռովմ, նստեալ 'ի կառս երթային մեծահանդէս փառօք 'ի տաճար անդր՝ առնուլ զպատիւ յաղթանակի. և յայս հայի առաջիկայ բան թեսաւրոսի։

Ատլաս կամ ատղաս, ըստ յն. ἄτλας, ասի լինել(326) արքայ մաւրիտանիոյ՝ կոչեցեալ որդի ուռանոսի (ըն երկնից), քաջ աստեղագէտ և իբր գտող արուեստի աստղաբաշխութեան. յորմէ եւ առասպելն՝ թէ նա բարձեալ ունէր 'ի վր ուսոց իւրոց զբովանդակ գունտ երկնից։ Իսկ կամ ըստ այլոց՝ այս առասպել յառաջ եկն յայլ առասպելաց. յորս ասի, թէ ատղաս փոխեցաւ 'ի լեառն մի մեծ, որոյ գագաթն հասանէր մինչև յերկինս. փոխ ասելոյ՝ թէ 'ի յարուցանել պերսէոսի պտրզմ ընդդէմ ատղասայ, նա խոյս ետ 'ի բարձր լերինս՝ որոց գլուխք ոչ երևէին վա ծածկեալ լինելոյ յամպոց, և այնպէս աներևութացաւ յաչաց թշնամւոյն։ Յանուն նր կոչեցաւ ասեն ատլաս լեառն 'ի մաւրիտանիա, և յայնմանէ անուն եառ ծովն ատլասեան կամ ատլանտեան։ Կայ և այլ ատլաս լեառն 'ի լիբիա՝ նոյնպէս բարձր, և գագաթն նորա միշտ ձիւնապատ գտանի. զոր բանաստեղծք կոչեցին սիւն երկնից։ Յիշատակէ զայսոսիկ ըստ մասին եւսեբիոս 'ի կանոնն քրոնիկոն՝ յաւուրս ծառայութեանն իսրայէլի յեգիպտոս. յասելն.
• Ատղաս պրոմեթեայ եղբայր՝ աստեղագէտ ճար-
„ տար երևէր. և վասն իմաստութեանն զեր-

կինս

„ կենս կրել համբաւէր։ Իսկ եւրիպիդէս լեառն
„ 'ի վերոյ քան զամպս ասէր լինել զատղա-
„ սայ ||։

(327) Վասն ոդիսեանց, որք 'ի ճաշակելն զլոտոս քաղցրահամ' ոչ եւս կամէին դառնալ 'ի հայրենիս, տես 'ի վերոյ 'ի համարն (39)։

(328) Վասն պրոկրուստեայ անողորմ աւազակի տեսցես 'ի համարն (290). որպ̄ եւ յաղագս փաղարիսի բռնաւորի 'ի (3)։ Իսկ դիոնեսիոս' որ անկեալ յիշխանութենէ, աքսորեցաւ 'ի կորնթոս, եւ անդ մանկավարժութբ̄ լնոյր զիւր պէտս, է դիոնեսիոս կրտսեր' որդի առաջնոյն. զորմէ տես 'ի համարն (6)։

(329) Ոպ̄ այլուր' նոյնպէս եւ աստանօր ցուցակցի թե-աւրոս Ը դժբախտութեն փիլիսոփային իւրոյ ք արիստոտելի, զի ծնաւ 'ի գալս հեթանոսութեն իբր 350. ամօք յառաջ քան զքն̄, եւ անմահն զբ-տաւ 'ի լուսոյ ճշմարիտ ածպաշտուե եւ քրիստոնէական հաւատոց։ Նա կամի ասել հեղինակս, թէ թէպէտեւ զարմանալիս եւ գեղեցիկս բարբառեցաւ նորախօսն արիստոտել բնական լուսով զբարոյական առաքինութեանց եւ զբնական երջանկութենէ, այլ զկնովին անգէտ գտաւ ածային առաքինութեանց եւ աւետարանական երանութեն. օպ̄ եւ ած̄ փիլիսոփայիցն գոյք. քանզի տեսութեն նղ̄ ցայնվայր եւեթ եհաս, ցորչափ ձկտէր բիբ աչաց հոգւոյն' միջնորդութեամբ բնատուր լուսոյ, որ զկայ առնու 'ի ներքոյ երկնից. իսկ լուսաւորեալքն յայն լուսով հաւատոյ ձկտեցուցանեն զաչս մտաց 'ի վերոյ քան զերկինս առ գերբնական երանութեն. զի առ ած բերին զկնովին. եւ երջանկութեն անեզրական գիտեն զժառանգութեն ածոյ։ Նա ահա այսպիսիք ոմանք եղեն առաւելապէս նր̄ հարք եւ վրդ̄պք եկեղեցւոյ, որք անհամեմատ առաւելութբ̄ գերազանց գտան 'ի ճշմարիտ իմաստութե քան զարտաքին իմաստասէրս համօրէն։ Ցայսպիսի մտածութեն յորդորեն զբարեսէր ընթերցողս ընթացք բանից հեղինակիս 'ի վերջին յայս գլուխ մատենիս։

ՕՐՕԳՐ ԱՍՀՄԱՆԱՓԱԿ՝ բացատրէ հեղինակս ըստ (330)
նմանութեան որոշման սահմանաց 'ի մէջ այլ և այլ
տէրութեանց կամ կողմանց. կոչելով ԼԻՆԷ ԲԱՐՏԱԺԷ-
ԴԷՅ ԱՆԳԼ ԹԱՆ ՂԱՅՆ, կամ ԽԻՆԻԱ ՅԷՆԲ ԱՍՀՄԱՆԱՓՈՒԷ.
որպէս գեղեցիկ նկարագրէ խորենացին՝ յասելն
զնոյն մերոյն արտաշիսի 'ի Բ. Գիրս. Գլ. 53. * Եւ նը-
" շանս սահմանաց հաստատեաց այսպէս. հրա-
" ման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և
" ընդկամն փոսել զմէջն ծածկելով յերկրի,
" և չորեքկուսիս 'ի վերայ յարուցանել ամբար-
" տակս՝ սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ ։ Արդ՝
այսպիսօրէն նմանութիւն առէ թեասուրս սահման
եգեալ յարխատաւէ, թէ ցոր վայր հասանէ եր-
ջանկութիւն խմաստասիրական ։

Ուր մեք եդաք ՃՕՐՕԳՐԱՖԻ, թեասուրս վարի յու-(331)
նական ձայնիւս ՏՕՊՕԳՐԱՖԻ, որ է տեղագրութիւն.
զորմէ յիշեցաք 'ի համարն (129) ։ Որով կամի ա-
սել, թէ անմիտ գտան կայսերք հռովմայ, որք
'ի զուր հնարեցան ջանալ 'ի ժողովրդենէ զայն
պատիւ տեականն՝ աբօթեօսիս առացեալ. զի աստու-
թիւ և կեղծիք էր բաղձանք և փառք նոցա ։ Իսկ
մեզ հաւատացելոցս կայ (առէ) գիւրին և օրի-
նաւոր Աստուծոյ տեականալ՝ փոխակերպելով սիրով
յԱծ, և հաղորդակից լինելով Աստուածութեան առ 'ի
ձեռն շնորհաց՝ և 'ի հանդերձեալն 'ի ձեռն լուսոյ
փառաց ։

Ընդէ ԲԱՐԱՆՋԱՆ է արձան՝ զոր կանգնեն 'ի (332)
գլուխս ճանապարհաց բաժանելոց 'ի չորս առաջս
կամ 'ի քառեակ պողոտայս. որ մատամբ ցուցա-
նէ անցաւորաց ղարքունական ճանապարհս ։
Զայսպիսի արձանս և զայլ ևս կոթողս ճանապարհաց
և կամրջաց, որպէս և զիարկառս քարանց առ ճա-
նապարհօք. յոյնք կոչէին Հերմա՝ յանուն հերմեսի
չաստուծոյն, որպէս և լատինք Մերկուրիոս. զի որոյ և թեասու-
րս գնէ յիտալականն՝ Մերկուրիոս ԲԱՐԱՆՋԱՆ ։ Իսկ
արդարև գեղեցիկ օրինակէ զարձան այսպիսի՝
հեթանոս փիլիսոփայից, որք մատամբ իմն նշա-
նակեցին և իբր նշանացի ցուցին այլոց զԱստուծոյ ի-
մաստասիրութիւն, այլ ինքեանք իբր կոթողս ան-
շունչս՝

շունչս անշարժ մնայեն, և ոչ գնայեն ըստ ձգն ի-
մաստութեան, 'ի դէպ եկեալ առաքելական բանին.
* Ծանեան զԱծ, և ոչ իբրև զԱծ փառաւորե-
,, ցին կամ գոհացան. այլ նանրացան 'ի խոր-
,, հուրդս իւրեանց ||, և որ 'ի կարգին. հռովմ.
Ա. 12:

(333) Երջանկութեն հեղինակիս զնոյն յայտ առնէ՝ զոր մեք 'ի յառաջաբանութեն անդ կանխաւ ասացաք. զի թէ զայս գիրս նուիրեաց նա ինքն թեաւորս արքայազն որդւոյ իշխանին սարաւգիոյ 'ի դաստիարակութեն առաքինական վարուց՝ ըստ արժանի իւրում աստիճանի: Այլ արդ՝ որպէս նա զիւր երկս այլում վերընծայէ, նոյնպէս և մեք զդուզնաքեայ մերս երկասիրութն 'ի թարգմանութեն և 'ի ծանօթաբանութեն՝ յօժարամիտ սըրտիւ ընծայեմք մերազնեայ ընթերցասիրաց՝ առաքինասէր իմաստասիրաց՝ 'ի վայելս օգեշահս, 'ի փառս փրկչին բոլորեցունց՝ և 'ի պատիւ օրհնաբանեալ տիրամօրն:

## ՎԱԽՃԱՆ

Ծանօթութեանց:



ՑԱՆԿ

# ՑԱՆԿ

*Գլխաւոր նիւթոց, և Յատուկ անուանց, յիշատակելոց 'ի բանս Հեղինակին և 'ի ծանօթութիւնս Թարգմանչին, կարգեալ ըստ թղթահամարոյ։*


Ագաթոկղէս [illegible]. 262. 534։ 716։
Ագահութիւն. 130։
Ա[illegible]. 42. 103. 163. 197։ 637։
Ագաթոկղէս. 34։ 629։
Ագեսիլայոս. 234. 532. 594։
Ա[illegible]. 10. 11. 12։ 613։
Ագրիպպաս Մարկոս. 93. 148. 151. 155. 172. 179։ 690. 695։ այլ. 267. 474. 476։
Ագրիպպաս Մենենիոս. 381։ 745։
Ա[illegible]. 246. 575։ 710։
Ա[illegible]. 172. 318. 329։ 731։
Ա[illegible]. 142. 153։
Ա[illegible]. 13։
Աթենաս. 74. 128. 195. 281. 415. 424. 455։ 627. 648։ [illegible]. 15. 187։ տե՛ս և Պ[illegible]։
Ա[illegible]. 210։
Ա[illegible]. 392։ 748։
Ա[illegible]. 22։ 621։
Ա[illegible]. 22։ 621։
Ա[illegible]. 321։
Աքիլ[illegible]. 542։
Աղեքսանդրոս Մակեդոն. 13. 44. 59. 81. 117. 125. 140. 149. 163. 180. 199. 219. 223. 224. 404. 497. 551. 591։ 639. 657։
Աղեքսանդրոս [illegible]. 121. 123. 278. 354։ տե՛ս և Պ[illegible]։
Ա[illegible]. 187։
Ա[illegible]. 575։ 710։
Ա[illegible]. [illegible]. 20. 60. 78. 329։ 620. 643. 736։
Ա[illegible]. 551։ 780։
Ա[illegible]. 375։
Ա[illegible]. 76։ 649։
Ա[illegible]. 302։
Ա[illegible]. 301։
Ա[illegible]. 169. 326. 555։ 694։
Ա[illegible]. 165։
Ա[illegible]. տե՛ս Ա[illegible]։
Ա[illegible]. 314։

Անարդարութիւն. 390:
Անաքսագորաս. 230. 402:
Անաքսիմանդր. 32. 626:
Անբարեխառնութիւն. 109:
Անգերոնա. 3: 607:
Անզգայութիւն. 204:
Անժուժկալութիւն. 521:
Անիշխանութիւն. 485.
Անգլիական իրաւանց. 381:
Անգլիական խոհեմութիւն. 463:
Աննիբաղ. 134. 181. 251: 759. 760:
Անտէոս. 329: 737:
Անտիգոնոս. 125:
Անտիսթենէս. 272:
Անտոնիոս. 510. 546: այլ. 71:
Ապելլէս. 11. 124. 155. 345. 415. 427: 614. 680:
Ապողոն. 152. 288. 326: 711. 734:
Ապողոնիոս Տիանացի. 302. 418: 753.
Ապուլէան [illegible]. 196: 696:
Ապպիոն. 266:
Ապպիոս Կղօդիոս. 143. 151. 154:
Առաւելութիւն. 113:
Առաքինութիւն բարոյական. 13. 55: իմացական. 396:
Ասկանիոս. 79: 653:
Ասկղեպիադէս. 20: 619:
Ասկղեպիոս. 264: 676. 718:
Աստիդամաս. 509:
Աստրէա. 341: 740:
Աստրաբաղ. 512:
Ատլաս. 584. 597: 787:
Ատրաբոս. 557: 782:
Ատտաղոս. 21: 620:
Ատտիկէ. 33: 628:
Ատտիկոս. 267. 351: տե՛ս և Պոմպոնիոս:
Ատրէոս կամ Ատրեւս. 512. 523: 771. 772:
Արամազդ. 45. 415. տե՛ս Դիոս:
Արգոս. 190. 275. 453: 695:
Արդարութիւն. 335:
Արդուէնա. 401: 750:
Արեոպագոս. 37: 631:
Արիմանեայք. 131: 685:
Արիութիւն. 73:
Արիստարքոս. 227: 706:
Արիստէաս. 403: 751:
Արիստիդէս. 21: 620: այլ. 387:
Արիստիպպոս. 559:
Արիստոբուղոս. 219:
Արիստոփան. 92. 93:
Արիստոն. 223.
Արիստոտէլ. 6. 22. 127. 591. 598: 610. 788:
Արկեսիղայոս. 124: 680:
Արուէտ. 424: 759.
Արքեղաոս. 42. 280. 449. 637. 711. 741. 768: [illegible]. 139. 152. 157: 762:
Արքեղ[illegible]. 139. 152. 154. 158: 619:
Արքիլոքոս. 92. 531: 737:
Արքիմէդէս. 431. 506: 757:

Աւրելիանոս. 21. 210. 431: 757:
Աւտոլիկոս. 523: 772:
Ափրիկիանոս. տես Շի-պիոն:
Ափրոդիտէ. 280. 281. 500: 767: այլ և նա-րա. 15:
Աքայաք. 220:
Աքիլլէս. 30: 624:

Բակուրակ. 136. 557:
Բայեան Խաղանիք. 12: 615:
Բարեխառնութիւն. 94:
Բարեկամութիւն. 537. 776:
Բարիք դեղեր. 2:
Բարկութիւն. 193:
Բաքոս. 719:
Բելլերոփոն. 35: 629:
Բելիսարիոս. 320: 732:
Բիաս. 274. 340. 460: 785:
Բնական իրաւունք. 365:
Բռնաւոր փղն. 332: 738:
Բուսիրիս. 329. 512: 736:
Բրաքմանեայք. 101: 669:
Բրիսէյա. 197: 697:
Բրուտոս. 313. 577: 638. 786:

Գազանաբարոյք. 532:
Գալիլէոս. 414: 752:
Գաղակտիկա. 418: 753:
Գաղիա. 188. 355. 572:
Գաղենոս. 469:
Գաղիենոս. 185:
Գաղղիա. 265:
Գեղեցկութիւն. 297:
Գեղէզոս. 571: 784:
Գերարդարութիւն. 343:
Գերազանցութիւն. 485:
Գերիոնէ. 329: 737:
Գերմանիկոս 384:
Գթութիւն. 211:
Գիտութիւն: 404:
Գիագէս. 613:
Գղաւդիոս. 385. 558. 560: 782:
Գոնովազնոս. 268: 718:
Գոհութիւն. 18:
Գորգոնեայք. 218: 341: 703:
Գրակկոս. 267:
Գրանիկոս. 201:

Դամոկլէս. 611:
Դամոն. 541. 557: 779:
Դարեհ. 106. 563. 566: 782:
Դաւիթ. 268. 386:
Դեդալոս. 62. 63. 192. 431. 438: 644:
Դեմադէս. 258: 714:
Դեմետր աճ. 154. 328. 511: տես և Փաղե-րէոս:
Դեմետրէ. 269: 719:
Դեմոկրիտոս. 300. 306: 324. 524. 586. 587: 727:
Դեմոսթենէս. 714:
Դենտատոս. տես Կուրիոս:
Դէանիրա. 546: 660:
Դեիփոնտոս. 46: 640:
Դիդէ. 107. 213: 670. 701:

Դի.

Դիդիմոս. 256. 417. 713.
Դինդիմոս լեառն. 528. 774.
Դիոգինէս Կիւնիկեան. 7. 256. 238. 304. 409. 586. 587. 610.
Դիոկղէս. 246. 251. 385. 710. 713.
Դիոնեսիոս Սիրակ՟. 8. 25. 236. 504. 609. 611. որդի նորա. 592. 621. 786.
Դիոս. 76. 82. 128. 335. 455. 591. 682. 690. 705. տե՛ս և 133. 140. 145. 152. 569. 784.
Դիդէնոս. 32. 626.
Դիոսկուրք. և Դիոսկուրեան աստուածոց. 529. 774.
Դոմետիանոս. 51. 145. 511. 769.
Դրակոն. 25. 342. 343. 623.

Եգիթոս. 322. 733.
Եղեկինոս. 201. 698.
Եղենոս. 310.
Եղինէ. տե՛ս Հեղինէ.
Եղերերգութի. 639.
Եղիազարոս. 278. 721. տե՛ս և 510.
Եղջերասառաղ. 35.
Եմիլոս. 154. 174.
Եմպեդոկլէս. 124. 264. 489. 556. 717.
Ենէաս. 41. 505. 532.
634. 653. 671.
Եպամինոնդ. 82. 88. 132. 541. 658. 685.
Եպիկուրոս. 35. 36. 40. 557. 589. 591. 630.
Եպիկտետոս. 526. 773.
Եպիմենիդէս. 691.
Եսքիղոս. 295. 704.
Եսքինոս. 583. 746.
Երակլիտոս. տե՛ս Հերակլիտոս.
Երեխորանական պարտեզ. 120. 677.
Երևակայութի. 26.
Երկրպագութի. 314. տե՛ս և Կենհերապաշտութի.
Երաւպրապանոս. 157. 449. 762.
Երջանկութի բնական. 1. 579. գերբնական. 597.
Եւադնէ. 108. 109. 671.
Եւդեմոնիդէ. 224.
Եւգինէա. 570.
Եւտրոպիոս. 246. 320. 732.
Եօթն իմաստասէրք. 468.
Եօթն սքանչելիք. 139. 687.

Զալիոս. 361.
Զարմանոս. 499. տե՛ս և Թամարոս.
Զգայական բաղձանք. 26.
Զենոբիա. 79. 655.
Զենոն Հակեղոր. 198. 697.
Զենոն Զիլ՟. 146. 237.
Զևս. տե՛ս Դիոս.
Զևքսի. տե՛ս Քևքսի.

Զոյի

[illegible]. 229: 707:
[illegible]. 564: 782: [illegible]. 760.
[illegible]. 269:
[illegible]. 13. 14: 616:

[illegible]:

[illegible]. 198. 468:
[illegible]. 425: 754:
[illegible]. 20: 619:
[illegible]. 46. 218: 640:
[illegible]. 96. 541. 546: 692:
[illegible]. 365: 742.
[illegible]: 512: 770:
[illegible]. 309:
[illegible]. 771:
[illegible]. 109:
[illegible]. 343: 740:
[illegible]. 294:
[illegible]. 504: 768:

[illegible]. 518:

[illegible]. 60:
[illegible]. 213. 285: 702. 722:
[illegible]. 62: 644:
[illegible]. 306: 727.
[illegible]. 412:
[illegible]. 543:
[illegible]. 166: 693:
[illegible]. 48:
[illegible]. 365:
[illegible]. 76: 649:
[illegible]. 185: 637. 741:

[illegible]. 142. 233: 688:
[illegible]. 283. 310: 729:
[illegible]. 546: 773:
[illegible]. 60. 345. 392: 643:
[illegible]. 292:
[illegible]. 102.
[illegible]. 230. 533: 708:
[illegible]. 22: 621:
[illegible]. 404:
[illegible]. 77. 339. 359:
[illegible]. 131: 684:
[illegible]. 474: 763:
[illegible]. 231:
[illegible]. 199. 511:
[illegible]. 152. 415. 427: 752:
[illegible]. 295. 443:
[illegible]. 43. 313: 638:
[illegible]. 39. 590: 632:

[illegible]. 297:
[illegible]. 78. 94. 109: 653:
[illegible]. 61:
[illegible]. 394. 433: 759:
[illegible]: 190:
[illegible]. 485:

[illegible]. 425: 754:
[illegible]. 499:
[illegible]. 303:

[illegible]

Ծուղուփ. 248 : 711 :

Կադմոս. 32. 65 : 626. 647 :
Կալիթենէա. 199 :
Կայոս. 329 : 736 :
Կաղիգուլա. 157 :
Կամբիւս. 20. 32 : 628 :
Կամբիւսէս. 532 : 776 :
Կամք. 26 : Կամաւոր և անկամաւոր ներգործու-թիւնք. 41 :
Կայիսա. և Կայիսր. 450 : 762 :
Կայիսա Հայերիսա քրմապետ. 37 : 632 :
Կանդաւղէս. 613 :
Կապանէա. 108. 109 : 671 :
Կապիտոլիոն. 579 : 787 :
Կապուայ. 253 : 759 :
Կաստոր և Պողիւքս. 530 :
Կալպուռնիոս. 222. 236 : 705 :
Կատիլինաս. 576 : 785 :
Կատոն ( Մեծ և Փոքր ). 33. 172. 281. 293. 308. 311. 312. 326. 328. 383. 570 : 728. 729 :
Կարէա. 152 :
Կարուս. 454 : այլ. 295. և 141 :
Կարողութիւնք. 25 :
Կելեստինոս. 221 : 704 :
Կեղիոս. 235 : 709 :
Կեղծիք. 262 :
Կեղտայիք. 78 : 650 :
Կենտաւրոսք. 15. 142. 233 : 616. 689 :
Կեդիոն. 90 : 664 :
Կեսարոս. 666. 698 : տե՛ս և Յուլիոս :
Կեոնիոս. 153 :
Կերբերոս. 165 : 692 :
Կիտիատէա. 310 :
Կիկերոն Տուղղիոս. 262. 286. 291. 314 : 724.
Կիկլոպ. և Կիկլոպայք. 42. 78. 279 : 634. 650. 721.
Կիմոն. 120. 150.
Կինեգիր. 87 :
Կինիկոս կամ Կիւնիկեանք. տե՛ս Դիոգինէս :
Կինկիննատոս. 169 : 694 :
Կիննա. 71 : 648 :
Կիրկէ. 47 : 641 :
Կիրք. 488 :
Կիւգնոս. 91 : 665 :
Կիւրոս. 33. 130. 175 :
Կղէոպատրա. 79. 510 : 655 :
Կղէոն. 482. 564 :
Կղէոմէ. 137. 154. 158 :
Կղիտոս. 44. 45. 199 : 639 :
Կղօդիանոս. 19. 294. 306. 322 : 618 :
Կղօդիոս. 59. 144. 320 : 642. 732 :
Կոդրոս. 90 : 665 :
Կողոմբոս. 577 : 786 :
Կոնոնոս. 535 :
Կոռոսոս. 80. 85 : 656 :
Կոպիոս. 180. 200 :
Կորէբոս. 153. 157 :

Կորիննէ. 451: 762:
Կ[illegible]. 80: 656:
Կ[illegible]. 283:
Կ[illegible]. 140. 226: 688. 705:
Կր[illegible]. 9. 79. 592: 612. 655: այլ. 290: 726:
Կր[illegible]. 127. 146. 586: 682:
Կրէ[illegible]. 9. 79: 612. 659:
Կրէ[illegible]. 151. 327:
Կրետէ. 344. 495:
Կրի[illegible]. 4. 17: 608:

Հ[illegible]. 226.
Համայնականութիւն. 215. 216:
Հայրական [illegible]. 370:
Հանճար. 483:
Հ[illegible]. 446: 760:
Հարպայք. 291: 724:
Հեղ[illegible]. 192:
Հեղինէ. 13. 20. 47: 616. 641. 722:
Հեղի[illegible]. 413. 419:
Հեղ[illegible]. 500:
Հե[illegible]. տե՛ս [illegible]:
Հերակլէս՝ կամ Հերակղէս, որ և Ալկիդէս. 13. 76. 78. 85. 94. 103. 124. 166. 172. 177. 246. 383. 530. 546. 575: 615. 620. 649. 677. 681. 692. 710. 736:
Հերակլեան Սիւն. տե՛ս Մ[illegible]:
Հերակլ[illegible]. 233. 300. 324. 328: 726:
Հերմ[illegible]. 35:
Հերմէս կամ Մերկուրիոս. 28. 292. 453: 624: Հերմեան անդրիք. 603: 789:
Հեր[illegible]. 571: 784:
Հեր[illegible]. 506:
Հեփեստ[illegible]. 392: 748: Հեփեստեանք. 430: 756:
Հերա. 281: 653. 683:
Հիդրայ. 78. 94. 109. 172: 652:
Հի[illegible]. 96: 666:
Հիպպիաս. 121:
Հիպպոկղիդէս. 540: 778:
Հիպպոկրատէս. 465:
Հիպպոլիտոս. 322: 734:
Հիր[illegible]. 577: 786:
Հ[illegible]. 546: տե՛ս և Օ[illegible]:
Հ[illegible]. 286:
Հ[illegible]. 111. 199: 673:
Հ[illegible]. 258: 715:
Հ[illegible]. 342. 359: 740:
Հ[illegible]. 296. 340: 739:
Հ[illegible]. 88. 174: 662:
Հ[illegible] [illegible]. 133. 139. 140. 152. 158:
Հ[illegible]. 137: 686:
Հ[illegible]. 83. 181: 659:
Հ[illegible]. 550. 562.

Զի-

Ձ[illegible]. տե՛ս Կ[illegible]:

Պ[illegible]. տե՛ս Լ[illegible]:
Ղ[illegible]. 180:
Ղ[illegible]. 247: 711:
Ղ[illegible]. 11. 430: 614:
Ղ[illegible]. 266:
Ղ[illegible]. 147. 150. 589:

Ճ[illegible]. 262:
Ճ[illegible]. 57. 398: և [illegible]. 491:
Ճ[illegible]. 254:

Մ[illegible]. 13. 110. 538: 778.
Մ[illegible] և [illegible]. 64. 65. 80. 85. 370: 645. 646:
Մ[illegible]. 28. 233: 623:
Մ[illegible]. 217:
Մ[illegible]. 237:
Մ[illegible]. 181:
Մ[illegible]. 288. 326: 734:
Մ[illegible]. 513:
Մ[illegible]. 139:
Մ[illegible]. 495: 766:
Մ[illegible]. 371: 744:
Մ[illegible]. 133:
Մ[illegible]. 160:
Մ[illegible]. 135:
Մ[illegible]. 128. 172. 179: 684. 695:
Մ[illegible]. 267. 343:
Մ[illegible]. 8. 35. 557. 591: 610:
Մ[illegible]. 131: 684:
Մ[illegible]. 146. 320. 416: 690. 734:
Մ[illegible]. 535: 776:
Մ[illegible]. 171:
Մ[illegible]. տե՛ս Ա[illegible]:
Մ[illegible]. 661:
Մ[illegible]. 90: 664:
Մ[illegible]. 317: 730:
Մ[illegible]. 26: 749:
Մ[illegible]. 433:
Մ[illegible]. 220:
Մ[illegible]. 181. 394: 749:
Մ[illegible]. 287: 723:
Մ[illegible]. 66:
Մ[illegible]. 177. 227: 707:
Մ[illegible]. տե՛ս Մ[illegible]:
Մ[illegible]. 451: 763:

Յ[illegible]. 269:
Յ[illegible]. 89:
Յ[illegible]. 251. 495: 713. 765:
Յ[illegible]. 670:
Յ[illegible]. 78: 652:
Յ[illegible]. 453: 696:
Յ[illegible]. 239. 249:
Յ[illegible]. 79: 654:
Յ[illegible]. 179:
Յ[illegible]. 15. 321:
Յ[illegible]. 71. 81. 88.

88 . 93 . 141 . 172 . 202 . 281 . 311 . 344 : 658 . 661 . 698 :
Յուստինիանոս . 320 : 732 . 739 :

Նաթան . 171 :
Նախանյ . 330 :
Նարկիսոս Գերի . 320 : 731 :
Նարկիսոս մանուկ . 261 . 510 . 542 : 715 :
Նեղոսի . 62 . 318 . 324 . 329 . 341 . 359 : 731 :
Նեստոր . 75 . 383 : 660 :
Ներգործութիւնք աստուածայինք . 31 :
Ներսէս . 558 . 560 : 782 :
Ներոն . 106 . 156 . 200 . 309 . 433 : 729 :
Ներուաս . 281 : 721 :
Նեաղեա . 40 . 427 :
Նիկեա . 224 :
Նիկիա . 482 :
Նիկոն . 557 : 782 :
Նիմփայք . 143 : 689 :
Նինուէ . 87 : 661 :
Նովատիանոս . 557 : 782 :

Շամիրամ . 139 . 159 :
Շինութիւն եկեղեցեաց (կեց. և ձեռք) . 65 . 89 . 104 . 235 . 531 . 562 . 566 . 575 : 646 :
Շայլութիւն . 130 :

Ոտնաւոր իմ աստիճան . 30 . 39 . 42 . 81 . 169 . 326 . 497 . 533 . 590 : 625 . 634 . 657 :
Ոթոն . 355 :
Ոբրիգոսեան . 312 : 730 :
Ողորմութիւն . ի ողորմածութիւն . 212 . 700 :
Ոսկերիք . 530 : 775 :
Ոսկեան տէր . 11 . 105 . 339 . 355 . 558 : 614 :
Ոստիկան կիբերտիա . 510 :
Ոճրագործ . 20 . 239 :
Ոճրագործք . 42 . 343 . 385 . 535 . 552 . 563 : 636 . 741 . 781 :
Որդեգրելոց . 108 . 109 : 672 :
Որսորդք . 164 :
Որդեաց . 424 . 516 : 753 :
Ողջախոհութիւն . 340 :
Ունայնութիւն մարդոյ . 599 :
Ունայնութիւնք բարբառեանք . 31 . 36 :

Չարակամութիւն . 330 :
Չարաղանց չարչարանութիւն . 135 . 149 . 156 :
Չորս աստուածութիւնք գրեանք . 49 :

Պաւղիկեանք . 306 :
Պաւղոս . 32 . 74 . 81 . 82 : 627 . 548 . 657 : այլ ոմն . 42 : 634 :
Պանտարա . 430 : 756 :
Պանթէոն տաճար . 148 . 690 :
Պապիտէս . 273 :
Պատերազմագործութիւն . 291 : 724 :
Պատիւ . 18 :

Պ[illegible] . 311 : [illegible] և Ա[illegible] :
Պ[illegible] . 26 :
Պ[illegible] . 340 : 739 :
Պ[illegible] [illegible] . 69 :
Պ[illegible] [illegible] . 281 : 641 . 722 :
Պ[illegible] . 186 :
Պ[illegible] . 132 : 686 :
Պ[illegible] . 541 :
Պ[illegible] . 236 : 534 : 709 :
Պ[illegible] . 117 :
Պ[illegible] . 468 . 547 : 780 :
Պ[illegible] . 541 : 692 . 778 :
Պ[illegible] . 146 . 368 . 440 . 550 : 743 :
Պ[illegible] . 327 : 609 :
Պ[illegible] . 269 : 719 :
Պ[illegible] . 174 :
Պ[illegible] [illegible] . 249 : 711 :
Պ[illegible] . 513 : 771 :
Պ[illegible] . 44 . 468 : 639 :
Պ[illegible] . 98 . 105 . 162 . 506 . 573 . 591 : 769 :
Պ[illegible] . 303 :
Պ[illegible] . 541 . 557 : 779 :
Պ[illegible] . 552 . 563 : 781 :
Պ[illegible] [illegible] . 13 . 22 . 77 . 209 . 278 : 622 . 650 : 679 :
Պ[illegible] . 427 . 430 : 755 :
Պ[illegible] . 409 : 752 :
Պ[illegible] . 22 . 25 . 28 . 48 . 223 . 400 . 591 :
Պ[illegible] . 108 . 109 : 672 :
Պ[illegible] . 121 . 365 : 678 . 719 :
Պ[illegible] . 331 : 737 : [illegible] 37 :
Պ[illegible] . 317 :
Պ[illegible] . 60 . 240 . 345 . 392 . 431 : 643 . 758 :
Պ[illegible] . 540 : 778 :
Պ[illegible] [illegible] Կ[illegible] :
Պ[illegible] . 294 . 296 :
Պ[illegible] . 120 : 677 :
Պ[illegible] . 93 . 163 . 212 . 314 : [illegible] . 133 :
Պ[illegible] . 108 . 494 : 669 :
Պ[illegible] . 76 : 649 :
Պ[illegible] [illegible] . 118 . 370 . 587 : 743 :
Պ[illegible] . 15 . 28 . 100 . 430 : 617 . 669 :
Պ[illegible] 77 . 278 : 650 :
Պ[illegible] . 552 :
Պ[illegible] . 512 . 593 : 770 :
Պ[illegible] . 213 . 373 . 374 . 414 : 700 :
Պ[illegible] . 162 . 377 . 402 : 745 :
Պ[illegible] . 119 : 675 . 751 :
Պ[illegible] [illegible] . 495 : 766 :

Ջ[illegible] . 226 : 705 :
Ռ[illegible] . 446 : 760 :

Ս[illegible] . 327 : 735 :

Ս[illegible]

Սաճիկուայիք · 122 : 679 :
Սանդարամետ · տե՛ս Պղուտոն :
Սաւրա · 136 · 559 :
Սարդիայիք · 415 : 752 :
Սատաղ · 229 · 386 : 747 :
Սեմպրոնիոս · 346 :
Սենեկայ կամ Սենեկիա · 88 · 284 · 309 · 310 : 663 · 729 :
Սերանոս · 169 : 695 :
Սերվիլիոս Պաուղոս · 151 : 450 : 762 · 763 :
Սեւերոս · տե՛ս Աղեքսանդր" :
Սեբաստիա · 759 :
Սեյիանոս · 478 :
Սեիր, և Սեիրայ լեռն · 280 · 537 · 546 : 721 · 777 :
Սիղինոս · 442 · 451 : 759 :
Սիլլա · 59 · 106 · 141 · 201 · 202 · 309 · 323 : 642 :
Սիմոնիդէս · 19 · 312 · 581 : 618 :
Սիմպղեգադեան ծայրք · 354 : 742 :
Սիրելութիւն · 537 :
Սիքիլ · 79 · 90 · 174 · 235 : 654 ·
Սկեւոլա · 39 : 633 :
Սկիւնէա · 512 : 771 :
Սկիւթիա · 626 · 627 :
Սոկրատէս · 30 · 31 · 67 · 88 · 97 · 104 · 178 · 211 · 261 · 308 · 321 · 333 · 442 : 661, 699 · 716 · 860 :
Սողոն · 23 · 343 · 468 : 623 :
Սպարտացիք · 77 · 86 · 92 :
Սպուրինէ · 261 : 716 :
Ստամպասոս · 42 :
Ստիլպոնոս · 276 : 720 :
Ստիգեան լիճ · 332 : 738 :
Ստոյիկեանք · 6 · 12 · 29 · 35 · 97 · 102 :
Ստրաբոն · 414 :
Ստրատոնիկ · 236 :
Սրատեգութեան մտայ · 414 :
Սրտմտութիւն · 318 :
Սփինքս · 185 : 723 :

Վաղերիանոս · 174 :
Վարինիոս · 326 :
Վարրոն · 262 : 716 :
Վեհերոտութիւն · 89 :
Վեսպասիանոս · 122 · 142 · 151 · 159 · 404 :
Վերտումնոս · 113 : 674 :
Վերրէս · 292 · 510 : 724 · 769 :
Վիճակ · 322 : 733 :
Վիրգիլիոս · 19 · 231 :
Վողոգիս · 3 : 607 :

Տակիտոս · 473 :
Տանտալոս · 709 ·
Տարկուինիոս · 576 : 638 :
Տելեմաքոս · 81 · 657 :
Տերենտիոս · 200 : 698 :
Տերենտիոս · տե՛ս Վարրոն :
Տիանեա · տե՛ս Ապողոնիոս :
Տիբերիոս · 13 · 101 · 129 · 150 · 175 · 198 · 225 · 246 · 267 : 289 · 414 : 416 · 439 · 474 · 684 ·

684. 697։
Տ[illegible]. 212։ 700։
Տ[illegible]. 263. 334։
Տ[illegible]. 217. 430։ 703։
Տ[illegible]. 21. 181։ 621։
Տ[illegible]. 227. 298. 332. 333։ 706. 726։
Տ[illegible]. 402։ 750.
Տ[illegible]. 374։ 744։
Տ[illegible]. 122. 138. 188։ 687։
Տ[illegible] [illegible] 372։
Տ[illegible] [illegible]. 446։
Տ[illegible]. 326։ 734։
Տ[illegible]. [illegible] Մ[illegible]։
Տ[illegible]. 464։ 763։
Տ[illegible]. 41. 42. 532։ 634։
Տ[illegible]. 36։
Տ[illegible]. 142։
Տ[illegible]. 272։
Տ[illegible]. 340։ 739։

Ց[illegible]. 500։
Ց[illegible] [illegible]. [illegible] Ի Փ[illegible]։

Փ[illegible] [illegible]. 134. 664.
Փ[illegible]. 122։ 679։
Փ[illegible]. 6. 8. 12. 36. 512. 593։ 609։
Փ[illegible]. 23. 24։ 622։
Փ[illegible]. 61. 185։ 643։
Փ[illegible]. 20։ 619։
Փ[illegible]. 15. 140. 152. 187. 188. 430. 447։ 618։
Փ[illegible]. 373. 767։
Փ[illegible]. 124. 257. 527։ 681։
Փ[illegible]. 110։ 673։
Փ[illegible]. 120։ 678։
Փ[illegible] [illegible]. 359։
Փ[illegible]. 447։ 761։
Փ[illegible]. 135. 149. 156։
Փ[illegible]. 182։
Փ[illegible]. 528։ 774։
Փ[illegible]. 182։

Ք[illegible] [illegible]. 365։ և [illegible]. 439։
Ք[illegible]. 720։ [illegible] և Մ[illegible], և Զ[illegible]։
Ք[illegible]. 215։
Ք[illegible]. 469։
Ք[illegible]. 429. 430։ 756։
Ք[illegible]. 98։ 624. 667։
Ք[illegible]. 258. 298. 317. 552։ 714։
Ք[illegible]. 524։ 773։
Ք[illegible]. 85. 119. 126. 127. 473։ 676։
Ք[illegible]. 100. 431. 668։
Ք[illegible]. 96. 492։ 764։

Օ[illegible]. 494։ 765։
Օ[illegible] [illegible]. 10. 12. 71. 93. 142. 151. 152. 179. 224. 288. 296. 353. 379. 447։ 648. 742. 764.

'Ի

# 'Ի ԹԱՐԳՄԱՆՉԷ

## Բան յորդորական։

'Ի տուն գանձուց՝ իմաստութեան,
քեզ ուղեցոյց՝ գիրս ուղղութեան.
Թեսաւրոսեան՝ ընտիր մատեան,
նոր գանձարան՝ արդեամբք անուան։
Անգին բարեաց՝ բերող յինքեան,
ազնիւ ականց՝ հանք ճոխութեան.
Ռամից ոգւոց՝ անդորրական,
խոստմամբ լիով՝ երջանկութեան։
Գետ իմաստից՝ աղբերական,
զովացուցիչ՝ սրտից մարդկան.
Մշտախաղաղ՝ կենաց սահման,
որոց պահեն՝ զեդեալ պայման։
Արդեամբք լինին մարդ բանական,
երջանկացեալ՝ 'ի կարգ բնական։
Նաւ շահաբեր՝ 'ի հեռաստան,
բարձեալ ըղձանձօ՝ 'իմաստութեան.
Զնչին ընչից՝ կորստական,
ծովընկեցիկ իբր անպիտան։
Է վաղանցուկ՝ այս ամենայն,
հոգւոյ բարիք՝ միայն մնան։
Բաղձանք սրտի՝ որդւոց մարդկան,
ունայնանան՝ յունայնութեան։
Աստի կենաց՝ բարիք համայն,
բանականաց՝ չեն բաւական։
Նա հասանէ՝ իւր փափաքման,
որ յեզր ուղղի անեզրական։
Ցոյս այսպիսի՝ կայ անսասան,
որոց գնան՝ յիմաստութեան։
Ո՜չ զայն ասեմ՝ ցոյց գիտութեան,
որ լոկ առիթ՝ է փքացման.
Բարուն լիջիր՝ դու տիրական,
աշակերտեալ՝ արքայութեան.
Դուռն իմաստիցս՝ այս հոգեկան,

լիցի

Լերի՛ անշուշտ՝ քեզ այդ մատեան.
Որ ընդ սըրահ՝ սոփեստական,
մուտ ցուցանէ՝ յարքայարան։
Բախճան կազմէ՝ բարոյական,
՚ի պարարել՝ զոգիս մարդկան.
Առնուլ ճաշակ՝ երանութեն,
յըմպել զբաժակ՝ իմաստութեն.
Կոչունք են աստ՝ մըտաց զմայլման,
՚ի քիմս ոգւոյ՝ ախորժական.
Առատութիւն՝ լի ՚ի սեղան,
որոց կամք են՝ վայելել յայն։
Նուէր բանից՝ յորդորական.
՚ի փառս փրկչին՝ կէտ աւարտման։

Гос. Публ. Библ. ՀԱՅՍՍՌ-ССР им. А. Мясникяна